Վլադիմիր Ղազախեցյան

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920-1940 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920-1940 ԹԹ.

II
A 91412

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
14

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
14

ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ղ 154

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Համլետ Հարությունյան

Ղազախեցյան Վ. Ն.
Ղ 154 Հայաստանը 1920-1940 թթ.: (Պատ. խմբ. Հ. Մ. Հարությունյան). - Եր.: Պատմ. ինստ., 2006. - 564էջ:

Աշխատության մեջ նորահայտ վավերագրերի ու գաղտնազերծված տպագրված նյութերի գիտական ուսումնասիրությունների հիման վրա նորովի լուսաբանվում են Խորհրդային Հայաստանի առաջին քսանամյակի պատմության հիմնահարցերը՝ ժամանակակից պատմագրության տեսանկյունից:

ISBN 99941-991-2-9

ԳՄԴ 63.3 (2Հ)
ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2006թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Սույն ուսումնասիրությունը նվիրված է Խորհրդային Հայաստանի առաջին 20-ամյա պատմաշրջանին:

Խորհրդային իշխանության 70-ամյա գոյությունը հատուկ տեղ ունի ԽՍՀՄ ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի պատմության մեջ: Տվյալ տասնամյակներն անհամեմատելի են պատմության որևէ այլ, ինչպես կարճատև, այնպես էլ տևական ժամանակաշրջանների հետ՝ հօգուտ առաջինների: Երկիրը ծեռք բերեց վիթխարի նվաճումներ, տնտեսապես ու կուլտուրապես հետամնաց մակարդակից հասնելով զարգացման բարձր աստիճանի, աշխարհի գերտերություններից մեկը լինելու իրողությանը: Դա թռիչքային վերելք էր, որը, սակայն, ուներ միակողմանի բնույթ, և որի էությունը ռազմատեխնիկական կողմի գերապատիվ զարգացումն էր, երբ տուժում էին բնակչության համակողմանի պահանջմունքներն ու շահերը: Այլ կերպ ասած ԽՍՀՄ ժողովուրդները թանկ գին վճարեցին երկրի զարգացման համար, երբ դրա մեջ ներդրել էին մեծագույն ջանքեր, թափել քրտինք: ԽՍՀՄ զարգացման բնորոշ կողմերից էր քաղաքական կյանքի ծանր դրությունը, ժողովրդավարության պակասը, եթե չասենք, բացակայությունը, որպիսի պայմաններում, որքան էլ դժվար լինի հավատալ, երկրի ժողովուրդները ստեղծագործում էին մեծ նվիրվածությամբ ու եռանդով, միաժամանակ՝ զրկանքներով ու զոհողություններով:

ԽՍՀՄ քաղաքական կյանքում հաստատվել էր Կոմունիստական կուսակցության բացարձակ իշխանությունը: Ստալինյան ղեկավարությունն իր տիրապետությունը պահելու և ամրապնդելու համար կանգ չէր առնում ճնշման ու բռնության որևէ միջոցի առաջ: Քաղաքական անհիմն բռնաճնշումներին զոհ գնացին միլիոնավոր խորհրդային քաղաքացիներ՝ կոմունիստներ ու անկուսակցականներ: Միայն Ստալինի մահով ու ստալինիզմի վերացումով հնարավոր դարձավ փակել ԽՍՀՄ պատմության մղձավանջային էջը:

Երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման հանրագումարը սոցիալիստական հասարակարգի կառուցումն էր: Որպես սոցիալիստական հասարակարգի զարգացման աստիճաններ տեսությունը ճանաչել է՝ սոցիալիզմի կառուցումը կամ հաղթանակը հիմնականում, զարգացած սոցիալիզմ, սոցիալիզմից կոմունիզմին անցում: Ընդ որում դրանք ոչ այնքան շոշափելի ու առարկայական էին, որքան քարոզչություն, քաղաքական նպատակների հետապնդում: Անկախ նրանից, թե այդ տերմինները կամ հասկացություններն ինչ բովանդակություն են ներկայացրել, փաստ է, որ 70 տարվա ընթացքում աշխարհի առաջին սոցիալիստական

պետությունը կուտակեց սոցիալիստական շինարարության որոշակի փորձ, որը նա ձգտում էր պարտադրել նաև մյուս սոցիալիստական երկրներին:

Այդ փորձի մեջ կային նաև շատ ստվերոտ կողմեր ու ձախողումներ, չլուծված խնդիրներ, որոնց կենսագործմանը դիմեց Միխայիլ Գորբաչովի կուսակցական ղեկավարությունը 1980-ական թվականների երկրորդ կեսին: «Վերակառուցում» կոչված այդ ծրագիրը և քաղաքականությունը, որը պետք է բարեփոխեր սոցիալիզմը, նրան տար մարդկային կերպարանք, նորոգեր Խորհրդային Միությունը, նպատակին չհասավ, քանի որ բարեփոխումները արմատական բնույթ չէին կրում, չէին կպչում համակարգի հիմքերին, որի անհրաժեշտությունը կար, ուստի որպես վերակառուցում մտածված ծրագիրը ոչ միայն գլուխ չեկավ, այլև վերածեց իր հակադրությանը՝ հենց համակարգը քայքայող հեղափոխության, ԽՍՀՄ փլուզմանը: ԽՍՀՄ քայքայման պատճառները բազմազան են: Դեր են խաղացել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բնույթի գործոններ, որոնց թվում կարևոր տեղ է վերագրվում այն խաղաղ տնտեսական մրցակցությանը, որի մեջ ԱՄՆ-ը ներգրավել էին Խորհրդային Միությանը:

ԽՍՀՄ-ը ներկայացվում էր որպես ազգային հարցի լուծման ձև: Չնայած դրան նրա կազմակերպումը իր մեջ թաքցրել էր չլուծված ազգային շատ հարցեր ու հակասություններ: Եվ այնուամենայնիվ պետք է շեշտել, որ Խորհրդային Միության պայմաններում երկրի ազգերն ու ժողովուրդները ունեցան մեծ նվաճումներ ու հաջողություններ: Հայ ժողովրդի համար խորհրդային տարիները դարձան ազգային վերածնության, պատմական մեծ առաջադիմության, սոցիալ-տնտեսական ու մշակութային մեծ վերափոխումների ժամանակաշրջան: Դրա հետ մեկտեղ ընդունելով և այն ճշմարտությունը, որ «չարիքի կայսրությունը» զգալիորեն կաշկանդեց երկրի զարգացման կարողություններն ու հնարավորությունները:

Խորհրդային պատմագիտությունը, ինչպես և ամբողջ գաղափարական գործունեությունը ծառայում էին մեկ քաղաքական նպատակի Կոմունիստական կուսակցության գաղափարախոսության հաստատմանը հասարակության մեջ, մարդկանց կոմունիստական դաստիարակությանը: Ուստի պատմագրությունն իր հերթին կրում էր դասակարգային ու կուսակցական բնույթ: Պատմական գիտությունը և պատմաբանի գործունեությունը սահմանափակված էին կուսակցականությամբ ու դասակարգայնությամբ, այսինքն պատմագրությունը հեռու էր ճշմարիտ գիտություն լինելուց: Պատմաբանի ազատ ու անկաշկանդ ստեղծագործության համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին անկախ պետությունների հռչակումով: Պատմագրությունը հասցրել է կատարել զգալի առաջընթաց քայլ:

Հետխորհրդային պատմագրությունը, առաջին հերթին նկատի ունենք ռուսականը, շարունակում է արդյունավետ կերպով լուսաբանել խորհրդային հասարակության պատմությունը՝ նոր հիմունքներով: Պատմության ճշմարիտ վերարտադրության համար մեծ նշանակություն է տրվում նոր նյութերի ու փաստաթղթերի վերհանմանը, որպիսիք անցյալում գտնվել են փակի տակ: Բազմահատոր հրատարակություններ են նվիրվում ՌԿ(բ)Կ – ՀամԿ(բ)Կ – ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի որոշումներին, «հատուկ թղթապանակներին» (քաղբյուրոյի խիստ գաղտնի որոշումներ), պետական անվտանգության ու իրավապահ մարմինների գործունեությունը բացահայտող նյութերին, ղեկավար մարմինների ու գործիչների գրագրություններին և այլն:

Պատմական գիտության համար անցյալի ճշմարիտ վերարտադրության սկզբունքի հետ մեկտեղ ուղեցույց է և այն իրողությունը, որ խորհրդային երկիրը ևս եղել է հայրենիք: Հայրենասիրությունը ուղեկցում է պատմական գիտությանը անկախ նրանից, թե երկրում ինչ պետական ու հասարակական կարգ է տիրում: Հետխորհրդային պատմագրությունը մերժում է խորհրդային պատմության նկատմամբ ամեն ինչ վերանայելու՝ ռևիզիոնիստական վերաբերմունքը, որ գոյություն ունի մասնավորապես արևմտյան պատմագրության մեջ: Ոչ իրականության գունազարդում, ոչ էլ ամեն դրականի մերժում՝ այսպիսին է ճշմարիտ ստեղծագործության ուղին ու միջոցը, իսկական ստեղծագործողի նշանաբանը: Սույն գիտական թեման մշակելիս մենք ղեկավարվել ենք հենց այդ սկզբունքով:

Թեման ընդգրկող ժամանակագրական սահմանները ներկայացնում են պատմական բարդ ժամանակաշրջան: ԽՍՀՄ ներքին ու արտաքին ծանր պայմաններում կազմակերպվում էր խաղաղ շինարարական աշխատանքը, գծվում էին զարգացման ուղիներն ու միջոցները: Համաշխարհային փորձի բացակայության պայմաններում պետությունը փաստորեն որոնում և որոշում էր իր անելիքը գործունեության բոլոր բնագավառներում: Հայտնի էր միայն նպատակը սոցիալիզմի կառուցումը, անհայտ էին կառուցման ուղիներն ու եղանակները: Այլ խոսքով՝ շատ էին օբյեկտիվ դժվարությունները: Դրանք հաղթահարելու համար պահանջվեցին շատ ջանքեր ու միջոցներ, ստալինյան ղեկավարությունը երկրում հաստատեց կուսակցական ամենատիրություն, ժողովրդավարությունը դարձրեց ձևականություն ու քարոզչության միջոց, այն ծառայեցնելով քաղաքական նպատակների համար: Իշխանությունը պահելու և ամրապնդելու նպատակով Ստալինը և նրա կամակատարները ոչ մի միջոցի առաջ կանգ չառան, ընդհուպ մինչև սեփական ժողովրդի ահաբեկումը. միլիոնավոր անմեղ մարդկանց գնդակահարությունն ու աքսորը: Եվ այնուամենայնիվ խորհրդային մար-

դիկ նման պայմաններում պարզապես հրաշք գործեցին, իրականացնելով արմատական սոցիալ-տնտեսական վերակառուցումներ, ապահովելով երկրի վերելքն ու առաջադիմությունը, ինչ որ չափով ամրապնդելով պետության անվտանգությունը կապիտալիստական շրջապատման պայմաններում:

Աշխատությունն ունի երեք բաժին համապատասխան պատմական որոշակի բովանդակություն ներկայացնող ժամանակաշրջանների: Առաջին բաժինն ընդգրկում է Հայկական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության գոյության երկու տարին 1920-1922 թթ.: Հայաստանի խորհրդայնացումով Ռուսաստանն իր հովանավորությունն ու պաշտպանությունը հաստատեց նրա նկատմամբ, նախապատրաստելով Անդրկովկասյան դաշնության և ԽՍՀՄ կազմավորումը:

Երկրորդ բաժինը նվիրված է նեպական ժամանակաշրջանին: Նոր տնտեսական քաղաքականությունը եկավ ամրապնդելու խաղաղությունը երկրի ներսում և նոր սկզբունքներով կազմակերպելու սոցիալիստական շինարարության գործը: Տնտեսական, չնայած սահմանափակ, ազատությունը տևեց հիմնականում մինչև 1927 թ., որից հետո սկսվում է նահանջը Նեպից, և որը տևում է մոտավորապես մինչև 1929 թ.: 1928-1929 թթ. ԽՍՀՄ թևակոխեց պատմական նոր ժամանակաշրջան: Պետության կառավարման մեջ անցում է կատարվում վարչահրամայական եղանակին:

Երրորդ բաժինն սկսվում է 1920-ական թվականների վերջից և ընդգրկում է ամբողջ 1930-ական թվականները, երբ բոլշևիկների կուսակցության մենիշխանությունն ու ամբողջատիրությունը էլ ավելի են ամրապնդվում: 1920-ական թվականների վերջին ներկուսակցական պայքարն ավարտվեց Ստալինի հաղթանակով, ճնշվեցին «ձախ» ու աջ օպոզիցիաները, անցում կատարվեց երկարաժամկետ պլանավորման հիմունքով զարգացման կազմակերպմանը, որը նշանավորվում էր կառավարման էլ ավելի կենտրոնացումով ու վարչահրամայական եղանակի տիրապետությամբ: Կուսակցական ղեկավարումը թափանցում է պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներն ու օղակները, առանց բացառության: Նոր տնտեսական քաղաքականությունը դառնում է ավելորդ և փաստորեն վերացվում է, չնայած պաշտոնական (ստալինյան) տեսակետը փորձում էր բանն այնպես ներկայացնել, թե իբր Նեպը շարունակվում է, նահանջին փոխարինելու է եկել ուժերի վերախմբավորման ու հարձակման անցնելու ժամանակաշրջանը:

Երկրի զարգացումը կազմակերպվում էր ըստ սոցիալիզմի կառուցման ստալինյան պատկերացման (ինդուստրացում ծանր արդյունաբերության գերապատվությամբ, գյուղատնտեսության կոլեկտիվացում կու-

լակության վերացումով հանդերձ, կուլտուրական հեղափոխություն): Ամբողջ քաղաքականությունը մշակվում էր կենտրոնում և հրամցվում տեղերին ի գործադրություն: Սոցիալիստական շինարարությունը կազմակերպվում էր վերևից, բացառելով տնտեսության զարգացման օբյեկտիվ օրինաչափություններն ու օրենքները, փաստորեն թերագնահատելով մարդու, կոլեկտիվի ու հասարակության նախաձեռնությունն ու շահերը: Բացառություն էր Նեպը, այն էլ սահմանափակություններով:

Խորհրդային պատմագրության մեջ կարևոր տեղ է ունեցել նաև խորհրդահայ պատմագրությունը: Ինչ վերաբերում է հետխորհրդային պատմագրությանը, ապա պետք է նշել, որ, օրինակ, ի տարբերություն ռուսականի, Հայաստանում խորհրդային պատմության ուսումնասիրությունը մի պահ մղվեց հետին պլան: Պատճառը, մեր կարծիքով, այն բացասական վերաբերմունքն էր, որ որդեգրեց նոր իշխանությունը խորհրդային կարգերի ու նրա պատմության նկատմամբ ընդհանրապես: Այուս պատճառն այն աննպաստ նյութական պայմաններն էին, որ գոյություն ունեին երրորդ հանրապետության հաստատումից հետո: Այժմ դրությունն ինչ որ չափով փոխվել է և տեղաշարժեր են նկատվում գիտության զարգացման բնագավառում նույնպես: Հայաստանում կարևոր տեղաշարժ է «Հայ ժողովրդի պատմության» (8-հատորյակից հետո) նոր բազմահատորյակի՝ 4 հատորների հրատարակության նախապատրաստումը, որն ընթացքում է և որի 4-րդ հատորի զգալի մասը զբաղեցնում է խորհրդահայ պատմությունը:

Խորհրդահայ պատմության ուսումնասիրությունն ունի որոշակի դժվարություններ: Դրանց թվում էական պետք է դիտել աղբյուրագիտական բազայի պակասը՝ թեմատիկ ժողովածուների բացակայությունը, «հատուկ թղթապանակների» չգտնվելը (նկատի ունենք 1920-1930-ական թվականները): Կենտրոնացված չեն Արտակարգ հանձնաժողով-Պետքաղվարչություն-ՆԳԺԿ-ի փաստաթղթերը, որոնք (այն էլ ոչ բոլորը) ցրված են ազգային արխիվի ֆոնդերում, իսկ համապատասխան գերատեսչության արխիվում դրանք կարծես թե չկան (նկատի չունենք անձնական գործերը): Այդ տեսակետից լավ վիճակում է ռուսական իրականությունը: Նրա կողմից տպագրվում են բազմաբնույթ արխիվային նյութերի ժողովածուներ, մեծաքանակ գիտական մենագրություններ, որոնք, ցավոք, քիչ են հասնում Հայաստան: Այստեղ գոյություն ունեցող պակասը հնարավոր է թեկուզ մասամբ լրացնել (այդպես էլ մենք վարվել ենք) ռուսական հրատարակությունների օգնությամբ: Վերջիններիս դիմելը անհրաժեշտ և անխուսափելի է ոչ միայն տեղական պակասի տեսանկյունից, այլև այն պատճառով, որ Խորհրդային Հայաստանը և խորհրդահայ պատմությունը եղել են միութե-

նականի մաս, ամեն ինչում ղեկավարվելով կենտրոնի (ռուսականի) կողմից:

Մենագրության մեջ հանրագումարի են բերված մեր նախորդ գիտական գործունեության արդյունքները, ինչպես նաև դրանք լրացվել ցարդ մեր կողմից չուսումնասիրված հիմնախնդիրներով: Առանձին ուշադրություն է նվիրվել քաղաքական պատմության հարցերին, նկատի ունենալով պատմագրության ժամանակակից պահանջները, ինչպես նաև ընթերցող լայն հասարակայնության հետաքրքրությունները: Աշխատությունը պիտանի է նաև բուհերի պատմության ֆակուլտետներում հատուկ դասընթացներ կազմակերպելու համար:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920-1922 ԹԹ.
ԳԼՈՒԽ Ի. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ
1. Իշխանության մարմինների կազմավորումը

Նախկին ցարական Ռուսաստանի ծայրամաս Հայաստանում խորհրդային իշխանությունը հաստատվեց Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից երեք տարի անց: Խորհրդային հանրապետությունների հանդես գալով «աշխարհի երկրները,- ինչպես ասված է ԽՍՀՄ առաջին, 1924 թ., սահմանադրության մեջ,- բաժանվեցին երկու՝ կապիտալիզմի և սոցիալիզմի ճամբարների»[1]:

Խորհրդային հանրապետությունները, որոնք այն ժամանակ վեցն էին (Ռուսաստան, Ուկրաինա, Բելոռուս, Վրաստան, Ադրբեջան, Հայաստան, իսկ Անդրկովկասի դաշնության ստեղծումից հետո չորսը), և որոնք 1922 թ. միավորվեցին մեկ ընդհանուր պետության՝ ԽՍՀՄ մեջ, թևակոխեցին պատմական նոր՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանը: Այն ժամանակ կարծում էին, թե նոր ժամանակաշրջան էր բացվել նաև մյուս երկրների համար: Ինչպես նշում էր Ռուսաստանի խորհուրդների 3-րդ համագումարը (1918 թ.), ապա և նրա սահմանադրությունը, հիմնական խնդիր էր դրվում վերացնել մարդու կողմից մարդու ամեն մի շահագործում, լրիվ վերացնել հասարակության բաժանումը դասակարգերի, անխնա ճնշել շահագործողներին, հաստատել հասարակության կազմակերպումը սոցիալիստական հիմունքներով և հասնել սոցիալիզմի հաղթանակին բոլոր երկրներում[2]: Առայժմ Ռուսաստանի բոլշևիկների կուսակցությունը և 1919 թ. ստեղծված 3-րդ՝ Կոմունիստական ինտերնացիոնալը ղեկավարվում էին համաշխարհային սոցիալիստական հեղափոխության տեսությամբ ու քաղաքականությամբ:

Նոր միութենական պետությունը (ԽՍՀՄ), ըստ նրա առաջին սահմանադրության, հանդիսանալու էր արժանավոր պսակը ժողովուրդների խաղաղ համակեցության ու եղբայրական համագործակցության, որի հիմքը դրվել էր 1917 թ.: Այդ միութենական պետությունը հավատարիմ պատվար էր ծառայելու ընդդեմ համաշխարհային կապիտալիզմի և նոր վճռական քայլ էր լինելու Համաշխարհային խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ բոլոր երկրների աշխատավորների միավորման ճանապարհին[3]:

---

[1] Образование СССР. Сборник документов. М., 1972, с. 457.
[2] Նույն տեղում, էջ 42:
[3] Նույն տեղում:

Մարքսիստական տեսության համաձայն, սոցիալիզմը հաջորդում է կապիտալիզմին: Դա կատարվում էր բուրժուազիայի տիրապետությունը տապալելու և իշխանությունը բանվոր դասակարգին հանձնելու՝ պրոլետարիատի դիկտատուրա (բռնի իշխանություն) հաստատելու միջոցով: Սոցիալիզմը կոմունիստական հասարակարգի ստորին փուլն է, կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանը: Կոմունիստական հասարակության բարձրագույն փուլը կոմունիզմն է, որը հասունանում է սոցիալիզմի հիմքի վրա: Այդ փուլերը միմյանցից տարբերվում են մարդկանց նյութական բարիքների բավարարման աստիճանով:

Նոր հասարակության կառուցման խնդիրները որոշվեցին ՌԿ(բ)Կ - նոր ծրագրով, որն ընդունվեց 1919 թ. կայացած նրա 8-րդ համագումարի կողմից:

1918-1920 թթ. Ռուսաստանն ապրեց քաղաքացիական պատերազմի և օտարերկրյա ինտերվենցիայի հակախորհրդային պայքարի տարիներ:

Հեղափոխության հաղթանակից հետո անհրաժեշտ էր գտնել նոր հասարակարգի ստեղծման ուղիները: Ռուս բոլշևիկների միջավայրում մշակվեց «ռազմական կոմունիզմի» ծրագիրը և քաղաքականությունը: Նրա կենսագործումը, ըստ Լենինի, ապահովելու էր կոմունիստական սկզբունքների իրականացումը արտադրության և բաշխման բնագավառում: Սոցիալիզմի կառուցման տվյալ ուղին, դուրս եկավ անիրական: «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության կենսագործումը հանդիպեց բանվորների ու գյուղացիների դիմադրությանը, բարձրացան ապստամբություններ, երկրում սրվեց տնտեսական ու քաղաքական ճգնաժամը: Այդ ամենը թելադրեց որոնել սոցիալիստական շինարարության նոր ուղի: Այդպիսին դառնալու էր նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԵՊ), որը մտահղացվեց 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին և որպես գործնական ծրագիր ընդունվեց 1921 թ. մարտին ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի կողմից:

Ռուսաստանի ներքին դրության մեջ տեղի ունեցած տվյալ անցումային ժամանակաշրջանում հանդես եկավ նորաստեղծ Խորհրդային Հայաստանը:

Հայաստանի Խորհրդային հանրապետություն հռչակելու մասին Հայհեղկոմի 1920 թ. նոյեմբերի 29-ի հռչակագիրը միաժամանակ ծրագրային փաստաթուղթ էր նոր իշխանության ներքին ու արտաքին խնդիրների վերաբերյալ: Հայտարարվում էր, որ նոր իշխանությունը հնարավորություն է ստացել դնելու «Խորհրդային Հայաստանի խաղաղ աշխատանքի հիմքը»: Դա նշանակում էր ազգային պառակտումները փոխարինել ժողո-

վուրդների եղբայրությամբ, գյուղացիությանը հանձնել ամբողջ հողը, նրա ընդերքի հարստությունները, անտառները, ջրերը՝ «աշխատավոր ազգաբնակչության կարիքները բավարարելու համար»: Հանրապետության սեփականություն էին դառնալու «առավել կամ պակաս ծավալի գործարանները», գործարկվելու էին երկաթուղիները: Աշխատավոր մտավորականության փորձն ու կարողությունները ծառայելու էին խորհրդային իշխանությանը, նրա շինարարական գործին: Անվավեր էին հայտարարվում Հայաստանի պետական պարտքերը Անտանտին և Ամերիկային:

Հավատ էր հայտնվում, որ խորհրդային իշխանության շնորհիվ ընդմիշտ կվերանան վիճելի հարցերը Ադրբեջանի հետ: Հայհեղկոմը նույնպիսի հավատ և վստահություն էր հայտնում «Արևելքի հեղափոխականացման մեջ խոր դեր կատարող» քեմալական Թուրքիայի նկատմամբ: «Հավատում ենք,- ասված է դեկլարացիայում,- որ իմպերիալիստական լծից ազատագրվող ժողովրդական Տաճկաստանը մեզ ևս իր հետ Սևրի դաշնագրի հակառակորդ համարելով, մեզ եղբայրական ձեռք է մեկնելու այժմ, երբ մենք տապալեցինք մեր թշնամուն և նրա հետ միասին կռիվ ենք մղում Անտանտի գիշատիչների դեմ»: Հեղկոմը համոզմունք էր հայտնում, որ «ոչ թե հաղթողի սուրն է թելադրելու Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի միջև կայանալիք հաշտության պայմանները, այլ Խորհրդային Հայաստանի ու աշխատավորական Տաճկաստանի ազատ ժողովուրդների եղբայրական համերաշխությունն ու համաձայնությունը»[4]: Հաջորդ օրը, նոյեմբերի 30-ին, Հայհեղկոմը, Հայաստանի խորհրդայնացման առթիվ, դիմելով «Բոլորին, բոլորին, բոլորին», նախ նշում էր, որ Հայաստանի կոմկուսի Կենտկոմն է իրեն առանձնացրել, իհարկե, «ապստամբ աշխատավոր զանգվածների անհողդողդ կամքին» հետևելով, Հայաստանը հայտարարելու խորհրդային սոցիալիստական հանրապետություն: Դիմումը ստորագրող Հայհեղկոմի անդամները Հայաստանը տեսնում էին «աշխատանքի խորհրդային հանրապետությունների մեծ ընտանիքին» հաղորդակից, որի շնորհիվ նա կկարողանար բուժել ծանր ժառանգություն ստացած խոր վերքերը[5]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմը, քարտուղար Բեկզադյանի ստորագրությամբ նամակում, ՌԿ(բ)Կ Կենտկոմին հայտնում էր, որ Հայաստանի խորհրդայնացումով երկրում ստեղծվել են կոմունիստական աշխատանքի լեգալ պայ-

---

[4] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու: Պրակ 1, էջմիածին, 1921, էջ 1-5:

[5] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Երևան, 1960, էջ 407-408:

մաններ, որ հաջող կոմունիստական աշխատանքի համար հարկավոր է նրա, ինչպես նաև հարևան երկրների և, առաջին հերթին, Ադրբեջանի կոմունիստական կուսակցության օժանդակությունը[6]:

Այսպիսով, նորահաստատ Հայաստանի խորհրդային իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը իրենց առաջին ծրագրային փաստաթղթերում երկրի վերաշինությունը տեսնում էին միայն Խորհրդային Ռուսաստանի և մյուս հանրապետությունների, այսինքն դրսի օգնությամբ: Անտեսվում էին ազգային խնդիրները, միանշանակ ջատագով մնալով համաշխարհային հեղափոխությանը, նրա շահերին:

Խորհրդային իշխանության հաղթանակը Հայաստանի համար նախ և առաջ նշանակում էր կայուն խաղաղություն և ստեղծագործական աշխատանքի հնարավորություն: Դրա երաշխավորը Խորհրդային Ռուսաստանն էր, որը կանգնած էր Խորհրդային Հայաստանի թիկունքում և հայտնում էր նրան բազմակողմանի օգնություն ցույց տալու պատրաստակամություն:

Խորհրդային Հայաստանի բարձրագույն իշխանություն Ռազմահեղափոխական կոմիտեն, որը Ադրբեջանից Հայաստան էր մտել նոյեմբերի 29-ին, մայրաքաղաք Երևան հասավ դեկտեմբերի 4-ին: Այդ օրը երեկոյան ժամանել էին Ռազմհեղկոմի նախագահ Սարգիս Կասյանը և հեղկոմի անդամ Ավիս Նուրիջանյանը: Մյուս անդամները (Ալ. Բեկզադյան և Ի. Դովլաթյան) տեղ հասան մի քանի օր անց, իսկ Ասքանազ Մռավյանն ու Սահակ Տեր-Գաբրիելյանը դեռևս Մոսկվայում էին և տեսակցելու էին Լենինի հետ օգնության խնդրով: Ընդ որում, Սահակ Տեր-Գաբրիելյանը մնալու էր այնտեղ, որպես Ռուսաստանում Խորհրդային Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ:

Մինչև ՀՍԽՀ հեղկոմի կողմից իշխանությունը ստանձնելը, դեկտեմբերի 2-4-ը, երկրի կառավարումն իրականացնում էր Ռազմական հրամանատարությունը, հանձին Դրաստամատ Կանայանի (Դրո): Նրա հետ համագործակցում էր Ռուսաստանի կոմիսար Օտտո Սիլինը: Դա կատարվել էր ըստ այն համաձայնագրի, որ դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրել էին Հայաստանի Հանրապետության և ՌԽՖՍՀ ներկայացուցիչները:

Այս իշխանության ժամանակ, դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Ալեքսանդրապոլում տեղի էր ունեցել հայ-թուրքական հաշտության պայմանագրի ստորագրումը: Դա կատարվել էր իշխանությունից հրաժարված Հայաստանի Հանրապետության կառավարության պատվիրակության կողմից, Դրոյի գիտությամբ ու համաձայնությամբ: Պայմանագիրը Հայաստա-

---

[6] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 1, գ. 32, թ. 12:

նին դրեց ծանր դրության մեջ, նվաստացնելով նրան: Պայմանագիրը ստորագրելու համար հայկական պատվիրակության լիազորությունը ճանաչել էր նաև իշխանությունից հեռացող Սիմոն Վրացյանի կառավարությունը դեկտեմբերի 1-ին:

Դրո-Սիլինի անդրանիկ հրամանը վերաբերում էր դեկտեմբերի 2-ի պատմական իրադարձությանը: Ազդարարվում էր, որ դեկտեմբերի 2-ին Հայաստանում հռչակվել է խորհրդային իշխանություն: Այդ հայտարարությունը (դեկտեմբերի 2-ը խորհրդայնացման օր ընդունելը) հանրապետությունում որոշ ժամանակ եղել է գործողության ուղեցույց և նշվել տարբեր շրջանակներում: Այսպես, Ասքանազ Մռավյանի 1922 թ. դեկտեմբերի 21-ի նամակում, հասցեագրված Պարսկաստանում ՀՍԽՀ ներկայացուցչությանը, ասված է, թե Հայաստանի խորհրդայնացման օրը նոյեմբերի 29-ն է, և ոչ թե դեկտեմբերն 2-ը, «ինչպես սխալմամբ դուք այդտեղ կատարել եք: Դեկտեմբերի 2-ի լեգենդան,- այնուհետև կարդում ենք նամակում,- տարածում են դաշնակցականները, որոնք ասում են իբր այդ օրը հոժարակամ կերպով իրենք իշխանությունը հանձնել են կոմունիստներին»[7]:

Ստեղծված խառնաշփոթությանը վերջ տալու համար Հայաստանի խորհրդայնացման առաջին տարեդարձի նախօրյակին (1921 թ. նոյեմբերի 29-ին) հանրապետության ժողկոմխորհը քննարկեց «Նախկին դեկրետներում ու հրամաններում Հայաստանի խորհրդային իշխանության ազդարարման օրը նոյեմբերի 29-ը և ոչ թե դեկտեմբերի 2-ը համարելու մասին» հարցը և ընդունեց որոշում: Նրա 1-ին կետում ասված է, որ բոլոր դեկրետներում ու հրամաններում Հայաստանում խորհրդային իշխանության հայտարարման օրը դեկտեմբերի 2-ի փոխարեն ընդունել նոյեմբերի 29-ը: Երկրորդ կետով Դրո-Սիլինի դեկտեմբերի 2-ի հրամանը հանվում էր դեկրետների ժողովածուից[8]:

Պետք է ընդունել, որ սխալ է նոյեմբերի 29-ը և դեկտեմբերի 2-ը միմյանց հակադրելը, քանի որ երկուսն էլ պատմական իրողություններ են: Մի դեպքում, Հայհեղկոմը ժամանելով Հայաստան, այն հռչակել է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, իսկ մյուս դեպքում՝ խաղաղ ձևով իշխանությունը հանձնվել է այդ հեղկոմին: Այնպես որ նոյեմբերի 29-ը և դեկտեմբերի 2-ը Հայաստանի խորհրդայնացման գործընթացի բաղկացուցիչ տարրերն են:

---

[7] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 148, թ. 61-64:

[8] Նույն տեղում, ց. 43, գ. 30, թ. 39 և հակ.: Տես նաև «ՀՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու», 1921 թ., N 13, էջ 113:

Ռազմական հրամանատարության մյուս կարևոր քայլը դեկտեմբերի 2-ին նրա արձակած հրամանն էր հայկական բանակի վերակազմավորման մասին: Բանակը վերակոչվում էր Խորհրդային Հայաստանի կարմիր բանակ, այսինքն այնպես, ինչպես Խորհրդային Ռուսաստանի բանակը: Բանակի կազմակերպական սկզբունքները ևս կրկնում էին ռուսականի օրինակը: Մտցվում էր քաղաքական կոմիսարների ինստիտուտը: Առանց կոմիսարների ստորագրության զորամասերի պետերի հրամանները ուժ չունեին[9]:

Դրոյի և Սիլինի սույն հրամանը նշանակում էր, որ Հայաստանում խորհրդային իշխանությունը փաստորեն սկսում էր գործել:

Ընդ որում, որոշ փաստաթղթերում (դեկտեմբերի 2-4-ը) Դրոն հիշատակվում է որպես Խորհրդային Հայաստանի զինված ուժերի հրամանատար, չնայած այդպիսին բացակայում է դեկտեմբերն 2-ի հայ-ռուսական համաձայնագրում: Իսկ ՀԽՍՀ դեկրետների ժողովածուում բերված հրամանի տակ Դրոյի ստորագրությունը դրված է «ՀԽՍՀ ամբողջ բանակի հրամանատար»:

Հայկական բանակի վերակազմության մասին շտապ ընդունված որոշումը պայմանավորված էր այդ վերակազմության անհրաժեշտությամբ ու նշանակությամբ: Կարմիր բանակն էր լինելու, դրա տակ հասկանալով նաև Ռուսաստանի բանակը, այն ուժը, որի վրա հենվելու էր Հայաստանի դրսից ներմուծված խորհրդային իշխանությունը:

Հիշյալ համաձայնագիրը սահմանում էր նաև այն հարցը, թե ինչպիսի ձև էր ունենալու իշխանությունը նորահռչակ Սոցիալիստական Հայաստանում՝ ապագայում և առաջիկա անցման ժամանակաշրջանում: Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը, ասված է համաձայնագրի 3-րդ կետում, ստեղծվում է ժամանակավոր Ռազմահեղափոխական կոմիտե, որին անցնում է ամբողջական իշխանությունը Հայաստանում:

Ընդ որում սկզբնապես անորոշություն է եղել նաև մայիսի 28-ի՝ Հայաստանի անկախության օրը նշելու կապակցությամբ: Մի հեռախոսային խոսակցության ժամանակ (1921 թ. հունիսի 21) Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Շահվերդյանի այն հարցին, թե տոնվելու է արդյոք Հայաստանի անկախության օր մայիսի 28-ը, Երևանից, հավանորեն արտաքին գործերի ժողկոմատից, հետևում է պատասխանը, թե «մայիսի 28-ը չենք տոնում»[10]:

---

[9] ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու: Պրակ 1, էջ 5-7:
[10] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 145, թ. 5:

Նոր իշխանությանն անցնելու պահին Հայաստանում չկային ոչ խորհուրդներ, ոչ հեղկոմներ: Դրանք միայն նոր էին ստեղծվելու: Խորհուրդների կազմակերպման համար պահանջում էր ժամանակ դրանց ընտրություններին նախապատրաստվելու համար: Անխուսափելի էր հեղկոմներին դիմելը:

Հայաստանի բարձրագույն իշխանություն Ռազմահեղափոխական կոմիտեն (ՌՀԿ) կազմավորվել էր Ադրբեջանում, ՀԿ(բ)Կ արտասահմանյան բյուրոյի կողմից: Հեղկոմներ ստեղծվեցին ըստ վարչական բաժանումների և գյուղերի: Հանրապետությունում կար 9 գավառ և 30-ից ավելի շրջան (գավառակ), իսկ 1920 թ. կազմակերպված նահանգները վերացվեցին: Դեկտեմբերի 5-ին ստեղծված Արարատյան նահանգի հեղկոմը (նախագահ՝ Թավաքալյան), գավառային իշխանություններ կազմակերպելուց հետո, դարձավ Երևանի գավառային հեղկոմ: Գավառային հեղկոմները, նշված է թերթում, ձեռնարկեցին «հեղափոխական իշխանության ապարատի» գործը և կարճ ժամանակում, վերջ տալով անիշխանությանը, հաստատեցին «Բանվորա-գյուղացիական դիկտատուրա»:

ՀՍԽՀ Ռազմհեղկոմի անդամները կոչվեցին ժողովրդական կոմիսարներ, բաժանելով կառավարման ֆունկցիաները: Ժողկոմներ դարձան նաև ուրիշներ: Երկրի կառավարման համակարգում հատուկ տեղ ուներ ներքին գործերի ժողկոմատը: Նա հանրապետության բարձրագույն վարչական մարմինն էր, որի միջոցով Հայհեղկոմը կառավարում էր երկիրը:

Հեղկոմների կազմակերպումը նոր իշխանության հաստատման սկիզբն էր: Նորի ստեղծումը տեղի էր ունենում նախկին իշխանության համակարգի ժխտման ու վերացման միջոցով:

Ուժը կորցրեց Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությունը, որը հենվում էր Ցարական Ռուսաստանի «Հավաք օրինացի» վրա (համապատասխան փոփոխություններով): ՀՍԽՀ սահմաններում գործող դարձան ՌԽՖՍՀ օրենքները, տեղում փոփոխություններ ու լրացումներ կատարելու իրավունքով: Դա ժամանակավոր էր մինչև Խորհրդային Հայաստանի կողմից սեփական օրենքների ընդունումը: Վերացվեցին նախկին իշխանության կառավարական հիմնարկությունները, իրենց պաշտոններով: Լիազորազրկվեցին բոլոր դիվանագիտական ներկայացուցչությունները, լուծարվեցին դատական հիմնարկությունները, որոնց փոխարինեցին ժողովրդական դատարանները և հեղափոխական տրիբունալները:

Վերացվեցին նախկին կարգերում գործած հասարակության բաժանումը ըստ դասերի ու քաղաքացիների դասային բաժանումների, դասային արտոնություններով ու սահմանափակումներով հանդերձ, դասային կազ-

մակերպություններն ու հիմնարկությունները, նաև քաղաքացիական բոլոր աստիճանները: Ի չիք դարձավ մարդկանց բաժանումը ըստ կոչումների (ազնվական, վաճառական, կալվածատեր) ու տիտղոսների (բեգ, խան, իշխան) և սահմանվեց բոլորի համար մեկ ընդհանուր կոչում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Հայերենն ընդունվեց որպես պետական լեզու:

Շարունակվում էր խորհրդային պետականության կազմավորման գործընթացը: Խորհրդային իշխանության նորաստեղծ պետական մարմինների համակարգում հատուկ դեր էր վերագրվում հանրապետության արտակարգ հանձնաժողովին, որը, ըստ հայեղկոմի համապատասխան դեկրետի, ստեղծվում էր «հակահեղափոխության, շահադիտության (սպեկուլյացիայի) և ի պաշտոնե հանցագործության դեմ մաքառելու համար»[11]: Փաստորեն արտակարգ հանձնաժողովը դարձավ խորհրդային իշխանության ամուր հենարանը, որը զինված ուժերի հետ միասին ապահովելու էր այդ իշխանության պահպանումն ու ամրապնդումը, գործի դնելով բոլոր հնարավոր միջոցները, առաջին հերթին բռնությունը հասարակության ու մարդկանց նկատմամբ: Տեղերում ևս ստեղծվեցին համապատասխան մարմիններ, որոնք կոչվում էին քաղբյուրո: Արտակարգ հանձնաժողովին կից ստեղծվեց հատուկ բաժին՝ կարմիր բանակում հակահեղափոխական հանցանքների դեմ պայքարելու համար:

Խորհրդային իշխանության պետականության հաստատման հետ միաժամանակ կազմավորվեցին Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպությունները, կուսակցություն, որին իր իշխանությունը զիջել էր Հայաստանի Հանրապետությունը: ՀԿ(բ)Կ Կենտկոմն էր կազմակերպում ու ղեկավարում խորհրդային իշխանության հաստատման գործընթացը: Երկրում աստիճանաբար հաստատվում և ամրապնդվում էր կոմունիստական կուսակցության մենատիրությունը:

Չնայած իր անվանը, Հայաստանի կոմկուսը ինքնուրույն և անկախ կուսակցություն չէր: Չուներ իր ծրագիրն ու կանոնադրությունը: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, ինչպես և մյուս խորհրդային հանրապետություններում, ՌԿ(բ)Կ բաղկացուցիչ մասն էր, որն օգտվում էր մարզային կազմակերպության իրավունքներով: Նրա միջոցով Հայաստանում իրականացվում էր ՌԿ(բ)Կ քաղաքականությունը:

ՀԿ(բ)Կ Կենտկոմը, որը 1920 թ. մայիսյան զինված ապստամբության պարտությունից սկսած գտնվում էր Ադրբեջանում և այնտեղից ղեկավարում էր կուսակցական աշխատանքը Հայաստանում, այստեղ վերադար-

---

[11] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու: Պրակ 1, էջ 7-8:

ծավ խորհրդայնացումից անմիջապես հետո: 1920 թ. դեկտեմբերի 21-ին Երևանում ձևավորվեց Հայաստանի կոմկուսի կազմբյուրոն, որի անդամներն էին Հ. Կոստանյանը, Հ. Լազյանը, Գ. Ալիխանյանը, Ի. Դովլաթյանը, Ս. Բաղդատյանը: Այնուհետև նրա կազմը համալրեցին Ա. Խաչիևը, Ա. Լալաևան, Աշ. Հովհաննիսյանը: Կենտկոմի տեխնիկական քարտուղարի պարտականությունները կատարում էր Գևորգ Ալիխանյանը:

Ձևավորվեցին գավառային ու շրջանային (գավառակային) կազմակերպությունները: Հանդես եկան առաջին սկզբնական բջիջները (կազմակերպությունները):

Խորհրդայնացումից հետո կատարվեց ՀԿ(բ)Կ անդամ-թեկնածուների հաշվառում և ցուցակագրություն, որի ընթացքում տեղի ունեցավ նաև զտում: Դրանից հետո, 1921 թ. սկզբին, կուսակցությունն իր շարքերում ուներ 5300 անդամ ու թեկնածու[12]: Կուսակցական կոմիտեներ ունեին բոլոր 9 գավառները և շատ շրջաններ: Կուսբջիջներ (կազմակերպություններ) կային մի շարք խոշոր հիմնարկ-ձեռնարկություններում ու գյուղերում: Առաջին կուսակցական կոնֆերանսը գումարեց մայրաքաղաք Երևանը, որի քաղաքային կոմիտեի քարտուղար ընտրվեց Ա. Խանջյանը: Մյուս քաղաքները, ինչպես նաև գավառներն ու շրջանները ևս անցկացրին կոնֆերանսներ, ընտրելով իրենց կոմիտեները[13]:

Կուսակցական կազմակերպությունները մեծ աշխատանք ծավալեցին բնակչության շրջանում նրանց խորհրդային իշխանության կողմը գրավելու, Դաշնակցության ազդեցությունից դուրս բերելու համար: Հրավիրվեցին քաղաքի ու գյուղի աշխատավորների, ազգային փոքրամասնությունների ժողովներ ու կոնֆերանսներ, որոնցում պատրաստակամություն էր հայտնվում օգնել նոր իշխանությանը՝ կենսագործելու նրա քաղաքականությունը:

1920 թ. դեկտեմբերի 6-ին Կարմիր բանակի 18-րդ հեծյալ դիվիզիայի զորամասերի մուտքը Երևան վերածվեց քաղաքի բնակչության հետ համատեղ ցույցի. «Կազմակերպվել էր ժամանողների հետ վիթխարի հանդիպում,- նկարագրել է թերթը այդօրվա երևանյան իրադարձությունը-, երեք ժամ շարունակ խիտ շարքերով ցուցարարներն անցնում էին Աստաֆյան պողոտայով»: Յուրաքանչյուրը ձգտում էր իր հարգանքը մատուցել կարմիր զինվորներին: Այդպիսի բան Երևանը չէր տեսել: Կարմիր դրոշները ծածանվում էին նախկին պառլամենտի շենքի առաջ: Ցուցադրված էին Մարք-

---

[12] Компартия Армении в цифрах и документах. 1920-1980. Сборник статистических и документальных материалов. Ереван, 1980, с. 14.

[13] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր: Երևան, 1967, էջ 315:

սի և Լենինի նկարները: Վերջապես երևացին կարմիր հեծելազորայինները: Հնչում էր բազմահազար «Ուռա»-ն: Պառլամենտի շենքի, որտեղ տեղավորված էր Հայկոմկուսի Կենտկոմը, պատշգամբից սկսվեցին ողջույնները առ Կարմիր բանակը[14]:

Համատեղ ցույցն ընդունեց ողջույնի խոսք Վ. Ի. Լենինին, որում Հայաստանի խորհրդայնացումը դիտվում էր որպես Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակ, «կոմունիզմի լայնարձակ ուղու» սկիզբ[15]:

Ընդ որում 1920 թ. դեկտեմբերին Հայաստան էին ժամանել ՌԽՖՍՀ - լուսժողկոմատի ֆոտո-կինո բաժնի թղթակիցներ Կ. Ա. Կուզնեցովը և Ա. Գ. Լեմբերգը, ըստ նրանց մանդատների, «Հայաստանում խորհրդային հեղաշրջման նշանավոր հեղափոխական իրադարձությունները» կինո և ֆոտո նկարահանման համար: Նկարահանված նյութերը նախատեսվել էին Համառուսաստանյան խորհուրդների 8-րդ համագումարում (1920 թ. դեկտեմբեր) ցուցադրելու համար[16]: Նրանք Հայաստանում մնացել են ժամկետից ավելի, ուստի թղթակիցներից մեկը դիմել է Հայհեղկոմին լրացուցիչ վարձատրություն ստանալու համար: Դիմումի վրա Հեղկոմի նախագահ Ս. Կասյանը արել է համապատասխան մակագրություն, իսկ վճարման մասին նշում է արել հեղկոմի քարտուղար Համլիկ Թումանյանը, 1921 թ. հունվարի 5-ին[17]: Ուրեմն, պարզ է, որ թղթակիցները Հայաստանում նկարահանումներ կատարել են: Ինչ վերաբերում է Խորհուրդների համագումարում նյութերի ցուցադրմանը, ապա այդ մասին որոշակի որևէ բան ասել դժվար է, քանի որ այն (համագումարը) կայացել էր դեկտեմբերին (22-29), երբ նկարահանողները շարունակում էին գտնվել Հայաստանում: Նշենք, սակայն, որ պահպանվել են Երևան ռուսական կարմիր բանակի մուտքը պատկերող կադրեր:

Համագումարում ողջույնի խոսքով հանդես է եկել նորաստեղծ Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Սահակ (Իսահակ) Տեր-Գաբրիելյանը: «Արևելքում միջազգային իմպերիալիզմի մի ամրոց ևս քանդվեց

---

[14] Боевой путь 11-й Красной армии в период установления и упрочнения Советской власти в Армении. Май 1920 — ноябрь 1921 гг. Сборник документов, Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», (այսուհետ ԲՀԱ), 1978, թիվ 1, էջ 78:

[15] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 416-417:

[16] ՀԱԱ, ֆ. 11, ց. 1, գ. 9, թ. 10 և հակ., 12 և հակ.:

[17] Նույն տեղում, թ. 9:

այս անգամ Հայաստանի աղքատ աշխատավորների ճնշման տակ»[18]. նշել է նա:

Գյուղացիության ժողովներն ընդգծում էին խաղաղություն և վարուցանքի հնարավորություն ստանալու կարևորությունը, որն իրականացավ Հայաստանի խորհրդայնացման, Խորհրդային Ռուսաստանի օգնության շնորհիվ[19]:

Կոմունիստական ինտերնացիոնալի գործադիր կոմիտեն իր ողջույնի հեռագրում Հայաստանի խորհրդայնացումը և դաշնակցական ռեժիմի տապալումը համարում էր «զգալի հարված համաշխարհային իմպերիալիզմին»[20]:

Կազմակերպվում էր գաղափարական-քաղաքական աշխատանքը խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության գաղափարախոսությունը մարդկանց գիտակցությանը հասցնելու, նրանց սեփականությունը դարձնելու համար: Այդ ուղղությամբ կարևոր դեր էր կատարում մամուլը: 1920 թ. դեկտեմբերի 7-ից սկսեց լույս տեսնել ՀԿ(բ)Կ կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթը (1921 թ. մայիսից «Խորհրդային Հայաստան»):

Կուսակցական և պետական ղեկավար գործիչները իրենց բանավոր ու գրավոր խոսքում աշխատավորությանը բացատրում էին նորաստեղծ իշխանության խնդիրները, նրանց հորդորում ստեղծագործական աշխատանքի:

Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանը 1920 թ. դեկտեմբերի 9-ին զեկուցումով հանդես եկավ Երևանի կուսակցական ժողովում, կանգ առնելով ներքին քաղաքականության խնդիրների վրա: Նախ, նորից կրկնվեց այն միտքը, թե իբր խորհրդային իշխանության հռչակումը «հեղափոխական բռնկման» արդյունք էր: Ապա Ս. Կասյանը խոսեց իշխանությունը պաշտպանելու և ամրապնդելու անհրաժեշտության, ներքին քաղաքականության, գյուղացիության ու մանր արտադրողների նկատմամբ մեղմ մոտեցում ցուցաբերելու, նրանց «ձեռք չտալու», տվյալ բնագավառում Ռուսաստանի և նույնիսկ Ադրբեջանի փորձից խուսափելու կարևորության մասին: Նշվեց, որ չի թույլատրվելու բուրժուական կուսակցությունների գոյությունը, սակայն չէր բացառվում առանձին անձնավորությունների ծառայությունների

---

[18] Սահակ Տեր-Գաբրիելյան, Հոդվածներ, ճառեր, փաստաթղթեր: Երևան, 1979, էջ 41:

[19] Վ. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ.: Երևան, 1975, էջ 63-65:

[20] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 415:

ընդունումը[21]: Ս. Կասյանի զեկուցումը ծրագրային նշանակություն ուներ Հայաստանի ղեկավար մարմինների համար:

Սակայն չնայած Ս. Կասյանի զեկուցման մի շարք ճիշտ դրույթներին, դրանց կենսագործման ընթացքում թույլ տրվեցին շեղումներ ու սխալներ:

Առաջին քայլերը կատարվեցին կադրերի հարցը լուծելու համար: Հայաստանն ուներ կադրերի մեծ կարիք՝ իշխանության բոլոր մակարդակներում: Առայժմ հարցը կարելի էր լուծել դրսի օգնությամբ՝ որքանով որ շատ հայեր էին աշխատում Ռուսաստանում, Ադրբեջանում և այլ հանրապետություններում:

ՀԿ(բ)Կ Կենտկոմը շրջաբերական գրությամբ դիմեց Ռուսաստանում գտնվող «բոլոր պատասխանատու կուսակցական ընկերներին» (հասկանալ՝ հայերին) «կուսակցական կարգապահության կարգով անմիջապես մեկնել Հայաստան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի տրամադրության տակ»: Ռուսաստանի կուսակցական մարմիններին խնդրվում էր օգնել, որ հիշյալ ընկերները և ուրիշներ, ում կարելի է նկատի ունենալ, ուղարկվեն Հայաստան[22]:

ՌԿ(բ)Կ Կենտկոմը 1920 թ. դեկտեմբերի 10-ին որոշում ընդունեց մի խումբ հայ գործիչներ Ռուսաստանից Հայաստան ուղարկելու մասին: Նրանց թվում էին Ա. Կարինյանը, Ա. Լուկաշինը, Դ. Տեր-Սիմոնյանը, Պ. Մակինցյանը, Ե. Գարագաշը, Վ. Երեմյանը և ուրիշներ[23]:

Ռուսաստանում կատարվող կադրերի հավաքագրման ընթացքի մասին տվյալներ է հայտնում Մոսկվայում Հայաստանի ներկայացուցիչ Տեր-Գաբրիելյանը 1921 թ. հունվարի 15-ի նամակում: Նշելով հավաքագրման դանդաղ ընթացքի մասին, Տեր-Գաբրիելյանը դրա պատճառը հասմարում է որոշ հայերի պաշտոնամոլությունը՝ ժողկոմից ցածր պաշտոն չակնկալելը: Իհարկե, դրանց թվին չեն պատկանում, այնուհետև կարդում ենք նամակում, Մյասնիկովը, Լուկաշինը և Կարինյանը: Մյասնիկովը նախատեսված է Հեղկոմի կազմի համար: «Հույս ունեմ, որ Մյասնիկյանի և մյուսների ժամանումով կուժեղանաք զգալի չափով և աշխատանքը կթեթևանա»,- գրել է Տեր-Գաբրիելյանը[24]:

Հավաքագրում էր կատարվում նաև Ադրբեջանում: Միայն 1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. հունվար ամիսներին Ադրբեջանը ներկայացրել էր ավելի քան 20 մարդու (կուսակցական և բանվոր մասնագետների) ցու-

---

[21] Ս. Կասյան, Ընտիր երկեր: Երևան, 1967, էջ 183-186:
[22] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 32, թ. 8:
[23] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 421:
[24] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 31, թ. 69-72:

ցակներ: Այդ մարդիկ, ըստ պահանջի, մեկնելու և ծառայելու էին Հայաստանում[25]: Նույնպիսի աշխատանք էր տարվում Վրաստանում:

2. «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը

Նորաստեղծ Հայաստանի խորհրդային իշխանությունը, չունենալով իր գործունեության ծրագիրն ու քաղաքականությունը, հետևեց Խորհրդային Ռուսաստանի ու Խորհրդային Ադրբեջանի օրինակին, փորձին: Դա, այսպես կոչված «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունն էր, որը Ռուսաստանում սկսել էր կենսագործվել 1918 թ. քաղաքացիական պատերազմի պայմաններում: Քաղաքացիական կռիվների ավարտից հետո Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները այլևս չէին հանդուրժում այն և 1920 թ. վերջին ու 1921 թ. սկզբին այնտեղ արդեն մտածում էին «ռազմական կոմունիզմից» հրաժարվելու և նոր քաղաքականության անհրաժեշտության մասին: Սակայն դա չնկատեցի՞ն, թե՞ չհասկացան Հայաստանի ղեկավարները և շտապեցին այստեղ կրկնել ռուսական օրինակը:

«Ռազմական կոմունիզմը» միջոցառումների համակարգ է, որում կենտրոնականը պարենմասնատումն էր: Գյուղացուն թողնվում էր (կամ պետք է թողնվեր) այնքան հաց, որքան պետք էր ուտելու և սերմացուի համար, մնացածը բռնագրավվում էր պետության կողմից, և դա արդարացվում էր պատերազմական պայմաններում բանակի և բանվորների պահանջները բավարարելու անհրաժեշտությամբ: Պետականացման էին ենթակա բոլոր գործարանները՝ խոշոր, միջին ու մանր, արհեստանոցները և այլ արտադրամիջոցները: «Ռազմական կոմունիզմը» ենթադրում էր նաև պարտադիր (հարկադիր) աշխատանք և այլ միջոցառումներ: Այդ քաղաքականության կենսագործման ընթացքում Ռուսաստանի կոմկուսի ղեկավարությունը եկավ այն եզրակացության, որ «ռազմական կոմունիզմը» կարող է ծառայել գրոհով սոցիալիզմի կառուցման միջոց, շրջանցելով ապրանքադրամական հարաբերությունները, շուկան, փողը՝ իրականացնել կոմունիստական սկզբունքները արտադրության և բաշխման նկատմամբ: Սակայն կյանքը մերժեց այդպիսի հնարավորությունը և թելադրեց որոնել սոցիալիստական շինարարության այլ ուղիներ ու միջոցներ:

Հայաստանի ղեկավարության մեջ բացակայում էր միասնությունը ներքին քաղաքականության հարցերում: Այդ բնագավառում ուժեղ հակասություններ ու տարաձայնություններ ունեին Հայհեղկոմը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը, ինչպես նաև այդ մարմինների կազմերն իրենց ներսում: Հակադիր

---

[25] Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 32, թ. 19-25:

խմբերի մեջ էին հայտնվել համեմատաբար «տարեց» և երիտասարդ կադրերը: Առաջինները կյանքի փորձի բերումով ավելի շրջահայաց էին և դրսևորում էին չափավոր մոտեցումներ, իսկ երիտասարդները կողմնակից էին խիստ ու ծայրահեղ մարտավարության այնպիսի հարցերում, ինչպես վերաբերմունքը նախկին մտավորականության, մանր բուրժուազիայի (գյուղացիության) և այլ հարցերում: Հակադիր տեսակետներ էին պաշտպանում Ասքանազ Մռավյանի, Սարգիս Կասյանի, Աշոտ Հովհաննիսյանի («տարեցներ», 34-45 տարեկան) և Ավիս Նուրիջանյանի, Գևորգ Ալիխանյանի, Իսահակ Դովլաթյանի, Հայկազ Կոստանյանի (երիտասարդներ) խմբերը: Երկրորդ խմբի դիրքերն ավելի ուժեղացան, երբ նրանց միացավ Ռուսաստանից ժամանած չեկիստ Գևորգ Աթարբեկյանը, որը բռնությունների գործադրման հարուստ փորձ էր ձեռք բերել Հյուսիսային Կովկասի արտակարգ հանձնաժողովում: Նա եկել էր որպես Հայաստանում Ռուսաստանի արտակարգ հանձնաժողովի ներկայացուցիչ: Կենտկոմում Գևորգ Ալիխանյանի իշխանությունը դարձավ վճռական, երբ նրա «փողոցային հայհոյանքներից» հետո Ասքանազ Մռավյանը և Սարգիս Կասյանը հեռացան այնտեղից:

Հայաստանում ճիշտ քաղաքականության ընբռնումը և կենսագործումը բարդանում էր այլ պատճառով ևս, որպիսին է տեղական հեղկոմների ցածր մակարդակը, նրանց թույլ գործունեությունը: Պետությունն ուներ որակյալ կադրերի մեծ պահանջ: Նման պայմաններում հեղկոմներ էին թափանցել խորհրդային իշխանության քաղաքականությունը գիտակցաբար կամ ոչ գիտակցաբար աղավաղող, հաճախ դաշնակցական հակախորհրդային տարրեր:

Կար մի հանգամանք ևս, որը բավական բնորոշ էր տվյալ ժամանակաշրջանի համար և սերտորեն առնչվում էր ներքին քաղաքականության հետ բոլոր բնագավառներում: Խոսքը դասակարգային սկզբունքի մասին է: Ընդունված էր այն տեսակետը, որ Հայաստանում բացակայում է կամ գրեթե բացակայում է խորը դասակարգային շերտավորումը, որն իսկապես իրողություն էր: Ուստի անհրաժեշտ էր համարվում խորացնել այդ շերտավորումը, վարել դասակարգային կռվի քաղաքականություն: Մամուլը և քարոզչությունն, ընդհանրապես, հագեցած էին քաղաքացիական պատերազմի կոչերով: «Մեր մամուլը,- գրել է Ասքանազ Մռավյանը 1921 թ.,- աղմկալից ու ճոճղան տոնով կոչ էր անում քաղաքացիական կռվի»[26]:

Բավական բնորոշ է նաև Ալ. Մյասնիկյանի դիտողությունը տվյալ հարցի կապակցությամբ, որը տեղ է գտել նրա լրագրային հոդվածներից:

---

[26] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 79, թ. 1:

Մի այլ հոդվածում Ալ. Մյասնիկյանը խոստովանում է, թե Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, հենվելով բանվորների ու գյուղացիների վրա (ընդ որում, դժվար է համաձայնվել այդպիսի տեսակետի հետ, թե նման հենարան գոյություն է ունեցել), հայտարարեց քաղաքացիական պատերազմ, այսինքն նա «պորտաբույծներին, բուրժուազիային և պարագիտներին անջատեց աշխատավորներից, վերջիններիս տիրող դասակարգերի խաբեբայություններից և նորանոր ժողովրդական աղետներից փրկելու համար»[28]:

Նիզակ ճոճողներից էր նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար, Հեղկոմի անդամ Ալեքսանդր Բեկզադյանը: Նա 1920 թ. դեկտեմբերի 23-ին ՀԿ(բ)Կ - Կենտկոմի անունից կոմունիստների ընդհանուր ժողովում հանդես գալով զեկուցումով, ներքին դրության հարցի կապակցությամբ նշել է, թե գյուղացիական Հայաստանում իշխանության հիմք ստեղծելու համար պետք է «սոցիալական շերտավորում մտցնենք», թե հեղափոխության հաջողության երաշխիքը «գյուղում դասակարգային պայքարի զարգացումն է»[29]:

Դասակարգային-կուսակցական մոտեցումը վերաբերում էր նաև հայկական սփյուռքին: Այն սկսվեց խորհրդային իշխանության առաջին իսկ օրից և աստիճանաբար ավելի ու ավելի խորացավ:

Քաղաքական մթնոլորտի շիկացման վրա խիստ բացասաբար էր անդրադառնում նաև անվստահությունը արևմտահայ գաղթականության և ժխտական վերաբերմունքի դրսևորումները Հայկական հարցի նկատմամբ:

Նման անբարենպաստ պայմաններում ծավալվեց «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կենսագործումը Հայաստանում, որը, երկրի տնտեսապես խիստ քայքայված լինելու պատճառով, չէր կարող չունենալ ծանր հետևանքներ:

1920 թ. դեկտեմբերի 8-ին Ռազմհեղկոմը հրաման արձակեց պարենային և այլ ապրանքների հայտնաբերման մասին: Պետական, հասարակական հիմնարկություններին և մասնավոր անձանց ի գիտություն հայտնվում էր նրանց պարտականության մասին, այն է՝ տեղեկացնել «իրենց մոտ գտնված պարենավորման մթերքների, նույնպես և վառելիքի ու լուսավորության նյութերի մասին»: Հրամանը չկատարողներին սպառնում էր հեղափոխական տրիբունալի պատիժը[30]: Պարզ էր, որ հայտարարություն-զգուշացմանը հետևելու էր բուն գործողությունը, որը չուշացավ: Դեկտեմբերի 10-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը հանդես եկավ «Հաց տվեք կարմիր բա-

---

[28] Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր: Երևան, 1957, էջ 418:
[29] Կոմունիստ, 25 դեկտեմբերի 1920 թ. (Ալեքսանդր Բեկզադյան, Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր: Երևան, 1981, էջ 84):
[30] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու. Պրակ 1, էջ 8:

նակին» դիմումով: Նույն օրը, ասված է դիմումում, Հայաստանի կառավարությունը հայտարարել է հացահատիկի կամավոր հավաքման մասին: Այն պարտադիր էր համարվում «կուլակների ու հարուստների համար» և ընդգրկելու էր բոլոր գյուղերն ու գյուղացիներին: Նրանք պարտավոր էին «գնված» հացահատիկը տեղափոխել իրենց փոխադրամիջոցներով: Կենտկոմը նաև պարզաբանում էր նման միջոցառման դրդապատճառները, ավելացնելով, որ սեփական միջոցներով սովի դեմ կռվելու համար պահանջվում են արագ ու վճռական քայլեր, թե գյուղի բնակչության «հացի ավելցուկը» պետք է անմիջապես տրամադրվի քաղաքի բնակչության ու կարմիր բանակի կարիքների համար[31]: «Կոմունիստ» թերթը հայտնում էր, որ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները և նրանց հեղափոխական իշխանությունը սեփական միջոցներով «սովի դեմ կռվելու համար» պետք է կատարեն «արագ ու վճռական քայլեր»[32]:

Հայաստանի բանվորներին և աշխատավոր գյուղացիներին ուղղված կոչում պարենավորման ժողովրդական կոմիսար (Ռազմհեղկոմի անդամ) Ալ. Բեկզադյանը գտնում էր, որ «ժողովրդական հարստությունները» չքացել և ամբարվել են «նրա արյունարբու թշնամիների՝ սպեկուլյատների, գյուղական համփաների և տգրուկների ձեռքում»: Կոչն արվել էր, մի կողմից, հիմնավորելու համար «ժողովրդից թալանված հացահատիկի ու մթերքների» վերադարձման անհրաժեշտությունը, մյուս կողմից, որը և ամենակարևորն էր, ժխտելու համար բնակչության մեջ տարածված լուրերը, «որ իբր խորհրդային իշխանությունը խլում է գյուղացու ամբողջ ունեցածը»[33]:

Մի այլ կոչում, որը կարող է արված լինել առաջինից ավելի վաղ, նույն ժողկոմը կարծում էր, որ ժողովուրդը ինքնակամ կհանձնի պարենի իր ավելցուկը, չսպասելով հրամանների՝ որ «ուժով կատարենք դրանք»[34]: Ընդ որում, Ալ. Բեկզադյանը «ավելորդ պարենի» հանձնումը դիտում էր որպես երկրորդ մեծ ակտ առաջին մեծ ակտից, այն է «ապստամբությամբ իշխանությունը խլելուց հետո»[35]:

Հացահատիկի բռնագրավմանն ավելացան միսը (անասունները), այլ պարենամթերքներ, արդյունաբերական ապրանքներ, այն ամենը՝ ինչը

---

[31] Կոմունիստ, 14 դեկտեմբերի 1920 թ.:
[32] Կոմունիստ, 11 դեկտեմբերի 1920 թ.:
[33] Կոմունիստ, 9 դեկտեմբերի 1921 թ. (Ալեքսանդր Բեկզադյան, Նամակներ..., էջ 85):
[34] Ալեքսանդր Բեկզադյան, Նամակներ...,էջ 89:
[35] Նույն տեղում, էջ 88:

պես երկրորդ մեծ ակտ առաջին մեծ ակտից, այն է «ապստամբությամբ իշխանությունը խլելուց հետո»[35]:

Հացահատիկի բռնագրավմանն ավելացան միսը (անասունները), այլ պարենամթերքներ, արդյունաբերական ապրանքներ, այն ամենը՝ ինչը կարող էր ընկնել բռնագրավողների ձեռքը՝ ինչպես գյուղում, այնպես էլ քաղաքում:

Ընդունվեցին բռնագրավման մասին նորանոր դեկրետներ ու հրամաններ: 1920 թ. դեկտեմբերի կեսերից մինչև փետրվարի սկիզբն ընդունված որոշումների թիվը հասնում էր մեկուկես տասնյակի: Դրանք վերաբերում էին Հայաստանի կարմիր բանակի կարիքների համար փոխադրական միջոցների «հայթայթմանը»: Նշենք, որ դա արվում էր խիստ կամայականորեն, որովհետև որևէ չափ կամ նորմա չէր սահմանվել: Այլ հրամանով հանրապետության հեղկոմին առաջարկվում էր «խլել մասնավոր անհատներից զինվորական համազգեստները»: Կազմակերպվեց երաժշտական գործիքների ցուցակագրություն, ըստ անհրաժեշտության դրանք հիմնարկությունների ու միությունների կարիքների համար բռնագրավելու նպատակով: Պետական մարմինների մոտ կենտրոնացվում էր հիմնարկությունների և մարդկանց «ամեն տեսակի թղթի և մեծ ծրարների պաշարը»: Իբր զննման միջոցով քաղաքացիները հանձնելու էին իրենց հեռախոսային-հեռագրական ապարատները, կաբելները, լարերը: Պինդ և հեղուկ վառելանյութը, անկախ նրանից, թե ում էին պատկանում, հաշվի էին առնվում կառավարության կողմից, առաջին իսկ պահանջով «երկաթուղիների կարիքների համար» օգտագործելու նպատակով: Անհրաժեշտ էր համարվում «պետության ամենագլխավոր ճյուղը տրանսպորտը պատշաճ բարձրության վրա դնել»: Ցուցակագրման ենթակա էին «Հայաստանում գտնվող բոլոր գրադարանները, առանց բացառության», որոնք կարող էին բռնագրավման ենթարկվել կարիքի դեպքում՝ «կրթական հիմնարկությունների ու միությունների համար»:

Բռնագրավման ենթարկված իրերի մեջ հիշատակվում են կոշկեղենը, մանուֆակտուրան, սպիտակեղենը, որոնք կարող էին բռնագրավված լինել «չարաշահներից, հակահեղափոխականներից, բուրժուազիայից և դասալիքներից»:

Վերջապես բնակարանների բռնագրավման ու խտացման հրամանի մասին, որն անհրաժեշտ էր ապահովելու զորամասերը, հիմնարկությունները (կառավարական ու հասարակական), պաշտոնատար անձանց և

---

[35] Նույն տեղում, էջ 88:

ուրիշների կարիքները: Քաղաք եկող զորամասերը սպասարկվում էին առաջին հերթին[36]:

Բռնագրավում էին բոլորը, ովքեր կարողանում էին, նաև զորքը, տարբեր պետական հիմնարկներ և ուրիշներ: Պարենավորման ժողովրդական կոմիսարիատը զգուշացրեց, որ բռնագրավման իրավունքը միայն իրենն է[37]: Նույնպիսի հրաման հրապարակեց ռազմական գործերի ժողկոմատը, հայտնելով, որ կարմիրբանակայինները Երևանում և գավառներում կատարում են անթույլատրելի բռնագրավումներ, զանցառուներին սպառնալով պատժել «հեղափոխական ժամանակի խստագույն օրենքներով»[38]:

---

[36] Բոլոր դեկրետները և հրամանները տես «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու»: Պրակ 1:
[37] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու. Պրակ 1, էջ 19-20:
[38] Նույն տեղում, էջ 31:

3. 1921 թ. փետրվարյան ապստամբությունը և քաղաքացիական կռիվները

Ծավալված բռնագրավումների և դրանց շուրջը ստեղծված մթնոլորտի մասին են վկայում հետևյալ փաստերը և հաղորդումները:

«Կատարվում է անխուսափելին» առաջնորդ հոդվածում «Կոմունիստ» թերթը հրապարակել է նյութեր Երևանում հունվարի 27-ին կատարված «ընդհանուր խուզարկության» մասին՝ հայտնաբերելու «պարենի այն ավելորդը, որ ամուր պահված էր նկուղներում ու հորերում»: Զարմանքից ու վրդովմունքից ապշել էին քաղաքի ունևորները, վարժապետական կրթված մտավորականությունը, սպեկուլյանտներն ու ճարպակալած քաղքենիները: Թերթը, ողջունելով «հեղափոխության խորացման այս առաջին նշանը», վստահություն էր հայտնում, որ բուրժուական- հակահեղափոխական տարրերին ընդհանրապես ուժաթափելու գործը կշարունակվի անհրաժեշտ հետևողականությամբ և քաղաքից փոխադրվելով գյուղ, «օրինակ կծառայի գյուղական կուլակներին ոչնչացնելու [նպատակով] չքավորությանը կազմակերպելու հեղափոխական շարժմանը»: «Կուստարվում է անխուսափելին,- եզրափակում է թերթը,- հեղափոխությունը մտնում է իր հունի մեջ»[39]:

Ծանր վիճակ էր ստեղծվում գյուղում: Մի կողմից այն ունեզրկվում էր, մյուս կողմից՝ ենթարկվում «դասակարգային շերտավորմանն», որպեսզի բորբոքվի քաղաքացիական կռիվը:

Ղամարլուի շրջանի գյուղերում բոլշևիկյան բջիջները, դիմելով չքավոր գյուղացիների օգնությանը, կուլակ-համփաներից, ըստ թերթի հաղորդման, «պարտադիր կերպով» հավաքել էին մեծ քանակությամբ հացահատիկ: Նույն գյուղերում հեղկոմները, բոլշևիկյան բջիջների միջոցով, գինաթափել էին «հակահեղափոխականներին կուլակներին ու մաուզերիստներին և հավաքած զենքը բաժանել կոմունիստ չքավոր գյուղացիներին»[40]:

«Կոմունիստ» թերթի համար գյուղի դասակարգային շերտավորումը տեսնելը և այն արհեստական կերպով խորացնելը և՝ միջոց էր, և՝ նպատակ: Ըստ թերթի առաջնորդող հոդվածի («Դասակարգային շերտավորումը գյուղում») գյուղի առաջ դրված բազմաթիվ խնդիրները, ինչպիսիք էին ցանքի կազմակերպումը, խորհրդատեսությունների ստեղծումը, դասալքության դեմ կռիվը, պարենավորումը և այլն, կարելի էր լուծել միայն այն դեպքում, երբ «գյուղում դասակարգային շերտավորումը կավարտվի և կունենանք գիտակից չքավոր գյուղացիության ուժեղ կազմակերպություն-

---

[39] Կոմունիստ, 29 հունվարի 1921 թ.:

[40] Աղքատ գյուղացի, 27 հունվարի 1921 թ.:

ներ»: Սա էլ կօգներ, որ գյուղն իրականացներ իր «կատարողական ընդունակությունից» վեր խնդիրը՝ սայլերի, խոտի, հացի, գարու պահանջը[41]:

Իսկ թե իրականում ինչպես էին տեղի ունենում բռնագրավումները և ինչի հանգեցին դրանք, վկայում է դարձյալ թերթը. «Մոտ երկու ամիս է, ահա, որ բռնագրավումները շարունակվում են»: Գյուղերից վերցվել է «ահագին քանակությամբ գարի, մսացու, խոտ, հաց և այլ պարենավորման նյութեր»: Թերթը նաև հայտնում է, որ բռնագրավումները կատարվում են անսիստեմ և անկազմակերպ[42]: Գյուղացին մատնվել էր սովի և զրկվել գարնանացանի հնարավորությունից: Նկարագրված միջոցառումները, ըստ հողժողկոմատի մի գրության, «թերևս եզակի հարուստների համար անզգալի անցան, բայց միջին քաղաքացուն (թե քաղաքացիներին, և թե գյուղացիներին) դրեցին անելանելի վիճակի մեջ»[43]:

Գյուղացու համար խիստ ծանր անցավ նաև մեծ չափերի հասնող սայլապարհակը, որ օգտագործվում էր հիմնականում զինվորական կարիքների համար: Երևանի գավառի հեղկոմների համագումարում (1921 թ. փետրվարի սկիզբ) ուժեղ դժգոհություններ հայտնվեցին այդ ամենի դեմ: Զորքի համար հաց ու խոտ հավաքելու և սայլապարհակի ամբողջ ծանրությունը, նշում էին ելույթ ունեցողները, ընկել էր աշխատավոր գյուղացիների վրա: «Պատճառն էն է, որ շատ գյուղական հեղկոմներում նստած են հարուստները, կուլակները», որոնք մատնացույց են անում աշխատավոր գյուղացիների տեղը և դրանով միաժամանակ խփում երկու նպատակ, մեկ իրենց հացն ու սայլերն էին ազատում, մյուսը չքավորներին չարացնում խորհրդային իշխանության վրա»[44]:

Խորհրդային հետազոտողներից քննարկվող հարցին առաջիններից մեկը, իրավունքի տեսանկյունից, հանգամանորեն անդրադարձել է Բագրատ Բորյանը տակավին 1920-ական թվականներին: Իր երկհատոր ուսումնասիրության մեջ, որն աչքի է ընկնում «ձախ» հայացքներով, փաստերի ճնշման տակ հեղինակ Բ. Բորյանը խոստովանում է փետրվարյան ապստամբության իրական պատճառները. կատարելով երկրի ներքին ու արտաքին դրության վերլուծություն, նա այդ պատճառները վերագրում է խորհրդային իշխանության քաղաքականությանը:

Ներկայացնելով «ռազմական կոմունիզմի» քաղաքականության միջոցառումները, Բ. Բորյանը բացատրում է, թե բնականաբար դրանք, որ ուղեկցվում էին բռնություններով, «եղան երկրում ապստամբության հիմ-

---

[41] Կոմունիստ, 5 փետրվարի 1921 թ.:
[42] Կոմունիստ, 27 հունվարի 1921 թ.:
[43] ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 362, թ. 430:
[44] Աղքատ գյուղացի, 5 փետրվարի 1921 թ.:

նական պատճառը»[45]: Կամ, գրել է նա, փաստերի մակերեսային թվարկումն իսկ, որ իրենց արտացոլումը գտան իշխանությունների դեկրետներում ու հրամաններում, «տալիս է Հայաստանում ժողովրդական ապստամբության պատճառների բացատրությունը»[46]:

Բորյանը ոչ անկարևոր դեր է հատկացնում նաև «հիմնական արտաքին պատճառներին»: Տարածքային հարցերը, գաղթականական զանգվածները, շրջափակումը, ցուրտը, քաղցը և այլն, որպես արտաքին փաստարկներ, կարդում ենք Բորյանի գրքում, իշխանության համար ստեղծում էին օբյեկտիվ աննպաստ իրադրություն: Այդպիսի աննպաստ պայմաններում Հայաստանի հեղկոմը դիմեց ազգայնացման ու բռնագրավման, հին հարկերի հավաքմանը, բանտերում թողնելով նրանց, ում պետք էր ազատել, ինչպես նաև չձգտեց կազմակերպել պետական ապարատը: Այդ բոլոր պահերը, միասին վերցրած, եզրակացնում է Բորյանը, «դարձան 1921 թ. փետրվարին Հայաստանում հակահեղափոխական շարժման և հեղաշրջման գործոններ ու պատճառներ»[47]:

Բռնագրավումներն ու խուզարկությունները, հետագայում նկատել է պատմաբան Գ. Գեղամյանը, հիմնականում կատարվում էին օրապահանջ նկատառումներով, անտեսելով դրանց վտանգավոր հետևանքները[48]:

«Ոչ ոք վստահ չէր,- գրել է ժամանակի դաշնակցական գործիչ Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ),- որ իր ունեցած մի կտոր հացը, մի պարկ ալյուրը, բրինձը, մի սենյակը, մի կովը, հորթը վաղը չեն գա ու խլի իրենից «հանուն օրենքի»[49]:

Հայաստանում բոլշևիկների երկուևկես ամսվա գործունեության հետևանքով հաստատվեց մի ռեժիմ, գրել է նախկին դաշնակցական-պետական գործիչ Հովհ. Քաջազնունին, «որին չի կարելի տալ ուրիշ անուն, քան սանձարձակ ու վայրագ բռնություն»[50]: Հ. Քաջազնունին իրավացիորեն այդ բռնությունների առանձնահատկություն է համարում դրանց անիմաստ, ավելորդ ու աննպատակ լինելը[51]:

---

[45] Б. А. Борьян, Армения, международная дипломатия и СССР. Часть II, М.-Л., 1929, с. 126.
[46] Նույն տեղում, էջ 135:
[47] Նույն տեղում, էջ 137:
[48] Գ. Գեղամյան, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում Նէպի տարիներին: Երևան, 1978, էջ 35:
[49] Հ. Իրազեկ, Մոտիկ անցյալից: Պատմական դեպքեր և ապրումներ. 1917-1922: Պեյրութ, 1956, էջ 95:
[50] Հովհ. Քաջազնունի, ՀՀ Դաշնակցությունը անելիք չունի այլևս: Թիֆլիս, 1923, էջ 50:
[51] Նույն տեղում, էջ 51:

Հայաստանում գործադրված տնտեսական բռնությունների կապակցությամբ հետագայում ուշագրավ նկատառումներ է հայտնել Անդրկովկասյան դաշնության ՀՍԽՀ լիազոր Հովսեփ Պողոսյանը, թերթում տպագրած հոդվածներից մեկում: «Մասնատումը,- գրել է նա,- որպես պետական օրենք, Հայաստանում գոյություն չի ունեցել: Դրա համար էլ Հայաստանում խորհրդայնացման իսկ սկզբից կիրառվել է որոշ պարենավորման քաղաքականություն, որոշ օրենքների ու դեկրետների շրջանակում»[52]:

Ճիշտ է, որ այն, ինչ կիրառվել է Հայաստանում, չի եղել Ռուսաստանում գործադրվածի կրկնությունը, որտեղ «ռազմական կոմունիզմը» և դրանից բխող կամ բաղկացուցիչ մաս կազմող պարենմասնատրումը եղել է ոչ միայն քաղաքացիական պատերազմի ծանր պայմանների թելադրանք, այլև տեսականորեն դիտվել է որպես սոցիալիստական շինարարության միջոց, ուղի (որը փաստորեն մնաց որպես ձախողված փորձ): Այդ իմաստով նշված հոդվածի հեղինակը ճիշտ է: Սակայն ճիշտ է և այն, որ Հայաստանում ժողովրդի նկատմամբ գործադրվել են բռնարարքներ, կատարվել է պարենի և այլ ապրանքների անկանոն ու համատարած բռնագրավում, որին Հ. Պողոսյանը տալիս է «որոշ պարենային քաղաքականություն» անունը, և որը էապես չէր տարբերվում պարենմասնատրումից: Կարևոր է նաև այն, որ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում գործադրված քաղաքականությունը ոչ միայն իրեն չարդարացրեց և դրած նպատակին չհասցրեց, այլև առաջ բերեց ժողովրդական լայն զանգվածների դժգոհությունը և ապստամբական ելույթները:

Հայաստանում վարած քաղաքականության և փետրվարյան ապստամբության հետ դրա ուղիղ կապի մասին խոսել է նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը այդ կուսակցության 1-ին (1922 թ.) և 4-րդ համագումարներում (1925 թ.). «Հակահեղափոխությունը ստեղծվել է ոչ թե դաշնակների աշխատասենյակներում, այլ հանդիսացել է մեր քաղաքականության արդյունքը»: «Անխուսափելի քաղաքական տեռորի պայմաններում, նշել է նա,- որ կիրառեցինք մենք նոյեմբերի 29-ից մինչև փետրվարի 18-ը, մի հետաքրքիր երևույթ է նկատվում, որ մենք չքավորությանը կարող էինք զարգացնել ի հաշիվ միջակ գյուղացիության, և միջակ գյուղացիության տրամադրությունը փոխվում է հօգուտ դաշնակցության: Սրա հետևանքն է, որ փետրվարին բռնկվում է դաշնակցական ապստամբությունը»[53]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարը ճիշտ լինելով փետրվարյան ապստամբության պատճառների հարցում, միաժամանակ ձգտել է ցուցաբերել

---

[52] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 41:
[53] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 41:

դասակարգային մոտեցում ապստամբների կազմի հարցում: Մեր կարծիքով նման մոտեցումը ոչ լրիվ է համապատասխանում իրականությանը: Բերենք թեկուզ ապստամբության ակտիվ մասնակից արևմտահայ գաղթականների օրինակը, որոնք հիմնականում չքավոր գյուղացիներ էին:

Երբ արդեն այդ պայթյունը տեղի էր ունեցել և երկիրը ներգրավվել էր քաղաքացիական պատերազմի հորձանուտը, Հայհեղկոմի և Հայկոմկուսի Կենտկոմի անդամ Ասքանազ Մռավյանը նամակով դիմեց Մոսկվայում գտնվող հայ գործընկերներին, նրանց միջոցով տեղեկացնելու համար Վ. Ի. Լենինին նամակի բովանդակության մասին և խնդրելու համապատասխան օգնություն: Ա. Մռավյանը պարզաբանում է «դաշնակցական արկածախնդրության» պատճառները, դա կապելով դաշնակցականների նկատմամբ գործադրած բռնությունների հետ: Թերթը աղմուկով և ճղճղան տոնով կոչում էր քաղաքացիական պատերազմի: Մթնոլորտը շիկանում էր յուրաքանչյուր ժամ: Ըստ Մռավյանի, դրանից օգտվեցին գաղտնի աշխատանք տանող դաշնակցականները և հաջողությամբ կազմակերպեցին իրենց հակախորհրդային ելույթը:

Այդ աշխատանքները (խստությունները), շարունակում է Ա. Մռավյանը, ղեկավարում էր Գևորգ Ալիխանյանը, ունենալով կուսկենտկոմի հավանությունը, առանց սևկայն, Հայհեղկոմի թույլտվության: Նամակում անդրադարձ է կատարված Գ. Օրջոնիկիձեի այն զգուշացումներին, որ պետք չէր պայքարել մտավորականության դեմ և ծեռք տալ Դրո-Վրացյան խմբին, մտավորականություն և խումբ, որոնց նկատմամբ Գևորգ Աթարբեկյանը և նրա կողմնակիցները ցույց էին տվել տղայական վերաբերմունք: Այդ մասին, լրացնում է Մռավյանը, ինքը և Կասյանը տեղեկացրել են Օրջոնիկիձեին, միաժամանակ միտված լինելով հեռանալ Կենտկոմից և Հեղկոմից:

Մի խոսքով, շարունակում է բացատրել Ա. Մռավյանը, մենք դաշնակցականների դեմ սուր և կատաղի պայքարի համար բոլորովին պատրաստ չէինք, որ Կենտկոմի վերջին ամսի քաղաքականությունը (Մռավյանը նկատի ուներ հայկական բանակի սպաների արտաքսումը Հայաստանից, բռնագրավումները, ուժասպառ սայլապարիակը և այլն) խորհրդային իշխանության նկատմամբ առաջացրել էր բացասական տրամադրություն:

Ա. Մռավյանը ակնկալում էր Լենինի պատասխան նամակը Հայկոմկուսի Կենտկոմի կամ Հեղկոմի անունով, որ նամակը կօգներ հաղթահարել Հայաստանում ստեղծված դժվարությունները, այնպես, ինչպես տեղի էր ունեցել Վրաստանի կապակցությամբ, երբ Լենինը հեռախոսային զրույց էր ունեցել Վրաստանի Կոմկուսի Կենտկոմի քարտուղար Մ. Օրախելաշվիլու հետ, նրան խորհուրդ տալով ամենաչափավոր քաղաքականությունը վարել մանր բուրժուազիայի և մյուս կուսակցությունների նկատմամբ:

Ընդ որում, Լենինի հեռախոսային զրույցը, հայտնում է Ա. Մռավյանը, եզրափակելով նամակը, ասես «կացնի գլխի հարված լիներ մեր քյալլագյոզների համար»[54]:

Լենինի պատասխան նամակը, ինչպես կտեսնենք, երկար սպասեցնել չտվեց:

Հեղկոմի նախագահ և Կենտկոմի անդամ Ս. Կասյանը Հայաստանում ստեղծված իրադրության մասին տեղեկացրել էր Գ. Օրջոնիկիձեին: 1921 թ. մարտի 29-ի գրության մեջ նա հայտնել է, որ Հայկոմկուսի Կենտկոմի մեծամասնության «քյալլագյոզական քաղաքականությունը» հասցրել է նրան, որ բնակչության մեծամասնության համակրանքը շրջվել է դաշնակցականների կողմը, որ «մենք պետք է դա գիտակցենք, չնայած արտաքին աշխարհի համար բղավում ենք բոլորովին հակառակը»: «Անարխիան (բազմիշխանությունը),- շարունակում է Ս. Կասյանը,- այն իշխանությունը, որը ինքնուրույն իրականացնում է հեղկոմը (նրա մեծամասնությունը), իշխանությունը, որը իրականացնում է Կենտկոմը (նրա մեծամասնությունը), իշխանությունը, որը ինքնուրույն իրականացնում է Կենտկոմը, ինչպես նաև պարենային ու բնակարանային քաղաքականությունը, որ հեղկոմից անկախ իրականացնում է Կենտկոմի մեծամասնությունը, վերջնականապես գցել է խորհրդային իշխանության հեղինակությունը բնակչության լայն շրջանների աչքում և հրել նրան այդ իշխանությունից»:

Վերլուծելով ստեղծված դրությունը, Ս. Կասյանը եզրակացնում է, որ բնակչության համակրանքը վերանվաճելու համար (քանի որ խորհրդային իշխանությունը չունի դասակարգային և ռազմական հենարան) հարկավոր է սկզբից ևեթ մշակել երկրի սոցիալ-տնտեսական պայմաններից բխող որոշակի և պարտադիր քաղաքականություն և հաստատել միասնական իշխանություն: Ելնելով դրանից, նա առաջարկում էր ցրել հեղինակազուրկ Կենտկոմը, նշանակել նորը, ապա արմատապես փոխել հեղկոմի կազմն ու անդամների թիվը, այն դարձնել միատարր[55]:

Հայկոմկուսի Կենտկոմի քարտուղար Գ. Ալիխանյանի 1921 թ. փետրվարի 7-ի հեռագիրը, հասցեագրված Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհրդի և ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի անդամ Գ. Օրջոնիկիձեին, հայտնում էր, որ Մռավյանը և Կասյանը հեռացել են Կենտկոմից, ինչպես նաև թողնում են զբաղեցրած պետական (խորհրդային) պաշտոնները: Ապա ավելացնում էր, որ Կենտկոմի պլենումը, իրեն իրավունք չվերապահելով ընդունել նրանց պաշտոնաթողությունը, ժամանակավորա-

---

[54] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 79, թ. 1 և հակ. - 6 և հակ.:

[55] ՀԱԱ, Միկրոժապավենների հավաքածու, թիվ 1, գ. 263, թ. 1 և հակ. - 2 և հակ.:

պես նրանց փոխարեն նշանակել է Դովլաթովին՝ հեղկոմի նախագահի պաշտոնակատար և Ավիսին՝ արտգործնախարարի տեղակալ[56]:

Չեկիստ Գևորգ Աթարբեկյանը, որը «ծախերի» հետ միասին կողմնակից էր խստություններին, իր հերթին փետրվարի 11-ին Օրջոնիկիձեին հայտնել էր, որ չի կարող աշխատել հեղկոմի նախագահության (Կասյան, Մռավյան), հեղկոմի մյուս անդամների և Կենտկոմի գզվռտոցի մթնոլորտում, որ հարկավոր է ուժեղ կերպով նորոգել Կենտկոմը և հեղկոմը[57]:

Օրջոնիկիձեի և Ավիսի միջև, հավանորեն փետրվարի 17-ին, տեղի ունեցած ուղիղ հեռախոսազրույցը լրացուցիչ տեղեկություններ է պարունակում Հայաստանում այդ օրերի շիկացած իրադրության վերաբերյալ: Նախ, պարզվում է, որ Երևանում և Հայաստանում չկային ռուսական զորքեր: Գլուխ էր բարձրացրել «հակահեղափոխությունը», որը, ըստ տվյալների, ձգտում է «վաղը գրավել Երևանը»: Երևանում և մյուս շրջաններում «բոլոր նախկին մարդիկ ձերբակալվում են»: Օրջոնիկիձեի տվյալները վերաբերում էին առաջիկա ծրագրային խնդիրներին: Դրանք էին չպետք է թույլ տալ, որ Կասյանը և Մռավյանը հեռանան: Հակահեղափոխությունը պետք է ճնշվի ամենայն խստությամբ: Հայաստանին օգնելու համար, Աթարբեկյանի միջոցով, հատկացվել էր 300 հազար ղռան (պարսկական փող), որ չի դադարեցվի ղռանի և նույնիսկ ոսկու վայրստայի տրամադրումը: Լուսաբացին սկսվելու էր «Վրաստանին թրխկացնելը» (հասկանալ նրա խորհրդայնացումը) և այդժամ «կբացվեն բոլորովին այլ հեռանկարներ»: Օրջոնիկիձեն հայտնում էր նաև ՀԿԿ Կենտկոմի անդամներին փոխելու և նրա կազմի նոր թեկնածուների մասին[58]:

Հայաստանում խիստ քաղաքականություն վարելու կողմնակիցները և Կասյան-Մռավյան խմբի մեղմ քաղաքականությունը մերժողների թվում էր նաև ՀՍԽՀ Գերագույն ռազմական տրիբունալի նախագահ, կոմունիստ Սերգեյ Բակշինովը, որը ժամանել էր Ադրբեջանից: ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյին ուղղված զեկույցում (1921 թ. փետրվարի 21) Ս. Բակշինովը գրել է, թե Հայհեղկոմի անդամների մեջ կան մարդիկ, ովքեր գտնում են, թե «չպետք է պարել Բաքվի նվագի տակ», թե չպետք է գրգռել քաղաքացիական պատերազմ»: Նա դժգոհում էր, թե չի կարողացել աշխատել, քանի որ ամեն վայրկյան իր վրա զգացել է հեղկոմի ճնշումը, որը «ոչ միայն չէր ցանկանում մտածել իր բացահայտ թշնամիներին գնդակահարելու, այլև

---

[56] ՀԱԱ, Միկրոժապավենների հավաքածու, թիվ 1, գ. 121, թ. 1 և հակ.:
[57] Նույն տեղում, գ. 126, թ. 1 և հակ.:
[58] Նույն տեղում, գ. 61, թ. 1-5:

նույնիսկ նրանց ձերբակալելու մասին»: Չհաշտվելով դրա հետ, Ս. Բակշինովը վերադարձել էր Բաքու[59]:

Միաժամանակ ժողովրդի մեջ դժգոհությունը խորանում էր նաև նախկին բանակի սպաների նկատմամբ խորհրդային իշխանության գործադրած բռնությամբ, բանակ, որը հռչակվել էր որպես նորաստեղծ Հայաստանի կարմիր բանակ: Իրապես այդպիսին դառնալու համար, ըստ խորհրդային իշխանության մոտեցման, պետք էր վարել համապատասխան դաստիարակչական, դասակարգային սկզբունքի քաղաքականություն: Հայաստանի իշխանությունը, գրել է «Կոմունիստ» թերթը, ջանք չի խնայում իր բանակը դասակարգային հիմունքներով կազմակերպելու և ուժեղացնելու համար: Այդ բանակի հիմնական առողջ կորիզը արդեն առկա է, քանի որ,- շարունակում է թերթը,- նա մաքրվել է «հակահեղափոխական սպայությունից» և կատարում է իր պարտքը հեղափոխական զանգվածների հանդեպ:

Նույն ոգով է արտահայտվել Հայաստանի զինվորական ժողկոմ Ավիս Նուրիջանյանը «Կոմունիստ» թերթում տպագրված հարցազրույցում:

Խոսքը նախկին հայկական բանակի շուրջ 1400 սպաների մասին է, ովքեր «վերադաստիարակվելու» նպատակով հեռացվել էին Հայաստանից և արգելափակվել Բաքվի բանտերում ու Ռյազանի (Ռուսաստան) համակենտրոնացման ճամբարներում[60]:

ՀՍԽՀ արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանը վկայում է, որ սկզբում ընթանում էր հայկական բանակի վերակառուցում, հաշվի էին առնվում բանակում ծառայող և նրանից դուրս գտնվող բոլոր սպաները, որ կիրառվում էին բանակի «մաքրազերծման» սովետական միջոցառումներ, ձերբակալությամբ հանդերձ: Ձերբակալվում էին «անբարեհույս տարրերը», նրանք, ովքեր ծառայել էին սպիտակ բանակներում ընդդեմ Ռուսաստանի խորհրդային իշխանության: Նույնի տվյալներով՝ մինչև 1921 թ.հունվարի սկիզբը Բաքու, 11-րդ Կարմիր բանակի հատուկ բաժնի տրամադրության տակ ուղարկվել էր շուրջ 400 մարդ, որից 100-120-ը սպիտակ բանակներում ծառայածներ էին:

Հայկական բանակի «պլանային վերակառուցման» ընթացքը խախտվեց, երբ 1921 թ. հունվարի 14-ին Հայաստան եկավ չեկիստ Գևորգ Աթաբեկյանը, որպես Ռուսաստանի արտակարգ հանձնաժողովի և 11-րդ - բանակի հատուկ բաժնի ներկայացուցիչ:

---

[59] Նույն տեղում, գ. 63, թ. 1 և հակ.:

[60] Կոմունիստ, 1 փետրվարի 1921 թ.: Г. А. Мартиросян. Офицеры Республики Аремния в концлагере города Рязани. Рязань, 2002.

Հեղկոմի և Հայկոմկուսի Կենտկոմի նիստում Գ. Աթարբեկյանը, վկայակոչելով Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի հրահանգը, խնդիր դրեց շտապ և անպայման Հայաստանից հեռացնել բոլոր նախկին սպաներին: Ըստ Ալ. Բեկզադյանի, չնայած նրան, որ Հայհեղկոմը դեմ էր այդպիսի միջոցառմանը, գտնելով որ այն քաղաքականապես խելամիտ չէ և չի բխում անհրաժեշտությունից ու կարող էր հանգեցնել անցանկալի հետևանքների, այնուամենայնիվ Գ. Աթարբեկյանն իրականացնում է տվյալ հրահանգը[61]:

Ըստ երևույթին Ալ.Բեկզադյանը ստացել է պատասխան, որի հիման վրա նա այնուհետև հայտնել է, թե ժողոված տեղեկությունների համաձայն Աթարբեկովը լիազորություն չի ունեցել «բոլոր նախկին սպաների զանգվածային արտաքսման համար», ավելին նրան Հայաստանի վերաբերյալ որևէ հրահանգ տրված չի եղել:

Հավելենք, որ Հայաստանի ղեկավարների մեջ կասկածներ են եղել այն կապակցությամբ, թե արդյո՞ք Գ. Աթարբեկյանը համապատասխան լիազորություններ ունեցել է: Այսպես, Մոսկվայում գտնվող ՀՍԽՀ արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանը մարտի 9-ին գրավոր հարցում է արել Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի կոլեգիայի անդամ Վարլամ Ավանեսովին, խնդրելով հայտնել, թե ինչպիսի ցուցմունքներ են տրվել Գևորգ Աթարբեկյանին «հայկական բանակի նախկին հրամկազմին Հայաստանից էվակուացնելու վերաբերյալ»[62]:

Հարցի վրա լույս է սփռում Մոսկվայում Հայաստանի ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի 1921 թ. հունվարի 15-ի նամակը ՀԿ(բ)Կ - Կենտկոմին[63]:

Վերջերս, հայտնում է նամակը, Մոսկվայում Հատուկ բաժինը (հասկանալ Կարմիր բանակի հատուկ բաժին) ստացել է Պանկրատովի (11-րդ - բանակի հատուկ բաժնի պետ) հեռագիրը, որով նա դժգոհում է, որ Բաքվում բանակի ներկայացուցիչը, Հեղկոմի (հասկանալ Հայաստանի հեղկոմը) համաձայնությամբ ու հավանությամբ իրեն թույլ չի տվել Ռուսաստան աքսորել «հակահեղափոխական հայ սպաներին»: Այդ մասին հայտնվել է նաև Ստալինին: Այդ կապակցությամբ հարցում է արվել Սահակ Տեր-Գաբրիելյանին: Նա պատասխանել է, որ ցանկալի է բոլոր նման հարցերը լուծել տեղում, հեղկոմի հետ միասին, տարաձայնություն չստեղծելու համար: Ստալինը Սահակ Տեր-Գաբրիելյանին հարցրել է, թե ինչու հեղկոմը թույլ չի տալիս «երկրամասը մաքրել հակահեղափոխականներից, և թե հեղկոմի,

---

[61] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 125-127:
[62] Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 85, թ. 10:
[63] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 31, թ. 69-72:

ու մասնավորապես Կասյանի վարքագիծը ծնում է անցանկալի խոսակցություններ»: Սահակ Տեր-Գաբրիելյանը պատասխանել է, որ տեղում ավելի լավ է երևում, և որ ինքը չի կասկածում, որ այդտեղ կարող է լինել որևէ դիտավորություն:

Պանկրատովը հեղկոմի «թույլ վարքագծի մասին» տեղեկության համար հենվել է «Արտակարգ հանձնաժողովի նախագահ Այվազովի բողոքների վրա»:

Վերջում Սահակ Տեր-Գաբրիելյանը ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամներին խիստ խնդրում էր չբարդացնել հարաբերությունները Ադրբեջանի և մասնավորապես այնտեղ աշխատող կենտրոնի ընկերների հետ:

Այսպիսով, նամակը պարզում է, որ հայ սպաների աքսորին տեղյակ են եղել (գուցե և թույլատրել են) Ռուսաստանի բարձր շրջանները, անձամբ Ստալինը, նաև այն, որ Հայաստանի հեղկոմը դեմ է եղել դրան: Նամակը լուծում է մի այլ հարց ևս. այն, որ Գևորգ Աթարբեկյանը աքսորի կազմակերպման համար կարող էր լիազորություն ստացած լինել:

Գևորգ Աթարբեկյանի պահանջով 1921 թ. հունվարի 20-ին կատարվում է նախկին սպաների նոր ցուցակագրություն և ծմռան ցրտին նրանց բոլորին ոտքով, Սեմյոնովկայի լեռնանցքով, հասցնում են Աղստաֆա, այնտեղից գնացքով՝ Բաքու, ապա Ռյազան (Ռուսաստան): Նրանց մեջ էին նաև գեներալներ Ֆ. Ի. Նազարբեկովը, Պ. Կ. Փիրումովը, Մ. Պ. Սիլիկովը, Ա. Գ. Հովսեփյանցը և ուրիշներ: Գեներալ Պողոս Բեկ-Փիրումյանցը, չտանելով ահավոր նվաստացումը, Երևանում ինքնասպան եղավ (հունվարի 19-ին):

Արխիվներում պահպանվել են նախկին սպաների ցուցակներ, որոնց տակ դրված է Հայաստանի արտակարգ հանձնաժողովի ժամանակավոր նախագահ Սերգեյ Մելիք-Օսիպովի ստորագրությունը, նշումով որ ցուցակավորումը կատարված է ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովի և հատուկ բաժնի թիվ 3 հրամանի համաձայն: Կա նաև 102 մարդու (Ռյազանի մարզային արխիվի տարբերակում 73 մարդու) «Ցուցակ ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովի և հատուկ բաժնի ձերբակալվածների», որոնց բոլորի համար «հանցագործություն» հարցի պատասխանն է՝ «դենիկինական», այսինքն ծառայել է Դենիկինի բանակում: Իսկ թիվ 3 հրամանը, որը հրապարակվել էր թերթում դեկտեմբերի 20-ին, թիվ 2 հրամանով (հրապարակվել էր դեկտեմբերն 12-ին) գրանցված բոլոր սպաներին, զինվորական ծառայության մեջ գտնվող և չգտնվող, հրամայվում էր ներկայանալ Արտակարգ հանձնաժողովին (Սալյարսկայա փողոց, թիվ 13): Հրամանը խախտողները ենթակա էին պատժի՝ հեղափոխական ժամանակի ամենախիստ օրենքնե-

ռով: Այլ նպատակով կազմված ցուցակներն այժմ հիմք դարձան նրանցում գրանցվածների արտաքսման համար:

Գրանցումը, գրել է Ալ. Բեկզադյանը, կատարվում էր նախկին պառլամենտի շենքում, որը շրջապատված էր հեծյալներով ու գնդացիրներով: Պահակների ուղեկցությամբ նրանց կենտրոնացնելով Քանաքեռում, հաջորդ օրը առավոտյան ճանապարհեցին դեպի Բաքու:

Նման ճանապարհորդության համար անպատրաստ սպաները 170 կիլոմետր ճանապարհը կտրեցին-անցան ոտքով: «Ճանապարհին չեն կերակրել,- գրել է Ալ. Բեկզադյանը,- սնվել են վաճառելով իրենց հագին ունեցածը: Թեթև հագնվածները խիստ մրսել են: Խոսում են Սեմյոնովկայի լեռնանցքում ցրտահարվածների մասին: Դիլիջանում նրանց կողոպտել են»: Եվ այնուամենայնիվ թերթը համարձակվել է տպագրել բժիշկ Թումասյանի անհավատալի տվյալները հունվարի 28-ի նրա տեսակցության մասին, սպաների առաջին խմբի հետ, Սեմյոնովկայում: «Մահվան և ոչ մի դեպք տեղի չէ ունեցել: Նրանք քայլում էին առույգ: Ելենովկայից մինչև Սեմյոնովկա շարժվում են մյուս խմբերը, բոլորը ողջ և առողջ: Ես չէի սպասում նման հանգիստ, համբերատար և կայտառ տրամադրություն: Բոլորը միաձայն ասում էին, որ իրենց համար մեկ է՝ ապրել և ծառայել Խորհրդային Հայաստանում, թե Խորհրդային Ռուսաստանում»: Միաժամանակ թերթը տեղեկացնում է, թե Երևանում սուտ լուրեր են տարածում սպաների արտաքսման հետ կապված ինչ-որ սարսափների մասին: Սակայն իզուր: Հակահեղափոխությանը չի հաջողվի օգտագործել սպաների «դժբախտությունը»[64]:

Ավելի կեղծ ու ցինիկ են Ավիս Նուրիջանյանի վերը նշված հարցազրույցում արտահայտված մտքերը: Այդ գործողությամբ, նշել է նա, մենք փրկեցինք ոչ միայն Հայաստանի բանվոր-գյուղացիների, այլև հենց իրենց սպաների կյանքը, որոնք պիտանի դարձան Խորհրդային Ռուսաստանում, այլապես զոհ էին գնալու հակահեղափոխությանը[65]:

Թե որքանով էին զոհ սպաներն իրենց ճակատագրից, վկայում են հետևյալ վավերագրերը: Նրանց մի մեծ խումբ, քվով 179 մարդ, 1921 թ. փետրվարի 18-ին Բաքվում կայացած ժողովում, լսելով զինվորական կոմիսար Գրիշինի զեկուցումը Ռուսաստանի իշխանությունների նկատմամբ հայ սպաների վերաբերմունքի հարցի մասին, ընդունեց բանաձև: Հիմնավորելով իրենց համակրանքը առ խորհրդային իշխանությունը և ցավով նշելով իրենց նկատմամբ ցուցաբերած անհասկանալի ու ոչնչով չպատճառաբանված անարժան վարմունքը, նրանք հայտնում էին ճանապարհի

---

[64] Կոմունիստ, 2 փետրվարի 1921 թ.:
[65] Коммунист, 29 января 1921 г.

և ներկա բանտային ծանր տառապանքների մասին, ավելացնելով, որ այդ ամենը իրենք համարում են անարդարացի, որպես առանձին մարդկանց կամայականության ու չար կամքի արտահայտություն:

Հայ սպաները խնդրում էին իրենց խոսքը հասցնել ՌԽՖՍՀ կառավարության նախագահ Լենինին, Ռազմածովային գործերի գծով ժողկոմ Տրոցկուն, ինչպես նաև Մոսկվայում գտնվող Հայարտգործժողկոմ Ալ. Բեկզադյանին[66], բնականաբար ակնկալելով նրանց օգնությունը:

Ռյազան աքսորված Աշոտ Դանիելյանը քրոջ միջոցով խնդրում էր Ս. Կասյանին և Հ. Նազարեթյանին, որոնք իրեն լավ էին ճանաչում, օգնել, փրկել իրեն: Աշոտ Դանիելյանը Ռյազանում, ինչպես հայտնում էր քույրը, «փայտ է կտրում, մաքրում է փողոցների ձյունը, մի խոսքով հարկադիր աշխատանքների մեջ է»[67]:

Հայաստանի բանակի սպայական կազմի աքսորը էլ ավելի էր սրում երկրում աստիճանաբար հասունացող լարվածությունը: 1921 թ. փետրվարին ներքին լարվածությունը ավելի էր խորանում, երբ դրությունը փրկելու նպատակով իշխանությունները դիմեցին դաշնակցականների զանգվածային բանտարկությունների, վտանգը կապելով նրանց գործունեության հետ:

Իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց հետո Դաշնակցության բյուրոն, Կարո Սասունու վկայությամբ, հեռացել էր Հայաստանից, այնտեղ թողել իր ներկայացուցչին, կուսակցական կազմակերպություններին ու անդամներին պատվիրել անցնել ընդհատակ ու պահպանել կուսակցությունը[68]: Իսկ Հայհեղկոմը չեղյալ էր հայտարարել դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը[69]: Դա նշանակում էր հետապնդել դաշնակցական ու մյուս սոցիալիստական կուսակցությունների անդամներին, «ծախ» դաշնակցականներին տեղ չտալ իշխանության մեջ և այլն:

Դեպի Վրաստան հեռանալու ճանապարհին, Ղարաքիլիսայի (Վանաձոր) մոտ դեկտեմբերի առաջին օրերին ձերբակալվել էին նախկին կառավարության և պառլամենտի մի խումբ անդամներ, թվով 16 մարդ[70], որոնք փոխադրվեցին Երևանի բանտ: Նրանց թվում էին նախկին վարչապետ Համո Օհանջանյանը, Ա. Չիլինգարյանը (Ռ. Դարբինյան), Վ. Նավասարդյանը: Երևանի «Կոմունիստ» (ռուսերեն) թերթը հաղորդագրություն էր հրապարակել այն մասին, թե դեկտեմբերի 2-ին հրաման էր ստորագրվել

---

[66] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 15, թ. 5-6:
[67] Հայաստանի Հանրապետություն, 30 ապրիլի 1991 թ.:
[68] Հայրենիք (ամսագիր, Բոստոն),1925, թիվ 12, էջ 92:
[69] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն: Երևան, 1993, էջ 544:
[70] ԲՀԱ, 1980, թիվ 2, էջ 39:

Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալության մասին: Թերթի նույն համարում հայտնվում էր, թե դեկտեմբերի 2-ին ձերբակալվել է «հայտնի հակահեղափոխական» Բախշի Իշխանյանը[71]:

Այդ հրամանը, որքան էլ զարմանալի է, արձակել էր Լեգրանը դեկտեմբերի 2-ին[72], այսինքն այն նույն օրը, երբ ստորագրել էր հայ-ռուսական համաձայնագիրը: Այդ նշանակում է, որ Լեգրանը ամենակոպիտ կերպով ոտնահարում էր իր իսկ ստորագրած համաձայնագիրը, իրեն տերուտնօրեն համարում Հայաստանում:

Երևանից հեռացան Ռ. Տեր-Մինասյանը (գինվորական նախարար), Լ. Քալանթարյանը (գաղտնի ոստիկանության պետ): Պաշտոնից հանվեց ՀՍԽՀ կարմիր բանակի հրամանատար Դրոն: Նրան թույլ տրվեց մեկնել Մոսկվա, իսկ հետագայում այնտեղից արտասահման: Հայաստանում մնալու և խորհրդային աշխատանքի ներգրավվելու հնարավորություն ունեին մի խումբ դաշնակցականներ և ուրիշներ՝ Ս. Վրացյանը, Ն. Աղբալյանը, Ս. Տիգրանյանը, Լ. Շանթը, Հ. Քաջազնունին, ինչպես նաև սոցիալիստ-հեղափոխական (էսեռական) և սոցիալ-դեմոկրատական (մենշևիկների) կուսակցությունների ղեկավար գործիչներ, որոնց նույնպես սպառնում էր բանտարկություն:

Այսպիսով, փաստերի համակողմանի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ Հայաստանում ստեղծված պայթյունավտանգ իրադրությունը խորհրդային իշխանության քաղաքականության հետևանք էր:

Ինչ վերաբերում է դաշնակցությանը, ապա նրա կազմակերպությունները և գործիչները տեղերում տարերայնորեն կազմակերպվում էին՝ որպես բռնությունների արձագանք: Հովհ. Քաջազնունին խոստովանում է, որ միայն առանձին դաշնակցականներ էին, այն էլ որոշ գյուղերում (ինչպես Կոտայքում) մասնակցություն ունեցել ապստամբության նախապատրաստությանը, որ այն կուսակցության գործը չի եղել: Նա միայն «տարվեց զանգվածային հոսանքով ու գլուխ անցավ մի շարժման, որի հեղինակը ինքը չէր»[73]:

Ապստամբության ղեկավարման հարցին անդրադարձել է նաև շարժման մի այլ մասնակից՝ Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ): Գործի գլուխ անցավ, գրել է նա, Դաշնակցության ղեկավար մարմին Հայաստանի կենտրոնական կոմիտեն, որը հեղինակն անվանում է նաև, ինչպես նշել

---

[71] "Коммунист" (Эривань), 7 декабря 1921 г.

[72] Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.: Երևան, 1999, էջ 374:

[73] Հովհ. Քաջազնունի, ՀՀ Դաշնակցությունը անելիք չունի այլևս, էջ 51:

ենք վերևում, Հայաստանի պատասխանատու մարմին: «Կազմակերպեց ժողովրդին, իրեն վայել հմտությամբ»[74]: Գրքի մի այլ էջում Իրազեկը հայտնում է, որ ՀՅԴաշնակցության Հայաստանի Կենտրոնական կոմիտեն կամ պատասխանատու մարմինը, այն է՝ Հայաստանի փրկության կոմիտեն, անցնելով ապստամբական գործի կազմակերպությանը, իրեն կոչեց Հայրենիքի փրկության կոմիտե, իսկ մարտական ուժերը՝ Հայրենիքի փրկության բանակ[75]:

Ապստամբության պատճառների հարցում, ինչպես արդեն նշվել է, հիշյալ հեղինակների հետ համակարծիք էր նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը: Կուսակցության 1-ին համագումարում (նաև 4-րդում) նա նշել է, թե հակահեղափոխությունը ստեղծվել է ոչ թե դաշնակների աշխատասենյակներում, այլ հանդիսացել է մեր քաղաքականության արդյունքը[76]:

Պատմագիտության մեջ արտահայտվել է նաև հակառակ տեսակետը, թե իբր իշխանությունից հրաժարվելուց անմիջապես հետո դաշնակցությունը նախապատրաստվել է զինված ապստամբության համար: Մասնավորապես նման միտք է արտահայտել իր գրքերում Շահանը: Նա գրել է, թե 1920 թ. դեկտեմբերի 20-ին (թե 20-ի մոտերքը) ստեղծվել է ՀՅԴ Կենտրոնական կոմիտե կամ Պատասխանատու մարմին, որը կոչվել է նաև «Փրկության կոմիտե», որի նպատակն է եղել ընդհանուր և միաժամանակյա ապստամբությունը, թե «Երևանի կամ մայր ապստամբությունը պետք է տեղի ունենար ոչ թե փետրվարի 18-ին, այլ ավելի շուտ, հունվարի վերջերին: Գործն արդեն կազմակերպված-պատրաստ էր այդ ժամանակի համար, երբ մի անակնկալ դեպք եկավ և խափանեց այդ ծրագիրը: Դա հայ սպայության աքսորն էր (հունվարի 15-ին)»[77]:

Հետաքրքիր է՝ եթե հայ սպաների աքսորը խափանեց հունվարի վերջին նախատեսված ապստամբությունը, ապա հարց է ծագում, թե ինչպես դա հնարավոր դարձավ փետրվարի 18-ին: Հետաքրքիր է նաև այն, որ Շահանի գրքերում ոչ մի խոսք չկա Հայաստանում ստեղծված ներքին դրության, խորհրդային իշխանությունների քաղաքականության մասին: Շահանի խոսքը անհամոզիչ է:

---

[74] Հ. Իրազեկ, Մոտիկ անցյալից, էջ 103:
[75] Նույն տեղում, էջ 104:
[76] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 9:
[77] Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրեն 1930-ի կովկասյան ապստամբությունները (վերագնահատումներ): Հատոր Ա, Մարսեյլ, 1934, էջ 236-238: Շահան, Երևանի համաձայնագիրը: Բոստոն, 1941, էջ 80:

Ուշագրավ է նաև Ս. Վրացյանի տեսակետը: Նա անհեթեթ համարելով իշխանությունը վերագրավելու համար Դաշնակցությանը վերագրվող միտքը, բացատրում է. եթե իրենց կուսակցությունը ցանկություն ունենար վերադառնալ իշխանության, ապա ինչու պետք է թույլ տար, որ Դրոն հեռացվի Հայաստանից կամ աքսորվեն հանրապետական բանակի 1200 զինվորականներ կամ անարգել բանտարկվեն հայ մտավորականության ընտիր դեմքերը: «Դաշնակցությունը,- շարունակում է Ս. Վրացյանը,- ի վիճակի էր բոլշևիկյան այդ արարքների մեծ մասի առաջն առնելու, նույնիսկ զենքի ուժի դիմելով, բայց նա խուսափում էր նման քայլերից, զգուշանալով, որ երկիրը քաղաքացիական կռիվների ասպարեզ չդառնա»[78]:

«Փետրվարյան հակահեղափոխության» պատճառների մասին ինքնատիպ, սակայն ոչ հիմնավոր, մեկնաբանություն է տվել ՌԿ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի քարտուղար և Կովկասյան ճակատի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ Գ. Օրջոնիկիձեն:

1921 թ. մարտի 10-ին Գրուզկավռոստայի աշխատակցի հետ ունեցած զրույցում Գ. Օրջոնիկիձեն նշել է, թե դաշնակցական հեղաշրջման ոգեշնչողներին պետք է որոնել Թիֆլիսում, որտեղ կազմակերպվել են Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնական Հանրապետության և այլ «Փրկության կոմիտեները» ամբողջ Կովկասում հակախորհրդային ապստամբություն բարձրացնելու նպատակով: Այդ պլանը, սակայն, հաջողվեց հեշտությամբ իրականացնել Հայաստանում: Այնուհետև Գ. Օրջոնիկիձեն անդրադառնում է Հայաստանում հեղաշրջման հաջողության պատճառներին[79]:

Նույնը կրկնում է Ս. Կասյանը մարտի 29-ին հենց Գ. Օրջոնիկիձեին ուղղված նամակում: «Հակահեղափոխությունը,- գրել է նա,- ինչպես արդեն պարզվել է, մտահղացվել է Հայաստանից դուրս և պետք է լիներ ոչ լոկալ, այլ համակովկասյան, նույնիսկ համաարևելյան»: Սա հակասում է հենց իր Ս. Կասյանի բազմիցս տված բացատրություններին և տվյալ նամակի բովանդակությանը: Տվյալ դեպքում Ս. Կասյանը ցանկացել է հարմար գալ վերադասին[80]:Գ. Օրջոնիկիձեի տեսակետը այնուհետև կայուն տեղ գրավեց խորհրդահայ պատմագրության մեջ[81]:

Շահանի և նրա տեսակետի կողմնակիցների համար հիմնավորում է ծառայել մասնավորապես անգլիական «Թայմզ» թերթի մի հաղորդագրություն, որը, ինչպես կտեսնենք, բնավ չի կարող բավարար հիմք ծառա-

---

[78] Սիմոն Վրացյան, Հայաստանի հանրապետություն, էջ 558:
[79] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան, էջ 500:
[80] ՀԱԱ, գ. 263, թ .1-2:
[81] Ա. Հակոբյան, Հայաստանի բանվորների և գյուղացիության հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում: Երևան, 1960, էջ 33:

յել համապատասխան եզրակացության համար: Ի՞նչ է հայտնել թերթը: Վերջինիս 1921 թ. հունվարի 27-ի համարում տպագրված նրա Կոստանդնուպոլսի թղթակիցը գրել է այն մասին, թե Հայաստանում կոմունիզմի իրականացումը հանդիպում է անհաղթահարելի արգելքների, քանի որ դաշնակցականների կուսակցությունը, որ ամենուրեք ունի իր կազմակերպությունները, «իր ամբողջ ազդեցությունը գործադրում է բոլշևիզմի դեմ»: Այնուհետև թերթն ավելացնում է, թե հունվարի սկզբին Թիֆլիսում կայացած կոնֆերանսում դաշնակցականների լիդերները «վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բոլշևիզմի դեմ»: Ապա արվում է վերապահություն, թե «սակայն առանց դրսի օգնության ոչ մի հույս չկա, որ Հայաստանը կարողանա ազատվել բոլշևիկների լծից»[82]:

«Շարունակել կռիվը» արտահայտությունը բնավ չի նշանակում անպայման ապստամբություն, այլ պայքար՝ ընդհանրապես (եթե, իհարկե, ճիշտ է կոնֆերանսի կայացած լինելու մասին տեղեկությունը): Երկրորդը, կարևոր է արված վերապահությունը դրսի օգնության մասին, որպիսին փաստորեն բացակայել է: Մի խոսքով, թերթի տվյալ հաղորդագրությունը բոլորովին չի խոսում Հայաստանում ապստամբության որոշման մասին:

Հայաստանում ստեղծված իրադրության և ընդհատակի հակախորհրդային գործունեության մասին տվյալներ են պարունակում խմբապետ Մարտիրոսի (Մարտիրոս Աբրահամյան) հուշերը, որ գրի է առել Եր. Հայրապետյանը և տպագրել «Հայրենիք» ամսագրում[83]:

Յուրայինների ծերբակալությունների մասին առաջին լուրերը ստանալուց անմիջապես հետո (1920 թ. դեկտեմբերի 21-ին) ՀՅԴաշնակցության բյուրոյի անդամ Ռուբեն Տեր-Մինասյանը իր մոտ, Ղսփանի Հանքերում գտնվող խմբապետ Մարտիրոսին պատվիրում է բոլոր միջոցները գործադրել ընկերներին բանտից ազատելու համար «կամ կաշառքի», կամ գաղտնի փախուստի և կամ ապստամբության միջոցով»: Չորս այլ ընկերներ Ռուբեն Տեր-Մինասյանի կողմից ուղարկվում են Պարսկաստան՝ արտասահմանի կուսակցական մարմինների հետ կապ հաստատելու համար:

Միաժամակ Ռուբեն Տեր-Մինասյանը, հենց Մարտիրոսի միջոցով, վերջինիս տված հանձնարարության մասին գրավոր նամակով տեղեկացնում է Գարեգին Նժդեհին (Գորիսում), Եղիշե Իշխանյանին (Դարագյազում), Դրոյին ու Վրացյանին: Նժդեհը, ըստ տվյալ հուշերի, Մարտիրոսին լրացուցիչ պատվիրում է կազմակերպել ապստամբների ղեկավար մար-

---

[82] Бюллетень НКИД РСФСР, N 66, 23 февраля, 1921 г. Բերվում է ըստ. Գրիգոր Չուբարյան, Դաշնակցության տաճկական օրիենտացիան և Հայրենիքի փրկության կոմիտեն: Երևան, 1929, էջ 37-38:

[83] Հայրենիք, 1956-1957 թթ. համարներ:

մին, անվանելով այն «Հայրենիքի փրկության կոմիտե», իսկ ապստամբական շարժումը՝ Հայրենիքի փրկության համար կազմակերպած շարժում: Այսպիսի անվանումները, ըստ Նժդեհի, նպատակ ունեին ցույց տալ, որ շարժումը «կուսակցական-դաշնակցական չէ, այլ համաժողովրդական»: Վրացյանը, ի պատասխան ստացած նամակի, առարկել է, ասելով՝ «Էս ինչ նոր ավանտյուրա է պատրաստվում»: Իսկ Դրոն, նկատի ունենալով Մարտիրոսին, ասել է՝ «Չպիտի գայիր: Որ եկել ես, առանց իմ գիտության ու հրահանգի ոչինչ չձեռնարկես: Այնպես կթաքնվես, որ ծերոնք էլ տեղդ չիմանան»:

1921 թ. հունվարի 2-ին խմբապետ Մարտիրոսը վերադառնալով հայրենի Բաշ-Գյառնի, գործընկերների հետ, ձեռնամուխ եղավ զինված խմբերի ու «Փրկության կոմիտեների» կազմակերպմանը Բաշ-Գյառնիի, Կոտայքի, Ախտայի, Հրազդանի և այլ շրջաններում: Նրա հետ էին Խնկոն և ուրիշ անվանի խմբապետեր: Մի շարք գյուղերում Փրկության կոմիտեներին հաջողվեց հեղկոմներից խլել իշխանությունը:

Ալագյազի տարածքում գաղտնի գործունեության և ընդհանրապես Հայաստանի ու Դաշնակցության շարքերում տիրող դրության մասին արժեքավոր են Կարո Սասունու տվյալները, որ պարունակում է նրա «Փետրուարեան ապստամբութիւնը» գիրքը: Կարո Սասունին կուսակցական աշխատանք էր կատարում տվյալ տարածքում: Ալագյազում և Թալինում էին գտնվում սասունցի արևմտահայերի խմբերը, որոնց ղեկավարներից էին Մուշեղը և Մուրադը:

Տեղերում աշխատանքի կազմակերպումը և ղեկավարումն իրականացնում էին կուսակցական կազմակերպությունները: Իշխանությունը բոլշևիկներին զիջելուց հետո ՀՅԴաշնակցության բյուրոն որոշել էր Հայաստանում թողնել իր ներկայացուցչին, իսկ կուսընկերներին հրահանգել էր գործել տեղական պայմաններին համապատասխան և գաղտնի պահպանել կուսակցության գոյությունը: Միաժամանակ նրանց չէր արգելում «մտնել նոր իշխանութեան մէջ եւ աշխատել երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման համար»[84]: Շուտով ստեղծվում է համահայաստանյան ղեկավար մարմին. 1920թ. դեկտեմբերի 19-ին Երևանում Սիմոն Վրացյանի, Եփրեմ Սարգսյանի, Հակոբ Տեր-Հակոբյանի (Իրազեկ) նախաձեռնությամբ կազմակերպվեց ՀՅԴաշնակցության Հայաստանի կոմիտեն, որում Սիմոն Վրացյանը ներկայանում էր որպես ՀՅԴ-ի բյուրոյի լիազոր:

---

[84] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը (1921 թ.): Պէյրութ, 1970, էջ 30:

Կոմիտեի հետ գործակցում էին ՀՅԴ Երևանի կենտրոնական կոմիտեի անդամներ[85]:

Մինչև այդ, դեկտեմբերի 15-ին, նույնպիսի («Դաշնակցական գաղտնի մարմին») մարմին էր ստեղծվել Արագածում, Կարո Սասունու, Սասունցի Մուշեղի և այլոց մասնակցությամբ[86]:

Որոշ հեղինակներ, հատկապես հակադաշնակցական ճամբարից (ռամկավար, հնչակյան, կոմունիստական), ելնելով հիշյալ փաստից, Հայաստանի կոմիտեին վերագրում են զինված ապստամբություն կազմակերպելու և ղեկավարելու դեր իշխանությունը բոլշևիկներին զիջելուց հետո Լեթ[87]: Իրականում Հայաստանի կոմիտեն կուսակցական-կազմակերպչական մարմին էր: Միայն հետագայում, ինչպես կտեսնենք, նա վերակառուցվեց և ստանձնեց այլ դեր:

Հայաստանի կոմիտեն ստեղծում էր կուսակցական փոքր խմբեր և սկզբում ամեն կերպ ձգտում էր «խլրտումների առաջն առնել և սպասել քաղաքականության պարզվելուն»[88]: Այդ մարմնի գործունեությունը դեռևս «շատ անզգալի էր»: հայտնում է Կ. Սասունին: Միայն հունվարի վերջերին, շարունակում է նա, մի նամակ ստացա Երևանից, որում Հայաստանի կոմիտեի անունից տեղեկացվում էր հայ սպաների աքսորի և այլ իրադարձությունների մասին, նշելով, թե «մինչ այդ ամեն վայրկեան կրնային հեղաշրջումը առաջացնել, բայց քաղաքական շահերը թույլ չէին տար»[89]:

Ամեն ինչ փոխվեց, գրում է Կ. Սասունին, փետրվարի առաջին կեսի ընթացքում, երբ տեղեկանալով դաշնակցական ընդհատակի աշխուժացման մասին, խորհրդային իշխանությունը դիմեց զանգվածային ձերբակալությունների: Եվ, այնուամենայնիվ, ըստ նույն հեղինակի, ինչպես Հայաստանի, այնպես էլ Ալագյազի կոմիտեները «ամեն ջանք կթափէին ժողովրդական զայրոյթը զսպելու եւ զինուած խումբերը, կուսակցական կարգապահութեան ուժով, հանդարտ պահելու»[90]:

---

[85] Նույն տեղում, էջ 72:
[86] Նույն տեղում, էջ 68:
[87] Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրէն ...:Հատոր Ա, Մարսէյլ, 1934: Հատոր Բ, Մարսեյլ, 1935: Շահան, Երևանի համածայնագիրը: Բոստոն, 1941: Ա. Եափուճեան, Ով կազմակերպեց փետրվարեան արկածախնդրութիւնը և ինչ եղաւ անոր հետևանքը: Գահիրէ, 1969: Ա. Հակոբյան, Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում: Երևան, 1960:
[88] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 72:
[89] Նույն տեղում, էջ 74:
[90] Նույն տեղում, էջ 76-77:

Դեռևս 1921 թ. հունվարի սկզբին խմբապետ Մարտիրոսի մարդիկ փորձել էին «բանտից փախցնել առաջին հերթին բժիշկ Համո Օհանջանյանին և Արտաշես Չիլինգարյանին (Ռուբեն Դարբինյան), որոնց կյանքը ամենից շատ էր վտանգված»: Սակայն փորձը ձախողվել էր: Այնուհետև շարունակվել էր զինված խմբերի կազմակերպումը և ապստամբության նախապատրաստությունը տեղերում:

Հունվարի 26-ին Ղարաղալա գյուղում (Կոտայքի շրջան) Մարտիրոսը հանդիպեց Կոտայքի գյուղերի ներկայացուցիչների հետ, որոնք 2 օր ևնց բերեցին իրենց գյուղացիների պատասխանը, որ պատրաստ են զենքի դիմելու: Նույնպիսի կազմակերպական աշխատանք էր տարվում այլ շրջաններում: Հակախորհրդային աշխատանքը արդյունք չտվեց Ղամարլուի շրջանում: Հունվարի 28-ին Ղարաղալայում որոշվեց նաև տվյալ տարածքում «հակախորհրդային ժողովրդական շարժման» ղեկավարի հարցը հօգուտ Մարտիրոսի: Ապստամբության պատրաստության մասին նամակ ուղարկվեց Ս. Վրացյանին, հարցնելով նրա կարծիքը, և խնդրելով հրահանգներ: Նամակատարը խմբապետ Ղազոյի եղբայր Աբգարն էր: Նա վերադարձավ հունվարի 30-ին, Կուռոյի (Սուրեն Թարխանյան) հետ: Կուռոն հայկական բանակի գնդապետ էր և կարողացել էր խուսափել աքսորից: Աբգարը բերել էր Ս. Վրացյանի պատասխանը Մարտիրոսին, որում ասված է (ըստ Մարտիրոսի հիշողության). «Ամեն կերպ աշխատիր արագացնել ապստամբությունը: Բոլոր դժվարությունները հաղթահարելով, պետք է կապվեք Կարո Սասունու հետ Ալագյազում և համաձայնության գանք միաժամանակ սկսելու ապստամբական շարժումը»[91]:

Այսպիսով, Ս. Վրացյանը ապստամբության անհրաժեշտությունն ընդունել է միայն հունվարի վերջերին: Ըստ Կարո Սասունու Ս. Վրացյանը և այլ գործիչներ, որ նախապես ապստամբությանը դեմ էին, միայն փետրվարի սկզբներին տեղի ունեցած «խելագար հալածանքների և գաղտնի գնդակահարությունների» ճնշման տակ ստիպված եղան «կողմնակից դառնալու յեղափոխութիւն առաջացնելուն»[92]:

Սկսվում է այդ հեղափոխության բուն նախապատրաստությունը: Այդ նպատակով կատարվում է աշխատանքի բաժանում: Շրջաններ են մեկնում Հայաստանի կոմիտեի անդամները և այլ գործիչներ, ինչպես Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ), Եփրեմ Սարգսյանը, Հովհաննես Տեեճյանը: Երևանում գործում էին Ս. Վրացյանը, Արշակ Հովհաննիսյանը, Ավետիս Օհանջանյանը: Ալագյազում ղեկավար աշխատանք էր տանում Կարո Սասունին: Վերջինս նշում է, թե նման նախապատրաստությունից հետո

---

[91] Հայրենիք, 1956 թ., թիվ 5, էջ 48-49:
[92] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 83:

սպասվում էր «ապստամբութեան դրօշը բարձրացնել եւ այդ քայլը ի կատար ածել միեւնոյն օրուան ընթացքին թե մայրաքաղաքէն, և թե կարեւոր բոլոր շրջաններէն: Բոլշեւիկներու դէմ բռնկելիք կռիվը ղեկավարել, տարերային շարժումները կարգի բերել եւ գրաւել բոլոր կարեւոր վայրերն ու առաջանալ դէպի Երեւան»[93]:

Ռազմական գործողությունների ծրագիրը, որի կենտրոնում Երևանի գրավումն էր, մշակում էին Կուռոն, Մարտիրոսը և ուրիշներ:

1921 թ. փետրվարի կեսերին Հայաստանում հասունանում էր խորհրդային իշխանությունից դժգոհ ժողովրդական զանգվածների ըմբոստությունը: Այն պոռթկաց հանրապետության կենտրոնական շրջաններում: Գավառներում, նշել է Ս. Վրացյանը, միմյանցից անկախ, ստեղծվել էին գաղտնի խմբեր, տեղական գործիչների, խմբապետների կամ զինվորականների գլխավորությամբ, Երևանում Հայրենիքի փրկության կոմիտե անունով կազմակերպության կողմից, որոնց նպատակը ժողովրդին պաշտպանելն էր: «Զուտ ժողովրդական, տարերային մի շարժում էր ինքնապաշտպանության բնազդից մղված,- գրել է նա,- ժողովրդական ցասումի բաժակը առատ լցված էր և առիթ էր պետք, որպեսզի պոռթկար»[94]: Ըստ Վրացյանի, այդպիսի առիթ դարձավ փետրվարի 9-10-ի գիշերը մարդկանց մի մեծ խմբի ձերբակալությունը: Իսկ դրա համար սկիզբ ծառայեց ոմն Լևոն Խանայանի, իբրև թե դաշնակցականների գործակալի, բացահայտումը: Ըստ խորհրդային տվյալների նա պետք է մահափորձ կատարեր չեկիստ Գևորգ Աթարբեկյանի, ինչպես նաև, հավանաբար, Ս. Կասյանի ու Ա. Նուրիջանյանի նկատմամբ[95]:

«Այդ տեռորիստին բերեցին բանտ,- գրել է բանտում գտնված Արշալույս Աստվածատրյանը,- ապա մի երկու օրից հետո տարան գնդակահարելու: Հետո իմացանք, որ այդ ամենը Չեկայի հնարած պատմությունն է: Ոմն Խանայան, վաղարշապատցի, հալածվելով Չեկայից և հետքը կորցնելու նպատակով, կանացի զգեստ հագել, բայց Երևանում բռնվել էր: Այդ աննշան դեպքից ահագին պատմություն շինեցին»[96]:

Հայաստանի Արտակարգ հանձնաժողովն այդ կապակցությամբ փետրվարի 10-ին արձակեց հատուկ հրաման, որն ազդարարում էր, թե Լևոն Խանայանը փետրվարի 9-ին բռնվել է «Մաուզեր» ատրճանակով խորհրդային իշխանության նշանավոր գործիչներից մեկի վրա մահափորձ կատարելիս: Այնուհետև, նրա (Խանայանի) միջոցով պարզվել է, որ դաշ-

---

[93] Նույն տեղում, էջ 84:
[94] Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 559:
[95] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 40, թ. 77-78:
[96] Գրական թերթ, 6 ապրիլի 1990 թ.:

նակցություն կուսակցությունը որոշում է ունեցել կատարել մի շարք ահաբեկչություններ պատասխանատու աշխատողների նկատմամբ:

Արտակարգ հանձնաժողովը ամենայն խստությամբ զգուշացնում էր, որ ստիպված է եղել ձերբակալել դաշնակցական մի շարք գործիչների, որպես պատանդներ, և որ դաշնակցականների յուրաքանչյուր փորձ, նույնիսկ աննշան, կհանգեցնի պատանդների գնդակահարությանը, ինչպես նաև ռազմահեղափոխական ժամանակների այլ խիստ միջոցների՝ պատանդների ընտանիքների նկատմամբ:

Արտակարգ հանձնաժողովի հրամանի տակ դրված են Ալիխանյանի, որպես Հայհեղկոմի նախագահ և Հայաստանի զորքի հատուկ բաժնի պետ Զոլոտիխի ստորագրությունները[97]:

Տվյալ հարցին և լարված իրադրությանը Արտակարգ հանձնաժողովը (Շ. Ամիրխանյանի ստորագրությամբ) անդրադարձավ նաև փետրվարի 13-ին Հեղկոմի նախագահին ներկայացրած զեկուցագրում:

Խոսելով «բանդիտիզմի» շարժման և «փոքրիկ դավադրությունների» մասին, Արտակարգ հանձնաժողովի նախագահը հայտնում էր, որ փետրվարի 8-ին ինքը պատրաստ է եղել դրության մասին «մանրամասն զեկուցում տալ Հայաստանի Հեղկոմին, առաջարկելով ձերբակալել այն բոլոր կասկածելի անձանց, որոնց մասին մենք նյութեր ունենք»: Սակայն դաշնակցականների «կին» հետախույզի (էջմիածնից եկած)՝ «հայտնի մաուզերիստ» Լևոն Խանայանի ձերբակալությունից հետո, որը մահափորձ էր կատարելու Աթարբեկյանի, ինչպես նաև հավանաբար Կասյանի ու Ավիսի դեմ, ագենտուրան, շարունակում է Չեկայի նախագահը, հայտնել է, թե «մեր թշնամիներից շատերը պատրաստվում են գիշերը փախչել»: Ուստի Չեկան ձեռնարկել է «հաշվառման մեջ եղած բոլոր կասկածելի անձանց ձերբակալումը, որը և արվեց Կենտկոմից մեզ օգնության ուղարկված 20 կոմունիստների օգնությամբ»: Այնուհետև նշվում է 106 մարդ ձերբակալելու մասին (խոսքը փետրվարի 9-11-ը երկու գիշերվա ընթացքում ձերբակալվածների մասին է):

Վերջում Արտակարգ հանձնաժողովի նախագահը պարտք էր համարում հայտնել, որ Երևան քաղաքում ռուսական զորամասերի բացակայությունը ոգևորում է բանդիտներին, որոնք մտադիր են հարձակում կատարել Երևանի վրա», և որ «անհրաժեշտ է քաղաքում ռուսական կայազոր ունենալ»[98]:

---

[97] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 3, թ. 73 (հրապարակված տարբերակում դրված է Շ. Ամիրխանյանի ստորագրությունը. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 476):

[98] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 479-481:

Հայաստանի Հեղկոմը փորձում էր զսպել Արտակարգ հանձնաժողովի անսանձ գործողությունները: Այսպես, փետրվարի 1-ին վերջինիս ուղղված գրությամբ Հեղկոմը, տեղեկացնելով Ղարաքիլիսայում (Վանաձոր) զանգվածային բանտարկությունների մասին, պահանջում էր պարզել դրանց պատճառները և պատասխանել Հայհեղկոմի նախագահությանը, զգուշացնելով, թե «առհասարակ պետք է կարգի հրավիրել այդ քաղբյուրոն, որի ահաբեկման տակ է գտնվում տեղական հեղկոմը»[99]:

Հեղկոմի զգուշացումները, սակայն, որևէ նշանակություն չունեցան: Բռնությունները շարունակվում էին աճող թափով: Բանտարկյալների ընդհանուր թիվը հասավ մինչև 3000-ի:

Բռնությունների ծավալման պահին, փետրվարի 12-ին, ՀԿ(բ)Կ - Կենտկոմը և Երևանի կոմիտեն «Խորհրդային Հայաստանի բոլոր գյուղացիներին» կոչում, բորբոքելով նրանց մտքերն ու զգացմունքները, հայտնում էին, թե «երիտասարդ իշխանության թշնամիները, դաշնակները, մաուզերիստները, կապիտալիստներին ծախված բազմաթիվ ավազակները պատրաստվում են խորտակելու ձեր դասակարգային իշխանությունը՝ դարձյալ ձեզ իրենց ստրուկը և գրաստը դարձնելու նպատակով»[100]:

Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը փետրվարի 12-ին կազմել է կալանքի տակ վերցվածների 2 ցուցակ. մեկը փետրվարի 9-ի լույս 10-ի գիշերվա համար, թվով 88 մարդ («հակահեղափոխականներ»), մյուսը հաջորդ գիշերվա համար, թվով 18 մարդ, ընդամենը՝ 106 մարդ: Նրանց մեջ էին Լևոն Շանթը, Նիկոլայ Աղբալյանը, Արմենակ Մաքսապետյանը, Գառնիկ Քալաշյանը, որպես Հայաստանի Հանրապետության պառլամենտի անդամներ, Գարեգին Հացկերյանը՝ պառլամենտի քարտուղար, միությունների միության նախագահ Սարգիս Սարգսյանը, կին դաշնակցականների ղեկավարներ Ելիզավետա Ստամբոլցյանը և Բեյբութ Մելիք-Ալլավերդովը, Դատական պալատի նախագահ Հովսեփ Ամիրխանովը, կադետների կուսակցության Կենտկոմի անդամ Սիրակ Տեր-Մարտիրոսովը: Տասնյակ ծերբակալվածների անունների դիմաց գրված է «դաշնակցական ակտիվ գործիչ»[101]:

Մինչև այդ բանտ էին նետվել նաև Արշ. Աստվածատրյանը, Ավ. Սահակյանը, Բ. Իշխանյանը (մենշևիկ), գնդապետ Նիկոլայ Ղորղանյանը, խմբապետ Համազասպը և ուրիշներ:

«Իմ մեջ միտք է ծագել,- գրել է Արտակարգ հանձնաժողովի նախագահ Շավարշ Ամիրխանյանը,- ծերբակալել նաև հայտնի մաուզերիստների

---

[99] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 24, թ. 2:
[100] Կոմունիստ, 12 փետրվարի 1921:
[101] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 40, թ. 75, 76:

ու դաշնակցականների բոլոր մոտիկ հարազատներին,- որի համար նա խնդրում էր Հեղկոմի համաձայնությունը[102]: Որոշ տվյալներով բոլշևիկները իբրև թե նախատեսել էին գնդակահարել 600 մարդու, «սակայն իրագործելու ժամանակ չունեցան»,- գրել է Իրազեկը[103]:

Փետրվարի 10-ին Հակոբ Տեր-Հակոբյանը և Եփրեմ Սարգսյանը Կոտայքի Զառ գյուղում հանդիպել էին Կուռո Թարխանյանի և Մարտիրոսի հետ, ծանոթացել նախապատրաստական աշխատանքներին: Փետրվարի 12-ին շրջանի 6 գյուղերում գրավվեց իշխանությունը: Թազաքյանդը ևս - միացավ ապստամբներին, ծերբակալելով գյուղի բոլշևիկներին:

1921 թ. փետրվարի 13-ին Զառ գյուղում Հայաստանի կոմիտեի նախաձեռնությամբ տեղի ունեցավ կարևոր խորհրդակցություն, որը ղեկավարում էր Հակոբ Տեր-Հակոբյանը: Խորհրդակցությունը որոշեց ապստամբության ընդհանուր ղեկավարի և ժամկետի հարցերը: Ապստամբական ուժերի հրամանատար նշանակվեց Կուռո (Սուրեն) Թարխանյանը, տեղակալ՝ Մարտիրոսը: Ապստամբությունն սկսվելու էր փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերը, ժամը 3-ին: Հայաստանի կոմիտեն վերակոչվեց Հայրենիքի փրկության կոմիտե (կամ՝ Հայաստանի փրկության կոմիտե): Այդպիսին էր նաև ռազմական ուժերի ղեկավար, անկուսակցական սպա Կուռոյի պայմանը, որի իմաստն այն էր, որ շարժումը ոչ թե կուսակցական է, այլ ժողովրդական: Որպեսզի գործը չվերագրվի միայն Դաշնակցությանը, նշել է Կ. Սասունին «մեր ընկերները ընդառաջ էին գնացել այդ ցանկությանը և այդ անունով էլ սկսեցին գործել»: Իսկ Ս. Վրացյանը այդ կապակցությամբ գրել է, թե գաղտնի խմբակներ էին ստեղծվել շրջաններում և մայրաքաղաքում՝ Հայրենիքի փրկության կոմիտե անունով:

Զառի ժողովի որոշումների և ապստամբության ժամկետի մասին Հայրենիքի փրկության կոմիտեն ծածկագիր նամակով տեղեկացրեց Երևանի, Զանգիբասարի, Ծաղկածորի ու Ալագյազի ուժերի ղեկավարներին, ովքեր, իրենց հերթին, այդ մասին հայտնելու էին մյուսներին: «Ուշացնել անկարելի է,- գրված է նամակում,- Նախ, որ այժմ զօրք չունին Երեւանի մէջ. Երկրորդ, իւրաքանչիւր ժամը նշանակութիւն ունի մեզի համար: Բռնութիւնները անտանելի են: Բանտարկեալներու կեանքը վտանգուած է»[104]:

Մասնավորապես Կարո Սասունուն նամակը հասել է հաջորդ օրը, փետրվարի 14-ին: Հայաստանի կոմիտեի անդամները, գրել է Կ. Սասունին,

---

[102] Նույն տեղում, թ. 77-78:
[103] Հ. Իրազեկ, Մոտիկ անցյալից, էջ 102:
[104] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 90:

հայտնում էին, թե «բանտարկեալներու ազատագրման գործը կվերածէր մի աւելի լայն շարժումի»[105]:

Պատասխան նամակում Կ. Սասունին (ծածկանունը՝ Ռիվարեց), հավաստելով ՀՓԿ-ի որոշման ստացումը, վստահեցնում էր, որ չնայած հարձակման համար մնացած կարճ ժամանակին, ինքն անպատճառ սկսելու է իրականացնել առաջադրված խնդիրները: Փետրվարի 16-ին նա արձակեց թիվ 1 հրամանը Արագածի ուժերի հրամանատար Սասունցի Մուշեղին: Ըստ հրամանի այդ ուժերը (մի մասը հեծյալ) 4 տարբեր վայրերից շարժվելու և մեկտեղվելու էին Ագարակում, այստեղից ուղղություն վերցնելով դեպի Աշտարակ և Էջմիածին, ճանապարհին չեզոքացնելով Կոշում տեղակայված խորհրդային կայազորը: Էջմիածնում փակցնելու համար պատրաստվել էին թռուցիկներ, որոնցում Կարո Սասունին ներկայանում էր որպես Սիմոն Վրացյանի նախկին կառավարության «քաղաքացիական ու զինվորական գործերի լիազորը» իր շրջաններում[106]: «Հայրենակիցներ, ասված է հարձակումից առաջ մարտիկներին ուղղված Կարո Սասունու խոսքում,- յիշեցէք Հրայրը եւ Գէորգ Չաւուշը, ձեր ֆետայի նախնիքները»[107]:

Հիշյալ նամակը նկատի ունենալով, Ս. Վրացյանը գրել է, թե ընդհանուր ապստամբություն առաջ բերելու մասին որոշումն ընդունվեց փետրվարին Կոտայքի Զառ գյուղի խորհրդակցությունում, որը հապճեպ կազմակերպվել էր Երևանի Փրկության կոմիտեի կողմից: «Զառի ժողովը անզոր մի ճիգ էր ալեկոծված տարերքին որոշ ուղղություն տալու»[108]: Տեղական, տարերայնորեն ծագած, անջատ-անջատ շարժումները, Երևանի Հայրենիքի փրկության կոմիտեի միջոցով միանալով, ստացան ընդհանուր բնույթ[109]:

Վերոնշյալ գաղտնի խմբերի մասին ավելի մանրամասն տեղեկություններ են պահպանված Կարո Սասունու «Փետրուարեան ապստամբութիւնը» աշխատության մեջ: Նախ, պարզվում է, որ հիշյալ ջոկատների մի մասը նախկին խմբապետների ուժերն էին, որ դեռևս չէին զինաթափվել ու կազմացրվել, ընդ որում չէին էլ թաքնվել: Իսկ Կարո Սասունին, այցելելով այդ խմբերի մի մասին, նրանց պատվիրել էր լինել պատրաստ, չցրվել, որովհետև «թրքական վտանգը կրնար աղետալի հետեւանքներ ունենալ

---

[105] Նույն տեղում, էջ 82:
[106] Նույն տեղում, էջ 92-96:
[107] Նույն տեղում, էջ 101:
[108] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 560:
[109] Նույն տեղում, էջ 559:

մեր ժողովուրդին համար»[110]: Ավելին, այդ ջոկատները իրենց հավատարմությունն էին հայտնել նոր իշխանությանը: Մի խումբ խմբապետներ ՀՍԽՀ կարմիր բանակի հրամանատար Դրոյին ուղարկել էին հեռագիր, որում ասված է. «1500 սասունցի, մշեցի եւ խնուսցի արեւմտահայ ծիաւորներ ու հետեւակներ իրենք զիրենք կը դնեն Խորհրդային Անկախ Հայաստանի իշխանութեան տրամադրութեան տակ»: Հեռագիրը հրապարակվել էր ՀՍԽՀ «Կոմունիստ» կենտրոնական պաշտոնաթերթում[111]:

Հակաթուրքական այդ ուժերը իրերի ընթացքով դարձան նաև հակախորհրդային: Խորհրդային իշխանության մարմինները փորձեր էին կատարել զինաթափել խմբերին, սակայն հիմնականում դրանք անցել էին ապարդյուն:

Կարո Սասունու միջոցով գավառների խմբապետները կապ էին պահպանում Երևանում գտնվող Դրոյի և Ս. Վրացյանի հետ: Գավառների հետզհետե ընբռստացող տրամադրություններին նրանք պատասխանում էին հանդարտության կոչով: Դրոն, գրել է Կարո Սասունին, պաշտպանում էր այն տեսակետը, թե «ոչ մէկ յեղաշրջում տեղի չունենայ», թե դա ամեն վայրկյան կարելի է կատարել, բայց «քաղաքական կացութիւնը այդ թոյլ չէր տար»:

Ինչ վերաբերում է Ս. Վրացյանին, ապա նա ևս մինչև վերջին օրերը կանգնած էր խաղաղության տեսակետի վրա, մյուս կողմից, բոլշևիկ ղեկավարներին հորդորում էր վարել մեղմ քաղաքականություն[112]:

Ապստամբության պահի ընտրությունը նպաստավոր էր նաև այն տեսակետից, որ Երևանից դուրս էին բերվել 11-րդ կարմիր բանակի զորամասերը (18-րդ դիվիզիայի 106-րդ հեծյալ գունդը): Ձմեռային պայմաններում, երբ փակ էին Հայաստան մտնող ճանապարհները, իսկ մենշևիկյան Վրաստանը և Ալեքսանդրապոլի թուրքական օկուպացիան արգելակում էին միակ երկաթուղու գործունեությունը, բանակը զրկվել էր պարենից և կարող էր սովի մատնվել: Ապստամբության պահի ընտրությունը (փետրվարի 16), գրել է զինվորական գործիչ Մ. Կուզնեցովը, պատահական չէր: Այդ ժամանակ 11-րդ բանակի բոլոր զորամասերն անցել էին վրացական սահմանը՝ «օգնության հասնելու հեղափոխական դրոշը պարզած Լոռվա ապստամբ գյուղացիությանը, որի պատճառով և նրա հրամանատարության ամբողջ ուշադրությունը կենտրոնացած էր Թիֆլիսի վրա»[113]:

---

[110] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 63:
[111] Նույն տեղում, էջ 64:
[112] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 69:
[113] "Наша правда", 12 января 1922 г.

Հայաստանում և այնտեղ տեղակայված զորքի համար ստեղծված ծանր դրության մասին 1921 թ. հունվարի 12-ին Ստալինին տեղեկացրել է Չիչերինը, 11-րդ բանակի հրամանատար Գիտտիսի տվյալների համաձայն: Հայաստանի և մեր զորամասերի դրությունը կատաստրոֆիկ է, գրել է Չիչերինը: Պատճառը երկաթուղային ճանապարհի փակումն է Վրաստանի կողմից: Թերևս կարող է անհրաժեշտ դառնալ, եզրակացնում է Չիչերինը, մեր զորամասերի հետկանչը: Ընդ որում, ժողկոմը հայտնում է նաև այն մասին, թե թուրքերի հետ բանակցություններ վարող դաշնակցականները կարող են գալ իշխանության, որը նա դիտում էր «լուրջ հարված Արևելքում խորհրդային իշխանության հեղինակությանը»[114]: Նշենք, որ հայ-թուրքական նման բանակցությունների մասին տվյալները չեն հաստատվել:

Այսպիսով Զառի ժողովի որոշումները նշանակում էին, որ արդեն գոյություն ուներ ապստամբության ծրագիր, ապստամբության ղեկավարություն, հանձին Հայրենիքի փրկության կոմիտեի և այն սկսելու ժամկետ: Ապստամբության վճռական կողմնակից ու ղեկավարներից էր նաև Երևանում ազատ պայմաններում գտնվող դաշնակցական նշանավոր գործիչ Սիմոն Վրացյանը:

Պարզվում է, որ ապստամբության նախապատրաստության մասին տեղյակ են եղել նաև ՀՅԴ Բյուրոյի Անդրկովկասում գտնվող որոշ անդամներ, որոնք ևս կանգնել են ապստամբության գլուխ: Այդ տեսակետից խիստ ուշագրավ է «ՀՅԴ Բյուրոյի հերթական անդամ» Արշակ Ջամալյանի և «անդամ-քարտուղար» Գևորգ Ղազարյանի (նրանք հավանորեն գտնվելիս են եղել մենշևիկյան Թիֆլիսում) 1912 թ. փետրվարի 14-ի (այսինքն Զառի ժողովի հաջորդ օրվա) թիվ 23 նամակ-գրությունը (հավանորեն գրված Գ. Ղազարյանի ձեռքով) «ՀՀ պատվիրակության նախագահ ընկեր Ա. Ահարոնյանին»[115]: «ՀՅԴաշնակցության Բյուրո»-յի դրոշմակնիքով ձեռագիր վեց էջ ընդգրկող փաստաթուղթը վերջնականապես լույս է սփռում այն հարցի վրա, թե երբ և ինչպես է դաշնակցությունն իր ձեռքը վերցրել տարերայնորեն ծագած ու հասունացած հակախորհրդային շարժման ղեկավարությունը, նրան տվել կազմակերպված բնույթ:

Նամակի հեղինակները եզրակացնում են, թե խորհրդային «հեղաշրջման» գործիչները չեն կարողացել և չեն էլ կարողանա կատարել

---

[114] ՀԱԱ, Հավաքածու, գ. 1, թ. 26:

[115] Վ. Ղազախեցյան, Հ. Գևորգյան, Դաշնակցության կողմից Փետրվարյան ապստամբության ղեկավարման հարցի շուրջ (նորահայտ վավերագիր).ԲՀԱ, 2003 թ., N 1, էջ 46-50: Նամակ-գրությունը հրապարակվում է ըստ բնագրի, որը պահվում է. ՀՅԴ Կենտրոնական արխիվ (Բոստոն), գործ 121, փաստաթուղթ 16:

«հեղաշրջման» սկզբին իրենց տված խոստումները և, ելնելով ստեղծված իրավիճակից, երկրի ու ժողովրդի համար «կենսական պահանջ» են համարում «խորհրդային իշխանության կազմակերպված տապալումը Հայաստանում»: Դրա համար նրանք «մի քանի նախադրյալներ» էին տեսնում, որոնց լուծումը կապում էին ՀՀ պատվիրակության և արտասահմանյան գործիչների հետ և որոնց (նախադրյալների) մասին «Բյուրոն հարկ է համարում,- ասված է նամակում,- տալ ձեզ և ձեզ հետ գործող մեր բոլոր կուսակցական ընկերներին համապատասխան հրահանգներ»: Դրանք էին.

1. «Բացարձակապես անընդունելի» հայտարարել 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրերը, որ կնքվել էին բոլշևիկների ու թուրքերի հետ:

2. «Բացարձակապես դեմ» արտահայտվել Ռուսահայաստանից հրաժարվող մարդկանց (հասկանալ՝ Մոսկվայի պայմանագիրը):

3. «Ամբողջ թափով» պաշտպանել Միացյալ և Անկախ Հայաստանի խնդիրը: Ինչ-ինչ պատճառով դրա անհնարին լինելու դեպքում դաշնակից երկրների օգնությամբ հասնել համաձայնության թուրքերի հետ Հայաստանի սահմանների հարցում: Որպես նվազագույն պահանջ համարվում էր այն նախագիծը, որ հայերը ներկայացրել էին Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ (հասկանալ՝ Վանի և Բայազետի սանջակներ, Մուշի սանջակի մի մասը, Խնուսի գազան և Սև ծովի ափը Բաթումից հարավ):

4. Հայաստանի Հանրապետության նախկին ներկայացուցիչները շարունակելու էին մնալ իրենց պաշտոններում:

5. Պետք է ձգտել, որ վերջ տրվի հակաբոլշևիկյան օրգանների, մասնավորապես հայկական երկու պատվիրակությունների միջև գոյություն ունեցող հակասություններին:

6. Հայաստանի Հանրապետության գումարներից բաժին հանել այն աշխատանքների համար, «որոնք ծրագրված են մեծամասնականների տիրապետության տապալման համար»:

7. «Ընկեր Ս. Արարատյանը,- վերջապես ասված է նամակում,- լիազորված է մեր կողմից հիմնավորելու մեր տեսակետները ու պահանջները ներկա քաղաքական մոմենտի և դրանից բխող խնդիրների վերաբերյալ արտասահմանում գործող բոլոր կուսակցական օրգանների և ընկերների առաջ»:

Ընդ որում նամակ-գրությունից տեղեկանում ենք, որ Բյուրոն-ժամանակին պատվիրակությանը տեղյակ է պահել նաև «Հայաստանում կատարված հեղաշրջման մասին»: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ ՀՅԴ Բյուրոն կապ է ունեցել Եվրոպայում գտնվող պետական ու կուսակցական մարմինների հետ և նրանց պարբերաբար տեղյակ պահել Հայաստանի անցուդարձերին:

Այսպիսով, ՀՅԴ Բյուրոյի 1921 թ. փետրվարի 14-ի նամակ-գրությունը, Զառի ժողովի որոշումների հետ միասին, վկայում են այն մասին, որ տվյալ պահին հակախորհրդային ապստամբությունը որոշված էր և գտնվում էր կուսակցության ղեկավարության ձեռքում, որ ապստամբության խնդիրը դուրս էր եկել նախնական սահմաններից (բանտարկյալ ընկերների ազատումը) և ներառել բոլշևիկների իշխանության տապալումն ու կորցրած իշխանության վերագրավումը:

Ապստամբության պահին կողմերն ունեին հետևյալ ուժերը: Ձինված խմբեր կային Բաշ-Գյառնիի շրջանում, խմբապետներ Մարտիրոսի ու Խնկոյի, Ալագյազի ծմեռանոցներում, խմբապետ Սմբատի ղեկավարությամբ: Նեջրլուի ջոկատը ղեկավարում էր խմբապետ Արամյանը, իսկ Երևանի մաուզերիստների ջոկատը քաղաքի պարետի օգնական Սարգսյանը: Սկզբնապես ջոկատներում հիմնականում ընդգրկված էին տաճկահայ գաղթականներ, մաուզերիստներ և իշխանության քաղաքականությունից դժգոհ այլ տարրեր: Այդ ժամանակ ջոկատներում հաշվվում էր շուրջ 1500 մարդ, այդ թվում 1000 հետևակային և 500 հեծյալ[116]: Ապստամբների կողմնակիցները շատ էին գյուղացիության և հատկապես արևմտահայ գաղթականության շրջանում: Ինչ վերաբերում է բանակին, ապա նրա զգալի մասը ևս անցավ ապստամբների կողմը: «Ապստամբության ժամանակ,- ասված է ապստամբների ապագա շտաբի պետ Գարեգին Սարգիսբեկյանի Դարալագյազի ուժերի հրամանատար Յապոնին (Համբարձում Պարոնյան) հասցեագրած 1921 թ. մարտի 11-ի նամակում,- զորամասերը, չնչին բացառությամբ, անցան մեր կողմը»: Սակայն նրանք, ասված է նամակում, «այժմ գրեթե կազմալուծված դրության մեջ են», ուստի «մենք հենվում ենք միմիայն և գլխավորապես ժողովրդի վրա, որը շատ մեծ գործ կատարեց ու կատարում է այժմ»[117]:

Սակայն ապստամբական ուժերի տվյալ առավելությունը, ինչպես նաև առաջին հաջողությունները, միայն ժամանակավոր էին և, ինչպես կտեսնենք, բնավ չէին խոսում կողմերի ուժերի ճիշտ հարաբերակցության, առավել ևս ապստամբության խոստումնալից հեռանկարի մասին:

---

[116] Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում: Երևան, 1931, էջ 14:

[117] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ12-14: Նամակը խմբագրական ուղղումներով ու մասնակի բացթողումներով (մասնավորապես Երևանի բանտում բոլշևիկների կատարած գնդակահարությունների և կացնասպանությունների մասին տվյալները) տպագրվել է «Կոմունիստ» թերթի 1921 թ. մայիսի 17-ի համարում:

Խորհրդային իշխանությունը հենվում էր. Հայաստանի բանակի վրա, որը վերակառուցվում էր, ինչպես կազմակերպական, այնպես էլ քաղաքական-բարոյական առումով: Հայաստանում խորհրդային իշխանության մյուս հենարանը ռուսաստանյան կարմիր բանակն էր, որն իշխանությունը պահող հիմնական ուժն էր, սակայն ապստամբության գործը, ինչպես նշվել է, հեշտացավ տվյալ պահին նրա Երևանից հեռացած լինելու պատճառով: Ապստամբության ընթացքում կազմակերպվեցին կոմունիստական ջոկատներ: Նրանց է նկատի ունեցել Ալ. Մյասնիկյանը, երբ գրել է, թե հատուկ նշանակության զորամասերը մեծ դեր են խաղացել քաղաքացիական կռվում[118]: Իրականում հատուկ նշանակության ջոկատները (այնուհետև՝ զորամասեր) կազմավորվել են քաղաքացիական կռիվների ավարտից հետո: Այդ մասին համապատասխան որոշումն ընդունվել է 1921 թ. հունիսի 15-ին[119]: 1922 թ. դրությամբ այդ զորամասերում ընդգրկված էր ավելի քան 11 հազար կոմունիստ և կոմերիտական[120]:

Խորհրդային Հայաստանի թիկունքում կանգնած էին Խորհրդային Ռուսաստանը, նրա կարմիր բանակը, որը սկսված ապստամբության դեմ հաղթական պայքարի հիմնական գրավականն էր:

Ապստամբական խմբերի հարձակումը, որ սկսվեց փետրվարի 16-ին, անակնկալ էր, իսկ խորհրդային ուժերը լուրջ դիմադրություն կազմակերպել չկարողացան: Ջինաթափվեց 4-րդ հայկական գունդը: Քանաքեռում ծանր պարտություն կրեց Երմոլենկոյի ջոկատը, իսկ 1-ին գունդը անծնատուր եղավ: Նախիջևանից օգնության շտապեց ռուսական 178-րդ - գունդը, որը հայկական 5-րդ գնդի, Ապոստոլովի կոմունիստական ջոկատի հետ միասին ապստամբների հետ կռվի բռնվեց Երևան քաղաքում: 5-րդ - գունդը չկարողացավ որևէ գործողություն ծավալել և գերի ընկավ:

Ըստ Կարո Սասունու՝ ինքը էջմիածնի և Աշտարակի գրավումից հետո հեռագրել է Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին՝ չդիմադրել և խաղաղ հանձնվել: Փողոցային մարտերից հետո փետրվարի 18-ին ապստամբները գրավեցին Երևանը:

Խորհրդային իշխանությունը (ՀՍԽՀ ռազմհեղկոմը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը) իր կողմնակիցներով ու պաշտպաններով, այդ թվում Հայկական կարմիր բանակի 2-րդ և 3-րդ գնդերը, ռուսական սակավանդամ զորամասեր, «Ազատամարտ» և «Վարդան զորավար» զրահագնացքների պաշտպանությամբ, հեռացան մայրաքաղաք Երևանից: Նրանք նահանջեցին դե-

---

[118] Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր. Երևան, 1957, էջ 413:
[119] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 10:
[120] Նույն տեղում, ց. 2, գ. 169, թ. 18:

պի Ղամարլու-Աղբաշ, ապա կենտրոնացան Շարուրում, թիկունքում ունենալով խորհրդային Նախիջևանը:

Ղամարլուի ճակատում խորհրդային իշխանության համար ստեղծված ծանր դրությունը ստիպեց դիմել արտակարգ միջոցների: Դրանցից էր փետրվարի 19-ին Հայհեղկոմի հրամանով տվյալ ճակատի համար Ռազմադաշտային տրիբունալի (նախագահ՝ Սարգսյան) ստեղծումը, որի հիմնական խնդիրը պայքարն էր դասալքության և պրովոկացիայի դեմ:

Հայրենիքի փրկության կոմիտեն արձակեց թիվ 1 հրամանը, ազդարարելով Հայաստանում խորհրդային իշխանության տապալման և մինչև կառավարության կազմվելը իր կողմից ամբողջ իշխանությունը ստանձնելու մասին: Փետրվարի 18-ին տեղի ունեցած ժողովը, մասնակցությամբ Երևանի Փրկության կոմիտեի, նախկին (Հայաստանի Հանրապետության) կառավարության անդամների, խորհրդարանի նախագահության, որոշեց կյանքի կոչել Ս. Վրացյանի կառավարությունը, այն համալրելով նոր մարդկանցով, Հայրենիքի Փրկության կոմիտե անունով: Վերջինիս մի այլ հրամանով երկրի քաղաքացիներին հրահանգվում էր ձերբակալել և իշխանություններին հանձնել բոլոր բոլշևիկներին: Բանտարկված բոլշևիկների և գերիների թիվը հասավ շուրջ հազարի:

Անմիջապես սկսեց լույս տեսնել «Ազատ Հայաստան» թերթը, որը համարվում էր Հայաստանի Հանրապետության կառավարության օրգան: Այդ նշանակում էր, որ Հայրենիքի Փրկության կոմիտեն իրեն դիտում էր որպես Հայաստանի առաջին հանրապետության գործի շարունակողը: Մի քանի օր անց թերթը սկսեց տպագրվել նաև ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով:

Հայրենիքի փրկության կոմիտեն իրականացնում էր և օրենսդիր, և գործադիր իշխանությունը: Սկզբում նա հույս ուներ, թե մեկ շաբաթում կարող է վերսկսել խորհրդարանի (պառլամենտի) գործունեությունը և հայտարարել օրինավոր կառավարության մասին, սակայն, դեպքերի զարգացումը, ինչպես հավաստում է Կ. Սասունին, Փրկության կոմիտեին դարձրին Հայաստանի կառավարություն, որը վարում էր երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունը: Խորհրդարանը գործի չանցավ, որովհետև «բոլոր պատգամավորները զբաղած էին ռազմաճակատներու վրայ կամ երկրի ներսը՝ գործնական պատասխանատու աշխատանքով»[121]:

Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահը (նաև արտաքին ու գյուղատնտեսության վարիչը) Սիմոն Վրացյանն էր, որը եղել էր Հայաստանի Հանրապետության վերջին կառավարության վարչապետը: Կոմիտեի

---

[121] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 133:

վարիչներն էին՝ Ա. Հովհաննիսյանը (զինվորական գործերի), Կ. Սասունին (ներքին գործերի), Հ. Տերտերյանը (ֆինանսների), Հ. Տեր-Հակոբյանը (պարենավորման), Ս. Եղիազարյանը (խնամատարության), Հ. Սարգսյանը (աշխատանքի և ագիտացիայի): Շուտով աշխատանքի հրավիրվեցին էսեռների կուսակցության ներկայացուցիչներ Վահան Մինախորյանը և Արշամ Խոնդկարյանը՝ որպես արդարադատության և խնամատարության գործերի վարիչներ: Զորքի ընդհանուր հրամանատարն էր գնդապետ Կուռռ (Սուրեն) Թարխանյանը՝ Սպարապետ Սուրենը, շտաբի պետը՝ Գարեգին Սարգիսբեկյանը: Մեկ ամիս անց ձևավորվեց Հայրենիքի փրկության կոմիտեի բյուրոն՝ որպես գործադիր իշխանության մարմին: Բյուրոյի նախագահն էր Ս. Վրացյանը, անդամները՝ Արշ. Հովհաննիսյան (զինվորական գործերի վարիչ), Կարո Սասունի (ներքին գործերի վարիչ) և Ավետիս Օհանջանյան (արտակարգ հանձնաժողովի նախագահ): Տեղերում իշխանությունն իրականացնում էին շրջանային և գյուղական փրկության կոմիտները, որոնք գործադիր մարմիններ էին:

Հայրենիքի փրկության կոմիտեն առաջին իսկ օրերին դիմեց Հայաստանի բոլոր ժողովուրդներին, հայտնելով, որ թոթափելով բոլշևիկների լուծը, երկրի աշխատավորները նպատակ ունեն իրենց հայրենիքում հաստատելու «լայն ժողովրդապետական կարգեր», ուստի կոմիտեն Հայաստանի պետական ու հասարակական կյանքին լայն մասնակցություն ունենալու էր հրավիրում բոլորին՝ հայերին, ադրբեջանցիներին, ռուսներին, քրդերին, եզիդներին ու մյուսներին[122]: Իսկ ներքին գործերի նախարարությունը փետրվարի 22-ին, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով տպագիր թերթիկներով, «Ազատ Հայաստանի» բոլոր ազգությունների համար, առանց խտրության, երաշխավորում էր հավասարությունը օրենքի առաջ, նրանց կյանքի ու գույքի պաշտպանությունը, խիստ նախազգուշացնելով օրենքի դեմ ոտնձգության փորձ անողներին[123]:

Երևանի գրավումից անմիջապես հետո բանտերից ազատ արձակվեցին բոլորը, ովքեր քաղաքական նկատառումներով բանտարկվել էին բոլշևիկների կողմից: Պարզվեց, որ վերջին պահին տեղի էին ունեցել գնդակահարություններ, ոմանց իբր կացնասպան էին արել: Հետագայում խորհրդային արտակարգ հանձնաժողովը ժխտեց սպանելու փաստը, այդ և նման լուրերը համարելով սադրանք: Միաժամանակ արտակարգ հանձնաժողովը հաստատեց, որ իր ամբողջ գործունեության ընթացքում (մինչև ապրիլի 6-ը) գնդակահարել է 29 մարդու՝ «ակտիվ սրիկաներ», ովքեր

---

[122] Ազատ Հայաստան, 24 փետրվարի 1921 թ.:

[123] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 20, թ. 96 (ներքին գործերի նախարարության հրամանի տպագիր օրինակը):

ոչնչի առաջ կանգ չէին առել իրենց երջանկությունը ստեղծելու միլիոնավոր աղքատ ու դժբախտ զանգվածների հաշվին, «բայց ոչ երբեք կացնով», որով գործել են «իրենք դաշնակցականները և ցույց տվել ժողովրդին պրովոկացիոն նպատակներով»[124]:

«Բոլշևիկ կառավարության կարապի երգը» հոդվածում «Ազատ Հայաստան» թերթը հրատարակել է կենտրոնական բանտի այն 21 մարդկանց անունները, ովքեր Արտակարգ հանձնաժողովի փետրվարի 15-ի թիվ 11 հրամանով պետք է գնդակահարվեին «իբրև հակահեղափոխականներ, թալանչիներ, մաուզերիստներ, կոմունիստներին սպանողներ, մատնությունների մեջ մասնակցողներ, պետական գույքի հափշտակողներ»[125]:

Կան այլ տվյալներ ևս 22, 26 կամ ավելի քան 30 գնդակահարությունների մասին և այլն: Սպանվածների մեջ էին խմբապետ-զորավար Համազասպ Սրվանձտյանը, գնդապետ Նիկոլայ Ղորղանյանը, Արտաշ խանը, Վաղարշակ Գասպարյանը, Կարապետ Խաչատրյանը, Մակեդոնը, Մուշեղ և Մուրադ եղբայրները, Ղարսեցի Սամոն[126] և ուրիշ նշանավոր դեմքեր, հայտնել է վերը հիշված նամակում Հայրենիքի փրկության կոմիտեի բանակի շտաբի պետը:

Երևանի, էջմիածնի և այլ վայրերի բանտերից ազատ արձակվեցին բոլշևիկների կողմից ձերբակալված հարյուրավոր մարդիկ, որոնց խորհրդային իշխանությունը համարել էր պատանդներ որպես իր իշխանության դեմ սպառնալիքը կանխելու միջոցառում:

Ուշադրության է արժանի այն տեսակետը, որ ապստամբության կողմնակիցները արտահայտում էին շարժումը սկսելու պահին: Ըստ դրա ապստամբությունը խնդիր ուներ բանտերից ազատել ձերբակալված ընկերներին: Սակայն ապստամբության ղեկավարները չսահմանափակվեցին դրանով: Նրանք շարունակեցին այն և գրավեցին իշխանությունը, որը ծրագրվել էր ապստամբության անմիջական նախօրյակին:

Հայրենիքի փրկության կոմիտեն շտապեց պետություններին տեղեկացնել իր հաղթանակի և Հայաստանի խորհրդային իշխանության տապալման մասին: Երևանի ռադիոկայանի միջոցով, հեռագրով, Փարիզում նախկին Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը մանրամասն տեղեկություններ հայտնվեցին փետրվարի 18-ի հետ կապված իրադարձությունների վերաբերյալ: Նույնպիսի հեռագրեր ուղարկվեցին մեծ

---

[124] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 19, թ. 68: Տես նաև «Կոմունիստ», 10 ապրիլի 1921 թ.:

[125] Ազատ Հայաստան, 20 փետրվարի 1921 թ.:

[126] Այլ տվյալներով Մուրադ և Մուշեղ եղբայրները կրել են Հարությունյան ազգանունը, իսկ Ղարսեցի Սամոն հավանորեն Սամո Առաքելյանն է:

տերությունների մայրաքաղաքներ, Ազգերի լիգային, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությանը: Հայրենիքի փրկության կոմիտեն ակնկալում էր Ռուսաստանի «բարյացակամ միջամտությունը և Հայաստանի անկախության ճանաչումը»:

Մոսկվա հղվեցին այլ հայտագրեր ևս, որոնք հիմնականում վերաբերում էին Թուրքիայի հետ Մոսկվայի բանակցություններին մասնակցելու մեկնած ՀՍԽՀ պատվիրակության լիազորությանը և ՌԽՖՍՀ - Հայաստանի Հանրապետություն հարաբերություններին: Մարտի 10-ի հայտագրում Ս. Վրացյանը հույս է հայտնում, որ Խորհրդային Ռուսաստանը ռազմական օգնություն ուղարկելու փոխարեն կկանգնի վիճելի խնդիրները ավելի կուլտուրական և ավելի արժանավայել միջոցներով լուծելու վրա[127]: Մարտի 12-ի հայտագրով Ս. Վրացյանի կառավարությունը իր համար պարտադիր չէր համարում «Հայաստանի Հանրապետության անունից Բեկզադյանի ձեռքով կնքված բոլոր պայմանագրերը, նաև նրա կողմից հանձն առած բոլոր պարտականությունները»[128]: Այստեղից բխում էր, որ Երևանում տեղյակ չէին, որ Ալ. Բեկզադյանին դուրս էին թողել բանակցություններին մասնակցելուց, հետևաբար նրա ստորագրության մասին խոսք լինել չէր կարող: Մյուսը, իսկ եթե մասնակցեր, ինչու պետք է հանդես գար Հայաստանի Հանրապետության անունից, երբ Հայաստանում շարունակվում էր գոյատևել խորհրդային իշխանությունը:

Ընդ որում «Ազատ Հայաստան» թերթը Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսի մասին տպագրում էր նաև անհավաստի տեղեկություններ, թե իբր այն բացվել է մարտի 5-ին և որ այնտեղ ճառ է արտասանել Հայաստանի նախկին արտգործկոմիսար պ. Բեկզադյանը[129]:

Ս. Վրացյանը մեկ անգամ ևս դիմեց Ռուսաստանի արտգործկոմիսարին, պահանջելով վերջ տալ Հայաստանի վրա «վանդալական արշավանքին»[130]:

Հայաստանի խորհրդային իշխանության և նրա պատվիրակության իրավասության դեմ բարձրացրած աղմուկը և քայլերը չէին կարող չօգտագործվել Մոսկվայում թուրքական պատվիրակության կողմից՝ ընդդեմ բանակցություններում Հայաստանի մասնակցության: Միաժամանակ պետք է նշել, որ դա միակ պատճառը չէր: Վավերագրերի ուսումնասիրությունը, ինչպես ցույց կտրվի իր տեղում, վկայում է, որ Թուրքիան Հայաստանի

---

[127] Ազատ Հայաստան, 13 մարտի 1921 թ.:
[128] Նույն տեղում, 15 մարտի 1921 թ.:
[129] Նույն տեղում, 11 մարտի 1921 թ.:
[130] Նույն տեղում, 30 մարտի 1921 թ.:

մասնակցության մասին դրական վերաբերմունք չի ունեցել նաև մինչև փետրվարյան ապստամբությունը:

Հայրենիքի փրկության կոմիտեն կարևոր նշանակություն էր տալիս մենշևիկյան Վրաստանի և քեմալական Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատմանը, հույս ունենալով ստանալ նրանց օգնությունը: Սակայն շուտով տեղի ունեցած Վրաստանի խորհրդայնացումը վերացրեց հյուսիսային հարևանի օգնության հնարավորությունը: Վերջին հույսը մնաց Թուրքիան, որի հետ Հայրենիքի փրկության կոմիտեն ամեն կերպ փորձում էր հաստատել բարեկամություն, միայն թե արժանանա նրա բարյացակամ վերաբերմունքին և օժանդակությանը:

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանն ուղարկած 1921 թ. մարտի 18-ի հայտագրում Սիմոն Վրացյանը խնդրում էր Երևան վերադարձնել հայ ռազմագերիներին և «որոշ պայմաններով հայ բանակին տալ ռազմամթերք»:«Անելով սույն դիմումը, գրել է Վրացյանը, Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական հարաբերություններին վրա, որոնք հիմք են դրված Ալեքսանդրապոլի դաշնագրից սկսած, և որոնք խանգարված էին բոլշևիկների իշխանության ժամանակ»[131]: Նույն օրերին «Ազատ Հայաստան» թերթը տպագրել է «Հայ և թուրք բարեկամության խնդիրը» խորագրով խմբագրական հոդվածը: Քննադատելով հայ ժողովրդի «ռուսամոլությունը», թերթը գրել է, թե Տաճկաստանն է, որ ի վիճակի է այս պահին իրական օգնություն հասցնել և հայ ժողովրդին դուրս բերել նրա ծանր տագնապից: Թերթը հայ ժողովրդի տևական խաղաղության ու տևական ապահովության այլ ճանապարհ չէր տեսնում[132]:

Իսկ Լոնդոնի կոնֆերանսի (1921 թ. փետրվար-մարտ) ժամանակ հայկական պատվիրակությանն ուղարկած, Ս. Վրացյանի ստորագրությունը կրող, զեկուցագրում թուրք-անգլիական բանակցություններից ակնկալվում էին այնպիսի որոշումներ, որոնք ընդունելի լինեն Թուրքիայի համար», որ այդ որոշումները, շարունակում է Ս. Վրացյանը, «փոխանակ մեր հոնքը շինելու՝ աչքը չփչացնեն»: Եվ ի՞նչ տվեց Լոնդոնը հայ ժողովրդին: Այն, որ Հայկական հարցը (Սևրի պայմանագիրը) վերածվեց «հայկական օջախի», և որը մերժելը ընդունելի դարձավ Թուրքիայի համար:

Ս. Վրացյանի կառավարության արտաքին քաղաքականությունը, ինչպես Լոնդոնում, այնպես էլ Մոսկվայում ընթացող բանակցությունների կապակցությամբ , ուներ բացասական նշանակություն, որը պայմանավորված էր նրա ղեկավարած շարժումով ընդհանրապես:

---

[131] Կոմունիստ, 25 մայիսի 1921 թ.:
[132] Ազատ Հայաստան, 15 մարտի 1921 թ.:

Քեմալական Թուրքիան, որը Լոնդոնի և Մոսկվայի բանակցություններում ձգտում էր իր համար նպաստավոր ձևով «լուծել» Հայկական հարցը, Ս. Վրացյանի կառավարության նկատմամբ առայժմ պահում էր չեզոք դիրք, չնայած հայտնի են բազմաթիվ փաստեր այն մասին, թե Երևանում Թուրքիայի ներկայացուցիչ Բեհաէդդին բեյը ինչպիսի համակրական վերաբերմունք էր ցույց տալիս ապստամբության և Հայրենիքի փրկության կոմիտեի հանդեպ: Խորհրդային աղբյուրների տվյալներով փետրվարի 18-ին նա ողջունել էր Երևանի ցուցարարներին, հետագայում այցելել կռվի դաշտ և հանդիպել մարտիկներին, հուսադրել է մարդկանց, թե իբր Թիֆլիսը գրավված է յուրայինների կողմից, և որ թուրքական զորքերը Ախալցխայի վրայով մեկնելու են Բաքու՝ օգնելու պետական հեղաշրջմանը: Բեհաէդդին բեյը նույնիսկ հայտարարել է, թե իր կառավարությունը ճանաչում է Հայրենիքի փրկության կոմիտեին՝ որպես միակ ազգային իշխանությունը Հայաստանում:

Հետագայում Հայաստանի խորհրդային իշխանությունը Թուրքիայի ներկայացուցչի նման վարքագիծը գնահատեց որպես բացահայտ և կոպիտ միջամտություն իր ներքին գործերին: Ուստի ՀԿ(բ)Կ կենտկոմը 1921 թ. մայիսի 12-ին որոշում ընդունեց Բեհաէդդին բեյին Հայաստանից արտաքսելու մասին[133]: Դրա հիման վրա ՀՍԽՀ ռազմհեղկոմը մայիսի 12-ին, դիմելով թուրքական կողմին, նրա ներկայացուցչի հետագա մնալը Հայաստանում համարեց անհնար և պահանջեց հետկանչը[134]:

Խորհրդային իշխանությունը, որը պահպանվել էր Հայաստանի հյուսիսային շրջաններում, նախապատրաստվում էր հակախորհրդային ապստամբությունը ճնշելու, մայրաքաղաք Երևանը վերագրավելու համար: Երևանից նահանջած Հայհեղկոմը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը, գտնվելով շրջափակման պայմաններում, հնարավորություն չունեին կատարելու հանրապետության ղեկավարման գործը: Ուստի Ղարաքիլիսա-Դիլիջան գոտում ստեղծվեցին նրանց փոխարինող մարմիններ:

Ժամանակավորապես կուսակցական ղեկավարման կենտրոն դարձավ Դիլիջանի գավառային կոմիտեն: Այդ մասին է վկայում փետրվարի 20-ին գավկոմի քարտուղարի զեկուցման քննարկումը ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նիստում: Զեկուցողը, հիմնականում հասարակության դասակարգային շերտավորման տեսանկյունից, պարզաբանել է «մառազերիստական հակահեղափոխության» պատճառները: Ընդունվել է բանաձև, որում միաժամանակ քննադատվում է կենտրոնի (այսինքն՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի) «մի որոշ խմբի» անճիշտ քաղաքականությունը, որը հասցրեց դաշ-

---

[133] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 47, թ. 2, 3, 106:
[134] Նույն տեղում, գ. 11, թ. 170-172:

նակցականների կողմից Երևանի գրավմանը կարճ ժամանակամիջոցում: Այնուհետև վստահություն էր հայտնվում, որ Կովկասյան բյուրոյի օգնությամբ կհաղթահարվի «սխալ ըմբռնում ունեցող հոսանքը» և հնարավորություն կստեղծվի վարել «միասնական պրոլետարական քաղաքականություն» և միջոցառումներ կձեռնարկվեն հակահեղափոխությունը Հայաստանում և Կովկասում վերջնականապես վերացնելու համար[135]:

Հրատարակված փաստաթղթերից մեկում, ուղղված Հայաստանի գյուղացիներին, բանվորներին և մյուս աշխատավորներին, և որի տակ Դիլիջանի գավկոմի քարտուղարի կողքին դրված է նաև Դիլիջանում ՀԿ(բ)Կ - Կենտկոմի արտակարգ լիազոր Գևորգ Թովմասյանի (Ղարիբ) ստորագրությունը, նրանցից խաբվածներին կոչ էր արվում ուշքի գալ, շրջվել դեպի խորհրդային իշխանությունը, որի կողմում է ճշմարտությունը, արդարությունը և հաղթանակը[136]:

Մեկ այլ, դարձյալ Դիլիջանում ընդունված և աշխատավոր գյուղացիությանն ուղղված մարտի 5-ի կոչի տակ դրված է «ՀԿ(բ)Կ Կենտկոմ» ստորագրությունը: Կոչը պարզաբանում էր այն հարցը, թե ովքեր են գլուխ բարձրացրել աշխատավոր գյուղացիների դեմ[137]:

Դիլիջանի և Ղարաքիլիսայի շրջանների ռազմահեղափոխական կոմիտեի կազմավորման մասին կոմիտեի թիվ 1 հրամանը արձակվել է 1921 թ. փետրվարի 26-ին, Դիլիջանում: Կոմիտեի իրավասությունը տարածվում էր Դիլիջանի ու Ղարաքիլիսայի գավառների, նոր ազատագրված Լոռու շրջանի, Նոր Բայազետի գավառի Ելենովկայի շրջանի, ինչպես նաև Ելենովկայի ու Բաշ Աբարանի ուղղություններով ազատագրվելիք տարածքների վրա: Հրամանը տեղական իշխանություններին հիշեցնում էր ստեղծված կացության լրջությունը և պահանջում էր լարել «բոլոր կենդանի կոմունիստական ուժերը» արագ կերպով «վերջ տալու հակահեղափոխությանը և վերականգնելու Հայաստանում բանվորա գյուղացիական խորհրդային իշխանությունը»:

Նոր ռազմահեղափոխական կոմիտեի նախագահն էր Համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողովի լիազոր-ներկայացուցիչ Գևորգ Աթարբեկյանը, նրա տեղակալը՝ Գևորգ Թովմասյանը (Ղարիբ ՀԿ(բ)Կ - Կենտկոմի արտակարգ լիազոր), անդամներ Գևորգ Ալիխանյանը, Եղիշե Շամախյանը և Ռուբեն Ոսկանյանը[138]: Հրամանը, որպես ի գիտություն, տարածվել է առանձին տպագիր ձևով:

---

[135] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 489-492:
[136] Նույն տեղում, էջ 482-483:
[137] Նույն տեղում, էջ 498:
[138] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 20, թ. 97:

Մարտի 4-ին Դիլիջանում ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն, քննարկելով ռազմահեղափոխական կոմիտեի նոր կազմի մասին հարցը, որոշեց այն հաստատել 7 մարդով. Գևորգ Աթարբեկյան, Գ. Ալիխանյան, Գ. Թովմասյան (Ղարիբ), Կարակոսով, Խաչիև, Մռավյան և բրիգադի զինվորական կոմիսարը: Հեղկոմի թեկնածու նշանակվեց Աղասին (Աղասի Վարդանյան): Ընտրվեց ռազմահեղկոմի նախագահություն, հետևյալ կազմով. նախագահ՝ Գ. Աթարբեկյան, նրա տեղակալ՝ Կարակոսով և քարտուղար՝ Գ. Թովմասյան (Ղարիբ): Որոշման տակ, որպես Կենտկոմի քարտուղար, դրված է Աղասու (Աղասի Վարդանյանի) ստորագրությունը[139]:

Գոտու ռազմահեղկոմի հրամանով վերակազմվեց Ղարաքիլիսայի գավհեղկոմը և հեղկոմ ստեղծվեց նոր ազատագրված Լոռու շրջանում: Որոշ ժամանակ անց Լոռին դարձավ գավառ, իսկ 1923 թ. Լոռու և Ղարաքիլիսայի գավառների հիման վրա կազմավորվեց Լոռի-Փամբակի գավառը:

Դիլիջան-Ղարաքիլիսայի շրջանի ղեկավարությունն ուղիղ կապի մեջ էր ՌԿ (բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հետ, որի միջոցով ստանում էր համապատասխան ցուցմունքներ և ռազմական օգնություն: Դժվարությամբ, այնուամենայնիվ արտաքին աշխարհի հետ կապ էր հաստատել նաև Շարուրում ապաշարման մեջ գտնվող ՀՍԽՀ ղեկավարությունը:

Փետրվարի 18-ին, Երևանի անկման օրը, Արտակարգ հանձնաժողովի նախագահ Շ. Ամիրխանյանը, զինվորական ժողկոմ Ա. Նուրիջանյանը և հեղկոմի նախագահի տեղակալ Ի. Դավլաթյանը Հայկական բանակի շտաբի միջոցով Բաքու՝ Օրջոնիկիձեին հայտնեցին ապստամբության բռնկման մասին, նշելով, որ Երևանում ռուսական զորամասեր չկան, քանի որ Հայաստանից դուրս են բերվել Հեկկերի պահանջով (11-րդ կարմիր բանակի հրամանատար), և որ ապստամբությունը ճնշելու համար քիչ հույսեր են կապում հայկական զորամասերի հետ[140]: Մեկ հեռագիր (թիվ 81), որն անստորագիր է և հասցեագրված է Ստալինին, հայտնում էր, թե Երևանի հեղաշրջումը կատարել է Վրացյանի ընկեր Դրոն, որ անհրաժեշտ է անմիջապես նրան ձերբակալել (Դրոն գտնվում էր Մոսկվայում)[141]: Իսկ փետրը-

---

[139] Նույն տեղում, ֆ. 1, g. 1, գ. 22, թ. 3 (տե՛ս Հեղափոխական կոմիտեները Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր-1922 թ. հունվար): Երևան, 1974, էջ 134):

[140] Российский государственный архив социально-политической истории (РГАСПИ, ф. 85, оп. 14, д. 60, л. 1.

[141] Նույն տեղում, գ. 57, թ. 1:

վարի 26-ի հեռագրում Հայաստանի իրադրության մասին Օրջոնիկիձեին տեղեկացնում էր Գևորգ Աթարբեկյանը[142]:

Հետաքրքիր է վերևում հիշված Ասքանազ Մռավյանի 1921 թ. մարտի 7-ի «Թանկագին ընկերներ»-ին նամակը, որը գրվել է Դիլիջանում: Ա. Մռավյանը, պարզաբանելով Խորհրդային Հայաստանի ղեկավարության մեջ ստեղծված անառողջ դրությունը, ավելացնում է. «Գտնվում եմ Դիլիջանում: Մեր գծի դեմ տեղայինները սկսել են քարոզչություն, սակայն մեծ ժողովներում ինձ հաջողվում է նրանց հակահարված տալ: Նույն բանը նկատվում է Ղարաքիլիսայում»[143]:

Նամակից տեղեկանում ենք նաև Բաքվում Կովկասյան բյուրոյում նրա ունեցած հանդիպման որոշ արդյունքների մասին: Ա. Մռավյանը և Գ. Աթարբեկյանը, որոնք հրավիրվել էին Հայաստանում ստեղծված իրադրության կապակցությամբ, հնարավորություն չեն ունեցել մանրամասը զրույցներ ունենալ, սակայն այնտեղ նրանց հայտնել են այն կարծիքը, որ «ճակատագրական սխալ» է եղել դաշնակցական բանակի վերակառուցումը կարմիր բանակի, որը խորհրդային իշխանության գոյության երկուևկես ամսվա ընթացքում «չդարձավ մերը և վճռական պահին դավաճանեց մեզ»: Դաշնակցականների գործը հեշտացավ հենց նրանով, բացատրում է այնուհետև Ա. Մռավյանը, որ «Հայաստանում մենք իրական զինված հենարան չունեինք»[144]:

Հայաստանում խորհրդային իշխանության նույն, նաև դասակարգային, հենարանի բացակայության մասին էր հայտնվում Ս. Կասյանի 1921 թ. մարտի 29-ի նամակում, հասցեագրված Գ. Օրջոնիկիձեին: Ս. Կասյանը բարձրացնում էր նաև մոտալուտ հաղթանակի հետ կապված հարցեր, որոնց լուծման համար նա անհրաժեշտ էր համարում Գ. Օրջոնիկիձեի ժամանումը Երևան հենց որ այն կգրավեն[145]:

Ճիշտ է, որ հայկական բանակը չէր դարձել խորհրդային իշխանության համար հուսալի հենարան, չնայած ձեռնարկված միջոցառումներին: Շարունակվում էր նրա վերակառուցումը: Դրոյի «պատվավոր աքսորից» հետո Հայկական բանակի հրամանատարությունը ստանձնեցին ռուսական կարմիր բանակի հրամանատարները. բանակի հրամանատար դարձավ Մոլկոչանովը, կոմիսար Սվիրիդովը (նա դեռևս Դրոյի ժամանակ փոխարինել էր Սիլինին): Վերակառուցման պլանի մեջ էր մտնում նաև հայ սպաներին աքսորելը: Կազմակերպվեց նոր կադրերի պատրաստման գործը: Հայ-

---

[142] Նույն տեղում, գ. 65, թ. 1:
[143] ՀԱԱ, ֆ. 114, g. 2, գ. 79, թ. 1-6:
[144] Նույն տեղում:
[145] РГАСПИ, ф. 85, оп. 18, д. 263, л. 1-2.

կական բանակն առայժմ բաղկացած էր գնդերից, որոնք տեղաբաշխված էին Հայաստանի տարբեր տարածքներում: Բանակի օժանդակը գտնվում էր Երևան-Ախտա շրջանում: ՀՍԽՀ և նրա բանակի վիճակը պահանջում էր հույս դնել միայն ռուսական կարմիր բանակի օգնության վրա: Ուստի հայկական զորքի հրամանատարը փետրվարի 17-ին 11-րդ բանակի հրամանատարությանը տեղեկացնելով ապստամբության մասին, խնդրում էր Հայաստան մտցնել «ռուսական զորամասերի խոշոր միավորումներ»[146]: Մինչև նրանց ժամանումը կռվող ուժերի փոխհարաբերությունը խիստ անհավասար էր՝ հօգուտ ապստամբների: Չնայած հայկական բանակի շարքերում 1921 թ. փետրվարի 1-ի դրությամբ կար 6300 հետևակային (սվին) և 835 հեծյալ (թուր), այնուամենայնիվ պայքարի առաջին իսկ օրերին նրա շարքերը խիստ նվազեցին, փետրվարի վերջին կազմելով ընդամենը 1664 հետևակային (սվին) և 70 հեծյալ (թուր): Իսկ ապստամբների շարքերում կար 4360 հետևակային և 700 հեծյալ, այսինքն՝ զգալիորեն ավելի[147]: Սույն հաշվարկը հավանորեն վերաբերում է միայն այն ուժերին, որոնք նահանջել էին Երևանից և հավաքվել Նախիջևանի հարևանությամբ: Այդ եզրակացությունը հաստատվում է նաև ապստամբների շտաբի պետ Գարեգին Սարգիսբեկյանի հետևյալ տվյալներով: Երևանը թողնելուց հետո, գրել է նա իր մարտի 11-ի նամակում, «կոմունիստները, վերցնելով իրենց հետ 11 թնդանոթ, 2 զրահապատ, մոտ 1500 հետևակային, 50 ձիավոր, պարենի ու ռազմամթերքի մեծ պաշարով փախան դեպի Բեյուք-Վեդի»: Նամակի հեղինակը հայտնում է նաև հետևյալ տվյալները. «Ապստամբության ժամանակ զորամասերը, չնչին բացառությամբ, անցան մեր կողմը: Նրանք այժմ գրեթե կազմալուծված դրության մեջ են»:

Մինչև փետրվարի 25-ը նախաձեռնությունը գտնվում էր ապստամբների ձեռքում, որոնք հետապնդելով խորհրդային ուժերին, նրանց մղում էին դեպի Ղամարլու-Աղբաշ, ապա Բեյուք-Վեդի: Նրանց նահանջը պաշտպանում էին երկու զրահագնացքները: Խորհրդային ուժերի մյուս խումբը նահանջում էր դեպի Սևան:

Ապստամբները ձեռնակեցին նոր ուժերի հավաքագրում: Նոր համալրումների գործը հանդիպում էր նաև դժվարությունների: Առանձին վայրերում երիտասարդությունը խուսափում էր զորահավաքից: Այսպես, Թալինի շրջանի «Հայրենիքի փրկության կոմիտեն» մարտի 25-ին հայտնել է, թե չնայած բացատրական ժողովներին և «Մասնակցել ներկա հեղաշրջմանը» կոչերին, դժբախտաբար «այդ աշխատանքը մնացած է ապարդյուն»:

---

[146] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան ..., էջ 487:
[147] Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, էջ 12, 55:

Դրանից հետո կոմիտեն ստիպված է եղել «բռնի կերպով հավաքել 20-30 տարեկաններին և ուղարկել»: Արդյունքում շրջանի 8 գյուղերից հավաքվել էր ընդամենը 41 մարդ, որից, ճանապարհին փախչելուց հետո, էջմիածին էր հասել 25-ը[148]:

Իսկ մինչև այդ (փետրվարի 20-24-ի դրությամբ) ապստամբների ուժերը կազմում էին շուրջ 7000 մարդ (6000 հետևակային և 1000 հեծյալ)[149]: Սա Ղամարլուի ճակատում էր, որի հրամանատարն էր Սմբատը, որը փոխարինել էր Մարտիրոսին:

Իսկ խորհրդային իշխանության ազդեցության տակ գտնվող շրջաններում տեղի էր ունենում կոմունիստների և կոմերիտականների հավաքագրում: Առաջիններից էր Ղարաքիլիսայի երկաթուղային 47 բանվոր կոմունիստների («Երկաթյա ջոկատ») խումբը, որը կազմակերպվեց կուսակցության գավառային կոմիտեի նախաձեռնությամբ: Ջոկատի հրամանատարն էր Պյոտր Կուզնեցովը (Ղարբինյան): Ջոկատը մարտերի մեջ մտավ Ելենովկայի, Նոր Բայազետի, Ախտայի և այլ շրջաններում[150]:

Կոմունիստական գումարտակ էր ձևավորվել Իջևանի շրջանում Քարվանսարա, Սևքար, Աչաջուր և այլ գյուղերի ուժերով: Ջոկատ էին կազմակերպել նաև Բաքվի հայ բանվորները: Պարտիզանական ջոկատներ էին ստեղծել Ալեքսանդրովկա, Ղշլաղ, Նորադուզ և այլ գյուղերի աշխատավորները[151]: Նրանք կռիվներին մասնակցեցին «Երկաթյա ջոկատի» հետ համատեղ: Բազմանդամ էր Նոր Բայազետի կոմունիստական ջոկատը (300 հետևակային և 50 հեծյալ)[152]:

Երկուստեք (բոլշևիկները և ապստամբները) Ղամարլուի ճակատին տրվում էր կարևոր նշանակություն: Այստեղ պաշարված բոլշևիկների և նրանց կողմնակից ուժերի համար իրենց գոյատևումը անհրաժեշտ էր, քանի դեռ իրական չէր դարձել ռուսական կարմիր բանակի օգնությունը, որ սպասվում էր հյուսիսից: Երևանի մոտ գտնվելը բոլշևիկները փորձեցին օգտագործել նրան տիրելու համար: Իսկ ապստամբների համար Ղամարլուի ճակատը, որպես նրանց թիկունք, կարող էր վտանգավոր դառնալ հյուսիսից կարմիր բանակի հարձակման դեպքում, որը նրանք անխուսափելի էին համարում, ուստի ձգտում էին հաջող գործողություններով վերջ տալ այդ ճակատին, ապա կենտրոնանալ հյուսիսի ուղղությամբ:

---

[148] Ա. Հակոբյան, Հայաստանի..., էջ 56:
[149] Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, էջ 54:
[150] Խորհրդային Հայաստան, 16 մարտի 1926 թ.:
[151] Ա. Հակոբյան, Հայաստանի..., էջ 46:
[152] ԲՀԱ, 1978, թիվ 1, էջ 97:

Այսպիսով, ստեղծվել էր քաղաքացիական կռիվների երեք ճակատ: Մեկը՝ Ղամարլու-Վեդիի շրջան, որտեղ շրջափակվել էին Երևանից նահանջած խորհրդային ուժերը: Դրսից կտրված և օգնությունից զուրկ խորհրդային ուժերին վիճակվեց ծանր փորձություն:

Մյուսը Հայաստանի հյուսիսն էր՝ խորհրդային իշխանության գոտին, երկու թևերով. ձախը՝ Ելենովկա-Սեմյոնովկայի լեռնանցք շրջանը, Նոր Բայազետով հանդերձ և աջը՝ Սպիտակի (Փամբի) լեռնանցքի հատվածը, այսինքն՝ այն բնական արգելքները, որոնց տիրելը (մեկի կամ մյուսի կողմից) կնշանակեր փակել կամ բացել դեպի Երևան տանող երկու խճուղային ճանապարհները:

Հյուսիսային ճակատն առաջացավ անմիջապես՝ հենց որ սկսվեց ապստամբությունը: Փետրվարի 18-ին 11-րդ կարմիր բանակի հրամանատար Հեկկերի հրամանով 18-րդ դիվիզիայի հրամանատար Ա. Գ. Շիրմախերը նշանակվեց Ղազախ-Դիլիջանի մարտական տեղամասի պետ, հետևյալ առաջադրանքով՝ պաշտպանել Ղարաքիլիսայի և այլ խորհրդային տարածքները, ապստամբներին հետ մղել Ելենովկայի շրջանից և վերականգնել կապը Երևանի հետ (այսինքին՝ վերականգնել խորհրդային իշխանությունը): Ա. Գ. Շիրմախերի տրամադրության տակ դրվեցին բանակի որոշ ուժեր (60-րդ բրիգադի 3 գնդերը, 156-րդ և 179-րդ գնդեր, մեկ հեծյալ գունդ, հրետանի և այլ ուժեր)[153], որոնք նրա կողմից անմիջապես ստացան կոնկրետ խնդիրներ[154]: Շուտով լրացուցիչ ուժեր առանձնացվեցին նաև 20-րդ դիվիզիայից, իսկ ամբողջությամբ դիվիզիան զբաղված էր հույժ կարևոր Վրաստանի խորհրդայնացման գործով և դեռևս չէր կարող ամբողջությամբ ներգրավվել Հայաստանի կռիվների մեջ: Ուստի առայժմ տվյալ ճակատի գործողությունները չստացան այնպիսի զարգացում, որ վճռական նշանակություն ունենային առաջադրանքի կատարման համար, ինչպես նաև նպաստելու Ղամարլուում շրջապատված զորքերի նախաձեռնած հարձակմանը:

Փետրվարի 23-ին տեղի էր ունեցել հայկական զորքերի հրամանատարության խորհրդակցություն, որտեղ որոշվել էր պաշտպանությունից անցնել ակտիվ գործողությունների, և գնդերը նախապատրաստել դրա համար: Հարձակումն սկսվեց փետրվարի 25-ին, Երևանի ուղղությամբ և տևեց մինչև մարտի 1-ը[155]:

---

[153] ԲՀԱ, 1978, թիվ 1, էջ 93:
[154] Նույն տեղում, էջ 94-95:
[155] Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, էջ 60-61:

«ՀՍԽՀ զորքերի հրամանատարությունը,- ասված է Շիրմախերի կողմից 18-րդ դիվիզիայի պետին տրված հրամանում,- փետրվարի 25-ին հաղորդել է վճռական հարձակման անցնելու մասին հակառակորդի հեծելազորը վերջնականապես ոչնչացնելու նպատակով»: «Բանակի հրամանատարությունը,- այնուհետև կարդում ենք հրամանում,- հրամայել է նշված հարձակմանը նպաստելու համար Ելենովկայի շրջանից հանդես բերել ակտիվություն»[156]:

Խորհրդային պաշարված ուժերի (հայկական կարմիր բանակի 2-րդ և 3-րդ գնդեր, ռուսական 178-րդ գունդ և այլն) հարձակումը զարգանում էր հաջողությամբ: Նրանք ընդհուպ մոտեցան Երևանին, սակայն քաղաքի գրավմանը չդիմեցին և անցան հանգստի, ապա հետ քաշվեցին, վախենալով թիկունքից կտրվելուց ու ջախջախումից: Օգտվելով այսպիսի հապաղումից, հակառակ կողմն անցավ հակահարձակման: Կռիվներն ընդունեցին փոփոխակի հաջողությունների ընթացք: Աղբաշ և այլ գյուղեր ձեռքից ձեռք անցան մի քանի անգամ: Ապստամբները հարձակման անցան նաև Դարալագյազից, Գարեգին Նժդեհի և խմբապետ Յապոնի (Համբարձում Պարոնյան) գլխավորությամբ: Հայկական կարմիր բանակի հրամանատարությունը զգուշացնում էր, որ այդ հարձակումը կլսրող է զարգանալ դեպի Բաշ Նորաշեն և կտրել իրենց հնարավոր նահանջի ճանապարհը դեպի Շահթախթի-Նախիջևան, որտեղ տեղակայված էր ռուսական 178-րդ գունդը: Վտանգը կանխելու համար Նախիջևանից օգնության եկավ ադրբեջանցիների 400 մարդուց բաղկացած «Կրասնի տաբոր» պարտիզանական գումարտակը (հրամանատար Աբաս Ղուլի Բեկ):

Իսկ Դարալագյազի ուժերի հարձակման մասին Կ. Սասունին գրել է, թե նրանք «Ամէն հնարաւորութիւն ունէին Բէօյուք-Վեդիի թիկունքէն խփելու, ինչ-որ, սակայն, տեղի չունեցաւ, հակառակ դրկուած նամակներուն եւ ստացուած խոստումներուն»[157]:

Մարտի 1-ին ապստամբական ուժերն անցան նոր հարձակման, իսկ Հայկական կարմիր բանակի հրամանատարությունը զորամասերը կարգի բերելու և հանգստի համար նրանց հետ քաշեց դեպի նոր բնագծեր Աղբաշ-Աղամզալու:

Այդ մարտերի հանրագումարի գնահատականը տրված է Մոլկոչանովի և Սվիրիդովի ստորագրած հրամանում, որում ասված է՝ հնգօրյա համառ մարտերի ընթացքում ՀՍԽՀ տարածքում գործող, իմ խնամքին հանձնված զորամասերը, հաղթահարելով արհեստական ու բնական խոչընդոտները, կրելով մեծ կորուստներ, մի շարք հաղթանակներ են տարել

---

[156] ԲՀԱ, 1978, թիվ 1, էջ 99:

[157] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 177:

քանակով գերազանց հակառակորդի նկատմամբ[158]: Իսկ Կարո Սասունին նույն կռիվների մասին նշել է, թե չնայած իրենց ծրագրած հարձակումը չհասավ նպատակին ու չվերացավ Ղամարլուի կողմից սպառնացող վտանգը, այնուամենայնիվ «բոլորովին ապահովեր էին Ղամարլուի ճակատը թշնամու առաջխաղացութեան դեմ»[159]: Այնուհետև Կ. Սասունին ավելացնում է, որ այդ ճակատը միշտ մնաց ինքնապաշտպանողական, որը մայրաքաղաքին մոտ գտնվելու բերումով բոլորի մտահոգության առարկան էր, որով և Կ. Սասունին բացատրում է մյուս ճակատներում իրենց ժողովրդական ուժերի կողմից հանգիստ խղճով կազմակերպվել ու կենտրոնանալ չկարողանալը[160]:

Քանի դեռ շարունակվում էին Ղամարլուի շրջանում պաշարված բոլշևիկյան ուժերի մարտական գործողությունները, նրանց օգնելու համար հարձակում ձեռնարկվեց Ղազախ-Դիլիջանի մարտական շրջանի ռուսական զորամասերի կողմից Ախտայի ուղղությամբ և Համամլուի մոտ: Շիրմախերը միաժամանակ բանակի ղեկավարությունից խնդրում էր լրացուցիչ համալրում, պատճառաբանելով հակառակորդի ուժեղ դիմադրությունը: Սակայն նրան բավարարել դեռևս հնարավոր չէր Վրաստանում զարգացող իրադարձությունների պատճառով: Փետրվարի 28-ի հեռախոսային զրույցում 11-րդ բանակի հրամանատար Հեկկերը Շիրմախերին խորհուրդ էր տալիս կռվել ոչ թե քանակով, այլ հենվելով խիզախության վրա: «Թիֆլիսի տակ,- ասում էր նա,- մենք հնգապատիկ թույլ էինք, բայց ջարդեցինք հակառակորդին, որովհետև ունեինք հարձակողական թափ, դրսևորում էինք եռանդ և ոչ թե լաց լինում ուժերի անբավարարությունից»: Այնուամենայնիվ նա խոստացավ ուղարկել 20-րդ դիվիզիայի հեծյալ գունդը[161]: Ինչևէ, կարմիր զորամասերի հարձակումն ունեցավ միայն մասնակի հաջողություն, քանի որ առայժմ ապստամբները բավական ուժեղ էին և կարողանում էին համառ դիմադրել:

Աջ թևում Բաշ-Աբարանի շրջանում կանոնավոր զորքը (500 մարդ) և ժողովրդական վաշտերը (1100 մարդ, ճակատի հրամանատար Քենդերյան) պահում էին Սպիտակի բարձունքները, որտեղից դիմեցին հարձակման, փորձելով գրավել Համամլուն և առաջանալ դեպի Ղարաքիլիսա: Նպատակը Ախտայի շրջանի իրենց ուժերին օգնելն էր, որոնց վրա կարմիր բանակը ուժեղ ճնշում էր գործադրում: Սակայն դա ապստամբներին չհաջողվեց, քանի որ Համամլուի մոտ, հանդիպելով ուժեղ դիմադրության,

---

[158] Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական կռիվները Հայաստանում, էջ 128:
[159] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 175-177:
[160] Նույն տեղում, էջ 178:
[161] ԲՀԱ, 1978, թիվ 1, էջ 102-103:

նրանք ստիպված հետ քաշվեցին պաշտպանության Սպիտակի բարձունքներում: Այնուամենայնիվ մինչև մարտի կեսերը, ըստ Կարո Սասունու գնահատման, ապստամբները կարողացան նախաձեռնությունը պահել իրենց ձեռքում, հակառակորդին թույլ չտալով շարժվել դեպի Բաշ-Աբարան[162]:

Անհաջող մարտերը միաժամանակ բարոյալքում առաջացրին Աբարանի ճակատի հիմնական ուժը կազմող ժողովրդական վաշտերի անձնակազմում: Ճակատի կրած զոհերի թվում էր նաև գնդապետ Արամ Աղաջանյանը: Փոխվեց ճակատի ղեկավարությունը, նրա հրամանատար դարձավ Սասունցի Մուշեղը, իսկ Քենդերյանը մնաց նրա տեղակալ:

Ախտայի ճակատում (հրամանատար՝ Արամ Դավոյան, ապա գնդապետ Սարգսյան, շտաբի պետ Կորոլկով) անհաջողության էին մատնվում ելենովկան գրավելու ապստամբների փորձերը: Նրանք մտադիր էին այն գրավելուց հետո, իրենց միացնելով Նոր Բայազետի ուժերին, միասին գրոհել Սեմյոնովկայի բարձունքները՝ նրան տիրելու որպես ամուր պատնեշի: Ելնելով Սևան-Երևան ճանապարհի կարևոր նշանակությունից, Ախտայի ճակատում կենտրոնացվել էին մեծաքանակ ուժեր: Այստեղ գտնվող ղեկավար կազմակերպիչներ Համո Օհանջանյանի, Հակոբ Տեր-Հակոբյանի, Համբարձում Տևեճյանի, Արշ. Աստվածատուրյանի և այլոց խմբին միացավ նաև Կ. Սասունին, որն օգնեց ճակատ մտցնելու նոր թնդանոթներ:

Հարկ եղավ ճակատն ամրացնել լրացուցիչ ուժերով: Այստեղ փոխադրվեց Սասունցի Մուշեղի և Փիլոսի հեծյալների մի մասը, չնայած պայմանները և եղանակը նրա գործունեության համար նպաստավոր չէին: Կռիվների մեջ մտավ նաև եզդիների վաշտ: Ավելի ուշ Երևանից ստացվեց նոր համալրում՝ մտավորականների ու միլիցիոներների անվարժ գումարտակ, գնդապետ Հարությունյանի հրամանատարությամբ, որին վերջին օրերին հանձնվեց Ախտայի ճակատի ղեկավարումը: Գումարտակը մասնակցեց Սուխոյ Ֆոնտանի կռիվներին:

Ձեռնարկած միջոցառումները, սակայն, կարող էին միայն ձգձգել վախճանը, չնայած նրան, որ հաջողվեց առանձին դեպքերում կազմակերպել ուժեղ դիմադրություն: Ուժեղ կռիվներ տեղի ունեցան Յայջիում (մարտի 3), խճուղու վրա (մարտի 14-15), Ախտայի ջրաղացների մոտ (մարտի 17), բուն Ախտայում (մարտի 18) և այլն: Այնուամենայնիվ ճակատը մոտեցավ Սուխոյ Ֆոնտանին Երևանի մատույցներին:

Իսկ Նոր Բայազետի հատվածում օգնության էին եկել Գարեգին Նժդեհի վաշտերը:

---

[162] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 180-181:

Նոր Բայազետը, Ելենովկայի և այլ բնակավայրերի նման, ձեռքից ձեռք էր անցնում: Փետրվարի վերջերին Նոր Բայազետին տիրելուց հետո ապստամբները փորձել էին վերագրավել Ելենովկան, այնուհետև դեպի Սեմյոնովկայի բարձունքներ հարձակվելու և այնտեղ ամրանալու համար: Սակայն Նոր Բայազետի և հիմնական Ախտայի ուժերի հարձակումը ձախողվել էր: Նոր Բայազետի և Գ. Նժդեհի ժողովրդական ուժերը մարտի 11-ին անհաջող մարտեր էին ունեցել Զեյնալում (այժմ Չկալովկա) և ստիպված էին եղել նահանջել: Նժդեհը հետ էր քաշվել դեպի Ղարանլուղ:

Այս գործողություններից անջատ և ինքնուրույն էր, որպես տեղական նախաձեռնություն, Շամշադինի շրջանի Ղուլալի գյուղի ապստամբությունը և նրա ճնշումը: Այն սկսվեց փետրվարի վերջերին և ավարտվեց ապրիլի 6-ին: Ապստամբել էր ամբողջ գյուղը, որը ղեկավարում էին աքսորից (Բաքվից) փախած հայ սպաներ և ուրիշներ: Ապստամբությունը ճնշելու համար անձամբ այնտեղ մեկնեց Գևորգ Աթարբեկյանը, զինված ջոկատով և կարմիրբանակայինների վաշտով:

Ապստամբության էին նախապատրաստվում նաև Շամշադինի շրջանի այլ գյուղեր ևս, որը, ինչպես գրել է իր զեկուցագրում Գևորգ Աթարբեկյանը, «հաջողվեց ճնշել բնում Լևոն Ավալովի (Լևոն բեկի) շնորհիվ, որը լրիվ ապացուցեց իր նվիրվածությունը խորհրդային իշխանությանը»[163]:

Ղամարլուի ճակատում մինչև Երևանի գրավման երկրորդ փորձի ձեռնարկումը բոլշևիկների զորքը առանձին ընդհարումներ ունեցավ ապստամբների հետ: Հիշվում է մարտի 8-ի կռիվների մասին, երբ հայկական բանակի 2-րդ և 3-րդ գնդերը, Յանիշևսկու կոմունիստական ջոկատի հետ միասին, Բեյուք-Վեդի և Անգիջա գյուղերի մոտ հաջողությամբ հետ մղեցին հակառակորդի ուժեղ գրոհը, որը նա ձեռնարկել էր Թազա-Դարղալու գյուղի կողմից[164]:

Երևանի գրավման նոր փորձը իրականացվելու էր 11-րդ կարմիր բանակի հրամանատարության մարտի 9-ի հրամանի համաձայն: Այս դեպքում հրամանը վերաբերում էր նաև Վրաստանում հարձակողական գործողությունների զարգացմանը: Այսինքն՝ կարմիր բանակի վրա խնդիր էր դրվում ապահովել խորհրդային իշխանության հաղթանակը ամբողջ Անդրկովկասում:

Նույն հրամանով Ղազախ-Դիլիջանի մարտական շրջանի հրամանատար Շիրմսխերի վրա դրվեց հետևյալ առաջադրանքը. «Շարունակել հարձակումը Երևանի ուղղությամբ՝ ապստամբների խմբերը վերացնելու և Երևանից հարավ Աղամզալու, Աղբաշ, Ղամարլու շրջանում գործող Մոլկո-

---

[163] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 68, թ. 34-35:
[164] ԲՀԱ, 1978, թիվ 1, էջ 106:

չանովի Հայկական կարմիր բանակի զորամասերի հետ միանալու համար»[165]: Երևանի գրավումը նախատեսվում էր ավարտել մարտի 13-ին:

Մոլկոչանովի հայկական զորամասերը շարունակում էին գտնվել ծանր վիճակում: Այդ մասին Ավիս Նուրիջանյանի և զինկոմ Սվիրիդովի մարտի 12-ի զեկուցագրում, հասցեագրված 11-րդ բանակի ռազմհեղկոմին, ասված է. «Զինամթերքի և պարենի բացակայությունը մեզ դնում է աղետալի վիճակում: Անհրաժեշտ է արագ ճնշում Դիլիջանի կողմից և նրա ու մեր գործողությունների կոորդինացիա»[166]:

Նոր հարձակման պահին կարմիր բանակի զորամասերը մեծապես գերազանցում էին ապստամբներին, ինչպես մարդկային ուժի, այնպես էլ ռազմական տեխնիկայի տեսակետից: Սակայն իրենց առավելությունն առայժմ նրանք օգտագործել չկարողացան, հիմնականում հարձակման համար անբավարար բնական պայմանների պատճառով:

Հայրենիքի փրկության կոմիտեի ուժերի մասին, տվյալ պահի համար, կան հետևյալ տվյալները (ըստ կարմիրների տեղեկության): Կարմիր բանակի աջ թևում (Ղարաքիլիսա-Սպիտակի լեռնանցքի տեղամաս) 1000 հետևակային (սվին) և 500 հեծյալ (թուր), ձախ թևում (Ելենովկայի տեղամաս) 1000 և 200, Նոր Բայազետի տեղամաս 300 և 100-150:

Կամիր բանակի հարձակումն սկսվեց մարտի 11-12-ին: Աջ թևի զորամասերը, չհասնելով որևէ լուրջ հաջողության, դադարեցրին հարձակողական գործողությունները: Պատճառը ծմեռային դժվարություններն էին Սպիտակի լեռնանցքում: Ձախ թևում կարմիր զորամասերը գործողություններ ծավալեցին Ռնդամալի և Ախտայի շրջանում, հանդիպելով ապստամբների և ժողովրդական վաշտերի համառ դիմադրությանը: Ռնդամալը և այլ գյուղեր ձեռքից ձեռք էին անցնում: «Հարձակմանը մեծապես խանգարում էին մեկուկես արշինանոց* ձյունը, ճանապարհի խցանումների և ձնաբուքի պատճառով հրետանու օգտագործման անհնարինությունը: Տեսանելիությունը հազիվ 100-150 քայլ է»,- հայտնել է 18-րդ դիվիզիայի շտաբի պետը 11-րդ բանակի հրամանատարին, մարտի 13-ի հեռախոսային զրույցում[167]. Երկու օր անց նույնպիսի եղանակի մասին էր տեղեկացնում վերադասին Ա. Գ. Շիրմախերը. «Վերջին օպերատիվ հրամանի կատարումը անհնար է. սոսկալի բուք է, ճանապարհները և խճուղին լցված է ձյունով, 50 սաժեն հեռավորության վրա ոչինչ տեսանելի չէ: Հրետանին բացարձակապես չի

---

[165] Նույն տեղում, էջ 107:
[166] Նույն տեղում, էջ 111:
* Մեկ արշինը 71 սանտիմետր է:
[167] ԲՀԱ, 1978, թիվ 1, էջ 111:

կարող գործել: Որևէ, թեկոզ չնչին թևանցում, ձեռնարկել անհնար է նույն պայմաններում»[168]:

Կարմիր բանակի զորամասերի այս հարձակումը սերտորեն առնչվում էր Ղամարլուի ճակատի բոլշևիկյան ուժերին օգնության հասնելու խնդրի հետ, ընդհանուր նպատակ ունենալով Երևանի գրավումը: Մոլկոչանովի ղեկավարած բանակը հարձակման էր անցել մարտի 14-ին: Շիրմախերը հայտնում էր, որ եղանակի պատճառով չի կարող իր գործողությունները համաձայնեցնել Մոլկոչանովի գործողությունների հետ: Եղանակը, նշում է Շիրմախերը, թույլ չի տալիս լուծել Երևանի հարցը, այլապես մենք արդեն լինելու էինք այնտեղ[169]:

ՀՍԽՀ զինժողկոմ Ավիս Նուրիջանյանը մարտի 14-ին Գ. Օրջոնիկիձեին զեկուցում էր, որ ձեռնարկում են «վերջին վճռական հարձակումը Երևանի վրա»: Նորից հիշեցվում էր զինամթերքի ու պարենի բացակայության մասին, և որ առանց անմիջական համապատասխան օգնության (Դիլիջանի խմբի կողմից) իրենք պարտություն կկրեն,- հայտնում էր Ա. Նուրիջանյանը[170]:

Ռազմական տեսանկյունից Ավիս Նուրիջանյանի «վերջին վճռական հարձակման մասին» զեկուցագիրը առնվազը զարմանք է առաջացնում: Այդ ինչպես կարող էր սպառազինությունից ու պարենամթերքից զուրկ զորքը լուծել նման խնդիր, երբ ՀՍԽՀ ամբողջ ղեկավարության համար պարզից էլ պարզ էր, որ վճռական հարձակում կատարողը լինելու էր միայն ռուսական կարմիր բանակը, իսկ իրենց վիճակված էր դիմանալ պաշարմանը և լավագույն դեպքում խաղալ օժանդակի դեր: Ճիշտ է, հարձակման առաջին իսկ օրը շրջապատված զորամասերը գրավեցին Յուվա և Ղամարլու գյուղերը, սակայն դա էական նշանակություն ունենալ չէր կարող:

Եվ քանի որ ձգձգվում էր Երևանի գրավումն ու սպառման վրա էին պարենի պաշարները, ՀՍԽՀ ղեկավարությունը 11-րդ բանակի ռազմհեղկոմին խնդրեց օգնել ոսկով՝ պարենամթերք ձեռք բերելու համար: «Այդ խնդրանքի կատարումից է կախված մեր գոյությունը»,- ասված է հեռագրում[171]: Շուտով բավարարվեց Խորհրդային Հայաստանի խնդրանքը: Մարտի 25-ին ինքնաթիռը Թիֆլիսից, կտրելով 400 կիլոմետր դժվարին ուղի, անցնելով Երևանի վրայով, վայրէջք կատարեց Արաքսի ափին, տեղ հասցնելով 47 կիլոգրամ ոսկի: Օդաչուներն էին Վսեվոլոդ Մելնիկը և Բո-

---

[168] Նույն տեղում, էջ 115:
[169] Նույն տեղում, էջ 116:
[170] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 540:
[171] Նույն տեղում, էջ 120:

րիս Կուդրինը: Այն ժամանակի համար, բարձր լեռնային տեղանքում (3800 մետր բարձրության վրա) նման թռիչքը հիրավի հերոսական էր[172]: Ոսկին օգտագործվեց պարենամթերք գնելու համար և կարևոր նշանակություն ունեցավ Հայկական բանակը սովի վտանգից ազատելու գործում:

Խորհրդային Հայաստանին օգնելու բնագավառում վճռական դերը պատկանում էր ռազմականին:

Մարտի 17-ին Մոլկոչանովը 11-րդ բանակի հրամանատարությանը զեկուցում էր, որ իր հրամանատարության տակ գտնվող Հայկական բանակի զորամասերը, գտնվելով աղետալի դրության մեջ, զրկված պարենից ու զինամթերքից, նահանջել են դեպի Նախիջևան, որ մեկ ամիս դիմանում են և խնդրում են գրավել Երևանը, և որ դեռևս չեն զգում հյուսիսի ճնշումը[173]:

Հաջորդ օրը ստացվեց Գ. Կ. Օրջոնիկիձեի և Հեկկերի պատասխան հեռագիրը ՀՍԽՀ զինժողկոմին, որում տեղեկացվում էր, որ մենշևիկյան Վրաստանի հետ հաշիվը լրիվ փակվել է, և որ կարող են մեկ բրիգադ ուղարկել Հայաստան, հարկ եղած դեպքում նաև ամբողջ հեծյալ դիվիզիա: «Դիմացեք որոշ ժամանակ ևս ... Շուտով կհանդիպենք Երևանում»,- ոգևորում էին կոմունիստական կուսակցության և կարմիր բանակի ղեկավարները[174]:

Հայկոմկուսի Կենտկոմը ևս, Հայաստանի աշխատավոր գյուղացիությանը գոտեպնդելու համար Դիլիջանից դիմում արեց նրանց, միաժամանակ պարզաբանելով, թե ովքեր են գլուխ բարձրացրել իրենց իշխանության դեմ[175]:

Մարտի 20-ին Բաթումը գրավելուց հետո կարմիր բանակի լրացուցիչ օգնությունն ավելի ուժեղացավ: Նրա գործողությունները Հայաստանում ակտիվանում էին: Համամլուի հատվածում, զրահագնացքի ճնշման տակ, ապստամբները հետ էին մղվել դեպի Հայդառլի, Հալլավար և Քրդական Փամբ գյուղերը: Ելենովկայի ուղղությամբ կարմիրները տիրեցին Ախտա, Քաղսի, Սոլակ և այլ գյուղերի: Կռիվները փոխադրվեցին դեպի Սուխոյ Ֆոնտան: «Հակառակորդը չի դիմանում մեր գրոհներին, մոտեցնում է իր վերջին թույլ ռեզերվները»,- Մոլկոչանովին տեղեկացնում էր բանակի հրամանատարությունը[176]:

---

[172] Թռիչքի մասին տես նաև Г. Оганезов. Воспоминания старого солдата. Ереван, 1979, с. 48-51.
[173] ԲՀԱ, 1978, թիվ 1, էջ 116-117:
[174] Նույն տեղում, էջ 117:
[175] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան ..., էջ 498:
[176] ԲՀԱ, 1978, թիվ 1, էջ121:

Սահմանվեց Երևանի գրավման նոր ժամկետ մարտի 22-ը, որ իրականացվելու էր 18-րդ դիվիզիայի մարտի 20-ին սկսած հարձակումով: Սակայն, չնայած Երևանի ուղղությամբ որոշ առաջխաղացմանը, այս ժամկետը ևս իրական չդարձավ:

Այն պահին, երբ ռազմական գործողությունները փոխադրվել էին Սուխոյ Ֆոնտան, Գ. Կ. Օրջոնիկիձեի հովանավորությամբ Թիֆլիսից Երևան ժամանեց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Թիֆիլսահայությանը և անձամբ Հայոց բանաստեղծին մտահոգել էր Հայաստանի իրադրությունը, երբ հայը դուրս էր եկել հայի դեմ: Նա ճանապարհին կանգ էր առել բոլշևիկների ճակատում Ելենովկայում, Գևորգ Աբարբեկյանի մոտ, ապա մտել ապստամբ ուժերի ճակատ Սուխոյ Ֆոնտան, հանդիպել Կարո Սասունուն, որը և նրան ճանապարհել էր Երևան, ուր նա ժամանեց մարտի 20-ին, զրույցներ ունեցավ Սիմոն Վրացյանի և այլոց հետ, հյուրընկալեց որդուն Համլիկ Թումանյանին: Սամուլին տված զրույցում Թումանյանը նշել է, որ իր նպատակն է ծանոթանալ երկրի դրությանը և որևէ քաղաքական խնդիր չի հետապնդում[177]:

Մինչև Թիֆլիսից մեկնելը Հ. Թումանյանը նամակ է տպագրել թերթում («Կարմիր աստղ», մարտի 4) Երևանի «հեղաշրջում» կոչված ավանտյուրայի մասին, դրա կատարողներին համարելով «սոսկալի դավադրության կույր գործիք»:

«Հայ ժողովրդի բանաստեղծը», մեծ հավատ ունենալով դեպի նոր, այսինքն բոլշևիկյան Ռուսաստանը, խնդրում էր «վերջին տանջանքի բաժակը» հեռացնել «արյունաքամ հայ ժողովրդից»[178]:

Լինելով Հայաստանում, աչքով տեսնելով դեպքերը, Թումանյանը ձեռք բերեց սեփական պատկերացումներ, ի տարբերություն նախնականի, որը հայ բոլշևիկների պաշտոնական հրապարակային տեսակետն էր:

Նա Երևանից հեռագրեց (Հայրենիքի փրկության կոմիտեի միջոցով) Օրջոնիկիձեին և նամակ գրեց Գևորգ Աբարբեկյանին (այն ռազմաճակատից հետ է վերադարձվել Սիմոն Վրացյանին):

Հեռագրում հայտնվում էր, որ ծանոթացել է գործերի դրությանը և կատարելապես համոզվել է, որ Թիֆլիսում ստեղծված կարծիքը իրականությանը չի համապատասխանում, քանի որ «շարժումը սկսվել է գյուղացիության մեջ զանազան շրջաններում, տարածվել է մինչև Երևան և իր ետևից քաշել է մտավորականությանը»: Միմյանց դեմ կանգնել են Հայաստանի զինված աշխատավոր գյուղացիությունը և կոմունիստների զինված ուժերը, «և արյունը հոսում է առանց թշնամության ու փոխադարձ բնաջնջ-

---

[177] «Ազատ Հայաստան», 24 մարտի 1921 թ.:
[178] Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, էջ 408:

ման հիմքի»: Թումանյանը Օրջոնիկիձեից խնդրում է իր հեղինակավոր միջամտությամբ շուտով վերջ տալ «այս ոչ ոքի համար հարկավոր արյունահեղության», ժխտելով հանդերձ ծերբակալվածների ու ռազմագերիների գնդակահարության վերաբերյալ լուրերը[179]:

Շարժման պատճառների մասին միտքը բնականաբար կրկնվում է նաև հիշված նամակում. «Ես շուտով համոզվեցի, որ էս շարժումը հիրավի առաջ է եկել գյուղերում և գյուղացիների մեջ, որոնց կոմունիստական կարգերն ու կարգադրությունները խորթ են ու անընդունելի», այսինքն այն չէ՝ թե իբր մի քանի մարդու և հեշտ վերջանալու գործ է և հիշեցնում էր կոմունիստ ընկերների այն խոստովանությունը, թե «հեղափոխության ամբողջ ընթացքում սրանից ավելի անիմաստ կռիվ չենք ունեցած»[180]:

Երևանում գտնված ժամանակ Թումանյանը ձեռնարկել է պատրաստել, ինչպես ինքն էր արտահայտվում, «մանրամասն զեկուցում», սակայն այն չի ավարտել: Այն հետաքրքիր սոցիալ-քաղաքական վերլուծություն է, անվերնագիր, և սկսվում է. «Իմ Երևան գալու առիթով» արտահայտությամբ (առաջին անգամ հրապարակել է ակադեմիկոս Էդուարդ Ջրբաշյանը 1988 թ.):

Թումանյանը կարևորություն է տալիս ոչ այնքան շարժման պատճառներին (որոնց մեջ հիմնականը համարում էր կոմունիզմի անցկացումը «պրոլետարիատի դիկտատուրայի» միջոցով, անփույթ կերպով կազմակերպած բռնագրավումները), որքան «սկսված խռովության» վերացմանը[181]:

Երևանի գրավումից (ապրիլի 2) հետո բոլշևիկյան «Կոմունիստ» թերթը Հովհ. Թումանյանի դեմ հանդես եկավ քննադատական հոդվածով, «Մի դիպլոմատի խորտակված կարիերա» վերնագրով[182]:

Պատասխան նամակում իր վերաբերմունքը Հ. Թումանյանը արտահայտել է այսպես՝ «Մի շատ շռայլ վերնագիր իմ շատ պարզ դերի համար: Էս տեսակ չափազանցրած նշանակություն ու խորհրդավորություն տվեց իմ գալուն և փրկության կոմիտեն, էնքան, որ ինքն էլ վախեցավ, հասարակությունն էլ, ես էլ»[183]:

Հ. Թումանյանը բացատրում է, որ, գալով Երևան, ձգտել է իմանալ ճշմարտությունը և, եթե կարելի լինի, միջամտել, որ «անարյուն վերջանա

---

[179] Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. 10, էջ 375:
[180] Նույն տեղում, էջ 376-377:
[181] Նույն տեղում, հ. 7, էջ 509-518:
[182] «Կոմունիստ», 10 ապրիլի 1921 թ.:
[183] Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, էջ 409-410:

սկսված խռովությունը»: Սակայն, դժբախտաբար, Փրկության կոմիտեն չընդառաջեց, թե՝ չենք հավատում:

Տպագրելով Հ. Թումանյանի նամակը, թերթը նույն համարում հարցը փակել է «Խմբագրության կողմից» պատասխանով, իրեն վերապահելով վերջին խոսքի իրավունքը՝ թե վիժել է բանաստեղծի ստանձնած առաքելությունը և խորտակվել «նորելուկ դիպլոմատի կարիերը»:

Մի կողմ թողնելով թերթի կոշտ վերաբերմունքը, ըստ էության հարցը թողնում է հետևյալ տպավորությունը: Ամենայն հայոց բանաստեղծը, իր կամքից անկախ, գտնվել է երկու քարի արանքում: Նրա գերագույն ձգտումն էր անիմաստ արյունահեղությանը վերջ տալը, որին պատրաստ չէին և չէին էլ ցանկանում ոչ մեկը, ոչ էլ մյուսը: Այստեղից էլ իրարամերժ կարծիքների առկայությունը Հ. Թումանյանի մոտ, որի պատճառը ոչ թե ինքը՝ բանաստեղծն էր, այլ ժամանակի հայկական իրականությունը: Նա մոտ էր բոլշևիկներին, քանի որ ռուսասեր էր, մոտ էր և դաշնակցականներին, քանի որ ազգասեր էր: Իրավացի է Ս. Վրացյանը, գրելով. «Հովհ. Թումանյանը մինչև իր ոսկորի ծուծը հայ ազգային բանաստեղծ էր և ազգային գործիչ: Եվ այս տեսակետից նա ոչ մի դասակարգի և ոչ մի կուսակցության մարդը չէր: Նա դաշնակցական չէր և այն ժամանակ, երբ անդամ էր դաշնակցության: Եվս առավել նա չի կարող լինել բոլշևիկ կամ բոլշևիկների մարդը: Նա համազգային է»[184]:

1921 թ. փետրվարյան իրադարձությունների կապակցությամբ Հովհաննես Թումանյանը կանգնած էր ժողովրդի, նրա խաղաղ կյանքի կողմում:

Նույն օրը, մարտի 20-ին, երբ Հ. Թումանյանը հասավ Երևան, այնտեղ ստացվեց Օրջոնիկիձեի վերջնագիրը Հայրենիքի փրկության կոմիտեին: Օրջոնիկիձեն «մի խումբ հայ ընկերների» անունից պահանջում էր զենքը վայր դնել և վերջ տալ «անիմաստ, աննպատակ և ժողովրդի համար կործանարար պատերազմին»[185]:

Սակայն պատերազմը շարունակվում էր: Կարմիր բանակը պատրաստվում էր վճռական մարտերի: Դա իրական դարձավ Վրաստանում կարմիր բանակի գործողությունների ավարտից հետո: Վճռական նշանակություն ունեցող միջոցառումներ դարձան 1921 թ. մարտի 24-ի վերակառուցումները զորքի մեջ: 11-րդ կարմիր բանակի 20-րդ դիվիզիան լրիվ հատկացվեց Ղազախ-Դիլիջանի մարտական շրջանին: Դիվիզիայի հրամանատար Մ. Դ. Վելիկանովը, ազատվելով Թիֆլիսի կայազորի պետի պաշտոնից, անմիջապես ժամանեց Դիլիջան, որպես Ղազախ-Դիլիջանի շրջա-

---

[184] Ս. Վրացյան, էջեր մոտիկ անցյալից. «Հայրենիք», 1923, թիվ 10, էջ 77:
[185] Ա. Հակոբյան, Հայաստանի ..., էջ 67:

նի բոլոր զորքերի հրամանատար, միավորելով 18-րդ և 20-րդ դիվիզիաների գործողությունները: Վելիկանովին հրաման տրվեց անմիջապես անցնել «վճռական հարձակման ամբողջ ճակատով, ամենակարճ ժամկետում Երևանը գրավելու և Հայաստանի հանրապետության Մոլկոչանովի զորքերի հետ կապ ստեղծելու համար»[186]: Համատեղված ուժերը կոչվեցին Երևանի ուղղության զորախումբ: Ղազախ-Դիլիջանի շրջանի զորքերի (18-րդ դիվիզիայի) հրամանատար Շիրմախերը դարձավ Լևանդովսկու տեղակալը, որը Երևանը գրավելուց հետո մեկնելու էր Վրաստան: Զորախմբի շտաբը գտնվում էր Ղարաքիլիսայում:

Նույն օրը հեռախոսով Լևանդովսկին Շիրմախերին հայտնելով սույն հրամանի մասին, վերջինիս կողմից տեղեկացավ ռազմաճակատի դրության:

58-րդ և 60-րդ բրիգադները համալրեցին ռազմաճակատի աջ թևը (Համամլու, Սպիտակ, Վորքնավ, Չոթուռ գյուղերի շրջան): Այստեղ սպասվում էր բարդ ու ծանր առաջադրանքի կատարում՝ Սպիտակի լեռնանցքի նվաճումը:

20-րդ դիվիզիայի հեծյալ գունդը փոխադրվեց ռազմաճակատի ձախ թևը Ախտայի շրջան: Այս թևի զորքերի վրա էր դրվում Երևանի գրավման առաջադրանքը:

Մարտի 27-ին Ղարաքիլիսայում Երևանի ուղղության զորախմբի հրամանատար Վելիկանովը ստորագրեց ռազմաճակատի զորքերի հարձակման անցնելու մասին հրամանը:

Ռազմաճակատի աջ և միջին մարտական թևերը (58-րդ և 60-րդ բրիգադներ, մեկ հրետանային դիվիզիոն և այլն) հարձակման էին անցնելու մարտի 28-ին, առաջադրանք ունենալով Սպիտակի (Փամբի) լեռնանցքի գրավումը:

Ձախ մարտական թևը (45-րդ բրիգադ, 18-րդ և 20-րդ դիվիզիաների հեծելագնդերը, 2 հրետանային դիվիզիոն, Քարվանսարայի կոմունիստական գումարտակ և այլ տեղական ուժեր), շարունակելով հարձակողական գործողությունները, մարտի 30-ին (ապա թույլ տրվեց 31-ին) դուրս էին գալու այնպիսի բնագիծ, որ կարելի լիներ անմիջապես գրոհել Երևանի վրա: Նոր Բայազետի շրջանի ուժերը պաշտպանելու էին գրաված դիրքերը: Պահեստային ուժերը կենտրոնանում էին Ղարաքիլիսայում (թիվ 61 զրահագնացքով) և Ելենովկայում[187]: Ի տարբերություն նախորդ հրամանի, այս դեպքում Երևանի գրավման ժամկետ չէր սահմանվում:

---

[186] ԲՀԱ, 1978, թիվ 1, էջ 122:
[187] Նույն տեղում, էջ 128-129:

Իսկ պատերազմող կողմի համար դրությունը գնալով ծանրանում էր: Այդ մասին է վկայում, թեկուզ, Սիմոն Վրացյանի մարտի18-ի նամակը Գարեգին Նժդեհին: Այն հասցեատիրոջը չէր հասել և ճանապարհին (Ախտայի շրջանում) բռնվել էր կարմիրների կողմից, ապա հրապարակվել բոլշևիկյան թերթում:

Նամակում խոսվում է վերջին օրերում ժողովրդի թուլության և մարտիկների խուճապային տրամադրության նշանների մասին: «Կանգնած ենք ծանր հնարավորությունների առաջ», երբ դրությունը կարող է փրկել միայն Բայազետից ու Դարալագյազի կողմից կատարվող հարձակումը: Շեշտելով արագ և վճռական գործողությունների անհրաժեշտության վրա, Ս. Վրացյանը դրանում էր տեսնում Հայաստանը աղետից փրկելու միջոցը: Անհրաժեշտ էր համարվում նաև Նժդեհի այդ «ժողովրդական հեղինակություն ունեցող անձնավորության» ժամանումը Երևան, զինված ուժերի գլուխ կանգնելու համար:

Հետաքրքիր է Ս. Վրացյանի խոստովանությունն այն մասին, որ իրենք օգնության համար բանակցությունների մեջ են մտել թուրք հրամանատարների հետ[188]: Այդ բանակցությունների մասին, սակայն, այլ տվյալներ հայտնի չեն:

Փրկության կոմիտեի մարտի 15-ի հրամանով Երևան, Աշտարակ և Վաղարշապատ քաղաքներում հայտարարվեց 20-23 տարեկան տղամարդկանց զորակոչ: Ավելի բարձր տարիք ունեցողների համար զորակոչը կամավոր էր: Խուսափողները համարվում էին հայրենիքի դավաճաններ, որոնց սպառնում էր հեղափոխական ամենախիստ պատիժը[189]: Մինչև այդ Դաշնակցության Հայաստանի կոմիտեն զենքի էր կոչել 20-40 տարեկան իր ընկերներին[190]: Մարտի վերջերին զորակոչի տարիքը բարձրացվեց մինչև 50-ը[191]: ՀՓԿ-ի նախագահ Ս. Վրացյանը մի անգամ ևս հանդես եկավ քաղաքացիներին ուղղված կոչով. «Բոլշևիկ ավանտյուրիստները չեն ուզում հանգիստ թողնել Հայաստանը: Ջարդված և ուժասպառ Դամարլուի ճակատում նրանք վերջին ուժերն են լարում, որ մեզ հաղթեն հյուսիսից[192]:

Հայրենիքի փրկության կոմիտեի համար ստեղծված օրհասական պահին Հայաստանի սոցիալիստական կուսակցություններ (ՀՅԴ, սոցիալիստ-հեղափոխականներ, սոց.-դեմ. բանվորական կուսակցություն) օգ-

---

[188] Կոմունիստ, 13 մայիսի 1921 թ.:
[189] Ազատ Հայաստան, 16 մարտի 1921 թ.:
[190] Նույն տեղում, 4 մարտի 1921 թ.:
[191] Նույն տեղում, 29 մարտի 1921 թ.:
[192] Նույն տեղում, 29 մարտի 1921 թ.:

նության դիմեցին Սոցիալիստական ինտերնացիոնալին, ինչպես նաև Կոմինտերնին[193]:

Իրավիճակի մասին ավելի ամբողջական եզրակացություններ ու մեկնաբանություններ Ս. Վրացյանն արել է 1921 թ. մարտին Փարիզում գտնվող նախկին Հայաստանի Հանրապետության նախկին պատվիրակությանն ուղարկած ՀՓԿ-ի զեկույց-նամակում: Ընդհանուր նկարագրության հետ մեկտեղ արդեն խոսվում է նաև հեռանկարների բացակայության մասին. «Այս օրհասական կռվի մեջ մենք լարել ենք մեր վերջին ուժերը,- գրել է Ս. Վրացյանը,- Երկար ժամանակ չենք կարող մնալ այսպիսի լարված դրության մեջ: Ժողովուրդը ուժասպառ է, արնաքամ: Եթե բոլշևիկները ուժեղանան արտաքին օժանդակությունով, իսկ մենք մնանք մենակ, պարտությունը անկասկած է և անխուսափելի»[194]:

Խուսափելով ապագայի գուշակությունից, Ս. Վրացյանը մի բան, այնուամենայնիվ, գիտեր հաստատ: Դա այն էր, որ կամավոր կերպով չէին ենթարկվելու բոլշևիկներին: «Միայն մեր դիակների վրայով բոլշևիզմը կարող է երկրորդ անգամ ոտք կոխել Հայաստան»: Եվ նա հաստատ մնաց իր այս խոստմանը:

Մարտի վերջերին կարմիր բանակի զորամասերը դիմեցին ուժեղ հարձակման, որը դառնալու էր վերջինը և վճռականը:

Սպիտակի լեռնանցքի հաղթահարման առաջադրանքը հարձակման առաջին իսկ օրը կատարվեց մեծ հաջողությամբ: Այդ ընթացքում ռուսական զորամասերը ցուցաբերեցին բարձր տոկունություն ու կամային հատկություններ: «Դա անօրինակ խիզախություն է,- գրել է Վելիկանովը թիվ 2 հրամանում,- Փամբի և Վորքնավի լեռնանցքները, վեց վերստ տարածության վրա գտնվելով 1.5 արշին խորությամբ ձյան մեջ, ունենալով 9000 ֆուտ* բարձրություն, տարվա այդ եղանակին, երբ ռուս կարմիրբանակայինները երբևէ այնտեղ ոտք չէին դրել, ներկայացնում էին անհաղթահարելի արգելք: Ոչ մի զորամաս, ինչպես նշում է պատմությունը, չի համարձակվել ձմռանը անցնել այդ լեռնանցքները»: Մինչև գոտկատեղը ձյան մեջ, բնական անասելի դժվարությունը կռիվներով հաղթահարեցին 174-րդ և 179-րդ գնդերի կարմիրբանակայինները և Ղարաքիլիսայի կամավորները: «Փառք նրանց,- այնուհետև նշում է Վելիկանովը,- Այդ անցումը իրավամբ կարող է կոչվել սուվորովյան»: Հրամանը հեռագրով հայտարարվեց բոլոր վաշտերում, էսկադրոններում, մարտկոցներում և անձնակազմերում[195]:

---

[193] «Ազատ Հայաստան», 30 մարտի 1921 թ.:
[194] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 656:
* Մեկ ֆուտը 30.5 սանտիմետր է:
[195] ԲՀԱ, 1978, թիվ 1, էջ 131:

Սպիտակի լեռնանցքի հաղթահարումից հետո հարձակողական գործողությունների զարգացումը դեպի Բաշ-Աբարան մեծապես հեշտացավ: Իսկ ձախ թևում 18-րդ դիվիզիայի ստորաբաժանումները ստացան կոնկրետ առաջադրանքներ ապրիլի 1-ին Երևան մտնելու համար[196]:

Բաշ-Աբարանի և Դանագիրմազի շրջաններում մարտի 24-ին տեղի ունեցավ «ամենաուժեղ ճակատամարտը» (Կ. Սասունի), որտեղ ժողովրդական ուժերը չկարողացան պահել պաշտպանությունը և շարունակեցին նահանջը: Ուժեղացավ դասալքությունը: Բաշ-Աբարանի և Շիրակի գյուղացիները ցրվեցին իրենց տները: Հուսահատությունը և կազմալուծումը տիրել էր նաև արևմտահայերին և կանոնավոր զորամասերին: Ճակատում մնացած ուժերը, Սասունցի Մուշեղի հրամանատարությամբ, քաշվել էին դեպի Օշական-Էջմիածին[197]:

Շարունակական նահանջը տիրեց նաև Սուխոյ Ֆոնտանում կենտրոնացած ապստամբական ուժերին: Օրեցօր նահանջն ընդունում էր խուճապային բնույթ: Սուխոյ Ֆոնտանի, Ալափարսի, Բջնիի ու Եղվարդի կռիվներից հետո որոշ դիմադրություն կազմակերպվեց միայն Էյլար և Գեոկքիլիսա գյուղերի մոտ, որոնք Երևանի ուղղությամբ պաշտպանության վերջին հենակետերն էին: Հայրենիքի փրկության կոմիտեն արդեն մտածում էր կազմակերպված նահանջի մասին: Այդ հարցը քննարկվում էր ՀՓԿ-ի վերջին նիստում, որը կայացավ հավանաբար մարտի 29-ին և որին մասնակցում էր նաև ճակատից Երևան մեկնած Կ. Սասունին: Վերջինս առաջարկեց կազմակերպված նահանջի իր ծրագիրը, որին համաձայնեցին ՀՓԿ-ի նախագահ Ս. Վրացյանը և զինվորական վարիչ Արշ. Հովհաննիսյանը: Ծրագիրը նախատեսում էր դեպի Դարալագյազ (Լեռնահայաստան մեկնելու համար) նահանջի ուղի բացել Մազտարակի վրայով կամ Բեյուք-Վեդի-Չիմանքենդի ուղղությամբ, որպիսին, սակայն, չհաջողվեց Ղամարլուի ճակատի դիմադրության պատճառով և, ինչպես կտեսնենք, նահանջը տեղի ունեցավ ծանր ճանապարհով ու բավական անկազմակերպ: Կարմիր բանակի հարվածների տակ ապստամբական ուժերը կամ դասալքում էին մարտական շարքերն ու ցրվում իրենց տները (ժողովրդական վաշտերը) կամ ուղղություն բռնում դեպի Արագած, նույնիսկ դեպի Մարգարայի կամուրջը (դեպի Թուրքիա): Կանոնավոր ուժերի զգալի մասը կարողացավ Քանաքեռով հասնել Երևան: «Թշնամին մոտեցեր էր Քանաքեռին, իսկ մենք մեր հետեւորդներով ժամը 4-ին (ապրիլի 2- Վ. Ղ.) կը թողնէինք Երե-

---

[196] Նույն տեղում, էջ 132-134:

[197] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 182-184:

ւանը: Մեր ընկերներու մեծ մասը, նախապէս որեւէ պատրաստութիւն տեսած չըլլալով, ոտքով ճանապարհ ինկած էր»[198]:

Կարմիր բանակի վճռական հարձակման օրերին մարտական գործողություններ ծավալվեցին Ղամարլուի ճակատում: Դրանք ունենալով տեղական նշանակություն, միաժամանակ օգնող դեր ունեին Երևանի վրա հիմնական հարձակվողների համար:

Մարտի 22-ին, երբ ճակատի զորքերը Երևանյան երկրորդ հարձակումից հետո նահանջել և պաշտպանության էին անցել, ապստամբների ուժերը հարձակման դիմեցին Քյուչուկ Վեդի-Խորվիրապ հատվածում, որն ի վերջո հետ մղվեց, նրանց համար նոր կորուստներով: Հարձակում կատարվեց նաև Ներքին Չանախչի-էլփին հատվածում, որի նպատակն էր Դարալագյազում խմբապետ Յապոնին միանալով, համատեղ ուղղվել դեպի Բաշ-Նորաշեն և խորհրդային ուժերին կտրել թիկունք ծառայող Նախիջևանից: Այստեղ էլ նրանք պարտություն կրեցին և հետ մղվեցին դեպի Զենջիռլու-էլփին[199]:

Կարմիր բանակի զորամասերի մարտի 25-ին ձեռնարկած վճռական հարձակումը ծախողեց հակառակորդի մտադրությունը Յապոնի հետ միանալու և դեպի Դարալագյազ նահանջի ճանապարհ ունենալու համար[200].

Ժողովրդական ուժերին հետապնդող կարմիր բանակի առաջապահ ուժերը (20-րդ դիվիզիայի հեծելագունդը և 172-րդ հրաձգային գունդը) ապրիլի 2-ին մտան Երևան:

Կարմիր զորամասերի ճնշման տակ Դարալագյազ նահանջած ուժերը ապրիլի 1-ին փորձեցին հարձակում ձեռնարկել Բեյուք-Վեդիի վրա դարձյալ նպատակ ունենալով ապահովել իրենց հիմնական ուժերի նահանջի ճանապարհը: Այդ հարձակումը ևս ձախողվեց: Ապստամբական ուժերը կարող էին նահանջել միայն Բաշ-Գյառնիով, որից և նրանք օգտվեցին:Երևանի գրավման լուրն առնելուց հետո Ղամարլուի ճակատի Հայկական կարմիր բանակի զորամասերը դիմեցին հարձակման և, առանց լուրջ դիմադրության հանդիպելու, ապրիլի 4-ին հասան Երևան:

Հայրենիքի փրկության կոմիտեն իր ուժերի մնացորդների, սրանց հետևող զգալի թվով մտավորականների և ուրիշների հետ, բռնեցին նահանջի ճանապարհը դեպի Բաշ-Գյառնի, Դարալագյազով Լեռնահայաստան ուղևորվելու համար:

---

[198] Կ. Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը, էջ 228:

[199] Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, էջ 84:

[200] Նույն տեղում, էջ 85-86:

Քաղաքացիական կռիվների եզրափակիչ փուլը Դարալագյազում կուտակված ուժերի ճնշումն էր, որը տեղի ունեցավ ապրիլի կեսերին, Արփա, Այնաձոր, Քեշիշքենդ բնակավայրերի գրավումով:

Այսպիսով, 1921 թ. քաղաքացիական կռիվները անխուսափելիորեն ավարտվեցին Հայաստանի խորհրդային իշխանության հաղթանակով, շնորհիվ նրա թիկունքում կանգնած Խորհրդային Ռուսաստանի: Նույնքանով անխուսափելի էր ապստամբության պարտությունը: Ապստամբության համար հեռանկար չէին տեսնում նաև նրանք, ովքեր կանգնեցին նրա գլուխ. «Եթե բոլշևիկները ուժեղանան արտաքին օժանդակությունով, իսկ մենք մնանք մենակ,- կրկնենք Սիմոն Վրացյանին,- պարտությունը անկասկած է և անխուսափելի»[201],- խոստովանել է նա Փարիզ, Հայաստանի Հանրապետության պատվիրակությանն ուղարկած նամակ-զեկույցում:

Այսպիսով, 1921 թ. փետրվարյան իրադարձությունները քաղաքացիական պատերազմ էին իրենց բնույթով: Այն սկսվել էր տարերայնորեն ծագած ժողովրդական ապստամբությամբ, որի պատճառը Հայաստանում ստեղծված իրադրությունն էր, խորհրդային իշխանության գործադրած բռնությունները:

«Ան,- նշել է ՀՅԴաշնակցության 1923 թ. կայացած Վիեննայի խորհրդաժողովը,- խորհրդաժողովին կողմէ վերջնական ու վճռական կերպով կնկատվի համաժողովրդական տարերային պոռթկում, որուն չէին կրնար կանոնավոր ձև և ընթացք չտալ Հայաստանի մարմիններն ու ընկերները»[202]:

Ճիշտ է, որ շարժումը պոռթկացել է տարերայնորեն, սակայն այն համաժողովրդական համարելը սխալ է, քանի որ խորհրդային իշխանության կողմում կանգնած էր և պաշտպանում էր բնակչության որոշ մասը, ապստամբությունը չէր ընդգրկել հանրապետության հյուսիսային շրջանները և այլն: Չի կարելի համաձայնել նաև խորհրդաժողովի այն գնահատականին, թե չէր կարելի շարժմանը ընթացք և ձև չտալ:

Ապստամբների հիմնական խնդիրը յուրայինների բանտերից ազատելն էր, որպիսին իրագործելուց հետո ապստամբությունը կարելի էր և պետք էր չշարունակել: Չէ որ հենց ապստամբության ղեկավարներն են խոստովանել իրենց անհուսալիությունը:

Ուշագրավ են դաշնակցական հայտնի գործիչ Հովի. Քաջազնունու բավական օբյեկտիվ դատողությունները, ինչպես շարժման պատճառների, այնպես էլ ապստամբության պարտության վերաբերյալ:

---

[201] Սիմոն Վրացյան, նշվ. աշխ., էջ 656:

[202] Հ. Տասնապետեան, ՀՅԴաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. ընդհ. ժողով (1890-1924): Աթէնք, 1988, էջ 166:

Նշելով ապստամբության «տարերային, անգիտակից ու անհաշիվ» (հասկանալ՝ անկազմակերպ ու անհաշվենկատ) բնույթի մասին, Քաջազնունին ավելացնում է, որ նրա պարտությունը կանխորոշված էր և անխուսափելի (մանավանդ Վրաստանի խորհրդայնացումից հետո), որ «ապստամբությունն իր իսկ ներսում կրում էր արդեն պարտության սաղմը, որովհետև հավատ չուներ հաջողության»[203]:

Ավելի խիստ և անվանական է որոշ սփյուռքահայ հեղինակների քննադատությունը: Այսպես, Դաշնակցության հայտնի գործիչներից Միքայել Վարանդյանը Փետրվարյան ապստամբությունը համարել է «ավելորդ արկածախնդրություն»[204]:

Իսկ մի շարք գրքերի հեղինակ Շահանը հականե-հանվանե խստագույն քննադատության է ենթարկել «Հայրենիքի փրկության կոմիտեին», նրա նախագահ Սիմոն Վրացյանին ապստամբությունը կազմակերպելու և գլխավորելու համար, որը միայն չարիք պատճառեց Հայաստանին, և արժեցավ նրա շուրջ 20 հազար զավակների կյանքը, անձամբ Ս. Վրացյանին համարելով «մեծագույնը պատասխանատուներէն»[205]:

Ավելի մեղմ ձևով, սակայն, քննադատական է նաև Գարեգին Նժդեհի խոսքը: «Ազատ Սյունիք» հոդվածաշարում նա գրել է, որ ոչ ոքի չպիտի զարմացներ «ծով Ռուսաստանի դեմ» «Արարատյան Հայաստանի մի մասի» պարտությունը, երբ Վրաստանը դադարել էր հակաբոլշևիկ լինելուց, Մուսավաթը վարում էր հակահայ քաղաքականություն, իսկ Անգորան համբուրվում էր Մոսկվայի հետ: Այնուհետև շարունակում է. «Երևանի ապստամբությունը նպատակ չուներ երկար ժամանակով վերականգնելու հանրապետական Հայաստանը: Ավելի պարզ էր նրա առարկան՝ փշրել Խորհրդային բանտերի դռները, ուր հոգևարում էր հայ մտավորականությունը»: Հաջողելով իր այդ փորձը, այնուհետև բացատրում է Նժդեհը, ապստամբությունը պետք է ուղի բացեր «մղվելու դեպի Սյունիք»[206]:

Դաշնակցության պատմագիրներից Հրաչ Տասնապետյանը փորձել է դրական կողմեր տեսնել փետրվարի մեջ: «Փետրվարյան ապստամբության շոշափելի հետևանքներէն մեկը եղավ նաև այն,- գրել է նա,- որ Լենինի իսկ խորհրդով նոր Հեղկոմը, Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ, Հայաս-

---

[203] Հովհ. Քաջազնունի, ՀՅԴաշնակցությունը անելիք չունի այլևս, էջ 52:
[204] Հ. Տասնապետեան, ՀՅԴաշնակցութիւնը..., էջ 166:
[205] Շահան, Ալեքսանդրապոլի դաշնագրէ 1930-ի կովկասյան ապստամբությունները (վերագնահատումներ): Հատոր Ա, Մարսէյլ, 1934, էջ 217:
[206] Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք. «Հայրենիք», 1925, թիվ 9, էջ 84:

տանի ժողովուրդին նկատմամբ ցուցաբերեց շատ ավելի զուսպ ու հավասարակշռված վարմունք»[207]:

Մեղմ քաղաքականությունը, որը ժամանակի տեսակետից իրապես հաջորդեց Փետրվարյան ապստամբությանը, ոչ թե նրա դասերից ու արդյունքներից էր, այլ այն նոր գործելակերպի, որ որդեգրեց Ռուսաստանի բոլշևիկների կուսակցությունը, իր 10-րդ համագումարում, 1921 թ. մարտին: Այն հայտնի է Նոր տնտեսական քաղաքականություն (ՆԷՊ) անունով, և որը եկավ փոխարինելու ճգնաժամ ապրող «ռազմական կոմունիզմին»: Այնպես որ, առանց Փետրվարի 18-ի էլ Հայաստանում անցում էր կատարվելու մեղմ քաղաքականությանը, չնայած չի կարելի ժխտել Փետրվարյան դասերի հնարավոր, բայց ոչ էական նշանակությունը Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի նամակի հայտնության մեջ: Նամակում Լենինը Կովկասի կոմունիստներին խորհուրդ է տալիս մեղմ վերաբերմունք որդեգրել գյուղացիության և մանր բուրժուազիայի նկատմամբ:

---

[207] Հ. Տասնապետյան, նշվ. աշխ., էջ 146:

ԳԼՈՒԽ II. ՀՍԽՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 1921 Թ.

1. Մոսկվայի և Կարսի կոնֆերանսները

1920 թ. վերջերին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը վերադարձավ Թուրքիայի հետ դեռևս ամռանը ընդհատված բանակցությունները վերսկսելու հարցին, հաշվի առնելով նաև նոր իրողությունները, մասնավորապես ՀՍԽՀ առկայությունը:

Դեկտեմբերի 3-ին ՌԽՖՍՀ արտգործժողկոմատը ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյին առաջարկում էր նոր հրահանգներ տալ միջնորդ Բուդու Մդիվանուն, որպեսզի Խորհրդային Հայաստանին ցույց տրվի դիվանագիտական օգնություն, թուրքերին զսպելու միջոցով, որպեսզի նրանք չափավորեն իրենց պահանջները Հայաստանի նկատմամբ: Սպասվող պայմանագրում առաջարկվելու էր երաշխավորել Խորհրդային Հայաստանի անկախությունը, իսկ սահմանների կապակցությամբ տեսակետ էր հայտնվում, որ հարցը որոշվի խառը հանձնաժողովի կողմից, Ռուսաստանի մասնակցությամբ: Փաստաթղթի (անստորագիր) հեղինակը, որ կարող էր լինել Չիչերինը, մնում էր իր նախկին, 1920 թ. կեսերից պաշտպանվող տեսակետին, թե Թուրքիայից պետք է պահանջել Արևմտյան Հայաստանի որոշ տարածքներ: Ընդ որում, միաժամանակ խորհուրդ էր տրվում դա անել զգույշ, առանց շոշափելու թուրքերի հետ բարեկամական հարաբերությունների շահերը[1]: Նման պահանջ դնելը նշանակում էր, որ Ռուսաստանը Հայաստանի սահմանների նվազագույնը տեսնում էր 1914 թ. վիճակով և անտեսում կամ հաշվի չէր առնում 1920 թ. պատերազմի արդյունքները, Ալեքսանդրապոլի պայմանագրով հանդերձ:

Այդ առաջադրանքներն էին դրված նաև արտգործժողկոմատի դեկտեմբերի 6-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմին հղած զեկուցագրի հիմքում, և որպիսիք զարգացվելու էին Թուրքիայի հետ սպասվող առաջիկա բանակցություններում[2]:

Ուստի ՀՍԽՀ հեղկոմի նախագահ Ս. Կասյանը և Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեգրանը դեկտեմբերի 5-ի հեռագրում Մդիվանուց պահանջում էին պնդել Ռուսաստանի միջնորդության անհրաժեշտության վրա՝ հասնելու համար Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայմանը, թուրքե-

---

[1] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), Միկրոժապավենների հավաքածու, թիվ 1:

[2] Նույն տեղում:

րի հետ սկսելով նոր բանակցություններ նոր պայմանագիր ստորագրելու համար[3]:

Սակայն սկզբից ևեթ Թուրքիան բացասաբար վերաբերվեց Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Նույն օրը Մդիվանին Մոսկվային տեղեկացրել է այն մասին, թե Կարաբեքիրի կարծիքով առաջիկա բանակցություններում բացառվում է Հայաստանի մասնակցության և Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայման հնարավորությունը: Այնուամենայնիվ դեկտեմբերի 9-ի հայտագրում ռուսական կողմը շարունակում էր պնդել Հայաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների մասնակցության վրա, նշելով, որ Ռուսաստան-Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան քառակողմ կոնֆերանսը կարևոր նշանակություն կունենա արևելքի ազատագրության տեսակետից[4]: Նախորդ օրը սույն հայտագրի բովանդակության մասին տեղեկացնելով Բաքվին, Անկարա փոխանցելու համար, Չիչերինը հայտնում էր, որ Ռուսաստանի կառավարությունը կոնֆերանսին մասնակցելու համար հրավեր է ուղարկում Հայաստանին և Ադրբեջանին[5]:

Դեկտեմբերի 10-ին ՀՍԽՀ-ը, արտգործկոմը Ալ. Բեկզադյանի ստորագրությամբ, առաջին հայտագիրը ներկայացրեց քեմալական Թուրքիային: Ելնելով «խորհրդային հեղափոխական հեղաշրջման շնորհիվ ստեղծված նոր իրադրությունից», ասված է հայտագրում, Հայաստանի խորհրդային իշխանությունը սպասում էր, որ թուրքական կառավարությունը չեղյալ կհայտարարի դաշնակցականների ստորագրած հաշտության պայմանագիրը և առաջարկում էր հրավիրել կոնֆերանս Ալեքսանդրապոլի պայմանագիրը վերանայելու համար (Երևանում, Բաքվում կամ Ալեքսանդրապոլում)[6]:

Այս, ինչպես նաև ՀՍԽՀ հաջորդ հայտագրերի պատասխաններում (1920 թ. դեկտեմբեր - 1921 թ. հունվար) Թուրքիան մերժել է վերանայել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ժխտել է նրա բնույթը որպես բռնության արդյունք, համարելով այն արդարության արտահայտություն, Կովկասում խաղաղություն հաստատելու միջոց[7]: Թուրքիայի կողմից նույնպիսի պատասխաններ են տրվել նաև Մոսկվային և արդարացվել իրենց նվաճումնե-

---

[3] Ս. Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում: Երևան, 1966, էջ 244:

[4] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում: Խմբ. Ջ. Կիրակոսյան: Երևան,1972, էջ 463-464:

[5] ՀԱԱ, Միկրոժապավենների հավաքածու, թիվ 2:

[6] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...., էջ 422-424:

[7] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 69, թ. 100-101, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 16-18:

ը: Այսպես, դեկտեմբերի 15-ի հայտագրում նշված է, թե թուրք-հայկական հաշտությունը հիմնված է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա, որ Թուրքիան ցանկացել է անեքսիայի ենթարկել «սոսկ թուրքական բնակչություն ունեցող տերիտորիաները»[8]:

Ստացվում է, որ Ռուսաստանը Հայաստանին և Ադրբեջանին հրավիրում էր կոնֆերանս առանց Թուրքիայի համաձայնության: Դեկտեմբերի 11-ին Օրջոնիկիձեն Երևանում գտնվող Լեգրանին հեռախոսով հանձնարարեց Հայաստանի խորհրդային կառավարությանը պաշտոնապես հայտնել նրա մասնակցության հրավերի մասին[9]: Դրա համաձայն ստեղծվեց պատվիրակություն՝ արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանի ղեկավարությամբ, որը նույնիսկ դեկտեմբերի 29-ին հարցում էր կատարել Չիչերինին Թուրքիայի հետ կոնֆերանսի տեղի և ժամանակի վերաբերյալ[10]: Պահպանված փաստաթղթերը ցույց են տալիս, որ Երևանում ամբողջ հունվար ամսվա ընթացքում առաջիկա կոնֆերանսը շարունակում էր համարվել քառակողմ:

Կոնֆերանսի հետ մեծ հույսեր էր կապում ամբողջ հայ ժողովուրդը, մասնավորապես Հայաստանի արևմտահայ գաղթականությունը, որը դեռ սպասում էր, թե երբ մի դուռ կբացվի հայրենի օջախներ վերադառնալու համար: Այսպես, փետրվարի 13-ին Ասքանազ Մռավյանը հետևյալ հեռագիրն է ուղարկում Մոսկվա, Ալ. Բեկզադյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին. «Մեզ համակրող և օժանդակող թուրքահայերի շրջանում լուրջ կերպով քննարկվում է Մոսկվայի կոնֆերանսում թուրք-հայկական հարցը բարձրացնելու մասին խնդիրը: Կարող ենք կազմակերպել պատկառելի ելույթ և հատուկ պատվիրակություն Մոսկվա ուղարկելու համար: Իմացեք ղեկավար կենտրոնների կարծիքը և հավանության դեպքում հեռագրեք»[11]: Եթե նույնիսկ այս հեռագիրն ունեցել է դրական պատասխան, ապա մի քանի օր անց Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները բացառելու էին խոստացված ելույթը:

Կոնֆերանսի նախապատրաստության ընթացքում Ռուսաստանի ղեկավարությունը, մասնավորապես Լենինը, շահագրգիռ մոտեցում են դրսևորել Կարսի նկատմամբ: Այդ մասին հիշատակում է Չիչերինը Լենինին ուղղված դեկտեմբերի 14-ի նամակում: Դրա համաձայն Լենինին հետաքրքրել է հայերին սպառնացող կոտորածի, հայ գաղթականների դրության, ինչպես նաև Բաքումի համար Կարսի դերի մասին հարցը: Չիչերինը

---

[8] Հայաստանը միջազգային դիվանագիտության և ..., էջ 476:
[9] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 158, թ. 20:
[10] Նույն տեղում, ց. 2, գ. 18, թ. 21:
[11] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 81, թ. 4:

Լենինի համար պարզաբանել է, որ Կարսի դերը Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ժամանակ (1918 թ.) արդիական է եղել Թիֆլիսի պաշտպանության տեսակետից, որքանով որ Կարսի բարձրավանդակը իշխող է Վրացական հարթավայրի նկատմամբ: Նույն հարցը կկանգնի, շարունակում է Չիչերինը, երբ գործը կանցնի Մոսկվայի կոնֆերանսի սահմանագծման, Ռուսաստանի մասնակցությամբ, խառը հանձնաժողովին, որին, պետք է պնդել, որ հանձնվեն սահմանագծման հարցերը: Այս դեպքում Չիչերինն ընդգծում է Կարսի դերը Բաթումի համար[12]:

Անկասկած է, որ դրա հետ է կապվում նաև Ստալինի կողմից Կարսով հետաքրքրվելը: Ռուսաստանում ՀՍԽՀ ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը Կասյանին ուղարկած հունվարի 16-ի հեռագրում տեղեկացնում է, որ Ստալինը պահանջել է կարճ ժամանակում տվյալներ հայտնել Կարսի մարզի բնակչության ազգային կազմի, ինչպես նաև Ալեքսանդրապոլի մասին[13]:

Հարցի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ է հայտնում նույն Սահակ Տեր-Գաբրիելյանը նախորդ օրվա հունվարի 15-ի նամակում, ուղղված ՀԿ(բ)Կ Կենտկոմին:

Խոսք է գնում, նախ, Նախիջևանի մասին: (Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Աբաբեկովը Մոսկվա ուղարկել էր բրիգադի հրամանատար Ստուդենովի զեկուցագիրը Նախիջևան-Օրդուբադ-Նորաշենի կապակցությամբ): Տեր-Գաբրիելյանը հեռագրի (զեկուցագրի) պատճենները ուղարկել է Լենինին, Տրոցկուն, Չիչերինին, իսկ Ստալինին ներկայացրել է անձամբ և «տևական զրույց ունեցել նրա հետ»: Ստալինը, ինչպես երևում է, նաև մյուս ընկերները, նշում է Տեր-Գաբրիելյանը, «զգալի չափով փոխել են իրենց վերաբերմունքը թուրքական շարժման (հասկանալ քեմալական շարժումը - Վ. Ղ.) նկատմամբ այն բավական գրգռիչ տոնի պատճառով, որով նրանք սկսել են խոսել Ռուսաստանի հետ և շնորհիվ այն փաստերի, որ վերջին ժամանակները հաղորդում է Վրաստանում ՌԽՖՍՀ մամուլի բյուրոն»: Ապա, ըստ նամակի, «Ստալինը կտրականապես հայտնեց, որ Նախիջևանի մասին խոսք լինել չի կարող՝ Նախիջևանը կլինի Հայաստանում»:

Այնուհետև անցնելով Կարսին, Ս. Տեր-Գաբրիելյանը գրում է, թե չնայած նրա մասին կա հաստատ որոշում Հայաստանին թողնելու մասին, այնուամենայնիվ անհրաժեշտ է ամենաշտապ կերպով «այդտեղից նյութեր ուղարկել ազգագրական դրության մասին ինչպես ամբողջ մարզի, այնպես էլ Կարսի, Կաղզվանի, Օլթիի և Արդահանի առանձին օկրուգների համար»:

---

[12] Նույն տեղում, Միկրոժապավենների հավաքածու, թիվ 1:
[13] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 9, թ. 15:

Հույս հայտնելով, որ այդ նյութերը, եթե արդեն չեն ուղարկվել, շուտով կուղարկվեն, Նամակի հեղինակը շարունակում է. «Համենայն դեպս պետք է նկատել, որ Իլյիչի, Կրեստինսկու, Ստալինի հետ մեր բոլոր զրույցները (հավանորեն նկատի ունի նաև իր և Մռավյանի հանդիպումը Լենինի հետ 1920 թ. դեկտեմբերի 12-ին - Վ. Ղ.) չեն մնացել և, հույս ունեմ, չեն մնա անհետևանք»: Միայն առաջարկվում էր որքան կարելի է հաճախ, ամբողջական ու ճշգրիտ տեղեկացնել իրերի դրության, թուրքերի գործողությունների և, եթե հնարավոր է, Թուրքիայի ներքին դրության (հայացքներ, միջկուսակցական պայքար, դրսից պանիսլամական ազդեցության, մուսավաթականների և լեռնականների կողմից, և այլն) մասին:

Հետաքրքիր են նաև Սահակ Տեր-Գաբրիելյանի դիտողությունները մինչև ռուս-թուրքական կոնֆերանսի բացումը որոշ քայլերի անհրաժեշտության մասին, որոնք, ինչպես կարելի է ենթադրել, նա կապում էր կոնֆերանսի հաջողության հետ: Խոսքը Դաշնակցության նկատմամբ վերաբերմունքի մասին է: «Ձեզ անհրաժեշտ է,- կարդում ենք Նամակում,- ներսում մաքրվել դաշնակցական արատից Դրոյից և ընկերներից»: Բանն այն է, բացատրվում է Նամակում, որ Ռուսաստանին արած դիմումներում «թուրքերը հայտարարում են իրենց անվստահության մասին ընդհանրապես հայ կոմունիստների նկատմամբ, և մասնավորապես, ընդգծում են Դրոյի և մյուսների ներկայությունը կառավարության կազմում»: Նամակում խորհուրդ էր տրվում «թուրքերին խփել» համանման պատասխան փաստերով, նկատի ունենալով թուրքական կառավարության կազմում Նուրի փաշայի, գնդապետ Ջեյնալովի և այլ «բացահայտ հակահեղափոխականների» առկայությունը, ովքեր Ադրբեջանում ընդհարվել էին կարմիր զորքերի հետ: Նամակի հեղինակը դա նորից հանգեցնում էր Դրոյից ազատվելու անհրաժեշտությանը. «Մեզ պետք է,- կարդում ենք Նամակում,- եթե նույնիսկ Դրոն և ուրիշները մեզ հետ աշխատում են միանգամայն անկեղծ, հրաժարվել նրանց ծառայությունից»:

Դրոյի հետ կապված Սահակ Տեր-Գաբրիելյանը անդրադառնում է նաև Ալեքսանդր Խատիսյանի հանգամանքին՝ նրան Հայաստանից բաց թողնելու փաստին: Նա Հայաստանից հեռացել էր դեպի Վրաստան 1920 թ. դեկտեմբերին Արտակարգ հանձնաժողովի պահանջով:

Սահակ Տեր-Գաբրիելյանին, իր իսկ բնորոշումով, ոչ այնքան արմատականորեն տրամադրված մարդուն, թվում էր, որ Խատիսովին բաց թողնելու հարցում Հայաստանի ղեկավարները «մի քիչ համը հանել են»: Տեր-Գաբրիելյանը դրա համար փորձում էր գտնել պատճառներ. «Գուցե դրա համար եղել են հատուկ, Ձեր կամքից չկախված, հանգամանքներ: Սակայն եթե դա եղել է բարեհոգություն, ապա դա փոքր ինչ... (հենց այդ-

պես է ընդհատվում նախադասությունը - Վ. Ղ.)»: Հասկացվում է, որ բարեհոգությունը մերժվում էր նամակի հեղինակի կողմից, իսկ օբյեկտիվ հանգամանքները ըմբռնվում:

Նպաստավոր կոնֆերանսի սպասումով ու ակնկալիքով Սահակ Տեր-Գաբրիելյանը շոշափում է նաև այսպես կոչված «ծախ դաշնակցականների» հարցը: Նրա կարծիքով հարկավոր է իրենց վերաբերմունքը Կոմունիստական կուսակցության նկատմամբ հռչակած ծախ դաշնակցականներին խորհուրդ տալ «ժամանակավորապես ծեռնպահ մնալ մեզ հետ ծուլվելուց»:(Այդ մասին, ինչպես ինքն էր նշում, նա հեռագրել էր նաև երկու շաբաթ առաջ):

Հիշեցնենք, որ խոսքը 1920 թ. դեկտեմբերի 29-ին Երևանի «Կոմունիստ» թերթում հրապարակված «Ձախ դաշնակցական ինտերնացիոնալիստների դեկլարացիայի» մասին է, որով տվյալ խմբի անդամների ծուլումը Կոմունիստական կուսակցության մեջ գերադասում էին անջատ գոյությունից և կոչ էին անում «բոլոր ազնիվ և հեղափոխական ընկերներին» հետևել իրենց օրինակին:

Վերջում Սահակ Տեր-Գաբրիելյանը հետաքրքրվում էր, թե արդյո՞ք որևէ մեկը գալու էր կոնֆերանս: Եթե այո, ապա մեկնելու ժամանակն է[14]:

Ավելացնենք, որ բացի վերը բերված դրական փաստերից, հայտնի է, որ Ստալինը բացասական դեր է ունեցել հայկական հարցում ինչպես տվյալ դեպքում, այնպես էլ ընդհանրապես:

Այսպես, երբ թուրքական պատվիրակությունը, Մոսկվայում հանդիպելով Չիչերինի ու Կարախանի հետ և դժգոհ մնալով Վանի ու Մուշի վիլայեթների նրանց պահանջի համար, դիմել է Ստալինին: «Մեր այն հարցումին, թե,- գրել է թուրքական դեսպան Ալի Ֆուադ փաշան իր հուշերում,- Հայաստանի հարցի մասին (բանակցություններու ատեն) պիտի խոսվի՞, թե ոչ, ան (Ստալին) ըսավ.

- Դուք ձեզի Հայաստանի խնդիրը լուծեցիք: Եթե չլուծված բան մը դեռ մնացած է, ան ալ լուծեցեք, բայց ժամանակը ճշգրտապես մեզի իմացուցեք»[15]:

Ըստ թուրքական մի այլ աղբյուրի, որի վրա հենվում է Գ. Գալոյանն իր գրքում, Ստալինը թուրք պատվիրակներին խոսք է տվել, որ Ռուսաս-

---

[14] ՀՅԴաշնակցությունը և խորհրդային իշխանությունը: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Պատասխանատու խմբագիր և կազմող պրոֆեսոր Վ. Ն. Ղազախեցյան: Հրատ. ՀՅԴաշնակցության բյուրոյի, Երևան, 1999, էջ 56-57:

[15] Գաբրիել Լազեան, Հայաստան և հայ դատ հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ: Երևան, 1996, էջ 244:

տանը կշարունակի օգնություն ցույց տալ Թուրքիային, իսկ բանակցությունների ժամանակ հայկական հարցը չի բարձրացնի[16]:

Նույն աղբյուրի տվյալներով, բանակցությունների ժամանակ Չիչերինը մերժել է ընդունել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, քանի որ այն ստորագրված է եղել արդեն իշխանություն չունեցող դաշնակցականների կառավարության կողմից, ինչպես նաև մերժել է Բաթումը Թուրքիային միացնելու պահանջը[17]:

Կարսի նկատմամբ թուրքական վերաբերմունքի մասին բերենք մի վկայություն ևս: 1920 թ. նոյեմբերի 25-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի կողմից Արևելյան ռազմաճակատ մեկնած Թուրքիայի կոմունիստական կուսակցության պատվիրակներ Աբիդ Ալիմովը և Սուլեյման Նուրին այցելել են Կարաբեքիր փաշային և այլ հարցերի թվում հավանաբար շոշափել են Կարսի հարցը: Հանձնաժողովը իր զեկուցագրում, որպես վերջին, 4-րդ - կետ, բերել է հետևյալ եզրակացությունը. «Ներկայումս աննպաստ ենք համարում Կարսի մասին հարցի բարձրացումը, որ հանձնաժողովի գիտությանն է հասցվել ընկ. Լեգրանի կողմից Ալիմովի միջոցով, քանի որ, ինչպես մեզ հաջողվեց պարզել, դա կհանգեցնի աննպաստ արդյունքների»[18]:

Կոնֆերանսի նախօրյակին Թուրքիայի և Ադրբեջանի համատեղ հակահայկական գործունեության մասին հետաքրքիր տվյալներ է հայտնում թուրքական պատվիրակության անդամ Ալի Ֆուադ Չեբեսոյը իր հուշերում: Պարզվում է, որ ադրբեջանական պատվիրակության ղեկավար Բեյբութ Շահթախտինսկին և նախարար Հաջինսկին այցելել են Չեբեսոյին (թուրքական դեսպանը Մոսկվայում): Հանդիպման հիմնական թեման եղել է այն լուրը, թե իբր հայկական պատվիրակությունը ստացել է Ռուսաստանի կառավարության համաձայնությունը՝ Նախիջևանն ու Զանգեզուրը Հայաստանին միացնելու մասին: Ադրբեջանցիները հայտնել են, թե իրենց կոմկուսը, որի կազմում կան նաև շատ հայեր, դրան դեմ է, որ նա առաջարկում է Նախիջևանը միացնել Ադրբեջանին կամ Թուրքիային կամ էլ դարձնել առանձին քաղաքական միավոր: Ադրբեջանական պատվիրակությունն այս առաջարկը ներկայացրել էր Ռուսաստանի կառավարությանը: Այնուհետև

---

[16] Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.: Երևան, 1999, էջ 441:

[17] Նույն տեղում, էջ 443:

[18] Վ. Ղազախեցյան, Ա. Սարգսյան, Թուրք-բոլշևիկյան դաշինքը և Հայաստանի Հանրապետության անկումը: Տե՛ս «Գրական թերթ», 21 սեպտեմբերի 1990 թ.:

Ջեբեսոյը տեղեկացնում է, որ հանդիպման մասնակիցները պայմանավորվել են բանակցությունների ժամանակ գործել նույն կերպ[19]:

Կոնֆերանսից առաջ հակահայկական գործունեություն էր ծավալել նաև Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, հանձին Նարիման Նարիմանովի: Հայտնի են վերջինիս նամակները Լենինին մեկը փետրվարի կեսերին, մյուսը փետրվարի 21-ին: Նարիմանովը գրույց էր ունեցել Մոսկվա մեկնող թուրքական պատվիրակության հետ և իր ներկայացուցիչ Բեյբութ Շահթախտինսկու հետ նրան ճանապարհել Մոսկվա: Նարիմանովը, ինչպես գրում էր, չէր կասկածում, որ անգորացիները (քեմալական թուրքերը) անկեղծորեն ցանկանում են իրենց բախտը կապել «մեզ հետ ընդդեմ Անգլիայի»: Նրանց համար ամենանուրբը մնում էր հայկական հարցը, որի ուղղությամբ դրսևորում էին առավելագույն եռանդ՝ հարցը իրենց օգտին լուծած լինելու համար, համարելով, որ այն իրենց կյանքի ու մահվան հարցն է: Թուրքերի օգտին հարցի լուծման դեպքում նրանք կդառնային ուժեղ: Հակառակ դեպքում անգորացիները կհեռանան Մոսկվայից և, հուսահատվելով, կարող են նետվել Անգլիայի գիրկը: Նարիմանովը Լենինին զգուշացնում է, փորձելով նրան լարել ընդդեմ Չիչերինի, որը «շփոթում է Արևելյան հարցը, նա խիստ է տարվում Հայկական հարցով և հաշվի չի առնում այն ամենը, ինչ կարող էր պատահել, եթե անգորացիների հետ խզումը լինի հենց Հայկական հարցի պատճառով»: Մենք պետք է, պնդում էր Նարիմանովը, ինչ էլ որ լինի, անգորացիների հետ կնքենք «մաքուր դաշինք», որը կպահի մեզ համար Խորհրդային Ադրբեջանը և մեր կողմը կդառնա ամբողջ մուսուլմանական Արևելքը:

Նամակի վրա արած մակագրությամբ Լենինը խնդրել է Ստալինի կարծիքը և նամակն ուղարկել ՌԿ(բ)Կ Կենտկոմի բոլոր անդամներին: Նրանցից Ն. Բուխարինը անհրաժեշտ է համարել հարցը քննարկել Կենտկոմում[20]:

1921 թ. փետրվարի 21-ի երկրորդ սեղմ նամակում Նարիմանովը, ելնելով այդ օրերին Երևանում խորհրդային իշխանության տապալման

---

[19] Ա. Ավագյան, Թուրքիայի՝ որպես մահմեդականների հովանավորի, դիրքորոշումը Մոսկվայի կոնֆերանսի ընթացքում: Տես «Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (գիտաժողովի նյութեր)», Հավելված: Երևան, 2001, էջ 50-51:

[20] Нагорный Карабах в 1918-1923 гг. Сб. док. и мат. Отв. ред. В. А. Микаелян., Ереван, 1992, с. 614-616.

փաստից, կարծիք էր հայտնում, թե «Հայկական հարցը թուրքական պատվիրակության հետ բանակցություններում չպետք է դեր խաղա»[21]:

Այսպիսով, Ն. Նարիմանովի համար Հայկական հարցը ոչինչ էր ինչպես Հայաստանի խորհրդային իշխանության առկայության, այնպես էլ նրա անհաջողության պայմաններում:

Չնայած բանակցությունների ամբողջ ընթացքում ՀՍԽՀ պատվիրակությունը գտնվում էր Մոսկվայում, սակայն նրան հնարավորություն չտրվեց մասնակցել կոնֆերանսին Թուրքիայի մերժողական դիրքի պատճառով, իսկ Ռուսաստանը չիրականացրեց, թե՞ չկարողացավ իրականացնել, իր հրավերը:

ՌԽՖՍՀ պատվիրակության կազմն էր Գ. Չիչերին (ղեկավար) և Կորկմասով: Ոչ պատահականորեն պատվիրակության կազմում չհայտնվեցին հնարավոր թեկնածուներ հայազգի Լևոն Կարախանը (արտգործժողկոմի տեղակալ) և Բորիս Լեգրանը, որ կարող էին պաշտպանել հայոց շահերը: Թուրքական պատվիրակության կազմում էին Յուսուֆ Քեմալ բեյ (ղեկավար), Ռիզա Նուր բեյ և Ալի Ֆուադ փաշա (Զեբեսոյ):

Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսը կայացավ 1921 թ. փետրվարի 26 – մարտի 16-ը և ավարտվեց ռուս-թուրքական բարեկամության մասին պայմանագրի ստորագրումով: Ռուսաստանը հայկական տարածքները զիջեց Թուրքիային, ոտնահարելով հայ ժողովրդի շահերը, չհարցնելով նրա կամքը:

Չիչերինը փորձել է լուսաբանել դրա պատճառները, այն բանից հետո, երբ Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանը դժգոհություն հայտնեց կոնֆերանսի արդյունքներից: Չիչերինի բացատրությունները տեղ են գտել այն երկու նամակներում, որոնցից մեկը ՀԿ(բ)Կ - Կենտկոմին և Հեղկոմին ուղարկել է Ալ. Բեկզադյանը 1921 թ. մարտի 18-ին, իսկ մյուսը Չիչերինը հասցեագրել է Մոսկվայում ՀՍԽՀ ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանին: Ալ. Բեկզադյանը ներկայացրել է Ռուսաստանի ներքին ու արտաքին ծանր դրությունը տվյալ ժամանակաշրջանում, ինչպես տնտեսական ու քաղաքական ճգնաժամը, երկրում ծավալված ապստամբությունները, Կրոնշդատի խռովությունը և այլն: Իսկ Լոնդոնում Թուրքիայի մասնակցությամբ ընթացող բանակցություններում Անգլիան փորձում էր Թուրքիային կտրել Ռուսաստանի հետ լավ հարաբերություններից, գրավել իր կողմը և ձախողել Մոսկվայի բանակցությունները: Դա, իր հերթին, գրել է Ալ. Բեկզադյանը, Ռուսաստանի ներկայացուցիչներին հարկադրեց լարել բոլոր ջանքերը թույլ չտալու այդ անցումը «ամեն կարգի զի-

---

[21] Նույն տեղում, էջ 617:

ջումների գնով (դարձյալ Հայաստանի հաշվին)»: Նամակում խոսվում է նաև այն անհարմար վիճակի մասին, որում գտնվեց հայկական պատվիրակությունը, Սիմոն Վրացյանի ռադիոների պատճառով, երբ հայտարարվել էր Հայաստանում բոլշևիկների իշխանության տապալման և նրա պատվիրակության լիազորությունների մասին: Միաժամանակ Ալ. Բեկզադյանը նշում է, որ այդ հանգամանքը իրենց համար անհարմարություն ստեղծելով հանդերձ, այնուամենայնիվ էական նշանակություն չի ունեցել: Նա որպես գլխավոր հանգամանք, որ բացասական նշանակություն ունեցավ Հայաստանի շահերի տեսանկյունից, համարում է կոնֆերանսի գումարման և Մոսկվայում իրենց գտնվելու պահի ամենաանպաստ լինելը, որպեսզի ունենայինք կենտրոնի հատուկ հետաքրքրության ու ուշադրության հույսը «Հայաստանի դրության և գործերի նկատմամբ»:

Ուստի, շարունակում է Ալ. Բեկզադյանը, ելնելով պահի անհարմարությունից (Վրացյանի արկածախնդրությունը, թուրքերի անպաշտոն հայտարարությունը մեզ հետ խոսելու անցանկալիության մասին և այլն), Չիչերինը ստիպված եղավ կոնֆերանսը հայտարարել երկկողմանի ռուս-թուրքական:

Նամակից միաժամանակ իմանում ենք նաև այն մասին, որ կոնֆերանսի ընթացքի վերաբերյալ հայկական պատվիրակությունը տեղեկացվել է ռուսական պատվիրակության ռազմական խորհրդատու Բոբրիշչևի կողմից, որին նա, իր հերթին, «շարունակաբար մատակարարել է նյութեր սահմանների վերաբերյալ, Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանագիծ անցկացնելու ամենահնարավոր տարբերակներով հանդերձ»[22]:

Ինչ վերաբերում է Չիչերինի նամակին, ապա այն հաղորդում է լրացուցիչ, ընդ որում էական նշանակություն ունեցող տվյալներ ռուս-թուրքական բանակցությունների ընթացքի և ձևերի մասին: Պարզվում է, որ սկզբունքային նշանակություն ունեցող և մասնավորապես հայ-թուրքական սահմանի հարցերը լուծվել են ոչ թե բանակցությունների քննարկման եղանակով, այլ բանակցություններից դուրս, կուսակցական բարձրագույն մարմիններում, թուրքերի հետ հանդիպումների ժամանակ, ուժեղ պայքարով և փոխզիջումների միջոցով, մասամբ «անդրկուլիսյան բանակցություններում՝ ազդեցիկ ընկերների աջակցությամբ»:

Նամակից տեղեկանում ենք, որ Ալ. Բեկզադյանի դիմումը լի է մեղադրանքներով ուղղված Ռուսաստանի պատվիրակությանը, որի կողմից «ջանք չի գործադրվել Կարսը պաշտպանելու համար»: Մերժելով նման մեղադրանքը, Չիչերինը բացատրում է, որ «պայմանագրային սահմանը ոչ

---

[22] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 25-26:

թե ոչնչով չարդարացվող նվեր է թուրքերին, այլ ամենադաժան երկարատև պայքարի արդյունք»: Կրկնելով միտքը, Չիչերինը ավելացնում է, որ սահմանային հարցերը լուծվել են կատաղի բանավեճերով, որ «քայլ առ քայլ տեղի են ունեցել փոխադարձ զիջումներ», որ իրենց կողմից զիջումներն ընդունվել են ՌԿ(բ)Կ Կենտկոմի կողմից, որ վերջինս որոշումներ է ունեցել բոլոր կարևոր հարցերի վերաբերյալ[23]:

Այդ մասին, իհարկե, վկայում են անմիջապես կոնֆերանսի նյութերն ու արձանագրությունները[24]:

Քաղաքական հանձնաժողովի առաջին նիստը, որը կայացավ մարտի 10-ին, բացվեց սահմանների մասին հարցով[25]: Ռուսական պատվիրակությունը հայտարարեց, որ իրենք ճանաչում են Թուրքիայի ազգային ժողովի ընդունած «Հիմնական ազգային ուխտը»: Ըստ դրա Թուրքիա էր հռչակվել թուրքերով բնակեցված երկիրը, որ նշանակում էր, թե Թուրքիա է նաև Արևմտյան Հայաստանը, որը հայերի ցեղասպանությունից հետո հայազրկվել էր և բնակեցվել թուրքերով ու քրդերով: Դա նշանակում էր նաև այն, որ Խորհրդային Ռուսաստանը շրջադարձ էր կատարել հայկական հարցի նկատմամբ իր վերաբերմունքի մեջ և փաստորեն հրաժարվել էր «Թուրքահայաստանի մասին» դեկրետից:

Միակ տարածքային պահանջը, որ ներկայացրեց Չիչերինը, վերաբերում էր Բաթումին: Պահանջը հիմնավորվում էր Կովկասի համար նրա մեծ նշանակությամբ, որպես միակ նավահանգիստը և հատկացվելու էր Վրաստանին: Թուրքական պատվիրակությունը չառարկելով դրան, բարձրացնում էր Բաթումի ինքնավարության հարցը: Դժվար չէ ենթադրել, որ Բաթումի պատկանելության հարցը համաձայնեցվել էր կոնֆերանսից դուրս Կարսից հրաժարվելու դիմաց:

Այնուհետև հասնելով Հայաստանին, Չիչերինը նրա կողմում թողնելով Ադրբեջանի և Զզլդաշի լեռները, շարունակությունը ներկայացնում է այնպես, ինչպես կար Ալեքսանդրապոլի պայմանագրում, այսինքն՝ Արփաչայ ու Արաքս գետերի հունով: Ռուսաստանի կառավարությունը չէր պնդելու, որ սահմանն անցներ Արփաչայից արևելք և Արաքսից հարավ, իսկ Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգծի անվտանգ գործունեությունն ապահովելու համար սահմանվելու էր 8 կիլոմետրանոց չեզոք գոտի, թուրքական զորքերի և ամրությունների բացառումով: «Այսպիսին են այն ընդհանուր

---

[23] Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 456-458:

[24] Տվյալ արձանագրության օրինակները տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 15:

[25] Նույն տեղում, ֆ. 112, ց. 3, գ. 17, թ. 17-19 (հանձնաժողովի նիստի արձանագրությունը):

պայմանները,- հայտարարում է Չիչերինը,- որոնց հիման վրա, երկար մտածելով, Ռուսաստանի կառավարությունը համաձայն է կնքել պայմանագիր Թուրքիայի հետ նրա հյուսիս-արևելյան սահմանների մասին»:

Այսպիսով, Թուրքիայի կողմում էր թողնվում Կարսի մարզը և Սուրմալուն, որոնց վերաբերյալ որևէ բանավեճ ու քննարկում չի կայացել, կարծես կողմերը բանակցությունների են եկել հենց այդպիսի որոշումով, այսինքը հարցը լուծված է եղել բանակցություններից դուրս: Ուստի տեղնուտեղը թուրքական պատվիրակությունը հայտարարում է, որ «ինքը ընդունում է այդ սահմանը, ինչպես նաև պարտավորությունը Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղու երկարությամբ Արփաչայ գետի շրջանում ութկիլոմետրանոց գոտին զորքից ու ամրություններից ազատելու մասին»:

Բաթումի կապակցությամբ թուրքերը համաձայնվում են, որ քաղաքը և նավահանգիստը դրվեն Վրաստանի սյուզերենության տակ, պայմանով, որ բնակչության համար ապահովվի լայն ինքնավարություն, ճանաչվի մուսուլմանների իրավունքը նրանց մշակույթի, կրոնի, հողի ազատ օգտագործման բնագավառներում: Որոշ ուղղում ռուսական կողմն անում է միայն հողօգտագործման հարցի վերաբերյալ:

Կողմերի միջև քննարկում է տեղի ունենում ազատ առևտրի նպատակով Բաթումի նավահանգստից օգտվելու հարցերի շուրջ:

Ընդհանրացնելով բանակցությունների ընթացքը, Ռուսաստանի պատվիրակությունը արձանագրում է, որ «կոնֆերանսը համաձայնության է եկել հետևյալ հարցերի շուրջ՝ Ռուսաստանը հանդիսավոր կերպով ճանաչում է Հիմնական ազգային ուխտը, Բաթումի մարզը օգտվելու է տեղական լայն ինքնավարությունից՝ Վրաստանի սյուզերենիտետի տակ (այս տերմինը գերակա էր ճանաչվում սուվերենիտետ տերմինի նկատմամբ):

Վերադառնալով Հայաստանի սահմանների հարցին, Թուրքիան պարտավորվում էր նշված գոտում չպահել մշտական զորք, բայց պահպանելու էր իր վարչությունը և ոստիկանությունը: Ռուսական պատվիրակությունը ուշադրություն է հրավիրում Արաքսի սահմանի վրա, որքանով որ քրդերը մշտական սպառնալիք էին հանդիսանում բոլոր խորհրդային հանրապետությունների անվտանգության համար: Հետաքրքիր է, որ թուրքերը ութկիլոմետրանոց գոտու ճանաչումը համարում էին «խոշոր զիջում», քանի որ այն հավասար էր ընդամենը հրացանազարկի կրկնակի հեռավորության և ոչ ընդունելի Արաքս գետի համար, որն ինքնըստինքյան պաշտպանություն էր ծառայում:

Հերթը հասավ Նախիջևանի հարցին: Թուրքական պատվիրակությունը կարծիք հայտնեց, թե քանի որ բնակչությունն է կանչել թուրքական զորքերին, ուստի այդ փաստի ուժով Նախիջևանը գտնվում է թուրքական

հովանավորության տակ: Բայց այնուամենայնիվ ինքը համաձայն է այդ հովանավորությունը զիջել Ադրբեջանին, պայմանով, որ նա ստանա Ադրբեջանի պարտավորությունը այն չվերազիջելու երրորդ պետության: Ապա պատվիրակությունը կեղծ հայտարարություն է անում այն մասին, թե իբր իրենց զորքերը Նախիջևան են մտել հայերի կողմից ստեղծված սպառնալիքի կապակցությամբ և որ այսուհետև ևս չեն կարող անտարբեր վերաբերվել, եթե առաջանա նույնպիսի սպառնալիք. «Թուրքական զորքերի համար դժվար կլինի անմասն մնալ՝ եթե դա նորից տեղի ունենա, ինչպես դա արդեն մեկ անգամ եղել է, և եթե նորից կրկնվի բնակչության ջարդը»:

Ճիշտ է, Չիչերինը հակահարված է տվել նման հայտարարությանը, սակայն նա չի փորձել, թե՞ չի կարողացել, մերկացնել թուրքական հայտարարության կեղծ ու ցինիկ բնույթը, քանի որ երևույթը ներկայացվել է թուրքերի կողմից շրջված: Այդ հայերն են Նախիջևանում ենթարկվել կոտորածի ու գաղթի, հիշենք թեկուզ Ագուլիսի գավառի ողբերգությունը, որ տեղի ունեցավ 1919 թ., ապա գավառի հետագա հայաթափումը: Այնուամենայնիվ Չիչերինը վտանգավոր համարեց «ներխուժման նման սկզբունքի» ընդունումը, քանի որ տեղի էր ունեցել ոչ մուսուլմանական բնակչության կոտորած ևս, ինչպես Կարսում:

Նախիջևանի դժբախտ ճակատագրի կապակցությամբ տեղին է նշել նաև Խորհրդային Ռուսաստանի վարած հակահայկական քաղաքականության մասին, երբ նա 1920 թ. ընթացքում քիչ ջանքեր և ուժ չգործադրեց Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջևան գոտու միջոցով քեմալական Թուրքիայի հետ կապ հաստատելու և թուրքական զորքերի մուտքը Նախիջևան թույլատրելու համար:

Անցնելով Նախիջևանի կարգավիճակի հարցին, ռուսական պատվիրակությունը այն տեսնում է ինքնավարության ձևով, Ադրբեջանի հովանավորության ներքո: Նա մերժում է թուրքական կողմի առաջարկը՝ Նախիջևանի նկատմամբ իր հովանավորությունը Ադրբեջանին զիջելու մասին ձևակերպումը, դա պատճառաբանելով նրանով, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը վավերացված չի եղել, իսկ Նախիջևանի բնակչության կողմից թուրքական զորքերին կանչելը իրավական հավաստիության այնպիսի անհրաժեշտ բնույթ չէր ստացել, որպեսզի հիմք ծառայեր նման հովանավորության համար:

Մյուս կողմից, ըստ ռուսական պատվիրակության, ժողովրդական ինքնիշխանության արժանապատվությունը թույլ չէր տալիս իր իրավունքների վերազիջումը կենդանի էակների նկատմամբ: Վերջապես, Չիչերինը առարկում էր պայմանագրի մեջ մտցնել պարտավորություն, որ պետք է իրականացներ Ադրբեջանը, երբ այդ պետությունը կոնֆերանսում ներկա-

յացված չէր: Ուստի պատվիրակությունն առաջարկում է գտնել այնպիսի ձևակերպում, որը ցույց տա Նախիջևանի մարզի անընդմեջ կապը Ադրբեջանի հետ և մարզն օգտվի ինքնավարությունից նրա հովանավորության տակ: Թուրքական պատվիրակության խնդրանքով ձևակերպման երկրորդ մասը խմբագրվում է հետևյալ ձևով. «Պայմանով, որ Ադրբեջանը այդ հովանավորությունը չի զիջի որևէ երրորդ պետության»:

Նախիջևանի սահմանների հարցը որոշելու էին զինվորական խորհրդականները: Ընդ որում սահմանների որոշմանը նվիրվելու էր առանձին ակտ, չծանրաբեռնելու համար հիմնական պայմանագիրը:

Այսպիսով, Նախիջևանը Հայաստանին միացնելու մասին ակնարկ ոնգամ չի եղել կոնֆերանսում: Չընդունելով Ալեքսանդրապոլի պայմանագրի օրինականությունը, ռուսական պատվիրակությունը անգամ չի փորձել առաջ քաշել նրա վերանայման հարցը: Երևում է, որ այս հարցում ևս որոշումը կամ պայմանավորվածությունը կայացված է եղել կոնֆերանսից դուրս:

Մյուս կարևոր հարցը, որ քննարկվեց կոնֆերանսում, վերաբերում էր շահագրգիռ խորհրդային հանրապետությունների ինքնիշխանության երաշխավորությանը: Խորհրդային Ռուսաստանը հայտարարում էր, որ ինքը թույլ չի տա որևէ բռնություն և խախտում տվյալ բնագավառում (զինված ուժերի սահմանափակում, վերահսկողություն և այլն), հակառակ դեպքում Ռուսաստանը Թուրքիայի կողմից նման գործողությունը կդիտեր իր դեմ ուղղված: Ռուսաստանը նկատի ուներ Թուրքիայի կողմից համապատասխան, նաև Հայաստանի, խորհրդային հանրապետությունների հետ պայմանագրերի կնքումը, որպիսիք բխում էին տվյալ կոնֆերանսի որոշումներից:

Այնուհետև թուրք-ռուսական կոնֆերանսը ձեռնամուխ եղավ պայմանագրի նախագծի քննարկմանը հոդված առ հոդված, հաշվի առնելով պատվիրակությունների ուղղումները և լրացումները:

Քաղաքական հանձնաժողովի մարտի 12-ի նիստում[26], որտեղ քննարկվում էր նախորդ նիստի արձանագրությունը, թուրքական պատվիրակությունը վերադարձավ որոշ շտկումների: Նա, առարկելով քրդերի մասին ռուսական կողմի արած դիտողություններին, հարցը ներկայացրեց այնպես, թե իբր քրդերը վտանգ չեն ներկայացնում խորհրդային հանրապետությունների և Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղու գործունեության համար, քանի որ իբրև թե քրդական շարժումը հրահրում են անգլիացիները՝ թուրքական ազատագրական պայքարին հակադրելու համար, որ

---

[26] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 102-108:

քրդերը դա լավ են հասկանում և անցնում են իրենց կողմը հանուն Թուրքիայի միասնության և այլն, ապա հետևում է եզրակացությունը, որ համաձայն չեն քրդերի մասին խորհրդային կողմի դիտողություններին, հետևաբար համապատասխան շրջաններում թուրքական իշխանությունների առկայությունը հենց բավարար երաշխիք է ենթադրվող հարձակումների դեմ:

Մյուսը հայտարարվում է, թե իբր իրենց ոչինչ հայտնի չէ Կարսում ոչ մուսուլմանական բնակչության կոտորածների ու բռնությունների մասին, որ կեղծ են նման լուրերը, և թե դրանք արված են մուսուլմանների կոտորածները քողարկելու համար:

Երրորդը վերաբերում էր ռուսական պատվիրակության հայտարարությանը խորհրդային հանրապետությունների ինքնիշխանության պաշտպանությանը, որի կապակցությամբ արվում է հետևյալ հայտարարությունը. «Թուրքական պատվիրակությունն ի գիտություն է ընդունում Ռուսաստանի պատվիրակության հայտարարությունը Հայկական և Վրացական Հանրապետությունների ինքնիշխանության մասին, որ հանգում է երկու կետի. 1. զինված ուժերի սահմանափակում, և 2. Թուրքիայի կողմից վերահսկողության իրավունք, գտնում է, որ հետևաբար դրանից բխում է Ռուսաստանի կողմի պարտավորությունը չառարկել Թուրքիայի և Անդրկովկասի հանրապետությունների միջև պայմանագրերի ստորագրմանը»:

Ռուսաստանի պատվիրակությունը ոչ մուսուլմանների կոտորածների մասին թուրքերի պատասխան հայտարարությունն ընդունեց ի գիտություն, նկատի ունենալով, որ նախ անհնար է քննարկման ենթարկել ինչպես մեկ, այնպես էլ մյուս կոտորածների ու բռնությունների մանրամասնությունների հարցը, ապա նաև Հայկական պատվիրակության բացակայությունը, որը կարող էր տեղեկություններ հաղորդել տվյալ հարցի կապակցությամբ:

Քրդերի մասին թուրքերի բացատրությունը մտցվելու էր արձանագրության մեջ, ընդ որում ռուսական պատվիրակությունն ի գիտություն է ընդունում, որ քրդերի գործողությունների համար պատասխանատվությունն ընկնում է թուրքական կառավարության վրա:

Սուր վիճաբանություն է ծավալվում ինքնիշխանության (սուվերենիտետ) հարցի շուրջ: Ռուսաստանի պատվիրակությունը հետևողականորեն պայքարում էր խորհրդային հանրապետությունների (Հայաստան, Վրաստան) ինքնիշխանությունը պաշտպանելու, փաստորեն Ալեքսանդրապոլի հայ-թուրքական պայմանագրի (առանց անունը տալու) ծանր հետևանքները վերացնելու համար, որքանով, որ այդ պայմանագիրը, որից կառչած էր մնում Թուրքիան, խիստ ոտնահարում էր Հայաստանի ինքնիշխանությու-

նը, իսկ Թուրքիան ամեն կերպ ձգտում էր սողանցք ունենալ կամ գտնել առաջին հերթին Հայաստանի վրա ճնշում գործադրելու համար:

ՀՍԽՀ ինքնիշխանության պաշտպանության և Թուրքիայի հնարավոր ոտնձգությունների դեմ Խորհրդային Ռուսաստանի պայքարը շարունակվեց նաև Մոսկվայի կոնֆերանսից հետո, երբ նախապատրաստվում էին Անդրկովկասի հանրապետություններ - Թուրքիա բանակցությունները, համաձայն Մոսկվայի կոնֆերանսի որոշման:

Քաղաքական խորհրդի մարտի 12-ի նիստում քննարկվում են նաև զինվորական խորհրդականների հաշվետվությունները:

Նախիջևանի օկրուգի և Հայաստանի միջև սահմանի հարցի կապակցությամբ Ռուսաստանի պատվիրակությունը նշում է, որ որոշված սահմանագիծը «գերազանցում է Ադրբեջանի առավելագույն պահանջները, որը երբևէ ցանկություն չի արտահայտել իր հովանավորությունն իրականացնել Երևանի գավառի որևէ մասի նկատմամբ և իր ծայրագույն սահմանը անփոփոխ կերպով ճանաչել է Գայլի Դրունքը»: Ճիշտ է համարվում սահմանն ընդունել Շարուր-Դարալագյազի գավառը, որն ավելի էր համապատասխանում ազգագրական սկզբունքին:

Հակառակ կողմը շտապում է հայտարարել, որ ցանկալի է Ադրբեջանի հովանավորությունը հաստատել նաև այդ տարածքի նկատմամբ, քանի որ, ըստ նրա, հենց այդտեղ են տեղի ունեցել այն իրադարձությունները, որոնց պատճառով հրավիրվել են թուրքական զորքերը: Միաժամանակ վստահություն էր հայտնվում, որ այդ դեպքում «Խորհրդային Ադրբեջանը ամեն ինչ կանի, որպեսզի կատարի իր պարտքը Թուրքիայի, Ռուսաստանի և մարդկության հանդեպ»,- ցինիկաբար ազդարարում էր թուրքական պատվիրակությունը:

Քաղաքական հանձնաժողովը մարտի 14-ի հերթական նիստում, նախորդ արձանագրության շտկումներից հետո, քննարկում է պայմանագիրը հոդված առ հոդված: Կողմերը ներկայացրին պայմանագրի իրենց տարբերակները՝ ռուսական տարբերակը և թուրքական հակատարբերակը: Հոդվածները համաձայնեցվում էին երկու տարբերակների հիման վրա, փոխհամաձայնությամբ[27]:

Ռուս-թուրքական կոնֆերանսի վերջին նիստը կայացավ մարտի 16-ին և եղավ ամենակարճատևը (1,5 ժամ): Նիստի արձանագրության մեջ, գերիներին վերադարձնելու հարցի կապակցությամբ, բերված են հետևյալ հետաքրքրություն ներկայացնող տվյալները.[28] Ռուսաստանում (Սիբիրում) թուրք ռազմագերիների թիվը հասնում էր 12 հազարի, Ուկրաինայում մի

---

[27] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 109-112:
[28] Նույն տեղում, թ. 121-127:

քանի հազարի: Գերիների մեկ գունդ Բաքվից մեկնել էր Թիֆլիս (հավանորեն Թուրքիա ուղարկելու համար): Նշենք, որ այս գունդը, ռուսական բանակի կազմում կռվել էր Հայաստանի Հանրապետության դեմ, մասնավորապես Զանգեզուրում, սպանելով ու կողոպտելով հայ բնակչությանը: Արձանագրությունը պարզում է, որ թուրք գերիները կամավոր մտնելով կարմիր բանակ, ձեռք էին բերել Ռուսաստանի քաղաքացիություն:

Նույն օրը, մարտի 16-ին, ստորագրվեց ռուս-թուրքական բարեկամության մասին պայմանագիրը: Այն դժբախտություն էր հայ ժողովրդի համար: Առանց հարցնելու նրա կամքը, Ռուսաստանը Թուրքիային զիջեց հայկական հողերը՝ հանուն իր քաղաքական նպատակների իրականացման:

Պայմանագրի հոդվածները ուղիղ արդյունքն են բանակցությունների և նրանցից դուրս ձեռք բերված որոշումների ու պայմանավորվածությունների: Ռուսաստանը հանուն իր քաղաքական նպատակների իրականացման հայկական տարածքները զիջեց Թուրքիային: Նրան անցան Կարսի մարզը, Երևանի նահանգի Սուրմալուի գավառը, որը երբեք Թուրքիային պատկանած չի եղել: Նախիջևանի գավառը, Շարուրի մի մասով, Թուրքիան վերահանձնեց Ադրբեջանին, որպես ինքնավար տարածք, պայմանով, որ այն չի կարող տրվել երրորդ պետության, որպիսին հասկացվում է Հայաստանը: Մոսկվայի թուրք-ռուսական կոնֆերանսի արդյունքներում բացասական դեր ունեցան ինչպես Ալեքսանդրապոլի պայմանագիրը, այնպես էլ Հայրենիքի փրկության կոմիտեի (Սիմոն Վրացյանի) Մոսկվա Խորհրդային Հայաստանի դեմ ուղղված դիմումները:

Մոսկվայի պայմանագիրը թուրքական դիվանագիտության հաղթանակն էր: Թուրքական պատվիրակության անդամ Ալի Ֆուադ Չեբեսոյը իր հիշողություններում գրել է, որ ստեղծված պայմաններում, նկատի ունի Թուրքիայի հաղթանակը թուրք-հայկական պատերազմում և Ռուսաստանի պարտությունը Լեհաստանի դեմ պատերազմում, հաջողվեց Խորհուրդների հետ կնքել իրենց համար նպաստավոր համաձայնություն և նրանցից ստանալ օգնություն (խոսքը ռազմական և ֆինանսական օգնության մասին է): Թուրքիայի կողմից Ռուսաստանի թուլությունից օգտվելու մասին հայտարարել են նաև ԽՍՀՄ պետության ղեկավարներ Ստալինը և Մոլոտովը 1945 թ. Պոտսդամի կոնֆերանսում:

Թուրքական պատվիրակության ղեկավար Յուսուֆ Քեմալ բեյը Ազգային մեծ ժողովում արտասանած ճառում պարզաբանել է իրենց համար հաջող պայմանագրի հասնելու հանգամանքները: Խոսելով դեռևս 1920 թ. ամռանը Մոսկվայում կայացած բանակցությունների մասին, նա նշել է, որ իրենց և «ռուսների կացության մեջ կար նմանություն, հետևաբար Ռուսիա

մեկնող մեր պատվիրակությունը համոզված էր օգուտներ ձեռք բերել»: Մշակված դաշնագիրը, սակայն «մերժվեցավ միաձայնությամբ ժողովիդ կողմէ»: Մեկուկես ամիս անց, շարունակում է Յուսուֆ Քեմալ բեյը, Ռուսաստանը մեզ առաջարկեց կնքել քաղաքական դաշնագիր, որը և կնքվեց: «Ինչպես ըսի,- նշում է նա,- մեր շահերու նույնության պատճառով փափագ հայտնվեցավ ավելի անկեղծ քաղաքական հարաբերություններ հաստատել մեր միջև: Այդ փառքը կվերաբերի միայն Ռիզա Նուր պեյի և Ֆուատ փաշայի, որոնք մեջտեղ բերին դաշնագրերը»: «Բայց Բաթումը թողնվեցավ ռուսներուն դժբախտաբար,- ավարտում է ճառը պատվիրակության ղեկավարը,- որովհետև այդպես կպահանջեր Թուրքիո շահը»[29]:

Մոսկվայի բարեկամության մասին պայմանագիրը, նշել է թուրքական պետության ղեկավար Մուստաֆա Քեմալ փաշան Ազգային մեծ ժողովում, «իրավաբանորեն ամրապնդեց մեր միակամությունը, որ ստեղծվել է իմպերիալիզմի գիշատիչ հարձակմանը ենթարկված երկու տերությունների միջև օբյեկտիվ գործոնների շնորհիվ»: Նույն ճառում Քեմալը շեշտել է իրենց արտաքին քաղաքականության հաջողությունները Ռուսաստանի ու արևելքի պետությունների և արևմտյան տերությունների հետ հարաբերություններում[30]:

Հայ ժողովուրդը և Հայկական դատը զոհաբերվեցին այդ հարաբերություններին:

Հայկական պատվիրակությանը կոնֆերանսին մասնակից չանելու և նրա աննպաստ արդյունքների համար Ալ. Բեկզադյանը ներկայացրեց բողոք: Մասնավորապես Բեկզադյանը անդրադարձել է թուրքական պատվիրակության կողմից մահմեդական պաշտպանության դերի հարցին, նշելով որ «Անդրկովկասի տուժած մահմեդականների հովանավորի դերում հանդես գալն ամբողջովին անտեղի է, այդ հանգամանքի վրա անհրաժեշտ էր ուշադրություն դարձնել»:

Այնուհետև նա դժգոհում է, որ ռուսական պատվիրակությունը Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի հարցում «համառություն հանդես չբերեց իր դիրքերի պաշտպանության գործում, և թուրքական պատվիրակությանը թույլ տվեց հանդես գալ այդ շրջանի մահմեդականների հովանավորի դերում, չնայած այն բանի, որ Նախիջևանի և այդ շրջանի ճակա-

---

[29] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 81, թ. 47 («Ճակատամարտ» թերթից»):
[30] Նույն տեղում, գ. 162, թ. 20-21:

տագիրը որոշվել էր Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերյան և Հայհեղկոմի 1912 թ. դեկտեմբերյան հայտարարություններով»[31]:

Վերոհիշյալ հեռագրում Ալ. Բեկզադյանը, ելնելով ստեղծված իրավիճակից, նշում էր, որ Հայաստանը ստիպված է Թուրքիայի հետ փոխհարաբերություններ հաստատել Ռուսաստանի ստորագրած պայմանագրի հիման վրա:

«Կոմունիստ» թերթի տեղեկատվությամբ Ալ. Բեկզադյանը Երևան է ժամանել մայիսի 18-ին, թերթը նույն տեղում հայտնում է, թե իբր նա մասնակցել է Մոսկվայի կոնֆերանսին: Հաջորդ օրը Բեկզադյանը պատվիրակության գործունեության մասին զեկուցել է ՀԿ(բ)Կ կենտկոմի պլենումում, որը հավանություն տվեց պատվիրակության քաղաքական գծին և Ալ. Բեկզադյանին հանձնարարեց նախապատրաստվել առաջիկա կոնֆերանսին[32]:

Մոսկվայի ռուս թուրքական պայմանագիրը (հոդված 15-րդ) Ռուսաստանին պարտավորեցնում էր Անդրկովկասի հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի նրանք ընդունեն տվյալ պայմանագրի իրենց վերաբերող հոդվածները: Դա տեղի ունեցավ Կարսի կոնֆերանսում:

Թուրքիան ձգտում էր Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների հետ կնքել առանձին-առանձին պայմանագրեր: Դա առաջին հերթին կարող էր վտանգավոր դառնալ Հայաստանի համար, քանի որ Թուրքիան չէր հրաժարվել Ալեքսանդրապոլի պայմանագրից, չնայած Մոսկվայի պայմանագրով այն լրիվ կորցրել էր իր ուժը: Կարսի կոնֆերանսի ժամանակ ևս Ռուսաստանը շարունակում էր պայքարը ՀՍԽՀ ինքնիշխանության և ընդհանրապես Կովկասի հանրապետությունների շահերի պաշտպանության ուղղությամբ:

Չիչերինը ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյին ուղղված ապրիլի 1-ի նամակում պարզաբանել է տվյալ հարցի հետ կապված հիշյալ և այլ հանգամանքները: Նախ, գոյություն ուներ թուրքական վտանգը առանձին պայմանագրեր կնքելու վերաբերյալ, որպեսզի կարողանար խորհրդային հանրապետություններից ստանալ այն, ինչ չէր հաջողվել Մոսկվայում: Մյուսը, վտանգ կար Ադրբեջանի կողմից: Բանն այն է, որ Բաքվում Ադրբեջանի ղեկավարների հետ Թուրքիայի ներկայացուցիչների (Մոսկվայից Թուրքիա վերադառնալիս) հանդիպման ժամանակ խոսվել էր այնպիսի պայմանա-

---

[31] Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում (գիտաժողովի նյութեր): Հավելված: Երևան, 2001, էջ 55:

[32] ՀԱԱ, Միկրոժապավենների հավաքածու, թիվ 1, գ. 3, թ. 67:

գիր ստորագրելու մասին, որն ապահովեր Թուրքիայի հովանավորությունը Ադրբեջանի և այլ թուրքալեզու երկրների վրա: Ուստի, պարզաբանում էր Չիչերինը, պահանջվում էր, որ առաջիկա բանակցություններում կովկասյան հանրապետությունները գործեն արտակարգ համախմբված և Մոսկվայի հետ սերտ կապերի մեջ[33]:

Այս նամակի վրա Լենինը Կենտկոմի քարտուղար Մոլոտովին արել է հետևյալ մակագրությունը. «Ըստ իս դա անվիճելի է: Խնդրում եմ հարցում անել քաղբյուրոյի անդամներին և անմիջապես գաղտնագրված ուղարկել երեք հանրապետություններին Ադրբեջան, Վրաստան, Հայաստան»:

Ապրիլի 3-ին քննարկելով սույն նամակը, քաղբյուրոն հաստատեց Չիչերինի առաջարկությունը, որպեսզի կովկասյան խորհրդային հանրապետությունները նախապես ներկայացնեն իրենց կառավարությունների նախագծերը[34]:

Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանը, որը դեռևս գտնվում էր Մոսկվայում, ծեռնամուխ եղավ կոնֆերանսի նախապատրաստությանը: Ապրիլի 6-ի հեռագրում նա անհրաժեշտ էր համարում իմանալ Օրջոնիկիձեի և Հայաստանի հեղկոմի վերաբերմունքի մասին Անդրկովկասի հանրապետությունների համաձայնեցված գործողությունների կապակցությամբ, զգուշանալով, որ Թուրքիայի համար հավանաբար ցանկալի կլինի առանձին պայմանագրեր կնքել յուրաքանչյուր հանրապետության հետ և «մեր վզին փաթաթել նոր ծանր պայմաններ, որին հարկավոր է խանգարել ինչ էլ որ լինի ի շահ Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի հարցերի ա:նհիվանդագին լուծման, ինչպես նաև մեր ինքնիշխանությունը պաշտպանելու համար»[35]:

Երկու օր անց, ապրիլի 8-ին Բեկզադյանը Չիչերինին ներկայացնում է այն հեռագրի պատճենը, որը նա ուղարկել էր Ադրբեջանի և Վրաստանի կառավարություններին, առաջարկելով մշակել ընդհանուր ուղեգիծ և Թուրքիայի հետ ունենալ ընդհանուր կոնֆերանս: Նկատի ունենալով տվյալ հարցի կապակցությամբ Անդրկովկասի հանրապետությունների միջև գոյություն ունեցող տարակարծությունները, Բեկզադյանը խորհուրդ է տալիս հարցը քննարկել ՌԽՖՍՀ արտգործժողկոմատում և դիմել երեք հանրապետությունների հեղկոմներին[36]:

Զգացվում է, որ Բեկզադյանը սկզբունքային հարցերի վերաբերյալ խորհրդատվություն է ունեցել Չիչերինի մոտ:

---

[33] Նույն տեղում, թ. 68:
[34] Նույն տեղում, թ. 67:
[35] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 9, թ. 47:
[36] Նույն տեղում, գ. 85, թ. 7:

Ապրիլի կեսերին Մոսկվայից հեռագրով Թիֆլիս է ուղարկվել Վրաստան-Թուրքիա պայմանագրի նախագիծը, կից բացատրություններով: Չիչերինը նշում էր, որ հոդվածների մի մասը կրկնում է Մոսկվայի պայմանագիրը, և որ հարկավոր է նախապես մտքեր փոխանակել Հայաստանի ու Ադրբեջանի հետ, որպեսզի անակնկալներ չծագեն առանձին բանակցությունների ժամանակ: Թուրքերի կողմից նոր պահանջների դեպքում առաջարկում էր կապվել իր հետ:

Հայաստանի և Թուրքիայի միջև պայմանագիրը, նույն տեղում նշում էր Չիչերինը, տարբերվելու էր վրացականից: Առանձին հոդվածով հայտարարվելու էր, որ Թուրքիայի և Հայաստանի միջև վերջացած է պատերազմական դրությունը: Հայաստանի համար կարևոր նշանակություն էր ունենալու նախորդ բոլոր պայմանագրերի, նաև Ալեքսանդրապոլի պայմանագրի, «որը մինչև այժմ ճանաչվում է Թուրքիայի կողմից», վերացված համարելու մասին հոդվածը: «Մենք,- գրել է Չիչերինը,- ռուս-թուրքական կոնֆերանսի ժամանակ միլիոն անգամ հայտարարել ենք, որ չենք ճանաչում Ալեքսանդրապոլի պայմանագիրը, և եթե թուրքերը նորից առաջ քաշեն այն, հարկավոր է ամենախստագույն ձևով հայտարարել, որ նա ուժ չունի»: Այդ պայմանագիրը, շարունակում է արտգործժողկոմը, «այնքան հրեշավոր է, որ նրա յուրաքանչյուր հիշատակումը պետք է հանդիպի ամենասուր հսկահարվածի»: Կարևոր էր նաև Չիչերինի հետևյալ խիստ խոսքը, թե «կարելի է հայտարարել, որ Ռուսաստանի հանրապետությունը ոչնչի առաջ կանգ չի առնի, եթե նորից փորձ արվի ստիպել Հայաստանին, որ նա ընդունի Ալեքսանդրապոլի պայմանագիրը»: Խոսք էր գնում նաև Կովկասի բոլոր հանրապետությունների ինքնիշխանությունը (սուվերենությունը) վտանգից պաշտպանելու մասին:

Հիշատակվում է նաև պատերազմի հանցագործների նկատմամբ լիակատար ներում կիրառելու, բռնությամբ մյուս կողմի տարածք քշված անձանց վերադարձնելու, հայ-թուրքական սահմանի Արփաչայի ու Արաքսի գոտիներ սահմանելու (որպիսին կա մարտի 16-ի պայմանագրում) հոդվածների անհրաժեշտության մասին:

Կարևոր նշանակություն ունեին Չիչերինի դիտողությունները և զգուշացումները Ադրբեջանի վերաբերյալ, այն իմաստով, որ բացառվեին որոշ հոդվածներ, որ տեղ էին գտել Բաքվում թուրքերի հետ մշակված նախագծում, ըստ որի «Թուրքիան փաստորեն հանդես էր գալիս Ադրբեջանի հովանավորի դերում»: Թուրքերը հակված էին նույն դերն ունենալ բոլոր մուսուլմանական երկրների նկատմամբ[37]:

---

[37] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 145, թ. 34-38:

Ադրբեջանի դիրքի մասին որոշ տվյալներ են հայտնում նրա արտգործնախարար Հուսեյնովի ապրիլի 19-ի և 20-ի գրությունները ևս:

Հայտնվում է, որ Հուսեյնովը և Օրջոնիկիձեն ապրիլի 14-ին տևական զրույց են ունեցել Մոսկվայից վերադարձող թուրքական պատվիրակության ղեկավար Յուսուֆ Քեմալի հետ: Վերջինս դրված հարցին պատասխանել է, թե Ալեքսանդրապոլից իրենց զորքերի էվակուացիայի ձգձգումը կապված է այն հայտագրի հետ, որ իրեն հանձնել է Չիչերինը: Իբրև թե անթույլատրելի է համարվել թուրքական զորքերի հեռանալը Ալեքսանդրապոլից Կարմիր բանակի բիկունքի մերկացումից խուսափելու պատճառով:

Ապրիլի 16-ին Հուսեյնովի և թուրքական դիվանագիտական ներկայացուցչի հանդիպման ժամանակ վերջինս ընդգծել է Ադրբեջանի հատուկ դրությունը որպես արևելյան երկիր և ցանկություն հայտնել նրա նկատմամբ ունենալ «հատուկ վերաբերմունք» և մոտակա օրերում ձեռնարկել «թուրք-ադրբեջանական կոնֆերանս»: Հուսեյնովը անթույլատրելի է համարել, որ Թուրքիան Անդրկովկասի հանրապետությունների հետ ունենա տարբեր հարաբերություններ, որ նրանց շահերն ընդհանուր են և այլն: Թուրքը պատասխանել է, որ իրենց պատվիրակությունը մանդատներ ունի առանձին-առանձին պայմանագրեր կնքելու Ադրբեջանի ու Վրաստանի հետ, իսկ Հայաստանի համար մանդատ չի ստացել[38]:

Հուսեյնովի երկրորդ գրության մեջ (հեռագրում), որն ուղղված է Չիչերինին, տեղեկացվում է թուրքական պատվիրակության հետ նրա և Շահթախտինսկու հանդիպման մասին, որի ընթացքում թուրքերը շատ դժգոհ են մնացել, երբ Հուսեյնովը առաջարկել է «խոսել միայն թուրք-անդրկովկասյան կոնֆերանսում»: Մտքերի երկար փոխանակությունից հետո թուրքերը համաձայնվել են թուրք-անդրկովկասյան կոնֆերանսին, պայմանով, որ համատեղ մշակված պայմանագրերը ստորագրվեն հանրապետությունների հետ առանձին-առանձին: Ադրբեջանցիները դրան համաձայնվել են: Վերջիններս համաձայնություն են տվել նաև կոնֆերանսը Կարսում անցկացնելու հարցում, եթե չառարկեն Վրաստանը և Հայաստանը[39]:

Հուսեյնովի տեղեկությունների կապակցությամբ պետք է նկատել հետևյալը: Նախ, նա թաքցնում է իրենց համաձայնությունը թուրքական պատվիրակության հետ այն հարցերի վերաբերյալ, որ բերում է Չիչերինը վերոհիշյալ Վրաստանի նախագծի բացատրագրում:

---

[38] Российский центр хранения и изучения документов новейшей истории (РЦХИДНИ), ф. 85, оп. 1, д. 149, л. 12.
[39] Նույն տեղում, թ. 3:

Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլի հարցին, ապա բերված պատճառաբանությունը ոչ միայն ճիշտ չէ, այլև հակառակը, հենց ապրիլին Ռուսաստանը ակտիվացրեց պայքարը Ալեքսանդրապոլն ազատագրելու համար:

Ալեքսանդրապոլից հեռանալու մասին պահանջը թուրքերի առաջ դրել էր հենց Հայաստանի կառավարությունը: Այդ մասին նա հատուկ հայտագիր էր ներկայացրել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը դեռևս 1921 թ. հունվարին: Նկարագրելով թուրքական զորքերի կողմից Ալեքսանդրապոլի շրջանում (ինչպես նաև Կարսի մարզում) թուրքական օկուպացիայի ծանր հետևանքները, հայտագրում Հայաստանի կառավարությունը անհանդուրժելի էր համարում այդ ամենը: Նա, որպես դրանց դադարեցման միջոց, տեսնում էր թուրքական օկուպացիոն զորքերի դուրս բերումը Ալեքսանդրապոլի գավառից ու Կարսի մարզի հյուսիս-արևելք ընկած շրջանից[40]:

Կարսի կոնֆերանսի հրավիրումը ծգծգվում էր Թուրքիայի գրաված դիրքի պատճառով: Նա հույսը չէր կորցրել Ալեքսանդրապոլի պայմանագրին վերադառնալու և Հայաստանի հետ իր համար ավելի ձեռնտու պայմանագիր ստորագրելու համար: Այդ նամակով սկզբում նա փորձում էր օգտագործել Հայրենիքի փրկության կոմիտեի (Սիմոն Վրացյանի) հայտարարությունը երկու երկրների միջև հարաբերություններ հաստատել Ալեքսանդրապոլի պայմանագրի հիման վրա: Այնուհետև, թուրքական դիվանագիտությունը հետևում էր արտասահմանում Հայաստանի և Կովկասի մյուս նախկին կառավարությունների գործողություններին, որոնք, մի կողմ դնելով իրենց տարաձայնությունները, համաձայնություն ստորագրեցին Կովկասյան հանրապետությունների համադաշնություն (կոնֆեդերացիա) ստեղծելու և համատեղ, իհարկե Անգլիայի ու Ֆրանսիայի օժանդակությամբ, խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար: Թուրքիան չէր խորշում նույնիսկ հրաժարվել Մոսկվայում նոր ստորագրած պայմանագրից, եթե երեկվա իր թշնամի իմպերիալիստական տերություններ Անգլիան ու Ֆրանսիան լրիվ անցնեին իր կողմը[41]:

Սակայն իրադարձությունները չընթացան Թուրքիայի համար ցանկալի հունով: Հայրենիքի փրկության կոմիտեն պարտվեց խորհրդային իշխանության դեմ պայքարում: Խորհրդային Ռուսաստանը վճռական ու հետևողական էր, որպեսզի, ինչպես կտեսնենք, քեմալական Թուրքիան իր

---

[40] Ալեքսանդր Բեկզադյան, Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր: Երևան, 1981, էջ 117-121:

[41] Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 462-467:

զորքերը հանի Ալեքսանդրապոլ քաղաքից ու գավառից: Դա չէր կարող չարագացնել Թուրքիայի հետ Անդրկովկասի հանրապետությունների կոնֆերանսի նախապատրաստումը, չնայած Թուրքիայի կողմից հարուցվող դժվարություններին:

1921 թ. մայիսի 7-ին Բաքվում կայացած Անդրկովկասի երեք հանրապետությունների խորհրդակցությունը քննարկեց Թուրքիայի հետ համատեղ բանակցությունների նախապատրաստության հարցը: Որոշվեց բանակցություններում հանդես գալ համատեղ, որպես մեկ պայմանադրող կողմ: Բանակցությունների հիմքում լինելու էր մարտի 16-ի պայմանագիրը: Հակառակ դեպքում, երբ Թուրքիան պնդեր ըստ հանրապետությունների պայմանագրերի տարբերակը, ապա առաջինը ստորագրվելու էր Հայաստանի, հետո՝ Վրաստանի, վերջում՝ Ադրբեջանի հետ: Հայաստանին առաջնահերթություն տալը բացատրվում է հայ-թուրքական հարաբերությունների բարդությամբ: Ըստ մարտի 16-ի պայմանագրի խոհրդակցությունն արձանագրեց, որ ճշտում էր կատարվելու Հայաստան-Նախիջևան սահմանում, տեղում ուսումնասիրելով հարցը[42]:

Մայիսի 27-ի գրությամբ, ուղղված Ադրբեջանի արտգործժողկոմ Միրզա Դավուդ Հուսեյնովին, Լեգրանը հետաքրքրվում էր, թե ինչպես է կատարվում Բաքվի խորհրդակցության որոշումը հանրապետությունների պայմանագրերի նախագծերի պատրաստման ուղղությամբ, և ինչ լուր ունի նա Թուրքիայից: «Մեզ շատ է զարմացնում,- գրել է Լեգրանը,- որ թուրքերը Յուսուֆ Քեմալի մեկնելու օրից լրիվ լռություն են պահում և կարծես կորցրել են կենդանի հետաքրքրությունը Կովկասի հանրապետությունների հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելու ուղղությամբ»: «Հասկանալի է, որ թուրքական զորքերի կողմից Մոսկվայի պայմանագրային սահմանը քաշվելուց հետո հետագա հարաբերությունների զարգացման նախաձեռնությունը պետք է բխեր թուրքերի կողմից, սակայն նրանք իրենց շատ հանգիստ են պահում»:

Այնուհետև Լեգրանը տեղեկացնում է Չիչերինի առաջարկության՝ Ռուսաստանի մասնակցության անհրաժեշտության մասին կոնֆերանսում և նրա սահմանային հարցերի հանձնաժողովում: Այդ մասին ռուսական կողմը թուրքական պատվիրակությանը հայտնել էր նրա Թիֆլիսում գտնված ժամանակ: Լեգրանը հետաքրքրվել է նաև այն հարցով, թե ինչ է

---

[42] Հայաստանը միջազգային դիվանագիտության և ...., էջ 513-515: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 67-72 (խորհրդակցության ամբողջական արձանագրությունը):

արվում Բեկզադյանի հետ միասին Նախիջևանի մարզի հյուսիսային սահմանը ուղղելու համար (ըստ մարտի 16-ի պայմանագրի)[43]:

Լռությունը, որ պահպանում էր Թուրքիան, պատահական չէր: Նա դեռևս շարունակում էր հույսեր կապել առանձին բանակցություններ վարելու հնարավորության հետ: Բացի այդ, ինչպես նշվել է վերևում, արտասահմանում աշխուժացել էին Անդրկովկասի նախկին կառավարությունները, որոնց հակախորհրդային գործունեությունը չէր վրիպել թուրքական դիվանագիտության ուշադրությունից: Բարդություններ էին առաջացել նաև Ռուսաստանի հետ հարաբերություններում:

Թուրքիան չէր բացառում Ռուսաստանի հետ հարաբերությունների սրումը և նույնիսկ պատերազմի հնարավորությունը: «Ես համոզված եմ,- գրել է Ալի Ֆուադը իր կառավարությանը 1921 թ. մայիսի վերջերին,- որ ռուսները համարյա պատրաստ են միջադեպ հրահրել մեր արևելյան սահմաններում: Նրանք կարող են մեզ ետ մղել մեր 1914 թ. սահմանները, ետ վերցնել Կովկասյան երկաթուղին և սահմանափակել մեր ազդեցությունը մահմեդական երկրներում: Ապա կարող են Կարսը, Վանը և Մուշը զիջել Հայաստանին և դրանով իսկ կրկին շահել Բրիտանիայի հասարակական կարծիքը»: Իսկ Ռիզա Նուրի փաշան ուղիղ նշում էր, թե «ռուսները պատրաստվում են պատերազմ հայտարարել Թուրքիային»[44]:

Թե որքանով էր հիմնավոր նման պատերազմի վտանգը, դժվար է պնդել կամ մերժել: Թուրքիան դեռ հապաղում էր: Վերջապես նա լռությունը խախտեց հուլիսի սկզբին, երբ դիմեց Անդրկովկասի հանրապետություններին, ինչպես նաև Ռուսաստանին՝ նրանց պատվիրակությունների կազմի հարցով: Դա նշանակում էր՝ հրավեր: Նա համաձայնվել էր նաև Ռուսաստանի մասնակցությանը, որին դեմ էր եղել Թիֆլիսում առաջարկություն ստանալու ժամանակ: Սակայն հրավեր չէր ստացել Հայաստանը:

ՀՍԽՀ արտգործժողկոմ Մռավյանը հուլիսի 20-ին հեռագրեց Լեգրանին. Վրաստանը և Ադրբեջանը ստացել են Յուսուֆ Քեմալի հայտագրերը, որ վերջինս «լուրջ ցանկություն չունի կոնֆերանս հրավիրելու, և որ նա չի հրաժարվել իր նախնական ցանկությունից՝ յուրաքանչյուր հանրապետության հետ պայմանավորվել առանձին և, եթե հնարավոր է, շրջանցել Հայաստանը և պայմանավորվել միայն Վրաստանի ու Ադրբեջանի հետ: Մռավյանը գտնում էր, որ հարկավոր է Յուսուֆ Քեմալին պատասխանել միասին՝ երեք հանրապետությունների արտգործնախարարներով[45]: Հա-

---

[43] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 220-221:

[44] Մեջբերումները ըստ Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 463:

[45] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 185:

ջորդ օրվա հեռագրում, հենվելով Թուրքիայում Ռուսաստանի նոր ներկայացուցիչ Նացենարուսի (փոխարինել էր Մդիվանուն) հուլիսի 15-ի հեռագրի վրա, Լեգրանը հայտնում էր, որ Անգորան հայտագիր է ուղարկել նաև Հայաստանին[46]: Եվ այնուամենայնիվ Լեգրանը միայն օգոստոսի 17-ին է ՀՍԽՀ արտգործժողկոմ Մռավյանի անունով հեռագրում հայտնում, թե, ըստ Չիչերինի տեղեկությունների, թուրքական կառավարությունը սպասում է, որ Հայաստանը առաջինը դիմի իրեն Անդրկովկասի հետ կոնֆերանսին իր մասնակցության ցանկության կապակցությամբ, և որ այդ դեպքում Թուրքիան կհրավիրի Հայաստանի ներկայացուցիչներին: Չիչերինը կարծում էր, որ Հայաստանը անմիջապես պետք է համապատասխան դիմում անի Թուրքիային[47]:

Այդ հիման վրա օգոստոսի 21-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումով հանձնարարվեց արտգործժողկոմատին դիմել Անգորայի կառավարությանը Անդրկովկաս-Թուրքիա կոնֆերանսին մասնակցելու և Անգորա լիազոր ներկայացուցիչ ուղարկելու մասին[48]: Արտգործժողկոմատը դա իրագործեց օգոստոսի 24-ին[49]: Նպատակահարմար ենք գտնում,- կարդում ենք հայտագրում,- Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի միջև պայմանագրի մշակումը առաջիկայում գումարվող Թուրքիա-Անդրկովկասի մյուս հանրապետություններ, ՌԽՖՍՀ մասնակցությամբ, կոնֆերանսում»: Հայաստանը հույս էր հայտնում Թուրքիայի հետ արդարացի լուծում տալ բոլոր հարցերին:

Յուսուֆ Քեմալի ստորագրությամբ Թուրքիայի օգոստոսի 30-ի պատասխանը ստացվեց սեպտեմբերի 12-ին Թիֆլիսից, ՌԽՖՍՀ ներկայացուցչության միջոցով:

Առաջիկա կոնֆերանսը, գրում էր Յուսուֆ Քեմալը, նպաստավոր առիթ է Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի հարաբերությունները կանոնավորելու համար: Նա բաժանում էր Մռավյանի կարծիքը, թե անհրաժեշտ է այսուհետ ապրել համաձայնությամբ և մոռանալ անցյալի գժտությունները:

Յուսուֆ Քեմալը խոստովանում էր, որ Մոսկվայից վերադառնալիս Բաքվում և Թիֆլիսում պայմանագրի նախագիծ է մշակվել Անդրկովկասի հանրապետությունների հետ:

Հայտնվում էր, որ թուրքական պատվիրակության ղեկավարն է Քյազիմ Կարաբեքիր փաշան: Նրա ընտրությունը պատահական չէր: Դրանով

---

[46] Նույն տեղում, թ. 190:
[47] Նույն տեղում, թ. 253:
[48] Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 30, թ. 28:
[49] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 40, թ. 9:

Թուրքիան ցուցադրում էր իր հաղթանակը Հայաստանի նկատմամբ և Ալեքսանդրապոլի պայմանագիրը գլուխ բերողին:

Թուրքիան առաջարկում էր կոնֆերանսը սկսել սեպտեմբերի վերջին շաբաթում, եթե Հայաստանը դրան համաձայն է, և հայտնել հայկական պատվիրակության կազմի մասին[50]:

Կոնֆերանսի տեղի վերաբերյալ առաջարկվել են բազմաթիվ կարծիքներ: Ի վերջո Թուրքիայի պնդմամբ ընտրվեց Կարսը:

Հայաստանը պատրաստեց փաստաթուղթ, հետևյալ խորագրով «Հուշագիր. հարցեր, որոնք ՀՍԽՀ-ի կողմից ներկայացվում են քննարկման Թուրքիայի հետ Կարսի կոնֆերանսում»: Փաստաթղթի քաղաքական բաժինը վերաբերում է Նախիջևանին, տնտեսականը Թուրքիային անցած քարածխի և աղի հանքերի ու արոտավայրերի օգտագործման հարցերին: Իսկ վնասների մասին բաժինը (հավելվածը տվյալներ է պարունակում Ալեքսանդրապոլում թուրքերի գործած գազանությունների ու կողոպուտի մասին[51]:

Կարսի կոնֆերանսի նախարատրաստությանը վերաբերում է մի վերջին որոշում ևս, որն ընդունեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն 1921 թ. սեպտեմբերի 3-ին: Պահանջվում էր խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի սահմանները, բանակցություններում ցուցադրել կովկասյան հանրապետությունների համերաշխությունը Անտանտի դեմ մղվող պայքարում: Բարձրացնել Կաղզվանի շրջանի արոտավայրերի ու աղահանքերի օգտագործման, ինչպես նաև Ճորոխի շրջանում պղնձահանքերի կոնցեսիայի հարցը, ինչպես նաև ոչ մի դեպքում թույլ չտալ Կովկասի հանրապետությունների մեկուսի ելույթները, բոլոր հարցերում լինել միասնական[52]:

Այսպիսով, անկասկած է, որ Թուրքիայի հետ Անդրկովկասի հանրապետությունների, Ռուսաստանի մասնակցությամբ, կոնֆերանսին Հայաստանի ներկայության հարցը լուծվեց ՌԽՖՍՀ հետևողական ու համառ պայքարի շնորհիվ: Ձախողվեց Հայաստանը մեկուսացնելու և նրա հետ հարցերը մեկուսի լուծելու թուրքական պլանը, չնայած այդ փորձերը շարունակվեցին նաև կոնֆերանսի ժամանակ:

Անդրկովկասի երեք խորհրդային հանրապետություններ - Թուրքիա, Ռուսաստանի մասնակցությամբ, կոնֆերանսը կայացավ Կարսում, 1921 թ. սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 13-ը: ՀՍԽՀ պատվիրակությունը ներկայացնում էին Ասք. Մռավյանը (արտգործժողկոմ) և Պ. Մակինցյանը

---

[50] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 227:
[51] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 83, թ. 97-100:
[52] Նույն տեղում, գ. 13, թ. 17:

(ներքին գործերի ժողկոմ): ՌԽՖՍՀ ներկայացնում էր Յակով Գանեցկին (նրա լիազոր ներկայացուցիչը Լիտվայում): Կոնֆերանսը բացվեց Կարաբեքիր փաշայի, Գանեցկու և Մռավյանի ողջույնի ճառերով: Վերջինը հանդես եկավ Անդրկովկասի երեք հանրապետությունների կողմից: Անդրկովկասի հանրապետությունների համատեղ և միահամուռ հանդես գալը և Ռուսաստանի մասնակցությունը կանխելու էին Հայաստանի նկատմամբ Թուրքիայի հնարավոր ոտնձգությունները: Կնքվեց մեկ ընդհանուր պայմանագիր, որում ներառնված էին բոլոր հանրապետություններին վերաբերող հոդվածները, և որոնք կանխորոշված էին մարտի 16-ի պայմանագրով և, ինչպես նախատեսված էր, որևէ շեղում մոսկովյան որոշումներից բացառվելու էր:

Կարսի պայմանագրում, ինչպես նախատեսված էր մարտի 16-ի պայմանագրով, ճշտվեց Հայաստան-Նախիջևան սահմանի մի հատվածը, Նախիջևանի հյուսիս-արևմուտքում: Խորհրդային Հայաստանին միացվեց նախկին Երևանի գավառի հարավային փոքր տարածքը՝ Արազդայանը, Գայլի Դրունք վայրի մոտ: Հայաստանի խորհրդայնացման պահին այդ հողակտորը գտնվում էր թուրքական զորքերի ձեռքին, ուստի մնացել էր Նախիջևանի ազդեցության սահմաններում:

Հայկական պատվիրակությունը, Ասքանազ Մռավյանի գլխավորությամբ, փորձեց, ընդ որում, անարդյունք, պահանջել Անիի ավերակները և Կողբի աղահանքերի շահագործումը: Կոնֆերանսում, գրել է Մռավյանը, մենք բարձրացրեցինք Անիի ավերակները Հայաստանին միացնելու և Կողբի աղահանքերը կոնցեսիայով վերցնելու հարցերը: Թուրքերը, գրել է նույն տեղում Մռավյանը, ցուցաբերեցին մեծ ախորժակ, որն ընդունում էր քաղաքական բնույթ: Խոսքը անջատ պայմանագրեր կնքելու մասին է: Մենք, սակայն, պաշտպանեցինք ընդհանուր պայմանագրի սկզբունքը: «Այդ հարցի կապակցությամբ մեր պատվիրակությունը երեկ ազդեցիկ ցույց կատարեց, հատուկ հայտարարությամբ: Հարցի քննարկումը փոխադրվեց գագաթնաժողով, տեղի ունեցան ուժեղ վիճաբանություններ»[53]:

Հետաքրքիր է Գանեցկու հետևյալ արտահայտությունը, որը նա բերել է Չիչերինին ուղղված հեռագրերից մեկում: «Թուրքերի վարքագիծն այնպիսին է, - գրել է նա,- որ ակամայից քեզ հարց ես տալիս՝ ինչու մենք նրանց համար այսքան զոհաբերություններ կրեցինք»[54]: Հասկանալի է, թե ինչ զոհաբերությունների մասին է խոսքը:

Գանեցկին բազմաթիվ զեկույցներ է ուղարկել Մոսկվա, որոնք տեղեկություններ են պարունակում նաև Հայաստանի մասին: Այսպես, թուրքա-

---

[53] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 54:
[54] Նույն տեղում, թ. 48:

կան պատվիրակությունը Կողբի կոնցեսիայի հարցը մերժել է այն պատճառաբանությամբ, թե դա վերաբերում է առևտրին և կոնֆերանսում չի կարող քննարկվել: Այդ կապակցությամբ, նշում է Գանեցկին, մենք անհրաժեշտ հակահարվածը տվեցինք թուրքերին, հասկացնելով, որ չենք զլանա նաև դիմել ռևանշի: Ընդ որում, շարունակում է Ռուսաստանի ներկայացուցիչը, նման բախտ վիճակվեց նաև Անի քաղաքի ավերակների հարցին, այստեղ ևս մենք հակահարված տվեցինք[55]:

Նույն և այլ հարցերի կապակցությամբ Մռավյանը հայտնում է հետևյալը. թուրքերը ցուցաբերեցին ուժեղ անհամաձայնություն, հրաժարվեցին զիջել Անին, մերժեցին Կողբի կոնցեսիան, երկար համառում էին հայ-թուրքական պատերազմի մասնակիցներին ներում շնորհելու հարցում: Վերջում ներման հարցում հանձնվեցին: Սուր բանավեճեր էին տեղի ունենում, մեր կողմից հանդես էր գալիս միայն Գանեցկին[56]:

Կարաբերքիրի հետ ունեցած մասնավոր զրույցում, հայտնում է Գանեցկին, մատնացույց արեցի այն ծանր տպավորության վրա, որը մենք ստացել էինք Անիի պահանջի մերժումից: Այստեղ Գանեցկին համարձակվել է զգուշացնել, որ իրենք ստիպված կլինեն առաջ քաշել Ալեքսանդրապոլի դեպոյի կողոպտած գույքը վերադարձնելու հարցը[57]:

Գանեցկու և Մռավյանի տվյալների համաձայն, երկաթուղային դեպոյի գույքի հարցը առաջացրել է ուժեղ պայքար: Թուրքերն առաջարկել են հարցը հայերի հետ քննարկել առանձին, սակայն մերժվել են: Համաձայնվել են, որ դեպոյի գույքի հարցը չմտցվի պայմանագրի մեջ: Դրա փոխարեն թուրքական կողմը պարտավորվել է տալ գրավոր խոստում, որ Հայաստանին օգնություն ցույց կտա պարենով և երկաթուղային գույքով[58]:

Հոկտեմբերի 13-ին ստորագրվեց այսպես կոչված բարեկամության մասին պայմանագիրը Հայկական ՍԽՀ, Ադրբեջանական ՍԽՀ ու Վրացական ՍԽՀ, մի կողմից, և Թուրքիայի միջև, մյուս կողմից: Այն վերարտադրում էր մարտի 16-ի պայմանագրի որոշումները, ինչպես և սպասվում էր ու կանխորոշված էր: Հայկական շահերի համար ծավալված պայքարն ուներ միայն ցուցադրական նշանակություն: Հայ ժողովրդի շահերը զոհաբերվել էին Մոսկվայում, իսկ Կարսում այդ որոշումների տակ դրվելու էր նաև ՀՍԽՀ-ի ստորագրությունը:

Կարսի պայմանագրի վավերացումը տեղի ունեցավ 1922 թ. մարտին ՀՍԽՀ, մյուս հանրապետությունների և ՌԽՖՍՀ կենտգործկոմների

---

[55] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 48:
[56] Նույն տեղում, թ. 57:
[57] Նույն տեղում, թ. 50:
[58] Նույն տեղում, թ. 59:

նախագահությունների, ինչպես նաև Թուրքիայի կողմից: Վավերագրերի փոխանակումը կայացավ Թիֆլիսում:

Մուստաֆա Քեմալ փաշան 1922 թ. մարտի 1-ին Ազգային մեծ ժողովում արտասանած ճառում բարձր գնահատական տվեց ինչպես Մոսկվայի, այնպես էլ Կարսի պայմանագրերին, որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության նպաստավոր արդյունքներ: Կարսի պայմանագրով, հայտարարել է Մուստաֆա Քեմալը, «Արևելքում մեր գրաված փաստական դիրքը ստացավ իրավաբանական ձև: Սույն պայմանագիրը Սևրի պայմանագրի անընդունելի լինելը ապացուցող գործոններից մեկն է: Այսպես կոչված «հայկական հարցը»,- շարունակում է թուրքական պետության ղեկավարը,- որը ցանկանում են լուծել ավելի շուտ կապիտալիստական աշխարհի տնտեսական շահերով, գտավ իր ամենաճիշտ լուծումը Կարսի պայմանագրում»[59]:

Ավելորդ չէ հիշատակել, որ Կարսի կոնֆերանսի ժամանակ, որպես բարեկամության արտահայտություն, թուրքական և հայկական պատվիրակությունները կատարել են նվերների փոխանակություն: Հայաստանը նվիրել է դեղորայք, կոնյակ, պահածո[60], իսկ Թուրքիան «Հայաստանի չքավորներին օգնություն անելու համար հոկտեմբերի 9-ին Կարսից Երևան էր ուղարկելու 80 ոչխար, 40 կով, 3 վագոն արմտիք, 3 վագոն աղ»[61]:

Թուրքական նվերների մասին Հայաստանի արտգործժողկոմատը հրապարակեց իր «Բյուլետենում» (թիվ 7, 5 նոյեմբերի 1921 թ.), հավելելով, որ դրանց հաջորդելու են նորերը, ինչպես տեղեկացրել էր այդ մասին թուրքական փաշան[62]:

Կարսի կոնֆերանսը Հայաստանի համար որևէ հարց չէր լուծելու: Այն կրկնեց Մոսկվայի մարտի 16-ի որոշումները, միայն Հայաստանի ստորագրությամբ:

Կարսի պայմանագրի անմիջական արդյունքներից էր հայ ռազմագերիների հարցի լուծումը (հոդված 16), որոնք ենթակա էին վերադարձման: ՀՍԽՀ արտգործժողկոմատը շուտով հայտնեց 688 գերի մարդկանց վերադարձի մասին[63]:

Կարսի հաշտությունն իր ժամանակի «հեղափոխական» դիրքերից է քննարկել ու գնահատել խորհրդային ուսումնասիրող Բագրատ Բորյանը:

---

[59] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 162, թ. 20-21:
[60] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 271:
[61] Նույն տեղում, թ. 267: Տե՛ս նաև Б. А. Борьян. Армения, международная дипломатия и СССР. Часть II, М.-Л., 1929, с. 306.
[62] Նույն տեղում:
[63] "Бюллетень Наркоминдела ССРА", N 7, 5 ноября 1921 г., с. 20.

Հայաստանի իշխանությունը, գրել է նա, խորհրդային շինարարությունը հասկանում էր որպես երկրի տնտեսական շինարարություն, իսկ քաղաքականությունը և իրավունքը ամբողջությամբ ենթակա էին տնտեսությանը: Տվյալ պահին Հայաստանը հնարավորություն ունենալով զբաղվել «միջազգային քաղաքականությամբ» (հավանորեն նկատի ունի Հայաստանի, որպես ինքնիշխան պետության, կարգավիճակը), ելնում էր ոչ թե քաղաքական ու իրավական, այլ տնտեսական պահերից, որով և նա բացատրում է Թուրքիայի հետ Կարսի հաշտության բոլոր տեսակետներից «աննպաստ խաղաղության պայմանագրի ստորագրումը»: Խորհրդային Հայաստանի համար տվյալ ընտրությունը, շարունակում է Բորյանը, կանխորոշված էր պատմական իրադրությամբ: Պատմության մեջ նմանը չունեցող ծանր պայմանագիրը կնքվել էր «հոգուտ համաշխարհային պրոլետարիատի ու խորհրդային երկրների, ի շահ համաշխարհային հեղափոխության: Խորհրդային Հայաստանի համար պայմանագրի քաղաքական ու տնտեսական աննպաստ հետևանքները փոխհատուցվում էին ավերված Խորհրդային Հայաստանին Խորհուրդների երկրների կողմից ցույց տրվող տնտեսական օգնության տեսքով[64]:

Արևելքի նախադռանը գտնվող Հայաստանը, ըստ Բորյանի, պարտավոր էր զիջել «հեղափոխական» Թուրքիային (իսկ Թուրքիայից հայկական հողերի պահանջ դնելը կնշանակեր զիջել և օգնել հայ բուրժուազիային, այդ իմաստով Բորյանը հենվում է նաև ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարում, 1921 թ., Անաստաս Միկոյանի ելույթի վրա, ինչպես նաև դիմելով ստալինյան «դրույթներին»), քանի որ Թուրքիան «Խորհուրդների հուսալի հենարանն էր Արևելքում կապիտալիզմի իշխանությունը տապալելու և Արևմուտքում պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու գործում»[65]:

Բագրատ Բորյանը Հայկական հարցը դիտարկում է ազգային-ազատագրական և գաղութային հարցերի, Ռուսաստանի Արևելյան քաղաքականության համակարգում: Հայաստանի վրա մեծ էր Խորհրդային Ռուսաստանի քաղաքական ազդեցությունը, քանի որ «Հայաստանը բնավ վերջին տեղը չէր գրավում Խորհրդային Ռուսաստանի ընդհանուր քաղաքականության մեջ»: Հայաստանը, բացատրում է Բորյանը, չէր կարող ունենալ Ռուսաստանից կտրված ինքնուրույն քաղաքականություն, հաշվի չառնելով «պատմական իրադրությունը, Արևելքի և պրոլետարիատի հաղթանակի նշանակությունը»: «Այդ բոլոր պահերը,- գրել է Բորյանը,- առավել ևս - Հայաստանի սեփական գոյության հարցը նրա առաջ դրեցին երկընտ-

---

[64] Б. А. Борьян. Армения, международная дипломатия и СССР. Часть II, с. 164-165.

[65] Նույն տեղում, էջ 175:

ռանք՝ ո՞ւմ հետ. իմպերիալիզմի, թե՞ խորհուրդների: Նա ձեռք-ձեռքի տված գնաց խորհրդային երկրների հետ, տարածքների մի մասը զիջելով Թուրքիային՝ ի հաճույս համաշխարհային պրոլետարական հեղափոխության, հայտարարելով, որ հրաժարվում է հայկական դիվանագիտության ավանդական քաղաքականությունից, անվավեր է հայտարարում իր կնքած միջազգային պայմանագրերը և խստիվ հրաժարվում է հարևան երկրների նկատմամբ ազգային-հարձակողական քաղաքականությունից»[66] (նկատի ունի ՀՍԽՀ սահմանադրության 8-րդ հոդվածը):

Զիջողը ոչ թե Հայաստանը, այլ Խորհրդային Ռուսաստանն էր, որը հայ ժողովրդի և Խորհրդային Հայաստանի ղեկավարության կամքին հակառակ Մոսկվայում հայկական տարածքները նվիրաբերեց Թուրքիային և պայմանագրի 15-րդ հոդվածով պարտավորվեց Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում Մոսկվայի պայմանագրի Անդրկովկասի հանրապետություններին վերաբերող հոդվածներն անպայման ճանաչել տալ նրանց: Կրկնենք, որ չնայած դրան, Կարսի կոնֆերանսում հայկական պատվիրակությունն ուներ մշակված պահանջներ, սակայն դրանք հաշվի չէին առնվում նաև այն պատճառով, որ հակասում էին հիշյալ 15-րդ հոդվածին:

Երկրորդը, միջազգային կյանքում կապիտալիզմի հարաբերական կայունության հաստատումից հետո հօդս ցնդեցին համաշխարհային հեղափոխության սին հույսերը, որ փայփայում էին բոլշևիկները: 1929 թ. հրատարակված գրքում Բագրատ Բորյանը պետք է որ անդրադարձած լիներ հարցի այդ կողմին ևս, թե ինչպես անհիմն և իզուր տեղը հայ ժողովրդի կենսական շահերը դրվեցին զոհասեղանի վրա: Բագրատ Բորյանն անգիտանում է նաև նրան, թե ժամանակին ինչպիսի բացասական գնահատականներ հնչեցին «հեղափոխական» Թուրքիայի առաջնորդ Մուստաֆա Քեմալ փաշայի հասցեին նաև հայ բոլշևիկների մոտ:

Այնպես որ Կարսի, ինչպես նաև Մոսկվայի պայմանագրերի նկատմամբ հայազգի Բագրատ Բորյանի մոտեցումները որևէ քննադատության չեն դիմանում:

---

[66] Նույն տեղում, էջ 175-176:

2. ԼՈՌՈՒ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Լոռու գավառի նկատմամբ Վրաստանի հավակնությունները չէին դադարել նաև «չեզոք գոտու» ստեղծումից հետո: Դրանք իրականացնելու համար Վրաստանը նպաստավոր համարեց 1920 թ. թուրք-հայկական պատերազմը, Հայաստանի համար նոյեմբեր ամսին ստեղծված ծգնաժամանային դրությունը:

Ճիշտ է, թուրքական առաջխաղացումը վտանգ էր սպառնում նաև Լոռուն, սակայն միաժամանակ պետք է նշել, որ տվյալ օրերին հնչում էին նաև զինադադարի առաջարկություններ: Այնպես որ, Վրաստանի պատճառաբանությունները, թե իրենց անհանգստությունը չեզոք գոտուն և Վրաստանին սպառնացող վտանգն էր, հիմնավոր չէին և նպատակ ունեին միայն քողարկելու Լոռու գավառին տիրելու ձգտումը:

Վրաստանի ներկայացուցիչ գեներալ Կարալովը Հայաստանի կառավարությանը հայտնել էր վրացական զորքերի կողմից չեզոք գոտին, ընդհուպ մինչև Շահալի կայարանը (այն գտնվում էր Հայաստանի Հանրապետության անվիճելի մասում) գրավելու իր կառավարության որոշման մասին: Այդ կապակցությամբ նոյեմբերի 8-ին Հայաստանի կառավարության բողոքի հայտագրում, տարակուսանքի հետ մեկտեղ, նշվում էր, որ տվյալ պահին, երբ պատերազմում հաստատվել էր զինադադար, Վրաստանի կառավարության նման գործողությունը զուրկ էր ամեն մի ռազմավարական ու քաղաքական արդարացումից[67]: Վրացական պատասխանում (նոյեմբերի 129 իրենց այդ քայլը չեզոք գոտու հյուսիսային սահմանների զորամասերի ուժեղացումը, պատճառաբանվում էր գոտու և Վրաստանի անվտանգության շահերով և նշվում էր, որ Վրաստանի կառավարությունը բանակցությունների մեջ է մտնում Հայաստանի կառավարության հետ Բորչալուի գավառի ամբողջ չեզոք գոտին Վրաստանի Հանրապետության զորքերի կողմից ժամանակավորապես գրավելու հարցի կապակցությամբ: Վրաստանը վերապահություն էր անում, որ այդ գրավումը ունի բացառապես ռազմական բնույթ և բնավ չի կանխորոշում չեզոք գոտու պատկանելության հարցը մեկ կամ մյուս կողմի օգտին[68]:

Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին նման պատասխանի կեղծավոր բնույթը և չեզոք գոտին գրավելու Վրաստանի անթաքույց ցանկությունը:

Վրացական կողմի սույն պատասխանի հաջորդ օրն իսկ, նոյեմբերի 13-ին, Բորչալուի գավառի չեզոք գոտու կոմիսար Ղլոնտին տեղամասային

---

[67] ՀԱԱ, Պ- ֆ. 200, ց. 1, գ. 232, թ. 59-60:
[68] ՀԱԱ, Պ ֆ. 114, ց. 2, գ. 12, թ. 17:

կոմիսարներին գրավոր տեղեկացրեց, որ Վրաստանի կառավարության հրամանով չեզոք գոտի են ժամանում վրացական զորքերը, թուրքական զորքերի հարձակման դեպքում բնակչությանը պաշտպանելու համար, որ չեզոք գոտում հայտարարվում է ռազմական դրություն, և որ գոտու ամբողջ վարչությունը ենթարկվում է ժամանակավոր գեներալ-նահանգապետին[69]:

Այսպիսով, նախ տեղի է ունենում չեզոք գոտու ռազմական օկուպացումը Վրաստանի կողմից, որից հետո Հայաստանը, կանգնած լինելով կատարված փաստի առաջ, հարկադրված մտնում է բանակցությունների մեջ:

Չեզոք գոտի վրացական զորքերի նմանօրինակ մուտքը կոպիտ կերպով խախտում էր 1919 թ. հունվարի պայմանագիրը, որ ստորագրվել էր Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների պատվիրակությունների կոնֆերանսում, դաշնակցային երկրների հրամանատարության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հայ-վրացական նոր բանակցությունները կայացան և 1920 թ. նոյեմբերի 13-ին ստորագրվեց համաձայնագիրը: Դրանով Վրաստանի կառավարության առաջարկությամբ, Հայաստանի կառավարությունը համաձայնվում էր, որ վրացական զորքերը մտնեն չեզոք գոտի: Այդ մուտքը չէր ստեղծում որևէ նոր իրավունք տվյալ տարածքի նկատմամբ: Կառավարումը մնալու էր նախկին հիմունքներով (այսինքն՝ շարունակվելու էր համատեղ կարգով): Անհրաժեշտության դեպքում չեզոք գոտում տեղավորվելու էր շուրջ 10 հազար հայ գաղթական: Սույն համաձայնագրի անշեղ կատարումը վերահսկելու համար վրացական հրամանատարությանը կից չեզոք գոտում գտնվելու էր Հայաստանի կառավարության հատուկ լիազորը: Համաձայնագիրը ստորագրվում էր երեք ամիս ժամանակով:

Համաձայնագրի կնքումից անմիջապես հետո վրացական կողմը սկսեց խախտել այն: Նրա զորքերը գրավեցին նաև չեզոք գոտուց դուրս գտնվող մի շարք գյուղեր, ինչպես Ջալալօղլին, Լորուտը, Աթանը, ապա նաև Քոլագերանը, Շահալին, Նիկոլաևկան և այլն: Հաստատվեց գեներալ-նահանգապետություն, անհնար դարձնելով հայկական կողմի կոմիսարի մասնակցությունը չեզոք գոտու կառավարմանը: Բռնությունների գործադրումը բնակչության նկատմամբ ընդունեց զանգվածային բնույթ և այլն:

Ջալալօղլու գրավման կապակցությամբ Հայաստանի կառավարությունը վճռական բողոք հայտնեց (նոյեմբերի 17) Վրաստանի կառավարությանը, այն դիտելով որպես «թշնամական ելույթ Հայաստանի նկատմամբ»

---

[69] Նույն տեղում, թ. 4:

և պահանջեց, որ անմիջապես նրա զորքերը դուրս բերվեն Հայաստանի սահմաններից: Հայաստանը, ասված է այնուհետև հայտագրում, հավատում էր, որ բարեկամ Վրաստանի հանրապետությունը չի ցանկանում օգտվել իր (Հայաստանի) համար ստեղծված ծանր դրությունից[70]: Իսկ տաս օր անց (նոյեմբերի 27-ին) Հայաստանի Հանրապետության կառավարությունը, քննարկելով հայ-վրացական հարաբերությունների մասին վարչապետի զեկուցումը, որոշեց նրա ձեռնարկած միջոցառումներն առայժմ համարել բավարար, ինչպես նաև արգելել բնակչության գաղթը չեզոք գոտուց և Ջալալօղլուց[71]:

Իրադարձությունների ընթացքը ցույց էր տալիս, որ մենշևիկյան Վրաստանը իսկապես ձգտում էր օգտվել Հայաստանի համար ստեղծված ծանր դրությունից և գրավել հայկական Լոռու գավառը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո ևս շարունակվում էին մենշևիկյան Վրաստանի կողմից Լոռու չեզոք գոտու վերաբերյալ 1920 թ. նոյեմբերի 13-ի, հետևաբար նաև 1919 թ. հունվարյան պայմանագրի խախտումները:

Դրանց նպատակը հայկական այդ գավառի գրավումն էր: Դա խիստ անհանգստացնում էր Խորհրդային Հայաստանի իշխանություններին, որոնք միջոցներ էին ձեռնարկում Լոռին փրկելու համար:

Վրաստանի մենշևիկյան կառավարությունը, ասված է Լոռու ռազմահեղափոխական կոմիտեի հայտարարության մեջ, բռնի ուժով գրավել է ամբողջ Լոռու գավառը, ինչպես նաև Հայաստանի մի շարք այլ գյուղեր, որտեղ «թագավորում է սանձարձակ քմահաճ վերաբերմունքը և ամենախայտառակ կողոպուտը»: Վրացական կառավարության լրբություններին, այնուհետև կարդում ենք հայտարարության մեջ, ավելացավ և հանրաքվեն՝ իբրև թե բնակչությունը ցանկանում է միանալ Վրաստանին: Գավառ էին ժամանել Վրաստանի սահմանադիր ժողովի անդամներ, որոնց աղուհացով դիմավորելու հրամաններ էին տալիս վրացի սպաները: Վրացիները հետապնդում էին հայ կոմունիստներին և բոլոր նրանց, ովքեր համարձակվում էին բողոքել այդ ամենի դեմ և պաշտպանում Հայաստանի շահերը[72]: Ստալինի հետ ունեցած իր հեռախոսային խոսակցություններից մեկում Գ. Օրջոնիկիձեն ևս տեղեկացնում էր մենշևիկյան Վրաստանի հակահայկական քայլերի մասին: Չխեիձեն և մյուս պատգամավորները, նշել է Օր-

---

[70] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 11, թ. 1:
[71] Նույն տեղում, Պ. ֆ. 206, ց. 1, գ. 112, թ. 239:
[72] Կոմունիստ, 11 փետրվարի 1921 թ.:

ջոնիկիձեն, շրջում են չեզոք գոտում և քարոզչություն անում Վրաստանին միանալու համար[73]:

Կան բազմաթիվ արխիվային վավերագրեր Վարանցովկա, Գյառգյառ, Արմանիս, Ջալալօղլի, Պրիվոլնոյե, Նովոմիխայլովկա, Նովոպոկրովկա և գավառի այլ բնակավայրերում հայ և ռուս բնակչության կողոպուտների մասին, որ իրականացրել էին վրացական իշխանությունները, զորքի օգնությամբ[74]:

Այդ ամենը չէր կարող դժգոհություն չառաջացնել բնակչության շրջանում, որը պատրաստվում էր բռնությանը պատասխանել ուժով և թոթափել օտար լուծը: Նրան այդ գործում բնականաբար մեծ օգնություն ցույց տվեցին Ղարաքիլիսայի գավառային և Հայաստանի հանրապետական իշխանությունները և կոմունիստական կազմակերպությունները:

Ղարաքիլիսայի գավիեղկոմի զեկուցագրում (1920 թ. դեկտեմբերի 17) բերված են տվյալներ չեզոք գոտում տիրող ընդհանուր իրադրության և գյուղացիների տրամադրությունների վերաբերյալ: Ըստ այդ զեկուցագրի, միայն դեկտեմբերի առաջին տասնօրյակում գոտում կայացել էր գյուղացիների 3 համագումար (2 անկուսակցական և մեկ կուսակցական): «Այդ համագումարներում,- նշված է զեկուցագրում,- գյուղացիներն իրենց պատրաստակամությունն են հայտնել միանալ Խորհրդային Հայաստանին», իսկ ապստամբության դեպքում պատրաստ են օգնել պարենով և այլ միջոցներով: Գավառում լայն ծավալ էր ստացել կուսակցական բջիջների և հեղափոխական կոմիտեների կազմակերպումը: Գյուղերում դրանց կից ստեղծվել էին զինված ուժեր, յուրաքանչյուրում 50-200 մարդու անձնակազմով, ընդհանուր թվով 2500 մարդ: Զեկուցագրում բերված է հակառակորդի բռնված հեռագիրը, ըստ որի տեղի էին ունենում վրացական զորքերի տեղաշարժեր Սանահինից դեպի Շահալի և այնտեղից դեպի Փամբակ (Ղարաքիլիսայի մոտ):

Սույն զեկուցագրում, որն ուղղված էր հանրապետության ղեկավարությանը, հայտնելով, որ իրենց կազմակերպությունները պատրաստ են ապստամբության համար, խնդրվում էր ցուցումներ տալ հետագա գործողությունների վերաբերյալ[75]:

Միաժամանակ Հայաստանի ղեկավար մարմիններն աշխատում էին հարցը լուծել խաղաղ, դիվանագիտական ճանապարհով, որի ձախողումից հետո միայն դիմեցին այլ միջոցների:

---

[73] ՀԱԱ, Միկրոժապավենների հավաքածու, թիվ 1, գ. 53, թ. 1-5:
[74] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 82:
[75] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 26, թ. 1-2:

1920 թ. դեկտեմբերի 7-ին ՀՍԽՀ հեղկոմի նախագահ Ս. Կասյանը նոր իշխանության առաջին հայտագիրը ներկայացրեց Վրաստանի կառավարությանը (պատճենը Մոսկվա, ՌԽՖՍՀ արտգործնախարար Չիչերինին), որում, արձանագրելով չեզոք գոտին անօրեն գրավելու և Հայաստան եկող երկաթուղային ճանապարհը փակելու փաստերի մասին, խստորեն դատապարտում էր այդ ամենը և պահանջում վրացական զորքերը դուրս բերել չեզոք գոտուց և բացել Հայաստան եկող բեռների ճանապարհը[76]: Դրան հետևեց Վրաստանի մերժողական պատասխանը (10 դեկտեմբերի), ձևականորեն դա պատճառաբանելով նոյեմբերի 13-ի համաձայնագրի առկայությամբ:

Դրան հաջորդեցին հայտագրերի մի քանի փոխանակություններ ևս: Խորհրդային Հայաստանը վկայակոչելով վրացական կողմից համաձայնագրի խախտման նորանոր փաստարկներ, ստիպված էր հայտարարել համաձայնագիրը անվավեր համարելու մասին: Դեկտեմբերի 29-ի հայտագրով Հայաստանը նորից հիմնավորում էր համաձայնագրի անվավեր ճանաչելու հիմքերը, նշելով, որ թուրքական սպառնալիքի վերացումով, վրացական զորքերի հետագա ներկայությունը չեզոք գոտում կորցրել է իր ամբողջ արդարացումը և չի ընդունվել ՀՍԽՀ-ի կողմից: Այս հայտագրում առաջին անգամ առաջ քաշվեց նաև վեճը Ռուսաստանի միջնորդությամբ լուծելու առաջարկությունը[77]:

ՀՍԽՀ արտգործժողկոմատի 1921 թ. հունվարի 15-ի գրության մեջ խոսվում էր նաև 1919 թ. հունվարյան պայմանագրի խախտման մասին և վրացական կողմից խստիվ պահանջում էր պաշտպանել այն և ծեռնպահ մնալ չեզոք գոտում Հայաստանի ու Վրաստանի հավասար իրավունքները ոտնահարելուց[78]:

Դիվանագիտական պայքարը դեռևս կշարունակվեր, եթե չբռնկվեր չեզոք գոտու և Լոռու մյուս բնակավայրերի ապստամբությունը վրացական տիրապետության դեմ:

Ապստամբությունը նախապատրաստվում և ղեկավարվում էր Հայկոմկուսի Կենտկոմի կողմից: Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 23-ին Կենտկոմը քննարկել էր չեզոք գոտու քաղաքական և կուսակցական աշխատանքը ուժեղացնելու մասին հարցը և այդ նպատակով այնտեղ ուղարկել Հովսեփ

---

[76] Կոմունիստ, 9 դեկտեմբերի 1920 թ.: (Որոշ ժողովածուներում այս փաստաթղթի ժամանակը սխալմամբ որոշված է 1921 թ.):
[77] Կոմունիստ, 1 հունվարի 1921 թ.:
[78] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 11, թ. 54-55:

Լազյանին որպես «քաղաքական և կուսակցական պատասխանատու աշխատող»[79]:

Նախապատրաստության մեջ պետք է հասկանալ՝ ըմբոստության պատրաստ չեզոք գոտու բնակչության կազմակերպումը, կուսակցական բջիջների, հեղկոմների, զինված խմբերի միջոցով, չեզոք գոտու հարևանությամբ Ղարաքիլիսայի պարտիզանական գնդի (կոչվել է նաև հատուկ նշանակության Ղարաքիլիսայի գումարտակ) ստեղծումը, Կարմիր բանակի զորամասերի պատրաստությունը՝ ապստամբներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար և այլն:

Պարտիզանական գունդը կազմավորվեց Ղարաքիլիսայի և գավառի գյուղերի բնակիչներից, 800 մարդու անձնակազմով: Ուներ երկու գումարտակ, որոնց հրամանատարներն էին Հուսիկ Պետրոսյանը և Կաֆաֆյանը: Գնդի հրամանատարն էր Հովսեփ Լազյանը, իսկ ապստամբության շտաբի ղեկավարը՝ գեներալ Հովսեփյանը:

Շտաբը, որը գործում էր գաղտնիության պայմաններում, գտնվում էր Ղարաքիլիսայում, իսկ ապստամբության ժամանակ փոխադրվեց Սանահին կայարան: Գաղտնիության նկատառումով շտաբը հանդես էր գալիս «դասալքության դեմ պայքարող հանձնաժողովի» անվան տակ:

Ղարաքիլիսայի երկաթուղային կայարանի պարետության (միլիցիայի) միջոցով կարևոր տեղեկություններ էին հավաքվում չեզոք գոտում և Վրաստանում տիրող իրադրության վերաբերյալ:

Նախապատրաստական աշխատանքների մեջ առանձին տեղ ու դեր ուներ Զամանլուի (Շահալիի) երկաթուղային կամուրջը, որը ականապատված էր և գտնվում էր վրացական զինվորների հսկողության տակ: Խնդիրը կամուրջը պայթեցումից փրկելն էր (նրա տակ տեղադրված էր 10 կիլոգրամանոց 24 ական): Կամուրջի պայթեցումը կարող էր Հայաստանը կտրել արտաքին աշխարհից տևական ժամանակով, այն դեպքում, երբ տվյալ երկաթուղին Հայաստանի կապի միակ միջոցն էր: Կամուրջը փրկելու նպատակով, նրա պահպանության պարետի համաձայնությամբ, այնտեղ կազմակերպվեց «կոնսպիրատիվ բուֆետ», որը սպասարկում էր Արտաշես Ստեփանյանը, և որը, ինչպես ցույց կտրվի, մեծ հաջողությամբ կատարեց իր առջև դրված խնդիրը: «Եթե,- գրել է Հ. Լազյանը իր հաշվետվության մեջ,- Ղարաքիլիսայի պարետությունը, պահակախմբի հետ միասին, մեր կողմից գոտու սահմանամերձ վայրերը ներթափանցելու մի քայլ էր, ապա

---

[79] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր-1922 թ. հունվար): Երևան, 1974, էջ 80:

Շահալիի բուֆետը արդեն մեր կազմակերպիչների հետագա ներխուժումն էր զոնայի խորքը»[80]:

Ապստամբությունից անմիջապես առաջ չեզոք գոտին «խորհրդային և կուլակցական» տեսակետից բաժանվեց 5 տեղամասի (Վարանցովկայի, Դսեղի, Ուզունլարի, Զալալօղլու և Շնողի), կառավարման գործը կենտրոնացնելու նպատակով: Նույնը տեղի ունեցավ ռազմական ղեկավարման տեսակետից (Լոռու, Շնող-Ճոճկանի, Շահալիի կամրջի խմբեր, որոնք բաժանվում էին ջոկատների):

Ապստամբության ղեկավարությունը կարևոր նշանակություն էր տալիս 11-րդ կարմիր բանակի մարտիկների մասնակցությանը ռազմական գործողություններին: Այդ հարցը բարձրացվեց 1921 թ. փետրվարի սկզբին Ղարաքիլիսայում 11-րդ բանակի հրամանատար Հեկկերի հետ Լազյանի ունեցած հանդիպման ժամանակ: Բոգիքենդ գյուղում ապստամբության ղեկավարության տրամադրության տակ դրվեց կարմիրբանակայինների մի խումբ, 300 մարդուց բաղկացած, գումարտակի հրամանատար Բոչկարյովի և զինկոմ Խաղլամովի հրամանատարությամբ: Նրանց կամավոր միացան նաև Լոռու գավառի 300 ռուս գյուղացիներ:

Փետրվարի 8-ին, երբ նախապատրաստական աշխատանքներն ավարտված էին, 11-րդ բանակի հրամանատարությունը հրաման տվեց փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը չեզոք գոտում ապստամբությունն սկսելու մասին:

Ապստամբությունն սկսվեց ճիշտ ժամանակին և ընթացավ մեծ հաջողությամբ: Արագ կերպով զինաթափվեցին վրացական կայազորները Չիբուխլի, Ուզունլար, Դսեղ, Կուրթան, Վարդաբլուր, Պրիվոլնոյե, Շնող և այլ գյուղերում: Վրացական զորամասերը կարողացան որոշ դիմադրություն ցույց տալ միայն Վարանցովկա գյուղում, բայց դա ևս ճնշվեց:

Պլանավորված ձևով իրականացվեց նաև Զամանլուի կամրջի ազատագրումը, ուր գաղտնի մոտեցել էր պարտիզանական գնդի 1-ին գումարտակի 3-րդ վաշտը (հրամանատար Պետրոս Ալավերդյան-Ղազախեցյան), կտրելով հակառակորդի նահանջի ճանապարհը[81]:

Մեծ էր բուֆետապան Արտաշես Ստեփանյանի դերը կամրջի ազատագրման և նրա պայթեցումը կանխելու գործում: Նա հետախուզական տվյալներ հավաքեց հակառակորդի վերաբերյալ և հաջողացրեց կամրջի կայազորի պետ Շատիլովի ծննդյան օրվա տոնախմբությունը փետրվարի 9-ից փոխադրել փետրվարի 11 (խմիչք ապահովելու պատճառաբանութ-

---

[80] Նույն տեղում, էջ 93:

[81] ՀԱԱ, ֆ. 147, ց. 2, գ. 1262: Տես նաև՝ Г. О. Оганезов. Воспоминания старого солдата. Ереван, 1979, с. 29.

յամբ) ապստամբության օրը, երբ կայազորի սպաները զբաղված էին ծննդյան օրվա կերուխումով ու հարբեցողությամբ, Ա. Ստեփանյանը մի քանի տեղից կտրտեց «դժոխային մեքենայի լարը», որը տանում էր դեպի ականապատված կամուրջ: Այնուհետև նրա լուսային ազդանշանով հարձակման դիմեցին պարտիզանները և զինաթափեցին կամրջի կայազորի ամբողջ անձնակազմին, գերելով շատերին[82]:

Կամրջի ականազերծումը իրագործեցին երկաթուղային բանվորներ Տիգրան Բաղրամյանը, Սիմոն Ենգոյանը, գծի պահակի որդի Սարգիս Տեր-Ղուկասյանը: Կամրջի անվտանգ պահպանությունը դրված էր գծի վարպետ Բեկտաշյանի վրա[83]: Երկաթուղու տվյալ հատվածում հետախուզական առաջադրանքներ է կատարել զրահագնացքի մեքենավար Կարապետ Առաքելյանը[84]:

Կարմիր բանակի զորամասի հարձակումը տեղի էր ունենում Վրաստան տանող երկաթուղու ուղղությամբ: Նրա մասնակցությունը ոգևորող նշանակություն ուներ հայ ապստամբների համար:

Լոռու գավառի չեզոք գոտու ապստամբությունը, որը տևեց ընդամենը 3 օր՝ փետրվարի 12-15-ը, ավարտվեց փայլուն հաղթանակով՝ Լոռին ազատագրվեց մենշևիկյան Վրաստանի լծից, գավառում հռչակվեց խորհրդային իշխանություն:

Փետրվարի 15-ին «ապստամբության պատասխանատու ղեկավար» Լազյանը 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի և ՀՍԽՀ ղեկավարության անունով ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Եռօրյա հերոսական պայքարի հետևանքով ամբողջ չեզոք գոտին գրավված է կարմիր ապստամբների կողմից: Թվով յոթ հազար զինվորից բաղկացած վրացական օկուպացիոն բանակը մեծ մասամբ գերի է վերցվել, մյուս մասը ցրիվ է եկել բոլոր կողմերը»[85]:

Ապստամբության շտաբ ծառայող Լոռու գավառի հեղկոմը փետրվարի 15-ին «Բոլորին, բոլորին» ազդարարեց գավառում ապստամբության հաղթանակի և խորհրդային իշխանություն հռչակելու մասին: Նույն օրը հայտարարությունը հրապարակեց ՈԿ(բ)Կ կովկասյան կոմիտեի օրգան «Բակինսկի ռաբոչի» թերթը[86]:

Հայաստանի ղեկավարությունը ևս հանդես եկավ նույնպիսի հայտարարությամբ: «Կարմիր Լոռվա հերոս ապստամբների անկասելի գրոհի

---

[82] Г. О. Оганезов. Воспоминания старого солдата.
[83] ՀԱԱ, ֆ. 147, ց. 2, գ. 396:
[84] Նույն տեղում, գ. 219:
[85] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 88:
[86] «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան...», էջ 481:

տակ,- ասված է հայտարարության մեջ,- սովետական դարձավ ամբողջ Լոռին մինչև Սադախլու»[87]:

Լոռու գավառում, որպես ՀՍԽՀ բաղկացուցիչ մաս, իշխանությունն անցավ ապստամբության շտաբ ծառայած հեղկոմին:

Չեզոք գոտում ծավալված իրադարձությունները գտնվում էին Խորհրդային Ռուսաստանի ղեկավար մարմինների ուշադրության կենտրոնում: Դա պատահական չէր: Այն օգտագործվեց Վրաստանի խորհրդայնացումը կազմակերպելու և իրականացնելու համար:

Փետրվարի 15-ին 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդին ուղարկած հեռագրում Վ. Լենինը բացատրում էր, որ խորհրդի գործողություններն ունեն չեզոք գոտու ապստամբներին սպառնացող կործանումից պաշտպանելու նշանակություն, և որ գործողությունների քաղաքական բնույթը պետք է հաշվի առնել խորհրդի բոլոր հրապարակային ելույթներում: Այնուհետև Վ. Լենինը նշում էր, որ սպասում են ռազմահեղափոխական խորհրդի եռանդուն և արագ գործողություններին, կանգ չառնելով Թիֆլիսը գրավելու առաջ, եթե դա ռազմական տեսակետից անհրաժեշտ է չեզոք գոտին նոր հարձակումներից պաշտպանելու համար: Այնուհետև Վ. Լենինը պահանջում էր իրենց նախազգուշացումներին վերաբերվել ամենայն լրջությամբ և տեղեկացնել ամեն օր[88]:

Երբ արդեն իրադարձությունները հանգուցալուծում էին ստացել, 1921 թ. փետրվարի 28-ին, Մոսկվայի խորհրդի պլենումի նիստում վերադառնալով տվյալ հարցին, Վ. Լենինը նշում է, թե «Հայաստանի և Վրաստանի ընդհարումը չէր կարող չհուզել մեզ, և այդ դեպքերն այն բանին հասցրին, որ հայ-վրացական պատերազմը փոխվեց ապստամբության, որին մասնակցում էր նաև ռուս զորքերի մի որոշ մասը»: Մեկնաբանելով միտքը Վ. Լենինն այնուհետև շարունակում է. «Փետրվարի սկզբին սարսափելի ապստամբություն պոռթկաց, որը զարմանալի արագությամբ տարածվեց և ընդգրկեց ոչ միայն հայ բնակչությանը, այլև վրացական բնակչությանը[89]:

Վրացական բնակչության այդ ապստամբությունը, 11-րդ Կարմիր բանակի վճռական օգնությամբ, հանգեցրեց Վրաստանի խորհրդայնացմանը (փետրվարի 25), որով գրեթե ավարտվում է ամբողջ Անդրկովկասի խորհրդայնացման գործընթացը: Դա միաժամանակ նշանակում էր Անդրկովկասում Խորհրդային Ռուսաստանի ազդեցության հետագա ընդլայնում և ամրապնդում:

***

---

[87] Կոմունիստ, 17 փետրվարի 1921 թ.:
[88] В. И. Ленин, ПСС, т. 52, с. 71.
[89] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 175, 176:

Երևանի վերագրավումից հետո խորհրդային իշխանությունը այլևս չէր կարող հանդուրժել Ալեքսանդրապոլի թուրքական օկուպացիան, որը կոպիտ կերպով խախտում էր Մոսկվայի պայմանագիրը:

Չիչերինի ապրիլի 6-ի հայտագրում, ուղղված Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադին, ուղղակի նշվում էր, որ հասել է ժամանակը որպեսզի թուրքական զորքերը հետ քաշվեն իրենց սահմանը[90]: Նույն օրվա հեռագրում, հասցեագրված Կովկասյան ճակատի ՌՀԽ-ի անդամ Օրջոնիկիձեին, Չիչերինը թուրքական զորքերի հրամանատար Կարաբեքիրի վարքագիծը անվանում էր խուլիգանություն, ավելացնելով, որ Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի միջև պատերազմը կնշանակի պատերազմ Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև[91]:

Թուրքիան փաստորեն ոտնահարում էր Մոսկվայի պայմանագիրը և չէր պատրաստվում հեռանալ Ալեքսանդրապոլից: Թուրքիայի ռազմական մինիստրը Կովկասում իրենց զորքերի մնալը դիտում էր որպես այնտեղ հավասարակշռություն հաստատելու միջոց, իսկ թուրքական զորքերի էվակուացիան կապում էր միայն Ալեքսանդրապոլի պայմանագիրը գործողության մեջ դնելու հետ:

Չիչերինը իր նոր՝ ապրիլի 8-ի հայտագրում, բացահայտելով և մերկացնելով թուրքական կողմի մտադրությունները, վճռականորեն պահանջում էր հետևել Մոսկվայում ստորագրված պայմանագրի դրույթներին: «Վերին աստիճանի անհրաժեշտ է,- եզրակացնում է Չիչերինը,- հասնել թուրքական զորքերի անհապաղ էվակուացմանը Ալեքսանդրապոլից, որպեսզի խուսափենք այնպիսի անախորժ հետևանքներից, որոնց կարող է հասցնել այդ քաղաքի շարունակվող ռազմակալումը թուրքերի կողմից»[92]:

Քեմալականները ռազմակալած տարածքներում շարունակում էին կենսագործել երիտթուրքերի՝ հայ ժողովրդի ցեղասպանության նույն քաղաքականությունը:

Բազմաթիվ են թուրքերի ալան-թալանի, կոտորածների ու ավերի մասին վկայող փաստաթղթերը: Այսպես, թուրքերի հեռանալուց հետո 1921 թ. մայիսի սկզբին Ղարաքիլիսայի գավառի զինկոմիսարի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը պարզել է, որ միայն Ղալթախչի, Աղբուլաղ և Ղարաբոյա գյուղերի շրջանում թուրք բարբարոսները կոտորել և գետափին իբրև թե թաղել էին 11.886 մարդու դիակ՝ տեղի բնակիչներ և Կարսի մարզի ու Ալեքսանդրապոլի գավառի գաղթականներ: Նրանց 90 տոկոսը՝ կին և երեխա: Ոմանց վրա եղած վերքերի հետքերը (10-15 սրի ու թրի

---

[90] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան ..., էջ 510-511:
[91] Նույն տեղում, էջ 511:
[92] Նույն տեղում, էջ 513-514:

հարվածներ) վկայում էին սպանության գազանային բնույթի մասին[93]: Դիակների մի խմբի զննության վերաբերյալ արձանագրություն է կազմել նաև Ղարաքիլիսայում Ամերկոմի հանձնաժողովը[94]: Ղարաքիլիսայի հեղկոմը, որը կազմակերպել էր դիակների թաղումը, հայտնել է 12050 դիակ հայտնաբերելու մասին, որի 80 տոկոսը 5-12 տարեկան երեխաներ[95]:

Այս և այլ լրացուցիչ տվյալներ են բերված նաև ՀՍԽՀ արտգործժողկոմ Ասքանազ Մռավյանի Բաքու, Հայաստանի ներկայացուցիչ Ղովլաթյանին ուղարկած հեռագրում, որը նախատեսված էր Մյասնիկյանին հանձնելու համար: Հավանորեն դրանք նախատեսված էին Չիչերինին հասցնելու համար՝ ըստ հարկին օգտագործելու նպատակով:

Մռավյանը տվյալներ է բերում նաև Ալեքսանդրապոլի հանձնաժողովի գործունեության արդյունքներից: Ըստ դրանց գավառում թուրքերը կոտորել էին 60 հազար մարդ: Վիրավորների թիվը կազմում էր 38 հազար, գերության քշվածներինը (բացառապես տղամարդիկ) 18 հազար, քաղցից մահացածներինը 32 հազար մարդ:

Գավառը թողնելիս թուրքերը իրենց հետ տարել էին 8 հազար կին ու աղջիկ: Բռնաբարությունների պատճառով մեծ տարածում էին ստացել վեներական հիվանդությունները: Թուրքական գերության մեջ գտնվում էր 10 հազար մարդ, որից հեռագիրը հաղորդելու պահին կենդանի էր մնացել ընդամենը 2000 մարդ: Մյուսները մահացել էին ցրտից ու քաղցից կամ սպանվել թուրքերի կողմից[96]: Նշենք, որ գերի համարվում էին ինչպես ռազմագերիները (սպաներ ու զինվորներ), այնպես էլ քաղաքացիական բնակչությունը:

Թուրքական զորքերի պատճառած նյութական վնասի ու մարդկային կորուստների մասին ընդհանրացնող տվյալներ է պարզել այն հանձնաժողովը, որը 1924-1925 թթ. ստեղծվել և գործել է ՀՍԽՀ կառավարության անունից[97]: Այդ նյութերը պատրաստվել էին ԽՍՀՄ արտգործժողկոմատի հանձնարարությամբ: «ԽՍՀՄ և Թուրքիայի կառավարությունների միջև տեղի ունեցած տևական բանակցությունների հետևանքով,- կարդում ենք

---

[93] Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Պատ. խմբագիրներ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան: Երևան, 2000, էջ 379-380:
[94] Նույն տեղում, էջ 380-381:
[95] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 29:
[96] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 27, թ. 73-74:
[97] В. Казахецян. О материальном ущербе, нанесенном армянскому народу в Закавказье и в Карсской области турецкими интервентами. Տե՛ս «Լրաբեր», 1987, թիվ 2, էջ 81-88:

հանձնարարականում,- կողմերը համաձայնվել են այն վնասների փոխադարձ ուսումնասիրության վերաբերյալ , որպիսիք կրել են մեկ կամ մյուս կողմի պետական հիմնարկություններն ու մասնավոր անձինք»: Ապա տեղեկացվում էր, որ այդ քննարկումը նախատեսված է կատարել Մոսկվայում, արտգործժողկոմատում: Հայտնվում էր նաև թուրքական պատվիրակության գոյության փաստի մասին[98]: (Վնասների հարցի ուսումնասիրությունը կապված է իմպերիալիստական տերությունների այն պահանջների հետ, որ նրանք ներկայացնում էին Խորհրդային Ռուսաստանին Ճենովայի կոնֆերանսի ժամանակ):

Ըստ հայկական հանձնաժողովի կատարած ուսումնասիրությունների՝ քեմալական Թուրքիայի 1920-1921 թթ. ինտերվենցիան և օկուպացիան Ալեքսանդրապոլի գավառի համար ոչ պակաս կործանարար էր, քան առաջին արշավանքի (1918 թ.) ժամանակ: «Թուրքերը գլխովին կոտորել էին տեղական գյուղական բնակչությանը, տարել էին զինվորական հիմնարկների, քաղաքային ու պետական պահեստների, դպրոցների ու երկաթուղու վիթխարի քանակությամբ գույք: Ալեքսանդրապոլի, ինչպես նաև Սուրմալուի գավառներում և Կարսի մարզում 1920-1921 թթ. թուրքական օկուպանտները ավերել և թալանել էին 30 հազար գյուղացիական տնտեսություն, ավելի քան 200 հազար բնակչությամբ: Հանձնաժողովը նրանց կրած վնասը գնահատում էր 60 միլիոն ռուբլի ոսկով: Հանձնաժողովի հաշվետվության մեջ բերված են նաև վերոհիշյալ մարդկային կորուստների տվյալները: Իսկ քաղաքային բնակչության կորուստները կազմում էին 30 հազար մարդ: Վիթխարի էին նաև նրա նյութական վնասները: Թալանվել էր Ալեքսանդրապոլի երկաթուղային դեպոն: Քաղաքային բնակչությանը և քաղաքային տնտեսությանը պատճառվել էր 50 միլիոն ռուբլու վնաս:

Ալեքսանդրապոլի գավառի ամբողջ նյութական վնասը հաշվվում էր 110 միլիոն ռուբլի ոսկով: Գավառի մարդկային կորուստները հասնում էին շուրջ 20 հազարի, որի 65 տոկոսը կազմում էին կանայք ու երեխաները: Թուրքիայի խորքերն էր քշվել կամ անհայտ կորել 4565 մարդ:

Փաստաթուղթը տվյալներ է պարունակում նաև Կարսի կոնֆերանսից հետո և մինչև 1923 թ. սահմանային շրջաններում հայ ժողովրդի կրած կորուստների ու վնասների մասին: Սահմանային գյուղերի վրա թալանի ու գողության համար թուրք և քուրդ բանդաների հարձակումների հետևանքով զոհվել էր 153 մարդ, իսկ նյութական վնասը կազմում էր 252 հազար ռուբլի: Հիշենք, թե թուրքական պատվիրակությունը Մոսկվայի կոնֆերան-

---

[98] ՀԱԱ, ֆ. 122, ց. 2ա, գ. 3, թ. 23:

սում ինչպիսի եռանդով էր բացառում քրդական և այլ բանդիտական խմբերի հարձակումների վտանգը և այն կանխելու անհրաժեշտությունը:

Թուրքական զորքը վեր էր ածվել իսկական թալանչիների ու մարդասպանների բանդայի: Գյուղերում նրանք սահմանել էին նաև տեղական հարկեր: Ընդ որում, բանակում մեծ չափերի էր հասել դասալքությունը, ուստի շատ համալրումներ էին կատարվում տեղական թուրք բնակչության հաշվին (Զարիշատ, Աղբաբա և այլն): «Բանակի մեջ շատ ուժեղ է թալանի և հարստանալու տենչը,- կարդում ենք 1921 թ. հունվարի 31-ի մի հաշվետվության մեջ, Ալեքսանդրապոլում ցորենի, ալյուրի, ծխախոտի ամբողջ առևտուրը գտնվում է թուրք ասկյարների ձեռքում, իսկ Ղարսում արդեն նրանք, որոնց մեջ մեծ տեղ են բռնում նաև օֆիցերները, կանոնավոր խանութների տերեր են: Վերջերս հարստանալու տենչից սկսել են զայթակղվել նաև օֆիցերները, որոնք կանոնավորապես ներմուծում ու արտահանում են դեպի էրզրում զանազան մթերքներ: Հարյուրավոր ասկյարներ օրերով չեն ներկայանում մեծերին, այլ շրջում են գավառները առևտրի, թալանի հետևից ընկած»[99]: Նույն փաստաթղթի հեղինակը տեղեկացնում է, որ Խլի-Ղարաքիլիսա գյուղի թուրքական կայազորը դարձել էր մի կայան, որը «հավաքում է ամբողջ ավարը և ուղարկում ջրի այն կողմը»:

Թուրքական հրամանատարությունը փորձում էր քողարկել այդ ամենը և այդ նպատակով դիմում ամեն հնարավոր միջոցի, ինչպես բնակչությունից ստորագրություններ հավաքելը թե ամեն ինչ լավ է, այնպես էլ իր քաղաքականությունը Ալեքսանդրապոլ քաղաքի ու գավառի խորհրդային իշխանության մարմիններին (հեղկոմ և այլն) վերագրելը կամ նրանց միջոցով իրականացնելը:

1921 թ. փետրվարի 4-ին Ալեքսանդրապոլի գավառի 2-րդ գավառամասի հեղկոմը ՀՍԽՀ հեղկոմի նախագահ Ս. Կասյանին ուղարկել է գրություն հետևյալ բովանդակությամբ: Քավքառլի գյուղում տեղակայված թուրքական 36-րդ գնդի 3-րդ գումարտակի պետ Մայմադ Ֆաիկը ներկայացրել է հեղկոմի նախագահին և ճնշման տակ պահանջել, որ Քավքառլի, Պարնի, Ղասմալի և այլ գյուղերի բնակիչները իրեն ներկայացնեին «շնորհակալության թերթեր, այն մտքով, որ տեղիս թուրք հրամանատարությունը լավ պաշտպան է հանդիսացել խաղաղ ժողովրդին, տեղի չտալով ոչ տնտեսական քայքայման, ոչ թալանի և ոչ էլ սպանության, մի պահանջ, որը խստիվ հակասում է այդ ժողովրդի արդի կացությանը, որի անասելի սոսկումների ու զուլումների տակ մահվան է դատապարտված տեղիս աշխատավոր գյուղացիությունը»:

---

[99] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 10, թ. 10-11:

«Ես հասկանում եմ,- շարունակում է հեղկոմի նախագահը,- որ խորամանկ և արևելյան քաղաքականությունը խտացնող իմպերիալիստ թուրք հրամանատարությունը այդ ստոր միջոցով ցանկանում է ազդել տեղի ունեցող կոնֆերանսի (հավանորեն նկատի ունի առաջիկա Մոսկվայի կոնֆերանսը - Վ. Ղ.) որոշումների վրա՝ հօգուտ իրենց քաղաքականության»:

Թուրքական ջարդարարների ու մարդասպանների գործողությունները փորձել է քողարկել ու նենգափոխել նաև Մոսկվայում Թուրքիայի դեսպանությունը, համապատասխան հաղորդագրություն տպագրելով մոսկովյան «Իզվեստիա» թերթում (1921 թ. հունիսի 25, թիվ 136): Թերթի խմբագրությանն ուղղված նամակում, որը տպագրվել է նրա հուլիսի 30-ի թիվ 166-ում, ՌԽՍՖՀ-ում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը կոնկրետ փաստերով մերկացրել է թուրք կեղծարարներին: «Մերկ փաստերը,- եզրափակել է իր նամակը Տեր-Գաբրիելյանը,- սոփեստական դատողություններից ավելի ուժեղ են, գործը համոզիչ է խոսքից»[100]:

Թուրքական ռազմակալության տակ ընկած շրջանների դրության մասին արժեքավոր տեղեկություններ է հայտնել իր զեկուցագրերում ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալ Ամատունին, որը գործուղումով գտնվել է տվյալ վայրերում, 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին:

Ղարաքիլիսայի շրջանի Նալբանդ և այլ գյուղերի մասին նա գրել է. բնակչությունը սարսափելի ահաբեկված է թուրք ասկյարների անկարգությունների պատճառով: Նրանք խմբերով շրջում են գյուղերը և պահանջում պարենամթերք և արժեքավոր իրեր: Քյուլլուջա և Փամբ գյուղերի մյուրիդները գրավոր հրամայել էին գյուղական հասարակություններին հանձնել մեկական ոչխար, յուղ, արծաթե ժամացույց և ոսկե մատանի ժամանող թուրք փաշային մատուցելու համար: Վորոնավ գյուղում կարմիրբանակայինները հանցանքի վայրում բռնել էին զինված ասկյարների մի խումբ, որը զբաղվում էր թալանով: Երբ նրանց ներկայացրին Ղարաքիլիսայում գտնվող թուրքերի ներկայացուցչին, նա դեպքը համարեց թյուրիմացություն: Ըստ ականատեսների՝ սարսափելի վիճակ էր տիրում Ղարալ, Ղարաբոյա, Քյուլլուջա, Սպիտակ, Փամբ և այլ գյուղերում, որտեղից թուրքերը դուրս էին տանում այն ամենը, ինչ կարելի էր տեղաշարժել:

Ամատունին մեծաքանակ տվյալներ է հայտնում Ալեքսանդրապոլ քաղաքի ու գավառի վերաբերյալ: «Ալեքսանդրապոլի գավառը ներկայաց-

---

[100] Սահակ Տեր-Գաբրիելյան, Հոդվածներ, Ճառեր, փաստաթղթեր: Երևան, 1979, էջ 206-212:

նում է ավելի սարսափելի պատկեր»,- գրել է նա: 2-րդ և 4-րդ գավառամասերում ավերված է 45 գյուղ: Բնակիչները մասամբ սպանվել են, մասամբ փախուստի դիմել, իսկ մեծի մասամբ քշվել են Թուրքիայի խորքերը: Թուրքերը յուրաքանչյուր օր պահանջում են 100 բանվոր, որոնց աշխատացնում են 1-2 օր, ապա ուղարկում Կարսի կողմերը: Իմ ներկայությամբ, շարունակում է Ամատունին, թուրքական հրամանատարությունը հեղկոմից պահանջեց մեկ օրվա ընթացքում ապահովել 10 հազար հրացան, հակառակ դեպքում սպառնալով կատարել համատարած խուզարկություն: Հրամանի կատարումը հնարավոր եղավ կանխել միայն Մդիվանու և Մուստաֆա Սուբխիի միջամտությամբ:

Ալեքսանդրապոլի հեղկոմը Ամատունուն հայտնել էր, որ արտակարգ հանձնաժողովի կողմից շատ կարծեցյալ դաշնակցականների բանտարկությունը և գրեթե բոլոր գնդակահարությունները կատարվել էին «թուրքական հրամանատարության պահանջով»:

Թուրքերը շարունակում էին ձերբակալության տակ պահել տաս միլիոցիոներների այն բանի համար, որ հեղկոմը չէր կարողանում բացահայտել, թե ով է սպանել ոմն թուրք սպայի: «Այդ սպանությունը,- գրում է Ամատունին,- ինչպես ես պարզեցի, ֆիկցիա է»:

«Ընդհանրապես Ալեքսանդրապոլ քաղաքի և գավառի բնակչության դրությունը սարսափելի է: Բնակչությունը հալվում է օրեցօր, կորցնում է և ֆիզիկապես, և բարոյապես: Հեղկոմը և կոմունիստական կազմակերպությունը խաղալիք են թուրքական հրամանատարության ձեռքում, իսկ հաճախ զենք՝ Անկարայի բանակի կայազորի հրամկազմի քմահաճույքները կատարելու համար»[101]:

Մյուս զեկուցագրում հանրապետական Արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալը իր պետին (Այվազյան) դժգոհում էր թուրքերի ձեռքին գործիք դարձած տեղական արտակարգ հանձնաժողովի գործունեությունից, որի նկատմամբ բանից անտեղյակ ժողովուրդը խիստ դժգոհում էր: Առայժմ բանտերից ազատել եմ 60 բոլորովին անմեղ տղամարդ ու կին: Վերակառուցել եմ արտակարգ հանձնաժողովը, սակայն առայժմ խուսափում եմ ձերբակալել նողկալի «սադիստներին», վախենալով թուրքերից: «Դրության փաստական տերը թուրքերն են: Մեր իշխանությունը կարծես միայն ցուցադրություն է... Տարել են և տանում են ամեն ինչ: Հարկավոր է ներգործել Մոսկվայի միջոցով: Պահանջում են գնդակահարել դաշնակցականներին, բայց այդպիսիք չկան... Այստեղ համատարած գերեզման է:

---

[101] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 15:

Անհրաժեշտ է կազմակերպել որբերի փոխադրումը Երևան: Նրանց պահելու միջոց չկա... Ապրում ենք ահաբեկչության պայմաններում»[102]:

Այս զեկուցագրից մի քանի օր անց Ալեքսանդրապոլի արտակարգ հանձնաժողովի նոր նախագահ Զ. Աշրաֆյանը Ս. Կասյանին զեկուցել է այն մասին, որ, Ամատունու ցուցումների համաձայն, վերակառուցել է արտակարգ հանձնաժողովը և ծերբակալված դաշնակցականներին ազատ արձակել, որը թուրքական հրամանատարության մոտ առաջացրել է ուժեղ դժգոհություն[103]:

Այստեղ կարող է հարց ծագել, թե ինչ ընդհանուր բան ունեն միմյանց հետ թուրքական օկուպանտները և խորհրդային իշխանության մարմինները, այդ ինչու և ինչպես էին նրանք գոյատևում միևնույն կտուրի տակ: Հարցի պատասխանը կարելի է գտնել այն թռուցիկում, որ տարածել էին Ալեքսանդրապոլի բոլշևիկները, երբ, թուրքական զորքերի քաղաքին մոտենալու պահին, ազատվել էին (շուրջ 60 մարդ) բանտերից, որտեղ նրանք գտնվում էին 1920 թ. մայիսյան զինված ապստամբության ճնշումից սկսած: ՀԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի գավառային կոմիտեի կոչը, ուղղված զինվորներին, գյուղացիներին և գաղթականներին, տպագրել է Կոստանդնուպոլսի «Ճակատամարտ» թերթը 1920 թ. դեկտեմբերի 24-ի համարում:

Կոչում նախ մերկացվում է դաշնակցական խմբապետների խայտառակ կառավարությունը, որի զորքը նահանջում է «Քեմալի զորքի ահավոր հարձակումից»: Չարիք գործելու հետ մեկտեղ Դաշնակցությունը խաբում է ժողովրդին, թե իբր թուրքերը գալիս են հայ աշխատավորությանը թալանելու և կոտորելու համար: Ժողովրդին կոչ էր արվում չհավատալ դաշնակցականների հազարավոր ստերին, որովհետև «եկողները ոչ թե թալանչի ավազակներ են, այլ հայ գյուղացիների, զինվորների ու բանվորների ընկերները՝ թուրք աշխատավորներ են», որոնք եկել են ոչ թե կոտորելու, այլ «թալանչի դաշնակների ձեռքից ազատելու»: Թե իբր գրված տարածքներում (Կարս, Ալեքսանդրապոլ) թուրքերը ոչ թե թալանել են, ոչ էլ կոտորել, այլ հաստատել են, կասեինք՝ ոչ ավել, ոչ պակաս, բանվորագյուղացիական կարգուկանոն:

«Կոչ ենք անում բոլորիդ,- եզրափակում է փաստաթուղթը-, այժմ հավաքվել բոլշևիկների դրոշակի տակ, որոնք միայն կարող են ձեզ փրկել այս ծանր դրությունից: Ուրեմն, ընկերներ, խելքի եկեք բանվորագյուղացիական իշխանություն հայտարարելու համար, որովհետև այդ է պահանջում ներկա ժամանակը և դրանում է միակ փրկությունը:

---

[102] Նույն տեղում, թ. 13:
[103] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 2, թ. 38:

Թե որպիսի մոլորության մեջ էին գտնվում հայ բոլշևիկները, բերենք հետևյալ փաստը ևս. Ալեքսանդրապոլի հեղկոմի անդամ Գայանե Արեշյանը, որն իրեն անվանել է «Հայաստանի հեղկոմի ներկայացուցիչ», 1920 թ. դեկտեմբերին Բաքվում գրել է հետևյալ տողերը. «Հայաստանի հեղկոմը խնդրում է պարզել (նրա զեկուցագիրը հասցեատեր չունի - Վ. Ղ.) եթե Հայաստանի վրա թուրքերի հարձակումը թելադրված է մեր Կոմկուսի Կենտկոմի կամ Գործողության խորհրդի (խոսքը Արևելքի ժողովուրդների գործողության ու քարոզչության խորհրդի մասին է - Վ. Ղ.) կողմից, ապա պետք է միջոցներ ձեռնարկել, որպեսզի այդ խորհուրդը ճնշում գործադրի թուրքական հրամանատարության վրա, որպեսզի նա գերությունից ազատի խաղաղ բնակիչներին, դադարեցնի 20-40 տարեկան տղամարդկանց մոբիլիզացիան, թույլ տա Հայաստանի հեղկոմին (խոսքը Ալեքսանդրապոլի հեղկոմի մասին է - Վ. Ղ.) կազմակերպելու իր կարմիր բանակը, որ Հայաստանից թուրքական զորամասերի հեռանալու դեպքում բանվորներն ու գյուղացիները կարողանան իրենց ձեռքում պահել իշխանությունը»[104]:

Մի այլ զեկուցագրում նույն նվիրյալ բոլշևիկը գրել է, թե Ալեքսանդրապոլում թուրք հրամանատարների վերաբերմունքը մեր կազմակերպության նկատմամբ համակրական է այնքանով, «որքանով մենք նրանց օգնում ենք մեր ընդհանուր թշնամի դաշնակցական կառավարության դեմ պայքարում»: Արեշյանը միաժամանակ խոստովանում է բոլշևիկների հեղինակության արագ անկման մասին «դաշնակից» թուրքերի կողմից գյուղերը լրիվ ավերելու պատճառով»[105]:

Քեմալական շարժման նկատմամբ քաղաքական մոլորությունը և քեմալական արշավանքի նկատմամբ հակաազգային մոտեցումը բնորոշ էր Հայաստանի կոմկուսի համար, որը ևս, ինչպես և իր գավառային կազմակերպությունը, հանդես էր եկել նման հայտարարություններով:

Ալեքսանդրապոլի բոլշևիկները թուրքական զորքերին դիմավորեցին նոյեմբերի 7-ի առավոտյան, ձևավորեցին իրենց գավառային կազմակերպությունը և կոմիտեն, թուրք սպաների մասնակցությամբ կազմակերպեցին ժողովրդական միտինգներ, իսկ 1920 թ. նոյեմբերի 14-ին ստեղծեցին հեղկոմ՝ խորհրդային իշխանություն: Իրենց հեղկոմը նրանք դիտում էին որպես Հայաստանի խորհրդային իշխանություն, անպայման թուրքերի հովանավորությամբ: Թուրքիան կգերադասեր այս իշխանությունը տեսնել համահայաստանյան, քանի որ այն հնազանդորեն ծառայում էր իրեն:

Ալեքսանդրապոլում տպագրվում էր բոլշևիկյան կազմակերպության, ապա հեղկոմի օրգան «Կոմունիստ» թերթը:

---

[104] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 32, թ. 6:
[105] Նույն տեղում, թ. 4-5:

Ինչևէ, Ալեքսանդրապոլի հեղկոմի գործունեությունը դեռևս շարունակվում էր: Իսկ 1920 թ. դեկտեմբերի 25-ի գրությամբ, ուղղված ՀՍԽՀ - հեղկոմին, նա, խոստովանելով ստեղծված ծանր դրությունը, միաժամանակ նշում էր, թե իրենք որոշել են պահել իշխանությունը, «ընդունելով թուրքական հրամանատարության հետ համաձայնության ուղին (ժամանակը ձգձգելու համար), ինչպես մինչև այժմ»: Հեղկոմը իր համար կարևոր խնդիր էր համարում նաև քաղաքական աշխատանքը, ինչպես ասկյարների համակրանքի նվաճումը: Արտաքին աշխարհից կտրված լինելը հեղկոմը համարում էր իր գործունեության դժվարություններից մեկը, ուստի «մենք ճիշտ չենք հաշվի առնում ընդհանուր իրադրությունը, այնպես չենք լուսաբանում արևելյան քաղաքականության հարցը, որ թելադրում է մեր կենտրոնը»: Եվ այնուամենայնիվ, Ալեքսանդրապոլի հեղկոմը Հայաստանի հեղկոմից խնդրում էր լուծել իր գործունեությունը շարունակել-չշարունակելու հարցը և արդյո՞ք թույլատրելի է «վարկաբեկելով մեր կուսակցությունը, մնալ իշխանություն ստեղծված պայմաններում»[106]:

Վերջապես, Ալեքսանդրապոլի հեղկոմը, վերադասի որոշման հիման վրա, հանդես եկավ «Հայաստանի հեղկոմին, պատճեն՝ Անդրերկրկոմին, ՌԽՍՖՀ ժողկոմխորհին, 3-րդ՝ Կոմունիստական ինտերնացիոնալի գործադիր կոմիտեին, բոլորին, բոլորին, բոլորին» հայտարարություն-որոշումով, որի տակ դրված է հեղկոմի ամբողջ կազմի՝ նախագահի (Մ. Գրիգորյան), նախագահի փոխանորդի (Ն. Ստեփանյան), անդամների (Ն. Կուրղինյան, Վ. Մխիթարյան, Ն. Զավարյան, Ա. Տեր-Սովսեսյան, Զ. Աշրաֆյան) և անդամ-քարտուղարի (Ա. Տեր-Մարտիրոսյան) ստորագրությունները: Փաստաթուղթը բազմացվել էր տպագիր օրինակներով և լույս տեսել «Կոմունիստ» թերթի 1921 թ. փետրվարի 8-ի համարում: Ալեքսանդրապոլի հեղկոմի որոշումն ընդունվել էր հունվարի 25-ին:

Հայտարարության մեջ բացատրվում էին հեղկոմի կողմից իշխանության գալու հանգամանքները, ապա եռամսյա փորձի արդյունքները, երբ հեղկոմը սկզբնական տարակուսանքից վերջում հասել է կատարյալ հիասթափության՝ միմյանց հակադրելով քեմալական շարժման հեղափոխական լոզունգները և թուրքական հրամանատարության գործնական քաղաքականությունը, ըստ որի հեղկոմի իշխանությունը իր մտադրությունների ու հրամանների հլու կամակատար էր հանդիսանում:

Ապա հայտարարության մեջ բերվում են բազմաթիվ փաստեր, որոնց հիման վրա հեղկոմը եզրակացնում է, որ իր իշխանությունը դարձել է ֆիկցիա, վարկաբեկում է խորհրդային իշխանության գաղափարը, ուստի որո-

---

[106] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 11-12:

շում է թողնել այն, իր վրայից վերցնելով պատասխանատվությունը «քայքայման, բնաջնջման ու երկրի ճնշման այն քաղաքականության համար, որ վարում էր և վարում է տաճկաց օկուպացիոն հրամանատարությունը, և շնորհիվ որի մենք կանգնում ենք վաղուցվանից արդեն Ալեքսոլի խորհրդային իշխանությունը ի չիք դառնալու փաստի առաջ»:

Ալեքսանդրապոլից խորհրդային իշխանության հեռանալը նշանակում էր, որ Հայաստանը միայնակ անկարող էր լուծել քաղաքի ազատագրման հարցը: Ավելին, Թուրքիան շարունակում էր փորձերը նրան իրենից կախյալ վիճակում պահելու համար: Հարցը կարող էր լուծել միայն Խորհրդային Ռուսաստանը, հենվելով Մոսկվայի պայմանագրի և, իհարկե, Կարմիր բանակի ուժի վրա: Ուստի Ռուսաստանը շարունակում էր դիվանագիտական ճնշում գործադրել Թուրքիայի վրա:

Վերը խոսվեց Չիչերինի կողմից թուրքական դեսպան Ալի Ֆուադին ներկայացրած հայտագրի մասին: Ապրիլի 8-ին մի հայտագիր էլ ուղարկվեց Անկարա: Խորհրդային Ռուսաստանը նորից պնդում էր Մոսկվայի պայմանագրի համաձայն սահմանը վերականգնելու, անհապաղ Ալեքսանդրապոլը թուրքերից ազատելու մասին: «Մեր անունից,- նշում էր Չիչերինը Բուդու Մդիվանուն, կտրական բողոք հայտնեցեք Կարաբեքիր փաշայի այն հայտարարության դեմ, թե նա չի ցանկանում ազատել Ալեքսանդրապոլը և Ազգային մեծ ժողովի կառավարությանը հաղորդեցեք, որ մենք վճռականապես պնդում ենք, որ թուրքական զորքերն անհապաղ հեռանան Մոսկվայում որոշված սահմանից այն կողմ»: Չիչերինը զգուշացնում էր, թե ինչպիսի ճակատագրական հետևանքների կարող է հանգեցնել թուրքական և կարմիր բանակի զորամասերի ընդհարումը[107]:

Այս դիվանագիտական քայլը ամրապնդվեց կարմիրբանակային ուժի ցուցադրումով. ապրիլի 13-ին 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը վերջնագիր ներկայացրեց թուրքական զորքերի հրամանատարությանը՝ անհապաղ Ալեքսանդրապոլից հեռանալու մասին: Փաստաթղթից տեղեկանում ենք, որ մինչև այդ Ղալթախչի կայարանում երկու հրամանատարները (Հեկկերը և Կարաբեքիր փաշան) ունեցել են հանդիպում, որպես երկու բանակների բարեկամության ու դաշինքի ամրապնդման արտահայտություն: Հեկկերը ցավով նշել է, որ ստիպված կլինի զորամասեր մտցնել Ալեքսանդրապոլ, եթե չտեղեկանա, որ սկսվել է թուրքական զորքերի հեռացումը[108]:

---

[107] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան ..., էջ 514:
[108] Բանբեր Հայաստանի արխիվների (ԲՀԱ), 1978, թիվ 1, էջ 142:

Հաջորդ օրը, ապրիլի 14-ին, Թուրքիայի արտգործկոմիսար Սիմեդ Մուխտարը պատասխանեց, որ թուրքական զորքերի հեռացումը տեղի կունենա մեկ շաբաթվա ընթացքում, սկսած ապրիլի 15-ից[109]:

Ապրիլի 21-ին Երևանի ուղղության զորքերի հրամանատար Վելիկանովը, 11-րդ կարմիր բանակի հրամանատարության դիրեկտիվի համաձայն, տվեց համապատասխան հրաման[110]: Ապրիլի 22-ին թուրքական վերջին զորամասերը հեռացան Ալեքսանդրապոլից: Նույն օրը կարմիր բանակի զորմասերը մտան Ալեքսանդրապոլ և կանգնեցին պետական սահմանում:

3. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԽՆԴԻՐԸ

Խորհրդային Հայաստանի փաստը պետք է որ փոխեր Ադրբեջանի վերաբերմունքը, վերջ տար նրա նվաճողական նկրտումներին ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպես էլ Զանգեզուրի ու Նախիջևանի նկատմամբ: Ադրբեջանի վերաբերմունքի շրջադարձը, թեկուզ և ձևականորեն, սպասեցնել չտվեց:

Հայաստանի խորհրդայնացման մասին հեռագիրն ստանալու և քննարկելու կապակցությամբ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի միացյալ նիստը հեղկոմի նախագահ Նարիմանովին հանձնարարեց հեղկոմի անունից կազմել հռչակագիր, նշելով, որ Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Հայաստանի միջև այլևս սահման գոյություն չունի, Զանգեզուրը և Նախիջևանը անցնում են Հայաստանին, Ղարաբաղի լեռնային մասին տրվում է ինքնորոշման իրավունք, երկու հանրապետությունները կնքում են ռազմական ու տնտեսական անխախտ դաշինք, հրաման է տրվում Հայաստանի դեմ ռազմական գործողությունները դադարեցնելու մասին:

Նոյեմբերի 30-ին Ադրբեջանի հեղկոմն ընդունեց համապատասխան հռչակագիրը, որով խոր ուրախության զգացումով ողջունում էր «իմպերիալիզմի գործակալ դաշնակցականների իշխանության լծից եղբայրական հայ ժողովրդի ազատագրումը», մերկացնում էր «Անտանտին ծախված դաշնակցական ու մուսավաթական կառավարություններին», որ «ստեղծել էին ղարաբաղյան, զանգեզուրյան, նախիջևանյան և այլ տարածքային հարցեր», և որպիսիք նրանք անկարող էին լուծել: Իսկ Խորհրդային Ադրբեջանը դա կարողացավ լուծել Խորհրդային Հայաստանի համար: Հռչակագիրը հայտարարում էր, որ այդ տարածքային հարցերն

---

[109] Կոմունիստ, 19 ապրիլի 1921 թ.:
[110] ԲՀԱ, 1978, թիվ 1, էջ 145-146:

այլևս գոյություն չունեն երկու դարավոր հարևան ժողովուրդների միջև, որոնք այժմ, համախմբվելով, կուռ շարքերով գնալու են դեպի միջազգային կապիտալի լծի վերջնական ջախջախումը:

Այսպիսի ոգևորության պայմաններում Ադրբեջանի հեղկոմն ազդարարում էր, որ Զանգեզուրի ու Նախիջևանի գավառների տարածքները համարվում են Խորհրդային Հայաստանի անբաժան մասը, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում էր ինքնորոշման լրիվ իրավունք[111]:

Հռչակագիրը հրապարակվեց Բաքվի «Կոմունիստ» թերթում դեկտեմբերի 2-ին:

Նոյեմբերի 30-ին հռչակագրի ընդունման մասին Ադրհեղկոմը, իր նախագահի և արտգործժողկոմի ստորագրություններով ազդարարեց «Բոլորին, բոլորին, բոլորին» դիմումով: Խորհրդային Ադրբեջանի անունից հայ ժողովրդին հայտնվում էր Ադրհեղկոմի նոյեմբերի 30-ի որոշման մասին: Այստեղ Լեռնային Ղարաբաղին վերաբերող որոշումը տարբերվում էր հռչակագրից: «Այսօրվանից,- կարդում ենք դիմումի մեջ,- վերացված են հայտարարվում սահմանների մասին վեճերը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են ՀՍԽՀ մասերը[112]: Որոշում-դիմումը տպագրվել է Երևանի «Կոմունիստ» թերթում դեկտեմբերի 7-ին:

Հայաստանի խորհրդայնացմանը նվիրված Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում ևս Ադրհեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը հրապարակեց հռչակագիրը, Լեռնային Ղարաբաղին ինքնորոշման իրավունք տալու տարբերակով: Ընդ որում հետաքրքիր է հանդիսավոր նիստում ընդունված բանաձևը, որում, «պրոլետարական ուրախությամբ» ընդգծելով Հայաստանում խորհրդային հեղափոխության հաղթանակի փաստը, և հավանություն տալով Նարիմանովի հրապարակած պատմական հռչակագրին, նշվում էր, որ այն մեկընդմիշտ վերջ է տվել դարավոր ազգամիջյան գզվռտոցներին և արյունահոս պատերազմներին «Հայաստանի ու մուսուլմանական աշխարհի միջև»[113]: Ընդգծում ենք՝ մի կողմում Հայաստանն է, մյուսում՝ մուսուլմանական աշխարհը:

Հռչակագրի երկու տարբերակները կրկնվել են շատ անգամ, բազմաթիվ փաստաթղթերում, բազմաթիվ ղեկավար գործիչների կողմից: Օրինակ, Օրջոնիկիձեի զեկուցումը դեկտեմբերի 1-ին Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում, նվիրված Հայաստանում խորհրդային իշխանության հաս-

---

[111] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 600-601.
[112] Նույն տեղում, էջ 601-602:
[113] Նույն տեղում, էջ 604-605:

տատմանը[114]: Նույնի դեկտեմբերի 2-ի հաղորդագրությունը (Բաքվից) Լենինին և Ստալինին, Հայաստանի խորհրդայնացման մասին տեղեկատվությամբ հանդերձ (տպագրվել է Մոսկվայի «Պրավդա» թերթում դեկտեմբերի 4-ին)[115]: ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի դեկտեմբերի 2-ի տեղեկատվությունը ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Լեգրանին[116]: Ստալինի «Կեցցե Խորհրդային Հայաստանը» հոդվածը[117], տպագրված «Պրավդա» թերթում (դեկտեմբերի 4-ին):

Կարելի է օրինակ բերել նաև Բաքվի «Կոմունիստ» թերթը: «Կոմունիստ Գրուզիի» թերթը տպագրել է դեկտեմբերի 5-ին Բաքվից ստացած «Դաշնակցական հաշտությունը և Խորհրդային Ռուսաստանը» թղթակցությունը, հենվելով Բաքվի «Կոմունիստ» թերթի վրա: Վերջինս, ի հակադրություն դաշնակցականների կնքած Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրի, նշել է, թե Խորհրդային Ռուսաստանը (ինչու ոչ Ադրբեջանը) բարձրաձայն հայտարարում է մինչև այժմ վիճելի Զանգեզուրի, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի Խորհրդային Հայաստանին միանալու մասին: Բաքվի «Կոմունիստը» միաժամանակ քննադատելով ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնին և Ազգերի լիգային, ազդարարում է, թե Խորհրդային Ռուսաստանը վերականգնում է Հայաստանը նրա ազգագրական սահմաններում, թե գերազանցապես հայերով բնակեցված բոլոր մարզերը անպայման կմիացվեն Անկախ Սոցիալիստական Խորհրդային Հայաստանին[118]: Տարածքային պարգևը Խորհրդային Ռուսաստանին է վերագրել նաև դեկտեմբերի 5-ին Մոսկվայից ստացված ռադիոհաղորդագրությունը[119] :

Ադրբեջանի հեղկոմի նոյեմբերի 30-ի հռչակագրի հրապարակումների միջև գոյություն ունեցող տարբերությանը ուշադրություն է նվիրել Հայաստանի ղեկավարությունը, և փորձել է դա հասցնել Ադրբեջանի ղեկավարությանը: Մեր կարծիքով այդ մասին է վկայում հետևյալ փաստաթուղթը: 1921 թ. հունվարի 19-ին Ալ. Բեկզադյանը Ղարաքիլիսայից (հավանորեն գտնվում էր Մոսկվա մեկնելու ճանապարհին, ռուս-թուրքական բանակցություններին մասնակցելու համար) Երևան, Ս. Կասյանին և Ա. Մռավյանին (արտգործժողկոմի տեղակալ) ուղարկել է հետևյալ հեռագիրը. «Զանգեզուրի, Ղարաբաղի և Նախիջևանի մասին հռչակագիրը թողել ենք Երևանում: Խնդրում եմ Դիլիջանից կապավորների միջոցով բերված նյու-

---

[114] Г. К. Орджоникидзе. Статьи и речи. Том 1, М., 19564 с. 139-141.
[115] Նույն տեղում, էջ 142:
[116] Коммунист, 7 декабря, 1920 г.
[117] Ի. Ստալին, Երկեր, Հ. 4, էջ 458-459:
[118] Коммунист Грузии, 8 декабря 1920 г.
[119] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 607.

թերի հետ միասին այն Աղստաֆայով ուղարկել Բաքու, որպեսզի հանձնեմ Ադրհեղկոմին»[120]:

Սույն հեռագիրը նույն օրը Երևան հաղորդվել է մի քանի անգամ, հավանորեն ելնելով հարցի կարևորությունից: Հեռագրերից մեկում կա որոշ, ոչ էական, տարբերություն. «Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի մասին հռչակագիրը թողել ենք Երևանում: Անհրաժեշտ է նրա բովանդակությունը ուղիղ հեռագրաթելով հաղորդել Ղարաքիլիսա, որտեղ ես այն կվերցնեմ և համեմատելով պատճենի հետ, Բաքվում կհանձնեմ Ադրհեղկոմին»[121]: Երևում է, որ այս հեռագիրն ուղարկվել է մինչև Ղարաքիլիսա հասնելը, որևէ երկաթուղային կայարանից:

Ինչու պետք է Ադրբեջանի որոշումը Բաքվին հանձներ Հայաստանը, եթե այդ որոշման մեջ ամեն ինչ լիներ նորմալ: Ուրեմն, նրանում Հայաստանի համար եղել է անհասկանալի մի բան, որևէ հարց:

Մեր ենթադրությունը հաստատող մի փաստարկ ևս: Հայաստանի հեղկոմը, Ս. Կասյանի ստորագրությունը կրող նամակով, Ադրբեջանի խորհրդային կառավարությանը Զանգեզուրի, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի մասին նոյեմբերի 30-ի պատմական փաստաթղթի համար շնորհակալություն է հայտնել բավական մեծ ուշացումով 1921 թ. հունվարին (օրը նշված չէ)[122]: Դա պատահական լինել չէր կարող: Ինչպես տեսանք վերը, մինչև այդ Հայաստանի իշխանությունները զբաղվել են Ադրբեջանի հռչակագրի իսկության հարցով, որից հետո միայն հայտնվել է շնորհակալությունը:

Պատմագրության մեջ կարծիք է հայտնվել, թե հրապարակված տարբերակներից իսկականը Լեռնային Ղարաբաղը Հայաստանի մաս ճանաչելն է, իսկ մյուս նրան ինքնորոշման իրավունք տալու տարբերակը ադրբեջանական մամուլի կատարած կեղծիքն է[123]:

Ավելի էական է, սակայն, ոչ թե հռչակագրի մեջ տեղ գտած հակասության խնդիրը, այլ այն վերաբերմունքը, որ դրսևորեց Ադրբեջանն իր իսկ որոշման նկատմամբ այն հրապարակելուց հետո: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, հռչակագիրն ընդունվել էր ոչ թե իրականացնելու, այլ Հայաստանի խորհրդայնացումը ապահովելու, դաշնակ-

---

[120] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 81, թ. 3:
[121] Նույն տեղում, գ. 85, թ. 19:
[122] ՀԱԱ, ֆ. 113 ց. 3, գ. 4, թ. 13: Տես նաև Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 609-610.
[123] Рем Казанджян. Декларация ревкома (1920 г.) о Зангезуре, Карабахе и Нахичевани: "Республика Армения", 17 июня 1992 г.

ցականների իշխանությանը «զինաթափելու» համար, այլ կերպ ասած այն խաբուսիկ քայլ էր:

Նոր իրադրության պայմաններում Ղարաբաղի ազատագրական պայքարի համար ստեղծվել էր ծանր վիճակ: Ելքը Զանգեզուրի հետ կապի ամրապնդումն էր: Դրոյի հրամանով Ղարաբաղի ժողովրդական ապստամբության ղեկավար Թևանը (Թևան Ստեփանյան) նշանակվեց Նժդեհի տեղակալ Լեռնային Ղարաբաղում: Այնուհետև նա մեկնեց Զանգեզուր, Կապանում հանդիպում ունեցավ Գարեգին Նժդեհի հետ՝ համապատասխան օգնություն և հրահանգներ ստանալու համար: Դա 1920 թ. նոյեմբերի կեսերին էր, Գորիսի գրավումից մի քանի օր անց, գրել է Նժդեհը իր հուշերում: Իսկ 1921 թ. հունվարի 3-ի նամակով ղարաբաղցիները նորից էին օգնություն խնդրում Նժդեհից. «Խնդրում ենք ձեզանից,- ասված է նամակում,- խնայել Ղարաբաղի հայ ժողովրդին, որն սպասում է ձեզ գիշեր-ցերեկ»[124]: Օգնություն ցույց տրվեց նյութապես (զենք, գումար) և զինված ուժերով: Զանգեզուրից Ղարաբաղ մեկնեց չորս վաշտ, Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ: Իսկ Թևանի զինյալների թիվը հասավ 1800-ի[125]: Ղարաբաղի ազատագրական պայքարի համար նպաստավոր ժամանակաշրջան էր 1921 թ. փետրվար-ապրիլը, երբ Կարմիր բանակի դիվիզիաները զբաղված էին ռազմական գործողություններով Հայաստանում ու Վրաստանում:

1920 թ. դեկտեմբեր-1921 թ. հունվար ամիսների համար տվյալներ են հայտնում 11-րդ բանակի հետախուզական բաժինը, նրա բանակային ամփոփագրերը: Այսպես, դեկտեմբերի 26-ի համար տեղեկացվում է, թե Խծաբերդի շրջանում (Շուշիից հարավ) երևացել է Զանգեզուրից ժամանած բանդա, ավազակ Թևանի ղեկավարությամբ: Խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար նա հիշյալ շրջանում հավաքագրում է տեղական բնակչությանը: Իրականում Թևանը տեղական գործիչ էր և ազատագրական պայքարում էր գտնվում տակավին 1918 թ., երբ նոր էր վերադարձել Կովկասյան ռազմաճակատից: Նա ռուսական բանակի սպա էր, մինչև այդ կռվել էր Արևելյան ռազմաճակատում:

Հետագա օրերի համար տեղեկագրերը հայտնում են այսպիսի տվյալներ. Ջեբրայիլի և Կարյագինոյի շրջանում գործում էր 600 մարդուց բաղկացած հեծելազոր, որի նպատակն է ոտքի հանել ամբողջ Լեռնային Ղարաբաղի բնակչությանը և տարբեր կողմերից հարձակում կազմակերպել Շուշիի վրա: Ենթադրվում էր, որ այդ դաշնակցական բանդան գործելու էր Թևանի հետ միասին (դեկտեմբերի 31): Դաշնակցականները գրավել են մի քանի գյուղ, իսկ Տեղ գյուղի հայ բնակչությունը շրջակա մուսուլմա-

---

[124] Հայրենիք (Բոստոն), 1925 թ., թիվ 9, էջ 84-86:
[125] Հ. Աբրահամյան, Թևան: Երևան, 1998, էջ 52:

նաբնակ գյուղերին խնդրել էր թույլ տալ շարժվել դեպի Շուշի, այն կարմիրներից մաքրելու համար (հունվարի 15): Թևանի ղեկավարությամբ ստեղծվել էր 3 մարդուց բաղկացած խումբ, որն զբաղվելու էր գրավոր միջոցներով հակախորհրդային քարոզչությամբ (22 հունվարի), այսինքը բնակչությանը ապստամբության էր կոչելու:

Տեղական բնակիչների հայտնած տեղեկությունների համաձայն, Լեռնային Ղարաբաղը ազատագրելուց հետո այն միանալու էր Լեռնահայաստանին (24 հունվարի)[126]:

Այլ կարգի տվյալներ է պարունակում մի ուրիշ պաշտոնական փաստաթուղթ Շուշիի գավառային հեղկոմի 1921 թ. փետրվարի 15-ի զեկուցագիրը Ադրբեջանի հեղկոմի նախագահին: Նա հայտնում է, թե Ղարաբաղի քաղաքական դրությունը ավելի է վատթարացել այն բանից հետո, երբ Կարմիր բանակը հեռացավ Զանգեզուրից (հասկանալ նրա պարտությունը 1920 թ. նոյեմբերին): Օգտվելով մեր (այսինքն խորհրդային իշխանության) թուլությունից, Զանգեզուրում ստեղծել են «ինքնավար կառավարություն» (նկատի ունի «Ինքնավար Սյունիքը»), որը որոշել է Զանգեզուրում և Ղարաբաղում հաստատել դաշնակցականների գերիշխանությունը:

Այդ նպատակով (դեռևս չկարողանալով հարձակվել դեպի Քրդստան) դաշնակցականները ապստամբություն են բարձրացրել Շուշիի գավառի 2-րդ՝ Վարանդայի տեղամասում (Վարանդան և մասամբ Դիզակն ու Խաչենը), այն հաշվով, որ միավորվեն 1-ին՝ Խանքենդի տեղամասի հետ և Լեռնային Ղարաբաղը լրիվ կտրեն դաշտայինից:

Ապստամբության առաջնորդը Թևանն է, որ նշանակվել է Նժդեհի կողմից և նրանից էլ ստանում է օգնություն (նյութական, մարդկային): Առայժմ ապստամբությունն ընդգրկում է ամբողջ Վարանդան:

Զեկուցագիրը տեղեկացնում է բնակչության շրջանում Թևանի ազդեցության մասին: Ամենուրեք գյուղերում, ուր այցելում են Թևանի մարդիկ, բնակչությունը որևէ դիմադրություն ցույց չի տալիս: Այդ ընթացքում սովորաբար ցրվում են կոմունիստական բջիջները, մի մասն էլ անցնում է Թևանի կողմը, իսկ երրորդները փախուստի են դիմում: Պատահում է, որ կոմունիստները զինվորական ջոկատներին խփում են թիկունքից, որտեղ ընդամենը մեկ օր առաջ գոռում էին «Կեցցե խորհրդային իշխանությունը»:

Դրա շնորհիվ, շարունակում է զեկուցագիրը, դաշնակցականները տիրել են ամբողջ Վարանդային և սպառնում են Խանքենդի տեղամասին, որտեղ նրանց համար դժվար չէ ապստամբության տարածումը: Թուլացնելով ուշադրությունը ծախ թևում՝ Շուշիի շրջանում, ապստամբները զար-

---

[126] ՀԱԱ, ֆ. 1022 ց. 8, գ. 189, թ. 5-6:

գացնում են իրենց հարձակումը Ասկերանի ուղղությամբ, դեպի Աղդամ, հասնելով նրանից 16 վերստ հեռավորության վրա:

Ապստամբությունը ճնշելու համար Շուշի էր ժամանել Կարաևը (Ադրբեջանի ռազմածովային ուժերի ժողկոմ), հատուկ նշանակման ջոկատով: Այդ կապակցությամբ ժամանակավորապես դադարեցվել է ապստամբների առաջխաղացումը տվյալ տեղամասում: «Այժմ դաշնակցականները,- կարդում ենք զեկուցագրում,- սպասողական դրության մեջ են, իսկ Թևանը առայժմ սկսում է հայ գյուղացիության հարկադիր հավաքագրում»:

Շուշիի հեղկոմի նախագահը Կարաևի ջոկատը համարում էր փոքրաթիվ և անհրաժեշտ էր գտնում նոր զորամասեր ուղարկելը, որի վրա նա «հատուկ ուշադրություն» էր դրավիրում:

Զեկուցագրի հեղինակը խոստովանում է, որ դրությունը հանգիստ չէր նաև Լեռնային Ղարաբաղի մյուս շրջաններում, որը նա անվանում է թիկունք: «Եթե մենք վստահ լինեինք այդ շրջանների կայունության պահպանման վրա, ապա մարտական տեղամասի վտանգը կկորցներ իր սպառնալիքի ուժը»: Սակայն բանն այն է, շարունակում է զեկուցագրի հեղինակը, որ «թիկունքը դա եռացող կաթսա է, որի շիթերը կարող են այրել խորհրդային իշխանության ապարատները»: Թիկունքի անվան տակ հասկացվում էր հյուսիսային Զանգեզուրի մի մասը և ամբողջ Քրդստանը:

Պետք է նկատել, որ Քրդստանի նման վիճակն էր փորձում օգտագործել Նժդեհը՝ նրա ղեկավարների հետ բանակցություններ վարելու և հայ-քրդական հակախորհրդային համագործակցություն հաստատելու նպատակով, և որի մասին կխոսվի Զանգեզուրի ինքնապաշտպանության կապակցությամբ:

Զեկուցագրում ևս կան ուղղակի տեղեկություններ այդ մասին: Դաշնակցականները, ասված է նրանում, նրանց (նկատի ունի հյուսիսային Զանգեզուրը և Քրդստանը) առաջարկում են միանալ, որի դեմ, սակայն, հեղկոմը պահանջում էր ձեռնարկել համապատասխան միջոցառումներ[127]:

Այսպիսով, ակնհայտ է, որ Շուշիի հեղկոմի զեկուցագիրը ուղարկելու պահին, 1921 թ. փետրվարի կեսերին, Լեռնային Ղարաբաղը գտնվում էր ապստամբական վիճակում:

Շուշիի հեղկոմի զեկուցագրին հաջորդեց «Ղարաբաղի դրության մասին» հարցի քննարկումը Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի նիստում, որն ընդունեց հետևյալ որոշումը. 1. անմիջապես Ղարաբաղ գործուղել Ա. Գ. Կարաևին, ադրբեջանական կարմիր բանակի ջոկատով «հակահեղափոխական ելույթները ճնշելու համար»: 2. Ղարաբաղի վրա դարձնել ամենալուրջ ուշադրությունը, քաղաքական ու կուսակցական աշխա-

---

[127] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 611-614.

տողներ մատակարարելու իմաստով: 3-րդ կետը վերաբերում էր կուսգավկոմի պատասխանատու քարտուղարի նշանակմանը[128]:

1921 թ. փետրվար-մարտ ամիսներին, երբ Կարմիր բանակը Անդրկովկասում զբաղված էր Հայաստանում ծագած ապստամբությունը ճնշելու և Վրաստանում մենշևիկների իշխանությունը տապալելու առաջադրանքների կատարմամբ, Լեռնային Ղարաբաղում նպաստավոր պայմաններ էին ստեղծվել ապստամբների նորանոր հաջողությունների համար: Նրանց ոգևորում էր Հայրենիքի փրկության կոմիտեի գոյատևումը և Զանգեզուրի ապստամբների ցույց տված օգնությունը:

Այդ օգնության մասին պատմվում է Նժդեհի հուշերում: Սյունիքի առաջին զորամասը Ղարաբաղ էր ժամանել 1921 թ. հունվարի կեսերին, որը տեղացիների հետ միասին կարճ ժամանակում բոլշևիկներից մաքրեց ամբողջ Դիզակը: Մի քանի օր անց կարմիրները պարտություն կրեցին Վարանդայում և հետ քաշվեցին հարավ՝ Հադրութ: Մարտի 8-ին խորհրդային զորքերը կորցրեցին Ղարաբաղում իրենց վերջին հենակետը: «Մերոնց ճակատային մի խիզախ գրոհից հանկարծակիի եկած թշնամին խուճապով փախչում է դեպի Ջեբրայիլ, թողնելով հարյուրավոր սպանված, 150 գերի, ռազմամթերք, գնդացիրներ, հացի պաշար և այլն»: Այսպիսով, շարունակում է Նժդեհը, Լեռնային Ղարաբաղը թոթափում է խորհրդային լուծը և միանում Սյունիքին[129]:

Թևանի ուժերի կողմից ազատագրված Խոզաբերդ, Խանծաձոր, Հին Թաղեր, Դոլանլար, Պետրոսաշեն և Արփագյադուկ գյուղերը հենակետ դարձան ապստամբությունը ծավալելու համար: «Հեծյալ և հետևակ ուժերով ես,- ցուցմունք է տվել Թևանը 1941 թ. հարցաքննության ժամանակ,- սկսեցի հարձակումը 11-րդ և 12-րդ բանակների դեմ, անընդմեջ կռիվներով գրավեցի Լեռնային Ղարաբաղի Դիզակի ու Վարանդայի բոլոր գյուղերը, հասա ընդհուպ Ասկերան՝ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի Աղդամի շրջանի սահմանը: Մեր ջոկատները, շարունակում է Թևանը, զինամթերքով և սննդամթերքով համալրվում էին 11-րդ և 12-րդ բանակների դեմ կռիվների ընթացքում ասպատակությունների միջոցով»:

Գրված շրջաններում հեղկոմներին փոխարինում էր ռազմական իշխանությունը, Թևանի գլխավորությամբ՝ որպես, ինչպես ինքն է բնութագրում, Դաշնակցություն կուսակցության Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի հրամանատար: Ապստամբների շտաբը գտնվում էր Սարուշեն գյու-

---

[128] Նույն տեղում, էջ 620:

[129] Հայրենիք, 1925 թ., թիվ 9, էջ 84-86:

ղում, նրա պետն էր Հայաստանից գործուղված գնդապետ Եգոր Տեր-Ավետիքյանը[130]:

Լեռնային Ղարաբաղի ապստամբների հաջողությունները, սակայն, ունեին ժամանակավոր բնույթ: Հայաստանում և Վրաստանում իր խնդիրները լուծելուց հետո Կարմիր բանակը առաջադրանք ստացավ ճնշել Ղարաբաղի և Զանգեզուրի ապստամբական շարժումը: Զանգեզուրի սահմաններին մոտենալու համար Կարմիր բանակը արևելքում նախ վերջ էր տալու Լեռնային Ղարաբաղի ապստամբությանը:

Ռազմական տեսակետից Ղարաբաղի և Զանգեզուրի ապստամբությունների ճնշումը Կարմիր բանակի համար մեկ ընդհանուր գործողություն էր: Դրան համընթաց լուծվելու էր Քրդստանի անհնազանդության վերացման խնդիրը:

Զանգեզուրի խմբավորման վերացման 11-րդ Կարմիր բանակի 1921 թ. ապրիլի 24-ի պլանի համաձայն, համապատասխան առաջադրանք էր ստանում արևելքից՝ Շուշիի և Կարյագինոյի գավառներից հարձակվող 84-րդ հրաձգային բրիգադը: Կարյագինոյի շրջանից խումբ էր առանձնացվելու, Խուդափերինի գետանցը գրավելու՝ Պարսկաստան հակառակորդի նահանջը խափանելու համար: Ընդ որում, պլանում նշվում էր, որ «դաշնակցականների ջախջախված բանդաները Շուշի-Կարյագինոյից և Նոր Բայազետից հետ են քաշվում դեպի Լեռնային Զանգեզուր»[131]:

Նժդեհի հուշերում պատմվում է այդ անհաջողությունների ու պարտության մասին, որոնք հաջորդեցին Վրաստանի անկմանը (նկատի ունի մենշևիկյան Վրաստանի պարտությունը), հուսահատություն ստեղծելով ղարաբաղցիների մեջ: Նժդեհը մեջբերել է իր էքսպեդիցիոն զորամասի պետ Տեր-Պետրոսյանի ապրիլի 8-ի գրությունն այն մասին, թե ինքը կասկածում է դրությունից իրենց ապահով դուրս գալու մասին: Թշնամին որոշել է, գրել է Տեր-Պետրոսյանը մի այլ գրության մեջ, երկու կրակի մեջ առնել և ոչնչացնել Դիզակի մեր զորամասը:

Ապրիլի 15-ին կարմիրները փորձեցին սեպաձև խրվել Ղարաբաղի ու Սյունիքի միջև, բաժանել նրանց: Ապստամբների դեմ հանվել էին նաև Դիզակի ու Զաբուղի միջև ընկած տարածքի թուրքերը, որոնց թշնամական գործողություններն սկսվել էին ապրիլի 7-ին: Սյունիքի վաշտերը, Գարեգին Ամիրջանյանի հրամանատարությամբ, լավ ջարդ տվեցին թուրքերին և ապահովեցին իրենց նահանջը դեպի Զանգեզուր: Այդ մասին Նժդեհը գրել է. «Վաղուց է ինչ անհանդուրժելիորեն ծանրացել է դրությունը, բայց և այնպես պետք էր դիմանալ Ղարաբաղում, մինչև որ կպարզվեր Երևանի դրութ-

---

[130] Նորք, 1990թ., թիվ 6, էջ 83-93:
[131] ԲՀԱ, 1978 թ., թիվ 1, էջ 148:

յունը... Ապրիլի 18-ի գիշերը բուն Զանգեզուրի ուժերը իրենց քաջ հրամանատար Ամիրջանյանի ղեկավարությամբ անցնում են Զաբուղը..., ճեղքում կարմիրների պաշարման գիծը և հնարավորություն ստեղծում մեր վաշտերի համար՝ անկորուստ անցնելու Սյունիք»[132]:

Լեռնային Ղարաբաղում հաստատվել էր Ադրբեջանի գերիշխանությունը: Նարիմանովի նոյեմբերի 30-ի հռչակագրի մասին այլևս խոսք լինել չէր կարող: Դեկրետն ընդունվել էր բոլորովին այլ նպատակով:

Մի այդպիսի հերթական խաբեություն էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. հունիսի 3-ի որոշումը, որում ասված է. «Հայկական կառավարության հայտարարության մեջ նշել Հայաստանին Լեռնային Ղարաբաղի պատկանելու մասին[133]:

Հունիսի 12-ին Հայաստանի կառավարությունը, Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ, ընդունեց համապատասխան հայտարարություն-որոշում, որը լույս տեսավ Երևանի «Խորհրդային Հայաստան» թերթում հունիսի 19-ին հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով, և Բաքվի «Բակինսկի ռաբոչի» թերթում, հունիսի 22-ին, ինչպես նաև տարածվեց տպագիր թռուցիկի ձևով: «Ադրբեջանի ՍԽՀ հեղկոմի դեկլարացիայի (նոյեմբերի 30-ի հռչակագիրը պաշտոնապես դեռ հիշվում էր, քանի որ հակառակը չէր ընդունվել - Վ. Ղ.) և Հայաստանի ու Ադրբեջանի ՍԽՀ-ների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղը այժմյանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մասը»[134]:

Մինչև Հայաստանի կառավարության հայտարարությունը Կովկասյան բյուրոյի պլենումի որոշումից անմիջապես հետո, հունիսի 6-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը քննարկեց «Ղարաբաղ և Զանգեզուր ներկայացուցիչ ուղարկելու մասին հարցը և որոշեց ներկայացուցչի ընտրությունը հետաձգել մինչև Ալ. Մյասնիկյանի վերադարձը[135]:

Ի դեպ, ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը դեռևս մայիսի 23-ին քննարկելով Լեռնային Ղարաբաղի դրության հարցը, որոշել էր այնտեղ ՀՍԽՀ լիազոր նշանակել Հակոբ Հովհաննիսյանին, հեռագրով նրան Բաքվից հրավիրել Թիֆլիս «ընկ. Բեկզադյանից դիրեկտիվներ և հրահանգ ստանալու համար»[136]: Այս որոշումը նշանակում էր, որ Լեռնային Ղարաբաղի ապստամբությունը ճնշելուց և Կարմիր բանակի կողմից վերագրավելուց հետո

---

[132] Հայրենիք, 1925 թ., թիվ 9, էջ 84-86:
[133] Нагорный Карабах в 1918-1923 гг., с.623.
[134] Խորհրդային Հայաստան, 19 հունիսի 1921 թ.:
[135] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 9:
[136] Նույն տեղում, թ. 5:

Խորհրդային Հայաստանը փորձում էր այնտեղ հաստատել իր իշխանությունը:

ՀԿ(բ)Կ Կենտկոմը հունիսի 15-ին, արդեն Հայաստանի կառավարության հայտարարությունից հետո, որոշեց որպես ներկայացուցիչ Լեռնային Ղարաբաղ ուղարկել Ասքանազ Մռավյանին, նրա հետ միասին՝ Հակոբ Հովհաննիսյանին, Դրաստամատ Տեր-Սիմոնյանին և Փիրումովին[137]: Նույն օրը առանձին որոշում ընդունվեց հայտարարությունը տպագրելու մասին[138]:

Հայաստանը դիմում էր գործնական քայլերի իր իշխանությունը Լեռնային Ղարաբաղում հաստատելու համար: Մինչև այնտեղ մեկնելը Ասքանազ Մռավյանը Թիֆլիսում Հայաստանի ներկայացուցչության միջոցով պատվիրել տվեց համապատասխան կնիքներ, պատվիրեց ձեռք բերել հայերեն գրամեքենա, բազմացնող մեքենա և այլն, ինչպես նաև խոսել Կովկասյան բյուրոյի քարտուղար Ֆիգատների հետ «Ղարաբաղում իր առաքելության մասին»: Երկու կնիքներն ունեին հետևյալ տեքստը, հայերեն և ռուսերեն լեզուներով. «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն. Ղարաբաղի արտակարգ կոմիսար» և «Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի Զանգեզուրի բյուրո»[139]: Ուրեմն, Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի համար նախատեսվում էր ընդհանուր կուսակցական ղեկավարում:

Հայտնի է, որ Ղարաբաղ մեկնելու ճանապարհին Ասքանազ Մռավյանը կանգ է առել Թիֆլիսում: Հունիսի 22-ին նա գտնվում էր այստեղ և սպասում էր Օրջոնիկիձեի ու Հուսեյնովի (Ադրբեջանի արտգործժողկոմ) վերադարձին, հայտնել է Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Շահվերդյանը հեռախոսային խոսակցության ժամանակ: Իսկ Մռավյանը, նույն կապի ժամանակ, հայտնել է, թե Բաքվից Հուսեյնովը խնդրել է սպասել իրեն: Վաղը երեկոյան, շարունակում է Մռավյանը, ես նրա հետ կվերջացնեմ և գիշերը կմեկնեմ (Լեռնային Ղարաբաղ): Մռավյանը տեղեկացնում է նաև, որ Իսահակ Դովլաթյանը (Ադրբեջանում ՀՍԽՀ լիազոր-ներկայացուցիչ) իրեն հայտնել է դրամ և «Ֆորդ» ավտոմեքենա ուղարկելու մասին[140], որը կատարվել էր հաջորդ օրը[141]: Շուշիում գտնվելու օրերին Մռավյանը հաստատել է դրանց ստացումը[142]:

---

[137] Նույն տեղում, թ. 10:
[138] Նույն տեղում:
[139] Նույն տեղում, ֆ. 114, g. 2, գ. 83, թ. 194:
[140] Նույն տեղում, ֆ. 114, g. 1, գ. 145, թ. 81 և 86:
[141] Նույն տեղում, գ. 11, թ. 40:
[142] Նույն տեղում, գ. 145, թ. 68:

Հուսեյնովի զգուշացումը չարագույժ էր: Բաքուն փորձելու էր կանխել Մռավյանի Ղարաբաղ մեկնելը: Եվլախի երկաթուղային կայարանում Մռավյանին ուղեկցող Ադրբեջանի ռազմածովային ժողկոմ Ա. Կարաևը առաջարկեց մեկնել Բաքու, Նարիմանովի հետ հարցեր պարզելու համար: Մռավյանը, սակայն, շարունակեց ճանապարհը, Օրջոնիկիձեին ուղարկելով համապատասխան հեռագիր: Նա մի քանի օր գտնվեց Շուշիում, փաստորեն չհասցնելով անցնել իր պարտականությունների կատարմանը, երբ գործերի ընթացքը շրջվելու էր:

Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև գոյություն ունեցող տարածքային վեճերը դարձան քննարկման առարկա 1921 թ. կեսերին: Այդ նպատակով Կովկասյան բյուրոյի 1921 թ. մայիսի 2-ի որոշումով ստեղծվեց հանձնաժողով, Կիրովի նախագահությամբ, և Անդրկովկասի հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, դրանց սահմանները որոշելու և Կովկասյան բյուրոյի պլենումին եզրակացություն ներկայացնելու համար[143]: Հանձնաժողովում Հայաստանը ներկայացնում էր արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանը:

Հանձնաժողովի նիստերը կայացան հունիսի 25-27-ը: Հունիսի 25-ին հանձնաժողովի նիստն սկսվեց Ա. Բեկզադյանի ելույթով: Նա նախ ներկայացրեց Հայաստանի բացառիկ ծանր, կրիտիկական դրությունը, որի մեջ հայտնվել էր Մոսկվայի պայմանագրի պատճառով, որը նրան զրկել էր իր տարածքների կեսից և բնական ռեսուրսներից: Իսկ վերջին պատերազմը թողել էր 410 հազար գաղթականություն, որին հարկավոր էր բնակավորել և հողաբաժին տալ: Դրությունն այնպիսին էր, որ Հայաստանը, որպես ինքնուրույն քաղաքական միավոր, նշեց Ա. Բեկզադյանը, չէր կարող գոյատևել: Դրանից ելնելով, նա ծայր անհարժեշտ համարեց Ադրբեջանից և Վրաստանից Հայաստանի օգտին տարածքային կտրումներ կատարելը: Այդ տեսակետի հետ լրիվ համաձայնվել էր Ստալինը, երբ նրա հետ Մոսկվայում տեսակցել էին Ալ. Մյասնիկյանը և Ալ. Բեկզադյանը:

Այդ զիջումներն առաջարկվում էր կատարել հայերով հոծ բնակության շրջաններում «հանուն ընդհանուր համերաշխության և մեկընդմիշտ ամենաանկեղծ ու բարեկամական փոխհարաբերությունների հաստատման»: Տարածքային կտրումների մասին խոսքը վերաբերում էր հիմնականում Ախալքալաքի գավառին (Վրաստանից, 72 տոկոս հայեր) և Լեռնային Ղարաբաղին (Ադրբեջանից):

Պահպանվել են Հայաստանի պատվիրակության աշխատանքային փաստաթղթերը: Հավանորեն դրանց թվին է պատկանում նաև «Հայաստա-

---

[143] С. В. Хармандарян, Ленин и становление Закавказской федерации. Ереван, 1969, с. 101.

նի ժողկոմխորհի հիմնական պահանջները» խորագրով վավերագիրը: Այն անստորագիր է և ամենայն հավանականությամբ պատկանում է Ա. Մռավյանի գրչին: Փաստաթուղթը բաղկացած է վեց կետից. Լեռնային Ղարաբաղի բնակչության ազգային կազմը, հայերի տեսակարար կշիռը 85 տոկոս (այլ փաստաթղթերում հասնում է մինչև 95 տոկոսի):

Բնակչության պարզ, որոշակի արտահայտված կամքը իր բազմաթիվ համագումարներում՝ Հայաստանին միանալու իմաստով:

Ադրբեջանի տեղական իշխանությունների վարչական գործունեության աննպաստ բնույթը, ազգամիջյան ընդհարումներն ու վեճերը անհիվանդագին վերացնելու համար: Ազգային ճնշումը շարունակվում է: Դրնևազի դեպքերը հատկապես խորացրին Ադրբեջանի նկատմամբ հայ գյուղացիության անվստահությունը: Այդ իշխանությունների գործունեության բացասական արձագանքները Ղարաբաղի սահմաններից դուրս (Բաքու, Անդրկասպյան շրջան, Հյուսիսային Կովկաս):

Բնակչության թվում արտագաղթում է նաև մտավորականությունը, նաև կոմունիստներ, որն արյունաքամ է անում երկիրը:

Հայ բնակչությունը կորցնելով իր մշակութային կենտրոն Շուշին, մատնվել է ամենատխուր վիճակի: Նրան պետք է մշակութային կենտրոն, որը միաժամանակ ծառայի որպես վարչական կենտրոն:

Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին նրան տնտեսապես չի կտրում Ադրբեջանից, մասնավորապես հարթավայրային գոտուց: Ընդհակառակը, հայ բնակչության ազատագրումը վարչական ճնշումից և մաքսային սահմանների հանելը ավելի կամրապնդեն տնտեսական կապերը[144]:

Փաստաթուղթը օգնում է գաղափար կազմելու այն մասին, թե Հայաստանի ղեկավար գործիչները ժամանակին ինչ հիմնավորումներ կարող էին ունենալ մասնավորապես Լեռնային Ղարաբաղի պահանջատիրության ուղղությամբ:

Վրաստանի հանձնաժողովը «քաղաքական նկատառումներով» լրիվ մերժեց տարածքային կտրումների սկզբունքը և Ախալքալակի գավառի համար առաջարկեց ընդունել ստատուս քվո: Ավելին, իր հերթին նա պահանջ ներկայացրեց չեզոք գոտու մի մասի նկատմամբ: Հանձնաժողովի նախագահ Կիրովը պաշտպանեց վրացիներին՝ տարածքային կտրումների անթույլատրելիության կապակցությամբ:

Ադրբեջանական պատվիրակությունը ևս առարկեց Բեկզադյանին, հայտարարելով, թե իբրև լսած չէ, որ Լեռնային Ղարաբաղը թողնվում է Հայաստանին և թե այդ հարցի համար ինքը որևէ ցուցում չունի ստացած և

---

[144] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 7, թ. 142-143:

առաջարկեց հարցի լուծումը փոխադրել հաջորդ օրվա նիստ, խոստանալով մինչև այդ Բաքվից ստանալ համապատասխան հրահանգներ ու ցուցումներ: Առաջարկն ընդունվեց:

Հունիսի 26-ի նիստում քննարկվեց վրաց-ադրբեջանական սահմանային վեճը, ապա հայ-ադրբեջանականը: Ադրբեջանի պատվիրակությունը հայտարարեց, որ Բաքվից պատասխան չունի, ուստի հարցը շարունակում է բաց մնալ:

Ստեղծված իրադրության մեջ Բեկզադյանը առաջարկեց դադարեցնել հանձնաժողովի աշխատանքը և սահմանների մասին բոլոր հարցերը փոխադրել առաջիկայում կայանալիք Անդրկովկասյան կոնֆերանս, որը մերժվեց:

Հաջորդ և վերջին նիստը կայացավ հունիսի 27-ին: Հանձնաժողովը վերադարձավ հայ-վրացական վեճին: Վրացիները առաջարկեցին հանրաքվե անցկացնել ամբողջ չեզոք գոտում, այն դեպքում, երբ նախորդ օրը դա նրանք ընդունում էին գոտու միայն մի մասի համար: Բեկզադյանը խստորեն առարկեց դրան և հրաժարվեց նման մթնոլորտում շարունակել բանակցությունները և վիճելի հարցերը փոխադրեց Կովկասյան բյուրոյի լուծմանը[145]:

Հունիսի 26-ին Օրջոնիկիձեն և Կիրովը Նարիմանովին ուղարկեցին հեռագիր, նշելով, որ Զանգեզուրի իրադրության պայմաններում բանակցությունների ընթացքում ընդմիջումը թողնում է խիստ աննպաստ տպավորություն, ուստի խնդրվում էր Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյում և ժողկոմխորհում լուծել Ղարաբաղի մասին հարցը այնպես, որ հնարավոր լինի բանակցություններն ավարտել հունիսի 27-ին: Միաժամանակ Օրջոնիկիձեն և Կիրովը տեղյակ էին պահում իրենց կարծիքի մասին, այն է՝ Լեռնային Ղարաբաղի հարցը լուծել այն սկզբունքով, որ ոչ մի հայկական գյուղ չմիացվի Ադրբեջանին և, հակառակը, մուսուլմանական գյուղ չմիացվի Հայաստանին[146]:

Ադրբեջանի ղեկավար մարմինների ակնարկվող որոշումը կայացվեց հունիսի 27-ին և չհասավ Կիրովի հանձնաժողովին: Այնուամենայնիվ Ադրբեջանի որոշումը այսպիսինն էր. անընդունելի համարվեց Բեկզադյանի առաջարկած ձևով Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումն ամբողջությամբ՝ «Դեպի Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի անվերապահ տնտեսական կապվածության պատճառով, որպիսի իմաստով և պետք է լուծվի հարցը»: Մերժվում էր նաև Օրջոնիկիձեի ու Կիրովի կարծիքը՝ «վարչական ու տնտեսական տեսակետից»: Հարցի միակ լուծումը կարող էր լինել, ըստ

---

[145] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 640-644.

[146] Նույն տեղում, էջ 644-645:

Ադրբեջանի, «հայ և մուսուլման բնակչության լայն ներգրավումը խորհրդային շինարարության մեջ (ինչպես երևում է ընկ. Նարիմանովի հռչակագրից)»:

Նարիմանովը արտահայտվում էր վերջնագրի լեզվով: Նույն օրվա պաշտոնական հեռախոսային զրույցում ժողկոմխորհի գործերի կառավարիչը վերոհիշյալ որոշումը Թիֆլիս՝ իրենց արտգործժողկոմին փոխանցելուց հետո տեղեկացնում էր, թե Նարիմանովը խնդրել է հայտնել, որ հարցը պետք է լուծվի հենց այդպիսի հարթության վրա, հակառակ դեպքում ժողկոմխորհը իրենից վերցնում է պատասխանատվությունը, «քանի որ Հայաստանի ժողկոմխորհը այդ ակտով ցանկանում է հայտնի տպավորությունը թողնել դաշնակցականների և Հայաստանի անկուսակցական զանգվածների վրա, ապա չպետք է մոռանալ այն հանգամանքի մասին, որ դրանով իսկ մենք Ադրբեջանում վերականգնում ենք նույնպիսի հակախորհրդային խմբերը, ինչպիսին են դաշնակցականները»:

Այնուհետև հեռախոսային կապին միանալով, անձամբ Նարիմանովը լրացրել է իր միտքը, թե «մեր հայ ընկերները բացառապես մտածում են տարածքի և ոչ հայ ու մուսուլման չքավոր բնակչության բարեկեցության ու հեղափոխությունն ամրապնդելու մասին»[147]: Ադրբեջանի բռնած դիրքին հետևեց Լեռնային Ղարաբաղում Հայաստանի արտակարգ ներկայացուցիչ Ասքանազ Մռավյանին հետ կանչելու մասին Նարիմանովի հեռագիրը Օրջոնիկիձեին: Մռավյանի Լեռնային Ղարաբաղում հայտնվելը համարելով «վիթխարի քաղաքական ու տակտիկական սխալ» խնդրվում էր Մռավյանին անմիջապես հետ կանչել այնտեղից[148]: Հեռագիրը ուղարկվել էր նաև Ալ. Մյասնիկյանի անունով:

Եվ Օրջոնիկիձեն չի փորձում հիշել, որ Հայաստանի քայլերը իրականացվել են Կովկասյան բյուրոյի հունիսի 3-ի որոշման համաձայն:

Այժմ (հունիսի 27-ին) այդ նույն բյուրոյի նախագահությունը ընդունում է նոր որոշում Անդրկովկասի հանրապետությունների սահմանագծման օրակարգով արտակարգ պլենում հրավիրելու մասին, անմիջապես հրավիրելով Նարիմանովին և Մյասնիկյանին[149]:

Հետաքրքիր է հետևյալը, հուլիսի 2-ին կայացած, հեռախոսային խոսակցությունը Բաքվում Հայաստանի ներկայացուցիչ Իսահակ Դովլաթյանի և Թիֆլիսում գտնվող Հայաստանի արտգործժողկոմ Բեկզադյանի միջև: Բեկզադյանը հայտնում է, որ Երևանից ժամանել է Մյասնիկյանը և Ձեզ խնդրում է խոստացված «Ֆորդ» ավտոմեքենան ուղարկել Եվլախ (նախա-

---

[147] Նույն տեղում, էջ 646-648:
[148] Նույն տեղում, էջ 648-649:
[149] Նույն տեղում, էջ 648:

տեսված էր Լեռնային Ղարաբաղում Մռավյանի ծառայության համար), ապա ավելացնում է, որ Մյասնիկյանը Թիֆլիս է եկել Կովկասյան բյուրոյի նիստին մասնակցելու համար «մեզ հուզող հարցի կապակցությամբ»: Ապա Բեկզադյանը խոստանում էր ուղարկել Կովկասյան բյուրոյի որոշումը, այն նյութերի հետ, որ խնդրել է ինքը՝ Դովլաթյանը[150]: Այս խոսակցությունից զգացվում է, որ հայկական շրջաններում տվյալ անհանգիստ օրերին վստահ էին արդարացի որոշման նկատմամբ:

Հուլիսի 3-ին Ալ. Մյասնիկյանը հեռագրել է Երևան. «Երեկ և այսօր Կովկասյան բյուրոյում խորհրդակցություն է ընթանում աշխատակիցների հետ ընդհանուր քաղաքականության մասին, դրությունը խառն է, այսօր առաջարկվելու է բանաձև, իսկ վաղը Կովկասյան բյուրոն կանցնի կոնկրետ հարցերին»[151]:

Հուլիսի 4-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը, Ստալինի մասնակցությամբ, որը բյուրոյի անդամ չէր, քննարկեց «Ղարաբաղի հարցը»: Քվեարկությունը կատարվեց տարբեր տարբերակներով և ընդունվեց հետևյալ որոշումը՝ «Լեռնային Ղարաբաղը մտցնել Հայաստանի ՍԽՀ կազմի մեջ, հանրաքվե անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում»:

Դա միանգամայն արդարացի որոշում էր, որը բխում էր Լեռնային Ղարաբաղի բնակչության բացարձակ ճնշող մեծամասնությունը կազմող հայերի կամքից, որ արտահայտվել էր նրա բազմիցս տեղի ունեցած համագումարներում:

Սակայն ընդունված որոշման դեմ հանդես եկավ Ադրբեջանի կառավարության նախագահ Ն. Նարիմանովը, որի հայտարարությունը դարձավ պլենումի օրակարգի հաջորդ հարց. «Ելնելով այն կարևորությունից, որ ունի ղարաբաղյան հարցը Ադրբեջանի համար, անհրաժեշտ եմ համարում նրա վերջնական որոշումը փոխադրել ՌԿԿ Կենտկոմ»: Եվ պլենումը փոխեց իր որոշումը Ն. Նարիմանովի ոգով. «Քանի որ Ղարաբաղի մասին հարցը առաջացրել է լուրջ տարաձայնություններ, ՌԿԿ Կենտկոմի Կովկասյան բյուրոն անհրաժեշտ է համարում այն փոխադրել ՌԿԿ Կենտկոմի վերջնական որոշմանը»[152]:

Սակայն հարցը չհասավ ՌԿԿ Կենտկոմ: Հաջորդ օրը, հուլիսի 5-ին կայացավ Կովկասյան բյուրոյի պլենումի նոր նիստ, հետևյալ օրակարգով. «ԸՆԿ. ընկ. Օրջոնիկիձեն և Նազարեթյանը հարց են հարուցում Ղարաբաղի վերաբերյալ պլենումի նախորդ որոշումը վերանայելու մասին»: Առանց քննարկում անցկացնելու, պլենումն ընդունեց հետևյալ, հավանորեն նա-

---

[150] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 145, թ. 68:
[151] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 33, թ. 1:
[152] Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 649-650.

խապես պատրաստված, որոշումը. «1. Ելնելով մուսուլմանների ու հայերի միջև ազգային խաղաղության և Վերին ու Ներքին Ղարաբաղների տնտեսական կապի անհրաժեշտությունից, Ադրբեջանի հետ նրա մշտական կապից, Լեռնային Ղարաբաղը թողնել ԱդրՍԽՀ սահմաններում, նրան տրամադրելով մարզային լայն ինքնավարություն, վարչական կենտրոնը ինքնավար մարզի կազմում գտնվող Շուշի քաղաքում»: 2-րդ կետը Ադրկոմկուսի Կենտկոմին հանձնարարում էր որոշել ինքնավար մարզի սահմանները և ներկայացնել Կովկասյան բյուրոյի հաստատմանը: 3-րդ կետը վերաբերում էր Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսարի թեկնածությունը, որը հանձնարարվում էր Կովկասյան բյուրոյի նախագահությանը, բանակցելով Հայաստանի և Ադրբեջանի Կենտկոմների հետ: Վերջին կետի համաձայն, Ադրբեջանի Կենտկոմը որոշելու էր Լեռնային Ղարաբաղի ինքնավարության սահմանները, ներկայացնելով Կովկասյան բյուրոյի հաստատմանը[153]:

Որևէ փաստաթուղթ չկա այն մասին, թե ինչպես էր նախապատրաստվել սույն նիստը և որոշումը, ինչ էր տեղի ունեցել անցած գիշերվա ընթացքում: Սակայն դժվար չէ ենթադրել, որ անկասկած տեղի էր ունեցել միջամտություն Ստալինի ներկայության բերումով:

Հայաստանը խստորեն բողոքեց ընդունված որոշման դեմ: ՀԿ(բ)Կ - Կենտկոմի 1921 թ. հուլիսի 16-ի նիստը արձանագրեց, որ Ղարաբաղի հարցի լուծումը իրեն չի բավարարում[154]: Իսկ ՀԿ(բ)Կ 1-ին համագումարում (1922 թ. հունվար) բնութագրելով Կովկասյան բյուրոյի նիստը, Ալ. Մյասնիկյանը, նշեց, թե կարծես այնտեղ նստած էին Սիարոնյանը, Թոփչիբաշևը և Չխենկելին: Ադրբեջանը սպառնում էր նավթ չտալով, եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը:

Չնայած արտահայտված բողոքին, այնուամենայնիվ պետք է նշել, որ Հայաստանի ղեկավարությունը, ինչպես հարկն է, և պետք էր, տվյալ պահին չպայքարեց Լեռնային Ղարաբաղի համար, ինչպես դա արեց հարևան պետությունը: Հայաստանի կառավարության նախագահը ազգայնականություն էր համարում նույնիսկ այն, որ Կովկասյան բյուրոյի նիստում իր ձեռքին ունեցել է քարտեզ: Ադրբեջանը Կովկասյան բյուրոյի որոշումից հետո էլ միջոցների մեջ խտրություն չէր դնում կեղծելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի Հայաստանին միանալու անհերթ կամքը, որն արտահայտվեց նաև հանրաքվե անցկացնելու ժամանակ:

---

[153] Նույն տեղում, էջ 650:
[154] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 18:

4. ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի խորհրդայնացումը քաղաքական նոր իրադրություն ստեղծեց Զանգեզուրի ինքնապաշտպանության հեռանկարների համար: Այժմ երկրամասի շահերի պաշտպանությամբ, ընդդեմ Խորհրդային Ադրբեջանի, հանդես էր գալու նաև Խորհրդային Հայաստանը: Ինչ վերաբերում է Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերի 30-ի հռչակագրին Զանգեզուրը, ինչպես նաև Ղարաբաղն ու Նախիջևանը Հայաստանի մաս ճանաչելու մասին, ապա երկրամասի ինքնապաշտպանական ուժերը, Գարեգին Նժդեհի գլխավորությամբ, չէին վստահում դրան և որոշեցին առայժմ գրավել սպասողական դիրք և շարունակել գոյամարտը:

1920 թ. վերջերին (նոյեմբերին) Զանգեզուրի պաշտպանները վճռական հաղթանակներ էին տարել Ադրբեջանի և ռուսական Կարմիր բանակի նկատմամբ, ազատագրելով ամբողջ երկրամասը: Դրա հիման վրա «Գյուղացիական համագումարի» նախագահը, որպես Զանգեզուրի բնակչության ներկայացուցիչ, 1920 թ. նոյեմբերի 19-ին գրավոր դիմեց Հայաստանի Հանրապետությունում Խորհրդային Ռուսաստանի առաքելության ղեկավարին, արտահայտելով այդ ժողովրդի վճռական կամքը, այն է.

1. Դադարեցնել խորհրդային ուժերի ռազմական գործողությունները Զանգեզուրում:

2. Զանգեզուրը համարել Հայաստանի Հանրապետության անբաժան մաս:

3. Նպաստել Զանգեզուրի և Խորհրդային Ռուսաստանի միջև բարիդրացիական հարաբերություններին:

4. Ընդունել, որ Հայաստանի ճակատագրի ու ամբողջականության և Խորհրդային Ռուսաստանի շահերի տեսակետից կործանարար հետևանքներով է հղի քեմալա-մուսավաթական քողարկված մութ ուժերի շարժումը, այն է՝ Քեմալը հետապնդում է Մուսավաթի վերականգնման և Ադրբեջանը Թուրքիային կցելու նպատակը:

5. Առաջարկել Խորհրդային Ռուսաստանին՝ անհրաժեշտության դեպքում իր ծառայությունը բերել հակահեղափոխական ուժերի դեմ պայքարին[155]:

Հայաստանի նկատմամբ այդ հակահիսլամականության վտանգը չվերացավ նաև նրա խորհրդայնացումից հետո: Ուստի որոշ ժամանակ անց Նժդեհը հիշյալ դրույթների ոգով պետք է բացատրեր պայքարը շարու-

---

[155] ՀԱԱ, Պ. ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 209:

նակելու անհրաժեշտությունը՝ 1920 թ. դեկտեմբերի 25-ի համագումարի հրավիրումը և Ինքնավար Սյունիքի հռչակումը:

Ազատագրված շրջաններում կարգուկանոնն ու իշխանությունն ամրապնդելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով երկրամասում խորհրդային իշխանության 5-ամսյա տիրապետության (1920 թ. հուլիս-նոյեմբեր) ծանր հետևանքները վերացնելու անհրաժեշտությունը, Նժդեհի դեկտեմբերի 15-ի հրամանով Զանգեզուրում մտցվեց զինվորական դրություն, մահապատիժ սահմանվեց «Դավաճանության, լրտեսության, պրովոկացիայի, սպեկուլյացիայի, կաշառակերության և նման քրեական ու քաղաքական հանցանքների համար»: Հրամանը զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաներին կոչում էր զգոնության, անխոնջ աշխատանքի, կանգնել իրենց կոչման բարձրության վրա[156]:

Տվյալ պահին Նժդեհը մեծ ուժեր չուներ: 11-րդ կարմիր բանակի հրամանատարության տվյալներով Զանգեզուրում զենքի տակ գտնվող կանոնավոր ու մշտական ուժեր չկային, բացառությամբ Նժդեհի փոքր խմբի, 100 մարդուց բաղկացած, որոնց թվում կային նաև խորհրդային աքսորից խուսափած հայ սպաներ: Նույնի տվյալներով պատերազմի դեպքում երկրամասը կարող էր ոտքի հանել ավելի քան 2000 հետևակային ու հեծյալ: Նրանց մեծ մասը փորձված էր ռազմական գործում, քանի որ ծառայել էր նախկին կարգերի ժամանակ: Սպառազինությունը գյուղացիների ունեցած զենքն էր (հրացանը) և 50 գնդացիրները, որոնք գերազանցապես ավար էին, վերցված 11-րդ բանակի 28-րդ դիվիզիայից: Ղարաքիլիսա գյուղում գտնվում էր Սիսիանի շրջանի ջոկատի շտաբը: Ջոկատի հրամանատարն էր կապիտան Պարանյանը, որը փոխարինել էր կռվում մահացու վիրավորված պորուչիկ Պողոս Տեր-Դավթյանին[157]:

Մոտենում էր Հայաստանի խորհրդայնացումը, երբ 1920 թ. նոյեմբերի 26-ին, 11-րդ կարմիր բանակի 28-րդ դիվիզիայի զինվորական կոմիսար Սեմյոնովի ստորագրությամբ դիմում արվեց Զանգեզուրի ապստամբ զորահրամանատար գնդապետ Նժդեհին, առաջարկելով խաղաղ ճանապարհով վերջ տալ ռազմական գործողություններին և հաստատել եղբայրական հարաբերություններ: Նշվում էր, որ ռուսական բանակը Զանգեզուր և Ղարաբաղ է եկել ոչ թե պատերազմելու, այլ «երկու իրար թշնամի և ոչնչացնող խմբերի միջև եղբայրական հարաբերություն հաստատելու համար»:

---

[156] Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921): Երևան, 1991, էջ 123:
[157] ՀԱԱ, ֆ. 113, g. 3, գ. 7, թ. 25:

Այդ նպատակով առաջարկվում էին նախնական համաձայնության հետևյալ պայմանները.

1. Չցանկանալով հետագա արյունահեղությունը հայ աշխատավոր ժողովրդի, որ արդեն ապստամբել է (նկատի ունի բոլշևիկյան շարժումը – Վ. Ղ.) Հայաստանի մեջ խորհրդային իշխանություն հաստատելու նպատակով, անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները և դիմել բանակցությունների:

2. Բանակցությունների համար առաջարկվում էր Զաբուղ գյուղը:

Այնուհետև կարմիր կոմիսարն անդրադառնում է Զանգեզուրում կռիվներին վերջ տալու անհրաժեշտությանը: Դա պատճառաբանվում էր Ռուսաստանի այն միջնորդական դերով, որի նպատակն էր հասնել հաշտության կնքմանը Հայաստանի և «Թուրք հեղափոխական զորքերի» միջև: «Մի խանգարեք այդ գործը,- շարունակում է կոմիսարը,- մի մղեք սակավ գիտակից հայ ժողովրդին դեպի ապարդյուն կռիվներ»: Սեմյոնովի կարծիքով Նժդեհի հաջողությունները չէ, որ պետք է թելադրեին հաշտության պայմանները: Պայմանները թելադրելու էին Հայաստանի ապստամբ ժողովուրդն ու կարմիր բանակը, որը նա դիտում էր որպես Ռուսաստանի կարմիր բանակի նոր օղակ»[158]:

Սեմյոնովի նոյեմբերի 26-ի փաստաթղթից երևում է, որ 11-րդ բանակի հրամանատարությանն արդեն հայտնի էր Հայաստանի խորհրդայնացման այն ծրագիրը, որն իրականացվելու էր 3 օր անց: Ընդ որում այլ փաստաթղթեր ևս վկայում են, որ այդ ծրագրի մասին նա գիտեր ավելի վաղ: Այսպես, դեռևս նոյեմբերի 11-ին Կովկասյան ճակատի հրամանատարությունը 11-րդ բանակի հրամանատարությանը պատվիրել էր նախապատրաստվել երևանյան հնարավոր գործողությունների համար: Քաղաքական նկատառումներով, ասված է տվյալ հրամանում, միանգամայն հնարավոր է, որ մեր զորամասերը գրավեն Երևանը: Այդ նպատակով անմիջապես ստեղծվելու է 11-րդ բանակի համապատասխան խմբավորում, և որը կենտրոնանալու է Ղազախի շրջանում[159]:

Հայաստանի խորհրդայնացումից մի քանի օր անց, 1920 թ. դեկտեմբերի 25-ին, Տաթևի վանքում տեղի ունեցավ համազանգեզուրյան առաջին համագումարը, որի գլխավոր հարցը Խորհրդային Հայաստանի նկատմամբ ունենալիք վերաբերմունքն էր: Այն օրակարգում ձևակերպված էր այսպես՝ «Զեկուցում Հայաստանի քաղաքական անցուդարձերի մասին և համագումարի բռնելիք դիրքը»: Համագումարի վերաբերմունքի ընտրության մեջ կարևոր տեղ ու դեր էր տրվում այն բացասական արդյունքնե-

---

[158] Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 113-116:

[159] Բանբեր Հայաստանի արխիվների (ԲՀԱ), 1978 թ., թիվ 1, էջ 61:

րին, որ ունեցել էր խորհրդային իշխանության ժամանակավոր գոյությունը Զանգեզուրում, 1920 թ. հուլիս-նոյեմբերի 5 ամիսների ընթացքում: Այդ ամիսների արդյունքները հանրագումարի էր բերել Զանգեզուրի գյուղացիական ժամանակավոր խորհուրդը, իր 1920 թ. նոյեմբերի 30-ի նիստում: Գյուղացիական ժամանակավոր խորհուրդը, որպես ժամանակավոր կառավարման օրգան, ստեղծվել էր Զանգեզուրի ազատագրումից հետո, և որը գործելու էր մինչև համագումարի միջոցով հիմնական իշխանության ստեղծումը:

«Զանգեզուրի գյուղացիական խորհրդի այսօրվա նիստում,- կարդում ենք արձանագրության մեջ,- որոշվեց արձագանքել տարվույս հուլիսի 5- նոյեմբերի 20-ը խորհրդային կառավարության միջոցով և կարգադրությամբ կատարված սպանությունները, բռնագրավումները և բռնությունները, որոնք գործադրված են ազգաբնակչության բոլոր խավերի նկատմամբ Զանգեզուրում»: Այնուհետև տվյալներ են բերված ըստ գյուղերի և ամբողջությամբ վերցրած[160]:

«Ազատ Սյունիք» հրատարակության մեջ բերված է միայն, որպես օրինակ, Կոռնիձոր և Տեղ գյուղերի բնակիչների համախոսականների սեղմ բովանդակությունը, որը ներկայացնում է սարսափելի պատկերներ: Կարմիր բանակի, նրա կազմում թուրքակսն «կամավորների կարմիր» դիվիզիայի օկուպացիան, բոլշևիկների տիրապետությամբ հանդերձ, երկրամասում ստեղծել էր ահաբեկչության ծանր մթնոլորտ»[161]: Նման պայմաններում աննպաստ կարծիք էր ստեղծվել և անվստահություն ձևավորվել նաև Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Ելնելով այդ ամենից, համագումարը որդեգրեց առայժմ սպասելու մարտավարությունը: Առայժմ սպասելու և հարցի լուծումը ձգձգելու մարտավարությունը շարունակվեց նաև հետագայում, ընդհուպ մինչև Զանգեզուրի գոյամարտի ու ինքնապաշտպանության վերջը:

«Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունը...,- կարդում ենք համագումարի որոշման մեջ,- մոտ 5 ամսվա ընթացքում դատարկեց դառնության բաժակը մինչև նրա վերջին կաթիլը: Խորհրդային հրամանատարությունը հենց առաջին քայլից գավառիս գյուղացիության նկատմամբ սկսեց իր ավերիչ, քայքայիչ քաղաքականությունը, որի առաջ նսեմանում են պատմական Լենկթեմուրյան և արևելքի բարբարոսների արշավանքներն ու գործելակերպը»: Ամփոփելով Զանգեզուրում խորհրդային իշխանության 5-ամսյա (1920 հուլիս-նոյեմբեր) գործունեության արդյունքները, և

---

[160] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 11:

[161] «Ազատ Սյունիք: Սև էջեր և փաստեր բոլշևիկների հնգամսյա գործունեությունից»: Գորիս, 1921:

նկատի ունենալով, որ ավելի քան 3 տարի Զանգեզուրն ապրել է իր ներքին ուրույն կյանքով և շարունակելու է մնալ նույն դրության մեջ, համագումարը որոշեց. «Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգ, լինելով անկախ մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի Հայաստանի հետ»:

«Ինքնավար Սյունիքի» հռչակման անհրաժեշտությունը և «մինչև» հասկացողության իմաստը բացատրել է Նժդեհը 1923 և 1925 թթ. հրատարակված հոդվածներում: Հայաստանի Հանրապետության անկումից հետո, գրել է նա, երբ կարմիր բանակի հրամանատարության հետ իմ կողմի բանակցությունները մնացին անհետևանք, երբ կարմիրները «շլացած Երևանի կամովին խորհրդայնացումից» մերժեցին հաշտության իմ առաջարկած նախնական պայմանները, ստիպեցին Սյունիքը հայտարարել անկախ: «Սյունիքը չէր կարող տեղի տալ, քանի որ տաճկական զորքերը գտնվում էին Ալեքսանդրապոլում, Շարուրում և Նախիջևանում, միշտ պատրաստ ցանկության դեպքում արհամարհելու Երևանի բոլշևիկյան ուժերը և շարժվելու Սյունիքի դեմ»: Միաժամանակ Նժդեհը խոսում է «կարմիր կացնի սարսափի տակ» ընկած «ամբողջ հայ մտավորականության» շահերի մասին[162]:

Նորից անդրադառնալով տվյալ հարցին, Նժդեհը նշում է, որ Հայաստանի Հանրապետության անկումով Զանգեզուրը դադարեց ինքնանպատակ լինելուց և դարձավ միջոց, որով խնդիր էր դրված ապահովել «մեր լեռնահայության ֆիզիկական գոյությունը սովետ-պանիսլամական վտանգից», «փրկել Հայաստանի հողը մահացու անդամահատությունից, իսկ հայ մտավորականությանը գլխովին ոչնչացումից»: Ուստի պետք էր Զանգեզուրը «ներքուստ ավելի ևս ամրացնելու նպատակով» հռչակել այն «Ինքնավար Սյունիք»[163]:

Այսպիսով, եթե մինչև Հայաստանի խորհրդային դառնալը Զանգեզուրը նպատակ էր այն պայքարում էր Ադրբեջանի հավակնություններից պաշտպանվելու համար, ապա դրանից հետո նա վերածվեց միջոցի՝ ստիպելու, որ խորհրդային իշխանությունն ընդունի իր պայմանները, խորհրդային բանտերից ազատելու հայ մտավորականներին, ինչպես նաև կանխելու խորհրդա-քեմալական հետագա հնարավոր վտանգը Հայաստանի նկատմամբ:

---

[162] Գ. Նժդեհ, Ինչու պայքարեց Լեռնահայաստանը. Տես «Հայրենիք», 1923 թ., թիվ 8, էջ 80:
[163] Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք: Տես «Հայրենիք», 1925 թ., թիվ 7, էջ 135:

Վերադառնանք Տաթևի համագումարին: Այն ընդունեց Ինքնավար Սյունիքի, այսպես կոչված, սահմանադրությունը, որն անվանվում էր «Կառավարության ձևի գլխավոր գծեր»: Ըստ դրա՝ բարձրագույն օրենսդիր մարմինը խորհուրդն էր (պառլամենտ-խորհրդարանը), որպես ընտրովի մարմին: Տվյալ պահին համագումարը հայտարարվեց օրենսդիր: Գործադիր մարմինը կամ պրեզիդիում-դիվանն ընտրվում էր խորհրդարանի անդամներից և ոչ անդամներից, 6 ամիս ժամանակով, 9 հոգուց բաղկացած, որը ղեկավարելու էր երկրի զինվորական ու քաղաքացիական բոլոր գործերը:

Խորհրդարանն էր նշանակում և արձակում զինվորական ընդհանուր հրամանատարին, պատերազմ հայտարարում, հաշտություն կնքում, արտակարգ դեպքերում դա վերապահելով նաև սպարապետին:

Վարչական տեսակետից Սյունիքը բաժանվում էր 6 շրջանների՝ Բուն Զանգեզուր, Տաթևի ձոր, Ղափան, Դարաբասի ձոր, Սիսիան և Գենվազ: Շրջանում իշխանությունը պատկանում էր գործադիր մարմնին, 3-5 անդամով, դարձյալ 6 ամիս ժամանակով: Նրանց վերապահված էր շրջանների ներքին հարցերի լուծումը, որոնք չունեին համապետական նշանակություն: Շրջանային գործադիր մարմինն ուներ իր մասնաճյուղերը՝ ներքին գործերի, պարենավորման և զինվորական:

Շրջանը (գավառակը) ուներ իր գավառապետը և շրջանային կոմիսարները, որոնց ընտրում էր շրջանային գործադիր մարմինը իր կազմից և հաստատում խորհրդարանի դիվանը:

Գյուղը կամ համայնքն ուներ իր գյուղական կոմիսարը, որոշ դեպքում նաև կոմիսարի օգնականը: Նրանք ընտրվում էին գյուղական հասարակության և համայնքի կողմից և հաստատվում շրջանային գործադիր մարմնում:

Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմինը վերահսկում էր պետական հիմնարկությունների գործունեությունը:

Համագումարի առանձին, միաձայն, որոշումով ազատարար և հերոս Նժդեհը հրավիրվեց որպես Սյունյաց Սպարապետ:

Համագումարը գաղտնի քվեարկությամբ ընտրեց դիվանի (կառավարության) 8 անդամներ: Գենվազը, որի ներկայացուցիչները տեղ չհասան համագումարին մասնակցելու համար, ընտրելու էր դիվանի 9-րդ անդամին:

Ինքնավար Սյունիքի իշխանության կենտրոնատեղին Գորիսն էր:

Համազանգեզուրյան համագումարը որոշումներ ընդունեց նաև արտաքին հարաբերությունների հարցերի վերաբերյալ: «Զանգեզուրը միշտ ձգտել է և ձգտում է լինել մայր երկրի՝ Հայաստանի Հանրապետության ան-

բաժան մաս,- արձանագրել է համպատասխան բանաձևը,- բայց նկատի առնելով Հայաստանի վերջին քաղաքական փոփոխությունները, որ նա, ստիպված մի շարք քաղաքական անբարեհաջող հանգամանքներից, հայտարարել է իրեն խորհրդային, մի իրավակարգ, որի հետ երբեք չի կարող հաշտվել մեր ժողովուրդը, համագումարը որոշեց մինչև նրա այդ իրավակարգից բաժանվելը գործել սեպարատ և ապրել ուրույն կյանքով»:

Բանաձևեր ընդունվեցին նաև Ադրբեջանի կառավարության հետ բարեկամական վերաբերմունքի, Պարսկաստանի հետ փոխհարաբերությունները զարգացնելու, այնտեղ ներկայացուցիչ ունենալու, ինչպես նաև Զանգեզուրում հարևան թուրք բնակչության հետ թշնամանքը դադարեցնելու, երկու դարավոր հարևանների միջև սերտ բարեկամություն հաստատելու մասին[164]:

Ինքնավար Սյունիքի դիվանի (կառավարության) նախագահ ընտրվեց Գեդեոն Տեր-Մինասյանը:

Մինչև 1920 թ. դեկտեմբերի 25-ը հակառակորդից ազատագրված Զանգեզուրը ղեկավարում էր 7 մարդուց բաղկացած գյուղացիական ժամանակավոր խորհուրդը: Սակայն, ինչպես գրել է Ս. Վրացյանը, «Երկրի գերագույն իշխանությունը փաստորեն հանդիսանում է սպարապետ Նժդեհը: Նժդեհի անձնական հատկությունները և նրա արտակարգ ազդեցությունը ժողովրդի վրա ստվերի մեջ են թողնում կառավարությանը»[165]:

Այսպիսով, կարելի է ասել, որ ինչպես նկատել է Սիմոն Վրացյանը, համազանգեզուրյան 1-ին համագումարն ուներ սահմանադիր ժողովի նշանակություն:

Համագումարից հետո (1921 թ. փետրվարի 23-ին) հրապարակվեց Ինքնավար Սյունիքի կառավարության առաջին կոչը «Հայ ժողովրդին», ուր գնահատվում էր երկրամասի ինքնավարության հռչակումը և մեծարվում Նժդեհի սպարապետությունը:

Փետրվարի 21-ին Գորիսի սուրբ Լուսավորիչ եկեղեցում, հանդիսավոր իրադրության մեջ, օծվել էր սպարապետին հանձնվող գոտին և եռագույն դրոշակը, որը դարձյալ նա է ընդունել:

Հայ ժողովուրդը, ասված է կոչում, կառավարությունը, ժողովրդի անունից, սպարապետին հանձնելով ազատ Սյունիքի դրոշակը, դրա հետ մեկտեղ հանձնել է և «մեր քաղաքական բախտը», համոզված լինելով, որ ինչպես մինչև այսօր, այսուհետև ևս նա կշարունակի «փառավոր հաջո-

---

[164] Համազանգեզուրյան առաջին համագումարի որոշումներն ու բանաձևերը, տես . Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն: Երևան 1993, էջ 658-667:

[165] Նույն տեղում, էջ 590:

ղություններով ապացուցել աշխարհին, որ հայ ժողովուրդը, տոգորված ազատ և անկախ հայրենիք ունենալու տենչով, պատրաստ է զոհաբերել այն ամենը, ինչ որ հարկավոր կլինի հասնելու ցանկացած նպատակին»[166]:

Կարծում ենք, որ պետք է կապ տեսնել 1921 թ. փետրվարի 23-ի վերոհիշյալ արարողության և փետրվարի 18-ի Երևանում բռնկված հակախորհրդային ապստամբության միջև: Խոսքը փոխադարձ ազդեցության մասին է: Ինքը՝ Նժդեհն է նկատել, որ Սյունիքը ռազմագիտա-հոգեբանական կարելիություն ընծայեց Երևանին՝ կազմակերպելու իր «Փետրվար 18-ը»: Նույն միտքը Նժդեհը ձևակերպել է նաև այսպես, թե Ինքնավար Սյունիքը հանդիսացավ «հոգեբանական հրահրիչը Հայաստանի փետրվարյան համաժողովրդական ընդվզումի»[167]: Պատահական չէր նաև Գորիսի արարողության անցկացումը Երևանի ապստամբությունից անմիջապես հետո:

Հավանորեն այս համագումարի մասին է խոսվում, չնայած փաստաթղթում նշվում է որպես 2-րդ համագումար, կարմիր բանակի գրանցման բաժնի 1921 թ. փետրվարի 11-ի Զանգեզուրի շրջանին վերաբերող հետախուզական ամփոփագրում: Գործակալական տվյալները, ասվում է ամփոփագրում, հաստատում են, որ կազմավորվել է պառլամենտ, նախագահությամբ հայտնի ավանտյուրիստ, ուսուցիչ Գեդեոնի: Զինվորական մինիստր է նշանակվել Նժդեհը: Իրադարձությունների ընթացքին տոն է տալիս Հայաստանի նախկին դաշնակցական զինվորական մինիստր Ռուբեն փաշա Տեր-Մինասյանը: Համագումարում ընդարձակ զեկուցում է արել Նժդեհը և ասել, որ գարնանը կարմիր բանակն անպայման կձեռնարկի իր խմբի վերացումը և հրավիրել է ներկաներին արտահայտել իրենց վերաբերմունքը: Եղել է նաև կարմիր բանակին հանձնվելու առաջարկություն, քանի որ նա կարողացել է պարտության մատնել Կոլչակին, Դենիկինին ու Վրանգելին[168]:

Խորհրդային Ադրբեջանը ուշադրությամբ հետևում էր Զանգեզուրի իրադարձություններին, որին տիրելու նրա փորձերը մատնվել էին անհաջողության: 1921 թ. փետրվարի 15-ին Շուշիի հեղկոմը Ն. Նարիմանովին (Օրջոնիկիձեի համար) ուղարկած գրության մեջ հայտնում էր, որ Զանգեզուրից Կարմիր բանակի հեռանալուց հետո (խոսքը 1920 թ. նոյեմբերին Զանգեզուրում Կարմիր բանակի կրած ջախջախիչ պարտության մասին է) Ղարաբաղի քաղաքական դրությունն ավելի է վատթարացել: «Այդ կապակցությամբ Զանգեզուրի դաշնակցականները կազմակերպել են գյուղացիական խորհուրդ, «Ինքնավար կառավարության» գլխավորությամբ

---

[166] **Գարեգին Նժդեհ**, Հատընտիր: Երևան, 2001, էջ 205-206:
[167] Նույն տեղում, էջ 179 և 238:
[168] ԲՀԱ, 1978 թ., թիվ 1, էջ 89-90:

(հասկանալ 1-ին համագումարը - Վ. Ղ.) և, զգալով մեր թուլությունը, որոշեցին իրականացնել իրենց վաղեմի ցանկությունը դաշնակցական իշխանության տիրապետությունը Զանգեզուրում և Ղարաբաղում»: Այդ նպատակով, շարունակում է հեղկոմը, առայժմ հնարավորություն չունենալով հարձակվել Քրդստանի ուղղությամբ, դաշնակցականները ապստամբություն են բարձրացնել Վարանդայի 2-րդ տեղամասում, Խանքենդի 1-ին տեղամասի հետ միանալու համար (խոսքը Թևանի ղեկավարած ապստամբության մասին է)[169]:

Խորհրդային իշխանության և կարմիր բանակի կողմից Զանգեզուրի 5-ամսյա տիրապետության ժամանակ թույլ տված բռնությունները իրենց բացասական ազդեցությունն ունեցան նաև այն բանակցություններում, որ տեղի էին ունենում Նժդեհի հետ պայքարը դադարեցնելու հարցի շուրջ, ձգձգելով այդ բանակցությունները և Զանգեզուրի միանալը Հայաստանին:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Զանգեզուրում խաղաղություն հաստատելու և խորհրդային դարձնելու առաջին փորձերի համար օգտագործվել է Նժդեհի շրջապատը, նրան մոտ գտնվող գործիչները: Առաջին այդպիսի փորձը կապվում է Գողթան գավառի կոմիսար Աշոտ Մելիք-Մուսյանի անվան հետ: Այդ մասին տեղեկանում ենք Նժդեհի «Ազատ Սյունիք» հոդվածից, սակայն, հեղինակը, ինչպես կտեսնենք, թաքցրել է որոշ հանգամանքներ: Նժդեհը նախ հայտնում է, որ Աշոտը Երևան էր մեկնել «Սյունիքի բարձունքներում կռվողների համար թնդանոթ և ռազմամթերք մուրալու»: Սակայն երկիրը խորհրդայնացվել էր և Աշոտին վիճակվեց «Հայաստանի անկման առաջին գուժկանը լինելու»: Խորհրդայնացման հաջորդ օրը Աշոտը ճանապարհվել էր դեպի Զանգեզուր, ճանապարհին մրսել էր, թոքերի բորբոքումով պառկել Գորիսում և երրորդ օրը ատրճանակի երեք հարվածով վերջ դրել «իր բեղմնավոր կյանքին, թողնելով մի արնոտ երկտող»[170]:

Այն ինչ չի խոստովանել Նժդեհը բացում են այլ աղբյուրներ: Այսպես, «դաշնակցական հայտնի գործիչ Մելիք-Մուսյանի» կնոջ Մարիամի ծերբակալության կապակցությամբ Նախիջևան ուղարկած հեռագրում ՀՍԽՀ արտգործժողկոմ Ասք. Մռավյանը հայտնում է, թե «ընդհակառակը, նշված Մելիք-Մուսյանը ընկեր Լեգրանի կողմից ուղարկվել է Զանգեզուր հատուկ առաջադրանքով և այնտեղ խորհրդային իշխանություն ընդունելու կոչի համար գնդակահարվել դաշնակցականների կողմից»[171]:

---

[169] ՀԱԱ, Հավաքածու, թիվ 1, գ. 71, թ. 1:
[170] Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք. «Հայրենիք», 1925 թ., թիվ 7, էջ 131:
[171] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 159, թ. 36:

Խորհրդային աղբյուրի տվյալները, որոշ տարբերությամբ, հաստատվում են հակառակ կողմից ևս: 1920 թ. նոյեմբերի վերջերին գործով Երևան եկած Աշոտ Մելիք-Մուսյանը, գրել է այդ օրերի Հայաստանի Հանրապետության կառավարության նախագահ Ս. Վրացյանը, Հայաստանի Հեղկոմի (նախագահ Ս. Կասյան) հանձնարարությամբ վերադարձել է զանգեզուրցիներին համոզելու, որ ընդունեն խորհրդային իշխանությունը: Սակայն նրա ջանքերն անցել են ապարդյուն, և նա, հիվանդանալով տիֆով, ինքնասպան է եղել[172]:

Ավելի սպառիչ են խմբապետ Մարտիրոսի հուշերը, որը նկարագրվող իրադարձությունների ժամանակ գտնվել է Գորիսում, Նժդեհի և Աշոտ Մելիք-Մուսյանի մոտ: Երևանից Զանգեզուր վերադառնալով, հայտնում է Մարտիրոսը, Աշոտը հուսահատ այն տեսակետն էր պաշտպանում, թե Զանգեզուրի փոքրաթիվ ուժերով անհնար է կասեցնել խորհրդային մեծաքանակ ուժերի գրոհները և առաջարկել էր խաղաղ ճանապարհով իշխանությունը զիջել խորհուրդներին: Երբ այս մասին վերջին անգամ խոսակցություն է տեղի ունենում Աշոտի և Նժդեհի միջև, վերջինը «խիստ որակումներով է բնորոշում Աշոտի ելույթները»: «Ես քեզ ուղարկեցի Երևան,- նշել է Նժդեհը,- որ բանակցություններ վարես և օգնություն հասցնես մեզ: Իսկ դու հիմա եկել և պարտվողականություն ես քարոզում ամենուրեք և առաջարկում, որ Զանգեզուրը հանձնենք կոմունիստներին: Սա դավաճանություն է Զանգեզուրի ժողովրդին, նրա անկախության և Հայաստանին միանալու համար նահատակված հերոսների հանդեպ: Խնդրում եմ այդ մասին այլևս երբեք չխոսես»: Այդ ընդհարումից հետո, շարունակում է Մարտիրոսը, Աշոտ Մելիք-Մուսյանը առանձնանում է իր սենյակը և ինքնասպան լինում»[173]:

Այսպիսով, դժվար չէ ենթադրել, որ Նժդեհը, խնայելով իր մարտական գործընկերոջը, նրա ինքնասպանությունը գիտակցաբար է վերագրել հիվանդությանը, թաքցնելով «դավաճանության» հանգամանքը:

Ճշմարիտ է, որ Ա. Մելիք-Մուսյանը, որպես Զանգեզուրի գյուղացիական խորհրդի ներկայացուցիչ, մեկնել էր Երևան օգնություն խնդրելու համար: 1920 թ. նոյեմբերի 24-ի Երևանում նա զեկուցագիր է ներկայացրել Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Նկարագրելով ռազմական գործողությունների հուլիս-նոյեմբեր ամիսների ընթացքը, այնուհետև Մելիք-Մուսյանը «Զանգեզուրը ապահովելու և նրա իդեալների իրականացումը մի անգամ ընդմիշտ մայր երկրին միանալու» անհրաժեշտությամբ թվարկում է զենքի ու ռազմամթերքի պահանջները: Զեկուցագրի վեր-

---

[172] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 594:

[173] «Փետրվարյան ապստամբությունը». Հայրենիք, 1956 թ., թիվ 3, էջ 27:

ջում նա Զանգեզուրի ժողովրդի, Նժդեհի և իր անունից խնդրում էր պատասխանել շուտ, հակառակ դեպքում զգուշացնելով, որ դանդաղումը կարող է երկրամասը մատնել վերջնական կորստի[174]:

Առաջ անցնելով, ավելացնենք, որ նման մի փորձ ևս խորհրդային իշխանությունը կատարել է 1921 թ. մայիսին, Ալ. Մյասնիկյանի նախագահության ժամանակ: Այս դեպքում Հեղկոմն ընտրել էր զանգեզուրցի ինժեներ Սմբատ Մելիք-Ստեփանյանին, որին մեկ տարի առաջ, Խոտանանից նահանջելիս գերի էին վերցրել կարմիր զորամասերը: Միայն, ի տարբերություն Աշոտ Մելիք-Մուսյանի, որը համոզելու էր մեկ մարդու, ապա Մելիք-Ստեփանյանը աշխատանք էր տանելու ժողովրդական զանգվածների մեջ: Նա Հայաստանի հեղկոմի համաձայնությամբ, Զանգեզուր է ուղարկվել, ինչպես ասված է նրան տրված մայիսի 14-ի մանդատում (ստորագրված Ալ. Մյասնիկյանի և Ասք. Մռավյանի կողմից), լեռներում ու գյուղերում թաքնված գյուղացիներին ու քաղաքացիներին համոզելու, որ վերադառնան իրենց տները և վերսկսեն խաղաղ աշխատանքը[175]:

Սակայն Մելիք-Ստեփանյանը, հրաժարվելով կատարել խորհրդային իշխանության հանձնարարությունը, հավանաբար Նժդեհի հանձնարարությամբ, հունիսի 3-ին Երևան ուղարկել է հետևյալ մերժողական պատասխանը. «Այստեղ ես տեսնում եմ ժողովուրդ, կառավարություն և զորահրամանատարություն միաբան:

Ամեն ինչ նորմալ է այստեղ:

Այստեղ չկան խաներ, բեգեր, կապիտալիստներ, բուրժուաներ, կուլակներ: Չկա այն ամենը, որ տկարացնում է ժողովրդի ռազմական թափն ու ույժը: Ժողովրդի տրամադրությունը կատարելապես հեղափոխական է...»[176]:

Վերադառնանք 1920 թ. դեկտեմբերի գործընթացներին:

Զանգեզուրի պայքարը դադարեցնելու փորձերից մեկը կապվում է Դրոյի անվան հետ: 1920 թ. դեկտեմբերի 16-ին Զանգեզուրի գյուղացիությանը և Նժդեհին հեռագրով կոչ է ուղարկվել ՀՍԽՀ զինվորական կոմիսար Ավիսի և կարմիր զորքերի հրամանատար Դրոյի ստորագրությամբ: Բովանդակությունից երևում է (կա նաև քննադատություն նախորդ իշխանության հասցեին, որտեղ Դրոն վարել էր տարբեր պաշտոններ), որ Դրոն չէր կարող մասնակցած լինել նման հեռագրի պատրաստմանը: Հետագայում, ինչպես գրել է Ս. Վրացյանը, Դրոն իրեն անձամբ է հաստատել, որ հեռագիրը

---

[174] Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 111-113:
[175] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 19, թ. 184: Տես նաև Գարեգին Նժդեհ, Հատընտիր, էջ 223:
[176] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, էջ 224:

ուղարկվել է Ավիսի առաջարկությամբ, Կասյանի ու Մռավյանի հավանությամբ, «զանգերզուրցուն ասվելիքի մասին ընդհանուր որոշում է տրվել, իսկ հեռագիրը շարադրել և ստորագրությունները դրել է Ավիսը՝ ինքը[177]:

Կա Դրոյի նաև երկրորդ դիմումը «Զանգեզուրի գյուղական կոմիտեին, պատճեն՝ Նժդեհին»: Ժամանակը և տեղը՝ 21 հունվարի 1921 թ., Բաքու, երբ պաշտոնից հանված Դրոն գտնվում էր Մոսկվա «պատվավոր աքսոր» մեկնելու ճանապարհին: Նշենք, որ խորհրդային իշխանությունը իր քաղաքական նպատակների համար ձգտել է օգտվել Դրոյի ծառայությունից ինչպես այս, այնպես էլ այլ դեպքերում (նկատի ունենք նաև Դրոյի և մյուսների ստորագրությամբ 1923 թ. «Մարտակոչ» թերթում հրապարակած «Դաշնակցության կուսակցության կովկասյան խմբերի դեկլարացիան»):

Դրոյի անունը հարկավոր էր Նժդեհի և նրա գործընկերների վրա ազդեցություն գործելու համար:

Մասնավորապես երկրորդ դիմումում առաջարկվում էր Զանգեզուրը անմիջապես հայտարարել խորհրդային և միանալ Խորհրդային Հայաստանին: Դրա համար բերվում էին մի շարք հիմնավորումներ. Զանգեզուրի չմիանալը Խորհրդային Հայաստանին խանգարել է լուծել Նախիջևանի, Շարուրի և Ղարաբաղի խնդիրները, իսկ Թուրքիան, կեղծ համարելով Հայաստանի խորհրդային իշխանությունը, չի հեռանում Հայաստանից: Նամակում հույս էր հայտնվում, որ Զանգեզուրը կմիանա մայր երկիր Հայաստանին և, որ Մոսկվայում տաճիկների հետ առաջիկա բանակցությունները կգան ապացուցելու, որ Խորհրդային Ռուսաստանը պաշտպանում է հայ աշխատավորության շահերը[178]:

Դժբախտաբար այդ շահերը Մոսկվայի բանակցություններում ոչ միայն չպաշտպանվեցին, այլև խստորեն ոտնահարվեցին:

Դրոյի նամակները տեղ է հասցրել ՀՍԽՀ հեղկոմի և 11-րդ կարմիր բանակի միացյալ պատվիրակությունը (5 հոգուց բաղկացած), Գրիգոր Վարդանյանի և փոխգնդապետ Արմենակ Օրբելյանի ղեկավարությամբ: Փետրվարի 2-ին Նժդեհը հանդիպում է ունեցել նախ Արմ. Օրբելյանի, ապա Գր. Վարդանյանի հետ: Վերջինս ընդարձակ զեկուցում-հաշվետվություն է ներկայացրել իր հանդիպման վերաբերյալ[179]:

Պատվիրակությանը հանձնարարվել էր. նամակները հասցնել տեղ և հանձնել հասցեատերերին, բանակցել Նժդեհի հետ, նրան առաջարկելով՝

---

[177] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 594:
[178] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 29 (փաստաթղթի մեքենագիր օրինակ, որի վերին ձախ անկյունում գրված է՝ «Письмо Дро»:
[179] Նույն տեղում, թ. 16-20:

հայտարարել Զանգեզուրը խորհրդային և միացած Խորհրդային Հայաստանին: Հակառակ դեպքում՝ հասնել նրան, որ բանակցությունները շարունակվեն (Շուշիում կամ Բաքվում): Համաձայնության դեպքում խոստանալ ամենալայն ներում Նժդեհին ու յուրայիններին:

Գ. Վարդանյանը շուրջ մեկ ժամ շարադրել է իր հարցադրումները և փորձել հիմնավորել դրանք: «Հայաստանի կառավարությունը,- բացատրել է Վարդանյանը,- սկզբից մինչև վերջ, հենվելով Անտանտի վրա, ոչ թե անկարող եղավ Սևրի դաշնագրով իրեն փեշքյաշ արված «Անկախ ու Միացյալ Մեծ Հայաստան» ստեղծել, այլև իր ձեռքում եղած փոքրիկ Հայաստանի մեծ մասն էլ կամովին հանձնեց տաճիկներին ու սոցիալիստ դավաճան վրաց մենշևիկներին: Ու այսպիսի կատաստրոֆայի ժամանակ անգամ Անտանտը մատը մատին չխփեց և կործանվեց դաշնակցական Հայաստանը: Նրա ավերակների վրա կանգնեց Խորհրդային Հայաստանը, բանվորների ու գյուղացիների շահերի միակ պաշտպան կառավարությունը», որի թիկունքում կանգնած են նրա անկեղծ ու անխարդախ Խորհրդային Ադրբեջանը և մանավանդ Խորհրդային Ռուսաստանն ու 3-րդ Ինտերնացիոնալը:

Սյունիքի աշխատավոր զանգվածները և նրանց ներկա ղեկավարները, շարունակում է խորհրդային պատվիրակության ղեկավարը, կանգնած են հետևյալ դիլեմայի առաջ՝ կամ հակահեղափոխական Անտանտի ու նրա ծառերի հետ ընդդեմ միջազգային սոցիալիստական հեղափոխության կամ խորհրդային երկրների հետ ընդդեմ Անտանտի: Երկրորդ դեպքում, որի հաղթանակը ապահով է, հաղթության պտուղները բոլոր երկրների աշխատավորների հետ միասին կվայելեն նաև Խորհրդային Հայաստանի և Սյունիքի աշխատավոր չարչրկված զանգվածները:

Նժդեհի խոսքը տևել է շուրջ 2 ժամ: Նա կանգ է առել Զանգեզուրում բոլշևիկների ժամանակավոր (5-ամսյա) գործունեության արդյունքների վրա և հանգել եզրակացության. «Թվելով այս բոլորը, ես կամեցա ցույց տալ այն խոր վերքերը, որ հասցրել են այս ժողովրդին, որով էլ ակամայից ստիպեցին Զանգեզուրի (նկատի ունի Բուն Զանգեզուրը՝ Գորիսը - Վ.Ղ.) և Սիսիանի չքավոր զանգվածներին խրտնել և երեսները շրջել կոմունիստներից ու խորհրդային կարգերից՝ գեթ որոշ ժամանակով, մինչև վերքերը սպեղանի դառնան: Ժամանակ ու գործելակերպի խիստ փոփոխություն է պետք, որ այս ժողովրդի հետ կարելի լինի խոսել խորհրդայնացման մասին»:

Այնուհետև Նժդեհը պատասխանել է նաև մյուս հարցադրումներին:

Գ. Վարդանյանի և Գ. Նժդեհի զրույցին ներկա է գտնվել դիվանի (կառավարության) նախագահ Գեղեոն Տեր-Մինասյանը:

Հանդիպման վերջում Նժդեհը հայտարարել է, որ կառավարության գրավոր պատասխանը կտրվի՝ հանձնելու Հայաստանի հեղկոմին, 11-րդ - բանակի հրամանատարությանը, Ռուսաստանի արտգործժողկոմ Չիչերինին և Դրոյին:

Փետրվարի 5-ին ստանալով Ինքնավար Սյունիքի խորհրդարանի դիվանի նախորդ օրվա պատասխանը, պատվիրակությունը վերադարձավ Բաքու, որտեղից և մեկնել էր:

«Ինքնավար Սյունիքի կառավարությունը,- ասված է նրա գրության մեջ,- լինելով գերազանցորեն ժողովրդական, առանց ժողովրդի հավաքական կամքի ու ցանկության, չի կարող անմիջապես պատասխանել նրան: Դրոյի նամակի ուղղությամբ նա կտնտղի ժողովրդի տրամադրությունը և կամքը, աշխատելով հնարավորության սահմաններում շուտափույթ կերպով պատասխանել այդ գրությանը»[180]:

Այդ պատասխանը, սակայն, ձգձգվեց, մինչև վրա հասավ փետրվարի 18-ի հեղաշրջում-ապստամբությունը, երբ այլևս նրա կարիքը վերանալու էր:

Հետաքրքիր է նաև Նժդեհի մի գրությունը (25 հունվարի 1921 թ.) 11-րդ բանակի հրամանատարությանը, որից երևում է, որ այդ հրամանատարությունը նրան առաջարկված է եղել հաստատել բարեկամական հարաբերություններ: Նժդեհը գրում է, որ ինքը սկզբունքորեն դեմ չէ այդ առաջարկին, սակայն ստեղծված պայմաններում անկեղծ բարեկամական հարաբերությունների հաստատումը Ինքնավար Սյունիքի և խորհրդային իշխանության միջև համարում էր աննպատակահարմար և իր հերթին դրա համար առաջադրում էր հետևյալ պայմանները.

1. Բանտերից ազատել Հայաստանի հեղափոխական սոցիալիստական կուսակցությունների անդամներին:

2. Քեմալական զորքերից մաքրել նրանց գրաված հողամասերը:

3. Հրաժարվել Զանգեզուրում ընդհատակյա գաղտնի աշխատանքից, չուղարկել զանազան անձնավորություններ՝ «գաղտնի և շտապ գործերով», ինչպես դա իրականացնում է 11-րդ բանակի գրանցման (ռեգիստրացիայի) բաժինը[181]:

Եվս մի քանի անգամ կողմերը միմյանց դիմեցին փոխադարձ հարց ու պատասխանով, տալով բացատրություններ ու հիմնավորումներ առաջադրված մեղադրանքներին: Այսպես, փետրվարի 15-ի գրությամբ 11-րդ - բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Հեկկերը (այդ բանակի հրամանատար) խոստովանում էր, որ իրենց կողմից Զանգեզուրի գրավ-

---

[180] Նույն տեղում, թ. 30:

[181] Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 131-134:

ման ժամանակ այնտեղ իսկապես տեղի են ունեցել «ամոթալի դեպքեր», սակայն դա վերագրում է միայն տաճկական գնդին, որին իրենք Զանգեզուրով ուղարկելիս են եղել Նախիջևան Քեմալի մոտ, որովհետև «այդ գնդի ներկայությունը տաճկական զորամասերի մեջ անհրաժեշտ է եղել նրանց նվազագույն հեղափոխական լինելը հաստատելու համար»:

Վերջում 11-րդ բանակի հրամանատարը հույս էր հայտնում, որ դեռ կարելի է շարունակել բանակցությունները (Շուշիում) «Զանգեզուրը Խորհրդային Հայաստանի հետ միացնելու պայմանները ճշտությամբ գծելու համար»[182]:

Որպես պատասխան, Ինքնավար Սյունիքի սպարապետ Նժդեհը հանդես եկավ 11-րդ կարմիր բանակի զորահրամանատարին ուղղված բաց նամակով (24 փետրվարի):

Այսպիսով, շարադրվածի հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացության. Զանգեզուրի իշխանությունները բացահայտորեն դեմ չարտահայտվելով խորհրդայնացմանը, միաժամանակ որոշակի վերաբերմունք չեն դրսևորում խորհրդայնացման հարցի նկատմամբ, դա վերապահելով երկրամասի ժողովրդին, նրա համագումարին: Անձամբ Նժդեհը, որը իշխանության հիմնական ու վճռական դեմքն էր, դարձյալ դեմ չարտահայտվելով խորհրդայնացմանը, դեռևս չուներ վստահություն և հավատ այդ իշխանության նկատմամբ, որ նա կգործի հօգուտ Զանգեզուրի աշխատավոր գյուղացիության ու Հայաստանի ժողովրդի և առայժմ հապաղում էր: Միաժամանակ ակնհայտ է Ինքնավար Սյունիքի համակրանքը Հայաստանի Հանրապետության պետականության նկատմամբ:

Փետրվարի 18-ը եկավ որոշակիություն ու պարզություն մտցնելու տրամադրություններում ընդդեմ Զանգեզուրի խորհրդայնացման:

Ախտայում գտնվող Համո Օհանջանյանը մարտի 3-ին Քեշիշքենդից (Դարալագյազ) ստացել էր Նժդեհի նամակը, որում նա ողջունել է Փետրվարյան ապստամբությունը և նոր իշխանության ստեղծումը: «Սրտի անհուն բերկրանքով,- գրված է նամակում,- ողջունում եմ Արարատյան հայության ապստամբությունը և ազատագրումը օտար լծից (հասկանալ ռուսական կարմիր բանակի ներկայությունը - Վ. Ղ.): Ինքնավար Լեռնահայաստանի ժողովուրդը ջերմ կարոտով սպասում է այն երջանիկ րոպեին, երբ քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրին»[183]:

Մարտի 9-ին հեռագրով Գորիսից ստացվել էր նաև Ինքնավար Սյունիքի կառավարության ողջույնը[184]: Իսկ հաջորդ օրը Նժդեհը, դարձյալ Նոր

---

[182] Նույն տեղում, էջ 135-138:
[183] Ազատ Հայաստան, 9 մարտի 1921 թ.:
[184] Ազատ Հայաստան, 15 մարտի 1921 թ.:

Բայազետից, Հ. Օհանջանյանի միջոցով ուղարկած նամակով ողջունել է զորքին[185]:

Հայաստանի կենտրոնական շրջաններում ապստամբության բռնկումը զուգադիպեց Զանգեզուրի ինքնապաշտպանների կարևոր հաջողության՝ Դարալագյազի գրավման հետ: Դարալագյազը ռազմավարական նշանակություն ուներ Ինքնավար Սյունիքի և Հայրենիքի փրկության կոմիտեի համար, որպես նրանց կապող օղակ: Այդ կապի միջոցը միակն էր, քանի որ անկարելի էր օգտվել Նախիջևանի ուղուց:

Դարալագյազի՝ պատմական Վայոց ձորի գրավումը իրականացրին Արևմտյան ռազմաճակատի զինված ուժերը (սիսիանցիները), որոնց հրամանատարն էր Յապոնը (Համբարձում Պարոնյանը), փետրվարի 16-ին: Կարմիր բանակի զորամասերը չկարողացան նույնիսկ դիմադրություն կազմակերպել, ավելին, տվեցին շուրջ 900 գերի: Գրավվեց մեծաքանակ ռազմավար:

Դարալագյազը մաքրված է բոլշևիկներից, հայտնում էր թերթը: Նժդեհի հետախույզները հասել են Դամարլու և կապ հաստատել Մարտիրոսի զորամասի հետ[186]:

Փետրվարի 21-ին Գորիսի Ս. Լուսավորիչ եկեղեցում հանդիսավոր իրադրության պայմաններում զանգեզուրցիները նշեցին իրենց կարևոր հաղթանակը: Սպարապետ Նժդեհի մեջքին կապվեց օծված գոտին և նրան հանձնվեց եռագույն դրոշը, «Ինքնավար Սյունիքի կառավարությունից անհաղթ սպարապետ Նժդեհին» մակագրությամբ:

Փետրվարի 25-ին տեղի ունեցավ Վայոց ձորի գյուղացիության 1-ին համագումարը:

Հայրենիքի Փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանը փետրվարի 20-ին Նժդեհին հրավիրեց պաշտոն ստանձնել Երևանում, ինչպես նաև մի քանի հարյուր զանգեզուրցի-ղարաբաղցի մարտիկներ բերելով՝ ամրապնդել ժողովրդի բարոյական ոգին[187]:

Հրավերը և օգնության խնդրանքը Ս. Վրացյանը կրկնեց նաև հետագա օրերին, երբ ապստամբների դրությունը դառնում էր անհուսալի: Մարտի 18-ի նամակը, որը հասցեատիրոջը չէր հասել, ճանապարհին բռնվել էր և այնուհետև տպագրվել բոլշևիկյան «Կոմունիստ» թերթում: Ս. Վրացյանը կարծում էր, որ իր զինված ուժերի գլուխ պետք է կանգնի Նժդեհի նման

---

[185] Ազատ Հայաստան, 17 մարտի 1921 թ.:
[186] Ազատ Հայաստան, 25 փետրվարի 1921 թ.:
[187] Վ. Գևորգյան, Զանգեզուրի հերոսամարտը, էջ 151:

ժողովրդական հեղինակություն վայելող անձը, որպեսզի կարելի լիներ դիմել վճռական քայլերի[188]:

Ս. Վրացյանը մի նոր նամակով Նժդեհին, նաև Յապոնին դիմեց մարտի 25-ին, երբ սկսվում էր Կարմիր բանակի զորքերի վճռական հարձակումը ապստամբական ուժերի վրա: Դարալագյազ-Զանգեզուր-Երևան գծի բացումը Ս. Վրացյանը համարում էր կենսական ու անհետաձգելի[189]: Ս. Վրացյանը անհանգստանում էր իրենց նահանջի ճանապարհի համար:

Ս. Վրացյանի թերթը մարտի վերջին օրերին հայտնում էր, թե Դարալագյազից ու Զանգեզուրից մայր Հայաստանին օգնության եկող հայկական զորքերը կապ են հաստատել Դամարլուի ճակատում գործող իրենց զորամասերի հետ[190]: Այնուամենայնիվ եկել էր Հայրենիքի փրկության կոմիտեի վերջը: Ապրիլի 2-ին բազմահազար գաղթականությունը և փոքրաթիվ զորքը բռնեցին փախուստի ճանապարհը դեպի Զանգեզուր, այստեղ ստեղծելով նոր, փաստորեն անհուսալի իրադրություն: Տասներկու հազար գաղթականությունը, գրել է հեղինակներից մեկը, եկավ տխուր և անխուսափելի անակնկալների մատնելու Սյունիքը, որը 2 տարի շարունակ բոլոր ճակատներում կռվում էր գերազանց ուժերի դեմ[191]:

Չնայած Դարալագյազի գրավումից հետո զանգեզուրցիների օգնությամբ ռազմական հաջողություններ ձեռք բերվեցին նաև Դարաբաղում, բայց դա ուներ միայն անցողիկ նշանակություն: Խոսքը Թևանի (Թևան Ստեփանյան) ապստամբության մասին է, որին, ինչպես արդեն նշվել է, 1921 թ. գարնանը օգնության էին գնացել Նժդեհի 4 վաշտեր, փոխգլխապետ Տեր-Ստեփանյանի ղեկավարությամբ: Ազատագրվել էին Դիզակի, Վարանդայի և այլ շրջաններ: Զանգեզուրյան վաշտերը, սակայն, ստիպված եղան ապրիլին, ուժեղ մարտեր տալով, հետ քաշվել: Նահանջը ղեկավարում էր Գարեգին Ամիրջանյանը, Նժդեհի նշանավոր հրամանատարներից մեկը:

Ռազմական տեսակետից Ինքնավար Սյունիքի համար ծանր վիճակ էր ստեղծել նաև Դարալագյազի անկումը, որը կարմիր զորքերը գրավեցին ապրիլի 15-ին, հյուսիսից ընդհուպ մոտենալով Սիսիանին ու Գորիսին:

Ապրիլի 22-ին «Լեռնահայաստանի Սպարապետ» Նժդեհը կոչով դիմեց Լեռնահայաստանի Դավիթբեկյան զորքերին ու ժողովրդին, նրանց ուղղելով պայքարի նոր ոգևորող խոսքեր:

---

[188] Կոմունիստ, 13 մայիսի 1921 թ.:
[189] Վ. Գևորգյան, Զանգեզուրի հերոսամարտը, էջ 151-152:
[190] Ազատ Հայաստան, 29 մարտի 1921 թ.:
[191] Վ. Գևորգյան, Զանգեզուրի հերոսամարտը, էջ 152:

Հայրենիքի փրկության կոմիտեի պարտությունը և մեծաքիվ գաղթականության նահանջը Զանգեզուր, այստեղ ստեղծելով բարդություններ, դրեցին նոր խնդիրներ:

Նախ, կազմացրվեց ինքը Հայրենիքի փրկության կոմիտեն և նրա փոխարեն ստեղծվեց փոքրակազմ կառավարություն, Սիմոն Վրացյանի ղեկավարությամբ, որն օգնելու էր տեղական իշխանություններին «գաղթականության, էվակուացիայի և այլ խնդիրներով»: Իսկ նահանջած ռազմական ուժերը, ամբողջ հրամանատարությունը դրվեցին Սպարապետ Նժդեհի տրամադրության տակ: Նրանցից Կուռո Թարխանյանը նշանակվեց սպարապետի տեղակալ: Ապրիլի 21-ին Ս. Վրացյանը Նժդեհին այնուհետև գրում էր, որ ինքը և Քաջազնունին մեկնում են Թավրիզ անհրաժեշտ առաքելությամբ[192]:

Ապրիլի 26-ին «Լեռնահայաստանի Սպարապետ» Նժդեհը գրավոր դիմեց պարսից շահին, օգնություն ցույց տալու խնդրանքով: Նժդեհը խնդրում էր Թավրիզում ժամանակավոր ապաստան տալ Երևանից գաղթած հայ մտավորականներին, որոնց թիվը հասնում էր շուրջ 500-ի, «մինչև որ հանգամանքները թույլ տան դրանց կրկին անգամ վերադառնալ իրենց հայրենիքը»:

«Մեծանուն զորավար Նժդեհին» պատասխան նամակում Թավրիզի Մեհտի խանը գրել է, որ պատրաստ է մատուցելու «ամեն մի ծառայություն, ինչ որ վայել է Ձեր անվան վեհությանը»[193]:

Նոր իրադրության պահանջով ապրիլի 26-ին, դարձյալ Տաթևում, հրավիրվեց Լեռնահայաստանի ժողովրդական ներկայացուցիչների 2-րդ - համագումարը, որի աշխատանքներին մասնակցում էր 95 պատգամավոր: Համագումարը որոշում ընդունեց Ինքնավար Սյունիքը Լեռնահայաստան վերանվանելու մասին: Նման անվանափոխությունը, կարծես մրցակցում էր «Խորհրդային Հայաստանի» հետ և պետք է որ անհանդուրժելի լիներ վերջինի ղեկավար շրջանների համար: Այդ «մարտահրավերը» պետք է ավելի սրվեր մի քանի օր անց կատարված նոր անվանափոխությամբ:

Համագումարը վարչապետ ընտրեց Նժդեհին, նրան հանձնարարելով նոր կառավարության կազմումը: Կառավարության անդամը կոչվելու էր նախարար: Այն հաստատվեց 7 նախարարի կազմով, ընդգրկելով նաև Երևանից նահանջած կադրերին. նախարարապետ և արտաքին գործերի ու զինվորական նախարար՝ Նժդեհ, տարբեր ճյուղերի նախարարներ՝ Ս. Մելիք-Յոլչյան, Ա. Օհանջանյան, Հ. Տևեճյան, Հ. Տեր-Հակոբյան, բժ. Մինասյան, բժ. Եղիազարյան, Գ. Տեր-Մինասյան: Նախարարապետ Նժդեհին

---

[192] Նույն տեղում, էջ 158-159:
[193] Նույն տեղում, էջ 158:

շնորհվեց զորավարի աստիճան, և նա պարգևատրվեց «Խուստափյան արծիվ» երկաթե շքանշանով:

Երկրորդ համագումարը, ինչպես և 1-ինի դեպքում, իրեն հռչակեց Լեռնահայաստանի պառլամենտ[194]:

Նույն օրը պառլամենտը ողջունեց զորքին ու նրա հրամանատարներին, նրանց մաղթելով նոր հաղթանակներ[195]:

Երկրորդ համագումարի անհրաժեշտությունը, բացատրել է Նժդեհը, ըստ որի այն ուներ ոչ այնքան գործնական, որքան բարոյական նշանակություն: «Երևանյան գաղթի առաջացրած բարոյալքումից հեռու պահելու համար՝ պետք էր մի նոր ժեստով գոտեպնդել տեղական ժողովուրդը: Եվ այդ ոչ թե միայն անկախ Հայաստանի գաղափարն ապրեցնելու համար, այլև որպեսզի հոգեբանական հնարավորություն տրվեր Սյունիքի հայության՝ մի որոշ ժամանակով ևս դիմավորելու իրեն օղակող ռուս և թուրք հորդաներին, մինչև որ մազապուրծ եղած հայ մտավորականությունը կանցներ Պարսկաստան: Երևանի առաջին անկմամբ ստեղծված ծանր դրությունը փրկել էր Ինքնավար Սյունիքը: Նրա երկրորդ խորհրդայնացմամբ առաջացած աղետալի դրությունը պիտի փրկեր Լեռնահայաստանը, որը փաստորեն գոյություն ուներ Ղարաբաղի և Վայոց Ձորի գրավման օրերից»[196]:

Համագումարի ավարտից մի քանի օր անց հրապարակվեց «Լեռնահայաստանի կառավարության դեկլարացիան», որում շարադրված էին նրա խնդիրները ներքին կյանքում և արտաքին հարաբերություններում[197]:

Լեռնահայաստանի իշխանությունները Գորիսում կազմակերպել էին Հայաստանի անկախության՝ մայիսի 28-ի տոնակատարությունը:

1921 թ. այդ գարնանային օրը, նկարագրել է տոնակատարությունը Նժդեհը, եռագույնը դեռևս ծածանվում էր մեր հայրենիքի լեռնային երկրամասի վրա: Նրա մայրաքաղաք Գորիս էին ժամանում Զանգեզուրի (Գորիսի), Տաթևի ու Ղարաբասի շրջանների ժողովրդական վաշտերը, բազմահազար ժողովուրդը:

«Ես այդ օրը տեսա Սյունիքը,- շարունակում է Նժդեհը,- իր ույժի, փառքի ու մեծության մեջ: Նա հպարտ էր, որովհետև պարտության էր մատնել Ադրբեջանը, ջարդել տաճիկ գնդերը, զինաթափել բոլշևիկյան 11-րդ զորաբանակը: Նա հպարտ էր, որովհետև հերոսական շարժունակով հետ էր մղել դեպի հայ մտավորականությունը երկարող խորհրդային մահաբեր

---

[194] Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք. «Հայրենիք», 1925 թ., թիվ 10, էջ 138-139:
[195] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 89, թ. 12:
[196] Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք. «Հայրենիք», 1925 թ., թիվ 10, էջ 138:
[197] Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 161-162:

տապարը: Նա հպարտ էր, որովհետև իր մեջքը փրկության կամուրջ էր դարձրել նահանջող բյուրոց համար՝ դեպի Պարսկաստան»[198]:

Այդ օրը գնդապետի աստիճան շնորհվեց Նարինյանին (գլխավոր շտաբի պետ), փոխգնդապետի աստիճան՝ Մելիք-Օհանջանյանին, Ամիրջանյանին, Թորոսյանին, Ամիրխանյանին և Գրիգորյանին: Բարձրացվեցին նաև այլ սպաների զինվորական աստիճանները[199]:

Չնայած պետականության այս արտաքին և ձևական բոլոր նշաններին, նրա իրական դրությունը ծանր էր և գնալով ավելի էր ծանրանում: Երևանից հազարավոր մարդկանց գաղթը անլուծելի խնդիրներ ստեղծեց տնտեսական բնագավառում: Հացի խիստ պակասը չէր թուլանում Պարսկաստանից ստացվող չնչին միջոցներով: Ինչ վերաբերում է արտաքին դրությանը, ապա քաղաքացիական պատերազմի ավարտից և խորհրդային իշխանության Երևան վերադառնալուց հետո այն նույնպես ծանրացավ, ուժեղացավ ճնշումը նրա վրա և՝ խաղաղ, և՝ ոչ խաղաղ միջոցներով՝ և՝ Խորհրդային Հայաստանի, և Կարմիր բանակի կողմից: Առայժմ գերապատվությունը տրվում էր խաղաղ միջոցներին՝ բանակցություններին:

Ապրիլի 2-ին Երևանը գրավելուց հետո Կարմիր բանակի զորամասերը փորձեցին հետապնդել նահանջող ուժերին և մարտական գործողությունները փոխադրեցին Դարալագյազ, առաջադրանք ունենալով գրավել այն և փակել Երևանից նահանջողների ճանապարհը, որոնց թվում կային նաև հազարավոր խաղաղ քաղաքացիներ, կանխելու համար նրանց սպառնացող անխուսափելի տառապանքները: Երևան վերադարձած խորհրդային իշխանությունը ապրիլի 7-ին հայտնում էր, որ այսպես կոչված Հայրենիքի փրկության կոմիտեն փախչելով Երևանից, պրովոկացիայով իր հետևից տարել է խաբված քաղաքացի գաղթականների[200]:

Դարալագյազի վրա հարձակումը, որ սկսվեց ապրիլի 12-ին, կատարվեց երկու ուղղությամբ. արևմուտքից՝ Բաշ-Նորաշենից (հայկական զորամասեր և 180-րդ գունդ) և հյուսիսից՝ Նոր-Բայազետ-Սելիմի լեռնանցք գծով (ռուսական 18-րդ դիվիզիայի զորամասեր): Ապրիլի 15-ին հայկական զորամասերը առաջինը մտան Դարալագյազի կենտրոն Քեշիշքենդ: Իսկ ապրիլի 19-ին 18-րդ դիվիզիայի հրամանատարությունը շնորհակալություն հայտնեց անձնակազմին Սելիմի լեռնանցքը հերոսաբար հաղթահարելու և Դարալագյազի գրավմանը մասնակցելու համար[201]: Կարմիր զորքերն ընդհուպ մոտեցան Զանգեզուրի սահմաններին և առայժմ դադարեց-

---

[198] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, էջ 152-153:
[199] Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 163:
[200] ԲՀԱ, 1980 թ., թիվ 2, էջ 57:
[201] Նույն տեղում, էջ 61:

ին ռազմական գործողությունները: Այնուամենայնիվ առաջադրված խնդիրը կատարվեց ոչ ամբողջությամբ: Չհաջողվեց կանխել գաղթականության երթը, որն արդեն անցել էր Զանգեզուր:

Կարմիր բանակը նախապատրաստվում էր ռազմական գործողություններ զարգացնել Զանգեզուրի հարցը լուծելու համար: 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության մշակած պլանի (24 ապրիլի) համաձայն, նախատեսված էր Զանգեզուրը չորս կողմից վերցնել աքցանի մեջ և ջախջախել նրա ուժերը: Միաժամանակ 11-րդ բանակի հրամանատարությունը գտնում էր, որ մինչև ռազմական գործողությունները «պետք է փորձել Զանգեզուրի խռովությունը վերացնել խաղաղ ձևով»[202]:

Խորհրդային իշխանության նախաձեռնությամբ մայիսին տեղի ունեցան նոր բանակցություններ: «Պաշտոնական աղբյուրներից հաղորդում են,- գրել է «Կոմունիստ» թերթը,- որ Զանգեզուրի կառավարությունն ընդունել է Հայհեղկոմի առաջարկը բանակցություններ սկսելու»[203]: Բանակցությունները սկսվեցին մայիսի 12-ին Սիսիանի շրջանի Ղալաջուղ գյուղում: Խորհրդային պատվիրակության մեջ էին Արտաշես Կարինյանը և Վասիլի Մելնիկովը (բանակի ներկայացուցիչ): Զանգեզուրի կողմը ներկայացնում էին Գեդեոն Տեր-Մինասյանը, Մինաս Մինասյանը և Լևոն Միքայելյանը:

Երևանի պատվիրակությունը մայիսի 12-ին ՀՍԽՀ հեղկոմի նախագահ Ալ. Մյասնիկյանին և զորքերի հրամանատար Վելիկանովին ուղարկել է հետևյալ հեռագիրը. «Գտնվում ենք Ղալաջուղ գյուղում, կայացել է երկու պաշտոնական նիստ, որից հետո մեր կողմից առաջարկվել է դեկլարացիա, որն ուղարկվել է Զանգեզուրի կառավարության քննարկմանը: Սպասում ենք պատասխանին 3 օրից, որից հետո կգանք Երևան»[204]:

Ա. Կարինյանը բանավոր ներկայացրեց Խորհրդային Հայաստանի պահանջները: Հակառակ կողմը պահանջեց դրանք ձևակերպել գրավոր, որը և արվեց նույն օրը, հաջորդ նիստում: Այդ գրությունը, ինչպես ճիշտ կերպով նկատել է Լեռնահայաստանի կառավարությունը, ուներ բավական «դեկլարատիվ բնույթ»: Ինչևէ, խորհրդային պատվիրակությունը հիմնավորում էր Զանգեզուրի խորհրդայնացման և Հայաստանին նրա միանալու անհրաժեշտությունը, որից հետո խոստանում էր Զանգեզուրի համար

---

[202] ԲՀԱ, 1978 թ., թիվ 1, էջ 148:
[203] «Կոմունիստ», 12 մայիսի 1921 թ.:
[204] ՀԱԱ, ֆ. 114, ց.2, գ.70, թ. 13-14: Բանակցությունների արձանագրությունը տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ.32, թ. 1-12:

ապահովել դյուրին և, ինչ որ չափով, արտոնյալ պայմաններ, բավարարել Զանգեզուրի ղեկավարության պահանջները[205]:

Մեր պատվիրակությունը, կարդում ենք Հայաստանի զորքերի հրամանատարությանն ուղարկած արտգործժողկոմատի գրության մեջ, Զանգեզուրի անհիվանդագին խորհրդայնացման և Խորհրդային Հայաստանին նրա միանալու համար առաջարկել է հաշտության հետևյալ պայմանները. լիակատար և համընդհանուր ներում քաղաքական և զինվորական բոլոր գործիչների համար, ովքեր ապստամբել և պայքարել են խորհրդային իշխանության դեմ: Զանգեզուրի հայ գյուղացիության հողային հարցի անհիվանդագին լուծում: Զանգեզուրի հեղկոմի և իշխանության այլ տեղական մարմինների կազմակերպում, տեղացիների ներգրավումով[206]:

Իսկ Զանգեզուրի ներկայացրած կարևոր պայմաններից էին Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաև Շարուր-Նախիջևանի ընդգրկումը Հայաստանի կազմում: Բանակցություններում որոշվեց, որ Լեռնահայաստանի կառավարությունն իր պատասխանը տալու է 3 օրվա ընթացքում, մինչև մայիսի 15-ը:

Լեռնահայաստանի կառավարությունը մայիսի 16-ին խորհրդային պատվիրակությանը հայտնեց, որ Լեռնահայաստանի խորհրդայնացման հիմնական խնդիրը դուրս է իր իրավասությունից՝ մի հարց, որը ժողովրդի գերագույն իրավունքն է և պետք է որոշի ինքը՝ իր համագումարում[207]:

Այդ համագումարն այլևս չկայացավ: Նշանակում է չկայացավ և Լեռնահայաստանի պատասխանն ըստ էության: Ընդհանրապես Նժդեհի ու նրա շրջապատի, առավել ևս Սիմոն Վրացյանի կողմնակիցների մոտ նկատելի էր հարցի լուծումը ձգձգելը, որ խոստովանում են նաև իրենք: Այսպես, Ա. Արշակունին (Արշակ Հովհաննիսյան) գրել է. «Լեռնահայաստանի կառավարությունը Գորիսում, բանակցությունների սկզբնավորության, այն տեսակետին էր, որ բանակցությունները պիտի ձգձգել՝ ժամանակ վաստակելու համար»[208]: Նույն կարծիքին էր սպարապետի օգնական Կուռո Թարխանյանը, որը մայիսի 13-ին գալով Ղալաջուղ, որպես իրենց պատվիրակության ռազմական խորհրդական, հայտնել է, թե իրենց ռազմական

---

[205] Ա. Արշակունի, Սիսիանի բանակցությունները. Հայրենիք, 1926 թ., թիվ 8, էջ 41-43:

[206] ՀԱԱ, ֆ. 114, ց.2, գ.21, թ. 38: Տե՛ս նաև՝ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու»: Երևան, 1960, էջ 527:

[207] Հայրենիք, 1926 թ., թիվ 8, էջ 47:

[208] Նույն տեղում, էջ 40:

դրությունն այնպիսին է, «որ ժամանակ վաստակելու նպատակով պետք է ձգձգել բանակցությունները, որքան հնարավոր է»[209]: Չի ասվում, սակայն, թե որն է ձգձգելու նպատակը, ինչ էր տալու ժամանակը: Այս դեպքում մնում է միայն եզրակացնել, որ կամ Նժդեհը հույս է ունեցել քաղաքական իրադրության փոփոխության կամ փորձել է դեռևս սպասել, ապավինելով ժամանակի գործոնին:

Ընդ որում, որոշ փաստաթղթերում խոսվում է այն մասին, թե իբր Նժդեհը բանակցությունների մեջ է եղել թուրքերի հետ՝ օգնություն ստանալու համար: Դա ժխտվել է ինչպես Նժդեհի, այնպես էլ Կարաբեքիր փաշայի կողմից: Վերջինս այդ կապակցությամբ պաշտոնապես հայտնել է Մոսկվայում Թուրքիայի դեսպանին և Բաքվում ու Թիֆլիսում իրենց ներկայացուցիչներին, ինչպես նաև Թիֆլիսում ՀՍԽՀ ներկայացուցչին, Կոստանդնուպոլսի «Երկիր» թերթի հուլիսի 14-ի հրապարակումը համարելով «չարամիտ հորինվածք»[210]:

Ի դեպ, հետագայում, խորհրդային բանտում գտնված ժամանակ, մի փաստաթղթում Նժդեհը գրել է, որ Զանգեզուրի ինքնապաշտպանության ծանր օրերին անգամ, մտքովս չեմ անցկացրել դիմել որևէ հակախորհրդային տերության[211]:

Լեռնահայաստանի կառավարությունը իր պատասխանում միաժամանակ հույս էր հայտնում, որ կողմերը կգտնեն ընդհանուր լեզու «անարյուն ու խաղաղ ճանապարհով լուծելու բոլոր խնդիրները և կանխելու որևէ հնարավոր ընդհարում»[212]: Սակայն այդ հույսերը չէին արդարանում, խոսքը գործ չէր դառնում:

«Բանակցությունները,- գրել է Ա. Արշակունին,- ինչպես ցույց են տալիս նրա ընթացքը և երկու կողմերի փոխադարձաբար ներկայացրած պաշտոնական գրությունները, ժամանակավորապես դադարեցրած պիտի համարել: Երկու կողմերը նորեն իրար պիտի տային, չլուծված ու պատասխան չստացած հարցերը վերջնականապես սպառելու համար: Ուրեմն, դադարեցված էին բանակցությունները և ոչ թե խզված»: Ուշագրավ խոստովանություն է անում հոդվածի հեղինակը, որը ներկա է գտնվել բանակցություններին, թե իրենք խորհրդային ներկայացուցիչներին թողեցին այն համոզումով, որ «բանակցությունները կարող ենք առիթ ծառայեցնել մեր երկրի անկախ գոյությունը երկարացնելու համար»:

---

[209] Նույն տեղում:
[210] ՀԱԱ, ֆ. 113, g.3, գ.11, թ. 259, ֆ. 114, g.2, գ.60, թ. 151:
[211] Նախիջևան, 1999 թ., դեկտեմբեր, թիվ 9-10:
[212] Հայրենիք, 1926 թ., թիվ 8, էջ 47:

Իսկ խորհրդային պատվիրակները, շարունակում է Ա. Արշակունին, վերադարձան Խորհրդային Հայաստան, մասամբ համոզված, թե «Լեռնահայաստանն առանց կռվի կարող են խորհրդայնացման ենթարկել»[213]:

Հետաքրքիր է Սիմոն Վրացյանի տեսակետը նկարագրված անցուդարձերի վերաբերյալ: Բանակցությունների օրերին Ս. Վրացյանը գտնվելիս է եղել Պարսկաստանում: Վերադառնալուց հետո, մայիսի վերջերին ծանոթանալով բանակցությունների փաստաթղթերին, նա Արշակ Հովհաննիսյանին (Ա. Արշակունի) ուղղված նամակում գրել է, թե ըստ հնարավորության բանակցությունները պետք է ձգձգել ևս 2-3 շաբաթ, «մինչև որ վերջնականապես պարզ լինի միջազգային կացությունը, ինչպես նաև նախիջևանցիների և ադրբեջանցիների հետ վարվելիք բանակցությունների արդյունքը»[214]:

Բացառված չէ, որ այդ բանակցությունները առնչություն ունենային նաև այն հակախորհրդային պայքարի հետ, որ 1921 թ. արտասահմանում համատեղ մղում էին դաշնակցականները, մուսավաթականները և վրաց մենշևիկները: Մանավանդ Սիմոն Վրացյանի Պարսկաստան հաճախելը կարող էր նրան լավատեղյակ դարձնել արտասահմանի իրադրությանը:

Քննարկվող հարցի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություն է պահպանվել ՀՍԽՀ զինվորական գործերի գծով ժողկոմ և Առանձին կովկասյան բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Ալ. Մյասնիկյանի ու Երևանի ուղղության զորախմբի հրամանատար Վելիկանովի հրամաններից մեկում: «Հավաստի տեղեկությունների համաձայն,- կարդում ենք հրամանում,- վերջերս Զանգեզուրի ապստամբները խորհրդակցել են մուսավաթականների և այլ հակահեղափոխականների հետ Հայաստանում և ամբողջ Կովկասում խորհրդային իշխանությունը տապալելու նպատակով»[215]: Չնայած տեղեկությունը համարվում է հավաստի, այնուամենայնիվ պահանջվում է նման խորհրդակցության կամ բանակցությունների փաստը հավաստող ավելի վստահելի և ուղղակի վկայող փաստաթուղթ:

Վերջապես քննարկվող հարցի վրա որոշ լույս է սփռում հետևյալ փաստաթուղթը, որը տվյալներ է պարունակում հավանորեն հիշյալ «բանակցություններ» կոչվածի վերաբերյալ: Փաստաթուղթը Շուշիի հեղկոմի 1921 թ. փետրվարի 15-ի գրությունն է Ն. Նարիմանովին (Օրջոնիկիձեին հանձնելու համար): Հեղկոմը (ի լրացումն1920 թ. դեկտեմբերի 4-ի գրության) ներկայացնում է Զանգեզուրի, Ղարաբաղի և Քրդստանի ռազմաքաղաքական իրադրությունը. Զանգեզուրի դաշնակցականները, օգտվելով

---

[213] Նույն տեղում, էջ 48:
[214] Հայրենիք, 1926 թ., թիվ 9, էջ 57-58:
[215] ԲՀԱ, 1978 թ., թիվ 1 էջ 162:

Քրդստանի Մինքենդի և Հաջիսամլուի շրջանների միջև գոյություն ունեցող թշնամությունից, Մինքենդի շրջանի քոչվորների սպառնալիքների դեմ պայքարելու և այլ նպատակով դիմել էին նաև Հաջիսամլուի շրջանի ղեկավար Սուլթան-բեկ Սուլթանովին՝ վարել համապատասխան բանակցություններ:

«Այդպիսի հակասությունների պայմաններում,- կարդում ենք գրության մեջ,- Սուլթան-բեկ Սուլթանովին անընդհատ ռմբահարում են դաշնակցականների դիվանագիտական գործակալները, առաջարկելով մտնել դաշինքի մեջ ընդդեմ խորհրդային իշխանության, որի համար խոստանում ենք ձեռք չտալ քրդերին և նույնիսկ ազատել նրա բանտարկված եղբորը՝ Խոսրով Սուլթանովին»: Սուլթան-բեկ Սուլթանովին դիմելը գրության հեղինակը բացատրում է այդ ղեկավար գործչի հեղինակությամբ, քանի որ ամբողջ Քրդստանը, բացի Մինքենդից, կգնար նրա հետևից: Սուլթանովին խորհրդային իշխանության կողմը գրավելը, բացատրում էր Շուշիի հեղկոմը, թույլ չի տա դաշնակցականների ու Սուլթան Սուլթանովի միավորվելը և, որ գլխավորն է, Քրդստանը պատնեշ կդարձնի, որպեսզի դաշնակցական Զանգեզուրը չմիանա ապստամբական Վարանդային:

Փաստաթուղթը ոչինչ չի հայտնում բանակցությունների կայացման մասին: Հասկանալի է, որ Շուշիի հեղկոմը պետք է ինչ որ առաջարկություն աներ դաշնակցականների և Սուլթան-բեկ Սուլթանովի միավորումը խափանելու և վերջինիս խորհրդային Բաքվի կողմը շրջելու համար: Այդպիսի միջոց նա համարում էր Սուլթան-բեկ Սուլթանովի եղբորը՝ Խոսրով-բեկ Սուլթանովին բանտարկությունից ազատելը[216]:

Այժմ այն մասին, թե Պարսկաստանից, ուր Վրացյանը հաճախ էր այցելում, նա ինչ տեղեկություններ ու կարգադրություններ կարող էր բերել, և որպիսիք կարող էին նշանակություն ունենալ Զանգեզուրի գործընթացների համար:

1921 թ. մայիսին անցնելով Թավրիզ, գրել է Հ. Քյուրքճյանը, Վրացյանը տեղեկացել է վերջին 6 ամիսների կուսակցական կյանքի իրադարձություններին[217]: Դրանցից հիշատակենք ապրիլին Բուխարեստում կայացած խորհրդաժողովը, ապա հունիս-հուլիսին կայացած Ռիգայի բանակցությունները (Դաշնակցության և ՌԿ(բ)Կ-ի միջև): Նույն հեղինակի տվյալներով՝ Արտասահմանի պատասխանատու մարմինը (ՀՅԴաշնակցության Բյուրոյի բացակայության պայմաններում նրան փոխարինել է արտասահ-

---

[216] Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов. Ереван, 1992, с. 611-612.

[217] Յ. Քիւրքճեան, Ուրուագիծ ՀՅԴ պատմութեան 1919-1924 հնգամեակի: Աթէնք, 1988, էջ 53:

մանում) հունիսի 14-ի նամակով (Թեհրանի վրայով, Հովսեփ Արղությանի միջոցով) փորձել է կապվել Թավրիզում գտնվող (Զանգեզուրից ժամանակավորապես եկած) Սիմոն Վրացյանի հետ: «Այդ նամակէն կիմացուի խորհրդաժողովի գումարումը Պուքրէշի մէջ», ինչպես նաև Արտասահմանի պատասխանատու մարմնի (ԱՊՄ) կազմակերպման մասին[218]: Ապա ավելացնում է՝ Թավրիզում Վրացյանն իմացել է Բուխարեստի խորհրդաժողովի մանրամասնությունները, ստացել որոշումներն ու բանաձևերը[219]:

Իսկ ի՞նչ էր որոշել խորհրդաժողովը՝ խնդրո առարկա հարցի վերաբերյալ, որ պետք է արդեն հայտնի դարձած լիներ Վրացյանին, նրա միջոցով նաև Զանգեզուրի մյուս ղեկավար գործիչներին[220]:

Կուսակցությունը շարունակում էր պաշտպանել Միացյալ Հայաստանի անկախության մասին տեսակետը, այդ ուղղությամբ տանելով քարոզչական աշխատանք:

Մոտակա ժամանակի քաղաքականության գերագույն նպատակ էր հռչակվում հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը, իսկ խորհրդային իշխանության խստությունները մեղմելու նպատակով պահանջվում էր սահմանափակվել միայն տեղեկատվական-կազմակերպչական աշխատանքով:

Երկրից դուրս կապի մեջ մտնել Խորհրդային Ռուսաստանի հետ, նպատակ ունենալով այդ պետության քաղաքական կշռի օգտագործումը:

Աշխատել սերտ մերձեցում հաստատել ռուս ռամկավար, սահմանադրական, ընկերվարական տարրերի հետ:

Նույնպիսի սերտ կապ էր պահվելու կովկասյան ժողովուրդների հետ, «որքան ալ Կովկասեան համադաշնակցութեան մը պայմանները դեռ իրագործուած չըլլան»:

Կազմակերպվող Պատասխանատու մարմինը փոխարինելու էր Բյուրոյին, նրա բոլոր իրավունքներով (մինչև հերթական ընդհանուր ժողովը, որը կվերականգներ Բյուրոն): Ինչ վերաբերում է Պարսկաստանին, ապա այնտեղ գործում էին Բյուրոյի անդամներ Սիմոն Վրացյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը և Համազասպ Օհանջանյանը:

Առաջ անցնելով, նկատենք, որ Ռիգայի բանակցություններում Մոսկվայի պատվիրակությունը դաշնակցականներից պահանջում էր դադարեցնել Զանգեզուրի կռիվները:

Նշենք, որ Բուխարեստում ընդունված որոշումների ոգին պահպանվեց նաև 1923 թ. Վիեննայի խորհրդաժողովում, որոշ հավելումներով, որոնք բխում էին ստեղծված իրադրությունից: Բանաձևն արձանագրում էր,

---

[218] Նույն տեղում, էջ 65:
[219] Նույն տեղում, էջ 66:
[220] Նույն տեղում, էջ 55-56:

որ պետք չէ դիմել բռնի միջոցների՝ Հայաստանում վարչածևը տապալելու նպատակով: Ընդունվում էր միայն քաղաքական ընդդիմությունը:

Ամեն կերպ նպաստել Երկրի վերաշինությանը, տարբերություն դնելով վարչածևի և ժողովրդի միջև:

Համերաշխություն և համագործակցություն հարևան ժողովուրդների հետ, նկատի ունենալով ռուսական բանակի Կովկասից հեռանալու հնարավորությունը:

Միայն ապագայի համար (տվյալ պահին անկարելի համարելով) հնարավոր էր դիտվում Խորհրդային Ռուսաստանի հետ լեզու գտնելը:

Կուսակցությունն անհրաժեշտ էր համարում հայ և թուրք ժողովուրդների հաշտեցումը և համաձայնությունը թուրքական այն տարրերի հետ, ովքեր ընդառաջ կգային հայկական պահանջներին:

Երկրի ներսում շարունակվելու էր կուսակցական-կազմակերպական եռանդուն աշխատանքը:

Բոլշևիկների և նրանց գործունեության մեթոդների նկատմամբ ընդդիմություն և այլն[221]:

Այսպիսով, ինչպես Բուխարեստի, այնպես էլ առավել ևս Վիեննայի խորհրդաժողովների որոշումներից բխում էր այն եզրակացությունը, որ իրադրությունը չէր խոսում հօգուտ զինված դիմադրության, որով հարկավոր էր շեշտը դնել կուսակցական-կազմակերպական աշխատանքի վրա, նախապատրաստվելով հարմար պահի կամ ժամանակների հասունացման համար:

Վերադառնանք 1921 թվականի Զանգեզուր:

Այսպիսով, Զանգեզուրի դաշնակցականները բանակցությունների մեջ գտնվելով Խորհրդային Հայաստանի հետ և պահպանելով դրանք անընդհատ ձգձգելու մարտավարություն, միաժամանակ չէին բացառում արտաքին (թերևս նաև միջազգային) նպաստավոր իրադրության դեպքում ամրապնդել և շարունակել իրենց գործունեությունը, իրականացնել ավելի լայն խնդիրներ կամ խորհրդային կողմին ներկայացնել իրենց տեսակետից ավելի նպաստավոր պայմաններ (պահանջներ): Այդ փորձերը, որից չհրաժարվեցին նաև հետագայում, դատապարտված էին անհաջողության ու ձախողման, քանզի խորհրդային իշխանության դիրքերը գնալով ավելի էին ամրապնդվում:

Մայիսի 23-ին ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը 11-րդ բանակի հրամանատար Հեկկերի հետ ունեցած հեռախոսային զրույցում հայտնում էր, որ առայժմ բանակցությունները կշարունակվեն և,

---

[221] Նույն տեղում, էջ 73-74:

որոնք, ըստ երևույթին, ծգծգվում են: Դա նշանակում է, որ դեռևս պետք չէր դիմել ուժի միջոցին: Միաժամանակ Ալ. Մյասնիկյանը խնդրում էր մեկ դիվիզիա ուժեղացնել նյութական մասով[222], որ պետք է հասկանալ որպես հարձակման նախապատրաստություն: Ընդ որում, Երևանի ուղղության զորքերի հրամանատարությունը հույսեր չէր տածում բանակցությունների նկատմամբ և գտնում էր, որ շուտով հարկ կլինի անցնել ռազմական գործողությունների[223]:

ՀՍԽՀ կառավարությունը լսեց պատվիրակության հաղորդումը բանակցությունների ընթացքի մասին: Արձանագրվեց, որ, ըստ Զանգեզուրի, հարցի վերջնական լուծումը «տեղի է ունենալու նրա գյուղացիության ընդհանուր համագումարում, որի համար պահանջվում է ժամանակ»: Զանգեզուրը խոստացել էր դրված հարցին պատասխանել մի քանի շաբաթից հետո: Երևանի կառավարությունը որոշեց բանակցությունների հարցի հանգամանալի քննարկումը վերապահել ՀԿ(բ)Կ Կենտկոմին[224]: Մինչ այդ Կենտկոմը, Կարինյանի զեկուցումն ընդունելով ի գիտություն, կազմակերպել էր հանձնաժողով (Ա. Կարինյան, Ա. Մռավյան, Փիրումյան կազմով), որին հանձնարարվել էր պատրաստել զեկուցում և ներկայացնել կոնկրետ առաջարկություններ 3 օրվա ընթացքում՝ համաձայն հանձնաժողովին տրված հրահանգի[225]: Մայիսի 23-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը լսեց հանձնաժողովի զեկուցումը և ընդունեց հետևյալ որոշումը. «Հաստատել [հանձնաժողովի] դրույթները: Ձեռնպահ մնալ շտապ հայտագիր ուղարկելուց՝ մինչև Լեռնային Ղարաբաղի մասին հարցը ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի առաջիկա պլենումում պարզելը»[226]: Հայաստանի օգտին Ղարաբաղի հարցի լուծումը Նժդեհը համարում էր պայքարը դադարեցնելու անհրաժեշտ պայման: Կովկասյան բյուրոյի պլենումի սպասվող որոշումն, ինչպես նշել ենք, ընդունվեց հունիսի 3-ին, որին հետևեց Հայաստանի հունիսի 12-ի համապատասխան հայտարարությունը:

Մինչև ՀՍԽՀ կառավարությունը սույն կուսակցական որոշումների ոգով կձևակերպեր իր պատասխանը, հունիսի 8-ին Նժդեհը ստորագրել է Խորհրդային Հայաստանի հեղկոմին (պետք է լինի ժողկոմխորհին) հասցեագրած դիմում՝ երկրամասը խաղաղորեն հայ բոլշևիկներին հանձնելու պայմանների մասին: Այդ պայմանները կարելի է ստորաբաժանել երկու խմբի. մեկը վերաբերում է Հայաստանում սոցիալ-տնտեսական ու քաղա-

---

[222] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 529-530:
[223] ԲՀԱ, 1978 թ., թիվ 1, էջ 153:
[224] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 22:
[225] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 4:
[226] Նույն տեղում, թ. 5:

քական վերափոխումներին, մյուսը՝ Զանգեզուրի համար առանձնահատուկ կարգավիճակ սահմանելուն[227]: Ըստ էության, այդ պայմանների զգալի մասը անընդունելի էին բոլշևիկների կուսակցության և խորհրդային իշխանության տեսանկյունից: Սակայն, տվյալ դեպքում, բանն այն է, որ Նժդեհի այդ փաստաթուղթը խորհրդային իշխանությանը կամ չի հասել կամ մատնվել է անուշադրության, որովհետև դրանից մի քանի օր անց ՀՍԽՀ կառավարության հայտարարությունը նկատի ուներ Լեռնահայաստանի կառավարության մայիսի 16-ի փաստաթուղթը, և ոչ՝ հունիսի 8-ի պայմանները:

«Զանգեզուրի ապստամբությունը,- ասված է հայտարարության վերջում,- և նրա մեկուսացումը խանգարում են մեր հայրենիքի խաղաղ շինարարության գործին և նրա բոլոր հատվածների վերջնական միացմանը: Ուստի ՀՍԽՀ ժողկոմխորհը այլևս չի կարող հաշտվել հին դրության հետ և առաջարկում է Ձեզ (Լեռնահայաստանի կառավարությանը - Վ. Ղ.) անհապաղ տալ պարզ պատասխան այս պաշտոնական դիմումին»[228]:

ՀՍԽՀ կառավարության հայտարարությունը կրում էր վերջնագրի բնույթ:

Ալ. Մյասնիկյանի մի այլ հայտարարությունից երևում է, որ նրա ներկայացուցիչը ժամանակին մեկնած է եղել սահման՝ ՀՍԽՀ հայտարարության մասին հայտնելու «Զանգեզուրի ներկա իշխանություններին», ինչպես նաև բանակցությունները շարունակելու համար: Սակայն Զանգեզուրի ղեկավարները, չսպասելով դրանց, ձեռնարկեցին հարձակում խորհրդային զորքերի վրա[229]:

Խորհրդային ներկայացուցիչ Ա. Կարինյանի հերհերում սպասելու լուրի մասին տեղեկություն է պահպանվել նաև Ա. Արշակունու հոդվածում: Կարինյանի առաքելության կապակցությամբ Գորիսի կառավարությունը Բազարչայում գտնվող Սպարապետի օգնական Կուռո Թարխանյանին հունիսի 14-ին ուղարկել է հետևյալ հեռախոսագիրը. «Կառավարությունը միայն առաջարկում է սկսել օպերացիան (խոսքը Դարալագյազը գրավելու մասին է - Վ. Ղ.) որոշած ժամանակին և ճշգրիտ կերպով իրագործելու խնդիրը, որից հետո միայն կառավարությունը կպարզի իր դիրքը բանակցությունների վերաբերմամբ: Դելեգատներին առայժմ ոչ մի պատասխան չտալ»[230]: Զանգեզուրն իր վրա էր վերցրել բանակցությունները խզելու և հարցի խաղաղ լուծումից հրաժարվելու նախաձեռնությունը:

---

[227] Վ. Գևորգյան, Զանգեզուրի հերոսամարտը, էջ 173-175:
[228] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 530-532:
[229] Նույն տեղում, էջ 535:
[230] Հայրենիք, 1926 թ., թիվ 9, էջ 59:

1921 թ. կեսերին Զանգեզուրը ամբողջ Անդրկովկասում միակ անհանգիստ վայրն էր, որը փաստորեն պայքարում էր Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի ոտնձգությունների վտանգի դեմ: Ուստի բոլոր միջոցներն օգտագործվում էին պայքարին վերջ տալու և ամբողջ Անդրկովկասում խորհրդային իշխանությունն ամրապնդելու, խաղաղություն հաստատելու համար: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, Կովկասյան բյուրոյի պլենումի նշված որոշումը ևս ոչ այնքան իրականացնելու, որքան Նժդեհի պայմանները թեկուզ կեղծ ձևով կատարած լինելու համար էր: Պարզվեց, որ նույնպիսի նպատակ ունեին նաև այն բանակցությունները, որոնք կայացան Ռիգայում 1921 թ. հունիս-հուլիսին Դաշնակցության և ՌԿ(բ)Կ Կենտկոմի պատվիրակությունների միջև: Բանակցություններ վարելու նախաձեռնությունը բխում էր Դաշնակցությունից «երկու կուսակցությունների փոխհարաբերությունների, այնպես էլ հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող հարցերի շուրջ»[231]:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն համաձայնեց մտնել բանակցությունների մեջ իրեն հետաքրքրող մի շարք հարցեր պարզելու, նաև Զանգեզուրի կռիվներին վերջ տալու համար: Հենց որ ավարտվեցին կռիվները, Մոսկվան ընդհատեց բանակցությունները:

Ինչևէ, խաղաղ փորձերը դեռևս շարունակվում էին: Հենց Հայաստանի ժողկոմխորհի հայտարարության ընդունման օրը Հայաստանի պատվիրակության ղեկավար Ա. Կարինյանը, Յապոնի միջոցով, դիմեց Լեռնահայաստանի կառավարությանը՝ բանակցությունները վերսկսելու և ՀՍԽՀ կառավարության պաշտոնական առաջարկությունը հանձնելու համար: Փաստորեն Զանգեզուրի կողմից առաջադրված պայմանները ընդունվում էին ՀՍԽՀ կառավարության կողմից[232]: Պայմանների մեջ դժվարը, որ կախված չէր Հայաստանի կամքից, Ղարաբաղի հարցն էր, որը «լուծվում էր» Կովկասյան բյուրոյի պլենումի հունիսի 3-ի որոշումով:

Սակայն գործերի խաղաղ ընթացքին եկավ վերջ տալու Նժդեհի կողմից ռազմական գործողությունների վերսկսումը Ղարալագյազում, հունիսի 15-ին: Այդ մասին որոշում էր ընդունվել մայիսի 29-ին Լեռնահայաստանի և Ս. Վրացյանի կառավարությունների անդամների խորհրդակցությունում: Ա. Արշակունին տեղեկացնում է նաև այն մասին, որ Ս. Վրացյանը դժվարությամբ համաձայնվեց այդ որոշմանը, իսկ Նժդեհը բուռն կերպով պաշտպանում էր այն[233]:

---

[231] ՀՅԴաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու): Երևան, 1999, էջ 60:
[232] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 61, թ. 26:
[233] Հայրենիք, 1926 թ., թիվ 9, էջ 57:

Զանգեզուրը դեռևս ուներ զգալի ուժեր և ցանկություն ռազմական գործողությունների համար:

Կարմիր բանակի գործակալական տվյալներով, 1921 թ. մայիսի վերջի դրությամբ, Նժդեհն ուներ հետևյալ ուժերը. մշտական զորքում կար 7-8 հազար մարդ (այդ թվում հաշվվում են նաև այստեղ գաղթած արևմտահայերը): Բացի այդ զորքից, նշվում է տվյալ ամփոփագրում, պետք է նկատի ունենալ Զանգեզուրի ամբողջ գյուղացիությանը: Նժդեհի շտաբը շարունակում էր գտնվել Գորիսում, իսկ ռադիոկայանը՝ Ղաթարի գործարաններում: Փոխադրության միջոցը սայլերն էին: Հաղորդվում է, որ ծախողվել էր Մեղրիի մոտ Արաքս գետի վրա կամուրջ անցկացնելու փորձը, իսկ կառուցող ինժեները խեղդվել էր գետում:

Սպառազինությունն էր. 87 գնդացիր, մի քանի հրանոթ: Գյուղացիները զինված էին ռուսական և ֆրանսիական հրացաններով: Փամփուշտների պաշարը բավարար էր:

Բերվում են տվյալներ ըստ ռազմական շրջանների. Մեղրի (հրամանատարներ՝ Սմբատ, Դալի Քուրդ Ղազո և Մուշեղ): Ղաթարի գործարաններ (հրամանատար զանգեզուրցի Գերասիմ, հավանորեն՝ Գերասիմ Աթաջանյան): Դարալագյազ (Յապոն, Կուռո Թարխանյան, գնդապետ Կորոլկով՝ կուբանցի), Սիսիան (խմբապետներ Մարտիրոս և Մուշեղ)[234]:

Դարալագյազում կարմիր զորամասերը հանկարծակիի եկան և չհասցրին լուրջ դիմադրություն ցույց տալ Կուռոյի և Յապոնի հրամանատարությամբ գործող զորամասերին և անկարգ նահանջեցին դեպի Նախիջևան: Մեծ կորուստներ տվեց նաև «Կրասնի տաբոր» ադրբեջանական ջոկատը, իսկ հայկական 1-ին գունդը գերվեց (չկարողանալով անցնել գետը): Գնդի կոմունիստները գնդակահարվեցին:

Հայաստանի Հանրապետության Սպարապետի գլխավոր շտաբը հատուկ հաղորդագրությամբ (19 հունիսի, թիվ 15) տեղեկացնում էր գրավված գյուղերի և կարմիրների ամբողջ հրամանատարական կազմի ու 560 բանակայինների գերման մասին[235]:

«Այսպիսով,- գրել է ռազմական պատմաբան Արմենակ Բաղդասարյանը,- Նժդեհը, գտնելով, որ խորհրդային կառավարությունը չի կարող բավարարել իր պահանջը և ստիպված պիտի լինի Զանգեզուրի հարցը լուծել զենքի ուժով, վճռում է հարվածել Դարալագյազում, շարքից հանել հայկական զորամասերը, ապա ամբողջ ուժերով փոխադրվել Ղարաբաղ-Զանգե-

---

[234] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 15:

[235] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 1, թ. 4 (տպագիր օրինակ):

զուրի ճակատ և Հայաստանի խորհրդային կառավարությանը թելադրել իր պահանջները»[236]:

Լեռնահայաստանի կառավարությունը հունիսի 18-ին բնակչության շրջանում տարածեց հայտարարություն Դարալագյազում տարած հաղթանակի մասին: Դարալագյազի ազատասեր ժողովուրդը, նրա ապստամբ զինվորները, Լեռնահայաստանի զինվորների հետ միասին կրկին ապստամբեցին, մաքրեցին Վայոց Ձորը անկոչ հյուրերից և միացան Լեռնահայաստանին, ամբողջացնելով նրա տարածքը[237]:

Սակայն իրադարձությունները դասավորվում էին ոչ հօգուտ Լեռնահայաստանի պաշտպանների: Իրադարձությունների համատեքստում Դարալագյազի տվյալ գրավումը ոչ միայն արդարացված չէր, այլև կարելի է համարել սխալ ռազմական գործողություն, դրա հետ կապված հետևանքներով[238]:

Ուստի Դարալագյազը գրավողների ցնծությունը երկար չտևեց: Խորհրդային իշխանությունը, նկատի ունենալով, որ բանակցությունները ծգվում են անվերջ և արհեստական կերպով, վճռեց անցնել հարցի ուժային լուծմանը, առիթ ունենալով նաև Դարալագյազի արկածախնդրությունը:

Առաջիկա մարտական գործողությունների կապակցությամբ 1-ին Կովկասյան կորպուսի հրամանատար Տոդորսկին հունիսի 5-ին հրամայել էր ուժեղացնել հետախուզությունը Զանգեզուրում և Քրդստանում, մասնավորապես պարզել Սուլթանովի և դաշնակցականների փոխհարաբերությունները[239]:

Հունիսի 18-ին թերթի միջոցով մի նոր հայտարարությամբ հանդես եկավ ՀՍԽՀ կառավարության նախագահ Ալ. Մյասնիկյանը: Հայաստանի իշխանությունը, նշել է նա, մի շարք դիմումներ է արել Զանգեզուրին՝ քաղաքացիական կռվին վերջ տալու և Խորհրդային հայրենիքին միանալու համար: Սակայն նա դիմել է կռվի միջոցին և հունիսի 15-ին հարձակվել է խորհրդային զորքերի վրա, ուստի «այս կռվի ծանրության ամբողջ մեղքն ընկնում է Զանգեզուրում ապաստանած խմբապետների ու «փրկիչների» վրա[240]:

---

[236] Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում: Երևան, 1931, էջ 97:
[217] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 1, թ. 3 (տպագիր օրինակ):
[238] Արամ Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ.: Երևան, 2000, էջ 568:
[239] ԲՀԱ, 1980 թ., թիվ 2, էջ 65:
[240] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան ..., էջ 533-536:

Այն օրերին, երբ Ասքանազ Մռավյանը ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3-ի որոշման համաձայն մեկնում էր Լեռնային Ղարաբաղ, որպես Հայաստանի արտակարգ կոմիսար, ուներ նաև հանձնարարություն Զանգեզուրի կապակցությամբ: Ճանապարհին, Թիֆլիսում գտնվելու օրը, հունիսի 22-ին նա Ալեքսանդր Մյասնիկյանին հեռախոսով հայտնել է. «Եղել եմ բանակի հրամանատարի մոտ, պայմանավորվել եմ հիմնական հարցերի կապակցությամբ: Մանդատը կստանամ վաղը: Մանդատով ինձ հանձնարարվում է Զանգեզուրի դեմ գործող (ուժերի) ընդհանուր քաղաքական ղեկավարությունը»[241]:

Քանի որ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը տորպեդահարեց Ղարաբաղի վերաբերյալ Կովկասյան բյուրոյի որոշման կենսագործումը, ուստի վերացավ նաև Զանգեզուրի վերաբերյալ Մռավյանին տրված խնդիրը:

Հունիսի սկզբից Կարմիր բանակը նախապատրաստվում էր հարձակման համար: Հունիսի 6-ին Առանձին Կովկասյան բանակի ռազմահեղափոխական խորհուրդը մշակել էր այդ գործողությունների պլանը: Զանգեզուրի և Ղարաբաղի դեմ ռազմական գործողությունների և Մեղրին գրավելու մասին Կովկասյան բյուրոյի որոշման համաձայն, ասված է պլանի բացատրական մասում, Ռազմահեղափոխական խորհուրդը որոշեց Զանգեզուրի դեմ գործողությունը սկսել հունիսի վերջին, չորս ուղղություններով: Առաջադրանքը դրվում էր Երևանի ուղղության զորախմբի և Կովկասյան 1-ին կորպուսի վրա, Երևանյան խումբը հարձակվելու էր երկու զորասյունով. մեկը Շարուր-Դարալագյազի գավառի կողմից, մյուսը Նախիջևանի շրջանից, այն պայմանով, որ նախապես ամուր գրավվի Մեղրին՝ կանխելու համար դաշնակցականների ուժերի գետանցը Պարսկաստան, ինչպես նաև այնտեղից օգնություն ստանալը: Կովկասյան 1-ին կորպուսը հարձակվելու էր դարձյալ երկու խմբով. մեկը Շուշիի կողմից, մյուսը Կարյագինոյի, համընթաց ջախջախելով Սուլթան-բեկ Սուլթանովի բանդաները, նաև ժամանակին Խուդափերինի գետանցի գրավումը՝ դաշնակցականների նահանջի ուղին կանխելու համար: Պլանում տվյալներ են բերված Զանգեզուր ուժերի մասին, որոնք կենտրոնացած էին 2 վայրերում՝ Զաբուդի ու Ղարաքիլիսայի տեղամասերում և Մեղրի շրջանում: Վերջինի ամրապնդմանը Նժդեհը տալիս էր կարևոր նշանակություն: Հավանորեն նկատի ուներ իր ուժերի հնարավոր նահանջը: Յուրաքանչյուր տեղամաս ուներ շուրջ 2500 մարդ: Ամբողջ հեծելազորը բաղկացած էր հազար թրավորներից: Նժդեհն ուներ բավարար թվով գնդացիրներ: Սուլթանովի խումբը

---

[241] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 145, թ. 81, 86:

կազմում էին 500 հետևակայինները, 13 գնդացիրներով: Խումբը տեղակայված էր Շուշիից դեպի արևմուտք շրջանում[242]:

Կովկասյան կորպուսի մարտական գործողությունները նախատեսվում էին սկսել հունիսի 25-ին, այնուհետև այն հետաձգվեց հուլիսի 2-ին:

Նշված պլանի համաձայն Երևանի ուղղության զորախմբին հրաման իջեցրեց (հունիսի 18-ին) նրա հրամանատար Վելիկանովը: Նրա խնդիրն էր վերացնել Զանգեզուրի ապստամբությունը հարավից: Առաջադրանքները տրվեցին ըստ տեղամասերի. աջ թևը Օրդուբադից հարձակվելու էր դեպի Սեղրի, միջին տեղամասը Կարմալինովկայից ու Շահբուզից գործելու էր դեպի Բազարչայ գետը, իսկ ձախ թևը հարձակվելու էր Դարալագյազի ուղղությամբ: Բացի այդ, հյուսիսից Նոր Բայազետից գրոհ էր կատարվելու Սելիմի լեռնանցքի ուղղությամբ: Հարձակումն սկսվելու էր հունիսի 23-ին[243]:

Գլխավոր գործողությունները տեղի էին ունենալու արևելյան ռազմաճակատում, Կովկասյան կորպուսի կողմից, որն ուներ 5175 մարտիկ, 400 թուր, 12 հրանոթ, 97 գնդացիր, 7 ինքնաթիռ: Երևանյան զորախումբը կատարելու էր օժանդակողի դեր: Կարմիրների մարդկային ընդհանուր ուժերը կազմում էին 935 սվին, 1236 թուր, տեխնիկան՝ 20 հրանոթ, 247 գնդացիր, 2 զրահագնացք և 7 ինքնաթիռ:

Ապստամբների ուժերը ևս զգալի էին, սակայն մեծապես զիջում էին կարմիրներին: Երկու ճակատներում միասին նրանք ունեին 6800 սվին, 2460 թուր, 6 հրանոթ, 96 գնդացիր[244]: Հրամանատարն էր գնդապետ Կուռո Թարխանյանը:

Ապստամբական կողմի ուշադրությունը Զանգեզուր-Դարաբաղից և Երևանյան զորախմբից շեղելու նպատակով 1-ին հայկական բրիգադը հունիսի 22-ին Քեշիշքենդի ուղղությամբ դիմեց հարձակման: Նույն նպատակով նոր Բայազետից դեպի Սելիմի լեռնանցք հարձակման դիմեց 20-րդ դիվիզիայի հեծելագունդը, միանալու համար հայկական բրիգադին: Բրիգադի կազմում էր նաև 4-րդ գունդը, որը կազմավորվել էր Լոռու պարտիզանական գնդի հիման վրա:

Հարձակումից առաջ զորամասերին կոչով դիմեցին Ալ. Մյասնիկյանը և Մ. Վելիկանովը, պահանջելով ցուցաբերել խիզախություն, չխնայել կյանքը Զանգեզուրը մայր Հայաստանի հետ միավորելու համար:

---

[242] ԲՀԱ, 1978 թ., թիվ 1, էջ 154-155:
[243] ԲՀԱ, 1980 թ., թիվ 2, էջ 66-67:
[244] Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, էջ 99:

Հարձակման հաջորդ օրը խորհրդային ուժերը գրավեցին Քեշիշքենդը, վերցնելով 1750 գերի: Դարալագյազում զանգեզուրցիների ջախջախիչ պարտությունը կանխորոշեց նրանց ճակատագիրը: Այդ պարտության մեջ դեր խաղաց մեծ թվով գերի կարմիրբանակայիններին ռազմակաճակատ մտցնելը Կուռո Թարխանյանի կողմից: Դա հանգեցրեց վերջինիս զորամասերի բարոյալքմանը, և որոնք, չնչին բացառությամբ, անձնատուր եղան հարձակվող կարմիրներին:

«Հակառակորդի շարքերում քայքայում է տիրում... Հակառակորդը տալիս է հարյուրավոր գերիներ, որոնց թիվը հասել է 2000-ի... Աղաբեգի 400 հոգուց բաղկացած հեծելազորը կապ է հաստատել մեզ հետ և բանակցություններ է վարում անձնատուր լինելու մասին... Բնակչությունը մնացել է իր տեղը և մեր զորամասերին ամենուրեք ընդունում է նվագով ու ցնծությամբ»,- կարդում ենք Ալ. Մյասնիկյանին ուղարկած ռադիոգրում[245]:

Դարալագյազի ճակատի կազմալուծումը, որը բացում էր ճանապարհը դեպի Սիսիան, Նժդեհի կառավարությանը ստիպեց դիմել հաշտության առաջարկի: Այդ նպատակով նա հունիսի 22-ին Գառնիկ Շահինյանին լիազորեց բանակցել Երևանի կառավարության հետ: Հաշտության առաջարկությունն արվեց խմբապետ Յապոնի միջոցով հունիս 26-ին:

1921 թ. հունիսի 26-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը քննարկեց «Այսպես կոչված Զանգեզուրի կառավարության դիմումը խաղաղ բանակցությունները շարունակելու մասին» և որոշեց պատասխանել զինվորական հրամանատարության անունից, հակառակորդին առաջարկելով զենքերը վայր դնել և անձնատուր լինել: Պատասխանի ձևակերպումը հանձնարարվել էր Լուկաշինին[246]:

Հաջորդ օրը ՀԿ(բ)Կ Կենտկոմը 2 որոշում ընդունեց Զանգեզուրի հարցի կապակցությամբ: Առաջինը վերաբերում էր բանակցությունների համար Զանգեզուր ուղարկվող պատվիրակությանը, որը մեկնելու էր հունիսի 28-ին (Լուկաշին, Արտ. Կարինյան կազմով), հունիսի 26-ի որոշման պայմանները պաշտպանելով:

Երկրորդ որոշումը Զանգեզուրի խորհրդային իշխանության կազմակերպման մասին էր: Զանգեզուրի արտակարգ լիազոր էր նշանակվում Պողոս Մակինցյանը, իսկ ժամանակավոր ներգործժողկոմ՝ Ավիս Նուրիջանյանը: Մակինցյանին հանձնարարվում էր ընտրել չվարկաբեկված զանգեզուրցի տաս պատասխանատու աշխատողներ: Զանգեզուրի հեղկոմի նախագահ նշանակվեց Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, որը Գորիսի գրավու-

---

[245] Խորհրդային Հայաստան, 26 հունիսի 1921 թ.:
[246] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 13:

մից անմիջապես հետո մեկնելու էր այնտեղ[247]: ՀԿ(բ)Կ Զանգեզուրի գավառային կոմիտեի քարտուղար նշանակվեց Երեմիա Բակունցը[248]:

Սույն որոշման ընդունումը նշանակում էր, որ Զանգեզուրի ազատագրման և խորհրդայնացման խնդիրը Երևանը լուծված էր համարում: Հետևաբար բացառվում էին նաև հետագա բանակցությունները:

Միջոցառումներ էին ձեռնարկվում նաև Արտակարգ հանձնաժողովի կողմից: Ի պատասխան տարածված լուրերի, թե Զանգեզուրի դեպքերի առթիվ հարյուրավոր մարդիկ են ձերբակալվել, Արտակարգ հանձնաժողովը հունիսի 27-ին հրապարակորեն տեղեկացնում էր, թե բանտարկվածների թիվը ընդամենը 43 է, որոնցից ազատ էին արձակվել 8 մարդ, իսկ մյուսների գործերը գտնվում էին քննության ընթացքում[249]:

Խորհրդային պատասխանը հունիսի 30-ին Բաշ-Նորաշենում հակառակորդի ներկայացուցիչներին հանձնեցին Հայկական կարմիր բանակի ներկայացուցիչները: Հայտարարությունը դատապարտում էր Նժդեհի ու Յապոնի հանկարծակի հարձակումը Կարմիր բանակի վրա Դարալագյազում, այն պահին, երբ խորհրդային կողմը ներկայացնելու էր խաղաղության իր առաջարկները, պատճառ դառնալով «ներկայումս ծավալվող ռազմական գործողությունների»: Այժմ, ասված է հայտարարության մեջ, Հայաստանի աշխատավոր զանգվածների համար հանցանք կլիներ «խաղաղության երկարաձիգ բանակցություններ վարելը», ուստի ՀՍԽՀ կառավարությունը «հաստատ և անշեղ կերպով վճռել է կարճ ժամանակում վերջ դնել Զանգեզուրում մինչ այժմ գոյություն ունեցող դրությանը»[250]:

Այսպիսով, ռազմական գործողությունները շարունակվելու էին: Հունիսի 29-ին առանձին հրամանով նշվեց խորհրդային զորքերի մուտքը Զանգեզուրի սահմաններից ներս:

Զանգեզուրի ինքնապաշտպանների դրությունը ծանրանում էր մեծ արագությամբ՝ ռազմական, քաղաքական ու տնտեսական տեսակետից: Դա ճգնաժամի հասունացումն էր: Իրադրությունը, ինչպես գրել է Նժդեհը, նրան դրել էր երկընտրանքի առաջ: Վայոց Ձորի (Դարալագյազի) «բարոյալքիչ դեպքից» հետո, գրել է նա, Սյունիքի ժողովուրդը և նրա ղեկավարն իրենց գտան «սուր երկընտրանքի» առաջ: «Տեղի տալու դեպքում մենք զոհաբերած կլինենք երկարամյա կռիվներով ձեռք բերված մեր անկախությունը, որը նպատակ չէր միայն, այլ միջոց: Կռիվը շարունակելու դեպ-

---

[247] Նույն տեղում, թ. 14:
[248] Նույն տեղում, գ. 43, թ. 4:
[249] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 19, թ. 84-85 (տպագիր օրինակներ՝ հայերեն և ռուսերեն):
[250] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 540-541:

քում հարկադրված պիտի լինեինք ժողովրդի ակտիվ տարրերը պահելու զենքի տակ, լեռների վրա, ասել է հազարների սովամահությամբ ապրեցնել Սյունիքի անկախությունը, որն ստեղծված քաղաքական ընդհանուր դրության շնորհիվ դառնում է անհնարին»[251]:

Ժողովրդի տրամադրությունը ուսումնասիրելու համար Նժդեհը շրջել է Սիսիանի շրջանում և խոստովանել, որ «գյուղացիությունը չի թաքցնում, որ գրկված է կռիվը շարունակելու հնարավորությունից»: Այնուհետև Նժդեհը եզրակացնում է. «Հրացաններից օգտվել չպիտի կարողանանք, որովհետև ռազմամթերք չունինք, իսկ մանգաղից չեն կարող չօգտվել, որովհետև սովն սկսել է իր ավերածությունները»[252]:

Նժդեհը ուշադրություն է հրավիրում մի հանգամանքի վրա ևս, որն ստեղծվել էր իր դեմ հայկական Կարմիր բանակին ռազմաճակատ մտցնելով:

«Մենք եղբայրասպան կռիվներ չէինք վարել,- կարդում ենք Նժդեհի հոդվածում,- Լեռնաշխարհը քաղաքացիական պատերազմ չէր տեսել: Մենք կռվել էինք թաթարի, թուրքի և սրանց օգնության փութացած կարմիր ռուսի դեմ: Եվ եղել ենք մեր հարվածների մեջ ազատ սրանց նկատմամբ:

Այժմ հայն էր կազմում թշնամու ույժերի առաջամարտիկը, որին պարտության մատնելու համար չպիտի կարողանայինք գործի դնել մեր ուժանակային պայթուցիկ տակառները, մեր լեռների ժայռերը, մեր ռազմավարության տարերային ձևերը... եւ վճռականությունը: Հանուն հայ ժողովրդի գոյության պաշտպանության զենք բարձրացնողները չպիտի կարողանային մեր վարած գոյամարտին տալ եղբայրասպան բնույթ»: «Թշնամին,- կրկնում է Նժդեհը,- գիտակցորեն կռիվներին տվել էր քաղաքացիական, եղբայրասպան բնույթ, համոզված, որ նման կռվի համար իր նետած ձեռնոցը չպիտի կարողանայինք վերցնել...

Հայությունն իրեն պարտված էր զգում, ավելի ճիշտը անկարող շարունակելու իր անկախության պայքարը,- ահա թե ինչու առանց կռվի պիտի տեղի տար նրա վերջին բանակը վիրավոր, բայց անհաղթ լեռնաշխարհը»[253]:

Այդ տեղի տալը, սակայն, միանգամից չկատարվեց: Որտեղ անհրաժեշտ էր, ինչպես Ղափանում, կազմակերպվում էր դիմադրություն, կազմակերպված նահանջի հնարավորություն ստեղծելու համար: Ընդ որում, քանի որ Նժդեհի հիմնական ուժը զանգեզուրցի գյուղացիական վաշտերն էին, սրանք տեղնուտեղը կազմացրվում և մեկնում էին տները: Նահանջող

---

[251] Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք. «Հայրենիք», 1925 թ., թիվ 12, էջ 131:
[252] Նույն տեղում, էջ 132:
[253] Նույն տեղում, էջ 131:

ուժը, որ պետք է անցներ Պարսկաստան, հիմնականում կանոնավոր զորքն էր, Երևանյան զորամասերը, և Նժդեհի այն կադրերը, որոնք իրենց մնալը ապահով չէին համարում քաղաքական նկատառումներով:

Ստեղծված իրադրության մեջ զանգեզուրյան կողմը սկսում է իր վրա վերցնել հաշտության նախաձեռնությունը: Դրա օրինակ է նույն 1921 թ. հունիսի 26-ի դիմումը, որը ստորագրել է «Հայաստանի Հանրապետության զինվորական նախարար-Սպարապետ, Զորավար Նժդեհը»[251]:

Այս դեպքում ուշադրություն է կենտրոնացվում թուրք թաթարական վտանգի վրա, որը երկրորդ ճակատ էր Զանգեզուրի ինքնապաշտպանության համար: Թուրք-թաթարական հարձակումների նոր ակտիվություն էր երևան եկել հունիսի 20-ից սկսած, հատկապես Նախիջևանի և Սինքենդի (Ղարաբաղ) կողմերից: Սպասվում էին նաև Բարգուշատի Հաքյարու-Խանլ-ղի թուրքերի թշնամական գործողություններ: Դրությունն ավելի էին բարդացնում Զանգեզուր թափանցող քոչվոր թուրքերը:

Նժդեհը միասնություն տեսնելով թրքության ու բոլշևիկների (ադրբեջանցի) գործողությունների միջև, ավելացնում է, որ նրանց շարքերը խտացնում էին եկվոր թուրք քոչվորները: «Այսպես ուրեմն,- ավելացնում է նա,- Մուսավաթի ու Նարիմանովի միջև ստեղծված ռազմաքաղաքական կոնտակտը կատարյալ է ու ավելի քան հասկանալի»: Ապա, ըստ Նժդեհի, թաթարների համախմբման վաղ ցանկությունն է, ամբողջ թրքությունը, առանց կուսակցական ու դասակարգային խտրության, զինել և մեր դեմ հանել:

Ուշադրություն հրավիրելով թուրք-թաթարական վտանգի վրա, որը բնավ հեռու չէ ճշմարտությունից, կարծում ենք, որ Նժդեհը դրանով միաժամանակ փորձել է մեղմել իր նկատմամբ ՀՍԽՀ վճռական դիրքը: Տվյալ կապակցությամբ ուշադրության արժանի է այն կոչը, որը հունիսի 1-ին գեներալ Նժդեհի ստորագրությամբ ռուսերեն տպագիր բազմացված, տարածվել է Բարգուշատի, Զանգելանի, Զաբուղի և Հաջի Իսմայիլի շրջանների մուսուլման բնակչության մեջ: Սինքենդի քոչվորների կողմից Սյունիքում կատարվող կողոպուտը և անկարգությունները վերագրելով բոլշևիկների հրահրիչ քաղաքականությանը, Նժդեհը նշված շրջանների բնակչությանը կոչ էր անում հանուն ժողովուրդների համերաշխության և ռուսական բոլշևիզմի ճնշումից իրենց երկրի ազատման ընդհանուր գործի, նախաձեռնություն ստանձնել՝ համոզելու մինքենդցիներին դադարեցնել հարձակումները, որոնք խիստ նյարդայնացնում են Սյունիքին և ստեղծում անցանկալի տրամադրությունների ու գործողությունների հիմք:

---

[254] Վ. Գևորգյան, Զանգեզուրի հերոսամարտը, էջ 169-170:

Կոչում հույս էր հայտնվում, որ հանուն Կովկասի ժողովուրդների պայծառ ապագայի, մերժելով բոլշևիկների սադրանքները, մինքենդցիները կգիտակցեն իրենց սխալը և կդադարեցնեն «Մոսկվայի լծից Կովկասի ժողովուրդների ազատագրության գործին սպառնացող կործանարար արարքները»: Նժդեհը դիմումն ավարտում էր Կովկասի ժողովուրդների եղբայրության ու համերաշխության կոչով[255]:

Ծանր վիճակում հեռանկարը կորցնող Նժդեհը ակնկալում էր հարևան քուրդ բնակչության օգնությունը:

Ընդ որում, այն պահին, երբ Կարմիր բանակի զորամասերը Դարալագյազը գրավելուց հետո մուտք գործեցին Զանգեզուր, անհանգստացան նաև քրդերի ղեկավարները: Ուստի դեպի Զանգեզուր և Քրդստան Կարմիր բանակի առաջխաղացումը կանխելու նպատակով քրդական կողմից Նժդեհին առաջարկություն արվեց Սիսիանի շրջանի Մուխուրթուրյան գյուղում բանակցություններ վարել Լեռնահայաստանի կառավարության և Հաջի-Սամլուի միջև: Սակայն այդ ուղղությամբ որևէ քայլ չձեռնարկվեց, քանի որ կարմիրներն արագ ընթացքով գրավեցին Մուխուրթուրյանը և Սիսիանի ամբողջ շրջանը[256]:

Սյունիքը մնաց անօգնական ու միայնակ: «Բոլոր փորձերը,- նշել է Ս. Վրացյանը,- Պարսկաստանի վրայով կապվելու արտասահմանի հետ և այնտեղից նյութական կամ քաղաքական օգնություն ստանալու, անցան անհաջող: «Արտասահմանը» իր հոգսերով էր զբաղված և հայերին լսելու ականջ չուներ»[257]:

Հուլիսի 1-ին, Ատրպատականի հայկական թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը, ստանձնելով միջնորդի դեր Լեռնահայաստանի և Խորհրդային Հայաստանի միջև, հեռագրեց Ալ. Մյասնիկյանին, պատճենը Նժդեհին: Ծանոթանալով ՀՍԽՀ ժողկոմխորհի հունիսի 12-ի հայտարարությանը, ասված է հեռագրում, Վրացյանի համաձայնությամբ սուրհանդակ է ուղարկել Նժդեհի մոտ պատերազմական գործողությունները դադարեցնելու և հաշտության բանակցություններ սկսելու առաջարկությամբ: Գրիգոր Օհանջանյանի միջոցով Մելիք-Թանգյանը Նժդեհին ուղարկել էր իր հուլիսի 2-ի գրավոր առաջարկությունը, որը հասցեատիրոջը հասավ մի քանի օր անց: Ատրպատականի առաջնորդը Լեռնահայաստանին հրավիրում էր խաղաղ ճանապարհով հարթել վեճերը և հաշտությամբ վերջացնել խոչընդոտող խնդիրները, կողմերի համար նշանակել գինադադար: Մոտակա բանակցությունների համար առաջարկում էր Բիչա-

---

[255] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 1, թ. 2 (տպագիր օրինակ):
[256] Արամ Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը, էջ 570:
[257] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 600:

նագ գյուղը: Խորհրդային կողմին առաջարկվում էր «ավելի լայն չափակերտով և ավելի խոր մտածելակերպով, Լեռնահայաստանի ուրույն կյանքի պայմաններն ի նկատի առնելով, հարցերը վճռել հօգուտ գյուղացիական մասսաների»[258]:

Առաջարկած միջնորդության և սկզբունքների ընդունումը կնշանակեր ավելորդ զիջումների գնալ Զանգեզուրին, երբ արդեն ռազմական տեսանկյունից նրա բախտը որոշված էր: Ուստի խորհրդային իշխանությունն այն մատնեց անուշադրության:

Հունիսի 30-ին կարմիր զորքերը հրաման ստացան վերջնականապես Զանգեզուրը մաքրել Նժդեհի խմբերից և վերականգնել խորհրդային իշխանությունը: Նրանում նշվում էր, որ Նժդեհի գլխավոր ուժերը կենտրոնացած են Ղաթարի գործարաններում և Մեղրի գյուղում[259]:

Հուլիսի 1-ին Ալ. Մյասնիկյանը և Վելիկանովը մի անգամ ևս դիմեցին Կարմիր բանակի զինվորներին ու սպաներին խիզախորեն մարտնչել «դաշնակցական բախտախնդիրների դեմ»[260]: Զանգեզուր արշավող «կարմիր ռազմիկներին» ողջերթի առանձին խոսք ուղղեց ՀՍԽՀ ռազմժողկոմ և Առանձին Կովկասյան բանակի ռազմխորհրդի անդամ Ալ. Մյասնիկյանը[261]: Այդ բանակի հրամանատարությունը հուլիսի 6-ի հրամանով պահանջեց հակառակորդին վերջ տալ Զանգեզուրում, թույլ չտալով, որ նա հեռանա Պարսկաստան[262]: Մեղրին նախապես գրավելու առաջադրանքը կարմիրները կատարել չկարողացան և զանգեզուրցիների նահանջի ուղին մնաց բաց:

Կարմիր բանակի վճռական հարձակման օրերին աշխուժացավ նաև Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը, նրանց օգնությունը Կարմիր բանակի զորամասերին:

«Կոմունիստների ընդհատակյա աշխատանքի շնորհիվ,- ասված է Կովկասում Ռուսաստանի լիազոր ներկայացուցչի հունիսի 30-ի տեղեկագրում,- հայ բնակչության միջավայրում զարգանում են հեղափոխական խմորումները, որոնց նպատակն է դաշնակցականների իշխանության տապալումը: Զանգեզուրի որոշ վայրերում կազմակերպվել են հեղկոմներ: Դաշնակցականները սահմանից հանում են զորքերը՝ ճնշելու համար ներ-

---

[258] Վ. Գևորգյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 171-172:
[259] ԲՀԱ, 1978 թ., թիվ 1, էջ 160-161:
[260] ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, թ. 78 («Բյուլետեն թիվ 3 ՀՍԽՀ արտգործժողկոմատի ինֆորմացիոն բաժնի», Երևան, 25 հուլիսի):
[261] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 542-543:
[262] ԲՀԱ, 1978 թ., թիվ 1, էջ 163:

սում աճող շարժումը»[263]: Այստեղ խորհրդային իշխանության կողմից գաղտնի աշխատանք կատարելու մասին է վկայում նաև հետևյալ կուսակցական (բոլշևիկյան) փաստաթուղթը. 1921 թ. հունիսի 15-ին Արտակարգ հանձնաժողովին ուղարկած գրության մեջ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարը գրում էր, թե Կենտկոմն առաջարկում է շտապ կարգով իր հայեցողությամբ բաց թողնել անհրաժեշտ կանխագումար այն ընկերների համար, ովքեր գտնվում են Արտակարգ հանձնաժողովի տրամադրության տակ՝ Զանգեզուրում և Ղարաբաղում ընդհատակյա աշխատանքի համար[264]:

Տեղում բոլշևիկյան բջիջների աշխատանքը ղեկավարում էին Հակոբ Կամարին, Երեմիա Բակունցը և ուրիշներ[265]:

Հունիսի 30-ին երևանյան զորքերը գրավել էին ամբողջ Սիսիանի շրջանը, անմիջական վտանգ ստեղծելով Գորիսի համար: Հուլիսի 1-ին այստեղ կայացավ կառավարության նիստ քննարկելու համար ստեղծված տագնապալի իրավիճակը: «Սիսիանի խոհրդայնացումով,- գրել է Նժդեհը,- կռիվներ վարելու հնարավորությունից պիտի զրկվեին նաև Դարաբասի, Տաթևի և բուն Զանգեզուրի շրջանները»[266]:

Կառավարության նիստը, հաշվի առնելով ստեղծված ընդհանուր դրությունը, որոշեց թողնել Գորիսը: Այդ մասին հեռախոսով հայտնելով Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատարին, նրան կարգադրվեց դիմադրություն ցույց տալ միայն այն դեպքում, երբ «կփորձեն Սյունիք մտնել թուրք և թաթար ուժեր, իսկ ռուս և հայ զորամասերի դեմ զենք չբարձրացնել»[267]:

Ընդունված որոշման մասին անմիջապես գրությամբ տեղյակ պահվեց Դարալագյազի խորհրդային իշխանություններին: «Լեռնահայաստանը,- ասված է գրության մեջ,- դադարեցնելով պատերազմական գործողությունները, հավատում է, որ Խորհրդային Հայաստանի Հեղկոմը կկատարի իր Զանգեզուրի իշխանությանն ուղղված հայտարարության բոլոր խոստումները»[268]:

Հուլիսի 3-ին զանգեզուրցիները բռնեցին կարմիրների ռադիոհաղորդագրությունը (Թիֆլիսի և Մոսկվայի հասցեներով) այն մասին, թե «թշնամին, առանց դիմադրության, իր ուժերը քաշում է դեպի հարավ, դե-

---

[263] ԲՀԱ, 1978 թ., թիվ 1, էջ 159-160:
[264] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 61, թ. 55:
[265] Բոլշևիկյան գործունեության մասին մանրամասն տես. Բ. Խուդավերդյան, Զանգեզուր (1917-1921), Երևան,1988:
[266] Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք. «Հայրենիք», 1925 թ., թիվ 12, էջ 132:
[267] Նույն տեղում:
[268] Նույն տեղում, էջ 133:

պի պարսկական սահմանագլուխը: Այս անգամ հավանական ենք համարում սպիտակ Զանգեզուրի խորհրդայնացումը»[269]:

Հուլիսի 2-ին հայկական հեծելագունդը, Կովկասյան կորպուսի հետ գրեթե միաժամանակ, մտավ Լեռնահայաստանի կենտրոն Գորիս: Հուլիսի 4-ին, առանց կռվի, գրավվեցին Տաթևը և Դարաբասը: «Այդ շրջաններում հավաքված վաշտերը ցրելով իրենց գյուղերը,- հայտնում է Նժդեհը,- մենք քաշվում ենք Ղափան»[270]: Որոշ տվյալներով Գորիսի գրավմանը նախորդել են ուժեղ կռիվներ, որտեղ կողմերը կրել են զգալի կորուստներ[271]:

Ղափանում տեղի ունեցավ շրջանի ներկայացուցիչների ժողով, զինվորականների մասնակցությամբ: Ժողովը շրջանի խորհրդայնացումը նախընտրելի համարեց ստեղծված դրության (սովի սպառնալիքի) համեմատությամբ: Ժողովում կասկած հայտնվեց նաև, թե հակառակ արված խոստումներին ու հայտարարություններին, Սյունիքը կարող է կցվել Ադրբեջանին: Այն դեպքում, պատասխանում էր Նժդեհը, «դաշտային աշխատանքներն ավարտելուց հետո վերստին կբարձրանաք լեռները, ուր կգտնեք ինձ: Սյունիքը, ցանկության դեպքում, միշտ էլ կարող է իրեն անկախ հռչակել»: Որոշվեց կռվի չբռնվել, դիմադրություն ցույց չտալ[272]: Ղափանում միաժամանակ գումարվեց Հայաստանի Հանրապետության կառավարության նիստ, որը վերջինն էր: Ըստ ընդունված որոշման՝ կառավարությունը մեկնեց Մեղրի, իսկ Նժդեհը՝ ճակատ վերջին կարգադրություններն անելու համար:

Գորիս ժամանած «Զանգեզուրի արտակարգ կոմիսար և Հայաստանի կառավարության անդամ» Դրաստամատ Տեր-Սիմոնյանը դիմեց «Ղափանի գյուղացիներին և Նժդեհի զինվորներին»՝ հետևել իրենց եղբայրներին և չդիմադրել Կարմիր բանակին: Հայաստանի կառավարության անունից նա ներում խոստացավ բոլոր նրանց, ովքեր կընդունեին խորհրդային իշխանությունը, առանց դիմադրության[273]:

Սուրհանդակները Ինջաբել մեկնեցին, Նժդեհի վերջին հրահանգով, որով մարտիկներից պահանջվում էր «քաշվել ճակատներից և ցրվել գյուղերը»: Զենքի և զինամթերքի մի մասը թաքցվեց Ղափանի և Մեղրու շրջանների տարբեր վայրերում՝ ըստ անհրաժեշտության օգտագործելու համար: Նույն նպատակով տեղում պահ տրվեց դրամական միջոցների մի մասը, մյուսը փոխադրվեց Պարսկաստան, որտեղ օգտագործվելու էր

---

[269] Նույն տեղում:
[270] Նույն տեղում:
[271] Արամ Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը, էջ 586-587:
[272] Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք. «Հայրենիք», 1925 թ., թիվ 12, էջ 133:
[273] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 549-551:

գաղթողների կարիքները հոգալու համար: Այդ նպատակով գործում էր հանձնաժողով: Նժդեհը կարգավորեց նաև շուրջ հազար հայ կարմիր բանակային ռազմագերիների ճակատագրի հարցը, նրանց բացատրելով մնալ Սյունիքում և խորհրդային իշխանության մարմիններին տեղյակ պահել իրերի իսկական դրության մասին:

Հանքերում, որը Ղափանի շրջանի պաշտպանության կենտրոնն էր, կազմակերպվեց որոշ դիմադրություն նահանջի ճանապարհը ապահով պահելու համար: Այստեղից Նժդեհը ուղևորվեց իր համար շատ հարազատ Խուստուփ, որտեղ նրան հայտնեցին Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հուլիսի 2-ի վերոհիշյալ բավական ուշացած հաշտության միջնորդության մասին:

Միայն այս պահին, հուլիսի 7-ին, Նժդեհը հիշեց և հարկ համարեց անձամբ անդրադառնալ Ալ. Մյասնիկյանի կառավարության հունիսի 12-ի հրապարակային հայտարարությանը: Նժդեհի պատասխանը խորհրդային իշխանության գործունեության ծրագրային փաստաթուղթ էր, որում հեղինակը շարադրում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրներ: Նա առանձին անդրադառնում էր Լեռնահայաստանին, նրա համար առաջարկելով և պահանջելով արտոնյալ պայմաններ[274]:

Այս փաստաթուղթը խորհրդային իշխանության համար որևէ նշանակություն ունենալ չէր կարող:

Խուստուփից Մեղրի ուղևորվելու ճանապարհին Նժդեհը հանդիպեց Գենվազի պատվիրակությանը, որը Ղափանով մեկնում էր Գորիս՝ խորհրդային իշխանությանը հպատակություն հայտնելու համար: Նժդեհը պատվիրակությանը պատվիրեց հայ բոլշևիկներին նաև հասկացնել ու համոզել, որ միևնույն չէ, թե Զանգեզուր լեռնաշխարհը որ խորհրդային հանրապետության մաս կկազմի՝ Հայաստանի, թե Ադրբեջանի: «Նրանք,- հայտնում է Նժդեհը,- պիտի լուսաբանեին և պահանջեին խորհրդային իշխանությանը ներկայացրած իմ գրավոր պայմանների հարգումը»[275]:

Նահանջի ճանապարհը փակելու և Նժդեհի ուժերի մնացորդներին լրիվ ջախջախելու համար դեպի Մեղրի կարմիր զորքերը հարձակում գործեցին արևմուտքից (Օրդուբադի կողմից) և արևելքից (Ադրբեջանից): Տեղի ունեցան ուժեղ կռիվներ, երբ նահանջողներին հաջողվեց Մեղրին պահել ազատ:

Զանգեզուրի գրավումը և խորհրդայնացումը փաստորեն ավարտված էր: Հուլիսի 8-ին հետևեց Առանձին Կովկասյան բանակի ռազմհեղկոմի թիվ 2 հրամանը, որը հայտնում էր «խորհրդային հանրապետությունների

---

[274] Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք. «Հայրենիք», 1925 թ., թիվ 12, էջ 135-136:
[275] Նույն տեղում, էջ 136:

կարմիր զորքերի ճնշման տակ դաշնակ մուսավաթական հակահեղափոխության» Պարսկաստան փախչելու մասին: Իշխանությունն անցնում էր հեղկոմներին: Զգուշացվում էր, որ քաղաքացիներին թույլ չի տրվի անձնական հաշիվներ մաքրել «նախկին կուսակցական պատկանելության հողի վրա»: Հաստատվում էր խստագույն կարգուկանոն[276]:

Հուլիսի 9-ը դարձավ Զանգեզուրում և հայրենի հողի վրա Նժդեհի գտնվելու վերջին օրը, որի նկարագրությունը բերվում է ըստ Նժդեհի: Այն ամփոփում է նաև մեկամյա պայքարը, որ Սյունիքի մի բուռ հայության վզին փաթաթեցին Խորհրդային Ադրբեջանը և բոլշևիկները:

«Մեղրի է հավաքվել գրեթե շրջանի ամբողջ ժողովուրդը: Գյուղական վաշտերը եկել են զինված: Դաշտերում և այգիներում ոչ ոք չկա, ոչ ոք չի երևում: Դեռ լուսաբացից ղողանջում են Մեղրու եկեղեցու զանգերը: Փողոցներում և մեծ հրապարակի վրա տեղ-տեղ համախմբված է գյուղացիությունը: Լեռների վրա, ուր դեռ երեկ բորբոքվում էր կռիվը, տիրում էր խորին լռություն: Տարեվերջն է այսօր հայ-բոլշևիկյան կռիվների:

Ուղիղ մի տարի առաջ, այսօր, թշնամին՝ հանկարծակիի բերելով Ղափանը, մեզ ներկայացրեց իր առաջին վերջնագիրը՝ «ճանապարհ տվեք կարմիր զորքին»: Մի տարի առաջ սյունեցին արձակեց իր առաջին գնդակը կարմիր զորքերի վրա, որպես բողոքի ցույց բոլշևիզմի և պանիսլամիզմի հանցավոր գինակցության դեմ:

Եվ այն օրեն ի՞նչեր չտեսան, ի՞նչերի վկա չեղան մեր լեռներն ու հարևանները: Քանի-քանի անգամ Սյունիքը կրկնեց հաղթական Ավարայրը: Քանի և քանի անգամ այն օրեն թշնամի բանակները փորձեցին Արաքսի ջրերի մեջ խեղդել Սյունիքի մի բուռ ապստամբներին, բայց միշտ էլ հազար դիակներ փռելով մեր լեռների վրա՝ քաշվեցին հեռուները Սյունիքի և հայ զենքի գովքն անելու:

Այսօր, սակայն, ժողովուրդը եկել է ճանապարհ դնելու իր առաջնորդին»: Այնուհետև Նժեհը շարունակում է.

«Արաքսի ափից տեղեկացնում են, թե տարագիրների անցքը վերջանալու վրա է: Կարգադրում եմ պատրաստվել: Մեղրու հնամենի «չինարի» շուրջը և դեպի Արաքսը ծգվող ճանապարհի վրա խռնվում է հուզված ժողովուրդը:

- Ցտեսություն, հերոս ժողովուրդ. ցտեսություն եմ ասում և ոչ մնաս բարով...

---

[276] Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում: Երևան, 1931, էջ 148-151:

Տխուր դողանջում էին զանգերը: Լալիս էր Արևելքի խորհրդապաշտ հոգին: Մենք թողնում ենք հայրենի լեռները»[277]:

1-ին Կովկասյան կորպուսի հրամանատարության տվյալներով Նժդեհը և Լեռնահայաստանի կառավարությունը, ապստամբ զորքերի մնացորդների հետ, թվով 400 մարդ (հետևակային ու հեծյալ), որոշ թվով հրանոթներով, հուլիսի 7-ին Ղաթարի գործարաններից Խուստուփ լեռան ուղղությամբ, հեռացել են դեպի Մեղրի, ապա, ըստ բնակիչների ցուցմունքների, փոխադրվել Պարսկաստան[278]:

Փաստորեն Նժդեհը անիմաստ էր համարել հետագա դիմադրությունը և կազմացրել հիմնական ուժերը. գյուղացիական վաշտերի անդամները վերադարձել էին տուն: Նժդեհը նաև համոզված էր, որ Զանգեզուրը կմիացվի Հայաստանին, որի համար նա դիմել էր զենքի, կազմակերպել երկրամասի պաշտպանությունը:

Կարմիր բանակի զորամասերը հուլիսի 13-ին մտան Մեղրի, որը Նժդեհի վերջին հենակետն էր: Առանձին վայրերում մանր ընդհարումներ եղան ևս երկու օր, որոնք մղվում էին Ղափանի վաշտերի կողմից, Գերասիմ Աթանջանյանի գլխավորությամբ:

Հուլիսի 15-ին զինվորական կոմիսար Սվիրիդովը Առանձին Կովկասյան բանակի անունից ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանին զեկուցեց «Զանգեզուրը դաշնակցական հակահեղափոխությունից լիովին մաքրելու և բանվորագյուղացիական իշխանությունների լիակատար հաղթանակի մասին»[279]:

«Ինչու պայքարեց Լեռնահայաստանը» հոդվածում[280] Նժդեհը լուսաբանել է մի շարք հարցեր ինչու Լեռնահայաստանը կռվի բռնվեց, ում դեմ և ինչի համար էր պայքարում երկրամասը, երբ և ինչպիսի պայմաններում դադարեցրեց դիմադրությունը և այլն:

Զանգեզուրցիների կռիվը ոչ կուսակցական էր, ոչ էլ դասակարգային: Այն ուղղված չէր նաև խորհրդային իրավակարգի դեմ: «Հայկական լեռնաշխարհը,- գրել է Նժդեհը,- Ադրբեջանին կցելու տարիներով կրկնվող փորձերը ահա թե ինչն էր մեր բազուկը զինել և մեզ լեռները հանել»[281]:

Նժդեհը բացատրում է, որ ինչպես Սյունիքում, այնպես էլ Գողթանում ու Ղարաբաղում գոյություն չեն ունեցել «զուտ հայ-բոլշևիկյան ճակատներ»: Պայքարն ուղղված է եղել թաթար-տաճկական վտանգի դեմ, իսկ

---

[277] Գ. Նժդեհ, Ազատ Սյունիք. «Հայրենիք», 1925 թ., թիվ 12, էջ 136-137:
[278] ԲՀԱ, 1980 թ., թիվ 2, էջ 69:
[279] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., էջ 544:
[280] Հայրենիք, 1923 թ., թիվ 8, էջ 78-82:
[281] Նույն տեղում, էջ 78:

խորհրդային զորքերի դեմ՝ այնքանով, որքանով նրանք, ոտք դնելով Ադրբեջան, «ուժեղացրին մեր ակտիվ թշնամիներին»: «Հայաստանի տերիտորիան անդամահատության մահացու փորձից ազատելու համար,- գրել է Նժդեհը,- նախ Սյունիքի մի մասը, ապա ամբողջ Լեռնահայաստանը զենքի դիմեց և պաշտպանվեց, մինչև որ Խորհրդային Հայաստանի խելագար հեղկոմը՝ Կասյանի ղեկավարությամբ փոխարինվեց Մյասնիկյանի կառավարությամբ և մինչև որ երկարատև ու արյունալի կռիվներից խրատված Մոսկվան վերջապես բարեհաճեց Սյունիքը կցել Հայաստանին»: Շարունակելով միտքը, Նժդեհը եզրակացնում է՝ «Անշուշտ քաղաքական այդ ակտից հետո, անիմաստ համարելով հետագա պայքարը՝ տեղի պիտի տար, առանց կռվի և ապստամբ ժողովուրդը»:

Նժդեհը փաստեր է բերել նաև այն մասին, թե Ադրբեջանը, նաև Խորհրդային, ինչպես չէին թաքցնում Զանգեզուրն ու Ղարաբաղը իրենց միացնելու ցանկությունը: «Զանգեզուրի կոմունիստ» թերթը 1920 թ. նոյեմբերի 20-ին տպագրել էր «Թռուցիկ-գրություն», որում նշվում էր, թե դաշնակցականները և ուրիշներ «տենդորեն աշխատում են Խորհրդային Ադրբեջանի գավառներում ապստամբություն առաջացնել»: Ապստամբությունը վերագրելով նաև Զանգեզուրին, Նժդեհը գրում է. «Սյունիքը անվերապահորեն հայտարարված էր «Խորհրդային Ադրբեջանի գավառ» և նրա անբաժան մասը»: Նժդեհը հիշեցնում է նաև Ղափանի շրջանի և Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցիչների 1920 թ. հուլիսի 11-ի հանդիպման արդյունքների մասին, երբ վերջիններս հայտարարել էին, թե եկել ենք Զանգեզուրն ու Ղարաբաղը կցել Խորհրդային Ադրբեջանին և զինաթափել ժողովրդին:

Կուսակցական ղեկավարությանը և կուսակցական դատարանին ներկայացրած հաշվետվության մեջ (1921 թ. սեպտեմբեր) Նժդեհը հանգամանորեն վերլուծել է նաև Զանգեզուրի պարտության պատճառները: Նա հիմնականում կանգ է առել այն բացասական հետևանքների վրա, որ ունեցավ Երևանի ապստամբ ուժերի և մեծաթիվ գաղթականության նահանջը և հայտնվելը Զանգեզուրում: Խիստ ընկավ երկրամասի պաշտպանների մարտունակությունը և բարոյական ոգին: Ուժեղացավ սովը: Սրվեցին հակասությունները ղեկավարների միջև (տեղական և երևանյան) և այլն[282]:

Պարտության մասին նույնպիսի բացատրություն է տալիս Հովի. Քաջազնունին: Ապստամբների նահանջի հետևանքով Դարալագյազում և Զանգեզուրում ստեղծված վիճակի մասին նա հայտնում է, որ այն «պայքար չէր, այլ հոգևարք»: «Մենք կարծում էինք,- շարունակում է Քաջազնու-

---

[282] Զորավար Նժդեհ, Իմ բացատրությունը Լեռնահայաստանի անկման պատճառների մասին. «Նորք», 1923, գիրք 3, էջ 329-363:

նին,- թե անցնելով Լեռնահայաստան, կուժեղացնեինք տեղացիներին... Հաշվի չէինք առել, որ պարտված, կազմալուծված ու նահանջի ճամփան բռնած խմբերը, և մանավանդ սարսափահար ամբոխը կարող են առաջ բերել միայն լքում ու հուսահատություն... Մարտական թափը հալչում էր ու պակասում օր-օրի վրա... Տեղացիները տեսնում էին զորքերի քայքայված վիճակը, տիրող անիշխանությունն ու կասկածում էին իրենց կատարյալ անզորության վրա՝ շեմքի վրա կանգնած բոլշևիկների հանդեպ»[283]:

Այդ ամենը ճիշտ է: Սակայն պետք է ավելացնել և այն մասին, որ խորհրդային ուժերին դիմադրելը, անկախ Զանգեզուրում ստեղծված իրավիճակից, չէր կարող երկար շարունակվել՝ մի կողմից այն պատճառով, որ կարմիր բանակը դիմում էր վճռական գործողությունների, մյուս կողմից, արդեն կասկած լինել չէր կարող այն մասին, որ Զանգեզուրը կմիացվի Հայաստանին: Դա պարզ էր նաև Նժդեհի համար, որը, սակայն, վերջին ամիսների դիմադրությունը փորձել է արդարացնել նահանջն ավարտելու համար անհրաժեշտ ժամանակով: «Ահա թե նաև ի՞նչ լուրջ պատճառներով 3-4 ամիս ևս անհրաժեշտ էր դառնում երկարաձգել Ազատ Լեռնահայաստանի գոյությունը»,- գրել է նա վերը նշված հոդվածում:

Այժմ 1921 թ. կռիվներում, ինչպես քաղաքացիական, այնպես էլ Զանգեզուրի ինքնապաշտպանության, քաղաքացիական բնակչության և ռազմական ուժերի կրած մարդկային կորուստների մասին: Նշենք, որ զոհերի վերաբերյալ չկան վստահելի հանրագումարային տվյալներ: Արտասահմանյան հեղինակներից Շահանը հիշատակում է 20 հազար զոհերի մասին՝ Սիմոն Վրացյանին քննադատելու կապակցությամբ[284]: Սակայն հեղինակը չի հիմնավորում իր ներկայացրած տվյալները: Մի այլ հեղինակ հիշատակում է 15 հազար սպանվածների մասին (1919-1921 թթ. համար)[285]: Վստահելի չեն նաև 11-րդ բանակի հրամանատարության տվյալները յուրայինների կորուստների վերաբերյալ՝ 1500-1800 մարդ: Կա կարծիք, որ դրանք նվազեցված են: Կարմիր զորքերի կորուստների թիվը հակառակորդ կողմը հասցնում է 5000-ի: Սա էլ դիտվել է չափազանցված[286]: «Թշնամին՝ թաթար, ռուս և թուրք,- գրել է Նժդեհը,- թվապես և տեխնիկա-

---

[283] **Հովի. Քաջազնունի**, ՀՅԴաշնակցությունը անելիք չունի այլևս: Թիֆլիս, 1923, էջ 53:

[284] **Շահան**, Ալեքսանդրապոլի դաշնագրէն 1930-ի Կովկասյան ապստամբությունները (վերագնահատումներ): Հատոր Ա, Մարսեյլ, 1934, էջ 217:

[285] **Վ. Գևորգյան**, Զանգեզուրի հերոսամարտը, էջ 177:

[286] **Արամ Սիմոնյան**, Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ.: Երևան, 2000, էջ 320:

պես ավելի քան հարյուր անգամ գերազանցելով Սյունիքի ուժերը, տվավ մեզնից ավելի քան հարյուր անգամ զոհեր, մի քանի հազար գերիներ, պատերազմական մեծաքանակ ավար: Մենք ունեցանք միմիայն 28 հոգի և չտվինք ոչ մի գերի, ոչ մի ավար»[287]: Ճշտման կարոտ են նաև այս տվյալները:

Մերժելով կողմերի հիշյալ տվյալները, առանձին հեղինակներ 11-րդ բանակի զոհվածների ընդհանուր թիվը հաշվարկել են 2500-3000-ի սահմաններում[288]: Ավելի ճշգրիտ համարելով վերջին հաշվարկները, կարծում ենք, որ, այնուամենայնիվ, մարդկային կորուստների հարցը պահանջում է հատուկ ուսումնասիրություն:

Բնականաբար վստահելի պետք է ընդունել առանձին դեպքերի ու գործողությունների համար գոյություն ունեցող տեղեկությունները: Այսպես, 1920 թ. հուլիս-նոյեմբերին Զանգեզուրում ժամանակավոր տիրապետության ժամանակ բոլշևիկները գնդակահարել էին 87 մարդու (Զաբուղի ձորում և Ղարադարասուի «ծակերը» ամառանոցում): Գորիսում գնդակահարվել էին Հայաստանի Հանրապետության պառլամենտի անդամներ Վահան Խորենին, Արշակ Շիրինյանը և ուրիշներ[289]: 1921 թ. փետրվարին «Ազատ Հայաստան» թերթը տպագրել է հաղորդագրություն բոլշևիկների կողմից բանտում 21 գնդակահարվածների դիակների թաղման մասին[290]: Թերթը հայտնում է նաև համապատասխան նյութերի հրապարակումը շարունակելու մասին: Սակայն այդպիսիք թերթի համարներում բացակայում են:

Երևանից նահանջելու ժամանակ պարտված ապստամբները կենտրոնական բանտից իրենց հետ տարել են 63 կոմունիստ բանտարկյալների, որոնցից 3-ին սվինահարել էին, մյուսներին հասցրել Զանգեզուր: Այդ խումբը համալրվել էր 33 ռազմագերիներով[291]: Կարմիրբանակային գերիների նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի մասին Վելիկանովը գրել է. «Երբ մեր զորքերը ապրիլի լույս 15-ի գիշերը գրավեցին Քեշիշքենդը, պարզվեց, որ գերի կարմիր զինվորներից 30 հոգի մեռել են քաղցից և դաշնակների դաժան վերաբերմունքից»[292]: Տարիներ անց հավաքվել և Քե-

---

[287] Նժդեհ, Լեռնահայաստանի գոյամարտը. «Հայրենիք», 1923, թիվ 11, էջ 77-78:
[288] Արամ Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը, էջ 320:
[289] Հ. Իրազեկ, Մոտիկ անցյալից: Պատմական դեպքեր և ապրումներ. 1917-1922: Պեյրութ, 1956, էջ 119:
[290] Ազատ Հայաստան, 20 փետրվարի 1921 թ.:
[291] Կոմունիստ, 28 ապրիլի 1921 թ.:
[292] Կոմունիստ, 20 ապրիլի 1921 թ.:

շիշքենդի եղբայրական գերեզմանոցում թաղվել է 1921 թ. «Փետրվարյան ավանտյուրայի ժամանակ Դարալագյազում դաշնակ ավանտյուրիստների կողմից Գնդևազի ժայռերից գլորված» 22 կոմունիստների ու կարմիր բանակայինների աճյունները: Այնուհետև հայտնաբերվել էին այլ աճյուններ ևս[293]: Կան նաև վկայություններ Գնդևազ գյուղում Կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի 150 կոմունիստ շարքայինների ու սպաների գնդակահարության մասին[294]:

Հետագայում, նահանջի պահին, Զանգեզուրում թույլ տրվեց նոր դաժանություն. գնդակահարվեցին կամ Տաքևի ժայռից ցած նետվեցին այստեղ բերված 78 գերի կոմունիստներ և կարմիրբանակայիններ: Այս ոճրագործության համար փորձել են արդարանալ և միմյանց մեղադրել նախկին Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանը և նրա արտակարգ հանձնաժողովի նախագահ Ավետիս Օհանջանյանը: «Զանգեզուրի մեր ապստամբության պատմության մեջ,- գրել է Ավետիս Օհանջանյանը «Զարյա Վոստոկա» թերթին Թավրիզից ուղարկած նամակում,- մի սև էջ կա: Խոսքը 60 բոլշևիկ ապստամբների գնդակահարության մասին է, և որը կատարվել է զինվորական իշխանության հրամանով և շնորհիվ արտակարգ հանձնաժողովի նախագահի անփութության»[295]:

Մինչև այդ, 1921 թ. հոկտեմբերի 31-ի դաշնակցական ժողովներից մեկում (Թավրիզում) Ավետիս Օհանջանյանը, տվյալ իրադարձության կապակցությամբ, խիստ քննադատել է Ռուբեն Տեր-Մինասյանին, նշելով, թե վերջինս իրեն կարգադրել է «բոլոր ծերբակալվածներին նետել Տաքևի ժայռից»: Նրանց 90 տոկոսից ավելին անմեղ էին: «Մենք մինիստրներ չէինք, շարունակում է Օհանջանյանը,- այլ մարդասպաններ, կողոպտիչներ ու ժողովրդին կործանողներ» (Ադրբեջանում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսության ամփոփագրից)[296]:

Բացի նշվածից, Ծիրանի Ձոր վայրում, Օրդուբադից Մեղրի տանող ճանապարհին, գերված 4 կարմիրբանակային հետախույզներ գնդակահարվել են Մեղրիի իշխանությունների կողմից[297]:

Ընդ որում, մի շարք տարիներ ապրիլի 2-ը խորհրդային ուժերի կողմից Երևանի գրավման օրը նշվել է որպես զոհված կոմունիստների հիշատակի օր:

---

[293] ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 28, թ. 18:
[294] ՀԱԱ, ֆ. 113, ց. 4, գ. 10526, թ. 1:
[295] «Խորհրդային Հայաստան», 24 մայիսի 1923 թ. (արտատպություն «Զարյա Վոստոկա» թերթից):
[296] ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 37, թ. 67:
[297] Նույն տեղում, ֆ. 571, ց. 1, գ. 125, թ. 1-2:

Քաղաքացիական կռիվների կորուստներին առնչվում են նաև հետևյալ տվյալները: Հայաստանի ռազմադաշտային տրիբունալը 1921 թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 26-ը տարբեր մեղադրանքներով, հիմնականում «հակահեղափոխության մեջ» մեղադրել և դատապարտել է 48 մարդու, որոնցից 28-ը գնդակահարության, 16-ը՝ գնդակահարության՝ հանցանքը կրկնելու դեպքում[298] և այլն:

Հայ Հեղափոխական Դաշնակցության Վիեննայի խորհրդաժողովի (1923 թ.) կողմից Զանգեզուրի ինքնապաշտպանությանը տրվել է այսպիսի գնահատական (այն հաստատել է ՀՅԴ 10-րդ ընդհանուր ժողովը). «Զանգեզուրի շարժումները ունեցած են արտակարգ նշանակություն բոլշևիկները զգաստացնելու, նահանջը ապահովելու և Զանգեզուրը Հայաստանին կապված պահելու տեսակետից[299]:

Այս տեսակետին, սակայն, կարելի է համաձայնվել միայն մասամբ: Ճիշտ է, որ Զանգեզուրի ինքնապաշտպանությունը վճռական նշանակություն ունեցավ հայկական այդ երկրամասը Հայաստանի կազմում ապահովելու համար: Ինչ վերաբերում է բոլշևիկների զգաստացմանը, ապա այն պայմանավորված է «Ռազմական կոմունիզմից» անհրաժեշտաբար հրաժարվելու հետ կապված Նոր տնտեսական քաղաքականության ընդունումով, որպիսին ուներ համառուսաստանյան բնույթ: Իսկ նահանջի ապահովման մասին միայն պետք է ասել, որ ավելի լավ կլիներ, որ այն (նահանջը) տեղի չունենար, քանի որ նահանջողներն ապրեցին ավելորդ տառապանքներ և նրանց մեծ մասը հետո վերադարձվեց Հայաստան[300]:

---

[298] Նույն տեղում, ֆ. 121, ց. 1, գ. 52, թ. 23-25: Զոհերի մասին տե՛ս նաև Ա. Հակոբյան, Հայաստանի բանվորների և գյուղացիների հաղթանակը 1921 թ. քաղաքացիական կռիվներում: Երևան, 1960, էջ71-73:

[299] Յ. Քիւրքճեան, Ուրուագիծ ՀՅԴ պատմութեան 1919-1924 հնգամեակի: Աթէնք, 1988, էջ 74:

[300] Վ. Դազախեցյան, Նժդեհը Զանգեզուրում. 1920 թ. վերջ - 1921 թ. հուլիս: Երևան, 2001:

Գլուխ III. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ
1. Անցումը Նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ)

Քաղաքացիական կռիվների ավարտից և Զանգեզուրի միանալուց միանալուց հետո առաջնահերթ խնդիրը երկրում հանգիստ քաղաքական իրադրության հաստատումն էր, բացառումն այն ամենի, ինչը մասնավորապես հանգեցրեց լարվածության սրմանը հասարակության մեջ և ապստամբական ելույթներին:

Երևան վերադարձած ՀՍԽՀ ռազմհեղկոմը անմիջապես (ապրիլի 3-ին) հրաման արձակեց «հակահեղափոխական իշխանության տապալման մասին», ազդարարելով, որ հանրապետության սահմաններում վերականգնվել է խորհրդային իշխանությունը: Իրենց ուժը պահպանում էին այդ իշխանության բոլոր դեկրետներն ու հրամանները և չեղյալ հայտարարվում Հայրենիքի փրկության կոմիտեի հրամաններն ու կարգադրությունները: Պահանջվեց հայտնաբերել «հակահեղափոխության» բոլոր պատասխանատու ղեկավարներին, որոնք հայտարարվում էին «օրենքից դուրս»: Կարևոր նշանակություն ուներ հրամանի այն կետը, որը վերաբերում էր խորհրդային մարմինների կողմից գործադրվող բռնությունների վերացմանը[1]: Այդ կետի ազդարարումը նշանակում էր հրաժարում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից, որը դերձել էր ժողովրդական ապստամբության ծագման գլխավոր պատճառը: Ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ բռնություններին վերջ տալու և ժողովրդի մեջ խորհրդային իշխանության նկատմամբ վստահություն ստեղծելու համար:

Վերացվեց Գ. Աթարբեկյանի ղեկավարած ռազմհեղկոմը, որը ժամանակավորապես գործել էր հանրապետության կռիվներից ազատ շրջաններում:

Երևան վերադառնալուց անմիջապես հետո, ապրիլի 4-ին, ՀՍԽՀ - ռազմհեղկոմի նախագահ Սարգիս Կասյանը հեռախոսային զրույց ունեցավ Անդրերկրկոմի քարտուղար Գ. Օրջոնիկիձեի հետ: Վերջինս Մոսկվայի անունից և իր կողմից տվեց մի շարք սկզբունքային նշանակություն ունեցող ցուցումներ այն քաղաքականության վերաբերյալ, որպիսին նոր պայմաններում վարելու էին Հայաստանի ղեկավար մարմինները: Ցուցումները հանգում էին մեղմ քաղաքականության որդեգրմանը: Ընդ որում մինչև հեռախոսային խոսակցության կայացումը Օրջոնիկիձեն նույն հարցի վերաբերյալ հեռագրել էր, ինչպես երևում է հեռախոսային զրույցից, Երևան 11-

---

[1] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու: Պրակ 2, էջմիածին, 1921, էջ 3-4:

րդ կարմիր բանակի ռազմհեղկոմի կապի միջոցով, քանի որ տվյալ պահին Երևանի հետ ուղիղ կապը բացակայում էր: «Հարկավոր է անմիջապես դիմել ներման և լիբերալ ռեժիմի հաստատման նոր կուրսի»: Այդ էր, ըստ Օրջոնիկիձեի, իր ուղարկած հիշյալ հեռագրի «նրբերանգը», որպիսին, ավելացնում էր նա, «թելադրվում է Մոսկվայի կողմից»:

Ի տարբերություն Կասյանի, որը կողմ էր սահմանափակ ներման և ապստամբության ղեկավարներին օրենքից դուրս հայտարարելուն, Օրջոնիկիձեն պաշտպանում էր «համընդհանուր ներումը», ավելացնելով, որ հենց «այդպիսին է Մոսկվայի տեսակետը»[2]:

Ինչպես կտեսնենք, Հայաստանի ռազմհեղկոմի նախագահը ներման հարցում գործեց ինչպես ինքն էր արտահայտվել հեռախոսային խոսակցության ժամանակ: Միայն Օրջոնիկիձեի Երևան ժամանելուց հետո նա լրիվ իրագործեց վերադասների պահանջը:

1921 թ. ապրիլի 19-ին Երևանում կայացավ կուսակցական և արհմիութենական կազմակերպությունների հանդիսավոր ժողով, որտեղ զեկուցումով հանդես եկավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի քարտուղար Գ. Օրջոնիկիձեն: Նա խոսեց նաև հանրապետության նախկին ղեկավարության անտակտության, ինչպես նաև նոր իրադրության պայմաններում ծառացած խնդիրների մասին[3]:

Պետական-կուսակցական մարմիններում կատարվեցին կադրային նոր նշանակումներ և արմատապես փոխվեց ներքին քաղաքականությունը: Էական նշանակություն ունեցավ Լենինի ապրիլի 14-ի նամակը Կովկասի կոմունիստներին, որը բխում էր այն սխալներն ուղղելու անհրաժեշտությունից, որոնք տեղ էին գտել Հայաստանի և Կովկասի մյուս հանրապետությունների կուսակցական կազմակերպությունների գործունեության մեջ: Լենինը խորհուրդ էր տալիս խուսափել ռուսական շաբլոնից, չկրկնել նրա օրինակը, վարել տեղական առանձնահատուկ պայմաններից բխող քաղաքականություն, մեղմ վերաբերմունք ցուցաբերել գյուղացիության, մտավորականության և մանրբուրժուազիայի նկատմամբ[4]:

Նամակը իր հետ Կովկաս բերեց Ալեքսանդր Մյասնիկյանը, որը Հայաստան եկավ ղեկավար աշխատանքի, որպես կառավարության նախագահ: Մոսկվան Ալ. Մյասնիկյանին Երևան էր ուղարկում այստեղ թույլ տված սխալներն ուղղելու, քաղաքական տանելի պայմաններ ստեղծելու նպատակով:

---

[2] Таирян И., XI Красная армия в борьбе за установление и упрочение Советской власти в Армении. Ереван, 1971, с. 276-277.
[3] Կոմունիստ, 22 ապրիլի, 1921 թ.:
[4] Լենին, ԵԼԺ, հ. 43, էջ 246-248:

Տվյալ պահին Հայաստանի ղեկավարության մեջ տիրող իրադրության մասին կարելի է տեղեկություն քաղել այն հեռախոսային խոսակցությունից, որը կայացել էր մայիսի 6-ին Վրաստանում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանի և Ռուսաստանում Հայաստանի լիազոր Սահակ Տեր-Գաբրիելյանի միջև: Դ. Շահվերդյանը տեղեկացրել է, թե հեղկոմի կազմն առայժմ մնացել է նույնը, որ այն կվերակազմվի Ալեքսանդր Մյասնիկյանի, Ալեքսանդր Բեկզադյանի և այլոց Երևան ժամանելուց հետո: «Ընկերների միջև գժտությունը,- նշում է Դ. Շահվերդյանը,- շարունակվում է և կշարունակվի մինչև որ չստեղծվի ուժեղ կուսակցական կենտրոն և նրա հետ համերաշխ հեղկոմ»: Տեղում, ինչպես երևում է տվյալ խոսակցությունից, մեծ հույսեր էին կապում Մյասնիկյանի ու մյուս ժամանողների հետ:

Ապրիլի կեսերին Ալ. Մյասնիկյանը հանդիպել էր Լենինի հետ, որը, ինչպես գրել է Ալ. Մյասնիկյանը, շարադրել էր «մեր այն գիծը, որը մենք 1921 թ. սկսած, անց ենք կացնում Անդրկովկասում ու Մերձավոր Արևելքում»: Ալ. Մյասնիկյանը Լենինին խնդրել էր համառոտ շարադրել իր մտքերը նամակի ձևով, որպեսզի ինքը այն հասցնի Կովկասի ընկերներին[5]: Նշենք, որ Լենինի նամակի շարժառիթը և դրդապատճառներն ավելի լայն են, քան Ալ. Մյասնիկյանի տեսակցությունը նրա հետ: Հիշենք Դիլիջանից Մոսկվա ուղարկված Ասքանազ Մռավյանի 1921 թ. մարտի 7-ի նամակը, որը Հայաստանում թույլ տված սխալների կապակցությամբ ակնկալում էր համապատասխան արձագանք:

Լենինի նամակը գործունեության ծրագրային փաստաթուղթ դարձավ Հայաստանի ղեկավարության համար: Այն տպագրվեց «Կոմունիստ» թերթում մայիսի 10-ին:

Հայաստանում ղեկավարությունից հեռացան Գևորգ Ալիխանյանը, Գևորգ Աթարբեկյանը, փոխվեց Ավիս Նուրիջանյանի պաշտոնը, գործիչներ, որոնք առնչվում էին գործադրված բռնությունների հետ: Այլ աշխատանքի անցավ Սարգիս Կասյանը:

Հանրապետության ռազմհեղկոմը վերակառուցվեց ժողովրդական կոմիսարների խորհրդի, Ալեքսանդր Մյասնիկյանի նախագահությամբ: Փոխվեց նաև կուսակցական ղեկավարությունը: ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար դարձավ Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան): Այդ պաշտոնում 1922 թ. նրան փոխարինեց Աշոտ Հովհաննիսյանը:

Հայաստան աշխատելու եկան այլ կադրեր ևս, ինչպես Ա. Կարինյանը, Պ. Մակինցյանը, Ս. Համբարձումյանը, Ա. Երզնկյանը և ուրիշներ:

---

[5] Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 469-470:

1921 թ. ապրիլին Հայհեղկոմն ընդունեց երկու դեկրետ «քաղաքական հանցագործներին» ներում շնորհելու մասին: Դրանք կարևոր նշանակություն ունեցան երկրում տիրող քաղաքական լարվածությունը լիցքաթափելու, նրա հետևանքները վերացնելու տեսակետից, ինչպես նաև նպատակ ունեին պարտված ապստամբների և քաղաքացիական բնակչության արտագաղթը կանգնեցնելու համար:

Հեղկոմի ապրիլի 10-ի դեկրետով Հայաստանի բոլոր գյուղացիներին, արևմտահայ գաղթականներին, աշխատավոր մտավորականությանը, նրանց, ովքեր «այս կամ այն ձևով մասնակցել և մասնակցում են հակահեղափոխական շարժման», հայտարարվում էր, որ խորհրդային իշխանությունը «լիակատար մոռացության է տալիս Հայաստանի բանվորների ու գյուղացիների հանդեպ նրանց կատարած հանցանքը հակահեղափոխական շարժման մեջ»: Նրանք բոլորը «կանչվում էին աշխատանքի»:

Ներումը չէր տարածվում «հակահեղափոխության գիտակցական և հանցագործ ղեկավարների՝ այսպես կոչված Հայրենիքի փրկության կոմիտեի անդամների, արտակարգ հանձնաժողովի կոլեգիայի, բարձր հրամանատարական կազմի և խմբապետների վրա»[6]:

Ապրիլի 23-ին ընդունվեց երկրորդ դեկրետը («Ընդհանուր ներման մասին»), որով վերացվեց առաջինով արված սահմանափակումը և ներումը դարձավ համընդհանուր: Դա տեղի ունեցավ միայն Գ. Օրջոնիկիձեի Երևան ժամանելուց հետո:

Ի փոփոխում և լրացում ապրիլի 10-ի դեկրետի, նորն ազդարարում էր, որ քաղաքական և այլ պատասխանատվությունից ազատ էին բոլորը, առանց բացառության, ովքեր այս կամ այն ձևով պայքարել էին Խորհրդային Հայաստանի դեմ, անկախ իրենց անմիջական գործունեությունից, կոչումից, դիրքից ու պաշտոնից[7]:

«Հայհեղկոմի ապրիլի 23-ի համընդհանուր ներման համաձայն,- ասված է իշխանության տեղական մարմիններին ուղղված Հայհեղկոմի ապրիլի 24-ի հեռագրում,- բանտերից ու արգելափակման մյուս վայրերից անմիջապես ազատման ենթակա են բոլոր քաղաքական բանտարկյալները»[8]: Այդ մասին լայնորեն տեղեկացվում էր ամբողջ բնակչությանը:

Հետագայում ներման ենթակա էին նաև Զանգեզուրի կռիվների մասնակիցները, որի մասին ազդարարվեց բազմիցս: Այսպես, խորհրդային իշխանությունը 1921 թ. մայիսի 16-ին հայտնում էր լրիվ և համընդհանուր

---

[6] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու: Պրակ 2, էջ 10-12:
[7] Նույն տեղում, էջ 20-21:
[8] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 113, ց. 3, գ. 24, թ. 52:

ներում բոլոր քաղաքական և զինվորական գործիչներին, «ովքեր ապստամբել ու պայքարում են խորհրդային իշխանության դեմ»[9]:

Դեռևս ապրիլի 20-ին, ինչպես տեղեկացրել է թերթը, Երևանի բանտից բաց էին թողնվել «բոլոր քաղաքական բանտարկյալները, առանց բացառության»: Կայացել էր միտինգ, որտեղ ճառեր էին արտասանել Երևանում գտնվող Գ. Օրջոնիկիձեն, 11-րդ բանակի հրամանատար Ա. Հեկկերը և ուրիշներ[10]: Ապրիլի 23-ի դրությամբ, հանրապետության Արտակարգ հանձնաժողովի տվյալներով, բանտարկության մեջ գտնվել էր 117 մարդ, որից ազատ էին արձակվել 114-ը: Նույնի տվյալներով, ապրիլի 25-ի գրությամբ, 11-րդ բանակի Հատուկ բաժնի գծով բանտարկյալների թիվը եղել է 358, որից ներման համաձայն ազատվել էին 338-ը[11]:

Հատուկ բաժնի գծով արգելափակվածները գտնվելիս են եղել Բաքվի «հավաքակայանում», ուր միայն մարտի 28-ին, ըստ ցուցակի, ընդունվել էր 153 մարդ, և որոնք ցուցակում անվանվում են «ռազմագերիներ»[12]:

Կան տվյալներ այն մասին, որ Հայաստանից արտաքսվածները գտնվելիս են եղել նաև Պետրովսկի նավահանգստում հարկադիր աշխատանքի ճամբարում[13]: Նրանք արտաքսվել էին Դիլիջանի, Նոր Բայազետի և ապստամբությունից ազատ այլ շրջաններից:

ՀՍԽՀ հեղկոմի նախագահ Ս. Կասյանը մայիսի 7-ին Ադրբեջանի հեղկոմի նախագահին և 11-րդ բանակի Հատուկ բաժնին ուղարկել է հեռագիր, խնդրելով կարգադրել «վերադառնալու իրենց բնակավայրերը, տեղական հեղկոմների տրամադրության տակ, Հայաստանի այն բոլոր քաղաքացիներին, որոնք Հայաստանից դաշնակների փետրվարյան հակահեղափոխության ժամանակ ուղարկվել էին Բաքու»[14]: Նույն ժամանակ Դիլիջանի հեղկոմից պահանջվել է միջոցներ ձեռնարկել իրենց բնակավայրերը վերադարձնելու հանրապետության բնակիչներին, նրանց թվում նաև «այն ռազմագերիներին, որոնք պետք է արտաքսվեին Հայաստանի սահմաններից»[15]:

Հայաստանի արտգործժողկոմատի մայիսի 3-ին Բաքու, հանրապետության ներկայացուցչին հղած հեռագրում բերված է այնտեղ ուղարկված ճաթղռան գյուղի 33 բնակիչների անուն, որոնք ապրիլի 6-ին կամա-

---

[9] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 21, թ. 38:
[10] Կոմունիստ, 22 ապրիլի 1921 թ.:
[11] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 24, թ. 58:
[12] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 95, թ. 6-7:
[13] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 98, թ. 13:
[14] Կոմունիստ, 7 մայիսի 1921 թ.:
[15] Նույն տեղում:

վոր հանձնվել էին Կարմիր բանակի 162-րդ գնդին: Նրանք, անմիջապես ձեռնարկված միջոցառումներով, ներման մասին դեկրետի համաձայն, «շտապ վերադարձվելու էին հայրենիք»[16]: Ճաքղռանցիները, որ նույնպես կոչվում էին «ռազմագերիներ», Հայաստան վերադարձվեցին ապրիլի 27-ին[17]:

Համաներումը կարևոր նշանակություն ուներ գաղթի ուղին բռնած հազարավոր հայ մարդկանց կես ճանապարհից տուն բերելու կամ Պարսկաստանից վերադարձնելու, Զանգեզուրից հետագա գաղթը կանխելու համար: Փախստական դարձած քաղաքացիների ու զինվորականների ընդհանուր թիվը հասնում էր 10-12 հազարի:

Նահանջի և գաղթի հարցին անդրադարձել է իրադարձությունների մասնակից, Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Հակոբ Տեր-Հակոբյանը (Իրազեկ): Նրա վկայությամբ էվակուացիայի (դա նրա արտահայտությունն է) դիմելու մասին իրենց կոմիտեում առաջին անգամ խոսվել է 1921 թ. մարտի 20-ի նիստում, այսինքն՝ Երևանը թողնելուց մոտ 2 շաբաթ առաջ: էվակուացվելու էր «միմիայն զորքի մի մասը»: Ինչ վերաբերում է ժողովրդին, ապա նրա հեռանալու մասին որևէ ծրագիր չի եղել, հակառակ դեպքում կոմիտեի կողմից «հարկավոր միջոցներ» ձեռնարկված կլինեին, «մանավանդ որ ի վաղուց հետե արդեն տեսնում էր կռվի անբարեհաջող վախճանը իր համար»: էական է կանխավ գիտակցումը բոլշևիկների անխուսափելի հաղթանակի, որ խոստովանում է Տեր-Հակոբյանը:

Հակոբ Տեր-Հակոբյանն այնուհետև հայտնում է հետևյալ մանրամասնությունը: Իբր Հայրենիքի փրկության կոմիտեն մտադիր է եղել Բաշ-Գյառնիից կամ Դարալագյազից վերադառնալ Երևան և վերադարձնել իշխանությունը: Հետևաբար, եզրակացնում է հեղինակը, նա չէր կարող գաղթեցնել ժողովրդին, ավելորդ բեռ ստեղծել ամենքի համար:

Հ. Տեր-Հակոբյանը փորձել է վերլուծել նաև ժողովրդի գաղթի պատճառները: Նա նշում է ժողովրդի հոգեկան կապը էվակուացվող իր անկախ պետականության հետ, բոլշևիկների իշխանության դաժան քաղաքականությունը, հավատը՝ որ Լեռնահայաստանի հետ միասին կարելի կլինի բոլշևիկներին դուրս քշել երկրից:

Կոմիտեն, ըստ Տեր-Հակոբյանի, իբրև թե ջանքեր է գործադրել հետ վերադարձնել (հաջորդաբար՝ Բաշ-Գյառնիից, Վայոց Ձորից, Զանգեզուրից, Մեղրիից, Արաքսի ափից) գոնե գաղթողների մի մասին, սակայն, ապարդյուն: «Ոչ ոք չէր ուզում վերադարձի մասին որևէ խոսք անգամ լսել»: Հետաքրքիր է, օրինակ, թե արդյո՞ք որբանոցի սաներն էլ էին կամա-

---

[16] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 11, թ. 32:
[17] Նույն տեղում, գ. 98, թ. 6:

վոր հեռանում, որոնց հետ դարձնելու փորձի մասին հիշատակում է նույն հեղինակը[18]:

Գաղթականները, հիմնականում մտավորականները, Երևանից էին, Բաշ-Աբարանի, էջմիածնի, Զանգիբասարի, Սարդարաբատի և այլ շրջաններից: Բաշ-Գյառնի-Քեշիշքենդ ուղղությամբ, դեպի Գորիս առաջանալով, ապրիլի վերջերին մի պահ կանգ առնելով Զանգեզուրում, սկսվեց փախստականների անցումը Պարսկաստան:

Տաթևում տեղի ունեցավ Հայրենիքի փրկության կոմիտեի խորհրդակցություն, որը, ինչպես գրել է Վահան Մինախորյանը, պարզեց, որ «միակ ելքը տարագրության Թավրիզ փոխադրելն էր, որովհետև ոչ կարելի էր հետ ճամփել, և ոչ էլ Զանգեզուրում պահել»: Գաղթի ղեկավարները հաշվի չէին առնում ներման մասին Հեղկոմի դեկրետները:

Մայիսին Ղափանի Հանքեր հասավ Հայաստանում Իտալիայի ներկայացուցիչ Գորրինիի ապրիլի 27-ի նամակը «Զանգեզուրի փախստականներին», որով նա, որպես հումանիստ, նրանց հորդորում էր վերադառնալ տները: «Որպես Իտալիայի ներկայացուցիչ,- կարդում ենք նամակում, այստեղ հասնելով, ես տեղեկացա մեծ ցավով, որ ազգաբնակչության մեկ մասը գաղթել է դեպի Զանգեզուր: Կառավարությունը, սրբագրելով իր առաջին մասնակի ներման դեկրետը, այսօր հրատարակեց մի ընդհանուր լրիվ ներում, առանց որևէ մեկին դուրս թողնելու և ինձ տվեց ցանկալի երաշխիքը, թե բոլոր վերադարձողները պիտի հարգվեն: Հայաստանի երջանկության համար ես ցանկանում եմ ձեր վերադարձը դեպի Երևան: Ես կանեմ, ինչ որ կարող եմ, որպեսզի դուք հարգվեք և ապահով լինեք»:

Դժբախտաբար Գորրինիի չեզոք մարդու ճշմարտացի խոսքը ևս լսող չեղավ, չհասկացվեց: Հազարավոր մարդկանց անիմաստ գաղթը շարունակվեց:

1921 թ. ապրիլ-մայիս ամիսներին 6590 մարդ անցավ Արաքսը, հայտնվելով Թավրիզում: Զանգեզուրի կռիվների ավարտից հետո հեռացան ևս 1452 մարդ: Ընդհանուր առմամբ փախստական դարձավ և օտարության դիմեց 8042 մարդ[19]:

Երկրորդ գաղթը, որ կատարվեց Լեռնահայաստանից, տևեց մեկ շաբաթ հուլիսի 10-16-ը: 1388 մարդ օթևան գտավ Թավրիզում, 64-ը Սուժամբարում:

Հաշվարկված 7836 մարդուց 3578-ը կամ 45,7 տոկոսը արևելահայեր էին, իսկ 4258-ը կամ 54,3 տոկոսը արևմտահայեր: Արևմտահայերը

---

[18] Հ. Իրազեկ, Մոտիկ անցյալից, Պատմական դեպքեր և ապրումներ. 1917-1922: Պեյրութ, 1956, էջ 112-113:

[19] Վ. Մինախորյան, Ապրիլի 2-ի գաղթը. «Հայրենիք», 1923 թ., թիվ 2, էջ 91:

հիմնականում առաջին գաղթի մասնակիցներ էին: (Այլ հաշվարկով՝ 6320 գաղթողներից 4062-ը կամ 64,3 տոկոսը արևմտահայեր էին, իսկ 2258-ը կամ 35,7 տոկոսը՝ արևելահայեր): Արևմտահայերի մեծ տոկոսը արտացոլում է Փետրվարյան ապստամբությանը և քաղաքացիական կռիվներին նրանց ակտիվ մասնակցության պատկերը:

Հուլիսի սկզբին Թավրիզում ստեղծվեց գաղթականական կոմիտե, տեղացի Հ. Հովհաննիսյանի նախագահությամբ, որը ղեկավարում էր գաղթականների նպաստավորման ծանր գործը: Այդ գործում, ինչպես նաև վերադարձի կազմակերպման մեջ մեծ ջանքեր է դրել Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը: Մանչեստրի հայերի միջոցներով ստեղծվեց Հայ գաղթականական ֆոնդը: Օգնությանը մասնակցություն է ունեցել նաև Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն:

Ուշագրավ է, որ հայ տարագրությունը Թավրիզում զբաղվել է նաև Փետրվարյան ապստամբության և Զանգեզուրի իրադարձություններին վերաբերող նյութերի ու փաստաթղթերի հավաքման գործով, ստեղծվել են հուշագրություններ[20]:

Բնականաբար գաղթականությունը Հայաստան վերադարձնելու գործը անմիջապես իրականացնելու էր խորհրդային իշխանությունը: Դրանով անմիջապես զբաղվում էր գաղթականության գծով լիազորությունը: «Այսօր 6-րդ օրն է, որ Թավրիզում ենք, սկսել ենք փախստականների ռեգիստրացիան»,- գրել է լիազոր Գ. Վարդանյանը 1921 թ. հուլիսի 27-ի նամակում: Ըստ այդ նամակի՝ փախստականների ընդհանուր թիվը տվյալ պահին 4200 էր: «Վերջերս,- կարդում ենք նամակում,- Զանգեզուրից տեղս է հասել 1200 հոգի, որոնցից բուն զանգեզուրցի մոտ 300 հոգի են, բոլորն էլ աշխատավոր գյուղացիներ»[21]:

Միայն պարսկական հողի վրա տարագրության ղեկավարները, գրել է Վ. Մինախորյանը, սկսեցին նպաստել վերադարձի գաղափարին, որպիսի տրամադրությունը, չնայած տատանումներով, «ներդաշնակեց Սովետական Հայաստանի վարիչների ցանկությանը»[22]: Բայց չէ՞ որ այդ ցանկությունը դրսևորվել էր ապրիլին, ներման մասին դեկրետներով: Այլապես շատերին կարելի կլիներ փրկել ավելորդ տառապանքներից, չէին լինի իզուր զոհեր: Նշենք, որ Մեղրիի շրջանում հիվանդությունից մահացավ 7, անցնելու ժամանակ գետում խեղդվեց 13 (նաև շարժական կամուրջ փորձարկող ճարտարապետ Նորայր Իսահակյանը), Թավրիզի ճանապարհին

---

[20] Նույն տեղում:
[21] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 26:
[22] Վ. Մինախորյան, Վերադարձը. «Հայրենիք», 1924 թ., թիվ 6, էջ 48:

անհետացավ 7 մարդ: Զոհվեց պառլամենտի անդամ Լևոն Զարաֆյանը: Թավրիզում տիֆից մահացավ 13 հիվանդ[23]:

Խորհրդային իշխանությունը ուշադրությամբ հետևում էր պարսկական տարագրության մեջ տիրող իրադրությանը և գործընթացներին, զբաղվում տունդարձի խնդրով: Դրանով զբաղվում էր նաև Սիմոն Վրացյանի կառավարությունը, որը այդ նպատակով տնօրինում էր նաև Երևանի պետական գանձարանից տարած գումարներն ու դրանց բաշխումը: Ըստ Խորհրդային Հայաստանի գաղթականության գործերի լիազոր Գ. Վարդանյանի Թավրիզից Ա. Սռավյանին ուղարկած նամակի (1921 թ. օգոստոսի 9) այդ հարստությունը կազմել է՝ 240 հազար ռուբլի ոսկի փող, 60 հազար ռուբլի թղթադրամ (դոլար և այլն) և 20 հազար ռուբլի արծաթ ու ծուլածո ոսկի[24]: Հարստության մի մասը յուրացվել էր նահանջի ճանապարհին, փոքր մասը բաժանվեց գաղթածներին, իսկ զգալի մասը բաժին հանվեց պետական ու կուսակցական ղեկավարներին[25]:

Գումարների վերաբերյալ մանրամասն հաշվետվություն է պատրաստել Սիմոն Վրացյանի գլխավորած հանձնաժողովը 1921 թ. հուլիսին: Նա հայտնում է, որ Հայաստանի կառավարության դրամները և վալյուտան ապստամբության պահին եղել են արկղների մեջ, որի մի մասը հասցրել է իր հետ տանել Երևանից հեռացող խորհրդային իշխանությունը, մնացածն «ընկավ Հայրենիքի փրկության կոմիտեի ձեռքը»: Ըստ հաշվետվության՝ 1921 թ. մարտի 25-ի դրությամբ Փրկության կոմիտեի մոտ գտնվել է 9,4 միլիարդ ռուբլի հայկական չեկերով, 650 միլիոն ռուբլի խորհրդային դրամ: Վալյուտայի վերաբերյալ տվյալները բերված են ըստ դրանց տեսակների, այդ թվում ռուսական դրամ՝ 147 հազար ռուբլի, 23,3 հազար ամերիկյան դոլար, 8500 անգլիական ֆունտ ստերլինգ և այլն[26]: (Ընդհանրացված տվյալներ չկան):

Պետական դատարկ գանձարանը խորհրդային իշխանության համար ստեղծելու էր լուրջ դժվարություններ:

Հայ քաղաքական տարագիրների վերադարձը սկսվեց մայիսի 24-ին: Հունիսի կեսերին, Դարալագյազի իրադարձությունների պատճառաբանությամբ, տունդարձի հոսանքն ընդհատվեց: Օգոստոսի 12-ին այն վերսկսվեց և բարձր տեմպերով շարունակվեց մինչև սեպտեմբերի վերջը:

---

[23] Վ. Մինախորյան, Ապրիլի 2-ի գաղթը. «Հայրենիք», 1923 թ., թիվ 2, էջ 92, 96:

[24] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 25:

[25] Արամ Սիմոնյան, Զանգեզուրի գոյամարտը, 1920-1921 թթ.: Երևան, 2000, էջ 632-634:

[26] Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն: Երևան, 1993, էջ 667-677:

Այդ պահին Թավրիզում մնում էր մոտ 1200 մարդ[27]: Նրանց վերադարձը արգելակվում կամ դժվարանում էր քաղաքական նկատառումներով: Խորհրդային իշխանությունը խիստ պահանջներ էր դնում նրանց վերադարձի թույլտվություն տալու համար: Ստեղծված պայմաններում, գրել է Վ. Մինախորյանը, ինչքան նվազում էր մնացողների թիվը, այնքան ընկնում էր վերադառնալու ցանկությունը[28]: Ի վերջո, նրանց մի մասին հաջողվեց գալ Հայաստան, ոմանք մնացին Թավրիզում, մյուսները նորից բռնեցին գաղթի ճանապարհը:

Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը բնականաբար անհանգստացնում էր հանրապետության սահմանների մոտ գտնվող Թավրիզի տարագիրների ղեկավարների հակախորհրդային գործունեությունը, ուստի նա ջանում էր, որ նրանց հեռացնել տա Պարսկաստանից: Հայաստանի տապալված կառավարության և Հայրենիքի փրկության կոմիտեի անդամներն ու Զանգեզուրի ապստամբության ղեկավարները, ասված է Ասքանազ Մռավյանի 1921 թ. օգոստոսի 13-ի հայտագրում, Թավրիզը դարձնելով իրենց կենտրոն, հանցավոր պայքար են մղում Հայաստանի օրինական կառավարության դեմ, խոչընդոտ դառնալով խաղաղության ու կարգի հաստատմանը: Հանուն երկու երկրների միջև հաստատված բարիդրացիական հարաբերությունների Մռավյանը դիմում էր պարսկական կողմին՝ վճռական միջոցներ ձեռնարկել Հայաստանի նախկին իշխանավորների գործունեությունը դադարեցնելու և նրանց Պարսկաստանի սահմաններից վռնդելու համար[29]: Նման բողոքի հայտագրեր Պարսկաստանին ներկայացվել են նաև հետագայում:

Պետք է նշել, որ խորհրդային իշխանությունը չափազանցնում էր Պարսկաստանի հայ տարագրության վտանգը, իբր այն ապստամբություն էր կազմակերպում Հայաստանի դեմ: Իրականում Թավրիզի դաշնակցականները պատրաստվում էին թիկունքից խփել Խորհրդային Հայաստանին՝ միայն հարմար պահի դեպքում, երբ պաստամբություն կծագեր Ռուսաստանում և Անդրկովկասի հանրապետություններում: Սակայն այդ հույսերն ու ակնկալությունները չէին արդարանում, ուստի, ասված է Ռուսաստանի հյուպատոսության 1921 թ. նոյեմբերի 4-ի զեկույցում, դաշնակցականների կուսակցական բյուրոյի նիստերում շեշտվում էր, որ տվյալ պահին Խորհրդային Ռուսաստանի դեմ ապստամբություններին մասնակցելը

---

[27] Վ. Մինախորյան, Վերադարձը. «Հայրենիք», 1924 թ., թիվ 6, էջ 49:
[28] Նույն տեղում, էջ 50:
[29] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 11, թ. 45:

կլինի անմտություն, հետևաբար կուսակցությունը պետք է զբաղվի ներքին կազմակերպական աշխատանքով[30]:

Ընդ որում, խորհրդային գործակալները և կազմակերպությունները, ըստ ստացած առաջադրանքի, ուշադրությամբ հետևում էին մասնավորապես Գարեգին Նժդեհի, Սիմոն Վրացյանի, Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի և այլոց գործունեությանը:

1921 թ. օգոստոսի 6-ին Հայաստանի գաղթականական գործերի լիազոր Գրիգոր Վարդանյանը Թավրիզից արտգործժողկոմ Ա. Մռավյանին հայտնում էր. Նժդեհն ապրում է Մուժամբարում, Մեղրիից մեկ օրվա ճանապարհի հեռավորությամբ, սերտ կապերի մեջ է Ամիր Արշադի հետ (նա ապստամբել էր պարսկական իշխանության դեմ): Վարդանյանը հայտնում է նաև այն զենքի ու զինամթերքի մասին, որ Նժդեհը հանձնել էր Ամիր Արշադին կամ թաքցրել Զանգեզուրում[31]:

Հայաստանի կառավարությունը սեպտեմբերի 17-ին Լեգրանին (Թիֆլիս) տեղեկացնում էր, թե Նժդեհը Զանգեզուրից 30 կիլոմետր հեռավորության վրա, զենքերը հանձնելով Ամիր Արշադին, իբր կազմավորում է դիվիզիա, և որ Հայաստան նրանց կամավոր վերադարձը գտնում է անհնար[32]:

«Թիվ 70» գործակալը նոյեմբերի 11-ին հայտնել է հետևյալ հետաքրքիր տեղեկությունները: Օրերս դաշնակցականների սուրհանդակը, Ազայով անցնելով Պարսկաստան, մինիստրների համար Երևանից նամակներ է բերել, յուրաքանչյուր նամակի համար ստանալով 4-5 թուման: Նամակաբերը, մի տարօրինակ անձնավորություն, որ պատահաբար իմ ընկերներից է Նժդեհի մարդկանցից, կարողացել է կարդալ Հակոբ Տեր-Հակոբյանի (Վրացյանի կառավարության մինիստր) նամակը, որում ասված է Գառնիկ Շահինյանը 10 ոսկին չի տվել, մյուսները ստացել եմ գրածդ գումարից շատ պակաս: Սիրելի Հակոբ, ես այստեղ լավ ծառայության եմ, ճաշարանի կառավարիչ եմ (նամակի ստորագրությունն անընթեռնելի է):

Այդ նամակի պատճենը, շարունակում է «Թիվ 70»-ը, հասցրել են Նժդեհին, քանզի նա «այսպիսի փաստաթղթի է մաս գալիս, որ մեղադրի Տեր-Հակոբյանին, թե այս ոսկիները որտեղից է, որ ուղարկել ես կնոջդ:

Երբ Գառնիկ Շահինյանը գտնվում էր Լեռնահայաստանում, Հակոբ Տեր-Հակոբյանը, Սերգեյ Մելիք-Յոլչյանը և մյուսները, գիտակցելով, որ երկրամասն ընկնելու վրա է, նրան, որպես պատգամավոր, ուղարկել են Խորհրդային Հայաստանի հետ բանակցելու դիտավորությամբ, որպեսզի

---

[30] Նույն տեղում, ֆ. 113, ց. 1, գ. 37, թ. 67:
[31] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 45, թ. 22-23:
[32] Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 158, թ. 5:

նա կարողանա «մտնել սովետական իշխանության մեջ ծառայելու, որ կարողանա դաշնակներին տեղեկություններ հասցնել, և այնտեղ է Հակոբ Տեր-Հակոբյանը 10 ոսկի տվել նրան, որ տանի տա իր կնոջը:

Նժդեհի և անգլիական հյուպատոսի տեսակցությունը, ըստ խորհրդային գործակալի, եղել է 1-2 անգամ, և որովհետև «ժողովրդի մեջ շատ է տարածվում այդ տեսակցությունը», Նժդեհը դադարեցրել է այն: Վերջինիս սպասյակի պատմելով՝ իբր նա պատրաստվում է մեկնել արտասահման, բայց «կառավարությունը» մերժել է Նժդեհի ճանապարհածախսը լրացնելու պահանջը: Անգլիական հյուպատոսի վերաբերյալ հայտնվում է, թե նա հայ խմբապետներին զգուշացրել է կամավոր չգնալ Սմկոյի (քուրդ ապստամբ) դեմ պատերազմի, և որ դա հայերը հետածգել են:

Դաշնակցության բյուրոն և Նժդեհը, հայտնում է «Թիվ 70»-ը, արտասահմանից դեռ տեղեկություն չունեն: Միայն Նժդեհն է իր աներոջից (Սոֆիայից) նամակ ստացել (իր հեռագրի պատասխանը): Աները գրում է, որ Նժդեհի համար, Կոստանդնուպոլսի միջոցով, փող է փոխադրել Թավրիզ: Նժդեհը դեռ 1913 թվականից Բուլղարիայում «նշանած ունի, Սուքիասյանների աղջիկն է»:

«Ես շատ ծանոթ եմ Նժդեհի հոգեբանությանը և այնքանը կասեմ, որ Նժդեհը նման է մի մեղուի, աշխատում է միշտ ծաղկից հյութեր հավաքել, և նա այդպես էլ արեց, հասավ իր նպատակին: Երբ Նժդեհը 1914 թ. Բուլղարիայից եկավ Կովկաս, իր հետ ծոցում ուներ Նապոլեոնի լուսանկարը և միշտ դնում էր իր առաջ՝ սեղանի վրա ու մտիկ տալի պատկերին: Իսկ մտերիմ ընկերներին նա միշտ ասում էր, թե ես Հայաստանի Նապոլեոն պիտի դառնամ: Կռիվների ժամանակ Զանգեզուրում հաղթություն տանելուց հետո, իր մի քանի լավ սպաների ձեռքով, նա իր անձնական քաջություն էր համարում, և ինքն իրեն տալիս էր նոր տիտղոս՝ դիկտատոր, սպարապետ, հապա զորավար դավիթբեգյան, խուստուփյան և այլն»:

Եզրափակելով իր դիտարկումները, գործակալը գրում է. «Իմ կարծիքով Նժդեհը դժվար թե նորից Լեռնահայաստան գնա ապստամբություն սկսելու: Եթե նա մի քանի ամիս պատերազմեց՝ պատճառն այն էր, որ գեներալ դառնա Նապոլեոնի նման և նոր գնա իր նշանածի հետ պսակվելու: Ես լավ համոզված եմ, որ նա այդ դիտավորությունն ունի:

Իսկ նա, որ հաճախ տեսնվում է Ռուբեն փաշայի հետ և իրենց պոլիտիկայի վրա են խոսում, դա նրա սովորությունն է»[33]:

ՌԽՖՍՀ հյուպատոսության (Բաքվում) 1921 թ. հոկտեմբերի 4-ի զեկուցագրի համաձայն՝ Թավրիզում գտնվող Նժդեհը հաճախ փոխում էր բնակավայրը: Մոտիկ խմբապետները նրա մոտ հերթով պահակություն էին

---

[33] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 37, թ. 32-33:

անում[34]: Նույնի նոյեմբերի 4-ի զեկուցագրում ասված է, թե դաշնակցության քայքայման ֆոնի վրա նկատվում է Նժդեհի և խմբապետների աշխատանքի ակտիվացում: Անգլիացիները (հյուպատոս Բրիստոու) Նժդեհին հրահրում են Զանգեզուրում ապստամբություն բարձրացնել: Իսկ նա, պատճառաբանելով արտասահման մեկնելու իր ցանկությունը և այդ նպատակով գումար պահանջելով «կառավարությունից» (1500 թուման), միաժամանակ 2 մարդ է ուղարկել Զանգեզուր (Գերասիմ Աթաջանյան, որը Նժդեհի տեղակալներից էր և գնդապետ Թորոսյան) իրական դրությունը պարզելու համար: Նպաստավոր տեղեկություններ ստանալու դեպքում հավանաբար նա «նորից կնախաձեռնի ինչ որ արկածախնդրություն»[35]:

Այսպիսով, խորհրդային իշխանության ջանքերով պարսկական տարագրության ճնշող մեծամասնությունը մինչև 1921 թ. սեպտեմբեր վերադարձավ Հայաստան: Նրանց մեջ էին շատ մտավորականներ: Սյուսների տունդարձը դանդաղեց, ինչպես նշվել է, քաղաքական պատճառաբանություններով: Ինչ վերաբերում է տարագրության ու դաշնակցության ղեկավարներին, ապա նրանց վերադարձի մասին խոսք լինել չէր կարող: Նրանք բոլորը մեկնեցին Եվրոպա, Ամերիկա, շարունակելով մնալ հակախորհրդային դիրքերում: Լուծարվեց նաև «կառավարությունը»: Վերացավ Հայաստանի սահմանների մոտ գոյություն ունեցող հակախորհրդային պայքարի կենտրոնը:

* * *

Հայաստանի քաղաքական իրադրության բարելավումը ամրապնդվում և լրանում էր տնտեսական միջոցառումներով, որոնց մեջ էական դեր պիտի խաղար Նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԷՊ):

Հայաստանի քաղաքացիական կռիվների վերջում Ռուսաստանը արդեն անցում էր կատարել Նոր տնտեսական քաղաքականությանը(ՆԷՊ): Այդ մասին որոշումն ընդունվել էր 1921 թ. մարտին ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի կողմից: Այն սկսվեց կենսագործվել նաև Հայաստանում:

«Մենք պարտություն ենք կրել,. գնահատել է Լենինը «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը,. «գրոհային» եղանակով, այսինքն ամենակարճ, արագ, անմիջական եղանակով արտադրության ու բաշխման սոցիալիստական հիմքերին անցնելու մեր փորձում»: Ուստի մի շարք տնտեսական հարցերում անխուսափելի էր նահանջը, «գրոհից» «պաշարման» անցնելը[36]: Նահանջն անխուսափելի և անհրաժեշտ էր սոցիալիստա-

---

[34] Նույն տեղում, գ. 45, թ. 46:
[35] Նույն տեղում, g. 1, գ. 37, թ. 68:
[36] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 91:

կան հեղափոխությունը կործանումից փրկելու, սոցիալիստական շինարարության նոր եղանակներ որոնելու համար:

Որոնված և գտնված եղանակը Նոր տնտեսական քաղաքականությունն էր (ՆԷՊ): Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելը, ինչպես պարզաբանել է Լենինը, հնարավոր է տարբեր ձևերով, որոնք կախված են տվյալ երկրի սոցիալ.տնտեսական դրությունից: Մանրգյուղացիական երկիր Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը հնարավոր էր միայն մի շարք անցումային միջոցներով, որպիսիք ավելորդ կլինեին զարգացած կապիտալիստական երկրներում: Ոչ.կոմունիստների ձեռքերով կոմունիզմ կառուցելու համար, ըստ Լենինի, պետք էր զոդում գտնել գյուղացիական տնտեսության հետ, տնտեսապես բավարարել գյուղացուն[37]:

Միաժամանակ ՆԷՊը նշանակում էր նահանջ դեպի կապիտալիզմ: Սակայն դա վտանգավոր չէր սոցիալիստական պետության համար, քանի որ տնտեսության «հրամանատարական բարձունքները» գտնվում էին այդ պետության ձեռքում: Հարկավոր դեպքում նա կարող էր փակել կապիտալիզմի ճանապարհը: ՆԷՊի էությունը ապրանքադրամական.շուկայական հարաբերությունների զարգացման միջոցով վերականգնման ու զարգացման ապահովումն էր, վերջնական նպատակը նէպական Ռուսաստանը սոցիալիստական դարձնելը[38]:

ՆԷՊի համակարգում կենտրոնականը պարենհարկն էր, որը փոխարինեց պարենմասնատրմանը: Գյուղացին և մյուս ապրանքարտադրողները սահմանված հարկը վճարելուց հետո, որը մի քանի անգամ քիչ էր պարենմասնատրումից, մնացած արտադրանքը տնօրինում էին ազատորեն, հանելով այն շուկա: Դա գյուղացուն և մյուսներին շահագրգռում էր նյութապես տնտեսությունը զարգացնելու գործում:

Ռուսաստանում կատարված շրջադարձը Հայաստանում օրինականացվեց աստիճանաբար, մի շարք որոշումների ընդունումով: Դրանց միջոցով, մի կողմից, արգելվում էին բռնագրավումներն ու ճնշումները, մյուս կողմից, ազատություն էր տրվում շուկայական հարաբերություններին, ազատականացվում գները:

ՀՍԽՀ հեղկոմի ապրիլի 3-ի հրամանում առանձին հոդվածով նշվում էր բռնությունների վերացման անհրաժեշտության մասին, իսկ հունիսի 12-ի դեկրետը վերաբերում էր «Կարմիր բանակի կարիքների համար բռնագրավված իրերի և ապրանքների հատուցմանը»: Նախ հեղկոմը պատճառաբանում էր բանակի կարիքների համար կենսամթերքների ու

---

[37] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 344:
[38] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 528:

փոխադրական միջոցների «հայթայթման գործում» անհրաժեշտաբար իրականացրած «աշխատավոր դասակարգերի ուժերի չափազանց լարումը», ապա խոստովանում, որ ազգաբնակչությունից վերցված է հացահատիկ ու խոտ, տավար, որ սատկում է ծանր փոխադրական աշխատանքների պատճառով:

«Աշխատավոր դասակարգերի քայքայված տնտեսությունը վերականգնելու նպատակով» հեղկոմը որոշեց գյուղացիներին ու քաղաքացիներին վճարել բանակի կարիքների համար «բռնագրաված հացահատիկների, խոտի ու տավարի արժեքը»: Դեկրետը գործողության մեջ էր դրվում հեռագրով[39]:

Իրականում այդ հատուցումը տեղի չի ունեցել:

Պարենժողկոմատի ապրիլի 15-ի հրամանով ազդարարվեց այդ օրվանից պարենամթերքի բոլոր տեսակների բռնագրավումները, ինչպես նաև շուկայում կայուն գները վերացնելու, գներն ազատականացնելու մասին: Զինվորական մարմինների կողմից կատարվող գնումները սահմանափակվում էին[40]:

Հեղկոմը ապրիլի 23-ին շրջաբերական գրությամբ ազդարարում էր, որ ապրիլի 21-ի նիստում որոշել է «կտրուկ կերպով արգելել բոլոր տեսակի բռնագրավումները և քուզարկությունները թաքցրած ապրանքները գտնելու նպատակով»: Պահանջում էր այդ մասին ազդարարել լրագրերում և առանձին թռուցիկներով, ինչպես նաև հայտնել բոլոր պետական ու հասարակական հիմնարկություններին[41]:

Բռնագրավումների արգելքի մասին չդադարող որոշումների ընդունումը վկայում է այն մասին, որ իրականում նրա կենսագործումը հանդիպում էր մեծ դժվարությունների ու դիմադրության:

Այնուամենայնիվ, չնայած բազմաթիվ բացառություններին ու դժվարություններին «ռազմական կոմունիզմը» աստիճանաբար տեղի էր տալիս նոր քաղաքականությանը:

1921 թ. մայիսի 20-ին տեղի ունեցած կուսգավկոմների խորհրդակցությունը քննարկեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Լուկաշինի զեկուցումը «Կուսակցության քաղաքական գծի մասին» և որոշեց արագացնել ՆԷՊին անցնելու մասին Մոսկվայում ընդունված որոշումների կենսագործումը[42]:

---

[39] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու: Պրակ 2, էջ 16:
[40] Նույն տեղում, էջ 17:
[41] ՀԱԱ, ֆ. 123, ց. 1, գ. 4, թ. 14 (ապրիլի 21-ի որոշումը չի գտնվել):
[42] Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 20, թ. 1-2:

Պարենհարկի մասին որոշման ընդունումը, սակայն, ձգձգվում էր: Նշենք, որ Ռուսաստանում կուսակցության 10-րդ համագումարի պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու մասին մարտ ամսին ընդունված որոշմանը հենց նույն ամսում հետևեց Համառուսաստանյան Կենտգործկոմի համապատասխան որոշումը: Իսկ մայիսին Ռուսաստանի ժողկոմխորհը որոշում ընդունեց առևտրի ազատության մասին գյուղատնտեսական մթերքների, ինչպես նաև արհեստագործական և մանր արդյունաբերության ապրանքների համար[43]:

Սակայն, տվյալ ձգձգումը չէր նշանակում, թե ոչինչ չէր արվում Նեպի սկզբունքների կենսագործմանն անցնելու ուղղությամբ: Այսպես, վերևում արդեն հիշվել է գների ազատականացման մասին (ապրիլի 15-ի հրամանը): Այնուհետև, Հայհեղկոմի ապրիլի 10-ի դեկրետը վերաբերում էր գյուղացիների կողմից անասուններ պահելու նորմաների խնդրին: Սահմանվում էին բավական ազատ նորմաներ ըստ գյուղատնտեսական շրջանների: Նորմաների հիմքում էր «միջակ գյուղացու տնտեսությունը, որը պետք է դրված լինի այնպիսի պայմանների մեջ, որ նրա արդյունաբերածը գերազանցի յուր սեփական պահանջները»[44]: Այսինքն, խնդիր էր դրվում անասնապահությունը զարգացնել ապրանքային արտադրության ուղղությամբ: «Սերմացուի մասին» դեկրետով նախատեսվում էր Հայաստանը «ծանր տնտեսական ճգնաժամից ազատելու» նպատակով օգնել գյուղացուն, տալ նրան սերմացու «որքան հնարավոր է մեծ քանակությամբ ցանքս անելու» համար, բերքը լրիվ թողնելով ցանողին[45]:

Խրախուսական միջոցառումներ մտցվեցին բամբակագործությունը զարգացնելու համար. վերացվեց բամբակի պետական մենաշնորհը, բամբակագործները 2 տարով ազատ էին բնատուրքից[46]:

Վերջապես «Պարենտուրքի մասին» ՀՍԽՀ ժողկոմխորհի դեկրետն ընդունվեց 1921 թ. հունիսի 24-ին: Պարենի մեծ պահանջը մասամբ ծածկելու նպատակով կառավարությունը հանրապետության ամբողջ տարածքում ժամանակավորապես մտցրեց պարենային տուրք: Այն պետք է չծանրաբեռներ գյուղացու տնտեսությունը, իսկ «սակավառուժ տնտեսությունները» ազատվում էին տուրքից: Մնացած բերքը գտնվում էր գյուղացու «լիակատար տրամադրության տակ», որը ոչ ոք իրավունք չուներ բռնագ-

---

[43] Решения партии и правительства по хозяйственным вопросам (1917-1967 гг.). Том 1, М., 1967, с. 212-214, 233-234.
[44] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու: Պրակ 2, էջ 8-10:
[45] Նույն տեղում, էջ 12-13:
[46] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Երևան, 1974, էջ 183:

ռավել և կոնֆիսկացիայի ենթարկել[47]: Առանձին դեկրետով որոշվեցին հարկի չափի սկզբունքները: Հարկը վերցվում էր ըստ «վարած հողի մեծության, շնչերի թվի, ինչպես և տվյալ տեղի ունեցած բերքի»[48]:

Անասնապահության բնագավառում բնահարկը տարածվում էր կաթնատու և մսատու անասունների վրա: Կաթնամթերքի և մսի բնատուրքի մասին դեկրետներն ընդունվեցին 1921 թ. հուլիսի վերջերին[49]: Կաթնամթերքի հարկումից ազատ էին մեկ կով և մինչև ութ գլուխ մանր եղջերավոր անասուն ունեցող գյուղացիական տնտեսությունները, այսինքն՝ չքավորները:

Նկատի ունենալով պարենային տուրքի մասին որոշումը, ՀԿ(բ)Կ - Կենտկոմը իր կազմակերպություններին ու անդամներին ուղղված կոչում գրում էր. «Մեր կուսակցության առաջ հրամայողաբար կանգնում է կյանքում կիրառելու այդ խնդիրն ամբողջապես»[50]:

Ասվածը հիմնականում վերաբերում էր գյուղատնտեսությանը: Ազատական հարաբերություններ էին ստեղծվում նաև տնտեսության մյուս բնագավառների, մասնավորապես մանր արդյունաբերական արտադրության և արհեստագործության համար: Աշխատավորների դրությունը բարելավելու, բնակչության սպառման ապրանքների պահանջները բավարարելու և դրանց զարգացման արգելքները վերացնելու նպատակով, ասված է կառավարության դեկրետում (օգոստոսի 10), արգելվում էր մանր տնայնագործական ու արհեստավորական արդյունաբերության ձեռնարկությունների ազգայնացումը և բռնագրավումը, բացառությամբ՝ երբ ժողկոմխորհը կունենար հատուկ որոշում: Մանր ձեռնարկություններն ու կոոպերատիվ միությունները իրավունք էին ստանում իրենց արտադրանքը ազատորեն փոխադրել ու վաճառել հանրապետության ամբողջ տարածքում[51]:

Լրացուցիչ դեկրետով (1921 թ. նոյեմբերի 25) ժողկոմխորհը իշխանության մարմիններից պահանջում էր, չընկնելով ձևականության հետևից, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ զարգացնելու համար մանր և տնայնագործական արդյունաբերությունը (մասնավոր և կոոպերատիվ), խրախուսելու մասնավոր նախաձեռնությունն ու ձեռներեցությունը[52]:

Նախկին տերերին վերադարձվեցին մասնավոր ջրաղացներն ու դինգերը (բացի էլեկտրաշարժ և շոգեշարժ աղացներից): Նրանց համար

---

[47] Նույն տեղում, էջ 61-62:
[48] Նույն տեղում, էջ 63-65:
[49] Նույն տեղում, էջ 96-98, 98-100:
[50] Խորհրդային Հայաստան, 17 հուլիսի 1921 թ.:
[51] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 215-217:
[52] Նույն տեղում, էջ 229-230:

սահմանվեց արտոնյալ բնատուրք (1921 թ. սեպտեմբերի 15-ի դեկրետով)[53]:

Նույն օրվա դեկրետով մտցվեց արհեստի հարկ, որին ենթակա էին բոլոր չազգայնացված առևտրաարդյունաբերական ձեռնարկությունները և հատուկ ցուցակով առանձնացած անձնական արհեստները: Սրանց համար թույլատրվում էր ազատ առևտուրը: Արդյունաբերական ձեռնարկությունների տուրքը որոշվում և գանձվում էր տարբերակված կարգով՝ ըստ հանրապետությունում ստեղծվող 3 գոտիների և ձեռնարկությունների 9 կարգերի (բանվորների թվին համապատասխան) ու սրանց արտադրության ծավալի[54]:

«Բնատուրքը և գյուղացիությունը» հոդվածում «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Եղիա Չուբարը կատարել է որոշ վերլուծություններ: Ըստ նրա Հայաստանում բնամթերքի հարկը ավելի նպաստավոր էր գյուղացու համար Ռուսաստանի համեմատությամբ: Ապա հենվելով այն իրողության վրա, որ Հայաստանում պետությունը հացահատիկների և ընդհանրապես գյուղատնտեսական արտադրությունների մենաշնորհ չի հաստատել, նա եզրակացնում է՝ «Ուրիշ խոսքով Հայաստանում չի եղել ռազվյորստկա», ապա շարունակում է. «Սակայն դա չի նշանակում, որ Հայաստանում չի կիրառվել գյուղացու արտադրության ավելցուկների ստացում հօգուտ պետության: Քաղաքացիական կռվի ծանր պայմաններում խորհրդային իշխանությունը ստիպված է եղել մասնակի դեպքերում կատարել ռեկվիզիցիաներ կարմիր բանակի պետքերի համար, մի հանգամանք, որը չի մտել խորհրդային իշխանության ծրագրի մեջ Հայաստանում, մի հանգամանք, որ անշուշտ ծանր է եղել գյուղացիության համար»[55]:

Ե. Չուբարը բացառում է պարենմասնատրումը (ռազվյորստկա) Հայաստանում, դա կապելով մենաշնորհի հետ: Գյուղացու համար ինչ նշանակություն ուներ, թե նա ինչպես էր զրկվում իր ունեցած բերքից՝ պետական մենաշնորհով, թե առանց դրա: Էական էր այն, որ գյուղացուց խլում էին ամեն ինչ: Երկրորդը՝ «ավելցուկի» մասին: Իրականում բռնագրավվել է գյուղացու ոչ միայն ավելցուկը, եթե նույնիսկ այդպիսին ոմանք ունեցել են, այլև նրա օրվա հարցը և սերմացուն: Երրորդը, կատարվել է ոչ թե ռեկվիզիցիա, որը ենթադրում է փոխհատուցում, այլ իսկական բռնագրավում (կոնֆիսկացիա): Այնպես որ անհաջող է ստացվել Ե. Չուբարի փորձը մեղմացնելու խորհրդային իշխանության կատարած բռնությունները:

---

[53] Նույն տեղում, էջ 220-221:
[54] Նույն տեղում, էջ 221-226:
[55] Խորհրդային Հայաստան, 12 հուլիսի 1921 թ.:

Ստեղծվեց Նոր տնտեսական քաղաքականության օրենսդրական դաշտ, որը շրջադարձային դեր էր խաղալու երկրի զարգացման մեջ: «Հայաստանում ավելցուկը պարտադիր կերպով չենք վերցնի,. նշել է Ալ. Մյասնիկյանը 1921 թ. մայիսին,. Մենք կմտցնենք նալոգ: Ազատ առևտուր արդեն թույլ է տրված: Կոոպերացիա ունենք, ավելի լավ հողի վրա կդնենք այն»[56]: Ընդ որում, ՀՍԽՀ խորհուրդների 1-ին համագումարում (1922 թ. հունվարի 30-ին) զարգացնելով նույն միտքը, Ալ. Մյասնիկյանը պարզաբանել է եթե տվյալ քաղաքականությունը նոր է Ռուսաստանի համար, ապա Հայաստանում այն «հենց սկզբից պիտի կիրառվեր»[57]:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ այնուհետև Անդրֆեդերացիայում աշխատելու ժամանակ Ալ. Մյասնիկյանը մեծ նշանակություն էր տալիս Նեպի քարոզչությանը, հանդես էր գալիս զեկուցումներով ու հոդվածներով, բացատրելով նրա էությունը և դերը: Անցման շրջանը, գրել է նա «Մասնավոր ձեռներեցությունը» հոդվածում, «ըստ երևույթին երկար է լինելու, նա կոմունիզմ չէ, բայց նաև զուտ կապիտալիզմ չէ, վերջինից պետք է վերցնել նրա դրական գծերը մասնավոր ձեռներեցություն, պատասխանատվություն, հաշիվ և այլն. առաջինը, այսինքն կոմունիզմը, մեզ թույլ է տալիս հենվելու բանվորա.գյուղացիական մասսաների ոգևորության, նրանց ստեղծած կառավարության, նրանց դասակարգային համերաշխության և դիսցիպլինայի վրա»[58]:

Միաժամանակ պետք է նկատել, որ Նեպը լիակատար ազատություն չէր տալիս և ուներ բավական սահմանափակ բնույթ: Բացակայում էր հողի առուծախը, հողի և աշխատուժի վարձակալությունը, արդյունաբերական ձեռնարկությունները օգտվում էին պակաս ինքնուրույնությունից (տնտհաշվարկի սահմաններում), պետությունը վերահսկում էր գները: Պետության մենաշնորհն էր արտաքին առևտուրը, մեծածախ առևտուրը և այլն: Այնուամենայնիվ Նեպն ուներ առաջադիմական մեծ նշանակություն: Այն ուղի էր բացում երկրի սոցիալ.տնտեսական զարգացման համար:

***

Ըստ էության Նեպին անցնելը նշանակելով ազատություն (թեկուզ սահմանափակ), չէր բացառում բռնությունը և բռնագրավումներն ընդհանրապես: Այն պայմանավորված էր խորհրդային պետության բնույթով, որպես «պրոլետարիատի դիկտատուրա»: Դրա մասին են վկայում առաջին

---

[56] Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 337:
[57] Նույն տեղում, էջ 394:
[58] Նույն տեղում, էջ 381:

հերթին փաստերը, անմիջապես Նէպին անցնելուց հետո Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները:

Ուշագրավ է թանկարժեք իրերի հետ կապված հարցը: 1921 թ. ապրիլի 14-ին հանրապետության կենտրոնական «Կոմունիստ» թերթը Ադրբեջանին վերաբերող «Թանկարժեք իրերի գրավումը» հոդվածով ասես Հայաստանի հասարակայնությանը նախապատրաստում էր նույնպիսի գրավումների համար: Ադրբեջանի արդարադատության ժողկոմատը, հայտնում էր հոդվածը, «հրատարակել է դեկրետ, ըստ որի գրավման են ենթարկվում պլատինը, ոսկին և արծաթը, ինչպես դրամների ձևով, նույնպես և ձուլածո»: Այնուհետև բերված են այն չափերը, որից ավելին ենթակա էր բռնագրավման քաղաքացիներից[59]:

Ապրիլի 17-ին ՀՍԽՀ Ռազմհեղկոմը քննարկել է «Ազնիվ մետաղների մասին» հարցը և որոշել՝ արգելել հատուկ խուզարկությունները ազնիվ մետաղների հայտնաբերման նպատակով (դրամ կամ ձուլածո): Պատահական հայտնաբերման դեպքում անհրաժեշտ էր համարվում «ղեկավարվել այն նորմաններով, որոնք պետք է մշակվեին առանձին»:

Հարցի քննարկում կատարվել է նաև մայիսի 9-ին. լսվել է Արտակսրգ հանձնաժողովի նախագահի զեկուցումը «Տերերից ձերբակալված թանկարժեք մետաղների և քարերի մասին»: Հանձնարարվել է հեղկոմի հաջորդ նիստի համար նախապատրաստել դեկրետի նախագիծ՝ «Տերերին թողնվող թանկարժեք մետաղների, քարերի և արժեթղթերի նորմաների մասին»: Նորմաների որոշման համար հիմք էր վերցվելու Խորհրդային Ռուսաստանի դեկրետը[60]:

ՀՍԽՀ ժողկոմխորհը հունիսի 1-ին արդեն անդրադարձել է «Ոսկու, արծաթի և քարեղենի գրավման կանոնների մասին» հարցին և որոշ փոփոխություններ կատարել դրանցում[61]:

Որոշ փաստաթղթեր վկայում են, որ թանկարժեք իրերի գրավման նորմաների հարցը մինչև 1921 թ. հուլիսը լուծված չի եղել[62]:

Մինչև շարունակվում էին թանկարժեք իրերի գրավման հարցի քննարկումները, իրականում տեղի էին ունենում գրավումներ: Այդպիսի գրավումներ, օրինակ, իրականացրել էր Նոր Բայազետի գավառային քաղբյուրոն[63]:

---

[59] Կոմունիստ, 14 ապրիլի 1921 թ.:
[60] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 15:
[61] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 38:
[62] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 19, թ. 20:
[63] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 16, թ. 6:

Կարելի էր սպասել, որ հարստությունների գրավումը կտարածվեր նաև եկեղեցու վրա, քանի որ դա արդեն սկսվել էր Ռուսաստանում: Այդպես էլ եղավ: Այդ հարցին, սակայն, կանդրադառնանք պետություն-եկեղեցի հարաբերությունների կապակցությամբ:

Նեպին անցնելու ժամանակ տեղի ունեցան նաև նոր քաղաքական սպանություններ: Անդրերկրկոմի պահանջով Հայաստանի կառավարությունը 1921թ. մայիսին նրան տեղեկություններ է հայտնել հետևյալ իրադարձությունների մասին: Լոռու գավառում մինչև ներման մասին հայտարարություն անելը գնդակահարվել էին «Դաշնակցություն կուսակցության 14 ակտիվ մասուզերիստ ահաբեկիչներ» (բերված են անունները) «Դաշնակցություն կուսակցության խոշոր ահաբեկչական առաջադրանքներ կատարելու համար»: Բերվում են նրանց կողմից Թիֆլիսում, Սանահին կայարանում, Ջորագյուղում և այլուր կատարած սպանությունների փաստեր): 14-ի գնդակահարությունները կատարվել էին Լոռու գավառի քաղբյուրոյի որոշումով, որի մասին հանրապետության ղեկավարությունը չէր տեղեկացվել, իբր կապի բացակայության պատճառով[64]:

Քաղաքացիական կռիվների ավարտից և Նեպի ընդունումից հետո Հայաստանում տիրող իրադրության մասին բազմակողմանի տվյալներ է պարունակում Հանրապետության Արտակարգ հանձնաժողովի հերթական տեղեկատու ամփոփագրերից մեկը, որն ընդգրկում է 1921 թ. սեպտեմբեր ամսվա առաջին կեսը[65]: Չնայած այն ներառնում է կարճ ժամկետ, այնուամենայնիվ ներկայացնում է երկրի համար բնորոշ իրողություններ, ըստ հանրապետության և գավառների: Բերենք մի քանի օրինակ:

Շարունակվում էր երկրի տնտեսական ծանր դրությունը, որը մասամբ թուլանում էր պարենտուրքի կենսագործման հաջող ընթացքով: Գյուղացիները համակրական վերաբերմունք ունեն այդ հարկի նկատմամբ: Սակայն նույնը չի կարելի ասել սալապարհակի մասին:

Քաղաքական մեծ աշխատանք էր տարվում խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության հեղինակությունը բարձրացնելու համար: Սակայն նրանց նկատմամբ համակրանք ուներ բանվորների ու ծառայողների փոքր մասը, իսկ մեծ մասն ուներ անտարբեր վերաբերմունք: Դա բացատրվում էր վերջիններիս նյութական ծանր դրությամբ, նրանց կիսաքաղց վիճակով: Քիչ են կուսակցական աշխատողները ինչպես կենտրոնում, այնպես էլ գավառներում, որի պատճառով պատասխանատու պաշտոններ զբաղեցնում են նաև անկուսակցականներ, իսկ սրանք գերազանցապես մտահոգված են իրենց շահերի համար:

---

[64] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 5, թ. 162:
[65] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 33, թ. 152-158:

Հակախորհրդային կուսակցություններից Դաշնակցությունը ծավալել էր գաղտնի կազմակերպական գործունեություն, ստեղծում էր բջիջներ, մասնավորապես սովորող երիտասարդության շրջանում, կապ պահպանելով Թավրիզի հետ: Խորհրդային իշխանությանը վարկաբեկում են մասնավորապես Պարսկաստանից վերադարձողները, որոնք ակտիվորեն մասնակցել են քաղաքացիական կռիվներին:

Որոշ շրջաններում (Դիլիջան, Շամշադին, Կրասնոսելսկ, Լոռի և այլն) տարածված էր բանդիտական շարժումը, որը կրում էր տնտեսական բնույթ:

Տեղեկատու ամփոփագիրը նշում է նաև Արտակարգ հանձնաժողովի գործունեության դժվարությունների, փորձված կադրերի անբավարարության մասին, որի պատճառով նա «չի կարողանում կանգնել իր կոչման բարձրության վրա»:

1921 թ. սեպտեմբերի 15-ի դրությամբ Արտակարգ հանձնաժողովը հաշվառման էր վերցրել, այսինքն հսկողություն էր սահմանել, 2558 մարդու նկատմամբ, ովքեր ներկայացվում են որպես դաշնակցականներ, հակահեղափոխականներ և այլ հանցագործ տարրեր:

Տեղեկացնենք, որ տեղեկատու ամփոփագիրը ուղարկվել է նաև Հայաստանից դուրս, տարբեր հասցեներով, նաև Ռուսաստանի, Վրաստանի և Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովներին և ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյին, այն դեպքում, երբ դեռևս չէին ստեղծվել Անդրդաշնությունը և ԽՍՀՄ-ը:

***

Չնայած երկրի ներքին կյանքի դժվարություններին, այնուամենայնիվ Նէպը սկսում էր դրական տեղաշարժեր կատարել հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքում, արժանանում գյուղի և քաղաքի աշխատավորների հավանությանը:

1921 թ. նոյեմբերի 11-13-ը կայացած ՀԿ(բ)Կ գավկոմների քարտուղարների խորհրդակցությունը նշեց Նէպի կենսագործման առաջին դրական արդյունքները և շեշտեց նրա ճիշտ ու հետևողական իրականացման անհրաժեշտությունը[66]:

Հայաստանի համար տնտեսական օգնություն էր կազմակերպել նաև Ռուսաստանը: Չիչերինը 1921 թ. փետրվարի 7-ին նամակ է ուղղել Ստալինին Հայաստանի կատաստրոֆիկ դրության մասին, դրա պատճառը համարելով նրա շրջափակումը հյուսիսից և հարավից (հասկանալ մենշևիկյան Վրաստանը և քեմալական Թուրքիան): Վկայակոչելով Մոսկ-

---

[66] Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 21, թ. 1-18:

վա ժամանած Լեգրանին, Չիչերինը, որպես ելք, առաջարկում էր հացի գնում կազմակերպել Մակուի խանությունում, օգտագործելով Օրջոնիկիձեի մոտ պահվող պարսկական վալյուտան: «Հանուն Խորհրդային Հայաստանի փրկության» Չիչերինը միանգամայն անհրաժեշտ էր համարում նշված միջոցին դիմելը[67]:

Համապատասխան նամակով 1921 թ. մարտի 28-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմին է դիմել Մոսկվայում գտնվող ՀՍԽՀ արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանը, ներկայացնելով անհրաժեշտ հաշվարկներ հացի անհրաժեշտ քանակի և գնումների համար անհրաժեշտ վալյուտայի մասին: Նա Կենտկոմին խնդրում էր հարցը լուծել շտապ[68]: Հաջորդ օրն իսկ Բեկզադյանի դիմումը քննարկվել է ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյում և ընդունվել համապատասխան դրական որոշում (ոսկով 6 միլիոն ռուբլի տրամադրելու մասին), դրա իրագործման համար ստեղծելով առանձին հանձնաժողով: Վերջինիս հանձնարարվել էր Հայաստան պարենամթերք հասցնելու համար դիմել նույնիսկ զոհողությունների[69]:

Հավելենք, որ Ալ. Բեկզադյանի հաշվարկների վերաբերյալ որոշ խմբագրական փոփոխություններ է կատարել Ռուսաստանի արտաքին առևտրի ժողկոմատը, դրանց նվազեցման ուղղությամբ[70]:

1921 թ. մարտի 30-ի «Շատ հարգելի Վլադիմիր Իլյիչին» հասցեագրված նամակը, որի հեղինակն ամենայն հավանականությամբ Ալ. Բեկզադյանն է, նորից ուշադրություն է հրավիրում Հայաստանի ծանր տնտեսական դրության և շտապ օգնության անհրաժեշտության վրա: Խորհրդայնացումից հետո հաջորդ գործը համարվում էր պարենավորումը, իսկ այդ բնագավառում տիրող դրությունը «ինձ խիստ անհանգստացնում է», գրել է նամակի հեղինակը: Անդրադառնալով պարենավորման քաղաքական նշանակությանը, նշվում է, որ նրա անբավարարությունն է ժողովրդական զանգվածներին հրել դեպի դաշնակցականները (հասկանալ Փետրվարյան ապստամբությունը): Նամակում դժգոհություն է հայտնվում Ռուսաստանի պարենժողկոմատի վերաբերմունքի նկատմամբ, որը խիստ կրճատել էր Հայաստանի խնդրած օգնության չափերը, նույնիսկ ՌԿ(բ)Կ - Կենտկոմի որոշումից հետո. «Հարցը արտակարգ լուրջ է, և ես ինձ թույլ եմ տալիս,- ասված է նամակի վերջում,- Ձեր ուշադրությունը հրավիրել դրա ամբողջ լրջության վրա»[71]:

---

[67] Նույն տեղում, Հավաքածու, գ. 1, թ. 31:
[68] Նույն տեղում, գ. 3, թ. 60:
[69] Նույն տեղում, թ. 63:
[70] Նույն տեղում, թ. 61:
[71] Նույն տեղում, թ. 70:

Եվ այնուամենայնիվ հանձնաժողովը ապրիլի 3-ին Հայաստանին տրամադրվող հացահատիկի ամսական չափը կրատեց 5,5 անգամ[72]: Հանձնաժողովի որոշումը հաստատվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի կողմից ապրիլի 8-ին[73]: Կենտկոմի քարտուղար Մոլոտովին հանձնարարվում էր հետևել որոշման կատարմանը:

Ռուսաստանը ինքը ևս զգում էր պարենամթերքի մեծ կարիք: Նման պայմաններում Հայաստանի սովամահ բնակչությանը Ռուսաստանի ցույց տված նյութական օգնությունը ուներ մեծ նշանակություն նաև քաղաքական իմաստով[74]:

2. ՀՍԽՀ Սահմանադրության ընդունումը: Անդրկովկասյան դաշնության և ԽՍՀՄ-ի կազմավորումը

Տնտեսականի հետ մեկտեղ երկրի զարգացման շահերը պահանջում էին ձեռնարկել և պետության քաղաքական ամրապնդման միջոցառումներ: Հերթական քայլ դարձավ խորհուրդների ընտրությունների կազմակերպումը, վարից վեր խորհուրդների իշխանության հաստատումը և պետության հիմնական օրենքի Սահմանադրության ընդունումը:

Տվյալ ուղղությամբ առաջին քայլերից էր Հայռազմհեղկոմի վերակառուցումը ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի (ժողկոմխորհ կամ ԺԿԽ), որը կատարվեց 1921 թ. մայիսի 21-ի դեկրետով[75]: Հանրապետության առաջին ժողկոմխորհի կազմն էր. ԺԿԽ-ի նախագահ և ռազմգործ-ժողկոմ Ալ. Մյասնիկյան, ժողկոմներ՝ Ա. Մռավյան, Պ. Մակինցյան, Ա. Կարինյան, Ս. Սրապիոնյան (Լուկաշին), Ա. Երզնկյան, Ս. Խանոյան, Ա. Խաչիկյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Համբարձումյան, Դ. Տեր-Սիմոնյան և Ա. Շահվերդյան: Ֆունկցիաների իմաստով նա նույն ռազմհեղկոմն էր, օրենսդիր և գործադիր իրավունքներով: Անվանափոխությունը միայն ուղենշում էր ռազմական և հեղափոխական կոչումից հրաժարվելու և քաղաքացիական իշխանության անցնելու մասին: Հեղկոմներն առայժմ շարունակում էին պահպանվել գավառակներում (շրջան) ու գյուղերում, որոնց միջոցով ժողկոմխորհն իրականացնում էր հանրապետության կառավարումը: Այդ կապակցությամբ անհրաժեշտություն դարձավ հեղկոմների գործունեության

---

[72] Նույն տեղում, թ. 70 և 72:
[73] Նույն տեղում, թ. 73:
[74] Կ. Խաչատրյան, ՌՍՖԽՀ օգնությունը Խորհրդային Հայաստանին 1921-1922 թթ. «Հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցեր (նյութերի ժողովածու): Երևան, 1998, էջ 139-151:
[75] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան..., Երևան, 1960, էջ 528-529:

հիմունքների սահմանումը, որպիսին չէր արվել մինչև այդ: ՀՍԽՀ ժողկոմխորհը հեղկոմների մասին համապատասխան դեկրետն ընդունեց հուլիսի 20-ին[76]: Սահմանվում էին հեղկոմների իրավասության հիմունքները մինչև հանրապետության սահմանադրության ընդունումը: Հեղկոմները, ինչպես ասված է դեկրետում, «ժամանակավոր ստորադասական (հասկանալ՝ ժողկոմխորհի նկատմամբ - Վ. Ղ.) կարգով նշանակվի իշխանություններ են»: Նրանց նպատակն էր տեղերում ամրապնդել խորհրդային իշխանությունը, նախապատրաստել խորհուրդների և դրանց համագումարների պատգամավորների ընտրությունը, կառավարել երկիրը մինչև ընտրովի խորհրդային մարմինների կազմակերպումը: Հեղկոմները ներքևից վերև գյուղական էին, գավառակային (շրջանային) և գավառային[77]:

Հեղկոմների կազմավորման սկզբունքների մասին դեկրետի հետ միաժամանակ պարզություն մտվեց նաև հանրապետության վարչատարածքային կառուցվածքի հարցում, որն անհրաժեշտ էր առաջիկա ընտրությունների կապակցությամբ:

Հայաստանը բաժանվում էր ութ գավառի, 33 գավառամասերով: Գավառներն էին՝ Երևանի, էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռու, Իջևանի, Նոր Բայազետի և Դարալագյազի: Երևան քաղաքը դուրս էր նույնանուն գավառից և կազմում էր առանձին վարչական միավոր: Ներքգործժողկոմատին պարտավորեցվում էր կազմել և պահպանել հանրապետության գյուղերի ցուցակը (ըստ գավառամասերի)[78]: Ըստ երևույթին դրա հետ է կապված ՀՍԽՀ վիճակագրական կենտրոնական վարչության կողմից 1923 թ. հրատարակված «Ցուցակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի» գրքույկը, որը պատրաստված է 1922 թ. Հայաստանում անցկացված գյուղատնտեսական վիճակագրության նյութերի հիման վրա: Գրքույկում կա 1103 բնակավայրերի անուն, ծխերի թվի և մի քանի այլ (տեղադրության, մոտակա երկաթուղային կայարանից ու շուկայից ունեցած հեռավորության, փոստի և այլնի մասին) տվյալներով[79]:

Վերջապես 1921 թ. նոյեմբերի 17-ին հանրապետության ժողկոմխորհը հաստատեց բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայիններ-ի պատգամավորների խորհուրդների ընտրությունների ժամանակավոր կանոնադրությունը[80]:

---

[76] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու: Պրակ 2, էջ 76-82:
[77] Նույն տեղում, էջ 76:
[78] Նույն տեղում, էջ 83-84:
[79] Ցուցակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի: Երևան, 1923:
[80] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, էջ 348-353:

Առանձին պարզաբանվում էր, որ ընտրությունները տեղի էին ունենալու նոյեմբերի 29-ից, այսինքն Հայաստանի խորհրդայնացման տարեդարձը նշելուց հետո: Ընտրությունները անց էին կացվելու ընտրական հանձնաժողովների կողմից, դռնբաց ժողովներում, պարզ քվեարկությամբ, պատգամավորների թեկնածուների ցուցակներով (ոչ անհատական): Ընդ որում ձայնազուրկների ցուցակներ չէին կազմվելու: Հարցը որոշվելու էր ընտրական ժողովում, տեղնուտեղը, ներկա լինելու դեպքում՝ համապատասխան անձանց արգելելով քվեարկել:

Խորհուրդների ընտրությունները և դրանց համագումարները տեղի ունեցան 1921 թ. դեկտեմբեր – 1922 թ. հունվարին: Ընտրվեց 2 քաղաքային՝ Երևանում և Ալեքսանդրապոլում և ավելի քան 800 գյուղական խորհուրդներ: Կայացան գավառամասային և գավառային խորհուրդների համագումարներ: Ձևավորվեցին տեղական իշխանությունների գործադիր մարմինները: 1922 թ. հունվարի վերջին հրավիրվեց խորհուրդների հանրապետական համագումարը՝ ՀՍԽՀ բարձրագույն իշխանությունը: Համագումարին ներկա էր 252 պատգամավոր (վճռական և խորհրդակցական ձայնի իրավունքով): Նրանց ճնշող մասը կոմունիստական կուսակցության անդամներ էին: Դա արտահայտում էր կուսակցության առաջատար դերը պետության ղեկավարման մեջ: Պատգամավորների սոցիալական կազմը հիմնականում գյուղացիական էր (երեք քառորդը)[81], որպես արդյունք ժամանակի սոցիալական կառուցվածքի:

Համագումարի օրակարգում քննարկված հարցերը վերաբերում էին հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման խնդիրներին, ինչպես կառավարության հաշվետվությունը, Նեպը և հողային հարցի լուծումը, հիմնական օրենքի (սահմանադրության) ընդունումը և այլն: Ալ. Մյասնիկյանի հաշվետվության և Լուկաշինի զեկուցումներում շեշտվում էր Նեպին անցնելու խիստ անհրաժեշտությունը Հայաստանի նման տնտեսապես հետամնաց, մանրգյուղացիական երկրի համար: Համագումարը որոշեց, որ ճիշտ է Նեպին անցնելը և հավանություն տվեց այդ քաղաքականությունը կենսագործելու համար կառավարության ձեռնարկած միջոցառումներին[82]:

Ասքանազ Մռավյանի զեկուցումը նվիրված էր պետության հիմնական օրենքի (սահմանադրության) ընդունման հարցին: Նա հիշեց, որ հիմ-

---

[81] Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը: Երևան, 1922, էջ 128:
[82] Նույն տեղում, էջ 126:

նական օրենքը Հայաստանը փաստորեն ընդունել է «հեղափոխական ճանապարհով» 1920 թ. նոյեմբերի 29-ին, երբ տապալվեց «դաշնակցականների իշխանությունը» և հռչակվեց «բանվորների ու գյուղացիների տիրապետության դեկլարացիան»: Մռավյանը բերում է 1918 թ. հուլիսի 10-ին Ռուսաստանի խորհուրդների 5-րդ համագումարի կողմից ընդունված սահմանադրության օրինակը, սահմանադրություն, «որով ձևակերպվեց ու սրբագործվեց բանվորության ու գյուղացիության իշխանության հիմնական օրենքը»: Դրա հիման վրա էր կազմված հանրապետության քննարկվող սահմանադրությունը:

Զեկուցողը բնականաբար քննադատում է բուրժուական սահմանադրությունները, որոնք սրբագործում են «շահագործող դասակարգի քաղաքական-տնտեսական իշխանության սկզբունքները», և դրանց հակադրում խորհրդային սահմանադրությունը, որը սկզբունքորեն տարբերվելով բոլոր նախկին սահմանադրություններից, «նորագույն էջ է կազմում ճնշված դասակարգերի դարավոր հեղափոխական կռվի մեջ»[83]:

Այնուհետև զեկուցողն ընթերցում է ՀՍԽՀ հիմնական օրենքի նախագիծը, որը քննարկելուց հետո ընդունվեց փետրվարի 4-ին:

Համագումարի այդ օրվա նիստին ներկա էին ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի քարտուղար Գ. Օրջոնիկիձեն, Անդրկովկասի խորհրդային հանրապետություններում ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Բ. Լեգրանը և այլ հյուրեր:

Համագումարն ընտրեց Կենտգործկոմ՝ 75 անդամի և 17 թեկնածուի կազմով: Այն հանրապետության բարձրագույն իշխանությունն էր խորհուրդների համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում: Կենտգործկոմի նախագահ ընտրվեց Սաքո Համբարձումյանը: Կենտգործկոմի նստաշրջանը կազմավորեց ՀՍԽՀ կառավարություն, Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ: Շուտով Ալ. Մյասնիկյանը ղեկավար աշխատանքի փոխադրվեց Թիֆլիս, Անդրկովկասյան դաշնություն, իսկ հանրապետության կառավարության նախագահ դարձավ Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին):

Իշխանության խորհրդային ձևին անցնելը նշանակում էր երկրի կառավարմանը մասնակից դարձնել ժողովրդական լայն զանգվածներին, պետությունը դարձնել ժողովրդավարական:

ՀՍԽՀ խորհուրդների համագումարի ավարտից մի քանի օր անց մամուլում տպագրվեց համագումարի կողմից ընդունված ՀՍԽՀ հիմնական օրենքը (սահմանադրությունը)[84]:

---

[83] **Ա. Մռավյան**,Հոդվածներ և ճառեր: Երևան, 1961, էջ 100-102:
[84] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան ..., էջ 566-578:

Սահմանադրությունը, որն ընդօրինակում էր Խորհրդային Ռուսաստանի 1918 թ. սահմանադրությունը, բաղկացած էր 89 հոդվածից:

Չնայած Ռուսաստանի և Հայաստանի սահմանադրությունների ընդհանրությանն ու նմանությանը, այնուամենայնիվ որոշ տարբերություն նրանց միջև գոյություն ուներ: Այդ հանգամանքի վրա ուշադրություն է հրավիրել տակավին 1929 թ. տպագրված իր գրքում Բագրատ Բորյանը: Տարբերությունը վերաբերում էր պրոլետարիատի դիկտատուրայի ձևակերպմանը: Ի տարբերություն Ռուսաստանի սահմանադրության, որը (հոդված 9) հիմնական խնդիր էր համարում քաղաքային ու գյուղական պրոլետարիատի և չքավոր գյուղացիության դիկտատուրայի հաստատումը, ՀՍԽՀ սահմանադրության մեջ (հոդված 10) խոսվում էր պրոլետարիատի ու չքավոր գյուղացիության դիկտատուրա հաստատելու կամ, որ նույնն է, բանվորների ու աշխատավոր գյուղացիների դասակարգային դիկտատուրայի (հոդված 11) կոչման մասին: Այստեղ փաստորեն «աշխատավոր գյուղացիությունը» նույնացվում է «գյուղական պրոլետարիատ» և «չքավոր գյուղացիություն» հասկացությունների հետ:

Ինչ վերաբերում է Հայաստանի և Ռուսաստանի սահմանադրությունների տվյալ տարբերությանը, ապա այն Բորյանը հակված է բացատրել «այդ երկրների իրադրության, պայմանների ու պատմական գործոնների առանձնահատկություններով»[85]:

Նշենք, որ խոսքը գնում է միայն «պրոլետարիատի դիկտատուրա» հասկացության սոցիալական բովանդակությանը և ոչ թե նրա էությանն ու նպատակին, որ նույնն է բոլոր դեպքերում:

Առաջին հոդվածը կրկնում էր ռազմհեղկոմի 1920 թ. նոյեմբերի 29-ի հռչակագիրը, թե իբր «Հայաստանի ապստամբ բանվորների ու աշխատավոր գյուղացիների կամքով» է երկիրը հայտարարվում Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:

Հանրապետության կոչումն էր «վերջ տալ կապիտալիստական կարգերին ու վերացնել մարդկային աշխատանքի ամեն տեսակ շահագործում»: Սա նշանակում էր այն, ինչ տեսության մեջ հայտնի է որպես սոցիալիզմի կառուցում:

Հանրապետության բարձրագույն իշխանությունը պատգամավորական խորհուրդների համագումարն էր, դրանց միջև ընկած ժամանակամիջոցում՝ Կենտգործկոմը, իսկ գործերի ընդհանուր կառավարումը և ընթացիկ օրենսդրությունը վերապահվում էր ժողկոմխորհին:

---

[85] Б. А. Борьян, Армения, международная дипломатия и СССР, Часть II, М.-Л., 1929, с. 174.

Տեղական բարձր իշխանությունն էր. գյուղի և քաղաքի սահմաններում՝ պատգամավորների խորհուրդը, գավառամասերում (շրջանում)՝ գավառամասային համագումարը, գավառի սահմաններում՝ գավառային համագումարը, խորհուրդների մի ժողովից մինչև մյուսը և խորհուրդների մի համագումարից մինչև մյուսը՝ համապատասխան գործադիր կոմիտեն (իրենց բաժանմունքներով):

Ընտրելու և ընտրվելու իրավունք ունեին ՀՍԽՀ երկու սեռի 18 տարին լրացրած բոլոր քաղաքացիները: Այդ իրավունքից զրկվում էին՝ վարձու աշխատանքի շահագործողները, անաշխատ եկամուտով ապրողները, մասնավոր առևտրականներն ու առևտրական միջնորդները, կրոնի սպասավորները և այլ խմբեր: Նկատենք, որ ձայնազուրկների խմբերում «կուլակ» որակումը բացակայում է, որպիսին, սակայն, առկա է ժամանակի այլ փաստաթղթերում ու նյութերում, իսկ սահմանադրության մեջ թվարկված խմբերից «կուլակ» պետք է հասկանալ «վարձու աշխատանք շահագործողներին»:

Ընտրական համակարգը բազմաստիճան էր (անուղղակի), բաց և անհավասար, որպիսին, ինչպես և ամբողջ սահմանադրությունը, գործեց և պահպանվեց մինչև 1930-ական թվականների երկրորդ կեսը:

Սահմանադրության վերջին երկու հոդվածները վերաբերում էին ՀՍԽՀ գերբի ու պետական դրոշի նկարագրությանը:

ՀՍԽՀ 1922 թ. սահմանադրությունը առաջինն էր հայոց պետականության պատմության մեջ: Այն կոչված էր ամրապնդելու Հայաստանի անկախությունը: Խորհուրդների ստեղծումով և սահմանադրության ընդունումով ավարտվեց խորհրդային իշխանության հաստատման գործընթացը: Ձևականորեն ՀՍԽՀ առայժմ անկախ պետություն էր: Միաժամանակ խորհրդային հանրապետություններում և նրանց փոխհարաբերություններում տեղի էին ունենում այլ բնույթի՝ ինտեգրացիոն գործընթացներ, որոնք նպատակաուղղված էին դեպի նրանց մերձեցումը:

Տվյալ պահին աշխուժորեն քննարկվում էր Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների պետականորեն միավորվելու՝ դաշնություն (ֆեդերացիա) ստեղծելու հարցը: Դաշնության խնդիրը կենտրոնական տեղ գրավեց ՀԿ(բ)Կ 1-ին համագումարում, Նէպի և հողային հարցի հետ միասին: Համագումարը կայացավ 1922 թ. հունվարին: Ալ. Մյասնիկյանը զեկուցեց «Խորհրդային շինարարությունը և Անդրկովկասյան հանրապետությունների դաշնությունը» հարցի մասին:

Ալ. Մյասնիկյանը, որը նույն ամսում աշխատանքի փոխադրվեց Թիֆլիս, որպես ՌԿ(բ)Կ Անդրկովկասյան երկրային կոմիտեի քարտուղար, ակտիվ դեր կատարեց Անդրկովկասի հանրապետությունների պետական

միավորման գործում: Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների միավորումից հետո, որը տեղի ունեցավ նրանց 1-ին համագումարում, անխուսափելի էր պետական միավորումը:

1920-1921 թթ., երբ տեղի ունեցավ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը, խորհրդային հանրապետությունները բավական առաջադիմել էին դեպի միավորում իրենց զարգացման ճանապարհին: Անկախ հռչակված խորհրդային հանրապետությունների մերձեցման գործընթացը կազմակերպում և ղեկավարում էր ՌԽՖՍՀ-ն, բոլշևիկների կուսակցության առաջնորդությամբ: Գործընթացն ուներ իր որոշակի փուլերը՝ ռազմաքաղաքական, դիվանագիտական, տնտեսական-պետական:

1921 թ. ապրիլի 9-ին Օրջոնիկիձեն ուղարկած հեռագրում Լենինը խստորեն պահանջում էր ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մարզային տնտեսական մարմին[86]: Կովկասի կոմունիստներին ուղղված ապրիլի 14-ի նամակում Լենինը նրանց խորհուրդներ էր տալիս ինքնուրույն ներքին և արտաքին քաղաքականություն վարելու բնագավառում, ելնելով տեղական առանձնահատկություններից: Ապրիլի 16-ին Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը և ՌԽՖՍՀ-ն պայմանագիր ստորագրեցին Անդրկովկասի երկաթուղիները միավորելու և տվյալ բնագավառում Ռուսաստանի օգնության մասին[87]:

Ռուսաստանի և Ադրբեջանի միջև երկկողմանի պայմանագիր էր ստորագրվել (ռազմական և ֆինանսատնտեսական դաշինքի մասին) դեռևս 1920 թ. սեպտեմբերին: Նույնպիսի պայմանագիր կնքվեց Վրաստանի հետ 1921 թ. մայիսի 21-ին[88]:

Հայաստանի հետ ևս պատրաստվել էր համանման պայմանագրի նախագիծ: 1921 թ. հունիսին տեղի ունեցավ Անդրկովկասի երեք հանրապետությունների արտաքին առևտրի միավորումը[89]: Սեպտեմբերին Ռուսաստանը և Հայաստանը համաձայնագիր ստորագրեցին ֆինանսական հարցերի վերաբերյալ, որի համաձայն հանրապետության ֆինժողկոմը դարձավ Ռուսաստանի ֆինժողկոմատի մշտական լիազորը[90]: 1922 թ. ապրիլին Ռուսաստանի տվյալ բնագավառի դեկրետները Անդրկովկասի հանրապետություններում գործադրվում էին ուղղակիորեն:

---

[86] Образование СССР. М., 1972, с. 194.
[87] Նույն տեղում, էջ 198-199:
[88] Նույն տեղում, էջ 151, 215-216:
[89] Образование СССР, с. 217.
[90] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան ..., էջ 551-553:

Անդրկովկասի հանրապետությունները դիվանագիտական միասնություն հաստատեցին Թուրքիայի հետ Կարսի կոնֆերանսում (1921 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր) միասնաբար հանդես գալու համար: Դրանով, և Ռուսաստանի օգնությամբ, նրանք ձախողեցին Թուրքիայի փորձը, երբ նա ձգտում էր Անդրկովկասի հանրապետությունների հետ պայմանագիր ստորագրել առանձին-առանձին: Դա հաջողելու դեպքում նա կարող էր Հայաստանի վրա նոր ճնշում գործադրել:

Դիվանագիտական կապերի զարգացման և մերձեցում հաստատելու ուղղությամբ կարևոր նշանակություն ուներ բոլոր խորհրդային հանրապետությունների կողմից իրենց շահերի պաշտպանությունը Ռուսաստանի կառավարությանը փոխանցելը Ճենովայի համաեվրոպական տնտեսական կոնֆերանսում (1922 թ.)[91]:

1921 թ. վերջերին Անդրկովկասի հանրապետությունների միավորիչ շարժումը բավական առաջադիմել էր: Նույն թվականի նոյեմբերի սկզբին Բաքվում կայացած ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը քննարկեց Գ. Օրջոնիկիձեի զեկուցումը դաշնության հարցի և Շ. Էլիավայի զեկուցումը Անդրդաշնության Միության պայմանագրի նախագծի մասին: Որոշվեց ստեղծել դաշնային միություն առաջին հերթին ռազմական, տնտեսական, ֆինանսական աշխատանքների և արտաքին քաղաքականության բնագավառներում[92]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի նիստում (1921 թ. նոյեմբերի 14) Ալ. Մյասնիկյանը զեկուցեց հիշյալ պլենումի արդյունքների մասին: Հավանություն տրվեց պլենումի որոշումներին, ցանկություն հայտնելով, որ Անդրդաշնության մեջ ընդգրկվեն Կովկասի բոլոր հանրապետությունները: Դաշնության ձևը որոնող հանձնաժողովի անդամության համար առաջադրվեց Լուկաշինի թեկնածությունը[93]: Նույն Կենտկոմի դեկտեմբերի 23-ի նիստում լսելով Լուկաշինի հաղորդումը Անդրկովկասյան կուսակցական խորհրդակցության մասին, մամուլի օրգաններին հանձնարարվեց լուսաբանել դաշնության գաղափարը, ինչպես նաև քննադատել դաշնակցական, մենշևիկյան և արտասահմանյան մամուլի Անդրդաշնությանը վերաբերող «հակակեղծարար» հոդվածները[94]:

Արտասահմանյան մամուլը սկսել էր արձագանքել Անդրկովկասի հանրապետությունների միավորիչ շարժմանը, գտնելով, որ այդ միավոր-

---

[91] Образование СССР, с. 235-236.

[92] Очерки истории коммунистических организаций Закавказья, Часть II, Баку, 1971, с. 40.

[93] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 44:

[94] Նույն տեղում, թ. 51:

ման մեջ Հայաստանը լրիվ կկորցնի իր ունեցած կիսատ-պռատ անկախությունը:

1921 թ. նոյեմբերի 28-ին Լենինը գրություն ուղարկեց Ստալինին Անդրկովկասյան դաշնություն (ֆեդերացիա) կազմակերպելու հարցի մասին: Այդպիսի դաշնությունը Լենինը համարում էր սկզբունքորեն բացարձակապես ճիշտ և անպայման կենսագործման ենթակա, նախապես անհրաժեշտ համարելով հարցի քննարկումը, քարոզչությունը և անցկացումը խորհրդային մարմիններով: Հանձնարարվում էր հարցը լայնորեն քննարկել նաև կուսակցական մարմիններում, բանվորական ու գյուղացիական զանգվածների մեջ:

Շուտով, ինչպես նշվել է, Անդրկովկասյան հանրապետությունների դաշնության ստեղծման անհրաժեշտության մասին հարցը քննարկվեց խորհուրդների համահայաստանյան համագումարում: Զեկուցող Ա. Մռավյանը կանգ առավ ֆեդերացիայի գաղափարի ծագման և անհրաժեշտության հարցերի վրա: Երեք հանրապետությունների ներկայացուցիչներս, նշել է նա, միակամ էինք ներկայացել Կարսի կոնֆերանս, այդտեղ էլ ծնվեց պաշտոնական ֆեդերացիայի գաղափարը, որն այնուհետև «նյութ դարձավ կուսակցական ժողովների և մամուլի համար»[95]: Որպես ինքնուրույն հանրապետություններ, շարունակում է Ա.Մռավյանը, գործնական աշխատանքում հաճախ էինք զգում ուժերը համախմբելու և այս կամ այն առթիվ միասին հանդես գալու անհրաժեշտությունը: «Ֆեդերացիան անհրաժեշտություն է,- եզրափակում է Մռավյանը,- արտաքին և ներքին հակահեղափոխությունները ջարդելու համար, անհրաժեշտություն երկրի տնտեսությունը վերականգնելու համար»[96]:

Խորհուրդների 1-ին համագումարը արտահայտվեց հօգուտ Անդրկովկասյան դաշնության և նշեց, որ հասունացել է նրա ստեղծման ժամանակը, որի համար պետք էր գործադրել բոլոր անհետաձգելի միջոցները:

Միավորվել էին Անդրկովկասի հանրապետությունների ռազմական ուժերը: Պահպանելով իրենց ինքնուրույնությունը, այդ ուժերը որպես Կովկասյան առանձին բանակ, դարձել էին Ռուսաստանի Կարմիր բանակի բաղկացուցիչ մաս: Այդ մասին գաղտնի համաձայնագիր (Անդրկովկասի հանրապետությունների և Ռուսաստանի հետ միասին) ստորագրվել էր 1921 թ. դեկտեմբերի 8-ին, Թիֆլիսում: Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների պաշտպանության ընդհանուր պլանն իրականացնելու նպատակով, ասված է համաձայնագրում, սահմանվում է այդ հանրապետությունների բոլոր զինված ուժերի միասնական հրամանատարություն

---

[95] Ա. Մռավյան, Հոդվածներ և ճառեր: Երևան, 1961, էջ 97:
[96] Նույն տեղում, էջ 99:

(հանձին Կովկասյան առանձին բանակի ռազմահեղափոխական խորհրդի): Հանրապետությունների բանակները, հանդիսանալով «Ինտերնացիոնալ Կարմիր բանակի» բաղկացուցիչ մաս, բոլոր տեսակի մատակարարումները իրականացնում էին Ռուսաստանի Կարմիր բանակի ընդհանուր հիմունքներով և միատեսակ նորմաներով: Ընդ որում, մատակարարումները կատարվում էին հանրապետությունների հաշվին[97]:

Հայաստանի և Ռուսաստանի հանրապետությունների միջև կայացել էր մի այլ համաձայնություն ևս: Խոսքը քաղաքացիության մասին է: Ռուսաստանի ներքին գործերի ժողկոմատի կողմից նահանգներ ուղարկած շրջաբերականից կարելի է տեղեկանալ, որ 1921 թ. մայիսի 11-ին ՀՍԽՀ - կառավարության հետ ունեցած համաձայնությամբ Հայաստանի և Ռուսաստանի քաղաքացիությունը «համարվում էր միասնական և անբաժան»[98]:

Հայաստանը կողմնակից էր Ռուսաստանի հետ հաստատելու բազմակողմանի համաձայնություններ ու համագործակցություն: Մոսկվայում գտնվող Ասքանազ Մռավյանին ՀԿ(բ)Կ Կենտկոմից ուղարկվել է հեռագիր այն մասին, որ նա նշանակվում է իրենց ներկայացուցիչը սեպտեմբերի 22-ին Մոսկվայում կայանալիք խորհրդակցությանը մասնակցելու համար և հանձնարարվում է պաշտպանել ՌԽՍՖՀ-ի հետ Անդրհանրապետությունների «ավելի սերտ քաղաքական ու տնտեսական միավորման տեսակետը»[99]:

Օգոստոսին կայացած կուսակցական առաջին երկրամասային խորհրդակցությունը նշեց, որ Անդրկովկասի տնտեսական միավորումը անհետաձգելի է: Նոյեմբերին կայացած կուսակցական 2-րդ խորհրդակցությունը որոշեց, որ ժամանակն է քարոզչությունից անցնել դաշնային միության իրականացմանը խորհուրդների միջոցով[100]: Շուտով որոշում կայացվեց Անդրկովկասի հանրապետությունների Կենտգործկոմների կոնֆերանս հրավիրելու մասին: 1922 թ. փետրվարին Անդրկովկասի կոմունիստական կուսակցությունների 1-ին համագումարը, որը միավորեց երեք կուսակցությունները, ընդհուպ մոտեցրեց պետական միավորման ժամանակը:

---

[97] ՀԱԱ, Հավաքածու, թիվ 1, գ. 3, թ. 163-164:
[98] Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 62, թ. 47:
[99] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 157, թ. 38:
[100] Очерки истории коммунистических организаций Закавказья, Часть II, Баку, 1971, с. 35-37.

1922 թ. մարտի 11-12-ին Թիֆլիսում գումարվեց Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունների Կենտգործկոմների լիազորների կոնֆերանսը: Յուրաքանչյուր հանրապետությունից կոնֆերանսին մասնակցում էր 25-ական ներկայացուցիչ: Հենց այդ կոնֆերանսն էլ ճանաչվեց Անդրկովկասի բարձրագույն իշխանություն: Կազմակերպվեց գործադիր մարմին՝ Միութենական խորհուրդ, նրա նախագահություն (յուրաքանչյուր հանրապետությունից մեկ ներկայացուցիչ) և տնտեսական ղեկավար մարմին՝ Բարձրագույն տնտեսական խորհուրդ: Մարտի 12-ին կոնֆերանսն ընդունեց Միութենական պայմանագիրը Անդրկովկասի Դաշնային Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԱԴԽՍՀՄ) կազմավորման մասին: Միության նախ.ագահության կազմում ընտրվեցին Ալ. Մյասնիկյանը, Ն. Նարիմանովը և Բ. Մդիվանին:

Միութենական պայմանագիրը հիմնավորել է Միության ստեղծման նպատակը և անհրաժեշտությունը: Կոնֆերանսը, ասված է պայմանագրում, ելնելով Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած ազգերի ինքնորոշման իրավունքից, ճանաչելով պայմանագրվող կողմերի անկախությունն ու ինքնուրույնությունը և գիտակցելով պաշտպանության նպատակով ու հանուն տնտեսական շինարարության շահերի իրենց ուժերը համախմբելու անհրաժեշտությունը, որոշել է. «Այսուհետ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետությունները մտնում են ռազմական, քաղաքական և տնտեսական սերտ միության մեջ»[101]:

Անդրկովկասի հանրապետությունների միության բարձրագույն իշխանությունը, ինչպես ասվեց, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կառավարությունների կողմից հավասար թվով ընտրված ներկայացուցիչների լիազոր կոնֆերանսն էր: Լիազոր կոնֆերանսի գործադիր մարմինը Միութենական խորհուրդն էր, որի անդամներն ընտրվում և հետ էին կանչվում կոնֆերանսի կողմից:

Միութենական խորհրդի իրավասությանն անցնում էին ռազմական, ֆինանսական, արտաքին քաղաքականության, արտաքին առևտրի, հաղորդակցության ու կապի, հակահեղափոխության դեմ պայքարի և տնտեսական քաղաքականության ղեկավարման գործերը: Հանրապետությունների տնտեսական մարմինների գործունեությունը միավորվում էր Բարձրագույն տնտեսական խորհրդում:

Անդրկովկասյան միությունը Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու էր տվյալ պայմանագրի հիման վրա[102]:

---

[101] Образование СССР, с. 257.
[102] Նույն տեղում, էջ 257-259:

Անդրդաշնության ստեղծումը նշանակում էր, որ ՀՍԽՀ-ն իր սահմանադրությունը համապատասխանեցնելու էր և համապատասխանեցրեց «Միութենական պայմանագրին»:

Անդրկովկասի դաշնության ստեղծման նշանակությունը նախևառաջ ազգությունների միջև տարածայնությունների հարթումն էր, խաղաղության հաստատումը: Այդ իմաստով իրավացի է Ալ. Մյասնիկյանի գնահատականը, որն արտահայտվել է նրա նամակներից մեկում (21 մարտի 1925 թ.): «Իմ կարծիքով,- գրել է նա,- մենք մինչև այսօր զբաղված էինք համակովկասյան խաղաղության, ազգամիջյան դաշինք ստեղծելով: Ֆեդերացիան դա արավ»[103]:

Այդ գնահատականը ճիշտ է: Սակայն դա չի նշանակում, թե դաշնությունը ազգային հարցը լուծեց արմատապես և վերացրեց ազգային տարածայնությունների օբյեկտիվ պայմանները: Այնուամենայնիվ անկասկած է դաշնության ստեղծման դրական նշանակությունը ոչ միայն խաղաղության հաստատման, այլև Անդրկովկասի հանրապետությունների տնտեսական ու մշակութային զարգացման տեսակետից:

Անդրկովկասի հանրապետությունների դաշնային միությունը դաշնության (ֆեդերացիայի) այն ձևն էր, որն իր անդամ հանրապետություններից վերցրել էր նրանց գործառույթների միայն մի քանի, չնայած կարևոր, բնագավառները, մնացած հարցերում պահպանելով նրանց ինքնուրույնությունը և ինքնիշխանությունը: ԽՍՀՄ կազմավորման նախօրյակին տեղի էր ունենալու Անդրդաշնության վերափոխություն:

Անդրկովկասի հանրապետությունների միությունը էական նշանակություն պիտի ունենար նաև ազգային պետություններից ժառանգություն մնացած ազգային հակամարտությունները վերացնելու, երկրամասի ժողովուրդների բարեկամություն հաստատելու տեսակետից:

Անհրաժեշտ է նշել նաև այն մասին, որ դաշնության ստեղծման գործընթացը հարթ չի ընթացել: Դրա դեմ առարկություններ գոյություն են ունեցել մասնավորապես Վրաստանի Կոմկուսի ղեկավար շրջաններում: Մդիվանին և ուրիշներ պետական միավորումը գտնում էին վաղաժամ, առայժմ բավարար համարելով տնտեսական ջանքերի համախմբումը: Վրաստանի ղեկավարների առարկությունները շարունակվեցին նաև հետագայում, ԽՍՀՄ-ի կազմավորման ժամանակաշրջանում:

Վրացական ընդդիմության մասին պատկերացում կարելի է կազմել նաև Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ Սուրխաթյանի նամակներից, ուղղված Ալեքսանդր Մյասնիկյանին: Այսպես, 1921 թ. նոյեմբերի 21-ի նամակում Սուրխաթյանը հայտնելով Վրաստանում մեծ թափով ծավալվող

---

[103] Խորհրդային Հայաստան, 22 մարտի 1927 թ.:

քարոզչության մասին, պատճառը բացատրում է նրանով, որ «մասսաների տրամադրությունը հօգուտ չէ», ապա շարունակում է. «Կուսակցական վերին և միջին շերտը հակառակ է... Ըստ երևույթին պիտի խոշոր աշխատանք գործ դնի կուսակցությունը, որ ֆեդերացիայի գաղափարը գլուխ բերի, մարմնացնի»[104]: Երկրորդ նամակը (27 հունվարի 1922 թ.) մանրամասներ է հայտնում Վրաստանի կոմկուսի 1-ին համագումարի ընթացքից: Համագումարի նիստերը, գրել է Սուրխաթյանը, եղան շատ բուռն «երկու հոսանքների բախման պատճառով»: Այսպես կոչված «ազգային» գծի կողմնակիցները (Բուդու Սդիվանի և ուրիշներ) դեմ են ձեդերացիային բացարձակապես: Համագումարում Օրջոնիկիձեն ընթերցել է Լենինի պատասխան նամակը, և «խիստ որակումներ» տալով նացիոնալիստների խմբին, հայտնել է Լենինի խոսքերը, թե «ֆեդերացիան հայտարարել եք, ինչո՞ւ չեք իրականացնում... եթե չեք իրագործի՝ կքշենք Սիբիր»[105]:

Վրաստանի Կոմկուսի կենտկոմի անդամների դիմադրությունը հանդիպեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան (այնուհետև՝ Անդրկովկասյան) բյուրոյի, նրա քարտուղար Օրջոնիկիձեի, ինչպես նաև Ստալինի ուժեղ ճնշմանը: Լենինը, որ գտնվում էր հիվանդ վիճակում, այնուամենայնիվ ուշադրությամբ հետևում էր վրացական դեպքերին՝ ազգային հարցի լուծման բնագավառում ելակետ ունենալով խորհրդային հանրապետությունների իրավահավասարությունը և կամավոր ինտեգրացիան: Եվ չնայած այդ ամենին, Վրաստանի ղեկավարության նկատմամբ գործադրվում էին պայքարի խիստ ձևեր ու միջոցներ[106]:

1922 թ. կեսերին ՌԿ(բ)Կ ղեկավարությունը ժամանակը հասունացած համարեց խորհրդային հանրապետությունների պետական միավորման գործնական աշխատանքներին անցնելու համար: Ստալինի (նա Ռուսաստանի ազգությունների գործերի գծով ժողկոմն էր) նախագահությամբ ստեղծվեց հանձնաժողով, որին հանձնարարվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումի համար նախապատրաստել ՌԽՖՍՀ-ի հետ անկախ խորհրդային հանրապետությունների փոխհարաբերությունների մասին հարցը: Հանձնաժողովում Հայաստանը ներկայացնում էր Ալ. Սյասնիկյանը[107] (չնայած աշխատում էր Թիֆլիսում):

---

[104] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 33, թ. 168:
[105] Նույն տեղում, գ. 41, թ. 20-22: Տես նաև՝ «Հայաստանի Հանրապետություն», 16 մարտի 1991 թ.:
[106] Грузинский инцидент. См. "Заря Востока" (Тбилиси), 26 июня, 1988 г.
[107] Образование СССР, с. 295.

Ստալինի մշակած նախագծով առաջարկվում էր անկախ խորհրդային հանրապետությունները մտցնել Ռուսաստանի կազմի մեջ որպես ինքնավար հանրապետություններ: Ստալինի նախագիծը պատմության մեջ մտավ «ինքնավարացման ծրագիր» անունով: «Նպատակահարմար համարել Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի անկախ խորհրդային հանրապետությունների մուտքը ՌԽՖՍՀ կազմի մեջ», ասված է նախագծի 1-ին կետում[108]: Հանձնաժողովում քննարկելուց հետո այն ընդունեց հետևյալ խմբագրված տեսքը «Նպատակահարմար համարել պայմանագրի կնքումը Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի և ՌԽՖՍՀ-ի միջև վերջինիս կազմի մեջ առաջինների ֆեդերալ մուտքի մասին»:

Նախագծին դեմ քվեարկեց Վրաստանի ներկայացուցիչը, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի որոշման հիման վրա, որում ասված է. «ԸՆԿ. Ստալինի թեզիսների հիման վրա առաջարկվող ինքնավարացման ձևով անկախ հանրապետությունների միավորումը համարել վաղաժամ»[109]:

Նախագծի կապակցությամբ առարկություն է ունեցել նաև Ուկրաինան, որը պաշտպանել է համադաշնության տեսակետը:

ՌԿ(բ)Կ Կենտկոմը խիստ որոշում ընդունեց Վրաստանի կոմկուսի Կենտկոմի բռնած դիրքի առթիվ: Այն բնութագրվեց որպես «ազգային թեքում» և պաշտպանության տակ վերցվեց Անդրերկրկոմի կողմից, որը, ինչպես ասված է ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշման մեջ (1922 թ. սեպտեմբերի 25), «հանդիսանում է Կենտկոմի վստահությունը վայելող մեր կուսակցության բարձրագույն մարմինը Անդրկովկասում, և որի որոշումները պարտադիր են Անդրկովկասի բոլոր ազգային Կենտկոմների համար»[110]:

Հանձնաժողովի նիստերից մեկում (սեպտեմբերի 24) դրված է եղել նաև «12. Անդրկովկասյան ֆեդերացիայի հետագա գոյության և ՌԽՖՍՀ - հետ նրա փոխհարաբերությունների մասին» հարցը և որոշվել է այն «չքննարկել մինչև հանձնաժողովի որոշումները Կենտկոմի պլենումում հաստատելը»: Հանձնաժողովում որոշումն ընդունվել է «առանց առարկության»[111]:

Ինչ վերաբերում է Ստալինի նախագծին, ամբողջությամբ վերցված, ապա այն արժանացավ Լենինի խիստ քննադատությանը և պետք է վերամշակվեր նրա առաջարկությունների հիման վրա:

---

[108] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 177, թ. 68:
[109] Նույն տեղում, թ. 65:
[110] Նույն տեղում, թ. 71:
[111] Նույն տեղում, թ. 69-70:

Ինքնավարացման ստալինյան ծրագիրը անընդունելի էր այն պատճառով, որ, ըստ Լենինի, անտեսում էր հանրապետությունների իրավահավասարությունը: Ուստի նա գտնում էր, որ հանձնաժողովը պետք է վերամշակի նախագիծը:

Այդ մասին էր գրում Լենինը Կամենևին ուղղված նամակում 1922 թ. սեպտեմբերի 26-ին: Ուկրաինական ԽՍՀ և մյուսների հետ, ասված է նամակում, մենք (նկատի ունի Ռուսաստանին) իրավահավասար ենք և նրանց հետ միասին ու հավասար ձևով մտնում ենք նոր միության, նոր դաշնության, Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ[112]: Լենինի սկզբունքային նշանակություն ունեցող ցուցումների հիման վրա ՌԿ(բ)Կ - Կենտկոմի հանձնաժողովը վերամշակեց նախագիծը, որը փաստորեն դարձավ նոր նախագիծ:

Ստալինյան ծրագրին Լենինը հանգամանորեն անդրադարձավ նաև 1922 թ. վերջին օրերին, ազգությունների հարցի կամ «ինքնավարացման» մասին նամակում: Նա իրեն հանցավոր էր համարում, որ ժամանակին հնարավորություն չէր ունեցել (հիվանդության պատճառով) բավական եռանդով միջամտել ինքնավարացման «անփառունակ հարցին», այն գնահատելով արմատապես ոչ ճիշտ և անժամանակ: Վեր դասելով ժողովուրդների իրավահավասարությունը, բարեկամության ամրապնդման և փոխադարձ օգնության ու համագործակցության շահերը, խստորեն քննադատվում էր ինչպես մեծ ազգի (մեծապետական, վելիկոռուսական շովինիզմ), այնպես էլ փոքր ազգի (տեղական) նացիոնալիզմը (ազգայնամոլություն): Որպես գործնական միջոցառում դրվում էր սոցիալիստական հանրապետությունների միության ամրապնդումը: Դրա կարևորությունը Լենինը տեսնում էր նաև համաշխարհային բուրժուազիայի դեմ համաշխարհային պրոլետարիատի պայքարի տեսանկյունից: Այսինքն, հետևողականորեն շարունակում էին պաշտպանել համաշխարհային հեղափոխության հույսերը:

Լենինի պահանջների ոգով Ստալինի հանձնաժողովը սկզբունքային վերանայում կատարեց նախագծում, որը և ընդունվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումի կողմից 1922 թ. հոկտեմբերի 6-ին: «Գտնել անհրաժեշտ,- ասված է որոշման 1-ին կետում,- պայմանագրի ստորագրումը Ուկրաինայի, Բելոռուսիայի, Անդրկովկասյան հանրապետությունների դաշնության և ՌԽՖՍՀ միջև «Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների միության» մեջ նրանց միավորման մասին, նրանցից յուրաքանչյուրին վերապահելով «Միության» կազմից ազատ դուրս գալու իրավունքը»[113]:

---

[112] Образование СССР, с.
[113] Образование СССР, с. 302.

Սա ԽՍՀՄ-ի կազմավորման մասին կուսակցական հիմնարար որոշումն էր: Այն կենսագործվելու էր խորհրդային կարգով ձևակերպելուց հետո, խորհրդային մարմինների միջոցով:

1922 թ. հոկտեմբերի 16-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած հեռագրում Ստալինը տեղեկացնում էր պլենումի տվյալ և այլն որոշումների մասին: ՌԿ(բ)Կ Կենտկոմը, ասված է հեռագրում, միաձայն մերժել է Վրաստանի Կոմկուսի Կենտկոմի «միավորման վաղաժամության և անկախության պահպանման մասին» առաջարկությունը: Պլենումը, շարունակում է հեռագիրը, առանց որևէ փոփոխության ընդունել է Ստալինի, Օրջոնիկիձեի, Մյասնիկովի և Մոլոտովի հանձնաժողովի անդամների առաջարկությունը «Անդրֆեդերացիան պահպանելու և վերջինս ՌԽՖՍՀ-ի, Ուկրաինայի, Բելոռուսիայի հետ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ միավորելու մասին»: Հեռագրի վերջում Ստալինը վստահություն էր հայտնում, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմի դիրեկտիվը «կկենսագործվի խանդավառությամբ»[114]

Անդրկովկասի համար էական նշանակություն էր ունենալու նաև պլենումի որոշումը Անդրկովկասյան դրամ մտցնելու մասին: Սահմանվեցին այն հիմնական դրույթները, որոնց հիման վրա Անդրկովկասում անց էր կացվելու «վալյուտայի ռեֆորմ»: Անդրկովկասյան դրամը գործածության մեջ էր դրվելու 1923 թ. հունվարի 1-ից[115]:

Միութենական պետություն ստեղծելու մասին Մոսկվայում կայացած պլենումի բերված որոշումը ուղղություն տվեց հանրապետությունների կուսակցական և խորհրդային մարմինների հետագա գործունեությանը:

1922 թ. նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին կայացած Հայաստանի խորհուրդների 2-րդ համագումարի կենտրոնական հարցը վերաբերում էր խորհրդային հանրապետությունների միությանը:

Կառավարության և տնտեսական ժողկոմատների (հողագործության, պարենավորման և ֆինանսների) զեկուցումները լուսաբանում էին տնտեսության վերականգնման խնդիրները: Կարևոր էր համարվում գյուղատնտեսության արդյունավետության (ինտենսիվ) զարգացման անհրաժեշտությունը սակավահող Հայաստանի համար: «Պետք է կատարելագործության հասցնել մեր հողի մշակումը և աշխատավորության ունակությունը,- նշում էր իր զեկուցման մեջ կառավարության նախագահ Լուկաշինը,-

---

[114] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 49, թ. 26:
[115] Նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 177, թ. 73:

և ոչ թե սահմանից այն կողմը նայենք, ինչպես անում էին մեր նախորդները»[116]:

Ընդհանուր տրամադրությունից և գծից տարբերվող էր պատգամավոր, իրավաբան Գրիգոր Չուբարի (նախկին էսեռ) ելույթը: Ելնելով արդյունավետ զարգացման հնարավորությունների սահմանափակության դրույթից, որ այն «սերունդների սոցիալ-կուլտուրական զարգացման խնդիրն է», նա արտահայտեց հետևյալ միտքը. «Մեր ժողովրդի գոյության երկաթե օրենքները պահանջում են ընդլայնել մեր երկրի սահմանները»[117]:

Գ. Չուբարի ելույթը հանդիպեց կոմունիստ պատգամավորների ուժեղ քննադատությանը: Այսպես, Հ. Մկրտչյանը գյուղատնտեսության զարգացումը հողի ընդլայնման հետ կապելը համարեց «դաշնակցական տեսակետ»[118]:

Չուբարը պիտի իմանա, բացատրում էր Արտաշես Կարինյանը, որ մենք նույնպես գիտակցում ենք խորհրդային Հայաստանի տնտեսական ու հողային կացությունը, «բայց գտնում ենք, որ այսպիսի պայմաններում ամենամեծ հերոսությունն այն է, որ զբաղվում ենք սովորական պրոզայիկ գործերով և ոչ թե այնպիսի ցնորքներով, որին զոհ է գնացել ամբողջ տաճկահայ ժողովուրդը»: Ա. Կարինյանի կարծիքով Հայաստանի հողն այնքան է որ, համապատասխան մշակման դեպքում, կբավարարի ամբողջ բնակչությանը, նրան կտա «խաղաղ ու բարեկեցիկ կյանք»: Կարինյանի ելույթն արժանացավ պատգամավորների «երկարատև ծափահարություններին»:

«Ուժեղ և բուռն ծափահարությունների» արժանացավ նաև Արամայիս Երզնկյանի հակաչուբարյանական ելույթը: Ըստ նրա Կոմունիստական կուսակցության համար սահմանները նշանակություն չունեն, կարևորն այն է, որ սահմանները չլինեն: Բոլոր խնդիրները, շարունակում է Ա. Երզնկյանը, որ պիտի ծնեն սահմանների խնդիր, այդ բոլորի լուծողը լինելու է «համաշխարհային սոցիալիստական հեղափոխությունը»[119]:

Անդրադաշնության և ԽՍՀՄ-ի մասին զեկուցեց Ասքանազ Մռավյանը: Նա անդրադարձավ խորհրդային հանրապետությունների անցած պատմական ուղուն, ըստ դրա փուլերի, ավելացնելով, որ հասունացել է նրանց տնտեսական համագործակցության, դրա պլանային կազմակերպման ժամանակը, երբ պահանջվում է «կենտրոնացում, պլանոմեր աշխատանք, եղածի կանոնավոր գործադրություն»: Հանրապետությունների միության

---

[116] ՀՍԽՀ խորհուրդների երկրորդ համագումարի արձանագրություն: Երևան, 1923, էջ 24:
[117] Նույն տեղում, էջ 72:
[118] Նույն տեղում, էջ 74-75:
[119] Նույն տեղում, էջ 99:

մեջ կամավոր մտնելու են, նշում է Մռավյանը, բոլոր խորհրդային միավորները, «որոնք բռնում են երկրագնդի մեկ վեցերորդ մասը Արաքս գետից մինչև Արխանգելսկ և Դնեպրից մինչև Խաղաղ օվկիանոս»: «Բուռն և որոտընդոստ ծափեր» վաստակեցին զեկուցողի խոսքերը, թե ստեղծվող միությունը «մեծ կորիզն է կազմում Խորհրդային հանրապետությունների համաշխարհային միության»:

Մռավյանը մերժում է այն հնարավոր քննադատությունը, որ կբարձրացներ թշնամին միության ստեղծման կապակցությամբ թե դրանով անկախությունը կմեռնի: Բերելով իր առարկությունները, Մռավյանը եզրափակում է, թե «ոչ մի կերպով չի կրճատվի հանրապետությունների անկախության գաղափարը: Իրավունք չունեն վրդովվելու մինչև անգամ մեշչանական ազգասերները» (նկատի ունի դաշնակցականներին և ռամկավարներին)[120]:

Համագումարը քննարկված հարցի առիթով ընդունեց «Անդրկովկասյան դաշնության և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մասին» բանաձևը: Նշվեց, որ ժամանակն է ստեղծել այդ միությունը, «որի անհրաժեշտությունը թելադրվում է մեր տնտեսական ու քաղաքական շինարարության պահանջներով», որ այդ միությունը համապատասխանում է բոլոր խորհրդային հանրապետությունների և մասնավորապես Խորհրդային Հայաստանի բանվորների ու գյուղացիների շահերին:

Համագումարն իր համաձայնությունը հայտնեց ԽՍՀՄ-ի կազմակերպման այն հիմունքներին, որպիսիք ձևակերպված էին ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1922 թ. հոկտեմբերյան պլենումի որոշումներում[121]:

Դեկտեմբերի 13-ին կայացած Անդրկովկասի հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների, այն է Խորհուրդների Անդրկովկասյան 1-ին համագումարն ընդունեց բանաձև խորհրդային հանրապետությունների միության մասին և հավանություն տվեց Անդրկովկասի Սոցիալիստական ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության սահմանադրությանը (հիմնական օրենքին)[122]: Սահմանադրությամբ փոխվեց անդրկովկասյան դաշնության կարգավիճակը:

Սահմանադրությունն արձանագրում էր, որ Անդրկովկասի դաշնային (ֆեդերատիվ) միությունը դրական արդյունքներ է ձեռք բերել տնտեսական ու պետական շինարարության բնագավառում: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անդրկովկասի հանրապետությունները «հայտնվել են միջազգային բուրժուազիայի տնտեսական բոյկոտի տակ և

---

[120] Ասքանազ Մռավյան, Հոդվածներ և ճառեր, էջ 146-159:
[121] Образование СССР, с. 337-338.
[122] Նույն տեղում, էջ 349-359:

իմպերիալիստական տերությունների հնարավոր ներխուժման սպառնալիքի առջև», «համարվեց անհրաժեշտ և ժամանակին «քաղաքական, տնտեսական ու ռազմական հետագա միավորումը»: Այդ նպատակով Անդրկովկասի հանրապետությունների լիազոր ներկայացուցիչները, հավաքվելով Անդրկովկասի խորհուրդների 1-ին համագումարին, կարդում ենք սահմանադրության մեջ, որոշվեց «կազմավորել Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն (ԱՍՖԽՀ)»:

Դաշնային հանրապետությունն օժտված էր կառավարման ավելի բարձր կենտրոնացումով՝ ի հաշիվ հանրապետությունների իրավասության: Նոր կարգավիճակով Անդրդաշնությունը դառնում էր մյուս խորհրդային հանրապետություններին նույնաբնույթ: Այդ անհրաժեշտ էր ԽՍՀՄ - կազմավորման համար մինչև միութենական համագումարի հրավիրումը:

Անդրկովկասյան համագումարն անհետաձգելի էր համարում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմակերպումը:

Անդրկովկասյան համագումարը առանձին որոշում ընդունեց խորհրդային սոցիալիստական հանրապետությունների ընդհանուր համագումար հրավիրելու անհրաժեշտության մասին: Այդ նպատակով համագումարն իր պատվիրակներին լիազորեց ստորագրել հանրապետությունների միության կազմակերպման մասին պայմանագիրը[123]:

Խորհուրդների համառուսաստանյան 10-րդ համագումարում (23-27 դեկտեմբերի 1922 թ.) Անդրկովկասի և մյուս հանրապետությունների պատվիրակությունները արտահայտեցին իրենց պետությունների կամքը և կամավոր ցանկությունը Ռուսաստանի հետ միասին կազմավորելու խորհրդային բոլոր հանրապետությունների միություն: Անդրկովկասի անունից հանդես եկավ Սարգիս Լուկաշինը[124]: Ալ. Մյասնիկյանի առաջարկությամբ Ռուսաստանի Կենտգործկոմի կազմում ընդգրկվեցին Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ներկայացուցիչները (առաջին երկուսը 20-ական, վերջինը 15 մարդ)[125]:

1922 թ. դեկտեմբերի 29-ին Մոսկվայում հրավիրվեց Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների կոնֆերանսը: Մտքերի փոխանակությունից հետո կոնֆերանսը հաստատեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) կազմավորման մասին հայտա-

---

[123] Նույն տեղում, էջ 359:
[124] Очерки истории коммунистических организаций Закавказья, Часть II, с. 54.
[125] Образование СССР, М., 1949, с. 259.

բարության և այդ հանրապետությունների միջև պայմանագրի նախագծերը:

Այդ փաստաթղթերի ստորագրման արարողությունը, ըստ կոնֆերանսի որոշման, տեղի էր ունենալու հաջորդ օրը՝ դեկտեմբերի 30-ին հրավիրվող Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Խորհուրդների 1-ին համագումարում[126]: ԽՍՀՄ հիմնադիր Խորհուրդների 1-ին համամիութենական համագումարին ներկա էին 2214 պատգամավոր վճռական և խորհրդակցական ձայնի իրավունքով[127]: Անդրկովկասը ներկայացված էր 91 պատգամավորներով[128]:

Համագումարը քննարկելով ԽՍՀՄ կազմակերպման մասին Հայտարարության նախագիծը և հանրապետությունների Խորհուրդների լիազոր պատվիրակությունների կնքած Միութենական պայմանագիրը, որոշեց դրանք հիմնականում հաստատել: Ելնելով փաստաթղթի «արտակարգ կարևորությունից» և ցանկալի համարելով իմանալ բոլոր հանրապետությունների «վերջնական կարծիքը», որոշվեց Հայտարարությունը և Պայմանագիրը հանձնել միութենական հանրապետությունների Կենտգործկոմների լրացուցիչ քննարկմանը: Այնուհետև Հայտարարությունը և Պայմանագիրը ներկայացվելու էին խորհուրդների համամիութենական 2-րդ համագումարի վերջնական հաստատմանը:

ԽՍՀՄ Կենտգործկոմը դեկրետով աշխարհի ժողովուրդներին և կառավարություններին ազդարարեց խորհրդային հանրապետությունների միության ստեղծման խաղաղ նպատակների և 1923 թ. հուլիսի 6-ից Հայտարարությունը և Պայմանագիրը գործողության մեջ մտցնելու մասին[129]:

Խորհուրդների համահայաստանյան 3-րդ համագումարը (1923 թ. դեկտեմբեր) լսեց ՀՍԽՀ սահմանադրության մասին Կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանի զեկուցումը և որոշեց համապատասխան փոփոխություններ կատարել նրանում, որոնք բխում էին պետական շինարարության նոր իրողությունից[130]: Ինչպես նշված է ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Կալինինին ուղղված ողջույնի հեռագրում, համագումարը Հայաստանի տնտեսական և սոցիալ-կուլտուրական զարգացումը և ապահո-

---

[126] Образование СССР, М., 1972, с. 370.
[127] Նույն տեղում, էջ 371, 378:
[128] Очерки истории коммунистических организаций Закавказья, Часть II, с. 54.
[129] Образование СССР, с. 423-425.
[130] ՀՍԽՀ խորհուրդների երրորդ համագումար: 1926 թ., էջ 211:

վությունը հնարավոր էր համարում «միայն Միության Կարմիր դրոշակի տակ»[131]:

1924 թ. հունվարին Թիֆլիսում կայացած Խորհուրդների Անդրկովկասյան 2-րդ համագումարը մի անգամ ևս արտահայտվեց ԽՍՀՄ կազմակերպման և նրա սահմանադրության ընդունման օգտին[132]:

Հունվարի վերջերին Մոսկվայում գումարվեց խորհուրդների համամիութենական 2-րդ համագումարը: Խորհուրդների 2-րդ համագումարը, ելնելով 1-ին համագումարի որոշումներից և հաշվի առնելով միութենական հանրապետությունների առաջարկած ուղղումներն ու փոփոխությունները, նշեց, որ ԽՍՀՄ կազմակերպման մասին Հայտարարությունը և Միության պայմանագիրը կազմում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Հիմնական օրենքը (Սահմանադրությունը): Ընդ որում, Հայտարարությունը պահպանվել էր անփոփոխ, իսկ Պայմանագիրը վերափոխվել և զարգացվել էր ըստ սահմանադրության փաստաթղթի պահանջների:

Հայտարարությունը, որը դարձել էր Սահմանադրության առաջին բաժին, արձանագրում էր Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ աշխարհի երկփեղկման, երկու տարաբնույթ ճամբարների բաժանվելու, խորհուրդների ճամբարում ազգային ճնշման վերացման, ժողովուրդների կամավոր համախմբման գործընթացների մասին: Բաժինն ավարտվում էր ԽՍՀՄ կազմավորման պատմական նշանակության մասին դրույթով: ԽՍՀՄ-ը դիտվում էր որպես նոր վճռական քայլ Համաշխարհային Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության մեջ բոլոր երկրների աշխատավորների համախմբման ճանապարհին: Նշանակում է՝ օրենքի ծև էր ստացել համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հնարավորության մասին տեսությունը:

Բնականաբար այդ համաշխարհային սոցիալիստական հանրության անդամ էր դառնում նաև ԽՍՀՄ բաղկացուցիչ մաս Խորհրդային Հայաստանը: Այդ արձանագրել էր հենց հանրապետության սահմանադրությունը, դեռևս մինչև ԽՍՀՄ ստեղծումը: «Հանդիսանալով միջազգային սոցիալիստական հեղափոխության մի հատված...», նշված էր նրա 4-րդ հոդվածում: Ընդ որում համաշխարհային սոցիալիստական շարժման կենտրոն Կոմունիստական ինտերնացիոնալը Հայաստանով հետաքրքրվում էր նրա խորհրդայնացումից անմիջապես հետո: Այսպես, 1921 թ. հունիսի 20-ի գրությամբ, հասցեագրված Հայաստանի արտգործժողկոմատին, խնդրել է.

---

[131] Նույն տեղում, էջ 37:

[132] Второй Закавказский съезд Советов. Стенографический отчет. Тифлис, 1924.

«Շտապ կարգով զեկուցում ներկայացնել Հայաստանի միջազգային կապերի մասին (կարևոր փաստաթղթերի տվյալներով, պատճեններով և այլն)»: Ի բավարարումն այդ խնդրանքի՝ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը որոշել էր հնարավոր կարճ ժամկետում «տալ այն տեղեկությունները, որպիսիք հետաքրքրում են Կոմինտերնին»: Ուստի, ասված է Կենտկոմի գրության մեջ, նա խնդրում էր զեկուցման ձևով տեղեկություններ տալ բոլոր առևտրական, խաղաղության և այլ պայմանագրերի մասին, որոնք ենթակա էին հրապարակման, նրանց պատմության մասին և այլն[133]: Լրացնենք, որ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը համագործակցում էր Կոմինտերնի հետ նրա կոնգրեսներին մասնակցելու և այլ ձևերով:

Երկրորդ բաժինը բուն սահմանադրությունն էր, բաղկացած 11 գլուխներից և 72 հոդվածներից:

Հանրապետությունների կողմից ԽՍՀՄ-ը կազմավորելու Սահմանադրության շարադրանքում նշվում էին ԱԽՖՍՀ-ն ներկայացնող Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունները: Հանրապետությունների ինքնիշխանությունը (սուվերենությունը) տարածվում էր Միությանը վերապահված իրավունքներից դուրս սահմաններում: Նրանց պետական իշխանությանը վերաբերում էին միայն տեղական նշանակություն ունեցող խնդիրները: Հանրապետություններն ունեին Միությունից ազատորեն դուրս գալու իրավունք: Այդ իրավունքն ունեցավ ավելի շատ ձևական ու քարոզչական նշանակություն:

ԽՍՀՄ Սահմանադրության ընդունումով ավարտվեց խորհրդային հանրապետությունների ինտեգրացման տևական գործընթացը: «Հաջողությամբ է ավարտվել,- ասված է ՌԿ(բ)Կ 13-րդ համագումարի բանաձևում,- ԽՍՀ Միության ձևավորման գործը և դրանով կայուն բազա է ստեղծվել ԽՍՀՄ-ում բնակվող բոլոր ազգությունների եղբայրական ու խաղաղ համակեցության համար»[134]:

ԽՍՀՄ-ի ստեղծումն ուներ, անկասկած, դրական և պատմական նշանակություն: Խորհրդային հանրապետությունները միավորվում էին համատեղ ուժերով ու ջանքերով արտաքին վտանգի դեմ պայքարելու և իրենց զարգացման խնդիրները դյուրին ձևով լուծելու համար:

ԽՍՀՄ-ի կազմավորման կարևոր նպատակներից էր ազգային հարցի լուծումը, խորհրդային ժողովուրդների բարեկամության հաստատումը և ամրապնդումը: Իրականում ԽՍՀՄ-ը ժամանակի ընթացքում վերածվեց

---

[133] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 11, թ. 36:

[134] ՍՍԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: 2-րդ մաս, Երևան, 1955, էջ 11:

միաձույլ, խիստ կենտրոնացված պետություն: Միութենական հանրապետությունների խիստ խուզված ինքնիշխանությունը դարձավ ծևական, չնայած նրանք օժտված էին պետականության բոլոր միջոցներով ու իրավասությամբ: Իսկ ազգային հարցը փաստորեն հիմնականում չլուծվեց, ինչպես դա ցույց տվեց կյանքը հետագայում, երբ տեղի ունեցավ ԽՍՀՄ-ի քայքայումը: Ազգամիջյան վեճերն ու տարաձայնությունները չէին վերացել: Դրանք միայն լռեցվել էին: Այդ հակասությունները սուր բնույթ էին կրում մասնավորապես բազմազգ Կովկասում, այնքան սուր, որ նույնիսկ ոմանք բացառում էին երկրամասում ներքին, ազգային սահմանների անցկացումը և առաջարկում էին ամբողջ տարածքը որպես մեկ վարչական միավոր մտցնել Ռուսաստանի կազմի մեջ («ինքնավարացման» ծրագրի ժամանակ):

ԽՍՀՄ կազմավորումով ավարտվեց Խորհրդային Հայաստանի կիսատ-պռատ անկախ պետականության ժամանակաշրջանը: Այնուհետև նրա պատմությունը դառնալու էր Խորհրդային Միության ընդհանուր գործընթացի բաղկացուցիչ մաս:

***

Խորհրդային Հայաստանը դիվանագիտական կապեր ուներ մի շարք խորհրդային և ոչ խորհրդային երկրների հետ: Դրա համար նախ փակվեցին նախկին իշխանության ներկայացուցչությունները, ապա կատարվեցին ներկայացուցիչների նոր նշանակումներ: Խորհրդային պետություններից առաջինը Ռուսաստանն էր, որի հետ սերտ հարաբերությունների մեջ էր Հայաստանը: Մոսկվայում Հայաստանի լիազոր-ներկայացուցիչն էր Սահակ (Իսահակ) Տեր-Գաբրիելյանը[135]: Հեղկոմի անդամին այդ պատասխանատու պաշտոնում նշանակելը վկայում էր այն կարևորության մասին, որ տրվում էր հայ-ռուսական հարաբերություններին: Հայաստանի խորհրդայնացումով այդ հարաբերությունները մտնում էին նոր փուլ. Ռուսաստանի բազմակողմանի օգնությունը և երկու երկրների համագործակցության հաստատումը տարբեր բնագավառներում միտում ունեին նախապատրաստելու խորհրդային հանրապետությունների քաղաքական (պետական) միավորումը:

Ռուսաստանի հարավում մեծաթիվ հայ գաղթականության առկայության, նրան օգնություն ցույց տալու անհրաժեշտության բերումով հյուպատոսություն էր գործում Վլադիկավկասում (Լեռնականների Հանրապետություն)[136]: Հյուպատոս է նշանակված եղել Դաղստանի Հանրապետութ-

---

[135] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 9, թ. 2:
[136] Նույն տեղում, գ. 112, թ. 151:

յունում գործելու համար[137], նաև Անդրկասպյան մարզում (Թուրքեստան)[138]:

Հետաքրքիր է, որ Հայաստանը դիվանագիտական ներկայացուցիչ ուներ նաև Հեռավորարևելյան Հանրապետությունում (ժամանակավոր բուրժուադեմոկրատական հանրապետություն 1920-1922 թթ.): Դրա անհրաժեշտության մասին է հայտնում Սահակ Տեր-Գաբրիելյանը 1922 թ. մարտի 1-ի գրության մեջ, որ ուղարկել էր Հայաստան: «Հեռավորարևելյան Հանրապետության ազգությունների գործերի գծով մինիստրից իմ ստացած տեղեկությունների համաձայն,- ասված է գրության մեջ,- ՀԱՀ-ում և Մանջուրիայում կան Հայաստանի համար նյութեր և փող, որ կարելի է փոխադրել Հայաստան»: Նույն գրության մեջ հայտնվում էր, որ ՌԽՖՍՀ - հանձնարարությամբ ՀԱՀ գործուղվող կոմունիստ ընկ. Սաֆրազյանը ժամանակավորապես նաև Հայաստանի ներկայացուցիչն է (նրան տրվում էր համապատասխան մանդատ): Համապատասխան մանդատներ էին տրվում նաև ՀԱՀ-ում գտնվող Պողոսյանին և Նալբանդյանին[139]: Հավանորեն վերջիններն էին տեղեկացրել հիշյալ նյութերի ու փողի մասին: Դրանց հետագա ճակատագրի մասին տվյալներ չկան:

Ուկրաինայում (մայրաքաղաք Խարկովում) Հայաստանի լիազորներկայացուցիչն էր Հովսեփ Կարախանյանը: Նա պարբերաբար տեղեկացրել է իր գործունեության մասին: Նրա տվյալներով 1921 թ. Խորկովում կար 10 հազար, Կրասնոդարում 20 հազար հայ գաղթական[140]: Գաղթականության և լիազոր ներկայացուցչության համար կարևոր նշանակություն ուներ քաղաքացիության չլուծվող հարցը: Այդ կապակցությամբ, գրել է Հ. Կարախանյանը, ինքը զրույց է ունեցել Ուկրկոմկուսի Կենտկոմի քարտուղարի հետ, որը հենվելով գաղթականների թուրքահպատակության վրա, պատասխանել է, թե «Քեմալը մեզ հարկավոր է, մենք նրա հետ չենք գժտվի»[141]:

Հայ-վրացական և հայ-ադրբեջանական հարաբերություններում կարևոր տեղ էին գրավում հողային հարցերը (տարածայնությունները), ինչպես նաև երեք հանրապետությունների տնտեսական-քաղաքական ինտեգրացիայի զարգացման կազմակերպումը:

Ոչ սոցիալիստական երկրներից Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ ուներ Պարսկաստանի և Թուրքիայի հետ: Պարսկաս-

---

[137] Նույն տեղում, գ. 85, թ. 25:
[138] Նույն տեղում, թ. 26:
[139] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 126, թ. 25:
[140] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 4-15:
[141] Նույն տեղում, գ. 68, թ. 91:

տանի հետ հարաբերությունները կրում էին բարեկամական բնույթ: Պարսկաստանի բարյացակամ օգնությամբ Հայաստանը իրականացնում էր 1921 թ. այնտեղ հեռացած հայ բնակչության վերադարձը: Հայաստանի համար կարևոր նշանակություն ուներ նաև հացի գնումների կազմակերպումը Մակուի խանություններում, որի հետ 1921 թ. հունիսին կնքվել էր համապատասխան պայմանագիր[142]: Թուրքիայի հետ հարաբերությունների լարվածությունը շարունակվում էր նաև 1921-1922 թթ., չնայած երկուստեք ցուցաբերվում էր բարյացակամություն: Վստահության հասնելու փորձերը փաստորեն արդյունքի չէին հասնում: Թուրքիան չէր վստահում Հայաստանին, մասնավորապես մատնացույց անելով Դրոյի առկայությունը Հայաստանի իշխանության մեջ: Դրան հետևեց Դրոյի ազատումը պաշտոնից: Հայկական կողմը բարեկամություն էր ցուցադրում նաև թուրք-ադրբեջանցիներին ղեկավար պաշտոններում նշանակելով (արդարադատության ժողկոմ Նուրի և այլն): Հայաստանի կառավարությունը նույնիսկ թուրքական կառավարությանը ցավակցություն հայտնեց հայ ժողովրդի ցեղասպանության հեղինակներից մեկի՝ Ջեմալ փաշայի «ողբերգական մահվան» առթիվ (1922 թ. հուլիս)[143], այդ կապակցությամբ ծերբակալություններ կատարելով նաև դաշնակցականների շրջանում[144]:

Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ցանկություն էր հայտնել Լիտվայի Հանրապետությունը, որը Կովկասում գտնվող իր ներկայացուցչությունը 1921 թ. կեսերին վերակառուցում էր առանձին հյուպատոսությունների: Թիֆլիսում հաստատված այդ ներկայացուցչությունը 1921 թ. մայիսի 24-ի գրությամբ, հասցեագրված Հայաստանի հանրապետության արտգործժողկոմատին, խորին շնորհակալություն էր հայտնում «Հայաստանի տարածքում ապաստան գտած Լիտվայի քաղաքացիների կարիքների նկատմամբ ցուցաբերած սիրալիր վերաբերմունքի համար»[145]:

Հայաստանում շարունակվում էր Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեի գործունեությունը: Նրա միջոցներով պահվում էին բազմաթիվ որբ երեխաներ, որոնց թիվը 1921 թ. հասնում էր 25 հազարի[146]: Խորհրդային Հայաստանի աղքատ վիճակը թույլ չէր տալիս հրաժարվելու

---

[142] Восстановление народного хозяйства Армянской ССР (Материалы и документы за 1921-1928 гг.(Под ред. проф. Марухяна. Ереван, 1958, с. 413-415.

[143] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 157, թ. 26-27:

[144] Վ. Ն. Ղազախեցյան, ՀՅԴաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 25:

[145] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 12, թ. 24:

[146] Նույն տեղում, ֆ. 122, ց. 3, գ. 3, թ. 133-135:

ամերիկյան օգնությունից, որը խորհրդային իշխանության համար անընդունելի էր քաղաքական նկատառումներով: Ուստի Ամերկոմի գործունեությունը թույլատրող համաձայնագրերում խորհրդային կողմը վերապահություն էր անում համապատասխան հարցերում: Սակայն դա չէր բացառում խնդիրների ծագումը Ամերկոմի հետ հարաբերություններում: Այսպես, Անդրերկրկոմի քարտուղար Ալ. Սյասնիկյանը ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած գրությամբ (1922 թ. սեպտեմբերի 25), սկաուտական կազմակերպությունների առիթով, պահանջում էր դաստիարակչական աշխատանքը հանել Ամերկոմի տնօրինությունից[147]: Համանման որոշում Անդրերկրկոմն ընդունել է նաև 1923 թ. մայիսի 25-ին[148]:

Ավելին, Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի տեսանկյունից Ամերկոմը «հակահեղափոխական բույն էր», որ պետք էր ցրել, դրանով իսկ խուսափել, որ Ամերկոմից դուրս չգային «խեղված երեխաներ» (Հայարտհանձնաժողովի 1925 թ. դեկտեմբերի 30-ի գրությունը Հանրապետության ղեկավար մարմիններին)[149]:

Չնայած այդ ամենին, Ամերկոմի գործունեությունը Հայաստանում շարունակվեց մինչև 1920-ական թվականների վերջը, որբ երեխաների չափահաս դառնալը:

Թույլատրվել էր նաև Անգլկոմի գործունեությունը: 1921 թ. դեկտեմբերին Լեգրանը (Անդրկովկասի հանրապետություններում Ռուսաստանի լիազոր-ներկայացուցիչ) Հայաստանին տեղեկացնում էր, որ Անգլիայից ժամանած Հարոլդ Բեկստոնը ուղևորվում է Հայաստան տեղում ուսումնասիրելու Միջագետքից վերադարձած հայ գաղթականներին օգնություն ցույց տալու հարցը[150]: 1922 թ. հունվարին Բաքումում Հայաստանի հյուպատոսը հայտնում էր, որ ըստ Բեկստոնի ստացած տվյալների, հիշյալ նպատակով անգլիական կառավարությունը տրամադրել է 40 հազար ֆունտ ստերլինգ[151]:

Առևտրական կապեր էին հաստատվել Իտալիայի, Շվեդիայի և այլ երկրների հետ: Հայաստանում Իտալիայի քաղաքական խորհրդական Գորրինին 1921 թ. հունվարին Թիֆլիսից հայտնում էր, որ իտալական քաղաքացի Լուչիանո Կաֆֆին մեկնում է Երևան կարգավորելու «Սագո» ընկերության ապրանքների ու պահեստների հարցը («Սագոն» Հայաստանում գործում էր նախկին իշխանության ժամանակներից): Իսկ 1921 թ.

---

[147] Նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 49, թ. 107:
[148] Նույն տեղում, ց. 3, գ. 11, թ. 78:
[149] Նույն տեղում, ց. 6, գ. 58, թ. 95-98:
[150] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 41, թ. 13:
[151] Նույն տեղում, թ. 16:

օգոստոսին պայմանագիր էր կնքվել շվեդական «Բալթիկ» բաժնետիրական ընկերության հետ գյուղատնտեսական գործիքներ ներմուծելու համար[152]:

Համապատասխան պայմանագրի սկզբունքների մասին փաստաթուղթ էր ստորագրվել Վրաստանի հետ՝ նրա երկաթուղիներով Բաքումից Հայաստան պարենային բեռների տրանզիտային փոխադրման համար[153]:

Հայաստանի արտաքին կապերի հաստատման գործում կարևոր միջոց ծառայեց Հայաստանի օգնության կոմիտեն, որն ստեղծվել էր 1921 թ. սեպտեմբերին, և որն իր մասնաճյուղերն ուներ բազմաթիվ երկրներում:

Հայաստանի արտաքին կապերը իրականացվում էին Ռուսաստանի հետ սերտ համագործակցությամբ, որպես դաշնակցային հանրապետություններ: Տվյալ խնդրին Ռուսաստանը նայում էր խորհրդային հանրապետությունների պետական ինտեգրացման տեսանկյունից: Այսպես, Անդրկովկասի հանրապետություններում Ռուսաստանի լիազոր-ներկայացուցիչ Լեգրանը հեռագրով պահանջել է իրեն ներկայացնել հանրապետությունների կառավարությունների և արտգործժողկոմատների արտասահման ուղարկվող գրությունների պատճենները, դա պատճառաբանելով լիազոր-ներկայացուցչության և Կովկասի խորհրդային հանրապետությունների միջև մշտական գործարար կապեր պահպանելու անհրաժեշտությամբ[154]: 1921 թ. հունիսի 6-ին Ասքանազ Մռավյանը պատասխանել է դրական[155]:

Կամ, 1921 թ. դեկտեմբերի 8-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն Չիչերինի առաջարկության հիման վրա որոշում է կայացրել խորհրդային հանրապետությունների կողմից արտասահմանում պայմանագրեր կնքելու կարգի մասին. դաշնակցային խորհրդային հանրապետությունները չէին կարող որևէ պայմանագիր կնքել առանց Ռուսաստանի արտգործժողկոմատի նախնական համաձայնության[156]: Նույն օրվա երկրորդ որոշումով հանրապետությունների արտասահմանյան ներկայացուցչությունները ենթարկում էին Ռուսաստանի համապատասխան լիազոր ներկայացուցչին[157]:

1921 թ. հոկտեմբերին Ռուսաստանի արտգործժողկոմատը Հայաստանի կառավարությանը տեղեկացրել էր առաջիկայում կայանալիք խորհրդակցության մասին, նվիրված հանրապետությունների արտաքին տնտեսական հարաբերություններին: Դրա նպատակն էր՝ ապահովել հան-

---

[152] Նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 8, թ. 100:
[153] Նույն տեղում, գ. 28, թ. 154:
[154] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 31, թ. 54:
[155] Նույն տեղում, թ. 55:
[156] Նույն տեղում, Հավաքածու, թիվ 1, գ. 3, թ. 162:
[157] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 21:

ռապետությունների տնտեսական քաղաքականության միասնությունը և համաձայնությունը՝ որպես նրանց ներքին ու արտաքին հզորության հիմք[158]:

Հայաստանի արտաքին հարաբերությունների բնագավառում միավորիչ գործընթացները զարգացան այնքան արագ, որ նրա համապատասխան գերատեսչությունները դադարեցին գործելուց ավելի վաղ, քան կկազմավորվեին Անդրկովկասյան դաշնությունը և ԽՍՀՄ-ը: 1921 թ. նոյեմբերի 16-ին ՀՍԽՀ ժողկոմխորհը որոշեց վերացնել խորհրդային հանրապետություններում Հայաստանի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները, բացառությամբ Մոսկվայի: Նրանց տեղում գործի անցան ՀՍԽՀ ժողկոմխորհի տնտեսական ներկայացուցիչները:

Պարսկաստանում և Կարսում գործող դիվանագիտական ծառայությունները փակվեցին ավելի ուշ, 1922 թ. վերջերին:

3. ՀՍԽՀ Կարմիր բանակը

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման և ամրապնդման կարևոր լծակ էին դառնալու նրա զինված ուժերը, որ կոչվեցին ՀՍԽՀ Կարմիր բանակ: Այդ մասին ազդարարվեց անմիջապես՝ խորհրդայնացման պահին, 1920թ. դեկտեմբերի 2-ին, Հայաստանի Կարմիր բանակի հրամանատար Դրոյի և Խորհրդային Ռուսաստանի կոմիսար Սիլինի հրամանով: Այն սահմանում էր Հայաստանի Հանրապետության բանակը Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակի վերակազմավորելու հիմունքները, որոնք բխում էին ռուսական Կարմիր բանակի քաղաքական ու կազմակերպական սկզբունքներից: Բանակում մտցվում էր քաղաքական կոմիսարների ինստիտուտ, որի նպատակը բանակի քաղաքական ղեկավարումն էր: Պաշտպանվում էր հին, նախկին հրամանատարական կադրերին օգտագործելու խորհրդային քաղաքականությունը: ՀՍԽՀ առաջին սահմանադրությունն օրինականացնում էր բանակի տեղն ու դերը պետության կյանքում /հոդված 9/, ըստ որի բանակն ստեղծվում էր բանվորների ու աշխատավոր գյուղացիների դասակարգային հեղափոխական դիկտատուրան արտաքին ու ներքին հակահեղափոխությունից պաշտպանելու նպատակով:

Ըստ նոր իրադրության՝ անխուսափելի էր բանակի վերակառուցումը ինչպես անձնակազմի թվաքանակի նվազեցման, այնպես էլ գաղա-

---

[158] Նույն տեղում, գ. 4, թ. 244:

փարական տեսանկյունից՝ շնորհիվ նրա, որ Հայաստանը գտնվում էր ՌԽՖՍՀ-ի հովանավորության ու պաշտպանության տակ: Հանրապետությունում տեղակայվեցին ռուսական 11-րդ բանակի զորամասեր /բանակի 18-րդ և 20-րդ դիվիզիաների մի քանի գունդ/, որոնք վճռական դեր էին կատարել Հայաստանի խորհրդայնացման, ապա կատարելու էին նրա պաշտպանության գործում[159]:

11-րդ բանակի զորամասերի հետ միասին Հայաստան էր ժամանել Ադրբեջանում գտնվող Առանձին հայկական հրաձգային գունդը, որը տվյալ պահին ուներ 825 մարդուց բաղկացած անձնակազմ: Վերջինիս անդամները 1920թ. մայիսյան ապստամբության մասնակից զինվորներ ու գյուղացիներ էին (հիմնականում Ղազախ-Շամշադին-Կրասնոսելսկի շրջաններից), ովքեր ապստամբության պարտությունից հետո հեռացել էին Խորհրդային Ադրբեջան: Գնդի զինվորներն ու սպաները խորհրդային իշխանության կողմից դիտվում էին որպես վերակազմավորվող հայկական բանակն ամրապնդող տարր: Այդ նկատի ուներ Հայաստանի զինկոմ Գայը (Հայկ Բժշկյան), երբ գրում էր, թե հանրապետության կարմիր բանակի գոյությունը սկսվում է 1920թ. մայիսի 1-ից[160]:

Շուտով հայկական Կարմիր բանակի հրամանատար Դրոն հեռացվեց պաշտոնից: Դրոյի հեռացումը Հայաստանում զբաղեցրած պաշտոնից ուներ քաղաքական պատճառներ: Խորհրդային իշխանությունը բացառում էր դաշնակցականների, թեկուզ «ձախ» կոչվող, մասնակցությունը պետության կառավարմանը (խախտելով 1920թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը): Բացի դրանից, դեր էր խաղում նաև, այսպես կոչված, թուրքական գործոնը: Խորհրդային իշխանավորների կարծիքով դաշնակցական Դրոյի ներկայությունը խանգարում էր հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը: Այսպես, Մոսկվայում Հայաստանի ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը ՀԿ/բ/Կ Կենտկոմ հասցեագրած 1921թ. հունվարի 15-ի նամակում գրում էր, թե մինչև Թուրքիայի հետ Մոսկվայի կոնֆերանսը «հարկավոր է ներսում մաքրվել Դրո և կամպանիա դաշնակցական աղտեղությունից»: Բանն այն է, որ, շարունակում է նամակի հեղինակը, թուրքերը Ռուսաստանին արած դիմումներում հայտարարում են իրենց անվստահության մասին ընդհանրապես՝ հայ կոմունիստների նկատմամբ և մասնավորապես՝ «ընդգծում են Դրոյի և մյուսների գտնվելը կառավարության կազմում»[161]:

---

[159] И. Таирян. XI Красная армия в борбье за установление и упрочение Советской власти в Армении. Ереван, 1971.
[160] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 114:
[161] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 31, թ. 69-72:

Հայաստանի Կարմիր բանակի հրամանատար դարձավ ռուսական սպա Վ. Մ. Մոլկոչանովը, իսկ կոմիսարն էր Ի. Ա. Սվիրիդովը: Հայկական բանակը փաստորեն ենթակա էր դառնում ռուսական զորքերի հրամանատարությանը: Հայկական Կարմիր բանակի վերակազմավորումը տեղի էր ունենում ռուսական կողմի նախաձեռնությամբ և օգնությամբ: Հեկկերն անհրաժեշտ էր համարում երիտասարդ հրամկազմից 300 մարդ ուղարկել Բաքու հրամանատարական դասընթացների համար[162]: «300 մարդ Բաքու տեղափոխելու մասին» Երևան հեռագիր ուղարկվել էր դեկտեմբերի 17-ին: Նույն օրը Բաքու մեկնեց հայ սպաների առաջին վեցյակը, ապա նաև մեծ խմբեր: Դեկտեմբեր և հունվար ամիսների ընթացքում Հայաստանից մեկնեցին 1200-1400 սպաներ: «Կարմիր մարզիչներ պատրաստելու կամ քաղաքական դասընթացներ ավարտելու» փոխարեն նրանք նետվեցին Բաքվի և Ռուսաստանի Ռյազան քաղաքի համակենտրոնացման ճամբարներ: Հայաստանի Կարմիր բանակի վերակազմավորման ուղղությամբ սկսված հանգիստ գործընթացը վերածեց հայկական բանակի նախկին սպաների քաղաքական բռնաճնշման, որի կենսագործմանը հնազանդորեն լծվեցին Հայաստանի որոշ ղեկավարներ, իսկ հանրապետության գինկոմ Ավիս Նուրիջանյանը համարձակվեց այն ներկայացնել որպես հայ սպաների շահերից բխող միջոցառում, թե հարկավոր էր «արմատապես ջարդել հին վարչակազմը և Խորհրդային Հայաստանը բեռնաթափել սպայությունից»[163]:

Ինչևէ, հայկական բանակի վերակազմավորումը շարունակվում էր: Հին բանակի հինգ հետևակային և մեկ հեծյալ բրիգադների (14 գնդով) փոխարեն, շուրջ 40 հազար անձնակազմով (1920թ. պատերազմի ժամանակ), 1921թ. հունվարին ՀՍԽՀ Կարմիր բանակը բաղկացած էր երեք հետևակային բրիգադից (6 գնդով), մոտ 7000-անոց անձնակազմով[164]: Հայաստանի բանվորա-գյուղացիական իշխանությունը, գրել է «Կոմունիստ» թերթը, ոչ մի ջանք չէր խնայում դասակարգային հիմունքներով կազմակերպելու և ուժեղացնելու իր Կարմիր բանակը[165]:

1921թ. փետրվարյան ապստամբությունը և քաղաքացիական կռիվները փորձություն դարձան հայկական բանակի համար: Որոշ ստորաբաժանումներ փաստորեն կազմալուծվել էին, մյուսները աչքի ընկան մարտերում և ռուսական բանակի զորամասերի հետ միասին ապահովեցին խորհրդային իշխանության հաղթանակն ապստամբների նկատմամբ:

---

[162] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 21, թ. 18:
[163] Комунист, 29 января 1921г.
[164] Կլիմենտ Հարությունյան, Հայկական առաջին զորամիավորումները 1918-1945թթ., Երևան, 2002, էջ 84:
[165] Կոմունիստ /Երևան/, 1 փետրվարի, 1921թ.:

1921թ. մայիսի դրությամբ նրա շարքերում հաշվվում էր 6669 մարդ: Հայկական բանակի անձնակազմում էին նաև Առանձին հայկական հեծյալ գունդը, որը վերակազմավորվեց Առանձին հեծյալ բրիգադի, ինչպես նաև Լոռու հատուկ հրաձգային գունդը, որոնք 1921թ. փետրվար-մարտին մասնակցել էին Լոռու ազատագրմանը և Վրաստանի խորհրդայնացմանը[166]: Հայկական բանակը մարտական գործողությունների փորձ ձեռք բերեց նաև Զանգեզուրում Գարեգին Նժդեհի գլխավորած ինքնապաշտպանական պայքարը ճնշելու ժամանակ:

Հայաստանի զինված ուժերն իրենց լուման ներդրեցին երկրի խաղաղ ստեղծագործական զարգացման պայմաններ ապահովելու ուղղությամբ:

11-րդ բանակի, որը 1921թ. մայիսից կոչվում էր Առանձին կովկասյան բանակ, հրամանատարության կողմից պահանջվում էր կատարել հայկական բանակի այնպիսի վերակառուցում, որպիսին տեղում հանդիպում էր առարկության: Այդ մասին վկայում են հեղկոմի նախագահ Կասյանի և զինկոմ Ավիս Նուրիջանյանի հեռագրերը Օրջոնիկիձեին: Կռիվների ավարտով վերանում էր բազմանդամ բանակ ունենալու անհրաժեշտությունը: Այն կրճատվեց բարձր տարիք ունեցողների հաշվին, երբ (կռիվների ժամանակ) բանակի անձնակազմը բարձրացել էր մինչև 15 հազարի: Բանակի վերակազմավորման նոր փուլին անցնելուց առաջ Հայաստանում որպես ժողկոմխորհի նախագահ և հանրապետության զինկոմ աշխատանքի անցավ կուսակցական և ռազմական հմուտ գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը: Նա մեծ նշանակություն էր տալիս նոր տիպի բանակի ստեղծման գործին և մշտապես զբաղվում էր նրա վերակազմավորման խնդիրներով: Անդրկովկասի հանրապետությունների զինված ուժերի թվական կրճատմանը, ըստ ընդունված որոշման, հաջորդելու էր ազգային բրիգադների կազմակերպումը: 1922թ. սկզբին արդեն առկա էր Հայկական հավաքական բրիգադը, որը շուտով վերանվանվեց Հայկական առանձին հավաքական բրիգադ, իր կազմում ունենալով երկուական հրաձգային ու հեծյալ գունդ, հրետանային դիվիզիոն և այլ ստորաբաժանումներ[167]:

1921թ. վերջին և 1922թ. սկզբին ծավալվել էին նախապատրաստական աշխատանքները Անդրկովկասի և ամբողջ Ռուսաստանի խորհրդային հանրապետությունների պետական միավորման ուղղությամբ: Ռազմական դաշինքի ստեղծումը այդ միավորման սկիզբը և նա-

---

[166] Կլիմենտ Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ., էջ 107:
[167] Կլիմենտ Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ., էջ 120-121:

խադրյալն էր: 1921թ. դեկտեմբերին այդպիսի դաշինք ստեղծվեց Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև: Համապատասխան համաձայնագիրը ստորագրվեց Թիֆլիսում: Հնարավոր արտաքին ագրեսիայի դեմ համատեղ պայքարելու նպատակով հանրապետությունների զինված ուժերը միավորվում և ենթարկվում էին ընդհանուր հրամանատարությանը, այն է՝ Առանձին կովկասյան բանակի հեղափոխական ռազմական խորհրդին[168]: Նման ռազմական դաշինքի ստեղծումը նշանակում էր, որ Հայկական առանձին հավաքական բրիգադը դառնում էր Ռուսաստանի բանվորագյուղացիական Կարմիր բանակի բաղկացուցիչ մաս: 1922թ. ընթացքում իրականացվեց խորհրդային զինված ուժերի նոր կազմակերպական վերակառուցում, ազգային բրիգադները դարձան դիվիզիաներ: Հայաստանն ուներ իր հրաձգային դիվիզիան, որի հրամանատարն էր գնդապետ Անդրեյ Մելիք-Շահնազարյանը, զինվորական կոմիսարը Վահան Բալյանը, քաղբաժնի պետը՝ Հայկ Հովսեփյանը, շտաբի պետը՝ գնդապետ Վլադիմիր Պրիտոմանովը, այնուհետև շտաբս-կապիտան Վլադիմիր Տամրուչին: Դիվիզիայում տարբեր մակարդակի հրամանատարական պաշտոններ էին զբաղեցնում հայկական զինված ուժերի բազմաթիվ հին սպաներ[169]:

Հանրապետության նախկին կոմիսար Գայը (Հայկ Բժշկյան) զինվորական կոմիսարիատի վերացումը և ռուսական բանակի օրինակով ու նմանությամբ դիվիզիայի կազմակերպումը համարում էր անցումային շրջան միացյալ ուժերի կազմավորման հաջորդ փուլում դիվիզիայի լրիվ ծուլման համար[170]:

Հայաստանի դիվիզիայի կազմավորումը նրա զինված ուժերի վերակազմավորումների ավարտն էր: 1922թ. վերջին, ԽՍՀՄ ստեղծման պահին դիվիզիան ուներ երկու հրաձգային և մեկ հեծյալ գունդ, մեկ հրետանային դիվիզիոն: Խորհրդային Միության ստեղծումը նոր իրադրություն էր նշանավորում Հայաստանի զինված ուժերի պատմության մեջ: Հետագայում նա հայտնի էր որպես Հայկական 76-րդ Վորոշիլովի անվան կարմրադրոշ լեռնահրաձգային դիվիզիա, որն առավել աչքի ընկավ Հայրենական մեծ պատերազմում:

Բանակի նյութական մատակարարման գործում Հայաստանը կրում էր մեծ դժվարություններ: Որոշ ժամանակ, մինչև 1922թ. սեպտեմբերը, այդ մատակարարումը կազմակերպվում էր Առանձին կովկասյան բա-

---

[168] Նույն տեղում, էջ 122:
[169] Կլիմենտ Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ., էջ 124-129:
[170] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 116:

նակի միջոցով: ՀԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը նույն ամսում դիմելով ՈԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Ստալինին և Ռուսաստանի Ռազմահեղափոխական խորհրդին, խնդրում էր վերականգնել Հայաստանի կարմիր զորամասերի մատակարարման նախկին կարգը[171]:

Այսպիսով արդեն 1922թ. վերջերին Խորհրդային Հայաստանի զինված ուժերը, որպես պետականության անհրաժեշտ հատկանիշ, կայացել էին:

[171] Նույն տեղում, Ֆ. 113, ց. 3, գ. 157, թ. 36:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1923-1928 թթ.)

Գլուխ IV. Սոցիալ-տնտեսական տեղաշարժեր

1. Տնտեսության վերականգնումը

Անդրկովկասյան դաշնության ստեղծումը և նրա միջոցով ԽՍՀՄ մեջ Հայաստանի մուտքը նպաստավոր պայմաններ էին ստեղծում համատեղ ուժերով հանրապետության տնտեսության վերականգնման, ինչպես նաև մշակութային ու քաղաքական զարգացման համար: ԽՍՀՄ կազմավորումը դիտվում էր որպես ազգային հարցի լուծման ձև, նոր փուլ Ռուսաստանի ազգությունների ու ժողովուրդների պատմության մեջ: Խորհրդային իշխանության պայմաններում ազգային հարցում ՌԿ(բ)Կ խնդիրները որոշվեցին նրա 10-րդ (1921 թ.) և 12-րդ (1923 թ.) համագումարներում: Առաջին համագումարի ժամանակ, չնայած ԽՍՀՄ-ը դեռևս չկար, այնուամենայնիվ ՌԿ(բ)Կ –ն բոլոր խորհրդային հանրապետությունների նկատմամբ իր վերաբերմունքը և քաղաքականությունը դիտում էր նրանց, որպես ապագա ընդհանուր պետության անդամների, տեսանկյունից: Հայաստանը համարվում էր այնպիսի երկիր, որը այս կամ այն չափով անցել էր արդյունաբերական կապիտալիզմի շրջանը: Զարգացման տեսակետից դա միջին մակարդակ էր բազմազգ Ռուսաստանի ժողովուրդների շարքում: Խորհրդային իշխանությունը հռչակեց ժողովուրդների իրավահավասարություն, իսկ ազգերի ինքնորոշման իրավունքը Կոմունիստական կուսակցությունը դարձրեց միջոց ընդհանուր պետության մեջ խորհրդային հանրապետությունների կամավոր միավորման համար: Իրավական հավասարությանը հաջորդելու էր ժողովուրդների փաստական անհավասարության վերացումը: 10-րդ համագումարը պահանջեց հասնել հավասարության նաև հասարակական ու տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում, զարգացնել արդյունաբերությունը, գործարանները հումքի աղբյուրներին մոտեցնելով: Ազգային քաղաքականության մեջ կուսակցությունը մեծ նշանակություն էր տալիս քաղաքական խնդիրներին, ինչպես՝ պայքարը մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ:

12-րդ համագումարի բանաձևում բերված է Վրաստանում և Ադրբեջանում հայերի դեմ ուղղված շովինիզմի օրինակը, ինչպես նաև տեղ է գտել «հայկական շովինիզմ» արտահայտությունը: Պարզվում է, որ վերջինս բանաձևի նախագծում չի եղել, և որ այն մտցվել է Սարգիս Լուկաշինի առաջարկությամբ: Ստալինը, ասես ծաղրելով այդ, իր եզրափակման խոս-

քում նշել է. «Հայ ընկերները ուզեցին, որ հայերը չնեղանան, որպեսզի նրանց շովինիզմի մասին նույնպես հիշատակեն»:

ԽՍՀՄ-ի ստեղծումից հետո Հայաստանի տնտեսական հարցերը, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը, Անդրդաշնության միջոցով, դարձավ ենթակա ու բաղկացուցիչ մաս ընդհանուր միութենականի:

1924 թ. հունվարին Անդրկովկասյան խորհուրդների 2-րդ համագումարը հաստատեց (վավերացրեց) ԽՍՀՄ Սահմանադրությունը (հիմնական օրենքը) և դաշնության բոլոր պետական մարմիններին ու հիմնարկություններին պարտավորեցրեց իրենց գործունեության մեջ ղեկավարվել այդ սահմանադրության համաձայն:

ԽՍՀՄ Սահմանադրության ընդունումից հետո, որ կատարվեց խորհուրդների համամիութենական 2-րդ համագումարի կողմից նույն թվականին, վերջնականապես սահմանվեցին (ստորաբաժանվեցին) պետական-տնտեսական կառավարման գործառույթները ԽՍՀՄ-ի, Անդրդաշնության ու ՀՍԽՀ-ի միջև և համապատասխան փոփոխություններ կատարվեցին Անդրկովկասի ու Հայաստանի սահմանադրություններում: Անդրկովկասյան փոփոխված սահմանադրությունը հաստատվեց նրա խորհուրդների 3-րդ համագումարում 1925 թ. ապրիլին (ընդունել էր Անդրկենտգործկոմի նստաշրջանը 1924 թ. սեպտեմբերին): Սահմանադրությունը պահպանում էր (բաժին առաջին) ԱԽՖՍՀ-ի կազմավորման մասին հռչակագիրը (դեկլարացիա): Երկրորդ գլուխը նվիրված էր Անդրկովկասի հանրապետությունների «սուվերեն» իրավունքներին: Վերջիններս իրենց սահմանադրությունները համապատասխանության էին բերելու Անդրկովկասի ու ԽՍՀՄ-ի սահմանադրությունների հետ: Նորություն էր քաղաքացիության մասին հոդվածը: Սահմանվում էր ԱԽՖՍՀ քաղաքացիություն: Հանրապետությունների քաղաքացիները միաժամանակ ԱԽՖՍՀ և ԽՍՀՄ քաղաքացիներ էին:

Հանրապետության խորհուրդների 4-րդ համագումարը (1926 թ.) նոր փոփոխություններով ընդունեց ՀՍԽՀ ամբողջական սահմանադրությունը և Կենտգործկոմին հանձնարարեց փոփոխություններ կատարել տեղական խորհուրդների և ընտրական իրավունքների ընդլայնման ուղղությամբ: Դա կապված էր 1920-ական թվականների կեսերին ամբողջ երկրում անցկացվող, այսպես կոչված, «Նոր Նէպի» և «Երեսով դեպի գյուղ» քաղաքականության հետ, որի իմաստը Նէպի խորացումն էր: Նշենք, որ այդ քաղաքականությունն ուներ սահմանափակ և ժամանակավոր բնույթ: Ելնելով նոր պահանջներից՝ հանրապետության խորհուրդների 5-րդ համագումարը (1927 թ.) հաստատեց սահմանադրության փոփոխությունները, որ կատար-

վել էին տեղական իշխանության խորհուրդների ընտրությունների և բյուջեի մասին գլուխներում[1]:

Իրականում, չնայած հիմնական օրենքի ճիշտ դրույթներին, ԽՍՀՄ-ը դառնում էր խիստ կենտրոնացված, դաշնային միությանը խորթ, միաձույլ պետություն: Միութենական հանրապետությունների իրավունքները դառնում էին ձևական: Դրա դեմ յուրաքանչյուր արտահայտություն պատժվում էր խստորեն, որպես «ազգայնական թեքում»: Դրա առաջին արտահայտություններից էր, այսպես կոչված, «Սուլթան-Գալիևի գործը» (ԽՍՀՄ ազգությունների գործերի ժողկոմատի կոլեգիայի անդամ, ազգությամբ թաթար): Նրա գործունեությունը 1923 թ. հունիսին Մոսկվայում կայացած համամիութենական կուսակցական խորհրդակցությունը որակեց որպես դեպի նացիոնալիզմ թեքման «այլանդակ արտահայտություն»[2]:

Խորհրդակցությունը ՌԿ(բ)Կ 12-րդ համագումարի որոշումների ոգով մի անգամ ևս անդրադարձավ մեծապետական շովինիզմի ու տեղական նացիոնալիզմի դեմ պայքարի խնդիրներին: Խորհրդակցությանը ներկա էին ԽՍՀՄ ազգային շրջանների, նաև Անդրկովկասյան դաշնության ու Հայաստանի ներկայացուցիչները: Հունիսի 22-ին Անդրերկրկոմի քարտուղար Ալ. Մյասնիկյանի ՀԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած հեռագրից տեղեկանում ենք որոշ մանրամասների[3]: Խորհրդակցությունում, կարդում ենք հեռագրում, «բացահայտվեց հանրապետությունների ազգայնացման անցկացման ամբողջ պատկերը»: Պարզվեց, որ այդ տեսակետից առաջին տեղում է Վրաստանը, հետո Հայաստանն է, ապա Թաթարիան, Ադրբեջանը և այլն: Համարվել է, որ Անդրկովկասն ունի բավարար նյութական ու ֆինանսական միջոցներ: Ֆիլիպ Մախարաձեն (Վրաստանի կառավարության նախագահ) հանդես եկավ, այնուհետև ասված է հեռագրում, «վառ նացիոնալիստական ճառով, որը գլխավորապես նվիրված էր, այսպես ասած, հայերի իշխող տիրապետությանը Վրաստանում և Անդրկովկասում»:

Փաստորեն Մախարաձեն արտահայտել է հակահայկական այն տրամադրություններն ու վարքագիծը, որ գոյություն ուներ Վրաստանի կոմկուսի ղեկավարության մեջ, հանձին Բուդու Մդիվանու ղեկավարած խմբի, որը, դեմ լինելով ԽՍՀՄ-ի կազմակերպմանը (այն համարելով վաղաժամ), միաժամանակ շովինիստական հալածանքի քաղաքականություն էր վարում հայ բնակչության նկատմամբ Վրաստանում:

---

[1] С. Хармандарян, К. Худавердян. Съезды Совстов Армении. 1922-1937 гг., Ереван, 1963.
[2] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: Մաս 1, Երևան, 1954, էջ 973:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 73, թ. 7:

Խորհրդակցությունում զեկուցումով հանդես է եկել նաև Հայաստանի կառավարության նախագահ Սաքո Համբարձումյանը, սակայն հեռագիրը դրա բովանդակության մասին տվյալներ չի տալիս:

1923 թ. ստեղծվեց ԽՍՀՄ բարձրագույն իշխանության՝ միապալատանի Կենտգործկոմի նաև երկրորդ՝ ազգությունների պալատ: Դա արտացոլումն էր ազգային շահերի պաշտպանության և ԽՍՀՄ-ի՝ որպես բազմազգ միութենական պետության: Այդ պետության մեջ հաստատվել և ամրապնդվում էր բոլշևիկների կուսակցության մենատիրությունը, և որը սկսում էր աստիճանաբար պետական մարմինների իշխանությունը փոխարինել իր իշխանությամբ:

***

Խորհրդայնացման պահին Հայաստանը գտնվում էր սոցիալ-տնտեսական անասելի ծանր պայմաններում: 1914-1921 թթ. ընթացքում Հայաստանի տնտեսությունը անընդհատ հետադիմել ու քայքայվել էր: Նախկին ցարական Ռուսաստանի գաղութային ծայրամաս Հայաստանն ուներ հետամնաց տնտեսություն: Կանգ էին առել հատուկենտ արդյունաբերական ձեռնարկությունները: Չէին գործում Ալավերդու ու Ղափանի պղնձի հանքերն ու գործարանները, իսկ նրանց վերականգնման համար պահանջվում էին մեծ ներդրումներ, որ վեր էին հանրապետության ուժերից: Գինու և կոնյակի արտադրությունը, որը արդյունաբերության մյուս կարևոր ճյուղն էր, խիստ կրճատվել էր այգեգործության անկման պատճ առով: Երկաթուղային տրանսպորտի մասին խոսք լինել չէր կարող, քանի որ նրա գույքը թալանվել էր թուրքական զավթիչների կողմից: Ողբալի վիճակում էր տնտեսության հիմնական ճյուղը հանդիսացող գյուղատնտեսությունը: «Սա ամենադաժան, ամենադժբախտ երկիրն է Անդրկովկասում», գրել է Ալ. Մյասնիկյանը 1921 թ. Հայաստանի մասին[4]:

Հետևյալ մի քանի տվյալները կօգնեն մոտավոր գաղափար կազմելու 1920-ական թվականների սկզբին հանրապետության սոցիալ-տնտեսական դրության մասին: 1913-1919 թթ. ընթացքում արդյունբերության համախառն արտադրությունը (դրամական արտահայտությամբ) կրճատվել էր 12 անգամ, էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 3 անգամ: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը պակասել էր 6 անգամ, ցանքատարածությունները՝ 3 անգամ: Խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը (1916-1920 թթ.) քիչ էր՝ համապատասխանաբար 2,7 և 3,5 ան-

---

[4] Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 336:

գամ: Վերացել էին բամբակի ցանքատարածությունները: Շարքից դուրս էր եկել ոռոգման համակարգը[5]:

Գյուղացին անկարող էր վարել տնտեսությունը, զրկված լինելով արտադրության միջոցներից: 1922 թ. կատարված գյուղատնտեսական վիճակագրության տվյալները ներկայացնում են գյուղացու տնտեսական ու սոցիալական ծանր դրության պատկերը: Լոռու, Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և Էջմիածնի գավառներում հողազուրկ էր գյուղացիության 13 տոկոսը, ցանքազուրկ 32 տոկոսը, լծկան անասուններից զուրկ էր 56,1 և գյուղատնտեսական գործիքներ չուներ 46,1 տոկոսը[6]:

Հիմնովին ավերվել էր Ալեքսանդրապոլի գավառը, որտեղ թուրքերը թալանել էին ամեն ինչ, ավերակ դարձնելով տասնյակ գյուղեր, կոտորելով տասնյակ հազարավոր խաղաղ բնակիչներ, հատկապես գյուղական: 1921 թ. ապրիլին գավառի ազատագրումից հետո հայտնաբերվեց թշնամու կողմից սպանված շուրջ 12 հազար մարդու դիակ, գերազանցապես կանայք, երեխաներ ու ծերեր: Դա հայ ժողովրդի ցեղասպանության շարունակումն էր քեմալական Թուրքիայի կողմից: Գերության էին քշվել աշխատունակ տղամարդիկ:

ՀՍԽՀ ժողկոմխորհի հանձնաժողովը պարզել և հաշվարկել է այն վնասը, որ կրել էին Անդրկովկասի հայկական գավառները 1914-1921 թթ. ընթացքում թուրքական արշավանքների և, ընդհանրապես, առաջին աշխարհամարտի հետևանքով[7]:

Էական նշանակություն ունեին մարդկային կորուստները, մասնավորապես աշխատունակ տղամարդկանց թվի կրճատումը, որպես պատերազմական զոհերի և գերևարության արդյունք: 1913 թ. շուրջ մեկ միլիոնի դիմաց[8] 1922 թ. Հայաստանում հաշվվում էր 780 հազար մարդ, որից 220-225 հազարը գաղթականությունն էր (հայ և այլազգի), այսինքն ընդհանուր թիվը կրճատվել էր ավելի քան մեկ հինգերորդ մասով: Գաղթականությունը, որի մեջ 40-50 հազարը որբ երեխաներ էին, ավելի էր խստացնում աղքատության ու չքավորության պատկերը, դժվարացնում տնտեսության վերականգնումը: «Եթե վերցնենք Հայաստանը,- գրել է «Զարյա Վոստոկա» թերթը,- կտեսնենք, որ համարյա նրա ազգաբնակչության մեկ հինգերորդը

---

[5] Социалистическое строительство Армянской ССР. Статистический сборник. Ереван, 1940, с. 23.
[6] ՀԱԱ, ֆ. 163, ց. 1, գ. 2037, թ. 8-37:
[7] В. Казахецян, О материальном ущербе, нанесенномн армянскому народу в Закавказье и в Карской области турецкими интервентами. «Լրաբեր», 1987, թիվ 2, էջ 81-88:
[8] Итоги Всесоюзной переписи населения 1958 г. Армянская ССР, М., 1963, с. 11.

գաղթականներ են»: Խորհրդային առաջին մարդահամարի՝ 1926 թ. տվյալներով հանրապետության բնակչությունը հասել էր 881 հազարի: Ավելացումը տեղի էր ունենում մեխանիկական (հայրենադարձություն) և բնական աճի շնորհիվ, աստիճանաբար մոտենալով նախապատերազմյան ցուցանիշին:

Բնակչության, հատկապես չքավորության, զգալի մասը անկարող էր իրեն պահել, չունենալով ապրուստի միջոցներ: Այն հոգում էին աղքատ պետությունը և բարեգործական կազմակերպությունները, որոնց թվում կարևոր դեր պատկանում էր Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեին:

Այսպիսով Հայաստանի տնտեսության վերականգնումը սկսվում էր խիստ ցածր մակարդակից, գրեթե դատարկ տեղից:

Տնտեսության վերականգնմանը օգնության եկան տնտեսական լծակները, որպիսիք են Նեպ-ը և խորհրդային հանրապետությունների նյութական ջանքերի համատեղումը (պետական միավորումը):

1921 թ. Նեպն ընդունվել էր պարենհարկի ձևով: Հարկը պարենամթերքով գանձելը պայմանավորված էր ապրանքադրամական շրջանառության գրեթե բացակայությամբ, դրամանիշների արժեքի անկումով: Դրամի համեմատությամբ ապրանքի գերակայությունը պետության համար կարևոր էր քաղաքային բնակչության և բանակի սուղ պահանջները բավարարելու համար:

Հայաստանում 1921 թ. պարենհարկը գանձվում էր բոլոր տեսակի գյուղատնտեսական ապրանքներից: Դա մեծ անհարմարություններ էր ստեղծում և՝ հարկային մարմինների, և գյուղացու համար: 1922 թ. գործածության մեջ մտավ գյուղմիասհարկը: Միասնական հարկը գյուղացուն թույլ էր տալիս բոլոր տեսակի գյուղատնտեսական մթերքների փոխարեն այն վճարել իր ուզած ապրանքով կամ ապրանքներով: Բայց երկու դեպքում էլ գյուղացին վճարում էր բնամթերային ձևով: Հարկային համակարգում փոփոխություն կատարվեց 1923 թ. ՌԿ(բ)Կ 12-րդ համագումարի որոշմամբ («Գյուղում հարկային քաղաքականության մասին»): Արձանագրելով շուկայական հարաբերությունների որոշ աշխուժացման փաստը, համագումարը անհրաժեշտ համարեց նոր քայլեր կատարել նրա հետագա զարգացման, «գյուղացու համար իր աշխատանքի արդյունքները ազատ տնօրինելու հնարավորությունն ընդլայնելու գործում»: Դրան նպաստելու էր գալիս հարկը նաև դրամական ու խառը (բնամթերքով կամ դրամով) ձևով գանձելու իրավունքը: Գյուղացու տնտեսական ազատությունն ուներ նաև քաղաքական նպատակ, այն է՝ ամրապնդել քաղաքի ու գյուղի փոխ-

հարաբերությունը, բանվորների ու գյուղացիների դաշինքը, որը համարվում էր խորհրդային իշխանության կայունության հիմնական պայմանը:[9]

Տվյալ ժամանակաշրջանում տնտեսության վերականգնման հիմնական օղակը գյուղատնտեսությունն էր, որն ապահովելու էր նաև արդյունաբերության վերականգնումը: 12-րդ համագումարը որոշում ընդունեց Նեպի պայմաններում արդյունաբերության բնագավառի խնդիրների մասին[10]:

Վերջինիս նշանակությունը կապի մեջ էր դրվում պրոլետարիատի դիկտատուրայի «անսասան հիմքի» ստեղծման հետ: «Պետական արդյունաբերության միջով է անցնում,- ասված է համագումարի որոշման մեջ,- սոցիալիստական հասարակարգ տանող ուղին»: Տվյալ բնագավառի խնդիրներից էին պլանային տնտեսության ուժեղացումը, տնտեսական կազմակերպությունների (տրեստ, ֆաբրիկա, գործարան) անհրաժեշտ ազատությունը շուկայում, ազգային հանրապետությունների շահերի ու իրավունքների հաշվի առնելը հիմնական տնտեսական հարցերը լուծելիս:

Նեպի կենսագործումը նշանակում էր նախ և առաջ ձեռնամուխ լինել հարկային օրենսդրության մշակմանը:

Ընդհանրապես, պետք է ասել, որ 1920-ական թվականներին գրեթե ամեն տարի ընդունվում էին հարկային նորանոր որոշումներ (դեկրետներ): Բանն այն է, որ անհրաժեշտ էր հարկային քաղաքականությունը կատարելագործել, իսկ դրա անհրաժեշտությունը չէր սպառվում: Կատարելագործման հիմքում դրված էր հարկն ըստ եկամտի որոշելը և դասակարգային սկզբունքի կենսագործումը: 1920-ական թվականների առաջին տարիներին իշխող էր արտաքին նշաններով ղեկավարվելը (ցանքի տարածություն, անասունների գլխաքանակ այն ցանքի վերածելով): Եկամտային սկզբունքը սկսեց կենսագործվել ավելի ուշ, երբ հնարավոր դարձավ ունենալ համապատասխան վիճակագրական տվյալներ:

ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը սահմանեցին 1923 թ. գյուղմիասիարկի սկզբունքները: Այդ նպատակով ստեղծվեցին անդրկովկասյան և հանրապետական հանձնաժողովներ, ղեկավար կուսակցական և խորհրդային աշխատողների մասնակցությամբ[11]: Հանձնաժողովների մշակած սկզբունքները դրվեցին Անդրկենտգործկոմի և ժողկոմխորհի 1923

---

[9] ՍՍԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: Մաս 1, Երևան, 1954, էջ 901-906:

[10] Նույն տեղում, էջ 879-901:

[11] Վրաստանի Նախագահի արխիվ, ֆ. 13, ց. 1, գ. 185 (մաս 1-ին), թ. 62-63: ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 9, թ. 1:

թ. ապրիլի 23-ի դեկրետի հիմքում[12]: Այդ սկզբունքներն էին՝ առաջադիմական-եկամտային հարկը, դրամական հարկի մասնակի կենսագործումը: Միասնական հարկը նշանակում էր, որ բազմաթիվ հարկերի փոխարեն (միասնական բնատուրք, աշխատափոխադրահարկ, դպրոցական հարկ, ծխահարկ և այլն) սահմանվում էր մեկ միասնական գյուղատնտեսական հարկ: Անդրդաշնության ղեկավար մարմինները հաստատեցին նաև հարկը դրամով գանձելու շրջանները: Այս շրջաններում թույլատրվում էր հարկը վճարել բնամթերքով կամ դրամով[13]: Որոշում ընդունվեց նաև հարկը տաս տոկոսով կրճատելու մասին, այն իրականացնելով չքավոր տնտեսություններին հարկից ազատելով[14]:

Արտոնություն սահմանվեց նաև գյուղատնտեսության առանձին ճյուղերի, օրինակ՝ բամբակագործության, շերամապահության և մեղվապահության համար՝ խրախուսելու դրանց վերականգնումը և զարգացումը:

Դրամով հարկի գանձման հաջողությունները և շուկայական հարաբերությունների ընդլայնումը թույլ տվեցին 1924 թ. հունվարից հրաժարվել բնամթերային ձևից:

Շուկայական-ապրանքադրամական հարաբերությունների ծավալման համար կարևոր նշանակություն ունեցավ դրամական ռեֆորմը, չերվոնեցի (կայուն արժեքով դրամ) տարածումը:

Մամուլում պաշտոնապես ամփոփվել է 1921-1923 թթ. հարկային քաղաքականության փորձը: 1921 թ. կիրառվել էր պարենտուրքը, 1922 թ. միասնական պարենտուրքը և 1923 թ. գյուղմիասհարկը: 1921 և 1923 թթ. հարկադրումը կրկնությունն էր ռուսաստանյան առաջադիմական սկզբունքի, որը խախտվեց 1922 թ., փոխարինվելով հավասարեցման սկզբունքով: Վերջինն ուղղակիորեն նպաստեց, որ հողը մշակվի և դրվի ցանքի տակ: Ի տարբերություն Ռուսաստանի՝ Հայաստանում ընտանիքի շնչերի թիվը, չնայած օրենքի պահանջին, հաշվի չէր առնվում: Պատճառը համապատասխան տվյալների բացակայությունն էր: Հանրապետությունում հողագործությունը և անասնապահությունը հարկվում էին անհամաչափ, հոգուտ վերջինի զարգացման: Այսպես, 1923 թ. հարկի գումարը կազմել էր հողագործության արդյունքի 12,0 և անասնապահության արդյունքի 2,0 տոկոսը[15]:

---

[12] ԱՍՖԽՀ բանվորագյուղացիական կառավարության օրենքների և որոշումների հավաքածու, 1923 թ., մաս առաջին, N 7, էջ 181-186:
[13] Նույն տեղում, N 9, էջ 284-286:
[14] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 58:
[15] Նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 271, թ. 122-136:

Հետագա տարիներին աշխատանք էր տարվում հարկատուների եկամուտների մասին ճիշտ, իրական պատկերացում կազմելու և հարկը հարկատուների կարողությանը մոտեցնելու ուղղությամբ: Տարբեր, երբեմն հակասական են տվյալները խորհրդային և նախախորհրդային ժամանակների հարկերի համեմատության վերաբերյալ: Անդրֆինժողկոմատի տվյալներով ցարական իշխանության ժամանակ Անդրկովկասում գյուղացու հարկի գումարը կազմել էր նրա եկամտի 20,54 տոկոսը, իսկ 1924 թ. 10,0 տոկոսը, այսինքն խորհրդային իշխանության շնորհիվ գյուղացու տնտեսական դրությունը կրկնակի չափով թեթևացել էր[16]:

1924/25 տնտեսական (բյուջետային) տարվա համար ընդլայնվեցին հարկային արտոնությունների սահմանները գյուղատնտեսության այս կամ այն ճյուղի, մասնավորապես անասնապահության համար: ՀԿ(բ)Կ - Կենտկոմի պլենումի որոշումով անհրաժեշտ համարվեց հարկից ազատել գյուղացիական տնտեսությունների 25 տոկոսը (չքավոր և գույքազուրկ տնտեսությունների համար): Տնտեսական տարվա վերջում արձանագրվեց, որ հարկի գումարի գանձման պլանը կատարվել է «բնակչության վճարունակ ուժերի լարումով», որ հարկի գումարը ավելացնելու համար հետագա ճնշումը կարող է հանգեցնել «գյուղացիական տնտեսության հիմքերի քայքայմանը», և դժգոհություն կառաջացնի գյուղացիության լայն շրջաններում: ՀԿ(բ)Կ Կենտկոմը միաժամանակ առաջարկում էր համապատասխան մարմինների միջոցով «կանխել դաշնակցականների և այլ հակահեղափոխական տարրերի կողմից հարկահավաքությունը ծախողելու փորձերը»[17]:

1925 թ. հանձնաժողովները բազմաթիվ խախտումներ և դժվարություններ էին արձանագրել հանրապետության շատ շրջաններում: «Կասկած չկա, որ չքավոր գյուղացին անկարող էր վճարել հարկը, ուստի հարկ էր լինում դիմել ամենախիստ միջոցների» (Լենինականի և Լոռի-Փամբակի գավառների ստուգող հանձնաժողովի զեկուցագիրը ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմ)[18]: Անցյալ տարվա հարկը, արձանագրել է ՀՍԽՀ Տնտխորհը իր 1925 թ. մայիսի 29-ի որոշման մեջ, բոլորովին չէր համապատասխանում գյուղատնտեսության արդյունքներին և «չափազանց ծանր էր գյուղացիության համար»[19]:

Սխալները և դժվարություններն ընդհանուր բնույթ էին կրում միութենական բոլոր հանրապետություններում, ուստի դրանք վերացնելու

---

[16] Խորհրդային Հայաստան, 24 հոկտեմբերի 1924:
[17] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 21-23 և ց. 4, գ. 1, թ. 18: :
[18] Նույն տեղում, ց. 4, գ. 155, թ. 121-125:
[19] Նույն տեղում, ց. 5, գ. 93, թ. 39:

նպատակով ձեռնարկվում էին համամիութենական միջոցառումներ: Այդ ուղղությամբ քայլ էր ԽՍՀՄ Խորհուրդների 2-րդ գումարման Կենտգործկոմի Թիլիսում կայացած 3-րդ նստաշրջանը (1925 թ. մարտ)[20]: Ֆինժողկոմ Բրյուխանովը, արձանագրելով, որ գյուղատնտեսական հարկը շոշափում է երկրի 22 միլիոն գյուղացիական տնտեսությունների շահերը, ավելացրեց, որ 1924/25 (մինչև 1931 թ. տնտեսական տարին հաշվվում էր հոկտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա սեպտեմբերի 30-ը) տնտեսական տարում գյուղատնտեսական հարկը եղել է «չափից ավելի ծանր», ուստի հարկավոր էր այն թեթևացնել[21]:

Նստաշրջանի որոշումները պարզաբանվեցին ՀՍԽՀ խորհուրդների 4-րդ համագումարում (նույն ամսում կայացած), կառավարության նախագահ Ս. Լուկաշինի զեկուցման մեջ[22]:

Համկ(բ)Կ Կենտկոմի 1925 թ. ապրիլյան պլենումը և դրան հաջորդած կուսակցության 14-րդ կոնֆերանսը անհրաժեշտ համարեցին գյուղացիության համար ստեղծել լրացուցիչ խթաններ և կազմակերպել նոր տնտեսական օգնություն: Հիմնական խնդիր էր առաջադրվում ապրանքաշուկայական հարաբերությունների հետագա ծավալման հիման վրա իրականացնել «գյուղացիական տնտեսությունների ամբողջ մասսայի բարձրացում և վերականգնում»[23]: Դա նշանակում էր, որ Նոր տնտեսական քաղաքականությունը շարունակվում էր: Ղեկավարվելով կուսակցական պահանջներով, ԽՍՀՄ խորհուրդների 3-րդ համագումարը (1925 թ. մայիս) մշակեց միջոցառումների համակողմանի ծրագիր, որն իր արտահայտությունը գտավ «Երեսով դեպի գյուղ» կարգախոսում: Կարևոր նշանակություն ունեին հետևյալ քայլերը և ձեռնարկումները. պահանջվում էր վերացնել «ռազմական կոմունիզմի» մնացորդները, ինչպես վարչական ճնշումը ունևոր-կուլակային տնտեսությունների վերին շերտի նկատմամբ, նրանց զարգացման վտանգի հաղթահարումը փոխադրելով տնտեսական դաշտ: Դա իրականացվելու էր աշխատավոր գյուղացիության տնտեսությանն աջակցելով, իսկական օգնությամբ չքավոր ու միջակ տարրերին՝ նրանց տնտեսությունը բարձրացնելու, նյութական դրության և քաղաքական ու կուլտուրական բարձրացման համար: Տնտեսական լուրջ օգնություն էր գյուղի հարկային ծանրաբեռնվածության թեթևացումը. 1925/26 տարվա

---

[20] ՍԽՀՄ բանվորագյուղացիական կառավարության օրենքների և կարգադրությունների ժողովածու: 1925 թ., N 17, առաջին մաս, էջ 2-9:
[21] «Խորհրդային Հայաստան», 12 մարտի 1925:
[22] ՀՍԽՀ խորհուրդների չորրորդ համագումարը (1925 թ. մարտի 12-15): Սղագրական հաշվետվություն: Երևան, 1926:
[23] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: Մաս 2, Երևան, 1955, էջ 149:

գյուղմիասիարկը նախատեսված 470 միլիոն ռուբլուց իջեցվում էր 280 միլիոնի (նախորդ տարվա 400 միլիոն ռուբլու դիմաց), որից 100 միլիոնը հատկացվում էր տեղական բյուջեների ստեղծմանը: Քաղաքական ազատությունների շարքում կարևոր էր ընտրական իրավունքի սահմանների ընդլայնումը և այլն[24]:

1925 թ. ծեռնարկումներն այնքան տպավորիչ էին, որ նույնիսկ դրանք անվանում էին «Նոր Նեպ», իսկ ռուսական տարագրության շրջանում հանձին «սմենովեխականության» ("Смена вех" ամսագրի անունով), հույսեր էին կապում ԽՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնման հետ:

Նշված որոշումներում ընդգծվում էր խորհրդային իշխանության քաղաքականության դասակարգային բնույթը ամեն կերպ նպաստել չքավոր և միջակ գյուղացիության տնտեսական զարգացմանը, չվախենալ ունևոր տնտեսությունների զարգացումից, կուլակի դեմ պայքարել տնտեսական (և ոչ վարչական) միջոցներով: Այդ նպատակով ընդունվեցին լրացուցիչ օրենքներ ու որոշումներ աշխատավորական և կուլակային տնտեսությունների տարանջատման (հողի վարձակալության և օժանդակ վարձու աշխատանք թույլ տալու և վերջինի չափի) մասին: Այս առնչությամբ ուշագրավ է ԽՍՀՄ Կենտգործկոմի քարտուղար Ենուկիձեի խոսքը, թե «ուժեղ գյուղացին կուլակ չէ»[25]: Դա արտահայտվեց նաև կուսակցական ղեկավար գործիչ Ն. Բուխարինի «Հարստացեք» կոչում, որից նա, սակայն, շուտով հրաժարվեց: Հնչում էին նաև ձայներ կուլակի վտանգի և նրա դեմ հարձակումն ուժեղացնելու անհրաժեշտության մասին:

«Երեսով դեպի գյուղ» շրջադարձի մասին որոշումները քննարկվեցին Անդրկովկասյան դաշնությունում և Հայաստանում, մշակելով դրանք իրականացնելու միջոցառումներ: Հուլիսի սկզբին Թիֆլիսում կայացավ Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների խորհրդակցությունը[26], որի առաջարկությունները դարձան ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի որոշում[27]: «Կուսակցությունը և խորհրդային իշխանությունը,- ասված է նրանում,- առաջին պլան են մղել «Երեսով դեպի գյուղ» կարգախոսի կենսագործումը: Դա նշանակում է, որ արդյունաբերության և խորհրդային հանրապետությունների ֆինանսատնտեսական առողջացման նվաճումների

---

[24] ՍԽՀՄ բանվորագյուղացիական կառավարության օրենքների և կարգադրությունների ժողովածու: 1925 թ., N 35, առաջին մաս, էջ 7-32:
[25] Խորհրդային Հայաստան, 10 հունիսի 1925:
[26] Վրաստանի Նախագահի արխիվ, ֆ. 13, ց. 1(մաս 1-ին), գ. 990, 991, 992:
[27] Նույն տեղում, գ. 993, թ. 856-866 ("Совещание о мероприятиях по поднятию и укреплению крестьянского хозяйства (стенографический отчет". Изд. ЗКК РКП(б), Тифлис, 1925, с. 152-155).

հիման վրա խորհրդային իշխանությունը ամենամեծ ուշադրությունն է նվիրում գյուղատնտեսության ընդհանուր և անմիջական կարիքներին»:

ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը իր ելույթներում պարզաբանում էր, թե պետք է լիովին հրաժարվել «ռազմական կոմունիզմի» շրջանում կիրառվող «մեր մեթոդների մնացորդներից», որ անհնար է վարչական եղանակով կռվել «գյուղի զարգացող ապրանքային տնտեսությունից անխուսափելիորեն բխող շերտավորման դեմ»: «Գյուղի շերտավորման և բուրժուական վերնախավի» վտանգի դեմ պայքարի միջոցը, ըստ Լուկաշինի, գյուղացիության հիմնական զանգվածների բարձրացումն էր կոոպերացիայի միջոցով: Իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1925 թ. հունիսյան պլենումում նա ունևոր և հարուստ գյուղացիների միջոցով գյուղատնտեսության զարգացումը վտանգավոր չէր համարում, երբ երկրում առկա էր բանվոր դասակարգի տիրապետությունը և որի ձեռքում էին գտնվում տնտեսության գլխավոր միջոցներն ու լծակները[28]:

Տեղին է նշել, որ ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Սարգիս Լուկաշինը լավագույն տնտեսվար էր և մեծ ծառայություններ ունի Հայաստանի տնտեսական ծրագրերի մշակման և դրանց իրականացման գործում: 1925 թ. հունիսին նա ղեկավար աշխատանքի փոխադրվեց Անդկովկասյան դաշնություն:

«Երեսով դեպի գյուղ» ծրագիրը, չնայած գյուղացուն տալիս էր միայն սահմանափակ ազատություն, այնուամենայնիվ խթանում էր նոր տնտեսական քաղաքականության հիման վրա տնտեսության վերականգնմանը և զարգացմանը: Այդ ազատությունը, սակայն, շարունակական չեղավ և 1920-ական թվականների վերջին երկրի կուսակցական ղեկավարությունը հրաժարվեց նրանից: Ինչևէ, մինչև 1928-1929 թթ. նշված ծրագիրը այս կամ այն չափով գործում էր և տալիս էր դրական արդյունքներ: Մասնավորապես շարունակվում էր ծրագրի բաղկացուցիչ մաս կազմող հարկային քաղաքականությունը:

Վիճակագրական տվյալների անբավարարությունը դեռևս թույլ չէր տալիս անցնելու ըստ եկամտի հարկային արդարացի և ճիշտ սկզբունքի կենսագործմանը: Գյուղմիասհարկի հիմքում շարունակում էր պահպանվել արտաքին հատկանիշներով ղեկավարվելու մոտեցումը (վարելահողի կամ ցանքի տարածությունը, անասունների գլխաքանակը, ծխի շնչերի թիվը և այլն): Եկամտային սկզբունքը առայժմ մասնակիորեն պիտանի էր ճանաչվում նաև գյուղացու սոցիալական բնույթը (չքավոր, միջակ, ունևոր-կուլակ) որոշելիս: Այս դեպքում ևս գործնական կյանքում տարածված էր ար-

---

[28] Խորհրդային Հայաստան, 1925 թ. հունիսի 20 և օգոստոսի 25-ի համարները: ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 1, թ. 20-25::

տաքին հատկանիշների սկզբունքը (ցանքատարածությունը, կովերի գլխաքանակը և այլն):

1926 թ. վիճակագրությունը Հայաստանում գրանցել էր 155 հազար գյուղացիական տնտեսություն (առանց Երևան և Լենինական քաղաքների), 770 հազար շնչերով և 452 հազար հեկտար վարելահողով: Գյուղմիասհարկից ազատվել էր տնտեսությունների 37,6 տոկոսը, որոնց եկամտի տեսակարար կշիռը ամբողջ եկամտի մեջ կազմում էր միայն 16,8 տոկոս[29]: 1925/26 տարում հարկվել էր գյուղատնտեսական եկամուտների 4,2, իսկ հաջորդ 1926/27 տարում՝ 3,8 տոկոսը: Հարկի բաժինը նվազել էր, չնայած գյուղատնտեսությունը զարգացում էր ապրում:

Տնտեսության վերականգնման հաջող ընթացքի, բյուջեում գյուղատնտեսական հարկի տեսակարար բաժնի նվազման շնորհիվ նոր արտոնություններ սահմանվեցին ինչպես գյուղացիության, այնպես էլ երկրի մյուս աշխատավորների համար: Հոկտեմբերյան հեղափոխության 10-րդ - տարեդարձի առթիվ 1927 թ. ԽՍՀՄ Կենտգործկոմն ընդունեց հրովարտակ: Բանվորների և ծառայողների համար սահմանվեց 7-ժամյա (8 ժամի փոխարեն) աշխատանքային օր: Գյուղատնտեսական հարկից ազատվող տնտեսությունների թիվը հասցվեց մինչև 35 տոկոսի (Հայաստանում այն ավելի բարձր էր): Ընդլայնվում էր բնակարանային շինարարությունը:

1926/27 տարվա գյուղմիասհարկի օրենքում ավելի մեծ չափով տեղ էին գտել ԽՍՀՄ խորհուրդների 3-րդ համագումարի պահանջները հարկային օրենսդրության հետագա բարեփոխման, եկամտային սկզբունքի ուղղությամբ շարժվելու մասին: Հայաստանում, սակայն, առայժմ հնարավոր չէր նոր սկզբունքը լայնորեն գործադրել: «Մեր պայմաններում,- նշել է ՀՍԽՀ ֆինլիազոր Վ. Պողոսյանը,- այն չի կարելի կիրառել, որովհետև վճարողների հսկա մեծամասնությունը ինքը չգիտի իր եկամտի չափը և այս պայմաններում նրա եկամուտը հաշվելու համար կհարկավորվեր այնպիսի մի ապարատ, որը կկլաներ հարկի ամբողջ գումարի առյուծի բաժինը»[30]:

1926/27 հարկային տարվա արդյունքները հանգամանալի ուսումնասիրության է ենթարկել բանվորագյուղացիական տեսչության ժողկոմատը, անելով առաջարկություններ ու դիտողություններ հարկային գործի հետագա բարելավման ու կատարելագործման ուղղությամբ[31]:

Եվ, այնուամենայնիվ, հաջորդ (1927/28) տարվա օրենքում որևէ էական փոփոխություն կատարելու հարկ չկար: Չնայած պետական բյուջեի

---

[29] Գյուղատնտեսական կյանք, 1927 թ., N 5, էջ 44:
[30] Խորհրդային Հայաստան, 26 մայիսի 1926:
[31] ՀԱԱ, ֆ. 113, ց. 2, գ. 410, թ. 9-31, ց. 3, գ. 316, թ. 295-304:

աճին զուգընթաց գյուղատնտեսական հարկի դերը նվազել էր զգալի չափով, բայց և այնպես, ինչպես գրել է «Պրավդա» թերթը, դեռևս մեծ էր «հարկի քաղաքական ու տնտեսական նշանակությունը»: «Պրավդան» գյուղհարկը գնահատում էր որպես գյուղի սոցիալական շերտավորումը կարգավորող, գյուղում Կոմունիստական կուսակցության հերթական խնդիրների լուծման միջոցներից մեկը[32]:

Հարկային քաղաքականության մեջ և, ընդհանրապես, ԽՍՀՄ պատմության համար շրջադարձային էին 1928-1929 թվականները, երբ երկրի ստալինյան ղեկավարությունը, կծկելով շուկայական հարաբերությունները և նահանջելով Նեպ-ից, անցավ կառավարման վարչահրամայական եղանակին, վերադառնալով «ռազմական կոմունիզմի» մեթոդներին և տնտեսական, և քաղաքական բնագավառներում: Այդ շրջադարձի առիթ դարձան 1928-1929 թթ. հացամթերման դժվարությունները, երբ հացի պակասի հարցը տնտեսական միջոցներով լուծելու փոխարեն, որը գերադասելի էր ամեն տեսակետից, պետության ղեկավար Ստալինը առաջնությունը տվեց վարչական միջոցներին: Ծավալվեց հարձակումը գյուղի ունևոր-կուլակային խավի նկատմամբ: 1928/29 տարվա օրենքում նորություն էր կուլակության անհատական հարկադրումը: Նոր պայմաններում գյուղում փոքրամասնություն կազմող ունևոր-կուլակային տնտեսություններին բաժին էր ընկնում հարկի գումարի մեծ մասը: Չքավոր-սակավազոր գյուղացիները, որ բնակչության կեսից ավելին էին, ազատվում էին հարկ վճարելուց, իսկ միջակ տնտեսությունների ծանրաբեռնվածությունը դառնում էր տանելի:

Հարկային օրենքով առաջին անգամ որոշվեցին կուլակային տնտեսության հատկանիշները, որոնց հիման վրա ճանաչվում էր գյուղական բուրժուազիան՝ շահագործող տնտեսությունը: Տնտեսական տեսանկյունից դա հանգեցրեց նրան, որ այդպիսի տնտեսությունները արհեստականորեն սկսեցին վերացնել համապատասխան հատկանիշները, խուսափելու համար սոցիալական գնահատականից ու ծանր հարկից: Արդյունքում տուժեց գյուղատնտեսությունը, ընկավ նրա զարգացման տեմպը, կրճատվեց անասունների գլխաքանակը:

1920-ական թվականների հարկային քաղաքականության փորձը պետք է գնահատել դրական: Այն միջոց էր ծառայում, որով կուսակցությունը և պետությունը ձգտում էին ցանկալի ուղղություն տալ գյուղի սոցիալական զարգացմանը (սոցիալական շերտավորմանը), շահագրգռել գյուղացուն նրա տնտեսության վերականգնման գործում:

---

[32] Խորհրդային Հայաստան, 27 ապրիլի 1927:

1920-ական թվականներին գյուղի սոցիալ-տնտեսական դրության բարելավմանն էր միտված խորհրդային իշխանության հողային քաղաքականությունը: Հայաստանում հողային (ագրարային) հարցի լուծումն ուներ իր առանձնահատկությունները: Ի տարբերություն, ասենք, Ռուսաստանի, Հայաստանը խիստ հողասակավ երկիր էր, շատ թույլ արտահայտված կալվածատիրական հողատիրությամբ: Ուստի Հայաստանում հողային հարցի լուծումը հասկացվում էր ոչ այնքան կալվածատիրական հողերի բռնագրավում, որքան հողաշինարարության անցկացում: Թե մեկի, և թե մյուսի կենսագործումը սկսվել էր Հայաստանի Հանրապետության օրոք: Այժմ փաստորեն դրանք շարունակվելու էին: Սակայն դրանց միջև կար էական տարբերություն. առաջին դեպքում հողային հարցի լուծումը ամրապնդում էր անհատական տնտեսությունը: Իսկ խորհրդային իշխանության հողային քաղաքականությունն ուներ ժամանակավոր բնույթ՝ մինչև կնախապատրաստվեր գյուղացու շրջադարձը դեպի սոցիալիստական տնտեսությունները:

Հողային օրենսդրության սկիզբ դրեց Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 28-ի դեկրետը[33], որի համաձայն անհատույց բռնագրավվեցին բոլոր կալվածատիրական հողերը: Դրանք ազգայնացվեցին և բաժանվեցին գյուղացիական տնտեսությունների միջև: Փաստաթղթերում կալվածատիրական հողերի տարածությունը ցույց է տրվում 200 հազար դեսյատին: Դրանց փոքր մասը (շուրջ 10 հազար դեսյատին) հատկացվեց պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների (խորհտնտեսություն՝ սովխոզ) կազմակերպմանը:

Հայաստանի հողային օրենսդրության հիմքում դրված էին Խորհրդային Ռուսաստանի օրենքները: Առաջին դեկրետից հետո ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնք սկզբնավորեցին հողային բարեփոխումները երկրում, իսկ խորհուրդների 2-րդ գումարման 3-րդ նստաշրջանի կողմից (1923 թ.) ընդունվեց ՀՍԽՀ հողային օրենսգիրքը, որը դարձյալ մշակված էր ռուսականի հիման վրա[34]:

Ըստ հողժողկոմատի 1925 թ. տվյալների հանրապետության գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերը (վարելահող, այգի, խոտ-

---

[33] Հողային օրենսգիրք, Երևան, 1924: Տե՛ս՝ ՀՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու, 1923, N 8, էջ 3-55:

[34] Բանգյուղտեսչություն ուղարկած մի գրության մեջ ասված է, թե ՌՍՖՍՀ Հողային օրենսգիրքը թարգմանված է, կազմված է փոփոխությունների ու լրացումների նախագիծ և 4 օրինակով ուղարկված Կենտգործկոմ ի քննություն և ի հաստատություն: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 123, ց. 1, գ. 90, թ. 106:

հարք,արոտավայր, տնատեղ) կազմում էին ամբողջ հողային տարածքի (2,7 միլիոն դեսյատին կամ 2974,3 հազար հեկտար) 78,8 տոկոսը: Մնացածը զբաղեցնում էին անտառները (11,8 տոկոս) և ոչ պիտանի հողերը (9,4 տոկոս): Հայաստանը անտառներով աղքատ երկիր է: Իսկ ոչ պիտանի հողերի լինելը վկայում է երկրի տարածքի լեռնային բնույթի մասին: Դրանով է պայմանավորված նաև նրա բազմագոտիականությունը ստորինից մինչև բարձրը ալպիականը: Ընդ որում, մինչև 500 մետր բարձրություն ունի երկրի տարածքի միայն 0,3, 500-1000 մետր 9,7 և 1000-1500 մետր 17,6 տոկոսը:

Գյուղատնտեսական նշանակության հողերը (1,5 միլիոն հեկտար), ըստ տեսքերի բաշխվում էին այսպես. ոռոգելի վարելահողեր՝ 96,4 հազար, անջրդի վարելահող 604,2 հազար, խոտհարք՝ 75,0 հազար և գյուղական արոտավայր 724 հազար հեկտար: Գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողեր էին նաև պետական հողային գյուքերը, այն է՝ հիմնականում ամառային և ձմեռային արոտավայրերը, որոնք վարձակալությամբ օգտագործվում էին Հայաստանի և հատկապես Ադրբեջանի անասնապահ գյուղացիների կողմից: Գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերի 69,6 տոկոսը բաժին էր ընկնում գյուղական բաժնեհողին, մնացածը պետական հողային գույքերն էին:

Կալվածատիրական հողերի բռնագրավումը, որն, ինչպես նշվեց, սկսվել էր Հայաստանի Հանրապետության տարիներին, շարունակվեց խորհրդայնացումից անմիջապես հետո և ավարտվեց կարճ ժամանակամիջոցում, բացառությամբ էջմիածնի վանքին պատկանող սեփականության: Դրանք հիմնականում տրամադրվեցին գաղթական հողազուրկներին: 200 հազար գաղթական բնակչությանը հողով և բնակարանով բավարարելը խորհրդային իշխանության առաջնահերթ և դժվարին խնդիրներից էր: Այդ խնդրի հիմնական լուծումը իրականացվեց հողային բարեփոխումներին (հողաշինարարությանը) համընթաց, 1920-ական թվականներին:

1920-ական թվականների հողային բարեփոխումների կամ հողաշինարարության բովանդակությունը գյուղատնտեսության վերականգնման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումն էր:

Մինչև Հողային օրենսգրքի ընդունումը հրապարակվեցին մի շարք հրահանգներ, որոնց հիման վրա սկսվեցին կազմակերպված հողաշինարարական աշխատանքները: Դրանցից առաջինը հաստատվեց 1921 թ. ապրիլի 12-ին, հանրապետության Հեղկոմի կողմից և համապատասխանում էր «ռազմական կոմունիզմից» բխող պահանջներին: Այն կոչվում էր «Կանոնադրություն ՀՍԽՀ-ում սոցիալիստական հողաշինարարության և սոցիալիստական հողագործությանն անցնելու միջոցառումների մա-

սին»[35]: Փաստաթղթի հենց անունը վկայում է, որ տվյալ ժամանակաշրջանում հողային քաղաքականության բնագավառում առավելություն և առաջնություն էր տրվում սոցիալիստական տնտեսածևին:

«Գյուղատնտեսությունը սոցիալիզացիայի հիմունքներով կազմակերպելու համար,- ասված է կանոնադրության 4-րդ հոդվածում,- անհրաժեշտ է անցումը անհատական հողօգտագործումից կոլեկտիվ ձևին: Խորհրդային տնտեսությունները, կոմունաները, աշխատավորական արտելները և ընկերության մյուս տեսակները լավագույն միջոցն են այդ նպատակին հասնելու համար»: Նույն հոդվածը նշում էր, որ անհատական հողօգտագործումը թույլատրվում է որպես «ժամանակավոր և անցողակի երևույթ»: Դրան համապատասխան 1921 թ. Հայաստանում հանդես եկան մի քանի տասնյակ ոչ մեծ կոլեկտիվ տնտեսություններ, որոնցում ընդգրկվում էին հիմնականում կոմունիստներ և չքավոր գյուղացիներ: Նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու կապակցությամբ հողային քաղաքականության մեջ կատարվեց էական փոփոխություն. այժմ առավելությունը տրվում էր անհատական տնտեսությունների զարգացմանը, չքերագնահատելով սոցիալիստական տնտեսածևի նշանակությունը: Ուստի կոլեկտիվ տնտեսությունները ցրվեցին: Պահպանվեցին միայն սովխոզները, որոնք կազմակերպվել էին նախկին կալվածատիրական հողերի հաշվին[36]:

Իսկ հողային օրենսգրքի համաձայն գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերի անմիջական օգտագործման իրավունքը վերապահվում էր 1. աշխատավոր հողագործներին ու նրանց միություններին, 2. քաղաքային բնակավայրերին և 3. պետական հիմնարկություններին ու ձեռնարկություններին: Պետական հողային միասնական ֆոնդի մյուս մասը (հիմնականում ամառային և ձմեռային արոտավայրեր) մնում էր պետության անմիջական տնօրինության տակ և ճանաչվում որպես պետական հողային գույք: Զանազան հողօգտագործողներին հող հատկացնելու հերթականության կարգն ու պայմանները սահմանվում էին առանձին, ելնելով շրջանների տեղական առանձնահատկություններից:

Արգելվում էր հողի առուվաճառքը, կտակելն ու գրավ դնելը: Օրենքը հռչակում էր հողի աշխատավորական օգտագործումը ՀՍԽՀ բոլոր քաղաքացիների համար, ովքեր կցանկանային զբաղվել հողագործությամբ, իրենց աշխատանքով: Թույլատրվում էր հողի աշխատավորական վարձա-

---

[35] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 9, թ. 19-30:

[36] Վ. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ.: Երևան, 1975, էջ 118-122: Գ. Շառոյան, Սոցիալիստական հողօգտագործումը Հայաստանում 1920-1929 թթ.: Երևան, 1962, էջ 44-58:

կալությունը, ինչպես նաև օժանդակ վարձու աշխատանքի աշխատավորական օգտագործումը:

Հողային հասարակություններում կամ գյուղական համայնքներում հողը բաժանվում էր պարբերական վերաբաժանման (9 տարի ժամկետով) և հավասարարության՝ ըստ ծխերի* անդամների թվի սկզբունքով, համաձայն շնչաբաժին նորմայի: Վերջինս սահմանվեց ըստ հանրապետության հողային պայմանների, համաձայն 4 տարբեր գոտիների, այն է՝ դաշտային, նախալեռնային, լեռնային և ալպիական:

Պարբերական վերաբաժանումով հողի հավասարար օգտագործման սկզբունքը, ինչպես հայտնի է, եղել է էսեռների կուսակցության ծրագիրը, որը բոլշևիկների կուսակցությունն օգտագործեց գյուղացիությանը (կարևոր էր միջակ գյուղացին) իր կողմը գրավելու համար՝ հանուն սոցիալիստական հեղափոխության և գյուղի սոցիալիստական վերափոխության նախապատրաստության:

Հողային օրենսդրության ընդունումից հետո լայն ծավալ ընդունեցին հողային բարեփոխումները, այն է՝ հողաշինարարական աշխատանքները: Հողաշինարարությամբ լուծում էին ստանում հետևյալ խնդիրները՝ միջգյուղային հողաշինարարություն, գյուղի ներքին հողաբաժանություն և հիմնական հողաշինարարություն: Միջգյուղական հողաշինարարությամբ վերացվում էր հարևան գյուղերի միջև ստեղծված հողօգտագործման անհամաչափությունը: Ներքին հողաբաժանությունը (կամ վերաբաժանությունը) լուծում էր ծխերի միջև հաստատված անհավասարությունը. ավել հողը կտրվում էր, պակասը՝ լրացվում (ելնելով ծխի շնչերի թվից): Հիմնական հողաշինարարության ժամանակ լուծվում էին հողային բարեփոխումների մյուս հարցերը, վերացվում ծխի բաժնեհողի ցրվածությունը (խոշորացվում բաժնեհողը) և այլն:

Ներքին հողաբաժանությունը կտրել-լրացնելու միջոցով իրականացնելու նպատակը կայուն հողօգտագործում ստեղծելն էր՝ հօգուտ գյուղատնտեսության զարգացման շահերի՝ ի տարբերություն հավասարեցման այն ձևի, երբ առաջարկվում էր բոլոր հողերը «խառնել» և վերաբաժանել վիճակահանությամբ: Այս դեպքում գյուղատնտեսությունը միայն կտուժեր, ուստի այն գործնականում մերժվեց: Նույն շահերն էին հետապնդում նաև ռուսաբնակ գյուղերում գոյություն ունեցող հողաշատության պահպանումը, չնայած հայկական գյուղերի նկատմամբ ուժեղ տարբերությունը որոշ չափով մեղմացվում էր: Ռուսական գյուղերի հողաշատությունը ցարիզմի գաղութային քաղաքականության արդյունք էր:

---

* Ծուխը, ըստ Հողային օրենսգրքի, «միատեղ գյուղական տնտեսություն վարող անձերի ընտանեկան-աշխատավորական միությունն» է :

Հայաստանում հողաշինարարության նշված երեք խնդիրները լուծվում էին հաջորդաբար, ի տարբերություն ԽՍՀՄ այլ շրջանների, որտեղ համապատասխան գործընթացներն իրականացվում էին միաժամանակ: Տարբերությունը բացատրվում է պետության ֆինանսական դժվարություններով և համապատասխան կադրերի (հողաչափների) անբավարարությամբ: Հողաչափերի թիվը հազիվ բավարարեց միջգյուղային հողաշինարարության համար, իսկ ներքին հողաբաժանությունը կատարվեց շարքային գյուղացիների (չափարարների) միջոցով:

1926 թ. ավարտվեց միջգյուղային հողաշինարարությունը, ապա ներքին հողահավասարեցումը: Այնուհետև սկսվեց հիմնական հողաշինարարությունը, որը, սակայն, ավարտի չհասցվեց համատարած կոլեկտիվացման ծավալման պատճառով:

Հողային հարցի լուծման մեծ դժվարությունը ոչ միայն ազատ հողերի բացակայությունն էր, այլև մեծ թվով հողազուրկների (հիմնականում հայ, ինչպես նաև ադրբեջանցի գաղթականներ) ու խիստ սակավահող գյուղացիների (գերբնակություն) առկայությունը: «Հայաստանում մի թիզ հող անգամ չկա գաղթականներին տեղավորելու համար»,- արձանագրել է Անդրկովկասի Դաշնային խորհրդին կից գաղթականների մշտական հանձնաժողովը 1922 թ.[37]: Ուստի հողի շնչաբաժին նորման կրճատվեց նախատեսվածի համեմատությամբ և չափավորվեց նվազագույնի սահմաններում: Նույնիսկ այսպիսի պայմաններում տարիներ շարունակ հազարավոր գյուղացիներ մնում էին հողազուրկ: Այնուամենայնիվ, հաղթահարելով մեծագույն դժվարություններ, իշխանության մարմինները առաջ էին տանում հողային բարեկարգումների գործը: Մինչև 1925 թ. ներառյալ հողով բավարարվեց 64 հազար հողազուրկ, հիմնականում Լենինականի, Էջմիածնի և Երևանի գավառներում[38]: Միաժամանակ հայրենադարձության և այլ հանրապետություններից կատարվող վերաբնակեցման պատճառով հողազուրկների թիվը աճում էր:

Ընդ որում հողազրկության վերացման, նաև արտասահմանից կատարվող հայրենադարձության հարցի լուծման ելք էր համարվում նաև Խորհրդային Միության հողաշատ շրջաններում վերաբնակեցման կազմակերպումը: Հարցը քննարկվեց նաև միութենական համապատասխան մարմիններում, որոնք, սակայն, Ռուսաստանում ազատ հողեր չգտան հայ հայրենադարձների բնակեցման համար:

---

[37] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 72. թ. 50:

[38] Վրաստանի նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (Վրաստանի ՆՊԿՊԱ), ֆ. 804, ց. 1, գ. 1787, թ. 22-23:

1926 թ. դրությամբ Հայաստանում հողազուրկ էր 6922 տնտեսություն, որը կազմում էր բոլոր գյուղացիական տնտեսությունների 4,5 տոկոսը: Նրանք հիմնականում կենտրոնացած էին Էջմիածնի, Երևանի, Լոռի-Փամբակի և Դիլիջանի գավառներում[39]:

Այսուհետև հողազրկության վերացումը կարող էր շարունակվել հիմնականում վերաբնակեցման միջոցով: Վերաբնակեցման ենթակա էր 90 հազար մարդ (50 հազար հողազուրկներ և 40 հազար տեղացի սակավահող գյուղացիներ), որոնց համար հարկավոր էր 100 հազար հեկտար հող, որպիսին բնականաբար չուներ Հայաստանը:

1927 թ. մայիսին ԽՍՀՄ Կենտգործկոմին կից վերաբնակեցման պամամիութենական կոմիտեն քննարկեց Հայաստանի վերաբնակեցման աշխատանքների հնգամյա պլանը: Կոմիտեն Հայաստանը ճանաչեց խիստ սակավահող հանրապետություն և որպես նրա հավելյալ բնակչության տեղավորման միջոց ընդունեց արդյունաբերության զարգացումը՝ եթե ոչ առաջիկա, թերևս հաջորդ հնգամյակներում: Նախատեսվում էր հայերի հայրենադարձությունը և Հայաստանի սահմաններում կատարվող վերաբնակեցումը (դեպի արդյունաբերական վայրեր) ճանաչել որպես միութենական նշանակություն ունեցող ծեռնարկումներ և համապատասխան ծախսերը նախատեսել միութենական բյուջեով:

Նույն կոմիտեի 1927 թ. հուլիսին կայացած պլենումը, քննարկելով Հայաստանի գաղթական բնակչության բնակեցման և սակավահողության վերացման հարցը, դրա լուծումը համարեց ամենաանհետաձգելի գործ, որպես միութենական միջոցառում[40]:

Հայաստանում կային առանձին ղեկավար գործիչներ, որոնք հայրենադարձների ընդունման և վերաբնակեցման հարցի լուծումը տեսնում էին Ռուսաստանում, չնայած, ինչպես նշվեց, այդ հանրապետության համապատասխան մարմինները իրենց երկրում նման հնարավորությունը փաստորեն բացառեցին: Հակառակ դրան՝ Հայաստանի ղեկավարությունը, ելնելով հայ ժողովրդի ազգային շահերից, չի պաշտպանել այդ տեսակետը և, չնայած հանրապետության սուղ հնարավորություններին, գերադասել է խնդիրը լուծել տեղում:

Հողային բարենորոգումների գործն առաջ տանելու համար դժվարություններ կային նաև միութենական այլ հանրապետություններում: Ուստի խնդրի, չնայած մասնակի, լուծմանն օգնության եկավ ԽՍՀՄ խորհուրդների 3-րդ համագումարը (1925 թ. մարտ): Որոշվեց գյուղական հա-

---

[39] ՀԱԱ, ֆ. 163, ց. 1, գ. 4466, թ. 1:
[40] Վ. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., էջ 143-144:

սարակություններին, որպես բաժնեհող, լրացուցիչ հող հատկացնել պետական ֆոնդի հողերից, ինչպես նաև արագացնել տեղական նշանակություն ունեցող անտառները գյուղացիներին հանձնելու գործը (վառելափայտի նրանց կարիքները բավարարելու համար):

ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմը, ի կատարումն միութենական որոշման, հանձնարարեց «սակավահող շրջաններում վերանայել պետական հողային ֆոնդը նրա մի մասը տեղական սակավահող գյուղացիությանը հանձնելու նպատակով»:

Բանգյուղտեսչության կատարած ստուգումները ցույց տվեցին, որ Հայաստանում վերացման ենթակա սովխոզներ չկային, ի տարբերություն այլ հանրապետությունների: Պետական պահեստի հողային ֆոնդը (21 հազար դեսյատին Բասարգեչարի և Աղբաբայի շրջաններում) տրամադրված էր վերաբնակեցմանը: Ջմեռային արոտավայրերը, որոնք խոպան ղռեր էին, միայն ոռոգման դեպքում կարող էին օգտակար դառնալ գյուղատնտեսական մշակության համար: Իսկ ոռոգման անցկացումը հեռանկարի հարց էր: Բաժնեհող դառնալու միակ աղբյուր մնացին ամառային արոտավայրերը: Մինչև 1927 թ. որպես բաժնեհող (վարելահող և խոտհարք) սակավահող գյուղերին հանձնվեց 54.370 դեսյատին պետական ամառային արոտավայր: Դրա մոտ կեսը գտնվում էր Դիլիջանի, մյուս մասը՝ Զանգեզուրի, Դարալագյազի և այլ գավառներում:

Ինչ վերաբերում է տեղական նշանակություն ունեցող անտառներին, ապա այդպիսին Հայաստանում 10430 դեսյատին էր, հիմնականում Զանգեզուրի, Մեղրու և Լոռի-Փամբակի գավառներում, որոնք հանձնվեցին գյուղացիությանը վառելափայտի նրա կարիքների համար: Դրանք մասամբ դառնում էին նաև վարելահող[41]:

Հողային հարցի լուծման գործընթացում առանձին տեղ էին գրավում ամառային արոտավայրերի օգտագործումը և Ադրբեջանի ու Վրաստանի հետ տեղական նշանակություն ունեցող միջսահմանային վեճերը:

Հեռավոր անցյալում հաստատվել և ավանդաբար շարունակվում էր Ադրբեջանի անասնապահների քոչը, երբ հարյուրհազարավոր գլուխ մանր ու խոշոր եղջերավոր անասուններ արածում էին Հայաստանի ալպյան արոտավայրերում: Ընդ որում, սար բարձրանալու և վերադարձի ճանապարհին մեծ վնաս էր պատճառվում հանրապետության գյուղացիական տնտեսություններին: 1925/26 թթ. ադրբեջանցի անասնապահներին վարձով տրվել էր ամառային արոտավայրերի 48,5 տոկոսը: Զանգեզուրի և

---

[41] Գյուղացիներին 1925-1927 թթ. լրացուցիչ հող հատկացնելու հարցերի մասին տե՛ս Վ. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., էջ 126-129:

Դարալագյազի գավառներում ցուցանիշներն ավելի բարձր էին (օրինակ՝ 1928/29 թթ. 70,0 տոկոս):

Հայաստանի անասնապահների համար Ադրբեջանի ձմեռային արոտավայրերից օգտվելն ունեցել է ավելի փոքր նշանակություն:

1918-1920 թթ. հարաբերությունները խիստ սրվել էին Անդրկովկասի հանրապետությունների միջև, երբ փակվել էին քոչի ճանապարհները: Խորհրդային իշխանությունը, ելնելով ժողովուրդների միջև խախտված բարեկամությունը վերականգնելու և ամրապնդելու շահերից, թույլատրեց վերականգնել քոչը: Նրան միաժամանակ զբաղեցնում էր այն հարցը, թե ինչպես և երբ կարելի էր քոչվորական հետամնաց տնտեսածևից անցնել նստակյաց տնտեսության: Ելնելով դրանից, 1924 թ. Անդրկենտգործկոմի երկրորդ նստաշրջանը որոշում կայացրեց արոտավայրերի օգտագործման նոր քաղաքականության անհրաժեշտության մասին, որը նշանակում էր Անդրկովկասում վերացնել քոչվորական ու կիսաքոչվորական տնտեսությունը և անցնել նստակեցության: Այդ նպատակով Ադրբեջանում աստիճանաբար իրականացվում էին ջրաշինարարական աշխատանքներ՝ Մուղանի տափաստանը ոռոգելի դարձնելով: Քոչվորական տնտեսության վերացումը կատարվեց տարիների ընթացքում:

Նոր իրադրության պահանջով 1931 թ. քոչվորության վերացման խնդրին վերադարձավ խորհուրդների Անդրկովկասյան 6-րդ համագումարը: Համագումարն արձանագրեց, որ միանգամայն անբավարար ուշադրություն է նվիրվում քոչի հետամնաց տնտեսածևի վերացմանը, որը խանգարում էր գյուղատնտեսության մասնագիտացմանը և տեխնիկական մշակույթների ներդրմանը գյուղատնտեսության մեջ: Անդրկովկասյան կառավարությանը պարտավորեցվեց 1931 թ. վճռական միջոցառումներ իրականացնել քոչվորական տնտեսությունից նստակեցության անցնելու համար, հատկապես տեխնիկական մշակաբուծության շրջաններում: Սակայն այդ վճռական միջոցառումները դարձյալ ձգձգվեցին և ամբողջ նախապատերազմյան տարիներին դրանք շարունակվում էին: Պատճառը, մի կողմից, նստակեցությանն անցնելու համար պահանջվող մեծ ծախսերն էին, որոնք սահմանափակ էին, մյուս կողմից, քոչվոր գյուղացիության պահպանողականությունը: Վերջինս դժվարությամբ էր հրաժարվում իր սովոր կենսածևից:

Նստակյաց կյանքի ու տնտեսության էր անցնում նաև Հայաստանի եզդի բնակչությունը, հարց, որը հիմնականում լուծվեց գյուղատնտեսության կոլեկտիվացումով, 1930-ական թվականներին:

Ինչ վերաբերում է վերը հիշված միջհանրապետական վեճերին, ապա անհրաժեշտ է նշել հետևյալը: Տվյալ դեպքում այդ վեճերը վերաբե-

ռում էին Անդրկովկասի հանրապետությունների սահմանակից շրջանների գյուղական հասարակությունների միջև ջրերի, անտառների ու վարելահողերի օգտագործման խնդրին: Դրանց պատճառը պետական սահմանների տեղագրության անորոշությունն էր կամ պարզապես հարևանների տարաձայնությունը այս կամ այն հողակտորի պատկանելության ու օգտագործման նպատակահարմարության շուրջ: Տարաձայնություններն ու վեճերը ուժեղ էին հետևյալ շրջանների միջև Իջևան, Դիլիջան-Ղազախ, Թովուզ, Զանգեզուր, Մեղրի-Ղուբաթլի, Քրդստան, Լոռի-Փամբակ-Բորչալու: Հարցի լուծումը բնականաբար կարող էին իրականացնել միայն Անդրդաշնության ղեկավար մարմինները:

1922 թ. հոկտեմբերի 30-ին Անդրերկրկոմը ստեղծեց հանձնաժողով, Օրջոնիկիձե, Նարիմանով, Մյասնիկյան կազմով, որը քննարկելու էր «բոլոր հողային վեճերը և ընդունելու վերջնական որոշում»[42]: Անդրկենտգործկոմի նախագահությունը 1924 թ. մարտի 17-ին օրենսդրորեն ձևակերպեց Անդրկովկասի հանրապետությունների միջև հող-անտառ-ջրօգտագործման հարցի մասին համապատասխան որոշումները[43]: Դրանք կենսագործվում էին մեծ դժվարությամբ, հանդիպելով մեկ կամ մյուս կողմի դիմադրությանը: Որոշումներն ընդունվում էին հանձնաժողովների կողմից տեղերում մանրամասն ուսումնասիրություններ կատարելուց հետո: 1920-ական թվականներին աշխատել են մի քանի հանձնաժողովներ, Ս. Կասյանի, Կոչետկովի, Վ. Ստուրուայի և այլոց նախագահությամբ: Նշենք, որ ընդհանուր հանրագումարում Հայաստանը զգալի չափով տուժեց, կորցնելով տարածքներ: Հարևան հանրապետություններին անցան նաև Հայաստանի մի շարք բնակավայրեր, ինչպես Վերին և Ներքին Քյորփլու գյուղերը և այլն:

1920-ական թվականների վերջին, երբ անցում էր կատարվում գյուղատնտեսության ծավալուն կոլեկտիվացմանը, կատարվել էին հողային հարցի լուծման զգալի աշխատանքներ. ավարտվել էր միջգյուղային հողահավասարեցումը (հողաշինարարությունը) և ներգյուղային հողաբաժանությունը, հաստատելով աշխատավորական կայուն հողօգտագործում: 1921-1929 թթ. ընթացքում հողաբաժին էին ստացել 90 հազար գաղթականներ և հայրենադարձներ: Սակայն դեռևս շուրջ 10 հազար տնտեսություն կամ շուրջ 43 հազար մարդ մնում էին հողազուրկ: Նրանց բավարարման համար մշակվում էր հնգամյան պլան, այսինքն սահմանվում էր հնգամյա ժամկետ:

Հայաստանում միջին հաշվով մեկ ծխի հողաբաժինը հասավ 4,3 դեսյատինի (վարելահող, խոտհարք, այգի, տնատեղ), իսկ մեկ շնչինը 0,88

---

[42] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 48, թ. 115:
[43] Նույն տեղում, ց. 4, գ. 31, թ. 23:

դեսյատինի (հեղինակի կատարած հաշվարկներով): Նախախորհրդային ժամանակաշրջանի համեմատությամբ այն ավելացել էր: Դա տեղի էր ունեցել կալվածատիրական հողերի բռնագրավման, ամառային արոտավայրերի համալրման, բնակչության ընդհանուր թվի նվազման և այլ ռեսուրսների հաշվին[44]:

Հողային բարեփոխումների հետ կապված ոչ բոլոր խնդիրներն է, որ լուծում էին ստանում միջգյուղային հողաշինարարության և ներքին հողաբաժանության շնորհիվ: 1920-ական թվականների վերջին Հայաստանում սկսվեց նոր փուլ հողային բարեփոխումների պատմության մեջ: Նոր խնդիրները հայտնի են ներքին հիմնական հողաշինարարություն անունով: Այժմ լուծում էին ստանում նախորդ փուլում չիրացված խնդիրները, ինչպես հողաբաժնի խոշորացումը, հողազրկության վերացումը և այլն: Կարևոր նշանակություն էր տրվում դասակարգային քաղաքականության անցկացմանը՝ չքավոր գյուղացիների շահերի պաշտպանությանը, ինչպես նաև կոլտնտեսային հողակտորների խոշորացմանն ու կենտրոնացմանը: Նախատեսվում էր ներքին հիմնական հողաշինարարությունն ավարտել 1-ին հնգամյակի ընթացքում (1928/29-1932/33 թթ.), որով կհաստատվեր կայուն հողօգտագործում, առաջին հերթին անհատական տնտեսություններում:

Մինչև 1929 թ. սկիզբը հիմնական հողաշինարարությունը կատարվել էր հանրապետության 140 գյուղերում, 110 հազար հեկտար տարածությամբ կամ այդ կարգի բոլոր հողերի 17,0 տոկոսի չափով: Հատակագծվել էր 115 գյուղ: Վերաբաժանվել էր 200 հազար հեկտար ամառային արոտավայր (ամբողջի 40,0 տոկոսը)[45]:

Հիշյալ աշխատանքները շուտով ընդհատվեցին: Խորհրդային իշխանության քաղաքականության մեջ տեղի ունեցավ արմատական շրջադարձ՝ հրաժարվելով անհատական տնտեսածնից, անցում կատարվեց կոլեկտիվ հողօգտագործմանը:

1920-ական թվականների հողային բարեփոխումները նպաստում էին անհատական տնտեսվարության ամրապնդմանը և զարգացմանը: Այն ուներ ժամանակավոր բնույթ, որի ընթացքում գյուղացին համոզվելու էր, որ անշահավետ է անհատական տնտեսություն վարելը և կոոպերացիայի օգնությամբ ըմբռնելու կոլեկտիվ աշխատանքի առավելությունները:

---

[44] Հողային բարեփոխումների հանրագումարի մասին տես. Վ. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., էջ 153-159:

[45] Նույն տեղում, էջ 197:

***

Խորհրդային իշխանության պայմաններում, ըստ մարքս-լենինյան տեսության, փոխվեց կոոպերացիայի դերն ու նշանակությունը: Հարցը լուսաբանել է Լենինը իր մի շարք աշխատություններում, մասնավորապես «Կոոպերացիայի մասին» գրքույկում: Կոոպերացիայի դերը մեծ նշանակություն է ստանում այնպիսի խիստ մանրագյուղացիական երկրում, որպիսին էր Ռուսաստանը (ԽՍՀՄ-ը), իր բազմամիլիոն գյուղացիությամբ: Կոոպերացիան իր բնույթով այնպիսի կազմակերպություն է, որ զուգակցելով անձնական ու հասարակական շահերը, մանր արտադրողներին կարողանում է սոցիալիզմին մոտեցնել աստիճանաբար: Այն, Լենինի արտահայտությամբ, «հասարակ, հեշտ ու գյուղացու համար մատչելի» ճանապարհն է անցնելու դեպի նոր կարգեր: Բնակչության համատարած կոոպերացումը Լենինը նույնացնում էր սոցիալիզմի հետ:

Հայաստանի խորհրդայնացման պահին, երբ տնտեսությունը խիստ քայքայված վիճակում էր, ապրանքադրամական (շուկայական) հարաբերությունները դադարած, բացակայում էին պայմանները նախկինից եկող կոոպերատիվ ընկերությունների (գյուղատնտեսական, սպառողական, վարկային) գործունեության համար: Նրանք դարձել էին պետական բաշխիչ մարմինների (պարենավորման ժողկոմատի) բաղկացուցիչ մաս: Տնտեսության, հատկապես գյուղատնտեսության ճյուղի վերականգնմանը համընթաց կոոպերացիան սկսեց վերածնվել, վերագտնել իր բնորոշ գործառույթները, հասարակական դերն ու նշանակությունը: Ծավալվեց Հայաստանի սպառողական կոոպերատիվների միության (Հայկոոպ) գործունեությունը: 1924 թ. կազմակերպվեց Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների միությունը (Հայգյուղկոոպ), որում ընդգրկված էին մի քանի ճյուղային կոոպերատիվ միություններ: Մանր արդյունաբերական արտադրությամբ զբաղվողները համախմբվեցին արհեստագործական կոոպերատիվ միության (Հայտնարկոոպ) ընկերություններում: Հատկապես կարևոր նշանակություն ուներ Հայգյուղկոոպի գործունեությունը, որն առնչվում էր տասնյակ հազարավոր գյուղացիական տնտեսությունների հետ, կազմակերպելով նրանց ապրանքային արտադրանքի հայթայթման, սպառման, նրանց արտադրական կարիքների սպասարկման գործը: Ապրանքային արտադրության կազմակերպման և զարգացման նպատակով կոոպերացիան գործադրում էր նաև գյուղացիների հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելու (կոնտրակտացիայի) փորձը: Այդ մեթոդը մասնավորապես կարևոր նշանակություն ունեցավ բամբակագործության զարգացման գործում՝ շնորհիվ ԽՍՀՄ արդյունաբերական կենտրոնների պատվերի:

1929 թ. վերջին կոոպերացված էր Հայաստանի գյուղացիական տնտեսությունների մոտավորապես կեսը (կոոպերացման տոկոսը ավելի բարձր էր կրկնակի կոոպերացումը հաշվարկելու դեպքում): Նույն ժամանակ կոոպերացիան ընդգրկում էր հանրապետության ծխախոտագործության 95, մետաքսագործության 90, գինեգործության 75, բամբակագործության 60, կաթնատնտեսության 28 տոկոսը (վերջինս ավելի բարձր էր Լոռի-Փամբակի գավառում) և այլն: Փորձը գյուղացիներին ապացուցում էր կոոպերացիայի դրական դերը տնտեսության զարգացման գործում: Սակայն դեռևս վաղ էր խոսել կոոպերացիայի առաջադիմական նշանակության մասին՝ դրա բարձր ձևերին (կոլտնտեսություններ) անցնելու իմաստով:

Հողային հարցի լուծման և գյուղացիության կոոպերացման հետ մեկտեղ մեծ աշխատանք կատարվեց ջրանցքների վերականգնման և նորերի կառուցման ուղղությամբ: Հայաստանի պայմաններում ոռոգման հարցի լուծումը գյուղատնտեսության վերելքի կարևոր պայման էր:

1920-ական թվականներին Հայաստանում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին էջմիածնի, Շիրակի, Սարդարաբատի խոշոր ջրանցքները, բացառապես պետության միջոցներով: Էջմիածնի ջրանցքի (32 կմ երկարությամբ, մոտ 3000 հեկտար ոռոգումով) շինարարությունն սկսվել էր նախախորհրդային տարիներին, սակայն ջուրը տեղ չէր հասել: Հարկավոր էր կատարել ջրի հունի ամրացման աշխատանքներ, որ իրականացվեցին 1920-ական թվականների սկզբին: Շիրակի ջրանցքի (21 կմ, 10,5 հազար հեկտար) իրականացմանը երկար էր սպասել շիրակցի գյուղացին: Ջրանցքը բարդ կառույց է, ունի պինդ զանգվածներով անցնող երկար թունել, գլխամասային ջրամբար, ինչպես նաև հիդրոկայան: Սարդարապատի ջրանցքը (55 կմ, 21 հազար հեկտար), որ սկիզբ է առնում Արաքս գետից, ոռոգելու էր Արարատյան դաշտի խոպան հողեր:

***

Խորհրդայնացման պահին Հայաստանում արդյունաբերական կյանք փաստորեն գոյություն չուներ: Հայաստանի ժողտնտխորհը, նշել է նրա նախագահ Բալյանը 1927 թ. խորհուրդների 5-րդ համագումարում արած զեկուցման մեջ, ժառանգություն էր ստացել կիսատնայնագործական ձեռնարկություններ: Բացառություն էր գինու-կոնյակի նախկին Շուստովի գործարանը: Նույնիսկ ծանր արդյունաբերության ձեռնարկությունները «տիպիկ տնայնագործական գործարաններ են եղել»: Տնտեսության մեջ իշխող էր գյուղատնտեսական արտադրությունը: Արդյունաբերության

բաժինը հազիվ 17,4 տոկոս էր[46]: Այն ավելի փոքր էր 1920-ական թվականների սկզբին:

Ազգայնացված արդյունաբերական ձեռնարկությունները 1921 թ. միավորվեցին ժողովրդական տնտեսության խորհրդի համակարգում, որը տնօրինում էր արդյունաբերության կառավարման բոլոր հարցերը: Աշխատանքների ընդլայնման պահանջով 1924 թ. արդյունաբերության և ամբողջ տնտեսության պլանավորման գործն առանձնացվեց Պետական պլանային հանձնաժողովում (Պետպլան), որին նախորդել էր բարձրագույն տեխնիկական խորհուրդը (նախագահ Ալեքսանդր Թամանյան): 1926 թ. հանրապետության տնտեսական քաղաքականությունը մշակում և ղեկավարում էր կառավարությանը կից գործող Տնտեսական խորհրդակցությունը (կամ խորհուրդը):

Հայաստանում արդյունաբերության վերականգնումն ուներ առանձնահատուկ բնույթ: Դա վերականգնման և նոր կառույցների գործընթացների զուգակցումն էր: Քանի որ վերականգնումը դանդաղում էր, ուստի 1920-ական թվականների երկրորդ կեսին նրան միացավ և առաջնային դարձավ նոր ձեռնարկությունների ստեղծումը, կապված երկրի ինդուստրացման քաղաքականության հետ:

Նեպի գործող սկզբունքները ևս, չնայած իրենց սահմանափակությանը, նպաստում էին արդյունաբերության վերականգնմանը և զարգացմանը: Մասնավորապես նպաստավոր դեր ուներ տնտհաշվարկի գործադրությունը: Այն որոշ ազատություն էր տալիս արտադրական ձեռնարկությունների ֆինանսական գործունեությանը: Սակայն, ձեռնարկությունն իր շահույթների հաշվին կարող էր միջոցառումներ իրականացնել կոլեկտիվի, և ոչ անհատների, համար:

1925 թ. ԽՍՀՄ տնտեսության վերականգնումն ավարտվում էր: Այնուհետև ի՞նչ ուղղությամբ էր գնալու երկրի տնտեսության զարգացումը, ո՞րն էր լինելու զարգացման հիմնական օղակը: Հարցը լուծվեց ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումարի կողմից (1925 թ. դեկտեմբեր), որը որոշեց «վերցնել երկրի ինդուստրացման, արտադրության միջոցների արտադրության զարգացման» կուրս[47]: Ինդուստրացման ուղիների հարցում կար երկու մոտեցում: Նախախորհրդային տնտեսագետներն այն կարծիքին էին, որ պետք է ապահովել տնտեսության համամասնական, հավասարակշիռ զարգացումը, հաշվի առնելով ժողովրդի նյութական պահանջներն ապահովելու շահերը: Կուսակցության ղեկավար գործիչների մեջ այդ տեսակետին էր նաև Բուխարինը: Մյուս մոտեցման կողմնակիցները կուսակցությանը մոտ

---

[46] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 1147, թ. 12:
[47] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: Մաս 2, էջ 248:

կանգնած մասնագետներն էին, որը և ընդունվեց ստալինյան ղեկավարության կողմից: Ըստ դրա առաջնակարգ դեր ու նշանակություն էր տրվում ծանր արդյունաբերության միակողմանի ու գերապատիվ զարգացմանը՝ ի հաշիվ թեթև արդյունաբերության ու գյուղատնտեսության: Ղեկավարությունը դա հիմնավորում էր կապիտալիստական շրջապատման մեջ գտնվող ԽՍՀՄ պաշտպանության անհրաժեշտությամբ: Նույն ղեկավարությունը ինդուստրացմանը վերագրում էր սոցիալիստական բնույթ, ինդուստրիան համարելով սոցիալիզմի նյութատեխնիկական հիմքը: Ինդուստրացման խնդրի լուծումը, ասված է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1926 թ. ապրիլյան պլենումի բանաձևում, որոշում էր «ամբողջ տնտեսության հետագա աճը դեպի սոցիալիզմի հաղթանակը տանող ուղիով»[48]: Այդ նշանակում էր տնտեսական հարցերը ենթարկել քաղաքական նպատակներին:

ԽՍՀՄ ինդուստրացման ծրագիրն ընդունվեց միջազգային այնպիսի իրադրության պայմաններում, երբ հեղափոխական շարժման ալիքը տեղի էր տվել կապիտալիզմի «հարաբերական կայունությանը», երբ տնտեսական հետամնաց Ռուսաստանը (ԽՍՀՄ-ը) այլևս չէր կարող ակնկալել, ասենք, արդյունաբերական Գերմանիայի տնտեսական օգնությունը (այնտեղ սոցիալիստական հեղափոխության հաղթանակի դեպքում), ուստի հույսը դնելու էր իր զարգացման վրա:

Անդրդաշնության հանրապետությունների ինդուստրացման խնդիրները քննարկվեցին 1926 թ. մայիսին Թիֆլիսում կայացած կուսակցական խորհրդակցությունում և Անդրերկրկոմի պլենումում, իսկ Հայաստանում՝ 1926-1927 թթ. կուսակցական ու պետական համաժողովներում, մասնավորապես ՀՍԽՀ խորհուրդների 5-րդ համագումարում և Կենտգործկոմի 2-րդ նստաշրջանում: Գտնում էին, որ Հայաստանը իր հնարավորություններով մասնակցելու է ԽՍՀՄ-ի ինդուստրացման խնդրի լուծմանը, զարգացնելով հիդրոէներգետիկան, օգտակար հանածոների արտադրությունը և դրանց արդյունաբերական մշակումը, գյուղատնտեսության գծով՝ տեխնիկական մշակույթների ընդարձակումը, տեխնիկական վերազինումը և կոոպերատիվ շինարարությունը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն կամ բանավեճ այն հարցի շուրջ, թե որոնք են ինդուստրացմանը Հայաստանի մասնակցության շրջանակները: Որոշ գործիչներ ընդունում էին, որ հակառակ նախկին դրության, երբ հայկական պղինձը վերջնական մշակման էր ենթարկվում դրսում, հարկավոր էր դա անել երկրի ներսում և արտահանել այն պատրաստի ապրանքի ձևով: Կամ, որ նույնն է պետք էր խնդիր դնել, որ լեռնա-

---

[48] Նույն տեղում, էջ 330:

յին հարստությունները երկրից դուրս բերվեն ոչ իբրև կիսաֆաբրիկատներ, այլ լրիվ ֆաբրիկատներ, այսինքն պետք է ունենայինք գործարաններ:

Ուրիշների կողմից այսպիսի մոտեցումը պիտակավորվեց որպես տեղայնական թեքում, որպես «տնտեսական ունիվերսալիզմ», փակ տնտեսության ստեղծում, ձգտում հանրապետությունում ունենալ ամեն ինչ: Այնուհետև եղան ծայրահեղ քաղաքական գնահատականներ: «Պրոլետարիատին թշնամի թեորիաներից ամենավտանգավորը մեր պայմաններում տնտեսական ունիվերսալիզմ է,- կարդում ենք լրագրային հոդվածներից մեկում,- Տնտեսական ունիվերսալիզմի և «պոկելու» տենդենցները նկատվել են մեր մի շարք բուրժուական մասնագետների շրջանում, որոնք իրենց անդրադարձումն են ունեցել և մեր կուսակցության մեջ հանձին նրա նախկին ղեկավարության»[49]:

Նման գնահատականը նվազագույնը անհիմն է, իսկ առավելագույնը նշանակում է տնտեսական հարցերը շահարկել քաղաքական նպատակներով: Հիշեցնենք, որ այդ ժամանակ (1928 թ. հունիս) տեղի էր ունեցել «Շախտիի գործի» մեծ դատավարությունը, երբ անհիմն մեղադրանքներով դատապարտվել էին ԽՍՀՄ մի խումբ ինժեներ-տնտեսագետներ, որպես «վնասարարներ»: Այդ դատավարությունը ասես ջուր էր լցնում հայկական ջրաղացին:

Իրականում Հայաստանի տնտեսական զարգացումն ընթացավ հենց վերը հիշված սկզբունքի հիման վրա, հանրապետությունը դրանով չվերածվեց և չէր էլ կարող վերածվել փակ տնտեսության և դարձավ ԽՍՀՄ միասնական տնտեսության բաղկացուցիչ մաս:

Արդյունաբերության վերականգնման կարևոր պայմանը, գյուղատնտեսությունը լինելով հանդերձ, իհարկե, նաև էներգետիկան էր:

1920-ական թվականներին գոյություն ուներ այն տեսակետը, թե Հայաստանը հարուստ է էժան էլեկտրաէներգիայի ջրային ռեսուրսներով: Դա իր հերթին նպաստեց, որ հիմք դրվի նաև էներգատար քիմիական արդյունաբերության ստեղծմանը:

Նախապատերազմյան Հայաստանում գործում էին մի քանի էլեկտրակայաններ, չնչին կարողությամբ: Նրանց մի մասը, որ գործարանային էր, չէր աշխատում համապատասխան գործարանների անգործության պատճառով:

1920-ական թվականներին կառուցվեցին և գործարկվեցին Երևանի և Լենինականի (Գյումրի) հիդրոէլեկտրակայանները: Առաջինը նախատեսված էր լուսավորության և արդյունաբերական արտադրության, իսկ երկ-

[49] Խորհրդային Հայաստան, 26 հունվարի 1929:

որոդը կառուցվող տեքստիլ ձեռնարկությունների համար: 1927 թ. սկսվեց ավելի հզոր՝ Ջորագետի (Կամենկա) կայանի կառուցումը, որը հեռանկարում ծառայելու էր Ալավերդու և Ղարաքիլիսայի (Վանաձոր) գործարաններին և հանրապետության հյուսիսային շրջանների բնակավայրերի լուսավորությանը: Կայանների նախագծմանը մասնակցում էին Մոսկվայի ու Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) մասնագետներ, իսկ կայանների տեխնիկան պատվիրվել էր Ռուսաստանի և Գերմանիայի գործարաններին:

Ամենահզորը Ջորագետի կայանն էր: Նրա կառուցման մասին որոշումն ընդունեց ԽՍՀՄ Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը 1927 թ. մայիսին: «Անհրաժեշտ համարել Հայաստանում Ջորագետի (Կամենկա) վրա 21 հազար կիլովատ ուժի շրջանային ջրաէլեկտրակայան հիմնելը հյուսիսային Հայաստանի արդյունաբերական շրջանների և ցիանամիդի գործարանին էլեկտրաէներգիա մատակարարելու համար»[50]: Կայանի նախագիծը վերջնականապես հաստատվեց ԽՍՀՄ ժողտնտգերխորհի կողմից 1928 թ., 19,2 հազար կիլովատ հզորությամբ: Համեմատության համար նշենք, որ դա հանրապետության նախախորհրդային կայանների հզորությունը գերազանցում էր մոտ 6,2 անգամ: Լինելով շրջանային կայան, այն համեմատելի է դառնում հանրահայտ Գոէլռոյի պլանի կայանների հետ, պլան, որն ընդունվել էր 1920 թ. վերջին և նպատակ ուներ 10 տարվա ընթացքում առաջ մղել Ռուսաստանի էլեկտրիֆիկացումը: Կայանի կառուցման գլխավոր ինժեներն էր ճարտարապետ Հովհաննես Տեր-Աստվածատրյանը: Նա մեծ ծառայություն ունի նաև Հայաստանի մի շարք կայանների ու այլ կառույցների իրականացման մեջ: Կայանի հիմնադրումը տեղի ունեցավ հանդիսավոր պայմաններում, լայն հասարակայնության և Հայաստանի ու Անդրդաշնության ղեկավար գործիչների մասնակցությամբ: Երևանի կայանի հիմնադրմանը ներկա է գտնվել նաև ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահ Ռիկովը:

Պետք է նշել, որ ինչպես հիդրոկայանների, այնպես էլ մյուս արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումն իրականացվում էր շինարարական տեխնիկայի բացակայության, մասնագետ կադրերի մեծ պակասի, բնական դժվարին պայմաններում:

Հետաքրքիր է նաև իմանալ, որ որոշ կառույցների ստեղծման միտք գոյություն է ունեցել տակավին նախախորհրդային ժամանակաշրջանում: Օրինակ, Շիրակի ջրանցքի և նրա վրա էլերկտրակայան ունենալու ծրագրի (կապված Շիրակի դաշտի ոռոգման հետ) գոյության մասին հիշատակ-

---

[50] Խորհրդային Հայաստան, 8 մայիսի 1927:

վում է 1914 թ.[51]: Նույն ժամանակին է վերաբերում «Պերուն» բաժնետիրական ընկերության հետաքրքրությունը Զորագետի կայանի նկատմամբ[52]:

Լեռնահանքային (պղնձի) արդյունաբերությունը, ինչպես նաև գինու-կոնյակի արտադրությունը Հայաստանի շատ թե քիչ զարգացած ճյուղերից էին:

Պղնձի արտադրությունը, որը կենտրոնացած էր Ալավերդում և Ղափանում (Զանգեզուր), կանգ էր առել 1917 թ.: Ալավերդում պղինձը արդյունահանվում էր 18-րդ դարի վերջերից, իսկ Զանգեզուրում 19-րդ դարի կեսերից: Առաջինում սկսած 1887 թ. պղնձի արտադրությունը գտնվում էր ֆրանսիական բաժնետիրական ընկերության ձեռքում, իսկ Ղափանի ձեռնարկությունները տնօրինում էին մի շարք մասնավոր ձեռներեցներ:

1920-ական թվականների առաջին տարիներին ճյուղը գտնվում էր անմխիթար վիճակում: Հանքահորերը հեղեղվել էին ջրով, ձուլագործարանները անտերության մատնվել, պահանջելով կապիտալ վերանորոգում: Այն հնարավոր դարձավ միայն սկսած 1924-1925 թվականներից: Ինդուստրացմանն անցնելը նպաստեց, որ պղնձարդյունաբերության վերականգնումը իրականացվի տեխնիկական վերակառուցմանը համընթաց:

Ժողտնտխորհի կազմում ստեղծվեց «Հայպղինձ» տրեստը, որին ենթակա էին Ալավերդու և Զանգեզուրի ձեռնարկությունները: Հետագայում (1930թ.) այս երկու վայրերում, ելնելով դրանց հեռավորությունից ու կտրվածությունից, կազմավորվեցին երկու առանձին կոմբինատներ: «Հայպղնձի» տնտեսական, տեխնիկական ու ֆինանսական հարցերի լուծումը իրականացնում և հոգում էր ԽՍՀՄ ժողտնտխորհը, իսկ մասնագիտական ղեկավարումը՝ «Ցվետմետզոլոտո» միավորումը: Որոշ տարիներ կառավարման միջանկյալ օղակ դարձավ «Անդրպղինձ» տրեստը:

Մինչև բուն վերականգնման սկիզբը, նաև դրանից հետո, Ալավերդում թողարկվում էին օժանդակ (կողմնակի) արտադրատեսակներ, ինչպես ծծմբաթթու և կարբիդ-կալցիում, որոնք սպառվում էին ԽՍՀՄ հանրապետություններում: Ծծմբաթթվի հիմնական սպառողը «Անդրնավթ» տրեստն էր (նավթի վերամշակման համար), իսկ կարբիդ-կալցիումը օգտագործվում էր մետաղամշակման գործում: Ինչ վերաբերում է Հայաստանի պղնձին, ապա այն վճռական տեղ ուներ ԽՍՀՄ գունավոր մետալուրգիայում և նույնպիսի նշանակություն երկրի արդյունաբերության մի շարք ճյուղերի զարգացման գործում:

Ծավալվեցին վերականգնման-վերակառուցման խոշոր աշխատանքներ, սահմանվեցին վերականգնման մի քանի ժամկետներ: Դրանք

---

[51] Экономический вестник ССР Армении, 1928 г., N 6-7, с. 45-49.
[52] Նույն տեղում, 1927 թ., N 1, էջ 121-136:

խախտվում էին դժվարությունների պատճառով: Հիմնական դժվարությունը հանքաքարի պաշարների անբավարարությունն էր: Հետախուզական աշխատանքի տեմպերը հետ էին մնում պահանջից: Ցածր էր բանվորների նյութական շահագրգռվածությունը, ծանր՝ սոցիալական պայմանները, մեծ՝ նրանց հոսունությունը:

Մյուս դժվարությունը հաղորդակցության (տրանսպորտի) անբավարար վիճակն էր Զանգեզուրում:

Առաջիկա ծրագրերում, նկատի ունենալով Հայաստանի պղնձի մեծ նշանակությունը ԽՍՀՄ-ի համար, նախատեսվում էր վերացնել Ղափանի կտրվածությունն ու մեկուսացված վիճակը և այն կապել դրսի հետ, կառուցելով երկաթուղագիծ Ղափանից մինչև Մինջևան, որտեղով անցնելու էր Ջուլֆա-Ալյաթ կառուցվելիք գիծը:

Ինչևէ, հաղթահարելով դժվարությունները, աստիճանաբար վերականգնվում էր Հայաստանի արդյունաբերական կարևոր ճյուղը: Գործարկվեցին հանքահորերը, որտեղ ձեռքի աշխատանքը աստիճանաբար մեքենայացվում էր: Կարգավորվում էր օդափոխությունը: Նախկին մի քանի մանր գործարանների փոխարեն, կենտրոնացնելով պղնձի ծուլումը, Ալավերդում և Ղափանում գործարկվեցին մեկական գործարան: Հետազոտական աշխատանքներ էին տարվում հանքաքարի հարստացման (ֆլոտացիա) արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Միութենական վարկի միջոցով ներմուծվում էր նաև արտասահմանյան նորագույն տեխնիկա:

1928/29 տնտեսական տարում հանրապետությունում ծուլվեց 2800 տոննա պղինձ, որը կազմում էր նախապատերազմյան միջին մակարդակի (4600 տոննա)[53] ավելի քան 60 տոկոսը:

Դա նշանակալի հաջողություն էր պատմական կարճ ժամանակի համար, չնայած վերականգնումը դեռևս չէր ավարտվել:

Պղնձարդյունաբերության հետ սերտորեն առնչվում էր քիմիական արդյունաբերության հիմնադրումը: Ծծմբաթթվի և կարբիդ-կալցիումի արտադրությունը Ալավերդու գործարաններում այրված գազերի արդյունք էր: ԽՍՀՄ շուկայի մեծ պահանջով, ասված է փաստաթղթերից մեկում, Ալավերդում զարգացավ կողմնակի արտադրությունների արտադրությունը, ինչպես ծծմբաթթուն և աղաթթուն, պղինձարջասպը, կիրը և այլն: Դրան նպաստում էր նաև սեփական (գործարանային) էլեկտրակայանի էլեկտրաէներգիայի առկայությունը: Սակայն ժամանակին դրանց արտադրությունը դարձավ անշահավետ և այն փակվեց, բացառությամբ կարբիդ-կալ-

---

[53] Խորհրդային Հայաստան, 24 հոկտեմբերի 1929:

ցիումի[54]: Երգէսի գործարկումը և Ջորագետի կայանի շինարարությունը օրակարգի մեջ դրեցին միութենական նշանակություն ունեցող քիմիական ձեռնարկությունների ստեղծումը:

Հայաստանի քիմիական արդյունաբերության առաջնեկը Երևանի կարբիդի գործարանն էր, որը կառուցվեց 1925-1926 թթ.: Հանրապետության պետպլանը 1925 թ. հոկտեմբերին Անդրկովկասի պետպլանին հայտնում էր, թե 60 հազար փութ կարողությամբ այդ գործարանը նկատի ունի բավարարել ԽՍՀՄ-ի շուկան և վերացնել արտասահմանից ներմուծումը (ավելի փոքրածավալ էր Լենինգրադի «Կրասնի ավտոգեն» գործարանի կարողությունը)[55]: Գործարանը, գրել է թերթի թղթակիցը նրա գործարկման կապակցությամբ, մի թանկագին նվաճում բերեց ոչ միայն Հայաստանի, այլև Խորհրդային Միության արդյունաբերության համար: Գործարանի կարողությունը հետագայում ավելանալու էր մինչև 180 հազար փթի[56]:

Ջորագետի էլեկտրակայանի շինարարության հետ միաժամանակ ուսումնասիրվում էր այն հարցը, թե ինչ քիմիական ձեռնարկություններ են լինելու նրա սպառողները, ինչպես նաև դրանց տեղադրման խնդիրը: Այդ ուղղությամբ գիտական ուսումնասիրություններ էր կատարում պրոֆեսոր Լ. Ռոտինյանը, որոնց արդյունքների մասին նա 1927 թ. ներկայացրեց զեկուցում, իսկ նույն թվականին «Հայպղինձ» տրեստի նախագահի հետ միասին պաշտոնական փաստաթուղթ ստորագրեց Ալավերդում ծծմբաթթվի գործարան կառուցելու հնարավորության մասին (844 տոննա կարողությամբ)[57]:

Ծծմբաթթվի արտադրության հետ առնչվում էր պղինձարջասպի գործարանի կառուցումը, որը նախատեսվում էր ԽՍՀՄ ԱՊԽ-ի 1928 թ. «Գյուղատնտեսությունը պղինձարջասպով մատակարարելու մասին» որոշմամբ: Միաժամանակ շարունակվում էին պղինձարջասպի արտադրության գիտական ուսումնասիրությունները[58]:

Գյուղատնտեսության զարգացման նպատակով ծրագրվում էր կազմակերպել նաև արհեստական (քիմիական) պարարտանյութերի արտադրություն: Այս ուղղությամբ տարվել էին նախապատրաստական աշխատանքներ: Տակավին 1923 թ. Հայաստանի տեխնիկական ընկերությունը կազմակերպել էր զեկուցում ազոտային պարարտանյութերի արտադրութ-

---

[54] ՀԱԱ, ֆ. 187, ց. 2, գ. 78, թ. 28-35:
[55] Նույն տեղում, ֆ. 130, ց. 1, գ. 87, թ. 4-5:
[56] Խորհրդային Հայաստան, 3 ապրիլի 1927:
[57] ՀԱԱ, ֆ. 428, ց. 4, գ. 38, թ. 18-33, ֆ. 65, ց. 4, գ. 1334, թ. 1-11:
[58] Նույն տեղում, ֆ. 187, ց. 1, գ. 71, թ. 1, 40: "Экономический вестник ССР Армении", 1929 г., N 1, с. 79-80.

յան հնարավորությունների և գյուղատնտեսության մեջ դրանց օգտագործման նշանակության մասին: Հարցը բազմիցս քննարկվել էր նաև պետական մարմիններում: Նույն թվականին կառավարությանը ներկայացվել էր երեք արդյունաբերական ծրագիր, որոնցից առաջինը վերաբերում էր ազոտային պարարտանյութերին (կամ ցիանամիդին):

1926 թ. հոկտեմբերի 3-ին Պետպլանը լսել էր ինժեներ Անդրեևի զեկուցումը Ձորագետի կայանի մասին և ընդունել որոշում, որը նույն օրը հաստատվել էր կառավարության կողմից: «Անհրաժեշտ համարել,- ասված է որոշման մեջ,- Ձորագետում կառուցվելիք ջրաէլեկտրակայանի էներգիան գործադրել առաջին հերթին և գլխավորապես Հայաստանի ապագա էլեկտրաքիմիական արդյունաբերությանն ուժ հայթայթելու համար»: Շուտով պրոֆեսոր Լ. Ռոտինյանին հանձնարարվեց գիտականորեն հիմնավորել ցիանամիդի գործարանի անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը: Վերջապես այն իրական հողի վրա դրվեց ԱՊԽ-ի որոշումով[59]: Ցիանամիդի գործարանը շուտով վերանվանվեց ազոտային պարարտանյութերի գործարան:

Ընթացքում պարարտանյութերի արտադրությանը միացվեց կարբիդ-կալցիումի արտադրությունը և նախագծվեց մեծ կարողության գործարան, որի կառուցման վայր ընտրվեց Ղարաքիլիսան (Վանաձոր): Ալավերդու դեպքում արտադրության հիմնական հումքը լինելու էր վառարանների այրված գազը, իսկ Ղարաքիլիսայի դեպքում մթնոլորտային ազոտը: Քիմիական պարարտանյութերի արտադրության նշանակությանն էր նվիրված ժողկոմխորհի նախագահ Լուկաշինի ելույթը ԽՍՀՄ խորհուրդների 4-րդ համագումարում[60]:

Նոր պայմաններում, երբ գործարկվելու էին էլեկտրաէներգիայի նոր կարողություններ, դրանց հիման վրա նոր քիմիական ձեռնարկությունների կառուցման գիտական հարցերը ուսումնասիրում էր պրոֆեսոր Լ. Ռոտինյանը, որի արդյունքների մասին նա 1927 թ. ներկայացրեց ընդարձակ զեկուցում[61]: Պրոֆեսոր-խորհրդական Լ. Ռոտինյանը «Հայպղինձ» տրեստի նախագահ Սարգսյանի հետ նույն թվականին ստորագրել է պաշտոնական փաստաթուղթ Ալավերդում ծծմբաթթվի գործարան կառուցելու մասին (8400 տոննա կարողությամբ), հիմնավորելով այն ինչպես արտադրության, այնպես էլ սպառման տեսանկյունից[62]:

---

[59] Խորհրդային Հայաստան, 29 մայիսի 1927:
[60] Խորհրդային Հայաստան, 24 ապրիլի 1927:
[61] ՀԱԱ, ֆ. 428, ց. 4, գ. 38, թ. 18-33:
[62] Նույն տեղում, ֆ. 65, ց. 4, գ. 1334, թ. 1-11:

1928 թ. ԽՍՀՄ Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը որոշում ընդունեց «Գյուղատնտեսությունը պղինձարջասպով մատակարարելու մասին»: Գործարաններից մեկը նախատեսվում էր կառուցել Ալավերդում, շաղկապելով այն ծծմբաթթվի արտադրության հետ: Միաժամանակ հանրապետության ժողտնտխորհը անհրաժեշտ էր համարում շարունակել պղինձարջասպի հիմնական հումքի Ալավերդու պղնձաձուլական վառարանների արտանետվող գազերի ուսումնասիրությունը[63]:

Նախախորհրդային ժամանակաշրջանի զարգացած ճյուղերից էր գինու-կոնյակի արտադրությունը: Հայկական կոնյակը մեծ պահանջարկ և համբավ ուներ Ռուսաստանում և արտասահմանում: Հայաստանում գործում էին կոնյակի 16 փոքր և սպիրտի թորման 4 գործարաններ ու շուրջ 600 մանր ձեռնարկություններ: Հայտնի էր «Արարատ» (նախկին Շուստովի) գործարանը[64]:

Խորհրդային իշխանությունը ազգայնացրեց գինու-կոնյակի բոլոր ձեռնարկությունները և դրանք կենտրոնացրեց «Արարատ» տրեստի համակարգում («Արարատ» պետական տրեստը փաստորեն կազմակերպվել էր 1920 թ.): Տվյալ արդյունաբերության ծանր վիճակի պատճառը այգեգործության քայքայվածությունն էր: Տարիներ շարունակ այգիները չէին բուժվել, ծմռանը հողածածկ չէին արվել, խիստ կրճատվել էր դրանց տարածությունը, ընկել բերքատվությունը: Նշանակում է՝ գինու-կոնյակի արտադրության վերականգնումը անմիջապես կապված էր այգեգործության (գյուղատնտեսության) վերականգնման հետ: Խաղողի այգիների տարածությունը 1928 թ. մոտեցել էր նախապատերազմյան մակարդակին, իսկ բերքի տեսակետից դեռ բավական հեռու էր դրանից: «Արարատ» տրեստը հուսալի հումք ունենալու համար ստեղծեց սեփական այգիներ:

Արդյունաբերության մեջ նորաստեղծ ճյուղեր էին տեքստիլը և շինանյութերի արտադրությունը:

Հայաստանում վաղուց մշակվում էր բամբակ, որը, սակայն, տեղում չէր օգտագործվում և ուղարկվում էր Ռուսաստան: Նրա օգնությամբ էլ տեղում հիմնադրվեց տեքստիլ արդյունաբերություն. 1922 թ. Իվանովո-Վոզնեսենսկի տեքստիլագործները նվեր ուղարկեցին գործարանային սարքավորումներ՝ իլիկներ ու դազգահներ: Ալեքսանդրապոլում (Լենինական, այժմ՝ Գյումրի) դրվեց մանածագործական ֆաբրիկայի հիմքը: Աստիճանաբար մեծացավ նրա հզորությունը, կառուցվեցին գործվածքային ներկման ֆաբրիկաներ: Բամբակազտիչ գործարաններ էին աշխատում Երևանում, Սարդարաբադում և Դավալուում, նախապատերազմյան 200 մանր, տնայ-

---

[63] *Նույն տեղում, ֆ. 187, ց. 1, գ. 71, թ. 1:*
[64] *Նույն տեղում, ֆ. 113, ց. 13, գ. 41, թ. 18-28:*

նագործական տիպի, ձեռնարկությունների դիմաց: Բամբակի հումքի վերամշակման հետ կապված ստեղծվեց (Երևանում) ձեթի և օճառի արտադրություն:

1926 թ. երկրաշարժը մեծ վնաս պատճառեց Ալեքսանդրապոլ քաղաքին, խախտելով գործարանների կառուցման ընթացքը: Մանվածքային գործարանի կարողությունը բարձրացվեց 40 հազար իլիկի, 800 դազգահով: Գործարանն սկսեց աշխատել 1928 թ. Լենգէսի շահագործման հետ միաժամանակ:

Ընդ որում 1925 թ. ոմն Գ. Մ. Շապիրոյի (Մոսկվա) կողմից առաջարկ էր եղել Հայաստանում կառուցելու մասնավոր մանվածքային գործարան: Հանրապետության ժողտնտխորհը դրական կարծիք էր հայտնել, բայց առաջարկը չէր իրականացել[65]:

Շինանյութերի արդյունաբերության գծով կարևոր նշանակություն ուներ տուֆի արտադրության կազմակերպումը: Տուֆ քարը, որն ունի հրաբխային ծագում, մեծ պաշարներով տարածված է Արագած լեռան լանջերին՝ Արթիկի և այլ շրջաններում: Ինչպես ցույց տվեցին ուսումնասիրությունները, տուֆը, որպես շինանյութ, ունի մի շարք առավելություններ: Սակայն նրա օգտագործումը հնարավոր դարձավ միայն խորհրդային իշխանության տարիներին, միութենական մարմինների և նրանց միջոցների օգնությամբ:

1926 թ. ապրիլին Անդրֆեդերացիայում կայացած խորհրդակցություններից մեկում լսվեցին երկրաբան Հովհաննես Կարապետյանի և ինժեներ Պ. Ե. Սոլովևի զեկուցումները շինարարության համար հրաբխային տուֆի նշանակության, հաղորդակցության ճանապարհների ինժեներների ինստիտուտում (Լենինգրադ) կատարած հետազոտական աշխատանքների արդյունքների մասին[66]:

1928 թ. վերադաս մարմիններում ծավալվեցին աշխատանքներ Հայաստանի առաջարկությունները գործնական հողի վրա դնելու ուղղությամբ: Հուլիսին ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը, ԽՍՀՄ ԱՊԽ-ի նախագահ Ռիկովին տեղյակ պահելով միութենական Կիրառական հանքաբանության և մետալուրգիայի ինստիտուտի հանձնաժողովի Լենինականում ունեցած նիստի դրական եզրակացության մասին, խնդրում էր արագացնել տուֆի հանքերի շահագործման հարցի վերջնական լուծումը[67]: Նույն ժամանակ ԽՍՀՄ ժողկոմխորհի նախապատրաստա-

---

[65] Նույն տեղում, ֆ. 65, ց. 1, գ. 203, թ. 69, 99:
[66] Նույն տեղում, ֆ. 113, ց. 5, գ. 61, թ. 1-8:
[67] Նույն տեղում, ֆ. 113, ց. 4, գ. 3472, թ. 7-8: Հանձնաժողովի արձանագրությունը տես նույն տեղում, թ. 4-6:

կան հանձնաժողովը դրական կարծիք հայտնեց Արթիկի տուֆը շինարարության մեջ լայնորեն օգտագործելու հնարավորության ու ցանկալիության մասին[68]:

Հուլիսի 25-ին Մոսկվայում միութենական շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ խորհրդակցություն անցկացրեց Անդրկովկասյան դաշնության ներկայացուցչությունը (լիազոր-ներկայացուցիչ Ղլոնտի, որը նոր էր փոխարինել Ս. Տեր-Գաբրիելյանին), քննարկելով ԽՍՀՄ ժողտնտխորհի Կառուցումների ինստիտուտի ներկայացուցիչ Վուդկեի և Անդրդաշնության պետպլանի ներկայացուցիչ Սամոյլովի զեկուցումները: Հետաքրքիր է, որ զեկուցումներում և ելույթներում տուֆի հայտնագործումը համեմատում էին Ամերիկայի հայտնագործության հետ: Հիշյալ Վուդկեն նշում էր, որ ամբողջ աշխարհում չկա նման շինարարական նյութ[69]: Մի քանի օր անց ԽՍՀՄ ժողտնտգերխորհը Սարգիս Լուկաշինի ղեկավարած հանձնաժողովին հանձնարարեց զեկուցում ներկայացնել ԱՊԽ-ին տուֆի գործածության հարցերի մասին[70]: Բնականաբար զեկուցումը ներկայացվեց[71], և 1928 թ. օգոստոսի 31-ին ԽՍՀՄ ԱՊԽ-ն վերջապես ընդունեց ցանկալի որոշումը, որն անմիջապես հեռագրով հասցվեց Երևան և տպագրվեց մամուլում:

Որոշումը 1928/29 տնտեսական տարվա համար համապատասխան գերատեսչություններին տալիս էր հետևյալ առաջադրանքները շինանյութերի արտադրական պլանում մտցնել Արթիկ-տուֆը, 250 հազար խորանարդ մետր տարեկան արտադրական հաշվարկով, միջոցներ նախատեսելով նաև արտասահմանյան սարքավորումներ ձեռք բերելու համար: Էլեկտրահաղորդման գիծ էր հասցվելու մինչև քարհանքեր: Շարունակվելու էին գիտական- հետախուզական աշխատանքները: Կառուցվելու էր Լենինական-Արթիկ երկաթուղային ճյուղ: Ստեղծվելու էր ընդհանուր շինարարական կազմակերպություն[72]:

1928 թ. վերջերին ԱՊԽ-ի որոշումով ստեղծվեց համամիութենական նշանակության «Արթիկ-տուֆ» տրեստը[73], իսկ ԽՍՀՄ Կենտգործկոմի և ժողկոմխորհի որոշումով «Արթիկ տուֆը» մտցվեց համամիութենական նշանակության ձեռնարկությունների թվում[74]:

---

[68] *Նույն տեղում*, թ. 12:
[69] *Նույն տեղում*, գ. 3588, թ. 3-77:
[70] *Նույն տեղում*, թ. 1:
[71] *Նույն տեղում*, գ. 3472, թ. 14-16:
[72] *Նույն տեղում*, ֆ. 113, ց. 4, գ. 3472, թ. 18:
[73] *Նույն տեղում*, գ. 5317, թ. 23:
[74] *Նույն տեղում*, ֆ. 112, ց. 1, գ. 384, թ. 9:

Միութենական հետաքրքրությունը մեծացավ նաև պեմզայի նկատմամբ: Պեմզան, որը կարող էր դառնալ նաև շինանյութ, օգտագործվում էր որպես փայտի, մետաղի, ապակու հղկման նյութ արդյունաբերության տարբեր ճյուղերում: Նախախորհրդային տարիներին հայկական պեմզան (Կարսի մարզ) գրավում էր ռուսական շուկայի 25-30 տոկոսը: Մնացածը ներմուծվում էր արտասահմանից, որը փակվել էր խորհրդային ժամանակ: Ստեղծված պայմաններում մեծացավ Հայաստանի պեմզայի պահանջը, որ սկսել էր արդյունահանվել Լենինականի շրջանում (Անի-պեմզա)[75]: 1924 թ. ՀՍԽՍ ժողկոմխորհի նախագահ Լուկաշինը խնդիր դրեց ուսումնասիրել պեմզայի պաշարները, շուկայի պահանջը և դրա հետ կապված հարցերը[76]: 1925 թ. կազմակերպվեց Անի-պեմզայի վարչություն, ուսումնասիրվում էին հանքապաշարները (ինժեներ-երկրաբան Այվազյան):

Ուսումնասիրություններ էին կատավում գաջի արտադրությունը կատարելագործելու և քանակը ավելացնելու ուղղությամբ, քանի որ կային հումքի մեծ պաշարներ (Երևանի շրջակայքում) և պահանջ:

Տեղաշարժեր կատարվեցին կաշվի մշակության բնագավառում: Նախապատերազմյան մանր դաբախանաների փոխարեն, որոնք մշակում էին 25-30 հազար կաշի, 1926 թ. գործում էին կաշվի տրեստի երկու գործարաններ, տարեկան 120 հազար մանր և 15 հազար խոշոր կաշի մշակելու կարողությամբ[77]: Վերակառուցում էր կատարվում կաշվի արտադրությունը մեկ գործարանում կենտրոնացնելու համար:

Սննդի արդյունաբերության արտադրանքներից ինչպես նախկին Ռուսաստանի, այնպես էլ ԽՍՀՄ-ի շուկայում հաջողությամբ սպառվում էին մրգի պահածոները: Դրանց արտադրությունը կենտրոնացած էր Երևանի և Մեղրու գործարաններում: Տվյալ արտադրության զարգացումը կախված էր պտղագործության վիճակից: Ուստի նախատեսվում էին առաջին հերթին պտղաբուծությունը զարգացնել պետական ձեռնարկություններում, սեփական հումքային բազա ստեղծելու միջոցով: Այդ նպատակով կազմակերպվեց Հայկոնսերվտրեստը, որի համակարգում ընդգրկվեցին պահածոների արտադրության կարողությունները և պտղաբուծական սովխոզները:

Հետամնաց վիճակում էր մետաղամշակությունը: Փաստորեն որևէ գործարան գոյություն չուներ: Բնակչության պահանջներին ծառայում էին մեխանիկական արհեստանոցները և տնայնագործական տիպի դարբնոցները: Երևանում գոյություն ուներ գործարան կոչվող միակ ձեռնարկությունը, մաշված ու հնացած սարքավորումներով: Այն արտադրում էր գյու-

---

[75] Экономический вестник ССР Армении, 1925 г., N 24 с. 66-71.
[76] ՀԱԱ, ֆ. 130, ց. 1, գ. 31, թ. 49:
[77] Նույն տեղում, ֆ. 113, ց. 13, գ. 41, թ. 18-28:

ղատնտեսական գործիքներ, կատարում նորոգումներ և այլ ծառայություններ: Նա հեռու էր արդյունաբերության, գյուղատնտեսության ու բնակչության կարիքները բավարարելուց: 1927-1928 թթ. ԽՍՀՄ ժողտնտգերխորհի օգնությամբ այն վերակառուցվեց նորագույն տեխնիկայով ու սարքավորումներով, և դարձավ Հայաստանի առաջին ու միակ մեխանիկական գործարանը[78]:

Արդյունաբերության ինչպես և ամբողջ տնտեսության վերականգնման ու զարգացման երաշխիքը հաղորդակցության միջոցներն էին: Հայաստանի ղեկավար մարմիններին մտահոգում էր այդ հարցը ևս և նրանք Անդրդաշնության ու միութենական բարձրագույն ղեկավարության առաջ դրել էին հաղորդակցության ստեղծման ու զարգացման հարցեր:

Դրանցից առաջինը վերաբերում էր Աղստաֆա-Իջևան-Երևան երկաթուղագծի կառուցմանը: Այդ գծի անցկացման նպատակը նախ ռազմավարական էր (միակ գիծն անցնում էր Թուրքիայի հետ Հայաստանի պետական սահմանով), ինչպես նաև հանրապետության ներքին շրջանների տնտեսական զարգացումը, հատկապես Սևան-Հրազդանի կենսագործումը: Այդ հաղորդակցային ուղու անհրաժեշտության հարցը ծագել է տակավին 1925 թ.: ՀՍԽՀ ժողկոմխորհի նույն թվականի հոկտեմբերի 28-ի որոշումից երևում է, որ գոյություն է ունեցել Անդրերկաթուղու վարչության կոմիտե Աղստաֆա-Իջևան-Երևան երկաթուղագծի և Ղաթարի ճյուղի (Ղափան-Մինջևան) տնտեսական-տեխնիկական հետազոտություն կատարելու համար: Այն լրացվեց Հայաստանի նոր մասնագետներով:

Անդրժողտնտխորհը քննարկել էր Հայաստանի կառավարության 1925 թ. օգոստոսի 13-ի միջնորդությունը և այն փոխանցել ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների ժողկոմատի ԱԽՖՍՀ լիազորին (Շալվա Էլիավա) հարցը լուծելու համար: Վերջինս հաղորդակցության ճանապարհների ժողկոմատի երկաթուղային վարչություն ուղարկած գրության մեջ հիշեցնում էր, որ ժողկոմ Ռուծուտակը Հայաստանում գտնված ժամանակ խոստացել է գումար տրամադրել գործն սկսելու համար: Իսկ Անդրկովկասյան պետպլանը ամբողջ գծի կառուցումը մտցրել էր առաջիկա 5 տարվա պլանի մեջ: Ուստի էլիավան իր գրությամբ ժողկոմատի երկաթուղային վարչությանը խնդրում էր միջոցներ տրամադրել ամբողջ գծի (շուրջ 200 վերստ) հետախուզական աշխատանքները կատարելու համար[79]:

---

[78] Նույն տեղում, ֆ. 65, ց. 4, գ. 1338, թ. 1-4:
[79] ՀԱԱ, ֆ. 428, ց. 4, գ. 13, թ. 11-12:

Հիշյալ երկաթուղային վարչությանը նույն օրերին դիմել էր Հայաստանի կառավարությունը Ղաթարի ճյուղի մասին, նրա կառուցումը գնահատելով խիստ անհրաժեշտ[80]:

1926 թ. ապրիլի 27-ին Հայաստանի կառավարությունը Աղստաֆա-Երևան գծի հետախուզական աշխատանքների մասին որոշման մեջ տվել է գծի հետևյալ հիմնավորումը. «Ի նկատի ունենալով Հարավ-Արևմտյան Ղռերի շրջանի ենթադրվող ռոռգումը և բնակեցումը, ցանկալի համարել Աղստաֆա-Երևան երկաթգծի հետախուզական աշխատանքները կատարել նաև Զանգու գետի աջ ափով և խնդրել ԽՍՀՄ ճանապարհների հաղորդակցության ժողկոմատի ԱԽՖՍՀ-ում Լիազորին այդ աշխատանքները մտցնել իր 1926/27 թթ. աշխատանքների ծրագրի մեջ»: Նույն որոշումից երևում է, որ մինչև Իջևան (հասկանալ Աղստաֆայից) հետախուզական աշխատանքներն արդեն կատարված են եղել, ուստի Լիազորին խնդրվում էր այդ հիման վրա մինչև մայիսի վերջը կազմել նախագիծ, նկատի ունենալով «խնդրի հետաքրքրությունը»[81]: Հետախուզական աշխատանքները, ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, շարունակվել են նաև 1-ին հնգամյակի տարիներին: Ինչպես հայտնի է, 1920-30-ական թվականներին երկաթգծի շինարարական աշխատանքներ տեղի չունեցան: Գծի կառուցումը հետաձգվեց երկար տարիներ և իրականացավ հետպատերազմյան ժամանակաշրջանում:

Ինչ վերաբերում է երկաթուղային ճյուղերին, որոնք ունեին անմիջապես գործնական նշանակություն, ապա դրանց նախագծումը և կառուցումը տեղի ունեցավ մոտակա տարիներին (1-ին հնգամյակում):

Քանի դեռ արդյունաբերական արտադրությունը հետ էր մնում, բնակչության սպառողական պահանջները բավարարում էր տնայնագործական արդյունաբերությունը: Հայաստանում զարգացած էին տնայնագործական արտադրության բազմաթիվ տեսակներ (փայտագործություն, գորգագործություն, մետաղագործություն, բրուտագործություն և այլն): Խորհրդային տարիներին կազմավորվեցին անհատ արհեստավորների արտելներ, որոնք 1926 թ. միավորվեցին Հայաստանի տնայնագործական արհեստների կոոպերատիվ միության (Հայտնայկոոպ) մեջ:

Խորհրդային երկրի արդյունաբերական շինարարությունը և վերականգնումը տեղի էր ունենում ներքին սեփական միջոցներով, առանց դրսի

---

[80] Նույն տեղում, թ. 4:

[81] Նույն տեղում, ֆ. 130, ց. 1, գ. 174, թ. 109: Տես նաև "Восстановление народного хозяйства Армянской ССР (материалы и документы за 1921-1928 гг.). Ереван, 1958, с. 216-217.

օգնության ու մասնակցության: Խորհրդային իշխանությունը սկզբունքորեն չէր ժխտում արտասահմանյան կապիտալի մասնակցությունը, սակայն փաստորեն ղեկավարվում էր քաղաքական նկատառումներով: Այնուամենայնիվ եղել են արտասահմանյան կապիտալի առաջարկություններ նաև Հայաստանում կոնցեսիա ձեռք բերելու համար:

Առաջին առաջարկությունները վերաբերում էին պղնձարդյունաբերությանը և էլեկտրիֆիկացիային:

«Ֆրանսիական Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերության» լիազոր Բ. Գ. Լիպկինը դիմել էր Հայաստանի ժողտնտխորհին, հայտնելով, որ ընկերությունը ցանկանում է 30 տարով վարձակալել Ալավերդու և Ղաթարի պղնձահանքերն ու գործարանները, հիշեցնելով, որ նա համապատասխան պայմանագիր է ունեցել 1887 թ. և 1914 թ., 30 տարվա վարձակալության մասին[82]:

Սիսիմադանի պղնձաձուլական գործարանը վարձակալելու մասին դիմել էր նրա նախկին սեփականատեր Պետրոս Հակոբյանը (Թիֆլիս), ծծմբաթթու արտադրելու համար:

Կան փաստաթղթեր այն մասին, որ Ալավերդու և Զանգեզուրի վարձակալության մասին բանակցությունները ֆրանսիական ֆիրմայի ներկայացուցիչ, Մարիուս Ռոբենի հետ ուշանում էին, ուստի ԽՍՀՄ ժողկոմխորհին կից Գլխավոր կոնցեսիոն կոմիտեն 1924 թ. շտապեցնում էր Հայաստանի ժողկոմխորհի ներկայացուցչի ժամանումը Մոսկվա[83]:

1925 թ. հունվարին հանրապետության ժողտնտխորհը, ի պատասխան կառավարության հարցումի, հայտնում էր, որ ֆրանսիական և իտալական կապիտալիստները, որպես նախկին շահագործողներ, դիմել և հետաքրքրվել են Ալավերդու պղնձի հանքերով, իսկ տեքստիլ արդյունաբերությամբ հետաքրքրվել է արտասահմանյան հայ կապիտալիս Գարիկյանը:

Հայաստանի կոնցեսիոն հանձնաժողովը 1925 թ. փետրվարին Անդրկովկասի կոնցեսիոն հանձնաժողովին հայտնում էր, որ կոնցեսիայի հարցը սպառված է, քանի որ ԱՊԽ-ն միջոցներ է տրամադրել Ղաթարի և Ալավերդու գործարանների վերականգնման համար, այդ հնարավոր համարելով մյուս գործարանների համար[84]:

---

[82] ՀԱԱ, ֆ. 187, ց. 2, գ. 13, թ. 1-2:
[83] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 239, թ. 18:
[84] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 263, թ. 55:

Վերոհիշյալ Կարիկյանի վերաբերյալ Լոնդոնից ստացված մի նամակում հայտնվում էր, որ նա, հույսը կտրելով, Փարիզից գնացել է Բելգիա և այնտեղ է կոնցեսիաներ որոնում[85]:

Հայտնի է, որ Սևանի ջրերը էլեկտրականության ու ոռոգման նպատակով օգտագործելու հնարավորությունը վաղուց էր գրավել օտարերկրացիների ուշադրությունը: Ցարական ժամանակ կոնցեսիոն պայմանագիր էր ստորագրել անգլիական ինժեներ Ստյուարտը:

Անգլիական էլեկտրատեխնիկական ընկերություններից մեկը 1924 թ. դիմել էր Անդրֆեդերացիայի մարմիններին և, հենվելով 1919-1920 թթ. Հայաստանի Հանրապետության կողմից Զանգու գետի վրա հզոր հիդրոկայան կառուցելու նախագծի քննարկման տվյալների վրա, հայտնում էր իր շահագրգռվածության մասին, եթե գոյություն ուներ այդ նախագիծը իրականացնելու առաջարկություն[86]:

Կոնցեսիայի առաջարկներ են արվել նաև հետևյալ ծեռնարկումների համար. կառուցել ցեմենտի գործարան (նկատի ունենալով, որ Հայաստանում ծավալվում է շինարարությունը), բազալտի ծուլման գործարան (մեկուսիչ նյութերի պատրաստման համար), մշակել ծկան թեփը (մարգարին ստանալու համար), կազմակերպել մրգի պահածոների արտադրություն և այլն:

Հայաստանում որևէ կոնցեսիա չիրականացվեց: Ընդհանրապես այն մեծի մասամբ մերժվում էր տնտեսական աննպատակահարմարության պատճառաբանությամբ, երբ իրականում պատճառը քաղաքական էր: Օտարերկրյա կապիտալի նկատմամբ խորհրդային իշխանության քաղաքականության մասին վկայում է հետևյալ փաստաթուղթը: 1924 թ. հունիսին Անդրժողկոմխորհը Հայաստանի կառավարությանը տեղեկացնում էր, թե Բարձրագույն տնտեսական խորհրդի որոշումով մի շարք արտասահմանյան ֆիրմաներ ենթակա են փակման մեկ ամսվա ընթացքում: Մյուս ֆիրմաներին առաջարկվում է երկու շաբաթվա ընթացքում կոնցեսիայի մարմինների հետ վարել բանակցություններ՝ կոնցեսիոն հիմունքներով ԱԽՖՍՀ-ում հետագա աշխատանքի մասին[87]:

Իրականացված միջոցառումների շնորհիվ արդեն 1928 թ. հիմնականում ավարտվեց տնտեսության վերականգնումը: 1913 թ. համեմատությամբ ցուցանիշները գերազանցվել էին գյուղատնտեսության համախառն արտադրության, ոռոգելի հողատարածությունների, ցանքատարածությունների, անասունների գլխաքանակի և այլ գծերով: Ավարտվել էր նաև

---

[85] Նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 9, թ. 7-8:
[86] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 239, թ. 33-34:
[87] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 239, թ. 70:

արդյունաբերության վերականգնումը, հատկապես նորակառույցների գործարկման միջոցով, չնայած պղնձի և գինու-կոնյակի, արդյունաբերության այդ հիմնական ճյուղերի, վերականգնումը դանդաղում էր և հեռու էր նախապատերազմյան մակարդակից:

Արդյունաբերության համախառն արտադրանքը (1926/27 թ. անփոփոխ գներով) 1928 թ. կազմում էր 28,2 միլիոն ռուբլի, 1913 թ. 20,7 միլիոն ռուբլու դիմաց[88], ավելանալով մոտ 14 տոկոսով: Նշենք, որ խորհրդային վիճակագրությունը տնտեսության պատկերը մեծի մասամբ ներկայացրել է ոչ թե ֆիզիկական, այլ դրամական արտահայտությամբ, որը չի օգնում ճիշտ պատկերացում ունենալ իրերի իրական դրության մասին: Նման մոտեցումն իշխանությունների համար ուներ իր պատճառները, առաջին հերթին այն հնարավորություն էր տալիս քողարկելու անհաջողություններն ու ձախողումները, որպիսիք քիչ չէին խորհրդային իշխանության պայմաններում:

Չնայած արդյունաբերության հիմնական երկու ճյուղերը (լեռնահանքային և գինու-կոնյակի) դեռևս հետ էին մնում, այնուամենայնիվ նոր ձեռնարկությունների գործարկման շնորհիվ արդյունաբերական արտադրանքը գերազանցել էր նախապատերազմյան մակարդակը: Նշանակալի էր հատկապես էլեկտրաէներգիայի արտադրության արագ աճը ավելի քան 4 անգամ, 5,1-ից հասնելով 20,6 միլիոն կիլովատժամի[89]:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը նույն տարիներին կազմում էր 65,8 և 72,4 միլիոն ռուբլի: Ճանքատարածությունների համապատասխան ցուցանիշներն էին 345,7 և 332,0 հազար հեկտար, լրիվ վերականգնում տեղի ունեցավ 1929 թ.: Գյուղատնտեսության բնագավառում կարևոր նշանակություն էր տրվում տեխնիկական մշակույթների զարգացմանը: Վերականգնումն ակնառու էր անասնապահության գծով: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1916 թ. 708,0 հազարի դիմաց 1928 թ. բարձրացել էր 804,0 հազարի: Վերականգնվել էր նաև մանր եղջերավոր անասունների գլխաքանակը[90]: Պետք է նշել, որ անասունների գլխաքանակի 1928 թ. ցուցանիշները մնացին առավելագույնը հետագա երկարդ տարիների ընթացքում, երբ կոլեկտիվացման հետ կապված տեղի ունեցավ անասնագլխաքանակի մեծ անկում:

---

[88] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940 гг.). Статистический сборник. Ереван, 1940, с. 23.
[89] Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник. Ереван, 1957, с. 30.
[90] Социалистическое строительство Армянской ССР, с. 47, 64. Народное хозяйство Армянской ССР, с. 75.

2. Սոցիալական փոփոխություններ

1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած իրադարձությունը դիտվում էր որպես սոցիալական հեղափոխություն, որի նպատակն էր վերացնել հասարակության բաժանումը դասակարգերի, հասարակության մի մասի կողմից մյուսի շահագործումը, երբ մասնավոր սեփականությունը փոխարինելով հանրային սեփականությամբ, վերջինս ծառայելու էր հասարակության բոլոր անդամների բարեկեցությանն ու համակողմանի զարգացմանը:

Ծրագրի կենսագործումը պատմական տևական ժամանակաշրջանի խնդիր էր, քանի որ հեղափոխությունը հաղթանակել էր տնտեսապես հետամնաց երկրում: Ուստի հասարակության սոցիալական պահանջների բավարարումը կարող էր և իրականացվում էր համեմատաբար դանդաղ ընթացքով, պետության առկա նյութական հնարավորություններին ու վարվող քաղաքականության համապատասխան: 1920-ական թվականներին հասարակության սոցիալական դրության բարելավմանը զգալիորեն նպաստեց Նոր տնտեսական քաղաքականությունը, որը կոչված էր բարձրացնելու գյուղացիության և մյուս աշխատավորների նյութական շահագրգռվածությունը արտադրության և վաճառքի բնագավառում:

Խորհրդային իշխանության սոցիալական բնագավառի առաջին որոշումներից էր, ինչպես արդեն նշվել է, դասերի ու քաղաքացիական աստիճանների վերացման մասին հրամանը (1921 թ. հունվարի 21): Ըստ դրա՝ Հայաստանում վերացվում էին գոյություն ունեցող դասերը և քաղաքացիների դասային բաժանումները, դասային արտոնություններն ու սահմանափակումները, ինչպես և քաղաքացիական աստիճանները: Վերացվեցին ամեն տեսակի կոչումները՝ բեգ, խան, իշխան և Հայաստանի ամբողջ ազգաբնակչության համար սահմանվեց ընդհանուր կոչում՝ «Հայաստանի հանրապետության քաղաքացի»: Սահմանադրությունը նրանց համար տվեց «ՀՍԽՀ քաղաքացի» ձևակերպումը: Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորումով հանրապետության քաղաքացիները միաժամանակ դարձան նաև Անդրդաշնության և ԽՍՀՄ քաղաքացիներ:

Պետք է նշել, սակայն, որ սոցիալական անհավասարության վերացման և քաղաքացիություն մտցնելու մասին օրենսդրությունը փաստորեն գործում էր նախորդ իշխանության ժամանակներից, երբ գործողության մեջ էր «Հայաստանի Հանրապետության քաղաքացի» սահմանումը:

Նեպի տարիներին նոր միջոցառումներ իրականացվեցին կալվածատերերի նախկին դասի նկատմամբ: Կալվածատերերին հողատիրության

իրավունքից զրկելուց և նրանց հողերը գյուղացիությանը հանձնելուց հետո բանվորագյուղացիական դաշինքի հետագա ամրապնդման նպատակով 1925 թ. հրապարակ եկավ միութենական որոշում կալվածատերերին հողօգտագործման և մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը նրանց պատկանած տնտեսություններում ապրելու իրավունքից զրկելու մասին: Որոշումը կատարելու նախապատրաստություն տեղի ունեցավ նաև Հայաստանում, չնայած կալվածատերերի թվի խիստ սակավությանը և իրենց նախկին տնտեսություններից նրանցից շատերի հեռու գտնվելուն: Այնուամենայնիվ վերևից իջած որոշումը պետք է կատարվեր, ուստի կազմվեցին համապատասխան ցուցակները, բազմիցս ստուգվեցին ու վերանայվեցին, իսկ 1929 թ. ապրիլին ՀԿ(բ)Կ Կենտկոմը պահանջեց արտաքսման ենթակա նախկին կալվածատերերի թիվը իջեցնել մինչև 31-ի, արտաքսման ժամկետ սահմանելով մինչև մայիսի 25-ը: Հունիսին Կենտկոմը պահանջում էր նորից վերանայել ցուցակը և իրագործել արտաքսումը: Հայ կալվածատերերին ավելացան նաև բեգերն ու ցեղապետերը:

Հայաստանում տվյալ որոշման կատարման ձգձգումը վկայում էր այն մասին, որ իրենց նախկին տնտեսություններում բնակվող նախկին կալվածատերեր գոյություն չունեին: Կալվածատերերի մի մասն արտաքսվեց Հայաստանի կամ Անդրկովկասի սահմաններից, մյուսները՝ հանրապետության այլ շրջաններ (Նոր Բայազետ):

Նախկին կալվածատերերի արտաքսման կամպանիան համընթաց էր այն միջոցառմանը, որով հողօգտագործման իրավունքից զրկվում էին այն հողօտագործողները, ովքեր գյուղում չէին բնակվում և վարում էին ոչ աշխատավորական տնտեսություն: Հանրապետության սակավահողության պայմաններում այս միջոցառումը կարող էր որոշ չափով օգնել հողազրկության վերացման, չքավորության դեմ պայքարին, սոցիալական դրության բարելավմանը:

1920-ական թվականներին գյուղում տեղի էին ունենում էական նշանակություն ունեցող սոցիալական տեղաշարժեր: Այդ տեղաշարժերի ընթացքը և արդյունքները պարզելու համար ժամանակին կատարվել են մեծ թվով հետազոտություններ վիճակագիրների, տնտեսագետ-ագրարագետների, պետական-կուսակցական կազմակերպությունների և այլոց կողմից: Այդ հետազոտություններն ունեին ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն:

Գյուղի սոցիալական շերտերի տեսական (լենինյան) ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքիր են Բուխարինի աշխատությունները: Ըստ Բուխարինի գյուղացի է կուլակը, ամուր տնտեսատերը, որն ունի մի քանի բատրակ և շահույթ է ստանում նրա աշխատանքից: Գյուղացի է և

աշխատավոր տնտեսատերը, որն ընտանիքի կազմով աշխատում է իր համար և չի ապրում ուրիշի աշխատանքով: Գյուղացի է նաև ծիազուրկ չքավորը, որը հազիվ է ծայրը ծայրին հասցնում և հաճախ դիմում կողմնակի վաստակի: Գյուղացի է կոչվում նաև կիսաբատրակը, կիսաբանվորը, որի գյուղացիական տնտեսությունը նրա գոյատևման օժանդակ աղբյուր է ծառայում: Բուխարինի աշխատություններում կուլակ վաշխառուն, ստրկական կախվածության տերը, «ամուր տնտեսատերը» նույնանում է իրական կյանքում գոյություն ունեցող վարձու աշխատանքով ձեռնարկատիրական տնտեսության կազմակերպող գյուղացու հետ[91]:

Ինչ վերաբերում է գյուղի սոցիալական շերտերի պատկերին, ապա այդ տեսակետից վստահելի են ճանաչվել ԽՍՀՄ Ժողկոմխորհի հանձնաժողովի կատարած ուսումնասիրության արդյունքները: Հանձնաժողովի տվյալները այսպիսին են այն տարիների համար, երբ Նեպը գործում էր և համապատասխան ուղղություն տալիս գյուղի շերտավորման գործընթացին.

Գյուղի սոցիալական կազմը 1924/25-1226/27 թթ.[92]

Բնակչության խմբերը	Գյուղական ինքնագործ բնակչության տեսակարար կշիռը (%-ով)		
	1924/25	1925/26	1926/27
Պրոլետարիատ	9,7	10,9	11,3
Չքավորներ	25,9	23,7	22,1
Միջակներ	61,1,	61,7	62,7
Կուլակներ	3,3	3,7	3,9

Խորհրդային տարիներին Նեպի շնորհիվ գյուղում կատարվում էր կապիտալիզմից տարբերվող սոցիալական շերտավորում: Տեղի էր ունենում գյուղի միջակացում: Ընդունված էր ասել, որ միջակը ճանաչվում էր որպես գյուղի կենտրոնական դեմք: Միջակ գյուղացիների թվի ավելացումը կատարվում էր չքավորների հաշվին, որի դրությունն աստիճանաբար բարելավվում էր: Չքավորները մասամբ համալրում էին գյուղական պրոլետարների շարքերը: Միջակների վերնախավի հաշվին աճ էր տեղի ունենում կուլակների շարքերում, սակայն խորհրդային իշխանության քաղաքականությունը զսպում և սահմանափակում էր այդ աճը: Իսկ 1928-1929

---

[91] Բերվում է ըստ В. П. Данилов, Н. А. Ивницкий. О деревне накануне и в ходе сплошной коллективизации: Документы свидетельствуют, с. 52-53.

[92] Тяжесть обложения в СССР. Социальный состав, доходы и налоговые платежи населения Союза СССР по изучению тяжести обложения населения Союза. М., 1929,с. 74-77. Բերվում է ըստ Документы свидетельствуют, с. 19.

թթ., երբ ԽՍՀՄ-ում Նէպը կծկվում ու սահմանափակվում էր (հիշել "Чрезвычайщина"-ն), կրճատվում էր կուլակային տնտեսությունների թիվը: 1927 թ. կուլակների առավելագույն ցուցանիշն է 3,9 տոկոս, իսկ 1929 թ. այն նվազում է մինչև 2,3 տոկոսի: Այդ նվազումը արդյունք էր ինչպես հացամթերումների հետ կապված արտակարգ միջոցառումների, այնպես էլ ինքնավերացման, երբ կուլակներն իրենք էին դիմում կուլակության համար սահմանված հատկանիշներից ազատվելուն:

Պետք է նշել, որ չնայած կառավարության կողմից ընդունված պաշտոնական տվյալներին, հետագայում կուլակության վերացման կամ անհատական հարկադրման համար հանձնարարվեցին ավելի բարձր ցուցանիշներ, այն է՝ 3,0-5,0 տոկոս: Դա բնականաբար հանգեցնելու էր շահագործող տնտեսությունների հետ միասին նաև աշխատավորական (միջակ, նույնիսկ չքավոր) տնտեսությունների նկատմամբ բռնության ու կուլակաթափության գործադրմանը:

ԽՍՀՄ գյուղի օրինաչափություններն ընդհանուր էին նաև Հայաստանի համար, սակայն որոշ առանձնահատկությամբ: Դա հայկական գյուղի առավել չքավորական բնույթն էր և կուլակության շերտի բարակությունը:

Նշենք, որ Հայաստանում առկա էր շուրջ 200 հազար արևմտահայ գաղթականություն, որի մեծ մասը բնակվում էր գյուղում: ՀԿ(բ)Կ 6-րդ համագումարը (1929 թ.), որպես Նէպի հաջող կենսագործման արդյունք, արձանագրեց «գյուղացիության լայն զանգվածների տնտեսական դրության համեմատական բարելավումը և գյուղացիության միջին շերտի ընդլայնումը»: Իսկ հանրապետության Կենտրոնական վիճակագրության վարչության տվյալներով՝ այդ գործընթացներին զուգընթաց տեղի էր ունենում նաև «հարուստ և ունևոր տնտեսությունների որոշ աճ» ի հաշիվ միջակ գյուղացիության վերնաշերտի:

Գյուղի շերտավորումը կարգավորելու և այն խորհրդային իշխանության համար ցանկալի ընթացքով առաջ մղելու նպատակին էր ծառայում՝ հենվել չքավոր գյուղացիության վրա, դաշինք կնքել միջակի հետ և պայքարել կուլակի դեմ քաղաքականությունը: Նէպի տարիներին կուլակի նկատմամբ կիրառվում էր նրա շահագործողական հակումները սահմանափակելու քաղաքականություն, իսկ 1928 թ. սկսած ուժեղ հարձակում ծավալվեց նրա նկատմամբ, որն արտահայտվում էր կուլակների վերնախավի բարձր հարկումով (անհատական հարկի գործադրում): Գյուղի սոցիալ-տնտեսական դրության բարելավման հիմնական լծակը խորհրդային իշխանության հարկային քաղաքականությունն էր, իսկ Նէպի վերջին տարի-

ներին դասակարգային մոտեցումը ուժեղացավ նաև ագրարային բարեկարգումների բնագավառում:

Սոցիալ-դասակարգային բովանդակություն ունեցող փոփոխություններ էին տեղի ունենում քաղաքային բնակչության կազմում:

Արդյունաբերության վերականգնման ու զարգացման շնորհիվ կազմավորվում էր Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը, ավելանում բանվորների ու ծառայողների թիվը: 1928 թ. տվյալներով նրանց ընդհանուր թիվը կազմում էր 50 հազար[93], որը խորհրդային իշխանության անցած տարիների գործունեության արդյունք էր, քանի որ 1920-ական թվականների սկզբին արդյունաբերական կյանք գրեթե չկար: Այդ ընթացքում մեծ աշխատանք կատարվեց արդյունաբերական ու գյուղատնտեսական և երկրի այլ կարիքների համար պահանջվող կադրերի պատրաստման ուղղությամբ, որի շնորհիվ որակական տեղաշարժեր ու փոփոխություններ կատարվեցին սոցիալական հարաբերությունների բնագավառում:

Կադրային հարցի լուծումը ծառացավ Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո: Լուծումն ուներ երկու ուղի՝ գոյություն ունեցող կադրերի օգտագործումը, ներգրավումը աշխատանքի մեջ և նոր, խորհրդային կադրերի պատրաստումը, որը, սակայն, պահանջում էր ժամանակ: Ուստի առաջին հերթին մնում էր դիմել գոյություն ունեցող կադրերի օգնությանը, որպիսիք քիչ լինելով Հայաստանում, պետք էր ապահովել դրսից:

Վերը արդեն ասվել է պետական ու կուսակցական ղեկավար կադրերի համալրման մասին, որը կատարվեց Ռուսաստանի և մյուս խորհրդային հանրապետությունների հայերի հաշվին:

Կադրային հարցի լուծումն ավելի բարդացավ 1921 թ. փետրվարյան ապստամբության և քաղաքացիական կռիվների պատճառով, երբ հարյուրավոր հայ մտավորականներ ապստամբների հետ միասին պարտությունից հետո նահանջեցին ու հեռացան դեպի Պարսկաստան: Հայաստանի խորհրդային իշխանությունը մեծ ջանքեր գործադրեց նրանց վերադարձը արագ կազմակերպելու համար: Մինչև 1921 թ. մտավորականների մեծ մասը, որի մեջ էին տարբեր բնագավառների ու մակարդակների մասնագետներ, ներգրավեցին խաղաղ ստեղծագործական աշխատանքի: Եվ, այնուամենայնիվ, մեծ էր որակյալ մասնագետների կարիքը:

Խորհրդային իշխանությունը սկզբունքորեն կողմ էր հին «բուրժուական» մասնագետների ծառայությանը: Ավելին, նույնիսկ նրանց համար ստեղծվում էին նպաստավոր ու արտոնյալ պայմաններ: Բարեբախտաբար

---

[93] Труд в Армянской ССР (статистический сборник), Ереван, 1970, с. 18.

այդպիսի հայ մասնագետների թիվը քիչ չէր Ռուսաստանում և այլ երկրներում: Նրանք սկսել էին հայրենիք վերադառնալ Հայաստանի Հանրապետության տարիներին և ավելի մեծ չափով խորհրդային ժամանակ:

Նախ և առաջ հավաքագրվեցին տեղական կադրերը: Հին մտավորականության մեծ մասը հավատարմորեն ընդունեց խորհրդային կողմնորոշում, և միայն քչերը դարձան տարագիր: Խորհրդային իշխանության առաջին իսկ դեկրետներով ցուցակագրվում և աշխատանքի էին հրավիրվում ինժեներ-տեխնիկները, գյուղատնտեսները և այլ մասնագետներ: Որոշ տվյալներով Հայաստանում 1928 թ. դրությամբ կառավարման և արտադրության մեջ զբաղված էր շուրջ 400 ինժեներ-տեխնիկ, այդ թվում 257 շինարար-տեխնիկ, 80 լեռնահանքային ինժեներ-տեխնիկ և այլն[94]: Խոսքը միայն հին կադրերին է վերաբերում:

Հայաստան վերադարձավ Ռուսաստանի ճարտարապետական գիտությունների ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը, որը ծեռնամուխ եղավ Երևան մայրաքաղաքի կառուցապատման-հատակագծման, էլեկտրակայանների ու արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության կազմակերպմանը: Հանրապետության էլեկտրիֆիկացիայի և ջրաշինարարության բնագավառում մեծ է ինժեներ Հովսեփ Տեր-Աստվածատրյանի վաստակը: Լեռնաքիմիական արդյունաբերության բնագավառում տարբեր պաշտոններ են զբաղեցրել Դ. Մելյանը, Հ. Պողոսյանը, Ե. Զանփոլադյանը, Խ. Տրապեզոնցյանը, Վ. Զարապովը, Ս. Քոչարյանը, Լ. Ղազարյանը և ուրիշներ: Մեծաթիվ շինարար ինժեներներից էին Բ. Արազյանը, Բ. Հասան-Զալալյանը, Կ. Զուրոբովը, Գ. Տեր-Գաբրիելյանը, Հ. Տեր-Հովհաննիսյանը (Քաջազունի), Կ. Յուզբաշևը, Ն. Բունիաթյանը: Վերջինս հեղինակեց 1923 թ. Մոսկվայում բացված գյուղատնտեսական-արհեստագործական ցուցահանդեսի հայկական տաղավարը[95]:

Գյուղատնտեսության վերականգնման և զարգացման գործին իրենց նպաստը բերեցին Խ. Ավդալբեգյանը, Կ. Բոխյանը, Գ. Գրձելյանը, Լ. Մանուչարյանը, Գ. Աղամալյանը, Գ. Պիճիկյանը և ուրիշներ:

Նրանցից շատերը բարձրագույն կրթություն էին ստացել Ռուսաստանի ու Եվրոպայի դպրոցներում, փորձառություն ձեռք բերել այդ երկրներում: Որոշ մասնագետներ դասավանդում էին Երևանի պետական համալսարանում, մասնակցելով նոր, խորհրդային կադրերի պատրաստման գործին:

---

[94] А. К. Григорянц. Формирование и развитие технической интеллигенции Армении. Ереван, 1966, с. 116.
[95] Նույն տեղում, էջ 87-128:

Կադրերի պատրաստման հիմնական ուղին, իհարկե, դպրոցական համակարգն էր: Բարձրագույն կադրերի պատրաստման միակ դարբնոցը Երևանի համալսարանն էր, որը հիմնադրվել էր 1919 թ. և 1920-ական թվականներին ուներ չորս ֆակուլտետ՝ հասարակագիտական, տեխնիկական, գյուղատնտեսական և բժշկական: 1926 թ. նա տվեց առաջին շրջանավարտները: Մյուս բարձրագույն դպրոցը Երևանի կոնսերվատորիան էր: 1928-1929 ուսումնական տարում բացվեց երրորդ բարձրագույն դպրոցը՝ Անդրկովկասյան անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը:

Մինչև 1930 թ. համալսարանն ավարտեցին 931 երիտասարդներ, այդ թվում 47 ինժեներ, 279 գյուղատնտես և 13 բժիշկ[96]:

Միջնակարգ մասնագիտական կրթությամբ կադրեր էին պատրաստում տեխնիկումները և ուսումնարանները: Ինդուստրիալ տեխնիկումներ էին գործում Երևանում և Լենինականում, գյուղատնտեսական ուղղության՝ Ղարաքիլիսայում (Վանաձոր), Լենինականում (Գյումրի), Կամոյում (Գավառ), մանկավարժական՝ Երևանում (նաև ադրբեջանական), Լենինականում, Ստեփանավանում, Վաղարշապատում (Էջմիածին), բժշկական, երաժշտական, գեղարվեստական, պարարվեստի ուսումնարաններ՝ Երևանում:

1925 թ. Հայաստանի երկու բուհերում սովորում էր 1646 ուսանող, իսկ ութ տեխնիկումներում 1676 տղա և աղջիկ[97]:

Հայաստանի համար կադրեր էին պատրաստում նաև ԽՍՀՄ կենտրոնական քաղաքների (Մոսկվա, Լենինգրադ, Կիև, Խարկով, Եկատերինոսլավ, Թիֆլիս, Բաքու և այլն) բուհերը, ուր սովորելու գործուղվողներն ապահովվում էին պետական թոշակով: Առանձին մասնագիտությունների համար օգտագործվում էին նաև արտասահմանյան բուհերը:

Շարքային մասնագետների պատրաստման համար տարածված միջոցներ էին դասընթացները, պրոֆեսիոնալ-տեխնիկական (այնուհետև ֆաբրիկա-գործարանային աշակերտության) դպրոցները, դպրոց-արհեստանոցները: Արդյունաբերական (արտադրական) ուղղության դպրոցներ ունեին Լենինականի տեքստիլ ֆաբրիկան ու երկաթուղային հանգույցը, Ղափանի և Ալավերդու լեռնահանքային կոմբինատները:

1920-ական թվականներին կադրերեի պատրաստման և դպրոցական ուսման առանձնահատկությունը դասակարգային սկզբունքի կիրառումն էր, բանվորների և աշխատավոր գյուղացիների զավակներին առավելություն տալը: Բարձրագույն դպրոցներում պետությունը նրանց օգնում

---

[96] Ա. Հայրապետյան, Սոցիալիզմի կառուցումը և կադրերի պատրաստումը Հայաստանում: Երևան, 1974, էջ 55:
[97] Նույն տեղում, էջ 57:

էր նաև թոշակով: Այսպես, 1925 թ. միայն Մոսկվայի բուհերում Հայաստանից պետության հաշվին սովորում էր 47, 1926 թ. Մոսկվայում 34 և Լենինգրադում 7 ուսանող[98]: Բնականաբար մեծ թիվ էին կազմում Երևանի բուհերում պետական թոշակառու ուսանողները:

Գործում էր գաղափարական-քաղաքական կադրերի պատրաստման համապարփակ դպրոցական համակարգ, ըստ որակավորման մակարդակների: Գավառական կուսակցական, խորհրդային ու տնտեսական մարմինների համար կադրեր էին պատրաստում հանրապետության 1-ին և 2-րդ աստիճանի կուսակցական դպրոցները: Հանրապետական մարմինների համար կադրեր պատրաստելու էր կոչված կենտրոնական կուսակցական դպրոցը: Թիֆլիսում գործում էր Անդրկովկասի կոմունիստական համալսարանը սկսած 1923 թ., որտեղ ամեն ուսումնական տարի Հայաստանից սովորելու էին մեկնում որոշակի թվով աշխատող կադրեր: Նույն կարգով հանրապետությունը ուսանողներ ուներ Մոսկվայի Սվերդլովի անվան և Լենինգրադի (Սանկտ-Պետերբուրգի) կոմունիստական համալսարաններում, Արևելքի ժողովուրդների համալսարանում և այլուր:

Նոր կադրերն իրենց կարևոր դերն ունեցան Հայաստանում Խորհրդային իշխանության ամրապնդման, քայքայված արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը վերականգնելու, խորհրդահայ մշակույթի ձևավորման ու զարգացման համար պայմաններ ստեղծելու գործում: Ինչ վերաբերում է հին կադրերին, ապա նրանք ազնվորեն ծառայեցին խորհրդային իշխանությանը, որը նրանց նկատմամբ ցուցաբերում էր ուշադիր վերաբերմունք, ինչպես նաև հետևում նրանց կոմունիստական վերադաստիարակությանը: Այդ ընթացքում հաղթահարվում էին նաև նրանց նկատմամբ որոշ անվստահության դրսևորումները: Դա իր արտահայտությունը գտավ մասնավորապես 1928 թ. «Շախտիի» կեղծ դատական գործի (Դոնբասի ածխահանքեր) կապակցությամբ, երբ Հայաստանում ևս անհիմն կերպով փորձում էին գտնել «վնասարարներ» կամ անվստահություն ցույց տալիս այս կամ այն մասնագետի նկատմամբ: Կուսակցական ղեկավարությունը տվյալ դեպքում բռնեց ճիշտ գիծ և հանդես եկավ «սպեցակերությանը» վերջ տալու պահանջով:

Կադրային գործի հաջողությունները դրական տեղաշարժեր էին նշանավորում բանվոր դասակարգի ու մտավորական խավի կազմավորման համար:

Սոցիալական բարեփոխումների կարևոր խնդիրներից էր կանանց միջավայրում տարվող աշխատանքը: Երկրի քաղաքականության հիմքում դրված էր կուսակցական ծրագիրը կնոջ լիականար իրավահավասարութ-

---

[98] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 20, թ. 28-30, ց. 6, գ. 11, թ. 186-187:

յան հաստատումը ամուսնական ու ընդհանրապես ընտանեկան իրավունքի ասպարեզում, կնոջ լայնորեն ներգրավումը արտադրական ու հասարակական-քաղաքական կյանքում, կանանց ազատելը «հին տնային տնտեսության ծանրություններից»: 1920-ական թվականներին տվյալ բնագավառում Հայաստանում կատարվել էին առաջին քայլերը: Այդ մասին վկայում են հետևյալ մի քանի տվյալները: Բանվոր-ծառայողների անձնակազմում 1928 թ. կանայք կազմում էին 7,1 տոկոսը (այդ թվում լուսավորության մեջ 32,4 տոկոս)[99]: Ճիշտ է, դա մեծ ցուցանիշ չէր, սակայն, պետք է նկատի ունենալ, որ վերելքի սկիզբն էր, իսկ աճի տեմպերը թույլ չէին: Նույն թվականին կուսակցության մեջ կանանց համար նշվում էր 5,0 տոկոսի ցուցանիշը, 1924 թ. 2,6 տոկոսի դիմաց[100]: Մեծ ուշադրություն էր նվիրվում պետական մարմիններում կանանց ներգրավմանը, ինչպես նաև, ընդհանրապես, խորհուրդների գործունեության աշխուժացմանը: 1927 թ. ընտրությունների արդյունքում խորհուրդների կազմում ընտրված կանանց տեսակարար կշիռը 9,6-10,2 տոկոս էր (համապատասխանաբար գյուղում և քաղաքում): Բացատրելով մասնավորապես գյուղի նման արդյունքները, ՀՍԽՀ կառավարությունը նշել է. «Այստեղ պատնեշն արդեն պատռված է, և գեղջկուհին, թեև դանդաղ, սկսում է մասնակցել հասարակական աշխատանքներին»[101]:

Խորհուրդների գործունեության աշխուժացման լրացուցիչ միջոցառումներ իրականացվեցին 1925 թ. («Նոր Նէպ»), երբ կրճատվեցին ծայնազրկության սահմանները: Սակայն, հետագա տարիներին նորից ավելացավ ծայնազուրկների թիվը, 1928 թ. հասնելով 6,9 տոկոսի: Այդ տվյալները համեմատելով մյուս հանրապետությունների հետ, ՀՍԽՀ կառավարության նախագահը նման մոտեցումը համարել է քյալլագյոզություն, ավելացնելով. «Մեր գյուղում այդքան մեծ տոկոս կուլակություն և խորհրդային իշխանությանը անհարազատ տարրեր չկան»[102]:

Խորհրդային իշխանության ծնունդ էր մոր ու մանկան պաշտպանության գործի կազմակերպումը: Ստեղծվեցին կանանց և մանկական կոնսուլտացիաներ: Բազմազավակ մայրերին տրվում էր դրամական օգնություն: Աճում էր աղջիկ սովորողների թիվը դպրոցներում:

Խորհրդային իշխանության սոցիալական քաղաքականությունը 1920-ական, ինչպես նաև հաջորդ տասնամյակում, կրում էր խիստ դասա-

---

[99] Труд в Армянской ССР (статистический сборник), с. 40, 42.
[100] Компартия Армении в цифрах и документах. 1920-1980, с. 42.
[101] ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր 1926/27 և 1927/28 թթ.: Երևան, 1929, էջ 24:
[102] ՀՍԱ, ֆ. 112, ց. 1, գ. 809 (1-ին մաս), թ. 73-74:

կարգային բնույթ որպես անցման ժամանակաշրջանի առանձնահատկություն:

Սոցիալական բարեփոխումների նոր քայլեր ձեռնարկվեցին Հոկտեմբերյան հեղափոխության 10-ամյա տարեդարձի կապակցությամբ, 1927 թ.: ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահությունն ընդունեց հռչակագիր, ըստ որի 8-ժամյա աշխատանքային օրվա փոխարեն մտցվում էր 7-ժամյա աշխատանքային օր: Ծավալվում էր բնակարանային շինարարությունը քաղաքներում: Թեթևանում էր գյուղացիների հարկային բեռը, 25,0 տոկոսի փոխարեն գյուղմիասհարկից ազատվում էր գյուղացիների մինչև 35,0 տոկոսը (Հայաստանում գյուղացիների կեսից ավելին):

1920-ական թվականների սոցիալական բարեփոխումները Նոր տնտեսական քաղաքականության կենսագործման արդյունք էին: Սակայն այդ քաղաքականությունը հետագայում չշարունակվեց, չնայած այն նախատեսված էր տևական ժամանակաշրջանի համար:

3. ՀՍԽՀ Կարմիր բանակը

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման և ամրապնդման կարևոր լծակ էին դառնալու նրա զինված ուժերը, որ կոչվեցին ՀՍԽՀ Կարմիր բանակ: Այդ մասին ազդարարվեց անմիջապես՝ խորհրդայնացման պահին, 1920թ. դեկտեմբերի 2-ին, Հայաստանի Կարմիր բանակի հրամանատար Դրոյի և Խորհրդային Ռուսաստանի կոմիսար Սիլինի հրամանով: Այն սահմանում էր Հայաստանի Հանրապետության բանակը Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակի վերակազմավորելու հիմունքները, որոնք բխում էին ռուսական Կարմիր բանակի քաղաքական ու կազմակերպական սկզբունքներից: Բանակում մտցվում էր քաղաքական կոմիսարների ինստիտուտ, որի նպատակը բանակի քաղաքական ղեկավարումն էր: Պաշտպանվում էր հին, նախկին հրամանատարական կադրերին օգտագործելու խորհրդային քաղաքականությունը: ՀՍԽՀ առաջին սահմանադրությունն օրինականացնում էր բանակի տեղն ու դերը պետության կյանքում /հոդված 9/, ըստ որի բանակն ստեղծվում էր բանվորների ու աշխատավոր գյուղացիների դասակարգային հեղափոխական դիկտատուրան արտաքին ու ներքին հակահեղափոխությունից պաշտպանելու նպատակով:

Ըստ նոր իրադրության՝ անխուսափելի էր բանակի վերակառուցումը ինչպես անձնակազմի թվաքանակի նվազեցման, այնպես էլ գաղափարական տեսանկյունից՝ շնորհիվ նրա, որ Հայաստանը գտնվում էր ՌԽՖՍՀ-ի հովանավորության ու պաշտպանության տակ: Հանրապետությունում տեղակայվեցին ռուսական 11-րդ բանակի զորամասեր /բանակի 18-րդ և 20-րդ դիվիզիաների մի քանի գունդ/, որոնք վճռական դեր էին կատարել Հայաստանի խորհրդայնացման, ապա կատարելու էին նրա պաշտպանության գործում[103]:

11-րդ բանակի զորամասերի հետ միասին Հայաստան էր ժամանել Ադրբեջանում գտնվող Առանձին հայկական հրածգային գունդը, որը տվյալ պահին ուներ 825 մարդուց բաղկացած անձնակազմ: Վերջինիս անդամները 1920թ. մայիսյան ապստամբության մասնակից զինվորներ ու գյուղացիներ էին (հիմնականում Ղազախ-Շամշադին-Կրասնոսելսկի շրջաններից), ովքեր ապստամբության պարտությունից հետո հեռացել էին Խորհրդային Ադրբեջան: Գնդի զինվորներն ու սպաները խորհրդային իշխանության կողմից դիտվում էին որպես վերակազմավորվող հայկական բանակն ամրապնդող տարր: Այդ նկատի ուներ Հայաստանի զինկոմ Գայը

---

[103] И. Таирян. XI Красная армия в борбье за установление и упрочение Советской власти в Армении. Ереван, 1971.

(Հայկ Բժշկյան), երբ գրում էր, թե հանրապետության կարմիր բանակի գոյությունը սկսվում է 1920թ. մայիսի 1-ից[104]:

Շուտով հայկական Կարմիր բանակի հրամանատար Դրոն հեռացվեց պաշտոնից: Դրոյի հեռացումը Հայաստանում գբաղեցրած պաշտոնից ուներ քաղաքական պատճառներ: Խորհրդային իշխանությունը բացառում էր դաշնակցականների, թեկուզ «ծախ» կոչվող, մասնակցությունը պետության կառավարմանը (խախտելով 1920թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը): Բացի դրանից, դեր էր խաղում նաև, այսպես կոչված, թուրքական գործոնը: Խորհրդային իշխանավորների կարծիքով դաշնակցական Դրոյի ներկայությունը խանգարում էր հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը: Այսպես, Մոսկվայում Հայաստանի ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը ՀԿ/բ/Կ Կենտկոմ հասցեագրած 1921թ. հունվարի 15-ի նամակում գրում էր, թե մինչև Թուրքիայի հետ Մոսկվայի կոնֆերանսը «հարկավոր է ներսում մաքրվել Դրո և կամպանիա դաշնակցական աղտեղությունից»: Բանն այն է, որ, շարունակում է նամակի հեղինակը, թուրքերը Ռուսաստանին արած դիմումներում հայտարարում են իրենց անվստահության մասին ընդհանրապես՝ հայ կոմունիստների նկատմամբ և մասնավորապես՝ «ընդգծում են Դրոյի և մյուսների գտնվելը կառավարության կազմում»[105]:

Հայաստանի Կարմիր բանակի հրամանատար դարձավ ռուսական սպա Վ. Մ. Մոլկոչանովը, իսկ կոմիսարն էր Ի. Ա. Սվիրիդովը: Հայկական բանակը փաստորեն ենթակա էր դառնում ռուսական զորքերի հրամանատարությանը: Հայկական Կարմիր բանակի վերակազմավորումը տեղի էր ունենում ռուսական կողմի նախաձեռնությամբ և օգնությամբ: Հեկկերն անհրաժեշտ էր համարում երիտասարդ հրամկազմից 300 մարդ ուղարկել Բաքու հրամանատարական դասընթացների համար[106]: «300 մարդ Բաքու տեղափոխելու մասին» Երևան հեռագիր ուղարկվել էր դեկտեմբերի 17-ին: Նույն օրը Բաքու մեկնեց հայ սպաների առաջին վեցյակը, ապա նաև մեծ խմբեր: Դեկտեմբեր և հունվար ամիսների ընթացքում Հայաստանից մեկնեցին 1200-1400 սպաներ: «Կարմիր մարզիչներ պատրաստելու կամ քաղաքական դասընթացներ ավարտելու» փոխարեն նրանք նետվեցին Բաքվի և Ռուսաստանի Ռյազան քաղաքի համակենտրոնացման ճամբարներ: Հայաստանի Կարմիր բանակի վերակազմավորման ուղղությամբ սկսված հանգիստ գործընթացը վերածեց հայկական բանակի նախկին սպաների քաղաքական բռնաճնշման, որի կենսագործմանը հնազանդորեն լծվեցին

---

[104] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 114:
[105] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 31, թ. 69-72:
[106] Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 21, թ. 18:

Հայաստանի որոշ ղեկավարներ, իսկ հանրապետության զինկոմ Ավիս Նուրիջանյանը համարձակվեց այն ներկայացնել որպես հայ սպաների շահերից բխող միջոցառում, թե հարկավոր էր «արմատապես ջարդել հին վարչակազմը և Խորհրդային Հայաստանը բեռնաթափել սպայությունից»[107]:

Ինչևէ, հայկական բանակի վերակազմավորումը շարունակվում էր: Հին բանակի հինգ հետևակային և մեկ հեծյալ բրիգադների (14 գնդով) փոխարեն, շուրջ 40 հազար անձնակազմով (1920թ. պատերազմի ժամանակ), 1921թ. հունվարին ՀՍԽՀ Կարմիր բանակը բաղկացած էր երեք հետևակային բրիգադից (6 գնդով), մոտ 7000-անոց անձնակազմով[108]: Հայաստանի բանվորա-գյուղացիական իշխանությունը, գրել է «Կոմունիստ» թերթը, ոչ մի ջանք չէր խնայում դասակարգային հիմունքներով կազմակերպելու և ուժեղացնելու իր Կարմիր բանակը[109]:

1921թ. փետրվարյան ապստամբությունը և քաղաքացիական կռիվները փորձություն դարձան հայկական բանակի համար: Որոշ ստորաբաժանումներ փաստորեն կազմալուծվել էին, մյուսները աչքի ընկան մարտերում և ռուսական բանակի զորամասերի հետ միասին ապահովեցին խորհրդային իշխանության հաղթանակն ապստամբների նկատմամբ: 1921թ. մայիսի դրությամբ նրա շարքերում հաշվվում էր 6669 մարդ: Հայկական բանակի անձնակազմում էին նաև Առանձին հայկական հեծյալ գունդը, որը վերակազմավորվեց Առանձին հեծյալ բրիգադի, ինչպես նաև Լոռու հատուկ հրաձգային գունդը, որոնք 1921թ. փետրվար-մարտին մասնակցել էին Լոռու ազատագրմանը և Վրաստանի խորհրդայնացմանը[110]: Հայկական բանակը մարտական գործողությունների փորձ ձեռք բերեց նաև Զանգեզուրում Գարեգին Նժդեհի գլխավորած ինքնապաշտպանական պայքարը ճնշելու ժամանակ:

Հայաստանի զինված ուժերն իրենց լուման ներդրեցին երկրի խաղաղ ստեղծագործական զարգացման պայմաններ ապահովելու ուղղությամբ:

11-րդ բանակի, որը 1921թ. մայիսից կոչվում էր Առանձին կովկասյան բանակ, հրամանատարության կողմից պահանջվում էր կատարել հայկական բանակի այնպիսի վերակառուցում, որպիսին տեղում հանդիպում էր առարկության: Այդ մասին վկայում են հեղկոմի նախագահ Կասյանի և

---

[107] Коммунист, 29 января 1921г.
[108] Կլիմենտ Հարությունյան, Հայկական առաջին զորամիավորումները 1918-1945թթ., Երևան, 2002, էջ 84:
[109] Կոմունիստ /Երևան/, 1 փետրվարի, 1921թ.:
[110] Կլիմենտ Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ., էջ 107:

զինկոմ Ավիս Նուրիջանյանի հեռագրերը Օրջոնիկիձեին: Կռիվների ավարտով վերանում էր բազմանդամ բանակ ունենալու անհրաժեշտությունը: Այն կրճատվեց բարձր տարիք ունեցողների հաշվին, երբ (կռիվների ժամանակ) բանակի անձնակազմը բարձրացել էր մինչև 15 հազարի: Բանակի վերակազմավորման նոր փուլին անցնելուց առաջ Հայաստանում որպես Ժողկոմխորհի նախագահ և հանրապետության զինկոմ աշխատանքի անցավ կուսակցական և ռազմական հմուտ գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը: Նա մեծ նշանակություն էր տալիս նոր տիպի բանակի ստեղծման գործին և մշտապես զբաղվում էր նրա վերակազմավորման խնդիրներով: Անդրկովկասի հանրապետությունների զինված ուժերի թվական կրճատմանը, ըստ ընդունված որոշման, հաջորդելու էր ազգային բրիգադների կազմակերպումը: 1922թ. սկզբին արդեն առկա էր Հայկական հավաքական բրիգադը, որը շուտով վերանվանվեց Հայկական առանձին հավաքական բրիգադ, իր կազմում ունենալով երկուական հրածգային ու հեծյալ գունդ, հրետանային դիվիզիոն և այլ ստորաբաժանումներ[111]:

1921թ. վերջին և 1922թ. սկզբին ծավալվել էին նախապատրաստական աշխատանքները Անդրկովկասի և ամբողջ Ռուսաստանի խորհրդային հանրապետությունների պետական միավորման ուղղությամբ: Ռազմական դաշինքի ստեղծումը այդ միավորման սկիզբը և նախադրյալն էր: 1921թ. դեկտեմբերին այդպիսի դաշինք ստեղծվեց Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև: Համապատասխան համաձայնագիրը ստորագրվեց Թիֆլիսում: Հնարավոր արտաքին ագրեսիայի դեմ համատեղ պայքարելու նպատակով հանրապետությունների զինված ուժերը միավորվում և ենթարկվում էին ընդհանուր հրամանատարությանը, այն է՝ Առանձին կովկասյան բանակի հեղափոխական ռազմական խորհրդին[112]: Նման ռազմական դաշինքի ստեղծումը նշանակում էր, որ Հայկական առանձին հավաքական բրիգադը դառնում էր Ռուսաստանի բանվորագյուղացիական Կարմիր բանակի բաղկացուցիչ մաս: 1922թ. ընթացքում իրականացվեց խորհրդային զինված ուժերի նոր կազմակերպական վերակառուցում, ազգային բրիգադները դարձան դիվիզիաներ: Հայաստանն ուներ իր հրածգային դիվիզիան, որի հրամանատարն էր գնդապետ Անդրեյ Մելիք-Շահնազարյանը, զինվորական կոմիսարը Վահան Բալյանը, քաղբաժնի պետը՝ Հայկ Հովսեփյանը, շտաբի պետը՝ գնդապետ Վլադիմիր Պրիտոմանովը, այնուհետև շտաբս-կապիտան Վլադիմիր Տամրուչին: Դիվիզիայում տարբեր մակարդակի հրամանատարական պաշտոն-

---

[111] Կլիմենտ Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ., էջ 120-121:
[112] Նույն տեղում, էջ 122:

ներ էին զբաղեցնում հայկական զինված ուժերի բազմաթիվ հին սպաներ[113]:

Հանրապետության նախկին կոմիսար Գայը (Հայկ Բժշկյան) զինվորական կոմիսարիատի վերացումը և ռուսական բանակի օրինակով ու նմանությամբ դիվիզիայի կազմակերպումը համարում էր անցումային շրջան միացյալ ուժերի կազմավորման հաջորդ փուլում դիվիզիայի լրիվ ծուլման համար[114]:

Հայաստանի դիվիզիայի կազմավորումը նրա զինված ուժերի վերակազմավորումների ավարտն էր: 1922թ. վերջին, ԽՍՀՄ ստեղծման պահին դիվիզիան ուներ երկու հրաձգային և մեկ հեծյալ գունդ, մեկ հրետանային դիվիզիոն: Խորհրդային Միության ստեղծումը նոր իրադրություն էր նշանավորում Հայաստանի զինված ուժերի պատմության մեջ: Հետագայում նա հայտնի էր որպես Հայկական 76-րդ Վորոշիլովի անվան կարմրադրոշ լեռնահրաձգային դիվիզիա, որն առավել աչքի ընկավ Հայրենական մեծ պատերազմում:

Բանակի նյութական մատակարարման գործում Հայաստանը կրում էր մեծ դժվարություններ: Որոշ ժամանակ, մինչև 1922թ. սեպտեմբերը, այդ մատակարարումը կազմակերպվում էր Առանձին կովկասյան բանակի միջոցով: ՀԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը նույն ամսում դիմելով ՌԿ/բ/Կ Կենտկոմի քարտուղար Ստալինին և Ռուսաստանի Ռազմահեղափոխական խորհրդին, խնդրում էր վերականգնել Հայաստանի կարմիր զորամասերի մատակարարման նախկին կարգը[115]:

Այսպիսով արդեն 1922թ. վերջերին Խորհրդային Հայաստանի զինված ուժերը, որպես պետականության անհրաժեշտ հատկանիշ, կայացել էին:

---

[113] Կլիմենտ Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ., էջ 124-129:
[114] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 116:
[115] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 157, թ. 36:

Գլուխ V
Կոմունիստական մենատիրությունը
1. Ոչ պրոլետարական կուսակցությունների վերացումը

Կոմունիստական կուսակցության մենատիրության հաստատման և ամրապնդման ճանապարհին վերացվեցին մյուս, ոչպրոլետարական կուսակցություններն ու կազմակերպությունները միութենական բոլոր հանրապետություններում, որ իրականացվեց ԽՍՀՄ կազմավորումից հետո, վերևից իջեցված որոշումների հիման վրա: Այդ կապակցությամբ բնորոշ է ՌԿ(բ)Կ 12-րդ կոնֆերանսի (1922 թ. օգոստոս) որոշումը «Հակախորհրդային կուսակցությունների ու հոսանքների մասին»: Կոնֆերանսը ելնում էր նրանից, թե Նեպի պայմաններում այդ ուժերը «փորձում են խորհրդային լեգալությունն օգտագործել իրենց հակահեղափոխական շահերի համար և վերցնում են խորհրդային ռեժիմի մեջ «ներաճելու» կուրս»: Որոշման մեջ խոսվում է նաև Նեպի հետ կապված «նոր բուրժուազիայի», սմենովեխական հոսանքի և այլ ուժերի աճի ու վտանգի և նրանց դեմ պայքարելու, այդ թվում նաև բռնաճնշում գործադրելու անհրաժեշտության մասին: Մասնավորապես անխուսափելի էր համարվում էսեռների ու մենշևիկների կուսակցությունների վերացումը վերջ տալու համար նրանց այն հույսերին, թե Նեպին անցնելը կտանի դեպի Կոմունիստական կուսակցության կապիտուլյացիա և «դեմոկրատական» կոալիցիոն իշխանության հաստատում[1]:

Հայաստանում ոչկոմունիստական ուժերից էին Հայ հեղափոխական Դաշնակցությունը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը (սպեցիֆիկներ), էսեռների ու մենշևիկների կազմակերպությունները:

Հայաստանի կոմկուսի համար հատկապես վտանգավոր էր Դաշնակցությունը, ընդհատակ անցած իր կազմակերպությունների լայն ցանցով և ժողովրդի մեջ ինչ-որ չափով պահպանած ազդեցությամբ: Բավական է նշել, որ 1923 թ. Դաշնակցության «ինքնավերացման» համագումարի առիթով միայն Հայաստանում ինքնաբացահայտվել և ցուցակավորվել էր Դաշնակցության ավելի քան 4000 անդամ: ՀՅԴ «ինքնավերացման» համագումարը կազմակերպեց և ղեկավարեց ՀԿ(բ)Կ Կենտկոմը, այդ նպատակով օգտագործելով նաև մի խումբ դաշնակցականների, նրանց դնելով ակտիվ դերի մեջ: Համագումարը կայացավ 1923 թ. նոյեմբերին, հայտարարեց Հայաստանում կուսակցության վերացման մասին և կոչ ուղղեց արտասահմանի ընկերներին հեռանալ Դաշնակցությունից և հարել Կոմունիս-

---

[1] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: Մաս 1, էջ 856-863:

տական ինտերնացիոնալի դիրքերում կանգնած տեղական կազմակերպություններին[2]:

Իրականում համագումարի կոչին ոչ միայն չհետևեցին արտասահմանում, այլև պահպանվեցին հանրապետության անլեգալ կազմակերպությունները, որոնք վերացվեցին միայն հետագա տարիների ընթացքում, նրանց անդամների մեկուսացումով հանդերձ:

Նույն ձևով կազմակերպվեց նաև Դաշնակցական երիտասարդական միության (Դաշերիտմիության) «ինքնավերացման» համագումարը 1924 թ. փետրվարին:

«Անդրկովկասում,- կարդում ենք Անդրերկրկոմի հաշվետու զեկուցման մեջ, Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների 3-րդ համագումարում, 1924 թ. մայիսին,- մենք վերնականապես ու անվերադարձ քայքայել ու ջախջախել ենք հակախորհրդային կուսակցություններին. Վրաստանում՝ մենշևիկներին, Ադրբեջանում՝ մուսավաթականներին, Հայաստանում՝ դաշնակցականներին»: Զեկուցող Գ. Օրջոնիկիձեն գտնում էր, որ կուսակցություններին «թաղել են հավիտյան»[3]: Բոլշևիկների կուսակցության նշանավոր գործիչը բնականաբար չէր կարող գուշակել, թե մի քանի տասնամյակ անց ինչ կպատահի իրենց կուսակցության իշխանության հետ, և թե ինչպես հարություն կառնեն «հավիտյան թաղվածները»:

Տևական գործընթաց ունեցավ հնչակյան կուսակցության վերացումը: 1887 թ. ի վեր գործող այս մանրբուրժուական կուսակցությունը համակրական վերաբերմունք ուներ Հոկտեմբերյան հեղափոխության, խորհրդային իշխանության և Կոմունիստական ինտերնացիոնալի հանդեպ: Հայաստանի և ԽՍՀՄ-ի նրա մյուս կազմակերպությունները դիմել էին խմբովին, իրենց նախկին ստաժով, Կոմունիստական կուսակցության մեջ ընդգրկվելու համար: «Անդրկովկասի հնչակյանների կենտրոնը,- կարդում ենք լրագրային հաղորդագրության մեջ,- որոշում է հանել լիկվիդացիայի ենթարկել տեղական կազմակերպությունները և ծուլվել կոմունիստական կուսակցության հետ» և կոչ էր արել կուսակցության մյուս բոլոր, այդ թվում և արտասահմանի, կազմակերպություններին՝ վարվել նույն ձևով[4]:

Հնչակյանների հարցը քննարկվել է կուսակցական բոլոր բարձր մակարդակներում: Կոմինտերնի գործադիր կոմիտեի նախագահությունը 1923 թ. փետրվարի 5-ին կայացրեց որոշում: Հնչակյանների կուսակցութ-

---

[2] ՀՅԴաշնակցությունը և խորհրդային իշխանությունը: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Պատասխանատու խմբագիր և կազմող պրոֆեսոր Վ. Ն. Ղազախեցյան: Երևան, 1999:

[3] Г. К. Орджоникидзе. Статьи и речи. Т. I, М., 1956, с. 344-345.

[4] Խորհրդային Հայաստան, 12 հուլիսի 1923 թ.:

յունը համեմատելով Բունդի հետ (հրեական բանվորական ազգայնական կուսակցություն), Կոմինտերնը ընդունելության համար դրեց հետևյալ պայմանները:

1. Հնչակյան կուսակցության Ռուսաստանի կազմակերպությունը և Թիֆլիսի նրա կենտրոնական վարչությունը պետք է հրաժարվեն իրենց միջազգային միությունից:

2. Դիմել հնչակյան բոլոր կազմակերպություններին առաջարկելով, որ նրանք ծուլվեն իրենց տարածքային կոմունիստական կուսակցությունների մեջ[5]:

Այդ պայմանները կատարելուց հետո միայն հնչակյանները հնարավորություն ստացան ընդունվել Կոմունիստական կուսակցության մեջ, ընդհանուր հիմունքներով, այսինքն նախ անհատաբար (ոչ խմբային), ապա ընդունվելու օրվա ժամկետով (հաշվի չառնելով հնչակյան ստաժը): Կոմկուսի մեջ ընդունվելու մասին որոշումը ենթակա էր հաստատման Անդրկովկասի երկրային կոմիտեում: Կոմունիստներ դարձան նաև հնչակյանների ղեկավարներ Նազարբեկը, Ղազանջյանը, Ապրեսյանը և ուրիշներ: Ընդ որում նրանց անդամատոմսերում նշվում էր նաև այն մասին, որ քաղաքացիական պատերազմի ժամանակ խորհրդային իշխանության և կոմունիստական կուսակցության դեմ չեն գործել: Լրացնենք, որ բանվոր հնչակյանների համար սահմանվել էին նաև որոշ արտոնություններ:

Արդեն 1924 թ. համարվում էր, որ ԽՍՀՄ տարածքում «Հնչակ» կուսակցությունը վերացված է: Այդ մասին խոսեց Ալ. Մյասնիկյանը Անդրերկրկոմի պլենումում 1924 թ. դեկտեմբերին, նշելով, թե Հնչակը «ներսից քայքայվեց և հրապարակեց հայտարարություն ինքնացրման մասին»[6]: Մասնավորապես հնչակյանների Երևանի կազմակերպությունը ինքնալուծարման մասին որոշել էր նույն թվականի սեպտեմբերի 12-ի ժողովում և այդ մասին տեղյակ պահել ՀԿ(բ)Կ Կենտկոմին[7]:

Հնչակյան կուսակցությունը, հակառակ Կոմունիստական ինտերնացիոնալի ընդունած որոշման, շարունակեց իր գործունեությունը արտասահմանում: Չնայած Կոմինտերնի գործադիր կոմիտեն և նրա հետևությամբ Հնչակ կուսակցության կենտրոնական վարչությունը (Թիֆլիս) կուսակցությունը մեռած հայտարարեցին, գրել է նրա ակտիվ գործիչներից Գրիգոր Եղիկյանը (Պարսկաստան), «բայց կուսակցականները դեռ չէին

---

[5] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 65, թ. 3:

[6] **Ա.Սահակյան**,Հնչակյանների«ծուլումը» Կոմկուսի մեջ. «Պատմագիտական հետազոտություններ (գիտական հոդվածների ժողովածու)»: Վանաձոր, 2001, էջ 109:

[7] Նույն տեղում, էջ 107:

մեռել»[8]: Այսօր Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը հայ իրականության մեջ գործող հայտնի կուսակցություններից է:

Նախկին էսեռների ու մենշևիկների հարցի լուծումը կատարվեց ավելի դյուրին եղանակով, քանզի նրանք լուրջ ուժ չէին ներկայացնում ինչպես քանակով, այնպես էլ քաղաքական առումով:

Նշված միջոցառումները, անկասկած, նշանակություն ունեցան Կոմունիստական կուսակցության դիրքերի և խորհրդային իշխանության ամրապնդման իմաստով: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ պայքարը հակախորհրդային ուժերի դեմ, ինչպես նաև վերջիններիս դիմադրության փորձերը բնավ ավարտված չէին և հարկ եղավ, որ «ինքնավերացման» քաղաքական կամպանիային հաջորդեր բռնությունների ուժեղացման վարչական միջոցը: Խնդրի մասին որոշ պատկերացում է տալիս հանրապետության Արտակարգ հանձնաժողովի «ՀՍԽՀ ընդհանուր քաղաքական դրությունը» փաստաթուղթը (14 մարտի 1925 թ.), որի օրինակներից մեկը հասցեագրվել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարին:

Արտակարգ հանձնաժողովի գնահատմամբ Դաշնակցությունը Հայաստանի հակախորհրդային կուսակցություններից ամենից գործնականը և ազդեցիկն էր հայ լայն զանգվածների մեջ: Խորհրդայնացումից հետո նա ստեղծել էր ընդհատակյա կազմակերպությունների ցանց և շարունակում էր կազմակերպված աշխատանքը:

1924 թ. և 1925 թ. սկիզբը, այսինքն Դաշնակցության պաշտոնական քայքայմանը հաջորդող ավելի քան մեկ տարին դիտվում էր որպես նրա ակտիվ գործունեության շրջան: Արտակարգ հանձնաժողովը դա բացատրել է այդ կուսակցության վերջնական քայքայման սպառնալիքով և նրանով, որ Դաշնակցությունը կարող էր դառնալ զուտ «գաղութային կուսակցություն» (այսինքն զրկվել բուն Հայաստանի միջավայրից»): Ուստի Դաշնակցության արտասահմանյան կենտրոնը ամեն ինչ անում էր Հայաստանի իր կազմակերպությունները պահպանելու և ակտիվացնելու համար[9]: Ասես, որպես դրա պատասխան, հատկապես 1920-ական թվականների երկրորդ կեսին և հետագա տարիներին հետևեցին դաշնակցականների մեծաթիվ ձերբակալություններ: ՀՀ ազգային անվտանգության ծառայության արխիվի տվյալներով 1920-ական թվականների համար հաշվարկվել է քաղաքական դրդապատճառներով 1246 մարդու ձերբակալություն: Այդ գործերի մեծամասնությունը վերաբերում էր դաշնակցականներին (նախկին կամ չբացահայտված): Դատապարտվածներից 44-ը գնդակահարվել էին,

---

[8] Գրիգոր Եղիկյան, Հնչակյանները և նրանց բոլշևիկների հետ միանալու փորձերը. «Հայրենիք» (Բոստոն), 1939 թ., թիվ 6, էջ 122:
[9] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 68, թ. 1-8:

301-ը արձակվել, մյուսները արժանացել 1-15 տարվա բանտարկության կամ աքսորի: Դատապարտվածներից 12-ը հոգևորականներ էին: Ընդ որում, ըստ նույն հեղինակի «հաստատուն եզրակացության» 1920-ական թվականների գործերը, գրեթե առանց բացառության, հավաստի տվյալների հիման վրա են կազմված, ի տարբերություն 1930-ական թվականների[10]:

Ոչ պրոլետարական կուսակցությունների ու կազմակերպությունների վերացումը էլ ավելի ամրապնդեց ՀԿ(բ)Կ-ի մենատիրությունը Հայաստանում, կուսակցություններ, որոնց հետ Կոմկուսն առանց այն էլ չէր բաժանում իշխանությունը:

2. Ներկուսակցական պայքարը

Այլ կուսակցությունների դեմ պայքարով ու նրանց վերացումով չէր սահմանափակվում ու սպառվում Կոմունիստական կուսակցության մենատիրության հաստատումը ԽՍՀՄ-ում: Պայքար էր գնում նաև ՌԿ(բ)Կ (1925 թ. ՀամԿ(բ)Կ) ներսում: Լենինի մահից (1924 թ) հետո կուսակցության գլխավոր քարտուղար Ստալինին հաջողվեց ամրապնդել իր դիրքերը, չեզոքացնել առաջնորդի աթոռի համար հնարավոր հավակնորդների վտանգը, կուսակցության մեջ գրավելով կենտրոնի («լենինյան») դիրք, պայքարել «ձախ» և «աջ» թեքումների դեմ: Ձախերը, Տրոցկու առաջնորդությամբ, մերժում էին Նեպը շարունակելու անհրաժեշտությունը և պահանջում էին երկրի զարգացումն առաջ տանել «կապիտալիստական» ու «մանրբուրժուական» տարրերի դեմ հարձակումը ծավալելու միջոցով («ռազմական կոմունիզմ»): Աջերը, Բուխարինի գլխավորությամբ, ընդհակառակը, պաշտպանում էին Նեպի միջոցով սոցիալիստական շինարարությունը զարգացնելու ուղին: Ընդ որում, Ստալինը կարողացավ սկզբում իր կողմը գրավելով Բուխարինին ու մյուսներին, միասնաբար հաղթանակի հասնել տրոցկիստների նկատմամբ: Այնուհետև պայքարը կենտրոնացավ «աջ» թեքման նկատմամբ: 1920-ական թվականների վերջին «ձախ» և աջ թեքումները ջախջախված էին գաղափարապես և կազմակերպչորեն, իսկ նրանց ղեկավարները հեռացված էին ղեկավար պաշտոններից (Տրոցկի, Զինովև, Կամենև, Բուխարին, Ռիկով, Տոմսկի) կամ արտաքսված ԽՍՀՄ-ից (Տրոցկի): 1929 թ. Ստալինի 50-ամյակի նշումը վկայում էր, որ նա հասել էր բացարձակ հաղթանակի իր կուսակցական հակառակորդների նկատմամբ և դարձել առաջին դեմքը կուսակցության ու պետության մեջ: Այդ ժամանակից էլ սկսեց ձևավորվել Ստալինի անձի պաշտամունքը, որը, խորանալով, իր

---

[10] Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ.: Երևան, 1999, էջ 12-13:

բարձրակետին հասավ 1930-ական թվականներին, դառնալով մեծ ողբերգությունների պատճառ խորհրդային ժողովուրդների համար:

Այդ թեքումները և ներկուսակցական պայքարը իրենց արտահայտությունն ունեցան նաև Հայաստանում:

Տրոցկիստական հայացքների առաջին կողմնակիցները հանդես եկան 1926 թ. և հատկապես 1927 թ., երբ տարածվել էր «83-ի պլատֆորմը» և ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարի օրակարգի հարցերի շուրջ համակուսակցական բանավեճ էր բացվել այդ համագումարի (1927 թ. դեկտեմբեր) նախօրյակին: Հայաստանում տպագրվեց «Երեքի դեկլարացիան», որը ստորագրել էին Ռ. Սաֆրազբեկյանը, Պ. Ղազարյանը և Գ. Փիրգուլյանը: Տրոցկիստական խմբեր էին ձևավորվել մի շարք կուսակցական կազմակերպություններում (Երևանում՝ բանվորական ֆակուլտետ, ՀԱՄԽ, լուսժողկոմատ, պետական հրատարակչություն, Լենինականի և Ղարաքիլիսայի երկաթուղային կայարաններ և այլն), ինչպես նաև ՀԼԿԵՄ-ում, որպիսին էին «Տրոցկիստական միությունը» և «Օրթոդոքս մարքսիստների խմբակը»[11]: Էջմիածնի գավառում կապ էր հաստատվել տրոցկիստների ու դաշնակցականների միջև: Ընդ որում, այդ մասին հայտնելով ղեկավարությանը, պետքաղվարչության գավառային մարմինները առաջարկում էին գործադրել նաև բռնաճնշումներ նրանց նկատմամբ:

Հայաստանում տրոցկիզմին հետևել էր ընդամենը 246 մարդ[12]: Նրանք բոլորը հարկադրված էին հրաժարվել իրենց հայացքներից ինչպես մինչև ՀԿ(բ)Կ 5-րդ և ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարները (1927 թ. նոյեմբեր-դեկտեմբեր), այնպես էլ հատկապես համագումարներից հետո: Դրանք վճռական նշանակություն ունեցան տրոցկիստների գաղափարական ու կազմակերպական ջախջախման գործում[13]:

Եթե օպոզիցիայի դեմ մինչև ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարը հիմնականում գործադրվում էին պայքարի գաղափարական-կազմակերպական միջոցներ, ապա դրանից հետո գործի անցան պատժիչ մարմինները: Տրոցկիզմի դեմ պայքարը հիմնավորվում և արդարացվում էր ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի (1921 թ.) կուսակցության միասնության և կուսակցության մեջ օպոզիցիաներն արգելելու մասին որոշումով:

1928 թ. ՀՍԽՀ Կենտգործկոմի կազմից հանվեցին կուսակցությունից հեռացած 5 ակտիվ տրոցկիստներ: Կուսակցական բարձրագույն մարմինը հաստատեց 8 մարդու աքսորելու մասին առաջարկությունը: Մի այլ որո-

---

[11] Գ. Գումեդին, Տրոցկիզմից դեպի մենշևիզմ: Երևան, 1928:
[12] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 598, թ. 3:
[13] ՀԿ(բ)Կ 5-րդ համագումարի բանաձևերը ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի հաշվետվությունների առթիվ: Երևան, 1928:

շումով անհրաժեշտ համարվեց նախկին օպոզիցիայի վերնախավի ծերբակալությունը և այլն, չնայած բոլոր տրոցկիստները արդեն հրաժարվել էին իրենց հայացքներից և հեռացվել կուսակցությունից:

Նշենք, որ կուսակցության մեջ տրոցկիստների պայքարը մասնավորապես ուղղված էր Ստալինի ղեկավարության դեմ, պաշտպանելով սոցիալիստական շինարարության հարցերում այս կամ այն տարբերակն ու եղանակը, նույնը 15-րդ համագումարի օրակարգի կապակցությամբ և կուսակցական-կազմակերպական խնդիրներում: Ստալինի կապակցությամբ նրանք պահանջում էին հրապարակել և կատարել Լենինի, այսպես կոչված, քաղաքական կտակը: Լենինը մահվան նախօրյակին տվել էր մի շարք ղեկավար գործիչների իր բնութագրումները: Նշելով Ստալինի բնավորության որոշ բացասական գծերի մասին, Լենինը կուսակցությանը խորհուրդ էր տվել Ստալինին, որ զբաղեցնում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղարի պատասխանատու պաշտոնը, փոխարինել մեկ ուրիշով: Սակայն Ստալինին հաջողվել էր խոստումներ տալով՝ թե կուղղի իր սխալները, խուսափել պաշտոնազրկումից: Ստալինը նաև կարողացավ տրոցկիստների հետ հաշիվ տեսնել հենվելով կամ պայքարը կազմակերպելով լենինիզմի պաշտպանության դիրքերից: 1930-ական թվականներին նա «տրոցկիզմը» օգտագործեց իր գաղափարական-քաղաքական նախկին հակառակորդների հետ ֆիզիկական հաշվեհարդար տեսնելու համար: Վերևում նշել ենք, որ անձամբ Տրոցկին 1929 թ. արտաքսվեց արտասահման: Ստալինը 1940 թ. կազմակերպեց նրա սպանությունը ահաբեկչի միջոցով:

Բերենք նաև մի նմուշ հայ տրոցկիստների «ասույթներից», արտասանած ՀԿ(բ)Կ 5-րդ համագումարում՝ հասկանալու և ճանաչելու համար «տրոցկիզմ» կոչվածը՝ «Բանը այն է, թե գյուղում տնտեսությունը հասարակական որ խավի օգտին է բարձրանում: Մեր գյուղատնտեսության զարգացումը կատարվում է ոչ թե հօգուտ սոցիալիստական սեկտորի, այլ ավելի շատ հօգուտ կապիտալիստականի կուլակային տնտեսությունների» (Հարոյան): «Վերջին տարիներին կուսակցության Կենտկոմի քաղաքականությունը տանում է դեպի բանվոր դասակարգի ղեկավարության թուլացում և, մյուս կողմից, մանր բուրժուազիայի ղեկավարության ու ազդեցության ուժեղացում»: «Գյուղում քաղաքական եղանակ է անում ոչ թե միջակը, այլ ունևորը և կուլակը» (Ժենյա Արեշյան): «Բուխարինը և Սոլոտովը կոչ են անում, որպեսզի հնարավորություն տան այդ կուլակ տնտեսություններին՝ զարգացնել իրենց տնտեսությունը: Այդ կոչերը հակադրվում են ընկ. Լենի-

նի ասածներին, որից ես կարող եմ կարդալ ցիտատներ» (Պ. Ղազարյան) և այլն[14]:

Ընդ որում տեղին է մեջբերել նախկին հայ տրոցկիստի խոսքը, թե որն է եղել իրենց պայքարի իմաստը:

Այդ առումով հետաքրքիր է Տաշքենդից աքսորականի Երևան ուղարկած նամակի հետևյալ տողերը. «Իսկական լենինիզմը կհաղթանակի, այսինքը՝ կվերջանա մեր վեճն այն ժամանակ, երբ բանվոր դասակարգը մեր երկրում իսկական տերը կդառնա և կապահովի իր դրությունը և ապա կապահովի սոցիալիզմի հաղթանակը թե մեր, և թե բոլոր երկրներում: Ահա իմ տեսակետը, որի համար և պատժվեցի»[15]:

Որպես տվյալ հարցի եզրափակում ավելացնենք հետևյալը: Այն ինչ 1920-ական թվականներին ասում և պաշտպանում էին տրոցկիստները («ձախ» թեքում)՝ 1930-ական թվականներին գործնական կյանքում անցկացրեց Ստալինը, չնայած շարունակում էր պայքարել «ձախ» և աջ թեքումների դեմ:

Ինչ վերաբերում է աջ թեքմանը, ապա պետք է ասել հետևյալը: Կենտրոնում աջ թեքման մեջ մեղադրում էին նրանց, ովքեր կողմ էին Նեպի շարունակմանը, պահանջում էին ընդունել երկրի զարգացման և ինդուստրացման իրական ու համեմատաբար չափավոր տեմպեր, դեմ էին գյուղացիության նկատմամբ ճնշում գործադրելուն, հարկադրական կոլեկտիվացմանը և այլն: Այդ տեսակետին էին ԽՍՀՄ ղեկավար գործիչներ Բուխարինը, Ռիկովը, Տոմսկին և ուրիշներ: Տրոցկիստների հետ հաշիվ տեսնելուց հետո Ստալինը իրագործեց նաև «աջ» թեքման մերկացումը և նրանում մեղադրվողների հեռացումը ղեկավար պաշտոններից, որից հետո խիստ ամրապնդվեցին Ստալինի դիրքերը կուսակցության ու պետության մեջ:

Հայաստանում ևս փորձում էին գտնել աջ թեքման կրողներ ու պաշտպաններ, դրանում մեղադրելով նրանց, ովքեր արտահայտվում էին Հայաստանի առանձնահատկությունները (նրա տնտեսական առավել հետամնացությունը և այլն), հաշվի առնելու, գյուղի սոցիալիստական վերակառուցման ավելի դանդաղ (իրական) ընթացքի անհրաժեշտության օգտին և այլն: Աջ թեքումը երբեմն նույնացվում էր ազգայնականության հետ, իսկ, ընդհանրապես ազգայնականությունը հասկացվում էր նաև ավելի լայն իմաստով, նրա մեջ ներառելով հակակոմունիստական բոլոր գաղափարախոսություններն ու հոսանքները:

Հայաստանի Կոմկուսի գաղափարական պայքարի կազմակերպման և ուժեղացման տեսանկյունից բնորոշ է ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. նոյեմ-

---

[14] ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 2, թ. 3-10:
[15] Նույն տեղում, ֆ. 4, ց. 1, գ. 1224, թ. 121-122:

բերյան պլենումը, որը քննարկեց տվյալ հարցի վերաբերյալ Սարգիս Կասյանի զեկուցումը: Ազգայնականության (նացիոնալիզմ) դեմ պայքարի սրումը պլենումը բացատրում էր նրանով, որ այն պատմական տվյալ ժամանակաշրջանում «բուրժուազիայի հիմնական, ամենատարածված և առավելապես ճկուն գաղափարական զենքն էր» պրոլետարիատի դիկտատուրայի դեմ պայքարում ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ ամբողջ Անդրկովկասում: Ուստի որպես ազգայնականության բոլոր արտահայտությունների դեմ անողոք պայքարի միջոց դիտվում էր «ինտերնացիոնալիստական պարզ ու հստակ դիրքորոշումը»: Այդ արտահայտություններից առաջին պլանի վրա էր դրվում, բնականաբար, «դաշնակիզմը», տվյալ գաղափարախոսությունը մարմնավորող Դաշնակցություն կուսակցությունը «հայ իրականության հակահեղափոխական կուսակցություններից ամենաազդեցիկն ու ամենավտանգավորը», կուսակցություն, որի անդամները երկրի ներսում ջանում էին հենվել «կապիտալիզմի ծիլերի՝ կուլակների ու նեպմենների վրա»:

Բացի դաշնակիզմից, ասված է պլենումի նյութերում, հայ իրականության մեջ գոյություն ունեին նաև այլ թշնամական ազգայնական գաղափարախոսություններ: «Չխոսելով արտասահմանյան հայ բուրուազիայի կուսակցության՝ ռամկավարների մասին,- կարդում ենք այնուհետև պլենումի բանաձևում,- հիմնական թշնամական գաղափարախոսությունները սպառվում են հետևյալ մտայնություններով հնչակիզմ, սմենովեխականություն, մենշևիզմ, սպեցիֆիզմ և տրոցկիզմ»:

Պլենումը «մի շարք խոշոր սկզբունքային քաղաքական սխալներ ու սայթաքումներ» է վերագրել (տնտեսական ու գաղափարական բնագավառներում) նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի «նախկին ղեկավարությանը» (նկատի ունի Կենտկոմի նախկին 1-ին քարտուղար Աշոտ Հովհաննիսյանին), դրանք բնութագրելով «աջ-ազգայնական թեքում»:

Պլենումը դատապարտեց «հայ ազգայնականությունը» իբրև թե «փակ Հայաստան երգող ազգայնականություն», որպիսին «խախտում է ԱԽՖՍՀ և ԽՍՀՄ հիմքերը»[16]: «Փակ Հայաստան» ասելով հավանորեն նկատի ուներ ինդուստրացման քաղաքականության կապակցությամբ արտահայտված առաջարկները՝ Հայաստանում մի քանի գործարան կառուցելու վերաբերյալ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ամբողջ երկրով մեկ ծավալված ներկուսակցական պայքարը «ձախ» և աջ թեքումների դեմ Ստալինի և նրա շրջապատի կռիվն էր կուսակցական մենատիրության, իրենց իշխա-

---

[16]«Հայաստանի կոմունիստական (բ) կուսակցության խնդիրները իդեոլոգիական ֆրոնտում», Երևան, 1929:

նությունը ամրապնդելու համար: Հայաստանում տեղ էին գտնում դրա արձագանքները թույլ ձևով: Ինչ վերաբերում է հայ ազգային կուսակցությունների ու նրանց գաղափարախոսությունների վտանգին, ապա այն չափազանցվում էր: Դա արվում և օգտագործվում էր նրանց դեմ խիստ պայքարն արդարացնելու և կոմունիստական կուսակցության իշխանությունը ամրապնդելու համար:

Կուսակցական կյանքի բնորոշ երևույթներից էր նաև խմբակայնությունը, որպիսին դրսևորվում էր տարբեր ժամանակաշրջաններում կուսակցական ղեկավարության մեջ, խանգարելով նրա արդյունավետ գործունեությանը: Խմբակայնությունը սովորաբար սկզբունքային բնույթ չէր կրում և փաստորեն պայքար էր ղեկավար գործիչների միջև ղեկավար պաշտոններ գրավելու համար:

Հայաստանի ղեկավարության մեջ խմբակայնություն դրսևորվեց 1922 թ., որի առիթը ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարի թեկնածության հարցն էր: Մի խումբ գործիչներ պաշտպանում էին Ա. Միկոյանի թեկնածությունը կենտկոմի քարտուղարի պոստի համար, որն զբաղեցնում էր Լուկաշինը: Հարցի քննարկումը դադարեցվեց ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի կողմից, երբ Հայաստանից հետ կանչվեցին որոշ ղեկավար գործիչներ: Անդրերկրկոմը Հայաստանի կոմունիստներին կոչ արեց՝ հանուն համերախշության և ընդդեմ խմբակայնության[17]:

Հաջորդ անգամ խմբակային պայքար ծավալվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Աշ. Հովհաննիսյանի գործունեության շուրջ, 1927 թ.: Նրան մեղադրում էին (Ս. Երզնկյան, Ա. Եսայան, Հ. Նազարեթյան) տարբեր սխալների համար, ինչպես թույլ պայքարը ազգայնականության ու տրոցկիզմի, դաշնակիզմի ու սպեցիֆիզմի դեմ և այլն: Պայքարը բորբոքվեց հատկապես ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1927 թ. մարտյան և հուլիսյան պլենումներում: Ստեղծված պայմաններում Աշ. Հովհաննիսյանը ստիպված դիմեց Անդրերկրկոմին՝ իրեն պաշտոնից ազատելու մասին, որը և հարգվեց: Դրանից հետո Աշոտ Հովհաննիսյանի ղեկավարությունը քննադատվեց որպես աջազգայնական թեքում: Նկատենք, որ այդ տարիներին կոմունիստական կուսակցության գործունեության մեջ ավելի շատ արտահայտություն էր գտնում «ձախ» գաղափարախոսությունը և պրակտիկան, չնայած խոսքով նա հանդես էր գալիս և ձախ և աջ թեքումների դեմ:

Կուսակցական մենատիրության հաստատումը և ամրապնդումը հանգեցնում էր նրան, որ նա աստիճանաբար յուրացնում էր պետական իշխանության մարմինների իրավունքներն ու գործառույթները: Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում: Բնականաբար հանրապետությա-

---

[17] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 49, թ. 83:

նը մնում էր տեղայնացնել այն օրենքներն ու որոշումները, որոնք ընդունում էին միութենական և Անդրդաշնության կուսակցական ու պետական ղեկավար մարմինները:

1920-ական թվականներին, ԽՍՀՄ կազմավորումից հետո, Հայաստանում կայացել է իշխանության բարձրագույն մարմին խորհուրդների 4 համագումար (3-րդից 6-րդը): Համագումարները քննարկել են հանրապետության տնտեսության ու մշակույթի զարգացման հարցեր: 6-րդ համագումարը (1929 թ.) ընդունեց ՀՍԽՀ առաջին հնգամյա պլանը, որը կազմում էր Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ առաջին հնգամյա պլանի բաղկացուցիչ մասը: Նշենք, որ սա միակ դեպքն էր, երբ Հայաստանի հնգամյա պլանը միութենականի մեջ գրավում էր առանձին տեղ: Հետագա պլաններում հանրապետությունների զարգացման խնդիրները ներկայացվել են ծուլված ԽՍՀՄ միասնական ընդհանուր պլանում, որն իր հերթին վկայում էր ԽՍՀՄ-ի կենտրոնացված պետության վերածման մասին:

Կենտգործկոմի նստաշրջանները քննարկել և ընդունել են հանրապետության սահմանադրության փոփոխությունները, հողային, քրեական ու այլ օրենսգրքերը և այլ օրենքներ: Կենտգործկոմի նախագահի պաշտոնում ընտրվել և աշխատել են Սաքո Համբարձումյանը, Արտաշես Կարինյանը և Սարգիս Կասյանը: Իսկ գործադիր իշխանության ժողկոմխորհի նախագահներ են եղել Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան) և Սահակ Տեր-Գաբրիելյանը: Ընդ որում Կենտգործկոմի (օրենսդիր, կարգադիր և ղեկավար վերահսկող բարձրագույն իշխանություն) շատ դեկրետներ ու որոշումներ ընդունվում էին ՀԿ(բ)Կ Կենտկոմի հետ համատեղ, ինչը առերևույթ խոսում է պետական-կուսակցական համատեղ ղեկավարման մասին:

Իշխանության բարձրագույն և տեղական մարմիններում ընտրված հազարավոր աշխատավորներ «մասնակից էին դառնում» երկրի կառավարմանը: Այսպես, ՀՍԽՀ խորհուրդների 3-րդ համագումարին (1923 թ. դեկտեմբեր) մասնակցել է 253 պատգամավոր (վճռական և խորհրդակցական ձայնով): Խորհուրդների 6-րդ համագումարի (1929 թ. ապրիլ) մասնակից պատգամավորների թիվը հասավ 399-ի (բոլորը վճռական ձայնի իրավունքով), իսկ նրա ընտրած Կենտգործկոմի կողմում կար 150 անդամ և 70 թեկնածու[18]: Խորհուրդների հանրապետական համագումարները պատգամավոր են ընտրել Անդրկովկասյան և համամիութենական խորհուրդների համագումարների համար: Հայաստանի ներկայացուցիչներն ընտրվել են Անդրկովկասի և ԽՍՀՄ Կենտգործկոմների կազմում:

---

[18] С. Хармандарян, К. Худавердян. Съезды Советов Армении. 1922-1937. Ереван, 1963, с. 63, 89, 142, 164.

Հայաստանում գործում էին շուրջ 800 գյուղական և մի քանի քաղաքային (1927 թ. դրությամբ 6 - Երևան, Լենինական, Ղարաքիլիսա, Էջմիածին, Դիլիջան, Նոր Բայազետ) խորհուրդներ: Միայն գյուղական խորհուրդներն ունեցել են մինչև 14-15 հազար անդամ:

Քաղաքացիների ընտրելու և ընտրվելու իրավունքը սահմանափակ էր: Այդ իրավունքից զրկվում էին բնակչության որոշ խմբեր: Ձայնազրկության սահմանները փոփոխվել են: Այն նվազագույնի է հասցվել 1925-1926 թթ., երբ ժամանակավորապես կրճատվեցին քվեարկության իրավունք չունեցողների շրջանակները: Հաջորդ տարիներին ձայնազուրկների թիվը նորից աճեց, մասնավորապես ձայնազուրկի ընտանիքի անդամների հաշվին: Այսպես, 1926 թ. գյուղական վայրերում ձայնազրկությունը կազմում էր 0,84 տոկոս, քաղաքներում՝ 4,78 տոկոս[19]: Իսկ 1929 թ. համապատասխան տվյալներն են՝ 6,9 և 16,2 տոկոս[20]: Հետաքրքիր են հետևյալ համեմատական տվյալները, որոնք ցուցադրում են Հայաստանի «առաջատար դերը» տվյալ բնագավառում ԽՍՀՄ հանրապետությունների մեջ: Հայաստանի 6,9 տոկոս ձայնազրկության դիմաց Վրաստանն ուներ 4,5, Ադրբեջանը՝ 5,7, Ուկրաինան՝ 4,5 և Բելոռուսիան՝ 2,0 տոկոս ցուցանիշ[21]:

Ժողովրդավարությունը, սակայն, շատ իմաստով ձևական էր: Խորհրդային իշխանության մարմինների գործունեությունը ոչ միայն անկախ չէր, այլև պայմանավորված էր Կոմունիստական կուսակցության որոշումներով ու դերով: Վերջինիս կազմակերպությունները (բջիջներ, կոմիտեներ, կոնֆերանսներ, համագումարներ) աստիճանաբար յուրացնում էին իշխանության մարմինների իրավունքներն ու պարտականությունները:

Խորհրդային իշխանության գործունեությանն ուղղություն էր տալիս Կոմունիստական կուսակցությունը: Մինչև ԽՍՀՄ կազմավորումը տեղի էր ունեցել ՀԿ(բ)Կ մեկ՝ 1-ին համագումարը, իսկ նրանից հետո կայացան 2-րդ (1923 թ.), 3-րդ (1924 թ.), 4-րդ (1925 թ.), 5-րդ՝ (1927 թ.) և 6-րդ՝ (1929 թ.) համագումարները: Վերջինները մշակել էին միջոցառումներ, ապա դրանք հանձնարարել խորհրդային մարմիններին: Ձեռնարկված միջոցառումները վերաբերում էին սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային բնագավառներին՝ տնտեսության վերականգնմանն ու զարգացմանը, կուլտուրական շինարարությանը: Տարեցտարի աճում էր կուսակցական կազմակերպությունների, կուսակցության անդամ-թեկնածուների թիվը: Լենինի մահից հետո (1924 թ.) հատուկ կամպանիա անցկացվեց հատկապես «դազգահի բանվորների» հաշվին կուսակցության շարքերն ընդլայնելու և

---

[19] ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 1746, թ. 119:
[20] Նույն տեղում, գ. 2318, թ. 3-4:
[21] Նույն տեղում, թ. 1:

սոցիալական կազմը բարելավելու համար: 1924 թ. սկզբի դրությամբ ՀԿ(բ)Կ ուներ 376 սկզբնական կազմակերպություն[22], որոնց ճնշող մասը դեռևս գյուղականն էր: Անդամ-թեկնածուների թիվն անցնում էր 4000-ից: Իսկ 1930 թ. հունվարի 1-ին նրա շարքերում հաշվվում էր ավելի քան 12 հազար անդամ-թեկնածու, որոնց ավելի քան 60 տոկոսը բանվորներ էին: Ընդ որում մինչև այդ, 1929 թ. կատարվել էր կուսակցության շարքերի զտում՝ «խորթ և քայքայված տարրերից» ազատվելու համար[23]: Կուսակցական ղեկավարությունը կարևոր ուշադրություն էր դարձնում սոցիալական կազմի բարելավմանը, բանվորների տեսակարար կշռի բարձրացմանը: Դա արտահայտում էր այն իրողությունը, որ ՀամԿ(բ)Կ իր բնույթով բանվորական կուսակցություն էր: Կուսակցական կազմակերպությունների (բջիջների) գործունեությունը ղեկավարում էր ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն, իր 9 գավառական կոմիտեների միջոցով:

Կուսակցությունը մեծ ուշադրություն էր նվիրում գաղափարական-քաղաքական գործունեությանը, որի միջոցով նաև ամրապնդում էր իր իշխանությունը, բնակչությանը դաստիարակում կոմունիստական ոգով: Դրան նախ և առաջ ծառայում էր մամուլը: Կուսակցության կենտրոնական օրգանն էր «Խորհրդային Հայաստան» օրաթերթը: Երիտասարդության համար տպագրվում էր «Ավանգարդը», որը ՀԼԿԵՄ Կենտկոմի օրգանն էր: Իրենց թերթերն ունեին ազգային փոքրամասնությունները: Ժողովրդի դաստիարակության և կուլտուրական սպասարկման միջոց է դառնում ռադիոն: Հայաստանում (Երևանում) առաջին ռադիոհաղորդիչ կայանը ստեղծվել է 1925 թ., հաջորդ տարվանից այն սկսել է իր հաղորդումները: 1929 թ. գործարկվեց նոր ռադիոկայան, որն ընդունում էր նաև Թիֆլիսի և Բաքվի ռադիոհաղորդումները: Ռադիոֆիկացվում էին քաղաքներն ու գյուղերը, չնայած ռադիոընդունիչների թիվը դեռևս մեծ չէր: Նորություն էր նաև կինոն, որը հիմնադրվեց 1920-ական թվականների կեսերին: 1925 թ. թողարկվեց Հայաստանի առաջին կինոնկարը՝ «Զարեն»: Կուսակցության պահանջով մեծ նշանակություն էր տրվում պատմահեղափոխական թեմաներով նկարների արտադրությանը: Հասարակության կոմունիստական ոգով դաստիարակությանն էին ծառայում արվեստի մյուս ճյուղերը և գրականությունը:

Քաղաքական խնդիրների կենսագործմանն էր ուղղված հասարակական կազմակերպությունների գործունեությունը: Խորհրդային իշխանության տարիներին ստեղծվեց հասարակական կազմակերպությունների

---

[22] Компартия Армении в цифрах и документах, с. 14, 68.

[23] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Երևան, 1967, էջ 412-413:

համակարգ, որը գործում էր Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ու ցուցումներով:

Ամենազանգվածային կազմակերպություններն էին ՀԼԿԵՄ-ը և արհմիությունները: Հայաստանի կոմունիստական երիտասարդական կազմակերպությունները ծնունդ էին առել Հայաստանի Հանրապետության տարիներին, ի հակադրություն դաշնակցական երիտասարդական միության: Հայաստանի կոմունիստական երիտասարդական կազմակերպությունների միավորումը տեղի ունեցավ 1921 թ. նրանց 1-ին համագումարում, ձևավորելով Հայաստանի կոմունիստական երիտասարդական միությունը (ՀԿԵՄ): Լենինի մահից հետո այն վերանվանվեց լենինյան (ՀԼԿԵՄ): Արագորեն աճում էր կոմերիտական կազմակերպությունների և նրանց անդամների թիվը: 1921 թ. օգոստոսի դրությամբ 7800-ի դիմաց 1930 թ. ՀԼԿԵՄ շարքերում հաշվվում էր շուրջ 23 հազար երիտասարդ: ՀԼԿԵՄ-ը դարձավ ՀԿ(բ)Կ-ի շարքերը համալրող կարևոր ռեզերվ, երիտասարդության կազմակերպող ուժը կուսակցության առաջադրած խնդիրների կատարման գործում:

Ստեղծվեց մանկական կամ պիոներական կոմունիստական կազմակերպություն (1921 թ.): Մինչև 1924 թ. այն կրում էր պատկոմական (պատանի կոմունարներ) անունը: 12-16 տարեկանները պատկոմներ էին (պիոներներ), իսկ 8-11 տարեկանները «ծաղիկներ» (հետագայում՝ հոկտեմբերիկներ): 1923 թ. սկսած պատկոմական կազմակերպությունը ղեկավարում էր ՀԿԵՄ-ը: Այս կազմակերպությունը ևս կրեց Լենինի անունը՝ նրա մահից հետո:

Մյուս զանգվածային հասարակական կազմակերպությունը արհեստակցական միություններն էին: Այն աշխատավորների կազմակերպումն է պրոֆեսիոնալ սկզբունքով և կոչված էր պաշտպանելու աշխատավոր զանգվածների տնտեսական շահերը:

Դեռևս 1920 թ. աշխատավորական կազմակերպությունները համախմբվել էին Հայաստանի արհեստակցական միությունների միության մեջ, որը գտնվում էր Դաշնակցություն կուսակցության ազդեցության տակ: 1921 թ. տեղի ունեցավ այդ հասարակական կազմակերպության վերակառուցումը և՝ կազմակերպական, և՝ գաղափարական առումով: 1920-ական թվականներին գոյություն ունեին և գործում էին տեքստիլագործների, տպագրիչների, գեղաշխի, գրողների, մետաղագործների, երկաթուղայինների և այլ ճյուղային միությունները: Նրանց գործունեությունը կենտրոնացնելու համար ստեղծվեց խորհուրդ՝ ՀԱՄԽ-ը: 1920-ական թվականներին արհմիությունները կարևոր մասնակցություն ունեցան տնտեսության

վերականգնման և ինդուստրացման համար աշխատավորներին կազմակերպելու գործում:

***

1920-ական թվականների վերջին միութենական բարձրագույն մարմինները Հայաստանում և Անդրդաշնության մյուս հանրապետություններում կազմակերպեցին կուսակցական և խորհրդային շինարարության արդյունքների ուսումնասիրություն, փորձի ընհանրացման և գործերի ընթացքի հետագա բարելավման նպատակով:

Անդրկովկասի ժողովուրդների ազգային փոխհարաբերությունների մասին հարցի ուսումնասիրություն կատարեց ԽՍՀՄ Կենտգործկոմի ազգությունների խորհուրդը 1928 թ. սկզբին, քննարկելով ԱԽՖՍՀ կառավարության նախագահ Միխա Ցխակայայի զեկուցումը[24]:

Հարցի ավելի հանգամանալի քննարկում կատարվեց ԽՍՀՄ կառավարության կողմից 1929 թ. հոկտեմբերին: Այդ նպատակով ՀամԿ(բ)Կ Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի և ԽՍՀՄ բանգյուղտեսչության նախաձեռնությամբ, առանձին հանձնաժողովի միջոցով, Անդկովկասի երեք հանրապետություններում կատարվեց լայն հետազոտություն[25]: Ընդ որում հանձնաժողովի որոշ եզրակացությունների և դիտողությունների վերաբերյալ հնարավոր առարկություններ է արել ՀԿ(բ)Կ Կենտկոմի 2-րդ - քարտուղար Աղասի Խանջյանը, այդ մասին պաշտոնապես տեղեկացնելով ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Օրջոնիկիձեին: Նշելով, որ հանձնաժողովը Հայաստանում քիչ ժամանակ է ունեցել հարցերը խորությամբ ուսումնասիրելու համար, Խանջյանը նշում էր, որ այդ պատճառով նրա եզրակացությունները ստացվել են «ոչ ամբողջական ու ճիշտ»:

Խանջյանը խնդրում էր հանձնաժողովի զեկուցումը քննարկելու ժամանակ հաշվի առնել իր դիտողությունները[26]: Հայաստանի առարկությունները վերաբերում էին ադրբեջանցիների կողմից հանրապետության ամառային արոտավայրերը օգտագործելու, հարկային, ազգային քաղաքականության կենսագործման, գյուղի շերտավորման և այլ հարցերի[27]:

Հետաքրքիր են հանձնաժողովի ուսումնասիրությունները Անդրկովկասում ազգային քաղաքականության կենսագործման մասին ըստ դաշնության ղեկավար մարմիններում ու հիմնարկություններում երկրամասի

---

[24] Խորհրդային Հայաստան, 24 հունվարի 1928 թ.: ՀԱԱ, ֆ. 42, ց. 1, գ. 105, թ. 113-114:
[25] ՀԱԱ, ֆ. 1, ց. 13, գ. 244, թ. 1-73:
[26] Նույն տեղում, ց. 6, գ. 4, թ.1:
[27] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 4, թ. 11-14:

հիմնական ազգությունների գրաված տեղի: Հանձնաժողովը արձանագրել է թուրք (ադրբեջանցի) բանկչության ներկայացուցիչների ցածր տեսակարար կշիռ մյուս ժողովուրդների՝ վրացիների, հայերի ու ռուսների համեմատությամբ և նշել է դրությունը բարելավելու անհրաժեշտության մասին: Սակայն հետաքրքիր է, որ հանձնաժողովը (նախագահ Շ. Իբրահիմով) հարկ չի համարել անդրադառնալ դրա պատճառներին: Այդ դեպքում հարկ կլիներ արձանագրել, որ պատճառը թուրքերի ցածր կրթական մակարդակն էր և համապատասխան կադրերի բացակայությունը: Այնպես որ հանձնաժողովը նման վիճակից դժգոհելու իրավունք չուներ:

Ավելացնենք նաև այն մասին, որ հանձնաժողովը փաստել է նաև որոշ այլ ճշմարտություններ, որոնք վկայում են Հայաստանի նկատմամբ խտրականության մասին: Ինչ վերաբերում է Անդրկովկասի հանրապետությունների միջև միջոցների բաշխմանը, գրել է նա, ապա հարկավոր է նշել բյուջեի հնարավորությունների, Հայաստանին բյուջեով սպասարկելու թուլությունը (բերված են թվական տվյալներ):

Նման նախապատրաստությունից հետո ԽՍՀՄ ժողկոմխորհը 1929 թ. հոկտեմբերին քննարկեց ԱԽՖՍՀ կառավարության գործունեության մասին վերջինիս նախագահ Շ. Էլիավայի զեկուցումը:

Ընդունված որոշման մեջ անդրադառնալով նոր իրադրությանը համապատասխան ԱԽՍՖՀ գործունեությունը վերակառուցելու անհրաժեշտությանը, միաժամանակ պահանջվում էր դա իրականացնել «հիմք ընդունելով Անդրկովկասի առանձին հանրապետությունների ինքնագործունեության պահպանումը»:

Այնուհետև ՀամԿ(բ)Կ Կենտկոմը «Անդրերկրկոմի հետագա աշխատանքները» դիրեկտիվներով տվեց նաև Անդրկովկասի դաշնության անցած ուղու հանրագումարները և նշեց հետագա խնդիրները: Նոր պայմաններում, երբ ծառացել էին ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բարդ խնդիրները, ըստ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի, պահանջվում էր վճռականապես ուժեղացնել Անդրդաշնության կուսակցական ու խորհրդային մարմինների ղեկավար դերը: Անդրդաշնությունը սկզբնական շրջանում կատարել էր գերազանցապես քաղաքական դեր, ապահովելով, ասված է դիրեկտիվներում, «Անդրկովկասի հանրապետությունների բարեհաջող զարգացումը, պրոլետարիատի դիկտատուրայի ամրացումը և ազգային խաղաղության կայունացումը»: Այնուհետև դաշնության ղեկավար մարմինների գործունեությունը, ինչպես նշվեց, կենտրոնանում էր տնտեսական խնդիրների վրա:

Ազգային հանրապետությունների նկատմամբ դաշնային մարմինների ղեկավարության ուժեղացումը կատարվելու էր այդ հանրապետությունն-

ների «լայնորեն ծավալվող ինքնագործունեությանը և տնտեսական նախաձեռնությանը զուգընթաց»[28]:

Այսպիսով և ԽՍՀՄ կառավարությունը, և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը գտնում էին, որ միաժամանակ մի կողմից, պետք է ուժեղացվեր Անդրդաշնության ղեկավար դերը, մյուս կողմից, ծավալվելու էր ազգային հանրապետությունների ինքնագործունեությունը, այսինքն նրանց իրավունքները: Հասկանալի է, որ չէր կարող միաժամանակ նման բան կատարվել՝ որ անպայման կշահեր դաշնությունը, ամրապնդելով իր դիրքերը ի հաշիվ տեղական ինքնավարության: Այդպես էլ եղավ: Եվ, ինչպես կտեսնենք հետո, մի քանի տարի անց հարկ եղավ արձանագրել, որ հանրապետությունների իրավունքները սեղմվել են:

Ընդունված որոշումների ոգով վերակառուցվեց ֆեդերատիվ մարմինների (պետպլան, ժողտնտխորհ, վիճակագրական վարչություն և այլն) գործունեությունը, ստեղծվեց անդրկովկասյան հողժողկոմատ և այլն: Այդ ամենի հետևանքով տեղի ունեցավ կառավարման ուժեղ կենտրոնացում տնտեսության, մշակույթի և այլ բնագավառներում: Նույնը կատարվում էր ամբողջ ԽՍՀՄ-ում:

3. Պետություն-եկեղեցի հարաբերությունները

Խորհրդային իշխանությունը և կոմունիստական կուսակցությունը եկեղեցու հարցում ղեկավարվում էին մարքսյան այն դրույթով, թե կրոնը հաշիշ է, որը թունավորում է մարդկանց ուղեղը:

Խորհրդային իշխանությունը, դեմ լինելով կրոնին, սահմանազատվեց եկեղեցուց: ՀՍԽՀ Սահմանադրությամբ եկեղեցին դառնում էր «հավատացյալների մասնավոր համայնք», իսկ բոլոր քաղաքացիներին իրավունք էր տրվում «ազատորեն վարել կրոնական և հակակրոնական պրոպագանդա»: Իրականում խիստ սահմանափակվեցին կրոնական քարոզչության հնարավորությունները և, հակառակը, ուժեղ պայքար ծավալվեց եկեղեցու գործունեության դեմ:

Գաղափարական տեսանկյունից բացի գոյություն ուներ նաև հարցի քաղաքական կողմը, երբ կապ էր տեսնվում եկեղեցականների, հատկապես բարձր խավի հոգևորականների ու Դաշնակցության միջև: Նշենք, որ էջմիածինը, ընդհանրապես լոյալ վերաբերմունք էր որդեգրել նոր իշխանության նկատմամբ: Պետությունը եկեղեցու հետ հարաբերություններն իրականացնում էր իր ներկայացուցիչների միջոցով: 1920-ական թվական-

---

[28] Խորհրդային Հայաստան, 1 դեկտեմբերի 1929 թ.:

ներին այդ ներկայացուցիչներն էին (հաջորդաբար) Գրիգոր Վարդանյանը, Սարգիս Լուկաշինը և Արամայիս Երզնկյանը:

Պետություն-եկեղեցի հարաբերություններում գոյություն ուներ մի այլ կողմ ևս. խորհրդային իշխանության համար Հայոց եկեղեցին և առանձին հոգևորականներ օգտագործվում էին որպես կապի միջոց հայկական Սփյուռքում և արտասահմանում գործելու համար, բացի այն, որ նրանց գործիք էին ծառայեցնում եկեղեցին ներսից քայքայելու համար:

Եկեղեցու դեմ խորհրդային իշխանության առաջին քայլը նրան անշարժ ու շարժական գույքից զրկելն էր: Հողի մասին դեկրետով (28 դեկտեմբերի 1920 թ.) բռնագրավվում էին բոլոր կալվածատիրական, այդ թվում նաև եկեղեցապատկան հողերը (եկեղեցին ամենախոշոր կալվածատերն էր Հայաստանում): Իսկ լուսժողկոմատի դեկտեմբերի 17-ի որոշումով պետականացվում էին ազգային հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունները (դպրոցներ, թանգարաններ, գրադարաններ, տպարաններ), իրենց շարժական ու անշարժ գույքով[29]:

Նույն օրվա մի այլ որոշումով տեղական հեղկոմները պարտավոր էին վերացնել այն բոլոր մասնավոր կուլտուր-կրթական հաստատությունները, որոնք հետապնդում էին «ազգայնական, կղերական և առհասարակ հակահեղափոխական նպատակներ»[30]:

Այս որոշումները նշանակում էին, որ կրթությունը դառնում էր աշխարհիկ, որ պետությունը սահմանազատվում էր եկեղեցուց և եկեղեցին՝ դպրոցից:

Պետք է նշել, որ եկեղեցու ունեզրկման և կրթության աշխարհիկացման գործը դեռևս 1920 թ. նախածեռնել էր Հայաստանի Հանրապետությունը:

Կալվածքների բռնագրավմանը հաջորդեց հարձակումը եկեղեցու մյուս հարստությունների դեմ, որպիսի միջոցառումը ծավալվել էր Ռուսաստանում և խորհրդային այլ հանրապետություններում ևս:

1921 թ. հունվարի կեսերին դեկրետ ընդունվեց էջմիածնի վանքի արժեքները առգրավելու մասին, արժեքներ, որոնք կուտակվել էին դարերի ընթացքում և որոնց մի մասը առկա էր տեղում, իսկ հիմնական մասը 1915 թ. պատերազմական պայմաններում փոխադրվել էր Մոսկվա, ապահովության նկատառումով: Հանձնարարվեց «հաշվի առնել և էջմիածնի պետական թանգարան փոխադրել էջմիածնի վանքի և վանականների տրամադրության տակ եղած ժողովրդական սեփականություն կազմող այն

---

[29] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու: Պրակ 1-ին, էջ 16:
[30] Նույն տեղում, էջ 17:

թանկարժեք (ոսկեղեն, արծաթեղեն, քարեղեն, տնայնագործական, գեղարվեստական և այլն) իրեղենները, որ ներկայումս չեն գործադրված ծիսական նպատակներով»[31]:

Ռուսաստանի սովյալ բնակչությանն օգնելու առիթով և պատճառաբանությամբ ՌԿ(բ)Կ Կենտկոմը 1922 թ. մարտին որոշել էր առգրավել եկեղեցական գույքը և թանկարժեք իրերը: Խորհրդային իշխանության քաղաքականության համար բնորոշ էին Լենինի մոտեցումը և գնահատականները եկեղեցու և եկեղեցականների նկատմամբ: Նույն ժամանակ ՌԿ(բ)Կ - Կենտկոմի քաղբյուրոյի անդամներին ուղղված նամակում Լենինը պահանջում էր գնդակահարել «հետադեմ հոգևորականներին» և բռնագրավել եկեղեցու ունեցվածքը, ընդունել գաղտնի որոշում եկեղեցու թանկարժեք իրերը գրավելու մասին, որոշումը կենսագործել անխնա վճռականությամբ ու արագորեն, կանգ չառնելով դիմադրության առջև: «Այդ կապակցությամբ,- շարունակում է Լենինը,- որքան շատ հետադեմ հոգևորականների և հետադեմ բուրժուազիայի ներկայացուցիչների մեզ հաջողվի գնդակահարել, այնքան լավ: Պետք է հենց հիմա այդ հասարակությանը այնպիսի դաս տալ, որ նրանք մի քանի տասնամյակ որևէ դիմադրության մասին չկարողանան նույնիսկ մտածել»[32]:

Հիշյալ որոշումը ուղարկվել էր նաև ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմ՝ հանրապետություններում կենսագործելու համար: Ընդ որում մինչև այդ բռնագրավման ենթակա էին դարձել նաև բնակչության թանկարժեք իրերը, որի մասին խոսվել է նախորդ էջերում:

1922 թ. Երևանում ստացվել էր Կովկասյան բյուրոյի հեռագիրը, ՌԿ(բ)Կ Կենտկոմի մարտի 20-ի որոշման շարադրանքով՝ այն «անմիջապես և անշեղորեն կատարելու համար: Որոշումը պահանջում էր տեղերում անմիջապես ստեղծել թանկարժեք իրերը գրավող գաղտնի ղեկավարող հանձնաժողովներ, ինչպես նաև պաշտոնական հանձնաժողովներ կամ սեղաններ՝ սովյալներին օգնող կոմիտեներին կից, թանկարժեք իրերն ընդունելու և հավատացյալների հետ բանակցելու համար[33]:

Այնուհետև Անդրերկրկոմը հայտնեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի մի այլ որոշման մասին, որը վերաբերում էր տվյալ հարցի լրագրային քարոզչությանը: Կենտկոմը նշում էր, որ սխալ է ընթանում թանկարժեք իրերի գրավման լրագրային կամպանիան, այն ուղղելով «հոգևորականության դեմ ընդհան-

---

[31]Ստեփան Ստեփանյանց, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք: Երևան, 1994, էջ 8:

[32] "Известия ЦК КПСС", 1990 г., N 4, с. 190-193.

[33] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 49, թ. 10:

բապես»: ՌԿ(բ)Կ կենտկոմը բացատրում էր, որ քաղաքական խնդիրը եկեղեցու վերնախավի մեկուսացումն է, նրա վարկաբեկումը փաստերով՝ սովյալներին օգնելու հարցում: Այնուհետև խիստ սպառնալիք էր արվում հոգևորականության վերնախավերի նկատմամբ[34]:

1922 թ. ապրիլի 8-ին ՀԿ(բ)Կ Կենտոմի նախագահությունը քննարկեց «Անդրերկրկոմի շրջաբերական նամակը եկեղեցական հարստությունների գրավման մասին» և արձանագրեց, որ այն Հայաստանում չի կարող կիրառվել դրանց չլինելու պատճառով[35]: Կենտկոմը նաև բացատրել է, թե ինչու չի կարելի որոշումը կատարել.

1. Հայաստանում թանկարժեք իրերի գրավումը իրական օգուտ չի տա «այդպիսի իրերի չնչին քանակի պատճառով»:

2. Միակ ունևոր էջմիածնի վանքի հարստությունները դուրս են տարվել Մոսկվա և գտնվում են խորհրդային իշխանության տրամադրության տակ:

3. Թանկարժեք իրեր չունի նաև ուղղափառ եկեղեցին:

4. Հայաստանում թանկարժեք իրերի գրավումը «իրական օգնություն չի տա, իսկ ներկա պայմաններում քաղաքականապես կվնասի մեզ»[36]:

Եկեղեցական իրերը, հայկական ծեռագրերի հետ միասին, տեղավորվել էին 150 արկղներում և գբաղեցրել գնացքի երեք ապրանքատար վագոն: 1922 թ. Հայաստան վերադարձվեց 120 արկղ, այսինքն 30 արկղ մնաց Մոսկվայում[37]: Երևանում դրանք ազգայնացվեցին և անցան պետության տրամադրության տակ: Իսկ էջմիածնի Մատենադարանը վերակառուցվեց գիտահետազոտական ինստիտուտի և էջմիածնից փոխադրվեց Երևան, որպես պետական հիմնարկություն, համաժողովրդական սեփականություն: 1926 թ. համապատասխան հանձնաժողովը որոշեց եկեղեցուն վերադարձնել պաշտամունքի և արարողության համար անհրաժեշտ իրերը[38]:

Կաթողիկոսը միաբաններին ուղղված կոնդակով (1922 թ.) դատապարտեց էջմիածինը «քանդող» խորհրդային իշխանության քաղաքակա-

---

[34] Նույն տեղում, թ. 13:
[35] Նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 11:
[36] Նույն տեղում, գ. 49, թ. 67:
[37] Ստեփան Ստեփանյանց, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք: Երևան, 1994, էջ 26-28:
[38] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 5, թ. 86:

նությունը, համեմատելով այն պարսից շահերի կողմից Արարատյան երկիրը հայերից դատարկելու քաղաքականության հետ[39]:

Փորձ է եղել Հայաստանի սեփականություն դարձնել նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության հարստությունները կամ դրանց մի մասը, որ բաղկացած էին նաև որոշ կտակներից: Դա այն ժամանակ էր (1924-1925 թթ.), երբ միաբանությունից առաջարկ էր եղել՝ թույլատրել իր գործունեությունը (բարեգործություն, կաթոլիկության քարոզչություն և այլն) Հայաստանում: Հանրապետության դրական պատասխանն ուներ պայմանական բնույթ՝ եթե «ձեռք բերվի Մխիթարյանների միաբանության ունեցվածքը»[40]: Հայաստանի ղեկավարության համար հարցն ուներ նաև քաղաքական կողմ, այն է՝ հայ կաթոլիկների և հայ առաքելական եկեղեցիների հակադրությունն օգտագործել էջմիածնի դեմ[41]: Հարցի քննարկումն, ի վերջո, ավարտվեց անարդյունք, քանի որ հանդիպեց նաև ԽՍՀՄ-ի և Վենետիկի միջև հարաբերությունների սրմանը:

Այնուամենայնիվ Հայաստանում (էջմիածնի Մատենադարանում) գիտական աշխատանք կատարելու հնարավորություն ստացավ (1924-1928 թթ.) Մխիթարյան միաբանության անդամ Ներսես Ակինյանը, որը հանրապետությանը նվիրաբերեց իր որոշ ձեռագրեր (մեկ ճամպրուկ) և գրքեր (ութ արկղ):

Եկեղեցու նկատմամբ խորհրդային իշխանության քաղաքականության հիմնական ուղղությունը նրա քայքայումն էր, այնպիսի վիճակի մեջ դնելը, որ նա ազդեցություն չունենար հայ բնակչության վրա՝ ինչպես խորհրդային երկրում, այնպես էլ, որքան հնարավոր է, սփյուռքում: Այսպես, Լենինականի գավկոմը ՀԿ(բ)Կ Կենտկոմին հեռագրում էր, թե «եկեղեցու քայքայման գծով հանձնաժողովը խնդրում է ուղարկել հազար ռուբլի» (1924 թ.)[42]: Նույն 1924 թ. վերջին Անդրերկրկոմը Անդրժողկոմխորհին հանձնարարել էր 500 ռուբլի տրամադրել «հայ հոգևորականության կազմալուծման նպատակով»: Հիշեցնելով տվյալ որոշման մասին, ՀԿ(բ)Կ - Կենտկոմի քարտուղարը խնդրում էր արագացնել վարկի բացումը[43]: Այն իրականացվում է 1925 թ. փետրվարին[44]: Իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը 1924 թ. իր զեկուցումներից մեկում, նշելով հակակրոնական քարոզչության թուլացման մասին, ավելացնում է, թե «համե-

---

[39]Ստեփան Ստեփանյանց, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 27-28:
[40] Նույն տեղում, էջ 33-34:
[41] ՀԱԱ, ֆ. 122, ց. 2ա, գ. 14, թ. 3-4:
[42] Նույն տեղում, ֆ. 1, ց. 4, գ. 20, թ. 61:
[43] Նույն տեղում, ց. 5, գ. 22, թ. 5:
[44] Նույն տեղում, գ. 26, թ. 13-14:

նայն դեպս մենք ուժեղ պայքար ենք մղում հոգևորականության քայքայման գծով»[45]:

Պետությունը միջամտում էր եկեղեցու, էջմիածնի կաթողիկոսության բոլոր գործերին, նրա տպագրական գործունեությանը: 1926 թ. հատուկ որոշումով նույնիսկ արգելվեց եկեղեցու կողմից Հայոց եղեռնի՝ ապրիլի 24-ի օրվա նշումը[46]: Արգելվել էր հոգևոր գործիչների պատրաստման օջախ ճեմարանի վերաբացումը: Թույլատրվել էր միայն հոգևոր դպրոցի գործունեությունը, ուսումնական ծրագրերից բացառելով աշխարհիկ ու ընդհանուր հանրակրթական առարկաների դասավանդումը[47]:

Միայն 1923-1924 թթ. վարչական կարգով Հայաստանում փակվել էր 20, իսկ Վրաստանում 56 եկեղեցի: Նույն վիճակն էր Լեռնային Ղարաբաղում: Այդ և էջմիածնի համար ստեղծված ծանր դրության առիթով 1925 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ 5-րդը դիմեց ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ Ա. Ի. Ռիկովին: Բացատրելով հայ առաքելական եկեղեցու դարեդար եկող հատուկ դերը և նշանակությունը հայ ժողովրդի և հայկական սփյուռքի համար, հաշվի առնելով այն, որ հայ հոգևորականությունն ու հավատացյալ հոտը միշտ էլ «չեզոք, կոռեկտ և բարյացակամ վերաբերմունք են ցուցաբերել» խորհրդային իշխանության նկատմամբ, խնդրում էր վերաբացել փակված եկեղեցիները և լուծել հայ եկեղեցու իրավաբանական անձ ճանաչելու խնդիրը, ինչպես նաև վերջ տալ օրենքներին հակասող սահմանափակումներին ու ճնշմանը[48]:

Բռնությունը եկեղեցու ու նրա սպասավորների նկատմամբ ի խախտումն օրենքի, դարձավ սովորական երևույթ: Վարչական կարգով եկեղեցիների փակումը զանգվածային բնույթ էր կրում: Մի շարք թեմերում «շրջգործկոմները,- կարդում ենք ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանին ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ 5-րդի 1929 թ. մարտի 4-ի դիմումում,- շրջում են գյուղերը և հրապարակով հրավիրելով տեղական քահանաներին և կրոնական համայնքների լիազորներին՝ պահանջում են հանձնել եկեղեցու բանալիները: Չհանձնելու դեպքում բանտարկում ու ծայնազուրկ են հրապարակում, իր բոլոր հարակից հետևանքներով և, ապա, բացելով կամ կոտրելով եկեղեցու դռները, գրավում»[49]: Նույն օրերի մի այլ փաստաթղթում բերված է բռնագրավված տասնյակ եկեղեցիների ցուցակը: Ներգործժողկոմին հասցեագրված

---

[45] Նույն տեղում, ց. 4, գ. 28, թ. 1-16:
[46] Նույն տեղում, ֆ. 123, ց. 14, գ. 14, թ. 75:
[47] Նույն տեղում, ֆ. 1, ց. 6, գ. 5, թ. 40:
[48] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1928 թթ.), էջ 63-64:
[49] Նույն տեղում, էջ 174:

տվյալ գրության հեղինակ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Խորեն Արքեպիսկոպոս Մուրադբեկյանը հույս էր հայտնում, որ ժողկոմատի կողմից «անհրաժեշտ կարգադրությունը կլինի բռնությամբ գրավված եկեղեցիները հավատացյալ համայնքներին վերադարձնելու վերաբերությամբ»[50]: Նույն թվականի վերջին Կաթողիկոսը դարձյալ դիմեց հանրապետության կառավարության և Կենտգործկոմի ղեկավարներին: «Պաշտոնիս և կոչմանս պատասխանատվությամբ անհրաժեշտ եմ համարում մի անգամ ևս դիմել Ձեզ և, պատկերացնելով Հայ եկեղեցու և նորա պաշտոնեության ներկա չափազանց ծանր վիճակը, խնդրել՝ վերացնել տեղի ունեցող ապօրինությունները», գրել է Կաթողիկոսը[51]: Իշխանության և կուսակցության բարձրագույն մարմինները որոշումներ էին ընդունում, առերես ցույց տալով, թե, իհարկե, դեմ են ապօրինի արարքներին ու օրենքի խախտումներին, նույնիսկ պահանջելով պատասխանատվության ենթարկել օրինազանցներին[52]: Սակայն այդ ամենը ուներ ձևական նշանակություն: Իրականում կրոնի ու եկեղեցու դեմ պայքարն ավելի ու ավելի էր սրվում, ինչպես գաղափարական, այնպես էլ գործնական առումներով: Այդ տեսակետից հատկանշական է ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1928 թ. նոյեմբերյան պլենումը, որը նվիրված էր գաղափարախոսության ճակատում կուսակցության խնդիրներին[53]: Դրան նախորդել էր Կենտկոմի նույն թվականի մայիսի 31-ի որոշումը «Հոգևորականության մասին», որով հավանության էին արժանացել Հայպետքաղվարչության (նախկին Արտակարգ հանձնաժողովի) մշակած միջոցառումները[54]:

Պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում իշխանության մարմինները փորձեցին օգտագործել նաև, այսպես կոչված, «Ազատ եկեղեցական եղբայրությունը» կամ «Նոր եկեղեցին» (Նորոգչականներ), որն, ըստ էության, աղանդավորական շարժում էր և առաջ էր եկել 1920-ական թվականների կեսերին, ասես հետևելով ռուսական եկեղեցու ներսում առաջացած նորոգչական շարժմանը: Նրա հաջողությունը սպառնում էր պառակտել հայ-առաքելական եկեղեցին: Ուստի շարժումը հովանավորվում և խրախուսվում էր խորհրդային իշխանության կողմից: Շարժման կազմակերպիչներն էին Աշոտ եպիսկոպոս Շիյանը, վարդապետ Բենիկ Եղիազարյանը և Մեսրոբ քահանա Մելյանը: Ըստ այդ աղանդի՝ «եկեղեցիները պետք է ինք-

---

[50] Նույն տեղում, էջ 182:
[51] Նույն տեղում, էջ 203:
[52] ՀԱԱ, ֆ. 1, ց. 9, գ. 16, թ. 15:
[53] «Հայաստանի կոմունիստական (բ) կուսակցության խնդիրները իդեոլոգիական ֆրոնտում»: Երևան, 1929:
[54] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թ. 36 և 40:

նուրույն լինեին, չենթարկվեին հոգևոր կենտրոնին, կրճատվելու էին ծիսական արարողությունները, իսկ կուսակրոնությունը՝ վերացվեր»[55]:

Պետությունը «Նոր եկեղեցուն» տրամադրել էր շենք (ս. Լուսավորիչ եկեղեցին), օգնում էր նրա հրատարակություններին («Ազատ եկեղեցի» ամսագիր, գրքեր և այլն): Իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմի մամուլի բաժինը 1927 թ. դեկտեմբերի 14-ին հատուկ քննարկել էր «Ազատ եկեղեցի» ամսագրի հարցը, նրա տպագրության հարցերը լուծած լինելու համար[56]:

Թե, իսկապես, ինչ էր իրենից ներկայացնում «Նոր եկեղեցին» և նրա ղեկավարությունը, վկայում է հետևյալ փաստը. 1925 թ. հունվարին Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը հայտնում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարին, թե Աշոտ եպիսկոպոսը, մեզնից համապատասխան միջոցներ չստանալով, իր գոյությունը պահպանելու համար, բանակցությունների մեջ է մտել Գերագույն Հոգևոր խորհրդի հետ՝ «իր զղջման մասին և հայտնել ցանկություն վերադարձնալու էջմիածին»[57]:

Բազմաթիվ փաստաթղթեր համակողմանի ներկայացնում են Բենիկ վարդապետ Եղիազարյանի ինչպես ընդհանուր գործունեությունը, այնպես էլ ծառայությունը՝ պետական պատվերով, ընդդեմ էջմիածնի: Այսպես, 1924 թ. Ալեքսանդրապոլում կուսգավկոմի կողմից կազմակերպվել էր Բենիկ վարդապետի դասախոսությունը և ընդունվել բանաձև, որը պահանջում էր համաժողովրդական դատաստան «հայ հոգևորականության և էջմիածնի դավաճանների նկատմամբ»[58]: Ըստ Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի տվյալների (1925 թ.) Բենիկ վարդապետի համար սահմանված է եղել «պետական ամսավճար»[59]:

1929 թ. հոկտեմբերի 2-ի նամակում, հասցեագրված լուսժողկոմ և ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ասքանազ Մռավյանին, Բենիկը խնդրում էր ցույց տալ նյութական օգնություն, հիշեցնելով, որ խորհրդային ղեկավարների պահանջով դասախոսություններով ու գրքույկներով պայքարել է «հակահեղափոխական հոգևորականների դեմ», որ իր «զարկերի» շնորհիվ «ահագին ալեկոծություն առաջ եկավ ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում»[60]: «Հօգուտ խորհրդային իշխանության ամրապնդման գրական և հասարակական աշխատանք տանելու համար»,- գրել է Բենիկ

---

[55] Պարգև Գևորգյան (նախկին եպիսկոպոս), Հարատևություն. «Գրական թերթ», 28 փետրվարի 1992 թ.:
[56] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 24, թ. 23:
[57] Նույն տեղում, ց. 5, գ. 26, թ. 1 (Աշոտի համապատասխան դիմումը՝ նույն տեղում, թ. 16)::
[58] Նույն տեղում, ֆ. 1, ց. 4, գ. 24, թ. 51:
[59] Նույն տեղում, ց. 5, գ. 26, թ. 2:
[60] Նույն տեղում, ֆ. 122, ց. 2ա, գ. 26, թ. 11-12:

վարդապետը մի այլ նամակում (1932 թ.), Հայաստանի կենտկոմը 1924 թ. Երևանում ինձ հատկացրել է բնակարան: Նույն նամակում նա խնդրում էր «անհատական թոշակ», հաշվի առնելով իր ծառայությունները[61]: Վերջապես հարգվել է Բենիկ վարդապետի խնդրանքը նրա դիմումի վրա (1934 թ. օգոստոսի 31) կարելի է կարդալ Լուսժողկոմի հետևյալ մակագրությունը՝ «Համաձայն հատուկ կարգադրության ԼԺԿ-ի հատուկ գումարներից տալ ամսական 200 ռուբլի»[62]: Նշանակում է Բենիկ վարդապետը պետության համար եղել է «հատուկ» մարդ, որի թոշակավորման օգտին արվել է «հատուկ կարգադրություն», իհարկե, հատուկ մարմինների կողմից:

Ավելացնենք, որ պետությունը ուղիներ էր որոնում պաշտոնական եկեղեցու դեմ օգտագործել նաև ոմն վարդապետ Աբել Նազարյանի, որը շուրջ տաս տարի եղել էր արտասահմանի հայոց հոգևոր թեմերում և 1924 թ. վերադառնում էր ԽՍՀՄ: Ի պատասխան ՀԿ(բ)Կ կենտկոմի խարտուղար Ալ. Շահսուվարյանի գրության (28 փետրվարի 1924 թ.)[63] Արտակարգ հանձնաժողովը 1924 թ. ապրիլի 18-ին հայտնում էր, որ արքեպիսկոպոս Աբելը հասել է Մոսկվա: Կից ներկայացնելով Աբելի համապատասխան դիմումի պատճենը, նրա էության կապակցությամբ Անդրոկովկասի և Հայաստանի Արտակարգ հանձնաժողովները խնդրում էին արագացնել նրա ժամանումը Հայաստան «հայ հոգևորականության քայքայման գծով աշխատանքի համար»[64]: Ինչ վերաբերում է Աբել Նազարյանի դիմումին (23 մարտի 1924 թ.), որն ուղղված էր Մոսկվայում Անդրդաշնության ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրելյանին, ապա նրանում ասված է, թե արտասահմանյան տասնամյա գործունեության պաշտոնաթողությունից հետո «պատրաստ է կողք-կողքի գտնվել մեր իսկական կառավարության հետ՝ նրա ներքին ու արտաքին թշնամիների դեմ պայքարելու համար», հաշվի առնելով իր կազմակերպական փորձը, համալսարանական կրթությունը և լեզուների իմացությունը: «Նաև համոզված եմ,- այնուհետև կարդում ենք նամակում,- որ Կաթողիկոսի և նրա մանկլավիկների գործունեության փաստերին իմ ծանոթությունը հնարավորություն կտա օգնել կառավարությանը՝ ժողովրդական զանգվածներին «ազատելու կրոնական մշուշից»: Այդ համոզումով ու ծրագրով Աբելը թողել էր, ինչպես ինքն էր գրում, «բուրժուական կապիտալիստական աշխարհը, նվիրվելու համար պրոլետարիատի շահերի պաշտպանության գործին»[65]:

---

[61] Նույն տեղում, գ. 79, թ. 124-138:
[62] Նույն տեղում, թ. 139-140:
[63] Նույն տեղում, ֆ. 1, ց. 4, գ. 24, թ. 10:
[64] Նույն տեղում, թ. 37:
[65] Նույն տեղում, թ. 12:

Սակայն շուտով Աբելը հետ կանգնեց իր նոր ծառայությունից և 1927 թ. փետրվարին Ֆրանսիայից ուղարկած նամակով չեղյալ հայտարարեց 1924-1925 թթ. Երևանում իր անունով տպագրված հակաեկեղեցական գրքույկներն ու հոդվածները[66]:

Չնայած նորոգչական շարժման անհաջողություններին, իշխանությունները առայժմ շարունակում էին հետևողականորեն պաշտպանել նրա գործունեությունը: Այսպես, 1928 թ. մայիսին Հայպետքաղվարչությունը հայ լուսավորչական հոգևորականության գործունեության մասին առաջարկություններում նախատեսում էր, որ «Նոր եկեղեցին», որպես հայ եկեղեցում առանձնացած, որպես աղանդ, չհեռանա հայ լուսավորչական եկեղեցուց: Նկատի ունենալով, որ նոր-եկեղեցականներն ընդդիմություն են հայ եկեղեցու ղեկավարության հանդեպ, նրանց օգտագործել «որպես զենք-սպառնալիք» Գերագույն Հոգևոր Խորհրդի նկատմամբ, որին վերջնականապես նվաճելու համար «Նոր եկեղեցին» պահպանել գոյություն ունեցող վիճակում, նրան դնել որոշակի սահմանների մեջ, չթողնել, որ նա դուրս մնա խորհրդային իշխանության ազդեցությունից ու ղեկավարությունից: Նախատեսվում էր աշխատանքը տանել այն ուղղությամբ, որ «Նոր եկեղեցին» որպես առանձնացած, որպես աղանդ հայ եկեղեցում, չհեռանա վերջինից, մնա խորհրդային իշխանության կողմնորոշման վրա, հայ եկեղեցու նորոգում պահանջող առանձին խումբ այդ եկեղեցու կազմում:

Հայպետքաղվարչության առաջարկություններն ընդգրկում էին գործունեության ավելի լայն շրջանակ. հասնել նրան, որ Հոգևոր Գերագույն Խորհրդի ամբողջ գործունեությունը դառնա խորհրդայնանպաստ, որպեսզի կրոնական զանգվածները կտրվեն Դաշնակցությունից ինչպես երկրի ներսում, այնպես էլ հատկապես գաղթօջախներում: Մեկուսացնել այն «ավելի հետադեմ հոգևորականներին» (Գերագույն Հոգևոր Խորհրդի և թեմերի կառավարման կազմից), ովքեր կողմնորոշվում են դեպի Դաշնակցությունը և Արևմտյան Եվրոպայի երկրները: Նույնը վերաբերում էր ԽՍՀՄ թեմերին[67]:

Պաշտոնական էջմիածնի համար աննկատ չէին «Նոր եկեղեցու» դիտավորություններն ու բուն նպատակը, և այն հանգամանքը, թե ով է կանգնած այդ շարժման թիկունքում: Ուստի Գերագույն Հոգևոր Խորհուրդը 1926 թ. մայիսին շրջաբերականով դիմեց բոլոր թեմերին, դատապարտելով «նոր եկեղեցի» կազմակերպության ու նրա նույնանուն օրգանի գործունեությունը՝ որպես պառակտիչ Հայոց միասնական եկեղեցու համար՝ շարժում, որն ընդօրինակում էր Ռուսական օրթոդոքս եկեղեցում կատար-

---

[66] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), էջ 100-101:
[67] ՀՅԴաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 234-235:

ված պառակտումը[68]: Հայաստանում նորոգչական շարժումը, սակայն, այնքան բռնազբոսիկ ու արհեստական էր, որ այն մեծ հաջողություն չունեցավ և շուտով վերացավ, չարդարացնելով իր աշխարհիկ տերերի հույսերը:

1920-ական թվականներին գլուխ բարձրացրին նաև իսկական աղանդավորական շարժումներ, որոնց դեմ կազմակերպվեց ուժեղ պայքար: Նրանց աշխուժացման մասին արձանագրեց ՀամԿ(բ)Կ 13-րդ համագումարը 1924 թ.: Այդ կապակցությամբ հետազոտություններ կազմակերպվեցին նաև Հայաստանում: Այն համեմատաբար ուժեղ էր ռուս բնակչության շրջանում: 1925 թ. դրությամբ աղանդավորների թիվը կազմում էր. ռուս մոլոկաններ-պոստոյաններ՝ 7269, մոլոկան-պրիգուններ՝ 2752 մարդ: Ընդ որում դրա հետ միաժամանակ փորձ կատարվեց պարզելու նաև հավատացյալների խնդիրը հայ բնակչության շրջանում: Ըստ այդ հետազոտության տվյալների հավատացյալ էր հայ բնակչության 35 տոկոսը: Բերված են տվյալներ նաև հայ ավետարանական-բողոքականների, յոթերորդ օրվա ավետարանականների, կաթոլիկների և այլոց վերաբերյալ[69]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմն սկսեց պարբերաբար զբաղվել աղանդավորական շարժումներով, կատարելով ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1925 թ. հունվարի 10-ի որոշումն այն մասին, թե աղանդավորական շարժումն այնքան է աշխուժացել, հատկապես գյուղում, որ կուսակցական կազմակերպությունները չեն կարող տվյալ բնագավառը մատնել անուշադրության[70]:

Եկեղեցին քայքայելու և կազմալուծելու ուղղությամբ խորհրդային իշխանության գործունեությունը ավելի ծավալվեց 1920-ական թվականների վերջին: ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1929 թ. մարտի 14-ի «Հակակրոնական աշխատանքի ուժեղացման մասին» նամակով, որն ուներ որոշման նշանակություն, դիմեց կուսակցական ու կոմերիտական կազմակերպություններին: Կենտկոմը հակակրոնական աշխատանքի ուժեղացման անհրաժեշտությունը պատճառաբանում էր դասակարգային պայքարի սրվածությամբ: Ըստ նամակի՝ խորհրդային իշխանության դեմ միասնական ճակատով հանդես էին գալիս հակախորհրդային տարրերը, կուլակը, նեպմանը և, անպայման, հոգևորականությունը, դաշնակցականների ղեկավարությամբ[71]:

Կուսակցությունը հատկապես կապ էր տեսնում հոգևորականության ու Դաշնակցության միջև, ուստի իր հակակրոնական ու Դաշնակցության

---

[68] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), էջ 80-81:
[69] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 120, թ. 1-26:
[70] Նույն տեղում, ց. 4, գ. 36, թ. 157-159:
[71] Նույն տեղում, ց. 9, գ. 18, թ. 44:

դեմ պայքարը շարունակում էր վարել ըստ այդմ: Այսպես, 1927 թ. կուսակցական որոշումներից մեկում պահանջվում էր մամուլի էջերում մերկացնել դաշնակցականների ու հոգևորականության ներկայացուցիչների միջև գոյություն ունեցող կապը[72]:

Շատ չանցած նույնը կրկնեց «Անաստված» ամսագիրը, ուղղակի մեղադրելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որի ղեկավարությամբ ԽՍՀՄ-ում և արտասահմանում «ուժեղ գործակցություն» գոյություն ուներ «հայ հոգևորականության և հակահեղափոխական դաշնակցության միջև»[73]: Այդ կապի մեջ խորհրդային իշխանությունն իր համար վտանգ էր տեսնում: Այդ տեսակետից բնորոշ է Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի օրինակը: Հայաստանի իշխանությունները տարիներ շարունակ էջմիածնից պահանջում էին Թավրիզից հետ կանչել թեմի առաջնորդին:

Այդ նպատակով, խորհրդային իշխանության հովանավորությամբ, Թավրիզ էր մեկնել Հոգևոր Գերագույն Խորհրդի անդամ Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանը (1927 թ.), որը, սակայն, «ծեռնունայն էջմիածին վերադարձավ», գրել է «Հայրենիք» օրաթերթը (Բոստոն): Նույնի վկայությամբ Պետքաղվարչությունը էջմիածնի անունով Թավրիզ ուղարկեց Արսեն վարդապետ Ղըլտճյանին, որը «Դարձյալ Չեկայի հրամանով եպիսկոպոս է ծեռնադրված, որպեսզի կարենա գրավել Մելիք-Թանգյանի աթոռը»[74]: Այս մասին հաստատող խոստովանություն է արել նաև խորհրդային նախկին դիվանագետ Գ. Ագաբեկովը: Թավրիզի հայ եպիսկոպոս Ներսեսի տակը «վաղուց փորում էր ՊՔՎ-ն»,- գրել է նա իր հուշերի գրքում: Հեղինակը տեղեկություններ է հայտնում նաև Պարսկաստանում և այլ երկրներում դաշնակցության և հայ լուսավորչական եկեղեցու դեմ խորհրդային գործակալների կազմակերպած գործունեության մասին[75]:

Հայ եկեղեցու համար ստեղծված ծանր վիճակի և պահանջների մասին էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ 5-րդի 1929 թ. դեկտեմբերի 31-ի դիմումը հանրապետության բարձրագույն իշխանություններին: Պաշտոնիս և կոչմանս պատասխանատվությամբ, գրում էր Հայոց Հայրապետը, անհրաժեշտ եմ համարում մի անգամ ևս դիմել Ձեզ և խնդրել «վերացնել տեղի ունեցող ապօրինությունները»[76]:

---

[72] ՀՅԴաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 230:
[73] Ստեփան Ստեփանյանց, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, էջ 70:
[74] ՀՅԴաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 317:
[75] Г. С. Агабеков. ГПУ (записки чекиста). Изд. "Стрела", 1930.
[76] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), էջ 202-208:

Նույն թվականի հունիսին Գերագույն Հոգևոր Խորհուրդը թեմեր ուղարկած շրջաբերականով խոստովանում էր, որ, իսկապես, սփյուռքի առանձին եկեղեցիներում անհատ դաշնակցականներ եկեղեցին ու եկեղեցական ժողովները փորձել են դարձնել «քաղաքական պրոպագանդի ամբիոն և հակախորհրդային ելույթներ են ունենում այնտեղ», և որ հոգևոր ներկայացուցիչները «արգելք չեն եղել այդպիսի ելույթներին»: Միաժամանակ Գերագույն Հոգևոր Խորհուրդը հայտարարում էր, որ ինքը հեռու է որևէ կուսակցության հարելուց կամ շահերը պաշտպանելուց և հայտնում էր խորհրդային իշխանության նկատմամբ իր և թեմերի «լոյալ ու բարյացակամ» վերաբերմունքի մասին[77]:

Այսպիսով խորհրդային իշխանության պայմաններում հայ եկեղեցու համար ստեղծվեցին խիստ ծանր պայմաններ: Կրոնական ու հակակրոնական քարոզչության և դավանանքի ազատության մասին օրենքները գործում էին միակողմանի, այն միայն խորհրդային իշխանության համար էր: Նա ազատ էր կրոնի ու եկեղեցու նկատմամբ բռնություն և ապօրինություններ գործադրելու համար: Կրոնական բարոյականությանը փոխարինելու եկավ կոմունիստական գաղափարախոսությունը, անաստվածությունը: Խորհրդային իշխանությունը, չվերացնելով եկեղեցին, նրան դրեց իր համար ցանկալի և ընդունելի պայմանների մեջ:

[77] Նույն տեղում, էջ 187-188:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵԾ ՎԵՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1929-1940 թթ.)

Գլուխ VI. Հանրապետության ինդուստրացումը

1. Ինդուստրացման գործընթացը

1928-1929 թթ. բեկումնային դարձան խորհրդային իշխանության քաղաքականության համար: Եթե մինչև այդ երկրի զարգացումը կազմակերպվում էր Նեպի հիման վրա, ապա այժմ քաղաքականությունը, առաջին հերթին տնտեսականը, կտրուկ փոխվեց: Սկսեց, չնայած մասնակիորեն, վերադարձ կատարվել դեպի «ռազմական կոմունիզմը (արտակարգ միջոցառումներ – "чрезвычайщина"): Առիթը 1928 թ. ԽՍՀՄ-ում առաջացած հացամթերման դժվարություններն էին: Ապրանքային հացի տեր ունևոր կուլակային և մյուս տնտեսություններն այն թաքցրել էին իրենց համար հարմար պահի շուկա հանելու համար: Առաջ եկավ հացի սուր պակաս՝ - քաղաքային բնակչության մատակարարման, նաև արտահանության բնագավառում: Երկիրը գտնվում էր տնտեսական ճգնաժամի եզրին, որը սպառնում էր քաղաքական ճգնաժամով:

Հացամթերումների ճգնաժամը պարզ դարձավ 1927 թ. վերջին և 1928 թ. սկզբին: 1928 թ. հունվարի 1-ի դրությամբ 128 միլիոն փթով պակաս հաց էր մթերվել (300 միլիոն փութ՝ մեկ տարի առաջ մթերված 428 միլիոն փթի դիմաց): Ձեռնարկվեցին արտակարգ միջոցառումներ (чрезвычайщина) հացի պակասն արագ կերպով լրացնելու համար: Առաջին միջոցառումները լուրջ արդյունք չտվեցին: Ուստի 1928 թ. հունվարին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը կուսակցական կազմակերպություններին հրահանգեց մեկ շաբաթվա ընթացքում բեկում ստեղծել մթերումների գործում: Հունվարի 14-ի հեռագրով Ստալինը պահանջում էր բեկումն ապահովելու համար կանգ չառնել խիստ միջոցների առաջ՝ ընդհուպ մինչև բանտարկություն: «Հացամթերումներն ամրոց են,- նշում էր Ստալինը,- որը մենք պետք է նվաճենք ինչպես էլ ուզում է լինի: Եվ հավանաբար մենք այն կգրավենք, եթե աշխատենք բոլշևիկաբար, բոլշևիկյան ճնշմամբ»:

Ստալինն անմիջապես մեկնեց Սիբիր՝ անձամբ գլխավորելու բեկումը: Երեք շաբաթ շարունակ Սիբիրի հացառատ շրջաններում նա հանդիպումներ ունեցավ երկրամասի կուսակցական վերնախավի (ոչ գյուղացիների) հետ, պահանջելով հայտնաբերել կուլակների թաքցրած հացը, նրանց նկատմամբ գործադրելով քրեական օրենսգրքի 107-րդ հոդվածը: Դա վերադարձ էր դեպի «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, հրաժարում ճգնաժամը վերացնելու տնտեսական միջոցներից, Նեպից:

Ստալինը միաժամանակ դնում էր կոլեկտիվացման խնդիրը որպես հացի հարցի լուծման միակ ուղի: «Ամբողջ գյուղատնտեսության սոցիալիզացիա» «կոլտնտեսությունների ու սովխոզների շինարարության ծավալում»,- այդ դառնալու էր Սիբիրի կոմունիստների գործունեության ծրագիրը[1]:

Քաղաքականության փոփոխությունն ուներ նաև իր խորքային պատճառները: Դա սոցիալիստական շինարարության ուղիների ու եղանակների հարցում երկրի ղեկավարության ունեցած պատկերացումներն էին՝ սոցիալիստական շինարարության կազմակերպումը վերևից, պետության կողմից:

ԽՍՀՄ ղեկավարությունը, հանձին Ստալինի և նրա մերձավոր գործակիցների, ընտրեց Նեպից հրաժարվելու ուղին, որը նշանակում էր ուժեղացնել ճնշումը գյուղացիության, առաջին հերթին ունևոր-կուլակային տնտեսությունների վրա, զարկ տալ կոլտնտեսությունների ու սովխոզների կազմակերպմանը, կուլակային հացի արտադրությունը սոցիալիստական տնտեսությունների (կոլտնտեսություններ, սովխոզներ) հացի արտադրությամբ փոխարինելու համար: Ընտրված ուղին դարձավ պետական-կուսակցական քաղաքականություն: Միաժամանակ տեղի ունեցավ երկրի կառավարման ուժեղ կենտրոնացում միութենական մարմինների ձեռքում, կծկվեցին ու սահմանափակվեցին հանրապետությունների իրավունքները և ինքնիշխանությունը: Իսկ կառավարման կենտրոնացումը զուգակցվեց վարչահրամայական եղանակի հաստատման հետ: Միութենական օրենքներն ու որոշումներն օժտվեցին հրամանների ու դեկրետների ուժով, դրանցից բխող հետևանքներով: Վերջապես համընդգրկուն պլանային կառավարումը, որ հաստատվեց առաջին հնգամյակով, ուներ դիրեկտիվ բնույթ:

Հարց է ծագում. կա՞ր, արդյոք, ճգնաժամից դուրս գալու, սոցիալիստական շինարարության եղանակների այլ ուղի, թե՞ Ստալինի որոշումը միակն էր: Այլընտրանք գոյություն է ունեցել:

Բանն այն է, որ եթե հացի ճգնաժամը քաղաքականության շրջադարձի համար առիթ էր, ապա բուն պատճառը, ինչպես նշվեց, երկրի զարգացման ուղիների հարցում կուսակցության ստալինյան ղեկավարության ընտրած կողմնորոշումն էր: 1920-ական թվականների երկրորդ կեսին ղեկավար մարմինների հանձնարարությամբ, Խորհուրդների համամիութենական 4-րդ և ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարների (1927 թ.) համար տնտեսագիտական միտքը գիտական ուսումնասիրություններ էր կատարել երկ-

---

[1] В. Г. Косачев, Накануне коллективизации. Поездка И. В. Сталина в Сибирь. Вопросы истории, 1998, N 5, с. 101-105.

րի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների որոշման և ընտրության նպատակով:

Հայտնի է տնտեսագետների մշակած երեք տարբերակ, որոնցից յուրաքանչյուրը երկրի զարգացման հարցում համապատասխանում էր կուսակցության ղեկավարության մեջ գոյություն ունեցող սկզբունքներին կամ ըմբռնումներին: Առաջինը վարչաբաշխիչ (административно-распределительный) տեսակետն է (Պրեոբրաժենսկի), որը կուսակցության մեջ համապատասխանում էր ձախ-արմատական պատկերացումներին և որի կողմնակիցներն էին տրոցկիստներն ու «նոր օպոզիցիան», ԽՍՀՄ ֆինժողկոմ Սոկոլնիկովը: Այն ըստ էության «ռազմական կոմունիզմին» վերադառնալու առաջարկ էր:

Մյուսը պլանային-ապրանքային ըմբռնումն էր (Ստրումիլին և ուրիշներ), որը շուկայական գործընթացների կարգավորման մեջ առավելություն էր տալիս սոցիալական ու ժողովրդատնտեսական գործոններին: Ստալինյան ղեկավարությունը պաշտպանել է այս ուղին, որը հիմնավորվում էր սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում պետական-կուսակցական ղեկավարման գերապատվությամբ, իր իշխանությունն ամրապնդելու շահերով:

Երրորդ տարբերակը զարգացման նկատմամբ ինդիկատիվ մոտեցումն էր (պրոֆեսորներ-ագրարագետներ՝ Կոնդրատև, Մակարով, Չայանով, Չելինցև և ուրիշներ): Սոցիալ-տնտեսական զարգացման համար նպատակահարմար էին համարվում վերլուծական կանխատեսումները, որոնք արտացոլեին օբյեկտիվ տնտեսական գործընթացները և արտահայտեին դրանց վերելքի հնարավոր ուղիները: Իսկ պետական կարգավորումը հաշվի էր առնելու ապրանքաշուկայական հարաբերությունների միտումները: Կուսակցության ղեկավարության մեջ այս տարբերակը նախընտրում էին Բուխարինը, Ռիկովը և ուրիշներ[2]:

Եթե առաջին տարբերակը նշանակում էր հրաժարում Նեպից, իսկ երրորդը՝ հակառակը, ապա ստալինյան ղեկավարությունը, մերժելով երկուսն էլ, փաստորեն ընդունեց և կենսագործեց առաջինի սկզբունքները: Նա իշխանության համար պայքարում մինչև 1927 թ. կուսակցության մեջ հաղթանակի հասավ ձախերի նկատմամբ, սրանց տեսակետներով հանդերձ: Բացասական գնահատվեց նաև բուխարինյան (նեպական) մոտեցումը, որի դեմ պայքար կազմակերպվեց 1928-1929 թթ., որակելով այն որպես աջ թեքում, կուլակության ու բուրժուազիայի շահերի պաշտպանություն:

---

[2] М. Л. Галас. Разгром аграрно-экономической оппозиции в начале 1930-х годов: Дело ЦК Трудовой крестьянской партии (по материалам следствия): Отечественная история, 2002, N 5, с. 89-112.

Այսինքն՝ բացառվում էր երկրի զարգացումը կազմակերպելու այլընտրանքային ուղին, երբ այն նախընտրելի էր շատ կողմերով: Այս տարբերակը նախատեսում էր գյուղատնտեսության զարգացումը կազմակերպել կոոպերացիայի լայն ծավալման, նրա բարձր ձևերին՝ կոլեկտիվացմանն աստիճանաբար անցնելու, հարկային տանելի քաղաքականություն վարելու միջոցով:

Այսպիսով, 1928-1929 թթ. ԽՍՀՄ-ը թևակոխում էր զարգացման նոր ժամանակաշրջան, երբ երկրի սոցիալիստական շինարարության մեջ կատարվելու էր բեկումնային արագացում, արմատական փոփոխություններ էին տեղի ունենալու սոցիալ-տնտեսական և մյուս հարաբերություններում: Երկրի զարգացման ընթացքում այդ թռիչքի անհրաժեշտությունը և կազմակերպումը Ստալինը հիմնավորում էր նաև կապիտալիստական շրջապատման չափազանցրած վտանգով:

ԽՍՀՄ-ի մոտակա տարիների զարգացման խնդիրները իրենց արտահայտությունը գտան 1-ին հնգամյա (1928-1932 թթ.) պլանում, որն ընդունվեց 1929 թ. ՀամԿ(բ)Կ 16-րդ կոնֆերանսի և ԽՍՀՄ խորհուրդների 5-րդ համագումարի կողմից: Ամենամյա պլանավորումից հնգամյակի անցնելը կապված էր մեծածավալ, հատկապես ինդուստրիալ շինարարության, երկարաժամկետ աշխատանքների հետ, որպիսիք դուրս էին գալիս միամյա ժամկետի սահմաններից:

Տնտեսության պլանաչափ զարգացումը կուսակցությունը և պաշտոնական գիտությունը համարում էին սոցիալիզմի հիմնական օրենք, առավելություն կապիտալիզմի, նրա ազատ շուկայական հարաբերությունների ու մրցակցության համեմատությամբ: Սակայն, ինչպես ապագան ցույց տվեց, ԽՍՀՄ պատմական փորձը չարդարացրեց պլանաչափ զարգացման առավելության մասին տեսակետը: Իսկ ազատական-շուկայական հարաբերությունները դիտվեցին որպես կապիտալիզմին հատուկ օրենք և, հետևաբար, ոչ պիտանի սոցիալիստական երկրի համար:

Առաջին հնգամյա պլանը «սոցիալիստական ծավալում հարձակման ծրագիր» լինելով հանդերձ, հիմնական խնդիր դարձրեց տեխնիկատնտեսական տեսակետից պատմական կարճ ժամանակամիջոցում առաջավոր կապիտալիստական երկրներին հասնելը և անցնելը:

Ուստի նախատեսվել էին երկրի ինդուստրացման արագ տեմպեր, արտադրության միջոցների արտադրության գերապատիվ զարգացումով: Ըստ այդմ իրականացվելու էին մեծագումար կապիտալ ներդրումներ (առաջին հնգամյակում նախորդ հինգ տարիների համեմատությամբ մոտ 2,5 անգամ ավելի):

ՀամԿ(բ)Կ 16-րդ կոնֆերանսը (1929 թ.) հնգամյա պլանը համարեց կուսակցության ծրագիրը «երկրի տնտեսական ու կուլտուրական հետամնացության վերացման ճանապարհին, սոցիալիզմի կառուցման ճանապարհին, միջազգային հեղափոխության հաղթական ծավալման ճանապարհին»[3]:

Ընդ որում, միջազգային հեղափոխության հարցը վերստին բարձրացվում էր նոր իրադրության պայմաններում, երբ 1920-ական թվականների կեսերին կապիտալիզմի ապրած հարաբերական կայունացմանը 1929 թ. հաջորդելու եկավ խորը տնտեսական ճգնաժամը կապիտալիստական բոլոր երկրներում:

Ինչպես նշված է ՀամԿ(բ)Կ 16-րդ կոնֆերանսի (1929 թ.) որոշումներում, հնգամյա պլանը ապահովում էր «ազգային հանրապետությունների և հետամնաց շրջանների ու մարզերի տնտեսական ու կուլտուրական վերելքը»: Ընդհանուր պլանի բաղկացուցիչ մաս էր կազմում նաև Հայկական ԽՍՀ-ի պլանը: Չնայած միութենական հանրապետությունների առանձին պլանների առկայությանը, ԽՍՀՄ ինչպես առաջին հնգամյակում, այնպես էլ իր ամբողջ գոյության ընթացքում զարգանում էր որպես մեկ ընդհանուր տնտեսական միավոր: Հայաստանի հնգամյա պլանը մշակվել էր կուսակցության այն պահանջի հիման վրա, որ հարկավոր է արդյունաբերական շինարարությունը մոտեցնել հումքի աղբյուրներին, աստիճանաբար համահարթել ԽՍՀՄ տնտեսական անհավասարությունը:

Հնգամյակում ժողովրդական տնտեսության մեջ ներդրված գումարը 3,8 անգամ գերազանցեց խորհրդային իշխանության նախորդ բոլոր ութ տարիների փաստական ծավալը[4]:

Առաջին հնգամյակում ծավալված ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը շարունակվելու էր 2-րդ հնգամյակի տարիներին (1933-1937 թթ.) ևս: Նոր հնգամյակի հիմնական տնտեսական-քաղաքական խնդիրը տնտեսության տեխնիկական վերազինման ավարտումն էր:

Երկրորդ հնգամյակի խնդիրն էր նաև մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների վերացումը, որի կապակցությամբ անխուսափելի էր դիտվում «դասակարգային պայքարի սրումը»: Պետք է, սակայն նշել, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում (1930-ական թվականների կեսեր) դասակարգային պայքարի սրման մասին նման հարցադրումը արհեստական էր, ոչ հիմնավոր և կարող էր օգտագործվել ու օգտա-

---

[3] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: 2-րդ մաս, Երևան, 1955, էջ 778:
[4] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940), с. 19.

գործվեց նաև մարդկանց նկատմամբ անհիմն բռնություններ գործադրելու համար:

Առաջին և երկրորդ հնգամյակները միասին ներկայանում էին որպես մեկ ընդհանուր ռազմավարական ուղղություն, որը նշանակում էր, ինչպես այդ հասկանում էր երկրի ղեկավարությունը, դնել սոցիալիզմի նյութա-տեխնիկական հիմքը, ապա վերացնել «կապիտալիստական տարրերին»: Իսկ այդ ամենը հասկացվում էր որպես սոցիալիզմի կառուցում:

Ազգային հանրապետությունների համար 2-րդ հնգամյակում նախա-տեսվում էր արտադրողական ուժերի հետագա տեղաբաշխում, նրանց տնտեսական ու կուլտուրական հետամնացության վերացում:

Ինդուստրացման համար պահանջվում էին մեծ կապիտալ ներդ-րումներ: Այդ հարցը խորհրդային իշխանությունը լուծեց իր ներքին հնա-րավորությունների հաշվին, մեծագույն լարումով և երկրի բոլոր ժողո-վուրդների զոհողությունների գնով: Այդպես եղավ, քանի որ կապիտալիս-տական երկրները հրաժարվում էին ֆինանսական օգնություն ցույց տալ ԽՍՀՄ-ին: Կապիտալ ներդրումների մեծ մասը տրամադրվում էր առաջա-վոր տեխնիկայով զինված նոր ֆաբրիկաների ու գործարանների կառուց-մանը և հների տեխնիկական վերազինմանը: Այսպես, եթե այդ գծով հատ-կացումները 1-ին հնգամյակի առաջին տարում կազմում էին 52, ապա հնգամյակի վերջին տարում բարձրացան 62 տոկոսի[5]:

Հայաստանում 1-ին հնգամյակում արդյունաբերության գծով (էներ-գետիկայի, տրանսպորտի և կապի հետ միասին) կապիտալ ներդրումների գումարը կազմում էր 145,2 միլիոն ռուբլի, 2-րդ հնգամյակում 456,6 միլիոն ռուբլի կամ 3 անգամ ավելի: Իսկ ամբողջ 20 տարվա (1921-1940 թթ.) ներդրումներն անցնում էին մեկ միլիարդ ռուբլուց: Արդյունաբերությանը բաժին էր ընկնում բոլոր կապիտալ ներդրումների 45,0 տոկոսը[6]: Այն ավե-լի բարձր էր 1-ին և 2-րդ հնգամյակների ընթացքում:

Գյուղատնտեսությունը տեխնիկապես զինելու համար ևս տարեց-տարի ավելանում էին պետության կողմից ներդրվող գումարները, որոնք հիմնականում ուղղվում էին մեքենատրակտորային կայանների (ՄՏԿ) կազմակերպմանը, բացի այն միջոցներից, որոնք տրամադրվում էին ոռոգ-ման ցանցի զարգացման նպատակով: Նշված ներդրումներն 1-ին հնգամ-յակում կազմեցին 96,6, 2-րդ հնգամյակում 209,8 միլիոն ռուբլի (ներդրում-

---

[5] ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր խորհուրդների 8-րդ համագումարի առթիվ, Երևան, 1935, էջ 168:

[6] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940), с. 19.

ների մեջ կոլտնտեսություններին բաժին էր ընկնում 1-ին հնգամյակում փոքր մասը, երկրորդում՝ կեսից պակասը)[7]:

Ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տվյալները վկայում են, որ ծախսերի մեծ մասը (մինչև առաջին հնգամյակը 82 տոկոսը) բաժին էր ընկնում միութենական և դաշնային (Անդրկովկասյան) միջոցներին[8], որը խոսում է ԽՍՀՄ պայմաններում Հայաստանի զարգացման նպաստավոր պայմանների մասին:

Հետագայում ևս Հայաստանում կատարված ծախսերի մեծ մասը կատարվել է միութենական միջոցների հաշվին: 1928-1940 թթ. ընթացքում հանրապետության կապիտալ ներդրումների երկու երրորդը բաժին է ընկել միութենական բյուջեին[9]:

Ըստ հնգամյա առաջադրանքների և ներդրված միջոցների՝ լայն ծավալ ստացավ արդյունաբերական շինարարությունը: 1-ին հնգամյակում Հայաստանում կառուցվեց և շահագործման հանձնվեց 18 արդյունաբերական ձեռնարկություն: Մյուսների շինարարությունը շարունակվեց 2-րդ հնգամյակում, երբ գործարկվեց 26 ձեռնարկություն:

Տնտեսության տեխնիկական վերազինման մեջ վճռական նշանակություն ուներ էներգետիկան: Պատմական տվյալ ժամանակաշրջանում այն կարծիքն էր տիրում, թե Հայաստանն ունի գրեթե անսպառ պաշարներ էներգետիկայի զարգացման համար: Մեծ դեր էր տրվում Սևանի ջրային պաշարներին:

Հիշված նպատակներով Սևանա լճի ջրի օգտագործումը վաղուց էր գրավել գիտնականների ու ձեռներեցների ուշադրությունը: Տակավին 19-րդ դարի կեսերին ռուս ինժեներների կողմից առաջարկություն է եղել Սևանա լճի ջրերը Կոտայքի խոպան հողերի ոռոգմանը ծառայեցնելու մասին: Դարի վերջերին նույնպիսի առաջարկություն է արել գեներալ Ժիլինսկու ղեկավարած արշավախումբը Արարատյան դաշտավայրի հողերի ոռոգման համար: 1909-1910 թթ. Ս. Ե. Մանասերյանի առաջարկության իրականացումը կարող էր հանգեցնել լճի մակարդակի ավելի մեծ իջեցման (55-60 մետր), որով կվերանար մեծ Սևանը, կմնար միայն փոքրը: Արդյունքում ոռոգելի կդառնար 120-130 հազար հեկտար հող: Այս բոլոր առաջարկությունները, որ արվում էին ոռոգման նպատակով, անկատար մնացին միջոցների բացակայության պատճառով:

---

[7] Նույն տեղում:
[8] Ղ. Լ. Շաքարյան, Ֆինանսները և սոցիալիստական շինարարությունը ՀՍՍՌ-ում 40 տարում: Երևան, 1960, էջ 18:
[9] Նույն տեղում, էջ 30:

1910-1913 թթ. ցանկություն արտահայտեց անգլիական կոնցեսիոներ Ստյուարտը: Այս դեպքում ոռոգման հետ մեկտեղ կառուցվելու էին նաև էլեկտրակայաններ, Թիֆլիսը լուսավորելու համար: Հայաստանի Հանրապետության տարիներին Ստյուարտի մոտ նոր ցանկություն առաջացավ: Ազգային գործիչ Համո Օհանջանյանը 1918 թ. Եվրոպայից ուղարկած նամակով կառավարությանը զգուշացնում էր այդ կապակցությամբ, առաջարկելով մերժել Ստյուարտին, քանի որ հակառակ դեպքում լիճը կարող է ցամաքել, առաջացնելով անցանկալի երևույթներ[10]:

1919-1920 թթ. ինժեներ Ս. Ֆ. Զավալիշինի ղեկավարությամբ վերսկսվեցին համաշխարհային պատերազմից առաջ սկսած հետախուզական ուսումնասիրությունները Հայաստանի ջրային պաշարները, նաև Սևանա լիճը ուսումնասիրելու ուղղությամբ Սարդարաբատի դաշտը ոռոգելու և էլեկտրական հոսանք արտադրելու նպատակով[11]: Կառավարությունն ընդունեց մի շարք որոշումներ աշխատանքների ֆինանսավորման մասին: Այսպես, կառավարության 1919 թ. ապրիլի 16-ի որոշմամբ հանձնարարություններ տրվեցին ֆինանսների նախարարությանը: «Ժամանակն է և անհրաժեշտ,- կարդում ենք նույն որոշման մեջ,- որպեսզի էներգիա ստանալու և ոռոգման համար շահագործվեն Հայաստանի ջրային հարստությունները»[12]:

1920 թ. ընդհատված աշխատանքները շարունակվեցին և գործնական լուծում ստացան 1920-ական թվականների վերջին և 1930-ական թվականների սկզբին: 1931-1932 թթ. մշակվեց և ընդունվեց էներգետիկայի զարգացման ծավալուն ծրագիր, որը հաստատվեց նաև ԽՍՀՄ կենտրոնական մարմինների կողմից: Խոսքը վերաբերում է Սևան-Հրազդան կայանների կառուցմանը՝ լճի մակարդակն իջեցնելու միջոցով:

Հրազդան գետի հունն ունի ջրի հոսքի հազար մետր անկում, ուստի հարմար էր համարվում նրա երկարությամբ հաջորդական կայանների կառուցումը: Նախատեսվում էր այդպիսի 10 կայան (հետագայում դրանց թիվը կրճատվեց), 800 հազար ձիաուժի կարողությամբ և 2,5 միլիարդ կիլովատժամ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությամբ: Կայաններում

---

[10] Լ. Անանյան, Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումը, էջ 144:

[11] ՀԱԱ, Պ-Ֆ. 203, ց. 1, գ. 491, 497, 513, 526, ֆ. 205, ց. 1, գ. 563 (2-րդ մաս):

[12] Նույն տեղում, Պ- ֆ. 199, ց. 1, գ. 96, (1-ին մաս), թ. 69:

աշխատած ջուրն այնուհետև ոռոգելու էր Արարատյան դաշտի 130 հազար հեկտար անմշակ հողեր[13]:

Ընդ որում, ինչպես նշվել է, այն ժամանակ գոյություն ուներ կարծիք, թե իբր Հայաստանում առկա են էլեկտրական էներգիա ստանալու ջրային շատ հարուստ պաշարներ, և որ այդ էներգիայի ու կրաքարի և պղնձարդյունաբերության մնացորդների հիման վրա կարելի է լայնորեն զարկ տալ քիմիական արդյունաբերությանը: Ժամանակը ցույց տվեց, որ էներգիայի անսպառ պաշարների մասին պատկերացումները ճիշտ չէին, իսկ քիմիական արդյունաբերության միակողմանի զարգացումը առաջ բերեց մի շարք բացասական երևույթներ:

Ինչ վերաբերում է Սևանի մակարդակի իջեցմանը, որը տարիների ընթացքում հասավ առավելագույնը շուրջ 19 մետրի, ապա պետք է նշել, որ այն ժամանակ, չնայած որոշ զգուշացումներին, այնուամենայնիվ ոչ մասնագետները, ոչ էլ իշխանությունները իրենց հաշիվ չէին տալիս, թե դա ինչպիսի լուրջ հետևանքներ կարող է ունենալ բնապահպանական և այլ տեսանկյուններից, և որը խիստ դժգոհություն առաջացրեց լայն հասարակայնության շրջանում: Ուստի հետագայում համապատասխան միջոցառումներ ձեռնարկվեցին Հայաստանի գեղեցկուհի Սևանը փրկելու համար:

Ինչևէ, ծրագիրը մշակված էր և սկսվեց նրա կենսագործումը: Սևան-Հրազդան կասկադի առաջին կայանը դառնալու էր Քանաքեռհէկը, որի շինարարությունը սկսվեց առաջին հնգամյակում: Քանաքեռի և Զորագետի կայանները դարձան առաջին հնգամյակի հիմնական կառույցներ:

Զորահէկը շահագործման հանձնվեց 1932 թ.: Էլեկտրաշինարարության տեխնիկայի առումով այն բացառիկ էր ամբողջ ԽՍՀՄ-ում: Նա ունի ամբարտակի ավտոմատ գործող գլանաձև փական և բարձր ճնշման (114 մետր) թունել: Կայանը սպասարկելու էր Հայաստանի հյուսիսային շրջաններին, Ղարաքիլիսայի (Վանաձոր) և Ալավերդու գործարաններին: Գրող Մարիետա Շահինյանի «Հիդրոցենտրալ» վեպը նվիրված է կայանի շինարարությանը:

Քանաքեռհէկը ամենահզոր կայանն էր ամբողջ Անդրկովկասում՝ 88 հազար կիլովատ կարողությամբ: Կարևորելով Քանաքեռհէկի նշանակությունը, այն դասվել էր ԽՍՀՄ հարվածային կառույցների շարքը, որը առաջին հերթին նշանակում էր նյութատեխնիկական անխափան մատակարարում և այլ ուշադրություն: Կայանը շահագործման հանձնվեց երկրորդ

---

[13] ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 9-րդ համագումարում, 1934 թ. հունվարի 10-14: ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ա. Խանջյանի զեկուցումը, Երևան, 1934, էջ 26:

հնգամյակում, որի շնորհիվ ստեղծվեց Հայկական միացյալ էներգահամակարգը:

Գործարկվեց (1-ին հնգամյակում) Երևանի հէկի երկրորդ հերթը, որն աշխատում էր ավտոմատ կարգով և, որպես այդպիսին, առաջինն էր ԽՍՀՄ-ում: Կառուցվեցին նաև այլ՝ փոքր կայաններ (Մեղրի, Սիսիան և այլն):

Երրորդ հնգամյակում գործարկվեց Քանաքեռհէկի 5-րդ ագրեգատը: Գործնական քայլեր կատարվեցին Սևան-Հրազդան կասկադի գլխամասային կայանի՝ Սևանի ստորգետնյա հէկի ու նրա ջրամբարի կառուցումն սկսելու համար: Նախապատրաստական աշխատանքներ էին տարվում կասկադի ամենահզոր՝ Գյումուշի հէկի շինարարության նախապատրաստման ուղղությամբ:

Նախախորհրդային մի քանի փոքր կայանների դիմաց 1938 թ. Հայաստանում գործում էր 51 կայան, այդ թվում 4 շրջանային (մեծ հզորության), որոնց հզորությունն ավելացել էր 25, իսկ էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 67 անգամ[14]: Արտադրության ճնշող մասը տալիս էին շրջանային կայանները:

Էներգետիկայի գերապատիվ զարգացումը նպաստավոր նախադրյալ էր տնտեսության բոլոր ճյուղերի վերակառուցման ու հետագա առաջընթացի համար: Առաջին հերթին դա վերաբերում էր արդյունաբերության այնպիսի էներգատար ճյուղին, որպիսին է քիմիականը: Բացի էժան էլեկտրաէներգիայից քիմիայի համար կային նաև մյուս պայմանները, այն է՝ Դավալուի (Արարատ) կրաքարի հարուստ հանքերը և պղնձածուլական գործարանների վառարանների օդ արտանետած գազերը:

Առաջին հնգամյակում քիմիական արդյունաբերության նորակառույցներն էին Ղարաքիլիսայի (Վանաձոր) քիմիական գործարանը, կարբիդ-կալցիումի ու ցիանամիդի արտադրամասերով և Ալավերդու ծծմբաթթվի ու պղնձարջասպի գործարանները: Նրանց էլեկտրաէներգիա մատակարարելու էր կառուցվող Ձորահէկը: Հումք էին ծառայում կրաքարը (Դավալու), մթնոլորտի ազոտը և քարածուխը (Դոնբաս):

Ղարաքիլիսայում գործարանի կառուցումն սկսվեց 1929 թ.: Նախագծային կարողությունն էր (սկզբնական) 10 հազար տոննա կարբիդ և 20 հազար տոննա ցիանամիդ: Վերջինս քիմիական պարարտանյութ էր, որի սպառողը լինելու էր Անդրկովկասի գյուղատնտեսությունը: Գործարանի նախագծմանը մասնակցել են նաև շվեդական ու նորվեգական մասնագետներ, ընթացքում բարձրացնելով գործարանի կարողությունը: Ինժենե-

---

[14] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940), с. 24.

ռատեխնիկական ու բանվորական կադրերի պատրաստմանը օգնում էին ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները (Չերնորեչենսկի, Չերժինսկ ու այլ քաղաքների գործարաններ): Մոնտաժային աշխատանքների կազմակերպիչների մեջ էին Մոսկվայի մասնագետները:

Հիմնականում ԽՍՀՄ գործարաններն էին ապահովում սարքավորումների պատվերների կատարումը (Լենինգրադ, Մոսկվա, Կիև, Յարոսլավլ, Նովոչերկասկ, Թիֆլիս և այլն): Արտասահմանին բաժին էր ընկնում սարքավորումների համեմատաբար փոքր մասը: Շինարարության ընթացքն արագացնելու համար 1932 թ. գործարանը դասվեց ԽՍՀՄ հարվածային շինարարության կառույցների շարքը: Գործարանի շինարարական աշխատանքները ղեկավարում էին նրա դիրեկտոր Ս. Շախբագովը և տեխնիկայի գծով դիրեկտոր Հ. Մելիք-Աղամիրյանը: Ղարաքիլիսայի քիմիական գործարանը շահագործման հանձնվեց 1933 թ. երկրորդ հնգամյակի առաջին տարում[15]: 1934 թ. գործարկվեցին նոր հզորություններ և կալցիումցիանամիդի արտադրամասը, որը թողարկում էր պարարտանյութեր:

Մասնավորապես միութենական նշանակություն ունեցող կարբիդի արտադրության ընդլայնումը հնարավոր էր դարձնում կազմակերպելու բազմաթիվ նոր արտադրություններ[16]:

Երրորդ հնգամյակում նախագծվում էր կառուցել քացախաթթվի գործարան (5000 տոննա կարողությամբ):

Ալավերդու պղնձածուլական գործարանում օդ արտանետվող ծծմբական գազի գիտական ուսումնասիրությունները պարզել էին դրա հիման վրա մի շարք նոր արտադրատեսակների արտադրության արդյունաբերական հնարավորությունը և նպատակահարմարությունը: Խոսքը ծծմբական թթվի, պղնձարջասպի, սուպերֆոսֆատի, արհեստական մետաքսաթելի և այլ նյութերի ստացման մասին է:

1931-1932 թթ., ըստ հնգամյա պլանի, Ալավերդում սկսվեց ծծմբաթթվի, պղնձարջասպի և սուպերֆոսֆատի գործարանների կառուցումը: Հիմնականում արտադրվելու էին քիմիական պարարտանյութեր, ինչպես նաև բուժանյութեր՝ այգիների հիվանդությունների դեմ պայքարելու համար:

Ընդ որում, այն ժամանակ ենթադրվում էր, թե համապատասխան արտադրությունների կազմակերպումը օդը և բնական միջավայրը, ընդ-

---

[15] Վ. Ավագյան, Հայաստանի կոմունիստական կուսակցության պայքարը քիմիական արդյունաբերության ստեղծման ու զարգացման համար. 1920-1965 թթ., Երևան, 1971: Կ. Կոզմոյան, Կիրովական: Երևան, 1960:

[16] ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր խորհուրդների 8-րդ համագումարի առթիվ, էջ 29: Կ. Կոզմոյան, Կիրովական:

հանրապես, զերծ կպահի թունավորումից: Սակայն այդպես չստացվեց: Ալավերդում և ամբողջ Հայաստանում քիմիական արդյունաբերությունը զարգացավ այնպես, որ ստեղծեց բնապահպանական լուրջ խնդիրներ:

Ինչևէ, ինչպես նախատեսված էր, Հայաստանում միակողմանի կերպով զարկ տրվեց քիմիական արդյունաբերության զարգացմանը: Տվյալ բնագավառում արտասահմանից ԽՍՀՄ-ի կախվածությունը վերացնելու ընդհանուր պայքարին իր մասնակցությունն ունեցավ նաև հանրապետությունը:

Երկրորդ հնգամյակում (1935 թ.) սկսեց արտադրանք տալ Ալավերդու պղնձարջասպի գործարանը, որի կարողությունը հասավ մինչև 4 հազար տոննայի: Սակայն Անդրկովկասի այգեգործության պահանջներն ավելին էին, ուստի գործարանի արտադրողականությունը պետք է բարձրացվեր: Ծծմբաթթվի գործարանի շինարարությունը, միջոցների սղության պատճառով, սառեցվեց և վերսկսվեց 3-րդ հնգամյակում, իսկ շահագործման հանձնվեց պատերազմական պայմաններում (1942 թ.):

Քիմիական արդյունաբերության խոշորագույն ձեռնարկություն էր դառնալու արհեստական կաուչուկի գործարանը, որի կառուցման հիմքը դրվեց 1933 թ. Երևանում:

Արհեստական կաուչուկի ստացումը սկզբունքային նշանակություն ուներ ԽՍՀՄ համար, որը ստիպված էր այն թանկ գնով ներմուծել արտասահմանից: 1920-ական թվականներին խորհրդային գիտնականները առաջին անգամ Կիրառական քիմիայի պետական ինստիտուտում (Լենինգրադ) ացետիլենի միջոցով ստացան արհեստական կաուչուկ (ՍԿ՝ սովարեն կամ սինթետիկ կաուչուկ): Ացետիլենը կարելի է սինթեզել երկու եղանակով՝ սպիրտից, որը, սակայն, պահանջում է մեծաքանակ սննդանյութ, կամ՝ հանքանյութերից, որպիսին էր նաև Հայաստանում կրաքարից ստացվող կարբիդը (կարբիդից ստացվում է ացետիլեն, իսկ սրա սինթեզումով՝ կաուչուկ): Լենինգրադում կատարված փորձարկումները ապացուցեցին հայկական կարբիդից ստացված կաուչուկի ու համապատասխան ավտոդողերի բարձր որակը և հուսալիությունը: Տեղում հարցի գիտական ուսումնասիրությանը մասնակցել են պրոֆեսորներ Լևոն Ռոտինյանը, Ստեփան Ղամբարյանը և ուրիշներ: Հաշվի առնելով փորձի դրական արդյունքները և կարբիդի արտադրության հետագա զարգացման հեռանկարները, ՀՍԽՀ ղեկավարությունը 1933 թ. միութենական բարձրագույն մարմիններին միջնորդություն արեց Երևանում արհեստական կաուչուկի արտադրություն կազմակերպելու մասին: Այնուհետև ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմ Գ. Օրջոնիկիձեն հիմնավորված գրություն ներկայացրեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմ, նշելով, որ «կարբիդից Ս. Կ. ստանալու գործարա-

նի լավագույն վայրը Հայաստանն է (Երևանը): Այստեղ արդեն առկա են կարբիդի գործարաններ և էժան էներգիա»: Այդ ամենի հիման վրա ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն 1933 թ. մայիսի 11-ին ընդունեց համապատասխան որոշում: Դրան հետևեց միութենական կառավարության կողմից «Երևանում սինթետիկ կաուչուկի գործարան կառուցելու մասին» հարցի քննարկումը[17]:

Գործարանը նախագծվեց 10 հազար տոննա կարողությամբ: Միաժամանակ սկսվեց կարբիդի նոր հզոր գործարանի շինարարությունը, սկզբնապես 40 հազար տոննա արտադրողականությամբ: Ընդհանուր արժեքն էր 150 միլիոն ռուբլի: 1933 թ. հունիսին ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը քննարկեց գործարանի (կոմբինատի) շինարարության հետ կապված հարցերը և նույն ժամանակ սկսվեց շինարարությունը: Սկզբնապես ենթադրվում էր կառուցումն ավարտել և կաուչուկի արտադրությունը կազմակերպել երկու տարվա ընթացքում, սակայն այդպես չստացվեց և կառուցման աշխատանքները ձգձգվեցին մինչև 1940 թ.:

Գործարանի շինարարության մեջ ներգրավվեցին լավագույն մասնագետներ ու հազարավոր բանվորներ, որոնց թիվը երբեմն հասնում էր մինչև 4 հազարի: Տարիներ շարունակ շինարարության ընդհանուր ղեկավար է եղել Նիկոլայ Կուրսելը: Քիմիայի (տեխնիկայի) բնագավառի ղեկավարությունն իրականացնում էր ինժեներ Հմայակ Մելիք-Աղամիրյանը: Շինարարական գործի կազմակերպիչներից էր ինժեներ Հ. Մելիք-Հայկազյանը: Գործարանի ստեղծման մեջ մեծ է ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Աղասի Խանջյանի վաստակը:

Կաուչուկի գործարանի շինարարությունը, որն ընթանում էր այն ժամանակի Երևանի սահմաններից դուրս, ընդարձակ տարածքի վրա, ուներ չորս հիմնական տեղամաս. 1-ինը կարբիդի և քլորի արտադրամասն էր, 2-րդը՝ կրի տեղամասը: Բնակելի շենքերի տարածքը «3-րդ մաս»-ն էր: 4-րդ - տեղամասն ընդգրկում էր հաղորդակցության ուղիները և Արզնիից բերվող 25 կիլոմետրանոց ջրատարը:

Հայաստանը առաջին անգամ էր գործ ունենում նման վիթխարի կառույցի հետ: Ընդ որում այն իրականացվում էր շինարարական տեխնիկայի կատարյալ բացակայության պայմաններում, ձեռքի աշխատանքի ուժով: Այն ևս դարձավ երկրորդ հնգամյակի ԽՍՀՄ հարվածային կառույցներից

---

[17] Վ. Ավագյան, Հայաստանի կոմունիստական կուսակցության պայքարը քիմիական արդյունաբերության ստեղծման ու զարգացման համար 1920-1965 թթ., էջ 90-99:

մեկը: Հանրապետության առանձին շրջաններ պարտավորություն ունեին շինարարությունն ապահովել բանվորական կադրերով:

Առաջիններից մեկը շահագործման մեջ մտավ Կրի վառարանը: 1936 թ. գործարկված Քանաքեռհէկը ապահովելու էր էլեկտրաէներգիայի մեծ պահանջը: Նույն թվականին ավարտվեց կարբիդի արտադրամասի սարքավորումների տեղադրումը (նրա կարողությունը հասցվել էր 70 հազար տոննայի): 1937 թ. սկսեց արտադրանք տալ կարբիդի արտադրամասը:

Վերջապես, 1940 թ. մարտի 19-ին գործարանի շչակը ազդարարեց հայկական քլորոպրենային կաուչուկի («ՍԿ սովպրեն») ծնունդը[18]:

Հետագայում նոր կատարելագործումներ իրականացվեցին Երևանի կաուչուկի կոմբինատի արտադրական գործընթացներում: Ստեղծվեցին նոր, ավելի որակյալ կաուչուկի տեսակներ (նաիրիտ և այլն): Հայաստանի կաուչուկը զգալի տեսակարար կշիռ ուներ ԽՍՀՄ կաուչուկի ամբողջ արտադրության մեջ:

Երրորդ հնգամյակում նախատեսվում էր կաուչուկի կոմբինատի համակարգում ստեղծել նոր արտադրական հզորություններ. պատրաստվում էին պոլիվինիլացետատի գործարանի կառուցման նախագծերը, որը, սակայն, ընդհատվեց պատերազմի պատճառով:

Ծանր արդյունաբերության ճյուղերից Հայաստանում մեծ ուշադրություն էր նվիրվում լեռնահանքային (պղնձի) արդյունաբերության զարգացմանը, մի բնագավառ, որով, ինչպես նշում էր Ա. Խանջյանը ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարում (1934 թ.), Հայաստանը մասնակից էր դառնում ԽՍՀՄ էլեկտրիֆիկացիայի, ավտոմոբիլային, տրակտորային, ավիացիոն, կապի արդյունաբերության զարգացման, երկրի ռազմական պաշտպանության գործին (1933 թ. հայկական պղինձը կազմում էր ԽՍՀՄ պղնձի արտադրության 10 տոկոսը)[19]: Այս բնագավառում ևս երկիրը պայքարում էր արտասահմանից կախվածությունը վերացնելու, անկախանալու համար:

1930-ական թվականներին մեծ ներդրումներ կատարվեցին Ալավերդու և Ղափանի պղնձի ձեռնարկությունների տեխնիկական վերակառուցման նպատակով, որի շնորհիվ դրանք, որ մինչև այդ «տեխնիկապես հետամնաց, ըստ էության տնայնագործական տեխնիկայով ձեռնարկություններ էին, վերածվեցին առաջնակարգ, նոր, կատարելագործված տեխնիկայով զինված ձեռնարկություններ»[20]: Մեքենայացվեցին հորատման աշխատանքները հանքահորերում, տեղադրվեցին նոր կոմպրեսորներ ու պերֆերատորներ, ձեռքով հորատումը փոխարինվեց պնևմատիկ մուրճերի աշ-

---

[18] **Հ. Թումանյան, Թ. Կարապետյան**. Փառավոր ճանապարհ. Երևան, 1967, էջ 16.
[19] ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 9-րդ համագումարում, էջ 19:
[20] Նույն տեղում, էջ 20:

խատանքով: Բարելավվեց հանքախորշերի օդափոխությունն ու լուսավորումը: Ալավերդում և Ղափանում գործող մի քանի մանր ծուլարաններին փոխարինեց Ալավերդու նորակառույց պղնձածուլական գործարանը, հզոր վատերժակետային հնոցներով[21]:

Ղափանում կառուցվեց հանքահարստացուցիչ ֆաբրիկա, որտեղից հարստացված հանքաքարը ծուլման համար փոխադրվում էր Ալավերդի: Կառուցվեց Ղափան-Մինջևան երկաթուղային ճյուղը:

Հայաստանում գունավոր մետալուրգիայի գծով կապիտալ ներդրումների գումարը 1-ին հնգամյակում կազմեց 18,5, 2-րդում 20,7 և 1938-1939 թթ. 7,1 միլիոն ռուբլի, ընդամենը 1921 թ. սկսած՝ 48,9 միլիոն ռուբլի[22]: 1938 թ. պղնձի արտադրությունը (համախառն արտադրանքը 1926/27 թթ. անփոփոխ գներով) գերազանցեց 1913 թ. մակարդակը 1,3 և 1927/28 տարվա համեմատությամբ 4,2 անգամ: Պղնձարդյունաբերության վերականգնումը, որը կապված էր մեծ դժվարությունների հաղթահարման հետ, ավարտվեց միայն երկրորդ հնգամյակում և 30 տոկոսով ավելի արտադրանք տվեց[23] : Իսկ 1940 թ. պղնձի ծուլումը 1936 թ. համեմատությամբ ավելացավ 61 տոկոսով[24]: Պղնձի արտադրության ավելացման համար 3-րդ հնգամյակում էլեկտրոլիզի արտադրամաս կառուցվեց Ալավերդում:

Ելնելով պղնձի արտադրությունը զարգացնելու կարևորությունից «Հայպղինձ» տրեստին փոխարինեցին «Ցվետմետզոլոտո» (միութենական), ապա «Զակցվետմետ» (անդրկովկասյան) տրեստները:

Պղնձի աճող պահանջի բավարարումը կապված էր նրա հանքապաշարների առկայության հետ, ուստի կատարվում էին երկրաբանական-հետախուզական ուսումնասիրություններ: Նախախորհրդային ժամանակաշրջանից ժառանգություն էին մնացել քիչ պաշարներ և դրանց վերաբերյալ անբավարար տվյալներ: 1930-ական թվականներին շարունակվեցին նախորդ տասնամյակում իրականացված ուսումնասիրությունները: Եթե անցյալում ուշադրություն էր նվիրվել և շահագործվել էր միայն պղնձով հարուստ հանքաքարը, ապա այժմ նկատի էին առնվում նաև աղքատ հանքավայրերը[25]:

Հայաստանում երկրաբանության գիտահետազոտական ինստիտուտի կազմակերպումով (1935 թ.) մետաղային ու ոչ մետաղային հանածոնե-

---

[21] Փ. Ենգոյան, Հայաստանը ինդուստրացման ուղիով (1926-1958 թթ.): Երևան, 1967, էջ 64:
[22] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940), с. 20.
[23] Նույն տեղում, էջ 26:
[24] Կ. Կոզմոյան, Ալավերդի, էջ 76:
[25] Լ. Անանյան, Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումը: Երևան, 1979, էջ 196-203:

րի ուսումնասիրությունը դրվեց կազմակերպված հիմքի վրա: Հեռանկարային էին Ագարակի ու Փիրդոուդանի (Քաջարանի) պղնձի ու մոլիբդենի նոր հայտնագործված հանքավայրերը: Քաջարանը ԽՍՀՄ մոլիբդենի հարուստ հանքավայրերից մեկն էր: Մոլիբդենը, որը մետաղին տալիս է ամրություն, կարևոր նշանակություն ուներ շատ կարևոր արտադրությունների համար:

Ծանր արդյունաբերության ճյուղերից Հայաստանի համար հեռանկարային էր նաև շինանյութերի արտադրությունը, որը հենվում էր տեղական հումքային բազայի, հանքային հանածոների հարուստ պաշարների վրա: Տուֆ քարի, պեմզայի, ցեմենտի և այլ շինանյութերի արտադրությունը կազմակերպվում էր այն հաշվով, որ բացի սեփական պահանջները բավարարելուց, նաև արտահանվի այլ հանրապետություններ: Մեծ նվաճում էր Դավալուի (Արարատի) ցեմենտի գործարանի կառուցումը, որն իրականացվեց 1-ին հնգամյակում և արտադրական լրիվ կարողությամբ գործարկվեց հաջորդ հնգամյակում (1937 թ. 76,7 և 1940 թ. 95,0 հազար տոննա) Քանաքեռհէկի շահագործման շնորհիվ: Յուրացվեց նոր, բարձրորակ ցեմենտի արտադրությունը: Լայնորեն ծավալվող շինարարությունը նորանոր պահանջներ էր ներկայացնում ցեմենտի արտադրությունն ավելացնելու նկատմամբ: Նույնը վերաբերում էր Արթիկտուֆին, որի տարեկան արտադրությունը մեքենայացման շնորհիվ 1938 թ. հասավ մինչև 112 հազար խորանարդ մետրի: Լայն կիրառություն ուներ պեմզան, որի արտադրությունը ավելացավ մի քանի անգամ: Քիմիական և պղնձածուլական գործարանների վառարանների կառուցման համար պահանջվում էր հրակայուն աղյուս: Նրա արտադրությունը կազմակերպվեց Դսեղի (Թումանյանի) նորաստեղծ և այլ գործարաններում: 1932-1940 թթ. ընթացքում հրակայուն աղյուսի արտադրությունն ավելացավ 10 անգամ[26]: Նորություն էր բազալտի ծուլման խնդիրը, որի ուղղությամբ կատարված փորձերը տվեցին դրական արդյունք: Երևանում կառուցվեց փորձնական գործարան, որը պատրաստում էր էլեկտրական մեկուսիչներ, թթվակայուն սալիկներ, զանազան խողովակներ ու տարբեր սպառման առարկաներ[27]:

Տուֆի, պեմզայի, ինչպես նաև պղնձի (Ղափանի) հանքավայրերից երկաթուղային կապող գծերի անցկացումը վճռական նշանակություն ունեցավ տվյալ հանքատեսակների արտադրությունը և փոխադրությունն ավե-

---

[26] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940), с. 40, Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник. Ереван, 1957, с. 33, 35.

[27] ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր խորհուրդների 8-րդ համագումարի առթիվ, էջ 31:

լացնելու համար: 1940 թ. երկաթուղու միջոցով փոխադրվել էր 862 հազար տոննա հանքային շինանյութ և 104 հազար տոննա պղնձաքար[28]:

Առաջին հնգամյակի ընթացքում կառուցվեցին հետևյալ երկաթուղային հատվածները, որոնցով հանքավայրերը կապվեցին մայր գծին. Լենինականից (Գյումրի) դեպի Արթիկ-Մայմանջուղ, որն ուներ 32 կիլոմետր երկարություն: Հինգ կիլոմետր երկարություն ուներ Անի կայարանից պեմզայի հանքեր տանող երկաթուղային հատվածը: Կառուցվեց Ղափան-Սինջևան 40 կիլոմետրանոց գիծը, որը միանալու էր Ջուլֆա-Ալյաթ (Բաքու) կառուցվելիք երկաթուղուն: Երևան-Աղստաֆա գիծը չնայած կար հնգամյա պլանում, սակայն այդ ուղղությամբ գործնական աշխատանք չկատարվեց[29]:

Թեթև ու սննդի արդյունաբերության զարգացումը ևս հենվում էր հանրապետության հանքային ռեսուրսների և գյուղատնտեսական մթերքների արդյունաբերական մշակման վրա: Արդյունաբերության տվյալ ճյուղերի ֆաբրիկաներն ու գործարանները փաստորեն նոր էին ստեղծվում, ուստի ունեին նորագույն տեխնիկա:

Ընդարձակվեցին տեքստիլ արդյունաբերության Լենինականի ձեռնարկությունները: Այստեղ գործարկվեցին կարի ու կոշիկի, Երևանում ծխախոտի, կարի ֆաբրիկաները, բամբակազտիչ գործարանը, նույնպիսի գործարան Հոկտեմբերյանում:

Սննդի արդյունաբերության գծով մսի խոշոր կոմբինատ կառուցվեց Լենինականում, 150 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասունի մորթի ու մսի մշակման կարողությամբ: Ավելի փոքր կարողություն ուներ Երևանի մսի կոմբինատը (նախկին սպանդանոցը): Գործող ձեռնարկությունների շարք մտան Երևանի ալրաղաց կոմբինատը, Երևանի, Սարդարապատի (Հոկտեմբերյանի), Մեղրու և Այրումի պահածոների գործարանները: Հայկական մրգի պահածոները պահանջարկ ունեին նաև հանրապետությունից դուրս: Բարձր որակ ուներ յուղի ու պանրի գործարանների արտադրանքը: Այս գործարանների մեծ մասը մեքենայացված էր: Նոր սարքավորումներ տեղադրվեցին Երևանի ձեթ-օճառ գործարանում:

---

[28] Советская Армения за 40 лет.Статистический сборник. Ереван, 1960, с. 71.

[29] Ա. Թ. Սահրադյան, Երկաթուղու շինարարությունը Հայաստանում, Երևան, 1962, էջ 42:

2. Բանվոր դասակարգի կազմավորումը

Առաջին, ինչպես նաև 2-րդ հնգամյակների ընթացքում նախատեսված ինդուստրացման հսկայական աշխատանքները և մյուս բնագավառների վերափոխումները կադրերի մեծ պահանջ էին ներկայացնում: Ուստի իրականացվեցին մեծ ծրագրեր բոլոր բնագավառների ու բոլոր մակարդակների կադրերի պատրաստման ուղղությամբ: Դա առաջին հերթին վերաբերում էր ինդուստրիալ կադրերին:

1930 թ. ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում կատարվեց բարձրագույն դպրոցների վերակառուցում, որը անմիջականորեն բխում էր 1-ին հնգամյակի խնդիրներից: Երևանի պետական համալսարանը, ֆակուլտետների հիմքի վրա, վերածվեց ճյուղային ինստիտուտների, այն է՝ ինժեներակա-տեխնիկական (շինարարական), որը հետագայում կոչվեց պոլիտեխնիկական, բժշկական, գյուղատնտեսական, առևտրա-կոոպերատիվ: 1933 թ. Երևանի պետական համալսարանը վերաբացվեց: Շարունակում էին գործել կոնսերվատորիան և Անդրկովկասյան անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը, որը դարձավ հանրապետական: 1928-1929 ուսումնական տարվա երեքի դիմաց 1939-1940 ուստարում Հայաստանում գործում էր 9 բուհ: Շուրջ մեկ տասնամյակի ընթացքում նորաստեղծ ինստիտուտների շնորհիվ ուսանողների թիվը 1366-ից հասավ 7426-ի կամ ավելացավ 5,4 անգամ[30]:

Արագորեն աճում էր պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողների թիվը: Հիմնադիր տարվա 465 ուսանողների դիմաց 1940-1941 ուստարում ինստիտուտում սովորում էին 876 պատանիներ ու աղջիկներ[31]: Ինստիտուտի կազմում կադրեր էին պատրաստում շինարարական, հիդրոտեխնիկական, քիմիատեխնոլոգիական և ավտոճանապարհային ֆակուլտետները:

Բուհերում բանվորների բավարար քանակ ունենալու նպատակով 1920-ական թվականներին կազմակերպվել էին բանվորական ֆակուլտետներ (բանֆակ), որոնց գործունեությունը շարունակվում էր նաև 1930-ական թվականներին: Միաժամանակ նրանցում սովորողների թիվն ավելանում էր, այնուհետև սկսեց նվազել՝ հանրապետությունում միջնակարգ կրթության զարգացման շնորհիվ: Այնուամենայնիվ դեռևս 1934 թ.

---

[30] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940), с. 113.
[31] Ս. Հովակիմյան, Բարձրագույն տեխնիկական կրթության զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1977, էջ 77:

գոյություն ուներ 7 բանֆակ՝ արդյունաբերական կենտրոններում (Երևան, Լենինական, Ալավերդի)[32]:

Միջնակարգ մասնագիտական կրթության զարգացմանը նպաստեց քաղաքներում միջնակարգ պարտադիր կրթությանն անցնելը: Տեխնիկումների թիվը 1928-1940 թթ. ընթացքում 13-ից բարձրացավ 68-ի, իսկ նրանցում սովորողների թիվն աճեց 5,9 անգամ[33]:

Խորհրդային իշխանության 20 տարիների ընթացքում (1921-1940 թթ.) հանրապետության բուհերը տվեցին մոտ 7300 մասնագետ՝ մանկավարժներ, տնտեսագետներ, գյուղատնտեսներ, ինժեներներ և այլն[34]: Երկրի ինդուստրացման կարիքները հոգալու համար մեծացավ ինժեներա-տեխնիկական կադրերի թողարկումը: 1928-1941 թթ. շրջանավարտ ինժեներների թիվը կազմեց 995 մարդ, այդ թվում ճարտարապետներ, շինարարներ, հիդրոտեխնիկներ, քիմիկոսներ[35]:

Երկաթուղային տրանսպորտի պահանջների բավարարումը իրականացվում էր Թբիլիսիի երկաթուղային տրանսպորտի ինժեներների ինստիտուտի օգնությամբ, հեռակա ուսուցման եղանակով[36]:

Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունները 1920-1939 թթ. տվեցին 13.300 մասնագետ՝ տնտեսության և մշակույթի ամենատարբեր բնագավառների համար, այդ թվում արդյունաբերության և շինարարության գծով մոտ 2200, գյուղատնտեսության գծով մոտ 2700, լուսավորության գծով ավելի քան վեց հազար և այլն: Վերջին խմբի բարձր տվյալները բացատրվում էին լայն դպրոցական ցանցի պահանջների բավարարման անհրաժեշտությամբ, քանի որ այնտեղ աշխատանք էին գտնում նաև միջնակարգ մասնագիտության տեր մարդիկ:

***

Նախապատերազմյան երեք հնգամյակների (13 տարվա) ընթացքում կազմավորվեց և աճեց Հայաստանի բանվոր դասակարգը՝ որպես երկրի ինդուստրացման քաղաքականության կենսագործման արդյունք: Այն ԽՍՀՄ բանվոր դասակարգի ազգային ջոկատներից մեկն էր:

Իր հերթին բանվոր դասակարգը բաղկացած էր տարբեր ջոկատներից՝ ըստ զբաղմունքի տեսակների, բնագավառների: Այդ բնագավառներն

---

[32] ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր խորհուրդների 8-րդ համագումարի առթիվ, Երևան, 1935, էջ 118:
[33] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940), с. 113.
[34] Նույն տեղում, էջ 114:
[35] Ս. Հովակիմյան, Բարձրագույն տեխնիկական զարգացումը Սովետական Հայաստանում, էջ 87:
[36] Նույն տեղում, էջ 528:

էին արդյունաբերությունը, շինարարությունը, տրանսպորտը, կապը, գյուղատնտեսությունը ի դեմս սովխոզների ու մեքենատրակտորային կայանների (ՍՏԿ): Բանվորության մեջ էին մտնում նաև բատրակները, որոնք վերացան գյուղատնտեսության կոլեկտիվացման բերումով կամ ծուլվեցին արդյունաբերական բանվորների մեջ:

1928-1940 թթ. ընթացքում ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ բանվոր-ծառայողների թիվը 50 հազարից հասավ 156 հազարի կամ աճեց ավելի քան 3 անգամ:

Այդ տվյալների մեջ բնականաբար մեծ է արդյունաբերական բոլոր հիշված խմբերի աշխատավորների թիվը և աճի ցուցանիշը: Այսպես, 1928 և 1940 թթ. համապատասխան տվյալներն են 31,9 հազար և 81,0 հազար: Ամենաբարձր աճ ունեցել է արդյունաբերա-արտադրական անձնակազմը 3, 7 անգամ (բացարձակ տվյալներն են՝ 12 հազար և 44 հազար): Շինարարների թիվն ավելացել էր 2,3 անգամ[37]: Ընդ որում շինարարների թիվը երրորդ հնգամյակում նախորդ հնգամյակի համեմատությամբ նվազել է: Պատճառը երկրորդ աշխարհամարտի սկսվելու պայմաններում ԽՍՀՄ-ում շինարարական աշխատանքների ծավալի կրճատումն էր: Նվազել էր նաև գյուղատնտեսական բանվորների թիվը: Պատճառը որոշ, հատկապես ssssանասնապահական սովխոզների կրճատումն էր նրանց անարդյունավետության բերումով և, մյուս կողմից, բատրակների վերացումը (նրանց առավելագույն թիվը, ըստ կնքված աշխատանքային պայմանագրերի, 1929 թ. հուլիսի 1-ի դրությամբ եղել է ավելի քան 15 հազար)[38], զգալի աճ են ունեցել նաև տրանսպորտի և կապի բնագավառների բանվոր-ծառայողները: Այդ ամենի հետևանքով արդյունաբերության բանվոր-ծառայողների տեսակարար կշիռը 1928 թ. 23,2 տոկոսից 1940 թ. բարձրացավ 28,0 տոկոսի[39]:

Արդյունաբերության կարևորագույն ճյուղերից էին, ըստ բանվոր ծառայողների թվի, թեթև ու սննդի արդյունաբերությունը: Այս երկու ճյուղերում կենտրոնացած էր նշված բոլոր ճյուղերի բանվոր-ծառայողների 58,4 տոկոսը[40]: Դա պայմանավորված էր տվյալ երկու ճյուղերի աշխատատար բնույթով՝ ի տարբերություն մյուս ճյուղերի, որոնք ավելի էներգատար էին և ունեին ավելի բարձր մեքենայացման մակարդակ: Աշխատատար ճյուղերի զարգացումը նպաստում էր լուծելու աշխատուժի տեղավորման հարցը, երբ մասնավորապես աշխատանք էին գտնում նաև մեծ թվով կանայք:

---

[37] Труд в Армянской ССР (статистический сборник). Ереван, 1970, с. 22.
[38] Աշխատանք, 1929 թ., N 14, էջ 15-16:
[39] Труд в Армянской ССР, с. 59.
[40] Նույն տեղում, էջ 61:

Ինդուստրացման շնորհիվ նախ և առաջ լուծվեց գործազրկության վերացման հարցը: Մեծ չէր գործազուրկների թիվը, որոնք գրանցված էին աշխատանքային բորսայում: Հարցի լուծումն արագացավ 1-ին հնգամյակում, երբ լայն ծավալ ընդունեց նոր շինարարությունը: Առաջին հնգամյակի նվաճումներից է, ասված է ՀՍԽՀ խորհուրդների 8-րդ համագումարին ներկայացրած կառավարության հաշվետվության մեջ, «գործազրկության լիակատար վերացումը»: Ավելին, առաջացավ, կարդում ենք նույն տեղում, նոր լրացուցիչ բանվորական ուժի ներգրավման պահանջ[41]:

Բանուժի հավաքագրման աղբյուրներն էին քաղաքային բնակչությունը՝ հանձինս երիտասարդության, բուհերի ու տեխնիկումների շրջանավարտների, տնայնագործների, մասնավոր հատվածի վարձու բանվորների և ընդհանրապես չաշխատած կանանց, ինչպես նաև գյուղական բնակչությունը, որը արտադրության մեջ ներգրավվում էր պայմանագրային հիմունքներով[42]: Գոյություն ունեին բանուժի հավաքագրման այլ ուղիներ ևս, ինչպես մանկատների սաները, ովքեր անցել էին համապատասխան տարիքը, հայրենադարձները, ինչպես նաև անկազմակերպ ձևով գյուղից քաղաք մեկնողները: Վերջին միջոցը մեծ չափեր ընդունեց հատկապես կոլեկտիվացման տարիներին՝ որոշ շրջաններում առաջացած նյութական դժվարությունների (սովի տարածումը Սևանի գոտու շրջաններում 1932-1933 թթ.) պատճառով և այլն:

Կանանց աշխատուժի ներգրավումը նոր երևույթ էր, որպիսի քաղաքականությունը խորհրդային իշխանությունը վարում էր ծրագրված կարգով ու պլանաչափորեն:

Միայն արդյունաբերության մեջ 1-ին հնգամյակում կանանց տեսակարար կշիռը12,9-ից բարձրացավ 29,3 տոկոսի[43]: Բացի իրենց համար առանձնահատուկ և նպատակահարմար թեթև ու սննդի արդյունաբերական ճյուղերից, կանայք աշխատանք էին գտնում նաև արդյունաբերության մյուս ճյուղերում, որոնք ավանդակ էին տղամարդկանց համար:

1930-ական թվականներին նոր տեխնիկայի հիման վրա բազմաթիվ նոր գործարանների կառուցումը և հների վերակառուցումը պահանջում էին բարձրացնել բանվորական կազմի կուլտուր-տեխնիկական մակարդակը: Մեծ չափով ավելացել էր բանվորների քանակը, որոնց զգալի մասը մասնագիտական պատրաստություն չուներ և, ընդհանրապես, կուլտուր-տեխնիկական որակավորումը հետ էր մնում քանակական աճից: Հարցի

---

[41] ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր խորհուրդների 8-րդ համագումարի առթիվ, էջ 106:
[42] Նույն տեղում, էջ 107:
[43] Նույն տեղում:

լուծումը կատարվում էր տարբեր եղանակներով: Կազմակերպվում էին կարճատև ու երկարատև վերապատրաստման մասնագիտական դասընթացներ, գործում էին ֆաբրիկագործարանային դպրոցներ կամ ուսումնարաններ (ֆաբգործուս, պրոֆդպրոց): Բանվորների մասնագիտական որակավորման բարձրացում էր կատարվում արտադրության մեջ՝ անհատաբար կամ խմբային ձևով:

Գոյություն ուներ հեռակա ուսուցում դպրոցական բոլոր մակարդակներում, համատեղելով աշխատանքը և ուսումը:

Առաջին հնգամյակի վերջում հանրապետության միայն 30 ֆաբգործուսներում ընդգրկված էր մոտ 3500 սովորող[44]: Տվյալ խնդրի լուծմանը նպաստում էր այն լայնածավալ աշխատանքը, որը տարվում էր զանգվածային անգրագիտությունը վերացնելու, միջնակարգ և յոթնամյա կրթությունն ընդլայնելու ուղղությամբ:

Կադրերի պատրաստման և վերապատրաստման գործում նորը արտադրական փորձի լայն տարածումն էր (գործարան, ցեխ, ՄՏԿ, սովխոզ, կոլտնտեսություն): Բարեփոխումներ կատարվեցին ուսումնական ծրագրերում, կայուն և սեփական դասագրքերի ստեղծման գործում: Մեծ դեր էր հատկացվում տեսության ու փորձի կապին ու միասնությանը: Ուսման կազմակերպման մեջ մերժվեց «լաբորատոր-բրիգադային» եղանակը, շեշտը դրվեց անհատական ուսման վրա: Նախկինի նման մեծ նշանակություն էր տրվում կադրերի գաղափարական-քաղաքական դաստիարակությանը:

Հայաստանի բանվոր դասակարգի կազմավորումը, ի տարբերություն ԽՍՀՄ մյուս հանրապետությունների, ուներ բնորոշ առանձնահատկություն: Դա ազգային կազմի բարձր մակարդակն էր, որը պայմանավորված էր Հայաստանում հայ բնակչության կենտրոնացումով, բնակչության կազմի միատարրությամբ: Միայն ինժեներա-տեխնիկական անձնակազմում հայերի տեսակարար կշիռը 1940 թ. կազմում էր 92 տոկոս[45]:

Կոմունիստական կուսակցությունը կարևոր նշանակություն էր տալիս նաև այն բանին, որ ձևականորեն բանվոր դասակարգը երևա որպես պետության առաջատար ուժ՝ այն դեպքում, երբ իրականում իշխանությունը պատկանում էր այդ կուսակցությանը, որի մենատիրությունը 1930-ական թվականներին վերաճեց ամենատիրության (տոտալիտարիզմ): Այսպես, 1928 թ. 1700-ի դիմաց 1940 թ. բանվոր կոմունիստների թի-

---

[44] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940), с.113.

[45] **А. Григорянц,** Формирование и развитие технической интеллигенции Армении, с. 164, 180.

վը հասել էր 5600-ի[46], չնայած տեսակարար կշիռը նվազել էր՝ ծառայողներին գերապատվություն տալու պատճառով: Բանվոր կոմունիստներն իրենց պատվավոր տեղն ունեին նաև կուսակցական մարմիններում, համագումարներում ու կոնֆերանսներում:

Նույնը վերաբերում է խորհրդային իշխանության մարմիններին: Հանրապետության խորհուրդների 1-ին համագումարում (1922 թ.) բանվորներ էին պատգամավորների 15,8, 6-րդ համագումարում (1929 թ.)՝ 34,4 (առավելագույն մակարդակը) և 9-րդ համագումարում (1936 թ.)՝ 26,9 տոկոսը: Իշխանության բարձրագույն մարմին (համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում) Կենտգործկոմի անդամների մեջ բանվորներ էին 1925 թ.՝ 11,1 և 1931 թ. 32,0 տոկոսը[47]:

1934 թ. տեղական ընտրությունների ժամանակ քաղաքատիպ վայրերում խորհուրդների կազմի 30-40 տոկոսը բանվորական էր, Երևան քաղաքում՝ 58 տոկոսը: Այստեղ 1939 թ. քաղսովետում ընտրվել էր, որպես բանվոր, նրա կազմի 40 տոկոսը: Արտադրության առաջավոր բանվորների ներկայացուցիչները ներկայացված էին պետական ու կուսակցական բոլոր մարմիններում, ժողովներում ու հանդիսավոր արարողություններում: Բանվորները, իհարկե, տեղ ունեին նաև խորհուրդների անդրկովկասյան ու միութենական համագումարներում, ապա նաև հանրապետական ու միութենական Գերագույն խորհուրդներում[48]:

Երրորդ հնգամյակը, ինչպես նաև 1939 թ. սկսված երկրորդ աշխարհամարտը բանվոր դասակարգի և խորհրդային ամբողջ երկրի համար ստեղծեցին նոր իրադրություն, առաջադրեցին նոր խնդիրներ: Ըստ այդմ իրականացվեցին մի շարք միջոցառումներ, որոնց ընդհանուր ուղղությունը և նպատակը արդյունաբերության գործերի բարելավումն էր, բանվորության շարքերում աշխատանքային կարգապահության ամրապնդումը:

1938 թ. դեկտեմբերին ընդունվեց միութենական որոշում աշխատանքային գրքույկներ գործածելու մասին: Բանն այն է, որ երկրի բանվոր-ծառայողների միջավայրում գոյություն ուներ մեծ հոսունություն, որը խոչընդոտում էր կանոնավոր արտադրական գործընթացին, պլանների կատարմանը: Հոսունության միջոցով աշխատավորները որոնում էին իրենց համար ավելի նպաստավոր աշխատանք: Աշխատանքային գրքույկ

---

[46] Компартия Армении в цифрах и документах. 1920-1980. Ереван, 1980, с. 18.

[47] Վ. Ե. Դալլաքյան, Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունից (1920-1930-ական թթ.): Երևան, 1991, էջ 37-38:

[48] Հ. Ս. Կարապետյան, Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորումը և զարգացումը: Երևան, 1980, էջ 270-271:

մտցնելը աշխատավորներին զրկում էր, առանց վարչության համաձայնության, հեռանալ աշխատանքից, ամրացնում աշխատատեղին:

Նույն ժամանակ ընդունված երկրորդ որոշումը վերաբերում էր աշխատանքային կարգապահության ամրապնդմանը: Այն արգելում էր աշխատանքից ինքնակամ հեռանալը, լքելը:

1940 թ. հունիսի 26-ի միութենական հրամանագրով ամրապնդվում էր 8-ժամյա աշխատանքային օրը, վերադարձ էր կատարվում 7-օրյա աշխատանքային շաբաթին (1927 թ. սահմանվել էր 6-օրյա աշխատանքային շաբաթ) և նոր ուժով արգելվում էր հիմնարկ-ձեռնարկություններից բանվոր-ծառայողների ինքնակամ հեռանալը:

Հրամանագիրը կենսագործվում էր ամենայն խստությամբ, նաև դատարանների կողմից սխալներով ու աղավաղումներով: Այդ մասին էր արծագանքում հանրապետության դատախազությունը ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարին ու ԽՍՀՄ դատախազին ուղարկած գրությամբ (12 նոյեմբերի 1940 թ.): Զանգվածորեն խախտվում են, ասված է գրության մեջ, դատի տրված քաղաքացիների իրավունքները, երբ որոշում կայացնելիս նրանք չեն կանչվում դատարան, չի անցկացվում դատաքննություն, չեն պարզաբանվում ուշացման կամ ինքնակամ հեռացման պատճառները[49]: Մինչև 1940 թ. վերջը, ավելի քան 6 ամսվա ընթացքում դատարանները որոշում էին ընդունել շուրջ 9400 մարդու նկատմամբ, այդ թվում 1050 մարդ արդարացվել էր, իսկ մյուսները (8370 մարդ) դատարապտվել էին աշխատանքից ուշանալու և աշխատավայրը ինքնակամ թողնելու համար[50]: Զգալի թվով որոշումների համար դատախազությունը բողոքարկել էր Գերագույն դատարանին, որը և ուղղել էր ժողովրդական դատարանների սխալները:

Նույն թվականի դեկտեմբերի սկզբի դրությամբ, հիշյալ հրամանագրով դատապարտված 724 մարդ (այդ թվում 148 կին), իրենց պատիժը կրում էին բանտերում ու աշխատանքային գաղութներում: Նրանց, և ընդհանրապես բոլոր դատապարտվածների, մեծ մասի «հանցանքը» աշխատանքից մի քանի րոպե ուշանալն էր[51]:

Մի վերջին որոշում էլ անմիջապես վերաբերում էր բանվոր դասակարգին: Խոսքը աշխատանքային ռեզերվների ստեղծման մասին է (1940 թ. հոկտեմբերի 2-ի հրամանագիրը): Նախորդ ժամանակաշրջանում բանվորական կադրերի պատրաստման գործում որոշ դեր էին կատարել ֆաբրիկա-գործարանային ուսումնարանները: Այժմ դրանք անբավարար էին տեխնիկապես հագեցած արտադրության պահանջները բավարարելու հա-

---

[49] ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 125, թ. 55-60:
[50] Նույն տեղում, գ. 134, թ. 61-79:
[51] Նույն տեղում, գ. 125, թ. 70:

մար: Պահանջվում էր կատարելագործել ուսումնարանների ուսումնական ծրագրերը, կազմակերպել դաստիարակչական աշխատանքը: Որոշման համաձայն Հայաստանում ստեղծվեց աշխատանքային ռեզերվների վարչություն, որը կազմակերպեց հազար պատանիների ու աղջիկների ընդունելություն, երկու ստորաբաժանումով, 600 աշակերտ (14-15 տարեկան)՝ արհեստագործական, երկաթուղային ուսումնարաններում, երկամյա ուսման տևողությամբ և 400 աշակերտ (16-17 տարեկան)՝ ֆաբգործուսի դպրոցներում, վեցամսյա ուսման տևողությամբ[52]:

3. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Վիթխարի խնդիրների կատարման համար Կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը 1-ին հնգամյակի հենց սկզբից դիմեցին երկրի բոլոր աշխատավորներին՝ լարել ուժերը, ծավալել արտադրական մրցությունը և հարվածային աշխատանքը: Սկիզբ առաջ աշխատավորների արտադրական խանդավառություն, որը պատմության մեջ հայտնի է «սոցիալիստական մրցում», «հարվածայինների շարժում», հետագայում «ստախանովյան շարժում» անուններով:

Արտադրական մրցությունը պետք էր գերլարված պլանների կատարումը ապահովելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, արտադրանքի ինքնարժեքն իջեցնելու համար: Վերջինների ցուցանիշները բավական անբավարար էին, ընդհանրապես, մասնավորապես տեխնիկական թույլ հագեցվածության պայմաններում:

Հայաստանում առաջին «սոցիալիստական մրցության» պայմանագիրը ստորագրվեց Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների միջև: Մրցությունը տարածվեց արագորեն: Միմյանց հետ մրցում էին գործարանները, արտադրամասերը, անհատները: 1931 թ. մայիսին Լենինականում (Գյումրի) կայացավ հարվածայինների 1-ին հանրապետական համագումարը: Արձանագրվեց, որ մրցության մեջ էին խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների բանվորների 75 և ինժեներատեխնիկական աշխատողների 56 տոկոսը: Հարվածային բրիգադների մեջ էին բոլոր բանվորների 65 տոկոսը: Առաջավոր դերում էին կոմունիստներն ու կոմերիտականները[53]:

---

[52] Հ. Հարությունյան, Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում: Երևան, 1983, էջ 90-94:

[53] Հայ ժողովրդի պատմություն: Հ. 7, Երևան, 1967, էջ 323:

1930-ական թվականներին ծավալված արդյունաբերական շինարարության մեջ գործուն մասնակցություն ունեցան, կոմունիստների կողքին, կոմերիտմիությունը և մյուս երիտասարդները: 1-ին հնգամյակի տարիներին կոմերիտմիությունը ստանձնեց Հայաստանի պղնձարդյունաբերության և էլեկտրիֆիկացիայի խոշոր օբյեկտներ Ձորագետի ու Քանաքեռի հեկերի շինարարության շեֆական օգնությունը: 1931 թ. «Անդրպղինձ» կոմբինատի հետ պայմանագիր ստորագրվեց նաև նրա Հայաստանի ձեռնարկությունների շինարարության և արտադրական պլանների կատարման համար կոմերիտմիության մասնակցության մասին: ՀԼԿԵՄ ուղեգրերով նախատեսվածից (700 մարդ) զգալիորեն ավելի պատանիներ մշտական աշխատանքի մեկնեցին Ալավերդի ու Ղափան: Ձորագետի կառուցմանը էական օգնություն ցույց տալու համար ՀԼԿԵՄ-ը պարգևատրվեց հանրապետության Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով[54]:

Երկրորդ հնգամյակի նորակառույցներում ևս (կաուչուկի, ցեմենտի և այլ գործարաններ) Հայաստանի կոմերիտականները ցույց տվեցին իրենց նվիրվածությունը և ակտիվությունը: 1936 թ. կաուչուկի 6000 շինարարներից 4000-ը կոմերիտականներ ու արտամիութենական երիտասարդներ էին[55]:

Խորհրդային իրականության մեջ արտադրական մրցությունը խրախուսվում էր բարոյական և ոչ նյութական-տնտեսական ազդակներով: Սահմանվեցին խրախուսանքի տարբեր ձևեր ու միջոցներ: Բարձրագույն պարգևը Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչումն էր: Մյուս ձևերն էին շքանշաններով, պատվոգրերով պարգևատրելը, «կարմիր տախտակի» բարձրացնելը և այլն: Ինչևէ, չնայած շահագրգռության միջոցը զուտ բարոյական էր, այնուամենայնիվ այն նպաստում էր կատարելու սահմանված պլաններն ու առաջադրանքները: Օրինակ, հայտարարվեց, որ 1-ին հնգամյա պլանը կատարվել է նույնիսկ ժամկետից շուտ: Պետք է նկատել, սակայն, որ հնգամյա պլանները միշտ էլ եղել են գերլարված ու կատարվել մեծ դժվարությունների հաղթահարումով կամ թերակատարվել են (չնայած պաշտոնապես դա թաքցվել է):

Երկրի ինդուստրացման և տնտեսության տեխնիկական զինման ու վերազինման շնորհիվ 1930-ական թվականների վերջին Հայաստանում առկա էր բազմաճյուղ զարգացած արդյունաբերություն:

Հիմնական ճյուղերն էին լեռնահանքային (պղնձի), քիմիական, տեքստիլ, թեթև, սննդի և այլն: Հանրապետության ինդուստրացումն ուներ

---

[54] Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմություն: Երևան, 1968, էջ 131-143:

[55] Հայ ժողովրդի պատմություն: Հ. 7, էջ 323:

էական առանձնահատկություն: Ի տարբերություն ԽՍՀՄ տնտեսապես զարգացած շրջանների, Հայաստանում, բացառությամբ պղնձահանքային և գինու-կոնյակի արդյունաբերության, որտեղ պահանջվում էր տեխնիկական վերակառուցում, արդյունաբերական մյուս ձեռնարկությունները նորաստեղծ էին, հետևաբար միանգամից զինվել էին նորագույն տեխնիկայով: Ուստի նոր տեխնիկայով զինվածության տեսակետից Հայաստանը առաջնակարգ տեղ էր գրավում ԽՍՀՄ հանրապետությունների մեջ: Այսպես, Հայրենական պատերազմի նախօրյակին Հայաստանի նորակառույց կամ վերակառուցված արդյունաբերական ձեռնարկությունների արժեքը կազմում էր խոշոր արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերի արժեքի մոտ 90 տոկոսը[56]:

Իսկ որպես ընդհանուր օրինաչափություն Հայաստանում ևս առաջնային էր համարվում արտադրության միջոցների արտադրությունը (Ա խումբ)՝ սպառման միջոցների արտադրության (Բ խումբ) համեմատությամբ[57]:

Ինդուստրացման և արդյունաբերության զարգացման պլաններում հաշվի էր առնվում արտադրողական ուժերի տեղաբաշխման սկզբունքը: Անցյալում արդյունաբերական օջախներ էին Երևան (գինու-կոնյակի արտադրություն), Ալավերդի և Ղափան (լեռնահանքային արդյունաբերություն) և Լենինական (երկաթուղային դեպո) քաղաքները: 1920-30-ական թվականներին դրանց զարգացման հետ միաժամանակ արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծվեցին նաև Ղարաքիլիսայում (Վանաձոր), Հոկտեմբերյանում, Ղավալուում (Արարատ) և այլ բնակավայրերում, տեղական արդյունաբերական ձեռնարկություններ՝ հանրապետության մի շարք շրջաններում:

Տասնյակ արտադրական ձեռնարկությունների շնորհիվ մեծապես աճեց արդյունաբերական արտադրությունը:

Արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. 20,7 և 1927/28 թթ. 28,2 միլիոն ռուբլուց (1926/27թթ. անփոփոխ գներով) 1938 թ. բարձրացավ 322,3 միլիոն ռուբլու[58]: Իսկ 1940 թ. համախառն արտադրանքը 1913 թ. համեմատությամբ աճել էր 8,7 և 1932 թ. համեմատությամբ՝ 2,2 անգամ: Այդ թվում ավելի բարձր էին խոշոր արդյունաբերության զարգացման տվյալները, այն է՝ համապատասխանաբար՝ 23,0 և 5,5 անգամ[59]:

---

[56] Լ. Անանյան, Սովետական Հայաստանի ինդուստրիալ զարգացումը, էջ 52-53:
[57] Նույն տեղում, էջ 241:
[58] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940), с. 23.
[59] Народное хозяйство Армянской ССР, с. 22.

Կարևոր արտադրատեսակների գծով 1940 թ. Հայաստանի արտադրական ցուցանիշներն են 395,3 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, 95 հազար տոննա ցեմենտ, 26,8 միլիոն մետր գործվածք, 17,3 միլիոն պայմանական տուփ պահածո, 63 հազար դեկալիտր կոնյակ և 239 հազար դեկալիտր գինի[60]: Միութենական նշանակություն ունեցող պղնձի արտադրությունն ավելացել էր 47,0 տոկոսով[61]:

Այսպիսով, Հայաստանում պատմական կարճ ժամանակամիջոցում տեղի էր ունեցել արդյունաբերության իսկապես թռիչքային վերելք: Դա ԽՍՀՄ ինդուստրացման արդյունքն էր, որն իրականացվեց ուժերի ծանրագույն լարումով, աշխատավորների ու ժողովրդական լայն զանգվածների մեծ զրկանքների գնով:

Արդյունաբերական ձեռնարկությունների աճի և նրանց խոշորների մեծացմանը համընթաց փոխվում ու կատարելագործվում էին նրանց կառավարման ձևերը: Խորհրդային իշխանության առաջին տարիներին, երբ նրանց թիվը քիչ էր, բոլոր ձեռնարկություններն ընդգրկված էին ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհրդում (ԺՏԲԽ), որը ՀՍԽՀ ժողկոմխորհի ժողովրդական կոմիսարիատներից մեկն էր: 1932 թ. ժողտնտխորհը վերակառուցվեց երկու ծանր արդյունաբերության և թեթև արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատների, ինչպես նաև ԽՍՀՄ անտառային արդյունաբերության ժողկոմատի Հայաստանի լիազորության: Երկու տարի անց կազմավորվեց տեղական արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատ: Այս ժողկոմատի ստեղծումը նշանակում էր, որ մանր կամ մասնավոր արդյունաբերական սեփականությունը և արտադրությունը այլևս գոյություն չունեին և ներգրավվել էին պետականի մեջ (դարձել էին «սոցիալիստական»): Վիճակագրական տվյալների համաձայն 1940 թ. ամբողջ արդյունաբերական արտադրությունը թողարկում էին սոցիալիստական արդյունաբերությունը (պետական ձևը՝ 77,7 և կոոպերատիվ ձևը՝ 22,3 տոկոսը), 1928 թ. 76,9 տոկոսի դիմաց[62]: Այսինքն՝ 1928 թ. 23,1 տոկոս կազմող «կապիտալիստական» և մասնավոր մանր արդյունաբերական սեփականությունը վերացել էր, ավելի ճիշտ վերացվել էր կոոպերացման կամ պետականացման միջոցով:

Արդյունաբերության բարձր վերելքի շնորհիվ էական տեղաշարժեր տեղի ունեցան տնտեսության երկու հիմնական ճյուղերի փոխհարաբերություններում, նրանց տեղի ու դերի առումով: Արդեն 2-րդ հնգամյակի ըն-

---

[60] Достижения Советской власти за 40 лет в цифрах. М., 1957, с. 137.
[61] Советская Армения за 40 лет. Статистический сборник. Ереван, 1960, с. 49.
[62] Նույն տեղում, էջ 58.

թացքում արդյունաբերական արտադրության տեսակարար կշիռը մեծ չափով գերազանցել էր գյուղատնտեսականին: Իսկ 1939 թ. արդյունաբերությանը բաժին էր ընկնում ամբողջ արտադրության 77,9 (գյուղատնտեսությանը՝ մնացած 22,1 տոկոսը), 1913 թ. 23,9 տոկոսի դիմաց[63]: Տնտեսության մեջ արդյունաբերության տեղի ու դերի նման մեծացումը, որը տեխնիկական վերակառուցման արդյունք էր, այն չափանիշն է, որը 1930-ական թվականների կեսերին թույլ տվեց երկիրը բնութագրել որպես ինդուստրիալ-ագրարային կամ ինդուստրիալ:

Հսկայական էին ինդուստրացման հաջողությունները ամբողջ ԽՍՀՄ-ում: Կառուցվեց և շահագործման հանձնվեց 1-ին հնգամյակի ընթացքում 1500 և 2-րդ հնգամյակի ընթացքում 4500 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն: Նորակառույց երկաթուղագծերի երկարությունը միայն 2-րդ հնգամյակում 3 հազար կիլոմետր էր, իսկ գործարկված երկրորդ գծերի երկարությունը 5500 կիլոմետր[64]: Արագ ընթացքով վերանում էր ԽՍՀՄ տնտեսական կախվածությունը կապիտալիստական երկրներից, տեխնիկայի ու սարքավորումների ներմուծման անհրաժեշտությունը:

Դրսից ներդրումների բացակայության պատճառով ինդուստրացման ծանրությունը կրում էր խորհրդային ժողովուրդը: Մեծ չափերի էր հասնում առաջին հերթին գյուղացիության (անհատական և կոլտնտեսային) շահագործումը: Գիշատիչ կերպով շահագործվում էին երկրի բնական հարստությունները՝ հանքերը և անտառները, ուր լայն տարածում գտավ միլիոնավոր քաղաքական ու մյուս բանտարկյալների ծրի բանվորական ուժը: Արտասահմանից տեխնիկա և սարքավորումներ գնելու համար քիչ չէր նաև հացի արտահանումը, այն դեպքում, երբ երկրում երբեմն նույնիսկ սով էր տիրում: Տնտեսական նվաճումների հետ մեկտեղ ԽՍՀՄ վերածվում էր կապիտալիստական աշխարհի հումքային կցորդի:

Մի կարևոր հանգամանք ևս: ԽՍՀՄ արդյունաբերական արտադրությունը և սպառումը կազմակերպվում էր, հաշվի առնելով երկրի ներքին շուկան ու պահանջները: Արդյունաբերական շատ ապրանքներ ցածրորակ էին, անմրցունակ: ԽՍՀՄ զարգացումը այդպիսի ընթացք ունեցավ տասնամյակներ շարունակ:

Բերված վիճակագրական տվյալների վերաբերյալ պետք է անել որոշ վերապահություն: Բանն այն է, որ տնտեսագետների հետագա ուսումնասիրությունների շնորհիվ վերնայվել ու ճշտվել են առաջին և այլ հնգամյակների արդյունքները: Այսպես, նշվել է, որ չնայած պաշտոնական հայտարարություններին, առաջին և նախապատերազմյան հաջորդ հնգամյա

---

[63] Социалистическое строительство Армянской ССР, с 10.
[64] История СССР. Т. VIII, М., 1967, с. 529. Т. IX, М., 1971, с. 118, 121.

պլանները փաստորեն չեն կատարվել: Իրականությունը թաքցնելու նպատակով երկրի ղեկավարությունը վիճակագրական տվյալների հրապարակման իրավունքը նախ վերապահել է բացառապես ԽՍՀՄ պետպլանին, որը հնարավորություն կունենար «մշակել» թվերը: Մյուսը, իրականությունը քողարկելու միջոց ծառայեցվել է վիճակագրական տվյալները դրամական արժեքով արտահայտելը, խուսափելով արտադրության բնական (ֆիզիկական) ծավալների բացարձակ ցուցանիշներից[65]: Ի վերջո տնտեսագետները մերժել են Ստալինի այն պնդումը, թե իբր առաջին հնգամյա պլանի կատարման շնորհիվ ԽՍՀՄ-ը «ագրարային երկրից դարձավ ինդուստրիալ երկիր, որովհետև արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը գյուղատնտեսականի նկատմամբ հնգամյակի սկզբի (1928 թ.) 48 տոկոսից հնգամյակի չորրորդ տարվա (1932 թ.) վերջերին բարձրացավ-հասավ 70 տոկոսի»[66]:

Ըստ տնտեսագետների վերջին ցուցանիշին երկիրը չեն հասել նաև նախապատերազմյան մյուս հնգամյակներում:

Միաժամանակ պետք է նշել, որ արված վերապահությունը բնավ չի նսեմացնում այն վիթխարի նվաճումները, որ ԽՍՀՄ-ը ձեռք բերեց ինդուստրացման քաղաքականության կենսագործման ճանապարհին առաջին, ապա երկրորդ ու երրորդ հնգամյակների ընթացքում:

Ինչևէ, այն ժամանակներում, երբ ԽՍՀՄ պայքարում էր առաջնահերթ խնդիրներ լուծելու համար այդ չափանիշներով էլ պետք է գնահատել ձեռք բերվածը:

Երկու տասնամյակների արդյունքում արդյունաբերական զարգացման առումով, ըստ պաշտոնական տեսակետի, ԽՍՀՄ դուրս եկավ առաջին տեղը Եվրոպայում և երկրորդ տեղն աշխարհում ԱՄՆ-ից հետո, վերջ տալով երկրի տնտեսական հետամնացությանը և ամրապնդելով երկրի պաշտպանունակությունը:

---

[65]Правда, 28 октября 1988 г. ("Индустриализация СССР: первые пятилетки").

[66] Ի. Ստալին, Երկեր, հ. 13, էջ 199:

Գլուխ VII. ԳՅՈՒՂԻ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ

1. Գյուղատնտեսության կոլեկտիվացման գրոհը

Գյուղատնտեսության զարգացումը ևս կազմակերպվելու էր ինդուստրացման հիման վրա:

Ինդուստրիայի զարգացումը դիտվում էր «որպես բուն գյուղատնտեսության վերելքի, գյուղացիներին աղքատությունից փրկելու» կարևոր միջոց: Այն նաև գյուղացիների «մեկուսացած տնտեսությունները հանրային տնտեսության մեջ միավորելու» հիմնական պայմանն էր[1]: Առաջին հնգամյա պլանը այդ ուղղությամբ նախատեսում էր իրականացնել բազմակողմանի միջոցառումներ: Ըստ հնգամյա պլանի, որն ընդունվեց 1929 թ. ապրիլ-մայիսին, գյուղատնտեսական արտադրանքի աճը առաջիկա տարիներին ընկնելու էր չքավոր և միջակ անհատական տնտեսությունների վրա, մանր տնտեսություն, որը «դեռ ամենևին չի սպառել ու շուտով չի սպառի իր ունեցած հնարավորությունները»: Ակնհայտ էր ունևոր-կուլակային տնտեսությունների բացառումը գյուղատնտեսության վերելքի և ապրանքային հացի արտադրության գործում: Այդ դերը հատկացվում էր տնտեսության սոցիալիստական հատվածին, այն է՝ նոր ստեղծվող կոլտնտեսություններին ու սովխոզներին:

Շուտով (1929 թ. երկրորդ կես) կուսակցության ստալինյան ղեկավարությունը մերժեց ընդունել նաև անհատական մանր տնտեսությունների դերը և կանգնեց գյուղատնտեսության զարգացումը բացառապես սոցիալիստական տնտեսությունների միջոցով կազմակերպելու հողի վրա:

«Մեծ բեկման տարին» հոդվածում (1929 թ. նոյեմբեր) Ստալինը կոլեկտիվացման մասնակի ու փոքր նվաճումների հիման վրա եկավ այն համընդհանուր եզրակացության, թե իբր կենտրոնական դեմք միջակ գյուղացիությունը շրջվել է կոլտնտեսությունների կողմը: Իսկ 1929 թ. դեկտեմբերին մարքսիստ ագրարագետների կոնֆերանսում նա փորձեց կոլեկտիվացմանն անցնելը հիմնավորել նաև «տեսականորեն»: Ստալինի այդ զեկուցումն ուղղված էր այն բոլոր տնտեսագետ-տեսաբանների (պրոֆեսորներ Կոնդրատև, Մակարով, Չայանով, Չելինցև և ուրիշներ), և գլխավորապես Բուխարինի դեմ, ովքեր պաշտպանում էին կոոպերացիայի միջոցով կոլտնտեսային շարժումը նախապատրաստելու ուղին: Վերջինը նշանակում էր կոոպերացիայի պարզ, հասարակ ձևերի օգնությամբ, կամավորության սկզբունքով անհատական տնտեսություններին մոտեցնել կոլեկտիվացմանը: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. ապրիլյան պլենումում այա-

---

[1] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: II մաս, Երևան, 1955, էջ 734:

տասխանելով իր բազմաթիվ քննադատներին, Բուխարինը պարզաբանում էր նաև երկրի զարգացման ուղիների հարցը, մասնավորապես անհատական տնտեսությունների դեռևս տևական անհրաժեշտությունը: Չպետք է վախենալ, շարունակում էր նա, թե գյուղացիական զանգվածները կարճ ժամանակում կծնեն «կուլակների ինչ-որ վիթխարի շերտեր»: Հենց այդ հանգամանքը մեզ թույլ է տալիս, նշում էր Բուխարինը, «կոլտնտեսային-սովխոզային շինարարությունը զուգակցել անհատական տնտեսության վերելքի հետ, նրա չդադարող կոոպերացումով հանդերձ»[2]: Նա ելնում էր նաև նրանից, որ կուլակը ապրանքային հացի մեծ արտադրող էր, որպիսին տնտեսության մյուս ձևերը դեռևս չէին կարող լինել ու փոխարինել և պահանջում էր վերացնել նրա նկատմամբ կիրառվող արտակարգ միջոցառումները, որպես հացի ճգնաժամի վերացման իրական ելք: Մինչդեռ Ստալինը սկսեց այդ ամենը ներկայացնել որպես կուլակի շահերի, կապիտալիզմի պաշտպանություն, բուրժուական կարգերի վերականգնման վտանգ:

1929 թ. նոյեմբերին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումում Բուխարինը, Ռիկովը և Տոմսկին հանդես եկան համատեղ հայտարարությամբ, ժխտելով իրենց հասցեին արված կուսակցական մեղադրանքը «աջ թեքման մասին»: Նրանք պնդում էին, որ ամբողջությամբ ու լրիվ պաշտպանում են «կուսակցության գլխավոր գիծը»: Մենք վճռականապես,- կարդում ենք հայտարարության մեջ,- ինդուստրացման ու վերցրած տեմպերի, կոլտնտեսությունների ու սովխոզների շինարարության, նախանշված տեմպերի կողմն ենք: Պաշտպանում ենք կուլակության դեմ անխնա պայքարը»: Նրանք դեմ էին միայն արտակարգ միջոցառումներին «որպես տևական կուրսի»[3]: Եվ այնուամենայնիվ Կենտկոմի պլենումը Բուխարինին հանեց Քաղբյուրոյի կողմից որպես աջ թեքման կողմնակիցների կազմակերպիչ ու ղեկավար, իսկ Ռիկովին ու Տոմսկուն արեց նախազգուշացում[4]:

Որ Բուխարինը չէր պաշտպանում և չէր էլ կարող պաշտպանել կուլակության ու բուրժուազիայի շահերը, վկայում է թեկուզ նրա վերաբերմունքը 1930 թ. սկզբին ստեղծված բարդ իրադրության նկատմամբ, երբ նա պաշտպանում էր նույն ստալինյան հայացքներն ու քաղաքականությունը: 1930 թ. տպագրված «Մեծ վերակառուցում» հոդվածում Բուխարինը գրում էր Նեպի ավարտի, «կտրուկ բեկում» (հիշել Ստալինի «Մեծ բեկու-

---

[2] Н. И. Бухарин. Проблемы теории и практики социализма. М., 1989, с. 295.

[3] Документы свидетельствуют. Из истории деревни накануне и в ходе коллективизации 1927-1932 гг., М., 1989, с. 274-282.

[4] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: II մաս, էջ 839:

մը») թևակոխելու ժամանակաշրջանի, դասակարգային պայքարի, հատկապես գյուղում, արտակարգ ուժեղացման և «հակակուլակային հեղափոխության արագ ու հաղթական զարգացման մասին»: Եվ քանի որ, շարունակում է Բուխարինը, կուլակը «կատաղի դիմադրություն է ցույց տալիս», ուստի նրա հետ «պետք է խոսել արծճի լեզվով[5]:

Այնպես որ, ըստ էության, Բուխարինը կանգնած է եղել ոչ թե կուլակի, այլ բոլշևիկների ու խորհրդային իշխանության պաշտպանության դիրքերում: Ինչ վերաբերում է Բուխարինի նկատմամբ Ստալինի վերաբերմունքին («աջ թեքում» և այլն), ապա այդ, արհեստական լինելով հանդերձ, նպատակ ուներ քննադատել Բուխարինին, հեռացնել ղեկավար պաշտոններից, ավելի ամրապնդել Ստալինի ղեկավար դիրքերը:

Ամփոփելով, պետք է միաժամանակ նշել, որ եթե 1920-ական թվականների վերջին, ի տարբերություն Ստալինի, Բուխարինը երկրի զարգացումը տեսնում էր Նեպի շարունակման մեջ, ապա 1930-ական թվականների սկզբին լրիվ պաշտպանում էր Ստալինին: Նույն Նեպի մասին Ստալինը հետևյալ կարծիքին էր. մենք Նեպի կողմնակից ենք այն պատճառով, բացատրում էր նա մարքսիստ ագրարագետների կոնֆերանսում, որ այն ծառայում է սոցիալիզմին, իսկ երբ այն «դադարի սոցիալիզմի գործին ծառայելուց, մենք նրան գրողի ծոցը կնետենք»[6]: Ստալինի համար այդ ժամանակն արդեն եկել էր:

Մերժվեցին նաև տնտեսագետ-ագրարագետների, վերը հիշված պրոֆեսորների առաջարկություններն ու տեսակետները երկրի զարգացման հնարավոր ուղիների վերաբերյալ: Դրանք բնութագրվեցին որպես մանրբուրժուական կամ բուրժուական հայացքներ, կուլակության շահերի պաշտպանություն: Ուժեղ քննադատության ենթարկվեց մասնավորապես այսպես կոչված «կոնդրատևականությունը»: Կոնդրատևը, Չայանովը և նրանց մյուս գաղափարակիցները գյուղի զարգացման ուղին տեսնում էին կոոպերատիվ հասարակայնության զարգացման մեջ, ընդ որում այն դիտելով որպես տևական ժամանակաշրջանի խնդիր, ժխտում էին կոոպերացիայի պետականացման երկրում հաստատվող պրակտիկան:

Նեպի միջոցով երկրի սոցիալ-տնտեսական, մասնավորապես գյուղատնտեսության, զարգացումը կազմակերպելու ագրարագետ-պրոֆեսորների մշակած տարբերակը (հիմնական հեղինակ Կոնդրատև, այստեղից էլ «կոնդրատևականություն» արտահայտությունը) քննադատելուց և մերժելուց հետո 1930 թ. նրանց նկատմամբ ԽՍՀՄ Միացյալ պետքաղվարչութ-

---

[5] Բերվում է ըստ՝ Вадим Кожинов. Россия. Век XX. 1901-1939. М., 1999, с. 195.

[6] Ի. Ստալին, Երկեր, հ. 12: Երևան, 1949, էջ 192:

յան կողմից սարքվեց կեղծ քրեական գործ: Իբրև թե նրանք կազմակերպել էին գաղտնի Աշխատավորական գյուղացիական կուսակցություն՝ Խորհրդային պետության դեմ պայքարելու համար: Մի խումբ տնտեսագետ գիտնականներ անհիմն կերպով դատապարտվեցին տարբեր ժամկետներով, իսկ մի քանի տարի անց՝ արժանացան ավելի խիստ պատիժների կամ գնդակահարության:

Հայաստանում ևս աշխատեցին գտնել «կոնդրատևականության» հետևորդներ ու նրանց պաշտպաններ: Խիստ քննադատություն ծավալվեց այն մարդկանց նկատմամբ, ովքեր համարձակվում էին խոսել կամ գրել Հայաստանի առանձնահատկությունները (առավել տնտեսական հետամնացություն, հողասակավություն, գյուղի թույլ սոցիալական շերտավորում և այլն) հաշվի առնելու մասին (ասենք կոլեկտիվացման տևական ընթացքի անհրաժեշտություն, թեթև արդյունաբերության զարգացման գերապատվություն, բամբակի մշակման աննպատակահարմարություն, անտառների խնայողաբար օգտագործում և այլն)[7]:

«Մեզանում կոնդրատևշչինայի մի քանի արտահայտությունների վերլուծումը,- գրել է հայ հեղինակը իր փաստերը բերելուց հետո,- պարզ ցույց տվեց, որ հիմնովին անհեթեթ և մտացածին է կոնդրատևականների այն միտքը, թե ծայրերկրային հանրապետություններում, որոնց թվին պատկանում է Խորհրդային Հայաստանը, չի կարող կոնդրատևշչինա լինել»[8]:

Հեղինակը կրկնում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. ապրիլի 22-ի որոշման մեջ բերված օրինակներն ու գնահատականները: «Սրել պայքարը կոնդրատևականության դեմ» որոշման մեջ Կենտկոմը նշում էր, որ Խորհրդային Միության այլ վայրերում մերկացած կոնդրատևյան հակահեղափոխական իդեոլոգիաներն ու պրակտիկան Հայաստանում ևս ունեցել են իրենց հետևորդները հանձինս քաղաքացի Ս. Կամսարականի, Խ. Ավդալբեգյանի, Գ. Քոչարյանի, Շելկովնիկյանի, Փիրումյանի, Աբանասյանի, Մամյանի և ուրիշների»: Կենտկոմը աչալրջորեն Հայաստանի կոնդրատևականների «խմբակի» դիրքավորումը սերտորեն զուգորդված էր տեսնում «հայ բուրժուազիայի մարտական կուսակցության՝ դաշնակցության վարած ինտերվենցիոնիստական ֆաշիստական քաղաքականության հետ»: Այդ տեսակետից, ասված է այնուհետև որոշման մեջ, Հայաստանի պայմաններում «կոնդրատևականները միաժամանակ հանդիսանում են դաշնակցության փաստական ագենտները, նրա հակահեղափոխական

---

[7] **Վ. Կոստանյան**, Կոնդրատևյան մունետիկները Հայաստանում: Երևան, 1931: **Ա. Գուլոյան**, Կոնդրատևշչինա: Երևան, 1931:

[8] **Ա. Գուլոյան**, Կոնդրատևշչինա, էջ 30:

ծրագրերի ջատագովներն ու սպասարկուները»: Հիմնականում հողժողկոմատում և պետպլանում աշխատող նշված «կոնդրատևականները» անմիջապես հեռացվեցին աշխատանքից[9]:

Ի տարբերություն կենտրոնի՝ Հայաստանում առայժմ բավարարվեցին ընդունված միջոցառումներով: Միայն հետագայում գործադրվեցին բանտն ու աքսորը:

Այսպիսով, առաջին հնգամյա պլանի խնդիրները լուծվում էին զուտ կուսակցական կարգով, վերևից իջեցված տեսակետներով ու միջոցառումներով:

Ստալինը սխալ գնահատեց գյուղի սոցիալ-տնտեսական և դասակարգային տեղաշարժերի ընթացքը, որպես միջակ գյուղացիության (գյուղի կենտրոնական դեմքի) շրջադարձ դեպի կոլտնտեսությունները, և ժամանակը հասունացած համարեց համատարած կոլեկտիվացման անցնելու համար: Մյուս կողմից, «լուծեց» նաև կուլակության հարցը՝ կուլակությանը սահմանափակելու և արտամղելու (հենվելով չքավոր գյուղացիության վրա և դաշնակցելով միջակի հետ) քաղաքականությունից անցնել նրան, որպես դասակարգ, վերացնելու (համատարած կոլեկտիվացման հիման վրա) քաղաքականությանը:

Կուսակցության և պետության առաջին դեմքի խոսքը որոշում էր, որը դարձավ քաղաքականություն և վերևից հրամցվեց տեղերին՝ ի կենսագործում: Մինչև գյուղ հասնելը համատարած կոլեկտիվացման մասին որոշումը ավելի ու ավելի էր ընդլայնում իր գործադրության սահմանները և խորությունը:

Գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցը շոշափում էր երկրի բնակչության հսկայական մեծամասնության (25 միլիոն տնտեսություն) շահերը, ուստի պահանջում էր լուրջ քննարկում ու նախապատրաստություն, որը, սակայն, տեղի չունեցավ:

Առաջին հնգամյա պլանը նոր էր ընդունվել, երբ սկսվեց նրա վերանայումը, «սոցիալիստական ծավալուն հարձակումը» ավելի ծավալուն դարձնելու համար: Վերանայումը հիմնականում վերաբերում էր գյուղին, գյուղատնտեսությանը:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թ. նոյեմբերյան պլենումը, ստալինյան մոտեցմանը համապատասխան, արձանագրեց, թե կատարվել է «արմատական տեղաշարժ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում», որը «նշանակում է նոր պատմական էտապ մեր երկրում սոցիալիզմի կառուցման գործում», թե կոլտնտեսային շարժումը սկսել է վերածել «ամբողջ շրջանների համատարած կոլեկտիվացման»: Ուստի պլե-

---

[9] ՀԱԱ, ֆ. 1, ց. 11, գ. 12, թ. 149-152:

նումը հենց առաջիկա (1930 թ.) գարնանացանի համար առաջադրեց «գյուղացիական տնտեսությունների մասսայական արտադրական կոոպերացման, կոլեկտիվացման հետագա զարգացման և սովխոզների շինարարության ծավալման խնդիրը»[10]:

1930 թ. հունվարի 5-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց կոլեկտիվացման ընթացքի մասին: Ելնելով նրանից, թե իբր կոլտնտեսային շարժումն ընդգրկել է ամբողջ շրջաններ, օկրուգներ, նույնիսկ մարզեր ու երկրամասեր, եզրակացություն էր արվում, թե հնգամյա պլանով նախատեսված 20 տոկոսի փոխարեն արդեն հնգամյակի սահմաններում կարելի է լուծել գյուղացիական տնտեսությունների հսկայական մեծամասնության կոլեկտիվացման խնդիրը: Ըստ այդմ, կոլեկտիվացման նախապատրաստության աստիճանին «համապատասխան» ԽՍՀՄ շրջանները բաժանվեցին գոտիների: Առաջին գոտին, կարևորագույն հացահատիկացան շրջաններ, կոլեկտիվացումը կարող էր հիմնականում ավարտել 1930 թ. աշնանը կամ 1931 թ. գարնանը: Մյուս հացահատիկացան շրջանների ժամկետն էր 1931 թ. աշունը կամ 1932 թ. գարունը: ԽՍՀՄ մնացած՝ ազգային շրջանների համար որոշումը կարելի էր հասկանալ այնպես, թե նրանք կոլեկտիվացումը կարող էին ավարտել մինչև առաջին հնգամյակի վերջը[11]: Որոշ ժամանակ անց հենց այդպես էր բացատրում Ստալինը տվյալ որոշումը[12]: Հայաստանը, ինչպես կտեսնենք, նույնիսկ 1-ին հնգամյակի վերջում շատ հեռու էր կոլեկտիվացման ավարտից՝ նույնիսկ դրա հարկադրական կենսագործման պայմաններում:

Բարձր իշխանությունների կողմից վերևում ընդունված անիրական որոշումները հանրապետություններում, մարզերում ու շրջաններում վերածվեցին կոլեկտիվացման խաղի:

Գյուղերն ու շրջանները միմյանց հետ մրցության մեջ մտան, թե որն ավելի շուտ կավարտի կոլեկտիվացումը: Այդ ամենը կազմակերպում և ղեկավարում էին առաջին հերթին կուսակցական մարմինները և իշխանությունները, գործին մասնակից դարձնելով բանվորությանը: Այդ մասին որոշում էր ընդունել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը (1929 թ. նոյեմբեր)՝ գյուղին օգնելու համար հավաքագրել 25 հազար բանվորներ: «Սոցիալիստական հողագործության կազմակերպիչ ղեկավար կադրերի հզոր ռեզերվ են», ասված է որոշման մեջ, ինդուստրիալ բանվորները[13]: Բացի այդ, գյու-

---

[10] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: II մաս, էջ 785-788:
[11] Նույն տեղում, էջ 840-843:
[12] Ի. Ստալին, Երկեր, հ. 12, էջ 234:
[13] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: II մաս, էջ 819-820:

ղատնտեսության մեջ ղեկավար աշխատանքի համար գյուղ էին մեկնելու ևս հազար «պատասխանատու աշխատողներ»[14]:

Այսպես՝ իբրև թե նախապատրաստվում էր գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Ընդ որում, սկսելով կոլտնտեսային շարժման ծավալումը, կուսակցությունը և իշխանությունները չէին լուծել կոլտնտեսային կարգի հետ կապված բազմաթիվ հարցեր, իսկ ընդհանրապես բնակչության հսկայական մասի և երկրի բախտին ու ճակատագրին վերաբերող կենսական նշանակություն ունեցող խնդիրը լայն քննարկման առարկա չդարձավ: Միայն բուն կոլեկտիվացման ընթացքում էին լուծում ստանում տվյալ հարցերը. կոլտնտեսության ո՞ր ձևին պետք է տրվեր առավելությունը (փորձը տվել էր հետևյալ ձևերը՝ գյուղատնտեսական արտել, կոմունա, հողը համատեղ մշակող ընկերություն, որոնք միմյանցից տարբերվում էին գյուղացու արտադրության միջոցների հանրայնացման աստիճանով), աշխատանքի չափը և վարձատրության կարգը, կոլտնտեսության հիմնական փաստաթուղթը, որը հետո հայտնի դարձավ «գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրություն» անունով և այլն: Վերջապես, որը ամենակարևորն է՝ գյուղացուն չէին հարցնում՝ նա ցանկանո՞ւմ է արդյոք դառնալ կոլտնտեսական:

Այս ամենը նշանակում էր, որ գործողության մեջ էր երկրի և տնտեսության կառավարման վարչահրամայական եղանակը:

Կառավարման նոր եղանակին անցնելու և գյուղատնտեսության կոլեկտիվացման կապակցությամբ անհրաժեշտ դարձավ կառավարումը ավելի մոտեցնել տեղերին, իշխանության տեղական մարմինների ամրապնդումը: Ուստի որոշվեց վերացնել օկրուգները (գավառները), ամրապնդել շրջանը՝ «որպես գյուղում սոցիալիստական շինարարության հիմնական օղակ»: Դա կուսակցական-խորհրդային ապարատը «վճռականորեն» մոտեցնելու էր գյուղին, կոլտնտեսություններին, ժողովրդական զանգվածներին (ՀամԿ(բ)Կ 16-րդ համագումարի որոշումներից)[15]:

Նշենք, որ երկրի կառավարումը մինչև այդ հենվում էր ԽՍՀՄ վարչա-տնտեսական եռաստիճան բաժանման սկզբունքի վրա, այն է՝ գյուղ, շրջան, գավառ (օկրուգ): 1929 թ., ի փոփոխումն մինչև այդ գոյութույն ունեցող 9 գավառների, խոշորացման միջոցով ստեղծվել էր 5 գավառ (օկրուգ՝ Երևանի, Լենինականի, Լոռու, Սևանի և Զանգեզուրի, դրանցում 31 գավառակով կամ շրջանով): Վերջին փոփոխությունը հազիվ գոյատևեց մեկ տարի, երբ պետք է կատարվեր վերոհիշյալ որոշումը:

---

[14] Նույն տեղում, էջ 811:

[15] ՍՍԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: III մաս, Երևան, 1955, էջ 23:

1930 թ. օգոստոսի 5-ին ՀՍԽՀ Կենտգործկոմը և ժողկոմխորհը ընդունեցին գավառները վերացնելու մասին որոշումը: Ստեղծվում էին, ասված է որոշման մեջ, «աշխատավոր զանգվածներին մոտ մարմիններ, որոնք ղեկավարելու են շրջանների քաղաքական, տնտեսական ու սոցիալ-կուլտուրական ամբողջ կյանքը»: Գավառների իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում էին շրջաններին: Ինքնուրույն բյուջե ունենալու իրավունք ունեին նաև գյուղերը (ավելի ճիշտ նրանց մի մասը)[16]:

Գավառային կադրերի (թվով 530 մարդ) ճնշող մասը աշխատանքի էր անցնելու շրջան կամ գյուղ, ուժեղացնելով դրանց ապարատը: Նախատեսվում էր շրջանային և հանրապետական կենտրոնների միջև հաստատել հեռախոսային կապ: Նախատեսվում էր ճանապարհային շինարարություն:

Հայաստանում ստեղծվեց 25 շրջան, որոնք ուղղակի ենթարկվում էին հանրապետական ղեկավար կենտրոններին: 1930-ական թվականներին շրջանների թիվն ավելացավ: Միայն 1938 թ. միանգամից ստեղծվեց 11 շրջան: 1940 թ. Հայաստանում գոյություն ուներ 39 շրջան:

Վարչակառավարման ստորին օղակ գյուղխորհուրդների թիվը շուրջ 800 էր: Այն զգալիորեն պակաս էր գյուղական բնակավայրերի թվից: Դա նշանակում էր, որ կային գյուղխորհուրդներ, որոնք ընդգրկում էին մի քանի գյուղ: 1926 թ. մարդահամարի տվյալներով Հայաստանում գրանցվել էր 1906 գյուղական բնակավայր: Ընդ որում նրանց զգալի մասը բավական սակավաբնակ էր: Այսպես, մինչև 49 բնակիչ ուներ նրանցից 744-ը և 50-99 բնակիչ՝ 157-ը: 5000-ից ավելի բնակչությամբ ոչ մի գյուղական բնակավայր գոյություն չուներ[17]: Դա լրացուցիչ դժվարություններ էր ստեղծելու գյուղատնտեսության կոլեկտիվացման համար:

Խոշոր չէին նաև քաղաքները: Նույն մարդահամարի տվյալներով միայն մեկական քաղաք կար 20000-49999 և 50000-99999 ազգաբնակչությամբ: Մյուս քաղաքներում, որոնք հիմնականում գավառային ու շրջանային կենտրոններ էին, մեծ թիվ էին կազմում գյուղատնտեսությամբ զբաղվողները: Հետագայում փոխվեցին քաղաքի որոշման չափանիշները: Հայաստանում կար 9 քաղաք (Երևանը և Լենինականը հանրապետական ենթակայության, և մյուս 7-ը՝ շրջանային) և 9 քաղաքատիպ ավան (ավան

---

[16] ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու: 1930, թիվ 10, հոդված 158 (էջ 365-366):

[17] Всесоюзная перепись населения 1926 года. Том XIV. ЗСФСР, с. 4-5.

էին կոչվում այն բնակավայրերը, որոնց ավելի քան 50 տոկոս բնակչության ապրուստի հիմնական միջոցն աշխատավարձն էր):

Հայաստանում կոլտնտեսային շարժման կառավարման գործերով անմիջապես զբաղվում էր 1928 թ. սկզբին, ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարից անմիջապես հետո, Հայգյուղկոոպի համակարգում ստեղծված կոլտնտսեկցիան, որը նույն թվականի նոյեմբերին կոլեկտիվ տնտեսությունների հանրապետական 1-ին համագումարում վերկառուցվեց Հայաստանի կոլեկտիվ տնտեսությունների միության (Կոլտնտկենտրոն): Համագումարի նախօրյակին հանրապետությունում գոյություն ուներ 75 կոլտնտեսություն, որի անդամները հիմնականում բատրակներ և չքավոր գյուղացիներ էին: Համագումարը սխալ համարեց հավասար-սպառողական սկզբունքով աշխատանքի վարձատրության կարգը, որ կիրառվում էր շատ տնտեսություններում: Ճիշտ էր համարվում ըստ աշխատանքի քանակի ու որակի վարձատրությունը, որի սկզբունքները և չափանիշները, սակայն, դեռևս չէին մշակվել: ՀԿ(բ)Կ 6-րդ համագումարը (1929 թ. հունվար) պահանջեց «զարկ տալ գյուղատնտեսության սոցիալիստական ձևերի զարգացմանը, իսկ խորհուրդների 6-րդ համագումարը, ըստ 1-ին հնգամյա պլանի առաջադրանքների, նախատեսում էր հնգամյակի վերջում ունենալ 540 կոլտնտեսություն, 28 հազար գյուղացիական տնտեսությունների ընդգրկումով, որը կազմում էր բոլոր գյուղացիական տնտեսությունների 17,2 տոկոսը: Հնգամյակում գյուղատնտեսական կոոպերացիայում ընդգրկվելու էին գրեթե բոլոր գյուղացիները[18]:

Մինչև 1929 թ. կեսերը գյուղատնտեսության կոլեկտիվացումն ընթանում էր ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարի որոշումների ոգով և 1-ին հնգամյա պլանի առաջադրանքների համաձայն: Այնուհետև ծավալվում է արագացման այնպիսի աճ, որն ավելի ու ավելի էր հեռանում հնգամյակի ստուգիչ թվերից և իրական հնարավորություններից:

1929 թ. հուլիսին հանրապետության Կոլտնտկենտրոնի նստաշրջանը, ելնելով ընդամենը չնչին հաջողություններից, առաջարկում էր վերանայել հնգամյա պլանը: ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի պլենումում խոսվում էր «Ռուսաստանում մեծ չափով կիրառվող առանձին շրջանների ամբողջական կոլեկտիվացման փորձը մեզանում ևս կենսագործելու ուղղությամբ» գործնական քայլերի դիմելու անհրաժեշտության մասին: Աշնանա-

---

[18] Կոլեկտիվացման հարցերի վերաբերյալ օգտագործվել են հետևյալ աշխատությունները, Վ. Ղազախեցյան, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ.: Նույնի Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը 1929-1937 թթ.: Երևան, 1975 և 1978 թթ.:

ցանի կամպանիայի կապակցությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմն առաջարկում էր այդ ընթացքում զարգացնել կոլտնտեսային շարժումը ամբողջական գյուղերով, բամբակագործական շրջաններում՝ զանգվածային կոլեկտիվացումով: Իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումը նշեց, որ կոլտնտշարժումը չքավորականից վերածել է չքավոր և միջակ գյուղացիության լայն զանգվածային շարժման, ընդհուպ մոտենալով ամբողջ շրջանների լրիվ կոլեկտիվացմանը: Պլենումը խնդիր դրեց հնգամյակի ընթացքում (մինչև 1932 թ.) համատարած կոլեկտիվացման ենթարկել Երևանի գավառի Հրազդանի, Վաղարշապատի, Ղամարլուի և Լենինականի գավառի Դուզքենդի շրջանները: Իսկ Երևանի գավառի Ղուրդուղուլու շրջանը համատարածի հարցը լուծելու էր ավելի վաղ՝ 1931 թ.: Կոլեկտիվացման ընթացքի արագացման կարևոր պայման էր համարվում գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը, հնգամյակում կազմակերպելով 3 մեքենատրակտորային կայան: Առաջին ՄՏԿ-ն ստեղծվեց 1930 թ. Ղուրդուղուլու շրջանում:

Վերադասին գերազանցելով, Երևանի գավառային կոմիտեն հնարավոր էր համարում գավառի բամբակագործական շրջանների կոլեկտիվացման ավարտումը 1930 թ. գարնանացանի և աշնանացանի ընթացքում:

Անդրֆեդերացիան իր հերթին էր արագ կոլեկտիվացման դիրեկտիվներ իջեցնում: 1929 թ. մայիսին խորհուրդների Անդրկովկասյան 5-րդ համագումարը գյուղատնտեսության թերություններից մեկը համարելով խոշոր կոլեկտիվ տնտեսությունների անբավարար քանակը (ելնում էր խոշոր տնտեսության առավելությունները օգտագործելու անհրաժեշտությունից), պահանջում էր «առաջիկայում լրջորեն դնել կոլեկտիվ տնտեսությունների խոշորացման, մասնավորապես ամբողջ գյուղերի միավորման հարցը»[19]: Իսկ նույն թվականի դեկտեմբերի կեսերին ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը դիրեկտիվ-որոշումներ կայացրեց երկրամասի կուսկազմակերպությունների համար: Պահանջվում էր գործադրել այլ հանրապետություններում գործնականորեն ստուգված զանգվածային կոլեկտիվացման ձևերը և համատարած կոլեկտիվացման մեջ ընդգրկել ամբողջական գյուղեր ու շրջաններ: Հայաստանի համար առաջադրվում էր համատարած կոլեկտիվացում կատարել մեկ գավառում և երկու այլ շրջանում, ինչպես նաև մեկ հզոր գյուղատնտեսական-արդյունաբերական կոմբինատի կազմակերպումը (այն նախատեսվում էր Սարդարապատի դաշտում, ապագա ոռոգելի տարածքում): Վերջինս կրկնելու էր Ռուսաստանի Ռոստովի մարզում գործող «Գիգանտ» սովխոզ-կոմբինատի օրինակը, որն ընդգրկում էր տասնյակ հազարավոր հեկտար տարածություն, մի քանի սովխոզներով: Նման

[19] Съезды Советов в документах. 1917-1937. Том VI, М., 1964, с. 79.

հզոր տնտեսությունները, իրենց դրական օրինակով, ըստ մտահղացման, հեղաշրջող դեր էին կատարելու գյուղացիության մեջ:

Ընդ որում նման հզոր ձեռնարկություններ 1-ին հնգամյակում տեղ ունեին նաև արդյունաբերության մեջ (օրինակ՝ հիդրոկայաններ, ավելի քան 100 հազար կիլովատ հզորությամբ), որպիսի կառույցները փաստորեն երկրի ուժերից վեր էին, ուստի հետագայում բացառվեցին:

Կուսակցության կենտրոնական օրգան «Պրավդա» թերթը ևս ազգային հանրապետությունների համար հնարավոր էր համարում առանձին շրջաններում համատարած կոլեկտիվացում անցկացնելը: Նրա 1930 թ. փետրվարի 27-ի համարի առաջնորդող հոդվածը վերնագրված է՝ «Համահարթել սոցիալիստական շինարարության ճակատը», որը փաստորեն անտեսում էր ազգային հետամնաց շրջանների ուժեղ առանձնահատկությունները: Տնտեսապես և կուլտուրապես հետ մնացող հանրապետությունների թվում դնելով նաև Հայաստանը և նշելով, որ նրանցում չի կարելի համատարած կոլեկտիվացման ու կուլակության վերացման խնդիր դնել, թերթն այնուամենայնիվ գտնում է,ր որ այնտեղ տվյալ պահին «հնարավոր է կազմակերպել համատարած կոլեկտիվացման շրջաններ»:

Կուսակցության խոսքը գործի վերածելու համար շրջաններ մեկնեցին բանվորական բրիգադներ ու կուսակցական-խորհրդային աշխատողներ: Կոլեկտիվացման առջևից գնում էր Ղուրդուղուլու շրջանը, որտեղ դեկտեմբերի 5-ից սկսվեց համատարած կոլեկտիվացումը, մի քանի օրում ընդգրկելով Մեծ ու Փոքր Շահրիար, Քյալագարխ (Շենավան), Արմթլու (Տանձուտ), Աղջարխ (Արևիկ) և այլ գյուղեր: Դեկտեմբերի 19-ին Մեծ և Փոքր Շահրիար գյուղերը միմյանց հետ կնքել էին սոցիալիստական մրցության պայմանագիր այն մասին, թե որն ավելի շուտ կավարտի գյուղի կոլեկտիվացումը:

Սրանք կոլեկտիվացման առաջին խաղերն էին, որոնք 1930 թ. հունվարին զանգվածային դարձան և ընդգրկեցին ամբողջ Հայաստանը:

1930 թ. հունվարի 6-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմն ընդունեց համատարած կոլեկտիվացումն առաջ տանելու լայնածավալ ծրագիր: Այն անմիջապես կապված էր նախորդ օրը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի վերը հիշված որոշման հետ և բխում էր նրանից: Կենտկոմն ամբողջ գյուղերի ու շրջանների համատարած կոլեկտիվացումը հնարավոր էր համարում հենց առաջիկա գարնանը: Խոսքը վերաբերում էր Երևանի գավառին . Բասարգեչարի ու Դուզքենդի շրջաններին: Մի քանի օր անց կառավարությունը հաստատեց 1930 թ. ստուգիչ թվերը, ըստ որի գարնանացանը կոլտնտեսություններում դիմավորելու էր գյուղացիության 30,8 տոկոսը, բամբակացան շրջաններում՝ բոլորը, իսկ Աշտարակի ու Մեղրու շրջաններում՝ 40-50 տո-

կոսը: Այլ գավառներից համատարածը տիրելու էր Դուզքենդի, Բասարգեչարի ու Ստեփանավանի շրջաններին կամ ընդամենը 10 շրջան:

Հունվարի 15-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Երևանի կոմիտեն դիմեցին «Բոլոր կոլտնտեսություններին, բոլոր աշխատավոր գյուղացիներին» համատարած կոլեկտիվացման միջոցով «վերջնական հարված» հասցնել դասակարգային թշնամի կուլակությանը, նրան վերացնելու համար: Սա Հայաստանում կուլակության վերացման մասին առաջին փաստաթղթերից էր: Թե ինչ էր նշանակում կուլակության, որպես դասակարգի, վերացումը և ինչպես պետք է այն կատարվեր, առայժմ որոշակի պատկերացում կամ որոշում գոյություն չուներ ոչ Հայաստանում, ոչ էլ կենտրոնում:

Հունվարի 19-22-ը կայացած Անդրերկրկոմի պլենումը Հայաստանին տվեց մեկ գավառի և 4 այլ շրջանների համատարածի առաջադրանք առաջիկա գարնան համար: Դա նշանակում էր կոլեկտիվացման ընթացքի հետագա արագացում: Կուլակության հետ միասին Անդրերկրկոմը որոշման մեջ նշում էր նաև նոր բուրժուազիայի (նեպմաններ) վերացման մասին: Սա արդեն սոցիալիզմի ծավալուն հարձակումն էր կապիտալիզմի դեմ[20]: Անդրեկրկոմի պլենումի որոշումները ամրագրվեցին մի քանի օր անց Անդրկովկասի Կենտգործկոմի 5-րդ նստաշրջանի կողմից (Հայաստանին ներկայացվում էր մեկ գավառ և ոչ պակաս 4 շրջանի համատարած կոլեկտիվացման առաջադրանք)[21]:

Անդրեկրկոմի պլենումին անմիջապես հաջորդեց ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի պլենումը, որտեղ ելույթ ունեցող Կենտկոմի երկրորդ և Երևանի կոմիտեի քարտուղար Ա. Խանջյանն առաջ էր մղում կոլեկտիվացման արագացման ծրագիրը: Կոլեկտիվացումն արագորեն առաջադիմում է ինչպես Երևանի գավառում, այնպես էլ ամբողջ Հայաստանում, նշում էր Խանջյանը: Գավառներից ու շրջաններից ստացվող տեղեկությունները վկայում են, որ կյանքը ետ է թողնում նույնիսկ ամենալավատեսական ենթադրությունները: Ամեն օր նորանոր գյուղեր են բռնում համատարած կոլեկտիվացման ուղին: Կոլտնտեսությունների գաղափարը համակել է աշխատավոր գյուղացիության հսկայական մեծամասնությանը, ուստի եզրափակում էր Խանջյանը, կարելի է հաստատապես պնդել, որ «Հայաստանի սովետականացման տասներորդ տարեդարձը կվերածվի ողջ երկրի համատարած կոլեկտիվացման տոնի»:

Հենց այդպիսի ոգով ու տրամադրությամբ էին գործում հունվար ամսին գյուղ մեկնած կադրերը: Հունվարի 8-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց գյուղին օգնելու համար կադրեր պատրաստելու մասին: Կազմա-

---

[20] Заря Востока, 25 января 1930 г.
[21] Նույն տեղում:

կերպվեցին դասընթացներ, մոբիլիզացվեցին գյուղատնտես-մասնագետները, հաշվային աշխատողները, մի խումբ «պատասխանատու աշխատողներ», վերջապես բանվոր 25-հազարականները: Շեֆական օգնություն էին կազմակերպում կարմիրբանակայինները: Միայն 1929-1930 թթ. ձմռան ընթացքում տարբեր դասընթացներով անցավ ավելի քան 7500 մարդ: Մշտական և ժամանակավոր աշխատանքի համար շրջան և գյուղ մեկնեց 200 մարդ: Գյուղի վրա մեծ ներգործություն ունեցան հատկապես 25-հազարականները: Անդրերկրկոմի որոշումով գյուղ էին մեկնելու 500, այդ թվում Հայաստանում 150 25-հազարականներ (նրանց մի մասը ժամանեց արդյունաբերական Բաքվից): Նրանց առաջին հերթը գյուղ էր մեկնելու փետրվարի 1-ին:

Քսանհինգհազարականների և բանվորական բրիգադների կազմակերպումը իրականացնում էին արհմիութենական կազմակերպությունները: Լենինականի երկաթուղային դեպոն իր բանվորներին պատվիրում էր օգնել գյուղի չքավորներին ու միջակներին «իրենց տնտեսությունները սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու գործում և ավելի ուժեղացնելու հարձակումը գյուղի կապիտալիստական տարրերի վրա»:

Դրա համար էին գործում բոլորը, ովքեր գյուղ էին մեկնում 1929 թ. դեկտեմբեր և 1930 թ. հունվար և հետագա ամիսներին: Եվ քանի որ գյուղացին, չքավոր, թե միջակ, պատրաստ չէր, ավելի ճիշտ ցանկություն չուներ միանգամից փոխել իր կացությունը և դառնալ կոլտնտեսական, ուստի նրա վրա ճնշում էր գործադրվում կամ, պարզապես, թղթի վրա, գրում էին, թե գյուղն արդեն կոլտնտեսություն է, իսկ գյուղացին՝ կոլտնտեսական:

Կոլեկտիվացման առջևում էր, ըստ վիճակագրական տվյալների, Երևանի գավառը: Մինչև 1930 թ. հունվարի 10-ը գավառի Ղուրդուղուլու շրջանում գյուղերի մեծ մասը կոլեկտիվացման խնդիրը «լուծել էր», իսկ ամբողջ շրջանի համար արձանագրվեց 56 տոկոսի կոլեկտիվացման ցուցանիշը: Նույն գավառում Ղամարլուի կուսշրջկոմը հունվարը հայտարարել էր կոլեկտիվացման ամիս, որի համար շրջանում գործում էին մի քանի բրիգադներ: Գավառի Վաղարշապատի կուսշրջկոմը հնարավոր համարեց բոլոր բամբակագործների կոլեկտիվացումը մինչև առաջիկա գարնանացանը: Այս շրջանի մասին վավերագիրը վկայում է. «Գյուղը ուղղակի փոթորկվում, եռում է: Յուրաքանչյուր գյուղացիական ընտանիքում քննարկվում է կոլտնտեսություն մտնել-չմտնելու հարցը»: Գյուղացիները, ըստ մի այլ փաստաթղթի, արտահայտում էին նաև կարծիք, թե կոլտնտեսությունը նախ պետք է ցույց տա իր արդյունքները, որից հետո միայն կլուծենք ընդունվելու հարցը:

Հունվարի 23-24-ը կայացած Երևանի կոմիտեի պլենումում Ա. Խանջյանը հայտարարեց, որ հունվարի սկզբին սկսված գավառի համատարածը կարող է վճռվել առաջիկա ամիսների ընթացքում:

Լենինականի կուսգավկոմը, Դուզբենդից բացի, իր հերթին ծրագրեց համատարած կոլեկտիվացման ենթարկել նաև Աղբաբայի և Ղզլղոչի շրջանները: Հունվարի 14-ին գյուղացիական «Մաճկալ» թերթը հայտնում էր այն մասին, թե Լենինականից (Գյումրի) ու Ղարաքիլիսայից (Վանաձոր) Աղբաբայի, Ղզլղոչի ու Ստեփանավանի շրջաններ են մեկնել «50-ական հոգուց բաղկացած բրիգադներ՝ այդ շրջաններում համատարած կոլեկտիվացում անցկացնելու համար»:

Լոռու գավկոմը 1930 թ. հունվարի 9-ի որոշումով Ստեփանավանի շրջանից բացի համատարած կոլեկտիվացման էր ենթարկում նաև Իջևանի շրջանը և հունվարի 15-ից մինչև փետրվարի 15-ը կոլեկտիվացման միամսյակ էր հայտարարել: Շահալի երկաթուղային կայարանի երկու բանվորական բրիգադներ իրենց համապատասխան պարտականությունը կատարում էին Ղամշկուտ (Եղեգնուտ) և Շահալի (Վահագն) գյուղերում:

Սևանի գավառում, որտեղ կոլեկտիվացումը 1930 թ. հունվար 1-ին կազմում էր 1,9 տոկոս, կուսակցական ղեկավարությունը, ծանոթանալով գավառի ստուգիչ թվերին, կազմակերպություններին առաջարկեց «բոլոր միջոցները ձեռնարկել անպայման ընդունված թվերի կատարման և այնտեղ, ուր հնարավոր կլինի, գերակատարման համար: Կենտրոնից գործուղված ընկերների հետ միասին գավառի պատասխանատու աշխատողները հունվարի 15-ից սկսել էին Բասարգեչարի շրջանը համատարածի ենթարկել: Հունվարի վերջին գավառից հայտնում էին, որ կոլեկտիվացման 19 տոկոսի պլանը կատարված է, իսկ բազմաթիվ գյուղերում իրականություն է համատարածը:

Այսպես էր «առաջադիմում» գյուղատնտեսության կոլեկտիվացումը Հայաստանում, որտեղ փետրվարի 10-ի դրությամբ կոլեկտիվացումը բարձրացել էր 62,7 տոկոսի մակարդակը: Գավառների տվյալներն էին՝ Երևան՝ 73,1, Լենինական՝ 65,6, Լոռի՝ 67,1, Սևան՝ 50,0 և Զանգեզուր՝ 30,7 տոկոս: «Նույնիսկ հետամնաց ու հեռավոր շրջաններում և գյուղերում կոլտնտշինարարության տեմպն արագանում է օրեցօր», հայտնում էր «Խորհրդային Հայաստան» թերթի 1930 թ. փետրվարի 1-ի առաջնորդող հոդվածը:

Այդ «հաջողությունները», սակայն, իրական չէին, գրված էին միայն թղթի վրա, և որ ամենաէականն է, կոլեկտիվացման համար խիստ բռնություն էր գործադրվել գյուղացու, առաջին հերթին միջակի, նկատմամբ: Նրան վախեցնում էին Սիբիրի աքսորով, «կուլակաթափությամբ» և այլ

սպառնալիքներով: Կոլեկտիվացման գործընթացում բռնություններ, կամավորության սկզբունքի խախտումներ և այլ կարգի սխալներ էին թույլ տրվել ոչ միայն Հայաստանում ու Անդրկովկասում, այլև ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում: Այդ սխալները հղի էին լուրջ վտանգով ամբողջ երկրի և խորհրդային իշխանության համար: Ուստի սկսվեց սխալներն ուղղելու տևական ու ծանր գործընթաց: Հարցին վերաբերող առաջին փաստաթղթերից են Անդրերկրկոմ ուղարկած ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հունվարի 30-ի հեռագիրը և նույնի նամակը, հասցեագրված Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի կոմկուսների կենտկոմներին: Նույնպիսի զգուշացումներ արվեցին նաև երկրի մյուս կազմակերպություններին: ՀամԿ(բ)Կ Կենտկոմը դատապարտում էր կամավորության սկզբունքի խախտումները, վարչարարությունը, պահանջելով վճռականապես ուղղել դրանք: Պարզաբանվում էր նաև այն հարցը, թե արմատապես սխալ է կոլեկտիվացման գործի փոխարեն ամբողջ ուշադրությունը ապակուլակացման վրա կենտրոնացնելը, որպիսին տեղ էր գտել շատ վայրերում[22]:

Մարտի 2-ին մամուլում տպագրվեց Ստալինի «Գլխապտույտ հաջողություններից» հոդվածը, որի ոգով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն մարտի 10-ին կայացրեց «Կոլտնտեսային շարժման մեջ կուսգծի ծռումների դեմ պայքարելու մասին» կուսկոմիտեներին ուղղված որոշումը[23]: Վերջինիս հիման վրա մարտի 14-ին նույնպիսի որոշում ընդունեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմը, որը հաջորդ օրը տպագրվեց միութենական մամուլում[24]:

Մարտի 2-ին մամուլում հրապարակվեց Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը, որը վերամշակվել էր և լուծում էր տալիս կոլտնտեսությանը և նրա անդամներին վերաբերող հարցերին:

Խոսելով կոլեկտիվացման գործում թույլ տված սխալները (վարչարարություն, եկեղեցիների վարչական կարգով փակում, շուկաների վերացում) ուղղելու անհրաժեշտության մասին, Ստալինը դրանք վերագրեց «կուսակցության մի մասի շարքերի ... քյալլագյոզական տրամադրություններին», որոնք հաջողություններից արբեցած, կորցրել էին չափի զգացումը և տարվել իրենց ամենակարողությամբ: Ստալինը ոչ միայն չափազանցնում ու գերագնահատում էր կոլեկտիվացման «հաջողությունները»,

---

[22] Очерки истории коммунистических организаций Закавказья. Часть 2-я, Баку, 1971, с. 164-165. Ленинский кооперативный план и борьба партии за его осуществление. М., 1969, с. 109-110.

[23] Вадим Кожинов. Россия. Век XX. 1901-1939, с. 361. Հեղինակը հենվում է Н. А. Ивницкий. Коллективизация и раскулачивание (начало 30-х годов). М., 1996, с. 103-104.

[24] ՍՍԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: II մաս, էջ 844-848:

այլև կեղծում էր դրանք: Ըստ նրա 1930 թ. փետրվարի 20-ի դրությամբ իբրև թե կոլեկտիվացումն ընդգրկել էր գյուղացիների կեսին, և թե իբր հաջողության գաղտնիքը կամավորության և երկրի տարբեր շրջանների բազմազանությունը հաշվի առնելն էր: Անիրական տվյալների վրա էր հենվում Ստալինի այն եզրակացությունը, թե ապահովված կարելի է համարել «գյուղի արմատական շրջադարձը դեպի սոցիալիզմ»:

Իրականում գյուղը ոչ միայն սոցիալիզմի համար, այլ սոցիալիզմի (բռնությամբ կոլտնտեսություններ կազմակերպելու) դեմ դեռևս շարունակելու էր դիմադրել ու պայքարել:

Մեկ ամիս անց, ապրիլի 2-ին, Ստալինի կողմից վերստին հոդվածով («Պատասխան կոլտնտեսականներին») հանդես գալը նշանակում էր, որ գյուղի դրությունը շարունակում էր մնալ անհանգստացնող: Այս դեպքում սխալների հեղինակները և հաջողություններից արբեցածները «մի քանի ընկերներ» կամ «կապը կտրած ընկերներ» էին, իսկ «անդրկովկասցիների ու թուրքեստանցիների» սխալն այն էր, որ նրանք առաջավոր շրջաններին հասնելու և անցնելու իրենց բուռն ձգտումով կողմնորոշվել էին դեպի կոլեկտիվացումը ամենակարճ ժամկետում ավարտելը, չնայած նրանք ունեին ժամանակ մինչև հնգամյակի վերջը (1933 թ.):

Ստալինն էր գլխավոր հեղինակը և պատճառը այն բոլոր սխալների, որոնք վերագրվում էին «հաջողություններից արբեցածներին», հանրապետական ու տեղական կազմակերպություններին ու գործիչներին: Ստալինը, մի կողմից, քննադատում էր «ձախ» թեքման արտահայտությունները, սակայն ինքն իրականում ղեկավարվում և կենսագործում էր կոլեկտիվացման հարցի նկատմամբ տրոցկիստական մոտեցումը: Մյուս կողմից, քննադատում էր հետ մնալը, այն որակելով աջ թեքում: Կուսակցական ղեկավարման բոլոր մակարդակներում օրակարգում մշտապես պահպանվել է երկու թեքումների քննադատությունն էլ՝ ըստ անհրաժեշտության կամ պահանջի:

Ստալինի հոդվածն առնչվում էր ՀամԿ(բ)Կ Կենտկոմի նույն օրվա «փակ նամակի» հետ: «Կուսակցական գծի ծռումների դեմ պայքարի հետ կապված կոլտնտեսային շարժման խնդիրների մասին» նամակով Կենտկոմը դիմում էր կուսակցական կազմակերպություններին, փաստորեն խոստովանելով, որ երկրում ստեղծվել է «սպառնալից դրություն»: Այնուհետև թվարկվում են այն խնդիրները, որոնք պարտավորվում էին իրականացնել տեղական կազմակերպությունները իրենց թույլ տված սխալներն ուղղելու համար[25]:

---

[25] Документы свидетельствуют, с. 387-394.

Այստեղ ևս մեղքը բարդված է տեղական կազմակերպությունների վրա, որոնք ծռել էին կուսակցության ճիշտ գիծը:

Տարիներ անց, Կենտկոմի 1937 թ. փետրվար-մարտյան պլենումում Ստալինը սեփական (ոչ իր) սխալների վրա սովորելու օրինակ մատնանշեց 1930 թ. կոլտնտշինարարությունը: Կոլտնտեսային տասնյակ հազարավոր «հիանալի» կադրերը, ըստ Ստալինի, սովորել ու դաստիարակվել էին 1930 թ. սխալների վրա: Այդ կադրերը չէինք ունենա, հայտարարում էր Ստալինը, եթե կուսակցությունը չգիտակցեր իր սխալները և չուղղեր դրանք ժամանակին: «Մեր ընկերները», ավելացնում է Ստալինը, մոռացել էին կամավորության սկզբունքը, ընկել գլխապտույտ հաջողությունների մեջ և չէին ցանկանում ընդունել իրենց սխալները[26]:

Այս դեպքում ևս, ինչպես միշտ, Ստալինը չէր ցանկանում նկատել իր անձնական սխալների դերը կոլտնտշինարարության մեջ և փաստորեն մեղքը թողնում է «մեր ընկերների» վրա, որը տվյալ դեպքում նույնանում է «կուսակցության» հետ:

Պարզվում է, որ, այնուամենայնիվ, գտնվել են տեղնուտեղը Ստալինին առարկողներ, ովքեր «Պրավդա» թերթի խմբագրություն ուղարկած նամակներում համարձակվել են մատնացույց անել նաև նրա (Ստալինի) սխալների վրա:

Միթե մեղավոր է նա, գրել է Դնեպրոպետրովսկից մի բանվոր, որ ականջալուր չի եղել կոլեկտիվացման թոհուբոհին: «Մենք, ներքևում գտնվողներս և մամուլը, վրիպեցինք այդ հիմնական հարցում ..., իսկ ընկ. Ստալինը այդ ժամանակ հավանաբար քնած էր աժդահայի քնով և չէր նկատում ու լսում մեր սխալները»: Հետևաբար, եզրակացվում էր նամակում, պետք է ձգել նաև Ստալինին: «Այժմ,- շարունակում է նամակագիրը,- Ստալինը մեղքը բարդում է տեղերի վրա և պաշտպանում իրեն ու վերնախավին»: Մի այլ նամակում հեղինակը զարմանք է հայտնել, թե ինչպես է կուսակցությունը հանդուրժում «այդպիսի տիպին», «թող ապրի կոմունիստական կուսակցությունը, բայց առանց ստալինյան կանոնների»[27]: Որքան համարձակ ու ճշմարիտ է ասված: 1930 թ. դեռ կարելի է եղել ինչ-որ չափով լինել խիզախ, արտահայտել սեփական դատողություններ, որպիսին

---

[26] О недостатках партийной работы и мерах ликвидации троцкистских и иных двурушников. Партиздат ЦК ВКП (б), 1937, с. 38-39.

[27] Г. Бордюгов, , В. Козлов, "Революция сверху" и трагедия "чрезвычайщины", "Литературная газета", 12 октября 1988 г. Документы свидетельствуют", с. 381-382.

անհնար պիտի դառնար մի քանի տարի անց, հատկապես Կիրովի սպանությունից հետո:

Բարձրագույն որոշումներին ու ցուցումներին հետևեցին անդրկովկասյան և հանրապետական բազմաթիվ որոշումներ ու միջոցառումներ՝ կոլտնտեսային շարժումը կազմակերպված հունի մեջ դնելու, գյուղի լարված դրությունը հանգստացնելու համար: Նշենք, որ միայն մայիս ամսվա փաստաթղթերում այդ մարմիններն ընդունեցին նաև իրենց կողմից թույլ տված սխալների մասին, վերջապես հրաժարվելով համատարած կոլեկտիվացման քաղաքականությունից, որի (իրականացման) համար Հայաստանում չկար որևէ հիմք:

Համատարած կոլեկտիվացումը, որը փաստորեն ծախողվեց, ուղեկցվում էր կուլակության, որպես դասակարգի, վերացումով:

1929 թ. վերջին, երբ երկրում զարկ տրվեց կոլեկտիվացմանը, միաժամանակ բարձրացավ այն հարցը, թե ինչպես պետք էր վարվել կուլակության հետ: Թույլ տա՞լ նրան մտնել կոլտնտեսություն: Եթե ոչ՝ ի՞նչ ճակատագիր էր սպասվում: Հարցի պատասխանը տվեց Ստալինը, որը նաև հարկադրական կոլեկտիվացման և դրա ընթացքի արագացման նախաձեռնողն ու հեղինակն էր: 1929 թ. դեկտեմբերին մարքսիստ ագրարագետների կոնֆերանսում բացատրելով գյուղում «կապիտալիստական տարրերի դեմ» ամբողջ ճակատով հարձակում կատարելու նշանակությունը, Ստալինը նշում էր, որ կուլակության շահագործողական հակումները սահմանափակելու քաղաքականությունից, որպիսին կիրառվում էր մինչև այդ, երկիրն անցել է «կուլակությունը, որպես դասակարգ, վերացնելու քաղաքականությանը»[28]: Իսկ թե կոնկրետ ինչ էր նշանակում այդ նոր քաղաքականությունը և ինչպես պետք է այն իրականացվեր այդ որոշվեց ավելի ուշ:

Տեսականորեն (մարքսիզմ-լենինիզմ) հայտնի էր, որ կուլակը (ռուսերեն "кулак" բառացի բառն է) գյուղի ունևոր վերնախավն է, գյուղական բուրժուազիան, որի բնորոշման չափանիշը, ըստ Լենինի, ուրիշի աշխատանքի շահագործումն էր: Ռուսաստանի 1918-1920 թթ. քաղաքացիական պատերազմի կապակցությամբ անդրադառնալով էնգելսի այն ենթադրությանը, թե բացառված չէ, որ «մենք հրաժարվենք խոշոր գյուղացիների (կուլակներ – Վ. Ղ.) սեփականազրկումից»[29], գտնում էր, որ դա անկարելի է Ռուսաստանում, քանի որ նա ակտիվորեն կռվել է խորհրդային իշխանության դեմ:

1920-ական թվականներին գործնական նշանակություն ստացավ կուլակին որոշելու, նրա չափանիշները սահմանելու հարցը: Իրականության մեջ ղեկավարվում էին տնտեսական դրությամբ, գյուղացու տնտեսական կարողության մակարդակով (ցանք, անասուններ և այլն): Մինչդեռ «կուլակը» սոցիալական հասկացություն է, ուստի հարկավոր էր բացահայտել գյուղացու համապատասխան հատկանիշները տարբերելու համար աշխատավորական տնտեսություն վարող գյուղացուն շահագործողից: Հարցի լուծումը կարևորվեց հատկապես 1920-ական թվականների վերջին, երբ խորհրդային իշխանությունը սկսեց ավելի տարբերակված հար-

---

[28] Ի. Ստալին, Երկեր, հ. 12, էջ 186:
[29] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 29, М., 1962, с. 523.

կային քաղաքականություն վարել գյուղացիության սոցիալական շերտերի նկատմամբ. չքավորներն ազատվում էին հարկից, միջակները հարկվում էին չափավոր (ինչպես մինչև այդ), իսկ հարկի ծանրությունը դրվեց ունևոր-կուլակային տնտեսությունների վրա: Վերջինները, ավելի ճիշտ նրանց վերնախավը, 1928 թ. հարկադրվում էր անհատական կարգով: 1930 թ. անհատական հարկումը տարածվեց բոլոր «կուլակային» տնտեսությունների վրա:

Հարկային նոր քաղաքականության կապակցությամբ ամենամյա հարկային օրենքներում ներկայացվում էին նաև կուլակային տնտեսության հատկանիշները:

Անհատական կարգով հարկելու համար տնտեսությունը պետք է ունենար ներքոհիշյալ հատկանիշներից որևէ մեկը կամ մի քանիսը. անընդմեջ վարձու աշխատանքի օգտագործում, երբ վարձակալության չափը (օրերի թիվ) գերազանցում էր աշխատավորական տնտեսության համար սահմանված վարձու աշխատանքի առավելագույն չափը, արդյունաբերական ձեռնարկության առկայությունը (մեքենայական շարժիչով), աղացի օգտագործումից որոշակի եկամուտ ստանալը, բարդ գյուղատնտեսական մեքենա աշխատեցնելը, ինչպես նաև սարքավորված շենքերը անընդմեջ վարձով տալը, հողը կապալով վերցնելը (ստրկացուցիչ պայմաններով հողատիրոջ համար), առևտրով ու վաշխառությամբ զբաղվելը և այլն: Կուլակների մեջ էին դասվում նաև գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղական բոլոր քահանաները:

Նոր հարկային քաղաքականությանն անցնելու կապակցությամբ խորհրդային իշխանությունը, տնտեսագետ գիտնականների օգնությամբ, ձեռնամուխ եղավ գյուղի սոցիալական շերտերի գիտական ուսումնասիրությանը: Նշենք, որ այդ հետազոտությունը պահանջում էր ԽՍՀՄ տարբեր շրջանների ու հանրապետությունների համար ունենալ տարբերակված մոտեցում և չափանիշներ, որովհետև փորձը ցույց էր տալիս, որ ընդհանուր չափանիշների կիրառման դեպքում ստացվում էին իրականությունից հեռու արդյունքներ: Գիտական ուսումնասիրություններ էին կատարվում նաև Անդրկովկասի դաշնության հանրապետություններում: Սակայն գործն ավարտի չհասավ, երբ վրա հասավ «համատարած կոլեկտիվացումը» և ծավալված ուսումնասիրություններն ընդհատվեցին: Այնուամենայնիվ ԽՍՀՄ բարձրագույն մարմինները վերևից հրահանգավորում էին կուլակների տեսակարար կշռի, ընդ որում տարբերակված, ծավալներ:

Ստալինի վերոհիշյալ ելույթից հետո ընդունված 1930 թ. հունվարի 5-ի որոշման մեջ, որի հիման վրա արագացված ընթացք էր տրվում համատարած կոլեկտիվացմանը, միայն ընդհանուր ձևով էր խոսվում կուլակութ-

յան մասին՝ թե պետք է անցնել կուլակության, որպես դասակարգի, վերացման քաղաքականությանը, և որ՝ չի թույլատրվում կուլակներին կոլտնտեսության մեջ ընդունել: «Պրավդա» թերթի հունվարի 11-ի առաջնորդողը կոչվում էր՝ «Օրակարգային է դառնում կուլակության, որպես դասակարգի, վերացումը»: Կոչ էր արվում նրան վերացնել երկրի երեսից: Հարցը լուծում ստացավ միայն ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1930 թ. հունվարի 30-ի և ԽՍՀՄ Կենտգործկոմի ու ժողկոմխորհի փետրվարի 1-ի որոշումներով: Կուլակությունը, ըստ խորհրդային իշխանության նկատմամբ նրա թշնամական վերաբերմունքի աստիճանի, բաժանվում էր 3 կատեգորիայի: 1-ին կատեգորիան դատական մարմինների որոշմամբ ենթակա էր մեկուսացման, իսկ այդ կատեգորիայի ամենաթշնամական տարրերը գնդակահարության: Երկրորդ կատեգորիան աքսորվում էր երկրի սակավաբնակ շրջաններ: Երրորդ կատեգորիան, որն ամենաբազմամարդն էր, վերաբնակեցվելու էր կոլտնտեսությունների սահմաններից դուրս գտնվող հողերում: Որոշման կենսագործումը հանձնարարվեց Միացյալ պետքաղվարչության մարմիններին, որի համար նրանց հրաման էր իջեցվել ավելի վաղ հունվարի 18-ին[30]:

Այս որոշումներում որևէ վերապահություն չէր արվում միութենական հանրապետությունների համար: Հետևաբար պետք է կարծել, որ բերված որոշումները հավասարապես վերաբերում էին ԽՍՀՄ վիթխարի ամբողջ տարածքին: Մինչդեռ դրա (տարբերակման) կարիքը կար: 1930 թ. փետրվարի 20-ի «Տնտեսապես հետամնաց ազգային շրջաններում կոլեկտիվացման և կուլակության դեմ պայքարելու մասին» որոշմամբ սահմանվեցին որոշ տարբերություններ: «Տնտեսապես հետամնաց» ազգային շրջանների մեջ մտնում էին Անդրկովկասը, Միջին Ասիան և այլ տարածաշրջաններ:

Ազգային շրջաններում կուլակության 1-ին կատեգորիային պատկանում էին հակահեղափոխական ակտիվ տարրերը, այն է բանդիտիզմի և հակահեղափոխական կազմակերպությունների կազմակերպիչները, մասնակիցները և կողմնակիցները: Նրանք ենթակա էին մեկուսացման համակենտրոնացման ճամբարներում, իսկ նրանցից առավել վտանգավորները ենթակա էին պատժի բարձրագույն չափին՝ գնդակահարության: Ազգային շրջաններում առաջին կատեգորիայի համար նախատեսվում էին «սահմանափակ» թվով կուլակներ, ընդամենը 3000 մարդ, այդ թվում Անդրկովկասում՝ 1200 մարդ: Երկրորդ և երրորդ կատեգորիայի կուլակները, ի տարբերություն ԽՍՀՄ հացահատիկային շրջանների, միավորվում էին մեկ կատեգորիայի մեջ: Նրանք հեռացվում էին իրենց բնակավայրերից և ցրիվ

---

[30] Ал. Яковлев. Крестосев. М. 2000, с. 109.

տրվում տվյալ հանրապետության սահմաններում, պետական սահմանից հեռու, վատորակ հողերում:

Անդրկովկասում, բացի դրանից, հանրապետություններից արտաքսվում էին ոչ բնիկ ազգությունների 200 ընտանիք: Բոլոր կատեգորիաների կուլակային տնտեսությունների թիվը չէր գերազանցելու գյուղացիական տնտեսությունների 2-3 տոկոսը, ի տարբերություն հացահատիկային շրջանների 3-5 տոկոսի:

Միութենական որոշումներին հետևեցին անդրդաշնայինը և հանրապետականը՝ ի գործադրություն և տեղայնացում: ՀԿ(բ)Կ Կենտկոմի մարտի 10-ի որոշումով Հայաստանում առաջին կատեգորիայի կուլակները «կուլակաթափվելու» (ունեզրկելու) և արտաքսվելու էին հանրապետության սահմաններից: Պետքաղվարչության (նախկին արտակարգ հանձնաժողով) մարմիններին հանձնարարվեց որոշել լրացուցիչ մեկուսացման ու արտաքսման ենթակա առաջին կատեգորիայի կուլակների թիվը և, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հետ համաձայնեցնելով, իրականացնել այն տաս օրվա ընթացքում: Սրանց ընատնիքների անդամները և մյուս բոլոր կուլակները (երկրորդ և երրորդ կատեգորիա) հեռացվելու էին համատարած կոլեկտիվացման շրջաններից և տարաբնակեցվելու Սևանի գավառի Բասարգեչարի ու Կրասնոսելսկի շրջաններում: Նշենք, որ ավելի վաղ, փետրվարի 3-ի ՀՍԽՀ ժողկոմխորհի որոշումով կուլակների (200 ընտանիք) արտաքսման համար առանձնացվել էին Դարալագյազի, Մարտունու, Կրասնոսելսկի և Աղբաբայի շրջանները:

Ընդ որում, ավելացնենք, որ Հայաստանում «ապակուլակացման» մասին խոսող առաջին փաստաթղթերից է հանրապետության Կոլտնտկենտրոնի հունվարի 31-ի շրջաբերականը՝ հասցեագրված իր տեղական մարմիններին (կոլտնտեսային ինքնավար սեկցիաներ, գավառակային և խմբակային կամ փնջային միություններ), որը վերաբերում էր կուլակներից բռնագրավվող արտադրամիջոցների գրանցման և դրանք կոլտնտեսություններին հանձնելու հարցին:

1930 թ. հունվար-փետրվար ամիսներին Հայաստանում համատարած կոլեկտիվացման համար նախատեսվել էր 11 շրջան (նշենք, որ տվյալ պահին Հայաստանի 5 գավառներն ընդգրկում էին 31 շրջան): Այն շրջաններում, որտեղ համատարած կոլեկտիվացում չէր իրականացվում, շարունակվելու էր նախկին՝ կուլակությանը սահմանափակելու և նրա դեմ հարձակումն ուժեղացնելու քաղաքականությունը, նախապատրաստելով այդ շրջանների համատարած կոլեկտիվացումը:

Համատարած կոլեկտիվացումն ընթացքի մեջ էր, երբ բացահայտվեց, որ ընդհանրապես, ամբող ԽՍՀՄ-ում կոլեկտիվացման քաղաքակա-

նությունը կենսագործվում է գյուղացիության, հատկապես միջակ շերտի, նկատմամբ բռնությամբ, կոպիտ սխալներով, որի հետևանքը դարձավ գյուղում քաղաքական լարված իրադրության ստեղծումը: Վերին մարմինները մեղքը բարդեցին տեղականների վրա և պահանջեցին ուղղել թույլ տված սխալները: Կոլեկտիվացման մակընթացությանը հաջորդեց նրա տեղատվությունը: Հայաստանի ղեկավարությունը սկսեց կրճատել համատարած կոլեկտիվացման ենթակա շրջանների թիվը և, ի վերջո, 1930 թ. կեսերին ստիպված եղավ լրիվ հրաժարվել համատարած կոլեկտիվացման կարգախոսից: Կարգախոսը, ճիշտ է, հանվեց, բայց իրականացված կուլակաթափությունը մնաց փաստ: Ոչ համատարած կոլեկտիվացման շրջանների «կուլակաթափությունը» ենթակա էր ուղղման, այսինքն տերերին պետք է վերադարձվեին նրանցից բռնագրավված գույքը և ունեցվածքը: Ինչ վերաբերում է համատարած կոլեկտիվացման շրջաններին, ապա այստեղ համապատասխան կարգախոսից հրաժարվելը չէր նշանակում, թե սխալ է թույլ տրվել:

Հանրապետության Կենտգործկոմ ներկայացված ցուցակների օգնությամբ կարելի է հաշվարկել կուլակաթափության արդյունքները: Դրա համաձայն Հայաստանում «կուլակաթափություն» էր կատարվել շուրջ 1100 տնտեսությունների նկատմամբ: Դրանից հանելով սխալների ուղղման տվյալները, կունենաք 800-900 ունեզրկված կուլակային տնտեսություն:

«Ապակուլակացված» տնտեսությունների տոկոսային հարաբերակցությունը պարզելու կապակցությամբ հարկավոր է անդրադառնալ բոլոր կուլակային տնտեսությունների վերաբերյալ տվյալներին: Ինչպես նշվել է, ունևոր-կուլակային տնտեսությունների բնորոշման գիտական ուսումնասիրությունները վերջնական արդյունքի չհանգեցին: Ուստի մնում է հենվել միակ՝ հարկային տվյալների վրա: Նշենք, որ 1928/29 և 1929/30 հարկային տարիներին անհատական կարգով հարկվել է ունևոր-կուլակային տնտեսությունների վերնախավը, այնուհետև՝ բոլորը:

Այսպես, 1928/29 տարում անհատական կարգով հարկվել է 2623 և 1929/30 տարում՝ 2382 տնտեսություն (կուլակային վերնախավը): Այնուհետև հարկված բոլոր կուլակային տնտեսությունների տվյալներն են. 1930/31 հարկային տարի 2092 և 1932 թ. 1987 տնտեսություն: Բոլոր գյուղացիական տնտեսությունների մեջ (1931 թվականին տվյալները ճշտվել են, որոնց հիման վրա էլ կուլակների տոկոսային տվյալները նվազել են) հարկվածների տեսակարար կշիռը, ըստ բերված չորս տարիների, այսպիսին է. 1,4 (1928/29 տարի), 1,3, (1929/30 տարի), 1,1 (1930/31 տարի) և 1,0 տոկոս (1932 թ.):

Համատարած կոլեկտիվացման նախօրյակի՝ 1929 թ. համար կուլակների ընդհանուր թիվը կարելի է պարզել 1930/31 տարվա տվյալներին ավելացնելով կուլակաթափվածների թիվը (2092-ին գումարած 800-900), կստացվի շուրջ 3000 տնտեսություն, որը կազմում է բոլոր գյուղացիական տնտեսությունների 1,65 տոկոսը: Տվյալներից նաև հետևում է, որ 1930 թ. Հայաստանում կուլակաթափվել է բոլոր կուլակների 28,0 տոկոսը:

Համեմատության համար նշենք, որ Անդրկովկասում կուլակաթափված տնտեսությունների թիվը գրականության մեջ ցույց է տրվել 20-25 տոկոս[31]: Այդքան են նաև ԽՍՀՄ տվյալները 1930-1932 թթ. համար[32]:

1930 թ. կեսերից Հայաստանում համատարած կոլեկտիվացման քաղաքականությունն այլևս չէր գործում և ամբողջ հանրապետությունում ուժի մեջ էր կուլակությանը սահմանափակելու և նրա դեմ ճնշումն ուժեղացնելու քաղաքականությունը, որը նշանակում էր «կուլակաթափությունը» շարունակել այլ միջոցներով ու ձևերով:

Համատարած կոլեկտիվացման և կուլակության վերացման քաղաքականությանն անցնելը ժամանակի տեսակետից համընկավ առաջին հնգամյակի հետ: Դա պատահական զուգադիպություն չէր: ԽՍՀՄ հսկա տարածություններում ծավալվել էր վիթխարի շինարարություն, որը պետք էր ապահովել բանվորական ուժով, հատկապես երկրի անմատչելի վայրերի համար (հյուսիս, Սիբիր և այլն): Այսինքն կուլակության վերացումը նպատակ ուներ սոցիալ-քաղաքականի հետ մեկտեղ լուծել նաև տնտեսական-քաղաքական խնդիրներ:

1931 թ. մարտին, երբ ԽՍՀՄ-ում սկսվել էր կուլակաթափության նոր փուլ, ստեղծվեց հատուկ հանձնաժողով, ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Ա. Անդրեևի նախագահությամբ: Հանձնաժողովը զբաղվում էր կուլակաթափված տնտեսություններին (վերաբնակիչներին) երկրի շրջաններում տեղաբաշխելու գործով: Տեղաբաշխումը կատարվում էր ըստ տնտեսական միավորումների ու ձեռնարկությունների պատվերների: Այսպես, հանձնաժողովի միայն մեկ նիստով (30 հուլիսի 1931 թ.) ընդունվել են հետևյալ որոշումները. ժողտնտգերխորհին պարտավորեցնել կարճ ժամանակում Միացյալ պետքաղվարչությանը ներկայացնել իր պատվերները հատուկ վերաբնակների գծով: տասնյակ հազարավոր կուլակաթափվածների պատվերներ ունեին Վոստոկստալը, Ցվետմետզոլոտոն, ՎԱՏՈ ավտոստրոյը, Կիզիլի և Չելյաբինսկի ածխարդյունաբերությունը և այլ միավորումներ:

---

[31] П. Ломашвили. Великий переворот. Тбилиси, 1972, с. 265.
[32] История СССР. Том VIII, М., 1967, с. 572.

Սկզբում հատուկ վերաբնակների կառավարումն իրականացնում էին տնտեսական միավորումները, այնուհետև կառավարումը կենտրոնացվեց Միացյալ պետքաղվարչության ձեռքում[33]: Հետագայում ստեղծվեցին տխրահռչակ Գուլագները (ճամբարների պետական վարչություններ):

Խորհրդային մարմինների սրատես աչքից չվրիպեցին նաև այն մի քանի տասնյակ գյուղացիները, ովքեր Ռուսաստանի և Ուկրաինայի տարբեր մարզերում ունեզրկվելուց հետո կամ սարսափելի սովի (1932-1933 թթ.) պատճառով փախուստ էին տվել նաև դեպի Հայաստան՝ աշխատանք գտնելու և սովամահության չմատնվելու համար: Նրանք ապաստան էին գտել Երևանում (տարբեր շինարարություններում) և Ստեփանավանի շրջանի ու այլ ռուսաբնակ գյուղերի բնակչության միջավայրում: Անդրպետքաղվարչությունը հրահանգավորել էր նրանց բոլորին դատապարտել և 5 տարով նետել համակենտրոնացման ճամբար, ընտանիքի առկայության դեպքում՝ հատուկ բնակավայր:

Մի մեղադրական եզրակացությամբ, որում բերված է 41 մարդու անուն (գործ 4387, 1931 թ.) մեղադրանք է ձևակերպված, թե ԽՍՀՄ համատարած կոլեկտիվացման շրջաններից կուլակությունը և զանազան հակախորհրդային տարրեր, աշխատանք որոնելու քողի տակ, թաքնվում են Հայաստանի սահմաններում՝ «իրենց իսկական քաղաքական դեմքը ցույց չտալու նպատակով»[34]: Մի այլ մեղադրական գործ (4416) ներկայացնում է ութ մարդու (Ստեփանավանի շրջանից)՝ մեղադրանքի նույնպիսի բովանդակությամբ[35]: Վաղարշապատի շրջանի 3-րդ սովխոզում էր աշխատում 1932 թ. Օդեսայի մարզից հեռացած գյուղացին, կնոջ հետ միասին: Նա ժխտում էր, թե կուլակ է եղել[36]:

Հայպետքաղվարչության դատական կոլեգիայի կողմից 5 տարվա համակենտրոնացման ճամբարի որոշում ստացած Ուկրաինայի Վեսելովսկի շրջանի գյուղացու, որը 1930 թ. բնակություն էր հաստատել Երևանում և աշխատում էր որպես բանվոր, մեղադրական եզրակացությունը արձանագրում էր, որ «Հյուսիսային Կովկասում, Ուկրաինայում և ԽՍՀՄ ներքին շրջաններում անցկացրած զանգվածային չեկիստական գործողությունների հետևանքով մեծ թվով կուլակ-սպիտակգվարդիական տարրեր թափանցել են Անդրկովկասի տարածք»: Նրան մեղադրում էին, որ ռուս բանվորնե-

---

[33] Правда, 23 июля 1989 г. ("Чрезвычайщина" հոդվածը, որի հեղինակներն են փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ն. Միխայլովը և տնտեսական գիտությունների թեկնածու Ն. Տեպցովը):
[34] ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 37, թ. 33-36:
[35] Նույն տեղում, թ. 37-39:
[36] Նույն տեղում, գ. 59, թ. 63-64:

րի շրջանում կատարել է սադրիչ աշխատանք, ձեռք է բերել դրոշմաթղթեր իր փաստաթղթերը կեղծելու համար[37]:

Քանաքեռհէկում աշխատող հայր ու որդի երկու բանվորներ, Հյուսիս-Կովկասյան երկրամասի Օտրադնայա ստանիցայի նախկին բնակիչներ, մեղադրվում էին ձայնազուրկ լինելով հանդերձ մշտական բնակության վայրից փախչելու (հիշել, որ խորհրդային գյուղացին անձնագիր չուներ և ճորտի նման ամրացված էր գյուղին ու կոլտնտեսությանը) համար հանցանք, որը դատապարտելի էր ՀՍԽՀ քրեական օրենսգրքի 16-107 և 72 հոդվածներով:

Արմավիրի շրջանի Կուրգաննայա ստանիցայի բազմամարդ ընտանիքը (ծնողներ, 3 տղաները՝ իրենց ընտանիքներով), 12 մարդուց բաղկացած, որ աշխատանք էին գտել Լենինականի միլիցիայի 2-րդ սովխոզում, մեղադրվելով, աքսորվեցին հատուկ բնակավայր[38]:

Հյուսիսային Կովկասից գաղթածների մեջ կային նաև փոքր թվով հայ գյուղացիներ, ովքեր, առանց բացառության, արժանացան ընդհանուրի ճակատագրին: Բերենք Մյասնիկյանի շրջանի Ղրիմ գյուղի 5 ընտանիքների օրինակը, որոնք բոլորը ապաստան էին գտել Երևան քաղաքում, և բոլորն էլ աքսորվեցին Սիբիր հատուկ բնակավայր, ինչպես կուլակաթափվող տնտեսությունները: Եղբայրներ Սերոբ և Հակոբ Տիրացուևների տնտեսությունները ժամանակին հրաժարվել էին արտադրության այն միջոցներից, ինչը նրանց կարող էր ճանաչել տալ որպես կուլակային: Այնուամենայնիվ նրանք նորից էին կուլակաթափվել հացամթերումների կայուն առաջադրանքները խախտելու և այլ պատճառներով և դատապարտվել աքսորի: Գրիգոր, Լուսպարոն և Մարտիրոս Խարագյոզովների ընտանիքներին վիճակվել էր կրել նույնպիսի զրկանքներ և արժանանալ նույն մեղադրանքին: Նրանց բոլորին մեղադրում էին առանց թույլտվության մշտական բնակավայրից կամ աքսորավայրից փախչելու համար[39]:

***

Բռնի կոլեկտիվացման և գյուղացիության մի մասի ունեզրկման ու արտաքսման պատճառով ծայր աստիճան սրվեց քաղաքական իրադրությունը գյուղում: Գյուղացիության դժգոհությունը առանձին շրջաններում ու վայրերում վերածվեց ապստամբությունների ընդդեմ ճնշման ու հարկադրանքի, զոռով կոլեկտիվացման: Գյուղացու ընդդիմությունն ընդունեց նաև հակախորհրդային բնույթ: Ստեղծված պայմաններում աշխուժացան

---

[37] Նույն տեղում, թ. 65:
[38] Նույն տեղում, թ. 176:
[39] Նույն տեղում, թ. 89-90, 115-116, 123-124, 132-137:

ընդհատակում գտնվող դաշնակցական կազմակերպությունները, բացահայտ պայքարի դուրս գալով խորհրդային իշխանության դեմ: Արտասահմանից Հայաստան թափանցեցին որոշ ուժեր, միանալով շարժմանը: «Գյուղում այժմ սրտաշարժ միասնականություն կա բոլոր հակախորհրդային ուժերի»,- ասված է Անդրկովկասի կուսկազմակերպությունների 6-րդ - համագումարին (1930 թ. հունիս) ներկայացրած Անդրերկրկոմի հաշվետու զեկուցման մեջ[40]:

Հարկադրական կոլեկտիվացման դեմ գյուղացիությունը դժգոհում և պայքարում էր տարբեր ձևերով: Պայքարի ամենասուր ձևը ապստամբությունն էր, այսպես կոչված «բանդիտական» շարժումը, ինչպես դա այն ժամանակ անվանում էին: Մյուսը անասունների անխնա մորթն էր, երբ գյուղացին գերադասում էր մորթել իր անասունը կոլտնտեսությանը չհանձնելու համար: Արձանագրվել են նաև ահաբեկման մի շարք դեպքեր, որոնք, հատկապես մամուլի կողմից, բնութագրվում էին որպես հակակոլտնտեսային հանցագործություն: Պայքարի ձև էր նաև ազգային փոքրամասնությունների կողմից արտասահման հեռանալու տրամադրությունների ուժեղացումն ու փախուստի փորձերը և այլն:

1930 թ. առաջին ամիսներին, ասված է այդ տարվա մայիս ամսին տեղի ունեցած ՀԿ(բ)Կ 7-րդ համագումարին ներկայացված Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ, կուլակն օգտագործեց կոլեկտիվացման կոպիտ սխալները հակակոլտնտեսային շարժումը ուժեղացնելու համար, իսկ Վեդու, Դարալագյազի ու Շամշադինի շրջաններում, դաշնակցականների հետ միասին, փորձեց հակակոլտնտեսային շարժմանը տալ հակախորհրդային բնույթ: Ավելացնենք, որ պայքարը շարունակվեց նաև 1930 թ. հետագա ամիսներին ևս: Կուսակցական մի այլ փաստաթղթում (5 փետրվարի 1930 թ.) Երևանի գավառի վերաբերյալ ասված է, թե «կուլակների ու հակահեղափոխական տարրերի դիմադրությունը օրեցօր սրվում է»:

«Բանդիտական» կոչված շարժումը, այսինքն ապստամբությունը գյուղացիների զինված ջոկատների ու խմբերի կազմակերպումն է, որով դժգոհություն էր արտահայտվում կամ դիմադրություն էր ցույց տրվում կոլեկտիվացման, ինչպես նաև ծանր հարկային քաղաքականության դեմ: Եթե 1920-ական թվականներին բանդիտական շարժումը հիմնականում ուներ տնտեսական բովանդակություն (գյուղացիների անասունների և այլ ունեցվածքի թալան), ապա բռնի կոլեկտիվացման պայմաններում այն հիմնականում կրում էր քաղաքական բնույթ, չբացառելով տնտեսական թալանի իրողությունները:

---

[40] Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների վեցերորդ համագումարը: Երևան, 1930, էջ 140:

Ըստ պաշտոնական տվյալների 1930 թ. գարնանը «բանդիտական» շարժման մեջ ընդգրկված է եղել մինչև 2000 զինված մարդ, իսկ շարժումով բռնված է եղել շուրջ 70 հազար բնակչություն ընդգրկող տարածք[41], կամ «բանդիտիզմով վարակված» շրջան: Ապստամբական շարժումը հատկապես տարածված էր Իջևան-Շամշադինի, Դարալագյազի, Վեդու, Բասարգեչարի, Թալինի և հանրապետության այլ շրջաններում: Ակտիվ գործողներից էին Սարատիկյանների, Ամիրաղյանների, Բալա Սարգսի, Միրուք Կարոյի, Այվազի, Պարույրի և այլոց խմբերը: Արտասահմանից պետական սահմանը խախտել էին խմբապետներ Մարտիրոսը, Խնկոն և ուրիշներ:

Ըստ ՀԿ(բ)Կ 8-րդ համագումարին (1932 թ. հունվար) ներկայացված Կենտկոմի հաշվետու զեկուցման տվյալների Դարալագյազում Պարույրի և Թալինում Միհրանի «բանդաները անմիջականորեն կապված էին դաշնակցականների Պարսկաստանի ղեկավար օրգանների հետ, ստանում էին նրանցից հրահանգներ, զենք և միջոցներ»: Եվ, ինչպես նշված է նույն զեկուցման մեջ, վերջին ժամանակներում վերացվել էին «բանդիտների վերջին մնացորդները Պարույրի գլխավորությամբ Դարալագյազում և Միհրանի գլխավորությամբ Թալինում»[42]:

Գյուղացիության ընդվզումներին ու պայքարի սրմանը նպաստեց դաշնակցական կազմակերպությունների ընդհատակից դուրս գալը և շարժմանը միանալը: ԽՍՀՄ-ում ստեղծված գյուղի քաղաքական լարված դրությունը նրա արտասահմանյան թշնամիների և ազգայնական շրջանների, նաև դաշնակցականների մոտ հույսեր էին ծնում այդ երկրի թուլացման և թերևս նրա նկատմամբ ոտնձգություններ ու միջամտություններ իրականացնելու հնարավորության նկատմամբ: Ուժեղացան Հայաստանի պետական սահմանի խախտումները, երբ փորձ էր կատարվում հանրապետություն փոխադրել զենք, զինամթերք, հակախորհրդային գրականություն և այլն:

Խորհրդային իշխանությունը, որի վարած քաղաքականությունը պատճառ էր դարձել գյուղացիության զինված դիմադրության համար, անմիջապես ձեռնամուխ եղավ նրա ճնշմանը: Դրա համար հարկ եղավ դիմել նաև Կարմիր բանակի զորամասերին ու միլիցիայի ուժերին, կոմունիստների զինված ջոկատների կազմակերպմանը և այլ միջոցների: Բանդիտական շարժման ճնշման և դաշնակցական կազմակերպությունների բաց-

---

[41] ՀՅԴաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու): Երևան, 1999, էջ 250:
[42] Ա. Խանջյան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 8-րդ համագումարում, Երևան, 1932, էջ 144, 145:

հայտման ու վերացման գործին լծվեցին Պետքաղվարչության մարմինները:

Պետքաղվարչության փաստաթղթերից մեկում բերված են 1930 թ. փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը մեկ ամսվա հետևյալ տվյալները. միայն Երևանի և Լոռու գավառներում (օկրուգներում) տեղի էր ունեցել համապատասխանաբար 9 և 15 «հակակոլտնտեսային ելույթ»: Կոլտնտեսությունների նախագահների, կոմունիստների ու կոմերիտականների ծեծի բազմաթիվ դեպքեր էին արձանագրվել Երևանի, Լոռու և Սևանի գավառներում: Հակախորհրդային թռուցիկներ ու կոչեր էին տարածվել բոլոր գավառներում: Լոռու գավառում մարդիկ հանդես էին եկել համագյուղացիների պաշտպանությամբ նրանց ապակուլակացման գործողությունների ժամանակ:

Հակակոլտնտեսային տարածված սադրիչ լուրերից էր «կանանց համայնացումը», «հարյուր մետրանոց վերմակը» գիշերելու համար և այլն: Դարալագյազում խոսում էին, թե արդեն պատերազմ է սկսվել, Նախիջևանից հարձակվել է Նժդեհը, իսկ Զանգեզուրից Յապոնը:

1931 թ. առաջին կեսին ԽՍՀՄ հանրապետություններում, նաև Հայաստանում ծավալված հակակոլտնտեսային շարժման ընթացքի մասին է ժողովածուներից մեկում հրապարակված վիճակագրական ասղյուսակը: Ըստ դրա տվյալ վեց ամսվա ընթացքում Հայաստանում հարձակում չէր կատարվել 79,1 տոկոս կոլտնտեսությունների վրա (ԽՍՀՄ-ում 84,2 և Ռուսաստանում՝ 84,6 տոկոս): Մեկ անգամ հարձակման էր ենթարկվել կոլտնտեսությունների 11, 5, երկու անգամ՝ 4,1, երեք անգամ՝ 2,2 և չորս ու ավելի անգամ՝ 3,1 տոկոսը:

Նույն փաստաթղթից տվյալներ կարելի է քաղել նաև կոլտնտեսությունների վրա կատարած հարձակումների բնույթի վերաբերյալ: Յուրաքանչյուր հարյուր հարձակումից 16,9-ը եղել է հրկիզում, 18,2-ը՝ անասունների թունավորում, 38,1-ը՝ հարձակում ակտիվիստների վրա, 19-ը տեխնիկայի փչացում և 7,8-ը՝ այլ բնույթի դեպքեր[43]:

Եթե ընդունենք, որ բերված տվյալները ոչ բացարձակապես են ճիշտ, այնուամենայնիվ իրական են ներկայացնում կոլտնտեսային շարժման շուրջ ստեղծված քաղաքական լարվածության սրումը:

Դրություն առավել լարվել էր ազգային փոքրամասնությունների միջավայրում (ադրբեջանցիներ, քրդեր, ռուսներ): Դեռևս փետրվարի առաջին կեսին Վեդու շրջանի տասնյակ գինված գյուղացիներ, ընտանիքներով գյուղերից հեռացել էին սարերը: Այդ մասին հայտնելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմ, Անդրերկրկոմը դա պատճառաբանել էր կոլեկտիվացման սխալներով:

---

[43] Документы свидетельствуют, с. 491-492.

Ադրբեջանցիների և հատկապես ռուս աղանդավորների մեջ (մոլոկաններ, պրիգուններ, բապտիստներ) ուժեղացան արտասահման գաղթելու տրամադրությունները: ԱՄՆ-ի պրիգուններից ստացված մի նամակում համակիրներին կոչ էր արվում վերաբնակություն հաստատել Թուրքիայում:

Սերտ կապ ու միասնություն էր հաստատվել Հայաստանի և Ադրբեջանի սահմանակից շրջանների հակակոլտնտեսային ուժերի միջև:

1930 թ. փետրվարի 9-ին ՀԱՄԿ(բ)Կ Անդրերկրկոմը որոշում ընդունեց Վեդու, Դարալագյազի և Անդրկովկասի տարբեր շրջանների «կուլակային-բանդիտական» ելույթները վերացնելու միջոցառումների մասին: Պահանջվում էր դա իրականացնել մինչև մարտի 15-ը: Մինչև ապրիլի 1-ը անհատական ընտրության կարգով անց էր կացվելու Հայաստանի սահմանային շրջաններից ադրբեջանցի «հակահեղափոխական կուլակային ակտիվի մեկուսացում», այսինքն՝ բանտարկություն:

Այնուհետև իրականացվեց նաև դաշնակցականների, մենշևիկների և հատկապես մուսավաթականների ու իթթիհատականների լրացուցիչ մեկուսացում:

Սակայն պայքարն ընդունեց բավական տևական բնույթ, քան կարելի էր ենթադրել, ուստի պահանջվեցին նորանոր որոշումների ընդունում ու միջոցառումների մշակում:

«Դարալագյազի, Զանգեզուրի շրջաններում և Նախիջևանում տարածված բանդիտիզմի վերացման միջոցառումների մասին» Անդրերկրկոմի մարտի 16-ի որոշումը Երևան փոխանցվեց հեռախոսով գիշերն իսկ: Նույնպիսի շտապողականությամբ հաջորդ օրը ՀԿ(բ)Կ Կենտկոմը (հարցման կարգով) հաստատեց «բանդիտիզմի» դեմ պայքարի ՀայՊՔՎ-ի կողմից մշակված միջոցառումների պլանը: Դրանց թվում կարևոր նշանակություն էր տրվում կոմունիստների ուժի օգտագործմանը («կոմունարների ջոկատներ»): Զանգեզուրում կատարվեց 140 կոմունիստների նոր հավաքագրում, որոնք փոխարինեցին նույն թվակազմով առաջին ջոկատին:

Սևանի գավառի Նոր Բայազետի շրջանը կազմակերպել էր 180 կոմունարներից բաղկացած գումարտակ, 3 վաշտերի ստորաբաժանումով: Նրանք մասնակցել էին Բասարգեչարի ու Դարալագյազի, ինչպես նաև Ադրբեջանի Յաղուբլիի ու Քրդստանի շրջանների մարտական առաջադրանքների կատարմանը: Դեռևս 1930 թ. փետրվար ամսվա Ադրբեջանի Քելբաջարի և Հայաստանի Կրասնոսելսկի, այնուհետև Վեդու ու Դարալագյազի շրջանների դեպքերը, կարդում ենք Սևանի գործկոմի ապրիլի 22-ի գրության մեջ,- ստիպեցին ակտիվի հավաքագրում կազմակերպել Բասարգեչարի, Կրասնոսելսկի, Մարտունու, Նոր Բայազետի և Ախտայի շրջաններում: «Լինելով կոմունարների ջոկատների անդամներ,- գրել է մի

խումբ աչքի ընկած կոմունարների մասին պետքաղվարչության Սևանի գավառային բաժինը,- նրանք կատարել են բաժնի մի շարք մարտական խնդիրներ և առաջադրանքներ»:

Առաջին խմբերի ջախջախումով պայքարը չէր վերջանում: Հանդես էին գալիս նորերը: Այն ավելի բորբոքվեց ամառային ամիսների ընթացքում: Հունիսի 1-ին ՀԿ(բ)Կ կենտկոմը Պետքաղվարչությանը պարտավորեցնում էր ուժեղացնել «բանդիտական» խմբերի դեմ գործողությունները Շամշադինի, Իջևանի և Դարալագյազի շրջաններում և նպատակահարմար գտավ ոչ թե համընդհանուր, այլ միայն այն գյուղերի զինաթափումը, որոնք «վարակված էին բանդիտիզմով»:

Հունիսի 2-ին Անդրերկրկոմը տվյալ հարցի վերաբերյալ կայացրեց նոր որոշում, որի կապակցությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմը կարևոր էր համարում այն գյուղերի զինաթափության անցկացումը, որոնք «սնում էին բանդիտիզմը» Սիսիանի, Դարալագյազի և Դիլիջան-Իջևանի շրջաններում: Պայքարի վճռական ու արագ կենսագործումն ապահովելու նպատակով Դարալագյազի, Լոռու և Զանգեզուրի գծով, հունիսի 18-ի որոշման համաձայն, ստեղծվեցին «պատասխանատու հնգյակներ»: Հետագայում նույնպիսի «հնգյակ հանձնաժողովներ» կազմակերպվեցին նաև Բասարգեչարի ու Կրասնոսելսկի շրջանների գծով: Հունիսի 18-ի որոշումով միաժամանակ Պետքաղվարչությանը թույլատրվեց, այլ միջոցառումների հետ մեկտեղ, կատարել «բանդիտիզմով վարակված» գյուղերի ու շրջանների սահմաններից նրանց ընտանիքների արտաքսում, ինչպես նաև առավել «չարամիտ բանդիտների» ու կուլակային տնտեսությունների գույքի բռնագրավում:

Հուլիսի սկզբին իրականացվեցին զինաթափման անցկացման և «բանդիտիզմի» դեմ պայքարի լրացուցիչ միջոցառումներ: Համապատասխան հանձնաժողովներ ստեղծվեցին մի շարք շրջանների համար, տալով այդ հանձնաժողովներին արտակարգ միջոցների դիմելու իրավունք, ընդհուպ մինչև ամենաբարձր պատիժը: Այդ շրջաններն էին՝ Ստեփանավանը, Ալափարսը, Կոտայքը, Համամլուն: Ընդ որում, այս վերջին որոշումն արձանագրում էր, որ զինաթափումն ավարտվել է Զանգեզուրի ու Դարաքիլիսա-Դիլիջանի շրջաններում: Սակայն դա չէր նշանակում, թե բացառվում էր լրացուցիչ զինաթափման հնարավորությունը:

1930 թ. հուլիսի 6-ի «խիստ գաղտնի» որոշումով ՀԿ(բ)Կ Կենտկոմը հավանություն տվեց «վարակված շրջաններում արտակարգ միջոցառումներ անցկացնելու գծով հնգյակների գործունեությանը, լսելով «արտակարգ հնգյակների» զեկուցումները գյուղում տիրող դրության մասին:

«Բանդիտական» շարժումը ճնշելու կարևոր գրավական էր Դաշնակցության դեմ հատուկ պայքարի կազմակերպումը և անցկացումը:

1930 թ. փետրվարին ձերբակալվել էին Աշտարակի և Էջմիածնի շրջանների ընդհատակյա դաշնակցական կազմակերպության ղեկավարները: Նույն թվականի ապրիլին ձերբակալվեցին նույն կազմակերպության 31 անդամներ, որոնց մեծ մասին պետքաղվարչության Հատուկ խորհրդակցությունը դատապարտեց ՀՍԽՀ քրեական օրենսգրքի 67 և 68 հոդվածներով (հակահեղափոխական, հակախորհրդային գործունեություն) համակենտրոնացման ճամբարում 3-8 տարի ժամկետներով կրելու իրենց պատիժը: Նույն կարգով փետրվարի 5-6-ին մեկուսացվել էին 24 դաշնակցականներ և դատապարտվել:

«Բանդիտիզմով» խիստ վարակված շրջաններից էր Դարալագյազը: Շրջանի Գնդևազ, Հերհեր և Ղուշչի գյուղերում «բանդիտական-դաշնակցական» խումբ էր գործել 1930 թ. մարտ – հունիս ամիսների ընթացքում: Խմբին հաջողվել էր տապալել տեղական իշխանությունը և Հերհերում ստեղծել իր «գյուղական պառլամենտը»: Հայպետքաղվարչության կոլեգիայի դատական նիստը խմբի 3 ղեկավարների համար ընդունեց գնդակահարության որոշում, մի քանիսի համար՝ մինչև 10 տարվա ժամկետով աքսոր համակենտրոնացման ճամբարում:

Շրջանում լարվածության սրմանը, անշուշտ, նպաստել էր նախկին խմբապետներ Մարտիրոսի և Կարդաշխանի ներկայությունը: Մարտ ամսին նրանք Մարտիրոս գյուղում հանդիպում էին ունեցել գյուղացիների հետ և նրանց հրահրել «փախուստի դիմել լեռները», «թաքնվել իշխանություններից»: Գյուղի բանդիտ ղեկավարները ազատազրկվեցին 3-8 տարվա ժամկետով:

Դարալագյազի ապստամբության մասին մանրամասնություններ է հայտնում ժամանակակիցներից մեկը, «Հայրենիք» ամսագրում տպագրված հոդվածում, «Ա. Արտո» ստորագրությամբ: Ապստամբությունն սկսվել էր մարտի 10-ին, Գնդևազ, Ղուշչի և Հերհեր գյուղերից և տարածվել մինչև Բազարչայ:

Չորս օր գյուղերը գտնվում էին ապստամբների ձեռքին, որոնց ղեկավարներն էին Կոստան Ալավերդյանը և Սարֆազ Մկրտչյանը: Չեկայի ուժերի և Դիլիջանից կարմիրբանակային զորամասի ժամանումից հետո ապստամբները հեռացել էին լեռները, տալով մեկ սպանված և մեկ վիրավոր: Այնուհետև պայքարը շարունակվեց մինչև հուլիս ամիսը, երբ ապստամբներից շատերը, ընտանիքների վրա դրված ճնշման ազդեցության տակ, ստիպված անձնատուր եղան, ապա «ամենքն էլ քշվեցին հեռավոր Սիբիրի անվերադարձ աքսորավայրերը», իսկ նրանց ընտանիքների ամ-

բողջ գույքը բռնագրավվեց: Փրկվեց միայն Սարֆազ Մկրտչյանը, որը, չվստահելով տրված խոստումներին, անձնատուր չեղավ և հաջողացրեց անցնել արտասահման[44]:

Ուժեղ պայքար էր ծավալվել Զանգեզուրում: Այստեղ ՀԿ(բ)Կ գավառային կոմիտեն կազմակերպել էր 362 կոմունարներից բաղկացած ջոկատ, որի 3 վաշտերը գործում էին Ղափանի, Սիսիանի և Գորիսի շրջաններում: 1930 թ. հունիսի 23-ի զեկուցագրում գավկոմը հայտնում էր, թե մտադիր է ջոկատի անդամների թիվը հասցնել 500-ի: Զանգեզուրում և Ադրբեջանի Քրդստանի օկրուգում միայն հուլիսի 4-31-ը ապստամբները կրել էին 39 մարդու կորուստ՝ սպանված և վիրավոր, գերվել էր 44 մարդ, կամավոր հանձնվել էր 27-ը: Տարբեր ժամկետներով դատարանը դատապարտել էր 25 մարդու: Ջերբակալվել էր 74 բանդիտ: Բանդիտներից գրավվել էր 742 հրացան, ինչպես նաև անասուններ:

1930 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ստեփանավանի, Իջևանի, Կրասնոսելսկի, Ղափանի և Համամլուի շրջաններում սեփականազրկվել և գյուղերից արտաքսվել էին «կուլակ-բանդիտական» տնտեսություններ:

Վաղարշապատի շրջանի Հաջիղարա և Զանգեզուրի Գորիս գյուղերի մեկական բնակիչներ դատապարտվել էին գնդակահարության՝ առաջինը որպես նախկին կուլակ-ծայնազուրկ, իսկ 1921 թ. փետրվարյան ապստամբության ժամանակ՝ դաշնակցականների Արտակարգ հանձնաժողովի գաղտնի աշխատակից: Իսկ երկրորդը, որը ձերբակալվել էր Միջին Ասիայում, եղել էր «տեղական իշխանության դեմ ապստամբության» կազմակերպիչներից:

Աշտարակի շրջանի Ղզլբամուր գյուղի 2 բնակիչներ 3-ական տարով աքսորվել էին Սիբիր, որպես երիտասարդ դաշնակցական կազմակերպության անդամ և հակախորհրդային քարոզչության ու այն բանի համար, որ Զատիկի տոնական օրերին գյուղացիներին հորդորել էին մորթել անասուններ:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. օգոստոսի 17-ի որոշումով Պետքաղվարչությանն առաջարկվեց մեկուսացման ենթարկել 300 ղեկավար ու ակտիվ դաշնակցականների[45], որի կապակցությամբ «խիստ գաղտնի» և «փակ նամակով» շրջկոմներին պարտավորեցվեց օգնել Պետքաղվարչությանը նրա «առաջիկա գործողությունների կապակցությամբ», ապահովելու համար այն բոլոր ձեռնարկումները, որոնք իրականացվում էին

---

[44] Ա. Արտո, 1930-ի ապստամբությունը Դարալագյազում. «Հայրենիք», 1954, թիվ 12, էջ 88-91:

[45] ՀՅԴաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 245:

«դաշնակցական կազմակերպության վերնախավի ծերբակալման և գինաթափման ուղղությամբ»[46]:

Կուսակցական մի այլ փաստաթղթում (ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. հոկտեմբերի 9-ի բանաձևը գյուղի քաղաքական դրության մասին)[47] նշված է, որ 1930 թ. փետրվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում Հայաստանի ՊՔՎ-ն և կուսկազմակերպությունները մեծ աշխատանք են կատարել «գյուղի նորմալ քաղաքական դրության բարելավման ու վերականգնման ուղղությամբ», որ զգալիորեն նվազել են «բանդիտիզմը և բանդիտական տրամադրությունները գյուղում»: Այնուամենայնիվ, կարդում ենք նույն փաստաթղթում, դիտվում էր դաշնակցականների «աննախադեպ աշխուժացում, նրանց կազմակերպությունների ընդլայնում ի հաշիվ նոր տարրերի տատանվող ու սադրանքի ենթարկված գյուղացիների, իսկ մի շարք շրջաններում դրանց վերածվելը զանգվածային կազմակերպությունների»: Չնայած դաշնակցական կազմակերպությունների «պարբերական ջախջախումներին» ու մեկուսացումներին, ըստ նույն փաստաթղթի, տեղ-տեղ դաշնակցականները դրսևորում էին «մեծ կենսունակություն և կազմակերպվածություն» (ինչպես Երևանի և Լենինականի գավառներում), մնալով «ուղղություն տվող հիմնական հակահեղափոխական մարտական կազմակերպությունը երկրում»:

Օրինակ էին բերվում Կոտայքը, Ալափարսը, Մոլլա-Գյոքչան, Դուզքենդը, Սիսիանը, որտեղ դաշնակցականներին հաջողվել էր «սադրել և իր ազդեցությանը ենթարկել զգալի թվով գյուղացիների»:

Ելնելով դրանից ՀԿ(բ)Կ Կենտկոմը նախատեսում էր միջոցառումների ընդարձակ պլան ինչպես Դաշնակցության դեմ պայքարի, այնպես էլ ապստամբական շարժման գծով: Դաշնակցության դեմ իրականացվելու էին հետագա միջոցառումներ նրա ղեկավար կազմի մեկուսացման միջոցով, ապահովելու համար նրա կազմակերպությունների «լիակատար ջախջախումը և ապագայում նրանց կազմակերպական հնարավորությունների վերացումը»: Նույնպիսի միջոցառումներ էին իրականացվելու նաև մյուս «հակահեղափոխական կազմակերպությունների» նկատմամբ:

Հայաստանի Պետքաղվարչությանը հանձնարարվում էր երկու ամսվա ընթացքում ջախջախել Լոռու, Դարալագյազի ու Դավալուի «բանդիտական» խմբերը, որոնց ղեկավարներն էին Սարատիկովները, Բալա Սարգիսը, Մորուք Կարոն, Այվազը, Լազգոն և ուրիշներ: Հատուկ ընդգծելով Բասարգեչարի ու Կրասնոսելսկի շրջանների «լարված դրությունը», այն է՝ տեղական ու ադրբեջանական բանդաների սանձարձակությունը,

---

[46] Նույն տեղում, էջ 246-249:
[47] Նույն տեղում, էջ 249-253:

անասնագողությունը, ահաբեկչությունը, հակախորհրդային տարրերի ու կուլակության լկտիությունը. Պետքաղվարչությանը պարտավորեցվում էր սեպտեմբեր-հոկտեմբեր ժամանակամիջոցում իրականացնել «հակահեղափոխական տարրերի» մեկուսացումը, «բանդիտական» խմբերի վերացումը և «վարակված» գյուղերի զինաթափումը: Անհետաձգելի ու անհրաժեշտ էր համարվում բնակչության զինաթափումը «բանդիտիզմով ու դաշնակցական ազդեցությամբ վարակված» բոլոր շրջաններում:

Ընդունված որոշման համաձայն մշակվեց բնակչության զինաթափման պլան, որը հաստատվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի կողմից (նոյեմբերի 14-ին) և հանձնարարվեց Պետքաղվարչությանը կենսագործել այն, հանրապետական «եռյակի» ղեկավարությամբ: Առանձին նշվում էր Դարալագյազը զինաթափման ենթակա շրջանների մեջ մտցնելու անհրաժեշտության մասին:

Բերված նյութը ցույց է տալիս, որ գյուղի քաղաքական լարված դրությունը շարունակվել է գրեթե 1930 թ. ամբողջ ընթացքում:

Նկատի ունենալով հայկական գյուղի 1930 թ. իրադարձությունները և միաժամանակ գերագնահատելով արտաքին ուժերի դերը, ՀԿ(բ)Կ - Կենտկոմի 1-ին քարտուղար Ա. խանջյանը 1931 թ. մայիսին «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրված հոդվածում գրել է. «Դաշնակցության խմբապետներն անգործ չեն նստած Խորհրդային Հայաստանի սահմաններ-ի մոտ: Նրանց անմիջական ղեկավարությամբ էր, որ անցյալ տարի գլուխ բարձրացրին կուլակային-բանդիտական առանձին խմբակներ մեր մի քանի շրջաններում»[48]:

***

Վերը նշվեց անասունների մորթի մասին որպես հարկադրական կոլեկտիվացման դեմ գյուղացիների դժգոհության տարածված արտահայտություն: Այն սկսվեց 1929 թ. վերջերին և շարունակվեց մինչև 1933 թ.: Այդ ընթացքում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց 30 տոկոսով և մանր եղջերավոր անասուններինը գրեթե կիսով չափ: Անասունների գլխաքանակի անկումը դադարեց հանրային սեկտորում տեղի ունեցող աճի շնորհիվ: Իսկ անհատական սեկտորում դրությունն այլ էր, շարունակվում էր հոտի կրճատումը, որի մասին էր խոսում ՀԿ(բ)Կ Կենտ-

[48] Խորհրդային Հայաստան, 4 մայիսի 1931 թ.:

կոմի քարտուղարը կուսակցության 9-րդ համագումարում 1934 թ. հունվարին, վիճակը գնահատելով սպառնալից[49]:

Անասունների գլխաքանակի նվազման պատճառների հարցը կարոտ է լրացուցիչ լուսաբանության: Ժամանակի պաշտոնական կուսակցական տեսակետի համաձայն անկման պատճառը կուլակներն էին, նրանց քարոզչությունը գյուղացիների միջավայրում: ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թ. որոշումներից մեկում անասունների անխնա մորթի մասին ասված է, թե այն «տեղի է ունենում կուլակների վնասարար գործողությունների և գրգռումների ազդեցության տակ»: Նույն երևույթը ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարը պատճառաբանում էր կուլակային տարրերով երկրի անասնաբուծական ճյուղերի խոշոր հագեցվածությամբ և անասունները կոտորելու ուժեղ կուլակային քարոզչությամբ:

Իրականում իսկական պատճառը գյուղացիների կողմից մորթին ինքնակամ դիմելն էր՝ սեփական անասունը կոլտնտեսությանը չհանձնելու համար, ուր ինքն էլ ցանկություն չուներ ընդգրկվելու: Գյուղացին չէր կարող հոգեպես հանդուրժել, որ իր լծկանը կամ կովը տեսնի կոլտնտեսությունում: Ուստի նա գերադասում էր մորթել իր անասունները մինչև իր հարկադրական մուտքը կոլտնտեսություն:

Անասունների անխնա մորթ էր տեղի ունենում ամբողջ երկրում, ուստի ձեռնարկվում էին խիստ միջոցառումներ մորթը արգելելու կամ սահմանափակելու ուղղությամբ: Այսպես, 1930 թ. օգոստոսին Ստալինը Մոլոտովին ուղարկած նամակում առաջարկում էր անպայման գնդակահարել «մսամթերքների վնասարարների ամբողջ խմբին», այդ մասին հրապարակելով մամուլում: Դրան հետևեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի որոշումը «Մսի վնասարարների և մյուսների մասին»: Սարքվել էր «բանվորական մատակարարման վնասարարների» կեղծ քրեական գործ, ըստ որի նրա 48 անդամներին ԽՍՀՄ միացյալ Պետքաղվարչության կոլեգիան դատապարտեց գնդակահարության[50]:

Այդ կեղծ գործի նպատակը քաղաքական էր՝ ներգործել գյուղացիների վրա, կանգնեցնել մորթի ընթացքը, որը, սակայն, հակառակը, շարունակվում էր: 1930 թ. վերջին ԽՍՀՄ Կենտգործկոմը որոշում ընդունեց անասունների անխնա մորթի համար քրեական պատասխանատվության մասին:

---

[49] ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 9-րդ համագումարում, ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ա. Խանջյանի զեկուցումը: Երևան, 1934, էջ 59:

[50] Ал. Яковлев, Крестосев, с. 110-111.

«Կեղծ» գործերը պետք էին նաև ցույց տալու, որ մսի չգոյության պատճառը ոչ թե կոլեկտիվացումն էր, այլ այս կամ այն «վնասարարը»: «Վնասատարությամբ» էին բացատրում նաև երկրի մյուս բոլոր դժվարություններն ու սխալները:

Կենտրոնի հետևությամբ Հայաստանում ևս սկսեցին որոնել «վնասարարների» ու դատապարտել նրանց: Այսպես, ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարին (1934 թ.) ներկայացված Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ ասված է, թե Պետքաղվարչությունը հայտնաբերել է վնասարարական կազմակերպություն, բաղկացած հայ և թուրք մասնագետներից, որը 1928-1933 թթ. խնդիր էր դրել քայքայել Հայաստանի գյուղատնտեսությունը: Այնուհետև հիշվում է Թևզյանների, Յակովլևների և այլոց խմբերի ծյուղավորված կազմակերպության գոյության մասին Հայաստանի տարբեր շրջաններում[51]:

«Վնասարարության» բացահայտումներն ու մերկացումները ավելի լայն ծավալ ու սուր բնույթ ընդունեցին Ա. Խանջյանի մահից հետո, քաղաքական բռնաճնշումների տարիներին:

Պետությունը և կուսակցական ղեկավարությունը մսի հարցի լուծման և անասունների զանգվածային մորթի դեմ պայքարի ուղի էր ընտրել, բացի վարչական-քրեական պատասխանատվության միջոցներից, նաև կոլտնտեսային ու սովխոզային անասնապահական ֆերմաների կազմակերպումը:

Շուտով հայտնի դարձավ, որ ամբողջ երկրում ֆերմաների կազմակերպումը իրականացնում էին կոլտնտեսականների ու մենատնտեսների անասունների հաշվին, նրանց նկատմամբ գործադրելով բռնություններ: Նման դեպքերը քիչ չէին նաև Հայաստանում: Այստեղ 1932 թ. վերջին գոյություն ուներ 422 կոլտնտեսային անասնապահական ֆերմա, 107,5 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուններով (տարվա սկզբի դրությամբ)[52]: Փաստորեն անասունների ընդհանուր գլխաքանակը ոչ թե աճել էր, այլ շարունակում էր նվազել:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1932 թ. մարտի 26-ին ընդունեց որոշում «Անասունների բռնի հանրայնացման մասին»[53], որով «կոլտնտեսությունների թշնամիներ» էին համարվում նման արարք թույլ տվողները: Նշվում

---

[51] ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 9-րդ համագումարում, 1934 թ., հունվարի 10-14: ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ա. Խանջյանի զեկուցումը, էջ 118:

[52] Социалистическое строительство Армянской ССР. Статистический сборник. Ереван, 1940, с. 80, 82.

[53] Документы свидетельствуют, с, 469-470.

էր, որ կոլտնտեսություններում անասունների գլխաքանակը աճեցվելու էր մատղաշի հաշվին, իսկ կոլտնտեսականներին հարկավոր էր օգնել նրանց կովազրկությունը վերացնելու համար:

***

Վերջապես կարելի է բերել որոշ հանրագումարային տվյալներ, որոնք վկայում են Հայաստանի և նրա գյուղի լարված քաղաքական իրադրության մասին: Այսպես, ՀՀ ազգային անվտանգության ծառայության արխիվում պահվող անձնական գործերի հիման վրա կատարված հաշվարկների համաձայն Հայաստանում ձերբակալվել է միայն 1930 թ. 1276, 1931 թ. 1041, 1932 թ. 522 և 1933 թ. 876 (միասին 3715) կոլտնտեսական: Նույն թվականներին, միասին վերցրած, ձերբակալված կուլակների թիվն է 646 (այդ թվում միայն 1930 թ. «կուլակաթափության» տարում 54)[54]:

Պետք է կարծել, որ ձերբակալված կոլտնտեսականները (նրանց թվում կարող են քիչ չլինել նաև մենատնտես գյուղացիներ) կարող էին լինել նրանք, ովքեր հատկապես 1930-1931 թթ. բռնության էին ենթարկվում որպես «բանդիտներ» և դաշնակցականներ:

Ինչ վերաբերում է կուլակների տվյալներին, ապա, ամենայն հավանականությամբ, դրանցում ընդգրկված են նրանք, ում վերաբերյալ կազմվել են անձնական գործեր, կատարվել է քննություն և դատավարություն: Այսինքն, բերված տվյալները չեն ընդգրկում բոլոր կուլակաթափվածներին, որոնք կազմում էին բավական մեծ թիվ, և ովքեր չէին դատվում, պարզապես արտաքսվում էին իրենց բնակավայրերից վարչական կարգով:

Ձերբակալության և աքսորի մասին Պետքաղվարչության կոլեգիայի դատական նիստի կամ կոլեգիային կից Հատուկ խորհրդակցության որոշումների մի զգալի մասը վերաբերում էր հակակոլտնտեսային ագիտացիայի, մթերումների պլանները և առաջադրանքները խախտելու, «բանդիտական» շարժմանը օժանդակելու մասին գործերին (ՀՍԽՀ ՔՕ-ի հոդ. հոդ. 67, 68, 17/74 և այլն հակախորհրդային և հակահեղափոխական քարոզչություն, որևէ հանցագործության նախապատրաստում, բանդիտիզմ)[55]:

---

[54] **Արմենակ Մանուկյան**, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ.: Երևան, 1999, էջ 131:

[55] 1927 թ. և հետագա տարիներին ընդլայնվեցին «հակապետական» և «հակահեղափոխական» հանցագործությունների որակավորման սահմանները խորհրդային հանրապետությունների քրեական օրենսգրքերում. Документы свидетельствуют, с. 502-504.

Պետքաղվարչության 1930-ական թվականների առաջին կեսի գործունեության մեջ հիշատակելի է նաև արժույթի բռնագրավման կամպանիան, որը շոշափում էր գյուղի ու քաղաքի բնակչության շահերը: Ի տարբերություն 1920-ական թվականների, այժմ եկեղեցին լրիվ ունեզրկվել էր, ուստի խուզարկությունները կենտրոնացան քաղաքացիների վրա: Պետքաղվարչության որոշումներով հայտնաբերված արժույթը (սնկախ գումարի չափից) բռնագրավվում էր, տնատիրոջ «գործը» կարճելով:

Բռնագրավումը հիմնավորվում էր Քրեական օրենսգրքով (հոդ. 84, երբեմն այլ հոդվածների զուգորվումով), թե արժույթը առուծախի առարկա չէ, և թե մարդկանց ունեցածը բոլոր դեպքերում ձեռք է բերվել անօրինական ճանապարհով:

Հանրագումարային տվյալներ չունենք բռնագրավումների չափի վերաբերյալ, միայն նշենք, որ երկրի արժութային միջոցները հատկացվում էին ինդուստրացման համար արտասահմանից տեխնիկա գնելու նպատակին: Մեր ժողոված տվյալներով (Պետքաղվարչության կոլեգիայի դատական նիստերի արձանագրությունների քաղվածքներ) 1930 թ. կատարվել է 11, 1933 թ. 95, 1934 թ. 203 և 1935 թ. 47 տան (բնակարանի) խուզարկություն և արժույթի հայտնաբերում[56]:

Բերենք մի քանի ընտրովի օրինակ. Շահվառուտ գյուղում (Ղուրդուղուլու շրջան) ՀամԿ(բ)Կ անդամության թեկնածուի տանը հայտնաբերվել էր 30 ոսկե ռուբլի, որը բռնագրավվում է, իսկ նրա կուսակցական պատասխանատվության հարցը հանձնվում է կուսակցության վերահսկիչ հանձնաժողովին: Երևան քաղաքում կատարված 13 խուզարկությունների արդյունքների բռնագրավումը հիմնավորվել է նրանով, թե տվյալ անձինք «պարբերաբար գնել են ոսկե արժույթ, որով և խախտել են արժութային գործողությունների մասին կանոնները»: 1934 թ. հունվարի 28-ին նույն արձանագրությամբ ձևակերպվել է 146 մարդու քանկարժեք իրերի բռնագրավումը՝ 6542 ռուբլի արժույթով, 3335 չերվոնեց ռուբլի և այլն:

Հնարավոր է, որ նշված տվյալների մեջ լինեին դեպքեր, երբ հարստությունը ձեռք բերված լիներ չարաշահությամբ, սակայն, անկարելի էր, որ գյուղը զանգվածորեն այն իր համար արհեստ դարձներ, որպիսին հանդիպում է արձանագրություններում:

Գյուղացին կամ քաղաքի բնակիչը մի քանի րոպեի ընթացքում զրկվում էր տարիների ընթացքում նեղ օրվա համար խնայած կամ հարսի օժիտ հանդիսացող միջոցներից, կանգնելով չքավորության ու աղքատության սպառնալիքի առաջ, երբ առանց այն էլ ծանր էին կյանքի պայմանները:

---

[56] ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 30-32, 39, 58-60, 67-69, 76:

Վերլուծելով գյուղում ստեղծված իրադրությունը, Ա. Խանջյանը ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարում (1934 թ. հունվար) նշեց, որ հաշվետու շրջանի նվաճումները ձեռք են բերվել «դասակարգային սուր, կատաղի պայքարի միջոցով»: Այսպիսի իրավիճակը տևեց, դարձյալ ըստ Ա. Խանջյանի, մինչև 1932 թ.: Դեռ մինչև նախանցյալ տարի, շարունակում է նա, մի շարք շրջաններում գործում էին «դաշնակ-բանդիտական հակահեղափոխական խմբերը և առանձին բանդիտներ», որոնց «բոլոր ոտնձգությունները ջարդուփշուր արվեցին»[57]:

Գյուղում քաղաքական լարվածություն ստեղծելու և գյուղացիության մի զգալի մասին կոլեկտիվացման ու խորհրդային իշխանության դեմ ապստամբության հանելու գլխավոր պատճառը բռնություններն էին վերևից կոլեկտիվացումը դեկրետավորելը, այն պայմաններում, երբ գյուղացիությունը ոչ միայն պատրաստ չէր համատարած, այլև, մեծի մասամբ, նաև չափավոր ընթացքով կոլեկտիվացման համար: Կոլտնտեսային շարժումը նախապատրաստված չէր, կեղծ էր Ստալինի այն դրույթը, թե 1929 թ. երկրորդ կեսին բեկում է տեղի ունեցել կոլտնտշինարարության մեջ, թե միջակ գյուղացին շրջադարձ է կատարել դեպի սոցիալիզմը (կոլտնտեսություն):

Սովորաբար թույլ տված սխալների մեղքը բարդվում էր բացառապես տեղական ղեկավար կադրերի վրա, ուստի նրանց նկատմամբ ձեռնարկվում էին կազմակերպական միջոցառումներ: 1930 թ. մայիսին ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Հայկազ Կոստանյանը փոխադրվեց այլ աշխատանքի (Ղրիմի մարզկոմի քարտուղար) և նրան փոխարինեց Կենտկոմի երկրորդ քարտուղար Աղասի Խանջյանը: Նույն ամսում կայացավ ՀԿ(բ)Կ 7-րդ համագումարը, որը լսեց նաև զեկուցում (զեկուցող Ս. Կասյան) կոլտնտշինարարության և գյուղատնտեսության զարգացման խնդիրների մասին: Սակայն զեկուցման լայն քննարկում չծավալվեց, համագումարն արագ կերպով ավարտեց իր աշխատանքները, պատգամավորներին հանձնարարելով շտապել տեղերը գլխավորելու կոլեկտիվացման աշխատանքները:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ Ա. Խանջյանը ճիշտ կերպով ցույց տվեց, որ «մեզ մոտ անհատական տնտեսությունները դեռ կազմում են և որոշ ժամանակ կմնան հիմնական մեծամասնություն»[58]: Սակայն գործնականում ամեն ինչ արվում էր անհատական տնտեսվարությանը վերջ տալու համար:

---

[57] ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 9-րդ համագումարում: ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ա. Խանջյանի զեկուցումը, էջ 110-112:

[58] **Ա. Խանջյան,** Մեծ բեկման շրջանը և մեր խնդիրները (ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 7-րդ համագումարին): Երևան, 1930, էջ 38:

Փոփոխություններ կատարվեցին նաև Անդրդաշնության ղեկավարության մեջ: Անդրկովկասի կուսկազմակերպությունների 6-րդ համագումարում(1930 թ. հունիս) երկրային կոմիտեի հաշվետու զեկուցման մեջ Շ. Էլիավան կոլեկտիվացման սխալների մեղքը բարդեց երկրային ու հանրապետական ղեկավարների վրա: Զեկուցողը «հրեշավոր» համարեց այն հարցը, թե «ումն է մեղքը. ՀամԿ(բ)Կ Կենտկոմինը, թե երկրկոմինը»: Միթե մեղավոր է ՀամԿ(բ)Կ Կենտկոմը, որ մենք վատ ենք կիրառել նրա կատարալապես ճիշտ և պարզ դիրեկտիվները... Մեր ստորին կազմակերպություններն ավելի մեղավոր են, բայց ամենամեծ պատասխանատվությունը մենք ենք կրում, որովհետև բավարար չենք ղեկավարել տեղերին ու կադրերին Անդրկովկասում[59]: Կոլեկտիվացման գործում «մի շարք ամենալուրջ սխալներ» թույլ տալու համար քննադատության ենթարկվեց նաև ՀԿ(բ)Կ - Կենտկոմը: Այդ սխալները, ասված է համագումարի բանաձևում, պատճառ դարձան միջակ գյուղացիության տատանումների համար, Հայաստանի առանձին շրջաններում նրա «առանձին խմբերի ելույթներին խորհրդային իշխանության դեմ»[60]:

1930 թ. վերջին կատարվեց Անդրերկրկոմի ղեկավարության նոր փոփոխություն. երկրկոմի 1-ին քարտուղար դարձավ Լ. Քարթվելաշվիլին: Այդ պաշտոնից ազատվեց Լոմինաձեն: Նա քննադատության ենթարկվեց ելույթների համար, երբ անհրաժեշտ էր համարում կրճատել կապիտալ շինարարությունը հօգուտ բանվորների նյութական դրության բարելավման և դեմ էր կոլեկտիվացման անհիմն ծավալմանը: 1931 թ. նոյեմբերին Լ. Քարթվելաշվիլուն փոխարինեց Մ. Օրախելաշվիլին:

ՀամԿ(բ)Կ 16-րդ համագումարում ևս (1930 թ. հունիս) Ստալինը նույն կարգով չափազանցված ներկայացրեց հաջողությունները, իսկ թույլ տված սխալները դիտեց որպես աճի դժվարություններ: Խոսվում էր կուսակցական գծի ծռումների, խոտորումների մասին, երբ գիծն էր սխալ, ամբողջությամբ վերցրած, այն իմաստով, որ կոլեկտիվացումը, որը վերաբերում էր միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների կյանքի պայմանների վերակառուցմանը, ենթադրում էր նախապատրաստական տևական ժամանակաշրջան: Իհարկե չպետք է բացառել նաև տեղական կազմակերպությունների ու կադրերի սխալները, որոնք իրենց հերթին էին «ջուր լցնում ջրաղացին»:

---

[59] Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների վեցերորդ համագումարը, էջ 102-104:
[60] Նույն տեղում, էջ 191:

Բռնությանը գյուղացին պատասխանեց բռնությամբ: Իսկ Ստալինը հորինել էր այն «տեսությունը», թե սոցիալիզմի նվաճումներն են վերջինիս դեմ ոտքի հանում կուլակներին ու մյուս շահագործող տարրերին:

Տնտեսության սոցիալիստական վերակառուցումը, որը գլխիվայր շրջում էր հին աշխարհի բոլոր ուժերը, նշում էր Ստալինը 16-րդ համագումարում, «չի կարող այդ ուժերի կողմից կատաղի դիմադրություն չառաջացնել»[61]:

Իրականում երկրի սոցիալիստական շինարարությունն առաջ էր տարվում «ռազմական կոմունիզմի» միջոցներով, իսկ Ստալինը այն ներկայացնում էր որպես Նեպ-ի շարունակություն, քանի որ, ըստ նրա, Նեպը, նահանջից հետո, ենթադրում էր նաև տնտեսական հարձակում կապիտալիզմի դեմ: 16-րդ համագումարը վստահություն հայտնեց, որ ծավալուն սոցիալիստական հարձակումով կուսակցությունը կապահովի «սոցիալիզմի լիակատար հաղթանակը ԽՍՀՄ-ում»[62]:

«Սոցիալիստական հարձակման» հիմնական թիրախը շարունակում էր մնալ «կուլակությունը», որի վերացումը սկսվել էր և դեռևս չէր ավարտվել: Համագումարը նշեց, որ կուլակը տակավին վերջնականապես ջախջախված չէ, որ նա կշարունակի «կատաղի դիմադրություն» ցույց տալ կոլեկտիվացմանը, ուստի դեռևս կպահանջվի նրա դեմ մղել «երկարատև, համառ պայքար»[63]: ԽՍՀՄ-ում այդ պայքարը հիմնականում իրականացվեց 1930-1932 թթ. ընթացքում[64]:

1930-1931 թթ. կուլակաթափության, կուլակների արտաքսման ու աքսորի վերաբերյալ տվյալներ է հայտնում Ստալինին հասցեագրված ԽՍՀՄ Միացյալ պետքաղվարչության նախագահի տեղակալ Յագոդայի զեկուցագիրը: 1930 թ. համատարած կոլեկտիվացման շրջաններից արտաքսվել էր 77795 ընտանիք (371 341 մարդ), 1931 թ. 162962 ընտանիք (787341 մարդ): Երկու տարում արտաքսվել էր 240757 կուլակային տնտեսություն կամ 1158986 մարդ: Դրանք 1-ին և 2-րդ կատեգորիայի տնտեսություններն էին, առանց նրանց, ովքեր հասցրել էին դիմել «ինքնավերացման»: Տասնյակ հազարավոր 3-րդ կատեգորիայի կուլակային ընտանիքներ, արտաքսվելով իրենց բնակավայրերից, տարաբնակեցվեցին իրենց մարզերի ու երկրամասերի սահմաններում: Այդ կարգի ընտանիքների թիվը հասնում էր 400-450 հազարի[65]:

---

[61] Ի. Ստալին, Երկեր, հ. 12, էջ 340:
[62] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: III մաս, էջ 25:
[63] Նույն տեղում, էջ 74:
[64] Правда, 16 сентября 1988 г.
[65] Документы свидетельствуют, с. 46.

Ջանգվածային արտաքսումներն իրականացվում էր պետքաղվարչության միջոցով, նրա զորքերի և կարմիր բանակի զորամասերի մասնակցությամբ, որի ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները ներկայացվել էին 1930 թ. հունվարի 18-ին Յագոդայի ստորագրած դիրեկտիվում:

Կուսակցության ղեկավարությունը և կառավարությունը ՄՊՔՎ-ի առաջ խնդիր դրեցին օգտագործել կուլակների աշխատանքը կատարելու համար անտառամթերումների, ոսկու արդյունահանման, գործարանների, երկաթուղագծերի ու ջրանցքների շինարարության ծրագրերը: Ճամբարները վերակառուցվեցին հատուկ բնակավայրերի: 1932 թ. սկզբին հատուկ բնակավայրերն ունեին 1,4 միլիոն մարդ, չհաշված համակենտրոնացման ճամբարներն ու բանտերը[66]:

1931 թ. մարտի 15-ին Յագոդան տեղերն ուղարկեց տվյալ տարվա կամպանիայի հրահանգը մայիս-սեպտեմբեր ընթացքում «բոլոր մարզերից կուլակներին մաքրելու նպատակով»: Այդ հիման վրա մշակված պլանը հաստատվեց մարտի 18-ին ՀամԿ(բ)Կ ԿԿՀ-ի կողմից[67]: Նրա նախագահ Անդրեևի հանձնաժողովը ղեկավարում էր այդ տարվա կամպանիան:

Ըստ մի այլ հաշվարկի տվյալների, որ կատարվել է ՄՊՔՎ-ի նյութերի հիման վրա, 1930-1932 թթ. երեք տարվա ընթացքում 1-ին և 2-րդ կատեգորիայի կուլակային տնտեսությունների թիվը 500 հազար է կամ 2,5 միլիոն մարդ: Իսկ 3-րդ կատեգորիայի 44990 կուլակային ընտանիքներ տարաբնակեցվել էին[68]:

Չնայած 1932 թ. աշնանը հայտարարվել էր ԽՍՀՄ-ում համատարած կոլեկտիվացման ավարտի մասին, այնուամենայնիվ կուլակաթափությունը (թե՞ միջակաթափությունը) շարունակվում էր: Ունեզրկում, բանտ ու աքսոր էր գործադրվում ամենատարբեր մեղադրանքներով կայուն առաջադրանքների չկատարում, կոլտնտեսությունների սեփականության հափշտակում, աշխատանքից հրաժարում և այլն: Բռնություններն առավել ևս գործադրելի էին Հայաստանում, որտեղ կոլեկտիվացման խնդրի լուծումը ձգձգվում էր:

Նշենք, որ 1989 թ. ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի 1930-40-ական և 50-ական թվականների սկզբին տեղի ունեցած բռնաճնշումների նյութերի լրացուցիչ ուսումնասիրության գծով հանձնաժողովն անդրադարձել է կուլակաթափության հարցին: Օգոստոսի 3-ի նիստում լսելով «կոլեկտիվացման (ապակուլակացման) ժամանակ սոցիալիստական օրինականության

---

[66] Նույն տեղում, էջ 47:
[67] В. Ф. Зима. Генрих Ягода и необъявленная война с советской деревней: Отечественная история, 2003, N4, с. 179.
[68] Նույն տեղում, էջ 182:

խախտումների և բռնաճնշումների մասին» հարցը, հանձնաժողովը կայացրել է հետևյալ որոշումը. «Հանձնարարել ԽՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտին, ԽՍՀՄ Դատախազության և ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի հետ համատեղ նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթերի նախագծեր»[69]:Ամսագիրը, որում հրապարակվել է տվյալ վավերագիրը, նույն թվականին (1990 թ.) փակվել է, իսկ ամսագրի տպագրված համարներում նախագծեր չեն հայտնաբերվել: Թե ինչ բովանդակություն կունենային նախագծերը և հանձնաժողովի վերջնական որոշումը, կարելի է միայն տրամաբանել: Ինչպես վերանայման (ռեաբիլիտացիա) որոշումներ կայացվեցին բազմաթիվ անօրինական ու սարքովի «գործերի» վերաբերյալ, հանձնաժողովը նույն կերպ կարող էր վարվել կուլակության հարցի նկատմամբ. հանցանք չգործած հարյուր հազարավոր գյուղացիական տնտեսությունների (թեկուզ ունևոր) սեփականազրկումը, գնդակահարությունը, տնից-տեղից զրկելը և աքսոր ուղարկելը սոցիալիստական օրինականության ամենակոպիտ խախտում էր: (Հիշյալ հանձնաժողովի նախագահ Ալ. Յակովլևի տվյալներով կոլեկտիվացման տարիներին բռնաճնշման է ենթարկվել 3,4 միլիոն մարդ)[70]:

3. ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԵՏԱԳԱ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1930-1931 թթ. իրադարձությունները հանգեցրին խորհրդային գյուղի տնտեսապես ծեռներեց և քաղաքականապես ակտիվ տարրի վերացմանը: Մյուսների համար ստեղծվեց վախի ու սարսափի մթնոլորտ, հետևաբար նրանց հնազանդեցնելու պայմաններ: Գյուղացու նկատմամբ հարկադրանքի ու ճնշման գործադրումը, իհարկե, չվերացավ: Այն միայն փոխեց իր ձևերն ու եղանակները: Եթե 1930 թ. ամբողջ ուժով գործում էր վարչական եղանակը, ապա այնուհետև իշխող դարձավ տնտեսականը, զուգորդված վարչականի հետ:

1931 թ. համար ևս, ինչպես մինչև այդ, սահմանվեցին կոլեկտիվացման առաջադրանքներ (ստուգիչ թվեր), որը անխուսափելիորեն հանգեցնելու էր նոր ճնշումների կոլեկտիվացման համար անպատրաստ գյուղացիության հիմնական զանգվածների նկատմամբ: Բարձրագույն կուսակցական որոշմամբ նախատեսվեց շրջանների առաջին խմբում (զարգացած հացահատիկային շրջաններ) 1931 թ. ավարտել կոլեկտիվացումը և կուլակության վերացումը:

---

[69] "Известия ЦК КПСС", 1990 г., N1, с. 38.
[70] Ал. Яковлев, Крестосев, с. 265.

Երկրորդ խմբի համար 50 տոկոսանոց կոլեկտիվացում: Երրորդ խումբը (սպառող, տնտեսապես հետամնաց ազգային շրջաններ, հետևաբար նաև Հայաստանը). հացահատիկային տնտեսություններ՝ 20-25 և բամբակագործական ու ճակնդեղագործական տնտեսություններ՝ ոչ պակաս 50 տոկոս:

Համատարած կոլեկտիվացումից հրաժարվելուց հետո Հայաստանի կուսակցական մարմինները առաջիկա ժամանակաշրջանի խնդիր դարձրեցին «համատարած կոլեկտիվացման պայմանների նախապատրաստումը և կապիտալիզմը արմատախիլ անելը»[71]:

Միութենական հատուկ որոշումով (1931 թ.) համատարածի չափանիշ համարվեց տնտեսությունների գծով կոլեկտիվացման 68-70 և ցանքատարածությունների գծով՝ 75-80 տոկոսը:

Համատարածի նախապատրաստության միջոցառումների մեջ կարևոր դեր էր հատկացվում գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեության ծավալմանը: Սակայն փաստորեն շեշտը դրվում էր բուն կոլեկտիվացման վրա, իսկ կոոպերացիայի նշանակությունը ավելի ու ավելի էր թերագնահատվում ու անտեսվում, ենթակա դառնալով պետական վերահսկողության և, ի վերջո, վերացվում: Վերացվելու էր նաև կոլտնտեսությունների սեփական ղեկավար մարմին Կոլտնտկենտրոնը, կոլտնտեսությունները վերածելով կիսապետական կազմակերպությունների, պետական վերահսկողության ներքո: Իսկ մինչև Կոլտնտկենտրոնի վերացումը 1931 թ. մարտի 5-8-ը կայացավ կոլեկտիվ տնտեսությունների հանրապետական 2-րդ համագումարը, որի օրակարգի հիմնական հարցը Կոլտնտկենտրոնի հաշվետու զեկուցումն էր: Հաշվետու ժամանակաընթացքում (2 տարի 3,5 ամիս, 1-ին համագումարը տեղի էր ունեցել 1928 թ. նոյեմբերին) կոլեկտիվացման մակարդակը 1,1 տոկոսից բարձրացել էր 18,1 տոկոսի: Դա նշանակում էր, որ ժամկետից շուտ արդեն կատարվել էր 1-ին հնգամյա պլանով Հայաստանի համար նախատեսված առաջադրանքը: Սակայն դեռևս - չէին կատարվել վերանայված, խիստ բարձր ցուցանիշները (ստուգիչ թվերը):

1931 թ. մարտին կայացած ԽՍՀՄ խորհուրդների 6-րդ համագումարը, կուսակցական դիրեկտիվների հետևությամբ, արձանագրեց, որ «ԽՍՀՄ կոլեկտիվացման ավարտման խնդիրը կարող է և պետք է լուծվի հնգամյակի վերջում»[72]:

---

[71] ՀԱԱ, ֆ. 1, ց. 15, գ. 70, թ. 1-2:

[72] Решения партии и правительства по хозяйственным вопросам. Том 2, М., 1967, с. 290.

Կոլեկտիվացումն առաջ տանելու նպատակով կարևոր դեր էր խաղալու տնտեսական ճնշումը:

Գյուղացիների նկատմամբ վարչարարություն ցույց տալու արտահայտություն էր, այսպես կոչված, «կայուն առաջադրանքի» սահմանումը ցանքի ու բերքի համար: «Կուլակի» համար նախատեսված այս միջոցառումը, որը հիշեցնում էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, գործադրվեց շատ գյուղացիների նկատմամբ: Ընդ որում, էականն այն է, որ կայուն առաջադրանքը չկատարողները և թերացողները ենթակա էին դատի, ըստ «Քրեական օրենսգրքի»: Դատավարությունը հրապարակային էր և լայնորեն քարոզվում էր մամուլում: Շատ գյուղացիներ դատապարտվեցին մինչև 9 տարվա ազատազրկման և «կուլակաթափության»:

«Կուլակի» հատկանիշները այնպիսի լայն սահմանում էին ստացել, որ մարդիկ շատ դեպքերում աշխատում էին ազատվել այդ հատկանիշներից (բատրակ վարձելուց հրաժարվել և այլն) կամ հեռանալ գյուղից: «Կայուն առաջադրանքի» պրակտիկան ուղեկցվում է ծանր հարկային բեռով: Կուլակները ենթակա էին գյուղմիասհարկի, ինքնահարկի և կուլտհարկի, նաև միանվագ հարկի: Հարկային բեռը սկսեց գերազանցել հարկատուի եկամուտը, որը հանգեցնում էր տնտեսության քայքայման: «Կուլակ» կոչվող գյուղացու հարկը մի քանի անգամ ավելի էր միջակ տնտեսատիրոջ հարկաչափից:

Հարկային ճնշման և կոլեկտիվացման դեմ բողոքի ուժեղ արտահայտություն են Դարալագյազի շրջանի Արփա գյուղի իրադարձությունները: 1931 թ. խորհրդային իշխանության ծանր հարկային և բռնի կոլեկտիվացման քաղաքականության նկատմամբ իր դժգոհությունը Արփա գյուղի ամբողջ բնակչությունը, կուսակցական բջիջի ղեկավարությամբ, արտահայտեց գյուղից լեռները հեռանալով:

Արփա գյուղի և նրա բջիջի ելույթը, որը տևեց 1931 թ. հուլիսի 3-6-ը, պատշպանում էին նաև Խաչիկ գյուղի կոմունիստները: Արփայի կոմունիստները փորձեցին իրենց կողմը գրավել նաև շրջանի առանձին գյուղերի կուսակցական և անկուսակցական գյուղացիներին: Արփեցիների դեմ դուրս բերվեցին պետքաղվարչության զինված ուժերը: Նրանք մտան Արփա, բանակցություններ վարեցին գյուղացիների հետ, որոնք համաձայնվեցին վերադառնալ գյուղ և հանձնել զենքերը: Գյուղացիների դեմ գործողությունները ղեկավարում էր անձամբ ՊՔՎ-ի նախագահ Աբուլյանը: Ըստ էության Արփա գյուղը ապստամբել էր, որը սակայն, անդրկովկասյան և հանրապետական ղեկավար շրջանների փաստաթղթերում որակվեց որպես «կուլակային-հակահեղափոխական» շարժում, իսկ կուսբջիջի վարքագիծը՝ աջ թեքման կամ աջ օպորտունիզմի արտահայտություն:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն և Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի նախագահությունը հուլիսի 11-ին որոշում ընդունեցին «Դարալագյազի շրջանի անցքերի մասին»: Կենտկոմը փորձում էր վերլուծել Դարալագյազի դեպքերի պատճառները, միաժամանակ մշակելով գյուղի և ամբողջ շրջանի դրությունը բարելավող միջոցառումներ: Խոստովանություն է արվում նաև թույլ տրված սխալների վերաբերյալ, որոնք «պարարտ հող մատակարարեցին» Արփա գյուղի կուսակցական և կոմերիտական բջիջների ելույթին, որ «մի խումբ գազազած աջ օպորտունիստներ» փորձեն անցնել հակակոլտնտեսային, հակախորհրդային ու հեղափոխական պայքարի ուղին, «ծուլվելով դաշնակցական հեղահեղափոխական կուսակցության հետ»[73]: Հանրապետական ղեկավար մարմինները և շրջանային կազմակերպությունները, ասված է որոշման մեջ, անբավարար էին հաշվի առել Դարալագյազի շրջանի 1930 թ. գարնան դեպքերի դասերը, չկարողանալով վճռականորեն հրաժարվել «ձախ» օպորտունիստական գործելաոճից (կոլեկտիվացման առաջադրանքներ, վարչարարություն, մթերումների ճնշում և այլն): Այնուամենայնիվ արված խոստովանություններն օգտակար էին, որովհետև դրանից բխում էին ճիշտ եզրակացություններ հետագա աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ: Շրջանի գյուղերի տնտեսական-քաղաքական դրությունը կարգի բերելու նպատակով կազմացրվեցին Արփա և Խաչիկ գյուղերի կուսակցական ու կոմերիտական բջիջները, փոխվեցին շրջանի ղեկավարները: Դարալագյազի շրջանը սպախոշորացվեց, բաժանվելով Քեշիշքենդի ու Փաշալուի շրջանների: Վերանայվեց գյուղխորհուրդների նախագահների ու քարտուղարների կազմը: Հանձնարարություններ տրվեցին հանրապետական մարմիններին և այլն:

Հայաստանում, ինչպես նաև Անդրդաշնության մյուս հանրապետություններում թույլ տրված սխալների քննադատությամբ 1931 թ. ապրիլին հանդես եկավ կուսակցության բարձրագույն օրգան «Պրավդա» թերթը: Թերթը կոպիտ սխալների թվում նշում էր կոլտնտեսային շարժման դեկրետավորումը, շրջանների ու գյուղերի համար ստուգիչ թվերի պրակտիկան: Իսկ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1931 թ. հոկտեմբերի 31-ին հանգամանալի որոշում ընդունեց «ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի, Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի կենտկոմների զեկուցումների առթիվ»: Որոշման մեջ նշվում էր, որ նրանց գործունեության մեջ թույլ են տրվել «լուրջ քաղաքական սխալներ», որոնցում հիմնական էր համարվում գյուղացիական հարցում կատարված սխալը, նկատի ունենալով «մի շարք ամենակոպիտ շեղումները»

[73] ՀԱԱ, ֆ. 1, ց. 14, գ. 9, թ. 340-348:

հացամթերումներում, կոլեկտիվացման անցկացումը առանց բավարար նախապատրաստության:

Հետաքրքիր է, օրինակ, ստուգիչ թվերի մասին քննադատությունը: Հենց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թ. դեկտեմբերյան պլենումն էր դրել կոլեկտիվացման ժամկետներ և սահմանել ստուգիչ թվեր:

Նույն կենտկոմը 1931 թ. օգոստոսի 2-ի որոշումով նորից սահմանեց ժամկետներ. հիմնական հացահատիկային շրջաններում այն ավարտվել էր: Մյուս հացահատիկային շրջանների ու Անդրկովկասի բամբակագործական (նաև երկրի ճակնդեղագործական) շրջանների համար ժամկետ էր դրվում 1932 թ.: Մնացած, սպառող գոտիներում, կոլեկտիվացումը հիմնականում ավարտվելու էր 1932-1933 թթ.: Կենտկոմը միաժամանակ զգուշացնում էր կոլեկտիվացման համար պայքարը չվերածել «կոլեկտիվացման տոկոսների հետևից ընկնելու անառողջ վազքի», փքուն տոկոսների ծեռքբերման[74]:

Ճիշտ է ասված: Միայն պետք է ավելացնել, որ սխալների գլխավոր աղբյուրը հենց որոշում ընդունողն էր ՀամԿ(բ)Կ Կենտկոմը: Նրա իջեցրած դեկրետավորումից և ժամկետներ ու ստուգիչ թվեր սահմանելուց էին բխում և կամավորության խախտումը, և մյուս բոլոր սխալներն ու խոտորումները:

Կուսակցական ղեկավար մարմինները, մի կողմից, զոռով առաջ էին մղում կոլեկտիվացումը, մյուս կողմից, ստիպված էին պայքարել այդ ընթացքում և դրա պատճառով առաջ եկած սխալների դեմ: ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1931 թ. հուլիսյան միացյալ պլենումը, խոսելով կոլեկտիվացման նոր վերելքի մասին, տեղնուտեղը անբավարար էր համարում զարգացման ընթացքը, հատկապես անասնապահական շրջանների համար: Հետ մնալու հիմնական պատճառը, ըստ պլենումի, «կուսակցության գլխավոր գծի աջ օպորտունիստական աղավաղումներն էին, ինքնահոսի պրակտիկան, ինչպես նաև «ձախ» խոտորումները: Այսինքն, պլենումը խփում էր և՛ նալին, և՛ մեխին: Պլենումը միաժամանակ քննադատում էր հողժողկոմատին և Կոլտնտկենտրոնին շրջանների ու գյուղերի կոլեկտիվացման «ստուգիչ թվեր» սահմանելու համար, դա համարելով քաղաքական սխալ: Եվ այդ այն դեպքում, երբ, ինչպես վերը նշվեց, ստուգիչ թվերի մասին կային բարձրագույն կուսակցական որոշումներ:

Հայաստանի ղեկավարությունը մեծ ուշադրություն էր նվիրում բամբակագործական շրջանների (Վաղարշապատ, Ղուրդուղուլի, Ղամար-

---

[74] Коллективизация сельского хозяйства. Важнейшие постановления Коммунистической партии и Советского правительства. 1927-1935. М., 1957, с. 398-399.

լու, Վեդի) կոլեկտիվացմանը: Այդ տարիներին ԽՍՀՄ-ի համար կարևոր նշանակություն էր ստացել բամբակի խնդրի լուծումը արտասահմանից կախումը (ներմուծումը) վերացնելը: Նախատեսվում էր հարցը լուծել կոլտնտեսությունների միջոցով:

1931 թ. Հայաստանում կազմակերպվեցին 3 նոր մեքանատրակտորային կայաններ՝ Վաղարշապատի, Դամարլուի և Դավալուի: Այսպիսով, հանրապետության բոլոր 4 ՄՏԿ-ները գտնվում էին բամբակագործական շրջաններում, որը պատահական չէր: Հանդես եկան գյուղատնտեսության կոլեկտիվացման նոր ձևեր ու եղանակներ, ինչպիսիք էին նախաձեռնող խմբերը, հավաքագրող հանձնաժողովները, «կարմիր խնամախոսները» և այլն:

ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1931 թ. մարտի 26-ի որոշման մեջ նշում էր, որ տվյալ շրջանների կուսակցական կազմակերպությունները պետք է արագացնեն կոլեկտիվացման ընթացքը՝ հետ մնալը հաղթահարելու և տարվա բամբակի ցանքի ու կոլեկտիվացման առաջադրանքները կատարելու համար: Ապրիլին կայացած նույն շրջանների խորհրդակցությունում Ղուրդուղուլու շրջանը զեկուցում էր, որ կատարել է կուսակցության առաջադրանքը (խոսքը կոլեկտիվացման 50 տոկոսի մասին էր): Իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը հայտարարեց, թե Ղուրդուղուլին այն փուլի մեջ է, երբ առանց չափազանցության կարող է համատարած կոլեկտիվացման շրջանի առաջին թեկնածու համարվել Հայաստանում: Փաստորեն նորից բամբակագործական շրջանների համար օրակարգային դարձավ համատարած կոլեկտիվացման կարգախոսը:

Համատարած շրջանի թեկնածուն արդարացրեց իր հետ կապված հույսերը: Նրա կուսկազմակերպությունը 1932 թ. հունվարին Կենտկոմին տեղեկացրեց, որ շրջանի աշխատավոր գյուղացիության 82 տոկոսը ընդգրկվել է կոլտնտեսությունների մեջ, հիմնականում ավարտելով համատարածը:

«Ստուգիչ թվերը» կատարեցին նաև մյուս բամբակագործական շրջանները և կոլեկտիվացման ընդհանուր մակարդակը 1932 թ. հունվարի 1-ի տվյալներով բարձրացավ 55,6 տոկոսի:

Հանրապետության նախալեռնային ու լեռնային շրջանների համար ևս 1931 թ. դարձավ կոլեկտիվացումը տեղից շարժելու տարի: 1931 թ. օգոստոսին Ղարաքիլիսայում (այժմ Վանաձոր) կայացած 11 լեռնային շրջանների կոլտնտեսականների հավաքի առաջարկությամբ 300 «հարվածային կոլտնտեսականներ», բաժանված 60 բրիգադների, մեկնել էին հետ մնացող շրջաններ ու գյուղեր «կոլտնտեսային շարժման վերելքին օժանդակելու համար»: Նույնպիսի կոչով հանդես եկավ Նոր Բայազետի,

Ախտայի, Մարտունու և Բասարգեչարի (Սևանի գոտու) շրջանների «հարվածային կոլտնտեսականների» համագումարը, միաժամանակ գովերգելով «սեփական փորձի» արդյունքները, թե ինչպես է կոլեկտիվ տնտեսությունը իրենց փրկել բազմաթիվ կարիքներից, որոնք նրանց «կաշկանդել էին անհատական տնտեսություններում եղած ժամանակ»[75]: Մամուլի հրապարակած այս կեղծ և իրականությանը չհամապատասխանող քարոզչությանը հակառակ ընդամենը մեկ տարի անց, ինչպես կտեսնենք, հենց այս նույն շրջաններում տարածվեց սովը:

Այնուամենայնիվ կուսակցական կազմակերպությունների հետ միասին կուսակցական և ոչ կուսակցական մամուլը ևս լծվել էր կոլեկտիվացումն ամեն գնով գլուխ բերելու գործին:

Ինչևէ, Հայաստանի լեռնային ու նախալեռնային շրջանները ևս արձանագրեցին կոլեկտիվացման բարձր ցուցանիշներ: 1932 թ. հունվարի 1-ի դրությամբ աշխատավոր տնտեսությունների կեսին ավելին կոլտնտեսությունների մեջ էին Իջևանի, Գորիսի, Ղափանի և Մեղրու շրջաններում (վերջինում կոլեկտիվացումը մոտենում էր ավարտին): Տնտեսությունների մեկ երրորդը և ավելին կոլեկտիվացվել էին 11 շրջաններում: Մյուս շրջաններում կոլեկտիվացման ցուցանիշը մեկ քառորդի սահմաններում էր: Հետ էր մնում Թալինը: Լեռնային և նախալեռնային շրջանների կոլեկտիվացման մակարդակը 36,1 տոկոս էր:

1931 թ. վերջին Հայաստանում կոլեկտիվացումն ընդգրկել էր աշխատավոր գյուղացիական տնտեսությունների 39,9 տոկոսը, տարվա սկզբի 12,1 տոկոսի դիմաց: Այդ ցուցանիշը մի փոքր կփոխվի, երբ հաշվարկը կատարվի ըստ գյուղացիական տնտեսությունների 1931 թ. ճշտված տվյալների: ՀՍԽՀ Պետպլանի հարկային վիճակագրության տվյալներով գյուղացիական տնտեսությունների թիվը կազմում էր 183,626: Նրանցից 6013-ը ծայնազրկված էր (կուլակներ և ուրիշներ), 8758-ը հեռացել էր գյուղից, որոնք միասին կոլեկտիվացման ենթակա չէին: Կոլեկտիվացումը վերաբերում էր 168.855 տնտեսությունների, մինչև այդ ընդունված 157.000-ի դիմաց:

Հանրապետությունում գոյություն ուներ 897 կոլտնտեսություն, այդ թվում 811 գյուղատնտեսական արտել, 82 հողը համատեղ մշակող ընկերություն և 4 կոմունա: Առաջիկայում պահպանվեցին միայն գյուղատնտեսական արտելները:

Համեմատության համար նշենք, որ Հայաստանում կոլեկտիվացումն ընթանում էր ավելի դանդաղ, քան մյուս միութենական հանրապետություններում (1932 թ. հուլիսի 1-ի դրությամբ ԽՍՀՄ կոլեկտիվացման

---

[75] Խորհրդային Հայաստան, 19 օգոստոսի 1931 թ.:

միջին մակարդակն էր տնտեսությունների գծով՝ 61,5 և ցանքատարածությունների գծով՝ 77,7 տոկոս)[76]:

1932 թ. հունվարին կայացած ՀԿ(բ)Կ 8-րդ համագումարն արձանագրեց, որ հաշվետու ժամանակաշրջանը (նախորդ 7-րդ համագումարը՝ 1930 թ. մայիս) նշանակալից է եղել «սոցիալիստական արշավով կապիտալիստական տարրերի դեմ և չքավոր ու միջակ գյուղացիության վճռական շրջադարձով դեպի սոցիալիզմը»:

Համագումարը հանգամանորեն անդրադարձավ նաև կոլտնտեսային շինարարության գործում տեղ գտած քաղաքական կոպիտ սխալների հարցին: Գյուղացիական ապստամբությունները ներկայացվեցին որպես «բանդիտիզմ» և կուլակ-դաշնակցականների սադրանքի արդյունք: Նույն կարգով «կուլակային, դաշնակցական տարրերին» վերագրվեց գյուղացիների կողմից անասունների զանգվածային մորթը, որն իր հերթին իրավացիորեն դիտվեց որպես «ամբողջ ճակատով հարձակման հետևանքով էլ ավելի սրված դասակարգային պայքարի ցայտուն արտահայտություն»[77]: Իրականում անասունների զանգվածային մորթը գյուղացիների զանգվածային հակառակության արտահայտությունն էր բռնի կոլեկտիվացման դեմ:

Համագումարն առանձին քննարկեց սոցիալիստական անասնաբուծության զարգացման խնդիրը, դրա ուղիները համարելով անասնապահական սովխոզների ու կոլտնտեսային ֆերմաների կազմակերպումը: ԽՍՀՄ-ում մսի արտադրության ճգնաժամի պայմաններում սոցիալիստական անասնաբուծության զարգացումը դիտվում էր որպես ետռաջիկա տարիների կենտրոնական խնդիրը գյուղատնտեսության ասպարեզում, այնպես, ինչպես նախորդ տարիներին կենտրոնական խնդիր էր հայտարարվել հացի խնդրի լուծումը[78]: Իրականում ԽՍՀՄ սոցիալիստական գյուղատնտեսությունը չլուծեց ինչպես հացի, այնպես էլ մսի արտադրության հիմնահարցերը:

Ինչ վերաբերում է գյուղում կուսակցության վարած քաղաքականության միութենական արդյունքներին ու գնահատականներին, ապա ՀամԿ(բ)Կ 17-րդ կոնֆերանսը (1932 թ. հունվար-փետրվար) նշեց, թե դեպի

---

[76] Достижения Советской власти за 40 лет в цифрах. Статистический сборник. М., 1957, с. 25.

[77] Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության 8-րդ համագումարի բանաձևերը: Երևան, 1932:

[78] Ա. Գուլոյան, Սոցիալիստական անասնաբուծության մարտական խնդիրները (զեկուցում տրված Հայկոմկուսի 8-րդ համագումարում), Երևան, 1932:

սոցիալիզմ գյուղի չքավորա-միջակային զանգվածների «վերջնական շրջադարձով» գյուղատնտեսության մեջ իշխող դիրք են գրավել սոցիալիստական ձևերը (կոլտնտեսություններն ու սովխոզները)[79]:

Սակայն կոլեկտիվացման ընթացքի նշված զարգացումը չդարձավ շարունակական: Ղեկավար մարմինները այնուհետև շեշտը դնում էին ձեռք բերված հաջողությունները ամրապնդելու վրա: Ուստի 1932 թ. կոլեկտիվացման ցուցանիշները Հայաստանում ոչ միայն չբարձրացան, այլև, հակառակը, նույնիսկ նվազեցին: Կոլտնտեսությունների ամրապնդման նպատակով իրականացվեցին մի շարք միջոցառումներ. լուծվում էին կոլտնտեսային հանրային արտադրության կազմակերպման հարցերը, ինչպես աշխատանքային բրիգադների ու օղակների ստեղծումն էր: Վարձատրության հիմքում դրվում էր աշխատանքային օրը (աշխօր): Աշխատանքային կարգապահության ամրապնդման միջոց դարձվեց կոլտնտեսությունները «դասակարգային խորթ ու անհարազատ» տարրերից ազատելը: 1932 թ. ընթացքում կոլտնտեսություններից զտվեցին 1300 «կուլակային» տնտեսություններ: Զգալի թիվ էին կազմում ինքնակամ հեռացողները: Այդ երկու խմբերը միասին կազմում էին 7800 տնտեսություն: Դրա դիմաց ամբողջ տարվա ընթացքում կոլտնտեսություն ընդգրկվել էր ընդամենը 2200 տնտեսություն: Ընդհանուր արդյունքում կոլեկտիվացման մակարդակը 1933 թ. հունվարի 1-ին իջել էր 37,0 տոկոսի (նախորդ տարվա սկզբի 39,9 տոկոսի դիմաց):

Կոլտնտեսություններն «ամրապնդելու» միջոցառումների մեջ բացառիկ է հանրային (սոցիալիստական) սեփականությունը գողերից ու հափշտակողներից պաշտպանելու մասին ԽՍՀՄ Կենտգործկոմի և ժողկոմխորհի 1932 թ. օգոստոսի 7-ի օրենքը: Օրենքն աչքի էր ընկնում իր դաժանությամբ, երբ չնչին յուրացման, հափշտակության ու գողության համար սահմանվում էին խստագույն պատժամիջոցներ, ընդհուպ մինչև պատժի առավելագույն չափը՝ գնդակահարություն կամ 10 տարվա բանտարկություն:

Օրենքի ընդունումից հետո մինչև 1934 թ. վերջը, երկուկես տարվա ընթացքում դատարանները կայացրել էին որոշումներ, 37 մարդու համար գնդակահարություն (մասամբ փոխարինվել է 10 տարվա աքսորով), 214 մարդ՝ 10 տարի համակենտրոնացման ճամբար: Զգալի թիվ էին կազմում մինչև 8 տարի դատապարտվածները[80]:

1933 թ. հունվարի 1-ին հանրապետության պետքաղվարչության դատական նիստը գնդակահարության որոշում էր կայացրել Վաղարշա-

---

[79] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, III մաս, էջ 185:
[80] ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 62, թ. 5-7, 28-31, գ. 75, թ. 2-16:

պատի շրջանի Ներքին Այնալու գյուղի չորս բնակիչների համար, որոնք մեղադրվում էին որպես «գյուղի հակախորհրդային գաղտնի խմբակի անդամներ և հակահեղափոխական նպատակով կոլտնտեսության խոտի հրդեհը կազմակերպելու համար»[81]: Նույն դատական նիստի նույն ամսվա մի այլ որոշումով դատապարտվեցին Ղուրդուղուլու շրջսպառկոոպի 13 աշխատակիցներ նյութական միջոցների յուրացման համար: Նրանցից մեկը դատապարտվեց գնդակահարության, մեկը ստացավ 10, մյուսները 3-5 տարի[82]: Չորահէկում պատահած հրդեհի համար դատարանը համեմատաբար մեղմ պատժաչափեր որոշեց կայանի չորս ինժեներների համար[83]:

Օգոստոսի 7-ի օրենքի վերաբերյալ լրացուցիչ տվյալներ կարելի է քաղել խորհրդային մամուլի այն տեսություններից, որ հրապարակել է դաշնակցականների «Հայրենիք» (Բոստոն) ամսագիրը:

Բաշքենդ, Չիվա և Խաչիկ գյուղերի կոլտնտեսություններում տեղի ունեցած հացահատիկի և խոտի դեզերի հրդեհի առթիվ թերթը պահանջել է «հանցավորներին դատապարտել սոցիալական պաշտպանության գերագույն պատիժ (գնդակահարություն)»: Նման պատժի արժանացան Գրամփա գյուղի երկու գյուղացիներ, Վարդանլու գյուղից մեկ ուրիշը, Երևանի հացի գործարանի ու Լենինականի սովխոզի մեկական և երկաթուղու երկու բանվորներ: Ավելի մեծ թիվ էին կազմում տաս տարով ազատազրկվածները: Դատարանի առաջ էր կանգնել Լենինականի միացյալ դատարանի ամբողջ կազմը (նախագահ, դատավոր, կատարածու), այն բանի համար, որ «չարամտորեն» արդարացրել կամ պատիժը մեղմացրել էր «պետության կայուն առաջադրանքները չկատարող կուլակների ու սպեկուլյանտների»[84]:

Ի կենսագործումն նշված օրենքի ՀՍԽՀ Կենտգործկոմը իր որոշումով պահանջում էր. անողոք պայքար ծավալել սոցիալապես, քաղաքականապես ու գաղափարապես անհարազատ տարրերի դեմ, ովքեր հաշվային աշխատողների անվան տակ թափանցել էին կոլտնտեսություններ ու սովխոզներ. մերկացնել հանրային գույքն ու սեփականությունը հափշտակողներին, ովքեր նման ճանապարհով դիմադրություն էին կազմակերպում գյուղի սոցիալիստական վերակառուցմանը: Պահանջվում էր խիստ միջոցներ գործադրել մենատնտես գյուղացիների նկատմամբ, ովքեր զբաղվելով սպեկուլյացիայով, համառորեն հրաժարվում էին կատարել ցանքի իրենց

---

[81] Նույն տեղում, գ. 58, թ. 54-57:
[82] Նույն տեղում, թ. 113-127:
[83] Նույն տեղում, գ. 59, թ. 188-203:
[84] Հայրենիք, 1932, թիվ 12, 1933, թիվ 7, 9:

պարտավորությունը, հակառակ դեպքում նրանք կարող էին զրկվել տնամերձ հողից, նույնիսկ իրենց շրջանից արտաքսվել անբերրի վայրեր:

ՀՍԽՀ Կենտգործկոմը հեղափոխական զգոնության կոչ էր անում՝ «մերկացնելու դասակարգային թշնամու և նրա գործակալների բոլոր մեքենայությունները»[85]:

Խորհրդային ժողովուրդը օգոստոսի 7-ի օրենքը դրա դաժանության ու դրակոնական բնույթի համար անվանել է «Հինգ հասկերի օրենք»: Պատմաբանները պարզել են, որ նրա նախաձեռնողը և հեղինակը Ստալինն է, Կենտկոմի գյուղբաժնի վարիչ Կագանովիչի ակտիվ մասնակցությամբ: Նման օրենքի անհրաժեշտության մասին առաջին անգամ Ստալինը հիշատակել է 1932 թ. հուլիսի 20-ին, շարադրելով դրա սկզբունքները: Նույնպիսի հիմնավորում Ստալինը կատարել է «Կոլտնտեսային առևտրի մասին դեկրետի» կապակցությամբ: Հուլիսի 26-ի նամակում, ուղղված Կագանովիչին, Ստալինը հայտնում է, որ վերջնականապես ձև է տվել վերոհիշյալ օրենքին, իսկ օգոստոսի 4-ի նոր նամակում գրել է, որ վերադարձնում է օրենքի նախագիծը, ուղղումներով ու լրացումներով: «Ինչպես տեսնում եք ես այն փոքր ինչ ընդլայնել եմ: Այն շուտ տպագրեք»[86]:

1933 թ. փետրվարին հարվածային կոլտնտեսականների 1-ին համամիութենական համագումարում արած զեկուցման մեջ Կագանովիչը համարձակվեց օգոստոսի 7-ի օրենքը գնահատել «մեծագույն օրենք», որպիսիններն «ապրում են տասնյակ ու հարյուրավոր տարիներ»: Իր մի այլ նամակում Ստալինը դժգոհում էր, որ «Պրավդա» թերթն անբավարար է պրոպագանդում օրենքը և ցուցումներ էր տալիս, թե դա ինչպես և ինչ ուղղությամբ պետք է իրականացնել: Սակայն շուտով մամուլի լայն հրապարակումները դադարեցին, քանի որ արտասահմանի տեսանկյունից դրանք դառնում էին աննպաստ:

Հինգ ամսվա ընթացքում (մինչև 1933 թ. հունվարի 15-ը) ԽՍՀՄ-ում օգոստոսի 7-ի օրենքով դատապարտվել էր 103 հազար մարդ: Այդ թվից 79060 դատապարտվածների մշակված տվյալների համաձայն պատժի առավելագույն չափին (գնդակահարության արժանացել էր 4880 մարդ (6,2 տոկոսը), 10 տարվա ազատազրկման՝ 26086 մարդ (33,0 տոկոսը): Բոլոր դատապարտվածների 62,4 տոկոսը կոլտնտեսականներ էին[87]:

1932 թ. միջոցառումների մեջ յուրահատուկ են «հեղափոխական օրինականության» պաշտպանության մասին որոշումները: Դրանց անհրա-

---

[85] Հայրենիք, 1933, թիվ 7:
[86] И. Е. Зеленин. "Закон о пяти колосках": разработка и осуществление: "Вопросы истории", 1998, N 1.
[87] Նույն տեղում:

ժեշտությունը վկայում էր այն մասին, որ գյուղում մեծ տարածում էին ստացել անօրինական ծերբակալությունները, խուզարկությունները, բռնագրավումներն ու այլ գրավումները՝ նաև նրանց կողմից, ովքեր դրա իրավունքը չունեին: Այդ ամենի դեմ դժգոհությունն այնքան ուժեղ էր, որ իշխանությունն ստիպված էր գոնե առերես զսպել կամ պատժել մեղավորներին: Նույն «Հայրենիք» ամսագիրը տեղեկացրել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարի ճառի մասին, որով հայտնվում էր, որ միայն 1932 թ. փետրվար և մարտ ամիսների ընթացքում աշխատանքից հեռացվել էր ավելի քան 800 պաշտոնատար անձ: Նրանց մեջ կային կուսբջիջների 110 քարտուղար, գյուղխորհուրդների 115 ու կոլտնտվարչությունների 114 նախագահ, կոլտնտեսային 400 այլ ղեկավարներ: Հայտնվում էր նաև 600 կուլակային տարրերի կոլտնտեսություններից զտելու և նրանց մի մասին դատարանի միջոցով խիստ պատժի ենթարկելու մասին: Դրանից զատ ՀՍԽՀ գերագույն դատարանը քննել էր 98 քրեական գործ, որի զգալի մասը ավարտվել էր գնդակահարության կիրառումով[88]:

Բերված փաստերը ցույց են տալիս, թե ինչպիսի ծանր դրություն էր ստեղծվել գյուղում կոլեկտիվացման քաղաքականության հարկադրական կենսագործման պատճառով: Գյուղն փաստորեն գտնվում էր տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամի մեջ:

Եվ այնուամենայնիվ 1933թ. հունվարին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումը ամփոփեց առաջին հնգամյա պլանի կատարման արդյունքները, արձանագրելով պլանի իբրև թե ժամկետից շուտ կատարումը: Նշվեց, որ արդյունքում Խորհրդային Միությունը ագրարայինից դարձել է ինդուստրիալ երկիր, ստեղծվել է սեփական տեխնիկական բազա ամբողջ տնտեսությունը վերակառուցելու համար: Երկրի կարևոր շրջաններում ավարտվել էր համատարած կոլեկտիվացումը և կուլակության, որպես դասակարգի, վերացումը: «Ով-ում» հարցը (ով ում կհաղթի) լուծվել էր սոցիալիզմի օգտին՝ ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում:

Խորհրդային պաշտոնական տեսակետի համաձայն, նկատի ունենք «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը, որը պատրաստվեց և հրատարակվեց 1939 թ. Ստալինի ամենաակտիվ մասնակցությամբ, համատարած կոլեկտիվացումը նույնացվեց «վերևից հեղափոխության» հետ, քանի որ կատարվել էր վերևից, պետական իշխանության նախաձեռնությամբ: Այդպիսի բնութագիրը ճիշտ է, քանի որ համապատասխանում է իրականությանը: Սակայն ճիշտ չէ բնութագրության շարունակությունը, որը նշում էր, թե իբր այդ հեղափոխությունը պաշտպանություն է գտել ներքևից, գյուղացիության կողմից: Իրականում գյուղացիությունը ոչ միայն

---

[88] Հայրենիք, 1939, թիվ 9:

չի պաշտպանել համատարած կոլեկտիվացումը, այլև ակտիվորեն պայքարել է բռնի կոլեկտիվացման դեմ[89]:

Կոլեկտիվացման ընթացքի տեսակետից Հայաստանը (նաև Վրաստանը) ԽՍՀՄ հանրապետությունների մեջ վերջիններից էր: Նա չէր կատարել հնգամյակի սահմաններում կուսակցության վերանայված պլանը: Կոլեկտիվացումն ավարտելու խնդիրը փոխադրվում էր երկրորդ հնգամյակ:

Նոր հնգամյակի կարևոր խնդիրներից էր գյուղատնտեսական արտադրության վերելքի կազմակերպումը՝ կոլտնտեսությունների ու սովխոզների միջոցով: Սակայն նորաստեղծ այս կազմակերպությունները դեռևս - շատ թույլ էին կազմակերպական տեսակետից, որպեսզի ի վիճակի լինեին իրականացնելու տնտեսական զարգացման պահանջվող խնդիրները: Ուստի երկրորդ հնգամյակի (1933-1937 թթ.) սկզբում, ինչպես նաև հետագա տարիներին, կոլտնտեսությունների ու սովխոզների տնտեսական-կազմակերպական ամրապնդումը դիտվում էր որպես առաջնային խնդիր:

Վարչահրամայական կառավարման պայմաններում հարցի լուծման միջոցը այլ բան լինել չէր կարող, քան վարչարարությունը կամ բռնությունը:

Կոլտնտեսությունների ու սովխոզների ամրապնդման նպատակով 1933 թ. սկզբին որոշվեց ստեղծել նոր, արտակարգ ժամանակավոր կուսակցական մարմիններ՝ քաղբաժիններ՝ ՄՏԿ-ներին ու սովխոզներին կից: Միաժամանակ որոշվեց գյուղական կուսակցական կազմակերպությունների տարածքային սկզբունքից անցնել արտադրական սկզբունքին, այսինքն կոլտնտեսությունների համար ստեղծել ինքնուրույն կուսակցական, նաև կոմերիտական կազմակերպություններ (բջիջներ): Դրա նպատակը կոլտնտեսությունների նկատմամբ կուսակցության ղեկավարման ուժեղացումն էր, իսկ անհրաժեշտությունը՝ մեծ թվով նոր գյուղատնտեսական արտադրական ձեռնարկությունների առկայությունը (կոլտնտեսություններ, սովխոզներ, ՄՏԿ-ներ): 1934 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գործում էին 613 կոլտնտեսային, 38 սովխոզային, 10 ՄՏԿ-ների, ինչպես նաև 250 գյուղական տարածքային կուսակցական բջիջներ[90]: Նույն սկզբունքով վերակառուցվեցին նաև կոմերիտական կազմակերպությունները:

Ուռուտ գյուղի (Ստեփանավանի շրջան) և Մ. Գորկու անվան (Ղամարլուի շրջան) կոլտնտեսությունների օրինակով մամուլը քարոզում էր,

---

[89] И. Е. Зеленин. "Революция сверху": завершение и трагические последствия:"Вопросы истории", 1994, N 10, с. 28-42.

[90] Компартия Армении в цифрах и документах. 1920-1980. Сборник статистических и документальных материалов. Ереван, 1980, с.71.

թե ինչպես պետք է գործեն գյուղատնտեսական ծեռնարկությունների կուսակցական կազմակերպությունները:

Քաղբաժիններ ստեղծվեցին 7 ՄՏԿ-ներին կից և մի շարք սովխոզներում: Քաղբաժինները շտապեցին իրականացնել կոլտնտեսությունների հետագա զտումը «դասակարգային խորթ» տարրերից: Այսպես, Վաղարշապատի շրջանում 1933 թ. փետրվար-հուլիս ամիսների ընթացքում հեռացվել էին 328 տնտեսություններ «նախկին կուլակներ», առևտրականներ և ուրիշներ: Կամ Փաշալուի շրջանից տեղեկացնում էին, թե հայտնաբերել են 13 «թաքնված կուլակային տնտեսություններ»: Զտում կազմակերպվեց նաև կոլտնտեսությունների հաշվային աշխատողների ու պահեստապետների շրջանում, որոնք կասկածվում էին նյութական բարիքների յուրացումների մեջ: 1933 թ. ընթացքում կոլտնտեսություններից հեռացվեց, ինչպես վերը նշվել է, շուրջ 800 «կուլակային» ու «ենթակուլակային» տնտեսություն, իսկ բոլոր հեռացված «խորթ ու անհարազատ» տնտեսությունների թիվը հասնում էր 2700-ի:

1933 թ. վերջերից սկսած քաղբաժինների գործունեության մեջ շեշտը դրվում էր ոչ թե զտման, հեռացման, այլ դաստիարակչական-քաղաքական աշխատանքը ուժեղացնելու վրա: Դրա նպատակը նաև մենատնտես գյուղացիներին դեպի կոլտնտեսությունները գրավելն էր: Նման նպատակ էին հետապնդում նաև այսպես կոչված հարվածային կոլտնտեսականների համագումարները: Հարվածային կոլտնտեսականների 1-ին համամիութենական համագումարը կայացավ 1933 թ. փետրվարին, Մոսկվայում: Մասնակցում էին նաև Հայաստանի պատվիրակները, իսկ Դիլիջանի շրջանի Զարխեջ (Կույբիշև) գյուղի ներկայացուցիչն ունեցավ ելույթ: Նույն թվականի հունիսին տեղի ունեցավ հարվածային կոլտնտեսականների 1-ին հանրապետական համագումարը, 605 կոլտնտեսությունների 645 ներկայացուցիչների մասնակցությամբ: Հյուրերի թվում էին նաև մենատնտես գյուղացիներ, բանվորներ ու մտավորականներ:

Համագումարը քննարկեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանի, ՀԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար Ավագյանի և հողժողկոմ Ա. Անանյանի զեկուցումները: Պատահական չէ Կոլտնտկենտրոնի բացակայությունը. այն այլևս գոյություն չուներ: Կոլտնտեսությունները սեփական ղեկավարող կամ կառավարող մարմիններից զրկվել էին, չնայած դրանց գոյության ժամանակ էլ, առավել ևս հետագայում, ղեկավարությունը գտնվում էր պետական-կուսակցական մարմինների ձեռքում: Ինչևէ, համագումարի ժամանակ Հայաստանում կոլտնտեսությունների թիվը 900 էր, 64 հազար գյուղացիական տնտեսությունների ընդգրկումով, նրանցից 3300-ը բաժին էր ընկնում համամիութենական համագումարին հաջորդող ամիսներին, այսինքն

զտման հետ միաժամանակ տեղի էր ունեցել նաև նոր համալրում: Համագումարն ընդունեց դիմում, ուղղված Հայաստանի բոլոր կոլտնտեսականներին, միաժամանակ վստահություն հայտնելով գլխավորել «հազարավոր ու տասնյակ հազարավոր ազնիվ մենատնտեսների նոր հոսանքը դեպի կոլեկտիվ տնտեսությունները»:

1933 թ. երկրորդ կեսի համար արձանագրվեց 9000 մենատնտեսների ընդունելություն: Եվ այնուամենայնիվ, «Նոր հոսանքի» կազմակերպումը հանդիպում էր լուրջ դժվարությունների, հատկապես լեռնային ու նախալեռնային շրջաններում, ինչպիսին էին Ստեփանավանը, Մարտունին, Շամշադինը, Քեշիշքենդը, Թալինը, Աշտարակը և այլն: Այստեղ կոլեկտիվացման մակարդակը ոչ միայն չէր բարձրացել, այլև նվազել էր: Տնտեսական ծանր դրություն էր ստեղծվել մասնավորապես Սևանի գոտու՝ Բասարգեչարի, Մարտունու, Նոր Բայազետի և Ախտայի շրջաններում: Բանն այն է, որ այստեղ 1932-1933 թթ. անբարենպաստ տարիներ էին գյուղատնտեսության համար: Դրությունն ավելի սաստկացրին հանրապետական, շրջանային հարկային ու կուսակցական-պետական մարմինները, որոնք ձգտում էին կատարած լինել հացամթերումների ու մյուս հարկերի առաջադրանքները, գյուղացուն ու կոլտնետսականներին մատնելով սովի: Մարդիկ ելքը փնտրում էին արտագնացության մեջ: 1933 թ. ընթացքում տվյալ 4 շրջաններից հեռացավ 6750 տնտեսություն կամ բոլոր տնտեսությունների մեկ քառորդը: Նրանց մեծ մասը մենատնտեսներ էին, որը վկայում է նրանց ավելի անպաշտպան վիճակի մասին ի տարբերություն կոլտնտեսականների, չնայած վերջիններիս դրությունը առանձնապես նախանձելի չէր:

Ստեղծված դրության լրջությունը զգաստացրեց ղեկավար մարմիններին: Ընդունվեցին հանրապետական և Անդրդաշնության մի շարք որոշումներ, իրականացվեցին որոշ միջոցառումներ: Ժամանակավորապես հանվեցին հարկային պարտավորությունները, կրճատվեցին գյուղատնտեսական մթերքների մթերումների պլանները արտոնություններ սահմանվեցին վարկերի վերադարձի համար: Կատարվեցին կադրային (շրջանային, գյուղական, կոլտնտեսային) փոփոխություններ, ինչպես միշտ էր պատահում, երբ խորհրդային իշխանությունը հանդիպում էր տնտեսական դժվարությունների: Տնտեսական օգնություն ցույց տրվեց գյուղացիներին ու կոլտնտեսություններին:

Ձեռնարկված միջոցառումները տվեցին որոշ դրական արդյունքներ, որն առաջին հերթին արտահայտվեց գյուղացիների վերադարձով: 1934 թ. մայիսի 25-ի դրությամբ նշված 4 շրջաններում իրենց տներն էին վերադարձել 2574 տնտեսություն կամ հեռացածների 38 տոկոսը:

Հացամթերումների բնագավառում իշխանության գործադրած ճնշումներն ուղղակի առնչվում էին արժույթի (վալյուտայի) մեծ պահանջների հետ, որ պետք էին երկրի գերինդուստրացման կարիքների համար: 1930 թ. երկրում ստացվել էր հացահատիկի համեմատաբար լավ բերք, 14 տոկոսով ավելի 1928 թ. համեմատությամբ: Իսկ մթերումների ծավալն աճեց երկու անգամ: Նույն 1930 թ. արտահանվել էր 48,4 միլիոն ցենտներ հացահատիկ, իսկ 1931 թ. այն հասավ 51,8 միլիոն ցենտների այն դեպքում, երբ հավաքած բերքը զգալիորեն պակաս էր նախորդ տարվանից: 1932 թ. ևս արտահանվեց զգալի չափով հաց, չնայած ԽՍՀՄ բազմաթիվ շրջաններում սկսվել էր սովը, որը շարունակվեց 1933 թ. (Հյուսիսային Կովկաս, Ուկրաինա, Պովոլժյե, Ղազախստան): Եթե 1921-1922 և 1946-1947 թթ. սովի հիմնական պատճառը երաշտն էր, ապա 1932-1933 թթ. այն ծավալվեց մթերումների քաղաքականության պատճառով: Մթերումների առաջադրանքներն ամեն գնով կատարելու և գերակատարելու համար Սոլոտովի ու Կագանովիչի ղեկավարությամբ հանձնաժողովներ մեկնեցին Ուկրաինա ու Հյուսիսային Կովկաս, որոնք տեղական ղեկավարների հետ միասին լայն պայքար ծավալեցին հացի «սաբոտաժի» դեմ[91]: Միայն նշված երկու տարում (1932-1933 թթ.) երկրում սովամահ եղավ 2,8 միլիոն մարդ[92]: Նույն ժամանակ երկրում լայն տարածում էր ստացել անասունների բռնի հանրայնացումը: Նման պայմաններում նշանավոր գրող Միխայիլ Շոլոխովը 1932 թ. համարձակվեց նամակով դիմել Ստալինին, ժողովրդի դիմադրությունը ներկայացնելով որպես իսկական պատերազմ կամ «սովամահության» պատերազմ:

Նման հարկային քաղաքականությունը շարունակվում էր նաև հետագա տարիներին ինչպես կոլտնտեսությունների, այնպես էլ մենատնտեսների նկատմամբ: Հայաստանում վերջիններիս միջավայրում տարվող աշխատանքի գլխավոր նպատակը նրանց կոլեկտիվացումն էր:

Հայաստանի հարվածային կոլտնտեսականների համագումարից հետո 1933 թ. կոլտնտեսություններում բերքի բաշխման կամպանիային գումարվեց ՀԿ(բ)Կ 9-րդ (1934 թ. հունվար) և ՀամԿ(բ)Կ 17-րդ (1934 թ. հունվար-փետրվար) համագումարներին նվիրված քարոզչությունը հո-

---

[91] В. В. Кондрашин. Голод 1932-1933 годов в деревнях Поволжья: Вопросы истории, 1991, N 6. Л. И. Гинцберг. Массовый голод в сочетании с экспортом хлеба в начале 30-х годов по материалам "особых папок" политбюро ЦК ВКП(б): Вопросы истории, 1999, N 10.

[92] В. В. Цаплин. Статистика жертв сталинизма в 30-е годы: Вопросы истории, 1989, N 4, с. 178.

գուտ կոլեկտիվացման: Հանրապետական կուսհամագումարը քննադատելով կոլեկտիվացման դանդաղ ընթացքը, պահանջում էր ծավալել զանգվածային քաղաքական աշխատանքը, կազմակերպել կոլտնտեսային շարժման նոր «առողջ ալիք»[93]:

Դժվար է համաձայնվել համագումարում Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ բերված այն մտքի հետ, թե իբր «մենատնտեսների մեջ մասսայական ծգտումը դեպի կոլտնտեսություն ամենուրեք գոյություն ունի և ուժեղանում է», և թե իբր, դրան հակառակ, շատ կոլտնտեսություններում խոչընդոտներ են հարուցում կոլտնտեսություն մտնել ցանկացողների դեմ[94]:

1932-1934 թթ. իրադարձությունների դիտարկումը ցույց է տալիս, որ, չնայած որոշ տեղաշարժերին, այնուամենայնիվ Հայաստանում կոլեկտիվացման գործընթացը դանդաղում էր և կարող էր վտանգել 2-րդ հնգամյա պլանով նախատեսված հարցի հիմնական լուծումը: Հետ էին մնում նաև ԽՍՀՄ մի շարք այլ ազգային շրջաններ: Ուստի հարցը քննարկման առարկա դարձավ 1934 թ. հուլիսի 2-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմում հրավիրված խորհրդակցությունում, որը պարզելու էր հետ մնալու պատճառները: Նրան մասնակցում էին Կենտկոմի անդամներ, հանրապետական ու մարզային կոմիտեների քարտուղարներ: Ելույթ ունեցողների թվում էին կուսակցության ղեկավար գործիչներ, նաև Ստալինը: Նա հայտարարեց կոլեկտիվացման նոր, ավարտական փուլի սկզբի մասին, առաջարկելով անցնել հարձակման մենատնտեսների դեմ, հարկային բեռը ծանրացնելու և այլ միջոցներով:

Ցինիկ են խորհրդակցությունում Ստալինի արտահայտած դատողությունները մենատնտես գյուղացիների ճակատագրի նկատմամբ: Քանի որ կոլեկտիվացման ծավալման ժամանակը 1932 թ. վերջացել էր, ուստի, նշում էր Ստալինը, այլևս պետք չէ «անհատականներին վերացնել, նրանց բանտարկել, պատժել, գնդակահարել և այլն»: «Դա տնտեսվար մոտեցում չի լինի: Մենատնտեսը մեզ ինչ-որ հաց տալիս է ... Նրանց հարկավոր է դաստիարակել տնտեսական ու ֆինանսական միջոցառումների կարգով..., ուժեղացնել հարկային ճնշումը»: Նկատենք, որ տվյալ պահին դեռևս - կոլտնտեսություններից դուրս էին 9 միլիոն գյուղացիական տնտեսություններ, իսկ Հայաստանում՝ անհատականների կեսից ավելին:

Խորհրդակցությունը պարզեց, որ կոլտնտշարժման հետ մնալու հիմնական պատճառներից մեկը մենատնտեսների հետ տարվող անբավա-

---

[93] Հայաստանի Կ(բ)Կ 9-րդ համագումարի բանաձևը ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ: Երևան, 1934, էջ 3-4:
[94] Նույն տեղում, էջ 51:

բար աշխատանքն է, կոլտնտեսականների համեմատությամբ նրանց արտոնյալ վիճակը՝ գյուղատնտեսական հարկի ծանրաբեռնվածության տեսակետից: Խորհրդակցությունը կուսակցական կազմակերպություններից պահանջեց «կատարելագործել» հարկային քաղաքականությունը, ապահովել կոլտնտեսականների արտոնյալ վիճակը մենատնտեսների նկատմամբ, ինչպես նաև հանձնարարեց մշակել կոլեկտիվացումն ավարտելու պլան[95]:

Եզրակացությունը պարզ էր. ծանրացվեց գյուղացիների հարկը, որից փրկվելու ուղին բնականաբար կոլտնտեսական դառնալն էր: Պլանն էլ իր հերթին ավելացրեց հարկադրանքը գյուղացու նկատմամբ: Այսինքն, կուսակցությունը նորից էր տնտեսական ճնշումը դարձնում կոլեկտիվացման միջոց: Կոլեկտիվացման կամավորության սկզբունքի մասին այլևս - նույնիսկ չէր խոսվում:

Երկրորդ հնգամյակի տարիներին կոլեկտիվացման ավարտը կազմակերպելու գործում կարևոր նշանակություն էր տրվում նաև գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացմանը: Այն երկրի ինդուստրացման բաղկացուցիչ մասն էր:

Հնգամյակի ընթացքում Հայաստանում հայտնվեցին 17 նոր ՄՏԿ-ներ, որոնց ընդհանուր թիվը 1937 թ. հասավ 24-ի: Կայաններ էին գործում գրեթե բոլոր շրջաններում: Կայանները սկսեցին համալրվել նաև բերքահավաքի կոմբայններով: ՄՏԿ-ները սպասարկում էին 646 կոլտնտեսությունների, նրանց ցանքատարածությունների երեք քառորդը: Գյուղատնտեսական աշխատանքները մեքենայացված էին. գարնանային վարը 40,7 ցրտահերկը՝ 62,4, ցելը՝ 53,1 տոկոսով: Մեքենայացումը դեռևս մուտք չէր գործել անասնապահության մեջ:

Նշված ցուցանիշները պետք է դիտել լուրջ նվաճում, որ ձեռք էր բերվել պատմական կարճ ժամանակամիջոցում՝ երկու հնգամյակների ընթացքում: Այն ԽՍՀՄ ինդուստրացման անմիջական արդյունքն էր և օբյեկտիվորեն նպաստելու էր գյուղացիության տրամադրությունների ձևավորմանը հօգուտ կոլեկտիվ աշխատանքի և արտադրության, իհարկե, չդառնալով կամ չծառայելով որպես միակ չափանիշ հօգուտ կոլեկտիվացման:

Փաստորեն 1932-1934 թթ.(1-ին հնգամյակի վերջը և 2-րդի սկիզբը) Հայաստանում շեշտը դրվում էր կոլտնտեսություններն ամրապնդելու վրա: Կոլտնտեսային շարժումն ունեցավ չնչին առաջընթաց, փաստորեն դոփելով տեղում: 1932 թ. հունվարի 1-ի 39,9 տոկոսի դիմաց կոլեկտիվաց-

---

[95] История КПСС, Том IV, кн. 2., М., 1971, с. 432-433. И. Е. Зеленин. "Революция сверху": завершение и трагические последствия: Вопросы истории, 1994, N 10, с. 35.

ման մակարդակը հասել էր 42,7 տոկոսի կամ երկուևկես տարվա ընթացքում բարձրացել էր ընդամենը 2,8 տոկոսով:

Կոլտնտեսությունների ամրապնդումն ընթանում էր «կապիտալիզմի մնացուկները» տնտեսության և մարդկանց գիտակցության մեջ հաղթահարելու նշանաբանի տակ: Այն ընդունվել էր որպես 2-րդ հնգամյակի կարևոր խնդիրներից մեկը:

Կուսակցությունը, Ստալինի ղեկավարությամբ, կանգնած էր այն տեսակետի վրա, թե իբր քանի մոտենում ենք սոցիալիզմի հաղթանակին, այնքան ուժեղանում է թշնամու դիմադրությունը և սրվում դասակարգային պայքարը: «Սոցիալիստական հարձակման հաջողությունը,- կարդում ենք ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1933 թ. հունվարյան միացյալ պլենումի բանաձևում,- անխուսափելիորեն առաջ է բերում դասակարգային պայքարի սրում նոր ձևերով սոցիալիստական շինարարության առանձին շրջաններում ու առանձին տեղամասերում»[96]: Նույն պլենումում Ստալինը ամփոփելով առաջին հնգամյակի արդյունքները, մասնավորապես անդրադարձավ «թշնամի դասակարգերի մնացորդների» վերացման խնդրին: Մասնավոր արդյունաբերողների ու առևտրականների, կուլակների ու ենթակուլակների և մյուսների տնտեսության բնագավառից, նշում էր նա, «այդ նախկին մարդիկ» սողոսկել են տնտեսական կազմակերպություններ և գլխավորապես կոլտնտեսություն ու սովխոզ և փորձում են դրանք քայքայել ներսից, ուստի, շարունակում էր նա, խորհրդային պետության հզորության աճը «ուժեղացնելու է մեռնող դասակարգերի վերջին մնացորդների դիմադրությունը»[97]:

ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարը ղեկավարվելով տվյալ դրույթներով, փորձեց լուսաբանել գյուղում տիրող դրությունը: Իրականում հատկապես 2-րդ հնգամյակի տարիներին հիմնականում կարող էր խոսք լինել մասնավորապես կոլտնտեսությունների ու սովխոզների, որպես նորաստեղծ ձեռնարկությունների տնտեսական ու կազմակերպական դժվարությունների հաղթահարման մասին: Մինչդեռ, ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարի փաստաթղթերում կարելի է հանդիպել այսպիսի գնահատականի. «ԸՆԿ. Ստալինի ցուցումներից հետո (նկատի ունի 1933 թ. հունվարյան պլենումում Ստալինի զեկուցումը և ճառը - Վ. Ղ.) մենք մաքրեցինք կոլտնտեսությունները հակահեղափոխական տարրերից, դաշնակ թափթփուկներից, ջախջախելով նրանց նոր տակտիկան»[98]: Կոլտնտեսություններից հեռացված հազարա-

---

[96] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: III մաս, էջ 227:
[97] Ի. Ստալին, Երկեր, հ. 13, էջ 236:
[98] ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 9-րդ համագումարում. ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ա. Խանջյանի զեկուցումը, էջ 112:

վոր կոլտնտեսականներ չէին կարող այնտեղ թափանցած լինել «հակահեղափոխական» նպատակներով, դրանք ներսից քայքայելու համար:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ երկրորդ հնգամյակի առաջին տարիներին կուլակների թիվը ոչ միայն չնչին էր, այլև պաշտոնապես դժվար էր խոսել նրանց առկայության մասին: Նկատի ունենք հարկային տվյալները, որոնք ընդունվում էին որպես կուլակությանը ճանաչելու հիմնական չափանիշ: Այսպես, 1933 թ. Հայաստանում անհատական կարգով հարկվել է ընդամենը 291, 1934 թ. 26 և 1935 թ. 28 «կուլակային» տնտեսություն: 1935 թ. կուլակների անհատական կարգով հարկման վերջին տարին է: 1936 թ. սկսած բոլոր գյուղացիները հարկվում էին միևնույն սկզբունքով:

Թվում է, թե այսպիսի նվազ տվյալների առկայության պայմաններում և նախորդ փուլում կոլեկտիվացման հակառակորդների ջախջախումից հետո թերևս անհրաժեշտություն չէր կլսրող լինել գյուղացիների (կուլակ կամ ոչ կուլակ) զանգվածային արտաքսումը կամ բանտարկությունը: Մինչդեռ այդպես չէր իրականությունը: Օրինակ, 1933 թ. ապրիլի 30-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում էր ընդունել Վաղարշապատի, Ղամարլուի, Ղուրդուղուլու և Վեդիի բամբակագործական շրջաններից 300 «կուլակային տնտեսությունների» մայիսի 20-25-ի ժամկետում Անդրկովկասի սահմաններից արտաքսելու մասին: Ընդ որում, տվյալ շրջաններում, բացառությամբ Վեդիի, համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտվել էր:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի տվյալ որոշումը բխում էր ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի համապատասխան որոշումից: 1933 թ. ընթացքում քաղբյուրոն բազմաթիվ որոշումներ էր ընդունել ԽՍՀՄ մարզերից ու հանրապետություններից զանգվածային արտաքսումներ ու վերաբնակեցումներ (դեպորտացիա) իրականացնելու մասին: Ապրիլին որոշում էր կայացվել Անդրկովկասի հանրապետությունների համար, ըստ որի վերաբնակեցվելու էր Ադրբեջանից 900, Արևելյան Վրաստանից 300 և Հայաստանի բամբակագործական շրջաններից նույնպես 300 ընտանիք[99]:

Քաղբյուրոյի սույն որոշմանը մի քանի օր անց հաջորդեց ղեկավար մարմինների հրահանգը, որի մասին կխոսվի ստորև, և որն Անդրկովկասի համար սահմանեց նոր չափաբաժին: Մեր կարծիքով այդ պետք է հասկանալ այսպես. կամ վերանայվում էր քաղբյուրոյի որոշումը կամ, որն ավելի հավանական է, իջեցվում էր լրացուցիչ առաջադրանք:

---

[99] Л. И. Гинцберг. По страницам "особых папок" политбюро ЦК ВКП(б): Вопросы истории, 1996, N 8, с. 29.

Խոսքը ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1933 թ. մայիսի 8-ի, Ստալինի և Մոլոտովի ստորագրությունները կրող, հրահանգի (որոշման) մասին է, որն ուղղված էր բոլոր կուսակցական-խորհրդային, պետքաղվարչության և դատական-դատախազական մարմիններին[100]: Որոշման հիմնական բովանդակությունը կուլակությունն է: Նախ, հիմնավորվում է այն հարցը, թե ինչով էին պատճառաբանված կուլակների ու ենթակուլակների զանգվածային ծերբակալությունը և բռնաճնշումների սուր ձևերը՝ հյուսիս և հեռավոր երկրամասեր նրանց արտաքսման միջոցով: Կուլակների հետագա դիմադրությունը կոլտնտեսային շարժմանը, 1932 թ. կոլտնտեսությունների ու սովխոզների «վնասարարության» բացահայտումը, նրանց գույքի «զանգվածային կողոպուտը», շարունակում է որոշումը, անհրաժեշտ դարձրին հետագա բռնությունները կուլակային տարրերի, գողերի ու ամեն տեսակի սաբոտաժնիկների նկատմամբ: 1930-1932 թթ. երեք տարիները, ասված է որոշման մեջ, դարձան կուլակության վերացման և կոլտնտեսությունների հաղթանակի ժամանակաշրջան, և որը հանգեցրեց գյուղում դասակարգային թշնամիների ուժերի ջախջախմանն ու գյուղում սոցիալիզմի դիրքերի ամրապնդմանը:

Այդ ամենի հետևանքով փոխվել էին պայմանները, գյուղում ստեղծվել էր նոր իրադրություն, երբ վերացել էր զանգվածային արտաքսումներ կազմակերպելու անհրաժեշտությունը: Մինչդեռ, կարդում ենք որոշման մեջ, մարզային շատ կազմակերպություններ շարունակում էին նախորդ տարիների նման պահանջներ ներկայացնել զանգվածային արտաքսումների վերաբերյալ: Որոշումը պարզաբանում էր նման մոտեցման անհիմն լինելը և առաջ էր քաշում «դեպի կոլտնտեսությունները անհատական աշխատավորական գյուղացիական տնտեսությունների աճող ձգտմանը ընդառաջ գնալու խնդիրը»:

Այսպիսով, նոր իրադրությունը նպաստավոր պայմաններ էր ստեղծել զանգվածային արտաքսումները և բռնության սուր ձևերը դադարեցնելու համար:

ԽՍՀՄ կառավարությունը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը, պաշտպանելով այն տեսակետը, թե գյուղում դասակարգային պայքարը ոչ միայն չի թուլացել, այլև, ընդհակառակը, այն անխուսափելիորեն ավելի է սրվելու, քանի որ դասակարգային թշնամին տեսնում էր, որ հասել են իր գոյության վերջին օրերը: Հետևաբար չէր կարող խոսք լինել դասակարգային թշնամինե-

---

[100] Տվյալ արխիվային փաստաթղթի հայերեն թարգմանության հրապարակումը տե՛ս Վ. Ղազախեցյան, Ստալինյան փաստաթուղթ ռեպրեսիաների ծավալման մասին. «Հայացք», 1990, թիվ 11, էջ 73-79:

րի դեմ պայքարը թուլացնելու մասին, ընդհակառակը, այն ամեն կերպ պետք է ուժեղացվեր:

Ելնելով նման «հիմնավորումներից», հրահանգվում էր անմիջապես դադարեցնել գյուղացիների ամեն տեսակի զանգվածային արտաքսումները և այն թույլ տալ միայն անհատական ու մասնակի կարգով և միայն այն տնտեսությունների նկատմամբ, որոնց գլխավորները ակտիվ պայքարում էին կոլտնտեսությունների դեմ և հրաժարվում ցանք ու մթերումներ կատարել: Կուսակցության Կենտկոմը և կառավարությունը թույլատրում էին արտաքսումներ կատարել ԽՍՀՄ մի շարք մարզերից ու հանրապետություններից, ընդամենը 12 հազար տնտեսությունների հաշվով, տեղերից արված 100 հազար տնտեսությունների արտաքսման առաջարկությունների փոխարեն: Անդրկովկասի համար սահմանվել էր 500 տնտեսությունների արտաքսման պլան: Թե այդ թիվն ինչպես էր բաշխվել ըստ Անդրդաշնության հանրապետությունների՝ մեզ հայտնի չէ:

Փաստորեն 1933 թ. ևս Հայաստանում շարունակվելու էին զանգվածային արտաքսումներն ու բանտարկությունները, միայն որոշ մեղմացված ծավալով:

Կուսակցության և կառավարության որոշման մեջ արվում էր մի էական խոստովանություն ևս: Գյուղում ձերբակալություններ էին կատարում բոլորը, կոլտնտեսության ու գյուղխորհրդի նախագահները, կուսբջիջի քարտուղարը, շրջանային ու երկրամասային լիազորները և ուրիշներ, կարճ ասած, ովքեր չէին ծուլանում և դրա (ձերբակալության) իրավունքը չունեին: Նման սանձարձակության պայմաններում ձերբակալության իրավունք ունեցողները, նաև պետքաղվարչության մարմինները, և հատկապես միլիցիան, կորցնում էին չափի զգացումը և հաճախ ձերբակալություններ կատարում անհիմն ձևով, գործելով «նախ ձերբակալել, իսկ հետո գլուխ հանել» սկզբունքով:

Սոցիալիստական օրինականության խախտումների սույն և 1932 թ. համար վերը հիշված տվյալները վկայում են տվյալ երևույթի շարունակականության մասին: Այն տեղի էր ունենում նաև հետագա տարիներին:

Որոշման մեջ շատ բան է ասված, բացի գլխավորից՝ թե ում մեղքով կամ ինչ պատճառով էր նման դրություն ստեղծվել խորհրդային գյուղում:

Հրահանգ-որոշման վերջին մասը վերաբերում է «կալանավայրերի բեռնաթափմանը»: Երևում է, որ կալանավայրերն այնքան էին գերծանրաբեռնվել, որ հարկավոր էր ելք գտնել ստեղծված վիճակից: Ելքը ամբողջ ԽՍՀՄ կալանավայրերի 800 հազար կալանավորների թիվը իջեցնելն էր 400 հազարի: Մյուսների տեղավորման հարցը լուծվում էր տարբեր ձևերով՝ դատարանով դատապարտված լինելը (մինչև 3 տարի) փոխարինել

մինչև մեկ տարի հարկադիր աշխատանքի ազատազրկումով, մնացած ժամկետը համարելով պայմանական: 3-5 տարով դատապարտվածներ ուղարկել միացյալ պետքաղվարչության աշխատավայրերը: Հինգ տարուց ավելի դատապարտվածներ փոխադրել պետքաղվարչության ճամբարներ:

Առանձին հոդված ունեին կուլակները. 3-5 տարի դատապարտվածները, ընտանիքի անդամները, ենթակա էին ուղարկվելու աշխատանքային բնակավայրեր:

Այս ամենն իրականացնելու համար ստեղծվում էին հանրապետական հանձնաժողովներ:

Բանտերի բեռնաթափում տեղի ունեցավ նաև Հայաստանում*:

Այսպես, հանրապետության պետքաղվարչության կոլեգիայի 1933 թ. դատական նիստերի միայն 2 արձանագրության տվյալներով վերանայվել է 13 բանտարկյալների (5 կամ 3 տարով դատապարտված) գործերը, և բոլորի համար ընդունվել է հարկադիր աշխատանքի վճիռ[101]: Նույն մարմինը 1934 թ. մարտի 4-ին վերանայել է 7 բանտարկյալների համար իր կայացրած որոշումները: Շահնազար գյուղի երկու բնակիչների գնդակահարությունը (1932 թ. օգոստոսի 7-ի օրենքով) փոխարինվել է 10 տարվա ազատազրկումով, իսկ մյուս յոթ բանտարկյալները (նույն գյուղից) էտապով փոխադրվել են Միացյալ պետքաղվարչության Միջինասիական ճամբար[102]:

Միութենական որոշումը հանրապետությունների արդարադատության և առողջապահության ժողկոմատներին պարտավորեցնում էր վերանայել կալանավայրերում տարածված բծավոր տիֆը:

Այսպիսին է եղել խորհրդային գյուղի իրականության ոչ լրիվ պատկերը 1930-ական թվականների առաջին տարիներին:

հանրապետության դատախազությունը անդրադարձել է նաև տվյալ հրահանգի այլ պահանջների ևս և զեկուցագիր պատրաստել «վար-

---

* Բանտերի և աշխատանքային գաղութների գերբեռնվածության վերաբերյալ տվյալներ կարելի է բերել 1937 թ. սկզբի վերաբերյալ. հանրապետության դատախազության զեկուցագրի համաձայն հունվարի 1-ի դրությամբ 1060 «լիմիտային տեղի» փոխարեն բանտերում տեղավորված էր 1260 կալանավոր (վճիռ ստացած և քննության ընթացքում գտնվող): ԽՍՀՄ դատախազության պահանջը կատարելու համար նախատեսվում էր ընտրել այն բանտարկյալներին, ում պետք է ուղարկեին «հեռավոր ճամբարներ», սակայն դեռևս չէին ուղարկել («տրոցկիստներ, նացիոնալիստներ, այլ հակահեղափոխական հանցագործներ, օգոստոսի 7-ի սանկցիայով դատապարտվածներ և այլն»): ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 92, թ. 30-34:

[101] ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 60, թ. 54, 93-101:

[102] Նույն տեղում, գ. 69, թ. 60:

չարարության մասին»: Համկ(բ)Կ կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության «պատմական հրահանգի հրատարակումից հետո,- ասված է զեկուցագրում,- զգալի աշխատանք է կատավել հրահանգը կյանքում կենսագործելու գծով՝ սոցիալիստական օրինականության պաշտպանության համար»: Չնայած 1933 թ. համեմատությամբ 1934 թ. զգալիորեն պակասել էին օրինականության խախտումների դեպքերը, այնուամենայնիվ զեկուցագրում բերված օրինակները վկայում էին այն մասին, որ երևույթը խիստ տարածված էր, որ տեղական իշխանությունները (գյուղխորհուրդ, կուսբջիջ, կոլտնտեսության նախագահներ, վարչական մարմիններ) իրենց թույլ էին տալիս ամեն ինչ (ծեծ ու անօրինական ձերբակալություններ, զանգվածային խուզարկություններ, անհատական պարտավորությունների խստագույն կատարում և այլն)[103]:

Հրահանգի վերլուծությունը հանգեցնում է հետևյալ եզրակացության.

Առաջին. խորհրդային օրինականության ու մարդու իրավունքների համատարած խախտումները և խորհրդային օրենքների անտեսման փաստերը, լայնածավալ բնույթ ընդունելով, լուրջ սպառնալիք էին դառնում երկրի ներքին դրության կայունության, պետական ապարատի հատկապես ստորին օղակների նորմալ գործունեության համար, ինչը չէր կարող չվտանգել խորհրդային իշխանության հեղինակությունը մասնավորապես գյուղի բնակչության աչքում: Հրահանգ-որոշումը փորձ էր դրությունը շտկելու ուղղությամբ:

Երկրորդ. խորհրդային օրինականության խախտումները 1930-ական թվականներին եղել են շարունակական երևույթ:

Առաջ անցնելով նկատենք, որ հետագա տարիներին ևս երևույթը իրեն զգացել է տվել: Այսպես, 1937 թ. հանրապետության դատախազությունը ԽՍՀՄ դատախազությանը տեղեկացնում էր, որ վերջինիս մարտի 21-ի կարգադրության համաձայն կոլտնտեսականներին ծեծի ենթարկելու կամ նրանց նկատմամբ ծաղրուծանակ թույլ տալու համար կոլտնտեսությունների պատասխանատու ղեկավարներին և շրջգործկոմների, գյուղխորհուրդների պաշտոնատար անձանց և այլ մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին, Հայաստանի Դատախազությունը շրջաններին իջեցրել է շրջաբերականներ, և որ տեղերում որոշ գործերով հարուցված է քրեական հետապնդում (բերված են օրինակներ)[104]:

Որոշ տվյալներ, որոնք վերաբերում են կոլտնտեսային ակտիվի և այլոց դատվածությունը վերացնելուն, վկայում են այն մասին, թե որքան

---

[103] Նույն տեղում, գ. 75, թ. 37-45:
[104] ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 92, թ. 136-137:

լայն ծավալ է ունեցել օրինականության խախտումը: Այսպես, ՀԽՍՀ Կենտգործկոմը 1938 թ. մարտի 16-ին հաստատել է Գերագույն դատարանի որոշումը 1934-1937 թթ. չորս տարվա ընթացքում դատապարտված կոլտնտեսային ու գյուղական ակտիվի, կոլտնտեսությունների ու ՄՏԿ-ների աշխատակիցների թվով 5467 մարդու դատվածությունը վերացնելու մասին[105]:

Երրորդ. բռնությունը և վարչարարությունը, որ լայն տարածում ուներ խորհրդային գյուղում, Հայաստանում շարունակելու էր ծառայել կոլեկտիվացման լծակ:

[105] Նույն տեղում, g. 3, գ. 333, թ. 10:

4. ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Կոլեկտիվացման ընթացքի տեսակետից հետ մնացող Հայաստանում այն ավարտելու համար նշանակություն ունեցան տարբեր ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բնույթի գործոններ: Վերը նշվեց 1934թ. հուլիսին ՀամԿ(բ)Կ Կենտկոմում տեղի ունեցած խորհրդակցության մասին, որի արդյունքը եղավ կոլտնտեսականների նկատմամբ անհատական տնտեսությունների հարկային ծանրաբեռնվածության նոր մեծացումը: 1934 թ. երկրորդ կեսից սկսվում է բեկում կոլեկտիվացման ընթացքում: Այն դարձավ շարունակական մինչև կոլեկտիվացման հիմնական ավարտը՝ շնորհիվ նշված և ձեռնարկված այլ միջոցառումների: Ուժեղացավ քաղաքական–բացատրական աշխատանքը մենատնտեսների շրջանում: Նշանակություն ուներ նաև քաղաքական բռնությունների պատճառով երկրում հաստատված վախի մթնոլորտը, որն սկսվեց 1934 թ. դեկտեմբերի 1-ին Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի) մարզկոմի քարտուղար Կիրովի սպանությամբ: Մենատնտես գյուղացին առավել ևս կարող էր վտանգ զգալ իր համար, երբ ապահով չէր նաև կոլտնտեսականի ազատությունը: Վերջապես, չի կարելի բացառել նաև մենատնտես գյուղացու վրա կոլտնտեսության դրական ազդեցությունը: Ընդհանուր առմամբ ինչպես մինչև 1934 թ., այնպես էլ դրանից հետո գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականությունը հաշվի չի նստել կամավորության սկզբունքի հետ: Պլանավորման ստուգիչ թվեր սահմանելու, առաջադրանքներ իջեցնելու հետ կամավորությունը չէր կարող համատեղվել:

1935 թ. փետրվարին Մոսկվայում կայացավ հարվածային կոլտնտեսականների համամիութենական 2-րդ համագումարը, որը քննարկեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի գյուղբաժնի վարիչի և ԽՍՀՄ հողժողկոմի զեկուցումները գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության և այն մշակող հանձնաժողովի գործունեության մասին: Զեկուցումները նախ և առաջ վկայում էին, որ կոլտնտեսային գործերը գտնվում են կուսակցության և կառավարության ձեռքում:

Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը կոլտնտեսային կյանքի ու գործունեության հիմնական ու բարձրագույն օրենքն էր: Առաջին կանոնադրությունն ընդունվել էր 1930 թ., երբ գոյություն ունեին կոլտնտեսության 3 հիմնական ձևեր. արտել, կոմունա և հողը համատեղ մշակող ընկերություն: Կոլտնտեսային շարժման ընթացքում կենսունակ դիտվեց արտելը, ուստի մյուսները իրենց տեղը զիջեցին արտելին: Այսուհետ կոլտնտեսություն ասելով հասկացվում էր նրա արտելային ձևը:

Համարվում էր, որ արտելը ճիշտ է զուգակցում պետության և կոլտնտեսության անդամների շահերը:

Ըստ էության գյուղացու շահերին ավելի մոտ էր հողը համատեղ մշակող ընկերությունը (ՏՕՅ կամ ՏՍՕՅ), քանի որ այս դեպքում եկամուտների բաշխման մեջ հաշվի էր առնվում գյուղացու ներդրած փայը: Սակայն ընտրություն կատարողը ոչ թե գյուղացին էր, այլ կուսակցությունը կամ պետությունը, իրենց շահերի առավելության ճանաչումով:

Կանոնադրությունը բաղկացած էր 8 գլխից, 25 հոդվածով: Գյուղատնտեսական արտելում, ասված է կանոնադրության 1-ին հոդվածում, կամավոր կերպով միավորվում են գյուղի աշխատավոր տնտեսությունները, որպեսզի ընդհանուր արտադրության միջոցներով ու աշխատանքով կառուցեն կոլեկտիվ (հասարակական) տնտեսություն, ապահովեն լիակատար հաղթանակը կուլակի նկատմամբ և կոլտնտեսականների լավագույն կյանքը[106]:

Պետական (համաժողովրդական) սեփականություն ճանաչված հողը առհավետ ամրացվում էր կոլտնտեսությանը, որն ամրագրվում էր համապատասխան պետական ակտով:

Կանոնադրությունը սահմանում էր կոլտնտեսության ու նրա անդամների անձնական շահերի զուգակցման սկզբունքը, հանրայինի (սոցիալիստականի) գերապատվությամբ: Կոլտնտեսականի պահանջմունքների բավարարման հիմնական աղբյուրը կոլտնտեսային արտադրության զարգացումն էր: Կոլտնտեսային ընտանիքին հատկացվում էր ոչ մեծ օժանդակ տնամերձ հողամաս (բանջարանոց, այգի), նա կարող էր պահել նաև որոշ քանակությամբ անասուններ:

Կոլտնտեսություն ընդունվելու իրավունք չունեին կուլակները և ընտրական իրավունքից զրկվածները:

Գյուղատնտեսական արտելի բարձրագույն մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովն էր, որին վերապահվում էր արտելի բոլոր հիմնական հարցերի լուծումը:

Գյուղատնտեսական արտելի կանոնադրությանը, որի սկզբունքները տեղ գտան ԽՍՀՄ 1936 թ. սահմանադրության մեջ, հատուկ էր խորհրդային օրենսդրության ձևական կողմի պաշտպանությունը, այն է՝ հարցի քարոզչական նպատակը: Իրականում կոոպերացիային հատուկ ժողովրդավարության սկզբունքներն անտեսվել և մոռացության էին մատնվել: Արտելի հարցերը որոշվում էին կուսակցական–պետական կարգով:

---

[106] ԽՍՀՄ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1935, թիվ 11, հոդված 82:

Հարվածային կոլտնտեսականների համամիութենական 2-րդ համագումարին մասնակցել էր 11 մարդուց բաղկացած Հայաստանի պատվիրակությունը, ապահովվել է նաև նրա ներկայացուցչի ելույթը համագումարում:

Նույն ժամանակ (1935 թ. փետրվար) տեղի ունեցավ մի այլ կարևոր քաղաքական իրադարձություն՝ ԽՍՀՄ խորհուրդների համամիութենական 7-րդ համագումարը, որը հանձնարարեց մշակել և համաժողովրդական քննարկման դնել երկրի նոր սահմանադրությունը, որը ընդհանրացնելու էր առաջին սահմանադրության ընդունումից (1924 թ.) հետո անցած ժամանակամիջոցում երկրի կյանքում տեղի ունեցած սոցիալ–տնտեսական և քաղաքական վերափոխումների արդյունքները:

Նշված երկու համագումարների արդյունքները լայնորեն քննարկվում էին նաև Հայաստանում: Խորհրդային իշխանության քարոզչության նյութ դարձավ նաև Հայաստանի խորհրդայնացման 15-րդ տարեդարձը, որը լրանում էր 1935 թ. վերջին:

Կանոնադրությունն ընդունելուց հետո 1935-1936 թթ. ընթացքում կատարվեց հանրապետության բոլոր 1057 կոլտնտեսությունների հողաշինարարություն, 1399 հազար հեկտար հողատարածության ամրագրումով: Լրացուցիչ կոլտնտեսություններին հատկացվեց 74 հազար հեկտար տարածություն ի հաշիվ վերացված սովխոզների. Միաժամանակ, ըստ նոր սահմանված նորմաների, կատարվեց կոլտնտեսականների տնամերձերի չափերի ճշտում:

Գյուղատնտեսական արտելի կանոնադրության քննարկումներն ուղեկցվում էին մենատնտեսների ժողովներով: Տեղի էին ունենում նաև համատեղ ժողովներ: Ըստ ժողովների մասին հաշվետվությունների ու տեղեկատվությունների, որոնց զգալի մասը հրապարակել է մամուլը, հանդիպում են այսպիսի արտահայտություններ՝ ժողով եմ եկել որպես մենատնտես, վերադառնում եմ որպես կոլտնտեսական, կամ բանաձևեր՝ առաջիկա ցանքը (գարնան կամ աշնան) կատարենք հանրային դաշտերում: Ստեփանավանի շրջանային ժողովի 186 մասնակիցներից 103-ը ցանկություն հայտնեցին անմիջապես ընդունվել կոլտնտեսություն: Քսան օրվա ընթացքում շրջանում կոլտնտեսական դարձան 700 տնտեսություններ: Շուրջ մեկ ամսվա ընթացքում Ալավերդու շրջանի Ուզունլար (Օձուն) խոշոր գյուղի կոլտնտեսությունը համալրվեց 267 նոր անդամներով: Կոլեկտիվացումն առաջադիմում էր Թալինի շրջանում, որի գյուղերի մի մասը եզդիաբնակ էր: Ընդ որում քոչվորական ու կիսաքոչվորական կյանք վարող եզդի բնակչության կոլեկտիվացումը խրախուսելու նպատակով կիրառվում էին այնպիսի խրախուսական միջոցներ, ինչպիսին է նրանց նստակյաց կյան-

քի փոխադրելը: Մարտունու շրջանում 1935 թ. փետրվար ամսվա ընթացքում կոլտնտեսություն ընդունվեցին 1700 մենատնտեսներ:

Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության քննարկման եռուն շրջանում մինչև ապրիլի 1-ը Հայաստանում կոլտնտեսականների շարքերը համալրեցին 21 հազար անհատ տնտեսատերեր: Կոլեկտիվացման ընթացքը չէր դադարում ամբողջ գյուղատնտեսական տարին՝ գարնանացանի, բերքահավաքի և կոլտնտեսային բերքը բաշխելու ժամանակ:

ՀամԿ(բ)Կ կենտկոմի վերոհիշյալ հուլիսյան խորհրդակցությանը հաջորդող 14 ամիսների ընթացքում Հայաստանում կոլտնտեսությունների անդամների թիվը գրեթե կրկնապատկվեց, 1934 թ. հուլիսի 1-ի 72 հազարի դիմաց 1935 թ. հոկտեմբերի 1-ին կազմելով 141 հազար տնտեսություն կամ կոլեկտիվացման մակարդակը 42,7-ից բարձրացավ 76,5 տոկոսի: Այդ նշանակում էր, որ Հայաստանում կամ նրա շրջանների մեծ մասում իրականացել էր համատարած կոլեկտիվացումը: Այն վերաբերում էր հանրապետության բոլոր 28 շրջաններից 23-ին: Մյուս 5 շրջանները (Ամասիա, Ապարան, Աշտարակ, Դիլիջան, Բասարգեչար) հիմնականում խնդիրը լուծեցին 2-րդ հնգամյակի վերջին երկու տարիներին (1936-1937 թթ.):

Գյուղի համար ևս ժամանակն ահավոր էր: Վերևից նոր պահանջ էր իջել զանգվածային բռնություններ իրականացնելու՝ նախկին կուլակներին վերստին «կուլակաթափելու» համար: Այդ մասին հանգամանորեն կխոսվի գրքի բռնաճնշումներին նվիրված էջերում: Այստեղ կսահմանափակվենք այն տվյալներով, որոնք ցույց են տալիս 1937 թվականի հատուկ տեղը գյուղացիության նկատմամբ վերաբերմունքում: Կենտրոնը որոշել էր ցուցակագրել հանրապետությունների ու մարզերի գյուղերում «բուն դրած» նախկին կուլակներին, մի մասին գնդակահարելով, մյուսներին աքսորելով: Եթե 1930-1931 թթ., որոնք բուն կուլակաթափության տարիներն էին, երբ Հայաստանում բռնություն էր գործադրվել 2410 մարդու նկատմամբ, ապա միայն 1937 թ. կրկնակի ապակուլակացման ենթարկվեց 2723, իսկ 1938 թ. 1563 մարդ՝ «կոլտնտեսական» ու «կուլակ» սոցիալական խմբերին պատկանող (ըստ քննչական գործերի տվյալների)[107]: 1937-1938 թթ. բռնադատված գյուղացիների թիվը (4286 մարդ) 77 տոկոսով գերազանցում էր 1930-1931 թթ. տվյալները: Պարզ է, որ երկրորդ անգամ «կուլակաթափվածների» մեջ գտնվել են մեծ թվով ոչ կուլակներ, եթե նույնիսկ ընդունենք, որ առաջին դեպքում կուլակաթափվել էին միայն կուլակ գյուղացիները:

---

[107] *Արմենակ Մանուկյան*, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., էջ 131:

Գյուղի բնակիչների նկատմամբ նոր զանգվածային բռնությունների գործադրումը վերջին մենատնտեսների համար չէր կարող իր հերթին չդառնալ կոլեկտիվացման միջոց:

Հայրենական պատերազմի նախօրյակին Հայաստանում լրիվ ավարտվել էր գյուղատնտեսության կոլեկտիվացումը: 1940 թ. կեսերին 1030 կոլտնտեսություններն ընդգրկում էին 174 հազար կոլտնտեսային ընտանիք:

1-ին և 2-րդ հնգամյակների ընթացքում կուսակցության և պետության ամբողջ ուշադրությունը կենտրոնացած էր գյուղատնտեսության կոլեկտիվացման և, այսպես կոչված, կուլակության վերացման վրա: Ինչ վերաբերում է բուն գյուղատնտեսությանը, կոլտնտեսությունների տնտեսական առաջադիմությանը, ապա այդ խնդիրը մնացել էր հետին պլանում: Միայն 3-րդ հնգամյակում որոշ քայլեր կատարվեցին տվյալ խնդրի ուղղությամբ: Որոշ միջոցառումներ իրականացվեցին մանր գյուղերի (կոլտնտեսությունների) վերացման, վերաբնակեցում կազմակերպելու, պտղաբուծությունը, խաղողագործությունը, և տեխնիկական մշակույթների զարգացմանը նպաստելու, աշխատանքի կազմակերպման նոր ձևեր տարածելու (բրիգադի կազմում մշտական օղակներ ստեղծելու), սոցիալիստական մրցությանը զարկ տալու ուղղությամբ:

Փոփոխություններ կատարվեցին գյուղատնտեսական մթերքների մթերումների ու գնումների քաղաքականության մեջ: 1932-1933 թվականներից գործում էր հարկման ուժ ունեցող կայուն պարտավորությունը (պետական սահմանված գներով) ըստ ցանքի պլանի և անասունների գլխաքանակի պարտադիր մթերումը: Փորձը ցույց տվեց, որ տվյալ կարգն ուներ իր թերությունները, քանի որ, օրինակ, չէր խրախուսում անասնապահության զարգացմանը, հանրային տնտեսության վերելքը նախաձեռնող և շատ անասուններ ունեցող կոլտնտեսությունից մթերվում էր ավելի շատ անասնաբուծական մթերքներ (միս, բուրդ, կաթ), քան նույնքան հողատարածք ունեցող և նախաձեռնություն չդրսևորող կոլտնտեսությունից: Փաստորեն վերջիններս գտնվում էին արտոնյալ վիճակում՝ առաջինների համեմատությամբ: 1939 թ. ընդունված որոշումն արձանագրում էր, որ հարկման տվյալ կարգը իր դերը կատարել էր և այնուհետև չէր նպաստում հանրային տնտեսության զարգացմանը: Ուստի մթերումների տվյալ կարգը փոխարինվեց հեկտարային հաշվարկման սկզբունքով, որն ապահովելով նշված թերությունների վերացումը, «հանդիսանում է հանրային անասնաբուծության զարգացման գործն առաջ մղող հզոր լծակ»[108]:

---

[108] ՍՄԿՊ–ն բանաձևերում ու որոշումներում: III մաս, էջ 512:

Ինչպես նշեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը (1940 թ. ապրիլ), գյուղատնտեսական մթերքների մթերումների ու գնումների կարգը չէր կարող սահմանվել մեկընդմիշտ և ենթակա էր փոփոխության ու կատարելագործման: Պլենումը տվյալներ արձանագրեց մթերումների ու գնումների նոր կարգին անցնելու առաջին դրական տեղաշարժերի, անասնապահական ֆերմաների թվական և անասունների գլխաքանակի աճի մասին:

Այսպիսով գյուղատնտեսական մթերքների պարտադիր մթերումները 1939 թ. սկսած տարածվում էին ապրանքային նշանակություն ունեցող հացահատիկային մշակույթների, արևածաղկի, կարտոֆիլի ու անասնաբուծական մթերքների (միս, բուրդ, կաթ) վրա: Ինչ վերաբերում է պետության կողմից մենաշնորհային ձևով մթերվող տեխնիկական մշակույթներին (բամբակ, ծխախոտ), որոնք չունեին ապրանքային (շուկայական) նշանակություն, այստեղ պահպանվում էր նախկին՝ պետական պայմանագրային (կոնտրակտացիա) կարգը[109]:

Կոլտնտեսային բերքի մի մասն էլ պետությանն էր անցնում որպես բնավարձ՝ ՍՏԿ–ների կողմից կոլտնտեսությունների տեխնիկական սպասարկման դիմաց: Ընդ որում պետական պարտավորությունները (մթերում, գնումներ, բնավարձ) կոլտնտեսությունները պարտավոր էին կատարել «կալի գլխից», առաջին հերթին, մնացածը տնօրինել սեփական կարիքների և կոլտնտեսականների աշխատանքի (աշխօրի) դիմաց, ինչպես նաև շուկա հանելու համար, երբ պետությունը այդ թույլ էր տալիս:

1940 թ. Հայաստանում գործում էր 33 մեքենատրակտորային կայան 1932 թ. 7-ի և 1937 թ. 24-ի դիմաց: Նրանք սպասարկում էին կոլտնտեսությունների վարելահողերի (այսինքն վարի ու ցանքի) 84 տոկոսը: Մյուս գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը ավելի պակաս էր: Աշխատանքների մեքենայացումը ավելի ցածր մակարդակի վրա էր անասնապահության բնագավառում: Ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ աշխատանքների մեքենայացումը առաջադիմում էր որպես անընդմեջ գործընթաց և զարգանում էր ինդուստրացման խորացման շնորհիվ:

Գյուղի կոլեկտիվացումը գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման ուղիներից մեկն էր: Կոլտնտեսությունները միավորում էին անհատական գյուղացիական տնտեսություններին, կազմակերպելով նրանց համատեղ աշխատանքը՝ կոոպերատիվ, խմբային սեփականության հիմունքով:

Սոցիալիստական գյուղատնտեսության մյուս ձևը սովխոզներն էին՝ պետական գյուղատնտեսական ձեռնարկությունները: Այն հենվում էր պե-

---

[109] ՀԱԱ, ֆ. 1, ց. 29, գ. 14, թ. 1-37:

տական սեփականության վրա, վարձու բանվորների աշխատանքի կազմակերպման միջոցով:

Հայաստանում 1920-1930-ական թվականներին սովխոզային բանվորության ռեզերվ էին ծառայում հողազուրկ գյուղացիները, նախկին որբերը, հայրենադարձ ընտանիքները և ուրիշներ:

Խաղողագործության և պտղաբուծության զարգացման և դրանց հիման վրա գինու–կոնյակի և պահածոների հումքային կայուն բազա ապահովելու նպատակով «Արարատ» և «Հայկոնսերվ» տրեստների համակարգերում ստեղծվեցին նոր սովխոզներ:

Սովխոզների թիվն սկսեց աճել 1920-ական թվականների վերջին և 1930-ական թվականների սկզբին, երբ ԽՍՀՄ–ում սուր կերպով էր դրված հացի, ապա մսի արտադրության ճգնաժամը վերացնելու խնդիրը:

Առաջին հնգամյակի ծնունդ էին Լենինականի հացահատիկա–ճակնդեղագործական, Սարդարաբատի N 37 բամբակագործական, Լամբալուի բամբակա–ծխախոտագործական, Ալագյազի և Յանըղի ոչխարաբուծական, Զոդի, Դիլիջան–Սեմյոնովկայի, Բազարչայի կաթնաանասնապահական և բազմաթիվ այլ սովխոզներ: 1930 թ. Հայաստանում գործող և կազմակերպման ընթացքում գտնվող սովխոզների ու այլ պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների թիվը 44 էր:

Առաջին հնգամյակի վերջում կար միայն 25 սովխոզ: Սովխոզային արտադրության համար բնորոշ էր նրանց տնտեսական հետամնացությունը, շատերը գործում էին վնասով: Դժվարություններից ու թերություններից էր այսպես կոչված «գիգանտամոլությունը», վիթխարի տնտեսությունների կազմակերպման հետևից ընկնելը, որպիսին, մի կողմից, փաստորեն դառնում էր անկառավարելի, մյուս կողմից, այն տարիներին երկիրը նյութատեխնիկական հնարավորություններ չուներ նման կազմակերպված տնտեսություններ ունենալու համար: «Գիգանտամոլության» համար հանրապետությունները հետևում էին Հյուսիսային Կովկասում ստեղծված «Գիգանտ» սովխոզին:

Երկրորդ հնգամյակում իրագործվեցին սովխոզների տնտեսական–կազմակերպական ամրապնդման միջոցառումներ: Նախ և առաջ մեծ սովխոզները ապախոշորացվեցին (այսպես, Սարդարաբատի բամբակագործական սովխոզը, որը ձգվում էր 28 կիլոմետր երկարությամբ, վերակառուցվեց երեք պտղաբուծական սովխոզների), թույլերը վերացվեցին (35 սովխոզ և այլ պետական տնտեսություններ, առաջին հերթին գործարաններին կից բանմատակարարման բաժիններ): Մնացին 15 սովխոզ և 11 այլ պետական տնտեսություն:

Սովխոզների ամրապնդման նպատակ ունեին նաև 1933 թ. ստեղծված քաղբաժինները (արտակարգ կուսակցական մարմինները), որոնք, ի տարբերություն ՄՏԿ–ներին կից կազմակերպվածների, որոնք վերացվեցին 1934 թ. վերջին, գործեցին մինչև 1940 թ.: 1934 թ. մայիսի դրությամբ քաղբաժիններ ունեին հանրապետության 11 սովխոզներ:

Սովխոզների կառավարումը շարունակվում էր տրեստների միջոցով, որպիսիք հաճախ էին վերակառուցվում, փոփոխությունների ենթարկվում: Ժամանակագրական կարգով միմյանց հաջորդել են ճյուղային, ճյուղային-տարածքային կառավարման սկզբունքները: Ուշադրության կենտրոնում էին Լոռու և Ալագյազի միութենական ենթակայության և այլ սովխոզներ:

Երրորդ հնգամյակի տարիներին ևս շարունակվում էին իրականացվել սովխոզների տնտեսական–կազմակերպական ամրապնդման միջոցառումներ: Այնուամենայնիվ ինչպես կոլտնտեսային, այնպես էլ սովխոզային արտադրությունը հետ էր մնում երկրի պահանջներից: Սովխոզների մեծ մասը շահութաբեր չէր, գործում էր վնասով: Նախապատերազմյան տարիների նորություններից էր աղվեսաբուծական սովխոզի կազմակերպումը (Կիրովականի շրջանի Լերմոնտովո գյուղի մոտ): Նրա նպատակը թանկարժեք մորթիների արտադրության կազմակերպումն էր, որն ուներ մեծ պահանջարկ:

***

Հայաստանում գյուղատնտեսության զարգացման կարևոր պայմաններից էր ոռոգումը: Խորհրդային իշխանության առաջին իսկ տարիներից ծրագրային լայնածավալ աշխատանքներ կատարվեցին ջրաշինարարական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Աշխատանքի ներգրավվեցին ջրային գործի մասնագետները՝ ինժեներները և տեխնիկները: Իսկ նոր կադրերի պատրաստման նպատակով ֆակուլտետ բացվեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում:

Ջրատեխնիկական առաջին կառույցներից են Էջմիածնի, Շիրակի, Փոքր Սարդարաբատի ջրանցքները և Այղր լճի ջրհան կայանը, որոնք իրականացվեցին 1920-ական թվականներին: Էջմիածնի ջրանցքը ոչ միայն վերականգնվեց, այլև զգալի չափով մեծացվեց նրա ոռոգման կարողությունը: Շիրակի ջրանցքը բարդ տեխնիկական կառույց է, սկիզբ է առնում Ախուրյան գետի ջրամբարից, անցնում է երեք թունելներով, աշխատեցնում Լենինականի (Գյումրիի) հիդրոէլեկտրակայանը, ոռոգելով Շիրակի դաշտի խոպան հողերը: Տեխնիկական բարդ կառույց է նաև Այղր լճի ջրհան կայա-

նը, որը ջուրը բարձրացնում է 30 մետր խորքից: Այն գործարկվեց Երևանի հէկի շահագործման շնորհիվ: Արաքսից սկիզբ առնող Փոքր Սարդարաբատի (Արմավիրի) ջրանցքը ամենաերկարն էր և հզորը՝ ոռոգման կարողությամբ: Փոքր Սարդարաբադի ծրագիրը իրականացավ Թուրքիայի հետ հաստուկ պայմանագրի ստորագրման շնորհիվ, որը թուրքական կողմի համար ևս ձեռնտու էր: Այդ կապակցությամբ 1935 թ. հուլիսին Հայաստան ժամանեց Թուրքիայի վարչապետ Իսմեթը:

Նախագծային աշխատանքներ կատարվեցին Մեծ Սարդարաբատի ջրանցքի կառուցման համար, որին տրվում էր մեծ նշանակություն: Մասնավորապես այն հնարավորություն էր տալու արտասահմանից ընդունելու մեծ թվով հայրենադարձներ և բնակեցնել նրանց Արարատյան դաշտի նոր յուրացվելիք տարածքներում: Խորհրդային իշխանությունը ենթադրում էր այդ ծրագիրը կենսագործել Ազգերի լիգայի միջոցով և օգնությամբ, սակայն արտասահմանում համապատասխան միջոցներ չգտնվեցին տվյալ նպատակի իրականացման համար:

Ոռոգման հետագա զարգացումը առնչվում է Սևան–Հրազդան կասկադի ծրագրի հետ: Ինչպես նշվել է՝ ջրային սահմանափակ ռեսուրսներ ունեցող Հայաստանի (խոսքը Արևելյան Հայաստանի մասին է) համար ինչպես էլեկտրական էներգիայի արտադրության, այնպես էլ դրա հետ կապված ջրանցքաշինարարության նպատակով առաջ քաշվեց Սևանա լճի մակարդակն իջեցնելու միջոցով նրա ջուրն օգտագործելու խնդիրը: Ընդ որում, ինչպես դարձյալ նշվել է, այդ ծրագրի մտահղացման և կենսագործման ժամանակ հաշվի չէին առնվում այն բացասական հետևանքները, որ կարող էր ունենալ լճի մակարդակի իջեցումը:

1930-ական թվականների սկզբին մշակվեցին կասկադի կայանների և ջրանցքների նախագծերը: Այս պլանի առաջին կառույցներն էին Քանաքեռհէկը և Ղոռերի (Արտաշատի) ջրանցքը: Ղոռերի ջրանցքը ամենախոշորն էր մինչև այդ կառուցվածների մեջ: Սկսվում է Երևանի առաջին հիդրոկայանի մոտ, ձգվում 60 կիլոմետր երկարությամբ, ճանապարհին կտրում և իր մեջ ներառնում Ազատ գետի ջրերը և շարունակվում մինչև Վեդի: Այն ժամանակ նրա ոռոգման կարողությունը 22 հազար հեկտար էր Արտաշատի և Արարատի շրջաններում: Մայր ջրանցքից ճյուղավորվում են բազմաթիվ ջրանցքներ ու առուներ: Մայր ջրանցքի առաջին հերթը շահագործման հանձնվեց 1932, իսկ երկրորդը՝ 1939 թվականին:

Քանաքեռհէկի գործարկումը ծնունդ տվեց Նոր Դալմայի ջրանցքին, որը ոռոգելի դարձրեց Երևանի մերձակա 1500 հեկտար անմշակ հողեր, որտեղ բնակություն հաստատեցին որոշ լեռնային շրջանների բնակիչներ և կազմակերպվեց խաղողագործության, պտղաբուծության ու տեխնիկա-

կան մշակույթների զարգացումը համաձայն միութենական կառավարության և ՀամԿ(բ)Կ կենտկոմի որոշման (1940 թ.):

Նախագծային աշխատանքներ կատարվեցին մի շարք խոշոր ջրանցքների կառուցման համար (Թալինի, Ստորին Հրազդանի և այլն), որոնց շինարարությունը, սակայն, հետաձգվեց Հայրենական պատերազմի սկսվելու պատճառով:

1920-1930–ական թվականներին շահագործման հանձնվեցին նաև մի շարք մանր ու միջին կարողությամբ ջրուղիներ (Կարճևանի, Գնդևազի, Նալբանդի, Սիսիանի և այլն[110]:

Ջրաշինարարությունը իրականացվում էր պետության միջոցներով: Որոշ մասնակցություն ունեցան նաև կոլտնտեսությունները: Խորհրդային իշխանության քսան տարվա ընթացքում (1921-1940 թթ.) ջրաշինարարության մեջ ներդրվեց 113,7 միլիոն ռուբլի, այդ թվում միայն Ղռերի ջրանցքի համար 47,7 միլիոն ռուբլի: Իսկ ընդհանարապես ջրային տնտեսությանը հատկացվել էր 153,1 միլիոն ռուբլի, որի շնորհիվ ոռոգման մեջ էր ներգրավվել 56,8 հազար հեկտար հող: Հայաստանում ոռոգելի հողատարածությունները 1940 թ. կազմում էին 180 հազար հեկտար, 1913 թ 97 հազար հեկտարի դիմաց կամ գրեթե կրկնապատկվել էին[111]:

Ոռոգման ընդարձակումը, ինչպես նաև գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացումը դրական նախադրյալներ էին հանդիսանում գյուղատնտեսության զարգացման համար: Սակայն պետք է նշել, որ կոլտնտեսային ու սովխոզային արտադրության զարգացումը համընթաց չէր արտադրողական ուժերի ընդլայնմանը: Գյուղատնտեսության հետ մնալու հիմնական պատճառը առաջին հերթին կոլտնտեսային կարգն էր, նյութական շահագրգռվածության բացակայությունը կոլտնտեսություններում ու սովխոզներում: Գյուղատնտեսական մթերքների պետական հարկման ու գնումների համակարգը խիստ անշահավետ էր, որի պատճառով գյուղատնտեսական ծեռնարկությունները նույնիսկ չէին ծածկում իրենց կատարած ծախսերը:

Այդ և այլ պատճառներով կոլտնտեսականի աչքում հողը կորցրեց իր նշանակությունը: Գյուղացին ասես կտրվեց հողից, այն խորթացավ նրա համար: Գյուղատնտեսության բռնի, հարկադրական կոլեկտիվացման բացասական հետևանքները շատ խորն էին ու տևական:

---

[110] Ոռոգման պատմության մանրամասնությունները տե՛ս Գ. Շիրմազան, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից: Երևան, 1962: Ս. Վիրաբյան, Ուրվագծեր Հայաստանի ոռոգման պատմության, Երևան, 1986:

[111] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940 гг.), с. 43, 45, 62.

Հետագայում, խորհրդային իշխանության ամբողջ 70 տարվա ընթացքում պետությունն անվերջ զբաղված էր գյուղատնտեսության խնդիրները լուծելու, նրան վերելքի ուղու վրա դնելու հոգսերով: Սակայն անվերջ միջոցառումները ցանկալի արդյունքը չէին տալիս կամ ունենում էին միայն անցողակի դրական արդյունքներ: Պատճառը արմատական սխալներն էին: Փաստորեն իրեն չարդարացրեց գյուղատնտեսության կոլեկտիվացման խորհրդային երկրի փորձը: Ուստի պատահական չէր, երբ Հայաստանի երրորդ հանրապետության հաստատումից հետո արագորեն լուծարվեցին բոլոր կոլտնտեսություններն ու սովխոզները:

Գլուխ VIII. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՄԲՈՂՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Կենտրոնացված պլանային տնտեսվարության անցումով, որն սկսվեց առաջին հնգամյակով, խիստ ուժեղացավ խորհրդային պետության Կոմունիստական կուսակցության ղեկավար ու կազմակերպիչ դերը երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային ամբողջ կյանքում: Միաժամանակ կուսակցության մեջ այլակարծությունների (տրոցկիզմ, աջ թեքում) ջախջախումով ստալինյան ղեկավարությունն ավելի ամրապնդեց իր դիրքերը: Ստալինի 50-ամյակի նշումով (1929 թ.) հաստատվում և ուժեղանում էր նրա հեղինակությունը, որպես առաջնորդի, դառնալով պաշտամունք 1930-ական թվականների կեսերին:

Հայ մշակույթի ու գրականության գործիչները ևս, տուրք տալով ստեղծված դրությանը, ստիպված էին գովերգել Ստալինին: Բոլոր հեղինակներին ասես փորձեց գերազանցել բանաստեղծ Նաիրի Զարյանը, որը 1935 թ. գրած «Ստալին» բանաստեղծության մեջ շռայլ պատկերներով ու համեմատություններով Ստալինին բարձր դասեց աշխարհի բոլոր մեծերից:

Այդ ամենը նշանակում էր Կոմունիստական կուսակցության ամբողջատիրության հաստատում ԽՍՀՄ-ում, կառավարման մի համակարգ, որն այդ ժամանակ իշխում էր նաև Իտալիայում, Ֆաշիստական Գերմանիայում և այլ երկրներում: Նման պետական կարգի կազմավորումը զգալի չափով պայմանավորված էր բուրժուական աշխարհն ընդգրկած տնտեսական ճգնաժամի պայմաններում պետության դերի մեծացմամբ: ԽՍՀՄ-ում կարևոր նշանակություն ուներ քաղաքական իշխանության համար ծավալված պայքարը: Այդ պայքարում հաղթանակի հասած Ստալինն ուներ կապիտալիստական շրջապատման պայմաններում ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման իր պատկերացումը: Ստալինյան այդ մոդելի տարրերն էին երկրի ինդուստրացումը, գյուղատնտեսության կոլեկտիվացումը և կուլտուրական հեղափոխությունը կամ երկրի բնակչության սոցիալիստական գիտակցության դաստիարակումը, պետության հրամանատարական բարձունքների էլ ավելի կենտրոնացումով ու ամրապնդումով հանդերձ: Նույնիսկ կոլտնտեսությունները, որ հասարակական-ինքնակառավարվող կազմակերպություններ էին, պետականացված էին մեծ չափով: ԽՍՀՄ քաղաքական զարգացման հանրագումարը եղավ ամբողջատիրական (տոտալիտար) պետության ձևավորումը և հաստատումը 1930-ական թվականներին:

Երկրի քաղաքական ղեկավարման բնորոշ կողմը դրա կենտրոնացումն էր ՀամԿ(բ)Կ Կենտկոմի, նրա քաղբյուրոյի և անձամբ Ստալինի ձեռքում, կուսակցական համագումարների ավելի ու ավելի ուշ հրավիրումը: Ամբողջ 1930-ական թվականների ընթացքում կայացավ երեք համագումար՝ 1930 թ.՝ 16-րդ, 1934 թ.՝ 17-րդ և 1939 թ.՝ 18-րդ, այն դեպքում, երբ 1920-ական թվականներին տեղի էր ունեցել կրկնակի չափով ավելի: Հատկանշական է, որ վերջին երկու համագումարներում Կենտկոմի (Ստալինի) հաշվետու զեկուցումների առթիվ առանձին բանաձև կամ որոշում չի ընդունվել և դրան փոխարինել են «Ստալինի զեկուցման մեջ առաջադրված դրույթներն ու խնդիրները»:

Իշխանության ամուր նվաճումից ու ամրապնդումից հետո Ստալինին մնում էր հլու-հնազանդ պետական համակարգի կազմավորումը և անհնազանդության հնարավոր փորձերի կանխումը: Դա իրականացվեց պետության և կուսակցության մեջ հին հեղափոխական կադրերի ջարդով նրանց զանգվածային ձերբակալությամբ ու գնդակահարությամբ: Հին կադրերին փոխարինելու եկան նորերը, ովքեր աճել ու դաստիարակվել էին խորհրդային իշխանության տարիներին՝ այդ իշխանության ու Ստալինի նկատմամբ կույր նվիրվածության ոգով: Վախի ու սարսափի մթնոլորտի ստեղծումը դարձավ ստալինյան ղեկավարությունն ամրապնդելու միջոց:

Պետական-կուսակցական համակարգում կազմավորված բազմամարդ անվանակարգությունը (նոմենկլատուրա) մեծ արտոնություններով օժտված պաշտոնյաների դասը ևս դարձավ խորհրդային իշխանության և ստալինյան ղեկավարության ամրապնդման միջոց:

Կուսակցության պաշտոնական օրգանը ("Партийное строительство") տվել է անվանակարգության հետևյալ սահմանումը. «Անվանակարգությունը ամենակարևոր պաշտոնների ցանկն է, որոնց թեկնածությունները նախապես քննարկում, երաշխավորում և հաստատում է տվյալ կուսակցական կոմիտեն (շրջկոմ, քաղկոմ, մարզկոմ և այլն): Անվանակարգի մեջ մտնող անձինք աշխատանքից ազատվում էին դարձյալ տվյալ կուսակցական կոմիտեի համաձայնությամբ»:

Մեջբերելով տվյալ ձևակերպումը, Յուրի Ստեցովսկին, որ հեղինակել է քաղաքական բռնությունների պատմությանը նվիրված գրքեր, շարունակում է, թե անվանակարգն այն մարդիկ են, ովքեր ունեն իշխանություն, ընդ որում ցմահ[1]:

Անվանակարգության և պետական իշխանության համակարգում, կուսակցական վերնախավից հետո հատուկ դեր ու նշանակություն ուներ

---

[1] Юрий Стецовский. История советских репрессий. Том 2, М., 1997, с. 11.

Միացյալ պետքաղվարչություն – ներքին գործերի ժողկոմատը, փաստորեն որի միջոցով ստալինյան ղեկավարությունը պահում և ամրապնդում էր իր տիրապետությունը:

1930-ական թվականներին կոմունիստական ամբողջատիրության պայմաններում Հայաստանում լայնանում ու ամրապնդվում էր ՀԿ(բ)Կ ղեկավար ու կազմակերպիչ դերը: ՀԿ(բ)Կ-ն, որպես ՀամԿ(բ)Կ ջոկատներից մեկը (մարզային կազմակերպության իրավունքներով), իրականացնում էր նրա ընդհանուր քաղաքականությունը, ընդունած որոշումներն ու հրահանգները:

Հանրապետության ինքնիշխանությունը, մինչև 1936 թ. սահմանադրությունը, բաժանվում էր միության և Անդրդաշնության բարձրագույն մարմինների հետ: Ըստ էության այդ ինքնիշխանությունը ձևական էր, քանի որ կարևոր նշանակություն ունեցող հարցերի լուծումը նրան չէր պատկանում: Երբեմն-երբեմն ԽՍՀՄ մարմիններն արձանագրում էին տեղական նախաձեռնությունը պաշտպանելու անհրաժեշտությունը, ընդդեմ Անդրդաշնության մարմինների ձեռքում իշխանության կենտրոնացման: Կարելի է, օրինակի համար, բերել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի որոշումը, որը կայացվել էր Անդրերկրկոմի և Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի կենտկոմների հաշվետու զեկուցումների հիման վրա: Որոշման մեջ նշվում էր, որ Անդրկուսկազմակերպությունը խիստ կենտրոնացում է թույլ տվել երկրամասի տնտեսական ու կուլտուրական շինարարությունը ղեկավարելու գործում, արգելակելով տեղական նախաձեռնության զարգացումը, փաստորեն դիմազրկելով հանրապետությունների տնտեսական մարմիններին: Կենտկոմն առաջարկեց անմիջապես ձեռնարկել Ղափանի ու Ալավերդու պղնձահանքերի արմատական վերակառուցումը և վերասարքավորումը: Հայաստանում կառուցվելու էր նաև հանքային պարարտանյութերի խոշոր գործարան, որը սպասարկելու էր ամբողջ Անդրկովկասին: Մի շարք ձեռնարկություններ (տեքստիլ, շինանյութերի, քիմիական, սննդի, ՄՏԿ-ներ և այլ) Անդրդաշնային իրավասությունից հանձնվեցին հանրապետությանը: Հանրապետական Կենտկոմներին հանձնարարվեց մշակել կուլտուր-կենցաղային շինարարության պլաններ[2]:

Մեկ բնորոշ օրինակ ևս, երբ 1936 թ. ԽՍՀՄ ժողկոմխորհի Խորհրդային վերահսկողության հանձնաժողովը Հայաստան ուղարկեց ստուգող մարդկանց մի խումբ, Վեյնբաումի նախագահությամբ, ուսումնասիրելու համար հանրապետությունում արտաբյուջետային շինարարության դրությունը: Բանն այն է, որ բյուջեի և շինարարության հարցերի լուծումը

---

[2] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր: Երևան, 1967, էջ 439-440:

կենտրոնացած էր միութենական մարմինների իրավասության սահմաններում: Եվ այնուամենայնիվ Հայաստանի ղեկավար մարմինները և առաջին հերթին ժողկոմխորհը համարձակվել էին տեղի արտադրական ձեռնարկությունների («Արարատ» տրեստ և այլն) շահույթների հաշվին, սեփական նախաձեռնությամբ ու հայեցողությամբ, ծախսեր կատարել որոշ շինարարական օբյեկտների գծով (Կառավարական տուն, Ժողտուն, Երևան-Սևան խճուղի և այլն): Վեյնբաումի հանձնաժողովը խորացավ հարցի մեջ ամբողջ վեց տարվա (1929-1934 թթ.) կտրվածքով:

Հարցը կենտրոնի ուշադրությանն էր արժանացել հավանաբար այն նամակի կապակցությամբ, որը 1935 թ. օգոստոսին Արամայիս Երզնկյանը, որ նոր էր ազատվել ժողկոմխորհի նախագահի տեղակալի պաստականություններից, հասցեագրել էր Ստալինին (պատճենը՝ Անդրերկրկոմի քարտուղար Բերիային): Մի շարք քաղաքական-գաղափարական հարցերի կողքին, որոնց կանդրադառնանք հետագա էջերում, նամակի հեղինակը անդրադարձել էր նաև հանրապետության տնտեսական շինարարության, արտաբյուջետային ֆինանսական ծախսեր և շինարարություն կատարելու խնդրին, դրա համար պատասխանատու համարելով և քննադատության ենթարկելով ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանին և ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Աղասի Խանջյանին:

Վեյնբաումի հանձնաժողովի հետազոտության արդյունքները 1936 թ. ապրիլի 26-ին համատեղ քննարկեցին Անդրերկրկոմը և Անդրժողկոմխորհը, ընդունելով համապատասխան որոշում: Դրան նախորդել էր Անդրերկրկոմի քարտուղար Կուդրյավցևի հանձնաժողովի այցը Հայաստան:

Որոշումը Հայաստանի ղեկավար կուսակցական աշխատողների համար պարզաբանվեց մայիսի 5-ի խորհրդակցությունում: Միջոցառումներ նախատեսվեցին և իրականացվեցին ժողկոմխորհի և շինարարական կազմակերպությունների գործունեությունը բարելավելու ուղղությամբ[3]:

Խորհրդակցության նյութերից միաժամանակ տեղեկանում ենք այն մասին, որ միութենական կառավարությունը ավելացրել էր Հայաստանում շինարարության ծավալները, նաև Կառավարական տան և օպերային թատրոնի կառուցման գծով: ԽՍՀՄ կառավարության նման մոտեցումը միաժամանակ նշանակում էր, որ չնայած բացահայտված բացերին ու թերություններին, և որոնք ծևականորեն հակասում էին գործող կարգին, նա ոչ միայն մեղմ էր վերաբերվում դրանց նկատմամբ, այլև ավելին, համապատասխան ուղղումներ ու լրացումներ էր կատարում ընթացիկ պլաններում:

---

[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 59, թ. 1-95:

Հանրապետության ինքնիշխանության սահմանները ընդլայնվեցին 1936 թ. ԽՍՀՄ նոր սահմանադրության ընդունումով, որի համաձայն Անդրդաշնությունը վերացվեց և հանրապետությունները ԽՍՀՄ կազմի մեջ մտան ուղղակիորեն: Սակայն ԽՍՀՄ դաշնային միության համար բնորոշ էր նրա ավելի ու ավելի կենտրոնացված կառավարումը և հանրապետությունների իրավասությունների նեղացումը:

1930-ական թվականներին Հայաստանի կուսակցական կազմակերպությունը դարձավ ավելի բազմանդամ, բազմացան ղեկավար կուսակցական մարմինները: 1930 թ. 16,6 հազարի դիմաց 1941 թ. նրա անդամ-թեկնածուների թիվը հասել էր 45,5 հազարի կամ ավելացել էր 2,7 անգամ[4]: Կոմունիստների թվի այդպիսի մեծ և արագ աճը ինքնանպատակ չէր և ուներ իր պատճառները: Բանն այն է, որ խորհրդային երկրում բոլոր կարգի ու աստիճանների պաշտոնները վստահվում էին, քիչ բացառությամբ (ստորին պաշտոնների համար), կուսակցության անդամներին: Բարձր պաշտոնների խավից էլ կազմավորվում էր աստիճանակարգությունը (նոմենկլատուրան):

Ըստ զբաղմունքի 1941 թ. բանվորներ էին կոմունիստների 15,5 տոկոսը, կոլտնտեսականներ՝ 29,7 և ծառայողներ 49,1 տոկոսը: Ղեկավարությունը վարում էր կուսակցության սոցիալական կազմի, դրա բարելավման համապատասխան քաղաքականություն: Բանվորագյուղացիական պետության համար կարևոր էր ցույց տալ տվյալ դասակարգերի քանակական առկայությունը ինչպես կուսակցության մեջ, այնպես էլ պետական իշխանության մարմիններում: Կուսակցության մեջ ընդունելության գերապատվությունը տրվում էր, իհարկե, բանվոր դասակարգին, քանի որ կուսակցությունը վերջինիս առաջավոր ջոկատն էր:

Եվ այնուամենայնիվ, կուսակցության մեջ իշխող էր ծառայողների տեսակարար կշիռը, որի հիմնական միջուկը մտավորականությունն էր, իսկ նրա կազմում՝ աստիճանակարգը (նոմենկլատուրան)՝ ծառայողների «արիստոկրատական» վերնախավը: Վերջինս տիրում էր պետական ու կուսակցական իշխանությանը՝ վերևից մինչև ներքև: Իսկ նման արտոնյալ վիճակ ձեռք բերելու համար նախ և առաջ պետք էր լինել կուսակցության անդամ:

Կարևոր ուշադրություն էր նվիրվում նաև կանանց ներգրավմանը Կուսակցության, ինչպես և, ընդհանրապես, արտադրության մեջ: 1930-

---

[4] Компартия Армении в цифрах и документах. 1920-1980. Ереван, 1980, с. 14.

1941 թթ. կանանց տեսակարար կշիռը ավելի քան կրկնապատկվեց (5,0-ից բարձրանալով 11,2 տոկոսի)[5]:

1933 թ. դադարեցվեց ընդունելությունը կուսակցության շարքերում կուսակցական փաստաթղթերի առաջիկա ստուգման ու փոխանակման նախապատրաստության համար: Ընդունելության չգոյության պայմաններում ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարի (1934 թ.) որոշմամբ կուսկազմակերպություններին կից ստեղծվում էին «ՀամԿ(բ)Կ համակրողների խմբակներ»: Դրա նպատակը կուսակցությանն առավել մոտ անկուսակցական ակտիվիստներին կուսակցության շուրջ համախմբելն էր նրանց ընդունելությունը նախապատրաստելը:

Կուսակցության անդամ-թեկնածուների փաստաթղթերի ստուգումը և դրանց փոխանակումն իրականացվեց 1935 թ.: Դրանց անավարտ արդյունքների համաձայն կուստոմս հանձնվեց շուրջ 11 հազար կուսանդամների և թեկնածուական քարտ մոտ 3400 թեկնածուների: Կուսակցությունից դուրս թողնվեցին համեմատաբար քիչ թվով անդամ-թեկնածուներ, որոշ թեկնածուներ փոխադրվեցին համակրողների խմբակ[6]: Կուսակցության մեջ ընդունելությունը վերսկսվեց 1938 թ.: Մինչև այդ կուսակցության անդամ-թեկնածուների թիվը զգալիորեն նվազեց կոմունիստների անհիմն ձերբակալության պատճառով, երբ նրանք նույնքան անհիմն հեռացվում էին կուսակցության շարքերից:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում, որպես երկրի ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման և մշակութային վերելքի արդյունք, աճեց կուսակցության սկզբնական կազմակերպությունների ցանցը, 584-ից հասնելով 2187-ի[7]: Կուսակցական կազմակերպություններն ընդգրկում էին հանրապետության բոլոր ձեռնարկություններն ու հիմնարկությունները, լուսավորության, մշակույթի, գիտության օջախները, հասարակական կազմակերպությունները: Սկզբնական կազմակերպությունների միջոցով Կոմունիստական կուսակցությունը իր ազդեցությունն էր տարածում և պահպանում աշխատավորական զանգվածների նկատմամբ, կազմակերպում իր որոշումների իրագործումը: Չնայած կուսկազմակերպությունների զգալի մասը դեռևս բավական սակավանդամ էր, այնուամենայնիվ դա արգելք չէր հանդիսանում կուսակցության արդյունավետ ազդեցության համար:

Կուսակցության կազմակերպական կառուցվածքում մեծ դեր էր վերապահված ղեկավար կուսմարմիններին՝ ՀԿ(բ)Կ կենտրոնական, քաղա-

---

[5] Նույն տեղում, էջ 42:
[6] Նույն տեղում, էջ 149:
[7] Նույն տեղում, էջ 70-71:

քային ու շրջանային կոմիտեներին: 1930 թ. գավառների վերացումից հետո Հայաստանում կազմավորվեց 25 գյուղական շրջանային կոմիտե, որոնց թիվը 1930-ական թվականների վերջին հասավ 39-ի (ըստ շրջանների ավելացման): Քաղաքային կոմիտեներ ունեին Երևանը և Լենինականը (Գյումրի): Չորս շրջանային կոմիտեներ ստեղծվեցին Երևան քաղաքում: Կոմիտե էր գործում երկաթուղային տրանսպորտում: 1933-1934 թթ. կուսակցական արտակարգ մարմիններ գոյություն ունեին, ինչպես նշվել է, մեքենատրակտորային կայաններին կից, որոնց խնդիրը կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպական ամրապնդումն էր: Սովխոզների քաղբաժինները գոյատևեցին մինչև 1940 թ.:

Բազմաթիվ արդյունաբերական-շինարարական ձեռնարկություններ գոյությունը և հարյուրավոր կոլտնտեսությունների կազմակերպումը հանգեցրին կուսակցական կառուցվածքի ստորին օղակների վերակառուցմանը: 1932 թ. կեսերին հիմնականում ավարտվել էին այդ վերակառուցումներն ըստ ցեխերի, բրիգադների ու հերթափոխությունների (արդյունաբերություն, շինարարություն, տրանսպորտ), ձևավորելով բջիջներ, կուսկազմակերպիչներ ու կուսխմբեր: Գյուղխորհուրդներին կից տարածքային կազմակերպություններից արտադրական սկզբունքով առանձնացան կոլտնտեսային կուսբջիջներ: Խոշոր բջիջները դարձան հենակետային, որոնք մյուսների համար ճանաչվում էին որպես կենտրոն:

Կուսակցական աշխատանքի վերակառուցումը, նշել է ՀԿ(բ)Կ կենտկոմի 1-ին քարտուղար Ա. Խանջյանը 1934 թ., որի հիմնական նպատակը կուսգործունեության ծանրության կենտրոնը դեպի ցեխ, բրիգադ, արտադրություն, հասարակական-տնտեսական կյանքի ստորին միավորներ փոխադրելն էր, իրագործվեց «որոշակի հաջողությամբ»: Նույն ժամանակի համար Ա. Խանջյանը բերել է հետևյալ տվյալները. մինչև վերակառուցումը գոյություն ունեցած 644 կուսբջիջի, 54 թեկնածուական խմբակի և 625 խմբակի դիմաց վերակառուցումից հետո առկա էր 905 բջիջ, 173 թեկնածուական խմբակ, 583 կուսխմբակ և 88 կուսակցական-կոմերիտական կորիզ[8]:

Կուսակցության կազմակերպական կառուցվածքը նման էր բուրգի, որի կենտրոնում կանգնած էր ՀԿ(բ)Կ կենտկոմը: Նրա կառուցվածքը և աշխատակազմը հարմարեցված էր տնտեսական, քաղաքական ու մշակութային խնդիրների լուծմանը: Այսպես, 1936 թ. դրությամբ Կենտրոնական կոմիտեում գործում էին հետևյալ բաժինները՝ արդյունաբերության ու

---

[8] ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 9-րդ համագումարում, 1934 թ. հունվարի 10-14: ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ա. Խանջյանի զեկուցումը: Երևան, 1934, էջ 103:

տրանսպորտի, գյուղատնտեսության, առևտրի, դպրոցական ու գիտության, մշակույթի: Կային նաև զուտ կուսակցական կառույցներ՝ ղեկավար կուսակցական մարմինների, քարոզչության բաժիններ և կուսկոլեգիա: Վերջինի գործառույթը կուսակցականների կարգապահական հարցերն էին: ՀԿ(բ)Կ Կենտկոմի գործունեությունն իրականացնում էին Կենտկոմի նախագահությունը կամ բյուրոն և քարտուղարությունը: ՀԿ(բ)Կ կենտկոմի 1-ին քարտուղար են աշխատել հաջորդաբար՝ Աղասի Խանջյանը (1930-1936 թթ.), Հ. Ամատունին (Վարդանյան՝ 1936-1937 թթ.) և Գրիգոր Հարությունյանը (1937-1953 թթ.):

Համանման կառուցվածք ունեին շրջանային կոմիտեները, հաշվի առնելով շրջանի առանձնահատկությունները:

Կուսակցական ապարատի կազմը, որն այնքան էլ բազմամարդ չէր (1937 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմ ընդամենը 40 մարդ, քաղաքային կոմիտեներ՝ 33 մարդ և շրջանային կոմիտեներ՝ 293 մարդ)[9], ներկայացնում էին աստիճանակարգի (նոմենկլատուրայի) ամենաարտոնյալ անդամները:

Խորհրդային աստիճանակարգի կազմը լրացնում էին իշխանական համակարգի, տնտեսական մարմինների և մշակույթի բնագավառների արտոնյալ վերնախավերը: Այստեղ կառավարության անդամներն էին, Կենտգործկոմի նախագահությունը, Գերագույն դատարանը, ժողովրդական դատարանները, դատախազությունը, խոշոր հիմնարկ-ձեռնարկությունների պետերն ու դիրեկտորները, հանրապետության կարմիր բանակի (բաղկացած էր մեկ դիվիզիայից) բարձր հրամանատարությունը և ուրիշներ: Հատուկ տեղ ու դեր ուներ Պետքաղվարչությունը:

Այս վերնախավը շրջապատված էր կուսակցական-խորհրդային, այսպես կոչված, ակտիվով, որն իր հերթին ստորաբաժանվում էր բարձր, միջին և ստորին շերտերի: Ակտիվի մեջ պետք է հասկանալ ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամներ, կուսհամագումարների ու կոնֆերանսների պատգամավորներ, կուսակցական բջիջների (կազմակերպությունների) քարտուղարներ, խորհուրդների հանրապետական համագումարի պատգամավորներ, շրջանային ու տեղական (գյուղական, ավանային ու քաղաքային) խորհուրդների անդամներ, կոմերիտմիության և արհեստակցական միությունների ղեկավարներ ու դրանց համագումարների պատգամավորներ, կոլտնտեսությունների ու կոոպերատիվ կազմակերպությունների ղեկավարներ, գրողներ և այլ մշակութային միությունների անդամներ, բուհերի դասախոսներ, դպրոցների մանկավարժներ և ուրիշներ:

---

[9] ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 123ա, թ. 1:

Մասնավորապես պետական իշխանության բարձրագույն մարմին խորհուրդների համագումարը ներկայանում էր 400-475 պատգամավորներով, որոնք ընտրվում էին հասարակության բոլոր դասակարգերից ու խավերից, իհարկե, կոմունիստների գերապատվությամբ, նաև կոմերիտականների ու անկուսակցականների բաժնեմասերով: 1931 թ. 7-րդ համագումարի կողմից ընտրված Կենտգործկոմն ուներ 236 անդամ[10]: Նոր Սահմանադրության համաձայն, 1938 թ. ՀԽՍՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդն ընտրվեց 256 մարդու կազմով[11]: Ակտիվի հոծ զանգված էին իշխանության տեղական խորհուրդների անդամները (պատգամավորները): Նույն թվականի ընտրություններում տեղական խորհուրդների համար առաջադրվել էր շուրջ 12 հազար դեպուտատության թեկնածու[12]:

1930-ական թվականներին ամբողջ երկրի, նաև Հայաստանի պետական-հասարակական կյանքը ընթանում էր ներքին ու արտաքին բարդ իրադրության պայմաններում: Տասնամյակի սկզբում ներքին կյանքը փոթորկվեց կոլեկտիվացման այլանդակ խաղով: Տասնամյակի երկրորդ կեսը դարձավ քաղաքական բռնաճնշումների և ահուսարսափի ժամանակաշրջան: 1930-ական թվականների վերջին բարդացավ ԽՍՀՄ միջազգային դրությունը, երբ հարկավոր էր երկրի գործերում ղեկավարվել պատերազմի մեջ ներքաշվելու իրական հնարավորությամբ: Միաժամանակ ԽՍՀՄ ժողովուրդներն իրականացնում էին առաջին, երկրորդ, նաև երրորդ հնգամյակների վիթխարածավալ խնդիրներ, դրա համար կազմակերպելով աշխատավորների ու ամբողջ ժողովրդի ուժերն ու միջոցները:

Քննարկվող ժամանակաշրջանում կայացել են ՀԿ(բ)Կ 7-10-րդ համագումարները, որոնք անցել են միութենական համագումարների և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ստալինի առաջադրած տեսական ու գործնական նշանակություն ունեցող դրույթներով ու առաջադրություններով: 1930 թ. ՀամԿ(բ)Կ 16-րդ համագումարը պատմության մեջ մտավ որպես «ամբողջ ճակատով սոցիալիզմի ծավալուն հարձակման համագումար», որը համապատասխանում էր 1-ին հնգամյակի հիմնական խնդիրներին: Հաջորդը 17-րդը, 1934 թ., «հաղթողների» համագումարն էր: 18-րդը, 1939 թ., արձանագրեց, որ ԽՍՀՄ-ը թևակոխել է «անդասակարգ սոցիալիստական հասարակագի կառուցումն ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանը»:

---

[10] Съезды Советов Армении. 1922-1937. Ереван, 1967, с. 168, 180, 182.
[11] Հայ ժողովրդի պատմություն: Հ. 7, Երևան, 1967, էջ 387:
[12] Մ. Կ. Սաֆարյան, Հայաստանի կոմպարտիայի պայքարը ռեսպուբլիկայում սոցիալիզմի զարգացման ու ամրապնդման համար (1937-1941 թթ.): Երևան, 1966, էջ 97:

ՀԿ(բ)Կ 7-րդ, 8-րդ և 9-րդ համագումարների ժամանակ Կենտկոմի 1-ին քարտուղարն էր Աղասի Խանջյանը, որը ներկայացրել է Կենտկոմի հաշվետվությունները: Դրանցում քննարկվել են երկրի զարգացման 1-ին և 2-րդ հնգամյա պլանների կատարման՝ ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման և մշակույթի զարգացման արդյունքները: Մասնավորապես պետք է նշել Խանջյանի հոգատար վերաբերմունքը Հայաստանի մշակույթի կադրերի աճի, հայկական մշակույթի առաջընթացի համար: Միաժամանակ չպետք է անտեսել նաև նրա ղեկավարման տարիներին (1928-1930 թթ. 2-րդ և 1930 թ. մայիսից 1-ին քարտուղար) կենսագործված կոլեկտիվացման քաղաքականությունը, որն ընթացավ կոպիտ սխալներով ու աղավաղումներով, քաղաքական լարված ու սուր իրադրություն ստեղծելով գյուղում:

Հ. Ամատունին (1-ին քարտուղար՝ 1936 թ. սեպտեմբեր – 1937 թ. սեպտեմբեր) կուսակցության ու երկրի պատմության մեջ հիշվում է որպես կադրերի ջարդարար: ՀԿ(բ)Կ 10-րդ համագումարում (1937 թ. մայիս-հունիս) նա պատգամավորների ուշադրությունը ուղղեց Խանջյանի գործունեության քննադատության, «ազգայնամոլության» ու «վնասարարության» բացահայտման ու մերկացման հարցերի վրա: Այն ՀԿ(բ)Կ պատմության մեջ միակ համագումարն է, որը Կենտկոմի (Խանջյանի) գործունեությունը գնահատել է «անբավարար»:

Հ. Ամատունու ղեկավարման ժամանակ տեղի ունեցավ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումը (1937 թ.), Մոսկվայից ժամանած Մալենկովի ու Միկոյանի և Թբիլիսիից ժամանած Բերիայի ղեկավար մասնակցությամբ, պլենում, որը բռնությունների սաստկացման նոր փուլ բացեց և որոնց զոհի վերածվեց նաև ինքը՝ բռնարար Ամատունին:

Նույն պլենումում Կենտկոմի 1-ին քարտուղար ընտրվեց Գրիգոր Հարությունյանը, որը բերվել էր Թբիլիսիից և համարվում էր Բերիայի թեկնածուն: Նրա ղեկավարությունը տևեց բավական երկար, մինչև 1953 թ.: Նախապատերազմյան տարիներին, ինչպես նաև հետագայում չնայած քաղաքական բռնություններին վերջ չտրվեց, այնուամենայնիվ այն նույն թափը չուներ: Գր. Հարությունյանի ղեկավարությամբ անցան ՀԿ(բ)Կ 11-րդ, 12-րդ և 13-րդ համագումարները 1938, 1939 և 1940 թթ.: Դրանցում քննարկված Կենտկոմի հաշվետու զեկուցումները հիմնականում լուսաբանել են ժողովրդական տնտեսության ու մշակույթի զարգացման 3-րդ հնգամյա պլանի ընթացքն ու արդյունքները: 1938-1940 թթ. խիստ սրվեց միջազգային դրությունը, սկսվեց երկրորդ աշխարհամարտը (1939 թ.) և անխուսափելի էր ԽՍՀՄ-ի ներգրավումը նրանում: Ըստ նոր իրադրության

վերակառուցվեց երկրի, նաև Հայաստանի ամբողջ կյանքը՝ ԽՍՀՄ պաշտպանունակությունը ամրապնդելու համար:

Ներկուսակցական կյանքի օրենքն էր դեմոկրատական ցենտրալիզմը՝ վերադաս մարմինների որոշումների պարտադրականությունը ստորադասների համար և վերջիններիս հաշվետու լինելը առաջիններին: Ժողովների ու համագումարների որոշումներն ու բանաձևերը անպայման ընդունվում էին միաձայնությամբ, որոնցում անպակաս էին Ստալինի գովերգումները: Բացակայում էր իսկական, ազատ քննադատությունը:

ԽՍՀՄ-ում հռչակված դեմոկրատիայով էր կոմունիստական ամբողջատիրությունը տարբերվում ֆաշիստական և մյուս ամբողջատիրություններից:

Կոմունիստական կուսակցությունը ղեկավարում և ուղղություն էր տալիս պետական իշխանության և հասարակական, ստեղծագործական կազմակերպությունների ու միությունների ամբողջ գործունեությանը:

1930-ական թվականներին տեղի ունեցան իշխանության բարձրագույն մարմին խորհուրդների 7-րդ (1931 թ.), 8-րդ (1935 թ.), 9-րդ (արտակարգ, 1936-1937 թթ.) համագումարները և նոր սահմանադրության համաձայն 1938 թ. հունիսի 18-ին ընտրված ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանները: Գերագույն խորհուրդն ընտրում էր Գերագույն խորհրդի նախագահություն, որը հաշվետու էր Գերագույն խորհրդի առաջ իր ամբողջ գործունեության համար:

Իշխանության բարձրագույն մարմինը հաստատում էր գործադիր մարմին կառավարության կազմը և Կենտգործկոմի, ապա Գերագույն խորհրդի նախագահության ղեկավարներին: Կենտգործկոմը, որն օժտված էր բավական լայն իրավունքներով, քան Գերագույն խորհրդի նախագահությունը, ունեցել է հետևյալ նախագահները. Սարգիս Կասյան (1928-1931 թթ.), 1931-1937 թթ.՝ Արմեն Անանյան, Սերգո Մարտիկյան, Գևորգ Հանեսօղլյան, Բախշի Իշխանյան (վերջինը պաշտոնակատար), Մացակ Պապյան (1937-1938 թթ.): Մացակ Պապյանը 1938-1954 թթ. եղել է ՀԽՍՀ - Գերագույն խորհրդի նախագահության նախագահ:

Հայաստանի ժողկոմխորհի նախագահներ են աշխատել՝ Սահակ Տեր-Գաբրիելյանը (1928-1935 թթ.), Աբրահամ Գուլոյանը (1935-1938 թթ.) և Արամ Փիրուզյանը (1938-1943 թթ.): Մեծ է հատկապես Սահակ Տեր-Գաբրիելյանի ծառայությունը հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացումը կազմակերպելու և ղեկավարելու գործում: Սարգիս Լուկաշինը և Սահակ Տեր-Գաբրիելյանը, որպես հմուտ տնտեսվարներ, արժանի են դրական և բարձր գնահատության՝ Հայաստանի 1920-1930-ական թվականների ղեկավար գործիչների մեջ:

Հասարակական կազմակերպություններից պետք է հիշատակել կոմերիտմիության և արհեստակցական միությունների մասին: ՀԼԿԵՄ-ը, որպես երիտասարդական կազմակերպություն, կոչված էր դաստիարակչական աշխատանք տանել երիտասարդության շրջանում, նրան ներգրավել սոցիալիստական շինարարության մեջ: ՀԼԿԵՄ-ը այն հիմնական ռեզերվն էր, որից կուսակցությունը ընտրում էր իր նոր անդամներին: Ուսումնասիրվող տասնամյակում տեղի է ունեցել կոմերիտմիության հանրապետական 6 համագումար: Այդ ընթացքում նրա անդամների թիվն աճել է 4 անգամ (23 հազարից հասնելով 93 հազարի)[13]: Կոմերիտմիությունը շարունակում էր ղեկավարել նաև պիոներական ջոկատների գործունեությունը: Այս ջոկատներն ընդգրկում էին պիոներ-դպրոցական տարիքի սովորողներին:

Ամենազանգվածային հասարակական կազմակերպությունը շարունակում էին մնալ արհեստակցական միությունները, որոնք բանվորներին և մյուս աշխատավորներին համախմբում էին մասնագիտական սկզբունքով: Ինդուստրացման և հնգամյա պլանների վիթխարի խնդիրների կապակցությամբ մեծացավ արհմիութենական կազմակերպությունների դերը և նշանակությունը: Առաջին հնգամյակի տարիներին կատարվեց կազմակերպական վերակառուցում (ինչպես կուսակցության մեջ), միությունների ստորին բջիջներն արտադրությանն ավելի մոտեցնելու համար (արտադրամաս, ցեխ): 1932 թ. Հայաստանի արհմիությունների մեջ ընդգրկված էր 100 հազար մարդ[14]:

Կուսակցությունը մեծ ուշադրություն էր նվիրում ստեղծագործական միությունների գործունեությանը, որոնք ծառայում էին որպես աշխատավորների և ամբողջ բնակչության կոմունիստական դաստիարակության միջոց: Գաղափարական աշխատանքի ուժեղացման և ամրապնդման անհրաժեշտությամբ իրականացվեցին ստեղծագործական կազմակերպությունների կազմակերպական վերակառուցումներ: 1932 թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին»: Հայաստանի խորհրդային գրողների 1-ին համագումարը (1934 թ.) գրական տարբեր կազմակերպությունները համախմբեց ընդհանուր միության մեջ: Այդ առիթով կուսակցությունը գրողներից պահանջում էր ստեղծել «սոցիալիզմի հաղթական կառուցման մեծ էպոխային արժանի գրական գործեր»[15]:

---

[13] Հայկական Սովետական հանրագիտարան. Սովետական Հայաստան: Երևան,1987, էջ 234:
[14] Նույն տեղում, էջ 228:
[15] Խորհրդային Հայաստան, 1 օգոստոսի 1934 թ.:

Առանձին ընդհանուր միությունների մեջ համախմբվեցին նաև հանրապետության մյուս ստեղծագործողները՝ կոմպոզիտորները, ճարտարապետները, նկարիչները և թատերական գործիչները:

Կուսակցական ամենատիրության բնորոշ կողմերից մեկը 1930-ական թվականներին ֆրանցիաների բացակայությունն էր նրա ներսում: Տրոցկիստները և բուխարինականներն իրենց ջախջախումից հետո, որևէ վտանգ չէին կարող ներկայացնել: Ավելին, նրանց ղեկավարները, որոնց առայժմ վստահվել էին ոչ բարձր պաշտոններ, գաղափարական և գործնական հարցերում լրիվ պաշտպանում էին ստալինյան քաղաքականությունը: Իսկ 1930-ական թվականների երկրորդ կեսին իրականացվեց նրանց ֆիզիկական ոչնչացումը: Մինչև 1930-ական թվականների կեսերը, նաև հետագայում կուսակցական փաստաթղթերում չէր բացակայում պայքարը աջ ու «ձախ» թեքման և ազգայնականության դեմ:

Հայաստանի կոմկուսի մեջ երբեմն-երբեմն գլուխ էր բարձրացնում այսպես կոչված խմբակային պայքարը, որը, ըստ էության լինում էր կամ «անսկզբունքային» պայքար կամ անհամաձայնություն կուսղեկավարության գործունեության այս կամ այն բնագավառի նկատմամբ: Չնայած քննադատության հռչակված ազատությանը, այնուամենայնիվ քիչ չէին դեպքերը, երբ քննադատողը հետապնդվում էր:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Խանջյանի քաղաքականության դեմ հանդես եկան մի շարք ղեկավար կոմունիստներ (Մ. Չալյան, Հ. Բաննահյան, Ա. Ակոպով և ուրիշներ), նաև ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահ Ս. Կասյանը:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի ընդլայնված նիստը 1930 թ. նոյեմբերի 22-ին նշեց, որ Ս. Կասյանը թույլ է տվել «կոպիտ սխալ», մեղադրանք նետելով, թե Կենտկոմն իր աշխատանքում հաստատել է «մենաղեկավարում» (“единоначалие”), թե իբր նա հետ է մղում հին բոլշևիկներին և այլն: Կենտկոմի բյուրոն դատապարտեց ակտիվի ժողովում Ս. Կասյանի ելույթը, որն «օբյեկտիվորեն Կենտկոմի դեմ գրգռում է խմբակային պայքար»[16]:

Պայքարն ավարտվեց նրանով, որ Ս. Կասյանը և ուրիշներ աշխատանքի փոխադրվեցին Անդկովկասյան դաշնություն:

Խանջյանի ղեկավարման դեմ մի այլ խումբ ձևավորվեց 1933 թ.: Խմբի անդամներից ոմանք փոխադրվել էին Թբիլիսիից, Անդրերկրկոմի քարտուղար Բերիայի կողմից և նպատակադրված էին պարզապես լարվածության մեջ պահել ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարին: Վերջինս ստիպված էր դիմում ներկայացնել իրեն աշխատանքից ազատելու մասին, որը, սա-

[16] ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 15, թ. 48:

կայն, թողնվեց անհետևանք: Այլ էր 1935 թ. Արամայիս Երզնկյանի և Արսեն Եսայանի խմբի հակառակությունը, որի էությունը հիմնականում տնտեսական քաղաքականության հարցի շուրջն էր: ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Խանջյանի դեմ «կոպիտ քաղաքական սխալներ և անձնական վարկաբեկիչ հարձակումներ» թույլ տալու համար Անդրերկրկոմի բյուրոն 1935 թ. սեպտեմբերի 23-ին Ա. Երզնկյանին հայտարարեց նկատողություն, իսկ Եսայանին նախազգուշացրեց անվայել վարքագծի և բանսարկության փորձերի համար[17]:

Այնպես որ, բացի օբյեկտիվ դժվարություններից, Ա. Խանջյանի ղեկավարման տարիները Հայաստանում անցան նրա համար ծանր բարոյահոգեբանական մթնոլորտում:

Կոմունիստական ամբողջատիրությանը, ինչպես և մյուս ամբողջատիրություններին, հատուկ էր երկրի ամբողջ ժողովրդի գաղափարական մշակումը, նրա դաստիարակությունը ու վերադաստիարակությունը կոմունիզմի ոգով, մարտնչող պայքարը բուրժուական գաղափարախոսությունների ու դրանց մնացորդների դեմ: Գաղափարական գործունեության արդյունքները կարևոր տեղ էին գրավում Կենտկոմի հաշվետու զեկուցումներում, պլենումներում և զանազան խորհրդակցություններում: Կենտկոմը տվյալ հարցը հաճախ էր քննարկում նաև ըստ շրջանների, հիմնարկ-ձեռնարկությունների և այլն: Տվյալ հարցի վերաբերյալ բնականաբար հեղինակավոր զեկուցումներով հանդես էր գալիս Կենտկոմի 1-ին քարտուղարը[18]: Կուսակցությունը, որպես կանոն, գաղափարական-քաղաքական աշխատանքը, դրա բավարար մակարդակը դիտում էր իր բոլոր խնդիրների հաջող կատարման կարևոր երաշխիք ու չափանիշ: Դժվարությունների ու թերությունների դեպքում պատճառը համարվում էր գաղափարական-քաղաքական անբավարար աշխատանքը:

Գաղափարական-քաղաքական աշխատանքի հզոր զենք էր մամուլը: Գոյություն ունեին հանրապետական, շրջանային և գերատեսչական թերթեր: Տարածվում էին միութենական և Անդրդաշնության պաշտոնական օրգանները: 1933 թ. Հայաստանում տպագրվում էր 47 անուն թերթ, 156 հազար տպաքանակով: Թերթերից 11-ը կենտրոնական էին, 2-ը քաղաքային, 18-ը շրջանային, 8-ը գործարանային, 8-ը ՄՏԿ-ների, տպագրվում էր նաև 18 անուն ամսագիր[19]: Թերթերի թիվն ավելանում էր մասնավորապես

---

[17] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 319, թ. 2-3:

[18] Տես, օրինակ, Ա. Խանջյան, Մեր իդեոլոգիական պայքարի հիմնական խնդիրները: Երևան, 1933: Գրքույկում տեղ են գտել 1931-1933 թթ. արտասանած Ա. Խանջյանի չորս ճառերը:

[19] Խորհրդային Հայաստան, 5 մայիսի 1933 թ.:

նոր շրջանների կազմավորման շնորհիվ: 1940 թ. իրենց օրգաններն ունեին հանրապետության բոլոր 39 շրջանները: Իրենց օրգաններն ունեին հանրապետության ազգային փոքրամասնությունները՝ քրդերը, ադրբեջանցիները: Մամուլի և գրահրատարակչության գաղափարական անաղարտությունը վերահսկում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմը, քաղաքական ցենզուրայի ուժեղ համակարգի միջոցով: Այդ բնագավառի յուրաքանչյուր թերություն կամ սխալ քննադատվում էր խստագույնս:

Առանձին ուշադրության առարկա էր գրականության և արվեստի զարգացման հիմնախնդիրը: Այս ստեղծագործական միությունների և կազմակերպությունների վերակառուցումից հետո կուսակցությունը ավելի կենտրոնացված ձևով էր վերահսկում դրանց գործունեությունը: ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարում (1934 թ.) նշվեց մշակույթի այդ բնագավառների «անշեղ վերելքի ուղիներով» ընթացքի մասին: Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ դրական օրինակ է բերվել եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի, Թոթովենցի, Մահարու և այլոց մի շարք դրական գործերի հրատարակությունը: Տպագրության էին հանձնվել նաև «սոցիալիստական հաղթարշավի գեղարվեստական պատկերացմանը» նվիրված ստեղծագործություններ:

Կենտկոմի հաշվետվության մեջ քննադատություն կա նաև գրական կազմակերպության հասցեին, որը չէր կարողացել իր գործունեությունը «վերակառուցել նոր ռելսերի վրա»՝ ըստ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ՀԿ(բ)Կ - Կենտկոմի համապատասխան որոշումների: «Խմբակայնությունը, ՌԱՊՊ-ի* «ձախ», անհանդուրժողական ոգին բավական երկար ժամանակ դեռ զգացնել էր տալիս իրեն՝ արգելակելով խորհրդային բոլոր գրողների սերտ միացմանը՝ կուսակցության առաջադրած խնդիրները լուծելու համար»: «Մյուս կողմից,- շարունակում է Ա. Խանջյանը,- մեր տաղանդավոր գրողներից՝ Չարենցը, Արմենը, Բակունցը ստեղծագործական հիմնական մի խնդրում՝ գրականության մեջ՝ ազգային ձևի և սոցիալիստական բովանդակության հարցերում կանգնեցին սխալ տեսակետի վրա՝ լոզունգ ընդունելով «ազգային ձևի խտացման» պահանջը, որն ըստ էության նացիոնալիստական շեղում է գրական ստեղծագործության կոմունիստական դիրքերից»:

Խանջյանը գրականության հետագա բարգավաճման կարևոր երաշխիք էր համարում ուժեղ պայքարը ազգայնականության (նացիոնալիզմ) ամեն մի արտահայտության դեմ: Անհրաժեշտ է, շարունակում է Խանջյանը, «որպեսզի զարգացնելով ազգային ձևը, որպես միջոց, համակենք մեր գրականության ողջ բովանդակությունը պրոլետարական մարտական ինտերնացիոնալիզմով»: Այնուհետև Խանջյանը ըստ այդմ էլ դիտարկում էր

---

* Ռուսաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա:

անցյալի կուլտուրական ժառանգության հարցերը: Գրողների խնդիրն էր համարվում սոցիալիստական իրականությանն ավելի մոտենալը, «Մարքսին, Լենինին, Ստալինին» ավելի լրջորեն ուսումնասիրելը, գրական քննադատությունն առաջ շարժելը:

Հաշվետվության մեջ առանձին քննադատվել է «Բակունցի խումբը»: «Կենտկոմը,- կարդում ենք այնտեղ,- ժամանակին հարվածել է 1933 թ. օգոստոսի 20-ի որոշման մեջ ընկ. Բակունցի խմբակը՝ նրա արտահայտած նացիոնալիստական տենդենցների համար»[20]: Որոշումը նկատի ուներ Բակունցի կողմից ազգային թեմատիկային դիմելը («ազգային ձևի խտացում»):

Պետք է նկատել, որ ժամանակի գրական քննադատության մեջ տիրել է բավական անառողջ մթնոլորտ, ստեղծագործական հարցերին նվիրված բանավեճերում սուր քննադատության թիրախում են գտնվել տաղանդավոր գրողներ Չարենցը, Բակունցը և ուրիշներ: Ասես «երկունքի ցավեր» ապրեց Չարենցի «Գիրք ճանապարհին»-ի հրատարակությունը: Բակունցին այնքան քննադատեցին ու մեղադրեցին ազգայնականության մեջ, որ նա ստիպված եղավ հատուկ անդրադառնալ տվյալ թեմային, ստեղծելով «Էրիմենյան մանրէ» գրական ստեղծագործությունը: «1933 թ. դեկտեմբերին ավարտեցի իմ գրական երկը, որում երգիծական ձևով խարազանում եմ հայ մտավորականության մի մասի ազգայնական, մասնավորապես, հակավրացական արտահայտությունները», հայտնել է Բակունցը բանտում, քննությանը տված ցուցմունքներում, 1937 թ. հուլիսի 3-ին: Այստեղից ենք իմանում տվյալ երկի գրված լինելու մասին: Այն չի պահպանվել և չի տպագրվել: Նրա հրապարակմանը առաջինը դեմ է եղել Ա. Խանջյանը, նշելով. «Եթե այս ռումբը պայթի, մեծ անախորժություն կլինի, և մտավորականությունը հեղինակից դժգոհ կմնա»[21]:

Այս փաստը վկայում է այն մասին, որ Խանջյանը ի պաշտոնե ստիպված լինելով պայքարել «ինտերնացիոնալիզմի» դիրքերից ընդդեմ «նացիոնալիզմի», մյուս կողմից նա հայ գրողներին պաշտպանել է «նացիոնալիզմի» հարվածներից:

Կուսակցական կյանքում իսկական քննադատության ու ինքնաքննադատության և առողջ քննադատության բացակայության պայմաններում, թերևս նաև ինքնապահովագրության նկատառումով ղեկավարությունը ազգայնականություն էր տեսնում այլոց հասցեին հնչած յուրաքանչյուր խոսքում: Կարելի է օրինակ բերել ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարը (1934 թ.):

---

[20] ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 9-րդ համագումարում, էջ 79-80:
[21] Վ. Ղազախեցյան, Ակսել Բակունցը իր «Էրիմենյան մանրէ» անտիպ գրական երկի մասին: Տես՝ «Գրական թերթ», 1-15 ապրիլի 1999 թ., թիվ 7:

Կենտկոմի հաշվետվության մեջ քննադատվել են «հին մտավորականության որոշ շերտեր և առանձին ներկայացուցիչներ» ազգայնականությամբ վարակված մնալու համար: Անկյունախոսություն են համարվում այսպիսի մտքերն ու արտահայտությունները. Մոսկվան Անդրդաշնությանը նայում է որպես Վրաստան: «Պրավդա» թերթը գրում է միայն Վրաստանի մասին: «Ախալքալաքի շրջանը Հայաստանին չտվին, որովհետև վրացիք լավ են գնահատում նրա ստրատեգիական նշանակությունը»: «Բյուջեն բաժանելիս Հայաստանի բաժինը կտրում են» և այլն:

Հաշվետու զեկուցումը պահանջում էր «շիկացած երկաթով դաղել, որտեղ էլ որ հայտնաբերվի, նացիոնալիզմի ամեն մի արտահայտություն»[22]:

Հայաստանի գաղափարական-քաղաքական կյանքում քննարկման նյութ էին նաև անցյալի ժառանգության գնահատման, դաշնակցության կուսակցության բնույթի ու գործունեության, թատրոնի, կինոյի, ճարտարապետության և այլ հարցեր:

ՀԿ(բ)Կ–ն դրական վերաբերմունք ուներ անցյալի գրականության ու մշակույթի ժառանգության օգտագործման նկատմամբ, մերժելով ժխտողական մոտեցումը: Պետրոս Դուրյանի գործերի տպագրության առիթով արտահայտված մերժողական կարծիքները Խանջյանը գնահատում էր «մեծապետական շովինիզմի ցայտուն արտահայտություն»[23]: Չպետք է թքել անցյալի կուլտուրական ժառանգության վրա, բացատրում էր Խանջյանը: Մեր պարտքն է քննադատորեն վերամշակել այդ ժառանգությունը, տալ նրան մարքս-լենինյան գնահատական, քննադատորեն յուրացնել այդ ժառանգության դեմոկրատական տարրերը, ավելացնելով, թե պետք է հրատարակել հայ գրական կլասիկներին: Խանջյանը անբացատրելի էր համարում դպրոցական ծրագրերում հայ ժողովրդի պատմության դասավանդման բացակայությունը, ուստի հանձնարարություն արվեց լուսժողկոմատին 1933/34 ուստարում կազմակերպել այդ առարկայի դասավանդումը: Նաև որոշում ընդունվեց հայ ժողովրդի պատմության դպրոցական դասագիրք պատրաստելու մասին, ընտրվեց հեղինակների կազմ:

Հանդես գալով մեծապետական շովինիզմի արտահայտությունների դեմ, Կենտկոմի քարտուղարը անհրաժեշտ էր համարում «անխնա լինել և ջարդուփշուր անել» նաև հայկական նացիոնալիզմի ամեն մի արտահայտություն: Բացատրելով տեղական նացիոնալիզմի էությունը, Խանջյանը նրա պաշտպաններին վերագրում էր այն ծգտումը, երբ ազգային մշակույ-

---

[22] ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը 9-րդ համագումարում, էջ 119:
[23] Ա. Խանջյան, Մեր իդեոլոգիական պայքարի հիմնական խնդիրները, էջ 13:

թին տրվում էր ոչ միայն ազգային ծև, այլև ազգային բովանդակություն, երբ անցյալը պաշտպանվում և իդեալականացվում էր կուրորեն, երբ մի ժողովուրդ հակադրվում էր մյուսին:

Բնականաբար ազգային մշակույթի խնդիրները լուծելիս ՀԿ(բ)Կ - Կենտկոմի քարտուղարը պարտավոր էր ելնել մարքս-լենինյան տեսության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի, դասակարգայնության ու կուսակցականության սկզբունքներից:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի գաղափարական-քաղաքական ճակատի գործունեության մեջ էական նշանակություն ուներ Հայ Հեղափոխական Դաշնակցության գաղափարախոսության ու գործելակերպի քննադատությունը: Այս հարցում ՀԿ(բ)Կ Կենտկոմը շարունակում էր ղեկավարվել իր 1928 թ. նոյեմբերյան պլենումի մշակած և ընդունած գնահատականներով ու դիրքորոշումով (այդ մասին խոսվել է իր տեղում), հաշվի առնելով նաև նոր իրողություններն ու երևույթները:

Կարևոր նշանակություն ունեին Ա. Խանջյանի դիտողությունները հայերենի, որպես պետական լեզվի, օրենքի հետևողական պաշտպանության անհրաժեշտության մասին: «Մի՞թե մեծապետական թեքման տուրք տալ չէ այն հանգամանքը, որ տարիների ընթացքում ուշադրությունից վրիպել է մեր պետական ապարատի որոշ օղակներում հայերենը գործածական հիմնական լեզու դարձնելու հարցը», նշել է նա 1932 թ.: Նա անընդունելի էր համարում, որ պետական բազմաթիվ հիմնարկներում, կոմիսարիատներում ու խորհրդակցություններում մեծ մասամբ խոսում էին ռուսերեն:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Աղասի Խանջյանը անձնական կապեր ուներ նաև սփյուռքի առանձին հայ գործիչների հետ (Արշակ Չոպանյան և ուրիշներ), որի նպատակը մշակութային փոխհարաբերությունների զարգացումն էր, հայրենադարձության կազմակերպումը:

Հայ մշակույթի գործիչների պաշտպանության, ազգային մշակույթի հովանավորության փաստերը չարաշահաբար օգտագործվում էին Ա. Խանջյանի անձնական հակառակորդների կողմից, ովքեր Բերիայի դրածոներն էին Հայաստանում՝ Խանջյանին հանգիստ չտալու համար՝ հեռուն տանող նպատակներով:

Հայաստանի կոմկուսի գաղափարական-քաղաքական գործունեության կարևոր օղակ էր նրա անդամների և մյուս աշխատավորների հետ տարվող դաստիարակչական աշխատանքը խմբակային պարապմունքների միջոցով: Գործում էր քաղաքական ուսուցման ամուր և համակարգված ցանց, տարբեր տիպի ու մակարդակի խմբակներով, իրենց պրոպագանդիստների ղեկավարությամբ և ըստ ուսումնական տարիների: Տարեցտա-

րի ընդարձակվել է կուսքաղուսուցման ցանցը, բազմացել նրանցում ընդգրկվածների կազմը: Այսպես, 1930-1931 քաղուստարում գործել է 424 դպրոց ու խմբակ, 12300 ունկնդիրներով: Ընդ որում, պրոպագանդիստների կեսից ավելին եղել են ինքնուսներ և տարրական կրթություն ունեցողներ[24], որից կարելի է եզրակացնել, որ խմբակների մեծ մասի խնդիրը կարող էր լինել սոսկ քաղաքական անգրագիտության վերացումը: ՀԿ(բ)Կ - Կենտկոմը, իհարկե, արձանագրել է, որ կուսլուսավորության ցանցը պրոպագանդիստներով ապահովված չէ[25]:

1934 թ. դրությամբ պրոպագանդիստների կեսից ավելին արդեն ուներ միջնակարգ և բարձրագույն կրթություն: Նույն թվականին կուսքաղուսման ցանցը ուներ ավելի բազմազան կազմ: Գոյություն ունեին նաև պրոֆքաղուսման դպրոցներ, կոլտնտեսային ակտիվի քաղուսման խմբակներ, կազմակերպվել էին կուսկաբինետներ[26]:

1937 թ. դրությամբ կոմունիստների քաղաքական ուսման համակարգն ուներ հետևյալ բազմազանությունը. քաղգրագիտության խմբակներ, դասագրքով կուսպատմությունն ուսումնասիրող խմբակներ, նույնը ըստ սկզբնաղբյուրների ուսումնասիրության, լենինիզմի ուսումնասիրության խմբակ, մարքսիզմի կլասիկների առանձին ստեղծագործությունների ուսումնասիրության խմբակ, երեկոյան կուսդպրոցներ, երեկոյան շրջանային կուսդպրոցներ, հեռակա ուսում[27]: Նույն ժամանակ քաղլուսցանցը սպասարկում էին 1047 պրոպագանդիստներ[28]:

Կուսակցական լուսավորության ցանցի գործունեության և գաղափարական-քաղաքական աշխատանքի վերակառուցման մեջ նոր փուլ էր նշանավորում և նոր խնդիրներ առաջադրում 1938 թ. տպագրված «ՀամԿ(բ)Կ պատմություն. համառոտ դասընթաց» դասագիրքը, որը, ի տարբերություն նախորդ գրքերի, կուսակցության պատմությունը ներկայացնում էր կեղծված ձևով հոգուտ Ստալինի դերի ու գործունեության գերագնահատման՝ ինչպես նախահոկտեմբերյան, այնպես էլ հետհոկտեմբերյան ժամանակաշրջաններում: Կուսակցության պատմության նման կեղծիքի օրինակ էր նաև Բերիայի «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» 1935 թ. տպագրված գիրքը,

---

[24] ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 1, թ. 143-145:
[25] Լենինյան ուղի, 1931, թիվ 7-8, էջ 70-73:
[26] Լ. Արիսյան, Մարքս-լենինյան ուսման հերթական խնդիրները: Զեկուցում ՀԿ(բ)Կ Կենտկոմի 3-րդ պլենումում: Երևան, 1935, էջ 115-150:
[27] ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 47, թ. 13:
[28] Նույն տեղում, գ. 125, թ. 1:

որը Անդրկովկասի բոլշևիկյան և հեղափոխական շարժումների ղեկավարությունը անհիմն վերագրել էր Ստալինին:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. նոյեմբերի 14-ի «Կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին» որոշումը «Համառոտ դասընթացը» դարձրեց ուսումնասիրության հիմնական աղբյուր, բոլոր բուհերում դասավանդվող առարկա: Վերակառուցվեց կուսակցական ուսման ամբողջ դրվածքը:

Նոր հիմունքներով կուսակցական պրոպագանդայի դրվածքի մասին հարցերը լուծում ստացան ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. դեկտեմբերի 4-ի որոշումով[29]: «Համառոտ դասընթացի» ուսումնասիրությունը կազմակերպվեց 3 մակարդակով, ըստ ունկնդիրների գիտելիքների (ցածր, միջին, բարձր օղակներ): Հանրապետական թերթերի խմբագրություններում ստեղծվեցին պրոպագանդայի և ագիտացիայի բաժիններ, բուհերում մարքսիզմ-լենինիզմի հիմունքների ամբիոններ, ՀԿ(բ)Կ Կենտկոմում դասախոսական խումբ և այլն[30]:

«ՀամԿ(բ)Կ պատմություն. համառոտ դասընթացը» Ստալինի պաշտամունքը բարձրացրեց մեծապես: Ստալինի անունը տալով հասկացվում էր կուսակցություն, Ստալինը օրվա Լենինն էր:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՌՆԱԾՆՇՈՒՄՆԵՐԸ

Կոմունիստական կուսակցության ամբողջատիրության, ժողովրդավարության բացակայության և վարչահրամայական կառավարման պայմաններում 1930-ական թվականների երկրորդ կեսին հնարավոր դարձավ ԽՍՀՄ-ում իրականացնել հարյուր հազարավոր մարդկանց անհիմն բռնաճնշումներ: Եթե խորհրդային իշխանության առաջին տարիներին պրոլետարիատի դիկտատուրան հիմնականում գործում էր ընդդեմ դասակարգային թշնամիների, ապա այժմ յուրայինների մի մասը շարքից հանում էր մյուս մասին:

Շատ է գրվել «1937 թ.» երևույթի պատճառների մասին: ԽՍՀՄ-ում իրականացված անհիմն քաղաքական բռնությունները Ստալինի պաշտամունքի մերկացումից անմիջապես հետո հիմնականում բացատրվել է Ստալինի բնավորությամբ ու կամքով, նրա իշխանությունը ամրապնդելու անհրաժեշտությամբ: Հետագա ուսումնասիրողները ձգտել են ցույց տալ նաև օբյեկտիվ պատճառներ: Նշվել է, որ, ինչպես շատ երկրներում, այն-

---

[29] ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 29, թ. 87:

[30] Մ. Կ. Սաֆարյան, Հայաստանի կոմպարտիայի պայքարը ռեսպուբլիկայում սոցիալիզմի զարգացման ու ամրապնդման համար (1937 թ. – 1941 թ. հունիս), էջ 93-95:

պես էլ ԽՍՀՄ-ում, անխուսափելի էր, որ հեղափոխությանը (քաղաքացիական կռիվներ, «ռազմական կոմունիզմ», կուլակության վերացում և այլն) հաջորդի հակահեղափոխությունը, որ նորաստեղծ կադրերի սերունդը վերացնի հեղափոխություն կատարած «հին» սերնդին: Այս տեսակետից բնորոշ են ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարում (1939 թ.) Ստալինի բերած հետևյալ տվյալները: Հաշվետու ժամանակաշրջանում (1934-1939 թթ.) պետական և կուսակցական գծով միայն ղեկավար պաշտոններում առաջ էին քաշվել ավելի քան 500 հազար «կուսակցական և կուսակցությանը հարող երիտասարդ բոլշևիկներ»[31]: Հենց նրանք կամ նրանց մեծ մասն էր ակտիվ մասնակցություն ունեցել, պատժիչ մարմինների միջոցով «օգնել» նախկին կադրերի վերացմանը և գրավել վերջիններիս պաշտոններն ու աշխատատեղերը: Հետո այս պատժողներն էին դարձել զոհեր:

«Այն, ինչ տեղի ունեցավ 1937 թվականին,- գրել է նորագույն ուսումնասիրողներից Վադիմ Կոժինովը,- մի տեսակ եզրափակումն էր երկրի բուն պատմության այն վիթխարի ու հսկայական շարժման, որ սկսվեց մոտավորապես 1934 թվականին, կոլեկտիվացման ժամանակաշրջանից հետո»[32]:

Շրջադարձային այդ շրջանի և դրան հաջորդող տարիների իրադարձություններին անդրադարձել է պատմաբան Յուրի Ժուկովը իր մենագրության մեջ, ինչպես նաև «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթին տված հարցազրույցում: Գերմանիայում ֆաշիզմի իշխանության գլուխ գալը իր ազդեցությունն ունեցավ խորհրդային իշխանության քաղաքականության փոփոխության վրա: Նոր քաղաքականությունը Ստալինի «Նոր կուրսն» էր: Արտաքին քաղաքականության մեջ նորություն էր ԽՍՀՄ մուտքը «Ազգերի լիգա» 1934 թ. և կոլեկտիվ անվտանգության համար պայքարը՝ հնարավոր ագրեսիան կանխելու համար: Երկրի ներսում սկսում են իրականացվել բարեփոխումներ: 1935 թ. վերացվում է կուլակների անհատական հարկադրումը և ընտրական ձայնի իրավունքից զրկումը, նրանք հավասարեցվում են բոլոր քաղաքացիներին: Բանտարկությունից ազատվում են 1932 թ. օգոստոսի 7-ի օրենքով դատապարտվածները, վերացվում է կոլտնտեսային ու գյուղական ակտիվիստների դատվածությունը, ովքեր մեղադրվել էին վարչարարության մեղադրանքով: Վերականգնվում են ցարական ժամանակաշրջանի զինվորական աստիճանները (լեյտենանտից մինչև մարշալ): Շրջադարձ է կատարվում դեպի ԽՍՀՄ ժողովուրդների պատմության դասավանդումը, պատմական-ազգային գործիչների ու հերոսների կերպարի քարոզչությունը և այլն:

---

[31] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը: Հայպետհրատ, 1953, էջ 778:
[32] Вадим Кожинов. Россия. Век XX-й. М., 1999, с. 293.

ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախագծի մշակման ընթացքում Ստալինը նորարարությունների թվում նկատի ուներ նաև Գերագույն խորհրդի առաջիկա ընտրությունները դեպուտատության թեկնածուների այլընտրանքային սկզբունքի հիման վրա կազմակերպելը, թեկնածությունների առաջադրման իրավունք վերապահելով նաև հասարակական կազմակերպություններին: Վերջինն ուղղված էր կուսակցական կադրերի դիրքերի Ստալինի համար վտանգավոր ամրապնդման դեմ:

Այլընտրանքային ընտրական համակարգով Ստալինը հնարավորություն կստանար թուլացնել կուսակցական կոմիտեների (հանրապետական, մարզային), նրանց քարտուղարների դիրքերը (ամեն մեկն իր վարչական տարածքում նման էր թագավորի կամ իշխանի), ընտրել նոր ղեկավարներ պետական-կուսակցական պաշտոններում, ամրապնդել իր իշխանությունը: Սակայն այս նորությունը անցկացնել չհաջողվեց կուսակցական կադրերի դիմադրության պատճառով, որոնց շահերի դեմ էր ուղղված այն:

Կուսակցական վերնախավի ուժը և ազդեցությունն իրեն զգացնել տվեց հատկապես ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարում (1934 թ.), երբ Կենտկոմի կազմի ընտրությունների ժամանակ Ստալինը ստացավ մեծ թվով «դեմ» ձայներ, որոնք կեղծվեցին և իջեցվեցին նվազագույնի:

Բացի այդ, Ստալինին հայտնի դարձավ, որ 17-րդ համագումարի պատգամավորները Կիրովին առաջարկել էին դառնալ կուսակցության գլխավոր քարտուղար: Չնայած Կիրովը մերժել էր արված առաջարկը, այնուամենայնիվ Ստալինը չէր կարող եզրակացություններ չանել ստեղծված իրադրությունից: Ընդ որում հետագայում բռնաճնշման ենթարկվեց 17-րդ - համագումարի պատգամավորների երեք քառորդը:

«Ձախ» և աջ թեքումների ջախջախումից հետո Ստալինի համար երևան էին գալիս նոր անհանգստացնող երևույթներ: Լուրջ պատճառ կարող էր լինել դեռևս 1932 թ. բացահայտված «Մարքսիստ-լենինյանների միության» պլատֆորմը, որը հայտնի է նաև «Ռյուտինի խումբ» կամ «Ստալինը և պրոլետարիատի դիկտատուրայի ճգնաժամը» անուններով: Այդ ընդարձակ փաստաթղթի հեղինակը Մոսկվայի Կրասնոպրեսնենսկի կուսշրջկոմի նախկին քարտուղար Մ. Ն. Ռյուտինն էր, որը կուսակցությունից հեռացվել էր 1930 թ. օպորտունիստական հայացքներ քարոզելու պատճառով: Պլատֆորմը քննարկվում էր հին բոլշևիկների կողմից և տարբեր կուսակցական կազմակերպություններում[33]:

---

[33] "Известия ЦК КПСС", 1990, N 8-11.

Ռյուտինը գրել էր նաև երկրորդ փաստաթուղթ՝ «Կոչ» ուղղված կուսակցության անդամներին: 1932 թ. Ռյուտինը ենթարկվեց 10 տարվա բանտարկության, իսկ 1937 թ. գնդակահարվեց[34]:

Կուսակցության 17-րդ համագումարից հետո ստալինյան միահեծանությունը նոր տագնապ ապրեց զինվորականության կողմից: 1937 թ. բացվեց մարշալ Տուխաչևսկու և մյուսների ղեկավարած բարձրաստիճան զինվորականության «դավադրության» գործը: Տուխաչևսկին այն կարծիքին էր, որ գալիք պատերազմում կարևոր դեր են խաղալու տեխնիկան, տանկային զորքերը և մերժում էր որոշ մարշալների կարծիքը հին մարտավարության (հեծելազորի) պաշտպանության մասին: Զինվորականների տվյալ խումբը պատրաստվում էր լեգիտիմ ձևով դնել ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմ Վորոշիլովի պաշտոնանկության հարցը: Սակայն մինչև այդ գործը բացահայտվեց և Տուխաչևսկին ու ընկերները հատուցեցին իրենց կյանքով: Պաշտպանության ժողկոմի պաշտոնանկության մտահղացումը ներկայացվեց որպես պետական հեղաշրջման, Ստալինին ահաբեկելու փորձ: Այս գործի կապակցությամբ հետագայում ծառայությունից ազատվեցին և բռնաճնշման ենթարկվեցին կարմիր բանակի շուրջ 40 հազար հրամանատարներ (բարձր, միջին ու ստորին մակարդակի): Իր հերթին հանգամանքից օգտվեց և կեղծ փաստաթղթեր հրապարակեց ֆաշիստական Գերմանիայի հետախուզությունը, որը խորհրդային կողմը, ընդունելով հալած յուղի տեղ, անմեղ զինվորականներին մեղադրեց նաև «ռազմաֆաշիստական դավադրության» մեջ[35]:

Ստալինի և նրա կամակատար շրջապատի համար իշխանությունը պահելը դարձավ կյանքի ու մահվան հարց: Ուստի դրա համար ձեռնարկվեցին բոլոր կարելի ու անկարելի միջոցները, առաջին հերթին իրենց համար անցանկալի ու հնարավոր վտանգավոր մարդկանց ու կադրերին շարքից հանելու կամ ֆիզիկապես վերացնելու համար: Այդ նպատակով Ստալինին պատրաստ էին ծառայելու պատժիչ և մյուս համապատասխան մարմինները (ներքգործժողկոմատ, դատախուզություն, դատարան, կուսկենտկոմ և այլն): Ըստ այդմ վերափոխվում էր նաև օրենսդրությունը: Այսպես, հենց Կիրովի սպանության օրը, 1934 թ. դեկտեմբերի 1-ին, ԽՍՀՄ Կենտգործկոմը որոշում ընդունեց «Խորհրդային հանրապետությունների գործող քրեական-դատավարական օրենսդրություններում փոփոխություններ մտցնելու մասին»: Որոշումը վերաբերում էր «ահաբեկչական կազմակեր-

---

[34] **А. Ваксберг.** Как живой с живыми. См. “Литературная газета”, 29 июня 1988 г.

[35] **Б. Викторов.** “Заговор” в красной армии. См. “Правда”, 29 апреля 1988 г.

պություններին ու գործողություններին»: 1937 թ. սեպտեմբերին նույնպիսի որոշում ընդունվեց «հակահեղափոխական վնասարարության ու դիվերսիաների գործերի» հետաքննության կապակցությամբ: Այդ օրենքների համաձայն, դատական գործը լսվում էր առանց կողմերի (մեղադրության և պաշտպանության) մասնակցության, դատավճիռը չէր կարող բողոքարկվել և ի կատար էր ածվում անմիջապես: Օրենքի կամայական մեկնաբանությամբ էր գործում օրենքի առաջին պաշտպան կոչված ԽՍՀՄ գլխավոր դատախազը՝ Վիշինսկին: Ըստ նրա՝ մեղադրանքի հիմք, ապացույց կարող էր ծառայել մեղադրյալի խոստովանությունը՝ «ապացույցների թագուհին»: Գործնական տարածում գտավ և արդարացվեց մեղադրյալներին տանջելը և կտտանքը: Սոցիալիստական օրինականության և մարդու իրավունքների պաշտպանության մասին խոսելն ավելորդ էր: Այն երկրի նոր սահմանադրության մեջ արձանագրվել էր հռչակված լինելու համար:

Ստեղծվեցին արտադատարանական մարմիններ՝ «Հատուկ խորհրդակցություններ» և «Եռյակներ»: Ակտիվ գործունեություն ծավալեցին ԽՍՀՄ և Անդրդաշնության գերագույն դատարանների զինվորական կոլեգիաների (տրիբունալների) նստաշրջանները: ԽՍՀՄ տրիբունալը կազմակերպում էր նաև արտագնա նստաշրջաններ: Հայտնի է, որ նա գործել է երկրի 60 քաղաքներում: Այս մարմինների վճիռները գերազանցապես պատժի առավելագույն չափն էր գնդակահարությունը: Միայն ԽՍՀՄ գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի և նրա արտագնա նստաշրջանների կողմից 1936 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1938 թ. սեպտեմբերի 30-ը, այսինքն երկու տարվա ընթացքում, դատավճիռ է կայացվել շուրջ 36 հազար մարդու նկատմամբ, այդ թվում 30,5 հազարը գնդակահարություն և 5.600՝ բանտարկություն[36]:

1930-ական թվականների երկրորդ կեսին ստալինյան «նոր կուրսի» էությունը դարձյալ Ստալինի իշխանության ամրապնդումն էր, որը երկրի ղեկավարությունն իրականացնում էր իր համար վտանգ ներկայացնող կուսակցական կադրերին ու մյուս հնարավոր հակառակորդներին, բոլորովին անմեղ մարդկանց մեկուսացնելու միջոցով:

Դժվար է վերարտադրել քաղաքական ու բարոյահոգեբանական իրադրությունը որ հաստատվել ու տիրում էր երկրում նշված տարիներին: Առավոտյան մարդիկ արթնանում էին և շտապում տեղեկանալ, թե գիշերը ում են տնից տարել: Վախն ու կասկածը տիրել էր բոլորին: Մատնությունը ստացել էր համատարած բնույթ: Գործակալական-լրտեսական ցանց էր ստեղծվել ամենուրեք՝ քաղաքացիական բնակչության միջավայրում, աշ-

---

[36] Г. Овчаренко, А. Черняк, Вернуть верховенство закону. См. "Правда", 1 сентября 1989 г.

խատավայրում, բանտում ու աքսորում: Նույնիսկ գեղարվեստական գրականությունը անկարող է նկարագրել այն սարսափելի ու ահավոր վիճակը, որ կրեցին խորհրդային մարդիկ այն տարիներին:

Տարօրինակ է, որ այս ամենը գործում ու տիրում էր պատմական այնպիսի ժամանակաշրջանում, երբ ԽՍՀՄ-ում տեղի էին ունենում վիթխարի առաջադիմական գործընթացներ, կառուցվում էին հազարավոր գործարաններ, մարդիկ աշխատում էին արտադրական մեծ վերելքով: Միաժամանակ հատկապես մամուլի կողմից այն քարոզն էր տարվում, թե իբր այդ նույն աշխատավորների ծերբակալված հարազատները ժողովրդի թշնամիներ են, վնասարարներ, հայրենիքի դավաճաններ: Մամուլը աշխատավոր մարդկանց պահանջ էր վերագրում, թե պետք է ամենայն խստությամբ պատժել հանցավորներին: Մարդը ամենաթանկ կապիտալն է ստալինյան կարգախոսը այդպիսին էր առերես: Իրականում մարդուն դարձրել էին անարժեք:

Բռնությունների ծավալումը, ինչպես կուլակաթափության տարիներին, այնպես էլ 1930-ական թվականների երկրորդ կեսին, ուներ նաև իր, այսպես կոչված, տնտեսական կողմը, այն է՝ Սիբիրի և այլ վայրերի շինարարության ապահովումը ձրի բանվորական ուժով: Այդ կառույցներն էին Մոսկվա-Վոլգա և Բելոմորսկ-Բալթիկա ջրանցքները, Վորկուտայի կոմբինատը, Բայկալ-Ամուրյան երկաթուղին (ԲԱՄ) և այլն: Շարունակվում էր անտառանյութի և այլ հումքի արտահանումն արտասահման: Բանվորական ուժն ապահովում էին ՆԳԺԿ-ի և Միացյալ պետքաղվարչության մարմինները ուղղիչ-աշխատանքային գաղութների միջոցով: Դրանց կառավարումը կենտրոնացված էր ճամբարների պետական վարչությունում (Գուլագ), որն սկզբում գտնվում էր ՄՊՔՎ-ի, այնուհետև ՆԳԺԿ-ի համակարգում: Այս գերատեսչության գործունեությունը պահվում էր խիստ գաղտնի, որն այնուհետև բացահայտվեց նախկին տառապյալ Ա. Ի. Սոլժենիցինի կողմից «Արշիպելագ Գուլագ» գրքի միջոցով: 1930-ական թվականների սկզբի 200 հազարի դիմաց տասնամյակի կեսերին Գուլագն ուներ 800 հազար, իսկ վերջերին՝ 1,6 միլիոն մարդ: 1930-1953 թթ. ընթացքում ԽՍՀՄ համակենտրոնացման ճամբարներով ու գաղութներով անցել է 18 միլիոն մարդ, որի մեկ հինգերորդ մասն ունեցել է քաղաքական մեղադրանք[37]:

Մանրամասն տվյալներ է հայտնում «Արգումենտի ի ֆակտի» թերթի 1989 թ. հրապարակումներից մեկը, որի հեղինակն է Վ. Ն. Զեմսկովը: 1940 թ. մարտի 1-ի դրությամբ Գուլագի համակարգում եղել է 53 ճամբար, 425 ուղղիչ աշխատանքային գաղութ (արդյունաբերական, գյուղատնտեսա-

---

[37] **В. П. Дмитренко** и др. История Отечества, XX век. 11 класс. Учебное пособие. Изд. дом "Дрофа", 1995, с. 246-247.

կան, շինարարական, ինչպես նաև անչափահասների): Ճամբարների ու գաղութների «բնակիչների» ընդհանուր թիվը համընկնում է վերը բերված տվյալներին, իսկ հակահեղափոխական կամ քաղաքական գծով ծերբակալվածների տեսակարար կշիռը կազմում էր ընդհանուրի 26,5 տոկոսը 1934 թ., 12,8 տոկոսը 1937 թ. և 33,1 տոկոսը 1940 թ.: Լրացնենք միայն որոշ կարևոր տվյալներ: «Գուլագի ճամբարային բնակչության շարժը» տեղեկանքը տվյալներ է պարունակում ճամբար եկողների, հեռացողների, նաև մահացածների ու փախչողների և առկա «բնակիչների» մասին ըստ տարիների, 1934 թ. մինչև 1947 թ.: Միայն 1934-1940 թթ. 7 տարվա ընթացքում ճամբարներից փախուստի էր դիմել մոտ 324 հազար մարդ, որոնց մեծ մասը, սակայն, վերադարձվել էր, այսինքն բռնվել էր: Իսկ նույն ժամանակամիջոցում մահացել էր 288 հազար մարդ: Հետաքրքիր են նաև ճամբարներում գործող լրտեսական-գործակալական ցանցի վերաբերյալ տվյալները: Դրանք բերվում են 1947 թ. դրությամբ, նշելով, որ 10 տարի առաջ, այն է 1937 թ. տվյալները դրանից պակաս են եղել 8 անգամ (1947 թ. գործակալական-իրազեկող ցանցում ընդգրկված էր ծերբակալվածների 8 տոկոսը կամ 139 հազար մարդ): Ցանցը բաղկացած էր ռեզիդենտներից, գործակալներից և լրտուներից, ինչպես նաև հակափախուստային գործակալական-լրտուական կազմից:

Հրապարակման հեղինակը հայտնում է նաև այն մասին, որ իր ուսումնասիրած փաստաթղթերը տվյալներ են պարունակում բանտարկյալների ազգային կազմի մասին ևս[38], սակայն դրանք չեն բերվում:

ԽՍՀՍ պետական անվտանգության կոմիտեի տվյալներով 1930-1953 թթ. հակահեղափոխական, պետական հանցանքներ գործելու և այլ մեղադրանքներով դատական և արտադատական մարմինների կողմից դատավճիռներ ու որոշումներ են կայացվել 3.778.234 մարդու նկատմամբ: Նրանցից 736.098-ը գնդակահարվել է[39]:

Քաղաքական բռնություններով ու գնդակահարություններով, սակայն, չեն սահմանափակվում ստալինյան բռնակալության բուն զոհերի թիվը և ԽՍՀՄ ժողովուրդների կրած զրկանքները: Դրանց պետք է ավելացնել նաև կուլակաթափության (1930-1932 թթ. և հետագա տարիներ մեկ միլիոն մարդ) և դարձյալ կոլեկտիվացման հետ կապված սովամահության (Ուկրաինա, Հյուսիսային Կովկաս, Ղազախստան և այլն 1932-1933 թթ. 2,8 միլիոն մարդ) հետևանքները: 1926, 1937 և 1939 թվականների մարդահամարների և այլ տվյալների հիման վրա տվյալ հարցերի ուղղությամբ ուշագրավ հետազոտություն է կատարել նախկին ԽՍՀՄ ժողովրդական

---

[38] Аргументы и факты, 1989 г., N 45.
[39] Խորհրդային Հայաստան, 15 փետրվարի 1990 թ.:

տնտեսության կենտրոնական պետական արխիվի (այժմ՝ Ռուսաստանի տնտեսության պետական արխիվ) տնօրեն Վ. Վ. Ցապլինը:

Նրա հրապարակած տվյալների համաձայն 1927-1938 թթ. ընթացքում սովամահ է եղել և բանտարկության վայրերում ոչնչացել մոտավորապես 7,9 միլիոն մարդ: Երկրի բնակչության կորուստների տվյալների վրա հեղինակն ավելացնում է նաև այն 2 միլիոն մարդկանց, ովքեր ստիպված են եղել հեռանալ Խորհրդային Միությունից: Ընդ որում, միայն բանտարկյալների թիվը և՛ 1937, և 1939 թվականների համար նա ցույց է տալիս 3 միլիոն:

Չնայած Ցապլինի ուսումնասիրությունը կատարված է պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա, այնուամենայնիվ ստացած արդյունքները նա վերջնական չի համարել, անհրաժեշտ գտնելով լրացուցիչ համակողմանի հետազոտությունը՝ «30-ական թվականներին բռնաճնշումներից տուժածների ընդհանուր քանակը պարզելու համար»[40]:

Նշենք, որ բանտարկյալների թվի վերաբերյալ Ցապլինի տվյալները հաստատվում են այլ տվյալներով ևս, որոնք բերվում են ըստ կատեգորիաների (1939 թ. համար): Կարծում ենք, որ դրանք կարող են հետաքրքրել ընթերցողին, ուստի ներկայացնում ենք ստորև[41]:

ԽՍՀՄ ՆԳԺԿ Գուլագի ուղղիչ աշխատանքային ճամբարներ	1.317, 2 հազար
Ուղղիչ աշխատանքային ճամբարներ	365,2 « «
ԽՍՀՄ բանտեր	350,5 « «
ԽՍՀՄ ՆԳԺԿ Գուլագի աշխատանքային վայրեր	990,5 « «
Գումարը	3.013,4 « «

Ավելացնենք, որ ծերբակալվածների ու աքսորականների տարբեր խմբերի վերաբերյալ տվյալները ձեռք են բերվել առանձին ուսումնասիրություններ ու հաշվարկներ կատարելու օգնությամբ: 1937 և 1939 թվականների մարդահամարների ժամանակ հատուկ հրահանգներ են գոյություն ունեցել ՆԳԺԿ-ի համակազմի (կոնտինգենտ) մարդահամարի անցկացման համար: Համակազմը ստորաբաժանվել է Ա, Բ և Գ խմբերի: Վերջին խումբը ներկայացնում էին բանտերում, աքսորավայրերում ու ճամ-

---

[40] **В. В. Цаплин**. Статистика жертв сталинизма в 30-е годы: Вопросы истории, 1989, N 4, с. 175, 178, 181.

[41] Всесоюзная перепись населения 1939 года. Основные итоги. М., 1992, с. 251.

բարներում գտնվողները: Համապատասխան տվյալների ու փաստաթղթերի հիման վրա կատարած հետազոտության արդյունքներին է վերաբերում "Социологические исследования" հանդեսում տպագրված հոդվածներից մեկը: Ըստ դրա՝ 1937 թ. մարդահամարի ժամանակ ԽՍՀՄ ճամբարներում, բանտերում ու աշխատանքային բնակավայրերում գրանցվել է 1,8 միլիոն, իսկ 1939 թ. մարդահամարի ժամանակ 2,6 միլիոն մարդ[42], որը մի դեպքում մեծ, մյուս դեպքում զգալի չափով տարբերվում է վերը բերված տվյալներից:

Հոդվածում տվյալներ են բերված նաև ըստ ԽՍՀՄ վարչական բաժանման, սակայն դրանք չեն ստորաբաժանվում ըստ երեք համակազմերի: 1937 թ. Հայկական ԽՍՀ-ի համար Ճ և Ռ խմբերի միացյալ տվյալն է 4169 մարդ, իսկ 1939 թ. բոլոր 3 խմբերի գումարն է 7731 մարդ: Նույնիսկ ստորաբաժանված տվյալներ ունենալու դեպքում իրական պատկեր չէր ստացվի, քանի որ հանրապետության բանտարկյալները ցրված էին գրեթե ամբողջ ԽՍՀՄ տարածքով մեկ:

Նշենք, որ բերված տվյալների մեջ չեն առանձնացված քաղաքականներն ու քրեականները:

Առանձին ուսումնասիրության հեղինակ իրավագետ Ստեցովսկին հանրագումարի է բերել բռնաճնշումների վիճակագրությունը: Այսպես, կուսկենտկոմ ներկայացված ՊԱԿ-ի տվյալներով 1935-1941 թթ. ԽՍՀՄ-ում ձերբակալվել է 19.840 հազար «ժողովրդի թշնամի», որից 7 միլիոնը գնդակահարվել է: 1954 թ. Խրուշչովին ներկայացվել է տեղեկանք այն մասին, որ 1921-1954 թթ. բռնաճնշման է ենթարկվել 3.777.320 մարդ, որից 642.980-ը գնդակահարվել են: ՊԱԿ-ի այլ տվյալներով գրեթե նույնքան են 1930-1953 թթ. տվյալները[43]: Ավելի տարբեր և հիմնագուրկ են լրագրողների ու գրողների հրապարակումները:

Տեղի էր ունենում ներհամակարգային ջարդ, «մեծ ահաբեկչություն», ի տարբերություն դասակարգային թշնամու նկատմամբ գործադրված «կարմիր ահաբեկչության»: Ահաբեկչության կազմակերպիչը և գլխավոր պատասխանատուն պետության գլուխ Ստալինն էր, իշխանության մեջ իր ամենամոտիկ շրջապատով, հանձինս Մոլոտովի, Կագանովիչի, Վորոշիլովի, Ժդանովի, Միկոյանի, Մալենկովի և այլոց: Բռնաճնշումների անմիջական գործադրողներն էին ՄՊԲՎ-ՆԳԺԿ-ի ղեկավարներ Յագոդան (1934-

---

[42] Ю. А. Поляков, В. Б. Жиромская, И. Н. Киселев. Полвека молчания (Всесоюзная перепись населения 1937 г.): Социологические исследования, 1990, N8, с. 30-52.

[43] Юрий Стецевский. История советских репрессий. Т. 1, 1997, с. 102-104.

1936 թթ.), Եժովը (1936-1938 թթ.), Բերիան (1938-1945 թթ.), երկրի գլխավոր դատախազ Վիշինսկին (1935-1939 թթ. և ուրիշներ:

Ստալինի մահից (1953 թ.) հետո վերանայվեցին 1930-ական թվականներին և հետագա տարիներին անհիմն բռնաճնշման ենթարկված բոլոր մարդկանց գործերը և նրանք բոլորը արդարացվեցին:

ԽՍՀՄ կենտրոններում (Լենինգրադ՝ Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա և այլն) սկսված զանգվածային բռնություններն իրենց արձագանքը գտան նաև Հայաստանում և մյուս հանրապետություններում: Հայաստանում քաղաքական բռնաճնշումները սկիզբ առան հիմնականում 1936 թ. կեսերին, առիթ ծառայեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Աղասի Խանջյանի սպանությունը: 1937 թ. սարսափելի տարի դարձավ երկրի պատմության մեջ, երբ բանտարկությունն ու գնդակահարությունը հասան անասելի չափերի, շարունակվեցին 1938-ին, ապա նվազեցին:

Խանջյանի սպանությունը տեղի ունեցավ 1936 թ. հուլիսի 9-ին, Թիֆլիսում, ուր նա մեկնել էր Անդրերկրկոմի բյուրոյի նիստին մասնակցելու համար: Բյուրոն քննարկել էր Անդրներքգործժողկոմի հաղորդումը Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում հակահեղափոխական, տրոցկիստական խմբերի բացահայտման մասին: Դրան նախորդած ՀամԿ(բ)Կ կենտկոմի հունիսյան պլենումում Յագոդան հաղորդում էր արել երկրի տարբեր վայրերում տրոցկիստական կազմակերպությունների հայտնաբերման մասին: Նման խմբակներ էին «բացահայտվել» նաև Հայաստանում: Ինչպես նշված է Խանջյանի մահվան առթիվ սպանության հաջորդ օրը, հուլիսի 10-ին, ՀամԿ(բ)Կ կենտկոմ ուղարկած հեռագրում, բյուրոն կուսկազմակերպությունների ու նրանց ղեկավարությունների ուշադրությունը սրել է տրոցկիստական կազմակերպությունների հայտնաբերման ու մերկացման ուղղությամբ: Անդրերկրկոմի քարտուղար Բերիան Խանջյանին քննադատել է այն բանի համար, որ նա Հայաստանում անբավարար զգոնություն է հանդես բերել նախկին լուսժողկոմ, մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի նախկին տնօրեն, ՀԿ(բ)Կ կենտկոմի անդամ Ներսես (Ներսիկ) Ստեփանյանի գործի նրա տրոցկիստական, ազգայնական, ահաբեկչական հայացքների նկատմամբ[44]:

Բանն այն է, որ իսկապես ՀԿ(բ)Կ կուսակցական վերահսկողության հանձնաժողովում (ԿՎՀ) կեղծ դիմում էր եղել Ն. Ստեփանյանի վերաբերյալ: Դիմումը քննարկվել և ընդունվել էր որոշում, որ այն անհիմն է: Ներսիկ Ստեփանյանը հանրապետության աչքի ընկնող պետական ու կուսակցական գործիչներից էր, համարձակ մտածող ու լավագույն տեսաբան: Խանջյանը իրավացի կերպով թույլ չէր տվել անհիմն կուսակցական տույժ

---

[44] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 319, թ. 5-10:

տալ ազնիվ կոմունիստին ու քաղաքացուն[45]: Սակայն ԽՍՀՄ-ում ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում արդարության մասին խոսելն ավելորդ էր: Եվ այնուամենայնիվ Ներսիկ Ստեփանյանը 1936 թ. մայիսի 21-ին ձերբակալվեց Մուղդուսու գրության հիման վրա հանրապետության դատախազ Պ. Թորոսյանի մակագրած թույլտվությամբ: Հետաքրքիր է այն փաստը, որ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն Կենտկոմի անդամ Ներսիկ Ստեփանյանին ձերբակալելու թույլտվության հարցը քննարկել է հետին թվով մայիսի 26-ին: Ընդ որում որոշման տակ ստորագրել է Ամատունին և ոչ թե նիստին ներկա գտնվող Խանջյանը[46]:

Ներսիկ Ստեփանյանի փաստը, ինչպես կտեսնենք, Բերիան լավագույնս օգտագործեց Խանջյանին սեղմելու համար: Այդ բանում նրան օգնում էին իր մանկլավիկները (Մուղդուսի, Ակոպով, Ամատունի, Ծատուրով և ուրիշներ), որոնց մեծ մասը գործուղվել էր Թիֆլիսից և աշխատում էր ծանր մթնոլորտ ստեղծել Խանջյանի շուրջը: Բերիան Ստալինի աջ թևն էր Անդրկովկասում, հետագայում Մոսկվայում, երբ 1938թ. դարձավ ԽՍՀՄ - ներքգործժողկոմ:

Բերիան նախկինում եղել էր մուսավաթական գործակալ և դրա համար պետք է որ անհանգստություն ունենար և գործեր ըստ այդմ: Ընդ որում ինչպես Բերիայի դեմ հանդես գալու, այնպես էլ Ստալինին զսպելու փորձեր տեղի են ունեցել, սակայն անհաջող: Այսպես, Ստալինի զինակից և ընկեր Օրջոնիկիձեի նման փորձերն ավարտվեցին նրանով, որ Օրջոնիկիձեն «հանկարծամահ» եղավ 1936 թ.: Իսկ խորհրդային դիվանագետ Ռոսկոլնիկովը չվերադարձավ հայրենիք և բաց նամակով խստագույնս դատափետեց Ստալինին:

«Վաղ, թե ուշ,- գրել է նա,- խորհրդային ժողովուրդը Ձեզ կնստեցնի մեղադրյալների աթոռին որպես գլխավոր վնասարար, ժողովրդի իսկական թշնամու, սովի ու դատական կեղծիքների կազմակերպչի»[47]:

Ինչ վերաբերում է արտասահման աքսորված և Մեքսիկայում բնակվող Տրոցկուն, ապա նա մշտապես էր հանդես գալիս ստալինյան բռնակալության դեմ, որի համար Ստալինը կազմակերպեց նրա սպանությունը 1940 թ.: Նշենք, որ Տրոցկու հարցի լուծման հետ մեկտեղ ստալինյան ղեկավարության համար կարևոր նշանակություն ուներ նաև կուսակցական ու պետական ղեկավար պաշտոններ զբաղեցնող շատ այլ ազգությամբ հրեա գործիչներից ազատվելը: Շատ հեղինակներ «հրեական խնդիրը»

---

[45] Նույն տեղում:
[46] ՀՀ Ազգային անվտանգության ծառայության արխիվ, կարճված գործերի ֆոնդ (ԱԱԾԱ, ԿԳՖ), գ. 3036, հ. 1, թ. 17:
[47] Ал. Яковлев, Крестосев. М., 2000, с. 154.

դիտարկել են բռնությունների գործադրման պատճառների տեսանկյունից, որպես ստալինյան քաղաքականություն:

Արտասահմանում մնալը այնտեղ ծառայող խորհրդային մարդկանց համար դարձավ ստալինյան կարգերից դժգոհության արտահայտության ձևերից մեկը: Հեղինակներից մեկը հարցն ուսումնասիրել է 1920-ական թվականների և 1930-ական թվականների սկզբի համար: Նրա տվյալներով մինչև 1930 թ. հունիս ամիսը ԽՍՀՄ վերադառնալուց հրաժարվել էր խորհրդային տնտեսական հիմնարկությունների 277 աշխատող: Հոդվածում հիշվում են նաև հայ գործիչների անուններ՝ Զ. Լ. Տեր-Ասատուրով («Շարկ»՝ «Արևելք» արտահանման-ներմուծման խառն ընկերության բաժնի վարիչ), Ս. Ե. Երզնկյան (Ֆինլանդիայում ԽՍՀՄ առևտրական ներկայացուցիչ) և Գ. Ս. Ագաբեկով (չեկիստ): Հոդվածի հեղինակ Վ. Լ. Գենիսը նոր տվյալներ է հրապարակել Սուրեն Երզնկյանի և Գ. Ագաբեկովի վերաբերյալ, որից և օգտվում ենք:

«Միկոյանի մտերիմ ընկեր» (էմիգրանտական մամուլի արտահայտությունը) Ս. Երզնկյանը (1918 թ. կոմունիստ) նախկինում եղել էր կուսակցական ղեկավար, թերթի խմբագիր Անդրկովկասում, 1927 թ. աշխատանքի էր ուղարկվել Ֆինլանդիա: 1930 թ. Մոսկվայում նրա մասին ստացվել էր անստորագիր նամակ, թե նա «հանուն ինչ-որ ֆիննուհու դավաճանում է կուսակցությանը»: Անաստաս Միկոյանի միջոցով Երզնկյանն անմիջապես կանչվեց Մոսկվա: ԽՍՀՄ ժողկոմխորհը նրան ազատեց առևտրական ներկայացուցչի պարտականությունից, իսկ մի քանի օր անց ՀամԿ(բ)Կ Կենտրոնական կուսհանձնաժողովը կայացրեց հետևյալ որոշումը. «Հիմք չկա ընկ. Երզնկյանին ներկայացնել նրան վարկաբեկող մեղադրանքներ, որ նա կուսակցության հանձնարարությամբ կարող է զբաղվել ցանկացած աշխատանքով ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ արտասահմանում»: Ս. Երզնկյանը մեկնեց Ֆինլանդիա «անձնական գործերը կարգավորելու համար» և շուտով հեռագիր ստացավ անմիջապես մեկնել Մոսկվա: Ս. Երզնկյանի վերաբերմունքը եղավ նրա չվերադառնալը ԽՍՀՄ: Դրան հետևեց որոշումը Ս. Երզնկյանին կուսակցությունից հեռացնելու մասին «որպես բանվոր դասակարգի գործին դավաճանող»: Այնուհետև նրա դեմ սարքվեց կեղծ մեղադրանք, թե տվել է 5 միլիոն ֆիննական մարկի կեղծ պարտամուրհակ, որից հետո Երզնկյանը հայտնվեց Հելսինգֆորսի բանտում[48]: Ավելի աղմկահարույց էր դիվանագետ Գ. Ս. Ագաբեկովի չվերադառնալը, քանի որ Միացյալ պետքաղվարչության արտասահմանյան բաժնի Արևելյան սեկտորի վարիչի և Թուրքիայի ու Մերձավոր Արևելքի գծով գործող գաղտնի

---

[48] **В. Л. Генис.** Невозвращенцы 1920-х — начало 1930-х годов: Вопросы истории. 2000, N 1, с. 46-63.

ռեզիդենտի 1930 թ. արտասահմանում ռուսերեն հրատարակած «ՊՔՎ. Չեկիստի գրառումները» գիրքը բացահայտում էր խորհրդային հետախուզության շատ գաղտնիքներ:

Գտնվելով Փարիզում Ագաբեկովը հայտարարեց իր կապերը խզելու մասին այն ռեժիմից, որը «անտանելի կյանք է ստեղծում ԽՍՀՄ 150 միլիոնանոց վիթխարի ժողովրդի համար և իշխում է սրերի ուժով»՝ բանակի անգիտակցության և բանվորների ու գյուղացիների անկազմակերպվածության պատճառով[49]:

Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի նախկին քարտուղար, ԽՍՀՄ առողջապահության ժողկոմ Կամինսկին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումներից մեկում (1937 թ.) պատրաստվում էր բացահայտել և մերկացնել Բերիային: Կամինսկին հայտնի էր նաև Ստալինի դեմ համարձակ ելույթներով: «Հարկավոր է Ստալինին բուժել: Նա ծանր հիվանդ է»,- ասել է առողջապահության ժողկոմը: Այն հացին, թե արդյո՞ք Բերիան հակակուսակցական մարդ է, Խրուշչովը 1956 թ. ԽՄԿԿ 20-րդ համագումարում անհատի պաշտամունքի մասին զեկուցման մեջ պատասխանել է. «Այո, ահազանգեր եղել են: Դեռևս 1937 թ. Կենտկոմի պլենումում առողջապահության նախկին ժողոմ Կամինսկին ասել է, որ Բերիան աշխատել է որպես մուսավաթական գործակալ: Պլենումը դեռևս չավարտված Կամինսկին ձերբակալվեց և հետո գնդակահարվեց»[50]: Գործակալ լինելու մասին խոստովանել է նաև ինքը Բերիան: 1933 թ. մարտին նա Օրջոնիկիձեին գրել է, թե իր մասին տարածում են «ամենանողկալի լուրեր», ապա հիշեցնում, որ իրեն մուսավաթական հետախուզություն է ուղարկել կուսակցությունը, որ 1920 թ. ԱԿ(բ)Կ Կենտկոմը (Կամինսկու մասնակցությամբ) ընդունել է արդարացման որոշում[51]:

Բերիայի համար վտանգավոր էր նաև Անդրկովկասի իրադարձություններին լավատեղյակ Խանջյանը: Նշենք, որ դեռևս 1935 թ. Վրաստանում Բերիան մահափորձ էր կազմակերպել Խանջյանի դեմ: Միայն պատահականորեն Խանջյանի փոխարեն զոհվեց ուրիշ մարդ:

Եվ, այնուամենայնիվ, Խանջյանը զոհվեց, միայն մեկ տարի անց: Թիֆլիսում սարքված պաշտոնական հաղորդագրության մեջ նշվում էր, որ Խանջյանը ինքնասպան է եղել: Սակայն կան տվյալներ նաև Բերիայի կողմից, վերջինիս աշխատասենյակում, կատարված ոճրագործության մասին:

---

[49] Նույն տեղում:

[50] Л. Зигальский. Он восстал против Сталина. См. "Литературная газета", 29 ноября 1989 г.

[51] Советское руководство. Переписка. 1928-1941. М., 1999, с. 204.

1956 թ. ԽՍՀՄ զինվորական դատախազ, արդարադատության գնդապետ Վիտիևսկին հանգամանորեն ուսումնասիրել է Խանջյանի մահվան հանգամանքները և եզրակացրել, որ սպանություն, թե՞ ինքնասպանություն հարցի պատասխանը կարող է տալ միայն դիակի գանգոսկրի ուսումնասիրությունը[52]: Գլխավոր զինվորական դատախազության որոշումով այդ հետազոտությունը կատարվեց 1957 թ.: «Երևանում, նույն թվի նոյեմբերի 21-ին,- կարդում ենք համապատասխան փաստաթղթում,- զննվել է Խանջյանի դին: Դրա արդյունքում պարզվել է, որ բացակայում է գանգի կափարիչը, որի վրա էր, դիահերձման թիվ 38 արձանագրության պատճենի տվյալներով, հրազենով գլխին հասցված միջանցիկ վերքը գլխուղեղի նյութի վնասվածքով»[53]:

Ուրեմն սպանության հետքերը վերացվել են բնավ ոչ պատահականորեն: Դրանք կարող էին վկայել միայն մի բանի մասին կատարվել է զարհուրելի չարագործություն, քաղաքական սպանություն: Վերջապես էական չէ գործ ունենք սպանության, թե՞ ինքնասպանության հետ: Անկախ սպանության ձևից Խանջյանը մնում է Բերիայի և ստալինյան կարգերի զոհը: Պատահական չէր Ստալինի ստորագրությամբ Մոսկվայից ստացված հետևյալ հեռագիրը. «ՀամԿ(բ)Կ Կենտկոմը չի մտածում իր ներկայացուցիչն ուղարկել Խանջյանի ինքնասպանության հանգամանքները հետաքննելու համար, քանի որ այդ հանգամանքները լրիվ պարզ են: Անդրերկրկոմի մյուս առաջարկությունների հետ Կենտկոմը համաձայն է»[54]: Պարզ էր, որ առաջնորդը, Բերիայի հետ միասին, Խանջյանին դնում էր քննադատության կրակի տակ: Հենց այդ ոգով անցավ Անդրերկրկոմի 2-րդ քարտուղար Ս. Կուդրյավցևի գլխավորած ղեկավար կուսաշխատողների ժողովը Երևանում, հենց Խանջյանի թաղման օրը, հուլիսի 12-ին: Հուլիսի 20-ին «Զարյա Վոստոկա» թերթում (ապա «Պրավայում») տպագրվեց Բերիայի «Փոշիացնել, հողմացրիվ անել սոցիալիզմի թշնամիներին» հոդվածը:

Իսկ մինչ այդ 1935 թ. տպագրվել էր, ինչպես նշվել է, Բերիայի «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» գիրքը (հայերենը 1936 թ.): Նրա խնդիրը պատմությունը կեղծելն

---

[52] Տեղեկանք ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախկին 1-ին քարտուղար Աղասի Ղևոնդի Խանջյանի մահվան (հուլիս, 1936 թ.) պատճառների ստուգման արդյունքների մասին: Տես «02», 10 հուլիսի 1997 թ. (փաստաթղթի հայերեն թարգմանության հրապարակումը Ա. Մանուկյանի «Ահաբեկչություն Բերիայի աշխատասենյակում» հոդվածում):

[53] Նույն տեղում:

[54] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 319, թ. 11: Ա. Վիրաբյան, Սպանությո՞ւն, թե՞ ինքնասպանություն: Տես «Երեկոյան Երևան», 19 մայիսի 1988 թ.:

էր և Ստալինի դերը կեղծ ցույց տալը նախահեղափոխական և խորհրդային ժամանակաշրջաններում: Ծավալվեց հարձակումը Խանջյանի ու խանջյանական կադրերի դեմ:

Խանջյանը ժողովրդի հիշողության մեջ մնաց որպես դրական, ազնիվ մարդ ու ղեկավար գործիչ: Մարդիկ չէին հավատում ինքնասպանության մասին պաշտոնական հաղորդագրություններին: Դժգոհություն էին հայտնում նաև նրա անշուք թաղման համար:

Հուլիսի 12-ի ժողովում քննադատական հարձակումներ եղան նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի կուսակցական հանձնաժողովի քարտուղար Աղասի Գալոյանի հասցեին, որը պաշտպանության տակ էր վերցրել Ներսիկ Ստեփանյանին և զրպարտչի որոշում կայացրել նրա դեմ ահազանգողներին: Աղասի Գալոյանը հետ էր կանչվել Մոսկվայից ուսանելուց հարցաքննության համար: Բերիան Անդրերկրկոմի հուլիսի 9-ի հայտնի նիստում անձամբ հանձնարարել էր Ներսիկ Ստեփանյանի գործի հետաքննությունը ՀԿ(բ)Կ - Կենտկոմի հսկողության տակ վերցնելու հետ միասին քննել նաև Աղասի Գալոյանի հարցը: Աղասի Գալոյանը անմիջապես ձերբակալվեց և մահացավ բանտում 1938 թ.[55]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. սեպտեմբերյան պլենումը Կենտկոմի 1-ին քարտուղար ընտրեց Ամատունուն, լսեց Սուղդուսու հաղորդումը «Ն. Ստեփանյանի, Ա. Գալոյանի, Դր. Սիմոնյանի, Բակունցի և ուրիշների հակահեղափոխական տրոցկիստական ազգայնական ահաբեկչական խմբի մասին»: Հաղորդումն ընդունվեց ի գիտություն: Պլենումում հանդես եկած Ամատունու զեկուցման հիմքում դրված էին ներգործժողկոմատի կեղծ թղթերը, որոնք նա վերնագրել էր «Նյութեր ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախկին քարտուղար Ա. Խանջյանի հակակուսակցական ազգային թեքումով գործունեության մասին»[56]: «Ազգային թեքում» ասելով պատմական տվյալ ժամանակաշրջանում և հանգամանքներում հասկացվում էր ազգայնականություն (նացիոնալիզմ), որն օգտագործվում էր կուսակցական և քրեական մեղադրանք սարքելու համար:

Հայաստանում շատ մարդկանց գործերում էր կրկնվում նաև այդ կեղծ մեղադրանքը. «ՆԳԺԿ մարմինները Հայաստանում բացահայտել և վերացրել են հակահեղափոխական, աջ-տրոցկիստական, ազգայնական (նացիոնալիստական) կազմակերպություն, որը նպատակադրել էր խորհրդային իշխանության գինված տապալումը, Հայաստանի անջատումը Խորհրդային Միությունից և, այսպես կոչված, «անկախ» ազգային-բուրժուական հայկական պետության ստեղծումը կապիտալիստական պետութ-

---

[55] Սովետական Հայաստան, 6 ապրիլի 1989 թ.:
[56] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 319, թ. 51-91:

յուններից մեկի հովանավորության տակ»[57]: Ընդ որում ոչ մի դեպքում չի նշվել, թե որն է այդ հովանավորող պետությունը:

«Նացիոնալիզմը» քաղաքական-քրեական մեղադրանք է դիտվել ամբողջ երկրի մասշտաբով 1920-1930-ական և հետագա տարիների մեղադրական գործերում: Ուստի ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի հանձնաժողովը, որն ուսումնասիրում և վերանայում էր այդ տարիների գործերը, 1990 թ. իր նիստերից մեկում լսել է նաև կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հաղորդումը «Այսպես կոչված «ազգային թեքման» մասին»: Արձանագրվել է, որ 1920-1930-ական թվականներին այսպես կոչված «ազգային-թեքման» դեմ պայքարի անհրաժեշտության պատրվակով արհեստականորեն ստեղծվել էին կեղծ գործեր, հալածվել կուսակցական ու խորհրդային կադրեր, ազգային մտավորականներ: Նման հակահեղափոխական ազգայնական կազմակերպություններ իրականում գոյություն չէին ունեցել (հարցը առարկայորեն քննարկվել է այսպես կոչված «Սուլթան-Գալիևի հակահեղափոխական կազմակերպության» կապակցությամբ): Հանձնաժողովի նիստը որոշել է ի գիտություն ընդունել մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հաղորդումը (տեղեկանքը)[58] նաև ԽՍՀՄ դատախազության, Գերագույն դատարանի և Կենտկոմի կուսհանձնաժողովի հաղորդումները:

Ինստիտուտի «Այսպես կոչված «ազգային թեքման» մասին» հաղորդումը օգնում է վերագնահատել նաև Հայաստանում տեղի ունեցած երևույթները, բացահայտել կեղծ մեղադրանքները: Հաղորդման մեջ օրինակներ են բերված նաև հայ իրականությունից:

«Ազգային հարցում կուսակցության քաղաքականությունը գոտեկացնող ու աղավաղող» (ԽՄԿԿ Կենտկոմի 1989 թ. սեպտեմբերյան պլենումի «Կուսակցության ազգային քաղաքականությունը ժամանակակից պայմաններում» որոշումից) թեքումների բնորոշումը պատկանում է Ստալինին: Այն իր արտահայտությունը գտավ ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարի նախապատրաստության թեզիսներում: Մի կողմից ազգային ճնշում չտեսած վելիկոռուս կոմունիստները թերագնահատում կամ անտեսում էին ծայրամասային երկրների (հանրապետությունների) ազգային առանձնահատկությունները, մյուս կողմից, տեղական -արմատական ժողովուրդների կոմունիստները, որ կրել էին ազգային շահագործում և ոչ լրիվ էին ազատվել դրա նախապաշարումներից, հաճախ գերագնահատում էին ազգային

---

[57] Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., էջ 62:
[58] "Известия ЦК КПСС", 1990 г., N 9, с. 72-84.

առանձնահատկությունների նշանակությունը կուսակցական աշխատանքում[59]:

Ստալինյան թեզիսները քննարկվել և խմբագրվել էին Լենինի գլխավորած հատուկ հանձնաժողովում: 10-րդ համագումարում ասված զեկուցման մեջ (կուսակցության միասնության և անասրխո-սինդիկալիստական թեքման մասին) Լենինը պարզաբանել է տվյալ հարցի էությունը. «Թեքումը դեռևս պատրաստի հոսանք չէ: Թեքումն այն է, ինչ կարելի է ուղղել: Մարդիկ ճանապարհից քիչ շեղվել են կամ սկսում են շեղվել, բայց դեռ կարելի է ուղղել: Այս էլ հենց, իմ կարծիքով, արտահայտվում է ռուսերեն "уклон" (թեքում) բառով»[60]:

Առաջին անգամ «թեքում դեպի նացիոնալիզմը» արտահայտությունը ձևակերպվել է Ստալինի կողմից վրացական կոմունիստների այն մասի նկատմամբ, որը դեմ էր Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միավորմանը: «Կոմունիզմի հերթական խնդիրները Վրաստանում և Անդրկովկասում» զեկուցման մեջ (Թիֆլիս, 6 հուլիսի 1921 թ.) Ստալինը Վրաստանի կոմունիստների առաջ հերթական խնդիր էր դնում «անողոք պայքար մղել նացիոնալիզմի դեմ..., վերացնել նացիոնալիստական մնացուկները, շիկացած երկաթով ոչնչացնել դրանք..., ջախջախել նացիոնալիզմի հրեշին»[61]:

Անկախությունը պահպանելու ձգտումը Ստալինը համարում էր «ազգային թեքման» («նացիոնալ-ուկլոնիզմ») ամենացայտուն արտահայտությունը, իսկ անկախ հանրապետությունների ստեղծումը դիտում էր «որպես խաղ»: Անկախ հանրապետությունների պաշտպաններ կային նաև Ուկրաինայի ու Բելոռուսիայի կոմունիստների միջավայրում: ՌԿ(բ)Կ 12-րդ համագումարի նախապատրաստության թեզիսներում Ստալինը գիտակցաբար անտեսելով մեծապետական շովինիզմը, հատուկ մատնացույց էր անում ու գերագնահատում «մանրբուրժուական», «մենշևիկյան» թեքումները տեղերում և «ազգային լիբերալիզմի» թեքումը կենտրոնում, որի մեջ նա մեղադրում էր նախ և առաջ Լենինին: Կուսակցությունն այն ժամանակ չպաշտպանեց Ստալինին և 12-րդ համագումարի բանաձևում ընդհանուր գծերով էր խոսվում «դեպի նացիոնալիզմը թեքման» մասին և առաջին պլան էր մղվում «հատուկ վտանգը» դեպի մեծապետական թեքումը: Եվ քանի որ նացիոնալիզմի մնացուկները մեծապետական շովինիզմից պաշտպանվելու յուրահատուկ ձև էր, ուստի, ինչպես նշեց 12-րդ համագումարը, «վելիկոռուսական շովինիզմի դեմ վճռականապես պայքարելը ամե-

---

[59] Ի. Ստալին, Երկեր, հ. 5, էջ 31-32:
[60] Լենին, Երկեր, հ. 32, էջ 311:
[61] Ի. Ստալին, Երկեր, հ. 5, էջ 107, 109, 111:

նաճիշտ միջոցն է նացիոնալիստական մնացուկները հաղթահարելու համար»[62]:

Լենինի մահից հետո և հատկապես 1920-ական թվականների վերջին «ազգային թեքում» հասկացության մեջ Ստալինը դրեց ավելի ու ավելի չարագույժ բովանդակություն, ասված է մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի նշված փաստաթղթում: Դա առնչվում էր 1928 թ. հուլիսյան պլենումում նրա առաջ քաշած այն դրույթի հետ, թե սոցիալիզմի մոտենալու հետ դասակարգային պայքարն ավելի է սրվում: Ըստ դրա՝ պայքարի սրումը իր արտահայտությունն էր գտնում «աջ թեքման» տեսքով՝ գլխավորապես կենտրոնում և բուրժուական նացիոնալիզմի թեքման ուժեղացումով տեղերում: «Աջ թեքման» կողմնակիցներին վերագրվում էր ԽՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնման ձգտումը, իսկ «ազգային թեքման» պաշտպաններին ծուլումը ինտերվենցիոնիստների հետ, ովքեր նպատակ էին դրել ԽՍՀՄ-ի մասնատումը և շահագործողական կարգերի վերականգնումը: Այդ ոգով էր արտահայտվում Ստալինը ՀամԿ(բ)Կ 16-րդ համագումարում (1930 թ.): Հաջորդ 17-րդ համագումարում (1934 թ.) նա ավելի սրեց «ազգային թեքման» բովանդակությունը: «Թեքումը դեպի նացիոնալիզմ բանվոր դասակարգի ինտերնացիոնալիստական քաղաքականության հարմարեցումն է բուրժուազիայի նացիոնալիստական քաղաքականությանը: Թեքումը դեպի նացիոնալիզմ՝ արտացոլում է «սեփական», «ազգային» բուրժուազիայի փորձերը խարխլելու Սովետական հասարակարգը և վերականգնելու կապիտալիզմը»[63]: Այդպիսի թեքման վտանգ Ստալինը տեսնում էր ոչ միայն Ուկարինայում, այլև «այլ ազգային հանրապետություններում»[64]:

Ստալինյան դրույթները, որ ընդունվում էին կուսակցական որոշման տեղ, նպաստում էին նորանոր «ազգային թեքման» խմբերի կամ անհատների բացահայտմանն ու մերկացմանը: Այսպես, 17-րդ համագումարում Յարոսլավսկին հայտարարում էր, որ նախորդ համագումարից հետո «ազգային թեքումների» համար կուսակցությունից հեռացվել է 800 մարդ: Եթե 10-րդ համագումարի ժամանակ «ազգային թեքման» մեղադրանքը պետք է հաղթահարվեր կուսակցության ներսում, ապա 1930-ական թվականներին ստալինյան մեկնաբանությամբ այն կոմունիստին դուրս էր դնում կուսակցությունից:

---

[62] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: 1-ին մաս, Երևան, 1954, էջ 913:
[63] Ի. Ստալին, Երկեր, հ. 13, էջ 404-405:
[64] Նույն տեղում, էջ 404:

1937-1938 թթ. «ազգային թեքման» հետ միաժամանակ ղեկավար կադրերին վերագրվում էին նաև մասնակցությունը զանազան հակահեղափոխական նացիոնալիստական կազմակերպությունների: «Այդպիսի «կապը», բացի այլ բաներից, պետք է վկայեր Ի. Վ. Ստալինի «խորաթափանցության» մասին, որը տակավին 20-ական թվականների սկզբին նկատել էր «ազգային թեքման» բողբոջները և հետևողականորեն զգուշացնում էր կուսակցությանն այն մասին, որ ժամանակի ընթացքում այն կարող է «վերասերվել»:

Փաստորեն Ստալինը շարքից հանում էր նաև ինքնուրույն մտածող մտավորականությանը իր անձնական իշխանությունը ամրապնդելու համար:

Հայաստանում ևս, ինչպես նշվեց վերևում, ըստ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տեղեկանքի, շատ անմեղ մարդկանց կպցրին «ազգային թեքման» և նացիոնալիզմի մեղադրանք. «Խանջյան (ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար), Սահակ Տեր-Գաբրիելյան (ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ), Ռուբեն Դաշտոյան (Կենտգործկոմի քարտուղար), Եղիշե Չարենց, Ակսել Բակունց, Վահան Թոթովենց, Գուրգեն Մահարի, Մկրտիչ Արմեն, Ալազան (գրողներ) և ուրիշներ:

«Նացիոնալիզմի», ինչպես նաև այլ մեղադրանքներով, հագեցած էր մասնավորապես գրական կյանքը Հայաստանում 30-ական թվականների առաջին կեսին: Վերը, այլ առիթով, արդեն խոսվել է այն անառողջ մթնոլորտի մասին, որ տիրում էր լեզվի ու գրականության հարցերի շուրջ կազմակերպված բանավեճերի ընթացքում: Քննադատության սրության վրա ազդում էր նաև պաշտոնական կարծիքը, որը ներկայացվում էր կուսակցության ղեկավար մարմինների կողմից: Անդրադարձել ենք նաև ՀԿ(բ)Կ - Կենտկոմի 1933 թ. օգոստոսի 20-ի «Խորհրդային գրողների միության մասին» որոշմանը[65]: Որոշումն ուղղված էր գրողների միջավայրում խմբակային տրամադրությունների ու խմբակային պայքարի դեմ հանուն «ստեղծագործական աշխատանքի զարգացման համար սկզբունքային գործարար իրադրության ստեղծման»: Խմբակային պայքար ասելով հասկացվում էր այսպես կոչված «Բակունցի խումբը», որը «ռապպականության» (պրոլետարական գրողներ և գրականություն) ծախ հայացքների քննադատության հոդի տակ անց էր կացնում իր աջ-նացիոնալիստական տրամադրությունները: Նկատի ունեին Բակունցի «ազգային առանձնահատկությունների խտացում» արտահայտությունը (այն առաջինն օգտագործել էր գրող Մկրտիչ Արմենը), որը նշանակում էր ոչ այլ ինչ, եթե ոչ ազգային (և ոչ թե ազգայնական կամ ազգայնամոլական) գրականության զարգացում:

---

[65] ՀԱԱ, ֆ. 1, ց. 13, գ. 22, թ. 129:

Սակայն ստալինյան ամենատիրության պայմաններում ազգային շահերի պաշտպանություն փաստորեն գոյություն չուներ: Այն հասկացվում և ներկայացվում էր այնպես, ինչպես Ստալինն էր հրամցնում: Այս կապակցությամբ խիստ բնորոշ և իմաստալից է Ներսիկ Ստեփանյանի օրագրություններից քաղված այն արտահայտությունը, թե «պայքար է մղվում ոչ թե կապիտալիզմի, այլ ազգայինի դեմ»:

Իր ինտերնացիոնալիզմը ապացուցելու համար, ինչպես ասվել է, Բակունցը ստիպված եղավ հենց նույն թվականին գրել հատուկ գրական գործ «էրիմենյան մանրէ» խորագրով, որը, սակայն, չի պահպանվել (կամ մինչև այժմ չի գտնվել) և կորել է հեղինակի ծերբակալությամբ: Գիրքը ժամանակին չի տպագրվել, որին դեմ է եղել Խանջյանը, գործելով հօգուտ Բակունցի, որովհետև գրական գործը ուղղված է եղել հայ մտավորականության դեմ:

Ամենայն հավանականությամբ այդ ստեղծագործությունն է նկատի ունեցել Բակունցը, երբ իր բանտային նամակներից մեկում գրել է (6 հոկտեմբերի 1936 թ.). «Ես հայկական ազգայնականության դեմ ուղղված առաջին գրքի հեղինակն եմ: Առ այսօր այն միակն էլ մնում է: Խորհրդային Հայաստանի գրողներից և ոչ մեկը այդ թեման չի արծարծել»[66]:

Ակսել Բակունցին վերագրում էին հակահեղափոխական խմբի անդամ լինելու, աջ-տրոցկիստական, ահաբեկչական հայացքներ պաշտպանելու և ազգայնական սկզբունքներ քարոզելու մեղադրանքներ: Ըստ մեղադրական եզրակացության, Բակունցը անդամակցել էր մի կազմակերպության, որն իրականացրել էր Կիրովի սպանությունը և ահաբեկչություն նախապատրաստել կուսակցության ու կառավարության ղեկավարների (Ստալին, Բերիա) նկատմամբ: Բակունցը և Չարենցը կազմակերպել էին հայ գրողներից բաղկացած հակահեղափոխական խումբ: Բակունցը կապ էր ստեղծել, Վաղարշակ Տեր-Վահանյանի միջոցով, Մոսկվայի համանման կազմակերպության հետ: Այսպիսին էր այն մեղադրական եզրակացությունը, որ հաստատել էր Մուղդուսին և ստորագրել նրա տեղակալ Գևորկովը:

1937 թ. հուլիսի 8-ին միաժամանակ գնդակահարվեցին Ակսել Բակունցը, Ներսես (Ներսիկ) Ստեփանյանը, գրականագետ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը և ուրիշներ:

Չարենցին որոշ ժամանակ չէին ծերբակալում, հաշվի առնելով նրա վատ առողջությունը, սակայն նրանից ստորագրություն էր վերցվել, որ նա մինչև դատավարությունը Երևանից չպետք է բացակայեր:

Չարենցի վրա արդեն մեղադրանք էր ձևակերպվում: 1936 թ. նոյեմբերի 9-ին հանրապետության ՆԳԺԿ-ի պետական անվտանգության վար-

---

[66] ՀԱԱ, ֆ. 4, ց. 2, գ. 1218, թ. 16-19:

չության գաղտնի բաժնի 4-րդ բաժանմունքի պետ Ե. Նիկողոսյանը, գաղտնի բաժնի պետ Գևորկովի համաձայնությամբ, կայացրել է տվյալ համապատասխան որոշումը. քրեական օրենսգրքի 67 և 68 հոդվածներով (հակախորհրդային քարոզչություն . այդ ուղղությամբ կազմակերպչական գործունեություն) մեղադրվող Ե. Ա. Սողոմոնյան Չարենցի նկատմամբ, քննությունից և դատարանից խուսափելը կանխելու միջոց ընտրել ստորագրություն վերցնելը Երևանից չմեկնելու մասին մինչև դատավարությունը: Հաշվի էր առնվում նրա «հիվանդ վիճակը»: Հետո ավելացան Քրեական օրենսգրքի այլ հոդվածներ ևս:

Իրավապահ մարմինները Չարենցին հետևում էին ավելի վաղ, 1935 թվականից: Չարենցի, ինչպես նաև Բակունցի, շատ այլ գրողների, նշանավոր մտավորական Ներսես (Ներսիկ) Ստեփանյանի և այլոց կեղծ գործերը սարքելու համար չեկիստներն օգտագործում էին նաև նրանց այս կամ այն արտահայտություններն ու մտքերը, որ բաց պայմաններում արտահայտել էին պաշտոնական բանավեճերում, զեկուցումներում ու ելույթներում, կատակ կամ կիսակատակ ձևով, անսթափ վիճակում և այլն: Տաբրեր ճանապարհներով այդ տեղեկությունները կենտրոնանում էին ՆԳԺԿ-ի մարմիններում, դառնում քաղաքական մեղադրանքներ: Այդպիսի «հիմքերի» վրա էր կառուցված նաև Չարենցի «գործը»[67]:

1935 թ. հարցաքննություններում քննիչները փորձել են Չարենցին վերագրել մասնավորապես ահաբեկչության մտադրություն այս կամ այն կուսակցական ու պետական գործչի նկատմամբ[68]: «Նողկալի զրպարտություն»,- եղել է Չարենցի պատասխանը «ահաբեկչական տրամադրությունների մասին» հարցին: «Կիսալուրջ, զայրացած խոսակցությունը ես ահաբեկչական տրամադրությունների արտահայտություն չեմ համարում»:

1936 թ. հարցաքննություններն անց են կացրել Գևորկովը, Նիկողոսյանը: Չարենցը մերժել է ընդունել բոլոր մեղադրանքները, այդ թվում նաև «Ով հայ ժողովուրդ, քո փրկությունը քո միասնության մեջ է» բանաստեղծական մտքին («Գիրք ճանապարհին» ժողովածուի «Պատգամ» բանաստեղծության մեջ ակրոստիքոս) նացիոնալիստական բովանդակություն կպցնելը: Չնայած այդ ամենին, քննիչ Ա. Ինաեկյանը 1937 թ. հուլիսի 26-ին ձևակերպում էր, թե իբր նոր ստացված տվյալների համաձայն Չարենցը «շարունակում է ակտիվ պայքար մղել խորհրդային իշխանության դեմ» և

---

[67] 1930-ական թվականների առաջին կեսին Չարենցի շուրջը ստեղծված իրավիճակի մասին մանրամասը տես Դ. Գասպարյան, 30-ական թվականներն էին..., Տես «Երեկոյան Երևան», 29 և 30 օգոստոսի և 15 սեպտեմբերի 1989 թ.:

[68] ՀՀ ԱԱԾԱ, ԿԳՖ, գ. 837, թ. 7-9, 19-21, 24, 26-36:

հաշվի առնելով ակտիվ հակահեղափոխական գործունեությունը կանխելու անհրաժեշտությունը, որոշեց Չարենցի համար նախկինում ընտրված խափանման միջոցը փոխարինել բանտարկությամբ, պահելով նրան ՆԳԺԿ-ի ներքին բանտում[69]: Նույն օրը Մուղդուսին ստորագրեց Եղիշե Չարենցի տունը խուզարկելու և նրան ձերբակալելու մասին թույլտվությունը[70]: Չարենցի հիվանդ և տկար մարմինը անկարող էր դիմանալ բանտային պայմաններին: Նա տանջամահ եղավ և իր մահկանացուն կնքեց 1937 թ. նոյեմբերի 13-ին Երևանի բանտում[71]: Տեղին է հիշել, թե ինչպես 1926-1927 թթ., երբ մի պատահական դիպվածով Չարենցը բանտ էր ընկել, Հայաստանի իշխանավորները ամեն ինչ արեցին նրան ժամկետից շուտ ազատելու համար, իսկ 1937 թ. ստալինյան վարչախումբը արեց հակառակը, հաշվի չառնելով, թե ինչ տաղանդ է մեռցնում:

Բանտարկվեց նաև Եղիշե Չարենցի կինը Իզաբելլա Չարենցը, որը 1938 թ. 5 տարով աքսորվեց Ղազախստան, ամուսնու «գործը» թաքցնելու համար[72]: Բանտերկվել են նաև շատ այլ շատ թե քիչ աչքի ընկնող մտավորականների և այլ գործիչների կանայք:

1955 թ. ԽՍՀՄ դատախազությունը կարճեց Եղիշե Չարենցի (Սողոմոնյանի) մեղադրական գործը նրա գործողություններում հանցակազմի բացակայության պատճառով:

Գրողների մեկուսացումով շրջանառությունից հանվում էր նաև նրանց գրական ժառանգությունը: Կուսակցական որոշումներով վաճառքից ու գրադարաններից հանվեցին հարյուրավոր անուն գեղարվեստական, ինչպես նաև այլ ձերբակալված հեղինակների գրքեր: Արգելք դրվեց նաև նախախորհրդային ժամանակաշրջանի այն գրողների գործերի վրա, որոնք համարվում էին «նացիոնալիստական» (Ռաֆֆի, Ռ. Պատկանյան, Ալիշան, Պեշիկթաշլյան, Ծերենց և ուրիշներ)[73]:

1936 թ. վերջերին ձերբակալվեցին այսպես կոչված «Հայաստանի հակահեղափոխական տրոցկիստական նացիոնալիստական ահաբեկչական կենտրոնի» անդամներ Արսեն Եսայանը (Հայաստանի օգնության կոմիտեի ՀՕԿ-ի վարչության անդամ), Դրաստամատ Տեր-Սիմոնյանը (կուսակցական և պետական գործիչ), Արամայիս Երզնկյանը (ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահի նախկին տեղակալ), Արտավազդ Եղիազարյանը (նախ-

---

[69] Նույն տեղում, թ. 174:
[70] Նույն տեղում, թ. 100:
[71] Նույն տեղում, Իզաբելլա Չարենցի գործը, թ. 9:
[72] Նույն տեղում, թ. 10:
[73] Մանրամասն տես Դ. Գասպարյան, Հավատաքննություն. «Խորհրդային Հայաստան», 17 և 18 մարտի 1994 թ.:

կին լուսժողկոմ) և ուրիշներ: Մուղդուսին անձամբ կենտկոմին տեղեկացրեց «կենտրոնի» «բացահայտման» և նրա անդամների հարցաքննությունների ընթացքի մասին[74]:

Կենտկոմի բյուրոյի որոշման մեջ մասնավորապես Արամայիս Երզնկյանի մասին նշվում էր, թե նա իսկապես խառնված է հակահեղափոխական, նացիոնալիստական, տրոցկիստական գործերի մեջ: Նրան ազատեցին պաշտոնից, Կենտկոմի բյուրոյի կազմից: Կուսհանձնաժողովում քննարկեցին այն հարցերը, որոնք Երզնկյանը դրել էր Ստալինին և Բերիային ուղարկած զեկուցագրում: Նա ընդունեց, որ ինքը ևս, որպես ժողկոմխորհի նախագահի նախկին տեղակալ, մեղքի բաժին ունի այն հարցերում, որոնցում քննադատում էր ժողկոմխորհի նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանին և Աղասի Խանջյանին[75]: Կուսհանձնաժողովի որոշման մեջ նշվեց, որ Արսեն Եսայանի, Արտավազդ Եղիազարյանի, Արամայիս Երզնկյանի և մյուսների հակահեղափոխական, նացիոնալիստական խումբը «հայ մարտնչող նացիոնալիզմի» դիրքերից կազմակերպված պայքար է մղել Անդրերկրկոմի ու անձամբ Բերիայի դեմ: Խմբի գործունեությանն ուղղություն է տվել Խանջյանը: Իսկ ծերբակալությունից հետո քննությունը Երզնկյանից կորզել էր այն խոստովանությունը, որ ինքը եղել է Սահակ Տեր-Գաբրիելյանի նացիոնալիստական խմբի անդամ: Մի այլ հարցաքննությամբ հիվանդ ու կարցերում նստած Երզնկյանը «խոստովանեց» խմբի բոլոր 13 անդամների անունները: Նա մահացավ 1937 թ. օգոստոսին: Խմբի անդամների մի մասը գնդակահարվեց, մյուսներն աքսորվեցին: 1954 թ. Արամայիս Երզնկյանի և մյուսների գործը կարճվել է մեղադրանքի ապացույցների բացակայության պատճառով[76]:

Արամայիս Երզնկյանի անվան հետ կապված է վերը հիշված փաստաթուղթը, որին արժե անդրադառնալ, քանզի այն շոշափում է Հայաստանի ներքին կյանքին վերաբերող հարցեր, որոնք առնչվում էին հանրապետության պետական ու կուսակցական ղեկավարության գործունեության, ինչպես նաև սույն ուսումնասիրության մեջ քննարկվող հիմնախնդիրների հետ: Խոսքը Ա. Երզնկյանի այն ընդարձակ նամակի մասին է, որը նա 1935 թ. օգոստոսին ուղարկել էր Ստալինի հասցեով (պատճենը Բերիային): Նամակի հեղինակը, որին նամակը գրելու պահին ազատել էին ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալի բարձր պաշտոնից, բարձրացրել է երկու խումբ հարցեր: Առաջինը տնտեսականն է, երկրորդը քաղաքական-գաղափարականը: Առաջինի մասին արդեն խոսվել է Վեյնբաումի հանձնաժողո-

---

[74] Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2 (102) 2003 թ., էջ 65-74:
[75] ՀՀ ԱԱԾԱ, ԿԳՖ, գ. 908, թ. 1-19:
[76] ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ. 207, թ. 1-9:

վի առիթով, և որը վերաբերում էր հիմնականում արտաբյուջետային շինարարությանը: Ինչ վերաբերում է երկրորդին, ապա այստեղ սուր քննադատության է ենթարկված ՀԿ(բ)Կ Կենտկոմի, նրա 1-ին քարտուղար Ա. Խանջյանի քաղաքականությունը և գործունեությունը: Միայն նամակի ենթավերնագրերը կարող են գաղափար տալ քննադատության շրջանակների մասին: Դրանք են. Գյուղում կուսակցության քաղաքականության աղավաղումների մասին: Հակապետական միտումների մասին (այստեղ նկատի ունի տնտեսական հարցերը): Տատանումներ գաղափարական ճակատում: Խանջյանի երկդիմի քաղաքականության մասին:

Երզնկյանի քննադատության մեջ կան, իհարկե, ընդունելի կողմեր, սակայն ճիշտ չէ բոլոր դեպքերում սխալների ու դժվարությունների պատճառը համարել ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Խանջյանին, չնայած որպես հանրապետության առաջին դեմք, նա պատասխանատու էր ամեն ինչի համար: Քննադատության զգալի մասը առնչվում էր ամբողջ երկրում տիրող դրության և վարվող ընդհանուր քաղաքականության հետ, ինչպես, օրինակ, համատարած կոլեկտիվացումը և կուլակաթափությունը, գյուղատնտեսության և գյուղի համար ստեղծված խիստ ծանր դրությունը: Գաղափարական բնագավառում Խանջյանի հրահանգները, գրել է Երզնկյանը, «տատանվում են նացիոնալ-դեմոկրատական և ձախ-բյալլագյոզական բևեռների միջև»: Խանջյանը, մի կողմից, հովանավորում է ազգայնորեն տրամադրված մտավորականությանը, մյուս կողմից, նրա «հրապարակային ելույթները պահանջում են «ջախջախել» նացիոնալիզմը»:

Երզնկյանը «մեծ առաջնորդին» տեղեկացրել է նաև Չարենցի նկատմամբ Խանջյանի հովանավորող վերաբերմունքի մասին, որպես նացիոնալիզմի արտահայտություն: Ահա զեկուցագրի տվյալ հատվածը. «Գիրք ճանապարհին» Չարենցի երկը հեղինակը նախապես կարդացել է ընկ. Խանջյանին: Վերջինս այն հավանել է որպես հանճարեղ ստեղծագործություն: Գրքի մասին Խանջյանը գրել է նույնիսկ Փարիզում գտնվող հայ կադետների Կենտկոմի նախագահ Արշակ Չոպանյանին, որը Խանջյանի նամակը հրապարակել է իր ամսագրում: Նամակում Խանջյանը Չարենցի գիրքը գնահատել է որպես «հայ գրականության գագաթ»: Բնականաբար Երզնկյանը այնուհետև պետք է գրեր, որ տպագրությունից հետո գրականկուսակցական հասարակայնությունը գրքին տվել է բացասական գնահատական «նացիոնալիստական գաղափարներ արտահայտելու համար»:

Երզնկյանը Ստալինին խնդրում էր միջամտել Հայաստանի կուսկազմակերպության գործերի մեջ կամ հանձնարարել Բերիային «անձամբ և բազմակողմանիորեն հետազոտել ստեղծված կացությունը և անել հա-

մապատասխան եզրակացություններ»[77]: Իրականում Ստալինը ոչ միայն միջամտել, այլև նախաձեռնել, կազմակերպել ու ղեկավարել էր բռնության գործողությունները ամբողջ երկրում և Հայաստանում:

Հայկական ԽՍՀ դատախազ Պ. Թորոսյանը ԽՍՀՄ դատախազ Վիշինսկուն և ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Ամատունուն գաղտնի գրությամբ հայտնել է 1936 թ. ընթացքում դատախազությանն կողմից Գերագույն դատարանի հատուկ կոլեգիայի քննությանը հանձնված 662 մարդու վերաբերյալ 352 գործերի մասին: Գործերի բովանդակությունն էր «հակահեղափոխական ագիտացիա-պրոպագանդա, նացիոնալիստական ու տրոցկիստական արտահայտությունների տարածում», «հակահեղափոխական կազմակերպությունների ու խմբերի (դաշնակցականներ և ուրիշներ) անդամություն», նաև բանդիտիզմ[78]: Իսկ ներքգործժողկոմատի տվյալներով 1936 թ. ընթացքում ձերբակալվել էր 1138 մարդ: Ձերբակալվածների առաջին ամենախոշոր երեք խմբերն էին «տրոցկիստներ» 417, «հակահեղափոխական նացիոնալիստական ագիտացիա» 251 և «այլ հակահեղափոխական ու պաշտոնի հանցագործություններ» 172 մարդ[79]: Ըստ մեղադրանքների նման խմբավորումը, որ արված է ժողկոմի տեղակալ Գևորկովի կողմից, կարող էր լինել սուբյեկտիվ և կամայական, քանի որ, ըստ անձնական գործերի հետ ծանոթության, նույն մարդուն վերագրվում էր մեկից ավելի մեղադրանք: Սակայն տվյալ դեպքում կարևորը հանրագումարն է և մեղադրանքների տեսակների թվարկումը, քանակով 13 անուն, բոլորը քաղաքական բնույթի:

1937 թ. դարձավ բռնությունների լայն ծավալման տարի, որը կազմակերպվեց կուսակցության ղեկավարության կողմից ՀամԿ(բ)Կ Կենտկոմի նույն թվականի փետրվարյան-մարտյան պլենումի միջոցով:

Պլենումի օրակարգի սոսկ թվարկումը ցույց է տալիս, թե ինչպիսի ծանր ընթացքով էր շարունակվելու առաջիկա կուսակցական-պետական կյանքը: Օրակարգի հարցերն էին. «Բուխարինի և Ռիկովի գործը», նույն գործի վերաբերյալ պլենումի բանաձևը մշակող հանձնաժողովի զեկուցումը: Ծանր արդյունաբերության և հաղորդակցության ճանապարհների ժողկոմատների գծով «ճապոնա-գերմանա-տրոցկիստական գործակալների վնասարարության, դիվերսիայի և լրտեսության դասերը», նույնը ներքգործժողկոմատի գծով: Կուսկազմակերպությունների նախապատրաստումը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրություններին նոր ընտրակարգի և կու-

---

[77] ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ. 207, թ. 12-21:
[78] ՀՅԴաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու): Երևան, 1999, էջ 329:
[79] Նույն տեղում, էջ 326:

սակցական-քաղաքական աշխատանքների վերակառուցմանը համապատասխան: Կուսակցական կադրերի քաղաքական դաստիարակության և կուսկազմակերպություններում տրոցկիստական ու այլ երկերեսանիների դեմ պայքարի միջոցառումների մասին:

1936 թ. Կամենևի և Զինովևի դատավարության ժամանակ «վարկաբեկող» և մեղադրական նյութեր են թխվել Բուխարինի և Ռիկովի վերաբերյալ, որն անմիջապես օգտագործվեց ստալինյան ղեկավարության կողմից հաշվեհարդար տեսնելու նաև նախկին աջ օպոզիցիայի ղեկավարների և այլոց հետ: Փետրվար-մարտյան պլենումը Բուխարինին և Ռիկովին հեռացրեց Կենտկոմի անդամության թեկնածությունից, կուսակցության շարքերից, և նրանց գործը հանձնեց ՆԳԺԿ-ին: 1938 թ. տեղի ունեցավ Բուխարինի և Ռիկովի դատավարությունը և նրանք գնդակահարվեցին: Նրանց հետ մեղադրվող Տոմսկին ինքնասպան եղավ:

Ըստ պլենումի նյութերի ծանր արդյունաբերության, հաղորդակցության ճանապարհների, ինչպես նաև մյուս ժողկոմատների համակարգում ձերբակալվել էին հազարավոր կադրեր բոլոր մակարդակների, որպես տրոցկիստներ, հայրենիքի դավաճաններ, ճապոնա-գերմանական գործակալներ, դիվերսանտներ ու լրտեսներ: Միայն ձերբակալված տրոցկիստ-զինովևականների թիվը հասնում էր 18 հազարի: Ժողկոմատների զեկուցումների առթիվ ընդունված բանաձևում նշվեց, թե դրանց բազմահազար աշխատավորները բոլշևիկորեն հաշվի կառնեն տրոցկիստների վնասարարական, դիվերսիոն ու լրտեսական աշխատանքի բոլոր դասերը և արագորեն կվերացնեն դրանց հետևանքները:

ՆԳԺԿ-ի կապակցությամբ նշվեց, որ այն չի գտնվել իր բարձրության վրա և ժամանակին չի հայտնաբերել ու բացահայտել թշնամիներին: Եժովի ժողկոմ դառնալուց (1936 թ. հոկտեմբեր) հետո մինչև պլենումը ժողկոմատի 699 աշխատակիցներից ձերբակալվել էր 238 մարդ (34 տոկոսը)[80]: Մեղայական ելույթ ունեցավ նաև նախկին ժողկոմը (Յագոդա), որ մեջբերելով Ստալինի 1931 թ. արտահայտած միտքը, թե տրոցկիզմը միջազգային հակահեղափոխության առաջատար ջոկատն է, ավելացրեց, որ այդ բնորոշումն արդեն նշանակում էր «չեկիստների համար հակահեղափոխության դեմ պայքարի մի ամբողջ ծրագիր», և որ իրենք թերացել են այդ պայքարում:

Զեկուցումով և եզրափակման խոսքով հանդես եկավ Ստալինը: Նա ամենուրեք տեսնում էր վնասարարների, դիվերսանտների, արտասահմանի գործակալների առկայությունն ու գործունեությունը: «Մեր մի շարք ղե-

---

[80] Вопросы истории, 1992-1995 թթ. համարները (պլենումի սղագրության նյութերը):

կավար ընկերներ,- շարունակում է նա,- ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում, ոչ միայն չեն կարողացել նկատել այդ վնասարարների, դիվերսանտների, լրտեսների ու մարդասպանների իսկական դեմքը, այլև գտնվել են այնքան անփույթ, բարեհոգի ու միամիտ, որ հաճախ իրենք են նպաստել օտարերկրյա գործակալների առաջքաշմանն այս կամ այն պատասխանատու պաշտոնում»: Այնուհետև Ստալինը բարձրացնում էր այն հարցը, թե ինչպես է, որ ղեկավար ընկերները, ունենալով պայքարի մեծ փորձ (նկատի ուներ պայքարը անցած 10 տարիների ընթացքում, սկսած «Շախտիի գործից», վերջացրած Զինովևի ու Կամենևի նույնպիսի կեղծ գործով), չէին կարողացել ճանաչել «ոչխարի մորթի հագած գայլերին»[81]: Ուստի իսկական արշավանք կազմակերպվեց այդ «գայլերին» բացահայտելու համար:

Ելնելով փետրվար-մարտյան պլենումի որոշումներից ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հաջորդ 1937 թ. հունիսյան պլենումը որոշեց ներքգործժողկոմին տալ արտակարգ իրավունքներ: Ստեղծվեցին տխրահռչակ «եռյակները»: 1936 թ. ընդունած նոր սահմանադրությունը օրենսդրորեն ձևակերպել էր «հստակ դատարանների» կազմակերպման իրավունքը (հոդված 102), ինչպես նաև ժողովրդական ատենակալների բացառումը «օրենքով հատկապես նախատեսված դեպքերում» (հոդված 103)[82]:

Խորհրդային բռնությունների գործընթացներն ու պատճառները ուսումնասիրող Յուրի Ժուկովը, որի մասին հիշվել է վերը, 1937 թ. հունիս-հուլիսին կատարված բեկումը դիտարկել է որպես ստալինյան նեղ ղեկավարության կողմից լայն ղեկավարության դեմ պայքարի անհրաժեշտություն[83]: Դա նշանակում էր հերթափոխել վերջիններիս, առաջ քաշելով նոր, երիտասարդ ու վստահելի կադրեր: Այդ տեղի էր ունենալու նոր ընտրա-

---

[81] И. Сталин. О недостатках партийной работы и мерах ликвидации троцкистских и иных двурушников. Партиздат ЦК ВКП(б), 1937.

[82] ԽՍՀՄ Սահմանադրություն (հիմնական օրենքը): Երևան, 1937, էջ 26-27:

[83] Նեղ ղեկավարությունը ամբողջ իշխանությունը յուրացրած քաղբյուրոյի կազմում ոչ պաշտոնական խումբ, որը կարևորագույն որոշումներ էր ընդունում կուսակցության Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության անունից: Լայն ղեկավարությունը հանրապետությունների կենտրոնական ու մարզային կոմիտեների քարտուղարները և ԽՍՀՄ ժողկոմներն էին (մինիստրները), օժտված գրեթե անսահմանափակ իշխանությամբ իրենց վերահսկողության տարածքներում ու տնտեսության ճյուղերում: Լինելով Կենտկոմի անդամներ, նրանք մասնակցում էին քաղբյուրոյի կազմի ընտրությանը, հաստատում նրա հիմնական որոշումները, իրավականորեն վեր կանգնելով քաղբյուրոյից, ներառյալ նեղ ղեկավարությունը. Юрий Жуков. Иной Сталин. Политические реформы в СССР в 1933-1937 гг. М., 2003, с. 493, 495.

կան կարգի օգնությամբ, այլընտրանքային քվեարկության միջոցով: Ընտրական նոր օրենքը հավանության էր արժանացել ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1937 թ. հունիսյան պլենումի կողմից և հաստատվել հուլիսի 7-ին ԽՍՀՄ - Կենտգործկոմի նստաշրջանում: Պարտոկրատիայի դեմ մարտահրավերը նետված էր: Նեղ ղեկավարությունը մի անգամ ևս ամրապնդեց իր ցանկությունը ստիպել լայն ղեկավարությանը, որ նա խաղաղորեն թողնի իշխանական պաստերը: Իսկ վերջինս, ի պատասխան այդ հրավերի, անցավ հակահարձակման[84]:

1937 թ. հունիսի 28-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն կայացրել էր հետևյալ որոշումը. «1. Անհրաժեշտ համարել պատժի առավելագույն չափի կիրառումը աքսորված կուլակների ապստամբական կազմակերպության բոլոր ակտիվիստների նկատմամբ: 2. հարցի արագ լուծման համար ստեղծել եռյակ...»: Թվարկված է եռյակի կազմը, Արևմտասիբիրյան երկրամասի ղեկավարների մասնակցությամբ: Որոշումն ընդունվել էր Արևմտասիբիրյան երկրամասի կուսկոմիտեի քարտուղար Ռ. Ի. Էյխեի նախաձեռնությամբ: Չնայած Էյխեի համապատասխան գրությունը գտնված չէ, այնուամենայնիվ դրա բովանդակության մասին եզրակացություն է արվել Կենտկոմի փետրվար-մարտյան պլենումում նրա ունեցած ելույթի հիման վրա: Արևմտյան Սիբիրում, հայտարարել է Էյխեն, գոյություն ունի «ոչ փոքր խումբ ստոր թշնամիների, որոնք փորձ կանեն շարունակել պայքարը բոլոր միջոցներով»: Ինչ որ «հակահեղափոխական ապստամբական կազմակերպություն» սպառնում է երկրամասի քաղաքական կայունությանը և ընտրական կամպանիային (նկատի ունի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունները)[85]:

Էյխեի նախաձեռնությունը հիմք դարձավ երեք օր անց, հուլիսի 2-ին, ընդունելու նույնպիսի որոշում երկրի բոլոր կուսկոմիտեների համար: Որոշումը նշում էր, թե նախկին կուլակներն ու քրեականները վերադառնալով աքսորից իրենց մարզեր, գրգռում են ամեն տեսակ հակախորհրդային ու դիվերսիոն հանցագործություններ կոլտնտեսություններում, սովխոզներում, տրանսպորտում ու արդյունաբերության որոշ ճյուղերում: Կենտկոմը բոլոր կուսքարտուղարներին ու ՆԳԺԿ մարմիններին առաջարկեց «հաշվառման վերցնել հայրենիք վերադարձած բոլոր կուլակներին ու քրեականներին այն հաշվով, որ նրանցից ամենաթշնամական տարրերը անմիջապես ծերբակալվեն ու գնդակահարվեն, նրանց գործերը անցկացնելով վարչական կարգով, եռյակների միջոցով, իսկ մյուս տարրերին՝ պակաս ակտիվ, համենայն դեպս թշնամական, գրանցել և աքսորել շրջաններ, ՆԳԺԿ -

---

[84] Նույն տեղում, էջ 431-432:
[85] Նույն տեղում, էջ 433:

ցուցումով»: Կենտկոմն առաջարկում էր հնգօրյա ժամկետում իրեն ներկայացնել եռյակների կազմը, ինչպես նաև գնդակահարության ու աքսորի ենթակա մարդկանց թվական տվյալները:

Պատվիրված լիմիտներն արագորեն հասան Մոսկվա և որոշ փոփոխություններով հաստատվեցին: Հայաստանի 500 մարդու գնդակահարության պատվերը մնաց նույնը, իսկ աքսորի 650-ը դարձավ 1000: Վրաստանի համար համապատասխան ցուցանիշներն էին 2000 և 3000, իսկ Ադրբեջանի համար 1500 և 3750: Ամբողջ երկրում բռնաճնշման էր ենթարկվելու շուրջ 250 հազար մարդ: Չափաբաժինների ցուցակը, ըստ ԽՍՀՄ վարչական բաժանման, բերված է ներքգործժողկոմ Ն. Ի Եժովի հուլիսի 30-ի հրամանում, որը վերնագրված է «Նախկին կուլակների, քրեականների ու այլ հակախորհրդային տարրերի բռնաճնշման գործողության մասին»: Եժովը միաժամանակ բացել է «քրեականների» փակագծերը: Դրանք բանդիտներն էին (կոլեկտիվացմանը դիմադրողները), թալանչիները, ռեցիդիվիստ գողերը, պրոֆեսիոնալ մաքսանենգները, խաբեբա-ռեցիդիվիստները և անասնագողերը:

Գյուղում բնավորվել են զգալի թվով նախկին կուլակներ, «հիմնավորում էր» հրամանը Եժովը, ավելի վաղ բռնաճնշվածներ, ճնշումներից թաքնվածներ, ճամբարներից ու աշխատանքային բնակավայրերից փախածներ, նաև բռնաճնշման ենթարկված շատ եկեղեցականներ ու աղանդավորներ: Այնուհետև հրամանում ավելանում են քաղաքական հակառակորդները, այդ թվում նաև դաշնակցականները, ինչպես նաև բանդիտական ապստամբությունների նախկին մասնակիցներ, հայրենադարձներ և ուրիշներ:

«Ժողովրդի թշնամիների» վրա գումարվում են նորերը՝ այն ընտանիքները, որոնց անդամներն ընդունակ էին ակտիվ հակախորհրդային գործողությունների (նրանք արտաքսվելու էին ճամբարներ կամ աշխատանքային բնակավայրեր), 1-ին կատեգորիայով բռնաճնշման ենթարկվածները, որոնք ապրում էին սահմանամերձ գոտում (վերաբնակեցվելու էին նույն հանրապետության հեռավոր շրջաններում կամ մարզերում) և խոշոր քաղաքներում, նաև Սոչիի, Գագրայի ու Սուխումի կուրորտային շրջաններում (հեռացվելու էին այնտեղից):

Հրամանի կատարման ժամկետը 4 ամիս էր օգոստոսի 15-ից մինչև դեկտեմբերի 5-15-ը: Յուրի Ժուկովը ժամկետի վերաբերյալ նկատել է, որ այն հարմարեցված էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների նախապատրաստության ու անցկացման ժամանակի հետ: Ստեղծվում էր

ահաբեկության մթնոլորտ ընտրությունների գործընթացն ապահովելու համար[86]:

«Շաբաթից շաբաթ,- գրել է նույն հեղինակը,- ընդլայնվում էին զանգվածային բռնությունները, հարվածելով ոչ միայն գյուղացիությանը, այլև նրանց, ովքեր նրա դեմ սանձազերծել էին քաղաքացիական պատերազմի նման մի բան»[87]: Հուլիսին և հաջորդ երկու ամիսներին Կենտկոմից հանվեցին, ձերբակալվեցին, ապա գնդակահարվեցին մարզերի ու երկրամասերի 16 քարտուղարներ: Դեռևս քարտուղարի պաշտոնում գտնվողները սլաքի ծայրն ուղղեցին իրենց ենթակայության տարածքների խորհրդային ղեկավարների, ժողկոմների նկատմամբ՝ մինչև հերթը կհասներ իրենց:

Ժամանակի հետ նեղ (ստալինյան) ղեկավարությունը համոզվում էր, որ անհիմն է երկրի մտածված ժողովրդավարացումը, որ ժողովուրդն անպատրաստ է նոր ընտրական համակարգն ընդունել և օգտագործել իր օգտին:

Մենք չենք կարծում, թե ստալինյան բռնությունների բացատրությունը, որ տվել է Յուրի Ժուկովը, միակ ընդունելի տեսակետն է: Կան և կարող են լինել այլ բացատրություններ ևս: Յուրի Ժուկովի մեկնաբանությունները հենվում են երկրի ներքին ու արտաքին իրադարձությունների ֆոնի վրա և առաջին հայացքից թվում տրամաբանական:

Քննարկվող քաղբյուրոյի որոշման հարցին առանձին հոդվածով անդրադարձել է Իլյա Զելենինը[88] : 1937 թ. հուլիսի 30-ի հրամանը, որը հաստատվել էր քաղբյուրոյի կողմից, չեկիստների վրա դնում էր զանգվածային բռնությունների նոր պահանջ: «Ստացվում էր տպավորություն, թե խորհուրդների երկիրը 1937 թ., ինչպես քաղաքացիական պատերազմի տարիներին, գտնվում էր թշնամիների օղակում»[89]: Անմիջապես ձերբակալվելու և գնդակահարության ենթակա էր 72 հազար մարդ (ամենաթշնամաբար տրամադրվածները): 270 հազար մարդ ենթակա էին բանտարկության ճամբարներում ու բանտերում 8-10 տարի (պակաս ակտիվ թշնամաբար տրամադրվածները և չարամիտներն ու սոցիալապես վտանգավոր տարրերը): Առաջադրանքը սահմանված չորս ամսում կատարել չհաջողվեց և տևեց մեկ տարուց ավելի: Դրա փոխարեն պլանը գերակատարվեց: 1937 թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ամբողջ երկրում ձերբակալվել էր

---

[86] Նույն տեղում, էջ 450-451:
[87] Նույն տեղում, էջ 452:
[88] И. Е. Зеленин. Кульминация "Большого террора" в деревне. Зигзаги аграрной политики (1937-1938 гг.): Отечественная история, 2004, N 1, с. 175-180.
[89] Նույն տեղում, էջ 176:

248,3 հազար մարդ. այդ թվում 108,1 հազարը (43 տոկոս) որպես նախկին կուլակներ և որոնց մեծ մասը (83,6 հազար) դատապարտվել էր գնդակահարության: Իսկ մինչև 1938 թ. նոյեմբեր բոլոր ձերբակալվածների թիվը կազմեց 787.397 մարդ (342 հազարի փոխարեն): Այդ թվում գնդակահարվել էր 386 798 մարդ (72 հազարի փոխարեն): Ճամբարներ էր ուղարկվել 380 559 մարդ (270 հազարի փոխարեն): 1936 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1938 թ. նոյեմբերի 1-ը «Մեծ ահաբեկության» զոհերի թիվը կազմում է 1 565 041, այդ թվում գնդակահարվել էր 668 305-ը:

Ձևնգվածային գործողություններով պայմանավորված հնարավոր դժգոհությունների ու բողոքների դեմ պայքարելու նպատակով Ստալինը 1937 թ. օգոստոսի 3-ին ստորագրեց կուսկոմիտեների քարտուղարներին հասցեագրված «Բաց ցուցադրական դատավարություններ կազմակերպելու մասին» դիրեկտիվը: Նրանում ասված է. «Վերջին ժամանակներս երկրամասերում, մարզերում ու հանրապետություններում գյուղատնտեսության բնագավառում բացահայտվել է ժողովրդի թշնամիների վնասարարական աշխատանքը, որի նպատակն է քայքայել կոլտնտեսությունները և կոլտնտեսականներին ծաղրուծանակի ենթարկելու բոլոր միջոցներով սադրել դժգոհության խորհրդային իշխանության դեմ»: ԿԵՆՏԿՈՄը էական թերություն էր համարում այն բանը, որ վնասարարների դեմ պայքարը ՆԳԺԿ-ն մղում էր փակ կարգով, իսկ կոլտնտեսականները չէին մոբիլիզացվում վնասարարության ու դրա կրողների դեմ պայքարելու համար:

Գյուղատնտեսության բնագավառի «ժողովրդի թշնամիների» դեմ մղվող պայքարի շուրջ կոլտնտեսականներին համախմբելու նպատակով ՀամԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄը կուսակցական կոմիտեներին պարտավորեցնում էր «յուրաքանչյուր մարզում ժողովրդի թշնամիների գյուղատնտեսության վնասարարների դեմ կազմակերպել 2-3 բաց ցուցադրական դատավարություն, վնասարարներ, ովքեր թափանցել էին շրջանային կուսակցական, խորհրդային ու հողային մարմիններ (ՄՏԿ-ների ու շրջհողբաժինների աշխատողներ, շրջգործկոմների նախագահներ, շրջկոմի քարտուղարներ և ուրիշներ)»: Դատավարությունների ընթացքը լայնորեն լուսաբանելու էր տեղական մամուլը:

«Վնասարարության» և «ժողովրդի թշնամիների» դեմ պայքարի արդյունքներին է նվիրված ԽՍՀՄ ներքգործժողկոմի տեղակալ Մ. Ն. Մերկուլովի «1936-1938 թվականներին ԽՍՀ Միության գյուղատնտեսության մեջ վնասարարության մասին զեկուցագիրը հետաքննության նյութերի հիման վրա», որի մասին խոսվում է Ձելենինի հիշված հոդվածում: Զեկուցագիրը պատրաստվել է քաղբյուրոյում գյուղատնտեսության հարցերը համակարգող Ա. Ա. Անդրեևի պահանջով: Ընդարձակ զեկուցագիրը (50 էջ)

պատրաստվել է ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարի (1939 թ. մարտ) կապակցությամբ և օգտագործվել Ա. Ա. Անդրեևի ելույթում:

«Գյուղատնտեսությունում վնասարարական գործունեության մեջ,- ասված է զեկուցագրում,- այս կամ այն չափով ընդգրկված են եղել հողային մարմինների համակարգի հիմնական օղակները սկսած բարձրագույնից (ԽՍՀՄ հողժողկոմատ) և վերջացրած ստորիններով»:

«Ժողովրդի թշնամիների», «վնասարարների» մասին հորինվածքները և բաց դատավարությունների կազմակերպումը ուներ մեկ գլխավոր նպատակ, այն է՝ նրանց ընդունել ու ճանաչել որպես պարենային և մյուս դժվարությունների պատճառ, ժողովրդի դժգոհության սլաքն ուղղել կեղծ ուղղությամբ, շեղել իսկական հանցավորներից:

Այսպիսով 1937-1938 թթ. տեղերից ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրո առաքվել է շուրջ 400 ցուցակ, 44 հազար մարդու համար թույլ տալու նրանց ձերբակալումը: Պետք է կարծել, որ տեղական պահանջագրերի իրողությունը քաղբյուրոյի առաջադրանքների արձագանքը կամ պատասխանն էր: Թույլտվությունները մակագրել են Ստալինը, Մոլոտովը, Վորոշիլովը, Կագանովիչը, Ժդանովը, Եժովը, Միկոյանը: Այդ երկու տարվա ընթացքում բռնաճնշման ենթարկվեց շուրջ 1,4 միլիոն մարդ[90]:

Փետրվար-մարտյան պլենումի արդյունքները Հայաստանում քննարկվեցին մարտին կայացած ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումում, որտեղ լսվեց Ամատունու հաղորդումը: Ընդունված բանաձևում և Ստալինին ուղղված նամակում հավանություն տրվեց Ստալինի հարցադրումներին, ինչպես նաև նշվում էր, որ ՀԿ(բ)Կ Կենտկոմը բացահայտել է տեղի կուսաշխատանքի թերությունները անհոգությունն ու կուրությունը, որոնցից օգտվելով խորհրդային, տնտեսական, նաև կուսակցական մարմիններ են թափանցել լրտեսներ, դիվերսանտներ, վնասարարներ, հայ ժողովրդի թշնամիներ, որ կուսակցական-քաղաքական աշխատանքը վերակառուցվում է այնպես, որը բացառում է նրանց բոլորի «ստոր գործունեության հնարավորությունը»[91]:

ՀԿ(բ)Կ 10-րդ համագումարում (1937 թ. մայիս) շարունակվեց Խանջյանի քննադատությունը:

Հարկ չկա անդրադառնալ այդ քննադատություններին: Սակայն արժե հիշատակել քննադատության մի օրինակի մասին, որն առնչվում է նաև հայ ժողովրդի պատմության որոշ խնդիրների հետ: 1936 թ. «մեղադրյալ»

---

[90] В. П. Дмитренко и др. История отечества. XX век. 1955 г., с. 242-246.

[91] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 24, թ. 2-6: Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2 (102), 2003 թ., էջ 74-75:

Բակունցին հարցաքննող Սուղդուսին պահանջել է պատասխանել այն հարցին, թե ինչ խոսակցություն է ունեցել Խանջյանը իր հետ Մոսկվայում «այսպես կոչված ուրարտացիների հարցի մասին»: Բակունցի պատասխանը եղել է հետևյալը. ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի դիրեկտոր Ա. Մելիքը (Ալեքսանդր Իվանի Մելիք-Աղաջանյան) 1935 թ. վերջերին իրեն հայտնել է Մոսկվայում լսած մի գիտական նորության մասին, թե իբր ուրարտական մշակույթը վրացական մշակույթի նախահիմքն է: Երբ այս մասին Բակունցը հիշացրել է Խանջյանին, վերջինս այն ընդունել է անտարբեր և համարել «ավելորդ շաղակրատություն»: Մի այլ անգամ, 1936 թ. հունիսին, Մոսկվայում Բակունցը Խանջյանից իմացել է Ստալինի հետ ունեցած հանդիպման մասին, որի ընթացքում վերջինս հայտնել է մի այլ գիտական «նորություն», որը, ըստ Խանջյանի, այսպիսին է. «Այո, մեր (այսինքն հայերի – Վ. Ղ.) նախնիները եղել են վրացիների նախնիները»[92]:

Այս գիտական «նորությունների» մասին տեղյակ են եղել նաև ուրիշներ, որոնցից մեկը, ընդ որում Խանջյանի կադրերից, նրա մահից հետո, հարկ է համարել գրավոր ձևով և մի փոքր այլ բովանդակությամբ, հայտնել Երևանի քաղկոմի քարտուղար Ակոպովին, մեկնաբանելով, թե դրանով Խանջյանը սադրել ու ծաղրել է Ստալինին, մի ավելորդ անգամ ապացուցելով Ստալինի նկատմամբ իր երկերեսանի դիրքը[93]:

1937 թ. կեսերին Մոսկվայում ձերբակալվեց և Երևան բերվեց ԽՍՀՄ թեթև արդյունաբերության ժողկոմի տեղակալ, Հայաստանի ժողկոմխորհի նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը: Դեռևս հարցաքննություն չէր կատարվել, երբ Սուղդուսին 1937 թ. հունիսի 11-ին Ամատունուն հայտնում էր, թե «տրոցկիստական կենտրոնի» գործի կապակցությամբ քննության նյութերով մերկացվում էր այդ կենտրոնի նախաձեռնողների ու կազմակերպիչների ակտիվ անդամներից մեկը Սահակ Տեր-Գաբրիելյանը: Վերջինս Երզնկյանի, Եսայանի, Տեր-Սիմոնյանի և այլոց հետ 1931 թ. կազմակերպել է, շարունակում է Սուղդուսին, այդ կենտրոնը, 14 անդամներով, որոնցից 10-ը ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախկին կազմի անդամներ են: Կենտրոնը հակախորհրդային աշխատանքի մեջ ներգրավել է զգալի թվով տնտեսական ու խորհրդային աշխատողներ: Կենտրոնը իր գործունեության հիմքում, իբրև թե ըստ մեղադրյալների խոստովանությունների, ունի դաշնակցականների քաղաքական դիրքորոշումները[94]:

---

[92] ՀՀ ԱԱԾԱ, ԿԳՖ, գ. 4131 (8 հատորով), հ. 3, թ. 47-48:
[93] ՀԱԱ, ֆ. 1, ց. 16, գ. 81, թ. 60:
[94] Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2 (102), 2003 թ., էջ 80-82:

Խանջյանի նման Սահակ Տեր-Գաբրիելյանը ևս չէր կարող տանել այն զազրելի մեղադրանքը, որ քննիչներ Ի. Գևորկովը և Ե. Նիկողոսովը փորձում էին վերագրել իրեն: Հարցաքննության հենց առաջին օրը, օգոստոսի 21-ին Սահակ Տեր-Գաբրիելյանը, ըստ տարբեր վկայությունների, իրեն ցած է նետել 3-րդ հարկի պատուհանից կամ նրան ցած են նետել:

Սահակ Տեր-Գաբրիելյանի մահվան լուրը Ստալինն օգտագործեց Հայաստանին մի հարված ևս հասցնելու համար: Նա 1937 թ. սեպտեմբերի 8-ին նամակով դիմեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյին: Չհավատալով, թե Տեր-Գաբրիելյանն իրեն պատուհանից դուրս է նետել, Ստալինը գրում էր, թե ավելի շուտ նրան դուրս են շպրտել, նպատակ ունենալով փակել նրա բերանը, որպեսզի «չկարողանա մերկացնել սովետական իշխանության թշնամիներին»: Նա նկատի ուներ «տրոցկիստներին ու այլ հակակուսակցական տարրերին», «հայ ժողովրդի թշնամիներին», որոնց ՀԱԽԿ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ ժողկոմխորհը չէին կարող թույլ տալ, որ «ազատ շրջեն Հայաստանում, վնաս հասցնեն ժողովրդական տնտեսությանը և աղքատացնեն գյուղացիությանն ու բանվոր դասակարգին»:

Որպես առաջին միջոցառում Ստալինն անհրաժեշտ էր համարում ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Գուլոյանի և ներքգործժողկոմ Մուղդուսու ձերբակալումը, որոնք անմիջապես պատասխանատու էին «բացահայտված այդ բոլոր խայտառակությունների համար»: Պատասխանատվություն էր ընկնում նաև, ավարտում է նամակը Ստալինը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի վրա, որի կապակցությամբ Հայաստան գործուղվեց ՀԱԽԿ(բ)Կ Կենտկոմի բաժնի վարիչ Մալենկովը՝ գործը տեղում քննելու համար[95]:

Մալենկովը, և ապա նաև ՀԱԽԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Միկոյանը, Ստալինի նամակով, ժամանեցին Երևան, երբ հրավիրվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենում՝ նամակից բխող միջոցառումներ իրագործելու համար: Պլենումը բացվեց սեպտեմբերի 15-ին և ընդհատումով շարունակվեց ու ավարտվեց սեպտեմբերի 23-ին: Պլենումի վերջում Թիֆլիսից Երևան եկավ Բերիան: Նախապատրաստված օրակարգի տեղը գրավեց միայն Մոսկվայից բերված նամակը, իսկ պլենումը ղեկավարում էր Մալենկովը:

Գուլոյանը և Մուղդուսին ձերբակալվեցին անմիջապես: Պլենումի առաջին նիստում լսվեց Մալենկովի հաղորդումը «ընկեր Ստալինի նամա-

---

[95] Յու. Մռավյան, Ա. Վիրաբյան, Հայաստան. 1937: Տես «Երեկոյան Երևան», 8 սեպտեմբերի 1987 թ.: Ստալինի նամակի բնագիրը տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 61ա, թ. 3-4: Ռուսերենի տպագրությունը տես. Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2 (102), 2003 թ., էջ 82-83:

կի մասին»: Կայացան ելույթներ, որոնք շարունակվեցին մինչև սեպտեմբերի 18-ը, օրական երկու նիստերով: Ելույթները փոխադարձ մերկացման խոսքեր էին, ինքնապաշտպանության ներքին բնազդից ու վախից բխող, փրկության ելքից զուրկ: Անխուսափելի և որոշ էր մի շարք մարդկանց ծերբակալումը: Անորոշ էր առայժմ Ամատունու ճակատագիրը, չնայած Ստալինի արտահայտությունը, թե Հայաստանի կուսակցական ղեկավարությունը անհրաժեշտ հակահարված չի տալիս տրոցկիստներին, շատ բան էր ասում:

Սեպտեմբերի 18-ին Մալենկովի առաջարկությամբ ընտրվեց հանձնաժողով որոշման նախագիծ մշակելու համար: Նույն օրը հանձնաժողովի առաջարկությամբ պլենումի աշխատանքները մի քանի օրով ընդհատվեցին «մի շարք հատուկ հարցեր ուսումնասիրելու համար»:

Պլենումի աշխատանքը վերսկսվեց սեպտեմբերի 22-ին, երբ պետք է որոշվեր կենտկոմի 1-ին քարտուղարի բախտը: Հանձնաժողովի հանձնարարությամբ ընթերցվեց «Ամատունու նամակը, հասցեագրված հակահեղափոխական նացիոնալիստ, ժողովրդի թշնամի Ա. Իոաննիսյանին (Հովհաննիսյան), ինչպես նաև վերջինիս հայտարարությունը Ամատունու տրոցկիստական տատանումների մասին»: Թե որոնք էին այդ նամակի և հայտարարության էությունն ու բովանդակությունը, դրանց չգտնվելու պատճառով, պարզվել է առանձին մարդկանց հուշերի օգնությամբ: Ընդ որում հետաքրքիր է, որ տարիներ առաջ Ամատունին փորձել էր ծեռք բերել իրեն անհանգստացնող Աշոտ Հովհաննիսյանին ուղղված իր նամակը, սակայն դա նրան չէր հաջողվել:

Պատմությունն այսպիսին է. 1927 թ., երբ Աշոտ Հովհաննիսյանը ազատվել էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղարի պաշտոնից (նրա քաղաքականությունը 30-ական թվականների կեսերին որակավորում էին «սպեցիֆիկյան-դաշնակցական») և գտնվում էր Մոսկվայում, նամակով նրան դիմել էր Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտում սովորող Ամատունին, որը սխալ չէր համարել 1-ին քարտուղարի վարած քաղաքականությունը, ավելին, իր ընկերների հետ միասին որոշել էին դիմել ՀամԿ(բ)Կ Կենտկոմ վերանայելու Աշոտ Հովհաննիսյանի հարցը:

Աշոտ Հովհաննիսյանը պատասխանել էր գրավոր, նշելով, որ ինքը դժգոհության առիթ չունի, որ կարող է նվիրվել իր մասնագիտությանը գիտական աշխատանքին (Աշոտ Հովհաննիսյանը պատմաբան էր, Հայաստանի ապագա գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս), և Ամատունու նամակը հանձնել էր ՀամԿ(բ)Կ Կենտկոմ:

Աշոտ Հովհաննիսյանի նամակից բացի ընթերցվեց նաև նրա հայտարարությունը «Ամատունու տրոցկիստական տատանումների մասին»:

Այսպիսի անակնկալ հայտնությունը վճռում էր Ամատունու հարցը: Նրան փրկել չէր համարձակվի նույնիսկ Բերիան, որն արդեն ներկա էր պլենումում: Պլենումի 10 մասնակիցներ արտահայտվեցին «Ամատունու հարցի կապակցությամբ նրա դավաճանության, երկերեսանիության, տրոցկիզմի, լոմինաձեականության և Մուղդուսու ու այլոց հակահեղափոխական կազմակերպության մեջ ունեցած դերի մասին»:

Ամատունու հարցին նվիրված նիստի վերջում հանդես է եկել քաղբյուրոյի անդամ Միկոյանը:

Պլենումի սեպտեմբերի 23-ի երեկոյան եզրակափակիչ նիստում միաձայն ընդունվեցին հետևյալ որոշումները. Ա. Ամատունուն հանել Կենտկոմի 1-ին քարտուղարի, Ստ. Ակոպովին 2-րդ քարտուղարի պաշտոններից, երկուսին էլ հեռացնել կենտկոմի կազմից ու կուսակցությունից, նրանց մասին գործերը հանձնելով ՆԳԺԿ-ի մարմիններին:

Որպես մերկացված հակահեղափոխականներ, ժողովրդի թշնամիներ Կենտկոմի կազմից հանել Գուլոյանին (ժողկոմխորհի նախագահ), Մուղդուսուն (ՆԳ ժողկոմ), Գևորկովին (նրա տեղակալ), Կոստիկյանին:

Հեռացնել Կենտկոմի պլենումի անդամության կազմից և կուսակցությունից Արամ Դաստակյանին՝ առևտրում վնասարարության համար, Նիկոլայ Կուրսելին՝ վնասարարության համար շինարարությունում (ՍԿ - «Սովպրեն»), Հայկ Յաղուբյանին՝ վնասարարության համար ֆինանսներում:

Միկոյանը ներկայացրեց Կենտկոմի քարտուղարների մասին հարցը: Որոշվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար ընտրել Գ. Ա. Հարությունյանին, 2-րդ քարտուղար Ա. Զ. Մարգարյանին և 3-րդ քարտուղար Ա. Ս. Գալստյանին:

Միկոյանի և Մալենկովի ներկայացմամբ ընտրվեց Կենտկոմի բյուրոյի կազմ 9 մարդուց բաղկացած, բյուրոյի անդամության 2 թեկնածուներ:

Միկոյանը ներկայացրեց ժողկոմխորհի նախագահի և Կենտգործկոմի նախագահի մասին հարցը: Ժողկոմխորհի նախագահ երաշխավորվեց Մ. Ն. Դանիելյանը և Կենտգործկոմի նախագահ՝ Մ. Պ. Պապյանը: Բ. Ներսիսյանն ազատվեց Կենտգործկոմի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

Կենտկոմի մի խումբ անդամներ և բաժինների վարիչներ գործուղվեցին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի տրամադրության տակ[96]:

---

[96] ՀԱԱ, ֆ. 1, ց. 17, գ. 24, թ. 12-15: (Պլենումի զեկուցումները և ելույթները չեն սղագրվել):

Պլենումը «բոլշևիկյան ողջույնի» հեռագրով դիմեց «հայ ժողովրդի ազատարար» Ստալինին, որն օգնել էր նրա թշնամիներին բացահայտելու և մերկացնելու համար»[97]:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի նորընտիր քարտուղար Գրիգոր Հարությունյանը ուղարկվել էր Թիֆլիսից, հետևաբար պետք է ընդունել, որ նա Բերիայի թեկնածուն էր: Չնայած մեկ տարի առաջ ընդունված ԽՍՀՄ նոր սահմանադրությամբ Անդրդաշնությունը վերանում էր, բայց Անդրերկրկոմը իր ղեկավարությունը շարունակում էր: Գրիգոր Հարությունյանը իր պաշտոնում աշխատեց մինչև 1953 թ.: Միաժամանակ քանի դեռ ստալինյան ղեկավարությունը շարունակում էր բռնությունների քաղաքականությունը, Հայաստանում Գրիգոր Հարությունյանը պետք է դառնար նրա կենսագործողը:

Ի տարբերություն պլենումի որոշման ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ դարձավ Արամ Փիրուզյանը: Իսկ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 2-րդ և 3-րդ քարտուղարները շուտով ծերբակալվեցին: Սեպտեմբերյան պլենումը նոր խթան տվեց բռնությունների զարգացմանը: Դրան նպաստում էր նաև ԽՍՀՄ ներքգործժողկոմատի քննիչների խումբը, Լիտվինի ղեկավարությամբ, որը Հայաստան էր ժամանել Մալենկովի և Միկոյանի հետ միասին:

Կուսակցության ղեկավարությունը ծերբակալություններն ու գնդակահարությունները ևս սկսել էր պլանավորել, արտահայտելով այն թվական ցուցանիշներով: 1937 թ. հուլիսի 11-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն ընդունել էր համապատասխան որոշում: Հայաստանին տրվել էր 500 մարդու առաջադրանք[98]: Այն կատարելուց հետո սեպտեմբերի 22-ին Ստալինի և Եժովի անունով ուղարկվեց նոր պահանջագիր, այս անգամ Մալենկովի, Միկոյանի և Լիտվինի ստորագրությամբ: «Հայաստանն իրոք մաքրելու համար,- ասված է նրանում,- խնդրում ենք թույլատրել լրացուցիչ գնդակահարել 700 մարդ դաշնակներից և այլ հակախորհրդային տարրերից: Առաջին կատեգորիայի թույլտվությունը, տրված 500 մարդու համար, արդեն սպառվում է»: Պատասխանը չուշացավ: Հայաստանին թույլատրվեց նույնիսկ գերակատարել պլանը և գնդակահարությունների թիվը հասցնել մինչև 1500-ի[99]: Կարծես թե գործ ունեն հնգամյա պլանների կատարման և ոչ թե «ամենաթանկ կապիտալ» մարդու հետ:

Գործի էր անցել «եռյակ» կոչվածը, որն ակտիվ մասնակցություն ունեցավ դրված պլանների կատարման մեջ: «Եռյակը» գոյատևեց 1937 թ. օգոստոսի 11-ից մինչև 1938 թ. մարտի 25-ը: Այն արտադատարանային

---

[97] Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 2 (102), 2003 թ., էջ 83-85:
[98] Գրիգոր Հարությունյան, կյանքը և գործունեությունը: Երևան, 2000, էջ 38:
[99] Նույն տեղում:

մարմին էր, որի կազմում էին ներքին գործերի ժողկոմը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղարը և հանրապետության դատախազը (օգոստոսի սկզբին ձերբակալված Պետիկ Թորոսյանին փոխարինել էր Արամ Հարությունյանը): Իր գոյության ընթացքում «եռյակը» պատժի առավելագույն չափի (գնդակահարության) որոշում կայացրել է 4603 և պատժի տարբեր ժամկետների որոշում՝ 2915 մարդու նկատմամբ[100]:

«Եռյակին» հաջորդելու եկավ «հատուկ եռյակը», որոնց կազմակերպման մասին որոշում կայացրել էր ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն 1938 թ. սեպտեմբերի 15-ին: «Հատուկ եռյակի» կազմն էր Գրիգոր Հարությունյան (1-ին քարտուղար), Վիկտոր Խվորոստյան (ներքին գործերի ժողկոմ) և Արամ Հարությունյան (հանրապետության դատախազ)[101]:

Հոկտեմբերին Լիտվինը զեկուցագիր է ներկայացրել Հայաստանում իր խմբի մեկ ամսվա գործունեության մասին: Խումբը կազմակերպել էր 1183 մարդու ձերբակալությունը, այդ թվում հիշվում են 27 ղեկավար գործիչների անուններ, ինչպես նաև Երևան քաղաքի 100 պատասխանատու աշխատողներ, 936 «դաշնակցականներ»: Ձերբակալվածներից 500-ը նույն ժամանակամիջոցում դատապարտվել էին առաջին կատեգորիայով գնդակահարություն (երկրորդ կատեգորիան ենթակա էր տևական բանտարկության): Լիտվինը մանրամասն ներկայացրել է Ա. Խանջյանի և Ս. Տեր-Գաբրիելյանի «գլխավորած» «նացիոնալիստական, աջ-տրոցկիստական» կազմակերպության վնասարարական գործունեության, սփյուռքի հայ ազգային կուսակցությունների հետ ունեցած հանցավոր կապերի, հայկական դիվիզիայում քայքայիչ աշխատանքի և այլ չեղած, հորինած հանցագործությունների մասին: Չէին մոռացվել նաև պետության ու կուսակցության ղեկավարներին ահաբեկող խմբերը և այլն[102]:

Մուղդուսու ղեկավարությամբ «եռյակը» 1937 թ. օգոստոսի 11 – - սեպտեմբերի 18 ժամանակամիջոցում 354 մարդուց գնդակահարության է դատապարտել 304-ին, մյուսները ստացել էին այլ պատիժներ[103]:

Հայաստանից վերադառնալուց հետո Միկոյանը բնականաբար Ստալինին պետք է զեկուցեր իր առաքելության արդյունքների մասին: Դրան նա անդրադարձել է նոյեմբերի 9-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Գր. Հարությունյանին ուղարկած գրությամբ, միաժամանակ ցուցումներ տալով հետագա գործունեության վերաբերյալ: «Ընկ. Ստալինը,- գրել է Մի-

---

[100] ՀԱԱ, ֆ. 571, ց. 6, գ. 94, թ. 21:
[101] Գրիգոր Հարությունյան. կյանքը և գործունեությունը, էջ 42:
[102] Ա. Մանուկյան, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., էջ 143-144:
[103] Նույն տեղում, էջ 174:

կոյանը,- ուշադրություն դարձրեց Հայաստանում բացահայտված վնասարարության փաստերի ողջ կարևորության վրա: Նրա վրա առավել մեծ տպավորություն է գործել վնասարարների բանդայի մասնակիցների ցուցմունքների ամփոփագիրը՝ Հայաստանի արդյունաբերության ու գյուղատնտեսության բնագավառներում վնասարարության ձևերի ու բնույթի մասին ... Դրա համար Ձեզ հիշեցնում եմ, որպեսզի Դուք, օգտագործելով Հայաստանի կոմկուսի Կենտկոմում և Ժողկոմխորհում, ինչպես նաև ՆԳԺԿ-ում եղած բոլոր նյութերը, կազմեք Հայաստանի արդյունաբերության ու գյուղատնտեսության վնասարարության վերացման ծրագիր: Բարի եղեք ինձ հաղորդել, թե ինչ և ինչպես եք Դուք մտածել այդ անել: Լավ կլիներ չձգձգել հարցը: Այն հետաձգել չի կարելի»[104]:

«Վնասարարների» գործերի քննությունը և դատավարությունը իրենց ուշացնել չտվեցին, արագորեն գտնվեցին «հանցագործների» խմբերը: Դրանք նպատակահարմար էր գտնել գյուղատնտեսության բնագավառում: Կոլեկտիվացման պատճառով գյուղատնտեսությունը, մասնավորապես անասնապահությունը հետադիմել էին, բնակչության պարենային մատակարարումը վատացել էր: Այժմ կարելի էր ժողովրդին ցույց տալ, թե ովքեր են դրա պատճառը՝ հանձինս «վնասարարների» ու «ժողովրդի թշնամիների»: Մանավանդ հենց Ստալինն էր սեպտեմբերի 8-ի նամակում մատնացույց արել տնտեսության վրա. «Հայաստանում ինչպես տնտեսական, այնպես էլ կուսակցական ու մշակութային գործերը գտնվում են վատթար վիճակում: Գյուղատնտեսությունը քայքայված է, արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը կանգ է առել»:

Ընդ որում դեռևս պլենումի օրերին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշումով հանձնաժողով էր մեկնել Ստեփանավանի շրջան անասնապահության բնագավառի վնասարարության փաստերը հետաքննելու և վերը հիշված բաց դատավարություն կազմակերպելու համար: Հանձնաժողովը կանգ առավ Լոռու անասնապահական սովխոզի «վնասարարների» վրա: հարվածային կարգով ավարտվեց նախաքննությունը և հոկտեմբերի վերջին Ստեփանավանում սկսվեց «ՀՍԽՀ հողժողկոմատի Լոռու ազնվացեղ անասունների սովխոզի հակահեղափոխական կազմակերպության» բաց դատավարությունը: Մեղադրվում էին սովխոզի 8 ղեկավար աշխատողներ: Նրանցից 3-ը դատապարտվեցին գնդակահարության, մյուսները 10-25 տարվա ազատազրկման[105]:

---

[104] Գրիգոր Հարությունյան. կյանքը և գործունեությունը, էջ 39:
[105] ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 91, թ. 8-12: Ա. Վիրաբյան, 1937. դատախաղեր: Տես «Երեկոյան Երևան», 7 փետրվարի 1989 թ.:

Երկրորդ նման դատավարությունը կայացավ դեկտեմբերին: Մեղադրվում էին հողժողկոմատի 8 ղեկավար աշխատողներ՝ նախկին հողժողկոմ Վարդան Մամիկոնյանը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի գյուղատնտեսության բաժնի նախկին վարիչ Միքայել Ենգիբարյանը, ժողկոմատի վարչությունների պետեր ու բաժինների վարիչներ: Նրանց մեղադրում էին հողժողկոմատի համակարգում ազգայնական, աջ-տրոցկիստական կազմակերպություն ստեղծելու, գյուղատնտեսության մեջ վնասարարական աշխատանք տանելու համար: Բոլորին դատապարտեցին պատժի առավելագույն չափին՝ գնդակահարության[106]:

Հանրապետության դատախազը, որը տվյալ դատավարությունում պետական մեղադրողն էր, շտապ ԽՍՀՄ դատախազ Վիշինսկուն հայտնեց դատավարության արդյունքների մասին: Այդ ստոր ավազակախումբը, ասված է գրության մեջ, մի շարք տարիների ընթացքում լայն քայքայիչ աշխատանք է տարել հանրապետության գյուղատնտեսության բոլոր բնագավառներում, նպատակ ունենալով պայթեցնել երկրի տնտեսությունը, վարկաբեկել կուսակցության ու կառավարության միջոցառումները, որպեսզի դժգոհություն առաջացնի աշխատավոր զանգվածների շրջանում, ելնելով հակահեղափոխական կազմակերպության այն դիրքորոշումից, որ «Հայկական ԽՍՀ անջատվի Խորհրդային Միությունից և ստեղծվի բուրժուական-կապիտալիստական պետություն՝ կապիտալիստական տերություններից մեկի հովանավորության տակ»[107]: ԽՍՀՄ Գերագույն դատարանը հաստատեց Հայաստանի գերագույն դատարանի հատուկ կոլեգիայի որոշումը[108]:

Հանրապետության դատախազ Արամ Հարությունյանը տվյալ դատական գործի հորինողն էր, դիմել էր ստոր միջոցի, որպեսզի մեղադրյալները դատավարության ընթացքում ընդունեն իրենց վերագրված մեղադրանքները: Այդ նպատակով նրանց հավատացրել էին, թե կարևոր չէ դատարանի ընդունելիք որոշումը, միևնույն է, բոլոր դեպքերում հատուկ առաջադրանքով նրանց ծառայության են ուղարկելու արտասահման: Այս մասին՝ վկայել են բանտախցերում գնդակահարության դատապարտվածների հետ հանդիպած ընդհանուր բախտակիցներ, ում հաջողվել էր կենդանի մնալ մինչև կեղծ գործի վերանայումը՝ 1955 թ.: Ընդ որում Հայկական ԽՍՀ դատախազությունը նույն թվականին դիմել էր ԽՍՀՄ դատախազությանը պատասխանատվության ենթարկել նախկին դատախազ Արամ Հարությունյանին և այն քննիչներին, ովքեր թույլ էին տվել կեղծարարություն

---

[106] Նույն տեղում:
[107] ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 102, թ. 1-3:
[108] Նույն տեղում, թ. 4:

և այլ ապօրինի արարքներ ինչպես տվյալ, այնպես էլ բազմաթիվ այլ «գործերի» կապակցությամբ[109]:

Գյուղատնտեսության բնագավառի բազմաթիվ «վնասարարներ» բացահայտվեցին նաև մի շարք շրջաններում ու հիմնարկություններում: Քննիչները ծեծի ու կտտանքների միջոցով «մեղադրանքներ» էին կորզել նախկին հողժողկոմ (նաև արհեստական կաուչուկի գործարանի շինարարության ղեկավար) Նիկոլայ Գումեդինից, որի ցուցմունքները օգտագործվեցին ինչպես հողժողկոմատի, այնպես էլ շրջանների «վնասարարներին» բացահայտելու և մերկացնելու գործերում:

Լոռու սովխոզի գործը միակը չէր Ստեփանավանի շրջանում: Սովխոզից անմիջապես հետո կազմակերպվեց շրջանի ղեկավար աշխատողների դատական գործը: Մեղադրվում էին շրջանի կուսկոմիտեի քարտուղարը, շրջգործկոմի նախագահը, Ղարաղալայի սովխոզի (վերացված) դիրեկտորը և ուրիշներ[110]: Լավ է, որ այդ դեպքում գոնե գնդակահարության որոշում չկայացվեց, ինչը, դժբախտաբար, չի կարելի ասել մյուս շրջանների համար: Հայաստանի գերագույն դատարանի հատուկ կոլեգիան պատժի առավելագույն չափի մասին որոշումներ կայացրեց. Գորիսի շրջանում մեկ, Սիսիանի շրջանում 3, Հայմիստրեստում 2 մարդու (շրջանային ղեկավարներ) նկատմամբ: Մյուսների համար սահմանվել էին այլ պատիժներ: 1938 թ. մայիսին գնդակահարության որոշում կայացվեց 5 «խմբապետ-մաուզերիստների» նկատմամբ, ովքեր մեղադրվում էին 1920 թ. մայիսյան ապստամբության ժամանակ Կարսում Ղուկաս Ղուկասյանի և 8 այլ բոլշևիկների սպանության համար[111]: Հայտնագործվեցին նաև Ալեքսանդրապոլի ապստամբության 3 ղեկավարներին (Փանյան, Սևոյան, Պրիբիլսկի) գնդակահարողները:

Ամասիայի շրջանի դատախազը հանրապետության դատախազին հայտնում էր, որ շրջանի կուսկոմիտեի քարտուղար Ընձակ Տեր-Վահանյանի մերկացումից հետո շրջանի դատախազության և միլիցիայի կողմից ձերբակալվել է 45 մարդ «մուսավաթական, դաշնակցական, տրոցկիստական խմբակների անդամներ»[112]: Ամասիայի շրջանի դրության մասին լրացուցիչ տվյալներով զեկուցագիր ուղարկվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմ: Նշվում էր, որ կուսակցության շրջկոմը զգալի աշխատանք է կատարել կուսակցական կազմակերպությունը մաքրելու դաշնակցական, հակահեղափոխական, տրոցկիստական տարրերից և, ասես ապահովագրության համար, ավե-

---

[109] Նույն տեղում, ց. 5, գ. 167, թ. 27, 30, 43-45, 79, 89-105, 120-125, 150:
[110] Նույն տեղում, ց. 1, գ. 101, թ. 8-10, ց. 5, գ. 1531, թ. 1-18, 29-31:
[111] Նույն տեղում, գ. 91, թ. 8-12:
[112] Նույն տեղում, գ. 92, թ. 63-68:

լացնում էր, թե այդ տարրերի նկատմամբ բռնաճնշումների գործադրումը անբավարար է»[113]:

«Վնասարարության» դեմ պայքարի միջոցառումների մասին է Կենտկոմի 1-ին քարտուղար Ամատունու կողմից Ստալինին ներկայացված զեկուցագրերից մեկը (այն ամսաթիվ չունի, կարող է լինել 1937 թ.): Թվարկվում են գյուղատնտեսության, արդյունաբերության, գաղափարախոսության և կադրերի գծով Հայաստանում «վնասարարության» հետևանքների վերացման ուղղությամբ իր ղեկավարությամբ կազմակերպված պայքարի ու միջոցառումների արդյունքները: Ամատունին ցեխ է շպրտում հանրապետության բոլոր նախկին ղեկավարների (Լուկաշին, Աշոտ Հովհաննիսյան, Հայկ Հովսեփյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, Աղասի Խանջյան) հասցեին, մեղադրելով նրանց «սպեցիֆիզմի» ու ազգային թեքման մեջ: Քննադատում է Ալ. Մյասնիկյանին, թե նա պաշտպանել է «սպեցիֆիկ» ղեկավարներին, նաև Հայկազ Կոստանյանին, որը պայքար չի կազմակերպել «հայկական նացիոնալիզմի» դեմ:

Խանջյանի մերկացումից հետո անցած 10 ամիսների ընթացքում, հայտնում է Ամատունին, Հայաստանում ձերբակալվել է 1365 մարդ, որից 900-ը դաշնակ-տրոցկիստներ: 24 մարդ հեռացվել էր Կենտկոմի կազմից, որից 13-ը ձերբակալվել էին: Կասկած չկա, շարունակում է Ամատունին, որ «Հայաստանում դեռևս կան թշնամական բներ, որոնց հարկավոր է արմատախիլ անել»[114]: Սակայն այդ նրան չթողեցին իրականացնել և շուտով վրա հասավ իր բանտարկության հերթը:

«Հայկական ԽՍՀ դատախազության մարմինների գործունեությունը,- ամփոփում էր դատախազությունը 1937 թ. իր աշխատանքները,- ընթացել է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի փետրվար-մարտյան պլենումում կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի պատմական ցուցումների, ինչպես նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի, մասնակցությամբ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Միկոյանի, որոշման կատարման նշանաբանով՝ արմատախիլ անելու համար ժողովրդի թշնամիներին, տրոցկիստ-բուխարինականներին, բուրժուական նացիոնալիստներին, դաշնակցական գործակալ-լրտեսներին, դիվերսանտներին, ստոր մարդասպաններին ու հայրենիքի դավաճաններին, որոնք բուն էին դրել ՀԿ(բ)Կ Կենտկոմի մարմիններում, ժողկոմխորհում, ներքգործժողկոմատում, ինչպես նաև Հայաստանի այլ մարմիններում ու կուսկազմակերպություններում»[115]:

---

[113] Նույն տեղում, թ. 61-62:
[114] «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 2 (102) 2003, էջ 75-79:
[115] ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 91, թ. 72-92 (անստորագիր օրինակ):

1937 թ. համար արձանագրվել է դատապարտվածների առավելագույն թիվ՝ 4951 մարդ, որը կազմում է 1930-1938 թթ. բոլոր դատապարտվածների շուրջ մեկ երրորդը: 1937 թ. դատապարտվածներից 3140-ի համար (67,0 տոկոս) կայացվել է գնդակահարության որոշում[116]: Շարքից հանվեց, նաև կյանքից զրկվեց հանրապետական ու շրջանային կադրերի մեծ մասը: Նրանց փոխարինելու եկան նոր, համեմատաբար երիտասարդ կադրեր, ովքեր հիմնականում կրթություն ու դաստիարակություն էին տացել 1920-1930-ական թվականներին, զինվել ստալինյան վարչակարգի պայմաններում հլու-հնազանդ ծառայելու ոգով, այսինքն նվիրվել Ստալինի անձնական իշխանության ամրապնդման գործին:

1937 թ. տեղի ունեցավ նաև վարչական կարգով արտաքսում հանրապետության սահմանային շրջաններից, ընտանիքների կազմով: Նրանց հեռացումը կատարվել է նախապես պատրաստված ցուցակներով, առանց քննության ու դատի: Արտաքսվածների քանակի վերաբերյալ տվյալներ չունենք: Հասկանալի է, որ այդ միջոցառումն իրականացվել է երկրի անվտանգության շահերի նպատակով: Նման ծեռնարկում կատարվել է նաև 1941 թ., պատերազմական վտանգի հետ կապված:

Այն ինչ ամբողջ երկրում տեղի ունեցավ 1937 թ. Ալեքսանդր Յակովլևն անվանել է «բոլշևիկների կատաղության» նոր նոպայի սկիզբ[117]:

1938 թ. սկսվեց կուսակցության բարձր մարմին քաղբյուրոյի հունվարի 31-ի նոր որոշումով «Հակախորհրդային տարրերի մասին», որով նոր հանձնարարություններ էին իջեցվում հանրապետություններին ու մարզերին: Հայաստանի պլանն էր 1000 մարդ առաջին կատեգորիայով (գնդակահարություն) և ևս 1000 մարդ երկրորդ կատեգորիայով (բանտ և աքսոր)[118]:

Առաջինը խմբովին, 38 մարդ, ծերբակալվեցին նախկին էսեռներ (սոցիալիստ-հեղափոխականներ): Նրանց մեղադրում էին այն բանի համար, որ «մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը եղել են էսեռների կուսակցության անդամներ և հետագայում, մինչև ծերբակալվելը, վարել են ակտիվ թշնամական կազմակերպված աշխատանք»[119]: Գր. Հարությունյանը շտապեց Ստալինին հայտնել էսեռների վտանգի կանխման մասին, որոնք անհրաժեշտ էին համարել նաև «մեծ առաջնորդի»

---

[116] Ա. Մանուկյան, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., էջ 149:

[117] Ал. Яковлев. Крестосев, с. 114.

[118] Գրիգոր Հարությունյան. կյանքը և գործունեությունը, էջ 41:

[119] Նույն տեղում, էջ 41: Ա. Մանուկյան, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., էջ 148:

ահաբեկումը: Նրանց թվում էր նաև նշանավոր իրավաբան Գրիգոր Չուբարը: Նա եղել է Խորհրդային Հայաստանի առաջին սահմանադրության հեղինակը, դասախոսել է Երևանի պետական համալսարանում, աշխատել հանրապետության բարձրագույն իրավապահ մարմիններում: 1940 թ. դատապարտվել էր 8 տարվա ազատազրկման, 1949 թ. նորից է աքսորվել[120]:

Հայաստանում գտնվեցին գոյություն չունեցած «Աշխատավորական գյուղացիական կուսակցության» (ԱԳԿ) անդամներ (կուսակցությունը հորինվել էր Ռուսաստանում 1930-ական թվականների սկզբին): 1938 թ. փետրվարին հանրապետության ՆԳԺԿ եռյակը գնդակահարության էր դատապարտել Կիրովականի (Վանաձորի) շրջանի Ֆիոլետովո գյուղի 2 բնակիչների, որպես «պոստոյաննիների» աղանդի ղեկավարների և ԱԳԿ անդամների, որոնք մղել էին ակտիվ հակախորհրդային քարոզչություն, պայքարել կոլտնտեսությունների դեմ[121]:

Ավելի վաղ, 1937 թ. սկզբին, հանրապետության դատախազ Պ. Թորոսյանը Վիշինսկուն տեղեկացրել է Ստեփանավանի շրջանի Սարատովկա, Կալինինո և Ղզլղալա գյուղերի 14 գյուղացիների ծերբակալության ու նախաքննության արդյունքների մասին, որոնք գյուղերում կազմակերպել էին ընդհատակյա խմբեր, իրենց անվանել «Աշխատավորական գյուղացիական կուսակցություն», խնդիր ունենալով խորհրդային իշխանության դեմ պայքարը և կոլտնտեսությունների քայքայումը[122]:

1938 թ. հուլիսի 18-20-ը Երևանում տեղի ունեցավ ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի արտագնա նիստ, Վ. Ուլրիխի նախագահությամբ: Նիստը որոշումներ կայացրեց առավելապես հանրապետության կուսակցական, պետական, տնտեսական տասնյակ ղեկավար կադրերի մասին: Նրանց թվում էին ՀԿ(բ)Կ կենտկոմի անդամներ, ժողկոմներ, շրջկոմների քարտուղարներ, վարչությունների պետեր, բաժինների վարիչներ և ուրիշներ: Բերենք որոշ հաշվարկային տվյալներ միայն ՀԿ(բ)Կ - Կենտկոմի կազմի վերաբերյալ: Կուսակցության 9-րդ (1934 թ.) և 10-րդ (1937 թ.) համագումարներում ընտրված Կենտկոմի 2 կազմերի 172 անդամ-թեկնածուներից 11-րդ համագումարի (1938 թ.) ընտրած Կենտկոմում (անդամ, թեկնածու, վերստուգիչ հանձնաժողովի անդամ) կար ընդամենը 16 մարդ: Մյուսներից միայն 42-ն էին խուսափել կամ բախտ ունեցել մնալ

---

[120] Նույն տեղում, էջ 165:
[121] ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ. 419, թ. 13-14 (նրանց ռեաբիլիտացիայի մասին ՀԽՍՀ Գերագույն դատարանի դատական կոլեգիայի 1955 թ. որոշումը):
[122] Նույն տեղում, ց. 1, գ. 92, թ. 12-13:

ազատության մեջ: Իսկ 105 մարդ գնդակահարվել կամ աքսորվել էր[123]: Նրանց մեծ մասի ճակատագիրը որոշել էր հիշյալ զինվորական կոլեգիան: Նրանց թվում կային, իհարկե, նաև պատժիչ մարմինների ղեկավարներ, ովքեր մինչև այդ եղել էին դահճի դերում, իսկ այժմ դարձան զոհեր:

Բռնաճնշման ենթարկվածներից 74-ը կամ 71 տոկոսն ուներ նախախորհրդային ժամանակաշրջանի ստաժ[124], այսինքն վերացվում էր կուսակցությանը ծառայություն մատուցած սերունդը, որի հետագա գոյությունը անընդունելի էր ստալինյան կադրային քաղաքականության տեսանկյունից:

1938 թ. գնդակահարվածների թվում էր նաև Իջևանի շրջանի անասնաբույժը, որը ենթադրել է տալիս, որ «վնասարարների» որսը դեռևս շարունակվում էր:

1938 թ. շարունակվում էր մեծանուն գիտնական-լեզվաբան Հրաչյա Աճառյանի հարցաքննությունը, որն ուղեկցվում էր նրա ուժեղ ծեծով: Այդ մասին նա պատմել է նույն բանտախցում գտնվող համալսարանի դասախոս ընկերներին՝ Հայկ Գյուլիքևխյանին, Աշխարհբեկ Քալանթարին և Զաքար Բաշինջաղյանին: 1939 թ. մարտի 7-ին կայացավ Հրաչյա Աճառյանի դատավարությունը: Նրան մեղադրում էին համալսարանում դաշնակցական գաղտնի կազմակերպության անդամակցության և այլ անհիմն հանցանքների մեջ, ենթարկելով 6 տարվա ազատազրկման: ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիան, լսելով Հրաչյա Աճառյանի բեկման բողոքը, որոշեց նրա գործը վերադարձնել վերաքննությանը: Դրա համար նպաստավոր եզրկացություն էր ներկայացրել գլխավոր զինվորական դատախազի օգնական Գյուլեցյանը: Նույն թվականի վերջին Աճառյանը բանտարկությունից ազատվեց ժամկետից շուտ[125]:

Մեծ կորուստներ կրեցին հանրապետության հանրակրթական դպրոցները: Շատ ուսուցիչներ կամ ձերբակալվեցին կամ հեռացվեցին աշխատանքից: Կուսակցության 11-րդ համագումարում (1938 թ. հունիս) տվյալներ են հրապարակվել հաշվետու ժամանակաշրջանում (մեկ տարում) 854 ուսուցչի աշխատանքից ազատելու մասին: Ընդ որում տարվա առաջին կեսին նրանց մեծ մասը վերադարձվեց դպրոց[126]:

---

[123] Ա. Վիրաբյան, Նրանց ճակատագիրը: Տես «Երեկոյան Երևան», 19 օգոստոսի 1988 թ.:
[124] Նույն տեղում:
[125] Գառնիկ Ստեփանյան, Օրհնված ծառը: Տես «Գրական թերթ», 7 հոկտեմբերի 1988 թ.:
[126] Գր. Հարությունյան, ՀԿ(բ)Կ կենտկոմի հաշվետվությունը ՀԿ(բ)Կ 11-րդ համագումարին: Երևան, 1938, էջ 100:

Շրջաններից մեկի ժողկրթբաժնի վարիչը առաջարկել էր դպրոցներից մեկի քիմիայի և օտար լեզվի ուսուցչին հեռացնել աշխատանքից, քանի որ նա 1921 թ., որպես նախկին սպա, աքսորված էր եղել Ռյազան: Ուսուցիչն ուներ 23 տարվա աշխատանքային ստաժ, ավարտել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և Յուրևի համալսարանը[127]:

Դպրոցներից մեկի կուսկազմակերպիչը տվել է այսպիսի բնութագիր. ուսուցիչը հանդիպումներ ունի հակահեղափոխական դաշնակցականի աղջկա հետ, դժգոհ է կոմունիստական կուսակցությունից և խորհրդային իշխանությունից: «Այդ ամենը անհամատեղելի է կարմիր ուսուցչի հետ»[128]: Ապարանի շրջանի դպրոցի ուսուցիչը կուսշրջկոմին տեղեկացրել էր դպրոցի դիրեկտորի անընդունելի հայացքների մասին, նաև այն, որ մի անգամ նրա երգի մեջ որսացել է այն խոսքերը, թե «երանի նրան ով իր ազգի ազատության կզոհվի»[129]: Բասարգեչարի շրջանում դպրոցի դիրեկտորը 9-րդ դասարանի 3 աշակերտների հրամանով հեռացրել էր դպրոցից անցյալ ուստարում «խասփուշական-դաշնամոլիստական խմբակի» անդամ լինելու պատճառով[130]: Շրջանի ժողկրթբաժվարը աշխատանքից հեռացրել էր ուսուցչուհուն, որը ծագում էր «կուլակային վաշխառուական ընտանիքից», ամուսինը հեռացվել էր կոմերիտմիությունից և դպրոցից որպես տրոցկիստի, իսկ կինը «ստացած աշխատավարձով պահում է իր սիրեցյալ ամուսնուն ու երախային ամենայն պարտաճանաչությամբ»[131]:

Դպրոցական մի այլ տխուր փաստի մասին ևս, երբ բանտ նետվեցին նաև աշակերտներ: Դեպքը տեղի է ունեցել Ստեփանավանի շրջանի Շահնազար գյուղում: Դպրոցի ուսմասվարը չի հանդուրժել, որ իրեն իջեցրել էին դիրեկտորի պաշտոնից: Վրեժով լցված նա հակախորհրդային բովանդակությամբ թռուցիկներ է բազմացրել և ցրել տարբեր տեղ, ապա հայտնել միլիցիայի մարմիններին՝ իբրև թե դիրեկտորի ղեկավարությամբ դպրոցում գործող կազմակերպության մասին: Սույն կեղծ գործով եռյակը 1937 թ. նոյեմբերի 16-ին որոշում կայացրեց Շահնազար գյուղի 13 մարդուց բաղկացած հակախորհրդային կազմակերպության մասին, որը «փորձել էր պայքար մղել կոմկուսի և խորհրդային իշխանության դեմ և տարածել հակախորհրդային թռուցիկներ»: Դպրոցի դիրեկտորը, մեկ ուսուցիչ և գյուղսպառկոոպի նախագահը գնդակահարվեցին, 10 տարով ազատազրկվեցին (աշխատանքային ուղղիչ ճամբար) մեկ ուսուցիչ և 10-րդ դասարանի 2

---

[127] ՀԱԱ, ֆ. 122, ց. 3, գ. 106, թ. 23:
[128] Նույն տեղում, թ. 89:
[129] Նույն տեղում, թ. 68:
[130] Նույն տեղում, թ. 142:
[131] Նույն տեղում, գ. 108, թ. 48:

աշակերտներ և 8 տարով 2 կոլտնտեսական և 7-րդ, 9-րդ և 10-րդ դասարանների 5 աշակերտներ: 1959 թ. սույն գործը վերանայվել է հանրապետության Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիայի կողմից: Եռյակի որոշումը բեկանվել է, գործը կարճվել հանցակազմի ապացույցների բացակայության պատճառով[132]:

Սույն օրինակները բերվեցին ցույց տալու համար, թե ինչպիսի բարոյական ու հոգեբանական պայմաններում էր գործում դպրոցը, ինչպես էին խեղվել մարդկային հոգիները:

1938 թ. համար Մոսկվայից իջեցված առաջադրանքը կատարվեց ամենայն ճշտությամբ և անպայման գերազանցումով: 2000-ի փոխարեն ձերբակալվեց 3153 մարդ, այդ թվում 1390 մարդ (կամ 44,0 տոկոսը) ենթարկվեց գնդակահարության, մյուսները 3-10 տարի ազատազրկման:

1937-1938 թթ. 2 տարում բռնաճնշվածների թիվը 8084 է, որը 1930-1938 թթ. տվյալների կեսից զգալիորեն ավելի է:

Հալածանքների էր ենթարկվում հայոց եկեղեցին: Այդ հարցին, սակայն, կանդրադառնանք առանձին, եկեղեցու կազմալուծման հիմնահարցի հետ: Այստեղ նշենք միայն, որ կրոնի ու եկեղեցու դեմ պայքարը և բռնությունը պետական քաղաքականության բաղկացուցիչ մասն էր:

1938 թ. կեսերից նկատվում է բռնությունների թափը նվազեցնելու որոշակի միտում: Այդ մասին վկայում էին հետևյալ միջոցառումները: ԽՍՀՄ դատախազի մայիսի 3-ի հրամանով, հանրապետական դատախազներին ժամանակավորապես արգելվեց, առանց միութենական դատախազի, գործեր հարուցել հակախորհրդային հանցագործություններով[133]: Իսկ 1937 թ. գործունեության կապակցությամբ ԽՍՀՄ դատախազության հրամանում նշվում էր, որ դատախազության քննչական մարմինները առանց բավարար հիմքի թույլ էին տվել քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքեր: Միաժամանակ, ըստ նույն փաստաթղթի, բացահայտ թողտվության ու թաքցնելու վերաբերմունք էր ցուցաբերվել «հակահեղափոխական հանցագործությունների, մասնավորապես տրոցկիստական-զինովևական, բուխարինական և այլ բանդիտական խմբերի գործերի կապակցությամբ»[134]:

Բռնությունների գործընթացի հետ կապված որոշ հարցեր պարզորոշ դարձան իշխանության բարձրագույն մարմինների 1938 թ. վերջերին կայացրած որոշումներում:

---

[132] Նույն տեղում, ֆ. 571, ց. 5, գ. 885, թ. 40-43:
[133] Ա. Մանուկյան, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., էջ 151-152:
[134] Նույն տեղում, էջ 151:

1938 թ. նոյեմբերի 18-ին Համկ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ ժողկոմխորհը Ստալինի և Մոլոտովի ստորագրությամբ ընդունեցին խիստ գաղտնի որոշում «Ձերբակալությունների, դատախազական վերահսկողության ու հետաքննությունը վարելու մասին»: Կուսակցությունը և կառավարությունը խոստովանում էին, որ 1937-1938 թթ. տեղի են ունեցել զանգվածային բռնություններ, երբ պարզունակ հետաքննության ու դատավարության ընթացքը ներքգործժողկոմատի ու դատախազության մարմինների մոտ հանգեցրել է խոշոր թերությունների ու խեղաթյուրումների:

Որոշումը դրա պատճառը համարում էր ՆԳԺԿ մարմիններ թափանցած ժողովրդի թշնամիներին ու արտասահմանյան հետախուզությունների գործակալներին, որոնք, ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում, շարունակելով քայքայիչ աշխատանքը, խծճել են քննչական ու գործակալական գործը, կանխամտածված խեղաթյուրել խորհրդային օրենքները, կատարել զանգվածային ու անհիմն ձերբակալություններ: Որոշումն արգելեց զանգվածային ձերբակալությունները և աքսորը, դրանք թույլատրելով միայն դատախազի թույլտվությամբ ու դատարանի վճռով: Վերացվում էին արտադատարանային մարմինները[135]:

Դեկտեմբերի 1-ին հրապարակվեց «Ձերբակալությունների կարգի մասին» որոշումը, որը վերաբերում էր եռյակների վերացմանը[136]:

Երկրի ստալինյան ղեկավարությունը ինչպես սանձազերծել էր 1936-1938 թթ. ապօրինություններն ու սպանդը, այնպես էլ 1938 թ. երկրորդ կեսին պահանջեց չափավորել դրանք: Միայն թե սանձազերծման մեղքը հեռացնում էր կամ փորձում էր հեռացնել իրենից և բարդել«ժողովրդի թշնամիների» վրա: Այն ժամանակ թերևս գտնվեին միամիտներ ու թերահավատներ կամ իրական դրությունից անտեղյակ մարդիկ, ովքեր կհավատային «թշնամու» մասին կեղծարարությանը: Այսօր, սակայն, պարզ է, թե ովքեր և ինչպես արհավիրքի ենթարկվեցին խորհրդային երկրի ժողովուրդներին:

Այուսը, որ բխում է հիշյալ որոշումներից, այն է, որ հերթը հասել էր ներքգործժողկոմատի ու դատախազության համակարգերին, ուր թափանցել էին զանգվածային բռնությունների անմիջական իրականացնողները:

1937-1938 թթ. ընթացքում ձերբակալվեցին իրավապահ մարմինների (դատարան, դատախազություն, ներքգործժողկոմատ) 26 աշխատողներ: Նրանցից ոմանք, որ դատապարտվեցին միանգամայն հիմնավոր կերպով, աչքի էին ընկել իրենց առավել դաժանությամբ մեղադրյալների քննության գործում, մեղադրանքների կեղծարարության և այլ օրինա-

---

[135] ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 18, թ. 2:
[136] Նույն տեղում, թ. 11:

խախտ գործողություններում: Ներքգործժողկոմ (նաև պետական անվտանգության վարչության պետ) Խաչիկ Մուղդուսու բանտարկության մասին արդեն նշվել է: Նրան հաջորդող Արամ Հարությունյանը խուսափեց ձերբակալությունից, չնայած բազմաթիվ հիմնավոր պահանջներին: Արժանի պատիժ ստացան ժողկոմի տեղակալ Ի. Գևորկովը, քննիչներ Ե. Նիկողոսյանը, Գ. Ռուդնիկը, Խ. Բաբայանը, Բ. Կոստիկյանը և ուրիշներ[137]:

1939-1940 թթ. կտրուկ նվազեց ձերբակալությունների թիվը: 1939 թ. այն կազմում է 765 մարդ: Մեղմացել էին նաև պատժաչափերը: Գնդակահարության էր դատապարտվել ընդամենը 5 մարդ, 10-25 տարվա՝ 60 մարդ: Կեսից ավելին ազատվել կամ գործերը կարճվել էին[138]: Ընդ որում կուսակցական մարմիններում քննադատական խոսքեր հնչեցին հանրապետության Գերագույն դատարանի հասցեին քաղաքական գործերի կապակցությամբ մեղմ որոշումներ ընդունելու համար. ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի 1940 թ. օգոստոսի 23-ի որոշման համաձայն, ստեղծվեց հանձնաժողով տվյալ հարցը ուսումնասիրելու նպատակով: Ըստ հանձնաժողովի զեկուցման 1939 թ. և 1940 թ. առաջին կեսին հակահեղափոխական պրոպագանդայի և այդպիսի կազմակերպություններին անդամակցելու մեղադրանքով (հոդվածներ 67 և 68) Գերագույն դատարանը լսել էր 406 մարդու գործ, որոնցից միայն 265-ն էին դատապարտվել տարբեր ժամկետներով:

Հանձնաժողովն արձանագրեց, որ կուսակցական պլենումում արված քննադատությունը համապատասխանում է իրականությանը, և որ խոսք կարող է գնալ ոչ թե պատժաչափեր որոշելիս առանձին սխալների մասին, այլ այնպիսի գիծ վարելու մասին, որն ըստ էության չէր համապատասխանում հակահեղափոխական հանցագործությունների դեմ պայքարի քաղաքականությանը: Ավելացնենք, որ հանձնաժողովի կազմում էին ժողկոմխորհի նախագահի ու հանրապետության դատախազի տեղակալները և արդարադատության ժողկոմը: Ինչպես նրանց, այնպես էլ մեղմ վճիռների կուսակցական քննադատների համար անսովոր էր, որ որևէ բարձր իշխանավորի հասցեին դառը խոսք ասող մարդը անմեղ ճանաչվեր, այն դեպքում, երբ նախորդ տարիներին դրա համար կկայացվեր գնդակահարության կամ 10 տարվա ազատազրկման որոշում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջին բազմամարդ խմբական գործը վերաբերում է 1940 թ. Երևանի պետական համալսարանում ձևավորված գաղտնի կազմակերպությանը: Պատմության ֆակուլտետի մի խումբ ուսանողներ (Ռոլանդ Լիսիցյան, Ռաֆայել Ավագյան, Պարետ Վի-

---

[137] Ա. Մանուկյան, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., էջ 154-181:
[138] Նույն տեղում, էջ 152:

ռաբյան, Շավարշ Սմբատյան) ինքնուրույն կամ միասին մտորում և մտքերի փոխանակություն էին ունենում ուսումնական հարցերի շուրջը, որոնցում նրանք հակասություն էին տեսնում տեսության ու իրականության միջև: Այդպիսին էր ազգային հարցը, որը ԽՍՀՄ-ում համարվում էր լուծված: Սակայն այդ ինչպես է, մտածում էին նրանք, որ հայկական Լեռնային Ղարաբաղը, և տնտեսապես ու ֆիզիկապես Հայաստանի հետ կապված Նախիջևանը գտնվում են Ադրբեջանի կազմում: Եվ ընկերները որոշում են այդ հարցի առթիվ նամակ գրել և ուղարկել Ստալինին, բայց շուտով հրաժարվում են: Խմբում առաջատար դեր կատարող Ռ. Լիսիցյանը խմբի նպատակների համար կատարել է «Դրությունը ԽՍՀՄ-ում» համառոտ շարադրանք, որը դարձյալ խոսքի և գործողության հակասության մասին դատողությունների օրինակ է: Ուժեղ քննադատված է նաև «ստալինյան սահմանադրությունը»:

հետագայում խմբին միացան նոր համակիրներ: 1941 թ. կեսերին, մատնության օգնությամբ, խումբը ձերբակալվեց: Ապա ձերբակալվածների թիվը հասավ 30-ի, որոնց զգալի մասը խմբի անդամների հետ ունեցել էին պատահական առնչություն կամ փոխանակել մեկ-երկու խոսք: Նախաքննությունը գաղտնի կազմակերպության գործը բաժանեց երկու մասի, մեղադրանքների վրա ավելացնելով նաև Հայրենական պատերազմի հետ կապված մեղքեր: ԽՍՀՄ ՆԳԺԿ հատուկ խորհրդակցությունը կայացրեց որոշում. 24 տղաներից 6-ը, նաև Ռոլանդ Լիսիցյանը գնդակահարվեցին, իսկ 18-ը, բաժանված մասի մեջ մտնող 6 տղաների հետ միասին, դատապարտվեցին 10-ական տարվա ազատազրկման: 1958 թ. բոլորը արդարացվեցին հանցակազմի բացակայության պատճառով[139], բացառությամբ Ռ. Լիսիցյանի, որի վերաբերյալ որոշումը հանրապետության դատախազությունը 1955 թ. համարել է ճիշտ, բայց պատժաչափը (գնդակահարություն) շատ խիստ:

Քաղաքական բռնությունների մեղմացումը բխում էր նաև միջազգային իրադրության սրացումից: Ձևավորվել էր առանցքի երկրների (եռյակի) միությունը, որ պատերազմի էր նախապատրաստվում նաև սոցիալիզմի ու կոմունիստական շարժման դեմ: ԽՍՀՄ շահերը պահանջում էին պետության ուշադրությունը կենտրոնացնել երկրի պաշպանունակության ամրապնդման, ներքին ուժերը այդ նպատակին ծառայեցնելու ուղղությամբ:

1930-ական թվականներին Հայաստանում անհիմն կերպով, քաղաքական մեղադրանքներով, ձերբակալվեց 15 հազարից ավելի մարդ, որի

---

[139] ՀՀ ԱԱԾԱ, ԿԳՖ, գ. 9260 (4 հատոր): ՀԱԱ, ֆ. 571, ց. 4, գ. 621, 622:

մոտ մեկ երրորդը դատապարտվել էր գնդակահարության[140]: Խորհրդային իշխանության տարիներին, 1921 թ. մինչև Ստալինի մահը, 1953 թ., Հայաստանում բռնաճնշման ենթարկված մարդկանց թիվը հասնում էր 42 հազարի[141]: Սակայն այն, ինչ տեղի ունեցավ 1930-ական թվականների երկրորդ կեսին, կատարյալ ողբերգություն էր, խորհրդային երկրի պատմության ամենաողբերգական էջը:

Հայաստանն ինքնուրույն քաղաքականություն որոշող պետություն չէր: Որպես ԽՍՀՄ բաղկացուցիչ մաս նա ընդունեց նաև այդ պետության վերևից պարտադրված քաղաքական բռնաճնշումների քաղաքականությունը, և այն կեսանգործեց հլու-հնազանդորեն: Այլ կերպ լինել չէր կարող, չէ որ ՀԿ(բ)Կ-ն բաղկացուցիչ մասն էր Համկ(բ)Կ-ի (ԽՄԿԿ), նույնպիսին էին նաև բռնություններն անմիջապես իրականացնող, կուսակցության կողմից ղեկավարվող ուժային մարմինները պետքաղվարչություն-ներքգործժողկոմատը, դատախազությունը, դատարանը և արտադատարանական մարմինները: Սակայն այդ չի նշանակում, թե հանրապետական մարմինները վերևի որոշումների սոսկ կատարողներն էին և հետևաբար պատասխանատու են միայն այդչափով: Նրանք իրենց հերթին վախից, թե նվիրվածությունից կամ հավատարմությունից ելնելով, կաշվից դուրս գալով, ըստ ամենայնի կենսագործել են իրենց հրամցված առաջադրանքները: Խստությունների ու չափազանցությունների մեջ քիչ չէր նաև տեղական նախաձեռնությունների նշանակությունը:

Տեղի ունեցածի հետևանքով ամբողջ երկիրը կրեց մարդկային, նյութական ու հոգևոր անչափելի կորուստներ: Շատ մեծ գին այն բանի համար, որ ամրապնդվի Ստալինի անձնական բռնապետությունը:

---

[140] Ա. Մանուկյան, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., էջ 149:
[141] Նույն տեղում, էջ 182:

3. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄԸ

1929-1930 թթ. գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացմանն անցնելը նշանավորեց նոր ժամանակաշրջան նաև կրոնի ու եկեղեցու նկատմամբ խորհրդային իշխանության քաղաքականության մեջ: Վերջինս հոգևորականությանը դիտում էր որպես հակահեղափոխական և հակախորհրդային տարր, իսկ եկեղեցին՝ նույնպիսի կազմակերպություն: Հոգևորականության ստորին խավը՝ քահանաները, որ վարում էին գյուղացիական տնտեսություն, հավասարեցված էին կուլակներին և ենթակա համապատասխան վերաբերմունքի:

Ըստ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Լ. Կագանովիչի 1929 թ. ստորագրած հրահանգի, եկեղեցական կառույցները միակ լեգալ գործող հակահեղափոխական կազմակերպություններն էին: Եկեղեցու դեմ պայքարի սաստկացումը բաղկացուցիչ մասն էր այն ծավալուն հարձակման, որը, ըստ առաջին հնգամյա պլանի խնդիրների, իրականացվում էր կապիտալիզմը տնտեսության և մարդկանց գիտակցության մեջ արմատախիլ անելու համար:

Պատմական նոր փուլում ՀամԿ(բ)Կ 16-րդ համագումարը (1930 թ. հունիս-հուլիս) կուսակցությունից պահանջեց ամրացնել ու զարգացնել«այն զգալի հաջողությունները, որ ձեռք են բերել կրոնի ռեակցիոն ազդեցությունից մասսաներին ազատագրելու գործում»[142]: Թե ինչպես էր դա իրականացվելու, ինչպիսի եղանակով ու միջոցներով, հանգամանորեն մշակել էր միութենական միացյալ պետքաղվարչությունը: Վերջինս 1930 թ. մարտի 22-ին «խիստ գաղտնի» շրջաբերական ուղարկեց իր ստորադաս կազմակերպություններին հանրապետություններ, եկրամասեր ու շրջաններ: Այն կոչվում էր «Եկեղեցական շարժման դրության ու հեռանկարների և Միացյալ պետքաղվարչության մարմինների հետագա խնդիրների մասին»[143]:

Համատարած կոլեկտիվացման շրջաններում քահանաները ենթակա էին սեփականազրկման և արտաքսման իրենց բնակավայրերից, որն ուղեկցվելու էր եկեղեցիների փակումով: Ընդ որում փակումը կատարվելու էր ոչ թե վարչական եղանակով, այլ այն պետք է նախապատրաստվեր որպես կրոնական համայնքի կամքի արտահայտություն: «Ամեն մի եկեղեցու

---

[142] ՍՍԿՊ-ն բանձներում ու որոշումներում..., 3-րդ մաս, էջ 21:

[143] Տվյալ փաստաթղթի հայերեն թարգմանության հրատարակությունը տես. Արմենակ Մանուկյան, Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թթ. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի): Երևան,1997, էջ 28-42:

փակմանը,- ասված է հրահանգում,- անպայման պետք է նախորդի լուրջ և մեծ չեկիստական աշխատանք, կուսակցական ու հասարակական կարգի միջոցառումներին զուգընթաց»:

Ինչպես հայտնի է, եկեղեցին քայքայելու և կազմալուծելու նպատակ ունեին այն բոլոր աղանդները. «նորարարական» շարժումները և «եկեղեցականները», որոնք ստեղծվել կամ ներդրվել էին ռուսական ուղղափառ, ինչպես նաև հայ առաքելական եկեղեցու ներսում: Միացյալ պետքաղվարչության հրահանգը նշում էր դրանց միասնական ճակատի հնարավոր ստեղծումը կանխելու անհրաժեշտության մասին: Այդպես (առանց միասնական ճակատի) ավելի դյուրին կլիներ եկեղեցու քայքայումը և միաժամանակ նոր ուժեղ եկեղեցական կազմակերպության բացառումը: «Մեր եկեղեցական քաղաքականությունը, որի հիմնական խնդիրը հանդիսանում է ամեն կերպ եկեղեցու քայքայումը նրա պառակտումը խթանելու միջոցով, պետք է այսուհետև ևս վարել նույնպիսի հետևողականությամբ և հաստատակամությամբ, ինչպես նախկինում», կարդում ենք հրահանգում:

Իր գործունեության մեջ Միացյալ պետքաղվարչությունը շարունակում էր կարևոր նշանակություն տալ գործակալների ու լրտեսների ցանցի օգտագործմանը:

Փաստորեն նպաստելով և կազմակերպելով հայ եկեղեցու քայքայումը և կազմալուծումը, խորհրդային իշխանությունը երբեմն-երբեմն առերես հանդես էր գալիս կրոնի ու եկեղեցու նկատմամբ վարվող քաղաքականության աղավաղումների դեմ, որոնք, ինչպես 1920-ական, այնպես էլ 1930-ական թվականներին կրում էին զանգվածային բնույթ և հատկապես մեծ ծավալ ընդունեցին գյուղատնտեսության կոլեկտիվացման և կուլակության վերացման կապակցությամբ:

Կրոնի և եկեղեցու դեմ հրապարակային պայքարն ընթանում էր որպես գիտաաթեիստական քարոզչություն գրավոր և բանավոր, Հայաստանի Մարտնչող անաստվածների միության (ՄԱՄ) միջոցով: ՀԿ(բ)Կ Կենտկոմը պարբերաբար ուսումնասիրում էր նրա գործունեությունը և որոշում ընդունում նրա խնդիրների մասին, միշտ արծանագրելով նրա անբավարար աշխատանքը: Միայն Հայաստանում 1920-1930-ական թվականներին տպագրվել է 107 անուն գիրք ու գրքույկ կրոնի և աթեիզմի թեմայով, այդ թվում ազատ եկեղեցականների ակտիվ գործիչ Բենիկ վարդապետի 7 գրքույկները[144]:

---

[144] Գիրքը Սովետական Հայաստանում: Մատենագիտություն: Հ. 1, 1920-1930, Երևան, 1978: Հ. 2, 1931-1940, Երևան, 1988:

Մյուս կողմից, հավատի ու պաշտամունքի համար տեղ չէր թողնում եկեղեցիների ու վանքերի տարեցտարի արագ փակումը, որը, ինչպես նշվեց, հատկապես ծավալվեց կոլեկտիվացման կապակցությամբ:

1930 թ. հուլիսի 25-ին թիվ 871 գրությամբ[145], հասցեագրված ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահ Ս. Կասյանին, կաթողիկոսի տեղապահը կրկին անդրադառնում էր իր նախորդ գրությամբ արտահայտած դժգոհություններին: Վերջինիս վրա նույն Ս. Կասյանը հանրապետական դատախազին մակագրել էր՝ «ստուգել և քննել մատնանշված «բռնություններն ու հալածանքները» և զեկուցել»: «Դժբախտաբար, հակառակ խոստման,- հայտնում էր կաթողիկոսը 1929 թ. դեկտեմբերի 31-ին,- ոչ մի պատասխան չստացա և ոչ որևէ բարելավում նկատեցի մեր եկեղեցու կյանքում: Ընդհակառակը, ցավով պիտի շեշտեմ, որ ավելի ևս մեծ չափերի հասան հայ եկեղեցու հանդեպ սկսված հալածանքները»[146]:

Համատարած կոլեկտիվացման առաջին իսկ օրերին թեմերից սկսեցին ստացվել տեղեկություններ քահանաների նկատմամբ, ինչպես կուլակների, վարվելու, եկեղեցիներն ու վանքերը վարչական կարգով փակելու մասին: «Թեմիս (Շիրակի – Վ. Ղ.) գլխավորապես դաշտային մասերի գյուղերը կոլեկտիվացման են ենթարկված, հետզհետե մյուս գյուղերը ևս - կոլեկտիվացումը կընդգրկի: Քահանան մնալու է միանգամայն դուրսը: Շուտով բոլոր եկեղեցիներից պիտի ծեռք քաշել»:

Գյուղխորհրդի նախագահները և կուսակցականները, ասված է նույն գրության մեջ, շարունակ պահանջում են եկեղեցիների շենքերը իբրև կինոյի ու թատրոնի համար, «վայ այն քահանային, որ չտվեց: Սոսկալի հարկեր կդնեն, հալածանքի կենթարկեն»: «Եկեղեցիներում կինոյի կամ թատրոնի ժամանակ եկեղեցական զգեստները հագնում, թագը դնում և ամեն խայտառակ բաներ են անում: Ծննդյան տոն կատարելը (խոսքը նոր տարվա մասին է) հազվագյուտ է դարձել, մանավանդ գյուղերում[147]:

Եկեղեցու և կրոնի դեմ բավական ակտիվ էր գործում կոմերիտմիությունը: Կոմերիտականները ծաղրուծանակի էին ենթարկում քահանաներին, վիրավորում նրանց և առաջիններից մեկը ներխուժում եկեղեցի, այն օգտագործում իրենց նպատակների համար:

Եկեղեցու սպասավորներին ծառայությունից զրկելու միջոց դարձավ նաև նրանց «կուլակաթափությունը», դրա հետ կապված բանտարկությամբ ու աքսորով կամ լավագույն դեպքում նրանց վրա ծանր հարկ դնելը

---

[145] ՀԱԱ, ֆ. 112, ց. 5, գ. 8, թ. 4-7:

[146] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.): Երևան, 1994, էջ 202:

[147] Նույն տեղում, էջ 209-210:

(անհատական հարկադրում) և ցանք կատարելու կայուն առաջադրանքը, որ կիրառվեց մինչև տվյալ հարկատուների իսպառ վերացումը:

1930 թ. մայիսին մահացավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը: Դրան հետևեց նոր Կաթողիկոսի ընտրությունների կազմակերպման տևական ժամանակաշրջան: Ընտրությունների թույլտվությունը խորհրդային իշխանության ձեռքում էր, որն այն օգտագործում էր իր հակակրոնական քաղաքականությունն առաջ տանելու համար: Նույնիսկ մեծ կարևորություն տրվեց կաթողիկոսի թաղման արարողությանն այն իմաստով, որ այդ օրը մեծ բազմություն չհավաքվի, իսկ մոտակա շրջաններում գյուղացիների ուշադրությունը կենտրոնացվում էր այլ զբաղմունքների վրա[148]: Առաջին պահ Հայաստանի իշխանությունները համաձայնվեցին 1930 թ. վերջին թույլատրել եկեղեցական ժողովի գումարում նոր Կաթողիկոս ընտրելու համար: Սակայն շուտով ավելի բարձր մարմինները գտան, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունները նախապատրաստված չէին Միացյալ պետքաղվարչության գծով: Այսինքն ընտրությունները հետաձգվում էին, որպեսզի տվյալ ուղղությամբ կատարվեր համապատասխան նախապատրաստական աշխատանք:

Նույն թվականի վերջերին ՀԿ(բ)Կ Կենտկոմն ընդարձակ նամակով դիմեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմին և Անդրերկրկոմին, որով հիմնավորում էր էջմիածնում Կաթողիկոս ընտրելու համար եկեղեցական ժողով գումարելու անհրաժեշտությունը:

Նախ շեշտվում էր այն հանգամանքը, որ հայ առաքելական եկեղեցին լոյալ վերաբերմունք ունի խորհրդային իշխանության նկատմամբ, որ նա դրական գործունեություն է կազմակերպում նաև արտասահմանի իր թեմերում, հավատացյալ հայ բնակչությանը զգուշացնելով հեռու մնալ Խորհրդային Հայաստանի նկատմամբ արկածախնդրական ելույթներից:

Հաշվի առնելով էջմիածնի քաղաքական նշանակությունը արտասահմանի թեմերի համար, ինչպես նաև էջմիածինը խորհրդային իշխանության շահերի համար առայժմ օգտագործելու անհրաժեշտությունը, կարդում ենք նամակում, «պետք է հետաքրքրվել Կաթողիկոսի ընտրության հարցով հայկական եկեղեցու և նրա արտասահմանյան ներկայացուցիչներին չեզոքացնելու, հնարավորինս վնասազերծելու նպատակով»:

Մյուս կարևոր հարցը, որ բարձրացվում էր Կենտկոմի նամակում, վերաբերում էր Կաթողիկոսության տեղավայրին, թե որտեղ կգտնվի այն: Բանն այն է, որ հատկապես վերջին ժամանակներում արտասահմանում աշխուժացել էին քննարկումները, հատկապես դաշնակցականների կողմից, Կաթողիկոսի ընտրություններն արտասահմանում անցկացնելու և

---

[148] ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 17, թ. 142:

նրա գտնվելու վայրը էջմիածնից արտասահման փոխադրելու հնարավորության հարցի շուրջ (կամ «հակաթոռ» ստեղծելու, այսինքն երկրորդ համահայկական Կաթողիկոս ունենալու մասին): Դրա շնորհիվ, ինչպես ասված է նամակում, «կստեղծվեր «համազգային» կենտրոն և հեղինակություն, որի շուրջ կհավաքվեր արտասահմանյան հակահեղափոխությունը»: Այդ ամենը կանխելու համար անհրաժեշտ էր համարվում էջմիածնի օգտագործումը, լոյալ կաթողիկոս ունենալը և «նրա միջոցով մեր գաղտնի ղեկավարությունը և անհրաժեշտ միջոցառումները, ինչպես, օրինակ, կտակների ու հայրենադարձների հարցերը և այլն»:

Ելնելով բերված հիմնավորումներից, ՀԿ(բ)Կ Կենտկոմը անհրաժեշտ էր համարում թույլատրել, որ հայկական եկեղեցական համագումարը հրավիրվի էջմիածնում, Կաթողիկոս ընտրելու համար[149]:

Ինչ վերաբերում է «Պետքաղվարչության գծով» հարցի նախապատրաստությանը, ապա այդ խնդիրը լուսաբանված է Անդրպետքաղվարչության 1930 թ. սեպտեմբերի 7-ի ՀԿ(բ)Կ Կենտկոմին ուղղված գրության մեջ, որը վերնագրված է. «Զեկուցագիր հայ հոգևորականության վերաբերյալ. համառոտ զեկուցագիր հայոց եկեղեցու նոր կաթողիկոսի առաջիկա ընտրության և այդ առթիվ մեր խնդիրների մասին» (ստորագրված է վարչության պետի տեղակալ Բերիայի և գաղտնի բաժնի պետ Սուղդուսու կողմից): Փաստաթուղթը կառուցվածքով ու բովանդակությամբ խիստ մոտ է վերը բերված ՀԿ(բ)Կ Կենտկոմի դիմումին:

Անդրպետքաղվարչության ասելիքը հետևյալն էր. նախ տեղեկացվում էր, որ եկեղեցական համագումարը հետածգվում է ԽՍՀՄ Միացյալ պետքաղվարչության ստացված ցուցումով՝ «Բարձրագույն վերին ատյանի» որոշման համաձայն: Հասկանալի է, որ այդպիսի ատյան կարող էր լինել ԽՍՀՄ ամենաբարձր իշխանությունը, որպիսին էր ՀամԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոն, այն է Ստալինը:

Ապա թվարկվում են Կաթողիկոսի բոլոր հնարավոր հինգ թեկնածուները, որոնցից ուշադրության է արժանանում արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանը, որպես ընդունելի: «Ենթադրում ենք նրան անցկացնել որպես Կաթողիկոս, նախապես մեկ անգամ ևս ուսումնասիրել նրա անձը, վերջնականապես կցելով մեզ»: Անցկացնելով մեր թեկնածուին, ասված է գրության մեջ, պետք է նրա միջոցով իրականացնել մեր գաղտնի ղեկավարությունը հայկական եկեղեցու նկատմամբ՝ մեզ համար անհրաժեշտ ուղղությամբ: Կաթողիկոսի թեկնածուի հարցը նախապատրաստելուց հետո էր միայն հնարավոր համարվում եկեղեցական ժողովի հրավիրումը, անպայման էջմիածնում, արտասահմանյան պատվիրակների մասնակցությամբ:

---

[149] ՀԱԱ, ֆ. 1, ց. 10, գ. 42, թ. 6-10:

Կարևոր նշանակություն էր տրվում նաև գործակալների ներդրմանը Գերագույն Հոգևոր Խորհրդում և թեմերում:

Միաժամանակ Հայպետքաղվարչությանը հանձնարարվում էր «ճշտել եղած տվյալները արքեպիսկոպոս Խորեն Մուրադբեկյանի վերաբերյալ, նպատակ դնելով նրան վերջնականապես վերցնելու մեր ձեռքը»[150]: Նշենք, որ Գևորգ 5-րդի մահից հետո Մայր Աթոռը ղեկավարում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը:

1932 թ. ապրիլին Հայաստանում մի որոշում ևս կայացվեց Կաթողիկոսի ընտրության եկեղեցական ժողովը նույն թվականի օգստոսին թույլատրելու մասին: Սակայն այդ ժամկետը ևս հետաձգվեց, և, վերջապես, ժողովը կայացավ 1932 թ. նոյեմբերին, որը 7 թեկնածուներից առավելություն տվեց և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց տեղակալ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանին (1932-1938 թթ.):

Նոր Կաթողիկոսը գործեց պատմական ծանր ժամանակաշրջանում ինչպես եկեղեցու, այնպես էլ հավատացյալների ու ամբողջ ժողովրդի ճակատագրի տեսանկյունից: Դաժան ձևով շարունակվում էին հալածանքներն ու բռնաճնշումները կրոնի, եկեղեցու և նրա սպասավորների նկատմամբ, զանգվածորեն փակվում էին եկեղեցիներն ու վանքերը, իսկ կրոնի սպասավորները, ինչպես հասարակության մյուս խավերի ներկայացուցիչները, զանգվածորեն բանտարկվում ու աքսորվում: Երևանում քանդման ենթարկվեց նշանավոր Պողոս-Պետրոս եկեղեցին (գտնվել է «Մոսկվա» կինոթատրոնի տեղում), որը 17-րդ դարի կառույց էր, հարուստ ու շքեղ որմնանկարներով հանդերձ: Երևանի կաթողիկե եկեղեցին վերցվեց էջմիածնի իրավասությունից ընդդիմադիր «Ազատ եկեղեցական եղբայրությանը» հանձնելու համար, իսկ այնուհետև դարձյալ քանդվեց: Եկեղեցիներ ավերվեցին նաև այլ քաղաքներում ու բնակավայրերում: 1937 թ. վերջի դրությամբ Հայաստանում փակվել էր 800 եկեղեցի: Այդ և այլ դրդապատճառներով բողոքելով ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմին, Խորեն Ա Կաթողիկոսը գրում էր. «Հույսով ենք, որ մեր խնդիրը ուշադրության կառնվի, քանի որ ամբողջ Հայաստանում չորս եկեղեցի է մնացել, իսկ 800-ից ավելի եկեղեցիներ հետզհետե փակվել են մեծ մասամբ վարչական եղանակով, որպիսի գործելակերպը վերջերս էլ դատապարտվում է կենտրոնական իշխանության կողմից» (հղում է արվում «Պրավդա» թերթի վրա)[151]:

---

[150] Ստեփան Ստեփանյանց, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք: Երևան, 1994, էջ 77-80:
[151] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), էջ 320-321:

Եկեղեցու սպասավորների դեմ պայքարում մինչև 1930-ական թվականների կեսը շեշտը դրվում էր տնտեսական ճնշման, առաջին հերթին գյուղական քահանաներին բարձր հարկման ենթարկելու («կուլակաթափության») վրա, որը վերջանում էր նրանց բանտարկությամբ, որպես խորհրդային օրենքները ծախողողների: Տասնամյակի երկրորդ կեսին հերթը հասավ բարձր հոգևորականությանը:

1937 թ. մայիսի 9-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանը հանրապետության ներքգործժողկոմ Սուղդուսուն առաքել է չորս տարբեր գրություններ: Առաջինը վերաբերում էր Վրաստանի հոգևոր թեմի համար ստեղծված ծանր դրությանը: Երկրորդում անդրադարձ է կատարված գործող մի քանի եկեղեցիների տնտեսական ծանր դրությանը և խնդրվում էր արգելել շրջանների ներկայացուցիչներին՝ «փակման ենթարկելու վարչական եղանակով մնացած մի քանի եկեղեցիները: Հատկապես մեզ ցավ է պատճառում Աշտարակի և Օշականի եկեղեցիների հետ պատահած միջադեպը և մանավանդ Օշականի Ս. Մեսրոպի դամբարանն իր մեջ ամփոփող եկեղեցին, որ համահայկական նշանակություն ունի որպես սրբավայր»:

Երրորդ գրությամբ Կաթողիկոսը խնդրում էր ազատել ձերբակալված եպիսկոպոսներին, «ներողամիտ լինել հանդեպ մեր միաբան եպիսկոպոսները և առաջին հերթին ըստ հնարավորության շուտ կարգադրել ազատ արձակել»:

Վերջին գրությունը շոշափում էր էջմիածնի անշարժ գույքերի (Մայր Տաճար, Վեհարան և այլն) հարկային հարցերը: «Մայր Տաճարը,- ասված է գրության մեջ,- 1600 և ավելի տարիների պատմական հնադարյան հուշարձան է, որ բնականաբար ազատ պիտի լինի հարկից: Նա ծխական եկեղեցի չէ, այլ ընդհանուր համահայկական սրբավայր և հայության կենտրոն, իր կենտրոնածիգ գործունեությամբ աշխարհի ամեն կողմը ցաքուցրիվ ընկած հայության բեկորները կապել ու միացրել է իր հետ՝ պահպանելով նրա ազգային միությունը և այսօր հանձնել այն իր իսկական տիրոջը Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը»[152]:

Սակայն գրությունների պատասխանը էջմիածնին դատարան քարշ տալն էր՝ հարկերը չվճարելու համար: Մյուս կողմից, վերջին վճռական քայլերը եկեղեցու դեմ, նրա վերջին օջախները մարելու համար:

Որոշ տվյալներով 1930-ական թվականներին Հայաստանում բռնաճնշման էին ենթարկվել 161 հոգևորականներ (հայ առաքելական, հայ

---

[152] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), էջ 312-318:

կաթոլիկ և հայ ավետարանական եկեղեցիներին ծառայող): Նրանցից 91-ի համար կայացվել էր գնդակահարության որոշում[153]:

1938 թ. ապրիլին մահացավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանը: Կան որոշ վկայություններ կաթողիկոսի մահվան մեջ կողմնակի միջամտության մասին, որը, սակայն, դժվար է վստահաբար պնդել: Չնայած այն չի էլ կարելի ժխտել, մանավանդ երբ նկատի ունենանք այն իրադարձությունները, որ ծեռնարկվեցին էջմիածնի Կաթողիկոսության նկատմամբ մի քանի ամիս անց: Կաթողիկոսի սենյակում հայտնաբերվեց երկու տարի առաջ գրված Կոնդակը, որով իր մահից հետո տեղապահ էր նշանակվում Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը:

Խորեն Ա-ի թաղումը տեղի ունեցավ գուսպ և անշուք պայմաններում: Նրա դին ամփոփվեց Ս. Գայանեի վանքում, իսկ տարիներ անց փոխադրվեց Ս. Գայանեի Կաթողիկոսական դամբարան:

Խորհրդային մամուլը գրեթե մեռելային լռություն պահեց Խորեն Մուրադբեկյանի, ինչպես նաև մինչև այդ Գևորգ 5-րդի վախճանի նկատմամբ: Դա ևս հակակրոնական պայքարի միջոց էր:

Կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի մահից հետո խորհրդային իշխանությունը էջմիածնի դեմ դիմեց անհեռատես ու չհիմնավորված քայլի, որը բնավ չէր բխում նաև խորհրդային իշխանության, նրա արտաքին քաղաքականության շահերից: Կաթողիկոսի մահից մի քանի ամիս անց, 1938 թ. օգոստոսի 4-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոն, նրա առաջին քարտուղար Գր. Հարությունյանի ներկայացմամբ ու ստորագրությամբ, կայացրեց հետևյալ որոշումը. «Այն պատճառով, որ եղած նյութերը էջմիածնի Կաթողիկոսությունը մերկացնում են խորհրդային իշխանության և հայ ժողովրդի դեմ ակտիվ պայքարում փակել էջմիածնի վանքը, այն վերածելով քանգարանի, նոր Կաթողիկոսի ընտրություններ չանցկացնել և վերացնել հայ հոգևորականության կենտրոն էջմիածնի Կաթողիկոսությունը»[154]:

Նույն օրը գաղտնի նամակով Գրիգոր Հարությունյանը դիմել է «ՀամԿ(բ)Կ Կենտկոմ ընկեր Ստալինին», հայտնելով որոշման մասին, միաժամանակ «հիմնավորելով» այն: Ներկայացնենք այդ հիմնավորումները.

Հայաստանի նախկին դավաճանական ղեկավարության գործի կապակցությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմի տրամադրության տակ եղած նյութերը մերկացնում են Կաթողիկոսության հակախորհրդային գործունեությունը և Հայաստանում դաշնակցական կազմակերպություններ ստեղծելու ուղղությամբ կատարած աշխատանքը:

---

[153] Արմենակ Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ.: Երևան, 1999, էջ 128-129:
[154] ՀԱԱ, ֆ. 1, ց. 18, գ. 36, թ. 23:

Հայ հոգևորականությունը, քողարկվելով խորհրդային իշխանության նկատմամբ լոյալության մասին իր որոշումներով ու հայտարարություններով, Հայաստանում մշտապես մղել է քայքայիչ, լրտեսական աշխատանք, կապված լինելով դաշնակցականների, ռամկավարների կուսակցությունների և արտասահմանում գտնվող այլ «ընկերությունների կենտրոնների հետ»:

Հանգուցյալ Կաթողիկոս Խորեն Սուրադբեկյանն անձամբ եղել է դաշնակցականների կուսակցության ակտիվ անդամ և «հակահեղափոխական աշխատանքի գծով կապված է եղել Խանջյանի, Տեր-Գաբրիելյանի և Հայաստանում աջ-տրոցկիստական կենտրոնի մյուս անդամների հետ»:

Այնուհետև տեղեկացվում էր, որ 1937 թ. էջմիածնի Կաթողիկոսությունում գործող 70-75 հոգևոր անձանց մեծամասնությունը ձերբակալվել է «ակտիվ, հակահեղափոխական աշխատանքի համար»: Կաթողիկոսությունում մնացել են կրոնական պաշտամունքի յոթ սպասավորներ, որոնք ևս - դաշնակցականներ են և հակախորհրդային տրամադրված տարրեր:

Վերջում հայտնելով ընդունված որոշման մասին, ՀամԿ(բ)Կ Կենտկոմին խնդրվում էր հաստատել այն[155]:

Իր բովանդակությամբ ու ձևով ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի բարձրագույնին ուղղված նամակը ոչնչով չի տարբերվում այն կեղծ, սարքովի մեղադրանքներից, որ անհիմն վերագրվել են խորհրդային բազմահազար մարդկանց Հայաստանում, պատմական տվյալ ժամանակաշրջանում:

Հարց է ծագում, թե նման որոշում նախապատրաստելով, միթե Հայաստանի կուսակցական ղեկավարությունը այն վերադաս մարմինների հետ չէր համաձայնեցրել: Չէ որ խնդիրը առնչվում էր նաև ԽՍՀՄ շահերի, նրա արտաքին քաղաքականության հետ: Հենց այդպես էր դրվում հարցը Կաթողիկոսի նախորդ ընտրությունների ժամանակ (1932 թ.), ինչպես նշվեց վերը: Եթե նշված որոշումը հաստատվեր և իրականանար, ապա Հայոց եկեղեցու կենտրոնը անմիջապես կփոխադրվեր արտասահման, խորհրդային իշխանության համար իր բացասական հետևանքներով հանդերձ: Իրադարձությունների հետագա ընթացքը վկայում է, որ Հայաստանում ընդունված որոշումը Մոսկվայում չի հաստատվել:

Էջմիածինը փակելու մասին ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը հակաազգային էր, հակաժողովրդական, այն չէր համապատասխանում նաև խորհրդային իշխանության շահերին, ջուր էր լցնելու նրա թշնամիների ջրաղացին:

---

[155] ՀԱԱ, ֆ. 1, ց. 26, գ. 34, թ. 41-42:

1930-ական թվականների վերջին սրված միջազգային իրադրության պայմաններում, երբ սկսվել էր 2-րդ աշխարհամարտը, և այն սպառնում էր Խորհրդային Միությանը, խորհրդային իշխանության կողմից գիտակցվեց եկեղեցու, նաև Հայ Առաքելական եկեղեցու օգտակար դերն ու նշանակությունը, ուստի հատկապես Հայրենական պատերազմի ժամանակ փոխվեց քաղաքականությունը եկեղեցու նկատմամբ:

4.ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1930-ական թվականների կեսերից ժողովրդավարացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներն ասես գալիս էին քողածածկելու ծավալված «Մեծ ահաբեկչությունը»: Դրանք միմյանց հակասող գործընթացներ էին, որ ապրեց խորհրդային երկիրը այդ տասնամյակի երկրորդ կեսին:

ԽՍՀՄ ներքին քաղաքականության, հասարակական-պետական կյանքի նշանավոր իրադարձությունը 1936 թ. երկրի նոր սահմանադրության ընդունումն էր: ԽՍՀՄ խորհուրդների 7-րդ համագումարը 1935 թ. որոշել էր փոփոխություններ կատարել 1924 թ. ընդունված սահմանադրության մեջ՝ արտահայտելու համար երկրի անցած ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքները: Այդ նպատակով ստեղծված հանձնաժողովը մշակեց նոր սահմանադրության նախագիծ, և որը հրապարակվեց լայն քննարկման համար: Սահմանադրության նախագիծն ընդունելու համար 1936 թ. նոյեմբերին հրավիրվեց ԽՍՀՄ խորհուրդների 8-րդ (արտակարգ) համագումարը: Համագումարը լսեց Ստալինի զեկուցումը երկրի հիմնական օրենքում կատարված փոփոխությունների և նոր օրենքի նշանակության մասին: Դեկտեմբերի 5-ին համագումարն ընդունեց ԽՍՀՄ նոր սահմանադրությունը[156]: Այն, ինչպես և երկրի բոլոր նվաճումները կապում էին Ստալինի անվան հետ, որը նրա պաշտամունքի արտահայտությունն էր: Դեկտեմբերի 5-ը հայտարարվեց համաժողովրդական տոն:

Երկրի զարգացման հիմնական հանրագումարը, որն ամրագրեց սահմանադրությունը, սոցիալիզմի հաղթանակն էր կամ ինչպես հետագայում ձևակերպվեց՝ սոցիալիզմի հիմնական հաղթանակը: Սոցիալիզմի հաղթանակ ասելով հասկացվում էր շահագործող դասակարգերի և մարդու կողմից մարդու շահագործման պայմանների վերացում, արտադրության միջոցների սոցիալիստական սեփականության հաստատում: Այն իրականացվեց երկրի ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվաց-

---

[156] Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը (հիմնական օրենքը): Երևան, 1937:

ման, կուլակության, որպես դասակարգ, վերացնելու, մշակութային զարգացման շնորհիվ:

Սոցիալիստական պետության տնտեսական հիմքը արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունն էր, որն ուներ երկու ձև պետական կամ համաժողովրդական և կոոպերատիվ-կոլտնտեսային, որը առանձին կոլտնտեսության կամ խմբային սեփականություն էր: Իրականում սեփականության այս երկրորդ ձևը զգալի չափով իր վրա կրում էր պետական սեփականության կնիքը, քանի որ կոլտնտեսությունները մեծապես կախյալ վիճակի մեջ էին պետությունից: Կոլտնտեսություններին ամրագրված հիմնական արտադրության միջոց հողը ևս պատկանում էր պետությանը:

Սոցիալիստական սեփականության պաշտպանությունը պետության սրբազան պարտականությունն էր: Իր ուժը շարունակում էր պահպանել 1932 թ. օգոստոսի 8-ի դաժան օրենքը: Դեռ ավելին, այժմ նոր սահմանադրությամբ սոցիալիստական սեփականության դեմ ոտնձգություն անող անձինք ճանաչվում էին «ժողովրդի թշնամիներ»:

ԽՍՀՄ առաջին սահմանադրությունն ընդունելու ժամանակ, երբ գործում էր ՆԷՊ-ը, գոյություն ունեին սեփականության բազմազան ձևեր, բազմակացութաձևություն, պետականը գերակշռող էր միայն խոշոր արդյունաբերության մեջ:

Տնտեսական կյանքը որոշում և նրան ուղղություն էր տալիս պետական ժողովրդատնտեսական պլանը: Դա նշանակում էր տնտեսության կառավարման լրիվ կենտրոնացում պետության ձեռքում կամ վարչահրամայական կառավարման օրենսդրական ամրապնդում:

Քաղաքական հիմքը աշխատավորների պատգամավորների խորհուրդներն էին, որոնք ծագել էին նախկին կարգերը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու շնորհիվ: Խորհուրդները նշանավորում էին հասարակության սոցիալական միասնությունը, միաժամանակ հասարակության երկու հիմնական դասակարգերի բանվորների ու կոլտնտեսային գյուղացիության միջև առկա տարբերությունները: Տարբերությունները հիմնականում պայմանավորված էին սոցիալիստական սեփականության նկատմամբ նրանց վերաբերմունքով, այն է՝ այդ սեփականության երկու տարբեր ձևերով: Հաշվի առնելով այդ տարբերությունները, մերժվել էր խորհրդային պետությունը համաժողովրդական համարելու առաջարկությունը:

Սահմանադրությունը էական փոփոխություններ արձանագրեց ընտրական համակարգում, որն արտահայտում էր խորհրդային պետության հետագա զարգացումը ժողովրդավարության ուղղությամբ: Անհավասար,

բազմաստիճան և բաց ընտրակարգը, որը համապատասխանում էր կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանին, փոխարինվեց հավասար, ուղղակի և փակ ընտրակարգով: Հետաքրքիր է, որ սահմանադրությունը մշակելու ժամանակ հանձնաժողովում եղել էր նաև այլընտրանքային ընտրությունների առաջարկություն, որը, սակայն, նույնիսկ հաստատվելուց հետո, ի վերջո մերժվեց: Իրականում այլընտրանքային կարգը կտար մրցակցության և իսկական ընտրություն կատարելու հնարավորություն, քանի որ ընտրողը գործ կունենար մեկից ավելի թեկնածուների հետ: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի բաժնի վարիչ Ստեցկին «հիմնավորելով» այդ մերժումը, Կենտկոմի 1937 թ. փետրվար-մարտյան պլենումում քննադատել է Ռադեկին (մեղադրվել է տրոցկիզմի պաշտպանության մեջ), թե նա սահմանադրական հանձնաժողովում առաջարկել է, որ քաղաքացուն կամ նրանց խմբերին իրավունք տրվի առաջադրելու իրենց թեկնածությունները: Կամ նույն պլենումում ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Կալինինի ելույթի ժամանակ կուսակցության Ղազախստանի երկրկոմի քարտուղար Լ. Միրզոյանը ռեպլիկայի կարգով հարցրել է ընտրական օկրուգը առաջադրելու է մե՞կ, թե՞ 2-3 թեկնածու[157]: Ինչևէ, այլընտրանքային ընտրական կարգը, ինչպես արդեն նշվել է, շոշափում էր կուսակցական լայն վերնախավի շահերը՝ ընդդեմ նեղ ղեկավարության, ուստի առաջինը այդ չէր կարող հանդուրժել և հասավ նրան, որ այն ծախողվեց:

Իշխանության բարձրագույն օրենսդիր մարմին ԽՍՀՄ խորհուրդների համագումարին այժմ փոխարինում էր ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը, իր նստաշրջաններով: Գերագույն խորհուրդը երկպալատանի էր միության պալատ և ազգությունների պալատ: Վերջինս արտահայտում էր ԽՍՀՄ - բազմազգ, դաշնային կառուցվածքը:

ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընտրվում էր 4 տարի ժամկետով, տարեկան երկու նստաշրջանի հրավիրումով: Նա մշտապես գործող մարմին չէր, չուներ նաև օրինագծեր մշակող մշտական հանձնաժողովներ: Միակը մանդատային հանձնաժողովն էր (ստուգում էր պատգամավորների լիազորությունները): Ուստի Գերագույն խորհրդի նստաշրջաններում քննարկվում էին սահմանափակ թվով, հիմնականում պետական բյուջեի հետ կապված հարցեր:

Նոր սահմանադրության մեջ նորություն էր կուսակցության մասին ձևակերպումը, պետության ու հասարակության մեջ նրա տեղի ու դերի

---

[157] Вопросы истории, 1993 г., N 6, с. 16, N 7, с. 5-6.

գնահատականով: Դրանով օրինականացվում էր պետության մեջ կուսակցության փաստական ղեկավար դերակատարությունը (հոդված 126)[158]:

Խորհուրդների ընտրական նոր համակարգին անցնելը նոր խնդիրներ դրեց նաև պետության ղեկը վարող կուսակցության առաջ. նրա կազմակերպությունների գործունեությունը ևս համապատասխանեցնելու ժողովրդավարության պահանջներին, կուսակցության կանոնադրությանը, որի խախտումները քիչ չէին:

Տվյալ հարցին անդրադարձավ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1937 թ. փետրվար-մարտյան պլենումը: Կենտկոմի քարտուղար Ժդանովը իր զեկուցման մեջ անդրադարձավ կանոնադրության խախտումների այնպիսի կողմերի, ինչպիսիք էին ցուցակներով քվեարկելը, ընտրության փոխարեն կոմիտեների ու բյուրոների կազմի համալրումը ինքնահամալրումով (կոոպտացիա), կուսակազմակերպությունների քարտուղարների նշանակումը: Պլենումը կուսակցական կազմակերպություններից պահանջեց վերացնել կանոնադրության խախտումները, հետևողականորեն կենսագործել դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքները կուսակցական կյանքի հիմունքները:

Նոր պայմաններում կուսակցական աշխատանքի վերակառուցման խնդրին էր նվիրված նույն պլենումում Ստալինի զեկուցումը և եզրափակման խոսքը, որ տպագրվեց «Կուսակցական աշխատանքի թերությունների և տրոցկիստական ու այլ երկերեսանիների վերացման միջոցառումների մասին» բազմանշանակ խորագրով: Ստալինի զեկուցումը, ինչպես և տվյալ պլենումն ամբողջությամբ վերցրած, ինչպես նշվել է վերը, ժողովրդավարության կենսագործման նշանաբանի տակ առաջ բերեց կուսակցական, նաև ոչ կուսակցական կադրերի ջարդի նոր ալիք: Այդ ջարդը հիմնավորելու համար Ստալինը շարունակում էր պաշտպանել դասակարգային պայքարի սրման մասին իր հորինած տեսությունը, այս դեպքում սոցիալիզմի հաղթանակի պայմաններին հարմարված տեսքով, թե թշնամին հիմա պայքարում է դիմակավորված: Ինչևէ, Ժդանովի զեկուցման առթիվ պլենումի ընդունած բանաձևն արձանագրեց, որ «ԽՍՀՄ նոր Սահմանադրության կիրառումը նշանակում է շրջադարձ երկրի քաղաքական կյանքում: Այդ շրջադարձի էությունն է ընտրական համակարգի հետագա ժողովրդավարացումը»[159]:

Նշված սխալներն ու խախտումները վերաբերում էին նաև Հայաստանի կուսկազմակերպությանը:

---

[158] Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը (հիմնական օրենքը): Երևան, 1937:
[159] ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: 3-րդ մաս, էջ 365:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումում ժդանովի զեկուցման մեջ բերված են խախտումների այսպիսի տվյալներ: Հայաստանում ինքնահամալրված էր (կոոպտացիա) շրջկոմների ու քաղկոմների կազմի 30 տոկոսը և դրանց բյուրոների կազմի կեսից ավելին[160]: Կոոպտացիայի բարձր մակարդակը տվյալ ժամանակաշրջանում կադրերի ձերբակալության, ինչպես նաև առանց ձերբակալման կուսակցությունից հեռացնելու արդյունք էր: Մեծ թվով կոմունիստներ կուսակցությունից դուրս թողնվեցին կուսփաստաթղթերի ստուգման և փոխանակման արդյունքում: Կուսակցությունից հեռացնելու գործում իրենց դերն ունեցան զրպարտիչներն ու կարյերիստները, ովքեր, օգտվելով հենց կուսակցության ղեկավար մարմինների թողտվությունից, անձնական մղումներից ելնելով, վարկաբեկող նյութեր էին հրամցնում կամ տարածում այս կամ այն կոմունիստի վերաբերյալ, նրանց «վնասարար», «ժողովրդի թշնամի» և այլ պիտակավորումով կամ այլ զրպարտություններով: Գորիսի շրջանի կոլտնտեսություններից մեկի նախագահը զրպարտագիր էր սարքել 30, իսկ շրջանի գյուղխորհուրդներից մեկի նախագահը 20 կոմունիստի վերաբերյալ: Նույն շրջանի կուսկոմիտեի բյուրոն մեկ նիստում կուսակցությունից հեռացրել էր 35 «ժողովրդի թշնամու»: Երևանի քաղխորհրդի պլենումը միանգամից հեռացրել էր իր կազմի 46, մեկ այլ անգամ 27 պատգամավորի: Երևանի շրջկոմներից մեկը կոմունիստներին կուսակցությունից հեռացնում էր ցուցակով: ՀԿ(բ)Կ - Կենտկոմի բյուրոն 1937 թ. սեպտեմբերյան պլենումին հաջորդող երկու և կես ամսվա ընթացքում Կենտկոմի կազմից հեռացրել էր 22 անդամի ու անդամության թեկնածուի, իսկ նույն պլենումին հաջորդող 4 ամսվա ընթացքում կուսակցությունից հեռացվել էր 939 կոմունիստ: Երևանի պետական համալսարանի կուսկազմակերպության մեկ շաբաթ տևած ժողովում եղան նաև բազմաթիվ զրպարտիչ ելույթներ և այլն[161]:

Ամբողջ երկրում կուսակցությունից հեռացվածների թիվը, այդ թվում նաև չնչին զանցանքի համար, ինչպես «պասսիվ» պիտակավորումն է, հասնում էր տասնյակ հազարների:

Կոմունիստի անվան ու բախտի նկատմամբ նման անհոգի ու անհիմն մոտեցմանը վերջ տալու, ինչպես նաև զրպարտիչների ու կարյերիստների դեմ պայքարելու մասին հատուկ որոշում ընդունեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. հունվարյան պլենումը: Պլենումը գտնում էր, որ կուսակցությունը մեծ աշխատանք է կատարել իր շարքերը «Ֆաշիզմի տրոց-

---

[160] Вопросы истории, 1993 г., N 5, с. 8.

[161] Մ. Սաֆարյան, Հայաստանի կոմպարտիայի պայքարը ռեսպուբլիկայում սոցիալիզմի զարգացման ու ամրապնդման համար: Երևան, 1966, էջ 86-87:

կիստական-աջ գործակալներից մաքրելու ուղղությամբ», և թե այդ ընթացքում է, որ թույլ են տրվել «լուրջ սխալներ և խեղաթյուրումներ», որոնք, սակայն, խանգարում էին կուսակցությունը մաքրելու երկերեսանիներից, լրտեսներից ու վնասարարներից: Պլենումը կուսակցական կոմիտեներին պարտավորեցրեց կարճ ժամանակամիջոցում վերանայել անհիմն կամ չնչին զանցանքի համար (պասսիվություն և այլն) կուսակցությունից հեռացվածների գործերը, անհատական մոտեցում ցուցաբերել նրանց դիմումները քննարկելիս կուսակցության մեջ վերականգնելու ժամանակ[162]:

Այսպիսով կուսակցության ղեկավարությունը շարունակում էր կանգնած մնալ բռնությունների կենսագործման իր քաղաքականության վրա, միայն մանր շտկումներ կատարելով տվյալ բնագավառում: Հունվարյան պլենումի որոշումը թողնում է կեղծ բարեհոգության տպավորություն: Այն կուսակցության ղեկավարությանը պետք էր իր հանցագործ քաղաքականությունը քողարկելու համար: Թեկուզ տասնյակ հազարավոր մարդկանց կուսակցականության վերականգնումը ոչինչ է միլիոնավոր մարդկանց անհիմն սպանության ու տաժանակրության, ամբողջ ժողովրդին պատճառած տառապանքի կողքին:

ԽՍՀՄ 1936 թ. նոր սահմանադրությունը (հիմնական օրենքը) հռչակվում էր որպես ամենաժողովրդականն աշխարհում: Իրականում ժողովրդավարության հռչակումն ավելի շատ ուներ քաղաքական նշանակություն: Այն պետք էր քարոզչության համար ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրսում, ցույց տալու կապիտալիստական երկրների հանդեպ սոցիալիստական երկրի առավելությունները:

ԽՍՀՄ պետական կառուցվածքում կատարված փոփոխություններից էր Անդրկովկասյան դաշնության վերացումը: Ընդունվում էր, որ դաշնությունը կատարել էր իր հիմնական պատմական դերը, այն է հաստատել խաղաղություն Անդրկովկասի ժողովուրդների միջև: Այժմ ԽՍՀՄ-ը կազմավորում էին 11 միութենական հանրապետություններ, 1922 թ. 4-ի դիմաց:

Նոր Սահմանադրության 13-րդ հոդվածը սահմանում էր, որ ԽՍՀՄ-ը միութենական պետություն է, որը կազմված է իրավահավասար հանրապետությունների կամավոր միավորման հիմունքով: Այնուհետև թվարկված են 11 միութենական, այդ թվում կազմացրվող Անդրդաշնության երեք հանրապետությունները:

Այսպիսով, Անդրֆեդերացիայի կազմացրումը կատարվեց (արձանագրվեց) ԽՍՀՄ Սահմանադրությամբ: Քանի որ Անդրֆեդերացիան ստեղծվել էր նրա երեք անդամների (սուբյեկտների) բարձրագույն մարմին Կենտգործկոմների ներկայացուցիչների Լիազոր կոնֆերանսի համատեղ

---

[162] ՍՍԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում: 3-րդ մաս, էջ 385-397:

որոշումով, ուստի իրավունքի տեսակետից պետք է նշել, որ Անդրդաշնությունը ինքը պետք է առաջինը որոշեր իր կազմացրման հարցը: Մինչդեռ կազմացրման մասին Անդրդաշնության օրենսդիր մարմնի որոշում գոյություն չունի: Այն ստանձնել էր ԽՍՀՄ խորհուրդների 8-րդ արտակարգ համագումարը, իր կողմից հաստատված նոր Սահմանադրությամբ: Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետություններն Անդրդաշնության վերացմանն անդրադարձել են հետին թվով, այն էլ առանձին-առանձին: Օրենքի նման խախտումը տեղական (նաև միութենական հանրապետությունների) իշխանությունների իրավունքների սահմանափակման, ԽՍՀՄ, որպես պետության, խիստ կենտրոնացված լինելու արդյունք էր:

Ընդ որում իրավունքի նույնպիսի խախտում կատարվեց նաև ԽՍՀՄ-ի կազմալուծման ժամանակ, 1991 թ., երբ այն իրականացրին 4 հիմնադիր հանրապետություններից 3-ը, դուրս թողնելով 4-րդին նախկին Անդրդաշնության անդամներին:

Անդրդաշնության վերացման պահին լրանում էր Հայաստանի խորհրդայնացման 16-րդ տարին: Խորհրդային իշխանության և Անդրկովկասի հանրապետությունների համատեղ պետական կյանքի անցած տարիները Հայաստանի համար նախ և առաջ ապահովեցին խաղաղ ապրելու և ստեղծագործելու հնարավորություն, չնայած անկախ պետականության կորստին:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման հաս[illegible] հոբելյանական էր 1935 թ.: Այն նշվեց հանդիսավորությամբ: Կայացավ ՀՍԽՀ Կենտգործկոմի հոբելյանական նստաշրջանը, ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Կալինինի ներկայությամբ: Նոյեմբերի 28-ին «Պրավդա» թերթը հանդես եկավ «Խորհրդային Հայաստանի 15 տարին» առաջնորդող հոդվածով: Ողջույնի հեռագիր ուղարկեցին միութենական կառավարությունը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը: Դեկտեմբերի վերջին Կրեմլում Ստալինը, պետության և կուսակցության ղեկավարներն ընդունեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար Աղասի Խանջյանի ղեկավարած Հայաստանի հանրապետության պատվիրակությանը: Այս հանդիպման ժամանակ է, որ գրող Նաիրի Զարյանը արտասանեց իր հատուկ գրված «Ստալին» բանաստեղծությունը, որը Ստալինի պաշտամունքը սրբացնելու օրինակ է: Անձի պաշտամունքը տեղ է գտել նաև այն նամակում, որ հայ ժողովրդի անունից նվիրվել էր Ստալինին: Տոնակատարության առիթով ստեղծագործող մտավորականության ներկայացուցիչներ և արտադրության մի խումբ առաջավորներ արժանացան պատվավոր կոչումների և պարգևատրվեցին շքանշաններով:

Հայաստանի և այլ միութենական հանրապետությունների հոբելյանների նշումը և այլ հանդիսություններն ավելի շատ հետապնդում էին քաղաքական նպատակներ: Մի կողմից դրանց նպատակը ազգային քաղաքականության նվաճումների ընդգծված ցուցադրումն էր, մյուս կողմից ժողովրդի ուշադրության շեղումը վերջին տարիներին գյուղի նկատմամբ թույլ տրված քաղաքական սխալներից և քողածածկումը այն բռնաճնշումների, որ սկսվել էին 30-ական թվականների կեսերին:

***

ԽՍՀՄ նոր սահմանադրության ընդունման և Անդրդաշնության վերացման շնորհիվ Հայաստանը դարձավ միութենական հանրապետություն և ԽՍՀՄ կազմի մեջ մտավ ուղղակիորեն, կազմավորելով իր համապատասխան պետական մարմինները:

1936 թ. հունիսին, երբ համաժողովրդական քննարկման համար հրապարակվել էր ԽՍՀՄ սահմանադրության նախագիծը, ստեղծվեց Հայաստանի սահմանադրությունը մշակող հանձնաժողով, ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանի նախագահությամբ:

1936 թ. նոյեմբերի 19-ին բացվեց ՀՍԽՀ խորհուրդների 9-րդ (արտակարգ) համագումարը, որը լսեց Կենտգործկոմի նախագահ Գևորգ Հանեսօղլյանի զեկուցումը Հայաստանում ԽՍՀՄ նոր սահմանադրության նախագծի քննարկման արդյունքների մասին և հավանություն տվեց նախագծին: Ընտրվեցին համամիութենական 8-րդ (արտակարգ) համագումարի պատգամավորներ: Միութենական համագումարի աշխատանքներին մասնակցեցին նաև հանրապետության պատգամավորները: Սահմանադրության նախագծի քննարկման հարցով ելույթ ունեցավ ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Արմենակ Գուլոյանը, իսկ 4 այլ պատգամավորներ ընտրվեցին խմբագրական հանձնաժողովի կազմում:

ՀՍԽՀ խորհուրդների 9-րդ համագումարի աշխատանքները, որ ընդհատվել էին համամիութենական համագումարի պատճառով, վերսկսվեցին 1937 թ. մարտի 20-ին: Մինչև այդ, փետրվարի 22-ին Կենտգործկոմը հավանություն էր տվել հանրապետական նախագծին, որը նույնպես ենթարկվել էր համաժողովրդական քննարկման: Կենտգործկոմի նախագահ Գևորգ Հանեսօղլյանը զեկուցեց հանրապետության նոր սահմանադրության նախագծի մասին: Խմբագրական հանձնաժողովի կողմից արված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի առնելուց հետո խորհուրդների 9-րդ համագումարը նույն թվականի մարտի 23-ին ընդունեց Հայկական ԽՍՀ նոր սահմանադրությունը (հիմնական օրենքը): Սահմա-

նադրությունը քննարկման արդյունքում լրացվեց 3 նոր հոդվածներով: Նրանցից մեկը սահմանում էր, որ հանրապետությունում պետական լեզուն հայերենն է, և որ ազգային փոքրամասնությունների համար ապահովվում է նրանց մայրենի լեզվի զարգացումն ու գործածությունը մշակութային ու պետական հիմնարկներում[163]:

Սահմանադրությունը բաղկացած էր 11 գլուխներից և 123 հոդվածներից: Հայաստանի սահմանադրությունը մշակվել էր ԽՍՀՄ սահմանադրության հիմնական սկզբունքների հիման վրա, հաշվի առնելով որոշ տեղական առանձնահատկություններ, որոնք սկզբունքային նշանակություն ունենալ չէին կարող: Ի տարբերություն նախկին, առաջին սահմանադրության, նորի դեպքում Հայաստանի պետականությունը վերանվանվել էր Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ՀԽՍՀ), նախկինի Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) փոխարեն:

Խորհուրդների 9-րդ (արտակարգ) համագումարը լսեց նաև Անդրդաշնության ժողկոմխորհի նախագահ Սուսաբեկովի հաղորդումը Անդրդաշնության վերացման մասին: Համագումարը արձանագրեց Անդրդաշնության խաղացած «պատմական խոշոր դերը» Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների տնտեսական, քաղաքական ու մշակութային վերելքի, «ամուր ազգային խաղաղություն» հաստատելու, «հաղթական սոցիալիստական շինարարության» ուղղությամբ: «Անդրկովկասում սոցիալիզմի հաղթանակը» նախապատրաստեց և նպաստավոր պայմաններ ստեղծեց պատմական տվյալ ժամանակաշրջանում Անդրկովկասյան դաշնության վերացման համար: Անդրկովկասի հանրապետությունների հետագա զարգացման հեռանկարների համար, ասված է 9-րդ - համագումարի որոշման մեջ, ուղի էր բացում ԽՍՀՄ նոր սահմանադրությունը: Ելնելով այդ ամենից 9-րդ համագումարը, ԽՍՀՄ սահմանադրության 13-րդ հոդվածին համապատասխան, որը նախատեսում էր Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների ուղղակի մուտքը ԽՍՀՄ, անհարժեշտ համարեց ԱԽՖՍՀ և նրա ղեկավար մարմինների վերացումը, «որոնք կատարել էին իրենց պատմական դերը»[164]:

Նոր ընտրական օրենքի համաձայն Կոմունիստական կուսակցությունը նախապատրաստեց և անցկացրեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդրանիկ ընտրությունները: 1937 թ. հոկտեմբերին տեղի ունեցած ՀամԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը քննարկեց ընտրությունների առթիվ կուսակցության

---

[163] С. Хармандарян, К. Худавердян. Съезды Советов Армении. 1922-1937. Ереван, 1963, с. 195-208.
[164] Նույն տեղում, էջ 210:

կազմակերպական և ագիտացիոն-պրոպագանդիստական գործունեության մասին հարցը: Պլենումը որոշեց, որ կուսկազմակերպությունները դեպուտատության թեկնածուներ առաջադրելիս հանդես գան անկուսակցականների հետ համատեղ, նրանց հետ պայմանավորվելով դեպուտատության ընդհանուր թեկնածուի հարցի շուրջ: Կենտկոմը անընդունելի էր համարում անկուսակցականների առանձին ելույթը և սեփական թեկնածության առաջադրումը, քանի որ այդ դեպքում անկուսակցականները կբաժանվեին կուսակցությունից, որը կարող էր ձեռնտու լինել «հակախորհրդային տարրերին», ովքեր այդ դեպքում կկարողանային իրենց օգտին օգտագործել ընտրողների ձայների բաժանումը: Ընտրությունների նախօրյակին կուսակցության Կենտկոմը դիմեց ընտրողներին, հայտարարելով, որ կուսակցությունը դեպի ընտրություններ գնում է անկուսակցականների հետ բլոկ կազմած և կոչ արեց ընտրողներին քվեարկել այդ բլոկի թեկնածուների օգտին[165]:

Կուսակցականների ու անկուսակցականների ընտրական բլոկի ստեղծումը նշանակում էր, որ վերջնականապես մերժվել էր այլընտրանքային ընտրությունների միտքը և նախաձեռնությունը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունները կայացան 1937 թ. դեկտեմբերի 12-ին: Ընտրությունները ցույց տվեցին ընտրողների մասնակցության և պատգամավորների ընտրության բարձր ցուցանիշներ:

Նոր սահմանադրությամբ որոշված ընտրական նոր համակարգի համաձայն, ՀԽՍՀ բարձրագույն մարմին Գերագույն խորհրդի ընտրությունները կայացան 1938 թ. հունիսի 12-ին:

Մինչև այդ Հայաստանի քաղաքացիները մասնակցեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրություններին, 1937 թ. դեկտեմբերի 12-ին: ԽՍՀՄ իշխանության բարձրագույն մարմնում Հայաստանն ընտրեց 29 մարդ, այդ թվում 4-ը Գերագույն խորհրդի միության պալատում (համաձայն Հայաստանի բնակչության թվի մեկ պատգամավոր 400 հազար բնակչությունից) և 25-ը ազգությունների պալատում (որպես միութենական հանրապետություն):

ՀԽՍՀ Գերագույն խորհրդում (որը միապալատանի էր բնակչության ազգային կազմի բերումով) ընտրվեց 256 պատգամավոր (5000 բնակչից մեկ պատգամավոր): Նրանցից կոմունիստական կուսակցության անդամներ էին 60 տոկոսը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 76 տոկոսի դիմաց: Սոցիալական կազմի տեսակետից մեծ տեսակարար կշիռ ուներ բանվոր դասակարգը, որը վկայում էր հասարակության մեջ նրան առաջատար դեր վե-

---

[165] История КПСС. Том IV, М., 1971, с. 520.

ռագրելու մասին: Բանվոր դասակարգին հետևում էր կոլտնտեսային գյուղացիությունը, ապա մտավորականության խավը:

Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի 1-ին նստաշրջանը բացվեց ընտրություններից մեկ ամիս անց 1938 թ. հուլիսի 12-ին: Նստաշրջանը բացեց ավագագույն պատգամավոր, գրող Մովսես Արազին: Ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահություն, որն իր գործունեության համար հաշվետու էր Գերագույն խորհրդի առաջ: Գերագույն խորհրդի նախագահության նախագահ ընտրվեց Մացակ Պապայանը: Կազմվեց կառավարություն՝ ժողկոմխորհ, որպես պետական իշխանության բարձրագույն գործադիր ու կարգադրիչ մարմին:Նրա նախագահ ընտրվեց Արամ Փիրուզյանը: Հայկական ԽՍՀ 24 մինիստրություններն, ըստ իրենց նշանակության, ստորաբաժանվում էին միութենական-հանրապետականի և հանրապետականի:

1939 թ. դեկտեմբերի 25-ին կայացան իշխանության տեղական մարմինների ընտրությունները: Ընտրվեցին 38 շրջանային, 9 բաղաքային, 4 քաղաքային-շրջանային, 671 գյուղական և 18 ավանային խորհուրդներ[166]: Խորհուրդների և նրանց հանձնաժողովների միջոցով հազարավոր քաղաքացիներ մասնակից էին դառնում հանրապետության կառավարմանը:

Այդ մասնակցությունը, սակայն, գերազանցապես ձևական բնույթ էր կրում, քանի որ պետության կառավարման դեկը գտնվում էր կուսակցության ձեռքում: Կուսակցական կադրերի ջարդի պատճառով, որը դեռևս չէր դադարել, մեծապես փոխվել էր բոլոր աստիճանի մարմինների անձնակազմը: Դրանցում ներգրավվել էին նոր, երիտասարդ կադրեր, ովքեր կրթություն և դաստիարակություն էին ստացել վերջին տարիների ընթացքում, ստալինյան բռնակալության պայմաններում:

ՀԿ(բ)Կ 10-րդ համագումարում (1938 թ. հունիս) Կենտկոմի քարտուղար Գր. Հարությունյանը սեպտեմբերյան հայտնի պլենումի կազմակերպած կադրային ջարդից հետո կուսակցության նշանակալի նվաճումներից մեկը համարեց «հարյուրավոր ու հազարավոր երիտասարդ թարմ կադրերի համարձակ առաջքաշումը»: Անցած 8 ամսվա ընթացքում առաջքաշվածների թվում էին 1733 կոմունիստներ, կոմերիտականներ ու անկուսակցականներ: Նրանցից 414-ը աշխատանքի էին անցել կուսակցական մարմիններում[167]: Իսկ ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարից (1939 թ. մարտ) հետո մինչև ՀԿ(բ)Կ 13-րդ համագումարը (1940 թ. մարտ), այն է մեկ տարվա ընթացքում միայն կուսակցական աշխատանքի համար առաջ էր քաշվել 725

---

[166] Հայ ժողովրդի պատմություն: Հ. 7, Երևան, 1967, էջ 387:

[167] Գր. Հարությունյան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը ՀԿ(բ)Կ 11-րդ համագումարին: Երևան, 1938, էջ 108:

մարդ որպես քաղկոմների, շրջկոմների աշխատողներ, պրոպագանդիստներ և ուրիշներ[168]:

1938 թ. հունիսին կայացավ ՀԿ(բ)Կ 11-րդ համագումարը, որը քննարկեց Կենտկոմի հաշվետու զեկուցումը: Ամբողջ երկրում դեռևս շարունակվում էին զանգվածային բռնությունները և «հայրենիքի դավաճանների» ու «վնասարարների» դատավարությունները: ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու զեկուցումը ևս հագեցած էր ամենուրեք «թշնամիներ» որոնելու և բացահայտելու տրամադրությամբ ու ոգով: Բոլոր բնագավառների դժվարությունները, թերություններն ու սխալները վերագրվում էին այդ թշնամիներին ու վնասարարներին: «Ժողովրդի գազազած անարգ թշնամիների այդ ոհմակը....- ասված է համագումարի բանաձևում,- հրեշավոր հանցագործություններ էր կազմակերպում հայ ժողովրդի դեմ, վաճառվել էր ֆաշիզմին և աշխատանք էր կատարում Խորհրդային Միությունը մասնատելու և Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ ժողովուրդների մեծ ընտանիքից անջատելու նպատակով: Թշնամիների այդ ոհմակը փորձում էր Հայաստանը դարձնել իմպերիալիստական երկրների գաղութ և կապիտալիստական ստրկության լծի տակ գցել հայ ազատ ժողովրդին»: Չնայած այդ ամենին, այնուամենայնիվ «ոխերիմ թշնամուն» չէր հաջողվել կանգնցնել արդյունաբերության ու գյուղատնտեսության «բուռն աճումը», «սոցիալիստական կուլտուրայի ծաղկումը»: Հայաստանի կոմկուսը, շարունակում է համագումարի բանաձևը, առաջ քաշելով հազարավոր երիտասարդ կադրեր, պայքար ծավալեց տնտեսության մեջ, գաղափարական ճակատում և մյուս բնագավառներում «վնասարարության հետևանքներն ամենաարագ կերպով վերացնելու համար»[169]:

13-րդ համագումարում, որը կայացավ 1940 թ. մարտին, երբ արդեն իրադրությունը փոխվել էր ամեն տեսակետից, սկսվել էր 2-րդ աշխարհամարտը, կտրուկ մեղմացվել էր ստալինյան բռնությունների քաղաքականությունը, այլևս նախկին գնահատականներն անհետացել էին և միայն համագումարի բանաձևում, ասես իմիջիայլոց, տեղ էր տրվել այն մտքին, թե «վիթխարի աշխատանք է կատարված վնասարարության հետևանքները վերացնելու ուղղությամբ»[170]: Այս դեպքում համագումարի աշխատանքների կենտրոնում էին տնտեսական ու մշակութային գործի կազմակերպ-

---

[168] Գր. Հարությունյան, ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը ՀԿ(բ)Կ 13-րդ համագումարում: Երևան, 1940, էջ 96:

[169] Գր. Հարությունյան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը ՀԿ(բ)Կ 11-րդ համագումարին, էջ 119-120:

[170] Գր. Հարությունյան, ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը ՀԿ(բ)Կ 13-րդ համագումարում, էջ 101:

ման ու զարգացման, 3-րդ հնգամյա պլանի կատարումն ապահովելու հարցերը:

1939 թ. մարտին կայացավ ՀամԿ(բ)Կ 18-րդ համագումարը, որը քննարկեց Կենտկոմի հաշվետու զեկուցումը, ընդունեց ԽՍՀՄ ժողովրդատնտեսական ու մշակութային զարգացման 3-րդ հնգամյա պլանը (1938-1942 թթ.) և փոփոխություններ կատարեց կուսակցության կանոնադրության մեջ:

Հաշվետու ժամանակաշրջանում (1934-1939 թթ.), որն ընդգրկում էր շուրջ հինգ տարի, կուսակցության ու ժողովրդի կյանքում ԽՍՀՄ միջազգային դրության մեջ տեղի էին ունեցել մեծագույն իրադարձություններ: Ագրեսիվ երկրներ ֆաշիստական Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան երկրագնդի տարբեր մասերում ծավալել էին ռազմական գործողություններ, նախապատրաստվելով նոր աշխարհամարտի համար: ԽՍՀՄ-ը փորձում էր արևմտյան տերությունների հետ լեզու գտնել ֆաշիստական ագրեսիայի դեմ համատեղ միջոցառումներ իրականացնելու համար:

Երկրի ներքին կյանքը, երկրորդ հնգամյա պլանի կենսագործման շնորհիվ, նշանավորվեց սոցիալ-տնտեսական և մշակութային բնագավառների մեծագույն նվաճումներով: Ամփոփելով այդ հաջողությունները և ի մի բերելով ՆԷՊ-ի ընդունման ժամանակներից երկրում կատարված առաջադիմական տեղաշարժերը, 18-րդ համագումարն արձանագրեց, որ ԽՍՀՄ-ում հիմնականում հաղթանակել է սոցիալիզմը, և նա թևակոխել է պատմական նոր սոցիալիզմի կառուցումն ավարտելու և աստիճանաբար սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանը: Ըստ այդմ համագումարը գտնվում էր, որ 3-րդ հնգամյա պլանի կատարումով ԽՍՀՄ-ը «նոր վիթխարի քայլ» կկատարի «դեպի կոմունիզմի լիակատար հաղթանակը»:

Չթերագնահատելով երկրի ծեռք բերած նվաճումները ինչպես 2-րդ հնգամյակում, այնպես էլ մինչև այդ, միաժամանակ պետք է ընդգծել, որ կուսակցության ղեկավարությունը և անձամբ Ստալինը, գերագնահատում էին հաջողությունների նշանակությունը, երկրի նվաճած մակարդակը նրա հեռանկարային զարգացման գործընթացում: Դա բացատրվում է նաև սոցիալիզմի մասին տեսության հարցերի անբավարար մշակվածությամբ:

Տվյալ բնագավառում անվերապահ կերպով իշխում էին Ստալինի դոգմատիկ դատողությունները սոցիալիզմի տեսական հարցերի վերաբերյալ, բացակայում էին ստեղծագործական մոտեցումն ու կոլեկտիվ քննարկումները: Ստալինը նույնիսկ 18-րդ համագումարում շարունակում էր պայքարը երեկվա իր գաղափարական հակառակորդների դեմ, ժխտում նրանց ֆիզիկական վերացման բացասական ազդեցության հնարավորությունը խորհրդային պետության թուլացման ուղղությամբ, որպիսին հնչում էր ար-

տասահմանում: Նկատի ունենալով Տրոցկուն, Զինովևին, Կամենևին, Բուխարինին, Ռիկովին, Տուխաչևսկուն և մյուսներին «ծախու ստրուկների այդ խղճուկ բանդային» կամ «ճիվաղներին», Ստալինը նշում էր, թե այդ լրտեսների, մարդասպանների, վնասարարների մաքրումը խորհրդային հիմնարկներից միայն ամրապնդել է այդ կազմակերպությունները և ոչ թե «սասանել» ու «քայքայել» խորհրդային կարգերը[171]:

Երրորդ հնգամյակում ազգային հանրապետությունների զարգացման խնդիրները բխում էին արտադրողական ուժերի տեղաբաշխման համապատասխան սկզբունքներից, որոնք գործում էին նաև նախորդ հնգամյակներում:

Հնգամյակում Հայաստանի տնտեսական զարգացման ընթացքի հարցերը արդեն լուսաբանել ենք ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման հետ մեկտեղ: Ուստի այստեղ քիչ բան է մնում լրացուցիչ ներկայացնելու համար:

1940 թ. նշվեց Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 20-րդ տարեդարձը: Այդ կապակցությամբ տեղի ունեցավ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի հոբելյանական 5-րդ նստաշրջանը: Ժողկոմխորհի նախագահ Ա. Փիրուզյանը հանդես եկավ «Խորհրդային իշխանության 20 տարին Հայաստանում» զեկուցումով: Ինչպես 15-ամյակի ժամանակ, այժմ էլ Հայաստանի բարձրագույն ղեկավար մարմիններին ողջույնի հեռագրով դիմեցին ՀամԿ(բ)Կ կենտկոմը և միութենական կառավարությունը, հոբելյարին տոնական առաջնորդող հոդված նվիրեց «Պրավդա» թերթը: Ստեղծագործական մտավորականության մի խումբ ներկայացուցիչներ արժանացան պատվավոր կոչումների, իսկ արտադրության առաջավորներ շքանշանների ու մեդալների:

---

[171] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը: Հայպետհրատ, 1953, էջ 770-771:

Սովետական իշխանության անցած 20 տարիների ընթացքում, ԽՍՀՄ կազմում, Հայաստանում տեղի էին ունեցել մեծ իրադարձություններ ու փոփոխություններ, ծեռք բերվել նվաճումներ: Քիչ չէին, իհարկե, նաև կորուստներն ու զոհողությունները:

Մեծ նվաճում էր երկրի ինդուստրացումը: Հանրապետությունում կառուցվեցին տասնյակ գործարաններ ու ֆաբրիկաներ, հիմնվեցին արդյունաբերության ճյուղեր, ինչպես էներգետիկական, քիմիական, տեքստիլ, սննդի, շինանյութերի և այլն: Արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. նախապատերազմյան 1913 թ. համեմատությամբ ավելացել էր 8,7 անգամ[1]: Հատկանշական է էլեկտրաէներգիայի արտադրության ավելացումը (77 անգամ)[2], որը արդյունաբերության զարգացման հիմնական պայմանն էր: Փոխվել էր Հայաստանի տնտեսական դեմքը, այն այժմ զարգացող արդյունաբերություն ունեցող հանրապետություն էր, որը մասնագիտանում էր որոշակի ուղղությամբ, ելնելով ԽՍՀՄ ընդհանուր տնտեսության մեջ իր դերի և արդյունաբերության զարգացումը հումքի աղբյուրներին մոտեցնելու սկզբունքից: Ինդուստրացման կարևոր տարրը կադրերն էին, որոնք պատրաստվել էին խորհրդային իշխանության տարիներին: 1940 թ. արդյունաբերության մեջ զբաղված էր 34.5 հազար բանվոր-ծառայող[3]:

Այլ էր դրությունը գյուղատնտեսության մեջ: Կոլեկտիվացումով խախտվեց գյուղատնտեսության բնականոն զարգացման ընթացքը, քանի որ այն ժամանակավրեպ էր և կատարվեց գյուղացիության կամքին հակառակ, նրա նկատմամբ գործադրված բռնությամբ ու հարկադրանքով: Գյուղատնտեսական արտադրությունը առաջադիմելու փոխարեն հետադիմեց, խիստ բացասաբար ազդելով գյուղի ու քաղաքի բնակչության կենսամակարդակի վրա: Նման պայմաններում պաշտոնական քարոզչությունը գյուղատնտեսության համար նվաճում էր համարում խոշոր, մեքենայացված սոցիալիստական տնտեսության ստեղծումը: Այնուամենայնիվ տվյալ բնագավառում տեղի էին ունենում որոշ դրական երևույթներ, որոնք կարող էին նպաստել տնտեսական զարգացմանը: Պետությունը ուշադրություն էր նվիրում ոռոգման գործի վրա, որի հետևանքով ոռոգելի հողատարածութ-

---

[1] Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник. Ереван, 1957, с. 22.
[2] Նույն տեղում, էջ 30:
[3] Նույն տեղում, էջ 27:

յունները գրեթե կրկնապատկվեցին, հասնելով 180 հազար հեկտարի[4]: Ցամաքային կլիմա ունեցող Հայաստանի համար ոռոգումն ուներ կարևոր նշանակություն: Նպաստավոր պայմաններ կային պտղաբուծության, խաղողագործության, ծխախոտի ու շաքարի ճակնդեղի մշակության զարգացման համար, որի ուղղությամբ կատարվեցին առաջին միջոցառումներն ու քայլերը:

Գյուղատնտեսության հարցում որդեգրելով սխալ քաղաքականություն, որպիսին էր հարկադրական կոլեկտիվացումը, այնուհետև տասնամյակներ շարունակ խորհրդային պետությունը ստիպված եղավ զբաղվել նրա բացասական հետևանքները վերացնելու և պարենի ու արդյունաբերական հումքի պահանջները բավարարելու գործով: Բարեփոխումները դարձան անվերջ ու անավարտ, չլուծելով հարցը:

Տնտեսական զարգացման մեջ կատարվել էին որակական փոփոխություններ՝ արդյունաբերության և գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցում, բազմակացութաձևությունը վերաճել էր սոցիալիստականի: Այն տիրապետող էր դարձել նաև առևտրում:

Քսանամյա ժամանակաշրջանի արդյունք էր շահագործող դասակարգերի վերացումը, որոնց մեջ ամենաբազմամարդը կուլակությունն էր: Կազմավորվեցին սոցիալիստական հասարակության երկու դասակարգեր՝ բանվոր դասակարգը և կոլտնտեսային գյուղացիությունը: Նրանցից ձևավորվել էր խորհրդային մտավորականության խավը: Աճում էին քաղաքները և քաղաքային բնակչությունը: Վերջինիս աճի հիմնական աղբյուրը գյուղական բնակչությունն էր: Այդ աճը ոչ միայն ինդուստրացման հետ կապված բանվորության պահանջի, այլև կոլեկտիվացման կապակցությամբ գյուղական կյանքի պայմանների վատթարացման և գյուղից նրա բնակչության հեռանալու արդյունք էր: Քաղաքային բնակչության տեսակարար կշիռը 1926 և 1939 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակամիջոցում 19,0-ից բարձրացավ 29,0 տոկոսի[5]: Իսկ հանրապետության բնակչության թիվը նույն ընթացքում 881 հազարից հասել էր 1282 հազարի կամ ավելացել էր 45,5 տոկոսով[6]: Ավելացումը տեղի էր ունեցել բնական աճի, մասամբ նաև հայրենադարձության շնորհիվ:

---

[4] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940 гг.), Ереван, 1940, с. 62.

[5] Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Армянская ССР. М., 1963, с. 11.

[6] Всесоюзная перепись населения 1939 года. Основные итоги. М., 1992, с. 20.

Հայաստանի բնակչության աճի տեմպերը ռեկորդային էին միութենական հանրապետությունների համեմատությամբ: Նշենք, որ որոշ հանրապետություններում մասնավորապես գյուղական բնակչության նույնիսկ նվազում էր տեղի ունեցել:Դրա հիմնական պատճառը այն սովամահությունն էր, որը լայն տարածում էր գտել համապատասխան տարածքներում 1932-1933 թթ. կապված գյուղատնտեսության կոլեկտիվացման և խիստ ծանր հարկային քաղաքականության հետ: Այդպիսի հանրապետություններից էին Ռուսաստանը[7] (Հյուսիսային Կովկաս, Պովոլժյե), Ուկրաինան, Թուրքմենստանը և Ղազախստանը (միայն վերջինում նվազումը կազմում էր 21,1 տոկոս, այնտեղից կատարվել էր նաև մեծ արտագաղթ):

Ընդ որում ԽՍՀՄ-ում 1937 թ. կատարվել էր մարդահամար, որի արդյունքները չեն հրապարակվել և դրվել էին փակի տակ պետության համար դրանց աննպաստ արդյունքների պատճառով. չէին արդարացել երկրի բնակչության աճի վերաբերյալ պետության ղեկավարության կանխատեսումները, անձամբ Ստալինի հրապարակած տվյալները: Հետաքրքիր է, որ դրա համար 1937 թ. մարդահամարի գործի կազմակերպիչներն ու ղեկավարները հատուցեցին ծանր:

Ավելացնենք, որ 1939 թ. մարդահամարի տվյալներով ամբողջ ԽՍՀՄ-ում հայ բնակչության թիվը շուրջ 2 152 860 էր: Հայաստանից դուրս հայերը մեծ թիվ էին կազմում Ռուսաստանում, Վրաստանում և Ադրբեջանում: Վրաստանում հայերի թիվն ավելի քան 415 հազար էր, այդ թվում Թբիլիսիում 137 հազար (քաղաքի բնակչության 26,4 տոկոսը): Ադրբեջանում բնակվում էր 388 հազար հայ (հանրապետության բնակչության 12,1 տոկոսը), այդ թվում Բաքվում 119 հազար (14,7 տոկոս): Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում շարունակվում էր հայերի արտամղման քաղաքականությունը: Այնտեղ մնացել էր հազիվ 13 հազար հայ բնակչություն: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչության թիվը հասնում էր 133 հազարի, 88,0 տոկոս տեսակարար կշռով[8]: Վերջին ցուցանիշը որոշ չափով իջել էր, քանի որ ադրբեջանական ղեկավարությունը տարիներ շարունակ վարում էր մարզի ադրբեջանացման քաղաքականություն:

Հայկական ԽՍՀ աչքի էր ընկնում բնակչության ազգային կազմի միատարրությամբ 82,8 տոկոս[9]: Հայաստանի ազգային փոքրամասնությունների մեջ մեծ զանգված էին ադրբեջանցիները: Նրանց հետևում էին ռուսները (աղանդավորներ), քրդերը և ուրիշներ: Մարդահամարը քրդերի

---

[7] Նույն տեղում, էջ 22:
[8] Նույն տեղում, էջ 57-73:
[9] Նույն տեղում, էջ 73:

մեջ մտցրել է եզդիներին, որոնք, սակայն, իրենց համարում են ինքնուրույն ժողովուրդ:

Ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարվում էր ծրագրված քաղաքականություն: Նրանց մեծ մասը գյուղական բնակիչներ էին, ուստի կարևոր ուշադրություն էր նվիրվում տնտեսության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, մասնավորապես հողային բարեփոխումներին: Այդ իմաստով բնորոշ է ռուս գյուղացիության իրողությունը: Նկատի ունենք նրա հողային ապահովվածությունը, որը ցարիզմի վարած գաղութային քաղաքականության արդյունք էր, և որը տվյալ բնակչության համար ապահովել էր զարգացած տնտեսություն ի հակադրություն հարևան հայ գյուղացիության կացության: Մերժելով ձախ հավասարեցման մոտեցումը և պաշտպանելով ռուս բնակչության զարգացած տնտեսությունը պահպանելու (չքայքայելու) գերապատվությունը, 1920-ական թվականների հողային բարեփոխումների արդյունքում պահպանվեց այն, չնայած դրանով շարունակվում էր նրանց արտոնյալ դրությունը հայ բնակչության նկատմամբ:

Խորհրդային իշխանության մարմիններում իրենց ներկայացուցիչներն ունեին ազգային փոքրամասնությունները: Այդ գծով հանձնաժողով էր գործում ՀԿ(բ)Կ Կենտկոմում:

Սոցիալական բնագավառում տեղի ունեցած դրական տեղաշարժերից էին վերջին սահմանադրությամբ հռչակված ԽՍՀՄ քաղաքացիների աշխատանքի իրավունքը, նրանց նյութական ապահովությունը ծերության դեպքում, աշխատավորների ծրի բժշկական ծառայությունը, ծրի կրթության իրավունքը՝ ապահովելով ընդհանուր-պարտադիր տարրական կրթությունը: Կրթությունն իրականացվում էր մայրենի՝ հայերեն լեզվով:

Իրականացվեց կնոջ և տղամարդու իրավունքների հավասարեցում: Խորհրդային իշխանությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց կանանց արտադրական, հասարակական-քաղաքական ու մշակութային գործունեության մեջ ներգրավելու համար: Տվյալ բնագավառում կոմունիստական կուսակցությունը վարում էր մշակված քաղաքականություն: Մոր և մանկան պաշտպանությունը դարձավ պետության հոգածության բնագավառ: Նյութական օգնություն էր ցույց տրվում բազմազավակ մայրերին: Մեծացավ աղջիկ սովորողների տեսակարար կշիռը աշակերտների և ուսանողների ընդհանուր թվաքանակում: Խորհրդային իշխանության մարմինների և կուսակցության կազմում կանանց համար ապահովվում էր որոշակի տեղ:

Երկրի սոցիալ-տնտեսական նվաճումներին համապատասխան որոշ բարելավում տեղի ունեցավ աշխատավորների և ամբողջ բնակչութ-

յան կյանքի պայմաններում, չնայած նրան, որ պետության քաղաքականությունը համեմատաբար պակաս ուշադրություն ու միջոցներ էր նվիրում սպառման բնագավառին: Բերենք մի քանի բնորոշ տվյալներ:

Այսպես, բանվոր-ծառայողների 3,3 անգամ աճի դիմաց 1928-1939 թթ. նրանց աշխատավարձի ֆոնդն ավելացել էր 19 անգամ: Բարձրացել էր մեկ աշխատողի անվանական աշխատավարձի միջին գումարը, չնայած նրան, որ միաժամանակ տեղի էր ունեցել նաև ապրանքների գների աճ: Անցած 20 տարիների ընթացքում կառուցվել և շահագործման էր հանձնվել 1,1 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն, հիմնականում պետության միջոցներով և այն էլ գերազանցապես քաղաքներում: Գյուղում բնակարանային լայն շինարարություն դեռևս չէր ծավալվել նրա բնակչության միջոցների սղության պատճառով: Որոշ աշխատանք կատարվել էր միայն դպրոցների, խրճիթ-ընթերցարանների, ակումբ-գրադարանների շինարարության ուղղությամբ, որն առաջնահերթ գործերից էր խորհրդային իշխանության ամրապնդման տեսանկյունից: 1932-1939 թթ. կոլտնտեսությունների համախառն ու դրամական եկամուտները համապատասխանաբար ավելացան 5,8 և 8,7 անգամ: Հանդես եկան առաջին «միլիոնատեր» կոլտնտեսությունները: 1935 թ. 12-ի դիմաց նրանց թիվը 1939 թ. հասավ 53-ի: 1939 թ. Մոսկվայում բացված Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում իրենց նվաճումները ցուցադրելու հնարավորություն ունեցան հանրապետության որոշ առաջավոր տնտեսություններ: Հայտնի էին Էջմիածնի (Վաղարշապատի շրջան), Դարղալուի (Ղամարլուի շրջան) և այլ կոլտնտեսություններ:

Խորհրդային իշխանության նվաճումներից էր առողջապահության հիմնարկների ցանցի կազմակերպումը: 1913 թ. 6 բուժհիմնարկի դիմաց 1939 թ. գործում էր 88-ը, ավելի քան 3700 մահճակալով ու հազարից ավելի բժիշկներով: Կազմակերպված պայքար ծավալվեց տարածված մալարիա հիվանդության դեմ: Բացվեցին սանատորիաներ ու հանգստյան տներ, որ նոր երևույթ էր:

Ծավալվեց առևտուրը, որը ժողովրդի նյութական պայմանների բարելավման կարևոր պայման էր: 1939 թ. հատավաճառ ապրանքաշրջանառության ծավալը 1928 թ. համեմատությամբ ավելի էր շուրջ 16 անգամ[10]: Քաղաքներում ու գյուղերում կազմակերպվել էր պետական ու կոոպերատիվ առևտրական կազմակերպությունների լայն ցանց: Խորհրդային առևտուրը գործում էր պահանջարկը առաջանցիկ է առաջարկից սկզբուն-

---

[10] Социалистическое строительство Армянской ССР (1920-1940 гг.), Ереван, 1940. Народное хозяйство Армянской ССР. Статистический сборник. Ереван. 1957.

քով, որը խորհրդային երկրում սպառման շահերին առաջնային նշանակություն չտալու և գյուղատնտեսական արտադրության տևականորեն հետ մնալու արդյունք էր:

Բնակչության սպառողական պահանջմունքների կազմակերպումը խորհրդային առաջին տարիներին կրել է բաշխման, ապրանքափոխանակության ձև որպես արդյունք տնտեսության քայքայված վիճակի, ինչպես նաև ռազմական կոմունիզմի պայմաններում արտադրության ու բաշխման նկատմամբ կոմունիստական սկզբունքի պաշտպանության, որը շրջանցում ու բացառում էր շուկայական-ապրանքադրամական հարաբերությունները: Պարենի ու սպառման ապրանքների բաշխման սկզբունքը գործադրվել է նաև խորհրդային իշխանության հետագա տարիներին, տարբեր ժամանակներում դրանց մեծ անբավարարության պատճառով:

1928-1929 թթ. ԽՍՀՄ խոշոր քաղաքներում մտցվեց օրապարենավորում հացի և տարբեր պարենամթերքների նորմավորված (քարտային) սիստեմ (1934 թ. վերջերին ԽՍՀՄ-ում հացի քարտերից օգտվում էր 50 միլիոն 540 հազար մարդ), որը տևեց մինչև 1935 թ.: Այդ ընթացքում, ելնելով պարենամթերքի սուր անհրաժեշտությունից (կապված կոլեկտիվացման հետևանքների և սովի դեմ մղվող պայքարի հետ) կազմակերպվեց կոմերցիոն առևտուր, որտեղ, սակայն, գները բազմակի բարձր էին նորմավորված մատակարարման (նորմալ) գներից: «Սոցիալիստական ծավալուն հարձակման» առաջին հնգամյակի տարիներին հապշտապ գրոհ կազմակերպվեց նաև մասնավոր առևտրի և առևտրականների (նեպմանների) դեմ, որը (մասնավորը) պահանջմունքների բավարարման կարևոր աղբյուր էր:

Որոշ ժամանակ ենթադրվում էր, թե քարտային սիստեմը հնարավոր կլինի վերացնել երկրորդ հնգամյակի վերջերին, սակայն այն տեղի ունեցավ ավելի վաղ: ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարում (1934 թ. հունվար-փետրվար) պահանջ դրվեց նախապատրաստվել դրան, իսկ Կենտկոմի 1934 թ. նոյեմբերյան պլենումն այդ մասին ընդունեց կոնկրետ որոշում: Այդ հնարավոր դարձավ արդյունաբերության զարգացման և 1933-1934 թթ. հացահատիկի որոշ չափով լավ բերքի, հացի հաջող մթերումների ու գնումների և համապատասխան ֆոնդեր կուտակելու շնորհիվ:

Կուսակցության 17-րդ համագումարում Ստալինն արդեն խոսում էր առևտրի զարգացման անհրաժեշտության մասին և քննադատում հակառակ տեսակետը: «Հարկ եղավ այնուհետև հաղթահարել այլ կարգի նախապաշարմունքներ,- նշել է Ստալինը,- Խոսքը վերաբերում է մեր աշխատողների մի մասի շրջանում տարածված ծախլիկ դատարկախոսությանն այն մասին, թե իբր սովետական առևտուրն անցած ստադիա է, թե մենք պետք է կարգի գցենք ուղղակի մթերափոխանակությունը, թե փողը շու-

տով կվերացվի, քանի որ այն իբր թե դարձել է հասարակ հաշվենիշ, թե կարիք չկա զարգացնելու առևտուրը, եթե մեր դուռն է բախում ուղղակի մթերափոխանակությունը»[11]:

1934 թ. հոկտեմբերի 22-ին Կենտկոմի քարտուղար Կագանովիչին գրած նամակում Ստալինն առաջարկում էր տարվա վերջին վերացնել հացի քարտային սիստեմը, որը «ոչ վաղ շրջանում պետք էր ու օգտակար, իսկ այժմ դարձել է արգելք ժողովրդական տնտեսության համար»[12]:

Հացի քարտային սիստեմի վերացումն ամբողջ ԽՍՀՄ-ում կատարվեց 1935 թ. հունվարի 1-ից, իսկ մյուս պարենային մթերքներինը հոկտեմբերի 1-ից: Դրա հետ կապված իրականացվեցին միջոցառումներ աշխատավորների աշխատավարձի բարձրացման, նոր սահմանված գների տարբերությունը (նորմալ գներից բարձր և կոմերցիոն գներից ցածր) փոխհատուցելու և առևտրական հիմնարկների ցանցն ընդարձակելու համար: Հայաստանում հատավաճառ առևտրի հիմնարկների թիվը 1928 թ. 661-ի փոխարեն 1940 թ. հասավ 2710-ի: Ընդլայնվեց նաև հասարակական սննդի հիմնարկների ցանցը: Նույն ժամանակամիջոցում պետական և կոոպերատիվ հատավաճառ ապրանքաշրջանառությունն ավելացավ 60 անգամ[13]: Որոշ ազատություն ստացավ և աճեց կոլտնտեսային առևտուրը.

Խորհրդային Հայաստանի 20 տարին հատկապես նշանակալի էր խորհրդահայ մշակույթի նվաճումներով նրա կրթության, գրականության և արվեստի բնագավառներում:

Դարավոր և հարուստ մշակույթի տեր հայ ժողովրդի համար, ի դեմս խորհրդային պետականության, ստեղծվում էին նրա զարգացման նպաստավոր պայմաններ: Ազգային մշակութային գործի համար 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության ձեռնարկած առաջին քայլերը իրենց զարգացումը գտան նոր իրադրության մեջ:

Մշակութային քաղաքականության հիմքում դրված էր կոմունիստական կուսակցության պահանջը, որն է մարդկանց և ամբողջ հասարակության դաստիարակությունը կոմունիստական գաղափարախոսության ոգով կամ «կուլտուրական հեղափոխության» իրականացումը: Այն, սակայն, ժխտում և մերժում էր ազատ ստեղծագործության հնարավորությունը: Գրականության և արվեստի գործիչների համար ստեղծագործական ուղեցույց էր ճանաչվում «սոցիալիստական ռեալիզմը»: Չնայած գաղափարա-

---

[11] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը: Հայպետհրատ, 1953, էջ 612-613:
[12] Р. У. Дэвис, О. В. Хлевнюк. Отмена карточной системы в СССР. 1934-1935 гг. Отечественная история,1999, N 5, с. 87-108.
[13] Советская Армения за 40 лет. Статистический сборник. Ереван, 1960, с. 195-196.

կան կաշկանդվածությանն ու սահմանափակությանը, մշակույթն այնուամենայնիվ հարթում էր իր զարգացման ուղին: Ստեղծվում էր ծնով ազգային (խորհրդահայ), բովանդակությամբ սոցիալիստական մշակույթ:

Ստեղծվեց կրթության լայն համակարգ: 1940/41 ուսումնական տարում գործում էր 1155 հանրակրթական (տարրական, 7-ամյա և միջնակարգ) դպրոց, մոտ 326,6 հազար աշակերտներով (նրանց թիվը 1914/15 ուստարվա համեմատությամբ ավելի էր 9,4 անգամ), 62 միջնակարգ մասնագիտական հաստատություն (տեխնիկում), մոտ 9 հազար սովորողներով (նախասովետական տարիներին կար մեկ հաստատություն): 1919 թ. կազմակերպված Երևանի համալսարանից բացի գործում էին 8 այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնցում սովորում էին 11,1 հազար ուսանողներ[14]: Հանրապետության վերակառուցվող և աճող տնտեսության կարիքները հիմնականում բավարարվում էր տեղում պատրաստված կադրերի միջոցով:

Կրթության բնագավառի նվաճումներից էր լայն պայքարի կազմակերպումը անգրագիտությունը վերացնելու համար: Նախախորհրդային Հայաստանում 9-49 տարեկան տղամարդ բնակչության 95,5 և կանանց 97,1 տոկոսը գրել-կարդալ չգիտեր: 1897 թ. տվյալներով գրագետ էր բնակչության ընդամենը 9,2, 1920 թ. 15,3, իսկ արդեն 1939 թ. 83,9 տոկոսը[15]: Անգրագիտության վերացման գործում կարևոր նշանակություն ունեցավ անցումը պարտադիր տարրական կրթության 1-ին հնգամյակի ընթացքում:

Անգրագիտության վերացման հիմնախնդիրը քսան տարվա ընթացքում հիմնականում լուծվել էր: Այն բնակչության մշակութային մակարդակի բարձրացման նշանակալի ցուցանիշ էր:

Գիտական մտքի զարգացման պայմանները անբավարար էին միջոցների սղության պատճառով: Այն փաստորեն նոր էր կազմակերպվելու և կադրերի պատրաստման, և գիտական հիմնարկների ստեղծման առումով: Նախախորհրդային Հայաստանը գիտական հիմնարկներ գրեթե չի ունեցել, իսկ սակավաթիվ հայ գիտնականները գործել են Հայաստանից դուրս: Նրանց զգալի մասը վերադարձավ Հայաստան և նվիրվեց նրա վերելքին ծառայելու գործին:

Հիմնական գիտական կենտրոնը 1935 թ. կազմակերպված ԽՍՀՄ - գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղն էր, որում ընդգրկված էին մի քանի ճյուղային ինստիտուտներ: Գիտական աշխատանք էր տարվում նաև Երևանի պետական համալսարանում, պոլիտեխնիկական և

---

[14] Народное хозяйство Армянской ССР. Юбилейный статистический сборник к 60-летию образования СССР. Ереван, 1982, с. 260-261.
[15] Նույն տեղում, էջ 14:

այլ ինստիտուտներում: Շատ թե քիչ նպաստավոր պայմաններ ու հնարավորություններ կային հայագիտության (լեզու, գրականություն, պատմություն) զարգացման համար՝ համապատասխան կադրերի առկայության շնորհիվ: Լեզվաբանության մեջ բացառիկ նվաճում էր Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» 7 հատորների հրապարակ գալը, որը շուրջ 40-ամյա հետևողական աշխատանքի արդյունք էր: Այն ընդգրկում է շուրջ 11 հազար բառ, դրանց գիտական բացատրություններով և մոտ 5100 բառարմատ, դրանց ստուգաբանությամբ: Գրիգոր Ղափանցյանն ուսումնասիրեց հին հայերենի առնչությունները մի շարք հին (մեռած) լեզուների հետ, նպաստելով հայ ժողովրդի կազմավորման, նրա աշխարհագրական տեղադրման հարցերի լուսաբանությանը: Հայ հին և միջնադարյան գրականության պատմության ուսումնասիրությամբ է զբաղվել Մանուկ Աբեղյանը:

Բնական գիտությունների հաջողությունները կապված էին հանրապետության տնտեսության, ինդուստրացման խնդիրների լուծման հետ: Ստեփան Ղամբարյանի և Լևոն Ռոտինյանի աշխատանքները նվիրված էին արհեստական կաուչուկի (Երևանի կաուչուկի գործարան) և կարբիդ-կալցիումի (Ղարաքիլիսայի, այժմ Վանաձոր, քիմիական գործարան) ստացման եղանակների գիտական մշակմանը: Հովհաննես Կարապետյանը և Տիգրան Ջրբաշյանը լուծում էին պղնձի և այլ հանածոների հանքապաշարների և դրանց արդյունաբերական նշանակության հարցերը:

Բարդ և դժվարին ուղի է անցել գրական կյանքը՝ ստեղծագործական ուղու որոնումներ, լեզվի ու ոճի հարցեր, գրական խմբակներից դեպի կազմակերպական միավորում տանող և այլ կարգի դժվարությունների հաղթահարում:

Խորհրդայնացումից հետո Հայաստան մուտք գործեց Խորհրդային Ռուսաստանի փորձը՝ ինչպես «պրոլետարական կուլտուրայի» (պրոլետկուլտ) գծով, ընդհանրապես, այնպես էլ գրական կյանքի տեսակետից: Գրականությունը Կոմունիստական կուսակցության ձեռքին կարևոր զենք էր մարդկանց սոցիալիստական ոգով դաստիարակելու ու վերադաստիարակելու համար մղվող պայքարում: Կուսակցության ղեկավարությունը պարբերաբար անդրադառնում էր գրականության հարցերին, գաղափարական ու կազմակերպական ուղղություն տալով գրական կազմակերպությունների գործունեությանը: 1925 թ. ՌԿ(բ)Կ Կենտկոմն ընդունեց «Կուսակցության քաղաքականությունը գեղարվեստական գրականության մասին» որոշումը: Կենտկոմը պարզաբանում էր գրական կազմակերպությունների խնդիրները տվյալ պատմական ժամանակաշրջանի համար: Կարևոր նշանակություն էր տրվում պրոլետարական գրականության առաջատար

դերի ապահովմանը. միաժամանակ չէին անտեսվում նրա կողմից հին դեմոկրատական ուղղության գրողների (այսպես կոչված «ուղեկիցներ») նկատմամբ ճիշտ դիրքորոշման, զգայուն վերաբերմունք ցուցաբերելու հարցերը: Նույնպիսի ոգով ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց 1926 թ. («Հայաստանի կոմկուսի քաղաքականությունը գեղարվեստական գրականության ասպարեզում»): Նույն թվականին գրական խմբակները միավորվեցին Հայաստանի պրոլետարական գրողների միության մեջ: 1927 թ. «ուղեկիցները» համախմբվեցին «Հայ աշխատավորական գրողների միության» մեջ: Իսկ 1929 թ. հիշյալ երկու կազմակերպությունները միացան որպես Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիա:

Պրոլետարական գրականության հիշատակության արժանի նմուշներից է Հայաստանի նորակառույցներին նվիրված գրական շարքը («Շիրկանալ» և այլն), ինչպես նաև Լենինի գեղարվեստական կերպարի (անկախ հետագայում նրա քաղաքական «արժեզրկումից») վերարտադրությունը (Հակոբ Հակոբյան, Գեղամ Սարյան, Գուրգեն Մահարի, Մկրտիչ Արմեն, Եղիշե Չարենց): Պրոլետարական գրական շարժումը, սակայն, տառապում էր այնպիսի միակողմանիությամբ, որպիսին էր անցյալի գրական ժառանգության նշանակության ժխտումը «ազգայնականի» պիտակի տակ:

1930-ական թվականներին գրական շարժման համար ստեղծվեց նոր իրադրություն: Սոցիալիստական շինարարության նվաճումները, աշխատավոր մարդկանց արտադրական խանդավառությունը, գյուղի վերափոխումներն ու նոր երևույթները նոր խնդիրներ էին դնում գրական ստեղծագործության համար: Սոցիալիստական ռեալիզմը ճանաչվեց որպես գրական ստեղծագործության մեթոդ և ուղղություն: Այդ կապակցությամբ հարկ եղավ 1932 թ. վերացնել պրոլետարական գրական կազմակերպությունները (ՌԱՊՊ) ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումով: Կուսակցական որոշում ընդունվեց «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին»: Ըստ այդմ վերացվեցին Հայաստանի պրոլետգրողների ասոցիացիան, Հայաստանի գրողների ֆեդերացիան և բոլորը համախմբվեցին Հայաստանի գրողների միության մեջ: 1934 թ. կայացան Հայաստանի գրողների և գրողների Համամիութենական առաջին համագումարները, որոնք կարևոր նշանակություն ունեին խորհրդային գրականության զարգացման խնդիրները լուծելու տեսակետից: Համագումարներին նախորդեցին նաև լայն բանավեճեր: Այդ ամենի արդյունքում հաստատվեց այն տեսակետը, որ խորհրդային գրականության գլխավոր խնդիրը սոցիալիզմ կառուցող մարդու և հասարակական ուժերի գեղարվեստական վերարտադրությունն էր, որն իր ձևակերպումը գտավ «սոցիալիստական ռեալիզմ» արտահայտության մեջ, որպես ստեղծագործական մեթոդի:

Չնայած գաղափարական տեսանկյունից գրականության համար այդ մեթոդի կամ պահանջի սահմանափակությանը, այնուամենայնիվ տաղանդն ուղի էր հարթում իր բացահայտման, ազատ և անկաշկանդ գործունեության համար: Մի շարք գրողներ ստեղծեցին բարձրաժեք գրական գործեր: Ազգային ավանդույթների հիմքի վրա գրականությունը զարգացնելու փայլուն օրինակ են Եղիշե Չարենցը և Ակսել Բակունցը: Չարենցը գովերգեց իր «անուշ Հայաստանի» հարստությունները, բնությունը, Սասիս սարը, ժողովրդին, նրա ականավոր անհատներին, մշակույթի նվաճումները, հայրենիքը: «Գիրք ճանապարհին» ժողովածուն անդրադարձ է դեպի հայ ժողովրդի պատմական անցյալը, նրա անցած ուղին, պատմությունը:

Ակսել Բակունցի գործերը նվիրված են հայ գյուղի, նրա շարքային մարդկանց նկարագրությանը: Արձակի մեջ նվաճում էին Բակունցի «Խաչատուր Աբովյան» և «Կարմրաքար» անավարտ վեպերը:

Նոր հեղինակներից պետք է հիշատակել նաև Նաիրի Զարյանին, որը տվել է գյուղի կոլեկտիվացմանը նվիրված մի շարք չափածո գործեր: Չնայած գաղափարական տեսակետից դրանք ի վերջո դարձան խոցելի, այնուամենայնիվ գեղարվեստական տեսակետից բարձրաժեք ստեղծագործություններ են:

Ստեղծագործական վերելք էին ապրում Գուրգեն Մահարին, Մկրտիչ Արմենը, հին գրական սերնդի ներկայացուցիչներ Ստեփան Զորյանը, Դերենիկ Դեմիրճյանը և ուրիշներ:

Սակայն ստալինյան բռնությունները փաստորեն խաթարեցին գրական կյանքի ընթացքը: Կյանքից զրկվեցին Չարենցն ու Բակունցը, ոմանց վիճակվեց բանտ ու աքսոր: Խաթարվեց ոչ միայն գրողների, այլ նաև մշակույթի մյուս ճյուղերի գործիչների գործունեությունը:

Գրողների օրինակով միավորվեցին նաև արվեստի բնագավառի ստեղծագործողները: Վերացան Հայաստանի այրոլետարական երաժիշտների, ճարտարապետների ու նկարիչների միությունները, որոնց փոխարինելու եկան Հայաստանի խորհրդային երաժիշտների, նկարիչների ու կերպարվեստի աշխատողների և ճարտարապետների միությունները: Հետագայում կազմակերպվեց թատերական գործիչների միությունը: Այդ վերակառուցումները նպաստում էին ուժեղացնելու կուսակցության գաղափարական ղեկավարումը մշակույթի նկատմամբ:

Հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց մշտապես գործող և պետության հոգատարությունը վայելող թատրոն: 1922 թ. կազմակերպվեց Երևանի առաջին պետական թատրոնը, որի առաջին բեմադրությունը Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսն էր: Այնուհետև թատրոնը կոչվեց հենց նրա անունով: Այն դարձավ Հայաստանում թատերական

գործի առաջատարը: Այնտեղ կենտրոնացավ հայ դերասանների մի փայլուն սերունդ, որը տասնամյակներ շարունակ հանդիսականին ներկայացրեց հայ, ռուսական ու եվրոպական դրամատուրգիայի նշանավոր գործեր: Թատրոններ էին գործում նաև Լենինականում (Գյումրի), Կիրովականում (Վանաձոր) և այլ քաղաքներում: Հայրենական պատերազմի նախօրյակին Հայաստանում կար 34 թատրոն, որոնց թվում էին նաև պատանի հանդիսատեսի, շրջիկ, ռուսական, ադրբեջանական և այլ թատրոններ:

Կինոն, արվեստի այդ ամենաժողովրդական տեսակը, բոլորովին նոր երևույթ էր հայ իրականության մեջ, որպիսի գործի կազմակերպման մեջ մեծ դեր խաղաց նշանավոր կինոբեմադրիչ Համո Բեկ-Նազարյանը: 1925 թ. էկրան բարձրացավ Շիրվանզադեի պատմվածքի հիման վրա նկարահանված «Նամուսը» համր կինոնկարը: 1935 թ. հանդիսականին հանձնվեց առաջին հնչյունային «Պեպո» կինոնկարը:

Թատրոնի և կինոյի համար ընտրվում էին ազգային, պատմահեղափոխական և այլ թեմաներ, ապա շեշտադրվեցին հեղափոխական, Հայաստանում խորհրդային իշխանության համար պայքարի թեմաները: Կինոյում նման շրջադարձի համար նշանակություն ունեցան Ստալինի դիտողությունները «Պեպո» կինոնկարի կապակցությամբ, որի մասին նամակով Հայաստանի ղեկավարությանը տեղեկացրեց Ա. Միկոյանը: Ստալինը դրական տպավորություն էր ստացել «Պեպոյի» դերասանական խաղից և կենցաղային տեսարաններից, միաժամանակ ցանկություն էր արտահայտել դերասանների լավ խաղը օգտագործել այնպիսի կինոնկարներում, որոնք նվիրված լինեին դաշնակցության դեմ պայքարին և Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմանը: Ըստ դրա շուտով ծնվեցին «Զանգեզուր» և այլ կինոնկարները:

Երաժշտական արվեստում մնայուն գործեր ստեղծեցին Ալեքսանդր Սպենդիարյանը և Արամ Խաչատրյանը: Ալ. Սպենդիարյանի «Երևանյան էտյուդները» սիմֆոնիկ ստեղծագործությունը հորինված է ազգային մեղեդիների գեղեցիկ պատկերիների վրա: Իսկ «Ալմաստ» օպերայի հիմքում դրված է հայ ժողովրդի ազատագրական պայքարն ըստ Հովհ. Թումանյանի «Թմբկաբերդի առումը» պոեմի: Ալ. Սպենդիարյանը դարձավ հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը:

1930-ական թվականներին իր ստեղծագործական ուղին բացեց երգահան Արամ Խաչատրյանը: Առաջին իսկ երաժշտական գործերը (սիմֆոնիա և այլն) Արամ Խաչատրյանին բերեցին լայն ճանաչում և համաշխարհային հռչակ: Նրա գործունեությունը ծավալվեց ու հարստացավ հետագա տասնամյակների ընթացքում:

Հայ երգի տարածման գործում մեծ էր Շարա Տալյանի և Հայկանուշ Դանիելյանի վաստակը: Այն ավելի ծավալվեց Երևանի օպերայի և բալետի պետական թատրոնում, որի հանդիսավոր բացումը կայացավ 1933 թ. Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ներկայացումով: Օպերայի և բալետի թատրոնի հոյակապ շենքի (ժողտուն) կառուցումը լայն հնարավորություններ ստեղծեց տվյալ բնագավառի զարգացման, երգիչ-երգչուհիների կադրերի աճի, նրանց կարողությունների դրսևորման համար: Թատրոնի խաղացանկում մշտական տեղ գրավեց Արմեն Տիգրանյանի անմահ «Անուշ» օպերան՝ ըստ Հովհ. Թումանյանի համանուն պոեմի:

Հայ երգի ու պարի կատարողական սահմանները լայնորեն տարածեց Հայկական երգի ու պարի անսամբլը, որն այժմ կրում է նրա երկարամյա ղեկավար Թաքուլ Ալբունյանի անունը: Պետք է հիշել նաև գուսանական երգի անսամբլի գործունեության մասին, որը ղեկավարում էր երգիչ Վաղարշակ Սահակյանը:

Աննախընթաց վերելք ապրեց խորհրդահայ կերպարվեստը: Հայ նկարչությանը համաշխարհային հռչակ բերեց Սարտիրոս Սարյանը: Նրա նկարների բովանդակությունն են հայրենի բնությունը, նրա սարերն ու դաշտերը, պտուղները, հայ ժողովրդի զավակները: Մ. Սարյանի նկարների համար բնորոշ է վառ գույնը: Նրանք ճառագում են արև ու լույս, պայծառություն ու գեղեցկություն:

1935 թ. կազմակերպված կերպարվեստի թանգարանը (Հայաստանի ազգային պատկերասրահ) պահպանում է նկարների հարուստ հավաքածու:

Քանդակագործության բնագավառում աչքի ընկան Սերգեյ Մերկուրովը, Արա Սարգսյանը, Երվանդ Քոչարը և ուրիշներ: Ս. Մերկուրովի նշանավոր գործերից է Ստեփան Շահումյանի արձանը, որը տեղադրված է Երևանում: Մայրաքաղաքի կենտրոնական հրապարակում էր գտնվում նրա հեղինակած Լենինի մոնումենտալ հուշարձանը, որը քաղաքական նկատառումներով հանվեց խորհրդային իշխանության վերացման և նոր, անկախ պետականության հաստատման կապակցությամբ: Ս. Մերկուրովի այլ հուշարձաններ տեղադրված են Ռուսաստանի մի շարք քաղաքներում:

Մեծ վերելք ապրեց խորհրդահայ ճարտարապետությունը շնորհիվ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի գործունեության: Այն պայմանավորված էր նաև հանրապետության ինդուստրացման և քաղաքների աճի հանգամանքով: Խորհրդահայ ճարտարապետության զարգացման հիմքում ընկած էր ազգային ճարտարապետական ավանդույթների ստեղծագործական յուրացումը, դրա զուգակցումը ժամանակակից քաղաքաշինության սկզբունքների հետ: Այդ ընթացքում հարկ եղավ հաղթահարել ոչ քիչ

դժվարություններ և հատկապես ավանդական ճարտարապետության նկատմամբ գոյություն ունեցող ժխտողական վերաբերմունքը:

1924 թ. հաստատվեց Ալ. Թամանյանի մշակած մայրաքաղաք Երևանի հատակագիծը: Այն նախագծված էր 150 հազար բնակչի հաշվով, 15 տարվա համար: Սակայն Երևանն աճում էր ավելի արագ, քան ենթադրվում էր: Ուստի հետագայում մշակվեցին մայրաքաղաքի նորանոր հատակագծեր, որոնց հիմքում ընկած են Ալ. Թամանյանի կանխատեսումները: Ալ. Թամանյանի նախագծերով կառուցվեցին կառավարական տունը ապագա հրապարակում և օպերայի ու բալետի պետական թատրոնի (ժողտուն) շենքը: Դրանք հայկական ճարտարապետության ու կառուցողական արվեստի գլուխգործոցներ են, պարծանք ու պատիվ բերող հայ ժողովրդին, նրա տաղանդավոր զավակներին:

Քսան տարին մեծ ժամանակաշրջան չէ պատմության մեջ, իսկ այդ կարճատև ընթացքում հայկական մշակույթը ապրեց իսկական վերելք, ազգային հիմքի վրա ձևավորվեց նոր, սոցիալիզմի գործին ծառայող մշակույթ: Չնայած սոցիալիստական գաղափարախոսությունը սահմանափակում էր ազատ ստեղծագործական միտքը, այնուամենայնիվ մշակույթի շատ գործիչներ, հաղթահարելով դժվարությունները, ստեղծում էին մնայուն ազգային արժեքներ:

ԽՍՀՄ-ում ավանդույթ դարձան միութենական հանրապետությունների ազգային մշակույթների նվաճումների ցուցադրումները: Այն քաղաքական նպատակ հետապնդելու հետ միաժամանակ նպաստում էր ազգային մշակույթների պրոպագանդային խորհրդային ժողովուրդների մոտ, ինչպես նաև դրանց հետագա զարգացմանը:

1939 թ. հանդիսավոր պայմաններում նշվեց հայ ժողովրդական էպոս «Սասունցի Դավթի» հազարամյակը: Այդ կապակցությամբ էպոսը թարգմանվեց և տպագրվեց ռուսերեն և ԽՍՀՄ մի շարք այլ ժողովուրդների լեզուներով, լույս տեսավ հայերենի ակադեմիական հրատարակությունը: Հոբելյանական հանդիսավոր նիստին ներկա էին խորհրդային երկրի նշանավոր գրողներ: «Խորհրդային մշակույթի միջոցով,- գրեց «Պրավդա» թերթը»,- «Սասունցի Դավիթը» մտնում է համաշխարհային մշակույթի ոլորտ և դառնում մարդկության հերոսական մեծ էպոսի մի մասը»[16]:

«Սասունցի Դավթի» հոբելյանական տոնակատարությանը հաջորդեց հայկական արվեստի տասնօրյակը Մոսկվայում: Մեծ թատրոնի բեմում ներկայացվեցին հայկական օպերային արվեստի նմուշներ Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ», Արմ. Տիգրանյանի «Անուշ», Հ. Ստեփանյանի «Լուսաբացին» օպերաները և Ա. Խաչատրյանի «Երջանկություն» բալետը («Գայա-

[16] Правда, 15 сентября 1939 г.

նե» բալետի առաջին տարբերակը): Կայացավ հայ և ռուս գրողների հանդիպում, կազմակերպվեց հայ կերպարվեստի ցուցահանդես: Նոյեմբերի 4-ին կուսակցության և կառավարության ղեկավարները Կրեմլում ընդունեցին հայկական արվեստի տասնօրյակի մասնակիցներին:

Սոսկվայում առանձին, հայ գրականության տասնօրյակ կազմակերպվեց 1941 թ. մայիսին: Ակադեմիկ Ե. Տարլեն այդ կապակցությամբ գրեց. «Տաղանդավոր հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում ստեղծել է չափազանց հարուստ մշակույթ, հիանալի արվեստ և գեղեցիկ գրականություն»: Ճիշտ է ասված: Միայն պետք է ավելացնել, որ վերջին տարիների անհիմն բռնաճնշումների հետևանքով այդ «գեղեցիկ գրականության» մի շարք գեղեցիկ ստեղծագործողներ չէին կարող և չներկայացվեցին այդ տասնօրյակում:

Սովետական Միության վրա ֆաշիստական Գերմանիայի հարձակման և Հայրենական մեծ պատերազմի պատճառով ընդհատվեց երկրի խաղաղ զարգացման ընթացքը:

Խորհրդային Հայաստանի առաջին երկու տասնամյակները նշանակալի են հայ ժողովրդի պատմության մեջ: Ճիշտ է, նա զրկվել էր իր անկախ պետականությունից, այնուամենայնիվ ԽՍՀՄ կազմում, խորհրդային ժողովուրդների հետ համատեղ կատարեց առաջընթաց քայլ սոցիալ-տնտեսական ու մշակութային բնագավառներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ
ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920-1922ԹԹ.
ԳԼՈՒԽ Ի. Խորհրդային իշխանության հաստատումը....9
1. Իշխանության մարմինների կազմավորումը....9
2. «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը....21
3. 1921թ. փետրվարյան ապստամբությունը և քաղաքացիական կռիվները....27

ԳԼՈՒԽ II. ՀՍԽՀ տարածքային հիմնախնդիրները 1921թ....86
1. Մոսկվայի և Կարսի կոնֆերանսները....86
2. Լոռու և Ալեքսանդրապոլի գավառների ազատագրումը....118
3. Լեռնային Ղարաբաղի խնդիրը....137
4. Զանգեզուրի ինքնապաշտպանությունը....154

ԳԼՈՒԽ III Խորհրդային իշխանության ամրապնդումը....204
1. Անցումը Նոր տնտեսական քաղաքականության /ՆԷՊ/....204
2. ՀՍԽՀ Սահմանադրության ընդունումը: Անդրկովկասյան դաշնության և ԽՍՀՄ-ի կազմավորումը....227
3. ՀՍԽՀ Կարմիր բանակը....254

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ /1923-1928թթ./
ԳԼՈՒԽ IV. Սոցիալ-տնտեսական տեղաշարժեր....260
1. Տնտեսության վերականգնումը....260
2. Սոցիալական փոփոխություններ....303

ԳԼՈՒԽ V. Կոմունիստական մենատիրությունը....318
1. Ոչ պրոլետարական կուսակցությունների վերացումը....318
2. Ներկուսակցական պայքարը....322
3. Պետություն-եկեղեցի հարաբերությունները....334

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵԾ ՎԵՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ /1929-1940ԹԹ./
ԳԼՈՒԽ VI. Հանրապետության ինդուստրացումը....347
1. Ինդուստրացման գործընթացը....347
2. Բանվոր դասակարգի կազմավորումը....364
3. Արտադրական վերելքը....371

ԳԼՈՒԽ VII. Գյուղի հեղաշրջումը....377
1. Գյուղատնտեսության կոլեկտիվացման գրոհը....377
2. Քաղաքական իրադրության սրումը: Կուլակության վերացումը....395
3. Կոլեկտիվացման հետագա գործընթացը....420
4. Կոլեկտիվացման ավարտը և հետևանքները....445

ԳԼՈՒԽ VIII. Կոմունիստական կուսակցության ամբողջատիրությունը....456
1. Կուսակցական ամբողջատիրության հաստատումը....456
2. Քաղաքական բռնաճնշումները....475
3. Եկեղեցական կառույցի կազմալուծումը....526
4. Հայկական ԽՍՀ միութենական հանրապետություն....535

ՎԵՐՋԱԲԱՆ. ՔՍԱՆԱՄՅԱ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐ....549
Բովանդակություն....564

ՎԼԱԴԻՄԻՐ ՆԱՀԱՊԵՏԻ ՂԱԶԱԽԵՑՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920-1940 ԹԹ.

ВЛАДИМИР НААПЕТОВИЧ КАЗАХЕЦЯН
АРМЕНИЯ В 1920-1940 ГОДЫ

Տեխնիկական խմբագիր՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ
Համակարգչային շարվածքը՝ ՆՈՒՆԵ ԲԱՐԹԻԿՅԱՆԻ
Տպագրիչ՝ ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24^{գ}

ЦЕНА

А 11
91412